ՆԻՒԹԵՐ

Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Է. ՀԱՏՈՐ

Պէյրութ – 2010

Խմբագիր՝ ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

«ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» մատենաշարի
հրատարակութիւնը կը կատարուի Հ.Յ.Դ. Բիւրոյի որոշումով:

© All rights reserved
ISBN 978-9953-0-1964-2

Ներկայ հատորի տպագրութիւնը իրականացած է
«ՓԻԻՆԻԿ» հիմնադրամի միջոցով:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Նիւթեր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութեան համար» շարքին ներկայ եօթներորդ հատորը բաղկացած է ընդամէնը եօթը գլուխներէ. բովանդակալից է ան ու, իբրեւ լրացում Զ. հատորին, կը յատկացուի հիմնականին մէջ 1907–1909 տարիներուն վերաբերեալ վաւերագրերու հրատարակութեան: Զանց չեն առնուած անշուշտ նոյնպէս, նայած շօշափուող հարցերուն, նախորդող տարիներու փաստաթուղթերը, նորայայտ կամ անտիպ մնացած:

Իւրաքանչիւր բաժնի իբրեւ մուտք անհրաժեշտ համարուած ծանօթութիւնները արդէն տրուած ըլլալով իրենց տեղին, հոս կը ներկայացուին լուսաբանիչ որոշ յաւելումներ միայն: Այսպէս՝

<u>Առաջին գլուխի</u> բովանդակութեան հիմնական կորիզը կը կազմեն թիւ 44 եւ 51 թղթածրարները, ուր կը գտնենք շատ հակիրճ խմբագրութեամբ շարադրուած Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյի 1904, 1905, 1907 եւ 1908 տարիներու *«Արձանագրութիւնները»* եւ *«Որոշումները»*: Յայտնենք որ հակառակ Արեւելեան Բիւրոյին, որ յաճախ ջլատուած, եւ ցարական ոստիկանութեան խստագոյն հետապնդումները դիմագրաւելու պարտաւորութեան տակ –, Արեւմտեանը եւ «Դրօշակ»ի խմբագրութիւնը կը ներկայանան հետզհետէ առաւել կազմակերպուած պատկերով, եւ Ժընեւի դիւանատունը կը ճոխանայ թէ՛ իրեն յատուկ, եւ թէ կազմակերպական շրջաններէն հոն կեդրոնացող արխիւային հարուստ նիւթերով: Ինչ կը վերաբերի մատնանշուած «Որոշումներ»ուն, հարկ է ընդգծել անոնց առաջնակարգ կարեւորութիւնը, որովհետեւ Արեւմտեան Բիւրոն եւս միշտ չէ որ լիակատար նստաշրջան ունենալու եւ կայացուած որոշումներու մասին կանոնաւոր արձանագրութիւն պահելու վիճակին մէջ կը գտնուէր: Իր անդամները անդադար գործուղման մէջ էին եւ կամ տագնապի մատնուած տաք ճակատները փութացած. այնպէս որ Ժընեւ մնացողներուն՝ պաշտօնաթերթի խմբագրութեան ու գործավարութեան կ'իյնար ընթացք տալ կայացուած որոշումներուն եւ հետեւիլ կազմակերպութեան ընդհանուր գործունէութեան: Պահուած են նոյնպէս խնդրոյ առարկայ «Որոշումներ»ու գործադրութեան սահմանուած «Սեւագրութիւններ»ու յատուկ մատեաններ, որոնք կը պարունակեն կազմակերպական շրջաններուն յղուած գրութիւններու նախագիծերը: Այս վերջիններէն ամէնէն շահեկանները անոնք են որոնք՝ ցարական եւ համիտեան գրաքննութենէն խուսափելու համար՝ պիտի արտագրուէին գաղտնի թանաքով եւ այդպէս ալ ուղարկուէին իրենց հասցէներուն: Ասոնց պարագային հրահանգը յստակ էր.– «Կարդալէ ետք փճացնել»: Հրահանգը կը գործադրուէր, ու հազարաւոր նման գրութիւններէն հետք պիտի չմնար ապագայ պատմագրին համար, եթէ չըլլային վերոյիշեալ Սեւագրութեան մատեանները*:

**) Գոյութիւն ունին արխիւներուն մէջ կազմակերպական փարբեր շրջաններէ կամ անհատ գործիչներէ գաղտնի մելանով գրուած բազմահարիւր գրութիւններ, զորս միշտ չէ որ կարելի եղած է յաջողութեամբ «բանալ»: Քիւրոյի կողմէ յղուածներու պարագային, սակայն, փճացնելու հրահանգը դառնացիօրէն գործադրուած է: Հեպաքրքրութեան համար այդ ուղղութեամբ մեր կատարած փնտռտուքները ցարդ երեւան հանած են մէկ բացառութիւն միայն (խօսքը կը վերաբերի գաղտնի թանաքով գրուածներուն).– Թաւրիզի վրայով իր հասցէին Վան ուղարկուած, բաւական յաջողութեամբ «բացուած» եւ Արամ Մանուկեանի ձեռագրով արտագրուած նամակ մը: Բնօրինակը փճացուած էր անշուշտ:*

Երկրորդ գլուխը յատկացուած է Դաշնակցութեան Խորհուրդին, Արեւելեան ու Արեւմտեան Բիւրոներու եւ Պատասխանատու Կեդր. Կոմիտէութեանց ներկայացուցիչներէն բաղկացած մարմին, որ Ընդհ. Ժողովներու միջեւ ինկող տարիներուն հաւաքուելով կ'առնէր վճռական որոշումներ, պարտադիր բոլոր մարմիններուն, ներառեալ Բիւրոներուն համար: Արտաքին աշխարհին համար Դաշնակցութիւնը ներկայացնող մարմինն էր ան, իսկ ներքին ճակատի վրայ յետագային անոր պիտի տրուէր նաեւ դատական գերագոյն ատեանի լիազօրութիւն:

Այս գլուխին տակ ներկայացուած են փաստաթուղթեր Խորհուրդի 1905, 1908 եւ 1909 տարիներու նստաշրջաններէն:

Վերյիշումի կարգով, յայտնենք որ երկու Բիւրոներու ստեղծումէն ետք (Երկրորդ Ընդհ. Ժողով, 1898 թ.), անոնց իրաւասութեանց սահմաններու ճշդումին համար նշանակուած էր Կիրասոնէն դէպի Խարբերդ եւ Տիարպէքիր իջնող ուղղահայեաց գիծ մը, որուն արեւելքը՝ այսինքն՝ Մեծ Հայքը, Կովկասն ու Ռուսաստանը եւ Պարսկաստանը, Թիֆլիս կեդրոնով, կը կազմէին Արեւելեան Բիւրոյի գօտին, մինչ արեւմուտքը, որ կը պարփակէր Փոքր Հայքն ու Կիլիկիան, Թուրքիոյ մնացեալ մասը, Եւրոպան ու Ամերիկան պիտի ենթարկուէին Արեւմտեան Բիւրոյին. այս վերջինը, Ժընեւ հաստատուած, պատասխանատու էր միաժամանակ պաշտօնաթերթ «Դրօշակ»ի հրատարակութեան եւ Եւրոպայի մէջ Հայ դատի քարոզչութեան:

Երրորդ գլուխը կը բովանդակէ Կովկասի մէջ գումարուած *Ռայոնական ժողով*ներու արձանագրութիւնները, իրենց ընդարձակ օրակարգերով եւ քննարկումներով, որոնք յաճախ կ'ունենային Ընդհ. Ժողովներու մէջ կատարուածին տարողութիւնը: 1895–1906 տարիներուն գումարուած բազմաթիւ ռայոնականներու նիւթերուն մեծագոյն մասը հրատարակուած է արդէն այս շարքի Բ. եւ (մասամբ) Ե. հատորներուն մէջ: Այս գլուխին տակ լոյս կ'ընծայենք 1903 եւ 1906ի ժողովներուն նորայայտ արձանագրութիւնները: 1906ինը արտաքոյ կարգի ժողով մըն է, գումարուած Ալեքսանդրապոլի մէջ, ուր հրաւիրուած էին Կովկասի տարածքին ապաստանած «տաճկահայ» հոծ գաղթականութեան դաշնակցական ներկայացուցիչները:

Կովկասը դաշնակցական կուռ կազմակերպութիւն ունէր, շուրջ 10 Կեդր. Կոմիտէութիւններով, որոնց գլխաւոր առաքելութիւնը, կուսակցութեան առաջին տասնամեակի գործունէութեան ընթացքին, սատար կանգնիլ էր Արեւմտահայաստանի ազատագրական պայքարին՝ դրամական եւ զինական օժանդակութեամբ, ղեկավար գործիչներով եւ մարտիկներով: Վերջին տարիներուն, յատկապէս 1903 թ. ցարական իշխանութիւններու կողմէ հայ եկեղեցական կալուածներու գրաւումով եւ հայ-թաթարական կռիւներու հրահրումով, Դաշնակցութեան համար գործունէութեան լայն դաշտ բացուած էր նաեւ բուն Կովկասի մէջ, ուր արդէն վերեւի պարտաւորութեանց վրայ կ'աւելնային ընկերային-տնտեսական բնոյթի խնդիրները, վերջիններուն առնչուող գաղափարախօսական-տեսաբանական թէժ քննարկումներու ընկերակցութեամբ: Արդէն Կովկասեան Նախագիծը եւ 1907ի Չորրորդ Ընդհ. Ժողովի որոշումը՝ ընկերվարական դաւանանքը պաշտօնապէս ընդունելու մասին, կանաչ լոյս տուած էին այդ մարզին մէջ լայն քարոզչութիւն կատարելու եւ համապատասխան գործունէութիւն ծաւալելու: Ահա այս խնդիրներն են գլխաւորաբար, որ պիտի դրուին 1907–1908 եւ 1909 թ. տարիներուն կայացած կովկասեան ռայոնական ժողովներու օրակարգերուն վրայ:

Չորրորդ գլուխի նիւթը Դաշնակցութեան անդամակցութիւնն է *Միջազգային Ընկերվար* կազմակերպութեան, նախ ռուսաստանեան ապա նաեւ Թրքահայաստանի բաժանմունքներով: Այս բաժնին մէջ կը տրուին Միջազգայնականի Պրիւսէլի Բիւրոյին հետ վարուած բանակցութիւնները, ինչպէս նաեւ Դաշնակցութեան մասնակցութիւնը 1907 թ. Շտուտգարդի եւ 1910 թ. Քոփենհակէնի Միջազգայնականի համագումարներուն: Ճիշդ է որ ընկերվար Միջազգայնականին անդամակցելու որոշումը տրուած էր Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովին կողմէ, բայց նոյնքան ակներեւ են, կուսակցական մարմիններու եւ այլոց կողքին, մանաւանդ Միք. Վարանդեանի կողմէ անխոնջ ու հետեւողական կերպով թափուած ջանքերը՝ որոշման իրականացումը յաջողութեամբ գլուխ բերելու համար: Այնուհետեւ եւս երկար տարիներ Վարանդեան արժանաւոր կերպով պիտի ներկայացնէր Դաշնակցութիւնը միջազգային այդ կազմակերպութեան մօտ:

Հինգերորդ եւ վեցերորդ գլուխները յատկացուած են յաջորդաբար՝ Օսմանեան սահմանադրութեան ու Ատանայի կոտորածներուն եւ Պարսկաստանի սահմանադրական շարժումներուն: Թէեւ Զ. հատորին

մէջ լայն տեղ տրուած էր այդ հարցերուն, սակայն Պոսքընի կեդր. դիւանատան մէջ մեր կատարած վերջին պրպտումներով կարելի եղաւ ի յայտ բերել այդ շարժումներուն կապուած նոր նիւթեր: Հարցը մասնաւոր կերպով կը վերաբերի 55, 91 եւ 92 համարները կրող մատեաններուն, ուր օրը օրին արձանագրուած են Արեւմտեան Բիւրոյի կամ «Դրօշակ»ի խմբագրութեան կողմէ զանազան հասցէներու ուղղուած գրութիւններ,– հեռագիր, մամլոյ հաղորդագրութիւն, նամակ եւայլն: Իւրաքանչիւրը 500 մեծադիր էջերէ բաղկացած այդ մատեաններուն մէջ կը մնան անոնց պատճէնները, մինչ առաքուած բնօրինակները, ենթադրաբար, կամ կորսուած են եւ կամ պէտք է փնտռել իրենց հասցէատէրերուն մօտ. այնպէս որ վերոյիշեալ մատեաններուն, ինչպէս եւ տարբեր թուականներու բազմաթիւ այլ տոմարներու մէջ պահուած պատճէնները պատմական առաջնակարգ նշանակութիւն կը ստանան: Ահա այս մատեաններէն քաղուած նոր փաստաթուղթերն են, որ առիթ ընծայեցին յաւելեալ բաժիններ յատկացնելու օսմանեան եւ պարսկական սահմանադրութեանց հետ կապուած հարցերուն*:

Պարսկաստանի պարագային, այսինքն 6րդ գլուխին տակ, ընդարձակ տեղ տրուած է նոյնպէս Ատրպատականի կազմակերպական շրջաններու գործունէութեան,– Թեհրանի եւ Թաւրիզի մէջ սահմանադրական շարժումի պարսիկ ղեկավարներուն հետ կնքուած համաձայնագրեր. Ատրպատականի Կեդր. Կոմիտէութեան 1909 թ. Սալմաստի մէջ գումարած Շրջանային ժողով. Խոյի եւ Սալմաստի ներկայացուցչական ժողովներ. Գիլանի շրջանի զեկոյց-նամակները Բիւրոյին: Ներկայացուցչական ժողովները տեղական բնոյթ ունին եւ հասկնալի պատճառներով կը ծանրանան առաւելաբար եւ մանրամասնօրէն իրենց շրջաններուն մէջ (Խոյ, Սալմաստ, Էնզելի) հակադիր բանակներու միջեւ մղուած կռիւներուն վրայ, հայաբնակ գիւղերու ինքնապաշտպանութեան եւ սահմանադրական ուժերու կողքին կռուող հայ մարտական խումբերուն, որոնք թէեւ փոքրաթիւ բայց եւ այնպէս վճռական դեր կ'ունենան բախումներու բարեյաջող ելքին մէջ:

Եօթներորդ եւ վերջին գլուխով կը տրուին Վասպուրականի դաշնակցական կազմակերպութեան վերաբերող յատկանշական մէկ տեղեկագիրը, ինչպէս նաեւ Տարօն-Սասունի ու Քղիի մասին ազգագրական ու ընկերային-տնտեսական բնոյթի զեկուցագրեր:

Հատորը կը փակուի անձնանուններու եւ տեղանուններու ցուցակով, ուր փորձ կատարուած է հնարաւոր սահմաններու մէջ պարզաբանել, իրենց իսկական անուններով, գրութիւններուն մէջ յաճախ ծածկանունով յիշատակուած վայրերն ու անձնաւորութիւնները:

Ե. ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

**) Դաշնակցութեան դիւանին մէջ պահպանուած փաստաթուղթերը սովորաբար կը կրեն զոյգ թիւեր, ինչպէս 57-127 կամ 1675-2. առաջինը թղթածրարին թիւն է, երկրորդը՝ փաստաթուղթին գրաւած տեղը թղթածրարին մէջ: Վերեւ մատնանշուած մատեանները ունին ամբողջական մէկ թիւ, ինչպէս է պարագան այս հատորին մէջ օգտագործուած թիւ 44, 51, 55, 91 եւ 92 տոմարներուն: Երբ մատեաններու էջերը թուագրուած են, կը յիշուին նաեւ էջաթիւերը:*

Թուականներու պարագային, ծանօթ է որ Արեւելքի մէջ,– Օսմ. Թուրքիա, Ռուսիա, Պարսկաստան եւայլն, այդ տարիներուն դեռ հին տոմարը կը գործածուէր, մինչ Եւրոպան եւ Ամերիկան անցած էին արդէն նոր տոմարին: Տարբերութիւնը, 1901 թուականէն սկսեալ, 13 օր էր. այսպէս, նոր տոմարով Ապրիլ 15ը կը համապատասխանէր հին տոմարի Ապրիլ 2ին: Կարգ մը նամակագիրներ կը նշեն երկուքը միասին,– օրինակ, Ապրիլ 2/15:

ԳԼՈՒԽ I

Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
(1904, 1905, 1907, 1908)

Պոսթընի Հ.Յ.Դ. Կեդրոնական արխիւատան՝ յատկապէս Արեւմտեան Բիւրոյի բաժանմունքներուն մէջ պահպանուած են, բացի նամակագրութիւններէ, տեղեկագրերէ եւ փաստագրական այլազան կարգի վաւերագրերէ, նաեւ մեծ ու փոքր տետրեր, յաճախ նաեւ մեծածաւալ մատեաններ, որոնք կը բովանդակեն, օրինակի համար, գաղտնի մելանով գրուելիք նամակներու սեւագրութիւնները, Բիւրոյի անդամներու օրագիրները, ժողովական որոշումներու նոթերը, նիստերու օրակարգը, ստացուած հեռագիրները, ուղարկուածներու պատճէնները, գործադրուած կամ իրագործելի որոշումներու նշումները եւայլն, եւայլն:

«ՆԻՒԹԵՐ»ու եօթներորդ հատորի էջերը կը բանանք այս կարգի ամէնէն ուշագրաւ մատեաններէն երկուքին՝ թիւ 44ի եւ 51ի էջերով, որոնք յատկացուած են 1904, 1905, 1907 եւ 1908 տարիներու Արեւմտեան Բիւրոյի որոշումներուն, շատ համառօտ եւ հակիրճ ձեւով շարադրուած: 1906 թուականի բացը կը բացատրուի այն իրողութեամբ, որ Բիւրոյի անդամները, բացառութեամբ Է. Ակնունիի, Ժընեւէն մեկնած են դէպի Կովկաս, ուր հայ-թաթարական արիւնոտ բախումներով ստեղծուած տագնապալի կացութիւնը կը պահանջէր ղեկավար ուժերու անմիջական ներկայութիւնը:

Առաջին տետրը, թիւ 44, կը բովանդակէ ընդամէնը 36 նիստեր, առաջինը 1 Մայիս 1904 թ., վերջինը՝ 28 Օգոստոս 1905: Գրուած են տարբեր ձեռագրերով, բայց ճնշիչ մեծամասնութիւնը կը պատկանի Է. Ակնունիի (Խաչատուր Մալումեան): Այսպէս՝ Ակնունիի գրչին կը պատկանին թիւ 1, 2, 4-16, 19-34 եւ 36 նիստերու արձանագրութիւնները. թիւ 3ը՝ Քրիստափոր Միքայէլեանին է, իսկ 17, 18 եւ 35ը՝ Յարութիւն Գալֆայեանի: Այս վերջինը, Վահրամ ծածկանունով ծանօթ, Լեռնավայր-Կիլիկիոյ հին գործիչներէն էր. Բիւրոյի անդամ չէր, բայց Ժընեւ կանչուած էր «Դրօշակ» պաշտօնաթերթի եւ Բիւրոյի քարտուղարութիւնը վարելու պաշտօնով:

Թիւ 51 տետրը նոյնպէս կը բովանդակէ Արեւմ. Բիւրոյի 1907-8 թթ. 50 նիստերու ամփոփ արձանագրութիւնները: Առաջին նիստը կը կրէ 10 Յունիս 1907 թուականը, այսինքն Չորրորդ Ընդհ. Ժողովի աւարտին՝ նոր Բիւրոյի ընտրութենէն անմիջապէս ետք: Վերջին նիստի արձանագրութեան թուականը 1908 Յուլիս 23 է, Օսմ. սահմանադրութեան հռչակման (11/24 Յուլիս) նախօրեակին: Թիւ 1-17ը Ակնունիի ձեռագրով են, 18-44ը՝ Յար. Գալֆայեանի, իսկ 45-50ը՝ Յոհան Դաւթեանի: Նշենք, վերջապէս, որ այս տետրի վերջին էջերուն կայ ըստ երեւոյթին անաւարտ «Արձանագրութիւն» մը, 12 Օգոստոս թուակիր, այսինքն Օսմ. սահմանադրութեան հռչակումէն մօտ երեք շաբաթ ետք, երբ Հ.Յ.Դ. Պոլսոյ Պատասխանատու մարմինը փոխադրուած էր արդէն Թուրքիոյ մայրաքաղաքը: Վերջինիս ձեռագիրը կը պատկանի Բիւրոյի անդամներէն Սարգիս Մինասեանի (Արամ-Աշոտ):

Արեւմտեան Բիւրոյի արձանագրութիւններուն յատկացուած այս բաժանմունքին վրայ աւելցուցած ենք հետեւեալ երեք գրութիւնները 1) Ոսկանապատ-Պաքուի մէջ գումարուած Խառն ժողովի մը «Արձանագրութիւն»ը (1908 թ. 4 Օգոստոս). 2) Արեւմտեան Բիւրոյէն նամակ Յոհան Դաւթեանին եւ Յար. Գալֆայեանին (1908 թ. Օգոստոս 12). 3) Թիւ 92 մատեանէն քաղուած եւ Արեւմտեան Բիւրօ ստորագրութեամբ ու Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդհանուր Ժողովին ուղղուած նամակի մը պատճէնը (1909 թ. 12 Օգոստոս): Այս վերջինով Ժընեւ մնացած Բիւրոյի անդամները, Թուրքիոյ մէջ սահմանադրական կարգերու հաստատման եւ Կովկասի մէջ Դաշնակցութեան դէմ ցարական հալածանքներու սաստկացման հետեւանքով ստեղծուած նոր կացութեան առթիւ, իրենց տեսակէտները կը պարզեն: Այդ պահուն Ժընեւ կը մնային Արեւմտ. Բիւրոյի անդամներէն Միք. Վարանդեան, Սարգիս Մինասեան եւ Յոհան Դաւթեան: Վերջինս իբրեւ ներկայացուցիչ կը պատրաստուէր արդէն մեկնիլ ժողովատեղի՝ Վառնա:

ԽՄԲ.

Փաստ. 44

Ա.-



1904. Մայիս. Ժնեւ.

Ծանօթ.– Ներկայ արձանագրութիւնների մէջ մտնելու են միմիայն գլխաւոր որոշումները, մի կողմ թողնելով երկրորդականները, ինչպէս եւ եղած վիճաբանութիւններն ու առարկութիւնները:

1904 Մայիս

Արձանագրութիւն թիւ 1

Նիստ Մայիսի 1-ի, 1904

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովի կողմից, ընկեր Էլլէն[1], ներկայացուցիչը Արեւմտեան Բիւրոյի, յայտնեց ներկայ ժողովում այն գլխաւոր որոշումները, որոնք տեղի են ունեցել Գ-րդ Ընդհ. Ժողովի մէջ, ինչպէս եւ զանազան մարմինների ընտրութեան արդիւնքը եւ նրանց այժմեան կազմը:

Որոշուեց՝

1. *Մինչեւ Մայիսի վերջը՝ յատուկ շրջաբերականներով տեղեկացնել բոլոր կոմիտէներին այն որոշումների մասին, որոնք կայացել են Ընդհանուր Ժողովում, եւ որոնք կապ ունեն կոմիտէների գործունէութեան եւ պարտաւորութիւնների հետ.*
2. *Անմիջապէս տպագրութեան յանձնել «Ելքի ու մուտքի հաշուեցոյց» եւ ուղարկել կենտ. կոմիտէներին, խնդրելով պատրաստել եւ հասցնել Արեւմտեան Բիւրոյին վեցամսեայ դրամական հաշիւներ.*
3. *Մայիսի 1-ից սկսած՝ պահել հաշուի նոր մատեան, եւ պատրաստել մայր-մատեան, ուր պիտի արձանագրուեն պատասխանատու մարմիններէ ուղարկուած հաշիւները:*
4. *Պատրաստել «Դրօշակի» մէջ բաժանորդագրութեան նոր պայմանները, որոնք ընդունուած են Ընդհանուր Ժողովի կողմից եւ համաձայն դրան՝ վերակազմել բաժանորդագրական գրքերը եւ էքսպեդիցիոնը[2]:*
5. *Բաժանորդագրութեան նոր պայմանները գործադրութեան մէջ մտցնել Ապրիլի համարից սկսած:*
6. *Գրել ընկերներ Ղարիբին[3] եւ Ռոստոմին, որ չտապեն Ժընեւ գալ, ստանձնելու Արեւմտեան Բիւրոյին մէջ իրենց պաշտօնը:*
7. *Տպագրել դաշնակցական կենտրոնական եւ այլ մարմինների համար Ընդհ. Ժողովում ընդունուած նախահաշիւը, եւ ուղարկել ըստ պատկանելոյն, խնդրելով նրանց ամենաճիշտ գործադրութիւնը:*

Ներկայ նիստում կարդացուեցին Ընդհ. Ժողովի արձանագրութեան եւ որոշումների այն մասերը՝ որոնք վերաբերում են Արեւմտեան Բիւրոյին — խմբագրութեան առաջիկայ գործունէութեան: Դրա վերաբերեալ կարգադրութիւնները յետաձգուեցին ապագայ նիստին:

1.- Քրիստափոր Միքայէլեան, ներկայացուցիչ Արեւմտեան Բիւրոյի:
2.- Առաքումը:
3.- Աւետիս Ահարոնեան:

Արձանագրութիւն թիւ 2

Մայիսի 3, 1904

Որոշուեց՝

1. *Պատասխանել Պարիզ, Ռուսաց «Սոցիալիստ-յեղափոխականների» կոմիտէին, որ «Դրօշակի» խմբագրութիւնը համակրում է այն միտինգին, որ մտադրութիւն կայ կազմակերպել Մայիսի վերջերին, Ֆրանսիացի սոցիալիստների նախաձեռնութեամբ, բաղկացած ցարիզմի դէմ բողոքող բոլոր տարրերի ներկայացուցիչներից (Ռուսաստանի սահմաններում) եւ ուրախութեամբ կը մասնակցի այդ ժողովին։ Գրուեց Պարիզ, ընկեր Լորիս-Մելիքեանին՝ յարաբերութեան մէջ մտնել ժողովը կազմակերպողների հետ, իբրեւ ներկայացուցիչ։*

2. *Պատասխանել Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան կենտրոնին (որից ստացուած էր, Մարտի* 1, 1904 *թուականի, առաջարկ՝ համերաշխ գործունէութեան մասին), համաձայն Ընդհանուր Ժողովի որոշման (Տես Արձանագրութիւն Ընդհ. Ժողովի եւ նամակի պատճէն՝ 78րդ երեսում)։ Դրա հետ միասին կարգադրուել՝ «Դրօշակի» Ապրիլի համարում տպագրել այդ որոշումը, ի գիտութիւն բոլոր կուսակցութիւնների։*

3. *Վճարել «Դրօշակի» եւ այլ հրատարակութիւնների վերաբերեալ բոլոր ծախքերը եւ այդպէս մաքրել բոլոր հին հաշիւները առ* 1*ը Մայիսի։*

4. *Կազմել յատուկ մատեան, որի մէջ արձանագրուած լինեն բոլոր կոմիտէները, ենթակոմիտէներն իրանց անդամների թուով, զանազան յարակից մանրամասնութիւնների հետ։*

5. *Պահել յատուկ մատեան, որի մէջ արձանագրել ուղարկուող գրքերն ու պատկերները, նրանց դրամական հաշիւը կանոնաւորելու համար։*

6. *Ուղարկել «*Pro Armenia*»-ի խմբագրութեան այն հասցէները, որոնք ստանում են այդ հրատարակութիւնը «Դրօշակի» խմբագրութեան միջոցով, խնդրելով որ սրանից յետոյ այդպիսիներին թերթը ուղարկուի ուղղակի Պարիզից։*

Արձանագրութիւն թիւ 3

1904 *թ.*, 15 *Մայիս*

Այս նիստում տեղի ունեցաւ «Դրամ» (Փոթ[որիկ]) խմբի դրամական հաշուետուութիւնը։
Երեւաց՝ որ անցեալ 1903 *տարուայ Ապրիլ ամսից սկսած մինչեւ այսօր «Դրամ» խումբը ունեցել է՝*

fr. 100,000
53,000
200,000
26,500
52,760

Գումար — 432,260 *ֆրանկ*

Գումար՝ չորս հարիւր երեսուն երկու հազար, երկու հարիւր վաթսուն ֆրանկ։

Այս գումարից Արեւելեան շրջանին տրուած է Կովկասում՝
Ռոստոմի միջոցով — 53,000 fr.
Նիկոլի (Դուման) միջոցով — 26,500



Նմոյշ մը Քրիստափորի ձեռագրէն։

Նոյն շրջանին փոխադրուած է՝

Մարսէլից Ղարիբի[3] *ձեռքով*	— 10,000
Փարիզից Թայինեանի[4]	— 10,000
Փարիզից նոյն	— 8,000
Ժընեւից Ազատի միջոցով	— 5,000
Ժընեւից հեռագրով	— 28,828
Սոֆիայից Երկաթի[5] *հետ*	— 20,000
Ժընեւից (Սալմաստ) Վանի համար	— 1,500
Գումար	— 160,828 fr.

Գումար՝ հարիւր վաթսուն հազար ութ հարիւր քսան եւ ութ ֆրանկ։

Դուրս գալով Արեւելեան շրջանին տրուած այս գումարը (160,828) *«Դրամ» խմբի ընդհանուր մուտքից* (432,000), *կը ստանանք* 271,432 *ֆրանկի գումարը, որի համար պատասխանատու է Արեւմտեան Բիւրոն։*

Ի նկատի ունենալով սակայն, որ 1904 *թուի նախահաշուի մէջ մտցուած է «Դրամ» խմբի մուտքից* 326,000, *որ պիտի բաժանուէր հետեւեալ կերպով՝*

Վասպուրականին	— 5,000 fr.
Բարձրաւանդակին[6]	— 20,000
Արեւմտեան Բիւրոյին	— 10,000
Բանտարկեալ կարեւոր ընկերների ազատութեան	— 20,000
Թղթակից-գործիչների	— 30,000
Եւրոպական պրոպագանդայի	— 12,000
Ցուցական մարմնուն	— 120,000
Լեռնավայրի[7] *մարմնուն*	— 84,000
եւ Անակնկալ պահանջների	— 25,000
	— 326,000

Ուստի մինչեւ այսօր թէ Արեւելեան շրջանին փոխադրուած ու տրուած եւ թէ Արեւմտեան շրջանում մսխուած գումարները պէտք է գրուեն պատշաճ մարմինների հաշուին ճշտելու համար թէ Ընդհ. Ժողովի ծրագրած նախահաշիւը ներկայ 1904 *թուի համար եւ թէ Արեւմտեան Բիւրոյի դրամարկղի իրական վիճակը առ* 15 *Մայիս* 1904 *թ.։*

4.- Թայինեան, բուն անունով Յովհ. Լորիս-Մելիքեան, Արեւմտեան Բիւրոյի անդամ եւ պատասխանատու Եւրոպայի մէջ հայ դատի քարոզչութեան։

5.- Աշոտ Երկաթ, բուն անունով՝ Արմենակ Լեւոնեան, անդամ ընտրուած Սասնոյ Պատասխանատու մարմնին։ Պիտի նահատակուէր նոյն տարուան (1904) Յունիսի 2ին Արճէշի մօտ մղուած կռիւին, երբ փոքր խումբով մը սահմանը անցնելէ ետք կ'ուզէր օգնութեան հասնիլ Սասնոյ ապստամբներուն։

6.- Սասունին։

7.- Լեռնավայրի մէջ ընդգրկուած էին Կիլիկիան, Սուրիան եւ Լիբանանը։

Արձանագրութիւն թիւ 4

Մայիսի 20, 1904

Ներկայ նիստում կարդացուեցին այն նորագոյն նամակները, որոնք ստացուած էին Սասունից, վերջին ընդհարումների վերաբերմամբ, որոնք տեղի են ունեցել թուրք զօրքերի ու հայ յեղափոխականների միջեւ, եւ իրբեւ կատարումն այնտեղի ընկերների ցանկութեան՝

Որոշուեց՝

ա) Անմիջապէս հեռագրով տեղեկացնել Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալական եւ Աւստրիական արտաքին գործերի մինիստրութեան անցած-դարձածը, խնդրելով շուտափոյթ միջամտութիւն՝ թուրքիոյ գազանութիւնները սանձահարելու նպատակով.

բ) Ուղարկել եւրոպացի յայտնի հայասէրներին եւ ազդեցիկ օրգաններին մանրամասն դեկլարասիոն Սասունի դէպքերի մասին։

Վճռուեցաւ նոյնպէս եւ «Դրօշակի» առաջիկայ համարում մանրամասնօրէն արձանագրել յեղափոխական խմբերի կռիւը, որ տեղի է ունեցել Տարօնում՝ կառավարութեան դէմ, տալով դրա հետ միասին Սասունի աշխարհագրական քարտէզը։

Արձանագրութիւն թիւ 5

Յունիսի 3, 1904

Ներկայ նիստում որոշուեց՝

1) *Տպագրել «Դրօշակի»* N° 4-5*ը մէկ ու կէս թերթի մեծութեամբ եւ սրանից յետոյ իւրաքանչիւր ամսուայ համարը լոյս ընծայել ոչ աւելի ուշ, քան ամսի* 20-25։

2) *Ընթացիկ բոլոր նամակներին պատասխանել, եւ տեղեկացնել Ջրաբերդի*[8] *կոմիտէին ընթացիկ տեղեկութիւնները՝ հայոց հարցի վերաբերեալ՝ եւրոպական դիպլոմատիայից եւ մամուլից։ Պարբերաբար ուղարկել կովկաս՝ կարեւոր նորութիւններ, թռուցիկ թերթերով հասարակութեան մէջ տարածելու նպատակով։*

3) *Գրել Պարիզ ընկեր Թայինեանին*[4] *հասցնելու Արեւմտեան Բիւրոյին այն* 32,600 *ֆրանկը, որը յանձնուած է եղել «Պրօ Արմենիայի» խմբագրապետ Քիյառին, եւ որից նա ստացել է անցեալ ամիսներին։*

4) *Գրել Ամերիկայի կենտրոնական կոմիտէին՝ ուղարկելու Արեւմտեան Բիւրոյին այն դրամները, որոնք փոխարինաբար տրուել են Ամերիկայի շրջանի ընկերներին, կամ նրա յանձնարարութեամբ՝ այլ տեղերի գործիչներին։*

5) *Հրաւիրել Եգիպտոսից ընկեր Գալֆայեանին Ժընեւ, ժամանակաւորապէս, բիւրոյական մի քանի գործերի համար, որոնց վերաբերմամբ Բիւրոյի ներկայացուցիչը նրա հետ պայմանաւորուել է Սոֆիա եղած ժամանակ։*

6) *Պատրաստել պաշտօնական բլանկներ եւ կնիքներ Մրգաստանի եւ Վրէժստանի համար, համաձայն նրանց խնդիրքի, ինչպէս եւ Վիշապի Ցուցական մարմնի*[9]։

7) *Հաղորդել պ. Քիյառին անգլիական արտաքին գործերի մինիստրութեան պատասխանը (պատասխան այն հեռագրի, որ Արեւմտեան Բիւրոն Մայիսի մէկին ուղարկեց՝ Սասունի դէպքերի պատճառով), ի գիտութիւն, խնդրելով չտպագրել «Պրօ-Արմենիա»-ի մէջ։*

7.- Լեռնավայրի մէջ ընդգրկուած էին Կիլիկիան, Սուրիան եւ Լիբանանը։

8.- Ջրաբերդը կուս. ծածկանունն է Կարսի շրջանին։

9.- Մրգաստանը Երեւանն է, Վրէժստանը՝ Ատրպատական, իսկ Վիշապը՝ Պոլիս։ Ցուցական մարմնի պարտականութիւններէն մէկը Սուլթան Ապտիւլ Համիտ Բ.ի ահաբեկումն էր։

Արձանագրութիւն թիւ 6

Յունիսի 9, 1904

Ներկայ նիստում որոշուեց՝

1) *Պատրաստել տալ եւ ուղարկել «բլանկներ» (Վրէժի, Ոսկանապատի եւ Մրգաստանի*[10] *հետ միասին)։ Նոյնպէս եւ միւս մարմիններին, որոնք խնդրել են։*

2) *Պատրաստել տալ յատուկ կնիք կովկասեան «Ինքնապաշտպանական կոմիտէի» համար, որ սրանից յետոյ, համաձայն Ընդհանուր Ժողովի որոշման, պէտք է բացարձակօրէն գործի Դաշնակցութեան անուան տակ։*

3) *Գրաւոր դիմումներ անել դ'Էստուրնելին, Պարիզ, եւ Բրայսին ու Ստիֆեն[ս]ոնին, Լոնտոն, խնդրելով նպաստել երկու երկրների պարլամենտում լինելիք հարցապնդումներին։*

4) *Նոր հեռագիր ուղարկել Հռոմ, Լոնտոն, Վիեննա, եւ Պարիզ՝ Սասունի ամենավերջին դէպքերի մասին, թէ քաղաքական գործիչներին եւ թէ կարեւոր օրգաններին։*

5) *Կազմել «Դրօշակի» առաջիկայ* N° *6-րդ, որը լոյս պիտի տեսնէ տասն օրից յետոյ։*

6) *Ամերիկայից եկած վեց ընկերների համար բերել տալ Բոլգարիայից անցագրեր եւ շտապեցնել նրանց գնալը դէպի Երկիր, Կովկասի վրայով։*

7) *Ուղարկել Սոֆիա Տ-ին* 150 francs *նախկին կէտում յիշատակուած անցագրերի ծախքի համար։*

8) *Ռուս-թուրքական սահմանագլխից այսօր ստացուած քաղաքական նորութիւնները հեռագրով հաղորդել եւրոպական գլխաւոր խմբագրութիւններին։*

9) *Ուղարկել Մարսէյլ հարիւր ֆրանկ, «Դրօշակի» եւ գրքերի ճանապարհածախքի համար։*

Արձանագրութիւն թիւ 7

Յունիսի 15, 1904

Ներկայ նիստում կայացան հետեւեալ որոշումները՝

1) *Սասունից ստացուած բոլոր տեղեկագիրները, ինչպէս եւ այդ առիթով Պատրիարքարանից եկած տեղեկագիրները յանձնել մամուլին (եւրոպական)։*

2) *Հաղորդել Ոսկանապատի Կենտրոնական Կոմիտէին վիճակախաղի այն տոմսերի համարները, որոնք յետ են ստացուած մեր շրջանի զանազան մարմիններից։*

3) *Պատուիրել նոր տառեր Վենետիկ, տպարանը վերջնականապէս կազմակերպելու նպատակով, որպէսզի կարելի լինի թէ՛ «Դրօշակը» տասն օրում շարել եւ թէ միաժամանակ գրքեր եւ բրոշիւրներ տպագրել։*

4) *Կարգի բերել խմբագրութեան գրքերի եւ հրատարակութիւնների պահեստը։*

5) *Հարստացնել խմբագրատան գրադարանը, եւ կազմել եղած եւ ստացուելիք գրքերի մանրամասն գրացուցակը։ Ցայտարարել, որ գրադարանից գրքեր դուրս տանել չեն կարող մասնաւոր անձինք։*

10.- Յաջորդաբար Ատրպատական, Բագու, Երեւան։ Բլանկը տպագիր հարցաթերթ է։

Արձանագրութիւն թիւ 8

Յունիսի 26, 1904

Այս նիստում հետեւեալ որոշումները կայացան՝

1) *Ուղարկել մի յատուկ հեռագիր մեր բարեկամ Ֆրանսիս դը Պրեսանսէին*[11]*, խնդրելով որ անձամբ ներկայ լինի Լոնտոնի հայ-մակեդոնական կոնգրէին, եւ պաշտպանի մեր հարցը, որքան կարելի է մեր կազմակերպութեան ծրագրին համապատասխանող ոգւով։*

2) *Ուղարկել մի այլ հեռագիր կոնգրէի նախագահ Ջեմս Բրայսին*[12]*, հաղորդելով մեր ծրագիրը՝ հայկական խնդրի վերաբերմամբ։*

3) *Ցանձնել Ցուցական մարմնի ներկայացուցիչ ընկեր Էլլէնին*[1] 1,500 *ֆրանկ, Վիշապի նախապատրաստական գործերով զբաղուած ընկերների եւ քննիչների համար*[13]*։*

4) *Ուղարկել երեք հազար երկու հարիւր ֆրանկ* (3,200 *ֆրանկ*) *Տուֆակչեւին*[14]*, Սոֆիա, «մթերքի» վճարի հաշուին։*

5) *Պատրաստել Յուլիսի «Դրօշակի» նիւթերը։*

6) *Պատրաստել տպագրած «Օրդրներ» Յուլիսի* 1*-ից գործածութեան մէջ մտցնելու համար։*

Արձանագրութիւն թիւ 9

5 *Յունիսի*, 1904[15]

Ներկայ նիստում որոշուեց՝

1) *Ուղարկել Ոսկեհանքում*[16] *մահուան դատապարտուած ընկեր Գեղամի հօրը՝* 1,300 *ֆրանկ, նրա դատավճիռը բեկանելու գործի համար։*

2) *Ուղարկել Վառնա ընկեր Մարգարեանին*[17] *հազար ֆրանկ, համաձայն նրա հեռագրի, ի հաշիւ Ցուցական մարմնի։*

3) *Ուղարկել ի հաշիւ Ցուցական մարմնի, Աթէնք, ընկեր Աշոտի*[18]*, հազար ֆրանկ։*

4) *Հետեւել ճշտութեամբ՝ նախահաշուով զանազան մարմիններին յատկացրած գումարների գործածութեանը։ Եթէ մի մարմնի համար նշանակած գումարը չբաւականանայ, միւս մարմնից կարելի է վերցնել՝ միմիայն երկուսի փոխադարձ համաձայնութիւնը ունենալուց յետոյ։*

5) *Դնել Լեռնավայրի Պատասխանատու մարմնի անդամ Անտոնի*[19] *տրամադրութեան տակ հազար ֆրանկ (ընկեր Անտոն վաղը պիտի ճանապարհուի)։*

6) *Ցուցական մարմնի անդամ Էլլէնի տրամադրութեան տակ դնել հազար ֆրանկ եւ մնացած հարկաւոր գումարը փոխադրել Պարիզ, ուր ընկեր Էլլէն*[20] *պիտի գնայ վաղը։*

11.- Ֆրանսական խորհրդարանի անդամ. մաս կը կազմէր նաեւ Պրօ-Արմենիա-ի խմբագրական կազմին. Դաշնակցութեան բարեկամ եւ հայ դատի ջերմ պաշտպաններէն։

12.- Բրիտանիոյ խորհրդարանի հայասէր անդամներէն. յետագային արտաքին գործոց նախարար։

13.- «Վիշապի [Պոլիս] նախապատրաստական գործերովը» պէտք է հասկնալ Սուլթանին մահափորձը, որուն կազմակերպումն ու գործադրութիւնը վստահուած էր Ցուցական մարմնին։

14.- Մակեդոնացի յեղափոխական. միեւնոյն ատեն վաճառական, որմէ կը գնուէին պայթուցիկ նիւթեր։

15.- Յայտնապէս արձանագրութեան թուակարգումին մէջ սխալ կայ։ Նախորդ թիւ 8 արձանագրութիւնը կը կրէ Յունիսի 26 թուականը, յաջորդ թիւ 10-ը՝ Յունիսի 25-ը։ Իսկ թիւ 9-ը՝ 5 Յունիսի։ Թուականները յստակ են ու շփոթի տեղի չեն տար։ Ուստի կը պահենք տետրակի արձանագրութեանց շարքը այնպէս՝ ինչպէս է անոնց յաջորդականութիւնը եւ թուակարգումը։

16.- Ոսկեհանքը Իզմիրն է կամ Զմիւռնիան։

17.- Մարգարեան Մարտիրոս, Ցուցական մարմնի անդամ Սաֆոն։

18.- Աշոտ նոյնպէս Ցուցականի անդամ, իսկական անունը՝ Եղիկեան Կարապետ։

19.- Անտոն՝ Սիմոն Զաւարեանի ծածկանուններէն մէկն է։

20.- Ջեռագրին մէջ հոս եւ այլուր, «Հելլէն» ձեւով, վերածած ենք էլլէն-ի այնպէս ինչպէս կը ստորագրէր ինք՝ Քրիստափոր Միքայէլեան։

Արձանագրութիւն թիւ 10

Յունիսի 25, 1904

Կայացան որոշումներ՝

1) *Իտալացի պրոֆեսոր* Racca *գրաւոր դիմումն անելով՝ Հայաստան ճանապարհորդելու—, եթէ նրան դրամական աջակցութիւն տրուի։ Վճռուեց՝ գրել մեր բարեկամ Մոնիտային՝ նրա կարծիքը իմանալու։ Եւ եթէ այդ կարծիքը նպաստաւոր լինի՝ բանակցել* Racca*-ի հետ, խնդիրը ուսումնասիրելու եւ առաջ մղելու նպատակով։*

2) *Յանձնել «Դրամ»*[21] *խմբին՝ որոշելու թէ ինչ կերպ վերսկսել Մանչեստրի վաճառականներին հետ բանակցութիւնները՝ այն խնդրի վերաբերմամբ, որը կարգաւորելու համար անցեալ տարի երկու ընկեր գնացին այդ քաղաքը (տես Ոսկեհանքի գործը)։*

3) *Ուղարկել կոմիտէներին «Դրօշակ», եթէ նրանք խնդրեն, առանց կենտրոնական կոմիտէների միջնորդութեան։*

Արձանագրութիւն թիւ 11

1904 *Յուլիսի* 14

Կայացան հետեւեալ որոշումները՝

1) *Պատասխանել պրոֆեսոր* Racca*-ին, եւ խնդրել, որ նեղութիւն յանձն առնի, մեր ծախքով, ժրնեւ գալ մշակելու Հայաստան անելիք նրա ճանապարհորդութեան մանրամասները, օգտաւէտութիւնը, եղանակը եւ ծախքին քանակը։*

2) *Ուղարկել գլխաւոր օրգաններին հեռագիրներ Սասունի դէպքերի, ինչպէս եւ Գանձակի փոխ նահանգապետ Անդրէեւի սպանութեան մասին։*

3) *Հրատարակել «Դրօշակի» առաջիկայ* N° 7*-ը աւելի մեծ քանակութեամբ* (6,500), *կովկասեան կոմիտէներին աւելի ուղարկելու համար, ինչպէս նրանք խնդրել են։*

4) *Տպագրութեան յանձնել «Կազմակերպական կանոնները» եւ մինչեւ Յուլիսի վերջը տարածել կոմիտէներին։*

5) *Ընդունել պրոֆեսոր Վուարէնի առաջարկը եւ մի գրաւոր դիմումն անել այն եւրոպացի գործիչներին եւ գիտնականներին, որոնք, թուով* 120, *հրաւիրուած են Սէն-Լուի-ի կոնգրէին (Գիտութեան եւ արուեստի), խնդրելով Ամերիկայի մէջ արծարծել հայկական հարցին աջակցելու միտքը, եւ Միացեալ Նահանգների միջամտութեան հնարաւորութիւնը։ Տպագրել այն դիմումը եւ տարածել կոնգրէին գնացողների մէջ, ոչ ուշ քան Օգոստոսի առաջին թուերը։*

6) *Յանձնել ընկեր Գալֆայեանին՝ հաշուեթղթերը կանոնաւոր հաշուապահական մատեանների մէջ մտցրնելու համար (համաձայն նախկին որոշումների)։*

7) *Գործածութեան մէջ մտցնել «Օրդր»ները Յուլիսի* 15*-ից եւ գանձարանի ելքն ու մուտքը կատարել միայն այդ եղանակով։*

21.- «Դրամ» խումբը՝ Փոթորիկի (բռնի հանգանակութիւն) մարմինն էր։

Արձանագրութիւն թիւ 12

Յուլիսի 28, 1904

Որոշուեց՝

Ա) Գրել Պարիզ, մեր բարեկամներ Պրեսանսէին եւ Քիյառին, որպէսզի դիմեն մինիստր Դելկասէին[22] *իմանալու թէ արդեօք Մուշի Ֆրանսիական դեսպանը յանձն կ՚առնէ բաժանել Մուշ-Սասունի կարօտեալներին երեսուն հազար ֆրանկ, որ Կովկասից դրել են մեր տրամադրութեան տակ, Արեւելեան Բիւրոյի միջոցով։*

Բ) Սկսել բանակցել ժընեւ եկած պրոֆեսոր Racca*-ի հետ, Հայաստան կատարելիք նրա ճանապարհորդութեան մանրամասների վերաբերմամբ։*

Գ) Բանկը մտցնել, ընթացիկ հաշուով, գանձարանի մէջ եղած վեց հազար ֆրանկը, եւ առհասարակ բաց անել «Դրօշակի» խմբագրութեան անունով compte courant[23], *եթէ բանկային վարչութիւնը կ՚ընդունէ այդ ձեւը։*

Դ) Ուղարկել եւրոպական լրագիրներին հեռագրեր Կովկասից Հայաստան անցած նոր ռազմական խմբերի եւ նրանց ընդհարումների մասին։

Ե) Բանակցել ժընեւ եկած ֆինլանդացի գրող եւ գործիչ Z-ի հետ, որը առաջարկում է Ռուսաստանի այժմեան ռեժիմից դժգոհ բոլոր յեղափոխական կազմակերպութիւնների անունից մի կոչ ուղղել հպատակ ազգերին, հրաւիրելով նրանց բոլոր բարձրացնել միապետական կառավարութեան դէմ։

Զ) Բանակցութիւններ սկսել մեզ յանձնարարած եւ ժընեւ եկած .....a-ի հետ, որը նպատակ ունի մօտից ծանօթանալ Ռուսաստանի ներքին վիճակի հետ, քաղաքական որոշ ծրագրով։

Արձանագրութիւն թիւ 13

Յուլիսի 31, 1904

Որոշուեցաւ՝

Ա) Առաջարկել պրոֆեսոր Racca*-ին, որ նա աշխատի ձեռք բերել որեւէ աջակցութիւն իտալական կառավարութեան կողմից՝ Հայաստան ճանապարհորդելը հնարաւոր դարձնելու նպատակով։ Ճանապարհորդութեան գիծը պիտի լինի՝ Կ. Պոլիս, Տրապիզոն, Էրզրում, Մուշ, Բիթլիս, Վան, Սալմաստ, Անդրկովկաս՝ Երեւան, Էջմիածին, Ալեքսանդրապոլ, Կարս, Թիֆլիս, Բագու, Բաթում, եւ կամ աւելի կարճ գծով՝ Էրզրումից—Կովկաս, եթէ Մուշ գնալը անհնար լինի։ Նպատակը պիտի լինի՝ նպաստել հայկական դատին, եւ ուսումնասիրել հայերի վիճակը՝ քաղաքական տեսակէտից։ Դրամական նպաստը այդ ճանապարհորդութեան՝ որոշուեց մինչեւ երեք հազար հինգ հարիւր ֆրանկ առ առաւելն* (3,500 fr.)։ *Վերադարձին՝ պրոֆ.* Racca *պիտի անի դասախօսութիւններ, տպագրէ աշխատութիւններ հայերի մասին եւ բացի դրանից՝ պէտք է թղթակցութիւններ ուղարկէ Երկրից՝ մեր ցոյց տուած նշանաւոր օրգաններին։*

Մանօթ.- Տալ նրան ճանապարհածախս Իտալիայից ժընեւ ու դարձը։

Բ) Ուղարկել գլխաւոր լրագիրներին հեռագիրներ Ալաշկերտից ստացած լուրերի առիթով։

Գ) Փոխադրել Սոֆիա, Տուֆ[ակչեւ]-ին, «մելինիտ»]-ի հաշուին՝ դարձեալ հազար ութ հարիւր ֆրանկ (1800 fr.), *որով կը լրանայ իր ուղած գումարը։*

Դ) Հրատարակել «Կազմակերպական կանոնները» քանակութեամբ «500» օրինակ։

22.- Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը։
23.- Ֆրանսերէն՝ դրամատնային հաշիւ, հաշուընթաց։

Արձանագրութիւն թիւ 14

Օգոստոսի 2, 1904

Այս նիստում տեղեկագրուեց՝

1) Պրոֆ. Racca համաձայնուեց Հայաստանի ճանապարհորդութիւնը կատարել երկու հազար երկու հարիւր ֆրանկով, համաձայն նախագծած ուղեգծի. նա յանձն առաւ անմիջապէս դիմել իտալական կառավարութեան՝ դիւրութիւններ ձեռք բերելու նպատակով:

2) Պրոֆեսոր Վուարէն յանձն առաւ Ամերիկայի Սէն-Լուի ժողովում (Կոնգրէս Արուեստների եւ գիտութեան) Հայկական հարցը յարուցանել եւ առաջարկել՝ որեւէ որոշումն կայացնել, ուղղուած Ամերիկական կառավարութեան:

Որոշուեց՝ այդ մտքով գրաւոր դիմումն անել պրոֆ. Վուարէնին եւ գրել այս մասին Ամերիկայի կոմիտէներին:

3) Մեր բարեկամ Quillard հեռագրել է Պարիզից, որ ֆրանսիական Արտաքին գործերի մինիստրը պ. Դելկասէն համաձայնուել է՝ համաձայն մեր դիմումի, ուղարկել Մուշի ֆրանսիական հիւպատոսին գումար, հայ կարօտեալներին բաժանելու համար:

Որոշուեց՝ Ուղարկել անմիջապէս Պարիզ, Քիյառին, մինիստրի տրամադրութեան տակ դնելու համար, երեսուն հազար ֆրանկ, ի հաշիւ Արեւելեան Բիւրոյի (համեմատ նրանցից ստացուած հեռագրի):

4) Ուղարկել Կովկաս, Պարսկաստանի վրայով, բացի ցայժմ ուղարկուած գրքերից, 400 հատ «Հայաստան եւ Մակեդոնիա» եւ Ուս. Միութեան հրատարակութիւններից 800 օրինակ, որոնք դրուած են մեր կազմակերպութեան տրամադրութեան ներքոյ:

5) Ուղարկել շրջաբերական հեռագիրներ այն նոր փաստերի մասին, որոնք ստացուած են այս շարաթ եւ ցոյց են տալիս ռուսական կառավարութեան նոր խարդախութիւնները՝ կովկասահայերի դէմ:

Արձանագրութիւն թիւ 15

Օգոստ. 17, 1904

Որոշուեց՝

1) Ուղարկել Ցուցական մարմնին, համաձայն նրա առաջարկի, տասն հազար ֆրանկ:

2) Ուղարկել Սոֆիա՝ Տուֆակչեւին, իբրեւ վերջին գումար նրա վաճառքի՝ 600 ֆրանկ, փակելով դրանով ցարդ եղած հաշիւները:

3) Համաձայն վերջին հասցէի, ստացուած Զմիւռնիայից, ուղարկել իբրեւ նպաստ ընկեր Գեղամին՝ հինգ հարիւր ռուբլի (1300 ֆրանկ):

4) Հաղորդել Կաթողիկոսական պատգամաւորութեան, որ այժմ Լոնտոն է, վերջին տեղեկութիւնները, ստացուած Տարօնից, քաղաքական այցելութիւնների ժամանակ կիր արկանելու համար:

5) Տպագրել «Դրօշակի» Օգոստոսի համարը եօթ հազ[ար] օրինակ աւելացած պահանջին լիութիւն տալու համար:

Արձանագրութիւն թիւ 16

Օգոստ. 31, 1904

Ներկայ նիստում որոշուեց՝

Ա) Պատրաստել տալ Օլթիի ռուսական սահմանապահ կոզակների կատարած բարբարոսութեան «կլիչէնները» (ընդդէմ «Որսկան» խմբի) եւ նրան կցելով ֆրանսերէն բացատրութիւն, տպագրել մի քանի հազար օրինակ եւ տարածել ամբողջ Եւրոպայում, իբրեւ մի նոր փաստ ցարի կառավարութեան անօրինակ արարքների:

Բ) Պատրաստել համաձայն Ցուցական մարմնի խնդրքի, ֆրանսերէն եւ թուրքերէն շրջաբերական, Տարօնի կոմիտէի՝ հիւպատոսներին ներկայացրած պահանջների վերաբերմամբ եւ ուղարկել յիշեալ մարմնին, թուրքական գլխաւոր կենտրոններում, հարկաւոր ժամանակը տարածելու համար:

Գ) Ցանձնարարել ռուսաց «Սոցիալիստ-Յեղափոխականների» ներկայացուցչին՝ Ոսկանապատի[10] մեր ընկերներին, որպէսզի դիւրացնեն այդ կազմակերպութեան ձեռնարկները իրանց շրջանում:

Դ) Ուղարկել Լեռնավայրի[7] ընկերներին, համաձայն նրանց նամակի, այդ շրջանի գործի նախապատրաստութիւնների համար, տասն հազար ֆրանկ, (Ալեքսանդրիա, Դր. Փաշայեանի հասցէին): Դրա հետ միասին ընթացք տալ նոյն շրջանի ընկերների գրածին, զէնքի եւ այլ մթերքների վերաբերմամբ:

Արձանագրութիւն թիւ 17

6 Սեպտ. 1904

Ներկայ նիստում որոշուեց՝

Նկատելով, որ թուրք կառավարութիւնը չորրորդ բանակը զէնքի տակ կը կանչէ, որ Վանի վերջին շարժումի միջոցին թուրք խուժանը կը զինէ, նկատելով նոյնպէս Սասունի դէպքերու առթիւ եւր[ոպական] գործնական միջամտութեան մը չգոյութիւնը՝

Ա) Ուղարկել «Դաշնակցութեան Խորհրդի» անունով Բերլինի Դաշնագրութիւնը ստորագրող տէրութիւններու արտ. գործ. նախարարներուն հեռագրով ազդարարագիր մը եւ պատճէնը հաղորդել մամուլին:

Բ) Նկատելով Շամէն եւ Վրէժէն[24] ստացուած նամակներուն պարունակութիւնը , եւ Շամի մէջ շարժումի սկսումը՝ Ը[նդհանուր] Ժ[ողովի] գծած նախահաշիւին համաձայն Շամի գործերուն յատկացուած գումարէն (3000) ֆրանք անմիջապէս փոխադրել Սալմաստ եւ դրամին փոխադրուած լինելը հեռագրով իմաց տալ:

Գ) Հեռագրել նոյնպէս Pressensé-ին եւ Quillard-ին որ դիմումներ ընեն ֆրանսացի եւ անգլիացի Արտ. գործ. մինիստրներին, կոտորածներուն առջեւը առնելու համար:

24.- Շամը՝ Վան-Վասպուրականն է, իսկ Վրէժը՝ Ատրպատական-Պարսկաստան:

Արձանագրութիւն թիւ 18

24 Սեպտեմբ. 1904

Այս նիստում, որ բացի բիւրոյական անդամներից ներկայ էին ընկերներ՝ Շահրիկեան, Յոնան, Վահագ, Վարդան[25],

Որոշուեց՝

1) ա. Նկատի առնելով Ֆինլանդացիներու եւ լեհացի սոցիալիստներու կողմէ եղած առաջարկը, որով հրաւիրում էին Ռուսաստանի բոլոր դժգոհ տարրերը համագումար կազմելու, ընդունուեց մասնակցիլ կոնգրէսին՝ պատգամաւոր ղրկելով Վարանդեանին։

բ. Պատրաստել մի տեղեկագիր ինքնապաշտպանութեան կոմիտէին գործունէութեան եւ նպատակի մասին։

2) Նկատելով որ Երկրէն [եկած] նամակներու տուած տեղեկութիւնները, որոնց համեմատ Մուշ գտնուող անգլիական փոխ-հիւպատոսը աջակցում է Թուրք կառավարութեան՝ զինաթափ ընելու հայ ժողովուրդը, դիմել Անգլ[իայի] Արտ. գործոց մինիստրին հեռագրով, որ արգիլէ եւ կանգնեցնէ կոնսիւլին՝ իր այս ընթացքին մէջ։

3) Աչքի առաջ ունենալով Վիեննայից՝ Ակինեանի մէկ նամակը, որ պարսիկ վաճառական մը յանձն է առնում Պարսկաստան եւ Տաճկաստանում խոշոր քանակութեամբ զէնք յանձնել, յարմար նկատուեցաւ, գրել Ակինեանին, որ վաճառականը մեր մօտ գայ ուղղակի անձամբ տեսնուելու համար։

25.- Յաջորդաբար՝ Յար. Շահրիկեան, Յոնան Դաւթեան, Արշակ Վռամեան եւ Խանասորի արշաւանքին հրամանատար Վարդան, բուն անունով՝ Մեհրաբեան Սարգիս։

Արձանագրութիւն թիւ 19

2 Հոկտեմբեր 1904

Որոշուեցաւ՝

Ա) Նկատի ունենալով որ քանի մը հանգամանքների պատճառով պրոֆեսոր Racca անկարող է սկսել իր ճամբորդութիւնը դէպի Հայաստան (տես նախորդ արձանագրութիւնները) աւելի վաղ քան Հոկտեմբերի վերջը, առաջարկել նրան յետաձգելու այդ ուղեւորութիւնը մինչեւ գարնան սկիզբը, երբ եղանակը աւելի նպաստաւոր կը լինի նախագծած նպատակը իրագործելու համար։ Դրա հետ միասին որոշուեց՝ նրան խոստացած 2,200 ֆրանկը անձեռնմխելի պահել, իբրեւ այդ ուղեւորութեան յատուկ գումար, եւ նրան տալ իր ժամանակին։ Պրոֆեսորը այդ որոշումներին տուեց իր կատարեալ համաձայնութիւնը։ Տալ նրան իբրեւ ճանապարհածախք մի հարիւր ֆրանկ։

Բ) Ընթացք տալ բոլոր ընթացիկ գործերին՝ վերաբերմամբ ստացուած նամակներին։

Գ) Բանակցութեան մէջ մտնել Ժընեւ եկած պարսիկ վաճառականի հետ՝ զէնքի խնդրի մասին։

Դ) Կազմել «Դրօշակի» Հոկտեմբերի համարը։

Արձանագրութիւն թիւ 20

Հոկտեմբեր 10, 1904

Ներկայ ժողովում որոշուեց՝

1) Ցարգելով Ոսկանապատի[10] ընկերների խնդիրքը՝ եւ նկատելով, որ ցանկալի է մասնագէտ-ռազմագէտներ ուղարկել Երկիրը, որոշուեց՝ դրամապէս նպաստել ընկեր Համբարձումեանին[26]՝ գործնական կերպով ուսումնասիրելու պայթուցիկ նիւթերի եւ դրա հետ կապուած ձեռնարկների խնդիրը։ Այդ պարապմունքի ժամանակը չպիտի անցնի 4-6 ամիսներից։

2) Բաց թողնել ճանապարհածախք Լեռնավայրից եկած ընկեր Սարհատի[27], որը ուղարկուած է զէնքերի տեղափոխութեան համար։ Բացի դրանից՝ դնել նրա տարմադրութեան ներքոյ, հարկաւոր ժամանակը, դրամ՝ գնած զէնքին եւ փոխադրութեան համար։

3) Խնդրել ընկեր Վարդանին[28], որ ուղեւորուում է Լեռնավայր, անցնիլ Ցունաստանով, այնտեղի ընկերների հետ՝ զէնքի գնման խնդիրը կարգադրելու համար։ Զէնք գնելու գործը պէտք է պարզէ ընկեր Ռոստոմ՝ Պարիզի մէջ։

4) Բաց թողնել ի հաշիւ Ամերիկայի Կենտ. Կոմիտէի՝ դրամ, ընկեր Վռամեանի եւ Ցոնանի ճամբի ծախքի համար, որոնք ուղեւորուում են դէպի Ամերիկա։

5) Տպագրել «Դրօշակի» N° 10-ը եօթն հազար երկու հարիւր օրինակ։

6) Բանակցութեան մէջ մտնել երիտասարդ Շապ.-ի հետ, որը ցանկութիւն է յայտնում, իր մասնագիտական հետազօտութիւնների պատրուակով, մտնել Թուրքաց Հայաստան եւ զբաղուել մեր գործերով։

26.- Շատ հաւանաբար Կոստի Համբարձումեանն է։

27.- Շփոթել Գէորգ Չաուշի հետ, որ նոյնպէս ծանօթ էր Սարհատ ծածկանունով։ Այս մէկը՝ Յ. Յակոբեան գործած է Կիլիկիոյ եւ Իզմիրի շրջաններուն մէջ, ապա զբաղած նաեւ զէնքի փոխադրութեան գործով։

28.- Խանասորի Վարդանն է՝ Մեհրաբեան Սարգիս, որ Զաւարեանի հետ ընտրուած էր Լեռնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու մարմնի անդամ։

Արձանագրութիւն թիւ 21

Հոկտ. 24, 1904

Որոշուեց՝

Ա) Գրել մարմիններին՝ որ Դաշնակցական Խորհուրդը պիտի ժողովի հրաւիրուի Դեկտեմբերի կէսին, խնդրելով տեսնել հարկաւոր պատրաստութիւնները՝ այդ գումարման համար։ Վաղօրօք գրել այդ մասին Երկրի մարմիններին։

Բ) Գրել Արեւելեան Բիւրոյին՝ որպէսզի առաջարկուի Երկրի գործիչ Անդրանիկին[29]*, որ այժմ Սալմաստ է անցել, շտապելու ժամանակաւորապէս Եւրոպա, մասնակցելու Դաշնակցական Խորհրդի*[30] *պարապմունքներին։*

Գ) Հաղորդել Արեւելեան Բիւրոյին, որ Պարիզի միջոցով Սասուն ուղարկուած 35 հազար ֆրանկը արդէն հասել է Վան, խնդրելով դարձեալ նոր գումար հասցնել մեզ, իբրեւ նպաստ Սասունի կարօտեալներին։ Այդ նոր գումարն էլ, ֆրանսիական կառավարութեան միջոցով փոխադրել Հայաստան։ Տեղեկացնել այդ մասին Վասպուրականի եւ Տարօնի կոմիտէներին։

Դ) Պատասխանել կովկասեան կենտրոնական մարմիններին հաշիւների մասին գրած նամակներին առիթով։

Է) Ուղարկել Վառնա, ընկեն Սարգիս Աբրահամեանի հասցէին, Վիշապի համար 12,000 francs *համաձայն Վիշապի*[13] *ընկերների որոշման։*

Զ) Ցանձն[արար]ել ընկեր Ռոստոմին անձամբ, Պարիզում տեղեկութիւններ հաւաքել զէնքերի տեսակի ու տեղափոխութեան համար, այնտեղ գնալով Լեռնավայր[7] *ուղեւորուող ընկեր Վարդանի հետ միասին։*

29.- Հայդուկապետն է, որ Սասնոյ ապստամբութեան ճնշումէն ետք անցած էր Ատրպատական եւ շուտով Կովկասի վրայով պիտի ուղեւորուէր դէպի Եւրոպա։

30.- «Դաշնակցութեան Խորհուրդը» ստեղծուած էր Երրորդ Ընդհ. ժողովին (1904) փոխարինելով նախկին «Դաշնակցութեան Կամքը» ներկայացնող մարմինը։ «Խորհուրդը» կը կազմուէր Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոյի, ինչպէս նաեւ Պատասխանատու Կ. Կոմիտէներու մէկական ներկայացուցիչներէն, եւ պարբերաբար գումարուելով կը կայացնէր գործնական բնոյթի կարեւոր որոշումները։ Խորհուրդի յիշուած ժողովը, պայմաններու բերումով, պիտի յետաձգուէր՝ գումարուելու համար 1905 թ. Փետրուարէն սկսեալ։

Արձանագրութիւն թիւ 22

Նոյեմբ. 10, 1904

Ներկայ ժողովում ներկայութեամբ Ժընեւ գտնուող ընկեր Նիթրայի[31]*, կայացան հետեւեալ որոշումները։*

Ա) Խնդրել Արեւելեան Բիւրոյին, որ անմիջապէս ձեռնարկեն՝ կազմակերպելու Կովկասից կանոնաւոր ու սիստեմատիկաբար տեղեկութիւններ հաղորդելու գործը, եւ այդ նպատակով պահել մէկ երկու հոգի, իբրեւ յատուկ թղթակիցներ, որոնց պարտքը պիտի լինի պտտել Երկիրը եւ թղթակցութիւններ ուղարկել խմբագրութեան։

Բ) Դրամական վարձատրութեամբ՝ պահել 2-4 հոգի, մի մասը Պարսկաստան, միւսը Կովկաս, որոնք յատկապէս պէտք է զբաղուեն յեղափոխական գրականութիւնը ստանալու եւ տարածելու գործով։ Առաջարկել եւ թողնել այդ խնդրի իրագործումը կովկասեան մարմիններին։

Գ) Գրել Ինքնապաշտպանութեան կոմիտէին, որ խմբագրութիւնը գտնում է միանգամայն աննպատակայարմար — քննելով մանրամասն բոլոր հանգամանքները — առանձին թերթի հրատարակութիւնը Կովկասում։ Աւելի նպատակայարմար գտնելով Արեւելեան Բիւրոյի առաջարկը՝ արտատպել «Դրօշակը» Կովկասի համար, գրել որ առաջիկայ համարից կը պատրաստուեն ձուլուած երեսները եւ կ'ուղարկուեն այնտեղ, փորձելու այդ միջոցը։

Դ) Ուղարկել Աթէնք, ընկեր Սարհատի հասցէին, (համաձայն այնտեղ եղած ընկերներ Վարդանի եւ Սարհատի գրութեան) հինգ հազար ֆրանկ, զէնք գնելու եւ Լեռնավայր տեղափոխելու համար։

Ե) Տեղեկացնել մեր բարեկամ Քիյառի, որ շուտով պիտի ստանայ Կովկասից, մեր մարմինների միջոցով, տասն հազար ֆրանկ, Արտաքին գործերի մինիստրութեան միջոցով Սասունի կարօտեալներին հասցնելու համար։

Զ) Ուղարկել Բիւրոյի տրամադրութեան ներքոյ եղած գումարից երկու հազար ֆրանկ, Պարիզ, այնտեղից Վանի կարօտեալներին հասցնելու համար, մինիստրութեան միջոցով։

31.- Յարութիւն Շահրիկեանի։

Արձանագրութիւն թիւ 23

Նոյեմբ. 12, 1904

Ներկայ նիստում որոշումներ եղան՝

Ա) Տպագրել եւ մինչեւ ամսի 15-ը տարածել մի յատուկ շրջաբերական, Դեկտեմբերին կայանալիք Դաշն. Խորհրդի գումարման վերաբերմամբ (150 օրինակ):

Բ) Գրել յատուկ նամակ Ցուցական մարմնին հրատարակելի պրոկլամասիոնի վերաբերմամբ, եւ սպասել նրա կարգադրութեան:

Գ) Տեղեկութիւններ հաղորդել Լեռնավայրի ընկերներին, ուղարկած դրամի եւ գնուած զէնքերի քանակի մասին:

Դ) Պատասխանել Լոնտոն ընկեր Թայինեանին[4]՝ ա) որ կաթողիկոսական պատգամաւորութիւնը չպէտք է կանգնեցնել, այլ ընդհակառակը, շարունակել դիմումները միւս կառավարութիւններին եւս — Բերլին, Վիեննա, Հռոմ, եւ բ) Ջնեռնարկել անգլերէն լեզուով յատուկ թերթի հրատարակութեան, քանի որ Ընդհանուր Ժողովը բացարձակապէս մերժել է այդ առաջարկը: Այս երկու կէտի մասին հաղորդել, իբր տեղեկութիւն, պ. Քիյառին եւս, Պարիզ:

Ե) Նշանակել Արտաշէսին — խմբագրատանը աշխատելու իբրեւ վարձ-ամսական յիսուն ֆրանկ, եւ որոշել նրա անելիքները ճշտորէն:

Զ) Ուղարկել ծրագիրներ եւրոպական կարեւոր օրգաններին՝ Սասունից ստացուած ամենանոր տեղեկութիւնների վերաբերմամբ:

Է) Հաղորդել Ռուսաց «սոցիալիստ-ռեւոլուցիոներ»[32] կազմակերպութեան Ժընեւի կոմիտէին, թէ որքան բրոշիւրներ եւ թերթեր կարելի է փոխադրել Դաշնակցութեան գծերով: Ուղարկուած յեղափոխական գրականութիւնը պիտի տարածուի մեր կոմիտէների հայեցողութեամբ:

32.- Բնագրին մէջ՝ ռուսատառ:

Արձանագրութիւն թիւ 24

Դեկտեմբերի 10, 1904

Ներկայ նիստում կայացած որոշումները՝

Ա) Նկատի ունենալով Վառնայում մեր չորս ընկերների ձերբակալութիւնը, նախազգուշացնել՝ ում հարկաւոր է, հասցէների եւ նամակագրութեան վերաբերմամբ:

Բ) Գրել Քիյառի միջոցով՝ մինիստր Դելկասէին, խնդրելով դարձեալ ճնշում գործադնել կ. Պոլսում, ի նկատի ունենալով, որ Գիսակի[33] գործը պէտք է վերաքննութեան ենթարկուի, եւ ուրեմն յարմար միջոց է որեւէ օգնութիւն հասցնելու:

Գ) Ուղարկել Պարսկաստանի վրայով՝ «Դրօշակի» ձուլած երեսները, որոնք արդէն պատրաստուած են եւ նոյն փորձը անել «Դրօշակի» N° 12-ի վերաբերմամբ:

Դ) Ուղարկել Աթէնք, Սարհատին վեց հազար ֆրանկ, փոխադրութեան ծախքերի համար, համաձայն Լեռնավայրի ընկերների նամակին:

Ե) Գրել Racca*-ին, որ շատ հաճելի է մեզ նրա առաջարկը՝ նիւթապէս օգնել իտալացի հայասէրին՝ ճանապարհորդելու Հայաստան. տարաբախտաբար Դաշնակցութեան նախահաշիւը թոյլ չի տալիս իրագործելու այդ:*

Զ) Պատրաստել յաւելուածական Տեղեկագիր գործերի այժմեան վիճակի մասին՝ կենտրոնական կոմիտէներին ուղարկելու համար: Նոյնը ուղարկել Ամերիկա ոչ ուշ քան ամսի 14-ը, որպէսզի հասնի նրանց Ընդհանուր Ժողովին:

Է) «Դրօշակի» Դեկտեմբերի համարը աւելացնել եւ տպագրել 7,500 օրինակ:

Ը) Խնդրելով, որ շտապեցնեն Կովկասից գրաշար ուղարկել, յայտնել գրաշար Ներսէսին, որ նա ազատ է իր պաշտօնից՝ Ցունուարից սկսած:

33.- Վարդգէս Սերենկիւլեան, որ կը գտնուէր Վանի բանտը: Քիյառը, ինչպէս ծանօթ է, Պրօ-Արմենիա-ի խմբագրապետն էր, իսկ Դելկասէն՝ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը:

Արձանագրութիւն թիւ 25

1904 *Դեկտեմբեր* 14

Այս նիստում գլխաւոր խնդիրը՝ Խորհրդի գումարման մանրամասներն էին։

Որոշուեցաւ՝

1. *ա) Հրաւիրել Խորհուրդը, ինչպէս արդէն յայտնուած է, Դեկտեմբերի 15/28-ին, եւ տեղեկագրել այդ մասին ուր հարկաւոր է։*

բ) Պատրաստել Խորհրդի համար մի Տեղեկագիր, եւ ժողովի Օրակարգը, բոլոր մանրամասներով։

գ) Տեղեկացնել՝ որ Խորհրդին պիտի մասնակցեն՝ 1) Արեւելեան Բիւրոն, 2) Արեւմտեան Բիւրոն, 3) Վիշապ, 4) Սասուն, 5) Լեռնավայր եւ 6) [Կովկասի] Ինքնապաշտպանութեան կոմիտէն։ Բացի դոցանից կարող է մասնակցել եւ Վասպուրականը, ենթադրելով որ այնտեղ արդէն կազմակերպուած է Պատասխանատու մարմին։

դ) Միւս տեղերի ընկերներին (Պարիզ, Աթէնք) հրաւիրել, համաձայն նրանց ցանկութեան, Խորհրդի ժողովին նախօրօք վերջինի որոշումը առնելով (բացման նիստին)։

ե) Ենթարկել Խորհրդի քննութեան այն առաջարկները, որոնք կը գան դաշնակցական մարմիններից առհասարակ։

2. *Վիշապի*[13] *ընկերների խնդրածները՝ չտապեցնել, որպէսզի էլէն*[1] *միջոց ունենայ ըստ կարելոյն շուտ այնտեղ վերադառնալ։*

3. *Ընթացք տալ Լեռնավայրի խնդիրներին, համաձայն նրանց վերջին նամակների։*

4. *Շնորհաւ[որ]ութեան հեռագիր ուղարկել Պրեսանսէին եւ Քիյառին՝* «Européen»*-ի խմբագրութիւնը ստանձնելու առիթով։*

5. *Պատասխանել Արեւելեան Բիւրոյի հեռագրին, Սասունի կարօտեալներին ուղարկած գումարի վերաբերմամբ։*

6. *Հաղորդել Թիֆլիս Միջնորդին, որ «փոթ[որիկ]»-ի պահանջը («Փ»-ի) պէտք է իրագործել այն պայմաններով, որոնք որոշուած են Ժընեւի տեսակցութեան ժամանակ։*

7. *Պատրաստել «Դրօշակի»* 1905 *թ.-ի* N° 1*-ի բովանդակութիւնը։*

8. *Ուղարկել թղթակցական տեղեկութիւններ* «Pro Armenia»*-ին Կովկասի եւ Հայաստանի մասին։*

Արձանագրութեան թիւ 26

1904, *Դեկտեմբերի* 20

Քննութեան առնուեցաւ՝

Ա) Արեւելեան Բիւրոյի ցանկութիւնը, Խորհուրդը գումարել ոչ թէ Եւրոպա, այլ Կովկաս։ Ցարգելով այդ առաջարկը, որոշուեցաւ այդ մասին իմանալ Վիշապի եւ Լեռնավայրի կարծիքը, եւ վերջինների համաձայնութեան դէպքում՝ հեռագրով յայտնել վերջնական համաձայնութիւն, այլ մանրամասների հետ միասին։

Որոշուեցաւ՝

1) *Նորից դիմում անել Պրեսանսէի եւ Քիյառի միջոցով Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրութեան՝ իմանալու վերջնականապէս՝ թէ ինչու Հայաստան ուղարկուած փողը՝ մինչեւ այժմ հիւպատոսը նպատակին՝ կարօտեալներին չէ հասցրել։*

2) *Գրել Ամերիկա, դաշնակցական կենտր. կոմիտէին, հանգանակած գումարը ուղարկել Սասուն, ամերիկական հիւպատոսների միջոցով։*

3) *Գրել Լոնտոն, արտաքին գործերի մինիստրութեան, խնդրելով որոշ գումար ստանալ եւ փոխադրել [?] Հայաստան, անգլիական հիւպատոսների միջոցով։*

4) *Փոխադրել Ֆիլիպպէ, էլէնի խնդրած հազար ֆրանկը՝ ի հաշիւ Ցուցական մարմնի։*

5) *Գրել Պարիզ, Թայինեանին, որ, տարաբախտաբար, դրամարկղի վիճակը եւ լինելիք կարեւոր ծախքերը թոյլ չեն տալիս՝ կատարել նրա դրամական նոր պահանջը։*

6) *Վճարել «Դէպի կռիւ» գրքի*[34] *տպագրութեան ծախքերը, եւ գիրքը* (2,000 *օրինակ*) *տարածել կոմիտէներին, մեծ մասը վերապահելով Կովկասին։*

Արձանագրութիւն թիւ 27

1905, *Յունուար* 20

Որոշուեցաւ՝

1) *Նկատի ունենալով Վիշապի պատասխանը, Խորհուրդը կայացնել Եւրոպա եւ այս մասին անմիջապէս յայտնել կովկասեան եւ Թուրքաց-Հայաստանի մարմիններին։*

2) *Համաձայն Լեռնավայրի ընկերների նամակի՝ սրանից յետոյ գումար բաց թողնել այն դէպքում միայն, երբ տեղեկութիւն կը ստացուի ընկերներ Սիմոնից եւ Վարդանից*[35]*։ Այս մասին յայտնել նոյն շրջանի գործին կապուած այլ ընկերներին։*

3) *Գրել Պարիզ, ընկեր Թայինեանին*[4]*՝ Ժընեւ գալու կարեւորութեան մասին, որպէսզի կարելի լինի միասին պարզել պարիզեան ծախքերի խնդիրը։*

4) *Գրել դարձեալ մի անգամ բոլոր մարմիններին՝ խնդրելով ուղարկել Բիւրոյին՝ դրամական հաշիւները, հաշուեմատեանը կարգի բերելու համար։*

34.- Է. Ակնունիի հեղինակութիւնը՝ նուիրուած եկեղեցական կալուածներու գրաւման եւ կովկասեան վերջին իրադարձութիւններուն։

35.- Սիմոն Զաւարեանին եւ Խանասորայ Վարդանին (Մեհրաբեան Սարգիս), երկուքն ալ անդամ Լեռնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու մարմնին։

Արձանագրութիւն թիւ 28

1905, *Փետրուարի* 4

Այս նիստում որոշուեցաւ՝

1) *Նկատի առնելով Ռուսաստանում յեղափոխական շարժման բռնկումը ա) տեղեկացնել այս մասին կովկասեան մարմիններին, անելու հարկաւորը. բ) տպագրել «Դրօշակի» յաւելուածներ, նուիրուած այդ շարժման, եւ շտապով տարածել Կովկաս:*

2) *Առաջարկել Ժընեւի, ինչպէս եւ Ժընեւ գտնուող յեղափոխական եւ սոցիալիստական կազմակերպութիւններին՝ կազմակերպել ընդհանուր մեծ-միտինգ, բողոքելու ցարիզմի արարքների դէմ, Պետերբուրգի վերջին դէպքին ժամանակ:*

3) *Ցանկանալով աւելի շեշտել այն համերաշխութիւնը, որ Դաշնակցութիւնը ցանկանում է ունենալ կռուող*[36] *տարրերի հետ, ինչ ազգի էլ պատկանեն նրանք, խմբագրութիւնը հնարաւոր գտաւ տալ այն փոքրիկ դրամական նպաստը, որ խնդրում են ռուս եւ վրացի ընկերներ,— Ռուս. սոց-դեմոկրատ եւ յեղափոխական մարմիններին պատկանող — Կովկաս վերադառնալու եւ այնտեղ գործելու նպատակով: Որոշուեցաւ նոյնպէս տալ եւ անցագիրներ, որ խնդրում են, նրանց երկիր մտնելը դիւրացնելու համար: Գրել այդ մասին կովկասեան ընկերներին:*

4) *Ուղարկել Վիշապ նրանց խնդրած քսան հազար ֆրանկը, եւ մտցնել Յուցական մարմնի հաշուին:*

5) *Որոշուեցաւ՝ Յունուարից մինչեւ Ապրիլ 1-ը՝ տալ ընկեր Թայինեանին, «Պրօ-Արմենիա»-ի ծախքերի համար՝ ամսական հազար ֆրանկ: Բացի դրանից նրա տրամադրութեան յանձնուեց հազար ֆրանկ՝ չնախատեսնուած ծախքերի համար: Ընկեր Թայինեանի ներկայութեամբ այդ որոշումները կայացնելով, միեւնոյն ժամանակ պարզուեց անցեալ 1904 թուի հաշիւները, եւ երեւաց, որ երկու հազար ֆրանկի գումար պէտք է լինի «Պրօ-Արմենիա»-ի գանձարանում — (պատասխանատուութիւնը ընկեր Թայինեանի*[4] *վրայ է):*

6) *Պատրաստել «Դրօշակի» N° 2 եւ բացի դրանից «Յաւելուած», վերջինը նուիրուած Ռուսաստանի անցքերին:*

Արձանագրութիւն թիւ 29

1905, *Փետրուար* 22

Որոշուեցաւ՝

Ա) Դնել պ. Քիյառի տրամադրութեան տակ մի հազար ֆրանկ, «Պրօ-Արմենիա»-ի մէջ գրողներին իբրեւ հոնորար տալու համար: Այդ գումարին կէսը արդէն փոխադրուեցաւ Պարիզ:

Բ) Գրել Պարիզ, Մ. Թ.-ին խնդրելով Ժընեւ փոխադրել խմբագրութեան համար Թիֆլիսից (Փ[ոթորիկ]-ի գումար) ստացուած 30 հազար (երեսուն հազար) ֆրանկը:

Գ) Ուղարկել Ֆիլիպպէ՝ Էլլէնի անունով երկու հազար ֆրանկ, ի հաշիւ Յուցական մարմնի:

Դ) Ուղարկել Վան, Վիշապի վրայով, համաձայն այնտեղի ընկերների նամակին, հարիւր ոսկի, ի հաշիւ Արեւելեան Բիւրոյի 1905-ի նախահաշուին:

Ե) Ուղարկել Տիկին Հորդանսին[37]*, ի հաշիւ «Կովկասեան վէրքերի» ֆրանսերէն թարգմանութեան, երկու հարիւր ֆրանկ եւ տպագրութեան յանձնել ֆրանսերէն ձեռագիրը:*

36.- Կռուող, կռուող գործածուած է պայքար, պայքարող իմաստով:
37.- Յոհան Դաւթեանի գուիդոնովի կիսն է:

Արձանագրութիւն թիւ 30

1905, 2 *Մարտ*

Ներկայ Մարտ ամսին սկսուեցին Դաշնակցական Խորհրդի պարապմունքները, որոնք մի քանի ընդմիջումներով՝ վերսկսուեցին Ապրիլին: Խորհրդի պարապմունքների մանրամասները տեսնել նրա արձանագրութեան առանձին մատեանի մէջ:

Արձանագրութիւն թիւ 31

Ապրիլի 18, 1905

Կայացան հետեւեալ որոշումները.

1) *Մանօթանալ Լեռնավայրի Պատ. մարմնի անդամ ընկեր Վարդանի բերած տեղեկագրի հետ, եւ ըստ այդմ ընթացք տալ այդ գործին:*

2) *Փորձել փոխադրութեան այն գիծը, որ հաստատւում է Լեհաստանի վրայով՝ յեղափոխական գրականութեան համար:*

3) *Ուղարկել պատշաճաւոր մարմիններին Խորհրդի որոշումների էական մասերը:*

4) *Տպագրել «Դրօշակի» այս համարում ընկեր Քրիստափոր Միքայէլեանի պատկերը եւ նրան կցած յօդուածներ, թողնելով կենսագրութիւնը մօտիկ համարներին*[38]*:*

5) *Հրատարակել առանձին թերթով այն դեկլարասիոնը, որ մշակուած է յեղափոխական կուսակցութիւնների վերջին խորհրդաժողովում, «Դաշնակցութեան» մասնակցութեամբ, Կովկաս ուղարկելու համար (իւրաքանչիւր կազմակերպութիւն միեւնոյն դեկլարասիոնը պիտի տպագրի իր լեզուով, մինչեւ Ապրիլի 29-ը):*

6) *«Դրօշակը», Մայիսի համարից սկսած, տպագրել տասն հազար օրինակ, կովկասեան պահանջին լիութիւն տալու համար:*

7) *Շարունակել բանակցութիւնները Խանի հետ, զէնքի գնման եւ տեղափոխութեան գործը աւարտելու համար:*

8) *Ցանձնարարել Արեւելեան Բիւրոյի անդամ ընկեր Մհերին*[39]*, հոգալու՝ որ Կովկասում պահուեն երկու յատուկ թղթակիցներ, «Դրօշակի» համար, պարտաւորութիւն դնելով նրանց վրայ շրջել գաւառները եւ պարբերաբար հաղորդել կովկասեան կեանքի նորութիւնները (քաղաքական գլխաւորապէս):*

9) *Հանել ընկեր Անդրանիկին այն գաղտնի վիճակից, որի մէջ գտնուում էր արտասահմանում, եւ միջոց տալ եւրոպական լրագիրների թղթակիցներին՝ տեղեկութիւններ հաղորդել նրա մասին՝ մամուլի զանազան օրգաններին:*

10) *Նոր գրաշար Խաչիկին նշանակել ամսական հարիւր ֆրանկ վարձատրութիւն:*

38.- Յիշեցնենք որ Քրիստափոր միայն ամիս մը առաջ (17 Մարտ 1905), Դաշնակցութեան Խորհուրդի նստաշրջանի օրերուն, մահացած էր ձեռնառուսքի փորձարկման ընթացքին: Չարաբախտ այդ դէպքին պատճառով ընդհատուած էին թէ՛ Խորհուրդի եւ թէ՛ Արեւմտեան Բիւրոյի նիստերը:
39.- Մհերը ծածկանունն է Համօ Օհանջանեանի, որ Ժընեւ եկած էր Անդրանիկի հետ, Դաշն. Խորհուրդի ժողովներուն մասնակցելու համար:

Որոշումների արձանագրութիւն թիւ 32

Մայիսի 10, 1905

Այս նիստում որոշուեցին՝

ա) Գրել Ցուցական մարմնին եւ նրա անդամ ընկեր Սաֆոյին[40], *որ Վիշապից դուրս է, առանձին ուշադրութիւն դարձնելու դրամական պահանջների եւ ծախքերի վրայ, նկատի ունենալով, որ մարմինը խոշոր պահանջներ է անում՝ առանց մանրամասն եւ ստուգած հաշիւներ ուղարկելու Բիւրոյին։*

բ) Զէնքի վերաբերմամբ վերջնական պայմանագիր ուղարկել պարսիկ Խանին առաջարկելով որոշուած ժամանակամիջոցում տալ իր վճռական պատասխանը։

գ) Խնդրել ընկեր Թայինեանին՝ մանրամասն տեղեկագիր ուղարկել Լոնտոնից, նոր հրատարակութեան[41] *վերաբերմամբ (տես Խորհրդի արձանագրութիւնները) որպէսզի կարելի լինի վերջնական որոշումն կայացնել նախագծուած օրգանի սկսման վերաբերմամբ։*

Արձանագրութիւն թիւ 33

1905 *Մայիսի* 18

1) *Լսելով ընկեր Վարդանի առաջարկը՝ Սարհատին եւ Մարտինին Լեռնավայր ուղարկելու մասին։*

2) *Լսելով ընկեր Անտոնի առաջարկը՝ Տիրանին*[42] *նոյն շրջանը ուղարկելու վերաբերմամբ, Արեւմտեան Բիւրոն, համաձայնութեամբ ներկայ եղող ընկերների*

Որոշեց՝

Ընդունել այդ երկու առաջարկը, ընթացք տալ նրանց, եւ այդ մասին անմիջապէս տեղեկացնել թէ՝ Լեռնավայրի մարմնի բացակայ անդամ Անտոնին, եւ թէ նրանց, որոնք այդ շրջանը պիտի մտնեն (մանրամասները տես Լեռնավայրի գրութիւններին մէջ)։

Լսելով Լեռնավայրի մարմնի տեղեկութիւնները Սարհատի եւ Մարտինի դրամական ծախքերի վերաբերմամբ, որոշուեց՝ խիստ նկատողութիւն անել այդ երկու ընկերներին, եւ գործը մանրամասն քննելուց յետոյ՝ դատի ենթարկել նրանց՝ եթէ այդ մասին փաստեր կը լինին (մանրամասները տեսնել Լեռն. մարմնի թղթերի մէջ)։

40.- Մարտիրոս Մարգարեան, որ Ապտիւլ Համիտի դէմ կազմակերպուած մահափորձին պիտի փոխարինէր Քրիստափորը, վերջինիս եղերական մահէն ետք։

41.- Հարցը կը վերաբերի «Պրօ-Արմենիա»-ի անգլերէն հրատարակելու ծրագրին։

42.- Յիշուած անուններէն Վարդանը՝ Խանասորի Վարդանն է (Մեհրաբեան Սարգիս), Անտոնը՝ Սիմոն Զաւարեան։ Սարհատը (Յ. Յակոբեան), Մարտինը (Մարթին Մուրատեան) եւ Տիրանը Լեռնավայր-Կիլիկիոյ գործիչներ են։

Արձանագրութիւն թիւ 34

1905, *Յունիսի* 1

Կայացան հետեւեալ որոշումները՝

1) *Ընտրել մի յանձնաժողով, քննելու թէ Արեւմտեան Բիւրոյի եւ թէ դաշնակցական բոլոր [մարմինների] դրամական հաշիւները՝ ստացած Բիւրոյի մէջ (Յանձնաժողովի անդամներ ընտրուեցին՝ Վարդան, Մար, Յոնան, Վահրամ եւ Ակնունի)*[43]։

2) *Ընտրել մի մասնախումբ, վերջնականապէս խմբագրելու (Բիւրոյի եւ Խորհուրդի տուած ցուցմունքներով) Ընդհանուր Ժողովի արձանագրութիւնները եւ յանձնելու շտապով տպագրութեան (ընտրուեցին՝ Միքայէլ, Վահրամ եւ Յոնան)*[44]։

3) *Անմիջապէս կազմել Խորհրդի արձանագրութեան մաքուրը (Միքայէլ եւ Վահրամ)։*

4) *Բալկանեան Կենտ. Կոմիտէի եւ Վարդոյի*[45] *միջեւ ծագած դրամական խնդրի առիթով՝ երկրորդ եւ վերջին անգամ գրել Վարդոյին, տալով նրան մի ամիս պայմանաժամ (առաջին նամակը գրելու ամիսը լրանալուց յետոյ)։ Եթէ պայմանաժամը լրանալուց յետոյ՝ չիրագործէ Խորհրդի որոշումը, վարուել Վարդոյի վերաբերմամբ՝ համաձայն Կանոնադրութեան։*

5) *Գրել Ամերիկայի Կենտ. Կոմիտէին՝ որ անկարելի է բաւարարութիւն տալ նրանց ցանկութեան՝ ընկեր Անդրանիկին Ամերիկա ուղարկելու վերաբերմամբ։*

6) *Ուղարկել Կենտրոնական Կոմիտէներին՝ տեղեկագիր միջ-կուսակցային խորհրդաժողովի այն որոշումների մասին, որոնց տպագրութիւնը «Դրօշակի» մէջ անյարմար է։*

7) *Գրել Ոսկեհանք անմիջապէս՝ ա) ենթարկուել Խորհրդի որոշման եւ ձեռնարկը, եթէ լինելու է, անել Վիշապի ձեռնարկից յետոյ միայն (տես Խորհրդի արձանագրութիւնները) եւ բ) նախազգուշացնել Ոսկեհանքի մարմնին, որ անկարգապահութեան դէպքում՝ նա կը յայտարարուի Դաշնակցութիւնից դուրս*[45]։

8) *Դրամական նպաստ ուղարկել քաղաքական բանտարկեալներին՝ Աչեգկոզեանի տուած հասցէով եւ նրա միջոցով։*

9) *Տեղեկագրել մամուլին՝ նահանգապետ Նակաշիձէին դէմ կատարուած տեռորին եւ դրա շարժառիթների մասին։*

10) *Ուղարկել մարմիններին մեր նոր բրոշիւրները՝* «Պոտվիգի Յարիզմա»[46], «Les tueries à Bacou» *եւ «Յեղափոխականներ»։*

43.- Մարը՝ Տէր Մարտիրոսեան Միքայէլ, Յոնանը՝ Դաւթեան, Վահրամը՝ Յար. Գալֆայեան, Միքայէլը՝ Վարանդեան։

44.- Վարդոյի խնդիրը (Վարդ-Պատրիկեան), դրամական իւրացումի հարց է։

45.- Հարցը կը վերաբերի Ոսկեհանքի (Իզմիր) մէջ թուրք պետական եւ եւրոպական շարք մը հաստատութիւններու դէմ ծրագրուած խափանարարական ձեռնարկներուն, որոնք Դաշնակցութեան Խորհուրդի որոշումով պէտք է գործադրուէին «Վիշապի ձեռնարկին», այսինքն Պոլսոյ մէջ Ապտիւլ Համիտի մահափորձէն ետք։

46.- Բնագրին մէջ՝ ռուսատառ։ «Les tueries à Bacou»՝ ֆրանսերէն՝ Բագուի ջարդերը։

Արձանագրութիւն թիւ 35

28 Յուլիս 1905

1) Վարդոյի խնդրի առթիւ որոշուեց Արեւմտ. Բիւրոյի կողմէն տպուած շրջաբերականներով պարզել նրա տգեղ վարմունքը դաշնակցական ընկերներին եւ հայ հասարակութեան:

2) Յուց. մարմնի անդամներէն Սաֆոյի եւ Ռուբինայի[47] ներկայութեամբ որոշուեց գրել Ոսկեհանքի մարմնին Վիշապի ձեռնարկի մանրամասնութիւնը. հրահանգել, որ առանց հապճեպի աշխատին այնտեղի ձեռնարկի լաւ պատրաստութեան՝ որչափ դա կարելի է եւ Վիշապի ձեռնարկի մեր կողմէն կատարուած լինելու հրատարակութիւնը յետաձգել մինչեւ Ոսկեհանք[ի] ձեռնարկի գլուխ ելլելուն:

Արձանագրութիւն — Որոշումներ թիւ 36

Օգոստոս 28, 1905

Կայացան հետեւեալ որոշումները

1) Համաձայնուել ուղարկելու Ֆրանսիացի պուբլիցիստ[48] Գաբրիէլ Բերդրանին Կովկաս, ուսումնասիրելու վերջին ընդհարումները թուրքերի եւ հայերի մէջ, նրանց պատճառները, գաղտնի եւ յայտնի առիթները, եւ տալ այդ մասին եւրոպական հասարակութեան մամուլի միջոցով եւ եթէ հարկ լինի առանձին գրքով, մանրամասն եւ ճիշտ տեղեկութիւններ: Ցատկացնել այդ գործին երեք հազար ֆրանկ (3,000):

2) Հրատարակել թուրք լրագիր «Հեշիոթի» խմբագրութեան յանձնարարուած բրոշիւրը՝ թուրքերէն լեզուով, ուղղուած «կովկասեան մահմեդականութեան» եւ տարածել Կովկաս եւ Թուրքիա, մուսուլման ժողովրդի շրջանում:

3) Ցատուկ ընկերներ ուղարկել Մարսէյլ, այնտեղից Կովկաս զէնքի փոխադրութեան գործը առաջ տանելու համար: Պատուիրել մ[առուզեր] ատրճանակներ՝ պահեստի մէջ որոշ քանակութեամբ ունենալու եւ առաքումը կանոնաւորելու համար:

4) Հրատարակել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոյի կողմից յատուկ շրջաբերական, հրաւիրելու Ընդհանուր Ժողով ներկայ 1905 թուականի վերջում, համաձայն վերջին Խորհրդի որոշման[49]:

5) Տպագրել «Դրօշակի» Սեպտեմբերի համարում Ազդարարութիւն, հրաւիրելով Բալկանեան կոմիտէի նախկին անդամ Վարդոյին մտցնելու կազմակերպութեան գանձարանը նրա մօտ եղած գումարները (Տես Բալկ. կ. կոմիտէի եւ Արեւելեան Բիւրոյի տեղեկագիրները):

6) Բանակցութեան մէջ մտնել Վիկտորեանի եւ Պարսկի հետ՝ զ[էնք]-ի տեղափոխութիւնը չտապեցնելու համար:

7) Ձեռնարկել Սեպտեմբերի մէկից՝ «Դրօշակը» ամիսը երկու անգամ հրատարակելուն, իւրաքանչիւր ամսի 1-ին եւ 15-ին:

8) Հրատարակել շրջաբերական՝ խնդրելով դաշնակցական բոլոր մարմիններից յեղափոխական բնոյթ ունեցող բոլոր տեղեկութիւնները, պարբերաբար, խմբագրութեան հաղորդել «Դրօշակի» էջերում արձանագրելու նպատակով:

47.- Սաֆոն՝ Մարտիրոս Մարգարեանն է: Ռուբինան (Արէշեան) Ցուցական մարմնի անդամ ընտրուած էր Քրիստափորի մահէն ետք:
48.- Հրապարակագիր:
49.- Այդ որոշումին գործադրութիւնը կովկասեան իրադարձութիւններու եւ յատկապէս հայ-թրքական ընդհարումներու պատճառով պիտի յետաձգուէր քանի մը անգամ, ի վերջոյ գումարուելու համար միայն 1907 թ. Փետրուարին:

Փաստ. 51



Բ.- Որոշումներ

(Համառօտ հաշուեցագրութիւն)

1907-յունվ.

Որոշումներ թիւ 1

1907, Յունիսի 10

1) Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը, Ակնունի, հաղորդեց Բիւրո-խմբագրութեան՝

ա) Ընդհանուր Ժողովի որոշումները եւ կարգադրութիւնները[1].
բ) Ցանձնեց Ժողովի դրամական հաշիւները, պահուած յատուկ ծախսարարի ձեռքով.
գ) Ժողովին տարուած բոլոր թղթերն ու դոկումենտները:

Որոշուեց՝

ա) Ցանձնել Բիւրոյի հաշուապահին բոլոր հաշիւները, Մայր-մատեանի մէջ ներմուծելու համար.
բ) Արխիւ տալ ժողովից բերուած բոլոր թղթերն ու դոկումենտները.
գ) Անմիջապէս տպագրութեան յանձնել՝ 1- ժողովի որոշումները, 2- «Կանոնագիրը» եւ 3- «Մրագիրը» ու «Նուազագոյն պահանջները»:
դ) Ուղարկել բոլոր մարմիններին՝ Ընդհ. Ժողովի որոշումները:

Է. ԱԿՆՈՒՆԻ

1.- Հարցը կը վերաբերի Դ. Ընդհ. Ժողովին, որմէ ընտրուած Բիւրոն (Արեւմտեան) կը սկսի իր աշխատանքներուն:

Որոշումներ թիւ 2

1907, Յունիսի 14

Որոշուեցաւ՝

ա) Համաձայն Ընդ. Ժողովի որոշման, կազմակերպել Լահէյի ժողովին լինելի դիմումը.

բ) Հեռագրել այդ մասին եւրոպական, Ամերիկայի, Եգիպտոսի հայ գաղութներին

գ) Հեռագրել հայոց կաթողիկոսին՝ ներկայացուցիչ ուղարկելու համար.

դ) Խնդրել Պարիզի բարեկամներ՝ Պրեսանսէին եւ Քիյառին՝ գործի գլուխ անցնիլ[2].

է) Յանձնարարել ընկեր Ղարիբին՝ գնալ Պարիզ զբաղուելու այդ գործով, եւ հրաւիրել Յ. Շահնազարին[3] մասնակցելու այդ աշխատանքին:

Որոշուեցաւ՝

ա) Բաժանել խմբագրական-բիւրոյական աշխատանքները ընկերների մէջ.

բ) Նշանակել հերթակալներ, որպէսզի խմբագրութիւնը բաց լինի 9-12 ժամ եւ 3-7 ժամ:

Է. ԱԿՆՈՒՆԻ

Որոշումներ թիւ 3

1907, Յունիսի 20

Որոշուեցաւ՝

1) Գրել Եգիպտոսի ընկերներին՝ ուսումնասիրելու օր. Զարուհին[4] բանտից փախցնելու հարցը եւ դնել նրանց կարգադրութեան տակ հարկաւոր փողը:

2) Յատուկ ընկեր ուղարկել Աթէնք, կարգադրելու այնտեղի մեր զէնքերի գործը.

3) Գրել Դր. Ջեւտետին՝ պատրաստելու թուրքերէն լեզուով բրոշիւրներ, ուղղուած օսմանեան կայսրութեան բոլոր ազգերին, միացած գործակցութեան համար:

4) Ծրագրել ընկեր Յոնանին՝ շտապել Ժընեւ իր պաշտօնի մէջ մտնելու համար[5]:

5) Գրել պրոֆեսոր Ռակկային (Հռոմ), որ մենք պատրաստ ենք լրացնել խոստացուած գումարը (600 ֆրանկ) մի պայմանով — օրգանի իւրաքանչիւր համարը պէտք է պարունակէ մի յօդուած՝ նուիրուած հայոց հարցին:

Է. ԱԿՆՈՒՆԻ

2.- Քիյառ՝ Պրո-Արմենիայի խմբագրապետ. Պրեսանսէ անդամ նոյն թերթի խմբագրական կազմի եւ երեսփոխան ֆրանսական Խորհրդարանի:

3.- Ղարիբը Աւետիս Ահարոնեանն է, Շահնազարը (Յովհաննէս) հրապարակագիր եւ հասարակական գործիչ:

4.- Օր. Զարուհին (Ժենիա), քոյրը Վան-Վասպուրականի յայտնի մարտական գործիչներէն Վազգէնի (Տէրոյեան Տիգրան). եղած էր անդամ Վասպուրականի Կեդր. Կոմիտէի. ձերբակալուած եւ աքսորուած էր (1896) Երուսաղէմ, ուրկէ փոխադրուած՝ Դամասկոս:

5.- Դաշնակցութեան հին գործիչներէն Յոնան Դաւթեան, որ Չորրորդ Ընդհ. Ժողովին կողմէ ընտրուած էր անդամ Արեւմտեան Բիւրոյի:

Որոշումներ թիւ 4

1907, Յունիսի 30

Որոշուեց՝

ա) Դոսիէի մէջ եղած կարգադրութիւնները, հաստատուած Ինների յանձնաժողովին, ուղարկել պատկանեալ մարմիններին[6].

բ) Դրամ ուղարկել ընկեր Անդրանիկին[7].

գ) Առաջարկել ընկեր Աղբալեանին, գնալ Եգիպտոս, ժամանակաւոր կերպով, կարգի բերելու այդ շրջանի անկազմ գործերը.

դ) Պատրաստել եւ ուղարկել «Կովկասեան ահաբեկիչ մարմնի» կնիքը.

է) Պատասխանել Բալկանեան Կ. Կոմիտէի նամակին, առաջարկելով առ այժմ չյարուցանել Վարդոյի[8] վերաբերեալ որոշման խնդիրը.

զ) Յանձնել ընկեր Գալֆային[9] Աթէնքի գործերը կարգաւորելը (երկու շաբաթով այնտեղ մեկնելով):

Է. ԱԿՆՈՒՆԻ

Որոշումներ թիւ 5

1907, Յուլիս 12

Վճռուեց՝

1) Գրել Բրիւսելի Bureau Socialiste International, *որ՝ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը վճռած լինելով մասնակցիլ Միջազգային Սոց[իալիստական] կոնգրէսներին, խնդրւում է անել հարկաւոր կարգադրութիւն.*

2) Գրել նոյն Բիւրոյին, որ անկախ կովկասեան մեր մարմինների մասնակցութիւնից, խնդրում ենք առաջարկել կոնգրէսի կազմակերպիչ բիւրոյին, որպէսզի իրաւունք տրուի Թուրքաց Հայաստանին մասնակցել միջազգային կոնգրէսին, իբրեւ անկախ սեկսիոն:

*3) Պատրաստել Տեղեկագիր-*Rapport *Դաշնակցութեան գործունէութեան մասին եւ ներկայացնել Բրիւսելի Բիւրոյին, կոնգրէսին հաղորդելու համար:*

4) Թարգմանել մեր «Նուազագոյն պահանջները» ֆրանսերէն լեզուով:

5) Պատրաստել մեր «Ծրագրի» ֆրանսերէն եւ ռուսերէն թարգմանութիւնները:

6) Թարգմանել «Նուազագոյն պահանջները» պարսկերէն եւ տաճկերէն:

Որոշուեց՝

1) Ընկեր Գալֆայի Աթէնք մեկնելու պատճառով գանձը յանձնել, հաշիւները միասին, ընկեր Մարին[10], ժամանակաւորապէս:

2) Պատրաստել մանրամասն տեղեկագիր՝ Լահէյի ժողովին ուղարկելու համար (ֆրանսերէն)

3) Գրել Բալկանեան Կ. Կոմիտէին՝ յարաբերութեան մէջ մտնելու Պոլսի եւ Զմիւռնիայի ընկերների հետ, եւ կապել նրանց Բիւրոյին:

4) Ուղարկել 500 ֆրանկ Մանչեստր, Շահնազարին, իբրեւ ճանապարհածախք՝ երկու ներկայացուցիչների Լահէյ գնալու:

Է. ԱԿՆՈՒՆԻ

6.- Ինների յանձնաժողովը Չորրորդ Ընդհ. Ժողովին կողմէ ընտրուած այն յանձնախումբն է, որուն վստահուած էր վերամշակուած ծրագրի, կանոնագրի եւ որոշումներու վերջնական խմբագրութիւնը եւ առկախ մնացած հարցերու կարգադրութիւնը:

7.- Հայդուկապետն է, Սասնոյ հերոսը, որ Ընդհ. Ժողովի աւարտէն ետք վերադարձած էր Պուլկարիա:

8.- Վարդո (Վարդ-Պատրիկեան) Վառնայի «Շարժում» թերթի խմբագիր, որ նիւթական իրացումներու եւ բարոյական սայթաքումներու պատճառով արտաքսուած էր կուսակցութենէն եւ ահաբեկման վճռի ենթարկուած:

9.- Գալֆայեան Յարութիւն, ծանօթ նաեւ Վահրամ ծածկանունով: Նախապէս յեղափոխական գործիչ Լեռնավայրի (Կիլիկիա) շրջանին մէջ: 1904-էն ի վեր Ժընեւի մէջ կը վարէր «Դրօշակ»ի եւ Արեւմտեան Բիւրոյի քարտուղարութիւնը:

10.- Տէր Մարտիրոսեան Միքայէլին:

11.- Ռոստոմը եւ Մարը (Տէր Մարտիրոսեան Միք.) ծանօթ են: Սարգիսը՝ Սինասեանն է, ծանօթ Արամ-Աշոտ ծածկանունով, որ ընտրուած էր Արեւմտեան Բիւրոյի անդամ:

Որոշումներ թիւ 6

1907, *Յուլիս* 20

Որոշուեց՝

1) *Յարաբերութեան մէջ մտնել Վերակազմեալ հնչակեան երկու ներկայացուցիչների հետ, կամսարական եւ Գնունի, որոնք առաջարկում են միանալ Դաշնակցութեան եւ գործել իրանց խմբերի հետ, Երկրի մէջ, մեր կազմակերպութեան դրօշակի տակ։ Բանակցութեան գործը վարել Ժընեւում, եւ այդ աշխատանքը յանձնել երեք ընկերներին (Ռոստոմ, Մար եւ Սարգիս*[11]*)։*

2) *Առաջարկել Եւրոպայի հայ ուսանողներին, դաշնակցական, կազմել Ուսանողական մի խորհրդակցութիւն, պարզելու՝ 1) ինչպէս կարող են ուսանողները օգտակար լինել կազմակերպութեանը եւ 2) երբ եւ ինչպէս կազմակերպել դաշնակցական ուսանողութեան մի համագումար։*

Է. ԱԿՆՈՒՆԻ



Որոշումներ թիւ 7

1907, *Օգոստոսի* 7

Որոշուեց՝

1) *Ուղարկել Խոյ՝ մեծ քանակութեամբ գրականութիւն Վասպուրական անցկացնելու համար։*

2) *Պատրաստել տաճկերէն բրոշիւրներ, Երկիր մտցնելու համար, նուիրուած գլխաւորապէս համերաշխ գործունէութեան թուրքերի հետ.*

3) *Լահէյ ուղարկել հազար ֆրանկ, պատգամաւ[որ]ութեան ծախքերի համար։ Առաջարկել Քիյառին եւ Բեռարին*[12]*, եթէ կ՚ընդունեն նրանց ճամբու ծախքը։*

4) *Վերակազմեալ հնչակեան ընկերների հետ սկսած բանակցութեան վերաբերեալ՝ կազմել արձանագրութիւն եւ պահել դիւանի մէջ։*

5) *Առաջարկել ընկերներ Վարանդեանին եւ Ակնունուն՝ գնալու Շտուտգարտ, Միջազգային Սոց. կոնգրէսին մասնակցելու։ Այդ մասին հաղորդել Արեւելեան Բիւրոյին։*

6) *Առաջարկել ընկեր Ռոստոմին՝ գրաւոր զեկուցումն ներկայացնել Բիւրոյին՝ Բալկանի մեր գործերի վիճակի եւ Զինուորական դպրոցի մասին։*

7) *Հաղորդել Վասպուրականի Կ. Կոմիտէին, որ զէնքերի գնման եւ տեղափոխութեան հարցը պէտք է քննել Խորհրդի մէջ։*

8) *Առաջարկել ընկեր Արարատսկուն՝ գնալու Շտուտգարտ, մեր ընկերների հետ միասին, մասնակցելու Սոց[իալիստների] կոնգրէսին։*

9) *Համաձայնութիւն կայացած լինելով Վեր[ակազմեալ] հնչակեան ներկայացուցների առաջարկին վերաբերմամբ, 1) գրել այդ մասին կովկասեան մարմնին, 2) տալ նրանց ճանապարհածախք եւ յանձնարարական։*

10) *«Դրօշակը», ինչպէս մինչեւ այժմ, պատրաստել եւ հրատարակել ոչ ուշ քան իւրաքանչիւր ամսի 25-ը, կանոնաւորութիւն պահպանելու համար։*

Է. ԱԿՆՈՒՆԻ

12.- Քիյառը ծանօթ է, Պրօ-Արմենիայի գլխաւոր խմբագիր. Բեռար քաղաքական յայտնի դէմք եւ անդամ Պրօ-Արմենիա-ի խմբագրութեան։

Որոշումներ թիւ 8

1907, Սեպտեմբեր 8

Որոշուեցաւ՝

1) Առաջարկել գործարան[ատէր] Կրետէնին[13] աւարտել հրթիռների գործը, ոչ ուշ քան մինչեւ Հոկտեմբերի վերջը։ Հրաւիրել նրան խմբագրութիւն եւ վերջնականապէս մշակել պայմանները։

2) Հրթիռների գործով զբաղող ընկերներին, ապրուստի համար, նշանակել ամսական հարիւր ֆրանկ եւ մտցնել հաշիւների մէջ։

3) Ուղարկել բոլոր մարմիններին՝ տպագրուած շրջաբերական, հրաւիրելով ճշտութեամբ գործադրել Ընդհ. Ժողովի որոշումները՝ դրամական հաշիւների վերաբերմամբ։

4) Կազմակերպել ժամանակաւոր Օժանդակ մարմին Եգիպտոսում, Լեռնավայրի[14] համար։ Այդ խնդրի մասին գրել այդտեղի մեր ներկայացուցչին։

5) Բանակցութեան մէջ մտնել Մետրոյի հետ (կեղծ անուն Ս-ի...)[15] եւ պարզել մեր եւ նրանց վերաբերմունքը՝ հակա-սուլթանական կռուի շրջանում։ Յանձնել այդ գործը ընկերներ Ակնունուն եւ Ա. Աշոտին[16]։ Բանակցութիւնը պիտի կատարուի գաղտնի, նկատի ունենալով Մետրոյի պաշտօնական դրութիւնը։

6) Խնդրել վերջապէս՝ զեկուցում այնտեղի մեր խմբերի վիճակի մասին, եթէ կան։

ԽԱՋԱՏՈՒՐ
ՅՈՆԱՆ[17]

13.- Կրետէն՝ ֆրանսական այն զինագործարանն էր, ուր պատուէրներ կը տրուէին եւ երիտասարդ ընկերներ տարբեր տեսակի զէնքերու գործածութեան փորձառութիւն ձեռք կը բերէին։

14.- Լեռնավայր անունով ծանօթ էր Կիլիկիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի դաշնակցական կազմակերպութիւնը, որուն թղթակցական եւ յարաբերական գործերու կեդրոնն էր Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքը։ Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը Եգիպտոսի մէջ այդ օրերուն Նիկոլ Աղբալեան էր (Հանգոյց)։

15.- Հաւանաբար Սապահետտին իշխանն է, որ հաստատուած էր Փարիզ եւ ծանօթ էր իր հակահամիտեան տրամադրութիւններով։

16.- Արամ Աշոտ՝ Սարգիս Մինասեանին, Արեւմտեան Բիւրոյի անդամ։

17.- Խաչատուրը (Մալումեան) Ակնունին է. Յոնանը՝ Դաւթեան։

Որոշումներ թիւ 9

1907, Սեպտ. 20

Որոշուեցաւ՝

1) «Դրօշակի» համար, իբրեւ հոնորար, ընդունել հետեւեալ չափը։ Երեսին՝ ոտանաւորի համար՝ 15 ֆրանկ, ազատ գրուածքի համար՝ 10 ֆրանկ, թարգմանութեան համար՝ 5 ֆրանկ։ Այդ նորմայով պէտք է ղեկավարուել առաջիկայում, նրանց վերաբերմամբ, որոնք հոնորարի հարց կը դնեն։

2) Գրել Բալկանեան Կ. Կոմիտէին Վարդոյի խնդրի մասին[8] (տես նամակների պատճէն)

3) Գրել նոյն Կ. Կոմիտէին՝ Ջերչեանի հարցի մասին (տես պատճէն)։

4) Պատասխանել ընկեր Ժորիսի[18] մասին արած առաջարկին (տես պատճէնների գիրքը)։

5) Ուղարկել 300 ֆրանկ Լօզան, ընկեր Տիգրանին[19], բժշկութեան ծախքերի համար։

6) Ճամբայ դնել ընկեր Իշխանին[20], Կովկասի վրայով Վասպուրական անցնելու համար, հոգալով նրա ծախքերը։

7) Յանձնել ընկեր Իշխանին՝ հաղորդելու Վանի Կ. Կոմիտէին, զէնքի տեղափոխութեան մանրամասն հանգամանքները, ինչպէս եւ Եւրոպայում հրացան գնելու պայմանները։

8) Հեռագրել Ֆիլիպէ, իմանալու թէ ինչ վիճակի մէջ են այնտեղ եղած մեր «խնձորներ-իւղը»[21]։

9) Բանակցել մեր բարեկամ Բեռարի հետ, խնդրելով նրան, իր ձեռքում եղած միջոցներով, ծանօթանալ այն տրամադրութեան, որ տիրում է մեծ պետութիւնների մայրաքաղաքներում՝ հայկական հարցի վերաբերմամբ։

ԽԱՋԱՏՈՒՐ ՅՈՆԱՆ

Որոշումներ թիւ 10

1907, Հոկտեմբեր 1

Որոշուեցաւ՝

ա) Ահմէտ-Ռիզայի[22] հետ եղած բանակցութիւնը համարել սպառուած եւ օգտուել դրանից միջ-կուսակցային կոնգրէսի համար։

բ) Բանակցել Օսմանեան պետութեան բոլոր դժգոհ տարրերի հետ, յեղափոխական եւ քաղաքական միջ-կուսակցային կոնգրէսն կազմելու համար։

գ) Առաջարկել մի նախապատրաստական խորհրդակցութիւն՝ հայկական խմբերին, այն է, Արմենական եւ Հնչակեան (վերջինի երեք հատուածներին[23])։ — Տես պատճէն։

դ) Տպագրել «Զինացոյց» եւ ուղարկել բոլոր մարմիններին։

Է. ԱԿՆՈՒՆԻ ՅՈՆԱՆ

18.- Ժորիսը պելճիքացի յեղափոխականն է, որ գործակցած էր Ապտիւլ Համիտի ահաբեկման ձեռնարկին, ձերբակալուած եւ բանտարկուած Պոլիս։

19.- Վասպուրականի Կ. Կոմիտէի անդամ, որ բժշկական դարմանումի համար անցած էր Եւրոպա։

20.- Վանայ Իշխանն է, իսկական անունով՝ Նիկոլ Պօղոսեան-Միքայէլեան, որ Ընդհ. Ժողովէն ետք անցած էր Ժընեւ նախքան Վասպուրական վերադառնալը։

21.- Խնձորը՝ ձեռնառումբն է, իւղը՝ պայթուցիկ նիւթ, ուժանակ։

22.- Փարիզ հաստատուած, Ապտիւլ Համիտի բռնակալ վարչակարգին ընդդիմադիր «Իթթիհատ» կուսակցութեան ղեկավարը։

23.- Հնչակեան 3 հատուածով պէտք է հասկնալ՝ հին հնչակեանները եւ Վերակազմեալ հնչակեաններու Եգիպտոսի եւ Միացեալ Նահանգներու հատուածները։

Որոշումներ թիւ 11

1907, *Հոկտ.* 5

Որոշուեցաւ՝

1) *Տպագրել [Գէորգ] Զաւուշի կենսագրութիւնը առանձին տետրակով։*

2) *Յանձնել գանձը ընկեր Յոնանին, եւ թողնել ընկեր Գալֆայեանի ձեռքում հաշիւները։ Ոչ մի դրամ չպէտք է բաց թողնուի գանձարանից, առանց նախնական* ordre-*ի*[24]*։ Նոյնպէս մուտքի վերաբերմամբ։*

3) *Իւրաքանչիւր ամսի վերջում քննել մուտքի եւ ելքի յօդուածները եւ վաւերացնել։*

4) *Առաջարկել Արեւելեան Բիւրոյին, որպէսզի ըստ կարելոյն չուտ իրագործուի Ընդհ. Ժողովի որոշումը — այն է ընտրել մի յանձնաժողով, քննելու Դաշնակցութեան բոլոր հաշիւները,* 1904*-ի Ընդ. Ժողովից մինչեւ* 1907*-ի Ընդհանուր Ժողովը։ Արդիւնքը զեկուցանել առաջիկայ Խորհրդին։*

Է. ԱԿՆՈՒՆԻ *ՅՈՆԱՆ*

Որոշումներ թիւ 12

1907, *Հոկտ.* 18

Որոշուեցաւ՝

ա) Գրել Բագուի Կ. Կոմիտէին՝ նրանց Ժընեւ պահ դրած անձեռնմխելի գումարի մասին։

բ) Գրել Արեւելեան Բիւրոյին, որպէսզի ուղարկէ 30 *հազար ֆրանկ, լրացնելու այն ծախքերը, որոնք կատարուած են Ընդհ. Ժողովի եւ Զինուորական դպրոցի համար, (վերցնելով Բագուի Կ. Կոմիտէի անձեռնմխելի գումարից — ժամանակաւոր կերպով)։ Այդ գումարը ստանալով՝ լրացնել յիշեալ անձեռնմխելի գումարի պակասը։*

գ) Առաջարկել ընկեր Մարին[10]*, գնալ Եգիպտոս իբրեւ մնայուն ընկեր, այդ շրջանի գործերով զբաղելու։*

դ) Առաջարկել ընկեր Գալֆայեանին[9]*, անցնիլ Վասպուրականի շրջանը, իբրեւ տաճկերէնի լաւ ծանօթ, լիութիւն տալու այնտեղի ընկերների այդ առիթով արած առաջարկին։*

ե) Առաջարկել ընկել Աղբալեանին, անցնել Ամերիկա, իբրեւ մնայուն գործիչ՝ այդ շրջանի համար։

զ) Գրել Վասպուրականի Կ. Կոմիտէին չտապով ուղարկելու մի տեղեկագիր, հայ-տաճկական գործակցութեան մասին, ներկայացնելու Պարիզի միջ-կուսակցային կոնգրէսին։

է) Հեռագրել Պարիզի պարսից դեսպանին եւ Թեհրան՝ արտաքին գործերի մինիստրին, որպէսզի վերացնեն «Դրօշակի» դէմ եղած արգելքը։

ը) Հեռագրել ընկեր Անդրանիկին, որ ցաւում ենք անկարող լինելու՝ կատարել մեր բարեկամ Բորիսի[25] *խնդիրքը — այն է* 50 *հազարի փոխատուութիւն կատարել։ Յայտնել, որ սիրով կը ցանկանային այդ աջակցութիւնը ցոյց տալ բարեկամ կուսակցութեան (մակեդոնական),— բայց, տարաբախտաբար, մեր դրամական վիճակը թոյլ չէ տալիս։*

թ) Որոշուեց դնել ընկել Վարդանի[26] *տրամադրութեան տակ վեց հարիւր ֆրանկ (բժշկութեան)։*

ԽԱՋԱՏՈՒՐ *ՅՈՆԱՆ*

24.- Ֆրանսերէն բառ՝ պատուէր, հրահանգ իմաստով։
25.- Բորիս Սարաֆով, մակեդոնացի յայտնի յեղափոխական գործիչ, բարեկամ Դաշնակցութեան։
26.- Խանասորի արշաւանքի հրամանատար Վարդանն է (Մեհրաբեան Սարգիս)։

Որոշումներ թիւ 13

Հոկտ. 29, 1907

Որոշուեցաւ՝

*1) Դիմել Քիյառին, մեծացնելու «*Pro-Armenia*»-ի համարների քանակը, խնդրելով աւելի ոյժեր հրաւիրել, օրգանին մասնակցելու համար։*

2) Բանակցութեան մէջ մտնել Սապահ-էդդինի[27] *հետ, միջ կուսակցային կոնգրէին առիթով (այդ մասին վաղօրօք գրուած է նրան)։*

3) Հեռագրել Ամերիկայի Կ. Կոմիտէին՝ չտապեցնելու ընկեր Վահագի[28] *դարձը։*

4) Գրել նոյն Կ. Կոմիտէին՝ ձեռք բերել մի քանի անցագիրներ, ամերիկական քաղաքացիութեան։

5) Պատրաստել «Դրօշակի» ընթացիկ համարը։

6) Առաջարկել ընկեր Մ. Յարութիւնեանին, Ամերիկա գնալ, իբրեւ գործիչ, ժամանակաւորապէս։

7) Առաջարկել դաշնակցական ուսանողութեան Եւրոպայում, գումարել համագումար, որոշելու թէ ինչ կարող է անել մեր ուսանող-երիտասարդութիւնը, կուսակցութեան գործունէութեան շրջանում։

8) Շտապեցնել Օր. Զարուհու[29] *ազատման խնդիրը։ Գրել այդ մասին Եգիպտոս եւ յատկացնել որոշ գումար։*

9) Սկզբունքով ընդունիլ Ն. Խ[արախան]եան վարդապետին[29] *ազատման առաջարկը, յատկացնել որոշ գումար եւ գրել այդ մասին Երուսաղէմ։*

10) Պատասխանել Լեռնավայրի ընկերներին, որ Բիւրոն սիրով է ընդունում ընկեր Վարդգէսին[29] *ազատելու առաջարկը, եւ յանձն է առնում ծախքերը (տես Լեռնավայրի ընկերների նամակը)։ Կարգադրել պատասխանը՝ հեռագրով։*

Բացակայ էի հիւանդութեան պատճառով՝ ՅՈՆԱՆ։

ԽԱՋԱՏՈՒՐ

27.- Իշխան Սապահետտին, թուրք ընդդիմադիր «Թերաքքը» կուսակցութեան ղեկավար։
28.- Տաքեւեան Վահագն, մէկը Ամերիկայի պատգամաւորներէն Չորրորդ Ընդհ. Ժողովին, ընտրուած էր անդամ Ցուցական-Տեռորական մարմնին (Տեմէն)։
29.- Այդ օրերուն ծրագիր կար շարք մը աքսորեալ եւ բանտարկուած ընկերներ կաշառքով կամ այլ միջոցներով ազատելու։ Անոնցմէ էին Վանայ Վազգէնի քոյրը Զարուհին (Ժենիա), Ներսէս Վրդ. Խարախանեանը, Վարդգէսը (Սերենկիւլեան), Հրաչը (Թիրիաքեան Հայկ) եւայլն։ Անոնցմէ ոմանք աւելի քան տասը տարիէ ի վեր բանտ կամ աքսորի մէջ կը գտնուէին։

Որոշումներ թիւ 14

Նոյեմբեր 2, 1907

Որոշուեցաւ՝

1) *Յայտնել Կրետէն-ին*[13], *որ դադարեցնէ իր աշխատանքները այժմեան ձեւով շարունակելը, քանի որ փորձերը, բացի երկարից*[30], *անպէտ են։*

2) *Յայտնել Կրետէն-ին, որ մենք ցանկանում ենք, որպէսզի մեր ընկերները անկախ կերպով շարունակեն պարապուել իր գործարանում, քանի մը նոր փորձերի համար, եւ խնդրել նրա համաձայնութիւնը։*

3) *Առաջարկել Կրետէն-ին՝ ներկայացնելու մեզ արած ծախքերի հաշիւը եւ մեր իրերի ինվենտարը։ Վճարել նրան հասանելիք* 500 *ֆրանկը։*

4) *Ընդունել խմբագրատանը, գրաշարի օգնականի պաշտօնով, Աստրախանից եկած երիտասարդ Գ. Յակոբեանին, ամսական* 50 *ֆրանկ վարձով եւ խմբագրատանը ապրելու իրաւունքով։*

5) *Ուղարկել Եգիպտոս նրանց «Ներքին կանոնագիրը», վաւերացրած, եւ քանի մը փոփոխութեամբ։*

6) *Գրել Ոսկեհանքի*[31] *ընկերներին, որ նրանց մշակած «Կանոնագիրը» կարօտ է մեծ փոփոխութիւնների, խորհուրդ տալով օգտուել Եգիպտոսի ընկերների «Կանոնագրից», իրանց համար մի յարմարը կազմելու նպատակով։*

7) *Տպագրել եւ ուղարկել բոլոր մարմիններին՝ յատուկ թղթի վրայ պատրաստած բլանկներ, կազմակերպական գրագրութեան համար։*

8) *Հոգալ ընկերներ Դրոյի եւ Մարտիրոսի ծախքերը, համաձայն ընկեր Նիկոլի*[32] *առաջարկի (տես նամակը)։*

9) *Օգնել դրամապէս ընկեր Զարեհին, մինչեւ նրա վիճակի որոշուելը։ Կարգադրել վերջին խնդիրը։*

Բացակայ էի – Լոգան – հիւանդութեան պատճառով ՅՈՆԱՆ։

Է. ԱԿՆՈՒՆԻ

30.- Երկարը, ինչպէս գիտենք, հրացանն է։
31.- Իզմիրի։
32.- Դրոն (Դրաստամատ Կանայեան) եւ Մարտիրոսը (Չարուխճեան) դաշնակցական ծանօթ ահաբեկիչներն են։ Նիկոլը Դումանն է (Տէր Յովհաննիսեան)։

Որոշումներ թիւ 15

1907, *Նոյ.* 7

Որոշուեց նաեւ՝

1) *Գրել Եգիպտոս, խնդրելով անմիջապէս յետ ուղարկել Բիւրոյին՝ այնտեղ եղած արժեթղթերը, որոնք պատկանում էին Լեռնավայրի մարմնին, եւ պահ էին դրուած Դր. Փաշայեանին։*

2) *Գրել Դր. Փաշայեանին, որ ըստ կարելւոյն շուտ՝ վճարէ արժեթղթերի դրամը եւ փակէ այդ խնդիրը։*

3) *Գրել Բորիսին*[25], *ընկերների միջոցով, որ Արեւելեան Բիւրոն չի ուղարկել այն հինգ հազար ֆրանկը, որ որոշել էր փոխարինաբար տալ մակեդոն ընկերներին, եւ ուրեմն այդ գումարը նրա տրամադրութեան ներքոյ է դրուում Արեւմտեան Բիւրոյի միջոցներից։ Յաւ յայտնել Բորիսին, որ կազմակերպութիւնը անկարող գտնուեց, միջոցների պակասութեան պատճառով տալ նրա խնդրած փոխարինութիւնը։*

4) *Պատասխանել Երկրի մէջ գտնուող Փիլիպպոսեանին*[33] *որ չտապէ Վիշապ անցնել։ Ուղարկել նրան՝ խնդրած երկու հարիւր ֆրանկը։*

5) *Վերջին անգամ գրել Ալեքսանդրիայի նախկին ենթակոմիտէին, որ անմիջապէս յանձնեն կազմակերպութեան գոյքը եւ հաշիւները. մերժումը՝ նկատել իբրեւ զեղծումն (տես պատճէն)։*

6) *Խնդրել Արեւելեան Բիւրոյից՝ թէ իր եւ թէ բոլոր կենտրոնական կոմիտէների համար նոր եւ ապահով հասցէ։*

Բացակայ էի – Լոգան – հիւանդութեան պատճառով՝ ՅՈՆԱՆ։

Է. ԱԿՆՈՒՆԻ

33.- Փիլիպպոսեան Յակոբ, Ամերիկայէն ղրկուած երիտասարդ Պոլիս անցնելու եւ հոն գործելու համար։

Որոշումներ թիւ 16

1907, *Նոյեմբ.* 8

Որոշուեցաւ՝

1) *Նկատի ունենալով ընկեր Ակնունու մեկնելը ժողովից, կազմակերպական գործերով,* Comptoir d'Escompte-*ի մէջ եղած կազմակերպական դրամը անցկացնել ընկեր Մ. Յովհաննիսեանի*[34] *անուան:*

2) *Հաշիւներից երեւաց՝*

ա) Ցիշեալ բանկի մէջ պահ է դրուած Բագուի Կենտրոնական Կոմիտէի անձեռնմխելի գումարը:

բ) Այդ գումարը եղել է՝ 220,000 *ֆրանկ:*

գ) Դրանից Ընդհանուր Ժողովի եւ Զինուորական դպրոցի համար ծախսուել է 30,000 *ֆրանկ: Այդ գումարը պէտք է լրացուի կազմակերպական եկամուտներով:*

դ) Արեւմտեան Բիւրոն իրաւունք է ստացել, համաձայն Արեւելեան Բիւրոյի եւ Բագուի Կենտ. Կոմիտէի հեռագրի, վերցնել, ընթացիկ ծախքերի համար, 20,000 *ֆրանկ:*

ե) Մնացած գումարից վերցնել 150,000 *ֆրանկ եւ բանկը դնել* à terme[35], *իբրեւ անձեռնմխելի, հետեւեալ կերպով.—* 100,000 *ֆրանկը մի տարի ժամանակով.* 50,000 *ֆրանկը՝ վեց ամսով: Երկուսն էլ ընկեր Մ. Յովհաննիսեանի անունով:*

զ) Մնացած գումարից՝ տասն հազար յատկացնել Սեբաստիայի գործին (համաձայն Ընդհ. Ժողովի որոշման) եւ տասն հազար ֆրանկ՝ Տեռորական կազմակերպական մարմնին (ի հաշիւ Ընդհ. Ժողովի հաստատած նախահաշուի):

է) Այս բոլորի մասին տեղեկագրել Բագուի Կենտրոնական Կոմիտէին, եւ նրան պատկանող անձեռնմխելի գումարից ոչինչ չծախսել՝ առանց իր գիտութեան եւ համաձայնութեան: Ցայտնել միաժամանակ, որ Բիւրոն պատրաստւում է անձեռնմխելի գումարի պակասը լրացնել:

3) *Համաձայն Ընդհանուր Ժողովի որոշած նախահաշուի (որ արդէն տպուած է) կարգաւորել բոլոր բաշխումները, եւ այդ մասին տեղեկացնել բոլոր մարմիններին, պահանջելով նրանց բաժին ընկած գումարները:*

Բացակայ էի – Լոզան – հիւանդութեան պատճառով ՅՈՆԱՆ:

ԽԱՋԱՏՈՒՐ

34.- Միք. Վարանդեանի իսկական անունը: Ակնունի պիտի մեկնէր Փարիզ, Ապրիլ Համիտի վարչակարգին ընդդիմադիր տարրերու – Կոնգրէի նախապատրաստութեան համար:

35.- Ֆրանսերէն, մինչեւ պայմանաժամի աւարտը, երկարաժամկէտ իմաստով:

Որոշումներ թիւ 17

1907 *Նոյ.* 19

Որոշուեց՝

1) *Ընկեր Ակնունու մեկնումը Պարիզ՝ պատրաստելու Օսմանեան միջկուսակցային կոնգրէն, ինչպէս եւ հայկական կազմակերպութիւնների նախապատրաստական խորհրդակցութիւնը, համաձայն Ընդհանուր Ժողովի տուած ծրագրի, որի վերաբերմամբ արդէն եղել են բանակցութիւններ մի քանի օտար մարմինների հետ:*

2) *Թրքահայ ընկերների անհրաժեշտ մասնակցութիւնը այդ գործի մէջ:*

3) *Զեկուցուեց ընկերներ Դրոյի, Մարտիրոսի, Զարեհի, Սիրանոյշի եւ Գրիգորի մասնակցութեան մասին, Տեռորական մարմնի մէջ:*

4) *Որոշուեց մասնակցող ընկեր ուղարկել Խորհրդին*[36], *որ գումարուելու է Դեկտեմբերին:*

5) *Զինական գործի մէջ մտցնել ընկեր Պետրոսին*[37], *Պարիզի որեւէ գործարանում, հոգալով նրա ապրուստի ծախքը՝ վեց ամիս: Վեց ամսից յետոյ նա տրամադրելի պիտի լինի Կովկաս, իր մասնագիտութեան համար:*

6) *Ցանձնել Գրիգորին շարունակել առանձին փորձեր անել պայթուցիկ գործերի համար, Կրետէնի մօտ:*

7) *Փակել Կրետէնի հաշիւները եւ պահանջել նրանից մեր իրերի ինվենտարը եւ ծախքերի վերջնական հաշիւը:*

8) *Ընթացք տալ Սեբաստիայի խնդրին, թէ դրամական եւ թէ օժանդակ մարմնի կազմման տեսակէտից:*

Է. ԱԿՆՈՒՆԻ *ՅՈՆԱՆ*

Որոշումներ թիւ 18

1907 *Նոյեմբեր* 30

1) *Որոշուեց հաստատել առժամանակեայ մի օժանդակ մարմին Բաստի*[38] *շրջանի համար: Անդամներն են Յոլակ (Մկրտիչ Եփրեմեան), Վահրիճ (Սեդրակ Պալըգճեան) եւ Տիգրան Եաղուբեան: — Ընդունիլ նոյն Օժ. մարմնի առաջարկութիւնը՝ Վահանի (Արշակ Սվաճեան) եւ Պոյաճեանի Երկիր գնալու մասին: Տալ նրանց իրրեւ ճանապարհածախս եւ որոշ ժամանակուայ ապրուստի միջոց* (750) *ֆրանկ: — Մերժել Բաստի օժ. մարմնի առաջարկութիւնը՝ ներսը գտնուող ընկերոջ Եսայեանին վճարել* 35 *ոսկի, որը նա կորցրել է իր ձեռնարկութիւնների մէջ՝ յեղափոխական նպատակով: Տալ միայն ճանապարհածախսը:*

2) *Մերժել Մարթինին*[39] *առաջարկը՝ որ* 500 *ֆրանկ ուղարկուի իրեն անձնական ձեռնարկի համար՝ յեղափոխական նպատակով: — Իբրեւ բանտից նոր ազատուած՝ տալ նպաստ* 200 *ֆրանկ:*

3) *Ուղարկել շրջաբերական-նամակ Արեւմտեան ռայոնի մարմիններին նոր կաթողիկոսի ընտրութեան առթիւ մեր բռնելիք դիրքի մասին. այսինքն՝ որ պաշտօնապէս մասնակցելը ունի իր անպատեհութիւնը սկզբունքային, քաղաքական եւ այլ պատճառներով: Մենք կը մասնակցենք ոչ-պաշտօնապէս:*

4) *Ի նկատի ունենալով հնչակեան մամուլի անդուռն ու անվայել յարձակումները, որոնք միայն կրքերն են բորբոքում ու ստեղծում մի տգեղ մթնոլորտ՝*

Որոշուեց կրկին գրել Բալկանին եւ Ամերիկային՝ չպատասխանել, արհամարհել նրանց. ծայրայեղ դիպուածում գրել կորեկտ ու զսպուած ոճով: — Թելադրել նոյն մարմիններին՝ կարեւորութիւն չտալ «դժգոհ դաշնակցականների» թռուցիկներին: Լրջօրէն չզբաղուել, այլ առհասարակ խօսիլ կարգապահութեան մասին՝ կուսակցական տեսակէտից, պարզաբանելով այդպիսի երեւոյթների հետ առնչութիւն ունեցող կանոնադրական կէտերը եւ միայն ակնարկել, որ այդ ձեւի բողոքողները դաշնակցական լինել չեն կարող:

ՅՈՆԱՆ

36.- Դաշնակցութեան Խորհուրդը, բաղկացած Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներու, ինչպէս նաեւ Պատասխանատու Կեդր. Կոմիտէներու ներկայացուցիչներէն, Ընդհ. Ժողովներու փակուելէն ետք կը գումարուէր պարբերաբար՝ կարեւորագոյն որոշումները կայացնելու համար:

37.- Տէր Յովհաննիսեան Բագրատ, դաշնակցական յայտնի գինագործ:

38.- Սեբաստիոյ:

39.- Մուրատեան Մարթին, կուսակցական գործիչ Կիպրոս, Իզմիր, Կիլիկիա, եւայլն:

Որոշումներ թիւ 19

1907 Դեկտ. 1

1) *Գրել Կովկաս մեր տեսակէտը՝ կաթողիկոսական ընտրութեան խնդրում մեր բռնելիք դիրքի մասին։*

2) *Գրել Արեւելեան Բիւրոյին, որ նա մեր կողմից դիմէ կարող ընկերներին՝ աշխատակցելու համար «Դրօշակին»։*

3) *Գրել Արեւել. Բիւրոյին, որ ծրարներով ուղարկուող թերթի համար գրեն մարմիններին, որ մեզ տան նոր հասցէներ։ Ոչնչացնել հները։*

4) *Դիմել Ց. Շահնազարին*[3] *մասնակցելու Պարիզում Կայանալիք Տաճկաստանի դժգոհ տարրերից կազմըւած* congrès-*ին մեր կողմից։*

ՑՈՆԱՆ

Որոշումներ թիւ 20

1907 Դեկտ. 5

1) *Գրել Արեւել. Բիւրոյին, որ «Խորհուրդի» գումարուելը մենք գտնում ենք վաղաժամ։ Մենք չենք տեսնում առայժմ ասպարէզի վրայ ստիպողական ու շտապողական հարց, որ անհրաժեշտ լինի ներկայ պայմաններում «Խորհուրդ» գումարել։ Արեւմտեան Բիւրոյից ոչ ոք մասնակցել չի կարող։ Ակնունին զբաղուած է իր միսսիայով, Վարանդեանը հիւանդութեան պատճառով հեռու [է] Ժընեւից, մնացածներն էլ չեն կարող թողնել խմբագրական գործերը։*

2) *Որոշուեց գրել Ամերիկա եւ խնդրել Լեռնավայրի*[14] *համար գործիչներ։ Այս մասին շարունակ գրում են Լեռն[ավայր]ի ընկերները։*

3) *Ցայտնել Լեռնավայրի օժանդակ մարմնին չբանալ Բիւրոյին ուղարկուած Երկրի նամակները։*

4) *Փաշայեանի տպարանը* 170 *անգլ. ոսկիով ծախելու առաջարկը յայտնել իրեն Փաշայեանին ու ստանալ իրեն՝ Փաշայեանի համաձայնութիւնը՝ յայտնելով այս մասին, որ մենք չենք խառնւում, արէք դուք՝ ինչպէս կ'ուզէք։*

5) *Ի նկատի ունենալով նախկին հնչակեան գործիչ Հրաչեայի ցանկութիւնը՝ տեսնուել մեր ընկերներու հետ, առաջարկել նրան տեսնուել Պարիզ մեր ընկեր Ակնունու հետ։*

Որոշումներ թիւ 21

1907 Դեկտ. 12

1) *Տպարանի առաջարկուած գնով ծախելու համար դոկտ. Փաշայեանի հաւանութիւնը ստացուած լինելով՝ հաղորդել Եգիպտոս՝ Հանգոյցին*[40]*։*

2) *Քիյաւռի համար գրելու մեքենայ գնելը, աշխատել եթէ հնարաւոր է չիրագործել՝ ի նկատի ունենալով մեր նիւթական վիճակը։*

3) *Սարաֆովի*[25] *սպանման առթիւ ուղարկել ցաւակցական հեռագիրներ հօրը եւ մակեդոնական կազմակերպութեան։ Ցաւակցական նամակ գրել քրոջը։*

4) *Սարաֆովի թաղման հանդէսին ներկայ գտնուելու համար պատգամաւոր ուղարկել Բերլինից Մարտիրոս Ցարութիւնեանին, Զարդարեանին եւ Անդրանիկին։*

ՑՈՆԱՆ

40.- Աղբալեան Նիկոլին։

Որոշումներ թիւ 22

1907 Դեկտ. 14

1) *Որոշուեց գրել Մեծ-քաղաք եւ Շամ*[41] *իմանալու համար թէ ինչո՞վ պէտք է բացատրել Վասպուրականի Կ. Կոմիտէին վիրաւորական տոնով եւ ձեւով գրած նամակը Արեւելեան Բիւրոյին։*

2) *Եթէ ընկերները անհրաժեշտ են համարում «Խորհուրդի» գումարումը, դիմել Մարին*[11] *եւ խնդրել գալ Ժընեւ, որ Գալֆային հնարաւոր լինի ուղարկել։ Եթէ Մարը մերժեց, Ակնունուն առաջարկել միաժամանակ լինել Բիւրոյի ներկայացուցիչ։*

3) *Կաթողիկոսական խնդրի վերաբերմամբ կրկնել նախկին որոշումը։ Կովկասի ընկերների եռանդուն մասնակցութիւնը համարել ոչ-համապատասխան մեր սկզբունքին եւ քաղաքական տեսակէտով ոչ-նպատակայարմար։*

4) *Որոշուեց դիմել Կ. կոմիտէներուն եւ նրանց կարծիքը իմանալ կաթողիկոսական ընտրութեան խնդրի վերաբերմամբ։*

5) *Որոշուեց Ապրիլ ամսում աշխատել գումարել Արեւմտ. Բիւրոյի ռայոնական ժողով։*

6) *Որոշուեց «Դրօշակի» տպագրութեան քանակը իջեցնել* 7000-*ի։*

7) *Որոշուեց Արարատսկու նամակները հրատարակել թէ՛ այստեղ եւ թէ Կովկաս՝ եթէ դա աւելի ձեռնտու է ծախքի կողմից։*

8) *Ի նկատի ունենալով, որ ամէն տեղից պահանջում են թուրքերէն հրատարակութիւններ, որոշուեց դիմել «Թէրագգը»ի խմբագրութեան*[42] *Պարիզ՝ խնդրելով ուղարկել մեզ* 150 *օրինակ իրենց հրատարակութիւններից։*

9) *Ամէն կերպ նպաստել Գիսակի*[43] *եւ ընկերների ազատման եւ տալ դրական կարգադրութիւն՝ ոչինչ չխնայել այդ յաջողեցնելու։ Հաղորդել Նոյնը Շամ, որպէսզի նա եւս իր կողմից ծախքեր չանէ։ Դիտողութիւն անել նրանց Արեւելեան Բիւրոյին գրած նամակի ոճի եւ ձեւի առիթով։ Իմանալ որքա՞ն թերթ է հարկաւոր։*

10) *Տիգրիսին (Տիգնարանակերտ) ուղարկել թուրքերէն եւ անգլերէն հրատարակութիւններ։*

11) *Գրել որ Գիսակի հետ միւս բանտարկեալների ազատման մասին եւս հոգ տարուի։*

12) *Որոշուեց գրել Պարիզ՝ Խաչատրին*[44]*, որ ռիզայականներին չվստահել (Մանրամասների համար տես այս առթիւ ուղարկուած նամակների եւ հեռագիրների գիրքը)։*

ՑՈՆԱՆ

41.- Մեծ-քաղաքը Թիֆլիսն է. այս պարագային՝ Արեւելեան Բիւրոն. իսկ Շամը Վասպուրականն է։

42.- Թուրք ընդդիմադիր իշխան Սապահէտտինի թերթը։

43.- Վարդգէս Սերենկիւլեանի, որ 1903էն ի վեր կը գտնուէր թրքական բանտերու մէջ եւ ուրկէ պիտի ազատէր 1908ին միայն, Օսմ. սահմանադրութեան հռչակումէն ետք։ Շամը ծածկանունն է Վասպուրականի։

44.- Ակնունին, որ արդէն Փարիզ կը գտնուէր Թուրքիոյ ընդդիմադիր տարրերու կոնգրէի պատրաստութեան համար։

Որոշումներ թիւ 23

1907 *Դեկտ.* 21

1) *Ակնունու հեռագրի հիման վրայ որոշուեց, որ թէ՛ Սարգիսը եւ թէ Գալֆան*[45] *գնան Պարիզ մասնակցելու համագումարին։*

2) *Ընկերների բացակայութեան ժամանակ Ցոնանը ուղարկեր է Ժորիսին*[18] *շնորհաւորական հեռագիր իր ազատման առթիւ (պատճէն պատճէնների տետրակ)։*
Ընկերների համաձայնութեամբ ուղարկել ի նպաստ Ժորիսին 500 *ֆրանկ։*
Ամուսնուն մօտ գնալու համար տիկին Ժորիսին տալ ճանապարհածախս 100 *ֆրանկ։*

3) *Պահանջել Գահիրէի մարմնից ամբողջ տարուայ հաշիւը եւ նրանց մօտ մնացած աւելորդ գումարը, ինչպէս եւ տեղեկութիւն իրենց շրջանի Դաշն[ակցութեան] գործերի վիճակի մասին։*

4) *Որոշուեց Մարտ. Ցարութիւնեանին ուղարկել իբրեւ ճանապարհածախս* 195 *ֆրանկ։*

5) *Առաջարկել Մարին*[10] *գնալ Կովկաս՝ Արեւմտեան Բիւրոյի կողմից իբրեւ պատգամաւոր «Խորհուրդին»։*

ՑՈՆԱՆ

Որոշումներ թիւ 24

1908 *Յունուար* 7

1) *Որոշուեց ուղարկել Սամսոն — Գուրգէնին — 200 ֆրանկ։*

2) *Որոշուեց գրել Հանգոյցին*[40] *միջոցներ ձեռք առնել Երուսաղէմից դուրս բերելու Օր. Զարուհուն եւ Խարախանեան վարդապետին*[29]*։*

3) *Որոշուեց գրել Ամերիկա առանց մեր գիտութեան դրամ չուղարկել Երկիր։*

4) *Վճռուեց մերժել Բաստի*[38] *շրջանի Օժ. մարմնի առաջարկութիւնը՝ ընկեր Եսայեանին վճարել* 750 *ֆրանկ իբրեւ նրա մնասը, որ նա կրել է յեղափ. նպատակով գործ սկսած լինելով եւ թոյլ չտալ ոչ ոքի անձնական գործ սկսել յեղ. նպատակով կուսակցութեան փողերով։ Տալ Եսայեանին իբրեւ ճանապարհածախս եւ առժամանակուայ ապրուստի փող* 300 *ֆրանկ։*

ՑՈՆԱՆ

45.- Արեւմտեան Բիւրոյի անդամ Մինասեան Սարգիս (Արամ-Աշոտ) եւ քարտուղար-գործավար Յարութիւն Գալֆայեան։

Որոշումներ թիւ 25

1908 *Յունուար* 20

1) *Որոշուեց Ամերիկա գրել ընկերներ չուղարկելու Երկիր առանց մեր պահանջի եւ համաձայնութեան։*

2) *Նոյնպէս որ առանց մեր գիտութեան չուղարկել դրամ Երկրի մի որեւէ գործիչի կամ ընկերոջ։*

3) *Որոշուեց գրել Լեռնավայրի Օժ. մարմնին բարոյական աջակցութիւն ցոյց տան Քաջբերունուն եթէ նա ստիպուած եղաւ գալ Եգիպտոս։ Աշխատել համոզել, որ Քաջբերունին գոնէ մնայ Մոց*[46]*։*

4) *Որոշուեց* Pro-Armenia-*ի ծախսը տարեկան* 7000 *ֆրանկ եւ Քիյառին ուղարկել թէ* Pro-Armenia-*ի ծախսերի եւ թէ իրեն իբրեւ հոնորար ամսական* 800 *ֆրանկ եւ խնդրել որ* 3 *ամիսը մէկ կանոնաւոր հաշիւ տայ։ Քիյառի առանձին ուշադրութիւնը հրաւիրել* Pro-Armenia-*ի առաքման* (expédition) *կանոնաւորման վրայ։*

5) *Գրել Լեռնավայրի Օժ. մարմնին, որ Հայկ Գուլագսըզեանը տրամադրելի է Երկիր գնալու համար. միայն նա կը ցանկանար լեգալ ճանապարհով մտնել եւ ուսուցչական պաշօն վարել։*

ՑՈՆԱՆ

Որոշումներ թիւ 26

1908 *Յունուար* 25

1) *Որոշուեց գրել Ալեքսանդրիոյ ենթակոմիտէին՝ պահանջել նախկին ենթակոմիտէից հաշիւները. նոյնպէս թէ ինչի՞ է գործադրուած նրանց մօտ գտնուած գումարը։ Եթէ ապացուցուեց որ գործադրուած է նպատակայարմար կերպով, մենք պատրաստ ենք վճարել ապացուցուած պահանջը։*

2) *Ցանձնարարել Պարիզի ժամանակաւոր մարմնին՝ երիտասարդ թուրքերու հետ մշակել բարեկամական եւ մտերմական յարաբերութիւն. իսկ ուսանողութեան վերաբերմամբ աշխատել ազդել գաղափարական տեսակէտով՝ ներշնչելով հասարակական եւ յեղափ. ոգի։*

3) *Ցանձնարարել Բալկ. Կ. Կոմիտէին՝ աջակցիլ Գրիգոր Մերճանեանին իր աշխատութիւնները ու փորձերը շարունակելու։*

4) *Դիմել Պարիզի թուրքերին՝ իմանալու Սամսոնի երիտասարդ թուրքի ո՛վ լինելը, որ յարաբերութեան մէջ ուզում է մտնել Գուրգէնի հետ։*

ՑՈՆԱՆ

46.- Ցոց՝ կուս. ծածկանուն Պէյրութի։

Որոշումներ թիւ 27

1908 Յունուար 29

1) Քաղաքական բանտարկեալների նպաստի խնդիրը կանոնաւոր հողի վրայ դնելու համար բաժանել երկու գլխաւոր շրջանի՝ Եգիպտոս եւ Բալկան։ Որոշուեց տալ Եգիպտոսին՝ Ափրիկեան եւ Սուրիական Տրիպոլիս, Աքիա, Փայաս եւ Կիլիկիոյ քաղաքներու բանտարկեալները, Բալկանին՝ Կ. Պոլիս, Իզմիր, Պոտրում, Սինոպ եւ Հռոդոս։

2) Որոշուեց յայտնել Ս. Գաբրիէլեանին, որ իր պահանջին բաւարարութիւն կը տրուի այն դէպքում, երբ կ'ապացուցանէ իր պահանջը եւ որ ինքը՝ իբրեւ անդամ-գանձապահ նախկին ենթակոմիտէի պարտաւոր է ցոյց տալու նախկին ենթակոմիտէի մօտ մնացած գումարի ի՛նչ նպատակի գործածուած լինելը։

3) Յայտնել Հանգոյցին[40], որ Լեռնավայր[17] մենք չենք կարող նոյն թափով գործել ինչպէս Վասպուրականում, որովհետեւ մենք էնտեղ չունենք կանոնաւոր կազմակերպութիւն եւ վստահելի ընկեր. եղածները թոյլ յեղափոխական նկարագրի տէր մարդիկ են։ Յայտնել որ Եգիպտոսի մէջ հիմնուելիք թերթի համար խմբագիրցու չունենք։ Կարող են գրել «Ռազմիկի» մէջ։

4) Բալկանեան Կ. Կոմիտէին անել խիստ յանդիմանութիւն Վարդոյի տեռորի վերաբերմամբ,— քանի որ Բիւրոն առաջարկել էր առայժմ յետաձգել — եւ նրան հրաւիրել կարգապահութեան եւ պատասխանատուութեան։ Հրաւիրել նրան նոյնպէս քննութիւն կատարելու եւ օրինական պատիժ տնօրինելու կանոնագանցներուն։

Յայտնել որ Բիւրոն մտադիր է Մայիսի 1-ին ռայոնական ժողով գումարելու։

Խնդրել տեղեկութիւններ Պոլսի եւ Իզմիրի մեր յարաբերութիւնների մասին։

Գրել միջոցներ ձեռք առնելու Արմենակ Ճանիկեանին օգնելու համար։

5) Գրել Մոց, որ աշխատեն Սահառունին (Քաջազնունի[47]) պահել այն կողմերում, իր փորձառութիւնը շատ օգտաւէտ կարող է լինել։

Աշխատեն որքան կարելի է տեղական ուժեր դուրս բերելու։ Ցպէտք է դրսի ոյժերի վրայ դնել ամէն յոյս։

Ուղարկել պրոպագանդայի համար նրանց ուղած սոցիալիստական գրքերը։

6) Յայտնել Յակ. Փիլիպպոսեանին՝ Տիգրանակերտ, որ նա, համաձայն նախկին որոշման, վերադառնայ Վիշապ[48]։

7) Մարթինին զգուշացնել Սարհատից[49] եւ յայտնել, որ Դաշնակցութեան դէմ հրապարակով բողոքողները դաշնակցական համարուել չեն կարող։

8) Տալ Վան՝ մանրամասն տեղեկութիւն Պարիզի միջազգ. կոնգրէսի մասին։ Առաջարկել որ իրենք էլ կազմեն խառն կոմիտէներ՝ հայ-թրքական։ Ձեռնարկների մէջ լինել զգոյշ, բայց չիտակ ու անկեղծ։

9) Յայտնել Սամսոն՝ Գուրգէնին՝ Արշաւիր Կամսարականի ցաւալի մահը։

10) Յայտնել դոկտ. Փաշայեանին, որ իր գրածի համեմատ կարգադրուած է տպարանը չծախել։

11) Գրել Լեռնավայրի Օժ. մարմնին, որ 100 ֆրանկ ուղարկէ Մոց՝ Սահառունուն նիւթապէս աջակցելու համար։

12) Ալեքսանդրիայի ենթակոմիտէից խնդրել մանրամասն հաշիւ տպարանի վրայ արուած 500 ֆրանկի ծախքի մասին, ինչպէս եւ իրենց հասոյթի եւ ծախքերի համար։ Երկրի ծախքերը Բիւրոն կը հոգայ, տեղական ծախքերը ջանալու են իրենք հոգալ՝ տեղական միջոցներով։

Մարաշ բանտարկուած Ժիրայրին օգնել Եգիպտոսի Կ. Խաչի ընկերութիւնների միջոցով։

ՅՈՆԱՆ

47.- Մեզի կը թուի որ Սահառունիի անուան կողքին փակագծի մէջ տրուած անունը՝ Քաջազնունի, պարզապէս վրիպումի հետեւանք է։ Արդեօ՞ք Քաջբերունի պիտի ըլլար։ Տեսնել «Որոշումներու» թիւ 25ը։ Հաւանական է, որ աւելի քան տասնամեակ մը ի վեր Լեռնավայրի մէջ գործող Քաջբերունին նոր ծածկանունով (Սահառունի) հրապարակ կու գար։

48.- Վիշապը Պոլիսն է։

49.- Յ. Յակոբեան, Իզմիրի եւ Կիլիկիոյ հին գործիչներէն, որ Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովէն ետք հրապարակաւ պայքար բացած էր նոր Ծրագրով ընդունուած ընկերվարական գաղափարախօսութեան դէմ, աշխատելով նաեւ ուրիշ ընկերներ եւս (ինչպէս Մարթին Մուրատեանը) ներգրաւել բողոքողներու շարքին մէջ։

Որոշումներ թիւ 28

1908 Փետրուար 6

Որոշուեց՝

1) Դիմել Արեւել. Բիւրոյին եւ տեղեկութիւններ խնդրել թուրք յեղափոխական Զէրքէսոֆի մասին (Հիւսէյն Թօսուն)։

Առաջարկել նիւթապէս օգնել Երզնկայում բանտարկուած Օրիորդ Սրբուհի Եանըգեանին, որ դատապարտուած է ցմահ։

Առաջարկել լրջօրէն զբաղուելու պարսկա-թրքական սահմանագլխում հայ գաղթականներ բնակեցնելու խնդրով։ Այդ գաղթականութեան քաղաք[ական] նշանակութիւնը եւ ապագայի դերը մեծ է։

2) Խնդրել Թիֆլիսից ռուս զինուորական շտաբի քարտէզը։ Ուզել Վանից էլ իրենց կազմածը, որպէսզի կարելի լինի պատրաստել գրպանի փոքրիկ քարտէզներ՝ ֆեդայական խմբերի եւ առհասարակ Երկիր գնացող ընկերների համար։

3) Յայտնել Ատրպատականի Կ. Կոմիտէին, որ «Մէշվէրէթ»ի[50] խմբից մէկը պիտի գայ՝ անցնելու Երկիր։ Պարոն[51] է «Յազկերտ»։ Ընդունելով նրան եւ ուրիշ տաճիկների, միաժամանակ զգոյշ պէտք է լինել թակարդ չընկնելու համար։ Այդ նախազգուշութիւնը անհրաժեշտ է թէ յեղ. տեսակէտից եւ թէ հէնց նրա համար, որ տաճիկ յեղ. կազմակերպութիւնը կարող է խաբուել այս կամ այն անձից։

50.- Երիտասարդ թուրքերու ղեկավարներէն Ահմէտ Ռիզայի հրատարակած թերթը, Փարիզ։

51.- Կարգախօսը։



Նմոյշ մը Յարութիւն Գալֆայեանի ձեռագրէն։

Որոշումներ թիւ 29

1908 *Փետր.* 13

Որոշուեց՝

1) *Դիմել Պարիզի պարսկ. դեսպանին եւ խնդրել նրա միջնորդութիւնը՝ վերացնելու «Դրօշակի» արգելումը Պարսկաստան։*

2) *Գրել «Մէշվէրէթ»ի խմբին եւ պահանջել կոնգրէի արձանագրութիւնների իսկականը։ Ցայտնել որ ստացել ենք* Ligue Const. Ottomane*-ի համաձայնութիւնը միանալու* Déclaration*-ին եւ դնում ենք նրանց ստորագրութիւնը միւսների հետ։*

3) *«Թէրագգը»ի խմբի միջոցով յայտնել մեր դժգոհութիւնը «Մէշվէրէթի» բռնած դիրքի վերաբերմամբ եւ զգուշացնել, որ կարող է ունենալ ոչ-ցանկալի հետեւանք։*

4) *Գրել Հանգոյցին*[40]*, որ յայտնի ընկերներին, ո՛րքան կարելի է խոյս տան կենդանի գործը կանցլերականի վերածելուց։ Պէտք է որ նրանք ինքնուրոյն կեանքով ապրին եւ ամէն հասարակ գործի համար մեզ չդիմեն։ Մեզ հետ խորհրդակցելու են պատասխանատու գործերում։ Լեռնավայրի վերաբերմամբ յայտնել, քանի որ մենք չունենք փորձուած, վստահելի ու ուժեղ ընկեր, մենք ստիպուած ենք սպասողական տակտիկա բռնել։*

5) *Ցայտնել Բալկանեան Կ. Կոմիտէին, որ Խորհուրդը տեղի պիտի ունենայ Փետր. ամսին. ուստի չտապեն մեզ ուղարկել* 1.- 1907 *տարուան հաշիւները,* 2.- *գործունէութեան տեղեկագիրը եւ* 3.- 1908 *տարուան հաւանական եկամուտի քանակը։*

6) *Ցայտնել Պարիզի դաշն. մարմնին, որ պաշտօնական թղթեր կարող է չինել տալ միայն Բիւրոն։*

7) *Հաղորդել Բաստի շրջանի Օժ. մարմնին, որ Սեբաստիայի դաշնակցական ընկերների խնդիրը՝ — տալ իրենց կնիք — յարգել անկարելի է։ Կեդր. Կոմիտէները միայն կարող են կնիք ունենալ։*

8) *Ցանձնել ընկեր Հանգոյցին՝ Գարակէօզեանի հաշիւները քննելու եւ ստուգելու խնդիրը։ Եթէ պահանջը իրաւացի է, բաւարարութիւն տալ։*

9) *Իմաց տալ Օժ. մարմնին, որ Սեբաստիայում կան, համաձայն մեր ստացած տեղեկութիւնների,* 8-10 *դաշն[ակցական] խմբեր եւ հրաւիրել Մարմնի ուշադրութիւնը։*

10) *Կարգի բերել, Ընդհ. Ժողովի վճռի համեմատ, Ընդհ. Ժողովի արձանագրութիւնները հրատարակութեան համար եւ առ այդ հրաւիրել Մարտ. Ցարութիւնեանին։*

ՑՈՆԱՆ

Որոշումներ թիւ 30

1908 *Փետր.* 20

Որոշուեց՝

1) *ա. Նկատի առնելով Սամսոնի կարեւոր կէտ լինելը, դիմել Բալկանեան Կ. Կոմիտէին եւս՝ իմանալու արդեօ՞ք կայ մի խիստ վստահելի ընկեր այնտեղի համար։*

բ. Շոգենաւի խնդրի համար մանրամասն տեղեկութիւն ուզել՝ «Խորհուրդին» ներկայացնելու համար։

գ. Որոշուեց Զմիւռնիայի երկու ընկերներին նիւթապէս աջակցել՝ գումարի քանակի որոշելը թողնելով Կ. Կոմիտէին։

դ. Պահանջել Կ. Կոմիտէից որ ջանան լրացնելու Ընդհ. Ժողովի իրենց շրջանին համար որոշած եկամուտը։

2) *Պահանջել Գահիրէի ենթակոմիտէից՝ հաշիւ եւ իրենց մօտ մնացած գումարը։*

3) *Գրել նորից Արեւել. Բիւրոյին եւ պահանջել* 1. *հասցէներ նամակների, հեռագրների եւ թերթերի համար,* 2. *որ ընկերները աշխատակցեն «Դրօշակին»,* 3. *որ յայտնեն թէ իր շրջանին ծրարով ուղարկուած «Դրօշակները» ստացո՞ւմ են եւ տան մեզ նոր հասցէներ,* 4. *Որ Երկրից եկած տեղեկութիւնները ուղարկեն, գոնէ մի որոշ մասը, Դրօշակին եւս,* 5. *քանի որ Տրապիզոն չի ստացւում մեր ուղարկած թերթերը, իրենք ուղարկեն,* 6. *Որ «Խորհուրդին» մասնակցելու կարեւորութիւնը մենք եւս զգում ենք, բայց ընկերները զբաղուած լինելով չեն կարող գալ. կը դիմենք Մարին, որ տեղական գործերին ծանօթ է եւ կու տանք մեր կարծիքը եւ տրամադրութիւնը։* 7. *Տալ Սեբաստիայի մասին տեղեկութիւններ եւ խնդրել որ յայտնեն Երկրի ու յարաբերութեան մէջ դնեն միմեանց հետ։*

4) *Գրել Ծոց՝ Արշակ Սվաճեանին, որ պէտք է դադարեցնել յարաբերութիւնները Մարթինի եւ այն ընկերների հետ, որոնք հրապարակով բողոքած են Ընդհ. Ժողովի որոշման դէմ։*

— Նոյնը գրել եւ Ծոցի միւս ընկերներին, տալով տեղեկութիւններ ե՛ւ Սեբաստիայի մասին։

5) *Որոշուեց գրել Լեռն.-ի Օժ. մարմնին՝ Մարթինի վերաբերմամբ նոյնը ինչ որ Ծոցի ընկերներին։ Հրահանգել, որ անկարգապահ ընկերների վերաբերմամբ լինին կորէկտ եւ այսպէս ասած՝ քաղաքավարի ու տեղիք չտան մի ուեւէ անախորժութեան։ —*

Ցայտնել նոյնպէս, որ ո՛չ մի պայմանով ընդունելի չէ որ այս կամ այն ընկերը կուսակցական դրամներով առեւտուր կամ որեւէ զբաղմունք սկսի՝ պատճառաբանելով նպատակը յեղափոխական։

Պահանջել, որ եթէ ընկերների հաւատը ի չարն է գործ դրուած մի քանի անհատների կողմից, որ [եթէ] այն բողոքը ուղղուած է եղեր մեզ եւ ոչ հրատարակելու, նրանք պարտաւոր են հրապարակով բողոքելու այդ անազնիւ վարմունքի դէմ եւ խզելու իրենց յարաբերութիւնը։

6) *Որոշուեց ուղարկել մարմիններին շրջաբերական-նամակ։*

7) *Գրել Ակնունուն, որ նա գնայ Սոֆիա տեսակցելու բուլգ. պետական անձնաւորութիւնների հետ՝ իմանալու նրանց տրամադրութիւնը ռուս-տաճկական պատերազմի դէպքում եւ ապա գնալ Կովկաս՝ մասնակցելու «Խորհուրդին»։*

8) *Հեռագրով դիտողութիւն անել «Ռազմիկին» կովկասեան ռայոնական ժողովի արձանագրութիւններից արտատպում արած լինելուն համար եւ արգիլել շարունակել։*

ՑՈՆԱՆ

Որոշումներ թիւ 31 [52]

1908 Փետրուար 28 եւ 3 Մարտ

Որոշուեց՝

1) Ուղարկել Գալֆային Արեւմտեան Բիւրոյի կողմից «Խորհուրդին» իբրեւ պատգամաւոր եւ Մարին[10] հրաւիրել փոխարինել Գալֆ[այ]ին։ Հեռագրել Արեւել. Բիւրոյին՝ 15 օր ուշացնել Խորհուրդը։

2) Դիմել Արեւելեան Բիւրոյին եւ խնդրել որ կանոնաւոր եւ պարբերական տեղեկութիւններ տան ռուս-տաճկական պատերազմի հաւանականութեան մասին՝ թէ դիպլոմատիային եւ թէ մամուլին հաղորդելու համար։

3) Առաջարկել եւ նրա առանձին ուշադրութիւնը հրաւիրել ժողովրդի զինման վրայ ինքնապաշտպանութեան համար՝ սահմանների երկու կողմում եւս։

4) Ցայտնել նոյնպէս Արեւել. Բիւրոյին, որ Պարսկաստանի այժմեան բարեկամութիւնից մենք կարող ենք նպատակայարմար կերպով օգտուել զէնք փոխադրելու համար. բայց այդ մասին մենք նրա ներկայացուցչի հետ յարաբերութեան մէջ չենք մտնել մինչեւ դրականօրէն վստահ չլինենք թէ իրագործելու հնարաւորութիւնը կայ։

5) Հեռագրով պահանջել Բալկ. Կ. Կոմիտէից իր տեղեկագիրը «Խորհուրդի» համար։

6) Բարձրացնել Պետրոսի[37] ամսականը 150 ֆր.-ի՝ ի նկատի ունենալով Պարիզի կեանքի սղութիւնը՝ ինչպէս ինքն էր խնդրած։ Միաժամանակ զգուշացնել, որ 6 ամիսը լրանալուց նա պէտք է ճանապարհուի Կովկաս։

7) Իւրաքանչիւր անգամ «Դրօշակի» համարները ուղարկելուց, նամակով եւս յայտնել հասցէատիրոջ՝ թերթի առաքման համար, որպէսզի հնարաւոր լինի մեզ ստուգել կանոնաւոր ստացումը։ Խնդրել որ նա եւս իւրաքանչիւր անգամ պատասխանի մեր նամակին։

8) Խնդրել տեղեկութիւն Ղազարեանից թէ ինչո՞վ պէտք է բացատրել որ 6 ամսէ ի վեր Նաւահանգիստ թերթ չի ստանում[53]։ Խնդրել նոյնպէս իր մօտ մնացած թերթերի եւ գրքերի քանակը։

9) Ի նկատի ունենալով, որ Ակնունին պիտի գնայ «Խորհրդին», փոխել որոշումը եւ փոխանակ Գալֆային առաջարկել Մարին գնալ Խորհրդին։

10) Գրել Բագու եւ յայտնել, որ Պարսկաստան ուղարկւում է 800 օրինակ Դրօշակ իրենց համար։ բ) Խնդրել ստուգելու թէ ծրարով ուղարկուած Դրօշակները ստացւո՞ւմ են։ գ) Եթէ ունեն հնարաւորութիւն ցրելու Ռուսաստանի միւս քաղաքները՝ մենք դադարեցնենք ծրարով ուղարկելը որ մեզ ծախս է պատճառում եւ կանոնաւոր հասնելն էլ շատ կասկածելի։

11) Գրել Լեռնավայրի Օժ. մարմնին, որ աշխատին Սահառունուն պահել Մոց[46] իբրեւ փորձուած ընկերոջ։ Խզել յարաբերութիւնը Մարթինի հետ եթէ հաստատուեց նրա մասին տարածուած լուրերը։ Թելադրել կարեւորութիւն չտալ «դժգոհ» ասուածներին եւ դրանցով չզբաղուել։

12) Ընդունել նախկին հնչակեան Գ. Հրաչեային առաջարկութիւնը՝ մտնել դաշնակցական շարքերու մէջ։

13) Ցայտնել «Թէրագգը»ի խմբագրութեան, որ Զէրքէզօֆը բռնուած է եւ խոստովանել է որ ինք տաճկահպատակ է։

14) Ուղարկել Քիյատին Կովկասէն ստացուած տեղեկութիւնը ռուս-տաճկական պատերազմի առիթով եւ առաջարկել նրան որ յայտնի թէ՝ իր բարեկամ դիպլոմատին եւ թէ մամուլին ի հրատարակութիւն։ Պէտք է աշխատել ամէն կերպ արգիլել պատերազմը։ Միջնորդել Ֆրանս. Արտ. գործերու մինիստրին եւ նրա միջոցով անգլիականին։

15) Ցայտնել որ մենք համաձայն չենք կովկասեան ռայոնական ժողովի որոշման հետ կաթողիկոսական ընտրութեան խնդրում. մենք մնում ենք մեր տեսակէտի վրայ։

Դիտողութիւն անել Վառնայի կոմիտէի երկրորդ անկարգապահութեան վերաբերմամբ՝ նաւապետը ուղարկել դէպի մեզ։

16) Զգուշացնել Պարիզի մարմնին, որ Երիտ. Թուրքերուն հետ յարաբերութեան ժամանակ վերապահ լինեն միջազգային քաղաքական խնդիրներում եւ դիտողութիւն անել Pro-Armenia-ի վերաբերմամբ իրենց տուած պատասխանին համար։ Դիտել տալ որ պաշտօնական նամակները չուղարկեն մասնաւոր անուններով։

ՑՈՆԱՆ

52.- Բնագրին մէջ թիւ 30-ը կրկնուած է. յաջորդը թիւ 31 եւ այդպէս շարունակաբար։ Պահած ենք թուագրումի շարքը ներկայ 30-ը վերածելով 31-ի։ Յաջորդները՝ նոյն ձեւով։

53.- Ղազարեան Վրթանէս, որ Մարսէյլ հաստատուած կը զբաղէր «Դրօշակ»ներու եւ զէնքերու փոխադրութեան գործով։ Նաւահանգիստը՝ կուս. ծածկանունն է Պաթումի։

Որոշումներ թիւ 32

1908 Մարտ 7

Որոշուեց՝

1) Ցայտնել Մոցի[46] ընկերներին, որ մեր միջնորդութեան շնորհիւ — Բերլինի հայկական երեկոյթի հասոյթը՝ 950 մարկ, կ'ուղարկեն Դիարբէկիրի սովեալներուն՝ անգլիական հիւպատոսի միջոցով։ — Երկրից եկած թղթակցութիւնները ուղարկել Դրօշակի խմբագրութեան։

2) Խնդրել տեղեկութիւն Ալեքսանդրիոյ ենթակոմիտէից Կարմիր Խաչի կազմի եւ վիճակի մասին, բանտարկեալների աջակցութեան խնդիրը կարգադրելու համար։ — Լրիւ ցուցակ կազմելու համար ուզել բանտարկեալների մասին տեղեկութիւն։

3) Գրել նոյնը Կարմիր Խաչի եւ բանտարկեալների մասին՝ բալկանեան Կ. Կոմիտէին։ Նկատի ունենալով Վարդի եւ Հրաչի նեղ վիճակը՝ օգնել նրանց Խիզախի[54] միջոցով՝ նպաստի քանակը թողնելով իրեն՝ Կ. Կոմիտէին որոշել։ Խիզախի եւ Վարպետի օգնութեան մասին տեղեկութիւն խնդրել։

4) Հ. Ալեանաքին վերադարձնել երկու նկարներից մէկը՝ իբրեւ անյաջող եւ ընդունել մէկը՝ «կռուող Հայաստանը», եւ վճարել 400 ֆրանկ։

5) Մերժել ուսանող Բարսեղեանին ուղարկել «Դրօշակի» կազմուած համարները, որ նա խնդրել էր Արշ[ակ] Իսահակեանին միջոցով։ — Համաձայնուել Բերլինի ուսանողութեան առաջարկի հետ՝ իրենց տրամադրութեան տակ գտնուող կուսակց. գումարը ծախսել դաշնակցական ուսանողութեան համագումարին համար։ Խնդրել համագումարին դրուելիք հարցերի ցուցակը։

6) Ցայտնել «Մէշվէրէթ»ի խմբին[55] մեր ցաւակցութիւնը՝ Սալոնիկի դէպքերի առիթով։ Գրել նոյնպէս, որ ցաւում ենք որ մենք անկարող ենք մի որեւէ բան անել այդ շրջանի մէջ՝ կազմակերպութիւն չունենալնուս համար։ Բայց կ'անենք ինչ հնարաւոր է։ Գրել այս մասին բալկանեան Կ. Կոմիտէին։

7) Ուղարկել «Խորհուրդին» ամփոփ տեղեկագիր մեր շրջանի մասին։

ՑՈՆԱՆ

54.- Վարդը՝ Աբրահամեան Յակոբ. Հրաչը՝ Պանք Օթոմանի գրաւման մասնակից ղեկավարներէն Հայկ Թիրեաքեանը. երկուքն ալ բանտարկեալ։ Խիզախը Իզմիրի գործիչներէն Հրանտ Փանոսեանն է։

55.- Մէշվէրէթի խումբ, այսինքն Ահմէտ Ռիզայի «Իթթիհատ» կուսակցութիւնը։

Որոշումներ թիւ 33

1908 Մարտ 16

Որոշուեց՝

1) Յայտնել Պարիզի մարմնին, որ մեր համերաշխութիւնը Երիտ. Թուրքերի հետ կատարուած է որոշ հարցերի շուրջը, որ նա ունի միանգամայն գործնական ու ներքին բնաւորութիւն։ Զգտել ընդլայնելու այդ սահմանները եւ մինչեւ իսկ մտնել արտաքին քաղաքականութեան մէջ՝ անընդունելի է։ Ռիզայականների տակտիկան մեզ տարօրինակ է թւում։ Նրանք պէտք է հասկանան, որ մենք մեր Ծրագրից մազաչափ անգամ չենք շեղուել. մենք մեր համոզումները ու ձգտումները ոչ ոքի չենք զիջի։ — Մեր համերաշխութիւնը կռուի համերաշխութիւն է։

2) Ուղարկել Լոնտոն՝ Ֆարհատին 50 ֆրանկ իր արած ծախքերի դիմաց՝ խնդրելով որ ուղարկէ մի քանի գրքեր եւս։

3) Նորից պահանջել Գահիրէի ենթակոմիտէից՝ իր մօտ եղող պատրաստի գումար 5307 եգիպտ. ղուրուշը եւ բացատրութիւն պահանջել մեր առաջի պահանջման առիթով իրենց լռութիւն պահպանելու մասին։ Առաջարկել որ այդ գումարից 700 ֆրանկ յանձնեն Հանգոյցին, որից 500 ֆր.ը պէտք է յանձնուի Լեռնավայրի մարմնին եւ 200 ֆրանկը վճարել Գարակէօզեանի պարտքի դիմաց։

4) Գահիրէի ենթակոմիտէին արուած կարգադրութիւնը իմացնել Հանգոյցին[40] եւս։ — Յայտնել նոյնպէս, որ մենք համաձայն ենք իր հետ Գարակէօզեանին 30 ոսկի վճարելու։ — Խնդրել, որ բացատրութիւն պահանջէ Գահիրէի ենթակոմիտէից մեր նամակները անպատասխանի թողնելուն համար։

5) Գրել Ալեքսանդրիոյ ենթակոմիտէին՝ օժանդակել Լեռնավայրի Օժանդակ մարմնին՝ հոգալով նոյն մարմնի ընթացիկ ծախքերը։ — Յայտնել նոյնպէս, որ իրենք կարող են դրականապէս հերքել Մուշեղ Տ. Օհանեանի, Թոխմախեանի ու Աճէմեանի Դաշնակցութեան որոշմամբ սպանուած լինելը։

6) Յայտնել Լեռնավայրի Օժ. մարմնին, որ կարգադրած ենք Գահիրէի ենթակոմիտէին իրենց ուղարկելու 500 ֆրանկ՝ իրենց ընթացիկ ծախքերի համար։

— Առաջարկել իրենց կազմին մէջ առնել ընկեր Սահառունուն՝ իբրեւ փորձուած ընկերոջ՝ եթէ իրենք համաձայն են։ — Հրաւիրել նրանց յատուկ ուշադրութիւնը հայերէն եւ թրքերէն գրականութիւն տարածելու մասին։

7) Յայտնել Բրիւքսէլ՝ միջազգ. Սոցիալիստական Բիւրոյին, որ վաղուց մենք ոչ մի տեղեկութիւն չենք ստանում եւ հրաւիրել նրա ուշադրութիւնը։

ՅՈՆԱՆ

Որոշումներ թիւ 34

1908 Մարտ 24

Որոշուեց՝

1) Յայտնել հեռագրով Քիյառին՝ մեր կողմից մասնակցել Գերշունու[56] թաղմանը։ Հեռագրով յայտնել մեր ցաւակցութիւնը Պարիզ՝ Ռուբանովիչին[57]։

— Գրել Պարիզի մարմնին, որ մեր կողմից 50 ֆրանկից պսակ դնել Գերշունու դագաղի վրայ եւ իրենք էլ ամբողջ կազմով ներկայ գտնուեն թաղմանը։ Այս որոշումները յայտնել Էս-Էրներու Պարիզի մարմնին։

2) Գրել Արեւել. Բիւրոյին եւ խնդրել մի օրինակ ներքին կանոնագրութիւն իրենց շրջանի Կարմիր-Խաչի։ Ցիշեցնել կովկասեան ռուս շտաբի կազմած քարտէսի մասին։

3) Վանի դէպքերի առիթով նորից գրել Քիյառին եւ խնդրել ամէն միջոց ի գործ դնել պետութիւնների ուշադրութիւնն ու միջամտութիւնը հրաւիրելու։ Նոյնպէս խնդրել ամէն կերպ աշխատել, որ մեր բարեկամները chambre-ում[58] հարցապնդում անեն։

4) Պատասխանել Գիսակի[43] նամակին՝ յայտնելով մեր ուրախութիւնն ու գոհունակութիւնը՝ որ այժմ հնարաւորութիւն է ստեղծուել թղթակցելու։ Ձեռնպահ մնալ տեղեկութիւններ տալուց՝ մինչեւ այդ մասին ինքը չգրէ եւ չուզէ։

5) Պահանջել Լեռնավայրի Օժ. մարմնից, որ մեր ընկերները գլխաւորապէս զբաղուեն կազմակերպելով, պրոպագանդայով եւ աշխատեն մտցնել ժողովրդի մէջ ինքնապաշտպանութեան ոգին։ — Յայտնել Տիրանի մասին, որ որքան էլ նրա մասնակցութիւնը մեզ ցանկալի լինի, բայց ցաւում ենք որ այդ պայմաններր անկարող ենք ընդունել։ — Յայտնել նոյնպէս, որ Փաշայեանի տպարանը յանձնեն Տաղաւարեանին։

6) Յայտնել անմիջապէս Ծոցի ընկերներին՝ Բալկ. Կ. Կոմիտէին նամակի մասին, որ անցել է Թուրք կառավարութեան ձեռքը եւ խնդրել որ խիստ զգուշանան։

7) Հեռագրել Արեւել. Բիւրոյին Անդրանիկի հրաժարականի մասին եւ առաջարկել մարդ ուղարկել յետս առնել տալու[59]։

ՅՈՆԱՆ

56.- Գրիգորիյ Գերշունի, ռուս ընկերվար յեղափոխական կուսակցութեան (էս-էր) հիմնադիրներէն եւ յայտնի ղեկավարներէն մէկը։

57.- Ռուս ընկերվար յեղափոխական կուսակցութեան ղեկավարներէն։

58.- Ֆրանսերէն՝ Խորհրդարանում։

59.- Անդրանիկի «հրաժարականի» այս հարցը կը կարօտի որոշ լուսաբանութեան։

Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. ժողովը (1907) որոշած էր սիստեմատիկ բնոյթ տալ քաղաքական տեռորին, թիրախ ընտրելով մասնաւորաբար Թուրքիոյ մէջ կառավարական կարեւոր դէմքերը։ Դաւադրական այս գործունէութեան միջազգային բնոյթ տալու համար, կը նախատեսուէր անոր գործադրութեան մասնակից դարձնել նաեւ Համիտի վարչակարգին դէմ պայքարող ոչ-հայ տարրերը (թուրք, մակեդոնացի, պուլկար, ալբանացի, յոյն եւայլն)։ Այս նպատակով Ընդհ. ժողովը կեանքի կոչած էր Յուցական-տեռորական մարմին մը, որուն անդամ ընտրուած էին Ակնունի, Անդրանիկ եւ Վահագն Տաթեւեան։ Եռանդամ այս Մարմինը, որ գործի պիտի ձեռնարկէր Տեմէն (Տեռորական մարմին) կրճատուած անուամբ, Պուլկարիոյ մէջ արդէն սկսած էր նախապատրաստական աշխատանքներուն (գործունէութեան ծրագրում, օժանդակ գործիչներու ընտրութիւն, բանակցութիւններ ոչ-հայ յեղափոխական տարրերու հետ եւայլն), երբ մարմնի երկրորդ նիստէն ետք, Մարտ 7 թուակիր արծանագրութեամբ մը Անդրանիկ իր թերահաւատութիւնը կը յայտնէ ծրագրի յաջողութեան հաւանականութեան մասին, շեշտելով ի մասնաւորի որ «թուրք առաջադիմական տարրի վերայ գործնականին մէջ ոչ մի վստահութիւն չունիմ» եւ եզրակացնելով «վերեւ յիշուած դժուարութիւնները տեսնելով հրաժարւում եմ այս մարմնէն, ցանկալով յաջողութիւն եւ կարողութիւն»։

Ահա այս է, նեղ իմաստով, Անդրանիկի հրաժարականին պատմութիւնը. հրաժարական, պէտք է ճշդել, ոչ տակաւին Դաշնակցութենէն, որուն հանդէպ մեծ յարգանք կը տածէր Սասնոյ հերոսը, այլ միայն Տեռորական Մարմնի անդամակցութենէն։ «Նեղ իմաստով» կ'ըսենք, որովհետեւ համիտեան բռնակալ վարչակարգը տապալելու նպատակով թուրք եւ այլազգի ընդդիմադիր տարրերու հետ գործակցութեան ճանապարհին, Դաշնակցութիւնը արդէն բաւական ճամբայ կտրած էր, որմէ դժգոհ Անդրանիկի կարգապահական այս ըմբոստացումը ուներ, անշուշտ, եւ ուրիշ պատճառներ։ Ծանօթ է հայդուկապետին բուռն հակառակութիւնը Կովկասեան Նախագծին, Դաշնակցութեան կողմէ պաշտօնապէս որդեգրուած ընկերվարական ուղեգծին, Կովկասի մէջ «սոցիալիզմով» խանդավառ կարգ մը մարմիններու հապճեպօրէն ձեռնարկած «դասակարգային գտումներուն» կուսակցական շարքերուն մէջ։ Ծանօթ են նոյնպէս, իրեն համար անընդունելի կամ անհաճոյ երեւոյթներու առիթով, Անդրանիկի բարկութեան նոպաները, որոնց մէջ քիչ դեր չեն խաղար Երկրէն հասած հայաջինջ կոտորածներու եւ նորանոր խժդժութեանց հոգեցունց լուրերուն ծգած տպաւորութիւնը. եւ եթէ այս բոլորին վրայ աւելցնենք երկարատեւ դարմանումի կարօտ իր վատառողջ վիճակը,— հասկնալի կը դառնան տարագրութեան մատնուած Սասնոյ հերոսին պարբերական պոռթկումները, որոնցմէ մէկն է ահա 1908 թ. Մարտ ամսուան այս «հրաժարականը»։

Նման պարագաներուն, ինչպէս սպասելի էր, կուսակցական վերին մարմիններն ու ընկերները պիտի վարուէին հանգամանքներուն եւ լայնախոհութեամբ։ Արդարեւ, յատկապէս այդ նպատակով Պուլկարիա առաքուած Արեւմտեան Բիւրոյի անդամ Սարգիս Մինասեանի (Արամ-Աշոտ), ինչպէս նաեւ կարգ մը ուրիշ ընկերներու (Վահագն Տաթեւեան, Յոնան Դաւթեան, Ռուբէն Զարդարեան) հանդարտեցնող միջամտութիւնները ի վերջոյ գործեցին իրենց ազդեցութիւնը աստիճանաբար մեղմացնելու համար Անդրանիկի «հերթական» այդ գայրոյթը, որպէսզի ան վերստին լծուի իրեն վստահուած գլխաւոր առաքելութեան, որ կը կայանար զէնք ու զինամթերքի գնման եւ Երկիր առաքման մէջ։ Տեմէնի արծանագրութիւններու եւ Անդրանիկի հրաժարականի մասին տեսնել նաեւ՝ «ՆԻՒԹԵՐ», Զ. հատոր, էջ 202-207։

Որոշումներ թիւ 35

1908 Մարտ 26

Որոշուեց՝

1) Հեռագրով ուղել Արեւելեան Բիւրոյից տեղեկութիւններ՝ Վանի մասին։

2) Յայտնել Պարիզի մարմնին, որ մենք համաձայն ենք թուրքերին հետ կազմել միտինգ, միայն թէ Վանի դէպքերը[60] պէտք է լինեն միտինգի մեխը։ Պէտք է աշխատել միտինգին [որ] մասնակցեն ականաւոր բարեկամներ։ Բեհաէդդինի առաջմ պատասխանել չենք կարող։

3) Գրել Արեւելեան Բիւրոյին, որ ա-աշխատեն Սամսոնի հետ յարաբերութեան մէջ մտնել. բ- յայտնել որ մենք աշխատում ենք Ֆրանս. խորհրդարանում մեր խնդրի վերաբերմամբ հարցապնդում առաջ բերել եւ կապել մակեդոնականին հետ, ուստի խնդրել որ շտապեն մեզ ճշգրիտ եւ որոշ տեղեկութիւններ ուղարկել. գ- յայտնել, որ Պարոյրի հրաժարականի[59] մասին — որ մէկը ուղարկեն այդ խնդիրը փակելու — մենք նկատի ենք ունեցել Ակնունուն, որը շուտով պէտք է վերադառնայ Բոլգարիա։ Նկատել որ իրենց պատասխանը՝ թէ շուտով Պարոյրին կը գրեն — նպատակայարմար չէ։ դ- յայտնել Տիրանի առաջարկ-պայմանի մասին Լեռնավայր գնալու համար եւ մեր մերժելու պատճառը։

4) Ի նկատի ունենալով, որ Արեւելեան Բիւրոյի ձեռնարկած միջոցով՝ — գրութեամբ — Պարոյրի հրաժարականի յետ առնելը նպատակի չի հասցնել, որ ձգձգելը կարող է առիթ տալ անակնկալների՝ ուստի ուղարկել Սարգիսը[45] Բոլգարիա՝ այդ խնդիրը փակելու։ — Հեռագրել Անդրանիկին՝ իրը պատասխան իր գրութեան, որ 3 օրից կը ստանայ մեր պատասխանը —։

5) Դիտել տալ Աւարայրի[61] ընկերներին, որ իրենք թիւրիմացութեան մէջ են թուրք-հայկական համերաշխութեան մասին, եւ որ մենք մագաչափ անգամ չենք շեղւում մեր Ծրագրից. բ- դիտողութիւն անել՝ ընկեր Ս. Ստեփանեանին արած առաջարկը ռուս կոնսիլի կողմից բաց ձեւով գրուելու մասին։

6) Առաջարկել Քիյառին գնալ Լոնտոն քաղաքական շրջաններում աշխատելու հայկական ռեֆորմների համար՝ հրաւիրելով նրանց ուշադրութիւնը Երկրում տեղի ունեցող դէպքերի վրայ. եթէ ինքը հնարաւորութիւն չունի, խնդրել որ դիմէ մեր կողմից Bérard-ին[12]՝ այդ միսիան յանձն առնելու. բ-Սուլթանի կեանքին դէմ դաւադրութեան հարցին պատասխանել, որ դա պալատական ինտրիգ է. յամենայնդէպս մենք ոչ մի առնչութիւն չունենք։

ՅՈՆԱՆ

60. Ակնարկութիւն այն սպառազէն ոստիկանին, զոր թրքական իշխանութիւնները եւ բանակը ստեղծած էին Վանի մէջ, դիտելի Դաւիթի մատնութեան հետեւանքով Դաշնակցութեան գինապահեստները երեւան ելլելէն ետք։

61. Աւարայրի ճակատամարտն էր Ստրպատականի խոյ քաղաքին։

Որոշումներ թիւ 36

1908 Ապրիլ 4

Որոշուեց՝

1) Ուղարկել Գալֆային Մարսէյլ քննելու Վ. Ղազարեանի ներկայացրած 1906 Յունուար 1-ից մինչեւ 1 Մարտ 1908 թուի հաշիւը՝ 3637 ֆրանկի։ Դիտողութիւն անել նոյնպէս, որ հակառակ քանիցս իրեն եղած դիմումներին ուղարկելու հաշիւները, նա երկար ժամանակ պահած է։ Ոչ մի պայմանաւ այլեւս չթոյլատրել այսպիսի երեւոյթ եւ խստապահանջ լինել։

2) Ուղարկել Լոնտոն Հրաչին 100 ֆրանկ՝ իբր ճանապարհածախս ժընեւ գալու՝ տեսակցութեան եւ մտքերի փոխանակութեան համար՝ իր միսսիայի — պայթ. նիւթեր պատրաստելու վերաբերմամբ։

3) Յայտնել «Թէրագգը»ի խմբագրութեան, որ Ալեքսանդրիա ուղարկած թերթի քանակը բարձրացնեն 200-ի։

4) Ուղարկել մարմիններին Արեւմտեան Բիւրոյի 1907 տարուան 2 վեցամսեայ հաշիւները։ Հաշուի ուշանալը պատճառաբանւում է նրանով, որ սպասւում է Ընդհ. Ժողովի կողմից որոշուած ընդհ. հաշուական ձեւի, որի կազմութիւնը յանձնուել էր մի յատուկ յանձնաժողովի կովկասում։

5) Գրել Մոցի[46] ուսանող-ընկերներին խրախուսական մի նամակ. դիտել տալ միանգամայն, որ պաշտ[օնական] նամակները պէտք է կրեն մարմնի ստորագրութիւնը եւ ոչ անհատ ընկերոջ։

6) Գրել Բալկ. Կ. Կոմիտէին՝ Յուց.-Տ[եղոր]ական մարմնի անդամ Վահագի տրամադրութեան տակ դնել 1000 ֆրանկ այդ մարմնի ծախքերի համար։ Դիտողութիւն անել Կ. Կոմիտէի նամակի ոճի վերաբերմամբ եւ նկատել որ այդ անընդունելի է եւ ընդմիշտ պէտք է վերջ տալ դրան։ Նկատել որ հիմնաւոր չէ Արեւելեան Բիւրոյի վերագրուած այն մեղադրանքը որ նա Սեպուհին (Մուշ-Սասունի գործիչ) չօգնեց նիւթապէս։

7) Պատասխանել Ալեքսանդրիոյ ենթակոմիտէին, որ Սարհատին Ընդհ. Ժողովի պատգամաւորութեան եւ այդ մասին եղած ծախքերի վերաբերմամբ Բիւրոն ոչ հաւանութիւն է տուել եւ ոչ էլ տեղեկութիւն է ունեցել. բայց քանի որ դա իսկապէս ծախսուած գումար է՝ թէեւ անկանոն, այդ անկանոնութիւնը գործող մարմինը պէտք է յանդիմանել եւ լուծել։ Քանի որ մարմինը ինքնին լուծուած է, կը մնայ շուտով այդ խնդիրը վերջացնել եւ ընդմիշտ փակել։

ՅՈՆԱՆ

Որոշումներ թիւ 37

1908 *Ապրիլ* 13

Որոշուեց՝

1) *Ցայտնել Արեւել. Բիւրոյին՝ ա- Գալֆային Մարսէյլ գնալու մասին, բ- նորից յիշեցնել հասցէներին չուղարկուելը ինչպէս նաեւ տեղեկութիւններ տաճկական եւ ռուսական պատերազմ[ական] պատրաստութիւնների համար։ — գ- որ Ցոնանը*[5] *կ'երթայ Պարիզ տեսակցելու Քիյառի եւ բալկանեան քաղ[աքական] կարեւոր գործիչների հետ։ — դ- որ կայացաւ Եւրոպայի դաշնակցական հայ ուսանողների առաջին կոնգրէն. մշակուեց կանոնագրութիւն։*

2) *Ընդունել գրաշար Ռուբէնի հրաժարականը եւ գրել Թիֆլիս ուղարկելու անպայման վստահելի մէկը։*

3) *Ի պատասխան Ամերիկայի Կ. Կոմիտէի հեռագրի, յայտնել որ Ասլանը (Մարտ. Ցարութիւնեան) առայժմ չէ կարող գալ եւ խնդրել Թաշճեանին մնալ իրրեւ խմբագիր մինչեւ յարմար անձնաւորութիւն գտնելը։*

4) *Պատասխանել Պարիզ «Թէրագագը»ի խմբագրութեան, որ թէեւ կան մեծ դժուարութիւններ Մուսուլի Դէհհուկ գաւառի չէյխ Նուր-Մուհամմէդ էֆենդու, բայց եւ նոյնպէս կ'աշխատենք ամէն կերպ իրագործել։*

5) *Գրել Հանգոյցին եւ խնդրել Գահիրէի ենթակոմիտէի լուութեան մասին բացատրութիւններ, որպէսզի հնարաւորութիւն ունենանք մեր դիրքը որոշելու հանդէպ այդ մարմնի։*

Ս. ՄԻՆԱՍԵԱՆ *ՑՈՆԱՆ*

Որոշումներ թիւ 38

1908 *Ապրիլ* 21

Որոշուեց՝

1) *Որ ամսոյս վերջին Ցոնանը գնայ Պարիզ՝ տեսնուելու Քիյառի հետ եւ աշխատելու՝*

ա.- Մակեդոնական հարցին կապել հայկական ռեֆորմները. բ.- աշխատել արգիլելու հաւանական պատերազմը Ռուսաստանի եւ Տաճկաստանի միջեւ. գ.- կամ պատերազմի դէպքում ուղարկել զինուորական ատաչէներ[62] *կամ քաղաքական ներկայացուցիչներ հսկելու, որ կոտորած չլինի. դ.- առաջարկել Քիյառին յանձն առնել Անգլիա գնալու՝ աշխատելու համար Անգլիոյ քաղաքական շրջաններում. ե.- շեշտել հարցապնդման անհրաժեշտութեան համար, որի մասին առաջուց գրուած է. եւ զ.- կազմել ժուռնալիստների պայքար։*

2) *Ուզել Պարիզի մարմնից տեղեկութիւններ միտինգի մասին, որ ուզում են կազմել Երիտ. թուրքերի հետ։ Դիտել տալ, որ նրանք այդպիսի պարագաներում պարտաւոր են մեզ տեղեակ պահել անցուդարձերին։*

3) *Ցայտնել «Թէրագագը»ի խմբագրութեան, որ մենք համաձայն ենք կազմակերպել մի միտինգ բողոքելու համիտական սարսափների դէմ. բայց մենք կը ցանկանայինք իմանալ այն հարցերը, որոնք պէտք է շօշափուեն այնտեղ։*

4) *Ցայտնել Ամերիկայի Կ. Կոմիտէին, որ մեզ տեղեկութիւններ են հասնում Նիւ-Եորքից, որ նախկին հնչակեան Աղասին*[63] *ուզում է մտնել մեր շարքերի մէջ. զգուշացնել որ վերապահ վերաբերմունք ցոյց տան։*

5) *Ուղարկել Գահիրէի ենթակոմիտէին նուիրատոմսեր։*

6) *Բողոքել Ժընեւի սոցիալիստների ժողովին, որ մեզ չեն հրաւիրում թէ՛ ժողովների եւ թէ զանազան միտինգների։*

Ս. ՄԻՆԱՍԵԱՆ *ՑՈՆԱՆ*

62.- Ֆրանսերէն, կցորդ իմաստով։
63.- Աղասի, բուն անունով՝ Թուրսարգիսեան Կարապետ, 1895-96-ի Զէյթունի ապստամբութեան ղեկավարներէն։

Որոշումներ թիւ 39

1908 *Մայիս* 1

Որոշուեց՝

1) *Ցայտնել Մոցի ընկերների բողոքը Բալկանեան Կ. Կոմիտէի՝ այս վերջինին անգգուշութեանը համար՝ գրելով բաց նամակ եւ պաշտօն[ական] թղթի վրայ Երկրի ընկերներին, որ ռռնուած է կառավարութեան կողմից։ Նոյնպէս Ռազմիկում Կորիւն վարդապետի մասին գրածների վերաբերմամբ։*

Դիտողութիւն անել Բիւրոյի կողմից եւս։

2) *Գրել խրախուսական նամակ Կալկաթայի Հայ երիտասարդաց միութեան։*

3) *Կրկին առաջարկել Հանգոյցին*[40] *գնալ Ամերիկա՝ ամերիկացիների խնդրի հիման վրայ։*

4) *Գրել Ամերիկայի Կ. Կոմիտէին, որ ընկերներ Զթճեանին եւ Զագմագճեանին հրաւիրեն գործի։ բ.- Մերժել Կ. Կոմիտէի առաջարկը՝ կոմիտէն կառավարութենէն հաստատել տալու մասին։ գ.- Հրաւիրել նրանց ուշադրութիւնը, որ Երկրի հետ յարաբերութեան ժամանակ խիստ զգոյշ լինին։ Կրկնել որ ոչ ոք Երկիր չուղարկեն առանց մեր գիտութեան եւ հաւանութեան։*

Ս. ՄԻՆԱՍԵԱՆ *ՑՈՆԱՆ*

Որոշումներ թիւ 40

1908 *Մայիս* 16

Որոշուեց՝

1) *Հեռագրել ֆրանս., անգլ. եւ գերմանական թերթերին ինչպէս եւ* Pro-Armenia-*ին եւ Պարիզի թուրք բարեկամներին՝ Վանի դէպքերի առիթով։*

2) *Նամակով դիմել* Bérard-*ին եւ խնդրել յանձն առնել Լոնտոն գնալ՝ աշխատելու մեր խնդրի մասին։ Այս որոշումը յայտնել եւ Քիյառին։*

3) *Վահագի*[28] *գրութեան համաձայն հեռագրել բալկանեան Կ. Կոմիտէին՝ տալ նրան 4000 ֆրանկ՝ Տ[եռորական] եւ Ց[ուցական] մարմնի ծախքերի համար։*

4) *Գրել Միքայէլին*[64]*, որ գայ ու գնայ Պարիզ աշխատելու քաղաքական շրջաններում մեր խնդրի համար։*

Ս. ՄԻՆԱՍԵԱՆ *ՑՈՆԱՆ*

64.- Վարանդեան Միքայէլ։

Որոշումներ թիւ 41

1908 *Մայիս* 24

Որոշուեց՝

1) *Գրել Ռ. Զարդարեանին եւ առաջարկել ժամանակաւորապէս գնալ Ամերիկա կազմակերպ[ական] գործով։*

2) *Խնդրել Ալթունեանին ուղարկելու մեզ թարգմանութիւններ գերմանական թերթերից՝ Երկրում տեղի ունեցող դէպքերի մասին։*

3) *Բալկանեան Կ. Կոմիտէի գրութեան համեմատ առաջարկել Արշակ Իսահակեանին գնալ Բալկան պրոպագանդի համար։*

4) *Գրել Լեռնավայրի Օժ. մարմնին եւ նրա ուշադրութիւնը հրաւիրել Լեռնավայրի մեր կազմակերպչական ձեւի վրայ, որ չի համապատասխանում մեր կուսակցութեան մէջ ընդունուած ձեւի եւ հակառակ է նրա ոգուն։ Նոյնը գրել եւ Ծոց ու Լեռնավայր։ Առաջարկել Լեռն[ավայր]ի Օժ. մարմնին ուղարկել Դաշտի*[65] *ընկերներին Մարթինին մեր գրած նամակի պատճէնը, խրախուսել եւ նիւթապէս աջակցել Ծոցի ուսանող ընկերներին՝ արձակուրդին գաւառները գնալու պրոպանգանդի եւ կազմակերպելու։*

5) *Հրաչեայի առաջարկին Կովկաս գնալու համար պատասխանել՝ քանի որ ինքն էլ այդ մասին գրել է Կովկասի ընկերներին, սպասել նրանց պատասխանին։*

6) *Լինչի* Armenia-*ի 2 հատորը ուղարկել Ծոցի ընկերներին*[66]։

ՑՈՆԱՆ *Ս. ՄԻՆԱՍԵԱՆ*

65.- Դաշտը կուս. ծածկանունն էր Հալէպի։ Յիշեցնենք որ Ծոցը՝ Պէյրութն է, իսկ Լեռնավայրը՝ Կիլիկիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի դաշնակցական կազմակերպութիւնը։

66.- «Լինչի Armenia-ի 2 հատորը ուղարկել Ծոցի [Պէյրութի] ընկերներին»ը ունի հետաքրքրական պատմութիւն։ Խօսքը տանք Նիկոլ Աղբալեանին (Հանգոյց), որ Աղեքսանդրիայէն Արեւմտեան Բիւրոյին ուղղուած իր նամակին մէջ այդ մասին կը գրէ (1908, 13 Մայիս).- «Ինչպէս գիտէք Ծոցի ընկերները ցանկութիւն ունէին մի նուէր տալու պոստի այն պաշտօնեային, որ այնքան անգնահատելի ծառայութիւն է մատուցած մերոնց. լսելով այս մտադրութեան մասին, ազնիւ մարդը մերժած է ընդունիլ որեւէ նուէր, բայց քանի որ նա շատ հետաքրքրուում է մեր անցեալ եւ ներկայ կեանքով, ուստի մենք ընդունելով Ծոցի ընկերներու առաջարկը դիմում ենք ձեզ խնդրելով որ ուղարկէք մեզ Լինչի Armenia-ն եւ վերջին անգամ ուղարկուած անգլերէն գրքերից մէկ երկու օրինակ եւս, նուիրելու համար յիշեալ պոստի պաշտօնեային» (Փաստ. 1035-101)։

Որոշումներ թիւ 42

1908 *Մայիս* 27

Որոշուեց՝

1) *Հեռագիր-բողոք ուղարկել ֆրանսիական եւ անգլիական եւ իտալական արտաքին գործերի մինիստրներին։*

2) *Շնորհակալութիւն յայտնել Պարիզի պարսկական դեսպանին այն ջանքերի համար, որ նա ի գործ դրեց Դրօշակի մուտքի արգելումը վերցնել տալու։*

3) *Փոխադրել Լեռնավայրի Օժ. մարմնին* 1500 *ֆրանկ ընթացիկ ծախքերի եւ* 500 *ֆր. Ծոցի ուսանող ընկերների գաւառները գնալու համար։ Ցայտնել որ մենք անկարող ենք համաձայնել ընկեր Ռազմիկի առաջարկին* 100 *ոսկի տալ Տիգրիսի Եւրոպա գալուն համար։ Միայն ի նկատի ունենալով Տիգրիսի եւ մեր տեսակցութեան կարեւորութիւնը մենք կարող ենք տալ* 5-600 *ֆրանկ։*

4) *Ցայտնել Արեւելեան Բիւրոյին՝ ա.- որ մենք համաձայն չենք ռուս-տաճկական պատերազմի դէպքում մեր բռնելիք դիրքի — տակտիկի վերաբերմամբ Վանի ընկերների որոշման հետ՝ որ կայանում է նրանում, որ պէտք է աշխատել սահմանի երկու կողմերում էլ ապստամբութիւն առաջ բերել — գործնականապէս դա անհնարին է եւ հետեւանքը միայն կորստաբեր կը լինի. բ.- որ Ցոնանը կարողացել է տեսնուել միայն Քիյառի հետ, որովհետեւ քաղաքական գործիչներ, որոնց հետ պէտք է տեսնուէր, ինչպէս եւ Բեռարը, Պարիզից բացակայ էին Պարլամէնտի արձակուրդի պատճառով։ Քիյառը իր վրայ է վերցրել կատարել յանձնարարութիւնները։ գ.- բժիշկ Զ[աւրիեւ]ի Անգլիա գնալու մասին յայտնել, որ մենք դէմ ոչինչ չունենք, միայն գործունէութեան ամբողջութեան համար պէտք է մեզ հետ տեսնուէր, որովհետեւ մենք եւս այդ ուղղութեամբ աշխատում ենք։ դ.- տալ տեղեկութիւններ Քիյառի տեսակցութեան վերաբերմամբ, որ սա ունեցել է արտաքին գործերի մինիստրութեան առանձին պաշտօնեայի հետ։ ե.- յայտնել որ եւրոպական մամուլը, քիչ բացառութեամբ, մեր հեռագիրները չեն տպագրում։ զ.- բողոքել «Վտակի»*[67] *վիճաբանական ոճի եւ ձեւի դէմ։ է.- որ յայտնեն Մուսայէլեանի Ամերիկա գնալու մասին։*

5) *Ցայտնել Բալկ. Կ. Կոմիտէին գոհունակութիւն շրջանային ժողովի յաջող վերջացման մասին։ բ.- յայտնել որ Արամի*[68] *մասին տարածուած լուրերը սուտ են եւ որ ով որ էլ Վանի դէպքերում յանցաւոր լինի, նա անպատիժ մնալ չէ կարող։ գ.- Արշակ Իսահակեանին նորից գրել ենք իրենց մասին, դ.- նուիրատոմսերը, որի ձեւը փոխել ենք տալիս, պատրաստել կը տանք ու կ'ուղարկենք։*

6) *Ցայտնել Աւարայրի*[61] *ընկերներին, որ Խորհուրդին ներկայացուելիք գրութիւնը ուղարկեցինք. բ.- դիտողութիւն անել իրենց յոռետես տրամադրութեան առթիւ եւ բացատրել, որ Վանի դէպքերում չպէտք է ընկերներին մեղադրել. գ.- յայտնել մեր համաձայնութիւնը պարսկա-տաճկական սահմանագլխում գաղթականներ բնակեցնելու ծրագրի հետ. յայտնել որ մենք եւս այդ մասին վաղուց գրել ենք Արեւել. Բիւրոյին, դ.- խնդրել յատկապէս, որ լուրերը եւ տեղեկութիւնները խիստ կոնտրոլի ենթարկեն եւ ապա տան մամուլին. ե.- յայտնել որ մենք շարունակ դիմումներ ենք անում մեր խնդրի առիթով։*

7) *Ցայտնել Վանի Կ. Կոմիտէին որ մեր նամակ չգրելուն պատճառը այն է, որ ի նկատի ունենալով Վանի վիճակը, չենք կարծում թէ մեր նամակը ստանան. յամենայն դէպս գրել մի քանի տեղեկութիւններ։*

67.- Թիֆլիս հրատարակուող դաշնակցական օրաթերթ (1907-1908)։ Կովկասի մէջ Դաշնակցութեան պաշտօնաթերթը «Յառաջ»ն էր (1906-1909), որ բազմաթիւ անգամներ խափանումի ենթարկուեցաւ ցարական գրաքննութեան կողմէ։ Այսուհանդերձ, իւրաքանչիւր խափանումէ ետք, արտօնատէրերու եւ խմբագիրներու փոփոխութեամբ, ան շարունակեց լոյս տեսնել տարբեր անուններով,— Երկիր, Ձանգ, Ժամանակ, Փայլակ, Ժայռ, Խարիսխ, Կովկասեան առաւօտ, Նոր ալիք, Վտակ, Զանգակ, Գործ։

68.- Մանուկեան Արամի։

8) *Ուղարկել Լեռն[ավայր]ի Օժ. մարմնի միջոցով Դաշտի բողոքող ընկերներին վերջին անգամ նրանց նամակին պատասխան, մանաւանդ որ նրանք ուղարկել են մի արդարացուցիչ բողոքագիր ուր արդարանում են ասելով՝ որ իրենց խաբել են: Այդ մի պատասխանը պէտք է յայտնել Ծոցի[46] եւ Դաշտի[65] բոլոր ընկերներին: Մենք այդ պատճառաբանութիւնը համարում ենք անբաւարար եւ պահանջում ենք հրապարակաւ բողոք:*

9) *Իմացնել Արեւելեան Բիւրոյին ա.- Թիւֆէկճիեւը, որ բանտարկուած է էքսպրոպրոսիոն արուած ռուսական թղթադրամներ վրան գտնուելու պատճառով՝ յայտնել է ոստիկանութեան, որ նա այդ թղթադրամները ստացել է Ս. Զաւարեանից. բ.- որ կարեւոր խնդիրների համար Վահագը[28] ուզում է Ակնունուն, պէտք է չտապեցնել նրա մեկնումը, գ.- որ Միքայէլը[64] ճանապարհւում է Պարիզ:*

10) *Ցայտնել Ամերիկայի Կ. Կոմիտէին, որ Հանգոյցը[40] հրաժարւում է գալ Ամերիկա, որ մենք դիմել ենք Զարդարեանին, որ մի երիտասարդ ուսանող Մուսայէլեանը համաձայն է գալ Ամերիկա:*

11) *Ցայտնել Բալկ. Կ. Կոմիտէին Արշակ Իսահակեանի պատասխանը, որ նա այժմ անկարող է գնալ պրոպագանդի:*

12) *Նկատել մեր կողմից Տրապիզոնի կոմիտէին, որ անընդունելի են այդպիսի ոճով գրութիւնները: Տալ տեղեկութիւն ու բացատրութիւն, որ Դրօշակը կանոնաւոր ուղարկւում է իրենց եւ եթէ դադարեցրուած է, այդ եղել է իրենց գրութեան համար եւ որ առհասարակ կապակցութիւն չկայ: Պահանջել իրենց հաշիւը եւ նրանց մօտ գտնուած գումարը, որ իրենց ներկայացուցիչը յայտարարել է Ընդհ. Ժողովին: Այդ գումարը մտցուած է նախահաշուին մէջ: Խնդրել՝ տալ մեզ իրենց շրջանի մասին կանոնաւոր տեղեկութիւն: Մերժել նրանց առաջարկը՝ ուղարկել յետադէմ թուրքի՝ նրան վտանգելու համար, համարելով այդ միջոցը ոչ պատւաբեր, եւ անել այդ մասին դիտողութիւն:*

13) *Շնորհաւորական հեռագիր ուղարկել Լէոյին[69] յոբելեանի առթիւ եւ Լիոն գումարուած* Ligue des droits de l'homme-*ի[70] տարեկան կոնգրէին:*

Ս. ՄԻՆԱՍԵԱՆ *ՑՈՆԱՆ*

69.- Լէօ՝ ծանօթ պատմաբանը՝ Բաբախանեան Առաքել:
70.- Ֆրանսերէն՝ Մարդկային իրաւանց լիկա:

Որոշումներ թիւ 43

1908 *Յունիս 7*

Որոշուեց՝

1) *Միքայէլը ճանապարհուի Պարիզ տեսնուելու Քիյառի, Պրեսանսէի[2] եւ ուրիշների հետ մեր խնդիրը հրապարակի վրայ դնելու եւ քաղաքական շրջանների ուշադրութիւնը հրաւիրելու Երկրում կատարուող դէպքերի վրայ: Գնալ Լոնտոն Բեռարի հետ այդ միսսիայով:*

2) *«Մէշվէրէթ»ի[50] կուսակցութեան ի պատասխան յայտնել՝*
1.- որ Կովկասի թուրքերի եւ հայերի յարաբերութիւնը բարեկամական է եւ որ մեր կուսակցութիւնը ամէն կերպ աշխատում է աւելի ամրացնելու այդ բարեկամական կապերը, 2.- որ տարածուած լուրերը սահմաններում թուրքերին կոտորելու համար պէտք է համարել պրովոկասիոն եւ Սուլթանի կառավարութեան գործը եւ 3.- որ մենք դէմ չենք ընդհանուր համաձայնութեան մի կոչ ուղղել տաճիկներին եւ հայերին:

3) *Գրել նամակ Վահագին՝ 1.- որ արդէն կարգադրուած է որ իր ուզած գումարը տրամադրելի անեն. 2.- Խորհուրդը վերջացած է, բայց որոշումները դեռ մեզ յայտնի չեն, 3.- տալ տեղեկութիւններ Խաչատրի մասին, 4.- որ Ցոնանը ներկայ պայմաններում անկարող է բացակայել այստեղից, 5) Դիտողութիւն անել Գրիգորի մի նոր անզգուշութեան նկատմամբ. 6.- խնդրել Տագէսեանի մասին տեղեկութիւններ:*

4) *Ցայտնել Ամերիկայի, Պալքանի Կ. Կոմիտէներին եւ Ալեքսանդրիոյ տեղ. մարմնին, որ Խորհուրդը վերջացած է, բայց որոշումները մեզ յայտնի չեն՝ բացի կաթողիկոսական ընտրութեան վերաբերմամբ: Որոշուած է պաշտօնապէս չմասնակցել. իւրաքանչիւր դաշնակցական ազատ է — իբր անհատ — համաձայն իր համոզմունքի մասնակցիլ կամ ձեռնպահ մնալ:*

5) *Կաթող. ընտրութեան վերաբերմամբ «Հայրենիքում» երեւցած յօդուածի առիթով անել դիտողութիւն, որ դա չի համապատասխանում կուսակցութեան ոգուն եւ ուղղութեան:*

6) *Ամերիկայի Կ. Կոմիտէի միջոցով յայտնել Բոստոնի Կոմիտէին՝ իրենց շրջաբերականի առիթով, որ Բիւրոն այդ քայլը չէ կարող խրախուսել ու հաւանութիւն տալ նրան: Քննադատութիւնը իրենց պարտքն ու իրաւունքն է, միայն այդ պէտք է անել կազմակերպական ճանապարհով: Այդ միջոցը հակակարգապահական է: — Ուղել Կ. Կոմիտէի մօտ մնացած գումարը:*

7) *Ցայտնել Բալկ. Կ. Կոմիտէին Ծոցից եկած բողոքը իրենց երկրորդ անզգոյշ վարմունքին համար եւ առաջարկել, որ այսուհետեւ նրանք Երկրի հետ յարաբերութիւն պահպանեն միայն Ալեքսանդրիոյ միջոցով:*

8) *Լեռն[ավայր]ի Օժ. մարմնի միջոցով Ծոցի ընկերներից պահանջել Հողաբլուրի[71] ընկերների բողոքի իսկականը: Ցայտնել որ Սամսոնի կարեւորութիւնը մենք վաղուց ըմբռնած ենք եւ դրանով զբաղուած: Բաստի շրջանի Օժ. մարմնի մասին տեղեկութիւններ ուզել:*

9) *Ցայտնել Ալեքսանդրիոյ ենթակոմիտէին, որ Թէրագգրի խմբագրութեան յայտնուած է, որ ուղարկուած թերթերի թիւը* 1000-*ի բարձրացնեն:*

10) *Գրել, համաձայն Բալկ. Կ. Կոմիտէի առաջարկի, Արշակ Իսահակեանի, որ յանձն առնէ «Ռազմիկի» խմբագրի պաշտօնը:*

ՑՈՆԱՆ *Ս. ՄԻՆԱՍԵԱՆ*

71.- Հողաբլուրը Այնթապն է, իսկ Ծոցը եւ Բաստը, ինչպէս ծանօթ է, յաջորդաբար՝ Պէյրութ եւ Սեբաստիա:

Որոշումներ թիւ 44

1908 *Յունիս* 13

Որոշուեց՝

1) *Կազմել Արեւմտեան Բիւրոյի ռայոնական ժողով. նշանակել ժողովը Օգոստ. 1-ին։ Եթէ մարմիններից երկուսը անկարող լինին ուղարկել ներկայացուցիչ, ժողովը յետաձգել։ Հրաւիրել Բալկանի, Ամերիկայի, Եգիպտոսի, Լեռնավայրի, Մոցի շրջաններից, Յ[ուցական] Տ[եղորական] մարմնի եւ Եւրոպայի դաշն. ուսանողութիւնից՝ մի մի ներկայացուցիչ։ Ձայնի իրաւունք կ'ունենայ այն պատգամաւորը, որի շրջանը ցենզին կը համապատասխանի, ցենզ չունեցողը խորհրդակցական ձայնով կը մասնակցի։ Վերջնական որոշումը թողնել իրեն ժողովին։*

2) *Խմբագրատանը մնացած մեծ քանակութեամբ գրքերը ցրել մարմիններին ծախելու. իսկ Երկրին ուղարկել ձրի։*

3) *Լեռնավայրի Օժ. մարմնին յայտնել, որ Արշակը ճանապարհածախսի եւ ապրուստի համար խնդրում է 250 ֆրանկ եւ կարգադրութիւնը թողնել մարմնին։ Առաջարկել Կարմիր Խաչի միջոցով օգնել Նազարէթ Ջաուշին։*

4) *Հրաչեային ուղած ապրանքների համար տեղեկութիւն տալ յայտնելով միաժամանակ, որ ի նկատ ունենալով ժընեւ պատահած դէպքը՝ մենք ծածուկ հսկողութեան տակ ենք։ Ցանկալի եւ գործնականը՝ որ իրենք աշխատեն ձեռք բերել Վիեննայից կամ Բուդապէշտից։ Ցամենայն դէպս մենք միշտ իրենց տրամադրութեան տակ ենք։*

5) *Մերժել Ալեանակի՝ իր երկրորդ նկարի «Կոյր աշուղի» գնումը եւ առաջարկել եթէ համաձայն է կ'ուղարկենք Ամերիկա վիճակահանութեան ձգելու։*

6) *Դր. Փաշայեանին յայտնել, որ տպարանի վերաբերմամբ բոլոր դոկիւմանները մեզ մօտ են, ուստի եւ պէտք է ուղարկել պարտքի մնացած գումարը։*

7) *Դիմել ուսանողութեան եւ առաջարկել՝ յայտնել Բիւրոյին թէ ո՞վքեր են տրամադիր արձակուրդներին պրոպագանդի գնալու մեր շրջան[ներ]ը՝ Բոլգարիա, Ամերիկա, գուցէ եւ Եգիպտոս։*

8) *Ցայտնել «Վտակին»[67], որ մենք վճարելով «Ֆրանկ [Ֆուրտեր] Ցայթունգի» բաժանորդագինը մինչեւ Օգոստ.ի 6-ը, այնուհետեւ մենք դադարում ենք ուղարկելուց։ Իրենք կարգադրեն։*

9) *Ուղարկել Պետրոսին[37] (Բագրատ) 100 ֆրանկ ճանապարհածախս Կովկաս գնալու համար։*

10) *Ցայտնել Արեւել. Բիւրոյին 1) որ իբր հետեւանք մեր դիմումներին, Քիյառը յայտնում է, որ ենթադրութիւններ կան, որ պետութիւնները լուրջ հսկում են Վանի դէպքերի վրայ։ Ցամենայն դէպս դրական փաստեր պակասում են, 2) որ Բեռարը մեր տրամադրութեան տակ է, ուրեմն նրա Լոնտոն գնալը ապահովուած է։ 3) Դիտողութիւն անել, որ առանց մեր գիտութեան զանազան ձեռնարկներ են անում, որ ունի քաղաքական նշանակութիւն եւ կատարւում է մեր շրջանում։*

11) *Արշակի (Գառնիկի) առանձին ուշադրութիւնը հրաւիրել Օր. Զարուհու եւ Վ. Խարախանեանի փախցրնելու վրայ[29], խիստ զգուշացնելով, որ դա պէտք է մնայ գաղտնիք։ Մերժել առայժմ կուսակցութեան միջոցներով այն շրջանում զէնք գնելու առաջարկը։*

Ս. ՄԻՆԱՍԵԱՆ *ՑՈՆԱՆ*

Որոշումներ թիւ 45

1908 *Յունիսի* 23

Որոշուեց՝

1) *Որ Զարդարեանը մեկնի Ամերիկա իբրեւ գործիչ վեց ամսով։*
Գրել Արշակ Իսահակեանին՝ որ Բուլգարիա մեկնի՝ Ռազմիկի խմբագրութեան համար։
Եթէ Արշակը չընդունի, գրել Մարտիրոս Ցարութիւնեանին։
Գրել Կովկաս՝ Մուսայէլեանը փութացնելու Ամերիկա։

2) *Մարսէյլի ընկեր Վ. Ղազարեանի առաքումի երկու տարուայ հաշիւներու յատուկ արձանագրութիւնները քննելով, ծրարներով ղրկուած թերթերու հաշուին մէջ համեմատական տարբերութիւն գտնուեցաւ։ Ուստի որոշուեցաւ իրեն հաղորդելէ յետոյ լուսաբանութեան համար՝ կարգադրել առկախ հաշիւը, եւ ապագային երեք ամիսն անգամ մը քննել ու փակել այդ կարգի հաշիւները։*

3) *Ալիանաքի «Աշուղ» նկարը խմբագրութեան կողմէ մերժուելով հրատարակել, ուղարկել Ամերիկայի մեր մարմիններուն՝ վիճակահանութեան դնել եւ հասոյթը յատկացնել հեղինակին։*

4) *Խմբագրատունը հաւաքուած գրքոյկները ցրուել Տաճկաստանի գաւառները ինչպէս եւ Պարսկաստան։*

Ս. ՄԻՆԱՍԵԱՆ *ՑՈՆԱՆ*

Որոշումներ թիւ 46

1908 *Յունիսի* 26

Որոշուեց՝

1) *Կովկաս ուղարկել Ընդհ. Ժողովին ներկայացուած Երկրի տեղեկագրերը տպագրութեան համար՝ իրենց նամակի համեմատ։*

2) *Ընդհ. Ժողովի արձանագրութիւնները տպագրելու համար Արեւելեան Բիւրոյի համաձայնութիւնը ու հաւանութիւնը ստանալ։*

3) *Բոստոնի կոմիտէին դիտողութիւն անել Կենտ. Կոմիտէի միջոցով՝ իր հրատարակած շրջաբերականի մասին։*

4) *Մ. Ցարութիւնեանին խնդրել Ամերիկա գնալ երեք ամսով՝ պրոպագանդայի եւ կազմակերպական գործի համար։*

5) *Ընդհ. Ժողով գումարելու մասին բանակցութեան մէջ մտնել Արեւելեան Բիւրոյի հետ. մեր շրջանի մարմիններից պահանջել իրենց հարցերը։*

6) *Ամերիկա գտնուող ընկեր Տաճատը[72] ղրկել Սամսոն, իր մասին տեղեկութիւններ քաղելուց յետոյ։*

Ս. ՄԻՆԱՍԵԱՆ *ՑՈՆԱՆ*

72.- Սեդրակ Թոքաճեան՝ Իզմիրի նախկին ընկերներէն, որ Ամերիկա անցած էր։

Որոշումներ թիւ 47

1908 *Յուլիս* 6

Որոշուեց՝

1) *Գրել Բալկ. Կ. Կոմիտէին որ Զարդարեանը իսկոյն ճամբայ ելլէ, իսկ յօդուածներու համար կ՚աշխատենք մասամբ գոհացնել։ Շրջիկ ընկերոջ համար կարելիութեան սահմանին մէջ կ՚աշխատենք։*

Դիմել Մարին[10] *որ ժամանակաւորապէս Բուլգարիա գնայ՝ Ռազմիկի խմբագրութեան համար, կամ հակառակ պարագային, հեռուէն աշխատակցիլ։*

Գրել Արշակ Իսահակեանին, որ եթէ չգնայ Պուլկարիա, գոնէ ամսական 1-2 յօդուածով աշխատակցի Ռազմիկին։

Յայտնել՝ նկատի ունենալով որ Յ[ուցական] մ[արմնի] անդամներէն ընկ. Ակնունին Բուլգարիա պիտի ըլլայ, կարելի է օգտուիլ անոր ներկայութեամբ կազմակերպական գործերու համար։

2) *Գրել, ի պատասխան իր նամակի, Մ. Յարութիւնեանին, որ Ամերիկա զբաղուել կազմակերպական գործերով անընդունելի է։ Յայտնել նաեւ, որ պիտի սպասէ մինչեւ որ Ամերիկայի մարմնէն՝ Ամերիկա կարճ ժամանակ մնալու համար պատասխան ստացուի՝ ըստ այնմ շարժուի։*

3) *Տաճատ Թոքաճեան, Բոստոնէն, Իզմիրի նախկին ընկերներէն, տրամադրելի կ՚ընէր ինքզինք Դաշնակցութեան։ Որոշուած էր ղրկել Սամսոն իբրեւ գործիչ. սակայն ստացուած հակասական տեղեկութիւններուն պատճառով այդ հարցը առկախ ձգուեցաւ։*

Տեղեկութիւններ քաղել Կարապետ Գադրեանի մասին, Նիւ-Եորքի, որը կ՚առաջարկէ ընկեր Վահագ իբր յարմար Սամսոնի համար։

4) *Նկատի ունենալով Ընդհ. Ժող[ովի] մօտաւոր գումարումը, եւ Բալկ. Կենտր. Կոմիտէի եւ Յ[ուցական] Տ[եղական] մարմնի կողմէ եղած իրաւացի դիտողութիւնը, ինչպէս եւ դրամական ծախսերու մեծ քանակութիւնը, եւ Լեռնավայրի շրջանին վերաբերմամբ նոր նամակը, ուրկէ կ՚երեւայ որ այդ շրջանի ընկերական թիւրիմացութիւնները չեն վերջացած հակառակ նախկին տեղեկութիւններու, յարմար ժամանակի մը ձգել Արեւմտեան Բիւրոյի շրջանի ռայոնական ժողովը։*

5) *Հաղորդել պատկան մարմիններուն, որ Ընդհ. Ժողովին ուղարկուելիք պատգամաւորներուն իրաւասութիւն տան, եթէ հարկ դատուի, Ընդհ. Ժող[ովից] յետոյ, Արեւմտ. Բիւր[ոյի] շրջանի պատգամաւորները ռայոնական ժողով կազմեն, բացառապէս այդ շրջանի խնդիրներով զբաղուելու համար։*

6) *Յակոբ Փիլիպոսեանի առժամանակեայ ապրուստի համար, եւ նաեւ դէպի Վիշապ*[73] *ճանապարհածախսի համար ղրկել 200 ֆր. Հալէպ, ուր, ըստ նախկին որոշման եւ իր համաձայնութեան պէտք է հայթայթէ անձնական գործ, առանց ծանրանալու Դաշնակցութեան վրայ։*

7) *Հեռագրել արտաքին գործ. նախարարներուն եւ մամուլին Մուշի դէպքերու մասին — Յունիսի 7-ին կոտորած — ստացուած հեռագիրը։*

ՅՈՆԱՆ *Ս. ՄԻՆԱՍԵԱՆ*

73.- Կ. Պոլիս։

Որոշումներ թիւ 48

1908 *Յուլիս* 8

Որոշուեց՝

1) *Մարսէյլէն Ղազարեան՝ առաքումի հաշուական խնդրի մէջ, մեր դիտողութեան պատասխանելով յայտնած էր որ, վիճելի գումարը մօտ 300 ֆր. ընդունուի իր կողմէն իբրեւ նուէր Դաշնակցութեան։ Սակայն նկատի ունենալով անոր պատճառաբանութիւնը՝ որ կասկածանքի տեղի չտալու համակերպութիւն մը կը թուէր, եւ բացատրութիւնը աստիճանի մը իրաւացի, [այլեւ] չապացուցուած թիւրիմացութեան վրայ չհիմնուելու համար, մանաւանդ որ Բիւրոյի մէջ չկային այդ վիճելի կէտերուն համար — ստուգութեան [վերաբերեալ] — պահուած հաշիւները, նաեւ նկատի ունենալով Ղազարեանի վստահելիութիւնը, որոշուեցաւ գումարը ամբողջ վճարել իրեն եւ իր կամքին ձգել նուէր մը տալու որոշումը ու քանակը։*

2) *Գրել Պարիզ Զարիֆեանին եւ յանձնարարել մի քանի ապսպրանքները* (bobine *եւայլն*) *ուղարկելու համար Կովկաս։*

3) *Նկատել Ամերիկայի Կ. Կոմիտէին Յունիսի նամակը, որ կը յայտնէր, թէ «Հայրենիքի» տպարանի համար, բացի Ամերիկ. Պատգ.[ամաւորական] Ժողովի յատկացուցած 2000 դոլ. գումարէն — որը Կ. Կոմիտէն փոխ տուած է այդ առթիւ — 1000 դոլ. եւս յաւելուածական նոր ծախք մը կ՚ըլլայ, որոշեց դիտողութիւն ընել Ամեր. Կ. Կոմիտէին ցոյց տալով, որ իր ըրած ծախքերը կ՚անցնին Ընդհ. Ժողովի սահմանած ընդհանուր հասոյթէն վերցնելիք 20% քանակէն. նոյնպէս գրել եւ բացատրութիւն պահանջել՝ թէ տպարանը ի՞նչ պայմաններու մէջ գնուած, ի՞նչ հասոյթ կարող է բերել եւ որու անունով երաշխաւորուած է։*

ՅՈՆԱՆ *Ս. ՄԻՆԱՍԵԱՆ*

Որոշումներ թիւ 49

1908 *Յուլիս* 20

Որոշուեց՝

1) *Գրել Արեւմտեան Շրջանի մարմիններին, որ՝ ի նկատի ունենալով որ մեր գրականութիւնը թոյլ է տարածւում, ի նկատի ունենալով որ մենք կանոնաւոր հաշիւ չենք ստանում մեր ուղարկած գրքերի համար, որոշեցինք որ մեր տեղական ընկերներից մէկը լինի մեր հրատարակութեանց ագենտը՝ Կ. Կոմիտէի բարոյական պատասխանատուութեամբ, եւ նա այդ գործի համար ուղղակի կապ պահպանէ մեզ հետ եւ մեզ ուղարկէ իր հաշիւը։ Ի հարկին նոյնիսկ կարելի է որոշ տոկոս տալ ի վարձատրութիւն իր աշխատանքի։ Ամբողջ շրջանի համար մենք կ'ունենանք միայն մի պատասխանատու գործակատար, իսկ գաւառներում նա ազատ է իր ուզած մարդուն յանձնել։*

2) *Բալկ. Կ. Կոմիտէին առաջարկել, որ այն ընկերները որոնք կասկածուած են կառավար[ութեան] կողմից, խելացիութիւն կ'անեն եթէ առժամապէս հեռանան Բուլգարիայից։ Այսպիսով նրանք այլեւս չեն ենթարկուիլ աքսորման եւ բալկ. սահմանները բաց կը մնան նրանց համար եւ նրպաստաւոր վայրկեանին կարող են իսկոյն նորէն վերադառնալ։*

3) *Բաստի*[38] *Օժ. մարմնից ամիսներ ի վեր տեղեկութիւն չունենալով՝ դիմել Լեռնավ[այրի] Օժ. մարմնին եւ տեղեկութիւն խնդրել։ Նոյպէս գրել եւ իրեն՝ Բաստի Օժ. մարմնին։*

4) *Աղեքս. ենթակոմիտէին յիշեցնել, որ իրենց միջնորդութիւնը յարգելով՝ «Դրօշակի» խմբագրութիւնը տպագրեց նախկին ենթակոմիտէի հաշիւը եւ այժմ պարտաւոր են յայտնել մեզ թէ ի՞նչ եղաւ այն խոստումը, որ տուել էին նախկին ենթակոմ[իտէի] անդամները — հաշիւը — յանձնելու համար։*

5) *Ամերիկայի Կ. Կոմիտէին նորից յիշեցնել Մուսայէլեանի մասին։*

6) *Դիտել [տալ] Ալիանակին որ իր առաջարկութիւնը անընդունելի է եւ իր նամակի ստիպողական ոճը առնուազը տարօրինակ։*

7) *Արեւել. Բիւրոյի միջոցով յայտնել «Վտակի» խմբ[ագրութեան], որ մենք այլեւս* Frank[furter] Zeit[ung-ի] *չպիտի բաժանորդագրուենք։*

8) *Յայտնել Արեւ[ելեան] Բիւր[ոյին] որ օր. Զարուհին*[4] *այժմ գտնւում է Հալէպ կառավարութեան թոյլտուութեամբ։*

9) *Բիւրօ-խմբագրութեան Պարիզ փոխադրելու հարցը բաւականին լուրջ լինելով առ այժմ յետաձգուեց։*

10) *«Միշվէրէթի» խմբի*[54] *կողմից հրաւէր կար Դ[աշնակցութեան] որ ցոյցեր սարքենք Թուրքիայի մի քանի կարեւոր քաղաքներում՝ կառավարութեան դրութիւնը աւելի խախտելու համար։*
Որոշուեց յայտնել նրան որ մեր դրութիւնը Երկրում, Վասպուրականի մէջ կրած դժբախտութիւնը, շարժումներ անելը դժուարացնում են, իսկ միւս կէտերի վերաբերմամբ՝ ընկերների ձերբակալուելու պատճառով վերակազման մէջ ենք։ Ցամենայն դէպս, մենք կը յայտնենք մեր ընկերներին գործ դնել բոլոր ոյժերը արձագանգ տալու Թուրքերի շարժման՝ այս կամ այն ձեւով։

ՑՈՆԱՆ

Որոշումներ թիւ 50

1908 *Յուլիս* 23

Որոշուեց՝

1) *Գրել Միքայէլին*[64] *Լոնտոն՝ որ ջանայ նկատի [ունենալ] 3-4 անձերէ հայ մարմին մը կազմել, որոնք զբաղին Լոնտոնի մէջ քաղաքական պրոպագանդով, եւ կազմեն, Բալկանեան կոմիտէի նման, անգլիացիների մօտ զարկ տալու հայկական հարցին Անգլիոյ մէջ։*

2) *Հիմնուելով այստեղ եղած ատեն կատարուած բանակցութեանց վրայ, Գուրգէնի նամակին — Սամսոն — պատասխանել, առանց դիտողութեան եւ յայտնել որ նիւթական աջակցութիւն չեն կրնար ընել, առաջադրուած պայմաններով. բայց յեղափոխական-գրական աջակցութիւնը եւ քաջալերութիւնը կը շարունակուեն ինչպէս առաջ։*

ՑՈՆԱՆ



Արձանագրութիւն

12 Օգոստոս

1) *Պոլսոյ [Պատասխանատու] մարմնին գրել՝ որ շուտով կանչեն Պետրան, Վռամ[եան]ը եւայլն, եւ աշխատեն՝ Սելանիկի կոնգրէսին մէջ մէկը ղրկել։*

2) *Ամէն պարագայի մէջ՝ եթէ ոչ մասնաւոր թերթ մը, գոնէ տեղական կարեւոր թերթ մը ձեռք ձգեն եւ մեր ուղղութեան օրկանը ընել առ այժմ։*

3) *Պոլսոյ վստահելի եւ կարեւոր անձնաւորութիւններու հետ կապեր հաստատել եւ օգտուիլ անոնց հետ խորհրդակցութիւններէն։*

4) *Մենք համամիտ չենք աւելորդ ծախքեր ընել* Humanité*-ին հեռագրելով, քանի որ ամէն ինչ մանրամասնօրէն բոլոր թերթերուն մէջ կը տեղեկագրուի։ Նոյնիսկ Կովկաս աւելորդ են։*

5) *Ապակեդրոնացման սիստեմի մասին խորհրդակցիլ եւ ծրագիր մը կազմել։*

6) *Գրել Ցոմնանին որ՝ Պոլսոյ մարմնի կնիքներու մասին եզրակացութեան մը գայ։*

7) *Որոշուեցաւ գրել Ցոնանին՝ Պուլկարիա Տիգրիսի ղրկելիք* 600 *ֆրանքի մասին։*

8) *Բանտարկեալներու*[74]

74.- Ինչպէս յայտնած ենք, այս վերջին արձանագրութիւնը անաւարտ է եւ «Որոշումներ»ու թուակարգումէն դուրս։ Կազմուած է Օսմ. սահմանադրութեան հռչակումէն ետք։

Փաստ. 330-30

Պատճէն

Գ.– ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
[ՊԱՔՈՒ ԳՈՒՄԱՐՈՒԱԾ ԽԱՌՆ ԺՈՂՈՎԻ]

Այս եւ յաջորդ գրութիւնը կազմուած են Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս ետք, երբ պատրաստութիւններ կը տեսնուէին արտասահմանէն եւ Կովկասէն շարք մը ընկերներու գործուղումով՝ կազմել Պոլսոյ Պատասխանատու մարմինը։

Ներկայ թիւ 4ը կը կրէ «Արձանագրութիւն» խորագիրը. մակագրուած է «պատճէն». ձեռագիրը կը պատկանի Միք. Տէր Մարտիրոսեանի (Մար) գրչին. հաւանաբար Ժընեւի մէջ արտագրուած է գաղտնի թանաքով գրուած նամակէ մը։

Ոսկանապատի[1] *կենտ. Կոմիտէի հրաւէրով ամսոյս երեքին, Կիրակի երեկոյեան, կայացան շրջանի բոլոր մարմիններից եւ հրաւիրած մի քանի գործօն ու կարեւոր ընկերներից խառն ժողով, որի խորհրդակցութեան նիւթը դարձաւ Տաճկահայաստանի ներկայ սահմանադրութիւնը եւ այդ առթիւ ներկայ մոմենտի պահանջը եւ Դաշնակցութեան տակտիկան։ Երկար թեր եւ դէմ վիճաբանութիւնից յետոյ, ժողովը յանգեց հետեւեալ եզրակացութեան, որը միաժամանակ որոշեց արձանագրել եւ ուղարկել Բիւրոներին։*

1) Նախ բոլոր ճիգերով աշխատել որ ընդհանուր օպպոզիցիան[2] *չքայքայուէ եւ համախմբուած ուժերով աշխատել իրական հողի վրայ պահել սահմանադրութիւնը։ 2) Ի նկատի առնելով որ ներկայ շարժումը ղեկավարւում է երիտասարդ Թուրքիայի այն կուսակցութեան ձեռքով, որը շատ դէպքերում տրամադիր է թեքուել դէպի աջ, դրա եւ մեր ներքին կազմակերպական ներքին խնդիրների համար պահել Պոլսում մի մնայուն մարմին, որի գլխաւոր հոգսերից մէկը պիտի լինի ազդել երիտասարդ Թուրքերի վրայ եւ թոյլ չտալ որ նրանք թեքուեն եւ ընկնեն ռէակցիայի գիրկը։ 3) Ջանք է անտես առնել ներկայ ամենայարմար մոմենտը օգտուել առիթից եւ նման մարմիններ կազմակերպելով երկրի ներսում — գաւառներում —. ամենաուժգին թափով կազմակերպական ներքին գործերը կատարել, այսինքն կազմակերպել խմբեր, զէնքերի եւ մարդկանց տեղափոխութիւններ կատարել եւ առհասարակ շահագործել ներկայ բարեյաջող անարխիան եւ պատրաստուել ռէակցիայի սեւ օրերի համար։ 4) Մեր ընկերները պէտք է լինին շատ աչալուրջ եւ զգոյշ, յեղափոխականին յատուկ գաղտնապահութիւնը իւր առաջնակարգ տեղը պիտի ունենայ մեր մէջ եւ այժմ առանց խաբուելու սահմանադրութեան գուցէ եւ խաբուսիկ օրօրներով երրեք ջրի երեսին դուրս չգալ, որպէսզի հակառակ պարագային ամէն բան չկորչի։ 5) Նկատի ունենալով ինտելիգէնտ եւ ղեկավար ընկերների ամենամեծ պահանջն այժմ Տաճկաստանում, պարտականութիւն դնել Ոսկանապատի Կենտ. Կոմիտէի վրայ, որ ընտրութիւններ անէ իր շրջանի ընկերների շարքերից եւ պէտքական համարուածներից պահանջէ անմիջապէս երկիր անցնել։ Շեշտուեց պահանջը առաջնորդուելով այն ճշմարիտ գիտակցութեամբ, որ իւրաքանչիւր իրեն յեղափոխական դաշնակցական համարող անհատ իրաւունք չունի մերժելու ընկերների կողմից իր վրայ դրուած որեւէ պարտականութիւն կատարելը, եթէ ընկերները, ի նկատի ունենալով նրա բոլոր հանգամանքները, [գտնեն] որ նա պարտական է այս կամ այն գործը կատարելու։*

4/VIII 1908, *Ոսկանապատ*

1.- Պաքուի։
2.- Ընդդիմութիւնը. այս պարագայիս՝ համիտեան վարչակարգի ընդդիմադիրները։

Փաստ. 53-146

Դ.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ՝ ՅՈՆԱՆԻՆ ԵՒ ԳԱԼՖԱՅԻՆ

1908 *Օգոստոս 12, Ժընեւ*

Ընկերներ Յոնան եւ Գալֆա,

Ստացանք ընկեր Զարդարեանի նամակը ներփակ Խաչատուրի[3] *եւ Գ. Զօհրապի նամակներով միասին եւ այստեղ նրանց մէջ եղած առաջարկների մասին խորհրդակցելով ներկայ ընկերների հետ միասին՝ կայացրինք հետեւեալ որոշումները, որոնք առաջարկում ենք Ձեր խորհրդածութեան։*

1) Նկատի ունենալով ամէն կողմ գտնուող մեր ընկերների առաջարկը՝ որով պնդում են թէ մենք պիտի ունենանք որոշ ծրագիր գործունէութեան սահմանադրական Թուրքիայում, առանց որի յիրաւի քաղաքական դրութիւն կը ստեղծուի երկիր գնացող եւ մանաւանդ Լիսի[4] *շրջանում գործող մեր ընկերների գործունէութեան մէջ, յարմարագոյնն է իսկոյն որքան կարելի է շուտ մի խորհուրդ կազմել Ֆիլիպէում եղած եւ մօտ օրերս հասնող ընկերներից. գործը շտապողական լինելով, ձեւականութիւնների յետեւից չպիտի ընկնել, այլ եղած կարեւոր ոյժերից. դրանք են Յոնանը, Գալֆան, Զարդարեանը, Վռամեանն ու Նիթրան*[5]*, որոնք մօտերքս այդտեղ կը գտնուին, Խաչատուրը, որը մի օրում այդտեղ կը լինի (ի դէպ Խաչատուրը լաւ կ'անի այդտեղ գալուց յետոյ փոխէ իր անցագիրը եւ իր իսկականով մտնէ, որով միայն կարելի կը լինի մտնել ակտիւ գործի մէջ), Աւետիքը*[6]*, որ ուզած ժամանակ այդտեղ կը լինի, մանաւանդ որ նա ամէն պարագայում մտածում է գնալ Լիս. Միքայէլը*[7] *նոյնպէս կարող է գալ։ Յատկապէս չեշտում ենք, նաեւ Ռոստոմի ներկայութեան վրայ, որ թէ Խորհրդին պէտք է եւ թէ մանաւանդ ծրագիր կազմելուն։ Կրկնում ենք այդ Խորհուրդը պաշտօնական բնոյթ չպիտի ունենայ, որ երկար ժամանակ կը խլի մեզանից, այլ ընկերական։ Ցիշեալ Խորհուրդը անհրաժեշտ է դառնում մանաւանդ Սալոնիքում տեղի ունեցող Ընդհանուր Կոնգրէին մեր մասնակցութիւնը յաջողեցնելու համար. թերթերում կան տեղեկութիւններ, որով պարզւում է թէ այդ կոնգրէին մասնակցելու են բոլոր ազգերից, բայց հայ անունը չկայ։ Ամէն պարագային մենք պիտի ձգտենք գործող ժէօն թուրքերի հետ միասին գործել, որպէսզի կարելի լինի նրանց յետադէմ քայլերը յետ ընկրկել ի հարկի նրանց համոզելով. իսկ դրա համար հարկաւոր է որ նրանց հետ բարեկամական յարաբերութեան մէջ մնանք։ Դիրք բռնել անկարելի է, քանի որ այսօր նրանք են երկրի տէրը եւ հաւանական է, որ նրանք էլ մնան մինչեւ սահմանադրութիւնը ամուր հողի վրայ կանգնի։*

2) Ամէն պարագային, եթէ ոչ մասնաւոր թերթ, գոնէ տեղական կարեւոր մի թերթ պիտի ձեռք ձգել եւ մեր ուղղութեան օրգանը դարձնել։

3) Պոլսոյ վստահելի եւ կարեւոր անձնաւորութիւններու հետ կապեր հաստատել եւ օգտուիլ նրանց խորհուրդներից։

4) Խաչատուրին համոզել, որ բոլորովին աւելորդ են Humanité-*ին*[8] *մասնաւոր հեռագիրներով տեղեկութիւններ տալ Թուրքիոյ անցուդարձի մասին, քանի որ ամէն մի չնչին դէպք աւելի մանրամասն հեռագրւում է գործակալութիւնների կողմից։ Պէտք է հեռագրել եւ կովկասեան թերթերին։ Ուրիշ խնդիր է, երբ հարցը վերաբերում է մեր գործերին։*

5) Խաչատուրի պատուիրած բլանկների մասին մի եզրակացութեան եկէք եւ մեզ գրեցէք. կնիքի մասին նոյնպէս. Խաչատուրը շտապով ուզել է։

6) Տիգրիսին խոստացուած 600 ֆրանքը ուզել են Եդեսիայից, արդեօք ուղարկենք։

7) Զարդարեանը 10.000 ֆրանք է ուզել. ստուգեցէք, եւ եթէ պէտք է, շուտ մեզ գրեցէք, որ կարգադրենք։ Բանտարկեալների առթիւ ուզած գումարը չլինի. այդ խնդիրը պարզեցէք Խաչատուրին։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

3.- Խաչատուր Մալումեան՝ է. Ակնունի։
4.- Պոլսոյ։
5.- Նիթրա՝ ծածկանունն է Յար. Շահրիկեանի։
6.- Աւետիքը հաւանաբար Ա. Իսահակեանն է։
7.- Միքայէլը կրնայ Վարանդեանը ըլլալ, կամ Տէր Մարտիրոսեանը (Մար). Նամակը այս վերջինի գրչին կը պատկանի։
8.- Ընկերվարական պաշտօնաթերթ, Փարիզ հրատարակուող։

Մատեան 92, էջ 117-123

Ե.– Ե.ԲԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ՝

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԻՂՁԵՐԻՑ

1909, Օգոստոս 12

I

ՑԵՂ. ՏԱԿՏԻԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Նկատելով՝

1) Որ մեծ յեղափոխութիւնից ի վեր ռուս ու կովկասեան յեղ. կազմակերպութիւնների ոյժը զգալապէս թուլացել է եւ յեղ. շարժման թափն էլ իջել,

2) Որ կառավարութեան դիրքերն ուժեղացել են ու ամրապնդուել,

3) Որ հայ ժողովուրդը մեն-մենակ կղզիացած իր համեստ ու հալածական ոյժերով անկարող է տանել որեւէ ակտիւ յեղ. շարժում,

4) Որ միւս կողմից Թուրքիայի երերուն ու վտանգաւոր կացութիւնը ստիպում է մեզ լինել ծայրայեղօրէն զգուշաւոր ու շրջահայեաց,

Մենք չպիտի դիմենք որեւէ զինա-մարտական ձեռնարկների եւ առհասարակ ակտիւ, յարձակողական գործունէութեան ռուս կառավարութեան դէմ,— սպասելով յեղ. շարժման նոր ու համարձակ բռնկումների։

Արգիլել ահաբեկչական գործունէութիւնը կառավ. պաշտօնեաների դէմ. վերաձեւել տեռորը միայն force majeure-*ի*[9] *պարագաներում, այսինքն երբ կը վերսկսուին ատտենտաները*[10] *ազգային դպրոցների ու այլ հասարակական հաստատութիւնների դէմ կամ երբ տեղի կ'ունենան նոր պոգրոմներ*[11]*, կը գործադրուին մահապատիժներ բանտարկեալների վերաբերմամբ։*

Նորմալ ժամանակներում թոյլատրել միայն տեռորը (լրտեսների, մատնիչների ու դաւաճանների դէմ)։

*
* *

<u>Կազմակերպական</u>

<u>Արեւելեան Բիւրօ</u>

Ի նկատի ունենալով շարունակական բողոքներ Արեւելեան Բիւրոյի կեդրոնական ձգտումների դէմ, այլեւ այն հանգամանքը որ ինչպէս վկայում են վերջին դէպքերը — կազմակերպական խիստ հալածանքի միջոցին, բիւրոյական ֆունկցիաները de facto[12] *անդամալուծւում են։*

Ընտրել Արեւելեան Բիւրոյի գէթ երկու անդամները գաւառների ձեռնհաս ոյժերից, որոնք ստանձնելով իրենց պաշտօնին յատուկ պատասխանատուութիւնը, կը ստանձնեն դրան հետ միասին յատուկ իրաւունքներն ու պարտականութիւնները, որոնց շնորհիւ գարկ կը տան ընդհանուր գործի ղեկավարութեան՝ նոյնիսկ «կենտրոնի» անդամալուծման, հալածանքի ու լքման դէպքում։

<u>Արեւմտեան Բիւրօ</u>

Ըստ կարելոյն կրճատել Արեւմտեան Բիւրոյի կազմը եւ ֆունկցիաները, կամ փոխադրել այն Պոլիս։

Դրօշակը յամենայն դէպս պահել Եւրոպայում։

<u>Այլ մարմիններ</u>

Վերացնել «Պատասխանատու մարմինները» եւ երկրի մէջ հաստատել մի ձեռնհաս գործադիր մարմին, որ աւելի մօտիկ լինելով գաւառների հայ ազգաբնակութեան հետ կը կարողանայ աւելի դիւրութեամբ ու լիութեամբ գոհացում տալ նրա բազմագան կարիքներին։ Այս կեդրոնական մարմինը կոչուած կը լինի փոքր ինչ մեղմելու ապակեդրոնացման այն քաոսը, որ տիրում է գաւառներում։

Երկրի կազմակերպութիւններն ու գործունէութիւնը ծրագրել, հրահանգուելով կովկասեան փորձերից եւ պահպանել ամենախիստ կոնսպիրացիա[13] *եւայլն։*

<u>Ջիֆոնը երկրում</u>

Յոնանը կը բացատրէ[14]*։*

<u>Հրատարակչական</u>

Լիսում հիմնել տպարան եւ հրատարակչական յուրջ ու տեւական գործ։ Տպագրել ըստ կարելւոյն շատ տեսական գրուածքներ՝ թէ Երկիր եւ թէ Կովկաս փոխադրելու համար։

Ֆրանսերէն կամ տաճկերէն օրգանի հարցը։

9.- Ֆրանսերէն՝ գերազանց, անդիմադրելի, հարկեցուցիչ ուժի։
10.- Բառացի՝ մահափորձ։ Յոս՝ ոտնձգութիւններ, խափանումներ իմաստով։
11.- Ջարդեր։
12.- Լատիներէն՝ իրողապէս։
13.- Հակակառավարչական գաղտնի, ընդյատակեայ գործունէութիւն, դաւադրական։
14.- Յոնան Դաւթեան, որ իբրեւ ներկայացուցիչ Արեւմ. Բիւրոյի շուտով պիտի մեկնէր Վառնա՝ Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդհ. ժողովին։ Ջիֆոնը զինական ֆոնտն է հաստատուած զինումի նըպատակով։

II

ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ ՄԵՐ ՏԱԿՏԻԿԸ

Ազգային պաշտպանութիւնը պէտք է լինի ղեկավար նաեւ մեր սոցիալիստական տակտիկի մէջ։

Պարլամենտում մեր պատգամաւորները կ՝արծարծեն մեր սոցիալական նուազագոյն ծրագրի ամենագործնական կէտերը, միաժամանակ չեշտելով հանդերձ պատեհ առիթներով մեր ընդհանուր սոցիալ-փիլիսոփայական սկզբունքները, ինչպէս որ եղաւ մասամբ ընկերակցութիւնների մասին եղած վիճաբանութիւնների ժամանակ[15]։

Պարլամենտից դուրս աշխատել համերաշխութեան կապեր հաստատել ուրիշ ազգային սոցիալիստական տարրերի հետ (բուլգար, թուրք, հրեայ, եւայլն), որոնց գործունէութեան վայրերն են կամ հաւանօրէն կը լինեն շուտով — Պոլիս եւ այլ վաճառաշահ կետրոնները։ Խրախուսել Մակեդոնիայում սկսուած գործաւորական շարժումը, որ — ինչպէս հաղորդում են Բրիւսէլի սոց. բիւրոյից — խոստանում է հետզհետէ տարածուել ամբողջ Թուրքիայում։ Այդ նպատակով ոյժ տալ, սոցիալիստական բրոշիւրային գրականութեանը՝ թէ հայերէն եւ թէ մանաւանդ թուրքերէն լեզուներով։

Երկրի մէջ՝ յանձնարարել ձեռնհաս ընկերներին՝ ձեռնարկել լուրջ ուսումնասիրութիւնների, հողային սեփականութեան, արհեստների վիճակի (այլեւայլ ազգութիւնների մէջ) մասին եւայլն պարապմունքի ի՛նչ ճիւղերն են շեշտւում եւ հարեւան ցեղերի (քիւրդ, թուրք, եւայլն) մէջ։ Գրագիտութիւնը ո՞ր չափով է տարածուած հայ ու այլացեղ շրջաններում։

Վաշխառութիւնը եւ մանր հարստահարութեան ուրիշ ձեւերը որքան են տարածուած, հայի, թուրքի, քիւրդի մէջ եւայլն։ Հայ տարրը որ աստիճան ճնշող է հանդիսանում այդ ցեղերի հանդէպ — զուտ տնտեսական աշխարհում եւայլն եւայլն։

Անվերջ են խնդիրների սերիաները, եւ ժամանակ է սկսել ուսումնասիրութիւնները՝ ճշմարիտ գաղափար կազմելու համար երկրի վիճակի մասին։ Այլապէս պիտի գործենք խաւարի մէջ։

Կատարուած ուսումնասիրութիւնները տպագրել պէտք է «Դրօշակում»։

Ամսթով պէտք է մատնանշել որ 20 տարուց ի վեր չենք կարողացել տալ մի հատիկ լուրջ ուսումնասիրութիւն Թուրքիոյ եւ նոյնիսկ հայկական նահանգների տնտեսական եւ իրաւական կացութեան մասին։ Հարկատուութեան սիստեմներն անգամ նկարագրուած են միայն կցկտուր, թռուցիկ ու մակերեսային ձեւով։

Ինչ վերաբերւում է բուն գործելակերպին՝ Երկրի մէջ, խոյս տալ այն բոլոր ձեռնարկներից, որոնք ազգերին մօտեցնելու տեղ կարող են նոր գրգռումներ ու գժտութիւններ յարուցանել հարեւանների մէջ։

Պէտք է շարունակ մեր մտաւորականների մէջ մղել մեր սկզբունքների պրոպագանդը, սոցիալիզմի, հաւասարութեան, միջազգային եղբայրութեան գաղափարները։ Դրա հետ միասին պէտք է կռիւ մղել վաշխառութեան եւ բոլոր ցեց, պարազիտ դասակարգերի դէմ. բայց միեւնոյն ժամանակ պէտք է միշտ ի նկատի ունենալ մեր երկրի նահապետական պայմանները եւ չկիրարկել դասակարգային կռուի եւրոպական մեթոտները այնպիսի խստութեամբ, որով կարող ենք շուտով պաղեցնել ժողովուրդը՝ նոյնիսկ մեր գաղափարների ու գործի նկատմամբ։ Այդպէս եղաւ Բուլգարիայում, մասամբ Կովկասում։

Գործադուլներ ու արհեստակցական միութիւնների (քաղաքներում ու գիւղերում) կազմակերպումը որոշ վայրերում ու պարագաներում կարող են տեղիք տալ ազգամիջեան թիւրիմացութիւնների։

Մասնաւորապէս այդ պրոպագանդը սաստիկ դրժւարանում է հարստահարուած գիւղացիութեան մէջ, քանի որ խոշոր հողատիրութիւնը օտարի ձեռքումն է — մահմեդականի...։ Դասակարգային կռիւը կարող է այդ դէպքում յարուցանել ազգային կռիւ... Այդ առթիւ յիշելու է դարձեալ Կովկասի դէպքերը։

Առհասարակ մինչեւ որ մեր դրացի մահմեդականութիւնը չարտադրի շատ թէ քիչ գիտակից թէկուզ եւ փոքրաթիւ մտաւորականութիւն — հայ երիտասարդութեան գաղափարական թռիչքները մնալու են միշտ որոշ չափով կաչկանդուած։

Ի նկատի ունենալով միւս կողմից, որ մեր սեփական միջավայրն իսկ նահապետական է, ծայրայեղօրէն աղքատ, որ ազգային արդիւնաբերութեան, վաճառականութեան, արհեստների աղբիւրները ցամքած են, պէտք է բոլոր ոյժերը միանան՝ տնտեսութիւնը փոքր ինչ բարձրացնելու եւ հետեւապէս պէտք է զգուշանալ այնպիսի ձեռնարկներից, որոնք կարող են կաչկանդել ազգային արդիւնաբերութեան զարգացումը։

Հայերի գրաւուած հողերը ետ ստանալու համար միակ միջոցն է օրինական պարլամենտական ճանապարհով ուժգին ու յարատեւ աշխատանք, դրա հետ միասին պաշտպանելով մահմեդական հողազուրկ դասի իրաւունքները։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

15.- Սկնարկութիւն Օսմ. խորհրդարանի ընկերութիւններու մասին ընդունուած օրէնքին, որմով կ՝արգիլուէր ազգային հիմունքով միութիւններ եւ կուսակցութիւններ կազմել։

ԳԼՈՒԽ II

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Դաշնակցութեան Խորհուրդը» ստեղծուած էր 1904 թ. Հ.Յ.Դ. Երրորդ Ընդհանուր Ժողովին կողմէ, փոխարինելու համար նախորդ շրջանին գործող «Դաշնակցութեան Կամքը ներկայացնող մարմինը»։ Անոր իրաւասութիւնները, որոնց մէկ հակիրճ թուումը կատարուած է այս գլուխին տակ տրուած Արեւմտեան Բիւրոյի շրջաբերականին մէջ (փաստ. 42-79), շատ ընդարձակ էին։

Ընդհ. Ժողովներու միջեւ ինկող ժամանակաշրջանին, Խորհուրդը պէտք է գումարուէր տարին մէկ անգամ եւ, ստեղծուած քաղաքական ու կազմակերպական նոր իրավիճակներու լոյսին տակ, կայացնէր կարեւորագոյն որոշումները, պարտադիր կուսակցական բոլոր մարմիններուն, ներառեալ Բիւրոներուն։ Խորհուրդն էր իրաւասու կուսակցութեան անունով վարելու արտաքին բոլոր յարաբերութիւնները, հսկելու Ընդհ. Ժողովներու որոշումներու գործադրութեան, գործիչներու եւ մարտական ուժերու տեղափոխութեան, «չնախատեսուած բացառիկ պարագաներու տակ»՝ յետաձգելու կամ փոփոխութեան ենթարկելու Ընդհ. Ժողովի որոշումները, իր պատասխանատուութեան տակ՝ նոր ձեռնարկ սկսելու եւայլն։

Ձեւով մը կուսակցական գերագոյն մարմին՝ Ընդհ. Ժողովի փակումէն մինչեւ նորին գումարումը (ամբողջական լիազօրութեանց մասին՝ տեսնել «Նիւթեր», Բ. հատոր, էջ 124)։ 1904-1907 տարիներուն, Խորհուրդի կազմը ընդհանրապէս կը բաղկանար՝ Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներու, Պատասխանատու չորս կեդր. կոմիտէութեանց (1- Դուրան-Բարձրաւանդակ=Տարօն-Սասուն, 2- Վասպուրական, 3- Վիշապ=Պոլիս=Յուցական մարմին եւ 4- Լեռնավայր=Կիլիկիա), ինչպէս նաեւ Կովկասի Ինքնապաշտպանութեան մարմնի մէկական ներկայացուցիչներէն։ Օրինական համարուելու համար անհրաժեշտ էր Երկրի Պատ. Կեդր. Կոմիտէներուն երկու երրորդին մասնակցութիւնը։

Չորրորդ Ընդհ. Ժողովը որոշ փոփոխութիւններ մտցուց Խորհուրդի կազմին մէջ։ Պատասխանատու մարմիններ ճանչցուեցան Վիշապ-Պոլիսը, աւելի ճիշդ Յուցական-Տեռորական մարմինը (Տեմէն) եւ Երկրին համար մէկ մարմին՝ Վասպուրական-Տարօն-Սասունի միացումով։ Կովկասի մէջ եւս ինքնապաշտպանութեան մարմնի վերացումով՝ իրաւունք տրուեցաւ Կովկասի Ռայոնական ժողովին երկու անդամ ընտրել Խորհուրդին համար, իսկ Արեւմտեան շրջանը պիտի ընտրէր միայն մէկ ներկայացուցիչ։ Նոյն Չորրորդ Ընդհ. Ժողովը Խորհուրդը պիտի օժտէր նաեւ դատական իրաւասութիւններով, զայն վերածելով վերին ատեանի։

Խորհուրդի առաջին ժողովը փոխանակ 1904 թ. Դեկտեմբերին՝ ինչպէս նախատեսուած էր, գումարուեցաւ յաջորդ տարուան Մարտ ամսուն սկիզբը. ուներ ծանրաբեռնուած օրակարգ (փաստ. 1567ա-20), որուն կեդրոնական տեղ գրաւող խնդիրը «Կովկասեան նախագծի» մշակումն էր։ Անակնկալօրէն ծագեցաւ նոր եւ տագնապալի հարց մը։ Պաքուի մէջ Փետրուար 6ին թուրք զինեալ խուժանին կողմէ հայկական թաղին վրայ կատարուած յարձակումն էր՝ բնակարաններու հրկիզումով եւ հայերու կոտորածով։ Թէեւ Նիկոլ Դումանի ղեկավարած խմբակին հակահարուածը չշմեցուցած էր թուրքերը, այսուհանդերձ անխուսափելի կը թուէր հայ-թաթարական ընդհարումներու տարածումը ամբողջ Կովկասի մէջ։ Խորհուրդի անդամները դեռ մեծամասնութիւն չէին գոյացուցած։ Ժողովատեղի՝ Ժընեւ կը գտնուէին Արեւմտ. Բիւրոյի կողմէ Ռոստոմ, Արեւելեան Բիւրոյէն Համօ Օհանջանեան (Մհեր), որ հետը Եւրոպա բերած էր Սասնոյ ապստամբութեան հերոսը՝ Անդրանիկը իբրեւ Դուրան-Բարձրաւանդակի ներկայացուցիչ. ներկայ էին նոյնպէս Կովկասի Ինքնապաշտպանութեան մարմնի անդամ Մարգար Ժամհարեանը (Մռաւ) եւ Կիլիկիոյ ներկայացուցիչ Յարութիւն Գալֆայեանը։ Առանց սպասելու մնացեալ անդամներու ժամանումին, Խորհուրդը արտակարգ նիստ գումարելով անմիջական ու անհրաժեշտ որոշումներ կայացուց եւ փոխանցեց Կովկաս՝ ինքնապաշտպանութեան գործը կազմակերպելու համար (Տես «ՆԻՒԹԵՐ», Ե. հատոր, էջ 380-381)։

Մարտի առաջին օրերուն սկսան Խորհուրդի կանոնաւոր աշխատանքները, որոնք ընդմիջումներով շարունակուեցան մինչեւ Մայիս։ Ընդմիջումներուն գլխաւոր պատճառը եղերական վախճանն էր (4/17 Մարտ) Քրիստափոր Միքայէլեանի եւ իր ընկերոջ՝ Վռամշապուհ Քենտիրեանի, որոնք մահացան Սոֆիայի մօտ Վիտոշ լեռան լանջերուն սուլթան Ապտիւլ Համիտի ահաբեկման սահմանուած ռումբերու փորձարկման միջոցին։ Այլ պատճառ մը ընդմիջումի այն՝ որ Արեւմտեան Բիւրոն նախապէս արդէն շրջաբերականով դիմած էր Կեդր. Կոմիտէներուն եւ անոնց կարծիքը ուզած օրակարգի գլխաւոր հարցերուն մասին (փաստ. 43-79 եւ 80), իսկ աշխատանքներու ընթացքին Խորհուրդը դիմեց շարք մը փոր-

ձառու ընկերներու, որպէսզի իրենց տեսակէտները փոխանցեն թէ՛ Կովկասի եւ թէ Երկրի մէջ կուսակցութեան ապագայ գործունէութեան մասին (փաստ. 1567ա-4)։ Թղթածրարին մէջ կը գտնուին յաջորդաբար պատասխանները՝ Լիպարիտ Նազարեանցի (Լեռնեան), Պերլինի դաշնակցական ընկերներուն, Յոհան Դաւթեանի, Սարգիս Մինասեանի (Արամ-Աշոտ), Արշակ Վռամեանի (Վահաբ) եւ Մոնպելիէի դաշնակցական ուսանողներուն։ Խորհուրդի նիստերուն երկրորդ շրջանը բացուեցաւ 1905 թ. Ապրիլ 9ին, այս անգամ աւելի ամբողջական կազմով։ Միջոցին, ի լուր հայ-թաթարական կռիւներու բորբոքումին, նախկին մասնակիցներէն Մ. Ժամհարեան (Մռաւ) պիտի փութար վերադառնալ Կովկաս, ուր նոյն տարուան Սեպտեմբերին իր հայրենի Շուշի քաղաքի ինքնապաշտպանութեան մարտերու ընթացքին հերոսական մահով պիտի իյնար 28ամեայ նուիրեալ այդ երիտասարդը։

Ապրիլի նստաշրջանին աւելցած են՝ Յուցական մարմնի անդամներէն Մարտիրոս Մարգարեանը (Սաֆօ), Արեւմտ. Բիւրոյի անդամ եւ Եւրոպայի մէջ Հայ Դատի աշխատանքներու պատասխանատու Յովհ. Լորիս-Մելիքեան (Թայինեան), Միք. Վարանդեան, Սարգիս (Օտապաշեան Պօղոս – Վանայ Սարգիս), Աւետիս Ահարոնեան (Ղարիբ) եւ Է. Ակնունի։

Յայտնենք որ «ՆԻՒԹԵՐ»ու Բ. հատորին մէջ հրատարակուած են արդէն Խորհուրդի 1905 թ. նստաշրջանէն բխած շարք մը փաստաթուղթեր, յատկապէս Խորհուրդի մշակած «Նախագիծ կովկասեան գործունէութեան»ը, ապա նաեւ Ս. Վրացեանի կողմէ կատարուած ընդարձակ քաղուածքները Խորհուրդի որոշումներէն եւ ժողովական արձանագրութեանց սեւագրութիւններէն (էջ 226-236)։ Այսուհանդերձ, այս գլուխի Ա. բաժնին տակ հրատարակութեան կու տանք Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ պահուած Խորհուրդի պաշտօնական արձանագրութեան բնագիրը, գրի առնուած Միք. Վարանդեանի ձեռագրով (փաստ. 1567ա-15)։

Բացի Հայաստանի երկու հատուածներու ինքնապաշտպանութեան համար մշակուած ծրագրէն, Խորհուրդի 1905 թ. նստաշրջանի կարեւորագոյն որոշումներէն ընդգծելի է որդեգրումը այն սկզբունքներուն, որոնցմով՝ 1) Դաշնակցութիւնը Կովկասի մէջ ինքնապաշտպանութեան շրջանէն պիտի անցնէր բո՛ւն յեղափոխական գործունէութեան. 2) Ընկերվարութիւնը պաշտօնապէս կը դառնար կուսակցութեան գաղափարախօսութիւնը, անոր ծրագրային մշակումն ու վերջնական վաւերացումը ձգելով առաջիկայ Ընդհ. Ժողովին։

* * *

Յաջորդող երկու տարիներուն (1906-7) Խորհուրդը լիակատար նիստեր չէ ունեցած բացի Չորրորդ Ընդհանուր Ժողովի նախօրեակին ունեցած հանդիպումներէն։ Պատճառը որոշ էր. Կովկասի դէպքերուն առթիւ ղեկավարութեան մեծագոյն մասը, մարտիկ թէ պատասխանատու գործիչ ընկերներ, մեկնած էր ճակատ մասնակցելու համար հայութեան ինքնապաշտպանութեան գործին կամ ղեկավարելու զայն։ Փաստօրէն Արեւմտեան Բիւրոյէն Ժընեւ մնացած էր միայն Ակնունին։ Ապա, 1907 թ. Փետրուարէն մինչեւ Մայիս երկարող Չորրորդ Ընդհ. Ժողովի զբաղումները եւ տարեվերջին Թուրքիոյ ընդդիմադիր տարրերու կոնգրէն յաւելեալ պատճառներ պիտի ըլլային Խորհուրդի յետաձգման։ Այս վերջինը կայացաւ Թիֆլիսի մէջ 1908 թ. Մարտ 12-25։

Փաստ. 1567բ-3ը, որ 26 էջնոց տպագիր գրքոյկ մըն է, կը թուէ մասնակիցները,– Արեւելեան Բիւրո՝ Սիմոն Զաւարեան (Անտոն), Արեւմտեան Բիւրո՝ Միք. Տէր Մարտիրոսեան (Մար), Կովկասի Ռայոնական ժողովի կողմէ՝ Ռոստոմ եւ Համօ Օհանջանեան (Մեր, Մերեան), Վասպուրականէն՝ Տիգրան, Յուցական-Տեղական մարմնէն՝ Ակնունի։ Ասոնցմով չի սահմանափակուիր սակայն ժողովական մասնակցութիւնը։ Խորհուրդի որոշումով խորհրդակցութեան կը հրաւիրուին Արեւելեան Բիւրոյի բոլոր անդամները, մօտակայ Կ. Կոմիտէներու ներկայացուցիչները եւ գործիչ ընկերներ։ Վերջիններէն կը յիշուին Նիկոլ Դումանը, Աւետիս Ահարոնեան եւ Սեբաստացի Մուրատ։ Փաստ. 1567ա-27ը սակայն, որ Խորհուրդի նիստերու մէկ ամփոփ արձանագրութիւնն է, կը յիշէ կարգ մը յաւելեալ անուններ,– Բժիշկ, որ հաւանաբար բժ. Յովսէփ Տէր Դաւթեանն է, Աւետիք Սահակեան (Հայր Աբրահամ) եւ Արշակ Վռամեան (Վահաբ)։ Այս արձանագրութիւններէն երեւան կու գայ որ իրաւասու ձայնով մասնակցողներու թիւը եղած է 14։ Փաստաթուղթը շահեկան է նաեւ անով՝ որ կը բացայայտէ կարգ մը որոշումներ, որոնք գրքոյկին մէջ զեղչուած էին եւ կամ կիտաւոր նշանակուած։

1909 թուականին, Դաշնակցութեան Խորհուրդին նիստերը գումարուած են Վառնայի մէջ Սեպտեմբեր ամսուն, Հինգերորդ Ընդհ. Ժողովի տեւողութեան, եւ շարունակուած այնուհետեւ։ Հակառակ անոր որ, ինչպէս կ՚երեւի Վասպուրականի Կեդր. Կոմիտէի կողմէ ղրկուած առաջարկին (Արամ Մանուկեանի ձեռքով գրի առնուած, փաստ. 1567բ-4), Խորհուրդի օրակարգի հարցերը պէտք է բաւականին ընդգրկուն ըլլային, այսուհանդերձ Հ.Յ.Դ. արխիւին մէջ պահուած են բացառաբար դատական կարգի խնդիրներ միայն։ Այս վերջիններէն կը ներկայացնենք ամէնէն շահեկանը՝ կապուած Սուլուխի հանրածանօթ կռուին Գէորգ Չաւուշի սպանութեան մասին շրջան ընող տարաձայնութիւններուն։ Բաժինը կը վերջանայ կտրուկ հերքումով։

ԽՄԲ.

Ա.– 1905 ԹՈՒԱԿԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Փաստ. 43-79

Ա 1.– ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

(Շրջաբերական նամակ)

Ընկերներ,

Համաձայն Երրորդ Ընդհանուր Ժողովի որոշման՝ առաջիկայ Դեկտեմբեր ամսին պիտի գումարուի Դաշնակցութեան *Խորհրդի* ժողովը։

Երկրի մարմիններին վաղօրօք արդէն յայտնուած է այդ մասին, որպէսզի նրանք ժամանակ ունենան կարեւոր պատրաստութիւնները տեսնելու եւ պատգամաւորներ ուղարկելու, եւ սրանով էլ յայտարարւում է դրսի մարմիններին։

Դաշնակցութեան Խորհուրդը կազմւում է Պատասխանատու Կենտրոնական Կոմիտէների եւ Բիւրոների ներկայացուցիչներից։ Նրա պարտաւորութիւնները՝ գծած Ընդհանուր Ժողովի կողմից, հետեւեալներն են՝

ա) Քննութեան ենթարկել Պատասխանատու Կենտր. Կոմիտէների եւ Բիւրոների գործունէութիւնը, Ընդհանուր Ժողովի որոշած ձեռնարկների իրագործման սահմանի մէջ։

բ) Յեղափոխական ուժերի եւ դրամի նպատակայարմար բաշխումը կարգաւորել։

գ) Վերակազմել Պատասխանատու Կենտր. Կոմիտէները եւ Բիւրոները։

դ) Դրամական միջոցներ գտնել։

ե) Վարել արտաքին բոլոր յարաբերութիւնները յանուն Հ. Յ. Դաշնակցութեան՝ ուրիշ կուսակցութիւնների եւ տարրերի հետ։

զ) Քաղաքական անակնկալ տագնապի ժամանակ իր պատասխանատուութեան տակ նոր ձեռնարկ սկսել, առանց հակասելու նախորդ Ընդհանուր Ժողովի՝ որոշումներին։

Հրաւիրելով բոլոր ձեռնհաս մարմիններին պատրաստուել մասնակցելու առաջիկայ Խորհրդին, Արեւմտեան Բիւրոն դարձեալ մի անգամ խնդրում է բոլոր կոմիտէներին շտապել ուղարկելու՝

1) Ներկայ թուականի երկու վեցամսեակների *հաշուեկշիռը*, այն մանրամասներով, որոնք յիշատակուած են Մայիսի շրջաբերականի մէջ։

2) Տեղեկութիւններ այն *նուազագոյն պահանջների* իրագործման մասին, որոնք նախորոշուած են Ընդհանուր Ժողովի կողմից (տես Կազմակերպական կանոններ, երես 19-20)։

3) Այն *հարցերն ու առաջարկները*, որ դաշնակցական մարմինները կը կամենային ենթարկել Խորհրդի քննութեան եւ այդ՝ ըստ կարելւոյն շուտ, օրակարգի մէջ մտցնելու համար։

Խորհրդի քննութեան ենթարկուելիք գլխաւոր խնդիրների մասին Արեւմտեան Բիւրոն շուտով, առանձին նամակներով, կը տեղեկացնէ ձեռնհաս մարմիններին, որպէսզի վերջիններս նախնական քննութեան ենթարկեն դրանց եւ այդպիսով հնարաւորութիւն ունենան, պատգամաւորների միջոցով, իրանց կարծիքները հասցնել Խորհրդին։

Խորհրդի *տեղը* եւ *ժամանակը* կը հաղորդուի, ում հարկաւորն է, առանձին գրութեամբ։ Խորհրդին չմասնակցող մարմինները իրանց դիմումները կարող են անել Պատասխանատու Կենտրոնական Կոմիտէների, Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոների միջոցով։

Հ.Յ.Դ.
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1904, Նոյեմբեր 10
Ժընեւ

Փաստ. 43-80

Ա 2.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆԵՐԻՆ

Ընկերներ

Ընդհանուր տաքտիք.— Հ. Յ. Դաշնակցութեան Երրորդ Ընդհանուր Ժողովից յետոյ թէեւ քիչ ժամանակ է անցել, բայց այս կարճ միջոցում տեղի ունեցան այնպիսի խոշոր դէպքեր, որ անհրաժեշտ է դառնում, առաջիկայ «Խորհուրդի» ժողովում, քննութեան ենթարկել տաքտիկի վերաբերեալ մի քանի հարցեր, որոնք կապ ունեն Սասունի ապստամբութեան եւ նրան յարակից շարժումների հետ:

Ինչպէս ձեզ յայտնի է, Սասունը ընտրուած էր իբրեւ մէկը կենտրոնական վայրերից: Վերջին Ընդհանուր Ժողովում որոշուած էր նոյնպէս, որ երբ կառավարութիւնը յարձակուելու լինի Սասունի վրայ, եւ վերջինը ստիպուած դիմադրելու, Վասպուրականը պիտի արձագանգ տայ եւ սահմանագծից զինուած խմբեր պիտի ներս խուժեն, աշխատելով հասնել կռուի վայրը: Դա արուած էր շարժմանը ընդհանուր կերպարանք տալու նպատակով, ինչպէս նաեւ թոյլ չտալու համար, որ թշնամու ուժերը կենտրոնանան Սասունի վրայ: Սակայն կառավարութեան յարձակումը սպասածից աւելի կանուխ սկսուեց, եւ Սասունը ստիպուած եղաւ ընդունել կռիւը՝ ոչ բոլորովին պատրաստ վիճակում. նրա համար սահմանուած ռազմամթերքը եւ զինուորական ուժերը տեղ չհասան. դուրսը մնացին նոյնիսկ Ընդհանուր Ժողովի պատճառով երկրից ելած կարեւորը ուժերը՝ Թորգոմը, Երկաթը եւ Վաղարշակը[1]*. խումբերը սահմանը անցան շատ ուշ, եւ անցածներից ոչ մէկը տեղ չհասաւ:*

Նոյն պատճառով էլ Վասպուրականը անկարող գտնուեցաւ ժամանակին արձագանգ տալ: Սասունը ընկճուեց մեր ընկերների սպասածից շատ առաջ. կռիւը անցաւ այնուհետեւ Դաշտը, այնտեղից Ախլաթ եւ ապա միայն Վասպուրական: Խմբերի ընդհարումները տեղի ունեցան բոլորովին անջատ թէ՛ իրարից եւ թէ դրսի կռիւներից: Այսպիսով Ընդհանուր Ժողովի որոշումը՝ — տալ բոլոր կռիւներին ամբողջական շարժման կերպարանք,— չիրականացաւ եւ այս արիւնոտ տարին չտուեց հայկական դատին այն մղումը, որ սպասւում էր, չնայած ներսի կռուողների անուրանալի հմտութեան եւ արշաւախմբերի ինքնամոռացման հասած անձնուիրութեան:

Եթէ այս տարուայ շարժումները եկան թշնամու եւ օտարի առջեւ հաստատելու յեղափոխական տարրի կորովը, մի հանգամանք, որ անշուշտ կարեւորութիւն ունի ապագայի տեսակէտից,— դէպքերի բացասական հետեւանքները միւս կողմից ստիպողաբար ծնում են մի շարք հարցեր, որոնց լուծումը անհրաժեշտ է մեր ընթացիկ կռուի շարունակութեան համար:

Կովկասեան խնդիր.— Մի ուրիշ հարց, որով առանձնապէս պիտի զբաղուի «Խորհուրդը», դա կովկասահայերի հարցն է:

Դեռ եկեղեցական կալուածների գրաւման հրամանից շատ առաջ դաշնակցական մարմինները անպաշտօն կերպով կռիւ էին մղում ռուսական միապետութեան ճնշումների դէմ: Փորձ եղաւ նաեւ ստեղծել նոր մարմիններ՝ յատկապէս այդ կռիւը վարելու համար թէ օրինական եւ թէ յեղափոխական ճանապարհներով, որպէսզի Դաշնակցութիւնը առանց տարուելու նորանոր խնդիրներով, ամբողջապէս նուիրուի իր բուն նպատակին: Յատուկ մարմին ստեղծելուն այն նշանակութիւնն էր տրւում, որ նրա մէջ կարելի կը լինի ամփոփել բոլոր այն յեղափոխական ուժերը, *որոնք այս կամ այն պատճառով չէին յարել թուրքահայերի դատին: Բայց դեռ նախապատրաստութիւնների շրջանում՝ պայթեց կալուածների գրաւման խնդիրը, եւ դաշնակցական մարմինները հարկադրուած եղան ուժգնապէս միջամտելու: Իրաւունք չհամարելով ասպարէզ գալ կազմակերպութեան անունով՝ նախքան Ընդհանուր Ժողովը այդ արտօնէր պաշտօնապէս, մեր ընկերները կազմեցին նոր մարմիններ «Ինքնապաշտպանութեան կոմիտէներ» անուան տակ, որոնք ղեկավարեցին ժողովրդական շարժումները եւ շարունակում են գործել մինչեւ այժմ:*

1.- Իսկական անուններով՝ Թումեանց Թուման (Թորգոմ), Լեռնեան Արմենակ (Աշոտ Երկաթ) եւ Պաղտասարեան Վաղարշակ (Կայծակ-Վաղարշակ):

Հետագայում գումարուած Ընդհանուր Ժողովը ընդունեց, որ ինքնապաշտպանութեան կոմիտէները ճանաչեն իբրեւ դաշնակցական մարմիններ, որոշեց ընդհանուր գծերով նրանց ուղին, թողնելով մանրամասն ծրագրի մշակումը «Խորհրդին»:

Դաշնակցութեան երեք գլխաւոր սկզբունքները՝ սոցիալիզմը *իբրեւ առաջնորդող ուղղութիւն,* ապակենտրոնական-ռամկավարական *կարգերը իբրեւ անմիջական պահանջ եւ* դաշնակցական-ֆեդերատիւ-կազմակերպութիւնը՝ *իբրեւ ապահովութիւն ազգերի ազատ զարգացման, կարող են կիրառուել եւ Կովկասում: Սակայն աչքի առաջ ունենալով Կովկասի տնտեսական համեմատաբար բարձր զարգացումը, նրա վերաբերեալ գործնական ծրագիրը պահանջում է յատուկ մանրամասներ: Եւ հէնց այս աշխատանքն է, որ ընկնում բոլոր ընկերների վրայ, որոնք մասնաւորապէս շահագրգռուած են կովկասեան խնդրի մէջ:*

Առանձին ուշադրութեան արժանի է նոյնպէս համերաշխութեան գաղափարը Ռուսաստանի բոլոր յեղափոխական եւ ընդդիմադիր կուսակցութիւնների միջեւ: Համերաշխ գործակցութեան պայմանները ճշտելու փորձը տեղի ունեցաւ Եւրոպայում կայացած մի համաժողովում, որին մասնակցելու հրաւիրուած էր եւ ներկայացուցիչ Դաշնակցութեան կողմից: Հետեւանքները մխիթարական են: Կարգադիր յանձնախումբը մի երկու կէտերի պարզուելուց յետոյ, հրապարակ կը հանի համաժողովի կողմից ընդունուած պրոկլամասիոնը:

Այս համառօտ ծանօթութիւնից յետոյ առաջ ենք բերում վերոյիշեալ երկու կարեւոր խնդիրների հետ կապուած հարցերի շարքը: Աւելացնում ենք դրան նաեւ այն բոլոր կէտերը, որոնք վերաբերւում են կազմակերպական գործերին: Եւ առաջարկելով ձեզ այս բոլորը, խնդրում ենք յայտնել ձեր կարծիքները այն հարցերի մասին, որոնց վերաբերմամբ դուք ձեզ ձեռնհաս էք համարում:

I. *Հայաստանի արդի կացութիւնը, ժողովուրդի տրամադրութիւնը եւ դիմադրելու կարողութիւնը:*
II. *Քաղաքական դրութիւնը: Ռուս-եապոնական պատերազմի եւ քաղաքական այլ հանգամանքների ազդեցութիւնը մեր դատի վրայ:*
III. *Երկրի զանազան վայրերում գործունէութեան եղանակը, մասնաւորապէս կենտրոնացման տաքտիկը:*
IV. *Տեռորական գործողութիւնների տարածումը երկրի ներսերը. նրա նպատակայարմարութիւնը եւ հնարաւորութիւնը զանազան կէտերում: Գործադրութեան միջոցներ, ուժանակային գործողութիւններ:*
V. *Արշաւախմբերի նպատակայարմարութիւնը զանազան պարագաներում:*
VI. *Քրդական հարեւան ցեղերի հետ համերաշխութեան յարատեւութեան պայմանները. պրոպագանդի հնարաւորութիւնը հեռաւոր ցեղերի մէջ:*
VII. *Պրոպագանդ թուրք ազգաբնակութեան՝ մասնաւորապէս քաղաքային բնակիչների շրջանում:*
VIII. *Միացած ձեռնարկներ մակեդոնացիների հետ իբրեւ իրականացում արդէն կայացած համաձայնութեան:*
IX. *Եւրոպական պրոպագանդ եւ նրա ծաւալը ներկայ հանգամանքներում:*
X. *Գործունէութեան վայրերի հիմնական ուսումնասիրութեան միջոցները՝ ռազմական տեսակէտից:*
XI. *Ռազմամթերքի գնման եւ փոխադրութեան դիւրութիւնները:*
XII. *«Ինքնապաշտպանութեան կոմիտէների» ծրագիր Կովկասի համար:*
XIII. *Ռուսական ներկայ ռեժիմի դէմ բողոքող տարրերի համաժողով, մեր դիրքը՝ միւս կռուող տարրերի շարքում:*
XIV. *«Դրօշակ»ի եւ միւս հրատարակութիւնների վերաբերեալ խնդիրներ: Յեղափոխական գրականութեան փոխադրութեան հարցը:*
XIV. *Թղթակիցներ եւ շրջիկ գործիչներ:*

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1904, *Նոյեմբեր* 30
Ժընեւ

Փաստ. 1567ա-7

Ա 3.– ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
[Բերլինի դաշնակցական ընկերներու]

Բերլին 17-II-05

«Արեւմտեան Բիւրոյից»՝ «Խորհուրդի» առաջիկայ ժողովների առթիւ ուղարկուած շրջաբերականների հիման վրայ տեղիս դաշնակցականները, Դաշնակցութեանը համակրողները եւ հետաքրքրուողները ունեցան 4 նիստ, որոնց ներկայ էին՝ առաջին անգամ – 16 հոգի, 2-դ - 18, 3-դ -13 եւ 4-դ -11 հոգի։ Բոլորին տրուած էր ձայնի իրաւունք, որովհետեւ, ինչպէս Բիւրոն չեշտել էր, մեր որոշումները պիտի խորհուրդների եւ կարծիքների նշանակութիւն ունենան։ Հարցերը քննուեցին այն կարգով, որով գրուած էին շրջաբերականներում։

I, VI եւ X հարցերի վերաբերմամբ ժողովը միաձայն գտաւ իրեն անձեռնհաս որեւէ կարծիք յայտնելու։

III հարցի առթիւ մեծամասնութիւնը (9 հոգի) իրեն դարձեալ անձեռնհաս գտաւ, իսկ 4 հոգի յայտնեցին հետեւեալը. ի նկատի ունենալով, որ ժողովուրդը այնքան յեղափոխականացած է, որ կարելի է մասսային շարժում առաջացնել (ինչպէս ցոյց տուին վերջին դէպքերը եւ նկատում են եւ շրջաբերականները Դաշտի, Ախլաթի եւ Վասպուրականի վերաբերմամբ), ուստի համարել կենտրոնացման տաքտիկը հնացած եւ կռուին տալ պարտիզանական բնաւորութիւն, բաժանելով զէնքը ժողովրդի մէջ (բերուեցան այն տեղեկութիւնները, որ ժողովուրդը ինքը ահագին նիւթական զրկանքների գնով զէնք է ձեռք բերում)։

XI հարցի առթիւ որոշում կայացնելը ժողովը գտաւ նոյնպէս իր ուժերից վեր, միայն մէկը ցանկութիւն յայտնեց, որ Դաշնակցութիւնը փորձի Եւրոպայի գինագործներից զէնք ձեռք բերելու եւ հէնց նրանց միջոցով էլ երկիր փոխադրելու։

Միւս հարցերին տրուեցին հետեւեալ որոշումները.

II հարցի առթիւ քուէարկութեան դրուեցաւ հետեւեալ բանաձեւը. «Ռուսաստանի պարտութիւնը նպաստաւոր է թուրքահայոց դատին, ուստի Դաշնակցութիւնը պիտի իր ուժերը ներածին չափ աշխատի նպաստել այդ պարտութեան (ընդունուեց 13 ձայնով + ընդդէմ 1-ի, 2 ձեռնպահ)։ Մէկը այն կարծիքը յայտնեց, որ այդ պարտութիւնը անմիջական նշանակութիւն չի ունենալ ի նպաստ թուրքահայոց դատի, որովհետեւ միջազգային յարաբերութիւնները եւ պետութիւնների դիրքը Թուրքիայի վերաբերմամբ դրանից չեն փոխուիլ, սակայն այդ պարտութիւնը, եթէ առաջ բերի Ռուսիոյ ազատութիւնը, կ'ունենայ այն անուղղակի նշանակութիւնը որ թուրքահայոց դատին աջակցող կովկասեան կազմակերպութիւնները կարող կը լինեն աւելի ազատ ձեռքով գործել։

IV հարց. միաձայն ընդունուեց հետեւեալ բանաձեւը. «Ընդունելով երկրի ներսում ընդհանրապէս տեռորի բոլոր ձեւերը (բացի դրամ ժողովելու դէպքերից), թողնել ամէն մի կոնկրէտ դէպքում տեռորի նպատակայարմարութեան որոշելը եւ գործադրութեան ձեւը տեղական կոմիտէներին – իրենց պատասխանատուութեամբ։ Առաջարկել նրանց միեւնոյն ժամանակ զգոյշ վերաբերմունք»։

V հարց. «Նկատելով, որ արշաւախմբերի նպատակը (ցոյց տալ ու զարգացնել հայի մարտական ընդունակութիւնները, ահաբեկել թշնամի տարրերը եւ յեղափոխականացնել հայ տարրը) արդէն հասնուած է, ու տեսնելով, որ արշաւանքները նոյնիսկ վնաս են երկրում (չեշտուեցաւ վերջին դէպքերը ռուս-թրքական սահմանում), վերջ դնել կռուի այդ ձեւին»։ Այս բանաձեւը ընդունուեց 10 ձայնով, 7 հոգի ձեռնպահ։

VII հարց. թուրք ազգաբնակութեան մէջ ընդհանրապէս՝ առանց մասնաւորելու քաղաքային բնակիչներին՝ պրոպագանդ անելու համաձայն էին 4 հոգի, 5 դէմ եւ 7 ձեռնպահ։

VIII հարց. 17 ձայնով (1 ձեռնպահ) ընդունուեց մակեդոնացոց հետ միացած գործողութիւնների ձեռնարկելու առաջարկը։

IX հարց. Եւրոպայում պրոպագանդ անելու առաջարկը սկզբունքով ընդունելուց յետոյ (17 ձայնով, 1 ձեռնպահ), դրուեցաւ երկու բանաձեւ. ա) «Լայնացնել պրոպագանդը (4+, 4-, 14 ձեռնպահ), բ) «Թողնել պրոպագանդի հին ծաւալը» (9+, 1-, 8 ձեռնպահ)։

XIII հարց. «Ընդունելով ռուսական ներկայ ռեժիմի դէմ բողոքող տարրերի համերաշխ գործունէութիւնը Պարիզի կոնֆերանսում որոշուած սկզբունքներով, թողնել ամէն մի կոնկրէտ դէպքում գործակցութեան ձեւի որոշելը յեղափոխական մարմիններին», (10+, 1 ձեռնպահ)։

XIV հարց. յեղափոխական գրականութիւնը տեղափոխելու նոր միջոցներ առաջարկելու համար։ Ժողովը միաձայն գտաւ իրեն միանգամայն անձեռնհաս։

Ժողովը ցանկութիւն յայտնեց (1 ձեռնպահ), որ «Դրօշակը» հրատարակուի առնուազն ամիսը 2 անգամ։

(Մասնաւոր կարծիք. «Լաւ կը լինէր, եթէ Կովկասումն էլ թերթ հրատարակուէր)։

XVII Կովկասահայերի ինքնապաշտ. կոմիտէների ծրագիրը որոշելիս, ժողովը արեց հետեւեալ դիտողութիւնները.

Նկատելով՝

ա) Որ ամէն մի ազգութիւն ունի իրաւունք եւ պէտք է ինքնուրոյն գոյութիւն ունենայ, իսկ այդ ազատ զարգացման ապահովութիւնը կարելի է գտնել միայն ֆեդերալ կազմակերպութեան մէջ, որում ամէն մի ազգութիւն ներկայանար իբրեւ մի ինքնավար մարմին (ընդունուեց միաձայն)։

բ) Որ կովկասահայերի յեղափոխական գործը վարելը մենք վստահում ենք Դաշնակցութեանը (իրեն հիմնական սկզբունքների համեմատ – սոցիալիզմ, ապակենտրոնացում, ֆեդերալիզմ) (ընդունուեց 11 ձայնով, ընդդէմ 1-ի, 1 ձեռնպահ)։

գ) Որ Բերլինի այս ժողովը իրեն ձեռնհաս է համարում այդ հարցի վերաբերմամբ միայն տեսական եւ ընդհանուր որոշումներ անելու,- քուէարկութեան դրուեցին հետեւեալ բանաձեւերը.

1) Ընդունելով Դաշնակցութեան ունակութիւնը կովկասահայի պաշտպանութեան գործում, առաջարկում ենք, որ նրա գործունէութիւնը առայժմ միայն քաղաքական գոյն ունենայ (1+, 7-, 3 ձեռնպահ)։

2) Դաշնակցական կովկասեան ինքնապաշտպ. կոմիտէները պիտի ջանան հայ ժողովրդի ամէն մի խաւը գիտակ դարձնել իր ազգային շահերին, առանձին ուշադրութիւն դարձնելով կառավարութեան կողմից հայերի դէմ կատարուող տնտեսական ճնշման։ Միւս կողմից յիշեալ կոմիտէները պիտի իսկոյն եւեթ միջոցներ ձեռք առնեն աշխատաւոր դասակարգի մէջ սիստեմատիք գործերու, Դաշնակցութեան ծրագրի գլխաւոր նպատակին՝ սոցիալիզմին հասնելու համար (6 +, 2-, 3 ձեռնպահ)։

3) Դաշնակցութիւնը, ընդունելով սոցիալիզմը, իբրեւ ղեկավարող ուղղութիւն, բնականաբար պիտի հանդիսանայ պաշտպան ու արտայայտիչ աշխատաւոր դասակարգի շահերի. այդ շահերը կարող են իրենց բաւարարութիւնը ստանալ կուլտուրական ուժերի լիակատար զարգացմամբ, որը հնարաւոր է միայն այն դէպքում, երբ հայ ժողովուրդը ազգային-քաղաքական ազատութիւն կ'ունենայ։ Ուրեմն կռիւը պիտի լինի քաղաքական-սոցիալական եւ պիտի վարուի շահախնդրուած դասակարգի ձեռքով, որպիսին հանդիսանում է աշխատաւոր մասսան (2+, 5-, 4 ձեռնպահ)։

Քարտուղար՝
Ռ. ԼԵՌՆԵԱՆ[3]

Փաստ. 1657ա-8

Ա 4.– ՅԱՒԵԼՈՒՄ ԼԻՊԱՐԻՏ ՆԱԶԱՐԵԱՆՑԷՆ

22-II-05 Բերլին

Ցարգելի ընկերներ,

Նամակս Ձեզ յանձնողը այն գերմանացի պարոնն է, որի մասին գրել էի Ձեզ։ Խնդրեմ տաք իրեն հարկաւոր տեղեկութիւնները, լինելով միանգամայն վստահ։ Նա «Vorwärts Zeitung»ի[3] *այստեղի աշխատակիցներէն է։*

Արձանագրութիւնը ուղարկելուց յետոյ միայն նկատեցի, որ դա միայն մի չոր հաշիւ է քուէարկուած բանաձեւերի, այնպէս որ արժէր մի քանի խօսք ասել տեղի ունեցած վիճաբանութիւնների մասին։

Թէեւ ժողովում ներկայ էին մինչեւ 18 հոգի, սակայն վիճաբանութիւնների ամբողջ ընթացքում խօսում էին 3-4 հոգի, որոնք եւ առաջարկում էին բանաձեւերը։ Այդ կողմից ժողովը հարկաւոր է անյաջող համարել։

Մի կէտի վերաբերմամբ տաք վիճաբանութիւններ տեղի ունեցան – այն է – Դաշնակցութեան սոցիալիստական պրոպագանդ սկսելուն։ Այդ առթիւ առաջարկուած երեք բանաձեւերից կը տեսնէք, որ՝ հարցը նոր լինելով, մի տեսակ երկչոտութեամբ էին վերաբերւում։ Մի բան վհատեցնում էր բոլորին. ինչպէ՞ս հաշտեցնել Դաշնակցութեան ազգային գործունէութիւնը, որ գրկում է բոլոր խաւերը, մի դասակարգի շահեր պաշտպանելու հետ։ Բանաձեւերը աշխատում են «մի կերպ» հաշտեցնել։ Ինձ թւում է, որ դա մի շատ պարզ խնդիր է, եւ հետեւապէս, ոչ մի կարիք չկայ զանազան հաշտութիւններ կայացնելու։ Դաշնակցութիւնը պիտի լինի Կովկասում հայկական սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւն, հետեւապէս պիտի պաշտպան հանդիսանայ աշխատաւոր դասակարգի (բանուոր, երկրագործ, եւայլն)։ Միւս դասակարգերը բնականաբար հետզհետէ կ'անջատուին (եւ թո՛ղ), եւ այդպիսով Դաշնակցութիւնը առանց բռնի կամ արհեստական միջոցներ գործ դնելու կը զտուի։ Անջատուած յեղափոխական տարրերը կը կազմեն այլ կուսակցութիւններ, ամէն մէկը իրեն դասակարգի ձգտումներին համապատասխան ծրագրով (ինչպէս եղաւ Լեհաստանում, ինչպէս է Ռուսաստան)։ Ուրեմն զուտ սոցիալիստական հարցում Դաշն-ը կը լինի ներկայացուցիչ միայն աշխատաւոր դասակարգի, իսկ քաղաքական հարցերում, որոնք կ'ունենան ընդհանուր ազգային բնաւորութիւն, նա ամէն անգամ կը գայ համերաշխութեան անջատուած տարրերի կուսակցութիւնների հետ (այդպէս չէ՞ր Պարիզի կոնֆերանսում), առանց դիպչելու իր ծրագրին։ Շտապում եմ, պարոնը գնում է։ Խնդրեմ շուտով գրէք, յայտնելով Ձեր ունեցած տեղեկութիւնները Կովկասի վերջին դէպքերի մասին։

Ողջոյններով՝ Ռ. ԼԵՌՆԵԱՆ

Ձեր ուղարկած թռուցիկներից («Դրօշակ» N 1) 12 օրինակ ուղարկեցի Ռուսաստանի եւ Կովկասի զանազան քաղաքները։

2.- Իսկական անունով՝ Նազարեանց Լիպարիտ։
3.- «Vorwärts Zeitung», գերման սոցիալ-դեմոկրատ լրագիր։

Փաստ. 1567ա-4

Ա 5.– ՆՈՐ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ ԽՈՐՀՈՒՐԴԷՆ

Գրութիւնը անթուակիր է. ձեռագիրը կը պատկանի Յար. Գալֆայեանին. ղրկուած է շարք մը ընկերներու որպէսզի իրենց տեսակէտները յայտնեն դրուած հարցերուն: Այս մէկը, որուն տակ Համօ Օհանջանեանի յաւելումը կայ, հաւանաբար այն օրինակն է որ ուղարկուած էր Քր. Միքայէլեանին: Վերջինիս մասնակցութիւնը Խորհուրդի աշխատանքներուն՝ շատերու կարգին կը պահանջէր մանաւանդ Ռոստոմ: Սակայն, կլանուած ըլլալով Ապտիլ Համիտի դէմ մահափորձի նախապատրաստութիւններով՝ Քրիստափոր պիտի չուզէր հեռանալ Սոֆիայէն, ուր եւ քիչ անց պիտի գտնէր իր եղերական վախճանը:

Ի նկատի ունենալով Գ. Ընդհանուր Ժողովէն յետոյ Ռուսաստանի մէջ տեղի ունեցած քաղաքական-յեղափոխական զօրեղ շարժումները, բռնակալութեան թուլանալը, բոլոր հպատակ ազգերու քաղաքական ընդհանուր պահանջներու առաջ գալը, Դաշնակցութեան եւ այլ յեղափոխական մարմիններու համերաշխ գործակցութեան փորձերը եւ Կովկասի ձայնի անհրաժեշտութիւնը համառուսական շարժման մէջ, անհրաժեշտ կը համարենք նախ քան մի որոշման յանգիլը՝ յայտնել եւ ձեր կարծիքը հետեւեալ հարցերու մասին:

1.- Արդեօ՞ք Դաշնակցութիւնը Կովկասի մէջ պէտք է մնայ զուտ ինքնապաշտպանութեան հողի վրայ, ինչպէս կը տրամադրեն Ընդհ. Ժողովի որոշումները, թէ այնտեղ եւս հանդիսանայ որպէս մի յեղափոխական կուսակցութիւն, որ յեղափոխական միջոցներով պիտի հետապնդէ որոշ քաղաքական իտէալներ:

2.- Եթէ այո, համաձա՞յն էք արդեօք հետեւեալ բանաձեւին:

I) Դաշնակցութեան նպատակն է ձեռք բերել Կովկասում ռամկավարական-Դաշնակցութիւն (Fédération démocratique) կապուած Ռուսաստանի հետ՝ Կովկասի դաշնակցութիւնը ապահովող օրէնքներով:

II) Տնտեսականի վերաբերեալ սոցիալիզմը ընդունել որպէս ղեկավարող սկզբունք եւ բանուորութիւնը ու գիւղացիութիւնը կազմակերպել նոյն ուղղութեամբ:

Մեծ Հայքի վերաբերմամբ Խորհրդի մէջ դրուած են հետեւեալ հարցերը:

1.- Ի նկատի ունենալով, որ Վասպուրականի մէջ ունինք բաւականաչափ ուժեր, որոնք այնտեղ չեն կարող ապահով մնալ, իսկ երկրէն դուրս գալով վատ տպաւորութիւն կը թողնեն ժողովրդի վրայ, որոշել հնարաւորին չափ ռազմամթերք եւ կռուող ուժեր հասցնել անոնց, միեւնոյն ատեն խնդրելով ըստ կարելոյն խոյս տալ կառավարութեան հետ ընդհարումներէ որպէսզի շատ ուժեր կեդրոնացնեն այնտեղ:

2.- Որովհետեւ 15 տարուան գործունէութեան եղանակը Մեծ Հայքում de facto ունեցաւ միայն մի հետեւանք — ժողովրդի յեղափոխական ոգու զարթնումը — որովհետեւ ոչ արշաւախմբերը եւ ոչ կեդրոնացումը չեն յաջողուում մեզ եւ թէ յաջողուին անգամ չեն ապահովեր մեր դատի շահը, որովհետեւ մեր դատը կը տանինք միայն այն ժամանակ երբ մի խոշոր ձեռնարկ ունենանք, վերջապէս՝ ի նկատի ունենալով, որ Դաշնակցութիւնը թէ՛ դրամական եւ թէ մարտական բաւականաչափ խոշոր ուժեր ունի այժմ — յանձնել զինուորական ականաւոր ուժէ եւ մեր փորձուած ընկերներէ կազմրուած մի մասնաժողովի՝ ուսումնասիրել յեղափոխական եւ մարտական տեսակէտէ Երկրի մի քանի մասերը եւ սահմանագլուխները, կազմել յատակագիծ մը որեւէ խոշոր ձեռնարկի եւ ներկայացնել Ընդհ. Ժողովի:

(Մանօթ.- Կովկասի Ռայոնական ժողովը ձայներու մեծամասնութեամբ ընդուներ է 1. կէտը՝ կենդանի գործը շարունակելու համար եւ 2.ը որպէս անհրաժեշտ ուսումնասիրութիւն:

Սիրելիս, Խորհուրդի եկած ընկերները շատ կը ցանկային այս հարցերի վերաբերեալ ունենալ քո կարծիքները: Հարցերը շատ ծանր են եւ մենք չենք ուզում առանց ձեզ հետ խորհրդակցելու վճռել նրանց, կամ մի որոշ եզրակացութեան գալ: Շուտով պատասխանիր, իսկ եթէ դու ինքդ գայիր, դա խօ՛ ամենալաւ բանը կը լինէր:

Ընդունիր իմ ջերմ եւ կարօտով համբոյրները:

ՀԱՄՕ

Փաստ. 1567ա-9

Ա 6.– ՅՈՆԱՆ ԴԱՒԹԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Այս եւ յաջորդ պատասխանները Յոնան Դաւթեանէն եւ Արշակ Վռամեանէն են: Առաջինը՝ Դաշնակցութեան հին գաղափարախօսներէն, այդ օրերուն իբրեւ գործիչ կը գտնուէր Ամերիկա, ուր էր նոյնպէս Վռամեան՝ իբրեւ գործիչ եւ «Հայրենիք»ի խմբագիր:

Սիրելի ընկերներ,

Մեր առջեւ դրուած հարցերը շատ լուրջ, պատասխանատու ու կենսական են, ինչպէս դուք էլ էք նկատել:

Դուք էլ լաւ գիտէք, որ հայ ժողովրդի այսօրուայ դրութիւնը շատ ծանր ու կրիտիկական է, աւելի կ'ասենք նոյնիսկ՝ «լինել-չլինել» է: «Լինել-չլինել» ենք ասում, որովհետեւ Կովկասի գործունէութիւնը այս րոպէիս ոչ միայն տեղական բնաւորութիւն ունի, այլ ընդհանուր. ընդհանուր ամբողջ հայութեան համար.- Ծանրութեան կէտը այս վայրկեանիս տեղափոխուած է Կովկաս, եւ հայ ժողովրդի ապագան կախուած է Կովկասայի կռուի կամ վիճակի ելքից: Եւ այսպէս լինելով, մենք Խորհուրդի ձեռնհասութիւնից վեր ենք համարում դրուած խնդիրներին վերջնական որոշումը — լուծումը տալը, որովհետեւ նրանք միայն տեղական բընաւորութիւն չունեն, այլ ընդհանուր, մանաւանդ, որի վրայ առանձնապէս շեշտում ենք՝ կուսակցութեան կամ կազմակերպութեան մէջ արմատական փոփոխութիւն մտցնելը սկզբունքի-դոկտրինի տեսակէտով: Բացի Ընդհանուր Ժողովից ոչ մի մարմին չէ կարող կազմակերպութեան ծրագրի այնպիսի արմատական փոփոխութիւն մտցնել, ինչպիսին է Դաշնակցութիւնը, պաշտօնապէս հրատարակել սոցիալիստական կազմակերպութիւն: Համաձայնեցէք, որ ձեր իրաւունքներից վեր է, որ սա մի վտանգաւոր քայլ է, եւ այսպիսի ճգնաժամին կարող է շատ տխուր, շատ ցաւալի հետեւանքներ ունենալ: Յետոյ, ինչո՞վ կարող էք երաշխաւորել, որ վաղը կամ միւս օրը մեր կազմակերպութեան մէջ եւս առաջ չեն գալ պոլիտիկաններ, եւ որոնք օգտուելով նախընթաց օրինակից, եթէ դրանք կը լինեն Խորհուրդը կազմող մարմինը, ու հակառակ՝ պահպանողական եւ այլն ծրագիր չեն հրատարակել: Ինչո՞ւ չպէտք է ամուր կպած մնալ այն ոգուն ու ուղղութեան, որ Դաշնակցութեան խարիսխը, ոյժը ու կեանքն է կազմում, մանաւանդ այս սեւ, դժուար ու վտանգաւոր օրերում: Չէ՛, ընկերներ, խնդրում ենք, նոյնիսկ հրամայողաբար ենք խնդրում այդ հարցը թողնել Ընդհանուր Ժողովին, մեր գերիշխանութեան:

Միայն, որովհետեւ բոլոր ղեկավար ոյժերը համաձայն են եւ այդ վաղո՛ւց կազմում է նրանց սկզբունքը — ոչ պաշտօնապէս սակայն — այդ հարցը արծարծել ու հողը պատրաստել մանաւանդ տաճկահայ ընկերների մէջ: Սա անհրաժեշտ է, որովհետեւ այսօր գրեթէ ամբողջ հայ ժողովուրդը Դաշնակցութեան հետ է՝ հարուստ, ինտելիկենտ եւ այլն եւ այլն, որոնք նայում են Դաշնակց[ութեան] վրայ իբր ժողովրդական-մարտական կուսակցութեան վրայ ու երբ այդպիսի մի լարուած, խառն, վտանգաւոր ժամանակ, անսպասելի կերպով նրանց, Խորհուրդը մի այդպիսի սիւրպրիզ անի, չէ՞ք կարծում, որ կարող է առաջ բերել մի ռէակցիա, դժգոհութիւն ու բաժանում, հետեւապէս եւ յուսահատութիւն: Շատ վատ ժամանակ է ընտրուած դրա համար: Խնայենք ժողովրդին, մանաւանդ տաճկահայերին ու նրանց գործիչներին, որոնց համար դա կը լինի մի պոմբա: Ուրիշ է եթէ այդ անէր Ընդհ. Ժողովը — որքան էլ անսպասելի լինի — նա հեղինակութիւն է, նա մեծութիւն է, եւ գիտեն, որ իւրաքանչիւրը պարտաւոր է ենթարկուել նրան, իսկ Խորհուրդի՞ն: Զմոռանանք եւ այն, որ այժմեան Խորհուրդի մէջ գրեթէ տաճկահայ չկայ եւ եղածն էլ խնդրին ծանօթ չէ:

Ինչ տեսակէտով էլ նայելու լինենք, Խորհուրդը այդ դիտումից պէտք է հրաժարուի եւ այդ թողնի միայն Ընդհ. Ժողովին, եթէ նա չի ուզում, որ Դաշնակցութիւնը քայքայուի, կտոր-կտոր լինի:

Ուրեմն հասկանալի է, որ Կովկ[ասը] պէտք է հաւատարիմ մնայ ինքնապաշտպանութեան տակտիկային եւ այժմեան գործունէութեան եղանակին, միաժամանակ ձեռք տալով միւս ընդդիմադիր կուսակցութիւններին՝ նրանց հետ համերաշխ գործելու պայմանների պահանջի համեմատ:

Գալով խնդրի միւս կէտին, դարձեալ ի նկատի ունենալով այժմեան կացութիւնը՝ անպայման խոյս տալ ընդհարումների առիթ տալուց Տաճկ[ահայաստա-

նում], եթէ դրա համար նոյնիսկ հարկաւոր է մի քանի compromis[4] *եղած ընկերներ դուրս հանել երկրից։ Այս մասին մանրամասն ձեզ շուտով կը գրուի։*

Շարունակել ժողովրդին զինելը թէ Տաճկահայաստանում եւ թէ Կովկասում նոյնիսկ ստիպելով։

Մենք իբրեւ ընկերներ առաջարկում ենք, որ Խորհուրդը միջոցներ ձեռք առնի ուսումնասիրելու թէ նախորդ Ընդհ. Ժողովից յանձնարարուած եւ թէ Կովկասի արդի դէպքերու շնորհիւ առաջ եկած խնդիրները նրանց ենթարկելու ապագայ Ընդհ. Ժողովին, որ ամենաուշը տեղի պիտի ունենայ եկող աշունը[5]։ Որքան կարելի է լայն ծաւալ տալ ու այնպէս անել, որ մեր բոլոր ոյժերը մասնակցեն։Ժողովը նշանակել Կովկաս։

ՅՈՆԱՆ

Մարտ 18, 1905,
Պոսթըն

Փաստ. 1567ա-11

Ա 7.– ԱՐՇԱԿ ՎՌԱՄԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Պոսթըն, Մարտ 29 1905

Սիրելի ընկերներ,

Համոյի ստորագրութեան տակ ձեր Մարտ 4 *թուակիրն ստացած ենք։*

Այսօր իսկ կը հեռագրենք ձեզ. թէ ես ու Յովհանը բոլորովին անհամաձայն ենք ձեր դրած 2 *եւ* 3 *կէտերուն, իսկ կ'ընդունինք* 1 *եւ* 5 *կէտերը։*

Յովհանի պատճառաբանութեան վրայ կ'աւելցնեմ՝

1- *Իրաւական տեսակէտով Ընդհ. Պատգ. Ժողովն անգամ իրաւունք չունի փոփոխութիւն մտցնելու ծրագրին մէջ, եթէ այդ կանխաւ բոլոր Կեդր. Կոմիտէներուն հաղորդուած եւ անոնց քննութեան ենթարկուած չէ նոր փոփոխութիւնը։*

Նկատի ունենալու է այս կէտը, ապագային անհամաձայնութիւններու, գժտութիւններու եւ պառակտումի տեղի չտալու համար։ Աշխարհի վրայ ո՛չ մէկ Parlement *իրաւունք ունեցած չէ հիմնական փոփոխութիւն մտցնելու սահմանադրութեան մէջ։ Վերաքննութեան պարագային՝ միշտ մասնաւոր* constituant[6] *մը կը հրաւիրուի, լիազօր իրաւունքով։*

Ջանացէք դուք ալ մնալ ընդհանուր օրինականութեան սահմաններուն մէջ։

2.- *Խորհուրդը կամ Բիւրոն մինչեւ հիմա չկատարած գործ մը՝ այս անգամ թող նկատի ունենայ։ Սա է որ խնդիրները լուսաբանելու է, ոչ միայն նոր ու հասարակ, այլ մանաւանդ նոր տրուած։ Սոցիալիզմի մասին Կովկ[ասի] Ռայ[ոնական] ժողովի որոշումները համոզիչ չեն ինծի համար։ Պէտք է պատճառաբանել, փաստեր բերել։*

Ինծի այնպէս կը թուի, թէ մեր ընկերները չափէն աւելի կ'ենթարկուին սոցիալիստներու ազդեցութեան եւ անոնց հոսանքէն կը քշուին։

2—3000 *բանուորներու շահերուն համար կարելի չէ անտես ընել միլիոնաւոր գիւղացի եւ արհեստաւոր ժողովրդի ընդհանուր շահերը։*

Եւ վերջապէս երկու ճակատի վրայ կռուելու անընդունակ ենք մենք։ Այդ կէտը լաւ հասկնալու ենք։

Ամէն պարագայի մէջ, խնդիրները ուսումնասիրելու է, բոլոր դաշնակցականներու գործակցութիւնը եւ խորհրդակցութիւնը խնդրելու է, եւ մանաւանդ աճապարելու չէ տեսական խնդիրներու մէջ, բայց աճապարելու է բուն մարտական գործերու պատրաստութեան մէջ։

Ընկերաբար եւ համբոյրներով՝
ՎԱՀԱՔ

Յ.Գ.- Քրիստափորի մահը մեծ կսկիծ պատճառեց մեզ. այս ամառուան փորձերը որ քիչ մնաց աղիտաբեր ըլլային, դաս մը չէի՞ն միթէ որ զգուշաւոր ըլլայինք այլեւայլ tufenkjieffներու փորձառութեան նկատմամբ։ Եւ վերջապէս մինչեւ երբ մեր լաւ ուժերը այդպէս թափթփած կերպով պիտի գործածենք եւ վտանգի ենթարկենք։

Եթէ Կովկաս գտնուէր Քրիստափորը, ռայ.ժողովը այդպիսի տեսական ամպերու մէջ չէր սաւառներ...

Ներփակ կը ղրկենք ձեզի մեր Կեդր. Կոմիտէին ուղղած նամակները մեր վանեցի լաւ ընկերոջ մը կողմէն։ Կարդալէ ետք, վերադարձուցէք ատոնք։

Ձեր մասնաւոր ուշադրութեան առարկան ընելու էք Վասպուրականի վիճակը, որու ջարդ կը սպառնան միսիոնարները. անոնց գրութիւններէն ալ կը ղրկեմ ձեզի այս փոսքով, ինչպէս պիտի ղրկեմ նաեւ Պարսկաստան։

Անմիջական կարգադրութիւն մը պէտք է։ Կոմսը եւ Իշխանը[7], ինչպէս կ'երեւի, շատ անփորձ ու երիտասարդ են։ Միակ գաւառը մնացեր է – չկոտորուի ան ալ։

Սամսոնը եւ Արտաշէսը կը պատրաստուին Ապրիլի վերջերը [Վասպուրական] մտնելու։ Հիմակուընէ անմիջական կարգադրութիւն, հրահանգ. թէ անոնց գրեցէք եւ թէ ուղղակի Վան։

Այս մասին ձեր կարգադրութիւններուն մասին հաղորդեցէք հոս։

ՎԱՀԱՔ

4.- Ֆրանսերէն՝ վտանգուած իմաստով հոս։

5.- 1905 թ. տարեվերջին նախատեսուած Ընդհ. Ժողովի գումարումը պայմաններու բերումով՝ գլխաւորաբար Կովկասի հայ-թաքարական ընդհարումներու, պիտի իրականանար 1907 թ. Փետրուարին միայն։

6.- Ֆրանսերէն՝ Սահմանադիր [ժողով]։

7.- Յաջորդաբար՝ Վահան Փափազեան եւ Նիկոլ Միքայէլեան։

Փաստ. 1567ա-12

Ա 8.– ՍԱՐԳԻՍ ՄԻՆԱՍԵԱՆԻ (ԱՐԱՄ-ԱՇՈՏ) ՊԱՏԱՍԽԱՆԸ

Նիւ Եորք Մարտ 22, 1905

Արեւելեան Բիւրոյին

Ընկերներ,

Կովկասի գործունէութեան մասին ես ոչինչ կարող եմ ըսել. միայն սա կը նկատեմ որ, հակառակ մեր կարծեցեալ ուժին եւ... աչալրջութեան, նորէն անակնկալ հարուածի զոհ գնացինք։ Եւ ինչպէս կ'երեւի այդ Բարելոնի մէջ շուարեր էք թէ ինչ ընթացք բռնէք։ Ըստ իս այնպիսի ուղղութեան մը հետեւիլ որ հաշտուի Տաճկահայաստանի գործունէութեան հետ։ Եւ զարմանալի է որ դեռ այսպիսի կենսական րոպէին, երբ Ազգային գոյութեան հարցը ունինք առջեւնիս, Կովկասի մէջ ռամկավար դաշնակցութեան քաղաքական utopieներու[8] *վրայ կ'որոճաք, գոնէ ներկայիս։ Կը վախնամ թէ շատ բան եւ ան ալ մեծ բաներ ձեռնարկելով տկարացնենք մեր բուն նպատակը։ Շարունակեցէք առայժմ «ինքնապաշտպանութիւնը» եւ սիրաշահեցէք դրացի ցեղերը, միւս կողմէ աչալուրջ ըլլալ որ կիսաբարբարոս այդ ցեղերը, որոնք կառավարական էնդրիկներու հակամէտ են, հայ ժողովուրդը յանկարծակիի բերելով, ահռելի կոտորած չսարքեն։ Ճիշդ է անոնցմէ ալ կը զոհուին թերեւս, բայց անոնք ոչինչ կը կորսնցնեն, մենք մեծ բան կը կորսնցնենք, նոյնիսկ եթէ անոնց մէկ տասներորդը կորսնցնենք ներկայ ճգնաժամին։*

Հարկաւոր է ինչպէս այստեղի մեր ընկերները կը չեշտեն, որ նոր Ընդհ. պատգամաւորական ժողով մը կազմուի, որքան կարելի է շուտ, քանի որ պարագաները գրեթէ լիովին փոխուած են եւ որոնց համար նոր խորհրդակցութիւն մը անհրաժեշտ է։

Աշխատիլ որ երկրի գործունէութիւնը լռիկ մնջիկ ըլլայ, եւ երկրին մէջ ունենալ գիտակից ընկերներ, որոնք բացարձակ գաղտնապահութիւնով, հսկեն ներքին խուլ այլ intense[9] *գործունէութեան վրայ եւ չձգեն գիւղացիները իրենց բախտին։*

Միւս կողմէ ուժ տալ Տերսիմին, զինել, եթէ կարելի է եւ հոն ապստամբութիւն ծագեցնելով Թուրքիոյ զինուորական ուժը թափել այդ լաբիւրինթոսին մէջ եւ ջլատել։ Այդպիսի պարագայի մը մեր ձեռնարկը աւելի յաջողութեան հաւանականութիւն ունի։ Մենք, երկրին մէջ ամուր կռուան չունինք առայժմ, Սասունի անկումէն յետոյ. աշխատինք այդ ուժեղ կռուանը ձեռք ձգել, որ մենէ զոհեր չի պահանջեր։

Ես կը կարծեմ քաղաքական եւ յեղափոխական իմաստութիւն է այդպիսի քայլեր առնել այժմէն եւ պատրաստել հողը, փոխանակ թոյլ տալու որ թշնամին իր բոլոր վայրենի ուժը մեր վրայ թափէ, քանի որ մանաւանդ բուն Հայաստանի մէջ պիտի շարունակենք գործել։

Ըստ իս Խորհուրդը կարող է այդ նախնական քայլերը առնել, անոր համար որ չէ կարելի շատ ուշացնել. իսկ ինչ կը վերաբերի ծրագրի կէտերու փոփոխութեան մասին, հարկաւոր է ընդհանուր պատգամաւորական ժողով, որ անհրաժեշտ կը դառնայ այսքան աղէտներէ յետոյ։

Բարեւներ
Ա[ՐԱՄ] ԱՇՈՏ

8.- Ֆրանսերէն՝ երեւակայական, ցնորական ծրագիրներ։

9.- Ֆրանսերէն՝ ուժգին, ծաւալուն։

Փաստ. 1567ա-13

Ա 9.– ՄՈՆՊԵԼԻԷԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Դաշնակցութեան յարգելի Խորհրդին,

Դաշնակցութեան տեղիս դաշնակցական ուսանողներին ուղղած 1904 Նոյեմ. 30 թուակիր շրջաբերականին ի պատասխան գալիս ենք յայտնելու մեր կարծիքը մի քանի հարցերի մասին։

Ռուս-ճապոնական պատերազմը բարերար ազդեցութիւն չգործեց մեր հարցի վրայ մինչեւ այժմ, որովհետեւ խլեց քաղաքական աշխարհի ուշադրութիւնը, բայց վերջանալով ռուսների պարտութեամբ ինչպէս որ կարելի է նախատեսել, մեծ ազդեցութիւն կ'ունենայ մեր դատի վրայ։ Ռուսաստանի վարկը կ'ընկնի եւ չի կարող այլեւս այնքան ազդու կերպով արգելք լինել մեր հարցի վճռման, ինչ որ էր եւ եղել է միշտ։

Մեր կարծիքով տեռորներ երկրում լաւ հետեւանքի չեն հասցնել, պատճառ դառնալով խաղաղ ազգաբնակութեան կոտորման, մինչդեռ օգտակար կերպով կարող են գործադրուել Կովկասում, որովհետեւ գոնէ մինչեւ այժմ ռուս կառավարութիւնը տեռորի պատճառով մի գիւղ կամ քաղաք սրի եւ հրի ճարակ չէ դարձրել։

Քրտերի հետ համերաշխութիւն կարծում ենք որ հնարաւոր չէ. քիւրտը հայի հետ մի ընդհանուր շահ չունի որ միանայ այս վերջինին, ընդհակառակ հային։

Ներկայ դրութիւնը նպաստում է քիւրտերին ապրել իրենց դարաւոր արհեստով — աւազակութեամբ. երբ կարգ եւ ապահովութիւն հաստատուի Հայաստանում քրտերի ապրուստի միջոցը կը կտրուի։ Վերջապէս ինչ համերաշխութիւն էք սպասում մի ազգից որ իրենց մէջ դարերից ի վեր թշնամական յարաբերութեան մէջ են եղել, բաժանուած փոքր-փոքր ցեղերի։ Իսկ միւս ազգերի հետ համերաշխ գործակցութիւն հնարաւոր եւ օգտակար է, օրինակ մակեդոնացիների եւ ասորիների, որ շահ ունին մեզ հետ միանալու մեր ընդհանուր թշնամու դէմ եւ արաբների եւ ալբանացիների, եթէ կրօնական մոլեռանդութիւնը արգելք չհանդիսանայ։

Եւրոպական պրոպագանդը միշտ հարկաւոր է մանաւանդ ներկայումս. գաղտնիք չէ որ մեր հարցը քաղաքականութեան խաղալիք է։ Մեր բոլոր գործունէութիւնը երկրում անհետեւանք կ'անցնի, եթէ Եւրոպան չցանկանայ մեր դրութեան բարելաւումը. միշտ պէտք է Եւրոպային յայտնենք մեր դրութիւնը, մեր արածի մասին հաշիւ տանք, որ քաղաքական բարեյաջող առիթից կարողանանք օգտուել։

Շատ անհրաժեշտ է երկրի ուսումնասիրութիւնը ամէն տեսակէտից, մանաւանդ ռազմական տեսակէտից մի յեղափոխական հաստատութեան համար. մեր ընկերները երկրում հազիւ թէ հնարաւորութիւն եւ պատրաստութիւն ունենան այդ գործի համար։

Լաւ կը լինի երկիր ուղարկել եւրոպացի ձեռնհաս անձանց որոնք թէ երկիրը կ'ուսումնասիրեն եւ թէ երկրի դրութեան մասին թղթակցութիւններ կը գրեն եւրոպական թերթերին։

Ռազմամթերքի փոխադրութիւն կատարել որքան հնար է քիւրտ կոնտրաբանտիստների միջոցով, խորշելու համար զէնք փոխադրող խմբերի թուրքերի եւ քրտերի հետ ընդհարուելուց, որի հետեւանքը լինում է միշտ գիւղերի կործանումը եւ հայ գիւղացիների կոտորումը։

Եթէ հնարաւոր էր փոխադրել յեղափոխական գրականութիւնը (թերթի եւ բրոշիւրների հրատարակութիւնը) Ատրպատական, շարել Սալմաստում եւ տպել Թաւրիզում, այս միջոցով պրոպագանդը թէ Երկրում եւ թէ Ռուսաստանում չափազանց կը հեշտանայ եւ մեծ ծաւալ կը ստանայ։ Շատ պարզ է որ երկար չէ կարող յեղափոխական մամուլը իր գոյութիւնը ծածուկ պահել Պարսկաստանում, բայց եթէ միայն մի տարի գոյութիւն ունենայ մեծ ծառայութիւն կարող է մատուցանել գործին։

Ցարգանքներով
ՄՈՆՊԵԼԻԷԻ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ

1905 *Մարտ* 27
Մոնպելիէ

Փաստ. 1567ա-20

Ա 10.– 1905 Թ. ԽՈՐՀՈՒՐԴԻ ՕՐԱԿԱՐԳ

Օրակարգ I

1. *Ընդհանուր ժողովի արձանագրութեան խմբագրութիւնը եւ վաւերացումը*

2. *Հայաստանի արդի կացութիւնը, ժողովուրդի տրամադրութիւնը եւ դիմադրելու կարողութիւնը։*
a) *Տեղեկագիրներ*
ա) *Բարձրաւանդակի — Անդրանիկ*
բ) *Վիշապի — (Տեղեկագիրը գրուած)*
գ) *Լեռնավայրի — Վահրամ*
դ) *Կովկասի Բիւրօ եւ ինքնապաշտպանութիւն — Համօ, Մրաւ*
ե) *Ռայոնական ժողով Կովկասում — Համօ*
զ) *Արեւմտեան Բիւրօ եւ Խմբագրութիւն — Ռոստոմ*
է) *Վասպուրականի*
3. *Տակտիկա*
a) *Կեդրոնացում* *Բուն Հայաստանում*
Փոքր Ասիայի շրջանում
b) *Արշաւախմբեր*
ա) *Կովկասից* բ) *Պարսկաստանից*

c) *Տեռորներ*
ա) *Երկրի ներսը* բ) *Կովկաս*

d) *Պարտիզանական կռիւներ*

e) *Ցուցական գործունէութիւն (Երկրում եւ Կովկասում)*

f) *Հայդուկներ եւ պահեստի զինուորներ*

2) *Յարաբերութիւններ*
a) *Զանազան տարրերի հետ*
Քրտական հարեւան ցեղերի հետ
Թուրք ազգաբնակութեան (մասն. քաղաքներում)
Կովկասում թուրքերի, վրացիների եւ ռուսների հետ
b) *Կուսակցութիւնների հետ*

I *Մակեդոնացիներ (միացած ձեռնարկներ)*
Երիտասարդ թուրքեր

II *Ռուսաստանի կազմակերպութիւններ (միացած ձեռնարկներ)*
Սոցիալիստ յեղափոխականներ
Լեհական կուսակցութիւններ
Վրացական
Ֆինլանդացիներ
Սոցիալ դեմոկրատներ. Փարիզի կոնգրէ

III *Գործնական ձեռնարկ (առաջարկ)*

4) *Ռազմամթերք*
a) *Յատուկ մարմիններ (Կովկասում եւ Եւրոպայում)*
Գնումը, պահելը եւ փոխադրութիւնը

5) *Երկրի գործունէութեան վայրերի ուսումնասիրութիւնը ռազմական տեսակէտից*
a) *Յատուկ մարմին*
b) *Եւրոպայի մասնագէտ եւ ընկերներ*

6) *Դրամական հաշիւ*
a) 1904 *թ. հաշուետուութիւնը (մատեանների ստուգումը եւ Փոթորիկը)*
b) 1905 *թ. նախահաշիւը*
I *Վիշապ*
II *Լեռնավայր*
III *Վասպուրական*
IV *Կովկաս*
V *Բիւրոներ*
VI *Նոր վայրեր*
c) *Եկամուտների աղբիւրները (անդամավճարներ, հանգանակու[թիւն], երեկոյթ, Փոթորիկ)*

Օրակարգ II

7) *Դաշնակցութեան հրատարակութիւնները*
a) *Դրօշակի հրատարակութիւնը*
b) Pro Armenia
c) *Նոր պարբերականներ (Կովկասում եւ Արտասահման)*
d) *Յեղափոխական գրականութ.*
(Բրոշիւրներ, հանդէս եւրոպ. լեզուներով, հայերէն եւ թրքերէն) թարգմանիչների խնդիրը
e) *Գրականութեան փոխադրութիւն*
ա. Կովկասում
բ. Հայաստանում

f) *Յատուկ թղթակիցներ Երկրի ներսը եւ Կովկասում*
g) *Պրոպագանդիստներ եւ նրանց համար դպրոց*

8. 1905 *թ. Յեղափոխական ձեռնարկները*
ա. Վայրը, բ. Կազմը, գ. Դրամի բաշխումը,
դ. Ոյժերի դասաւորումը

9. *Վերակազմել Պատասխանատու մարմիններն ու Բիւրոները*

10. *Կովկասեան ծրագիր*
ա. Նպատակ, բ. Միջոցներ, գ. Կազմը (մարմին)
դ. Կ. Կոմիտէի եւ Բիւրոյի ու տեղական մարմիններ-ի փոխադարձ յարաբերութիւնները

Փաստ. 1567ա-15

Ա 11.–



Հ. Յ. Դաշնակցութեան Խորհուրդի նիստերը բացուեցին պաշտօնապէս Ժ[ընեւ]ում, 1905, Ապրիլ 9-ին։

Ներկայ էին՝
1.- Արեւմտեան Բիւրոյի
2.- Արեւելեան Բիւրոյի
3.- Պատասխանատու մարմնի
4.- Բարձրաւանդակի
5.- Լեռնավայրի
6.- Կովկ. ինքնապ. Կ. Կոմ.ի ներկայացուցիչները։

ՕՐԱԿԱՐԳ

I Ընդհանուր տաքտիկ
ա. Տաճկաստան
բ. Կովկաս
գ. Արտասահման

Ընդհանուր Տաքտիկ

Նիստ I, II, III – Կենտրոնացման խնդիր.

Կարդացւում են՝ գործիչներից եւ Կենտր. մարմիններից ստացուած մի շարք նամակներ՝ այդ առաջնակարգ հարցի վերաբերեալ.– Էլլէնի, Գիսակի, Կոմսի[10], Պարսկաստանի Կ.Կ.ի, Եգիպտոսի ու Ամերիկայի Կ. Կոմիտէների նամակները։ Այդ կարծիքները լսելուց յետոյ՝ Խորհուրդը իր կողմից երկար ու մանրամասն քննութեան ենթարկեց կենտրոնացման խնդիրը Տաճկահայաստանում։ Ժողովականների մի մասը հակառակւում է կենտրոնացման տաքտիկի շարունակման, նկատելով, որ մեր 15 տարուայ յեղափոխական գործունէութեան փաստերը բերած են այն համոզման՝ որ Մեծ Հայքի մէջ անկարող ենք առաջ բերել ուժեղ ու յարատեւ մի ապրստամբութիւն, որը կարողանար եւրոպական ազդու միջամտութիւն առաջ բերել – որ անցեալ տարուայ Սասնոյ շարժման եւ սահմանից անցնող խմբերի մեծ, անձնուիրական ջանքերի հետեւանքը ամենաթարմ փաստերն են նոյն համոզման ճշդութեան.– որ այն թոյլ, անտեւական շարժումները եւ ժողովրդի մէջ դիմադրական ուժի բացակայութիւնը՝ ցարդ յանգած են բացասական հետեւանքի, այն է՝ խաղաղ ազգաբնակութեան կոտորման եւայլն։

Երկար թեր եւ դէմ վիճաբանութիւնից յետոյ Խորհուրդը մեծամասնութեամբ ընդունեց հետեւեալ որոշումը.

Տաքտիկ – Կեդրոնացման հարց

ա. Ի նկատի առնելով, որ

Եւրոպական ազդու միջամտութիւն առաջ բերելու եւ հայկ. հարցը լուծելու համար անհրաժեշտ է երկարատեւ, ուժեղ դիմադրութիւն, իսկ այդպիսի դիմադրութիւնը՝ հնարաւոր է միմիայն լուրջ պատրաստութիւնից յետոյ,

Խորհուրդը որոշեց,

Խոյս տալով ամէն տեսակ կանխաժամ ու վտանգող ոեւէ ընդհարումից, զգուշաւոր, լիակատար եւ իրական պատրաստութեամբ հայ կռուող ազգաբնակութեան մի զգալի մասը զէնքով դիմադրելու կարողութեան մէջ դնելուց յետոյ՝ ընդհանուր շարժում առաջ բերել Վասպուրականում եւ Լեռնավայրում[11]։

10.- Յաջորդաբար՝ Քր. Միքայէլեան, Վարդգէս (Սերենկիւլեան) եւ Վահան Փափազեան։
11.- Կիլիկիայում։

Ամէն կերպ աշխատել յիշեալ երկու վայրերի շարժումները համաձայնեցնել իրար հետ։

Դրա հետ միասին քննութեան են դրւում Ոսկեհանքի[12] խնդիրը (նրա շարժուելու ժամանակի խնդիրը) եւ գործունէութեան նոր ծրագիրներ Փոքր Ասիայի ուրիշ հայաբնակ վայրերում, մակեդոնացիների հետ միացած ձեռնարկների խնդիրը եւ այլ երկրորդական խնդիրներ, որոնց առթիւ հետեւեալ որոշումները ձեւակերպուեցին.

բ) Ի նկատի ունենալով Վիշապի[13] ձեռնարկի ահագին կարեւորութիւնը եւ այն վտանգը նրա աջողութեան դէմ, որ կարող է առաջ բերել Ոսկեհանքում տեղի ունենալիք ցոյցը, Խորհուրդը որոշում է՝

Ոսկեհանքի ձեռնարկը կատարել անպատճառ Վիշապի ձեռնարկից յետոյ եւ յատկապէս այն դէպքում, եթէ առաջինից սպասուած հետեւանքները յօգուտ մեր դատի ի դերեւ ելնեն, չնորհիւ եւրոպական պետութիւնների անտարբերութեան։

Այս որոշման մասին Ցուցական մարմնի միջոցով յայտնել ի գիտութիւն Ոսկեհանքի գործադիր կոմիտէին։

Նիստ

Այս առթիւ Ցուցական մարմնի անդամ պ. Սաֆօ[14] բողոք յայտնեց, առաջարկելով մտցնել այն՝ Արձանագրութեան մէջ.

«Ես, իբրեւ Ցուցական մարմնի ներկայացուցիչ, ստիպուած եմ չհամաձայնել Խորհուրդի որոշման հետ՝ Ոսկեհանքի ու Վիշապի ձեռնարկների յաջորդականութեան վերաբերութեամբ, քանի որ ընկերների կարծիքը հակառակ է դրան։ Բացի այդ, Խորհրդի միջամտութիւնը այս հարցում սկզբունքով ես գտնում եմ իբրեւ խախտում Պատասխանատու մարմնի գործունէութեան ազատութեան։ Ուստի յայտնում եմ բողոք»։

Նիստ IV, V

Արեւելեան Բիւրոյի ներկայացուցչի (Համօ, Մհեր) առաջարկը*՝ հրաւիրել մի մասնագէտ-ռազմագէտ եւրոպացի, որը ուսումնասիրէր արշաւախմբի մի նախագիծ, Վասպ.ը գրաւելու համար – մերժուեց, երկար արծարծուելուց յետոյ։

Մերժող մեծամասնութիւնը անօգուտ է գտնում ծախսեր անել մի այնպիսի ուսումնասիրութեան համար, որը մեծ բան չպիտի աւելացնէր եղածին եւ որը մեծամեծ դժուարութիւնների հետ է կապուած (Թուրք կառավարութեան ուշադրութեան գրաւում եւայլն)։

* Այդ առաջարկը բխում է վերջին Կովկ. Դայոն. ժողովից։

Նիստ VI, VII

Խորհուրդը քննում է Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչ–Ռոստոմի առաջարկը – քաղաքական բարդութիւնների միջոցին (պատերազմ Թուրքիայի եւ Բուլգարիայի միջեւ, մակեդոնական խոշոր ապստամբութիւն եւայլն) լիազօրութիւն տալ Խորհրդի կազմից Վասպուրականի եւ Լեռնավայրի մարմիններին՝ մի ուրիշ Պատասխանատու մարմնի հետ համաձայնութեան գալով, ոեւէ բան ձեռնարկել, նոյնիսկ փոքրիկ ուժերով։

Մեծամասնութեամբ ընդունուեց հետեւեալ որոշումը.

9) Թուրքիոյ եւ ուրիշ ոեւէ պետութեան միջեւ լինելիք պատերազմի դէպքում փութացնել շարժումը Լեռնավայրում ու Վասպուրականում հայկական հարցը առաջ մղելու համար, նախապէս համաձայնութիւն կայացնելով երկու Բիւրոների եւ նոյն վայրերի պատասխանատու մարմինների հետ։

Նիստ VIII

Քննւում է Բարձրաւանդակի[15] ներկայացուցիչ – Անդրանիկի առաջարկը՝ սկսել գործունէութիւն Փոքր Ասիայի մի քանի անառիկ հայաբնակ վայրերում,– մասնաւորապէս Սեբաստիայում։ Անդրանիկը գտնում է այդ միանգամայն նպատակայարմար, ի նկատի ունենալով աշխարհագրական ու տեղագրական նպաստաւոր պայմանները, հայ ազգաբնակութեան բաւական ստուար տոկոսը, քիւրտ տարրի բացակայութիւնը, զէնք ներմուծելու մեծ դիւրութիւնները (Սամսոն, Օրտու, Կիրասոն, Տրիպոլի) եւ վերջապէս եւրոպական շահերի շրջանին մօտ լինելը։ Անդրանիկը առաջարկում է անյապաղ ուղարկել այն կողմերը ուսումնասիրելու նպատակով՝ երկու ինտելիգենտ եւ երկու ռազմագէտ երիտասարդներ, որոնք պիտի կազմեն տեղեկագիր,– նախագիծ գործունէութեան համար։

Խորհուրդը, հարցի բազմակողմանի քննութիւնից յետոյ, միաձայն ընդունեց հետեւեալ որոշումը՝

Նկատելով, 1) Որ Սեբաստիոյ նահանգը աշխարհագրական եւ տեղեկագրական տեսակէտից, անտառների ու լեռների առատութեամբ, առանձին յարմարութիւններ է ներկայացնում ռազմական ձեռնարկների համար,

12.- Իզմիրի։
13.- Կ. Պոլսոյ. ակնարկութիւնը հոս կը վերաբերի սուլթանի ահաբեկման ձեռնարկին։
14.- Մարտիրոս Մարգարեան, սուլթանի ահաբեկման ձեռնարկի պատասխանատուն Քրիստափորի մահէն ետք։
15.- Սասունի։

2) *Որ այդ նահանգը հայկական վեց նահանգներից մէկն է եւ ամէնից աւելի մօտ է գտնւում Եւրոպային, հետեւապէս այստեղի անցքերը աւելի դիւրութեամբ կը դառնան քաղաքական աշխարհի սեփականութիւն։*

3) *որ ծովափեայ դիրքը եւ ծովային յարաբերութիւնների դիւրութիւնը աւելի հնարաւոր է դարձնում ընդհանրապէս կապ պահպանելը եւ մասնաւորապէս անհրաժեշտ մարդկանց եւ մթերքները ներմուծումը։*

4) *որ այդ նահանգում կան զուտ հայաբնակ վայրեր, որոնք անցեալում անմասն չեն մնացել յեղափոխական պրոպագանդի մէջ եւ ազատ մնալով՝ յայտնի հարստահարութիւններից ու կոտորածներից, այժմ էլ յուսատու տրամադրութիւն ունեն։*

5) *որ այնտեղ հայաբնակ վայրերի շուրջը չկան այն բարբարոս քրտական ցեղերը, որոնք այնքան վտանգաւոր են հանդիսանում յեղափոխական գործին, հայ երկրի միւս վայրերում։*

6) *որ, վերջապէս, ապագայ ռուէֆ շարժման ժամանակ, ռուէֆ կէտում,— ցանկալի է, որ հայաբնակ ուրիշ վայրեր եւս արձագանգ տային՝ թշնամու ուժերը ցրտելու եւ աւելի մեծ տպաւորութիւն թողնելու համար քաղաքական աշխարհում՝*

Խորհուրդը որոշում է՝

Սեբաստիոյ նահանգը ընդունելով իբրեւ ապագայ շարժման վայր, առանձին ուշադրութիւն դարձնել նրա վրայ եւ ուղարկել մէկ կամ մի քանի ձեռնհաս ընկերներ, յեղափոխական տեսակէտից ուսումնասիրելու ինչպէս եւ անհրաժեշտ կազմակերպութիւններ առաջ բերելու՝ յարմարաւոր կէտերում։

Առանձին կարծիք «Տաքտիկի» մասին։

Արեւել. Բիւրոյի ներկ.— Մէրի (մերժուած, բայց իր խնդրանօք՝ արձանագրութեան մէջ անցրած)։

Ընդունելով, որ Եւրոպան միայն այն ժամանակ իրապէս եւ ուժեղ կերպով կը միջամտէ, երբ նրա քաղաքական ու տնտեսական շահերը վնասուած կը լինին Տաճկաստանում, Խորհուրդը որոշէ՝ որ

Փոխանակ թուրք կառավարութեան եւ նրա զօրքերի դէմ կռուելու, Դաշնակցութեան բոլոր ուժերը եւ միջոցները գործադրել այնպիսի ձեռնարկների վրայ, որոնցով Եւրոպայի քաղաքական ու տնտեսական շահերը կը վնասուին, աշխատիլ առհասարակ մի այնպիսի դրութիւն ստեղծել, որ Եւրոպան այլեւս հնարաւորութիւն չունենայ տնտեսապէս եւ քաղաքականապէս շահագործել թուրքիան,— մինչեւ այն ժամանակ, երբ հայկական հարցը կը ստանայ իր լուծումը։

Մակեդոնացոց հետ միացած ձեռնարկներ

Նկատելով, որ մակեդոնական հարցը արդէն գարկ է ստացել, շնորհիւ Մակեդոնիայի շարժման, մինչդեռ մեր հարցը աւելի պակաս հմայք ունի այսօր, եւ նկատելով որ միացուած, ընդհանուր ձեռնարկները կարող են նսեմացնել մեր սեփական դատը,— Խորհուրդը որոշեց մերժել այդպիսի ձեռնարկները։

Տեռորների մասին

Խորհուրդը նկատելով,

1) *որ կատարուած տեռորների շարքում կան այնպիսիները, որոնք բաւականաչափ չեն հիմնաւորուած,*

2) *որ տեղի են ունեցել մեծ չեղումներ Ը[նդհ.] Ժ[ողովի] տեռորների մասին ընդունած որոշումներից,*

Ցանձնարարում է՝

նախ ճշտութեամբ գործադրել Ը. Ժ.ի այս մասին տուած որոշումները եւ երկրորդ՝ Բիւրոների ու Պատասխանատու մարմինների միջոցով խիստ քննութեան ու պատասխանատուութեան ենթարկել չեղումներ կատարող մարմիններին։

Ահա տեռորի մասին Ընդհանուր Ժողովի որոշումները.

1) *Տեռորի կ'ենթարկուին լրտեսներ, ատուած թուրք պաշտօնեաներ եւ յայտնի թուրք ու քիւրտ հայատեաց չարագործներ, թէ Երկրի մէջ եւ թէ Երկրից դուրս։*

2) *Տեռորներ կատարելու իրաւունք կը տրուի արտասահմանի մէջ՝ կենտրոնական մարմիններին, իսկ Երկրի մէջ կոմիտէներին ու պատասխանատու մարմիններին՝ հետեւեալ սահմանափակումներով, այն է՝ իւրաքանչիւր մարմին, թէ արտասահմանի եւ թէ Երկրի մէջ պարտաւոր է իր վճռի վերաբերմամբ ստանալ մօտակայ կամ աւելի բարձր մարմնի համաձայնութիւնը։*

3) *Տեռորի վճիռները պէտք է տրուին իւրաքանչիւր դէպքի համար մշակուած որոշումով։*

4) *Բացի վերոյիշեալ պայմաններէն հայերի վերաբերեալ վճիռները պէտք է հիմնուին նաեւ պատճառաբանուած արձանագրութեան վրայ, որ կը ղրկուի կազմակերպութեան արխիւը։*

Բիւրօ — խմբագրութիւն

Խորհուրդը որոշեց՝

1) *Արտօնել խմբագրութեան եւ Բիւրոյին «Դրօշակը» դարձնել երկշաբթեայ։*

2) *Ձեռնարկել մի եռամսեայ հանդէսի հրատարակութեան։*

3) *Ուժ տալ այս տարի բրոշիւրների հրատարակութեան՝ յեղափոխական եւ սոցիալական բովանդակութեամբ, պատասխանելու համար այն մեծ պահանջին որ կայ ժողովրդի մէջ։*

4) *Աշխատել տարուայ ընթացքում հրատարակել այն գրքերը, որ նախագծուել են Ընդհ. Ժողովի կողմից։*

Ղարիբի[16] հրաժարականի հարց

Մերժել Ղարիբի հրաժարականը եւ իր նիւթական ապահովութեան մասին կանգնիլ Ընդհ. Ժող.ի Բիւրոյի պրոպագանդիստ-անդամների թոշակի մասին տրուած որոշումների վրայ։

*
* *

«Դրամ» կոմիտէի հարցը[17]

Խորհուրդը որոշեց՝

Դադարեցնել «Դրամ» կոմիտէի կողմից նոր դիմումները, մաքրել հին հաշիւները, առանց ծայրայեղ միջոցների դիմելու։

Արտակ[արգ] Ընդհ. Ժողով հրաւիրելու հարց

Ի նկատի ունենալով Կովկասի դէպքերի արտակարգ բնաւորութիւնը, Խորհրդի մշակած նախագծի վաւերացման կարեւորութիւնը եւ Տաճկահայաստանի վերաբերեալ հաւանական փոփոխութիւնը,

Խորհուրդը որոշեց՝ արտակարգ Ընդհ. Ժող. հրաւիրել 1905 թ. վերջը[5]։

Կովկասահայ խնդիր

Նկատելով՝

1. *Որ վերջին Ընդհ. Ժողովից յետոյ Ռուսաստանի եւ մասնաւորապէս Կովկասի յեղափոխական շարժումները ստացել են անսպասելի լայն ծաւալ։*

2. *Որ ռուսական բռնապետութիւնը արտաքին թշնամու եւ յեղափոխական ու ընդդիմադիր տարրերի հարուածների տակ զգալապէս թուլացել է,*

3. *Որ համայն Ռուսաստանի քաղաքական փոփոխութիւնների սկզբում՝ Կովկասը պէտք է բարձրացնէ իր ձայնը*

4. *Որ ներկայ պատմական րոպէի ստիպողականութիւնը թոյլ չի տալիս սպասել նոր Ընդհ. Ժողովին՝ Կովկասեան գործունէութեան ծրագիրը մշակելու եւ հաստատելու համար*

5. *Որ, բացի այդ, Կովկասեան գործունէութեան որոշակի ծրագիրը անհրաժեշտ է կռուի ներկայ պայմաններում՝ համաձայնութեան գալու համար միւս գործող կուսակցութիւնների հետ,*

Խորհուրդը որոշեց՝

ա. Կովկասեան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունէութեան, մշակել ծրագիր, համաձայն կովկ. ռայոնական ժողովում արտայայտուած տրամադրութեան եւ ուղարկել դաշնակցական կովկասեան մարմիններին՝ ժամանակաւորապէս ղեկավարուելու այդ ծրագրով, թողնելով նրա վերջնական հաստատութիւնը առաջիկայ Ընդհ. Ժողովին։

Վլատիկաւկասի կոմ[իտէ]ի Կեդրոն. Կոմիտէ հռչակուելու առաջարկ.—

Խորհուրդը լսելով Վլատիկաւկասի կոմ.ի Կեդր. Կոմիտէ դառնալու առաջարկը, նկատի առնելով Արեւելեան Բիւրոյի համաձայնութիւնը եւ նկատելով նաեւ որ այդ կոմիտէի դրամական հասոյթները համապատասխանում են Ընդհ. Ժողովի՝ կեդրոնական կոմիտէների համար ընդունած ցենզին,

Խորհուրդը որոշեց՝

Ճանաչել Վլատիկաւկասի կոմիտէն իբրեւ Կեդրոնական Կոմիտէ[18]։

Եգիպտոսի կոմիտէների հարցը որոշեց թողնել Արեւմտ. Բիւրոյի կարգադրութեան։

Վարդոյի հարց[19]

Խորհուրդը լսելով Բալկանեան Կ. Կոմիտէի պ. Վարդոյի վերաբերմամբ, նոյն կոմիտէի կազմած տեղեկագրի հետ որոշեց՝

Գտնելով Բալկանեան Կենտ. Կոմիտէի եզրակացութիւնը կատարելապէս արդարացի, յայտնել պ. Վարդոյին, որ նա ոչ մի իրաւունք չունի իր մօտ պահել Դաշնակցութեան պատկանող գումարը եւ պահանջել նրանից՝ անմիջապէս Արեւմտեան Բիւրոյին հասցնել այդ գումարը։

16.- Աւ. Ահարոնեանի։

17.- Այլ խօսքով՝ «Փոթորիկ»ի՝ բռնի հանգանակութեան ձեռնարկի։

18.- Նորակազմ Կեդր. Կոմիտէն պիտի ստանար «Ցլատ» անունը։

19.- Վարդ – Պատրիկեան, Վառնայի եռօրեայ «Շարժում» թերթի խմբագիրը, որ յետագային նիւթական զեղծումներու եւ բարոյական սայթաքումներու հետեւանքով պիտի արտաքսուէր եւ ահաբեկուէր։

Բ.– 1908 ԹՈՒԱԿԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Փաստ. 1567բ-1

Բ 1.– ՀԱՐՑԵՐ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

(Ուղարկուած ընկեր Մարի հետ)

1908 թ. Մարտին Թիֆլիս գումարելի Դաշնակցութեան Խորհուրդի ժողովին օրակարգի նիւթ դարձնելու նպատակով, Արեւմտեան Բիւրոն իր ներկայացուցիչի՝ Տէր Մարտիրոսեան Միքայէլի (Մար) հետ կ'ուղարկէ հետեւեալ հարցերը։

I *Ռուս-Թուրք պատերազմին մեր բռնելիք դիրքը — Տաճկաստանի եւ Կովկասի հայ ժողովրդին զինման գործը.— Նախազգուշութիւններ.— Ջանալ հեռու պահել այդ պատերազմը։*

II *Դաշնակցութեան եւ պարսիկ յեղափոխականների յարաբերութիւնները.— Պարսկաթուրք պատերազմին մեր բռնելիք դիրքը.— Պարսկաստանի մէջ մեր մասնակցութիւնը խիստ քողածածուկ, ինչպէս նաեւ պատերազմի պահուն.— Օգտուիլ ներկայ առիթէն զէնքի գնման եւ տեղափոխման գործը գլուխ բերելու համար։*

III *Կաթողիկոսական ընտրութեան մեր անուղղակի մասնակցութիւնը — ոչ յանուն կուսակցութեան.— Ռայոնական ժողովի որոշումը կաթողիկոսական ընտրութեան մասին կը հակասէ մեր քաղաքականութեան*[20]*։*

IV *Ռայոնական ժողովները չտան որոշումներ որ հակասեն Դաշն. ընդհ. քաղաքականութեան.— Չհրատարակել Ռայոնականի ամէն որոշումները պարագաները նկատի առնելով։*

V *Յարաբերութիւնները Արեւել. Բիւրոյին եւ Վանի [կեդր.] Կոմիտէին միջեւ.— Տպաւորութիւնը վատ.— Պատճառները այդ լարուած յարաբերութեան.— Վերջ տալ այդ դրութեան.— Վանի ընկերներու բռնած դիրքը համապատասխա՞ն է Ընդ. ժողովի որոշած գործելակերպին եւ վճիռներուն։— Համերաշխութեան գաղափարը զինաթափ ընելու չէ մեր գործունէութիւնը, միջազգային ոեւէ պատահականութեան պատրաստ գտնուելու համար։*

VI *Մեր ֆինանսական ներկայ վիճակը.— միջոցներ ապահովելու մեր ֆինանսական դրութիւնը։*

VII *Սովեալներու հանգանակութիւնները փութացնել։*

VIII 1. *Մեր եւ Երիտ. Թուրքերու յարաբերութիւնները.— 2. Տալ բացառապէս գործնական բնաւորութիւն։ 3. Որոշել միջազգային քաղաքական տեսակէտով այդ յարաբերութիւնները։*

IX *Մեր եւ միւս հայ կուսակցութիւններու յարաբերութիւնները։*

X *Առաջիկայ Ընդհանուր Ժողովը կայացնել որոշեալ ժամանակին։*

XI *Մէկ ընկեր* Comité Permanent-*ին համար*[21]

XII *Լրացնել Տեմէնը*[22] *գէթ երկու ընկերով։*

XIII *Նոր ճիգեր թափել Լիսի*[23] *շրջանի գործունէութիւնը աւելի ամրապնդելու համար, իբր քաղաքական արդի պարագաներուն համապատասխանող խնդիր։*

1908 *Մարտ*
Ժընեւ

20.- Ակնարկութիւն Դեկտ. 1907 – Յունուար 1908 թ. Թիֆլիս գումարուած Կովկասի Ռայոնական ժողովին, որ բանաձեւ ընդունած էր «ոչ մի մասնակցութիւն» չունենալ «առաջիկայ կաթողիկոսական ընտրութիւններին»։ 1908 թ. Մարտի Դաշնակցութեան Խորհուրդի որոշումով մասնակցութեան հարցը կը ձգուէր ընկերներու ազատ հայեցողութեան։

21.- Ֆրանսերէն մնայուն կոմիտէ, որ սկզբունքով կազմուած պէտք է ըլլայ հայեւթուրք, ինչպէս նաեւ Օսմ. Թուրքիոյ այլազգի անդամներէն։

22.- Չորրորդ Ընդհ. ժողովի կողմէ կենտրոնի կոչուած եռանդամ մարմին (Անդրանիկ, Ակնունի, Վահագն Տաթեւեան), Թուրքիոյ մէջ ցուցական-տեռորական գործի համար (Տես «ՆԻՒԹԵՐ», Զ. հատոր, էջ 202-212)։

23.- Կ. Պոլսոյ։

Փաստ. 1567բ-2

Բ 2.– Տեղեկագիր

Արեւմտեան Բիւրոյին
Ներկայացուած Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանրական
— 1908 —

Ընդհանուր Ժողովը վերջանալէն անմիջապէս յետոյ, 1907 Յունիսի սկիզբը, Բիւրո-խմբագրութեան նորընտիր անդամներէն իրենց պաշտօնին գլուխն էին ընկերներ Ակնունին եւ Մինասեան։ Ընկեր Վարանդեան տկարութեան պատճառով գիւղ կը բնակէր. ընկեր Յոնան Օգոստոս 20-ին միայն կրցաւ վերադառնալ Ժընեւ։ Աշնան սկիզբը Վարանդեան վերադարձաւ Ժընեւ, ուր շարունակեց իր պաշտօնը շատ կարճատեւ կերպով, որովհետեւ ստիպուեցաւ երթալ Իտալիա առողջութիւնը դարմանելու, ուրկէ կանոնաւոր կը շարունակէր իր աշխատակցութիւնը Դրօշակին։

Ընկեր Ակնունի մինչեւ Յոնանի գալը եւ անկէ յետոյ շարունակեց իր գործօն մասնակցութիւնը Բիւրոյի գործերուն, մինչեւ Փարիզի համաժողովը, ուրկէ վերադարձին, մեկնեցաւ Վիեննա՝ զբաղելու իրեն յանձնուած գործով։

Այս պահուն Արեւմտեան Բիւրոյի մէջ կը մնան երեք ընկերներ՝ Յոնան, Մինասեան եւ Գալֆայեան[24]*. Վարանդեանը հարաւային Իտալիա կը գտնուի դեռ։*

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

1) *Լահէի Խաղաղութեան կոնգրէին դիմումը*
2) *Շտուտգարտի Սոցիալիստական կոնգրէին դիմումը*
3) *Օսմանեան ընդդիմադիր տարրերու կոնգրէ։*

Լահէի խաղաղութեան կոնգրէի դիմումը.—

Արեւմտեան Բիւրոն հարկ եղած նիւթական եւ բարոյական աջակցութիւնը եւ դիւրութիւնը չխնայեց պատգամաւորութեան, որ պաշտօն ունէր հայկական հարցը ներկայացնել յիշեալ կոնգրէին։ Երեք հայ պատգամաւորներուն ընկերացան Ֆրանսացի մեր բարեկամներէն Վիկտոր Բերար եւ Պիեռ Քիյառը։ Պատգամաւորութիւնը իր պաշտօնը կատարեց համերաշխ գործունէութիւնով մը։ Արդիւնքը յայտնի է։

Սոյն պատգամաւորութեան համար ծախք եղաւ 1575 ֆր.։

Շտուտգարտի Սոցիալիստական կոնգրէն.— Սոյն կոնգրէին մեր կողմէն պաշտօնապէս մասնակցեցան ընկերներ Վարանդեան, Ակնունի, Լունկեւիչ[25]*։*

Համաժողովին մասնակցելէ առաջ Բրիւքսէլի մէջ սոցիալիստական բիւրոյին հետ երկար թղթակցութիւն ունեցանք պարզելով մեր ծրագրի էութիւնը։

Տաճկահայաստանի համար առանձին հայկական ֆրակսիոնի առաջարկը յետաձգուեց մինչեւ յառաջիկայ նիստ, երբ Դաշնակցութեան պատշաճ մարմինը պիտի ներկայացնէր մինչեւ 6 ամիս մանրամասն զեկուցագիր տաճկահայ կազմակերպութիւններու մասին։

Արեւմտեան Բիւրոն այդ զեկուցագիրը պիտի հաղորդէ միջազգային բիւրոյին, երբ երկրէն սպասուած տեղեկագիրը իր ձեռքը հասնէր, որ դժբախտաբար մինչեւ այսօր չէ ստացուած։

Արեւմտեան Բիւրոն այդ ձեռնարկին համար իր կողմէն ծախսած է 817,50 ֆրանք։

Օսմանեան ընդդիմադիր տարրերու կոնգրէն.—

1907 Նոյեմբերին[26] *սկիզբները Ահմէտ Ռիզա Ժընեւ գալով դիմեց մեզի՝ որ իրեն միջոցներ հայթայթենք որոշ ձեռնարկի համար։ Նոյն նպատակով անցեալ ամառուան սկիզբները՝ Ժընեւ եկած էր Ռիզայի ընկերներէն մէկը, որ այժմ Վիշապ*[27] *կը գտնուի։ Օգտուելով առիթէն Ահմէտ Ռիզային յայտնեցինք մեր Ընդհ. Ժողովի որոշումը, կոնգրէի մը մասին, որուն հաւանութիւն տուաւ իրեն յատուկ վերապահումներով եւ մեր խմբագրատան մէջը պատրաստուեցաւ Նախագիծ մը այն գլխաւոր եւ էական կէտերու մասին, որոնք պիտի վիճաբանուէին կոնգրէին մէջ, եւ կազմուեցաւ ցանկը այն կուսակցութիւններու, որոնք պիտի մասնակցէին։*

24.- Յար. Գալֆայեան Արեւմ. Բիւրոյի անդամ չէր, բայց կը վարէր Բիւրո-խմբագրութեան գործավար-քարտուղարի պաշտօնը։

25.- Արարատեան Սարգիսի ծածկանունը (Արարատսկի)։

26.- Պէտք է ըլլայ Սեպտեմբերի վերջ, Հոկտեմբերի սկիզբները. Ժընեւէն Արեւելեան Բիւրոյին յղած 2 Հոկտեմբեր իր նամակին մէջ Ակնունի կը գրէ «երկու օր է այստեղ է Պարիզից եկած Ահմէտ Ռիզան» (տես «ՆԻՒԹԵՐ», Զ. հատոր էջ 218)։

27- Կ. Պոլիս։

Քիչ յետոյ ընկեր Ակնունին մեկնեցաւ Պարիզ, տեսակցելու նաեւ «Թէրագագը»ի կուսակցութեան հետ եւս նախապատրաստական գործողութիւնը կատարելու։

Մեր եւ Թուրքերու երկար բանակցութիւններէ յետոյ, որոշուած էր հրաւիրել Թուրքիոյ բոլոր դժգոհ տարրերու մասնակցութիւնը։ Այդ ոգով դիմում եղաւ յայտնի բոլոր մարմիններուն։

Ցոյները չմասնակցեցան եւ ձեռնպահ մնացին, յայտնելով որ Թուրքիոյ մէջ իրենք առանձին յեղափոխական մարմին չունին։

Մակեդոնացիք ըստ երեւոյթին Սարաֆովի[28] մահուան պատճառով, չմասնակցեցան եւ ոչ ալ որոշ դիրք մը բռնեցին։

Ալպանացիները եւս ներկայացուցիչ չունեցան, սակայն յետոյ յայտնած են որ իրենք համաձայն են։

Արաբները նմանապէս չունէին ներկայացուցիչ։

Գալով հայ յեղ. կուսակցութիւններուն՝ մեր Բիւրոն առանձին առանձին դիմում ըրաւ իւրաքանչիւրին։ Հիները՝ [հնչակեան] խոյս տուին եւ մերժեցին առարկելով մեր Ընդհ. Ժողովին իրենց համերաշխութեան առաջարկի դիմումը, երկրորդ՝ թէ իրենց գործունէութենէն դուրս է Օսմանեան համապետական բարենորոգումի խնդիրը։

Երկու վերակազմեալ հատուածներէն՝ նորերը մերժեցին՝ հաւանականաբար հիներու ազդեցութեան տակ. իսկ հին վերակազմեալները նախապէս Զոպանեանը պատգամաւոր ընտրած էին որ մերժեց. իսկ երկրորդ պատգ[ամաւոր]ին [մինչեւ]հասնիլը արդէն ժողովը վերջացած էր։

Արտասահմանի մէջ հանգանակութեան խնդիրը.—

Արեւմտեան Բիւրոն, հակառակ իր կամքին, ցարդ չէ կրցած ձեռնարկել հանգանակութեան Եւրոպայի հայ գաղութին մէջ, որովհետեւ Ընդհ. Ժողովին կողմէ այդ նպատակին համար առաջարկուած մարմինը ինչ-ինչ պատճառներով չէ կրցած կազմուիլ։ Այս կէտի մասին հարկ է դրական կարգադրութիւն ընել եւ փութացնել ձեռնարկը։

Հրատարակութիւններ.— Ընդհանուր Ժողովէն ասդին՝ Դրօշակի խմբագրութիւնը լոյս ընծայած է հետեւեալ հրատարակութիւնները. 1- Ծրագրի մէկ մասը, 2- Կանոնագիրը, 3- Programme minimum[29], 4- Շտուտգարտի սոցիալիստ. կոնգրէին ղրկուած տեղեկագիրը, 5- Մեր ծրագրի ռուսերէն թարգմանութիւնը. 6- Գէորգ Զաուշի կենսագրութիւնը, 7- Պարիզի համաժողովին Ցայտարարագիրը։ Շուտով լոյս կը տեսնէ Արարատսկիի[25] գրքոյկը երբ յօդուածները կը վերջանան։

Դրօշակ.— Դրօշակը կը հրատարակուի, ըստ սովորականին, ամիսը մէկ անգամ, բացի Նոյ-Դեկտ. ամիսներէն, որոնց թիւերը միացած լոյս տեսած է։

Դրօշակի քանակը 7000-ի իջեցուցինք՝ իբր նորմալ թիւը։

Դրօշակ կը ղրկուին հետեւեալ վայրերը՝

Ամերիկա	1734	*օրինակ*
Եւրոպայի մէջ	200	»
Բուլգարիա	540	»
Ռումանիա	160	»
Եգիպտոս	350	»
*Սուրիա- Լեռնավայր**	15	»
*Վիշապ*** [27]	3	»
Ափրիկեան Տրիպոլիս	3	»
Սեւ ծովի ափերը	57	»
Ռուսաստան եւ Կովկաս (ծրարներով)	120	»
Տաճկաստանի պաշտօն. մարդկանց (հիւպ.)	75	»
Պարսկաստան	2600	»

Ցունիս-Ցուլիս 3200 *օրինակ Մ[արսէյլ]ի գծով*

Կովկաս:

Օգոստոս	1000	»	»
Սեպտեմբեր	1400	»	»
Հոկտ.	1500	»	»
Նոյ.-Դեկտ.	840	»	»
Ցունուար 908	500	»	*Տելդայի*[30] *գծով*
Փետրուար	1000	»	»

Մ[արսէյլ]ի ճամբով Նաւ[ահանգիստ][31] ուղարկելը թողած ենք անոր համար, որովհետեւ տեղ չէին հասներ եւ մեզի ալ չէին իմացներ։

Պարսկաստան մուտքի արգելքը վերցնել տուինք հարկ եղած դիմումները ընելով։

Դրօշակի բովանդակութեան մասին՝ նկատելի է թէ՝ տեսական յօդուածներու եւ թէ երկրէն եկած թղթակցութիւններու պակասը։

Այդ մասին մէկէ աւելի անգամներ դիմած ենք մեր ձեռնհաս ընկերներու աշխատակցութիւնը հրաւիրելով, բայց ապարդիւն։ Իսկ երկրի թղթակցութիւնները կը պահուին կովկասեան թերթի համար. շատ տեղերէ ալ Ռազմիկը[32] ինք կը հրատարակէ, որով Դրօշակը իբր կենտր. օրգան զրկուած է եւ աղքատ։ Մենք յաճախ ստիպուած ենք արտատպել լուրերը. այնպէս որ՝ թղթակցութիւնը կը կորսնցնէ իր շահեկանութիւնը եւ կը տուժէ Դրօշակի հմայքը։

28.- Բորիս Սարաֆով, մակեդոնացի յայտնի յեղափոխական գործիչ։

29.- Ֆրանսերէն՝ նուազագոյն ծրագիր (պահանջներ)։

30.- Աղեքսանդրիայի։

31.- Պաթում։

32.- Ֆիլիպէ հրատարակուող դաշնակցական եռօրեայ թերթ՝ Ռուբէն Զարդարեանի խմբագրութեամբ։

*) *Ուղղակի բացի Տելդայից ուղարկուածները*

**) *Ուղղակի բացի Բալկանից ուղարկուածները*

Ֆինանսական վիճակ.— Արեւմտ. Բիւրոն իր նախագծուած ծախքերէն զատ՝ արտակարգ ծախքեր ունեցաւ մօտ եւ հեռաւոր ընկերներու երթեւեկութեան պատճառով եւայլն։

Ընդհակառակը մեր հասոյթը չատ աննշան է, գրեթէ ոչինչ։

P[ro] A[rmenia]-*ի համար ամսէ ամիս կանոնաւոր կ'ուղարկենք* 800 *ֆրանք հրատարակութեան ծախքը եւ Քիյառի վարձքը միասին։*

Արեւմտեան Բիւրոյի անդամներուն ամսաթոշակները 150-*էն* 175-*ի բարձրացուցինք, նկատի ունենալով տնտեսական պայմանները։*

Ռակետային[33] *խնդիրը.— երկարատեւ փորձերը չունեցան սպասուած արդիւնքը։ Մեր ընկերները կը բացատրեն մանրամասն այդ մասին։*

Աթէնքի գէնքերու խնդիրը.— Մեր ընկերը, Վահրամ[24]*, յատուկ Աթէնք գնաց եւ քիչ զոհողութիւնով կարգադրեց այդ խնդիրը, ծախսելով հոն գտնուած նիւթերը* 5501 *ֆրանքի։ Այժմ կը մնայ հոն մօտ* 1000 *ֆր.ի առարկաներ պահ դրուած։*

Ընդհ. Ժողովի ատենագրութիւնները.— Ընդհ. Ժողովի որոշման համաձայն, Բերլինէն յատկապէս հրաւիրեցինք ընկեր Ասլանը[34]*, որ այս պահուս կ'աշխատի կարգի բերել եւ ամփոփել ատենագրութիւնները առանձին լոյս ընծայելու համար։*

Մեր յարաբերութիւնները միւս հայ կուսակցութիւններու հետ.—

Կոնգրէի առթիւ մեր դիմումները անոնց՝ անյաջողութեան հանդիպելէ յետոյ, ոչ մէկ յարաբերութիւն չենք ունեցած։

Հին եւ նոր Վերակազմեալ Հնչակեաններու միջեւ համերաշխութիւն կայացած է. այդ բանին համար Մուրադը եւ Տամատը[35] *աշխատած են։ Եգիպտոս այցելելէն յետոյ՝ Մուրադը անցաւ Ամերիկա, ուր, այնտեղի ընկերներու գրածին նայելով, ոչ մէկ խանդավառութիւն առաջ չէ բերած ժողովրդին մէջ, բայց անոր ներկայութիւնը՝ իրենց լքուած շարքերուն մէջ՝ կարողացած է թեթեւ ոգեւորութիւն պատճառել։ Ինչպէս կ'երեւի այդ* tournée-*ն*[36] *աւելի նիւթական ձեռք բերել է քան բարոյական յաղթանակ մը։ «Զայն»ականները բոլորովին կազմալոյծ վիճակ մը կը ներկայացնեն, ըստ մեր ընկերներուն, մանաւանդ որ ձերբակալուած է «Զայնի»*[37]*խմբագրական մարմինը։*

Ցանկալի է [համաձայնութիւն] ստեղծել կուսակցութիւններու մէջ որ հնարաւոր ըլլայ գոնէ երկուստեք մամուլի ոճը փոխել։ Այդ ձեւի գրուածքներ, մանաւանդ հնչակեան, անբարոյականացնող ազդեցութիւն կը ձգէ մեր ժողովրդի վրայ, ստեղծելով ծանր եւ վտանգաւոր մթնոլորտ։

Ժորիա[38]*.— Անակնկալ կերպով ազատելով վերադարձած է Անվերս, ուր բժիշկներու խորհրդով գիւղ մը քաշուած է՝ դարմանուելու համար։ Արեւմտ. Բիւրոյին գրած նամակին մէջ նոյն ոգեւոր տրամադրութիւնը կը յայտնէ։*

Իր մասին պտտած լուրերը, հաւաստի աղբիւրներէ քաղուած մեր լուրերուն նայելով, ճիշդ չեն։ Քիյառը[39] *լաւագոյն վկայութիւններ քաղած էր անոր մասին։*

Վերադառնալէն յետոյ դարմանուելու համար, ուղարկեցինք 500 *ֆրանք։*

Վարդոյի խնդիրը[40]*.— Հանգամանքները նկատի առնելով, հրահանգած էինք Բալկանի մարմինին, որ յետաձգեն Վարդոյի մասին վճիռը։ Սակայն Վառնայի մարմինը ինքնագլուխ կը գործադրէ վճիռը, առանց Կ. Կոմիտէին իմացնելու եւ անոր կամքին հակառակ։ Մենք խիստ դիտողութիւն ըրինք Կ. Կոմիտէին եւ պահանջեցինք որ անկարգապահները պատժուին։ Այս անկարգապահութեան դէպքն էր որ պատճառ եղաւ տեռորի հրատարակման ուշացումին։*

Բալկանի Կ. Կոմիտէն կը խնդրէր որ Արեւել. Բիւրոյի անունով հրատարակենք մահագործադրումը, բայց մենք առակախ ձգած ենք՝ սպասելով Արեւել. Բիւրոյի համաձայնութեան։

Բանտարկեալներու օժանդակութեան խնդիրը.—

Բանտարկեալներու համար օգնութիւններ կը խնդրուին զանազան կողմերէ։ Գրեցինք մեր շրջանի Կ. Կոմիտէներուն որ շրջաններու բաժնեն բանտարկեալները, եւ Կարմիր խաչի եւ անուղղակի միջոցներով փութան օգնութիւն հասցնել բանտարկեալ ընկերներու։ Մենք ցուցակ մը ունինք բանտարկեալ ընկերներու բայց թերի է։ Ուստի պարտք դրինք նաեւ կոմիտէներուն վրայ, որ մեզի մանրամասն եւ լրացուցիչ ցանկը պատրաստեն բոլոր բանտարկեալ ընկերներուն՝ իրենց գտնուած վայրերուն անունով։ Ցանկալի է որ Արեւելեան Բիւրոն եւս իր շրջանի բանտարկեալներուն համար նմանօրինակ ցուցակ մը պատրաստէ։

33.- Հրթիռային, հրթիռներու։

34.- Յարութիւնեան Մարտիրոս. չշփոթել Ռուբէն Զարդարեանի հետ, որ նոյնպէս ծանօթ էր Ասլան ծածկանունով։

35.- Համբարձում Պոյաճեան եւ Միհրան Տամատեան հնչակեան ծանօթ ղեկավար դէմքեր։

36.- Ֆրանսերէն՝ շրջապտոյտ։

37.- Թիֆլիս հրատարակուող հնչակեան շաբաթաթերթ։

38.- Եղլտրզի մահափորձին մասնակից պելճիքացի յեղափոխական։

39.- Pro-Armenia-ի խմբագրապետ։

40.- Վարդո, Վարդ-Պատրիկեան , որ իր կատարած նիւթական իւրացումներուն եւ բարոյական սայթաքումներուն պատճառաւ ահաբեկման վճիռ ստացած էր Չորրորդ Ընդհ. Ժողովին կողմէ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՇՐՋԱՆ

Բալկանեան Կ. Կոմիտէի տեղեկագրին համեմատ Թորգոմ-Քրիս-Սարհատ- Սիրականի խումբը՝ մտքերու չփոթութիւն առաջ բերած են այդ շրջանի ծրագրային հարցերու շուրջը[41]*. սակայն ժամանակին կարելի եղած է հակազդել եւ շարժումը խեղդել սաղմին մէջ: Բուկարեստի մէջ 15-20 հոգիէ դժգոհներու խումբ մը կայ՝ յիշեալ անհատներու ազդեցութիւնով, որուն համար Բալկանեան շրջանային ժողովը կտրուկ միջոց ձեռք պիտի առնէ:*

Բալկանի շրջանը՝ շնորհիւ գրաւոր եւ բերանացի պրոպագանդին, եռանդուն հետաքրքրութիւն եւ գիտակցութիւն ցոյց կու տայ ծրագրային հարցերուն:

Սակայն այդ վայրին մէջ — Ռումանիա եւ Բուլգարիա — զգալի է պրոպագանդայի եւ գործիչի հարցը:

Բալկ. Կ. Կոմիտէն կը դնէ հետեւեալ առաջարկները.

1- Գործնական միջոցներ ձեռք առնել, որ արտասահմանի գաղթավայրերը ի վիճակի ըլլան իրենց ծոցէն արտադրել իրենց պրոպագանդիստները եւ գործիչները:

2- Ատոր համար, տարուան արձակուրդներուն պրոպագանդայի շրջուն դասախօսութիւններ հաստատելը լաւ կը լինէր եթէ Կովկասի կարողագոյն ընկեր մը յանձն առնէ առաջիկայ ամրան երեք ամիսները անցնիլ Վառնա, Ռուսճուգ եւ Ֆիլիպէ եւ մեթոտաւոր ծրագրով պրոպագանդի դասախօսութիւններ կատարէ, թէ նոր պրոպագանդիստներ հասցնելու եւ թէ դաշնակցական մասսային դաստիարակութեանը համար:

Բալկանը 1907-ին սերտ յարաբերութիւն պահպանած է Վիշապի, Ոսկեհանքի, Մոցի եւ Փոքր-Հայքի մէկ քանի վայրերուն հետ[42]*, փոխադրելով հրատարակութիւններ եւ պահելով առանձին նամակագրութիւն:*

1907-ին Կարմիր-խաչի ջանքերով փոխադրած են Վիշապի, Բաղէշի եւ Մուշի բանտարկեալներուն 1243 ֆրանք, Վանի սովեալներուն ղրկած են 1500 ֆրանք՝ «Ռազմիկի»[32] *բացած հանգանակութենէն գոյացած:*

Զինուորական վարժարան.— Փակուած 1907 Յուլիսին. աշակերտները ցրուած են Կովկաս, Ամերիկա, Ռումանիա, Եգիպտոս եւ Բուլգարիա:

Դպրոցի համար ընդհանուր ծախք եղած է 87,434 ֆրանք եւ 25 սանտ. որուն 54,429 ֆր. 25 սանտիմը տնտեսած է Կ. Կոմիտէի միջոցով: Այդ գումարի մէջ չեն Կովկասէն եկող ընկերներու մինչեւ Բուլղարիա տրուած ճանապարհածախսերը: Այդ գումարէն զեղչելու է նաեւ 50 հրացաններու արժէքը, որ այժմ տրամադրելի են, ինչպէս նաեւ ծախսուած կարգ մը իրեղէններու արժէքը, որոնց գումարը կը հասնի մօտաւորապէս 4923,15 ֆր.ի:

Տեղը.— 1907-ին կատարուած են երկու հատ, Զէյթեան եւ Վարդօ:

Բողոք.— Նկատի ունենալով Թորգոմ-Քրիս-Սիրական-Սարհատի թշնամական եւ քանդիչ ընթացքը Բալկ. Կ. Կոմիտէն կը պահանջէ կտրուկ եւ աներկդիմի որոշում կայացնել անոնց դէմ եւ յայտարարել հրապարակով պաշտօնապէս, արտաքսելով Դաշնակցութենէն:

Բիւրջէջ.— Դաշն. Ընդհանուր Ժողովի կայացուցած որոշումներէն ասդին, բալկանեան շրջանի չէզոք հասարակութիւնը — մասնաւորապէս վաճառականական դասակարգը — անհոգ ու անտարբեր ընթացք ցոյց կու տան դէպի հանգանակութիւնը: Այդ հանգանակութիւնները Բալկանի բիւրջէջի մէջ կարեւոր տեղ կը բռնէին:

Հակառակ սոյն աննպաստ պայմաններուն Բալկ. շրջանի 1907-ի մուտքը եղած է 36,000 ֆրանք. 6000ը տեղական ծախքերուն համար զեղչելով 30,000 մուտք ունեցած է: Ցոյս ունին որ յառաջիկայ շրջանին այդքան կամ աւելի հասոյթ ունենան:

Այժմ Բալկ.ի Կ. Կոմիտէն պատրաստ դրամ ունի իր դրամարկղի մէջ 10851,30 ֆրանք:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆ

Ամերիկայի շրջանի տեղեկագիրը կու տայ մեզի հետեւեալ պատկերը 1907 տարուան համար:

Կոմիտէներու թիւը 48, անդամ 1005:

Գործիչի հարց.— հակառակ իր դիմումներուն ցարդ չէ ունեցած յարմար եւ կարող գործիչ: Պահանջ կայ 4 գործիչի:

Որոշումներ.— Կը պահանջէ Կ. Կոմիտէն ընկերներ ճարել Եւրոպա կամ Կովկաս, որոնք «Հայրենիքի»[43] *միջոցով Դաշնակցութեան ծրագրին հասարակական եւ քաղաքական հայեացքները լուսաբանեն:*

1907-ի Պատգ. ժողովը որոշած է Ամերիկայի առաջնակարգ թերթերու աշխատակիցներուն վճարելով՝ հայկական հարցը պրոպագանդ ընել տալ Միացեալ Նահանգներու մէջ:

Նմանապէս գրաւոր եւ բերանացի պրոպագանդ ընել հոն եղող թուրք եւ քիւրտ գաղթականներուն մէջ, գիտակցութեան բերելու գանոնք:

Յատուկ վարչութիւն մը հաստատած է «Հայրենիքը» կանոնաւոր ընթացքի մէջ դնելու համար եւ որոշեր է դրամապէս քաջալերել Հայրենիքի աշխատակիցները եւ 2000 տոլար փոխառութիւն ընել «Հայրենիքի» սեփական տպարան մը ունենալու համար:

Ամերիկայի Կ. Կոմիտէն կ'առաջարկէ Զինուորական վարժարան հիմնել Ամերիկայի մէջ:

Պատգ. ժողովը ազատութիւն կու տայ իր կոմիտէներուն, տեղին պայմաններուն համաձայն, գաղտնի կամ բաց հանգանակութիւն կատարել:

Կ'առաջարկէ նաեւ ընկերներ ղրկել՝ երկրին մէջ արտագաղթի առջեւը առնելու համար:

Պատգ. ժողովը կը համակրի կովկասահայ եւ տաճկահայ դատի անբաժանելիութեանը եւ Ընդհ. Ժողովի որոշումները քաղաքական եւ տնտեսական հողի վրայ՝ կեանքի պահանջներուն հասուցնելու արդիւնք նկատելով զանոնք:

Դրամական հաշիւ.— 1906 Դեկտեմբերէն մինչեւ 1907 Դեկտ. 25 Ընդհ. մուտք եղած է 14762 տոլար եւ 73 սենտ: 1906էն մնացորդ $ 9653,01 եւ ելք $ 13348,33: 1908-ին գանձին մէջ պատրաստ ունին $ 11067,41:

ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆ

Եգիպտոսի մարմինները կազմալոյծ եւ խառնաշփոթ վիճակ մը կը ներկայացնէին 1907-ի սկիզբները: Այդ շրջանը լուրջ եւ դրական օգտակարութիւն մը ունեցած չէր, ընդհակառակը միշտ անհաստատ եւ ապարդիւն շրջան մը եղած է, որով կարգ մը ընկերներ, անյոյս, կ'առաջարկեն լուծել եւ չիք յայտարարել զանոնք: Բայց նկատի ունենալով Եգիպտոսի դիրքին, իբր կըռուան կարեւորութիւնը Երկրի հետ մեր յարաբերութիւններուն համար, Հանգոյցը[44] *ղրկեցինք իբր ժամանակաւոր գործիչ, որ լուծեց հին ենթակոմիտէն, որ ապօրէն ընթացքին մէջ գտնուած էր «դժգոհներու կողմը անցնելով եւ ինքնագլուխ կարգադրելով կուսակցութեան դրամը եւ Ընդհանուր Ժողովի որոշումներու դէմ բողոքի կոչեր հրատարակելով» Սարհատի, եւն.ի ազդեցութեան տակ:*

Նոր ենթակոմիտէ կազմուելով, այժմ գործերը քիչ շատ նորմալ դրութեան մտած են:

Երկու օժանդակ մարմին եւս կազմուած են՝ անկախ Եգիպտոսի տեղական մարմիններէն, որոնք Լեռնավայրի եւ Բաստ[45] *շրջաններով պիտի զբաղին: Նկատի ունենալով անոնց դեռ անփորձ վիճակը, այդ շրջաններուն յատկացուած բիւրժէէն մաս մաս սկսանք դնել անոնց տրամադրութեան տակ: Անոնք ներս*[46] *ղրկած են երկու երեք ընկերներ:*

Որովհետեւ Հանգոյցը ժամանակաւոր է, Եգիպտոսի ընկերները կը պահանջեն յարմար գործիչ մը, նոյնպէս խմբագիր մը, թերթ հիմնելու համար, որուն միջոցները կը խոստանան հայթայթել: Բայց մենք թերթի հրատարակութեան համամիտ չենք:

Դժգոհները.— Կեդրոնը Ալեքսանդրիա է, որուն մէջ են Առանձար, Աղասէր, Սարհատ[47] *եւն: Այդ դժգոհները՝ Յաջորդաբար՝ Սերեմնեան Արտաշէս (Թորգոմ), Ֆեներճեան Քրիս, Յակոբեան Ժան-Ժագոպ (Սարհատ) եւ Սիրական Պոյաճեան, որոնք դժգոհ Ընդհ. Ժողովի որոշումներէն եւ յատկապէս ընկերվարական ծրագրի պաշտօնական որդեգրումէն՝ կը փորձին խլրտումներ առաջացնել շարքերուն մէջ:*

Յաջորդաբար՝ Պոլսոյ (Վիշապ), Իզմիրի (Ոսկեհանք), Պէյրութի (Ծոց) եւ Սեբաստիա-Մալաթիոյ (Փոքր Հայք) մէջ:

Ամերիկայի դաշնակցական կազմակերպութեան պաշտօնաթերթ:

Ամերիկայի Կ. Կոմիտէն կ'առաջարկէ Զինուորական վարժարան հիմնել Ամերիկայի մէջ:

Պատգ. ժողովը ազատութիւն կու տայ իր կոմիտէներուն, տեղին պայմաններուն համաձայն, գաղտնի կամ բաց հանգանակութիւն կատարել:

Կ'առաջարկէ նաեւ ընկերներ ղրկել՝ երկրին մէջ արտագաղթի առջեւը առնելու համար:

Պատգ. ժողովը կը համակրի կովկասահայ եւ տաճկահայ դատի անբաժանելիութեանը եւ Ընդհ. Ժողովի որոշումները քաղաքական եւ տնտեսական հողի վրայ՝ կեանքի պահանջներուն հասուցնելու արդիւնք նկատելով զանոնք:

Դրամական հաշիւ.— 1906 Դեկտեմբերէն մինչեւ 1907 Դեկտ. 25 Ընդհ. մուտք եղած է 14762 տոլար եւ 73 սենտ: 1906էն մնացորդ $ 9653,01 եւ ելք $ 13348,33: 1908-ին գանձին մէջ պատրաստ ունին $ 11067,41:

ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆ

Եգիպտոսի մարմինները կազմալոյծ եւ խառնաշփոթ վիճակ մը կը ներկայացնէին 1907-ի սկիզբները: Այդ շրջանը լուրջ եւ դրական օգտակարութիւն մը ունեցած չէր, ընդհակառակը միշտ անհաստատ եւ ապարդիւն շրջան մը եղած է, որով կարգ մը ընկերներ, անյոյս, կ'առաջարկեն լուծել եւ չիք յայտարարել զանոնք: Բայց նկատի ունենալով Եգիպտոսի դիրքին, իբր կըռուան կարեւորութիւնը Երկրի հետ մեր յարաբերութիւններուն համար, Հանգոյցը[44] *ղրկեցինք իբր ժամանակաւոր գործիչ, որ լուծեց հին ենթակոմիտէն, որ ապօրէն ընթացքին մէջ գտնուած էր «դժգոհներու կողմը անցնելով եւ ինքնագլուխ կարգադրելով կուսակցութեան դրամը եւ Ընդհանուր Ժողովի որոշումներու դէմ բողոքի կոչեր հրատարակելով» Սարհատի, եւն.ի ազդեցութեան տակ:*

Նոր ենթակոմիտէ կազմուելով, այժմ գործերը քիչ շատ նորմալ դրութեան մտած են:

Երկու օժանդակ մարմին եւս կազմուած են՝ անկախ Եգիպտոսի տեղական մարմիններէն, որոնք Լեռնավայրի եւ Բաստ[45] *շրջաններով պիտի զբաղին: Նկատի ունենալով անոնց դեռ անփորձ վիճակը, այդ շրջաններուն յատկացուած բիւրժէէն մաս մաս սկսանք դնել անոնց տրամադրութեան տակ: Անոնք ներս*[46] *ղրկած են երկու երեք ընկերներ:*

Որովհետեւ Հանգոյցը ժամանակաւոր է, Եգիպտոսի ընկերները կը պահանջեն յարմար գործիչ մը, նոյնպէս խմբագիր մը, թերթ հիմնելու համար, որուն միջոցները կը խոստանան հայթայթել: Բայց մենք թերթի հրատարակութեան համամիտ չենք:

Դժգոհները.— Կեդրոնը Ալեքսանդրիա է, որուն մէջ են Առանձար, Աղասէր, Սարհատ[47] *եւն: Այդ դժգոհները՝ Յաջորդաբար՝ Սերեմնեան Արտաշէս (Թորգոմ), Ֆեներճեան Քրիս, Յակոբեան Ժան-Ժագոպ (Սարհատ) եւ Սիրական Պոյաճեան, որոնք դժգոհ Ընդհ. Ժողովի որոշումներէն եւ յատկապէս ընկերվարական ծրագրի պաշտօնական որդեգրումէն՝ կը փորձին խլրտումներ առաջացնել շարքերուն մէջ:*

Յաջորդաբար՝ Պոլսոյ (Վիշապ), Իզմիրի (Ոսկեհանք), Պէյրութի (Ծոց) եւ Սեբաստիա-Մալաթիոյ (Փոքր Հայք) մէջ:

Ամերիկայի դաշնակցական կազմակերպութեան պաշտօնաթերթ:

Յաջորդաբար՝ Սերեմնեան Արտաշէս (Թորգոմ), Ֆեներճեան Քրիս, Յակոբեան Ժան-Ժագոպ (Սարհատ) եւ Սիրական Պոյաճեան, որոնք դժգոհ Ընդհ. Ժողովի որոշումներէն եւ յատկապէս ընկերվարական ծրագրի պաշտօնական որդեգրումէն՝ կը փորձին խլրտումներ առաջացնել շարքերուն մէջ:

Յաջորդաբար՝ Պոլսոյ (Վիշապ), Իզմիրի (Ոսկեհանք), Պէյրութի (Ծոց) եւ Սեբաստիա-Մալաթիոյ (Փոքր Հայք) մէջ:

Ամերիկայի դաշնակցական կազմակերպութեան պաշտօնաթերթ:

Ամերիկայի Կ. Կոմիտէն կ'առաջարկէ Զինուորական վարժարան հիմնել Ամերիկայի մէջ:

Պատգ. ժողովը ազատութիւն կու տայ իր կոմիտէներուն, տեղին պայմաններուն համաձայն, գաղտնի կամ բաց հանգանակութիւն կատարել:

Կ'առաջարկէ նաեւ ընկերներ ղրկել՝ երկրին մէջ արտագաղթի առջեւը առնելու համար:

Պատգ. ժողովը կը համակրի կովկասահայ եւ տաճկահայ դատի անբաժանելիութեանը եւ Ընդհ. Ժողովի որոշումները քաղաքական եւ տնտեսական հողի վրայ՝ կեանքի պահանջներուն հասուցնելու արդիւնք նկատելով զանոնք:

Դրամական հաշիւ.— 1906 Դեկտեմբերէն մինչեւ 1907 Դեկտ. 25 Ընդհ. մուտք եղած է 14762 տոլար եւ 73 սենտ: 1906էն մնացորդ $ 9653,01 եւ ելք $ 13348,33: 1908-ին գանձին մէջ պատրաստ ունին $ 11067,41:

ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆ

Եգիպտոսի մարմինները կազմալոյծ եւ խառնաշփոթ վիճակ մը կը ներկայացնէին 1907-ի սկիզբները: Այդ շրջանը լուրջ եւ դրական օգտակարութիւն մը ունեցած չէր, ընդհակառակը միշտ անհաստատ եւ ապարդիւն շրջան մը եղած է, որով կարգ մը ընկերներ, անյոյս, կ'առաջարկեն լուծել եւ չիք յայտարարել զանոնք: Բայց նկատի ունենալով Եգիպտոսի դիրքին, իբր կըռուան կարեւորութիւնը Երկրի հետ մեր յարաբերութիւններուն համար, Հանգոյցը[44] *ղրկեցինք իբր ժամանակաւոր գործիչ, որ լուծեց հին ենթակոմիտէն, որ ապօրէն ընթացքին մէջ գտնուած էր «դժգոհներու կողմը անցնելով եւ ինքնագլուխ կարգադրելով կուսակցութեան դրամը եւ Ընդհանուր Ժողովի որոշումներու դէմ բողոքի կոչեր հրատարակելով» Սարհատի, եւն.ի ազդեցութեան տակ:*

Նոր ենթակոմիտէ կազմուելով, այժմ գործերը քիչ շատ նորմալ դրութեան մտած են:

Երկու օժանդակ մարմին եւս կազմուած են՝ անկախ Եգիպտոսի տեղական մարմիններէն, որոնք Լեռնավայրի եւ Բաստ[45] *շրջաններով պիտի զբաղին: Նկատի ունենալով անոնց դեռ անփորձ վիճակը, այդ շրջաններուն յատկացուած բիւրժէէն մաս մաս սկսանք դնել անոնց տրամադրութեան տակ: Անոնք ներս*[46] *ղրկած են երկու երեք ընկերներ:*

Որովհետեւ Հանգոյցը ժամանակաւոր է, Եգիպտոսի ընկերները կը պահանջեն յարմար գործիչ մը, նոյնպէս խմբագիր մը, թերթ հիմնելու համար, որուն միջոցները կը խոստանան հայթայթել: Բայց մենք թերթի հրատարակութեան համամիտ չենք:

Դժգոհները.— Կեդրոնը Ալեքսանդրիա է, որուն մէջ են Առանձար, Աղասէր, Սարհատ[47] *եւն: Այդ դժգոհները՝ Յաջորդաբար՝ Սերեմնեան Արտաշէս (Թորգոմ), Ֆեներճեան Քրիս, Յակոբեան Ժան-Ժագոպ (Սարհատ) եւ Սիրական Պոյաճեան, որոնք դժգոհ Ընդհ. Ժողովի որոշումներէն եւ յատկապէս ընկերվարական ծրագրի պաշտօնական որդեգրումէն՝ կը փորձին խլրտումներ առաջացնել շարքերուն մէջ:*

Յաջորդաբար՝ Պոլսոյ (Վիշապ), Իզմիրի (Ոսկեհանք), Պէյրութի (Ծոց) եւ Սեբաստիա-Մալաթիոյ (Փոքր Հայք) մէջ:

Ամերիկայի դաշնակցական կազմակերպութեան պաշտօնաթերթ:

41.- Յաջորդաբար՝ Սերեմնեան Արտաշէս (Թորգոմ), Ֆեներճեան Քրիս, Յակոբեան Ժան-Ժագոպ (Սարհատ) եւ Սիրական Պոյաճեան, որոնք դժգոհ Ընդհ. Ժողովի որոշումներէն եւ յատկապէս ընկերվարական ծրագրի պաշտօնական որդեգրումէն կը փորձին խլրտումներ առաջացնել շարքերուն մէջ:

42.- Յաջորդաբար՝ Պոլսոյ (Վիշապ), Իզմիրի (Ոսկեհանք), Պէյրութի (Ծոց) եւ Սեբաստիա-Մալաթիոյ (Փոքր Հայք) մէջ:

43.- Ամերիկայի դաշնակցական կազմակերպութեան պաշտօնաթերթ:

44.- Աղբալեան Նիկոլ:

45.- Լեռնավայրը Կիլիկիան է. Բաստը Սեբաստիոյ շրջանը:

46.- Այսինքն՝ Երկիր, այս պարագային՝ Սեբաստիոյ շրջանը:

47.- Կիլիկիոյ հին գործիչներ. յաջորդաբար՝ Գույումճեան Միսաք, Յակոբ Աղասէր–Մելլեի եւ Յակոբեան Ժան-Ժագոպ:

48.- Դաշն՝ Հալէպի կուսակցական ծածկանունը:

49.- Մուրատեան Մարթին:

դութիւն մը կայ՝ որ մեծ եռանդ ցոյց կու տայ յեղափոխական գործին եւ խիստ կը հետաքրքրուի ծրագրային հարցերով։ Իրենց պահանջին վրայ ղրկեցինք հայ եւ օտար լեզուներով կարգ մը գիտական եւ սոցիալիստական գրքեր. ինչպէս նաեւ «Ցառաջի» ամբողջ մէկ գրադարանը։ Անոնցմէ ոմանք, ուսումնին աւարտած եւ երկրացի ըլլալով, դիւրութիւններ ունին երկրի ներսերը երթալ, մանաւանդ Փոքր-Հայքի շրջանը եւ Լեռնավայր եւ օգտակար ըլլալ գործին։ Անոնք կանոնաւոր յարաբերութիւն կը պահպանեն երկրի հետ, գրքեր, թերթեր փոխանցելով եւ թղթակցութիւններ ստանալով։ Ցոյս կայ որ այդ երիտասարդները — այժմ դեռ անփորձ — մօտ ապագային, եռանդուն դեր խաղան, եթէ փորձ եւ հմուտ մէկը երթայ կազմակերպէ եւ ուղղութիւն տայ։

Դաշտի շրջան.— Հովիտէն[50] ստացուած տեղեկագիրէ մը կը քաղենք հետեւեալը։

Հովիտ կան 6 խումբ 25 ընկերներով, ունինք փոքրաքանակ զէնք։ Դրամները կը գործածենք զէնքի գնումի։

Հովիտի, Կարմիր լեռան, Քարձորի[51] կոմիտէները մերժած են Մարթինի իրենց միանալու առաջարկը։ Ոմանք մինչեւ իսկ չեն հաճած պատասխանել անոր նամակին։ Կարմիր լեռը՝ կը բողոքէ որ առանց իրենց հաւանութիւնը առնելու Մարթինը կոչին տակ իրենց անունը ստորագրած է։

Այդ շրջանին մէջ նորազուարթ ոգեւորութիւն մը սկսած է առաջ գալ, որուն պէտք է հոգ տանիլ եւ զարկ տալ, կարող անհատներ ղրկելով հոն։

Բաստի շրջան[45].— Այս շրջանին գործունէութեան աւելի զարկ տալու համար Գահիրէի մէջ կազմուած է յատուկ օժանդակ մարմին մը հինգ հոգիէ բաղկացած, որոնց 2-ը Երկիր մտած էին։

Այդ շրջանին մէջ հինգ տարիէ ի վեր գոյութիւն ունեցած են դաշնակց. խումբեր, 150-200 հոգիէ բաղկացած, որոնք անկազմ եւ անղեկավար մնացած են իրենց գործչին՝ Եփրեմեանի հեռանալէն ի վեր։ Մեծ յոյս կայ, որ շատնան եթէ գործօն եւ դրական քայլեր առնուին։

Արդէն Բալկանէն գնացեր է ընկեր մը այդ շրջանին մէջ՝ իր ծննդավայր Տ[իվրիկ] ուր հաւաքելով ցիր ու ցան ուժերը կազմակերպած եւ նոր գործունէութեան հիմը դրած է։ Իրենց ղրկած տեղեկագիրը (1907 Դեկտ. 5 (հ. տ.) թուակիր) հետաքրքիր է եւ խոստմնալից։

Այդ շրջանին գործունէութիւնը աւելի արագացնելու եւ ընկերները թարմ ու ոգեւոր պահելու համար հարկաւոր է Խորշը (Սամս[ոն]) կայան ընել, որպէսզի կարողանան շուտ շուտ յարաբերութիւն պահել դրսի հետ եւ ստանալ յեղափ. գրականութիւն։

Անհրաժեշտ է Խորշի մէջ հաստատել իբրեւ կարեւոր եւ մօտիկ դուռը այդ շրջանին փորձ ընկեր մը, որ կարողանայ կանոնաւոր յարաբերութեան միջոցներ ստեղծել ամբողջ Փոքր-Հայքի եւ Արտասահմանի միջեւ։

Այս պահանջը յատկապէս դրած են նաեւ Բալկանէն եւ Փոքր-Հայքէն։

Մենք արդէն գրած ենք մեր շրջաններուն, որ այդպիսի մէկը տրամադրելի ընեն. լաւ կ'ըլլայ որ Արեւել. Բիւրոն եւս նկատի ունենայ այդ կէտը եւ եթէ կարելի է փութացնել մէկը։

Մինչեւ այդ՝ Ծոցի միջոցաւ կը կատարենք մեր յարաբերութիւնները Փոքր-Հայքի հետ՝ թէեւ քիչ երկար կը տեւէ։

Խորշ եղած ընկերոջ հետ կը թղթակցինք բայց միշտ վերապահօրէն։

Առաջարկ կայ Փոքր-Հայքի յատկացուած բիւրժէն բարձրացնել։

Սեւ-Վիշապ[53] (Տիգր[անակերտ]).— Ծոցի միջոցով կանոնաւոր յարաբերութեան մէջ ենք։ Հոն անձնաւորութիւն մը մեզի ընդարձակ տեղեկութիւն կու տայ երկրի անցքերի մասին եւ կ'աշխատի Գ[իսակ]ի բուժման[52]։ Գ.էն ուղղակի նամակ ստացանք քանի մը օր առաջ, տրամադրութիւնը լաւ է. ինք կը գտնուի Սեւ Վիշապ եւ հաւանականօրէն շուտով կը փոխադրուի դարձեալ Մեր[տին])։

Գ. տեղեակ է իր բժշկութեան փորձերուն[54], բայց կը վարանի յանդուգն քայլ առնել, մինչեւ որ բացարձակ ապահով չըլլայ։ Գործին յաջողութեանը համար տրամադրած ենք մօտ 120 ոսկի՝ իրեն եւ 5 ընկերներու համար՝ վճարելի յաջողութենէ յետոյ։

Պարիզ.— Պարիզի մէջ վերակազմուեցաւ տեղական դաշնակց. մարմինը, որ կազմալուծուած էր։ Առ այժմ Ե[րիտասարդ] թուրքերու հետ կը պահպանեն ընկերական յարաբերութիւններ եւ եթէ հարկ ըլլայ կը կազմեն կոնֆերանսներ եւ միտինգներ։

Արեւմտ. Բիւրոյի ռայոնի վիճակի եւ գործունէութեան ամփոփ պատկերն է, որ խոշոր գծերով կը ներկայացնենք Խորհրդին առանց շատ մանրամասնութեան մէջ մտնելու։ Գործերու ընթացքին ծանօթ եղող մեր ընկերները լրացուցիչ բացատրական տեղեկութիւնները կարող են տալ ձեզի։

Մեր կողմէն տրուելիք հարցերը արդէն ուղարկած ենք։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

50.- Հովիտը կուս. ծածկանունն էր Այնթապի։

51.- Կարմիր լեռը՝ Սուէտիոյ շրջանի Անտիոք քաղաքը, իսկ Քարձորը՝ Կիւրին քաղաքը։

52.- Սերենկիւլեան Յովհաննէս, ծանօթ նաեւ Վարդգէս ծածկանունով. Օսմանեան խորհրդարանի ապագայ յայտնի երեսփոխանը։ 1903 թ. Յունուարէն ի վեր բանտարկեալ էր նախ Վան, ապա փոխադրուած Մերտինի եւ Տիգրանակերտի բանտերը։ Սահմանադրութեան հռչակումէն ետք ազատութիւն պիտի գտնէր։

53.- Տիգրանակերտ-Տիարպեքիր։

54.- «Բժշկութեան փորձերուն», կուսակցական գաղտնագրութեան մէջ կը նշանակէ՝ բանտէն փախցնելու փորձերուն։

Փաստ. 1567բ-3

Բ 3.– ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

(1908 Թ. ՆՍՏԱԾՐՋԱՆ)



1908 թ. Խորհրդի նիստերը սկսուեցին Մարտի 12 — 25ին Մեծ քաղաքում։

Համաձայն «Կանոնագրի» մասնակցում էին՝

ա) Արեւելեան Բիւրոն — ներկայացուցիչ ընկեր Անտոն[55]։

բ) Արեւմտեան Բիւրոն — ներկայացուցիչ ընկեր Մար[56]։

գ) Կովկասեան Ռայոնական ժողովի կողմից երկու հոգի՝ ընկ. Ռոստոմ եւ Մհերեան[57]։

դ) Վասպուրականի մարմինը — ներկայացուցիչ ընկեր Տիգրան։

ե) Տեմէն պատասխանատու մարմինը — ներկայացուցիչ ընկեր Ակնունի։

Սպասւում է դարձեալ մի ընկեր երկրից — Վասպուրականից։ Արեւմտեան շրջանի ռայոնական ժողովը կազմուած չլինելով՝ չկարողացաւ ներկայացուցիչ ունենալ Խորհուրդում։

*
* *

Ցանկանալով խնդիրները ենթարկել ըստ կարելոյն շատ ընկերների քննութեան, Խորհուրդը որոշեց հրաւիրել՝

1) Արեւելեան Բիւրոյի բոլոր անդամներին, որոնք գտնուում են ժողովի վայրում։

2) Մօտակայ այն Կ. Կոմիտէների ներկայացուցիչներին, որոնք լիովին համապատասխանում են որոշուած ցենզին։

3) Գործիչ ընկերներին, որոնք այլ եւ այլ ճիւղերում կարող են օգտակար լինել իրենց խորհուրդներով ու ցուցմունքներով,— ընկ. Դումանին, Աւերեանին եւ Մուրադին [Սեբաստացի]։

4) Ուրիշ ընկերներ, առանձին նիստերի համար, այս կամ այն կոնկրէտ հարցը քննելիս։

55.- Սիմոն Զաւարեան։

56.- Միք. Տէր Մարտիրոսեան։

57.- Մհեր, Մհերեան՝ Համօ Օհանջանեան։

*
* *

Արեւելեան Բիւրոյի տուած բացատրութիւններից պարզուեց, որ Կովկասեան Կ. Կոմիտէներից եւ ոչ մէկը ներկայումս լիովին չի համապատասխանում «Կանոնագրով» պահանջուած ցենզին. այդ պատճառով Խորհուրդը որոշեց չհրաւիրել Կ. Կոմիտէներից ներկայացուցիչներ եւ դրա հետ միասին յանձնարարեց Արեւելեան Բիւրոյին՝ անմիջապէս գրել շրջանի Կ. Կոմիտէներին եւ նրանց յատուկ ուշադրութիւնը հրաւիրել այդ հանգամանքի վրայ։

Որոշեց՝

ա) Բոլոր հրաւիրեալներին տալ խորհրդակցական ձայն։

բ) Արձանագրութեան մէջ մտցնել միմիայն որոշումները եւ բանաձեւերը։

գ) Պատրաստել օրակարգ եւ ղեկավարուել նրանով։

դ) Նիստերի քարտուղարութիւնը յանձնել ընկերներ Մարին եւ Ջէմսին։

ե) Նախագահութիւնը կատարել հերթով։

ՄԵՐ ԴԻՐՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԷՊՔՈՒՄ

Այդ խնդրին Խորհուրդը նուիրեց մի շարք նիստեր, մասնակցութեամբ հրաւիրուած ձեռնհաս ընկերների, ձգտելով հարցը լուսաբանել, թէ քաղաքական եւ թէ բուն մարտական տեսակէտներից։ Վիճաբանութիւնները պտտում են հետեւեալ գլխաւոր կէտերի շուրջը. 1) Ինչ է մեր պահանջը. 2) Ինչ ուժեր ունենք ներկայումս. 3) Ինչպէս կազմակերպել մեր ինքնապաշտպանութիւնը՝ Կովկասում եւ Թուրքիայում։ 4) Մեր ուրոյն քաղաքական տակտիկը։ 5) Մեր յարաբերութիւնները այլ ազգերի եւ կուսակցութիւնների հետ։

Ընդունուեց հետեւեալ բանաձեւը՝ համարելով պատերազմը, մանաւանդ նուաճողական, վնասակար աշխատաւոր մասսաների շահերի համար, նկատի ունենալով այն հոգեբանութիւնը, որ ստեղծւում է պատերազմի ժամանակ՝ մանաւանդ այն վայրերում, որոնք, ինչպէս Կովկասումն է եւ Թուրքաց Հայաստանը կը հանդիսանար իբրեւ կռուի բեմ, եւ հաշուի առնելով այդ վայրերում գոյութիւն ունեցող ազգային փոխադարձ յարաբերութիւնները.

Խորհուրդը որոշեց՝

1- .....

2- .....

3- .....[58]

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Խորհուրդը ընդունեց, որ պէտք է առաջադրել պատերազմի ստեղծած նոր պարագաների միջոցին հետեւեալ անմիջական պահանջները՝

1) Ինքնավարութիւն հայկական նահանգների, մեր ծրագրի գծած սահմաններում։

2) Քաղաքական իրաւունքների կատարեալ հաւասարութիւն Թուրքիայի միւս շրջաններում։

3) Ազգային-կուլտուրական ինքնավարութիւն համայն Թուրքիայում։

4) Վերադարձումն հայերի այն հողերի, որոնք խլուել են [18]77-78 թ.-ից սկսած։

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Քննելով ինքնապաշտպանութեան հարցը, որ կըրկնակի սուր կերպարանք կարող է ստանալ պատերազմի դէպքում, Խորհուրդը յանգեցաւ հետեւեալ եզրակացութեան՝

ա) Դաշնակցութիւնը ձեռնարկում է ինքնապաշտպանութեան կազմակերպման հայ ժողովուրդի բոլոր խաւերից, պահելով գործի ընդհանուր ղեկավարութիւնը կուսակցութեան ձեռքում (10 ձ[այն], 2 ձ. ձեռնպահ)։

բ) Գործերը աջող տանելու համար՝ յանձնարարւում է Բիւրոյին՝ ա) զօրացնել եղած մարմինները եւ չեղած վայրերում նորերը կազմել, ստեղծելով այդ մարմիններին կից ռազմական յատուկ սեկցիաներ (միաձայն)։

գ) Նկատի ունենալով ներկայ բացառիկ պայմանները, Խորհուրդը հրահանգում է Բիւրոյին՝ կազմակերպել յատուկ շտաբ որոշ լիազօրութիւններով (8 ձ., 4 ձ. ձեռնպահ)։

գ) Խորհուրդը յանձնարարում է ինքնապաշտպանական մարմնին հարկաւոր դէպքում պաշտպանութիւն ցոյց տալ եւ միւս ազգերի խաղաղ տարրերին։

ՈՒԺԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ

Երկարօրէն քննելով մեր բռնելիք դիրքը Թուրքիայում, պատերազմի ժամանակ, եւ գալով այն եզրակացութեան՝ որ կազմակերպութիւնը այնտեղ լուրջ քայլեր պիտի անի, Խորհուրդը որոշեց՝

1) Ուժերը կենտրոնացնել Վասպուրականում։

2) Յարաբերութեան մէջ մտնել հարեւան ցեղերի ներկայացուցիչների հետ, համոզել նրանց միասին գործել, բռնապետական ռեժիմը խորտակելու նպատակով ձգտել կազմակերպել այլ եւ այլ գործնական ձեռնարկներ, ինչպէս օրինակ միացած ինքնապաշտպանութիւն, պայքար հարկերի եւ հարկային սիստեմի դէմ, կռիւ դեմոկրատիկ եւ մասսաներին մատչելի պահանջների համար եւ այլն։

3) Ռազմիկ ոյժեր եւ ղեկավարներ Թուրքիա ուղարկելու նպատակով՝ կազմակերպել մի վարժոց, որտեղ կարելի լինի 2-3 ամսուայ ընթացքում պատրաստել 40-50 մարզիչներ։

Բացի դրանից, նկատի ունենալով Շամի ներկայ կրիտիկական վիճակը[59], որոշուեց՝

1) Պատրաստի պահել զէնքի եւ ռազմամթերքի պաշար սահմանին մօտ վայրերում։

2) Նկատի ունենալ ղեկավար ընկերներ։

3) Սպասել Շամի ընկերոջ գալուն եւ վարուել համաձայն նրա բերած ցուցմունքներին։

58.- Կիտաւոր բաժնին համար տեսնել փաստ. 1567ա-27ը։

59.- Շամը Վասպուրականն է. կ'ակնարկուի Վանի զինապահեստներու գրաւման հետեւանքով թուրք կառավարութեան ստեղծած սարսափի մթնոլորտին։

ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԻՄԱԴԻՐ ՏԱՐՐԵՐԻ ՀԵՏ

Լսելով մանրամասն զեկուցումը Պարիզում 1907 թուին կայացած կոնգրէսի մասին, Խորհուրդը յանգեցաւ հետեւեալ եզրակացութեան.

ա) Շարունակել նոյն ուղղութեամբ քայլեր անել՝ աւելի եւս ամրապնդելու այն համերաշխութիւնը, որ ստեղծուած է Թուրքական արդի ռեժիմին դէմ գործող այլ եւ այլ տարրերի, կուսակցութիւնների միջեւ։

բ) Համաձայն Ընդհանուր Ժողովի ընդունուած որոշման, պատրաստել յեղափոխական այլ եւ այլ ձեռնարկներ՝ Թուրքիայում գործող քաղաքական կազմակերպութիւնների, գլխաւորապէս մակեդոնացիների, Թուրքերի եւ ալբանացիների հետ, չմոռանալով գործակցութեան բերել երկու կարեւոր տարրեր եւս, ինչպէս են յոյներն ու ասորիները։

գ) Աչքի առաջ ունենալով եր[իտասարդ] Թուրքերի մի մասի որոշ տրամադրութիւնը, թիւրմացութիւններ տեղիք չտալու համար չեշտել, որ ձեռնարկելով Պարիզի կոնգրէսի որոշումների իրականացման, Դաշնակցութիւնը չի հրաժարւում իր «Ծրագրի» որեւէ կէտից եւ շարունակելու է ապագայում հետապնդել նրա իրականացման կեանքի մէջ։

դ) Միջկուսակցական ժողովների որոշումները պարտաւորեցուցիչ համարել Դ-ն համար միայն այն պարագային, երբ որոշումները արւում են միաձայն։

ե) Ընտրել եւ ուղարկել յատուկ ընկեր, որը իբրեւ անդամ Permanent comité-ի[21], պիտի շարունակի համերաշխ գործակցական աշխատանքներ, կոնգրէսի որոշած սահմաններում։

զ) Լրացնել Լիսի[60] Պատասխանատու մարմնի կազմը ծրագրուած ձեռնարկները կազմակերպելու համար։

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

I- Լսելով զեկուցումը Թուրք-պարսկական կոնֆլիկտի առթիւ տեղի ունեցած բանակցութիւնների մասին պարսիկ սահմանադրական-յեղափոխական ներկայացուցիչների եւ Արեւել. Բիւրոյի ներկայացուցչի միջեւ, Խորհուրդը որոշեց.

ա) Հաստատել կայացած համաձայնութիւնը.

բ) Օգտուել այդ համաձայնութիւնից՝ յեղափոխական պատրաստութիւններ տեսնելու եւ կազմելու մարտական խմբեր, որոնց նպատակը պէտք է լինի պաշտպանել տեղական ազգաբնակութիւնը, առանց ցեղի, խորութեան եւ օգնութեան հասնել, եթէ պէտքը ներկայանայ Թուրքաց սահմանագլխում ապրող հայերին։

գ) Կարիք ներկայացած դէպքում զէնք բերել տալ յիշեալ խմբի աջակցութեամբ մեր պէտքերին գործածելու համար։

Դրա հետ միասին որոշուեց արտօնել ընկեր Արբակին[61] ստորագրել վերեւ յիշած բանակցութիւնների արձանագրութիւնը, թոյլ տալով, եթէ հարկ լինի, մի քանի փոփոխութիւններ, առանց սակայն դուրս գալու նախնական պայմանագրութեան սահմաններից։

II. Լսելով զեկուցումն այն խորհրդակցութեան մասին, որ տեղի է ունեցել Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցչի եւ բոլգար-մակեդոնական մի քանի կարեւոր գործիչների միջեւ,

Խորհուրդը որոշեց՝

1) Լիազօրութիւն տալ Արեւմտեան Բիւրոյի կամ Լիսի Պատասխանատու մարմնին շարունակել այդ բանակցութիւնները, ընդգծուած սահմաններում, մակեդոնական յեղափոխական կոմիտէի գիտութեամբ եւ համաձայնութեամբ՝

2) .....

III. Լսելով զեկուցումն այն բանակցութիւնների մասին, որ սկսուել են ընկել Բրիկովի եւ Ա-ի միջեւ, Խորհուրդը որոշեց՝

ա. .....

բ. .....

գ. .....

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ՝ ԴՐԱՄԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Լսելով կազմակերպութեան դրամական հաշիւների զեկուցումները եւ նկատելով եկամուտների զգալի նուազումը կուսակցական շրջանում, Խորհուրդը որոշեց՝

ա) Հրաւիրել բոլոր մարմինների յատուկ ուշադրութիւնը կազմակերպութեան եկամուտների կանոնաւորման անհրաժեշտ պահանջի վրայ։

բ) Պարտաւորեցնել բոլոր դաշնակցականներին վճարելու «Կանոնագրով» որոշուած տուրքը.

գ) Դարձեալ շեշտել, որ արգելուած [է] բռնի հանգանակութիւնը, խստիւ գործադրելով Ընդհանուր Ժողովի տուած հրահանգները այդ մասին։

դ) Ձեռնարկել մի յատուկ հանգանակութիւն յօգուտ Թուրքահայ դատի։

ե) Յանձնարարել երկու Բիւրոներին դիմել հանգանակութեան յօգուտ կուսակցութեան։

60.- Կ. Պոլսոյ. կ'ակնարկուի Տեմէն-Ցուցական-տեռորակամ մարմնի ծրագրած ձեռնարկներուն։

61.- Արբակ, Արբակ Ոշտունի ծածկանունն է Յովսէփ Միրզայեանի, որ Ռոստոմի հետ մասնակցած էր հայ եւ պարսիկ բանակցութիւններուն։

ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Քննութեան առնելով դաշնակցական մարմինների արդի վիճակը եւ մատնանշելով այն փաստը, որ Կովկասեան շրջանում մարմինների խոշոր մասը ենթակայ է կազմալուծման եւ թուլացման, Խորհուրդը որոշեց՝ յանձնարարել Բիւրոյին այդ երեւոյթը իր առանձին ուշադրութեան առարկայ դարձնել եւ ձեռք առնել հարկաւոր միջոցներ։

Մարմինների վերաբերմամբ կայացաւ հետեւեալ որոշումները։

ա) Յանձնարարել Արեւելեան Բիւրոյին մինչեւ առաջիկայ Սեպտեմբերի սկիզբը ստուգել մարմինների ցենզի խնդիրը եւ ըստ այնմ պարզել իւրաքանչիւրի դիրքը։

բ) Իսկ մինչ այդ, ճանաչել իբրեւ Կ. Կոմիտէ՝ Մեծ քաղաքը, Ոսկանապատը, Մրգաստանը եւ Նաւահանգիստը։ Այգեստանը համարել միացած Մեծ քաղաքին, Ապառաժը Ոսկանապատին, Քարը եւ Զրաբերդը Մրգաստանին, Նալբանդը եւ մերձաւոր շրջանները՝ Նաւահանգստին[62]*։*

գ)
դ)
ե)
զ) (Որոշումներ ընթացիկ գործերի մասին)։
է)
ը)
թ)

ԲԻՒԴԺԷ

.....
.....
.....

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐ

Ուշադրութեան առնելով «Դրօշակ»ի բովանդակութեան հարցը եւ ցանկանալով հարստացնել նրան տեսական յօդուածներով՝ Խորհուրդը որոշեց յանձնարարել Արեւելեան Բիւրոյին եւս՝ տեսական յօդուածների եւ լուրջ ուսումնասիրութիւնների կողմից նախ ապահովել կեդրոնական պաշտօնական օրգանը։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴ

I. Նկատելով որ Բիւրոն Ժընեւ գտնուելով, նրա անդամները հեռու են մնում քաղաքական այնպիսի կեդրոնից, որպիսին է Ֆրանսիական մայրաքաղաքը։

II. Նկատելով, որ պրոպագանդի համար չունենք մնայուն կոմիտէներ եւրոպական կարեւոր վայրերում, որի շնորհիւ մեր հարցի արծարծումը յարատեւ բնոյթ չէ ունենում — Խորհուրդը որոշեց։

1) Յանձնարարել Արեւմտեան Բիւրոյին՝ որ եթէ նա այժմ անհնարին է գտնում Բիւրոն Պարիզ փոխադրել, պէտք է մի յատուկ ընկեր պահի այնտեղ իր անդամներից, սերտ կապ պահպանելու համար այլեւայլ շրջանակների հետ։

2) Հաստատել մնայուն կոմիտէներ, կարեւոր վայրերում, բաղկացած եւրոպացիներից, միացնելով, ուր հնարաւոր է, այդ կոմիտէների մէջ նաեւ ձեռնհաս հայեր։

ՅՈՒՅԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Քննելով Լիսի[23] *շրջանի ցուցական ձեռնարկների համար եղած առաջարկները, Խորհուրդը սկզբունքով ընդունելով այդ՝ նրանց մանրամասը մշակութիւնը եւ գործադրութեան եղանակը թողեց Լիսի Պատասխանատու մարմնին, յանձնարարելով դնել գործը միջազգային հողի վրայ։*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՌՈՐ

Նկատի ունենալով, որ Լիսում լինելիք քաղաքական տեռորների խնդիրը մանրամասն քննուած եւ հաստատուած է Ընդհանուր Ժողովի կողմից, Խորհուրդը Լիսի Պատասխանատու մարմնին թողեց նրա գործադրութիւնը, ինչպէս եւ գործի կազմակերպական բոլոր մանրամասնութիւնները, մնալով միջազգային հողի վրայ, ինչպէս թելադրել է Ընդհանուր Ժողովը։

ՋԻՆԱԿԱՆ

Քննելով կազմակերպութեան ձեռքում եղած զէնքերի հարցը, Խորհուրդը յանձնարարեց Արեւելեան Բիւրոյի զինական սեկցիային՝

ա) Կովկասեան մարմինների տրամադրութեան տակ եղած զէնքերի մի մասով ապահովել տեղական կարիքները, համաձայն ընթացիկ պահանջի,

բ) Մնացածները դուրս բերել տեղական մարմինների իրաւասութիւնից եւ դասաւորել նրանց՝ կազմակերպական ընդհանուր կարիքների համեմատ։

62.- Ծածկանունով նշուած կուսակցական շրջաններն են՝

Մեծ քաղաք – Թիֆլիս
Ոսկանապատ – Պաքու
Մրգաստան – Երեւան
Նաւահանգիստ – Պաթում
Այգեստան – Գանձակ
Ապառաժ – Ղարաբաղ եւ Զանգեզուր
Քար – Ալեքսանդրապոլ
Զրաբերդ – Կարս
Նալբանդ – Յիւս. Կովկաս, Նոր Նախիջեւան

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԹՈՒՐՔ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Նկատելով այն խոշոր դերը, որ կատարում են թուրքերէն յեղափոխական բրոշիւրները եւ հրատարակութիւնները Թուրքիայում, Խորհուրդը յանձնարարում է մեր բոլոր մարմիններին՝ ջանք չխնայել տարածելու Օսմանեան կայսրութեան բոլոր վայրերում թուրք յեղափոխական գրականութիւն։ Դրա հետ միասին Խորհուրդը օգտակար է գտնում, որ մեր հրատարակութիւնները եւս տարածուեն թուրք խմբերի միջոցով։

Մանօթանալով Պարիզի կոնգրէսի այն որոշման, որը վերաբերում է տեղական բոլոր լեզուներով յեղափոխական գրականութիւն ստեղծելու խնդրին, Խորհուրդը յանձնարարեց ընկերներին ուժ տալ գործին՝ թէ գրքեր մատակարարելով եւ թէ դրամական նպաստ տալով։

Դրա հետ միասին Խորհուրդը նպատակայարմար գտաւ օգնել, ինչպէս եւ առաջ, այն թուրք յեղափոխականներին, որոնք կ'ուզենան Կովկասի վրայով Երկիր անցնել ոչ-լեգալ ճանապարհով։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Մանօթանալով Ռուսաստանում գործող յեղափոխական կուսակցութիւնների ներկայ աննախանձելի վիճակի հետ եւ արձանագրելով այն իրողութիւնը, որ նրանց թուում այնուամենայնիւ Դաշնակցութիւնն է ամէնից քիչ ենթակայ եղել կազմալուծման, ամէնից շատ է պահպանել իր ոյժը եւ ազդեցութիւնը աշխատաւորութեան մէջ, Խորհուրդը քննութեան առաւ Դ-եան Կովկասեան մարմինների թուլանալու ընդհանուր եւ մասնակի պատճառները, որոնցից հարկ ենք համարում յիշել հետեւեալները։

1) Ռուս-եապոնական պատերազմից, համառուսական ներքին խռովութիւններից եւ մանաւանդ հայ-թրքական ընդհարումներից առաջացած տնտեսական տագնապը պիտի սպառէր կռուող տարրերի, եւս առաւել Դ-եան նիւթական ոյժերը։ Այդ բացասական երեւոյթի հետ առնչութիւն ունի նաեւ ընդհանուր յոգնածութիւնը, անկարելիութիւնը կռուել օրէ օր աճող ռէակցիայի դէմ միշտ միեւնոյն լարուած թափով։

2) Կալուածական եւ այլ ազգային իրաւունքների խնդրի մէջ միապետութեան արած խոշոր զիջումները, Հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հրատարակումը, հայ-թրքական կռիւների յաջող լուծումը, որոշ չափով գոհացում տալով Դ-եան օժանդակ տարրերին, անխուսափելիօրէն պատճառ պիտի դառնային նրանց կտրուելուն կազմակերպութիւնից։ Աւելի եւս — նոյն այդ տարրերը այլ եւս պէտք չզգալով մարտական ոյժերի, պիտի մնային իրենց թշնամական զգացմունքով դէպի Դ-իւնը, որը իւր հիմնական ուղղութեամբ վնասակար ազդակ է հանդիսանում նրանց՝ դասակարգային շահերի տեսակէտից։

3) Միապետական ռէակցիան, որ գլուխ բարձրացրեց Ռուսաստանի կենտրոններում գործող կուսակցութիւնների թուլութեան պատճառով, զօրեղանալով՝ ստիպեց Դ-եանը եւս նահանջել հետզհետէ այն գերիշխող դիրքերից, որ նա իբրեւ աշխատաւորութեան ներկայացուցիչ գրաւել էր մեր կեանքում, ընտրած լինելով մի ճանապարհ, որով չէզոքանում էին կառավարութեան հաստատութիւնները, վերացւում էին բուրժուա-կղերական դասերի արտօնութիւնները, եւ կեանքը վերափոխւում էր դեմոկրատիկ լայն հիմունքների վրայ։

4) Ռէակցիայի ուժեղանալը անդրադարձաւ Դ-եան վրայ հետեւեալ մասնակի երեւոյթներով՝

ա) Դ-իւնը, լիկվիդացիայի ենթարկելով որոշ ֆունկցիաները (դատավարութիւն, ինքնապաշտպանութիւն) պիտի զրկուէր այն անդամներից, որոնց ներկայութիւնը կուսակցութեան մէջ պայմանաւորուած էր լոկ այդ ֆունկցիաներով։

բ) Գործից պիտի հեռանային, կամ նուազ մասնակցութիւն ցոյց տային նրանք, որոնք գրաւուել էին Դ-եան մէջ նրա բացառիկ հմայքի շնորհիւ կամ որոնք ընդունակ էին գործելու միայն նրա գերիշխանութեան շրջանում ստեղծուած արտօնեալ պայմաններում։

գ) Բուրժուա-կղերական դասերը՝ մինչ ռէակցիայի զօրեղանալը լուռ ու համակերպ, սիրտ առան եւ կազմակերպուեցին Դ-եան դէմ ռէակցիայի առաջին խոշոր յաղթանակից յետոյ (Մոսկուայի ապստամբութեան ճնշումը), իբրեւ մարտական ոյժ ծառայեցնելով Դ-թիւնից հալածուած կամ հայ-թրքական կռիւների խառնակ օրերում դաշնակցական անունով երեւան եկած բախտախնդիրներին։ Այդ արշաւանքին աջակից հանդիսացան կուսակցամոլութեան ոգով տարուած կազմակերպութիւններ եւ խմբակներ, ինչպէս նաեւ Դ-եան նահանջի ընթացքում դասալիք եղած նրա անդամներ՝ ոմանք հին, ոմանք նոր դաշնակցական անուններով։

դ) Հոկտեմբերի 17ի մանիֆեստը, չիրականացնելով հանդերձ աւետուած սահմանադրութիւնը, որից յետոյ յեղափոխական կուսակցութիւնները Ռուսաստանում կարող կը լինէին կոնսպիրատիւ[63] *շրջանից անցնել օրինականը, ստեղծեց եւ պահպանեց այնուամենայնիւ տրամադրութիւն՝ աւելորդ նկատել յեղափոխական կռուի սովորական միջոցները, մասնաւորապէս ռազմական կորովը եւ առաջնակարգ, երբեմն բացառիկ կարեւորութիւն տալ լոկ խօսքին ու գրչին։*

Այս տրամադրութիւնը առանձնապէս վտանգաւոր էր Դ-եան համար, որը կռիւ է մղում ոչ միայն Ռուսաստանի արդի պայմաններում, այլեւ Տաճկաստանում։

ե) Նոյն մանիֆեստի իլիւզիոններով[64] *պիտի բացատ-*

63.- Ֆրանսերէն՝ դաւադրական, ընդյատակեայ։
64.- Ֆրանսերէն՝ պատրանքներով, ցնորքներով։

րել մասամբ այն հանգամանքը, որ ընկերներից շատերը հակում էին գործունէութեան հիմքը համարել լոկ հակամարտութիւնը տնտեսապէս անմիջական կերպով կեղեքուող տարրերի դէմ, մինչդեռ քաղաքական ազատութիւնները մնում էին չիրագործուած, եւ ազգային անհաւասարութիւնը իր ոյժի մէջ։ Քաջալերուելով այդ ուղղի վրայ տարուող դիւրին եւ շարունակական յաղթանակներով, ընկերները հաճոյքով գնում էին ամենաթոյլ ընդդիմադրութեան ճանապարհով, առանց նկատի ունենալու, որ դրանով նուազում է կազմակերպութեան յեղափոխական կորովը, մանաւանդ որ յաղթանակները յաճախ ձեռք էին բերւում ոչ թէ խմբակցութիւնների սեփական կազմակերպուած ոյժերով, այլ դրա վրայ սպառւում էր Դ-եան բարոյական եւ նիւթական կապիտալը՝ ամբարուած նախկին սերունդների եռանդով ու արիւնով։

գ) Քաղաքական ընդհանուր ճնշումներին եւ ազգային անհաւասարութեան երկրորդական տեղ տալու մէջ, ընկերների մի մասի կողմից, դեր էր խաղում նաեւ այն հանգամանքը, որ որոշ տերմինոլոգիայի ազդեցութիւնից դեռ չազատուած, կռիւը այդ պայմանների դէմ որակւում էր բուրժուական, ոչ վայել դասակարգային մի կուսակցութեան։

է) Դասակարգային կռուի գաղափարը, կիրառւում էր նոյնպէս թերի կերպով։ Նրա տակ հասկացւում էր ընդհանրապէս աշխատաւոր խմբակցութիւնների, նոյնիսկ անհատների, օրուայ մասնակի տնտեսական շահերի պաշտպանութիւնը։ Հրապարակի վրայ քիչ էր դրւում աշխատաւորութեան ընդհանուր խնդիրը, յանուն որի զոհաբերուէին աշխատաւոր անհատների կամ խմբերի ժամանակաւոր շահերը։ Վերոյիշեալ երեւոյթների հետեւանք է, որ Ընդհանուր Ժողովում դրուած եւ ռայոնական ժողովում կրկնուած որոշումները՝ աշխատաւորութեան բովանդակ շահերի պաշտպանութեան [համար] քաղաքական զինավարժական խմբեր կազմելու մասին, մնում էին յաճախ իբրեւ լոկ ծիսակատարութիւն՝ պատմականօրէն միայն կապուած Դ-եան անուան հետ։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՁՕՐԵՂԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Քննելով կովկասեան դաշնակցական մարմինների թուլանալու պատճառները եւ գտնելով, որ դրանց մի մասը, լինելով արտաքին, անկախ են մեր գործունէութիւնից, միւսները անհրաժեշտ հետեւանք են Դ-եան տարած մասնակի յաղթանակների՝ խորհուրդը կանգ առաւ մասնաւորապէս կազմակերպութեան թերութիւններից բխող պատճառների վրայ, որոնց վերացման նպատակով յանձնարարւում են հետեւեալ համապատասխան միջոցները։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Աչքի առաջ ունենալով գրաւոր եւ բանաւոր պրոպագանդայի անբաւարարութիւնը, աւելի մեծ ոյժ տալ տեսական ընդհանուր խնդիրների, ծրագրի կէտերի պարզաբանութեանը։ Ներկայ քաղաքական պայմաններում լեգալ կուսակցական թերթը անհնարին լինելով՝ լուրջ միջոցների դիմել՝ հիմնաւորելու համար գաղտնի հրատարակութիւնների գործը։

Ծանօթացնելով ընկերներին Դ-եան անցեալ գործունէութեան հետ, մասնաւորապէս Տաճկաստանում։ Պարբերական տեղեկութիւններ մատակարարել դաշնակցական բոլոր մարմիններին մեր կարեւոր վայրերի ընթացիկ գործունէութեան մասին։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՋՏՈՒՄ

1) Ի նկատի ունենալով մօտիկ անցեալի փորձերը, կալուածական եւ հայ-թրքական կռիւների շրջանում, երբ Դ-եան յաջող քայլերը եւ ձեռք բերած հմայքը գրաւում էին տարրեր՝ շահագրգռուած յեղափոխական ընդհանուր գործի լոկ այս կամ այն մասնակի արտայայտութիւններով։

Ի նկատի ունենալով, որ գործի շատութեան եւ իրերի խառնակ դրութեան պատճառով, իբրեւ դաշնակցականներ, յաջողում էին հրապարակ գալ ոչ միայն այդպիսիները, այլեւ պարզապէս անձնական շահ փնտռող բախտախնդիրները՝ ինտելիգենտ եւ ոչ ինտելիգենտ։

Ի նկատի ունենալով, որ յեղափոխութեան նեղ օրերում գլխաւորապէս դրանք են լինում առաջին դասալիքները եւ շարքերի մէջ վհատում սերմանողները, որ իրենց դասալքումը քողարկելու կամ նոր դրութիւնը շահագործելու համար նրանք դուրս են գալիս կռուի կազմակերպութեան դէմ, եւ որ այդ կռիւը աւելի դժուարանում է մեզ համար նրանով, որ նրանք շարունակում են մնալ հրապարակի վրայ դաշնակցական անունով, յանձնարարւում է՝

ա) Որոշակի տարբերել բուն դաշնակցական յեղափոխական գործը այն աշխատանքներից՝ ըստ մեծի մասամբ օրինական հողի վրայ տարուող, որոնց մէջ դաշնակցական անհատները կարող են կամ պարտաւոր են մասնակցել իբրեւ քաղաքացիներ։

բ) Զատել կազմակերպութեան իսկական անդամներին նրանցից, որոնք միայն օժանդակ են, ժամանակաւոր գործակից կամ սոսկ համակիրներ։

գ) Պատասխանատու դերերի համար յատուկ զգուշութիւն պահպանել նրանց վերաբերմամբ, որոնք իրենց դիրքի չնորհիւ կարող են շահագործել Դ-եան անունը եւ ուժերը անձնական նպատակների համար։ Զգուշանալ նաեւ նրանցից, որոնք ֆրազներով զինուած եւ զոհողութեան անընդունակ, հետամուտ են

կազմակերպութեան միջոցներով իրենց համար դիրք ստեղծելու։

2) Ի նկատի ունենալով, որ գործին ամբողջովին նուիրուած ընկերները՝ ստիպուած լինելով անձնական կամ ընտանեկան ապրուստը հոգալ կազմակերպական միջոցներից, ռոճիկով ծառայող պաշտօնեաների տպաւորութիւն են թողնում դրսում, մի հանգամանք, որ բացասաբար է ազդում ոչ իրազեկ ընկերների զոհողութեան պատրաստականութեան վրայ, յանձնարարւում է՝

ա) Minimum-ի հասցնել այն ընկերների թիւը, մանաւանդ վարչական մարմինների մէջ, որոնց ապրուստի ծախքը ընկած է կազմակերպութեան վրայ։

բ) Շեշտել Դաշնակցութեան աւանդական սկզբունքը, խախտած մասամբ հայ-թրքական կռիւների ընթացքում, որով ամէն մի գործիչ ամբողջովին նուիրուելու դէպքում իսկ, պարտաւոր է ստանալ կազմակերպութեան միջոցներից այնքան, որքան պահանջում են իր ամենաանհրաժեշտ պէտքերը, յամենայն դէպս միշտ աւելի պակաս, քան ինքը կարող է ձեռք բերել իր մասնաւոր աշխատանքով։

Սրա հետ միասին վերացնել թիւր գաղափարի մնացորդները դաշնակցական այն խաւերի միջից, որոնք շարունակում են նկատել Դաշնակցութիւնը, իբրեւ մի արտաքին ազդակ, որի մի մասը կազմելու գիտակցութիւնը չեն զգում իրենց մէջ, իբրեւ մի բարերար ոյժ՝ գոյութիւն ունեցող անկախ իրենց զոհողութիւնից, որը ուրիշ կոչում չունի, եթէ ոչ գոհացում տալ նրանց նեղ տնտեսական շահերին կամ պաշտպանել այլ եւ այլ թշնամիներից։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Նկատելով, որ մեր մի քանի վայրերում չափազանց շատ են գրաււում՝ տնտեսական շահագործման դէմ ուղղուած անմիջական պայքարով, աչքաթող անելով ընդհանուր պայմանները, մի ուղղութիւն, որ տանում է դէպի նեղ էկոնոմիզմը, յանձնարարւում է՝

Մեր ապրած վայրի ներկայ քաղաքա-սոցիալական պայմաններում յեղափոխական գործունէութեան ծանրութեան կենտրոնի կռիւը՝ համարել աշխատաւորութիւնը ճնշող ընդհանուր քաղաքական եւ հասարակական պայմանների դէմ, որոնց ներկայութեամբ չափազանց դժուարին, երբեմն անհնարին է դառնում ինքը՝ զուտ տնտեսական կռիւը։

Տնտեսական պայքար մղելիս 1) հետամուտ լինել, որ տրուող պահանջները վերաբերուեն աշխատաւորութեան հիմնական շահերին, որոնք կարող են չզուգորդել աշխատաւոր անհատների եւ խմբակցութիւնների տեղական շահերին։ 2) Խոյս տալ բանուորական այն պահանջներից, որոնք թէեւ նիւթական բաւարարութիւն են տալիս, բայց ցանկալի չեն դասակարգային ինքնաճանաչութիւն ձեռք բերելու տեսակէտից։ 3) Նախ քան գործադուլների դիմելը, աշխատել ստուգել կեղեքող կապիտալի, յաւելեալ արժէքի չափը եւ զգուշանալ, որ գործադուլների հետեւանքը չլինի արդիւնագործութեան քայքայումը։ 4) Աշխատել դրուած պահանջների շուրջը գրաւել նոյն վայրի ուրիշ ազգութիւնների պատկանող աշխատաւորներին՝ դասակարգային աւելի լայն գիտակցութիւն առաջ բերելու եւ վայրի բոլոր աշխատաւորների համար համահաւասար պայմաններ ստեղծելու նպատակով։ 5) Վերացնել ի սպառ բռնի ուժի սպառնալիքը տէրերի եւ աշխատաւորների կոնֆլիկտների դէպքերում, եթէ տէրերը իրենք չեն դիմում կողմնակի ուժի միջամտութեան։

ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ցիշեցնելով ընդհանուր եւ կովկասեան ռայոնական ժողովների որոշումները, պարզել, որ դասակարգային կուսակցութիւն լինել չի նշանակում խոյս տալ «ազգային» անուան տակ յայտնի եղած խնդիրներից, թէկուզ եւ այն դէպքերում, երբ նրանց մէջ որոշ շահագրգռում են ցոյց տալիս ոչ աշխատաւորական խաւերը։ Մասնաւորապէս խոչընդոտ չհանդիսանալ նրանց կուլտուրական ձեռնարկներին, մանաւանդ այն վայրերում, ուր մեր ուժերը ի վիճակի չեն գոհացում տալու ժողովրդի կուլտուրական պահանջներին։ Ղեկավարուելով աշխատաւորութեան հեռաւոր եւ հիմնական շահերով եւ ոչ թէ հակազդուելով բուրժուա-կղերական դասերի միտումներից, որոնք ժամանակաւոր նշանակութիւն միայն կարող են ունենալ, ձեռք առնել այդ խնդիրները եւ տանել նրանց համաձայն աշխատաւորութեան շահերին։

ԽՄԲԵՐ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Կուսակցութեան ամբողջական աշխատանքը կատարել կարողանալու համար յանձնարարւում է հետամուտ լինել կազմակերպական ուժերի ինտեգրալ զարգացման։

***ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ** անդամ համարել ամէն դասակարգի պատկանող անհատներին (արհեստաւոր, բանուոր, վաճառական եւ այլն), եթէ նրանք ընդունում են կուսակցութեան ծրագիրը, ենթարկւում են որոշումներին եւ իրօք ձգտում են իրականացնել նրանց կեանքի մէջ։ Այդ խմբերը պատրաստւում են քաղաքական գործունէութեան, ակտիւ մասնակցութիւն են ցոյց տալիս ընտրութիւնների մէջ, կազմում են ժողովներ, միտինգներ, ցոյցեր՝ ի հարկին զինուած։ Կուսակ-*

ցական աւելի լայն գիտակցութեան հասած ք[աղաքական] խմբերը վարում են ընդհանուր պրոպագանդ եւ կազմում են կոոպերատիւ միութիւններ՝ սպառողական ու արդիւնաբերական , գործնականապէս տարածելու համար կեանքի մէջ ընկերվարական սկզբունքները։

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ եւ *ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ* խմբերը աւելի շահագրգռել ընդհանուր քաղաքական խնդիրներով, մտցնելով նրանց մէջ կուսակցական գիտակցութիւն եւ պարտաճանաչութիւն։

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ կազմակերպելիս՝ ընդհանուր պրոպագանդի հետ միասին մտցնել նրանց մէջ ներքին բովանդակութիւն կոնկրէտ ձեռնարկների ճանապարհով։ Սկզբնաւորութիւնը դնել այնպիսի քայլերով, որոնց նպատակայարմարութիւնը աւելի մատչելի է գիւղացի աշխատաւորութեանը (հողաբաժինների կանոնաւորում ու լայնացում, հարկերի դասաւորում, համայնական աշխատանք համայնական պէտքերի համար եւ այլն)։

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ կանոնաւորման եւ բարձրացման վրայ դարձնել յատուկ ուշադրութիւն, մի բան, որ ամէնից շատ է աչքաթող արուած վերջին ժամանակներս։

Օրէցօր բազմացող բանտարկեալների եւ աքսորեալների վիճակը թեթեւացնելու նպատակով տարածել «Կարմիր Խաչի» սահմանները լայն չափերով։

ԹՈՒՐՔԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ։ Առանձնապէս պիտի աշխատել կապել Կովկասեան դաշնակցական մարմինները հայ աշխատաւորական ամենակարեւոր հատուածի՝ տաճկահայ ժողովրդի վիճակի հետ, որը անցնում է ներկայումս յեղափոխական գերագոյն մոմենտներից մէկը, պարզել տաճկահայ շարժման անցեալի եւ ներկայի իսկական բնոյթը, վերջ տալով այն թիւր գաղափարին, որով տաճկահայ շարժումը, որակուելով ազգային, հակադրւում է Կովկասեան աշխատաւորականին։ Ցոյց տալ նրա բացառիկ կարեւորութիւնը ընդհանուր օսմանեան յեղափոխական շարժման մէջ, ինչպէս նաեւ այն ազդեցութիւնը, որ կարող է ունենալ նրա յաջող լուծումը քաղաքական եւ մանաւանդ ազգային-կուլտուրական տեսակէտներից Կովկասի համար։

Քանի որ կովկասեան մարմինների մէջ նկատուած երեւոյթները տեղի են ունենում մասամբ այլ վայրերում եւ բացի այդ, վաղը կարող են ծաւալել աւելի մեծ չափերով Տաճկաստանում, Խորհուրդը դաշնակցական բոլոր մարմինների լուրջ ուշադրութեանն է յանձնարարում կովկասեան մարմինների վիճակի մասին եղած դիտողութիւնները, ինչպէս նաեւ այդ առթիւ առաջարկուած միջոցները։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՌԱՑՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆԸ

Քննութեան առնելով թերթի խնդիրը Կովկասում ու ի նկատի ունենալով տիրող գրաքննական խստութիւնները, որոնք թոյլ չեն տալիս ռայոնական թերթին հարկաւոր ազատութեամբ պաշտպանել կուսակցութեան ծրագիրը ու ձեռնարկները, ինչպէս եւ ի նկատի ունենալով յարակից մի քանի պատճառները,

Խորհուրդը որոշեց՝

ա) Դադարեցնել պաշտօնական թերթի հրատարակութիւնը։

բ) Հիմնել մի գաղտնի պաշտօնական թերթ, յանձնելով այդ գործի կազմակերպումը Արեւելեան Բիւրոյին։

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Լսելով զեկուցում Դ-եան մասնակցութեան վերաբերեալ Շտուտգարտի սոցիալիստական միջազգային կոնգրէսում, Խորհուրդը զբաղուեց այն հարցով, թէ արդեօք պէտք է մնալ ռուսական սեկցիայի մի հատուած, ինչպէս այժմ է, թէ պիտի ձգտել ձեռք բերելու ձայներ նաեւ Թուրքահայաստանի համար եւ կազմելու հայկական անկախ սեկցիա, իբրեւ ներկայացուցչութիւն թէ կովկասահայերի եւ թէ Թուրքահայերի։

Որոշեց՝

ա) Աշխատել ստանալ ձայներ Թուրքահայաստանի համար եւ կազմել հայկական սեկցիա։

բ) Ցանձնել այդ որոշման իրագործումը Արեւմտեան Բիւրոյին, յանձնարարելով անել հարկ եղած դիմումներ ըստ կարելոյն շուտ։

«ԾՐԱԳՐԻ» ԵՐԿՈՒ ԳԼՈՒԽՆԵՐԸ

Ուշադրութեան առնելով ծրագրի չհրատարակուած երկու գլուխների հարցը՝ Թուրքիայի եւ Կովկասի մեր իրականութեան վերաբերեալ,

Խորհուրդը որոշեց՝

ա) Մշակել այդ երկու գլուխները, յանձնելով Թուրքիայինը ընկեր Ռ.-ին, Կովկասինը՝ ընկեր Ա.-ին։

բ) Հրատարակել այդ գլուխները IV Ընդհ. Ժողովի ընտրած Ինների յանձնախմբի խմբագրութեամբ։

Եթէ մինչեւ առաջիկայ Ընդհանուր Ժողովը այդ աշխատանքը պատրաստ չլինի, այդ դէպքում Ընդհ. Ժողովին պիտի թողնել նրա խմբագրութեան եւ հրատարակութեան գործը։

IV ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Խորհուրդը որոշեց՝

IV Ընդհ. Ժողովի արձանագրութիւնը տպելու համար կազմել մի յատուկ մասնաժողով, 3 հոգուց, ընտրուած Ինների յանձնախմբի անդամների միջից։ Այդ մասնաժողովին պիտի թողնել արձանագրութիւնների տպագրութիւնը։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կուսակցութեան վերաբերմունքի մասին դէպի կաթողիկոսական ընտրութիւնները քննուեցին հետեւեալ առաջարկները՝

1) Մասնակցել ընտրութիւններին պաշտօնապէս։

2) Մասնակցել, բայց ոչ պաշտօնապէս։

3) Չմասնակցել բոլորովին եւ արգելել անդամներին որեւէ ձեւով մասնակցութիւն ցոյց տալ։

4) Չմասնակցել պաշտօնապէս, յանձնարարութիւն չտալ նոյնպէս ոչ պաշտօնական մասնակցութեան մասին, բայց արգելք չդնել անհատ անդամներին վարուելու ըստ իրենց հայեցողութեան։

Քննուեցին նաեւ հետեւեալ տեսակէտները՝

1) Առանձին կարեւորութիւն չտալով ընտրուելիք կաթողիկոսի անձնաւորութեանը՝ օգտուել ընտրութիւններից, ինչպէս նաեւ պատգամաւորական ժողովից՝ առաջ մղելու համար, համեմատաբար աւելի նըպաստաւոր պայմաններում, այն խնդիրները, որոնք տրուած էին մեր կողմից Էջմ[իածնի] կենտրոնական համագումարում։

2) Ցաջողեցնել այնպիսի մէկի ընտրութիւնը, որը ոյժ տայ ռամկավար հոսանքին եւ օգտուելով կաթողիկոսական հաստատութեան միջազգային նշանակութիւնից, նպաստի իր միջամտութեամբ հայկական հարցի յաջող լուծման։

3) Խանգարել յամենայն դէպս ընտրութիւնը այն թեկնածուների, որոնք յայտնի են իրենց բացայայտ հակազատագրական ընթացքով։

4) Ձգտել հասնել այդ բոլորին զուտ յեղափոխական միջոցներով, խոյս տալով մի ճանապարհից, որը ամրացնում է կղերական ոգին եւ մթնացնում դասակարգային գիտակցութիւնը։

Աչքի առաջ կային 1) Արեւմտեան շրջանի որոշումը՝ չմասնակցել պաշտօնապէս, բայց արգելքներ չդնել անդամների վերաբերեալ եւ 2) Վասպուրականի մարմնի ու Կովկասի ռայոնական ժողովի բանաձեւերը, որոնցով ժխտւում էր, թէ կազմակերպութեան պաշտօնական եւ թէ գործօն անդամների մասնակցութիւնը։

Խորհուրդը որոշեց՝

Ընդունելով հանդերձ, որ կաթողիկոսութիւնը ունեցել է եւ ունի դեռ եւս որոշ քաղաքական դեր, որ քաղաքացիական, դպրոցական, կալուածական եւ այլ ազգային կուլտուրական կարեւորութիւն ունեցող խնդիրներ, կապուած ներկայ պայմաններում մասամբ կաթողիկոսութեան իրաւասութեան հետ, պահանջում են կարգաւորում եւ որ մեր նպատակն է այդ բոլոր խնդիրների ղեկավարութիւնը յանձնել իրեն ժողովրդին։

Գտնելով սակայն դրա հետ միասին, որ եկեղեցական հաստատութեան շահերին ծառայող կղերը կաթողիկոսի ղեկավարութեամբ հանդիսանում է յետադիմութեան ազդակներից մէկը։

Որ Դաշնակցութեան ներկայ նեղ օրերում թէ Թուրքիայում եւ թէ Կովկասում կազմակերպութեան ուժերը պէտք է կենտրոնացած լինեն մի շարք հրամայական, զուտ յեղափոխական պահանջների վրայ։

Խորհուրդը որոշում է՝

1) Հ. Յ. Դաշնակցութիւնը իբրեւ կուսակցութիւն չի մասնակցում կաթողիկոսական ընտրութիւններին։

2) Դաշնակցական անհատները իբրեւ սոսկ քաղաքացիներ ազատ են վարուելու ըստ իրենց հայեցողութեան։

ԴԱՏԱԿԱՆ

1) Լսելով ցուցական նախկին մարմնի անդամ Աշոտի գանգատը եւ ծանօթանալով գործին, Խորհուրդը որոշեց՝

Նկատի ունենալով Աշոտի տուած բացատրութիւնը եւ զղջումը՝ չհամարել նրան կազմակերպութիւնից դուրս (տես Ընդհ. Ժողովի որոշումները), յանձնարարել Արեւմտեան Բիւրոյին քննել Աշոտի յեղափոխական անցեալը եւ ըստ այնմ որոշել նրա դիրքը կազմակերպութեան մէջ, իսկ մինչ այդ՝ հեռու պահել նրան վարչական մարմինների կազմից։

2) Նկատի ունենալով Թորգոմի եւ Քրիսի[65] չդիմելը Խորհրդին (տես Ընդհ. Ժողովի որոշումները), այլեւ վերջին Ընդհանուր Ժողովից յետոյ նրանց բռնած դիրքը՝ դրդուած անձնական հաշիւներից, Խորհուրդը որոշեց՝

Հեռացուած համարել Քրիսին եւ Թորգոմին կազմակերպական շարքերից։

3) Քննելով Բալկանի եւ յատկապէս Եգիպտոսի շրջանից եկած բողոքները մի շարք անձանց դէմ, որոնք դաշնակցականների դիմակի տակ կռիւ են մղում IV Ընդհ. Ժողովի որոշումների դէմ, ղեկավարուելով անձնական հաշիւներից, Խորհուրդը որոշեց՝

65.- Աշոտ, Սեւ Աշոտ (Եղիկեան Կարապետ), Թորգոմ (Սերեմճեան Արտաշէս) եւ Քրիս (Ֆեներճեան), երեքն ալ Ցուցական մարմնի նախկին անդամներ, որոնք Չորրորդ Ընդհ. Ժողովի որոշումով հեռացուած էին շարքերէն։

Հեռացնել նրանց կազմակերպութեան միջից եւ այս մասին յայտարարել «Դրօշակ»ի մէջ։

4) *ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՐՄՆԻ ԴԱՏԸ*[66]։ *Քննութեան առնելով Վասպուրականի մարմնի առաջարկը՝ դատի ենթարկել տեղական կազմերի անդամներին՝ խոշոր կորստի եւ յարակից պարագաների պատճառով, ի նկատի ունենալով Վասպուրականի եւ այնտեղ գործող ընկերների ներկայ ծանր ու տագնապալի վիճակը՝ որ թոյլ չի տուել դուրս գալու երկրից Խորհրդի համար հրաւիրուած նոր ընկերոջը, ի նկատի ունենալով նաեւ ստոյգ տեղեկութիւնների բացակայութիւնը, Խորհուրդը որոշեց՝*

Յետաձգել այդ դատը եւ յանձնարարել Արեւելեան Բիւրոյի մանրամասն քննութիւն կատարել իր ներկայացուցչի միջոցով եւ զեկուցանել այդ մասին յառաջիկայ Խորհրդին։

Այս առիթով Խորհուրդը քաջալերութիւն եւ յարգանք արտայայտեց Վասպուրականում կռուող յեղափոխական ընկերներին։

5) *Ա.ի ԳՈՐԾԸ*։ *Լսելով այդ մասին ընկեր Ռոստոմի զեկուցումը եւ ընկերներ Անտոնի ու Մհերի բացատրութիւնները, որից երեւաց, որ Ընդհանուր Ժողովի որոշումը — վերաքննել այդ խնդիրը — արդէն ի կատար է ածուած Արեւելեան Բիւրոյի անդամի ներկայութեամբ, Խորհուրդը յանգեցաւ այն եզրակացութեան, որ այդ գործի վերաքննութիւնը պիտի համարել փակուած։ Դրա հետ միասին որոշուեց՝ Ա.ից ստանալիք մնացած չորս հազար ռուբլի տուգանքը յատկացնել թուրքահայ սովեալներին։*

Այդ առիթով Խորհուրդը աչքի առաջ ունենալով որ տուգանքի գումարները մարմինները յաճախ մտցնում են կազմակերպութեան դրամարկղը, որոշեց՝

Այն տուգանքները, որոնք չեն ստացւում կազմակերպութեան կողմից արուած ծախսերի փոխարէն, պէտք է յատկացնել ոչ թէ կազմակերպութեան, այլ ընդհանուր հասարակական պէտքերին (սով, գաղթ, բանտարկութիւն)։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Աչքի առաջ ունենալով, որ 1) Խորհուրդը որոշուած ժամանակից ուշ է կայացել, 2) կազմակերպական մի քանի աննպաստ հանգամանքներ թոյլ չեն տալիս անմիջապէս ձեռնարկել Ընդհանուր Ժողովի գումարումին։

Խորհուրդը որոշեց՝

1) *Յետաձգել Ընդհանուր Ժողովը եւ կայացնել այն* 1908 *թ. Դեկտեմբերի* 10*ին*[67]։

2) *Ընդհանուր Ժողովից* 15 *օր առաջ գումարել արտակարգ Խորհուրդ, գրաւոր տեղեկագրեր պատրաստելու եւ նիւթեր մշակելու նպատակով։*

3) *Թողնել երկու Բիւրոներին փոխադարձ համաձայնութեամբ որոշելու ժողովի վայրը եւ*

4) *Ուղարկել մարմիններին հրաւէր Ընդհ. Ժողովի մասին այնպէս, ինչպէս թելադրում է կանոնագիրը։*

66.- Այս դատը կը վերաբերէր դիրքի Դաւիթի դաւաճանութեամբ Վասպուրականի զինապահեստներու գրաւման. դատի պահանջքը դրուած էր Վասպուրականի Կ. Կոմիտէի կողմէ՝ պատասխանատուութիւնները ճշդելու համար։

67.- Հակառակ Խորհուրդի որոշումին, Օսմանեան սահմանադրութեան հռչակումը (1908, Յուլիս) եւ Ատանայի կոտորածները (1909, Ապրիլ) պատճառ պիտի ըլլային որ Հինգերորդ Ընդհ. Ժողովը գումարուէր 1909 Օգոստոսին միայն։

Փաստ. 1567ա-27

Բ 4.– 1908 ԹՈՒԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ[68]

Պատ[երազմի] դէպքում բռնելի դիրք. բաժանուեց հարցերի

1- *Ինչ է մեր պահանջը.*

2- *Ինչ ոյժ ունինք ներկայումս.*

3- *Մեր ուրոյն քաղաքական տակտիքը*

3-*ը բաժանուեց երկուսի. ա) ինչպէս կազմակերպել ինքնապաշտպանութիւնը.*

բ) Մեր յարաբերութիւնները այլեւայլ ազգերի եւ կուսակց[ութիւններ]ի հետ։

Պահանջների մէջ որոշում Թուրքիայում՝

1- *Ինքնապաշտպանութեան մեր ծրագրի սահմանում* 6 *նահանգների մէջ.*

2- *Քաղաքական իրաւունքների կատարեալ հաւասարութիւն Թուրքիայի միւս շրջաններում եւ*

3- *Վերադարձումը հայերին այն բոլոր հողերը, որոնցից նրանք զրկուած են եղել* [18]77-78 *թուից սկսած։ Այս որոշումը ընդունուեց* 9 *ձայնով ընդդէմ* 5-*ի, որոնցից* 3-*ը դէմ էին եւ* 2-*ը ձեռնպահ։*

Շամի հարց դրուեց — Ներկայ կրիտիքական վիճակը նկատի ունենալով Խոր[հուրդը] որոշեց

1- *Անմիջապէս զէնք փոխադրել Թուրք-պարսկ[ական] սահմանագլուխը Երկրի մէջ։*

2- *Նկատի ունենալ ղեկավար ընկերներ Շամի մէջ եւ այս բոլորը պատրաստ պահել եւ սպասել Շամի ընկերոջ, որպէսզի պարզի թէ զէնք ու ընկերներ անհրաժե՞շտ են։*

Խոր[հուրդ]ն անցաւ իսկական հարցին։

Ռոստոմը պատկերացրեց մօտաւորապէս մեր ոյժերը Կովկասում։ Դումանը ներկայացրեց իր ինքնապաշտպ[անութեան] ծրագիրը հաւանական պատերազմի դէպքին, որից յետոյ Խորհ[ուրդը] անցաւ մեր դրացիների վերաբերմամբ բռնելիք դիրքին եւ ընդունեց հետեւեալ բանաձեւը՝

Համարելով պատերազմը, մանաւանդ նուաճողականը, վնասակար աշխատաւոր մասսաների շահերին (8 *ձայն*), *ի նկատի ունենալով այն հոգեբանութիւնը որ ստեղծւում է պատերազմի ժամանակ, մանաւանդ այն վայրերում, որոնք Կովկասի նման հանդիսանում են կռուի թատերաբեմ* (10 *ձայն*), *հաշուի առնելով Կովկասում գոյութիւն ունեցող ազգային փոխադարձ յարաբերութիւնները* (10 *ձայն*), *Խորհ[ուրդը] որոշեց՝*

Աշխատիլ համաձայնութեան գալ հարեւան ազգերի եւ կուսակցութիւնների հետ հետեւեալ հիմքերի վրայ՝

1- *Ամէն կերպ վստահեցնելով մեր հարեւաններին որ մեր կողմից ոչ մի յարձակողական քայլ լինել չի կարող իրենց դէմ պատերազմի այս կամ այն ընթացքի դէպքում, միջոցներ ձեռք առնել համոզելու եւ նրանց՝ նոյն դիրքը բռնել հայ ազգաբնակութեան վերաբերմամբ* (13 *ձայն*, 1 *ձեռնպահ*).

2- *Զխառնուել տեղական ազգերի եւ կառավարութեանց մէջ տեղի ունեցող ընդհարումներին, ի բաց առեալ այն կէտերը, երբ այս եւ այն գործողութիւնները սպառնում են հայ ազգութեան շահերին* (13 *ձայն*, 1 *ձեռնպահ*)։

3- *Պատերազմի ընթացքում Կովկասներու որեւէ ապստամբութիւն համարելու ենք մնասակար թէ տեղական ազգութիւնների բարեկամական յարաբերութիւնների եւ թէ ռուս ազատագրական շարժման յաջողութեան տեսակէտից* (10 *ձայն*, 4-*ը ձեռնպահ*)։

Վիճաբանութիւն այն մասին թէ ինքնապաշտպանութիւնը թողնելո՞ւ է ժողովրդին, կազմակերպելո՞ւ է միւս հայ կուսակցութիւնների հետ, թէ Դաշնակցութիւնը ինքն է միայն կազմակերպելու։

Որոշում.— Դաշնակցութիւնը ձեռնարկում է ինքնապաշտպանութեան կազմակերպութեան հայ ժողովրդի բոլոր խաւերից, պահելով կուսակցութեան գործի ընդհանուր ղեկավարութիւնը (10 *ձայն*, 2 *ձեռնպահ*)։

Գործերը յաջող տանելու համար Խորհուրդը յանձնարարում է Բիւրոյին — եղած մարմինները զօրացնել եւ չեղած տեղերում նորերը կազմել, ստեղծելով այդ մարմիններին կից յատուկ ռազմական սեկցիաներ (միաձայն). ի նկատի ունենալով ներկայ բացառիկ պայմանները, Խորհուրդը հրահանգում է Բիւրոյին կազմակերպել յատուկ շտաբ որոշ լիազօրութիւններով, 8 *ձայն*, 4-*ը ձեռնպահ* (8 *ձայնից* 7-*ը ձայնատու*)։

Երկար վիճելով Տաճկաստանում մեր բռնելիք դիրքի մասին, պատ[երազմի] միջոցին եւ գտնելով, որ մենք յամենայն դէպս մի լուրջ գործ պիտի սկսենք այնտեղ, Խորհուրդը որոշեց՝

1- *Մեր ուժերը կենտրոնացնել Վասպուրականում, յարաբերութեան մէջ մտնել քիւրտ ցեղապետների հետ, որոնք, Երկրին ծանօթ ընկերների կարծիքով, մեր բարեկամներն են լինելու, եթէ մենք որոշ ոյժ ներկայացնենք, եւ նրանց համոզել մեզ հետ միասին լինել եւ խորտակել թուրք ռեժիմը, աշխատելով զանազան գործնական քայլեր անել միասին. օր[ինակ], ինքնապաշտպա-*

68.- Բնագրին վրայ այլ ձեռագրով մը տրուած է այս խորագիրը, սակայն 1907 տարեթիւի նշումով։ Ուղղեցինք 1908ի, նկատի ունենալով փաստաթուղթին բովանդակութիւնը։

նուիրուն կազմել միասին, դնել դեմոկրատիք եւ ժողովրդին մատչելի պահանջներ եւ հարկային սիստեմի փոփոխման վերաբերեալ նոր առաջարկներ դնելով։

2- Երկիր ռազմիկ ուժեր եւ ղեկավարներ ուղարկելու համար, ունենալ այնտեղ դպրոցի պէս մի հիմնարկութիւն, որտեղից մի-երկու ամսում կարելի լինի բաց թողնել մի 40-50 մարդ։

Ակնունուն հարց տրուեց Կոնգրէսի մասին եւ նա պատմեց ամբողջը։ Մարը յայտնեց Սարգսի եւ Գալֆայի տպաւորութիւնները։ Անտոն գտաւ, որ մեր շահը պահանջում է մեզ չկաշկանդել, այլ նրանց հետ լինել որոշ խնդիրներում։ Բժ[իշկը] եւ Մհեր պաշտպանեցին Կոնգրէսն։ Մուրատը ընդունեց որ ինչ եղած է, այդ Ընդհ. ժողովի որոշումն է[69]*։*

Յաջորդ նիստին Ակնունի պաշտպանեց կոնգրէսի հետեւանքները, Անտոն պաշտպանում է իր նախկին կարծիքները, Վահաբ[70] *պնդում է որ մեր հարցը ազգային է եւ մեր ուժերը մեր հարցին պէտք է պահել։ Հայր Աբր[ահամ] գտնում է որ մեր հարցը չպէտք է կաշկանդել համաթուրք հարցով։ Բժիշկ կարծում է որ մեր քչութիւնը ստիպում է մեզ այդ անել, քանի որ ինքնուրոյն ոչինչ չենք ներկայացնում։*

Պարիզի Կոնգրէսի մասին խօսելով որոշուեց՝

1- Այս կամ այն կերպով հասկացնել մեր թուրք բարեկամներին, որ կազմակերպութիւնը բոլորովին չի հրաժարւում Եւրոպային դիմելուց մեր հարցի առթիւ եւ գործադրելու է իր Ծրագրի բոլոր կէտերը անխտիր։

2- Comité Perm[anant]ի[21] *մէջ որոշումները լինելու են միաձայն։*

Մարտ 27 Մարը գնաց։

Ապրիլ 2, 3, 4, 5, Կովկասեան շրջանի գործունէութիւնը։ ընդհանուր լքում։— Ռոստոմի զեկուցում եւ ապա Մհեր ներկայացրեց գործունէութեան փաստացի կողմերը եւ ապա երկար վիճաբանութիւն ընդ[հանուր] լքման[71] *եւ դարմանման առթիւ։ Այդ խնդիրը ծեծելուց յետոյ թողնուեց բանաձեւեր բերեն ժողովի։*

Մարը դրեց Արեւմտ. Բիւրոյի առաջարկը Ռայոնական ժողովի որոշումների վերաբերմամբ։ խօսք բացուեց կաթող[իկոսական] ընտրութեան մասին։ ընդհ. տրամադրութիւն, որ ռայ[ոնական] ժողովի որոշումը սխալ է։ ձայների դրուեց եւ որոշուեց մասնակցել ընտրութիւններին անհատապէս, ոչ կազմակերպութեան անունով, 8 ձայնով։ 1 ձայն՝ մասնակցեն իբր կազմակերպութիւն եւ մէկ ձայն՝ թողնել կոմիտէներին, ինչպէս ուզում են։

Արեւմտ. Բիւրոյի կազմը թողնել նոյնը եւ համոզել բոլորին մնալ մինչեւ Ընդհ. ժ[ողով]։ Թերթը [«Դրօշակ»] բարձրացնելու համար յանձնարարել Արեւել. Բ.ին եղած տեսական լուրջ նիւթերից ապահովել կենտ[րոնական] օրգանը եւ ապա տեղականը։

Առաջարկել Արեւմտ. Բիւրոյին, որ եթէ նա չէ կարող ամբողջովին փոխադրուել Պարիզ, անհրաժեշտօրէն մի անդամը ուղարկել այնտեղ ընթացք տալու պրոպագանդի գործին։ Կազմել մի մնայուն մարմին օտար եւ հայ տարրերից որոշ սիստեմ մտցնելու համար արտաքին քաղաքականութեան մէջ մեր հարցը արծարծելու համար։

Խորհուրդը յանձնարարում է երկու Բիւրոներին հարկ եղած ուշը դարձնել [Երկիր] գնացողների վրայ եւ յատկապէս ուսանողութեան դիմումներ անել, գտնել պատրաստի ուսանողներ, որոնք սկզբում կը լինեն օժանդակ եւ երթան Ամերիկա եւ Երկիր։

69.- Պարբերութեան մէջ ծածկանունով յիշուած են՝ Միք. Տէր Մարտիրոսեան (Մար), Սարգիս Մինասեան (Արամ-Աշոտ), Յար. Գալֆայեան, Ս. Զաւարեան (Անտոն), Բժ. Յովսէփ Տէր Դաւթեան (Բժիշկ), Համօ Օհանջանեան (Մհեր) եւ Սեբաստացի Մուրատ։

70.- Արշակ Վռամեան։

71.- Ակնարկութիւն՝ Դաշնակցութեան դէմ ցարական խրստութիւններու հետեւանքով ստեղծուած կացութեան։

Փաստ. 18-75

Բ 5.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

6 Յունիս 1908

Արեւմտեան Բիւրոյին

Շտապում ենք Հ.Յ.Դ. Խորհրդի որոշումներից մի քանիսը եւս ձեզ տեղեկացնել, մինչեւ բոլոր որոշումների լրիւ հաղորդելը.

I. Ծանօթանալով Արեւելեան ռայոնի մարմինների դրութեան, գործունէութեան եւ իրաւասութիւնների հետ, Խորհուրդը որոշեց, խստիւ հետեւիլ կանոնագրի պահանջած ցենզի իրականացման եւ այն մարմինները ճանաչել միայն իրաւասու Կենտրոնական Կոմիտէ որոնք կը համապատասխանեն պահանջած ցենզին։ Յանձնարարելով Արեւել. Բիւրոյին վերջնականապէս մինչեւ Օգոստոսի վերջը ճշտել այդ ցենզը եւ Ընդհանուր Ժողովին հրաւիրել միայն այն մարմինները որոնք կը համապատասխանեն այդ ժամանակ Կանոնագրի պահանջած ցենզին, մինչեւ այդ ճանաչել Արեւելեան Ռայոնում, բացի երկրի մարմիններից, հետեւեալ 4 Կենտրոն. Կոմիտէներ.

1) Ոսկանապատ, որին պիտի միանայ Ապառաժի շրջանը իբրեւ կոմիտէական մի շրջան
2) Մեծ քաղաք, որին պիտի միանայ իբրեւ կոմիտէական շրջան Այգեստանը
3) Մրգաստանը եւ Քարը կազմելու են մի Կենտրոնական Կոմիտէական շրջան
4) Պարսկաստանի Կենտրոնական Կոմիտէ

Այս մարմինները եւս պիտի ներկայացնեն մինչեւ Օգոստոսի վերջը ապացոյցներ իրենց ունեցած ցենզի։

Նաւահանգստի շրջանը ինչպէս եւ Նալբանդը Ժլատի հետ միասին լինելու են միայն կենտրոնավայրեր իրանց շրջանի համար, առանց վայելելու Կենտրոնական Կոմիտէի իրաւունքները մինչեւ չհամապատասխանեն ցենզին[62]։

II. Քննութեան առնելով վերջին տարուայ կատարած ահաբեկումները եւ աչքի առաջ ունենալով ներկայ քաղաքական մոմենտը – Խորհուրդը որոշեց.

Այսույետոյ բոլոր տեսակի ահաբեկումները թէ կազմակերպական եւ թէ քաղաքական պիտի կատարուեն միայն երկու հարեւան կենտրոնական կոմիտէների կամ Կենտր. Կոմ.ի եւ Բիւրոյի փոխադարձ համաձայնութեամբ։

III. Խնդրում ենք ապագայ Ընդհանուր Ժողովի համար, որ կայանալու է այս տարուայ վերջը, ուղարկէք ձեր հարցացուցակը երկու շաբաթուայ ընթացքում։

Բիւրոյիս հասնում են լուրեր թէ Խորհրդի որոշումը կաթողիկոսական ընտրութիւնների վերաբերմամբ յարուցել է մի քանի ընկերների մէջ տարակուսանքներ։ Այս առթիւ հարկ ենք համարում ձեզ հաղորդել հետեւեալը.

Խորհուրդը կայացրել է իր որոշումը ամբողջ Դաշնակցութեան համար հիմնուելով մեր ծրագրի, մեր տակտիկի եւ կուսակցութեան ընդհանուր ոգու վրայ եւ եթէ այդ որոշումը այս կամ այն կէտում չի համապատասխանում մի ռեւէ ռայոնի կամ մարմնի որոշմանը, վերջինիս որոշումը պիտի յարմարեցուի Խորհրդի որոշման, իբրեւ մի մարմնի որ իրազեկ եւ իրաւասու է ամբողջ Դ-ութեան համար որոշումներ կայացնել, իբրեւ ամենաբարձր մարմին Ընդհ. Ժող[ից] յետոյ։

Յատկապէս Արեւելեան ռայոնի Ռ[այոնական] ժ[ողով]ի որոշման առթիւ կարող ենք ասել որ թէեւ Խորհրդի որոշումը տարբերւում է Ռ.ժ.ի որոշումից միայն անհատների վերաբերմամբ, բայց Խորհրդի պատճառաբանութիւնները, որ այսուհետեւ պիտի համարուեն Դ[աշնակցութեա]ն պաշտօնական կարծիքը կաթողիկոսութեան դերի մասին, մեծ մասամբ բոլորովին տարբեր են Ռ. ժ.ի պատճառաբանութիւններից եւ այդ պատճառով էլ Խորհրդի որոշումը տարբերւում է Ռ. ժ.ի որոշումից յայտնի չափով։

Ի դէմ Արեւել. Բիւրոյի
ՄՀԵՐԵԱՆ

6-VI-08
Մ[եծ] Ք[աղաք]

Գ.– 1909 ԹՈՒԱԿԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Փաստ. 1567բ-4

Գ 1.– ԽՈՐՀՈՒՐԴԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԸ

Վասպուրականի Կեդր. Կոմիտէի կողմէ բանաձեւուած որոշումներ, որոնք կ'առաջարկուին Դաշնակցութեան Խորհուրդին: Ձեռագիրը կը պատկանի Արամ Մանուկեանի գրչին:

I

Թուրքիոյ Ահաբեկիչ մարմին

1) *Ներկայ քաղաքական պայմաններում մի իլլեգալ - մարտական-տեռորական մարմնի անհրաժեշտութիւնը:*

2) *Ահաբեկիչ մարմինը կ'իրագործէ ամբողջ երկրի Կ. Կոմիտէների Կ. Պատ. մարմնի տեռորական որոշումները:*

3) *Ահաբեկիչ մարմինը մի կենտրոնացած ամբողջութիւն է, որը կարող է կարիքի դէպքում, այլեւայլ վայրերում իր ճիւղերը կամ ներկայացուցիչները ունենալ:*

4) *Կ. Կոմիտէների որոշումները իրագործելու ատեն Ահաբեկիչ մարմինը պիտի աշխատի փոխադարձ համաձայնութեան գալ տեղական մարմինների հետ, գործողութեան ժամանակի եւ զանազան անպատեհութիւնների առթիւ:*

5) *Երկրի եւ կամ Արտասահմանի մարմինները պարտաւոր են միմիայն բարոյական օգնութիւն ցոյց տալ Ահաբեկիչ մարմնին կամ ներկայացուցիչներին:*

6) *«Խորհուրդը» ժամանակաւորապէս կ'որոշէ «Ահաբեկիչ մարմնի» առաւելագոյն կամ նուազագոյն բիւդճէն, որը կը հայթայթուի երկրի բոլոր մարմիններից վերցրուած որոշ տոկոսից (%):*

7) *«Ահաբեկիչ Մ.նը» կ'ընտրուի «Խորհրդի» կողմից ու կը վաւերացուի առաջիկայ Ընդ. Ժող[ովի կողմից] ու կ'ենթարկուի Տաճկաստանի Բարձրագոյն ձեռնհաս մարմնին (մենք նպատակ ունենք առաջիկայ Ընդ. Ժող[ովին] առաջարկել մի կ[ենտրոնական] մարմին ամբողջ երկրի ընդհանուր ձեռնարկների համար — տեռորական, պարլամենտական, համերաշխութեան, պրոպագանդական-հրատարակչական եւայլն):*

8) *Կազմը 3-5 հոգի պիտի լինի. Մ[արմ]նի մէջ մտնելու են կուսակցութեան գործունէութեան ու տրադիցիաներին եւ երկրին լաւածանօթ, փորձուած ընկերներից, որոնցից գոնէ երկուսը մտաւորական ուժեր են լինելու:*

II

Կուսակցութեան պարլամենտական գործունէութիւնը Տաճկաստանում

9) *Անմիջապէս ընտրել դաշնակցական պարլամենտական բիւրո, որը կը կազմուի դաշնակցական երեսփոխաններից եւ տեղին վրայ գտնուող ձեռնհաս ընկերներից:*

10) *Բիւրոն*[72] *որոշում է կուսակցութեան պարլամենտական պատգամաւորների տակտիկան:*

11) *Բիւրոն մշակում է պարլամենտական ընկերների առաջարկելիք հարցերը:*

12) *Բիւրոն ամիսը առնուազը մի անգամ կուսակցութեան բոլոր իրաւասու մարմիններին տալիս է պարլամենտի մեր ֆրակցիայի եւ առհասարակ բոլոր ֆրակցիաների մանրամասն գործունէութեան տեղեկագիրը:*

13) *Պարլամենտական ամէն նստաշրջանից յետոյ Բիւրոն պարտաւոր է ընդ. հաշիւ տալ Ընդ. Ժողովին:*

14) *Բիւրոն կը վարէ պարլամենտական ընդհանուր ընդդիմադիր՝ մասնաւորապէս մանր ազգերի ընդդիմադիր տարրերի միջեւ գործը:*

15) *Բիւրոն պիտի ղեկավարուի այս Խորհրդի ընդգծած պարլամենտական պլատֆորմով:*

Ծանօթ.— Պատ. մարմնի պլատֆորմը «Խորհուրդը» վերամշակելով վաւերացնելու է:

Բիւրոյի բիւդճէն կ'որոշէ «Խորհուրդը». այս ձեւով նախ ամէն մի պատգամաւոր իր ռճիկին 30%-ը յատկացնելու է Բիւրոյին, իսկ մնացած բացը ծածկելու է կուսակցութեան բիւդճէն:

16) *Բիւրոն պարտաւոր է ընդհանրապէս պարլամենտի, մասնաւորապէս մեր կուսակցութեան ֆրակցիայի գործունէութեան էութիւնը մատչելի դարձնել հասարակութեան (բոլոր ազգերի) լայն խաւերին, մամուլի եւ պրոպագանդական այլ միջոցներով:*

17) *Բիւրոն իր պարլամենտական գործունէութեան մէջ պիտի ղեկավարուի հետեւեալ սկզբունքներով:*

ա- Ազատական կարգերի վերջնական հաստատումը ապահովելով:

72.- Հոս եւ շարունակութեան մէջ խօսքը միշտ «պարլամենտական բիւրոյի» մասին է:

բ- Բլոկ կազմելով բոլոր ընդդիմադիր տարրերի հետ՝ ձգտելու է բոլոր ազգերի աշխատաւոր տարրին պարզելու անհրաժեշտութիւնը՝ պետութեան դեմոկրատիզացիայի, տնտեսական բարեփոխութիւնների եւ լայն կուլտուրական ձեռնարկների կիրառնումը:

գ- Բիւրոն ամէն առթիւ դնելու է մեր պահանջները, նոյնիսկ երբ համոզուած է որ իր առաջարկը վիճաբանութեան էլ չի ենթարկուելու, եւ պիտի տիրապետող ֆրակցիայի ո՛չ դեմոկրատիկական առաջարկները ամենախիստ քննադատութեան ենթարկէ, աշխատաւորների շահի տեսակէտից:

դ- Բիւրոն իր առաջարկները, նոյնիսկ զուտ հայկականը՝ պէտք է ձեւակերպէ այնպէս, որ դա շահագրգռէ բոլոր ազգերի աշխատաւորներին:

18) *Դիսցիպլինա՝*

Մեր ամէն մի պատգամաւորը, պահելով հանդերձ իր դաշնակցական անհատականութիւնը, պարտաւոր է բոլոր կարեւոր հարցերում ղեկավարուել եւ հանդէս գալ պարլամենտում Բիւրոյի ծրագրով եւ տակտիկով:

19) *Այն դաշնակցական պատգամաւորը, որ կը դադարէ մնալ կուսակցութեան ծրագրի-տակտիկի եւ պարլամենտական բիւրոյի ընդգծած սահմաններում, դադարում է դաշնակցական լինելուց եւ այս մասին անմիջապէս յայտարարելու է կուսակցութեան պաշտօնական օրգաններում, ու նրան կանչելու է կուսակցութեան բարձրագոյն ատեանի առաջ:*

Ծանօթ.— Կուսակցական հարցերում եղած թիւրիմացութիւնները՝ պատգամաւորի եւ Բիւրոյի միջեւ կը քննուին երկրի ձեռնհաս բարձրագոյն մարմնի կողմից:

III

Ռուսաստան եւ Պարսկաստան

20) *«Խորհուրդը» ընտրում է մի ժամանակաւոր Կ. մարմին Սարուստանի*[73] *ընդհանուր կուսակցական գործերի կարգադրութեան եւ ապագայ անակնկալ դէպքերին դիմագրաւելու համար:*

21) *«Խորհուրդը» սանկցիա տալով*[74] *կուսակցութեան պարսկական շարժման միջամտութեան, պէտք է որոշէ նրա սահմանները ու տրամադրելի միջոցները:*

73.- Ռուսիոյ եւ Կովկասի դաշնակցական կազմակերպութիւններու հաւաքական ծածկանունը:

74.- Հաստատելով, հաւանութիւն տալով:

IV

Վանի գործերը

Անմիջական կերպով քննել Վանի գործը[66]*, այդ մասին յայտարարել կուսակցութեան բոլոր ձեռնհաս մարմիններին, իսկ Ընդ. Ժող[ովի] սանկցիայից յետոյ՝ ամբողջ հասարակութեան:*

V

Ընդ. Ժողով

22) *«Խորհուրդը» իր պարապմունքները եւ կուսակցութեան գործերը այնպէս պիտի դասաւորէ, որ իր վերջին նիստից մի ամիս յետոյ անպայման բացուի Ընդ. Ժող[ովը]:*

23) *«Խորհուրդը» կ'որոշէ Ընդ. Ժող[ովի] մասնակցելու իրաւունք ունեցող վայրերը եւ մարմինները:*

Ծանօթ.— Այն նոր վայրերը, որոնք միայն Սահմանադրութիւնից յետոյ են կազմակերպուել, եւ ունեն միայն դրամական ցենզ, ունենալու են խորհրդակցական ձայն:

24) *«Խորհուրդը» կը կազմէ կոմիսիոններ Ընդ. Ժող[ովում] առաջարկուելիք զանազան նախագծերի, ծրագիրների պատրաստութեան, վերամշակման համար. օրինակ, պարլամենտական պլատֆորմը ու տակտիկ, երկրի համար ուրոյն ծրագրային նուազագոյն պահանջներ, կանոնագրեր՝ գիւղացիական, արհեստակցական, քաղաքական, մարտական եւ այլ միութիւնների համար եւայլն, եւայլն:*

Վերջ



ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆ. ՎԱՍՊ.Ի Կ. ԿՈՄԻՏԷ

1909 թ. Յունուար 31-ին
Վան

Փաստ. 1567բ-9

Գ 2.– ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Ընկերներ!

Վերջերս պատահական կերպով անցայ Մշոյ դաշտ. ցաւօք սրտի լսեցինք մի շատ վրդովեցուցիչ լուր, որ պատիւ չի բերում ո՛չ միայն յեղափոխական ընկերներին այլ եւ սովորական քաղաքացիներին։ Խնդիրը այս է. մեր նահատակ ընկեր Գէորգ Զաւուշի սպանուելու ցաւատանջ իրողութիւնը ձգտում կայ վերագրելու մեր շարքերին կամ այս-ան ընկերոջ։ Հասկանալի է որ սա կարող է տխուր գործողութիւնների դռներ բանալ եթէ մի հեղինակաւոր մարմին իրողութիւնները քննելով չասէ իր վերջին խօսքը։

Զգիտեմ այդ լուրը ումի՞ց կամ ինչպէ՞ս է տարածուել մեր շրջաններում. բայց ընկերներ՝ Մուրադ, Սեպուհ, Աւետիս, Առաքել եւ ուրիշ շատերը բաժանելով կամ հաւատ ընծայելով այդ լուրերին սկսել են քննութիւններ կատարել, վկաների կանչել եւ որոշ ռապորտ կ'ուզեն կազմած այդ խնդրի շուրջը։

Ինչպէս ես հասկացայ մեր ճանապարհորդութեան մէջ ընկեր Մուրադից, խնդիրը առանձնապէս դառնում է այդ շրջանում եղած մեր գործիչ ընկերներից Ռուբէնի եւ Փիլոսի[75] շուրջը։

Իբր թէ այդ երկուսի անձնական թշնամութիւնը դէպի Զաւուշը նրանց տարել է [այն] աստիճանին, որ նրանք ժողովրդի եւ մեր զինուորների մէջ այնքան ատելութիւն են ստեղծել, որ բնականօրէն կարող է ուրիշ անգամ կամ հէնց վերջին Սուլուղի կռուի ժամանակ Գէորգի կռնակէն ստացած վէրքը լինել մեր ընկերների կողմից։

Որ իբր թէ նման փորձեր եղել [են] եւ ուրիշ անգամ բայց անյաջող է անցել. օրինակ Մուրադը պատմում է որ Խնուսում՝ Առնոս գիւղում կազմակերպութեան զէնքերով տեղական ընկերները զինուել են դիմադրելու Գէորգին եթէ նա փորձ անէր այնտեղի դաւաճաններից մէկին գիւղի մէջ զարկել. իբր թէ այդ կատարուել է առնուազը Փիլոսի լուռ համաձայնութեամբ...

Զեմ ուզում երկարացնել. չեմ էլ ուզում իմ կողմից ոեւէ բան աւելացնել այդ իրողութիւնների մասին. թէեւ ինձ համար շատ բաներ պարզուեց իմ հոն լինելու հետեւանքով. դա դատական գործի հետեւանքը կը պարզէ ամէն ինչ։

Այս խնդիրը ինձ համար շահեկան է այն տեսակէտից, որ այդ կողմերում եւ մեր ընկերական շատ շրջաններում վերոյիշեալ ընկերներ (Մուրադ եւ ընկ.) այդ ուղղութեամբ խօսում են եւ թէ իրենք ու թէ լսողները բաւականաչափ, եթէ չասեմ ամբողջապէս հաւատում են պատմուած լուրերին։

Ուրեմն ի պատիւ մեր ընկած ընկերոջ յիշատակին եւ ի փրկութիւն մեր ներկայ ապրող գործիչ ընկերների վարկին, խնդրում եմ միջամտել, այս առթիւ մի վերջնական եզրակացութեան գալու։

Անշուշտ ցաւալի է որ հակառակ նախկին Ընդ. Ժող[ովի] որոշման դուք նորէն ստիպուած էք միջամտելու դատական գործերի. բայց իրողութիւնների հետ պիտի հաշտուենք։

Ես անպայման կողմնակից չեմ մեծ աղմկարար դատերի եւ վիճաբանութիւնների այս խնդիրների շուրջը. բայց քանի որ երկու կողմի մարդիկն էլ ներկայ են, ուստի լաւ կը լինէր գէթ բացատրութիւններ առնելով փակել այդ հարցը։

Այլապէս մեր անձնական սենպատիաներով ու անտիպատիաներով պէտք է առաջ բերենք մեր շարքերում ու ժողովրդի մէջ մի պրաւոկացիոն վիճակ, որը կը ծնէ ինչպէս վերեւ ասացի շատ ցաւալի դէպքեր...

Ընդունեցէք սիրելի ընկերներ իմ ջերմ ողջոյնները ձեր դժուարին աշխատանքների եւ տանջանքների համար։

Ընկերական բարեւներով

ԱՐԱՄ

1909 *թ. Սեպտ.* 3
Կ. Պոլիս

75.- Մուրադը Սեբաստացի Մուրատն է, Ռուբէնը՝ Տէր Մինասեան, իսկ Փիլոսը (այլապէս նաեւ Մարալ, Հրաչեայ Մարալ) իսկական անունն է Փափախեան Փիլոս։

Փաստ. 1567բ-12

Գ 3.– ՄԱՐԱԼԻ ԲՈՂՈՔ-ՆԱՄԱԿԸ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Հ. Յ. Դաշ[նակցութեան] Խորհուրդին

Ընկերներ!

Վերջին ժամանակներս ընկերների շրջանակում լսւում է մի խուլ շշուկ, մասնաւորապէս իմ եւ Ռուբէն Տարօնացու շուրջը, վերագրելով մեզ մի դեր՝ մի դաւադրութիւն, որը վերջերս հասաւ արդէն մինչեւ Խորհուրդին։

Վասպուրականի ընկերներից Արամը յատուկ մի բողոքագրով դիմել էր Զեզ արդէն Խորհուրդի միջոցաւ, քննելու յիշեալ խնդիրը եւ ճշմարտութիւնը հրապարակ հանելու համար։ Զգիտեմ սակայն ինչ պատճառներով մեր մասին գրուած այդ գրութիւնը մի կողմ է դրուել, առանց քննելու գրուածքի իմաստը։

Մեզ վերագրուած դաւադրութեան մասին, այն է՝ հանգուցեալ Գէորգ Զաւուշի անձի դէմ, ոչ թէ միայն հասարակութեան մէջ է խօսւում, այլ խօսւում, եւ նոյնիսկ քննութիւններ է բացւում մեր ընկերական շրջանակում, ընկեր Մուրատի կողմից, որը ինչպէս երեւում է խօսուածների ճշմարտութեան մասին կատարեալ համոզմունք գոյացնելուց յետոյ, ինքնակոչ կերպով ստանձնել է նաեւ դատաւորի պաշտօն, որի ապացոյցն է Խնուսում իր կատարած քննութիւնները իմ վերաբերմամբ։

Ես իմ ամբողջ էութեամբ բողոքում եմ ընկեր Մուրատի այդ վարմունքի դէմ եւ խնդրում եմ որ Խորհուրդը զբաղուի այս խնդրով, քննի եւ ճշմարտութիւնը հրապարակ հանի, որովհետեւ երբ ընկերներն են այսպիսի մի դաւադրութեան մասին համոզմունք կազմել եւ դեռ քննութիւններ էլ կատարել, հասկանալի է թէ հասարակութիւնը ինչպիսի վերաբերմունք ցոյց կը տայ։

Զմոռանամ ասել որ իմ դէմ մասնաւորապէս այս խնդրի համար կարնոյ ընկերներից մէկին Փետր. ամսին գրուած էր մի նամակ, Խնուսից, վերագրելով ինձ դարձեալ նոյն դաւադրութիւնը, որի մասին ես նոյն ժամանակներին յայտնել եմ նոյն տեղի ընկերներին, բայց որոնք էլ ոչ [մի] ուշադրութիւն չեն դարձրել։

Համոզուած լինելով որ այս խնդիրը մնալով այս դրութեան մէջ, գնալով պիտի համոզմունք դառնայ միամիտ հասարակութեան մէջ, երբ մանաւանդ յեղափոխական ընկերներն են նոր զարկ տալիս նրան, եւ չուզենալով երբեք որ ընկերասպան անունը — ժողովրդի կողմից թէկուզ — գրուած լինի իմ ճակտին, ես բողոքում եմ այդ տարաձայնութիւնների դէմ, եւ խնդրում եմ որ ճշմարտութիւնը Խորհուրդիդ միջոցաւ հրապարակուի գոնէ Մշոյ դաշտի եւ այլ տեղերի ընկերներին ու հասարակութեան։

Ես յոյս ունիմ որ Խորհուրդիդ քննութեան ժամանակ կը պարզուի ամէն ինչ, ինչպէս նաեւ մեր վերաբերմունքը դէպի հանգուցեալ Զաւուշը։

Յարգանօք

ՄԱՐԱԼ

24 *Սեպտ.* 909
Պոլիս

Փաստ. 106-13

Գ 4.– ՌՈՒԲԷՆԻ ՆԱՄԱԿԸ ՌՈՍՏՈՄԻՆ ԵՒ ԱԿՆՈՒՆԻԻՆ

Ռուբէն Տէր Մինասեանի այս նամակը գրուած է Զուիցերիայէն, ուր ուսանելու գացած էր Հինգերորդ Ընդհ. Ժողովէն անմիջապէս ետք:

Սիրելի Ռոստոմ, Ակնունի,

Ձեզ յայտնի է, որ Գէորգ Զաւուշի սպանութեան մասին մի գործ կայ Խորհրդում, որ անտես առնելը անհնար է եւ վնասակար. ես իմ կողմից հարկ չհամարեցի պաշտօնապէս այդ խնդիրը իմ կողմից յարուցանել, քանի որ առանց այն էլ խնդիրը յարուցուած էր մասնաւոր ընկերների կողմից եւ մանաւանդ եղել են ընկերներ, որոնք իրականութեան մէջ կարեւորութիւն են տուած այդ խնդրին, եւ որոշ քննութիւններ են կատարած եւ եկած որոշ եզրակացութեան, որի մասին բացի լուրերից պաշտօնապէս տեղեկութիւն չունիմ: Ընկեր Ռոստոմը մինչեւ վերջին օրը կանգնած էր այն տեսակէտի վրայ, որ այդ խնդիրը կարելի է փակել իմ եւ Մուրատի բացատրութեամբ: Թիւրիմացութիւնները պարզելու համար այդ եղանակը գուցէ ամենամաքուր եւ ամենայեղափոխական ճանապարհն է, բայց ի նկատի առնելու է մի հանգամանք, որ Դուրանից[76] իմ բացակայութեան ժամանակ այդպէս չեն վարուել ընկերները ինձ հետ եւ ինչպէս հասկացած եմ Տատրակից եւ Արամից[77] եւ ուրիշներից, նրանք «պաշտօնական» քննութիւն են կատարել այդ մասին եւ ունեն որոշ եզրակացութիւններ, որ ինձ անյայտ են. խնդիրը այդ աստիճանի հասնելուց յետոյ, կարծում եմ իմ կողմից միամտութիւն կը լինէր առակախ թողնել այդ հարցը եւ նախանձախնդիր չլինել իմ եւ նրանց պատուի հանդէպ, որոնք մեղադրուել են իբրեւ ընկերասպաններ: Ես ձեզնից խընդրում եմ, ոչ թէ միայն յանուն Գէորգի յիշատակի արատաւորուելու եւ յանուն մեր պատուի, այլեւ այն ցաւոտ երեւոյթի, որ վերջերս կազմակերպութեան մէջ սովորում են բամբասանքով վարկաբեկել, տապալել ընկերների, չգիտեմ յանուն ինչի՞:

Սիրելի Ռոստոմ, եթէ դուք կարողանայիք հաւատացնել, որ այդ խնդրով ընկերները զբաղուել են, որովհետեւ իսկապէս պարտաւոր էին, եւ ոչ թէ ընկերները իրանք ցանկացել են խնդիրներ, նոր եւ նոր հարցեր ստեղծել եւ այդ փոքրիկ ինտրիկներով վարկաբեկել ընկերներին, ես համամիտ կը լինէի ձեզ հետ: Ես այլ կերպ եմ հաւատացած, եւ դրա համար խնդրում եմ Խորհրդի մէջ եղած խնդիրը անտես չառնել եւ ձեր վրայ վստահանալով կը պահանջեմ անաչառ քննութիւն.

I- Թէ ինչպէ՞ս է սպանուել Գէորգ Զաւուշ.

II- Ո՞վ եւ որտեղի՞ց է այդ ընկերներից «սպանման» լուրը առաջ բերել (եթէ իրօք Գ.Զ. թշնամուց է սպանուած):

Առաջին հարցի մասին ես իմ բացատրութիւնը տուած եմ մանրամասն կերպով 907 Ցունիս, Ա[ռեւելեան] Բ[իւրոյին] գրած նամակովս, ուրիշ բան չունիմ աւելացնելու: Երկրորդ հարցի մասին ես ունիմ իմ որոշ հաւատը, բայց աւելորդ եմ հաշւում գրելը, աւելի լաւ է կը սպասեմ ձեր քննութիւններին, որից յետոյ արդէն պիտի կարողանամ սրանից յետոյ կամ վստահանալ մտնել յեղափոխական գործի մէջ եւ կամ հեռանալ, այդպիսի սոսկալի վարկաբեկումներից խուսափելու համար:—

Կարծում եմ, որ դուք պէտք է մտնէք իմ դրութեան մէջ եւս եւ քննութեան նիւթ պիտի դարձնէք այդ խնդիրը:

1909 թ. 16 Հոկտ.
Բեռն

Բարեւներով

ՌՈՒԲԷՆ

76.- Տարօնից:
77.- Տատրակը՝ Գեղամ Տէր Կարապետեանն է, Արամը՝ Մանուկեան:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

190 .....

ԺԸՆՈՎ — GENÈVE

№ [redacted]

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

1890

FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE

DASCHNAKTZOUTIOUN

Փաստ. 57-213

Գ 5.– Գ. ՉԱՒՈՒՇԻ ԱՌԹԻՒ

(Ռուբէնին, Սասուն)



Խորհուրդը նկատի առնելով դրական փաստերի կատարեալ բացակայութիւնը՝ հրահանգում է Մշոյ կ. կ-ին պաշտօնական ազդով հերքել այդ անհիմն լուրերը Գ. Զաւուշի սպանութեան իբր թէ «մասնակից» մեր ընկերների մասին:

Ստորագրութիւններ

[*Ստացուած* 1909 *թ.* 27-*ին Դեկտ.ի*]

ԳԼՈՒԽ III

ԿՈՎԿԱՍԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Հաշուի առնելով որ յաճախակի կերպով Ընդհ. Ժողովներու գումարումը դժուարութիւններու կը բախէր, Դաշնակցութեան Կովկասի մարմինները սովորութիւն դարձուցած էին, միշտ Բիւրոյի նախաձեռնութեամբ, կազմակերպել պարբերաբար Ռայոնական կոչուած ժողովներ, ուր քննութեան կ'ենթարկուէին կազմակերպական, զինուորական եւ հասարակական բնոյթի խնդիրները, կը կայացուէին կարեւոր որոշումներ, կը տնօրինուէին համապատասխան գործնական կարգադրութիւններ: Այս կարգի ռայոնական ժողովի մը ընթացքին էր որ, օրինակի համար, տրուեցաւ Խանասորի արշաւանքը կազմակերպելու որոշումը:

Ռայոնական ժողովներուն կը մասնակցէին Բիւրոյի անդամները, առանձին կոմիտէներու (յետագային Կեդր. Կոմիտէներու) ներկայացուցիչները, ինչպէս նաեւ գործիչներ եւ մարտական դէմքեր: Արդէն կանուխէն արեւելեան գօտիին մէջ ձեւաւորուեցան Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հիմնական միաւորները,– Կեդր. Կոմիտէութիւնները, որոնց թիւը միայն հիւս. եւ հարաւային Կովկասներու մէջ քսաներորդ դարու առաջին տարիներուն՝ տասն էր, առանց հաշուելու Մոսկուայի եւ Պետերբուրգի ուսանողական միութիւնները: Ռուսական կայսրութեան տարածքին գործող այս կառոյցին տրուած է Սարուստան անունը:

Կովկասի ռայ. ժողովներուն կը մասնակցէր նաեւ Ատրպատականը, որ կը հանդիսանար դէպի Երկիր մարտական ուժերու, ղեկավար ու գործիչ ընկերներու եւ զէնք-զինամթերքի փոխադրութեան կարեւորագոյն օղակներէն մէկը, եւ ուր առաջին օրերէն ամրօրէն հաստատուած էր դաշնակցական կազմակերպութիւն: Կը պատահէր որ Երկիրը եւս ներկայացուցիչ ուղարկած ըլլար, այնպէս որ փորձ եղած է, թէեւ անհետեւանք, ռայոնականները դասելու Ընդհ. Ժողովներու շարքին: Այսուհանդերձ, երբեմն շաբաթներու վրայ երկարող այդ ժողովները, իրենց քննարկած համակուսակցական տարողութիւն ունեցող խնդիրներով, մասնակիցներու ներկայացուցչական հանգամանքով, վերջիններէս շատերուն անհատապէս ունեցած որակային ներդրումով, իրօք, վճռորոշ ազդեցութիւն պիտի գործէին յաջորդող ընդհ. ժողովներուն եւ անոնց կայացնելիք որոշումներուն վրայ:

*
* *

Ռայոնականի անուն տրուած որոշ ժողովներ չեն պատկանիր անշուշտ մեր կողմէ նկատի առնուած այս շարքին, որովհետեւ անոնք գումարուած են մի քանի հարեւան շրջաններու ներկայացուցիչներով եւ կամ կը վերաբերին կազմակերպական միեւնոյն շրջանին. այս վերջիններուն յատուկ որակումը եղած է միշտ՝ Շրջանային:

Յայտնենք այս առթիւ, որ կազմակերպութեան արեւմտեան գօտիին մէջ, հակառակ յայտնուած բաղձանքներու, իրական պահանջքի ու այս ուղղութեամբ արձակուած հրահանգներու, երկար ատեն կարելի չեղաւ ռայոնական ժողով գումարել: Թերեւս բացառութիւն կը կազմէ այն մէկը, որ Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն երեք ամիս ետք, 1908 թ. Հոկտ.-Նոյեմբերին գումարուեցաւ Կարին, մասնակցութեամբ գլխաւորաբար Մեծ Հայքի մարմիններու ներկայացուցիչներուն եւ կարգ մը գործիչներու (տեսնել «ՆԻՒԹԵՐ» Զ. հատոր, էջ 336-341):

* * *

«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» շարքին մէջ, յատկապէս Բ. հատորով, հրատարակուած են 1895-1906 տարիներուն Կովկասի ռայոնական ժողովներուն վերաբերող գրեթէ բոլոր փաստաթուղթերը, ներառեալ «Կովկասեան նախագիծը» (Տես էջ 18-21, 36-44, 201-223, 260-322, 368-375): Որոշ նիւթեր նաեւ Ե. հատորին մէջ (էջ 329-340 եւ 381-383):

Ներկայ հատորով հրատարակութեան կու տանք՝

1.- Փաստ. 1571-1ը, որ անտիպ մնացած է – «Սարուստանի դաշնակցական համագումար-ժողով, 1903 թ.», ձեռագիր 17 էջնոց տետրակ:

2.- Փաստ. 1593-41ը, «Ալեքսանդրապոլի տաճկահայ ժողովի արձանագրութիւնը» խորագրով, ձեռագիր 27 էջերէ բաղկացած:

Այս ժողովը կայացած է 1906 թ. Հոկտ. 27-31ին, Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովի նախօրեակին. հրաւիրուած էին Կովկասի եւ սեւծովեան ափերուն հաստատուած արեւմտահայ գաղթականներու դաշնակցական պատգամաւորները, արտայայտելու համար իրենց կարծիքը Կովկասեան Նախագծի եւ միհրանական անջատական շարժման մասին: Այս փաստաթուղթին կցած ենք շարք մը վկայութիւններ յիշեալ տարածքներուն մէջ գործող «տաճկահայ» խումբերուն կողմէ բանաձեւուած:

3.- Փաստ. 1586-1ը,– 1907 թ. Յուլիս 2–8ին կայացած «Հայ Յեղ. Դաշնակցութեան կովկասեան ռայոնական խորհրդաժողովի որոշումները», բաղկացած 10 ձեռագիր էջերէ (մանրատառ). նոյնը տպուած է առանձին գրքոյկով (փոքրադիր 24 էջ):

4.- Փաստ. 1587-14 եւ 15ը, 4+99 ձեռագիր էջերով,– «Դեկտեմբեր ամսին կայանալիք ռայոնական ժողովի պարապմունքների օրակարգը» եւ «Արձանագրութիւն Արեւել. Բիւրոյի շրջանի ռայոնական ժողովների» խորագիրներով: Ռայոնական այս ժողովի որոշումները տպագիր լոյս տեսած են 22 էջնոց գրքոյկով: Զանց առած ենք գրքոյկին առանձին հրատարակութիւնը, նկատի ունենալով որ այդ «Որոշումները» ամբողջութեամբ տրուած են արդէն «Արձանագրութեանց» մէջ՝ տարբեր տառերով:

5.- Փաստ. 1588-1 եւ 2ը, ձեռագիր 18 էջ, «Հ.Յ.Դ. Կովկասեան ռայոնի արտակարգ ժողով» (1909 թ. Ապրիլ 1–5):

ԽՄԲ.

Փաստ. 1577-1

Ա.– ՍԱՐՈՒՍՏԱՆԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ-ԺՈՂՈՎ 1903 Թ.

Ներկայացուած փաստաթուղթը, հակառակ 1903 թուականին պատկանելուն անտիպ է եւ տեղ չէ գտած «ՆԻՒԹԵՐ»ու նախորդ հատորներու շարքին մէջ: Շահեկան է ան մէկէ աւելի պատճառներով: Ժողովին ներկայ են իրենց պատգամաւորներով Սարուստան-Ռուսիոյ բոլոր կեդր. կոմիտէութիւնները, բացառութեամբ Նալբանդի (Հիւս. Կովկաս): Օրակարգի հարցերու ցուցակը մտածել կու տայ որ ան սահմանուած էր 1904ի սկիզբը գումարուելիք Հ.Յ.Դ. Երրորդ Ընդհ. Ժողովին, ուր քննութեան պիտի ենթարկուէին «Համագումար» այս ժողովին արծարծուած բոլոր հարցերը, ներառեալ Կովկասի ընկերային խմորումները եւ բանուորական շարժումները:

Ինչ կը վերաբերի մասնակիցներուն, անոնցմէ ոմանց անուններուն կը ծանօթանանք արձանագրութեանց ընդմէջէն, բայց ո՛չ իրենց ներկայացուցած շրջաններուն: Վայրը նշուած է մեծատառ Ռ-ով, բայց յայտնաբար Պաքուն է, ինչ որ երեւան կու գայ Ռոստոմի մէկ նամակէն, գրուած Թիֆլիսէն 1903 թ. Մայիսի 10ին,– «... *Մի քանի օրից յետոյ գնալու եմ ինքս Բագու, հարսանիքի եմ հրաւիրուած*»: Ժողովի վերջին նիստը կը կրէ 2 Մայիս թուականը: Նոյն տարուան Յունիսի 5ին գրած նամակին մէջ Ռոստոմ կ'անդրադառնայ նաեւ ժողովին ընդունուած մէկ քանի բանաձեւերուն:

Սարուստանի դաշնակցական Համագումար ժողովը բացուեցաւ Ռ-քաղաքում Մայիս ամսին:

Ներկայ էին՝ Մեծ քաղաքի, Նաւահանգստի, Քարի, Ջրաբերդի, Ոսկանապատի, Ապառաժի, Մրգաստանի, Եկեղեցու, Այգեստանի[1] *եւ Բիւրոյի ներկայացուցիչները: Հրաւիրուած էին ժողովին խորհրդակցական ձայնով անցեալ ունեցող ընկերներ եւ տեղական մարմիններից տասներկու հոգի:*

Բացակայ էին Ախալց[խայ]ի եւ Ախալք[ալաք]ի ներկայացուց[իչները]. խնդիր եղաւ նոր տեղական կոմ. անդամներ հրաւիրել, բայց ձայների մեծամասնութեամբ մերժուեց: Ժողովը այդ կազմի մէջ յայտարարուեց վաւերական համագումար ժողով եւ անցաւ օրակարգի հարցերին:

Նախապատրաստական նիստերից յետոյ ժողովը բացուեցաւ Մայիսի 16ին: Նախ քան օրակարգի խնդիրներին անցնելը ժողովը ցանկութիւն յայտնեց լսել Դաշնակցութեան վերջին տարիների գործունէութեան մասին, որ եւ վճռուեց ձայների մեծամասնութեամբ:

Բիւրոյի ներկայացուցիչը ընդհանուր գծերով պատկերացրեց այն գործունէութիւնը որ ունէր Դաշնակցութիւնը վերջին ընդհանուր ժողովից յետոյ մինչեւ մեր օրերը: Շօշափուած հարցերը վերաբերւում էին Ընդհանուր Ժողովի որոշած կեդրոնացման կէտերին: Ժողովը հարցապնդումներ արեց Բիւրոյի ներկայացուցչին պարզելու այն պատճառները որով կենտրոնացման կէտերը չկարողացան որեւէ լուրջ գործունէութիւն ցոյց տալ: Պարզուեց որ 1) վերջին տարիներին շատ դժուար է եղած զէնքերի փոխադրութեան գործը, 2) Ցեղափոխական գործունէութեանը որոշ չափով ազդած են հայկական ջարդերը՝ առաջ բերելով ռէակցիա: Բացի ժողովրդի մէջ երեւցած ռէակցիայից այն ազդել [է] նաեւ անիմաստ[?] կերպով յեղափոխական գործիչների վրայ, որի եւ այլ զանազան պատճառներով, Ընդհ. Ժողովի ընտրած պատ[ասխանատու] մարմինների անդամներից շատ քչերը մուտք էին գործել Երկիր: 3) Դաշնակցութեան բիւրջէն որ համեմատած առաջին տարիներին, 98-ից յետոյ հաւասար էր նրա կէսին — ի նկատի չունենանք 901-ից յետոյ երեւացած օգնութեան մեծ չափերը, որ հասնում է անցեալի քանակին:

Եղան խորհրդածութիւններ զէնքերի փոխադրութեան գործը արագացնելու համար. մինչեւ այժմ ձեռք առնուած միջոցներին աւելացնել 1) նոր գինակիր խմբեր, 2) հիմնել կանոնաւոր կայարաններ, 3) ունենալ ճիաւոր խմբեր զէնք փոխադրելու համար: Ժողովը կանգ առաւ նաեւ այն խնդրի շուրջը թէ որքան նպատակայարմար է եղած Ընդհանուր Ժողովի որոշած կենտրոնացման կէտերը երկրում գործի յաջողութեան տեսակէտից: Ժողովականների մեծ մասը պնդում են՝ ի նկատի ունենալով ամբողջ տասը տարուայ փորձերը, որ մի-մի զօրեղ ապացոյցներ են թէ անհնարին է երկրում որեւէ կենտրոնացում առաջ բերելու, Ընդհանուր Ժողովը լուրջ ուշադրութիւն դարձնէր գործունէութեան եղանակի գլխաւոր կէտերը հիմնովին փոփոխութեան ենթարկելով:

Այնուհետեւ օրակարգի հարցերի համար զեկուցումն կազմելու մասնաժողովներ ընտրուեցին:

1) *Կարգապահութեան եւ դատաստանական մարմինների մասին.* 5 հոգուց (*Ռոս[տոմ], Ֆարհ[ատ], Հայկ, Նիտ[րա], Դում[ան]*[2]):

2) *Բանուորական շարժում եւ ռուսացման խնդիրներ.* 5 հոգուց (*Նժ., Անջ., Մար*[?][3], *Ալ.* եւ *ուսան.*):

3) *Բիւրոյի կազմ եւ տեղափոխութեան մասին. Ոսկ[անապատի] ենթակոմ.*

4) *Արտակարգ միջոցների մասին. Նոյն կոմիտ.*

5) *Զինուորական մարմնի համար Ջրաբերդի եւ Քարի կոմիտ[էներ], նաեւ Ֆարհատ*

6) *Հրատարակութիւններ Հայ յեղափոխական պատմութեան եւ ուսանողական կոմիտէների մասին Եկեղեցիի կոմ[իտէի] ներկ[այացուցիչ]:*

ՕՐԱԿԱՐԳ

1) *Ընդհանուր Ժողով*
2) *Գործունէութեան եղանակի մասին կարծիք*
3) *Կարգապահութիւն*
4) *Մեր բռնելիք դիրքը*
   ա) *Դէպի հակայեղափոխական եւ հակադաշնակցական գործողութիւնները, անհատները, խմբերը եւ մամուլը*
   բ) *Դէպի հնչակեան կուսակցութիւնները*
   գ) *Դէպի բանուորական շարժումը*
   դ) *Դէպի ռուսացման խնդիրներ*
5) *Դրամական խնդիրները*
6) *Հարիւր հազարի վիճակախաղ*
7) *Հաշուետեսութեան կանոնաւորում*
8) *Բիւրոյի կազմը եւ տեղափոխութիւնը*
9) *Ազատ շրջիկներ (պրոպագանդա եւ կազմակերպելու համար)*
10) *Զինուորական մարմին*
11) *Տեղական դատական մարմիններ*
12) *Ազգային ֆոնդ*
13) *Հրատարակութիւնների հարցը եւ հայ յեղափոխ. պատմութեան գրելը*
14) *Ուսանողական կոմիտէները*
15) *Ապագայ Համագում. ժողովի համար խորհրդածութիւններ եւ ձայների բաշխումն:*

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Գործունէութեան եղանակի մասին եղան երկու նիստեր ուր երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան թէ որքան նպատակայարմար է Ընդհանուր Ժողովի որոշումները այս խնդրի վերաբերեալ: Վիճաբանութիւնները գլխաւորապէս պտտւում էին խառն գործունէութեան (ցոյց եւ կռիւ) եւ զուտ ցուցական գործունէութեան շուրջը. առաջարկուեցան մի քանի բանաձեւեր, որոնք վիճաբանութիւնների ամփոփումն էին եւ քուէարկութեան ենթարկուելով ոչ մէկն էլ չանցաւ: Վերջը ժողովը այն եզրակացութեան եկաւ, որ խնդիրը շատ լուրջ լինելով առ այժմ վերջացած չհամարել այլ յետաձգել յետագայ նիստերին:

Առաջարկուած էին հետեւեալ բանաձեւերը

1) *Ցեղափոխական գործունէութեան կեդրոնացումն ծովափնեայ քաղաքներում ոչ մի տեղ չտալով երկրին:*

2) *Ցեղափոխական կռիւ թէ երկրում եւ թէ ծովափնեայ քաղաքներում ուժեղ թափով:*

3) *Ցուցական գործունէութիւն ծովեզերեայ քաղաքներում հնարաւոր միջոցներով ինչ չափով էլ արտայայտուելու լինէին, եւ պարտիզանական կռիւ ու տեռոր երկրում՝ ձեռքի տակ արդէն ունեցած միջոցներով, սպասելով կարեւոր միջոցները եղածի արդիւնաւոր գործադրութիւնից յետոյ միայն:* (*Դուման*):

4) *Ցեղափոխական կռիւ թէ ծովափնեայ քաղաքներում եւ թէ երկրում առաջնորդութիւնը տալով առաջնին* (*Աբ.*)[4]:

5) *Կազմակերպութեան ամենագլխաւոր ոյժերը գործադրել բուն երկրում ժողովրդին գինելու եւ ինքնապաշտպանութեան միջոցներ տալու համար, բոլորովին երկրորդական տեղ տալով երկրից դուրս՝ ցոյցերին* (*Թոփ.*)[5]:

6) *Կենտրոնացում Պոլսում երկրին տալով երկրորդական տեղ* (*Մար* [?])[3]:

7) *Պարտիզանական կռիւ երկրի ներսը եւ ցուցական գործունէութիւն ծովեզերեայ քաղաքներում, մէկը միւսին իբրեւ արձագանգ* (*Նիտրա*) 5 *ձայնով* (*խսկական ձայներ*):

Ժողովը որոշեց խորհրդակցական ձայներով հրաւիրուածներին այս հարցի նկատմամբ տալ ձայնի իրաւունք, որ եւ ընդունուեցաւ. ձայնից օգտուեցան 2 հոգի:

1.- Ծածկանունով նշուած տեղանունները կը համապատասխանեն հետեւեալ վայրերուն՝

Մեծ քաղաք – Թիֆլիս
Նաւահանգիստ – Պաթում եւ Սեւ ծովեան ափեր
Քար – Ալեքսանդրապոլ
Ջրաբերդ – Կարս
Ոսկանապատ – Պաքու
Ապառաժ – Ղարաբաղ եւ Զանգեզուր
Մրգաստան – Երեւան
Եկեղեցի – Մոսկուա
Այգեստան – Գանձակ

2.- Յիշուած անուններէն անծանօթ կը մնայ Հայկը: Յայտնի են Ռոստոմը, Նիկոլ Դումանը. Ֆարհատը՝ Օհանջանեան Սարգիսն է, Նիթրան՝ Յար. Շահրիկեանը:

3.- Մարին դիմաց հարցական դրած ենք, որովհետեւ ան Կիլիկիոյ մէջ ծերբակալուած էր ու Մարաշի բանտը կը մնար մինչեւ 1904ի վերջերը: Արդեօ՞ք Մատիկեան Նիկոլի կրճատումն է:

4.- Արդեօ՞ք Հայր Աբրահամն է (Աւետիք Սահակեան):

5.- Հաւանաբար Թոփչեան Եղիշէ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Համագումար ժողովը ի նկատի ունենալով անհրաժեշտութիւնը Ընդհանուր Ժողովի, առաջարկեց հնար եղածին չափ շուտափոյթ կերպով հրաւիրել Ընդհանուր Ժողով։

Ժողովը միաձայն վճռեց առաջարկել Արեւ. եւ Արեւմտ. Բիւրոյին գումարել ժողով ոչ ուշ քան աշունը եւ անյապաղ ցրել հրաւիրատոմսեր։ Ոսկ[անապատի] կոմիտէն ընտրուեց որպէս աջակից մարմին Ար[եւելեան] Բիւրոյին III Ընդ. Ժողովի գումարման Ո[սկանապատ]ում, որը եւ առաջարկեց իր ամբողջ պատրաստականութիւնը եթէ Ընդհ. Ժողովը կը կայանայ իր շրջանում։

ՄԵՐ ԲՈՒՆԵԼԻՔ ԴԻՐՔԸ ԴԷՊԻ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ի նկատի առնելով,որ վերջին տարիներս Ռուսաստանի զանազան կէտերում ուժեղ կերպով տեղի ունենում են կազմակերպուած բանուորական ցոյցեր եւ որը արձագանգ է գտել Կովկասում վերջին 2-3 տարին, ժողովը համարեց այս հարցը կենսունակ եւ խոշոր երեւոյթ Կովկասահայերի կեանքում եւ երկար վիճաբանութիւններից յետոյ առաջարկուեց հետեւեալ բանաձեւերը.

1.- Համագումար ժողովը քննելով Դաշնակցութեան եւ հայ սոցիալ դեմոկրատիայի փոխադարձ յարաբերութեան խնդիրը, նպատակայարմար համարեց 1) հարցնել ականաւոր սոցիալիստների (Բեբէլ, Բերնշտայն, Վանտըրվելտ, Ժօրէս եւայլն) կարծիքը այդ հարցի մասին եւ հրատարակել առանձնապէս գրքոյկով, 2) թարգմանաբար կամ քաղուածօրէն հրատարակել նիւթեր նոյն խնդիրների մասին, օգտուելով յայտնի հեղինակների աշխատութիւններից. 3) իսկ բուն գործնական հողի վրայ, բարեկամական յարաբերութիւններ հաստատելու համար կազմել մի որոշ ծրագիր, որ եւ յանձնել Ոսկ[անապատի] եւ Մգ.[Մրգաստանի?] քաղ. կոմիտէներին (Թոփ.)։

2.- Բանուորական շարժումը լինելով մի խոշոր երեւոյթ Կովկասի կեանքում, ընտրել մի յանձնաժողով, որ պիտի մշակէ դաշնակցական կազմակերպութեան բռնելիք դիրքը այդ խնդրի նկատմամբ եւ առաջարկէ իբրեւ կարծիք Ընդհանուր Ժողովի քննութեան (Ն[իթ]ր[ա])։

3.- Բանուորական շարժումը ընդունելով երկրի անհրաժեշտ երեւոյթ եւ կենսունակ խնդիր՝ աջակցել նրան այն չափով, ինչ չափով հնարաւոր է այդ գործնականապէս, չխլելով անհրաժեշտ ոյժեր ազգային յեղափոխական գործից։

4.- Բանուորական խնդրում առ այժմ բռնել չէզոք դիրք։

5.- Համակրելով հանդերձ բանուորական խնդիրը Դաշնակցութիւնը չէ կարող ակտիւ մասնակցութիւն ունենալ այդ շարժման մէջ, քանի որ ազգային դատը աւելի տագնապալի է եւ մեր ոյժերը երկու գործի համար անբաւարար։

Ժողովը վիճաբանութեան ժամանակ ի նկատի ունեցաւ նաեւ արտասահմանի ուսանողական Մոլէկիւլ կոմիտէի[6] որոշումները այդ հարցի առթիւ։

ԱՋԳԱՑԻՆ ՖՈՆԴ

Ազգային ֆոնդի համար առաջարկութիւն էր եղած Զրաբերդի, Քարի եւ Մրգաստանի կոմիտէների կողմից։ Սրանց ներկայացուցիչները պնդում են ֆոնդի անհրաժեշտութիւնը ի նկատի ունենալով, որ նա ունենալով որոշ հիմնական գումար ժամանակի ընթացքում կ'աճի եւ վստահութիւն ներշնչելով հասարակութեան կարող է խոշոր գումարներ ստանալ ապագայ եւ ներկայ գործունէութեան համար եւ դրա համար առաջարկում էին որոշ % յատկացնել դրամարկղից. դրամարկղից կազմուելիքով կարելի է գործ գլուխ բերել։

Ժողովը առարկեց որ յեղափոխական գործունէութեան ընթացքում միանգամայն անարդարութիւն կը լինէր հաւաքել դրամներ եւ պահեստի տալ, որով մենք աւելի անվստահութիւն ներշնչած կը լինէինք հասարակութեան, քան համակրանքի արժանացած եւ գտնելով անիրագործելի առաջարկ մերժեց, միայն վերապահելով այդ հարցը Ընդհանուր Ժողովի քննութեան։

ՀԱՐԻՒՐ ՀԱՋԱՐ ՌՈՒԲԼՈՒ ՎԻՃԱԿԱԽԱՂԸ

Ոսկանապատի կենտրոնական կոմիտէն իր վերջին երկու տարուայ փորձերից գալով այն եզրակացութեան, որ անհնար է ընթացիկ նուիրատուութիւններով որեւէ լուրջ գործ սկսել, մտածել է կազմել 100,000ի մի վիճակախաղ որի համար առաջարկում է Համագումար ժողովին աջակցել նրան ըստ կարելւոյն, տոմսերի վաճառման գործում. ժողովը զբաղուելով այդ հարցով, վճռեց միանգամայն համակրելով այդ ձեռնարկը 1) աջակցել իր ոյժերի չափ 2) ստացուած դրամը տոմսերի վաճառումից կեդրոնացնել Ոսկանապատի դրամարկղում 3) վիճակախաղը խաղալ Ցունուարի 1 1904 թուին 4) փողի գործադրութիւնը յանձնել Ընդհանուր Ժողովին 5) Եթէ անհնար եղաւ կազմելիք Ընդհանուր III Ժողովը, փողը ներկայացնել Բիւրոյին, իսկ գործադրութիւնը վերապահել Ռայոնական ժողովին։

Ժողովը որոշեց կոմիտէներին իրաւունք տալ տոմսեր վաճառելուց իրենց կամ օտար շրջաններում, հարկաւոր եղած դէպքում դրսում ծախսել այդ գումարից։

6.- Մոլէկիւլ կը կոչուէր Պերլինի դաշնակցական ուսանողական միութեան կոմիտէն։

ԴՐԱՄԱԿԱՆ ԽՆԴԻՐ[7]

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովը ի նկատի ունենալով, որ Դաշնակցութեան դրամարկղները զուրկ են միջոցներից, որ դա դանդաղեցնում է գործի ընթացքը, որոշեց յանձնել կոմիտէներին կազմ[ակերպ]ելու ընդհանուր հանգանակութիւն ըստ կարելոյն շուտափոյթ կերպով։

ԱՐՏԱԿԱՐԳ ՄԻՋՈՑՆԵՐ

Երկար վիճաբանութիւններից յետոյ, որ զբաղեցրեց երկու ժողով, Ռայոնական ժողովը վճռեց առաջարկել իբրեւ կարծիք Ընդհանուր Ժողովին, հետեւեալ բանաձեւը՝

II Ընդ. Ժողովի որոշումն տեռորի հանգանակութեան ատեն, 5 յօդ.ը (Ընդ. Ժողովը յանձնարարեց կոմիտէներուն ամէն ջանք գործ դնել խոյս տալու սպանութեան դիմելէ դրամ հանգանակելու գործին մէջ) վերածել հետեւեալ կերպով.

Ընդհանուր Ժողովը յանձնարարեց կոմիտէներուն դրամ հանգանակելու գործին մէջ խոյս չտալու արտակարգ միջոցներէ եթէ տեղական պայմանները պահանջում են այդ։

Քուէարկուեց 3 ձայնով ընդդէմ 3-ի երկու ձայն ձեռնպահ մնացին։

ԴԷՊԻ ՀՆՋԱԿԵԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ժողովը վիճաբանելով հնչակեան կուսակցութիւնների վերաբերմամբ ճանաչում է նրանց իբրեւ յեղափոխական կազմակերպութիւններ։ Վերջերս եւ առ հասարակ, հնչակեան կուսակցութեան մէջ կատարուած զեղծումները ժողովին անվստահութիւն էր ներշնչում որեւէ կապ հաստատել նրանց հետ. երկար տարիների փորձերը եւ բանակցութիւններ միշտ անցած էին անհետեւանք։ Ժողովը ընդունելով համերաշխ եւ միացած գործունէութիւնը տարբեր կուսակցութիւնների՝ իբրեւ գրաւական մեր դատի աւելի ուժեղ արտայայտութեան, երկար վիճաբանութիւններից յետոյ փակեց այդ հարցը առաջարկելով հետեւեալ բանաձեւերը.—

1.- Համագումար ժողովը առաջարկում է Ընդհանուր Ժողովին ուժեղ միջոցներ ձեռք առնել միութեան հարցը գլուխ բերելու համար, գոյութիւն ունեցող յեղափոխական կազմակերպութիւնների հետ. իսկ եթէ այդ անհնարին է, գոնէ համերաշխ գործունէութիւն ունենալ։ Քուէարկուեց 3 ձայնով։

2.- Համագումար ժողովը ի նկատի ունենալով, որ հնչակեան կուսակցութիւնների մէջ վերջերումս տեղի ունեցած երկպառակտումները, փոխադարձ մերկացումները նոր ապացոյցներ են տալիս հնչակեան կազմակերպութեան անհաստատութեան, յանձնարարում է Ռուսաստանի կոմիտէներին վերապահութեամբ վերաբերուել դէպի հնչակեան կուսակցութիւնների ամբողջութիւնը. համերաշխ գործ սկսել հնչակեան խմբերի հետ խիստ ընտրութեամբ։ (Քուէարկուեց չորս ձայնով. մի ձայն ձեռնպահ)։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Զինուորական մարմին կազմելու առաջարկը եղած էր Զրաբերդի եւ Քարի կոմիտէների կողմից։ Ժողովը լսելով այդ կոմիտէների ներկայացուցիչների առաջարկը, երկար վիճաբանութիւններից յետոյ իբրեւ բանաձեւ առաջարկեց հետեւեալը

1.- Համագումար ժողովը կարիք է զգում ունենալու մի նոր ղեկավարող զինուորական մարմին, պատերազմական բոլոր գործերը ամբողջացնող եւ ղեկավարող, բայց նրա կազմը եւ իրաւասութիւնն ու պարտականութիւնների սահմանը, այլեւ փոխադարձ յարաբերութիւնը կազմակերպութեան միւս մարմինների հետ, թողնուում է Ընդհանուր Ժողովի քննութեան (Քուէարկուեց՝ հինգ ձայն ընդդէմ 2-ի)։

ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Ի նկատի ունենալով որ վերջերս հայ մամուլի մէջ երեւան են գալիս սխալ կամ յեղաշրջուած լուրեր ու յօդուածներ հայկական դատի եւ դաշնակցական կուսակցութեան վերաբերմամբ.

Ժողովը վիճաբանելով այդ հարցի առթիւ, գտաւ միանգամայն զգուելի այդօրինակ վերաբերմունքը հայ մամուլի դէպի յեղափոխ. կուսակցութիւնները եւ յանձնարարեց Ռուսաստանի կոմիտէներին՝

1.- Ամէն տեղի կոմիտէի իրաւունք է տրւում որեւէ յօդուածի, յեղաշրջուած լուրի որը լոյս է տեսնում այս կամ այն լրագրում եւ վերաբերում է մեր դատին եւ դաշնակցական կազմակերպութեան, նախօրօք տեսակցուել — եթէ յօդուածագիրը անյայտ է — մեր ներկայացուցչի միջոցով այն թերթի խմբագրի հետ որտեղ տպուած է այդ յօդուածը կամ լուրը եւ բացատրութիւն պահանջել. եթէ բացատրութիւնը անբաւարար համարուեց կոմիտէն կարող է գործադրել այն միջոցներից մէկն ու մէկը որ առաջարկեց Ռայոնական ժողովը։ Եթէ յօդուածագիրը յայտնի է, կոմիտէն կարող է իր հաշիւ վերջացնել յօդուածագրի հետ, ընդունելով որ իւրաքանչիւր յայտնի ստորագրութեամբ յօդուածի պատասխանատուն ինքը յօդուածագիրն է։ Անյայտ ստորագ-

7.- Ակնարկութիւն, հաւանաբար, «Փոթորիկ»ին, այսինքն բռնի դրամահաւաքին։

րութեամբ լոյս տեսած յօդուածի հեղինակի ով [լինել] չլինելը եթէ չպարզուեց խմբագութեան կողմից, խմբագիրը ինքն է պատասխանատու համարւում։

ՀԱՇՈՒԵՏԵՍՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱՒՈՐՈՒՄՆ[8]

Ժողովը զբաղուելով հաշուետեսութեան կանոնաւորման խնդրով, ի նկատի ունեցաւ անցեալ Ընդհանուր Ժողովի կանոնաւորած բլանկները, որով պիտի կանոնաւոր կերպով կոմիտէները հաշիւները ներկայացնէին Բիւրոյին, բայց դժբախտաբար այդ բլանկները գտնուեցան անյարմար. բացի այդ, ժողովը մատնացոյց արեց այն հանգամանքի վրայ, որ թէ կոմիտէները եւ թէ Բիւրոն առանձնապէս շատ թոյլ են գտնուած հաշուետեսութեան խնդրում։ Երկար վիճաբանութիւններից յետոյ ժողովը առաջարկեց հետեւեալ բանաձեւը, որ եւ ընդունուեց միաձայն.

Ռայոնական ժողովը ցաւելով տեսաւ, որ Ընդհանուր Ժողովի որոշումն՝ յօդ. 40րդ կանոնաւոր հաշուետեսութիւնը Բիւրոյի կողմից հարկաւոր ուշադրութեան չէ արժանացած, ինչպէս տարիների ընթացքում, նոյնպէս եւ այժմ. Ռայոնական ժողովը անգիտակ մնաց կազմակերպութեան տարեկան ընդհանուր հասոյթի ելքի եւ մուտքի մասին ինչպէս նաեւ անտեղեակ մնաց թէ Երկրում եւ թէ Երկրից դուրս ռազմական գործի վերաբերմամբ։

Որոշեց՝

Իւր դժգոհութիւնը յայտնելով Բիւրոյին այդ առթիւ նորից չեչտել 40 յօդ. իրական գործադրութիւնը։

8.- Այս բաժնի պարբերութիւնը, այսինքն՝ միաձայնութեամբ ընդունուած բանաձեւը, առանձին թերթով կցուած է ներկայ փաստաթուղթին հետեւեալ մակագրութեամբ.– «Եօթներորդ նիստ, 22 Մայիսի»։

Կովկասի ռայոնականներու շարքին կը գտնենք 1906 թ. Հոկտեմբերին գումարուած «Ալեքսանդրապոլի տաճկահայ ժողովը»։ Հրաւիրուած են Կովկասի եւ յարակից մարզերուն (Խրիմ, Օտեսա եւայլն) դաշնակցական այն պատգամաւորները, որոնք կը ներկայացնեն Համիտեան սարսափներէն փախուստ տուած եւ ռուսական սահմաններուն մէջ պատսպարուած հարիւր հազարաւոր արեւմտահայ գաղթականութիւնը։ Հրաւիրողը Արեւելեան Բիւրոն է. նպատակը՝ 1907ի Չորրորդ Ընդհ. Ժողովի նախօրեակին բիւրեղացում առաջ բերել՝ Դաշնակցութեան Խորհուրդին կողմէ հրապարակուած «Կովկասեան նախագծին» շուրջ։ Մէկ ու կէս տարիէ ի վեր կրքոտ վէճերն ու սուր բախումները կ'ալեկոծէին կուսակցութիւնը։ Ծանօթ են ծայրայեղ ձախակողմեան երիտասարդութեան եւ նախկին խմբապետ Միհրանի շուրջ հաւաքուած խմբակներու միջեւ հրահրուած պայքարները, անոնց յայտնի եւ թաքուն դրդապատճառները, լի պառակտումի սերմերով։ Դաշնակցութեան գործունէութիւնը պիտի մնա՞ր բացառապէս ուղղուած Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան դատին, թէ՝ հաշուի առնելով կովկասեան նոր իրականութիւնը, յեղաշրջում պէտք է կատարէր առանձնաբար դէպի ընկերային-տնտեսական խնդիրներու լուծումը՝ միանալով այդ հողին վրայ ծաւալող համառուսական շարժումներուն։

Ընդհ. Ժողովին պիտի իյնար, անշուշտ, դժուարին այս երկընտրանքէն ելք գտնելու առաքելութիւնը։ Ատիկա պիտի ըլլար միաձուլումը հակոտնեայ համարուող երկու տեսակէտներուն,– մէկ եւ միեւնոյն դրօշին տակ առաջ տանիլ պայքարը զոյգ ճակատներուն վրայ հաւասարապէս։ Բայց կարծես փրկարար այդ ելքը կ'ուրուագծուի արդէն Ալեքսանդրապոլի ժողովին ու անոր կցուած արձանագրութիւններուն մէջ, հոգ չէ թէ ժողովականներու անմշակ ու պարզունակ լեզուով, բայց անպայման առողջ բնազդներու թելադրականութեամբ։

Փաստ. 15-41

Բ 1.– ԺՈՂՈՎԻ ՀՐԱՒԷՐ

Ընկերներ!

Աչքի առաջ ունենալով Կովկասեան գործունէութեան նախագծի շուրջը ծագած տարաձայնութիւնները՝ Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան Բիւրոն սրանով դիմում է անում Ռուսաստանի սահմաններում ապրող դաշնակցական թուրքահայ ընկերներին, առաջարկելով նրանց որոշ եզրակացութեան գալու համար կազմել խորհրդակցական ժողով։ Պատգամաւորների միջոցով եզրակացութիւնները տրուելու են ի գիտութիւն առաջիկայ Ընդհանուր ժողովին։

Խորհրդակցական ժողովի համար ամէն մի 500 դաշնակցական ընկեր ուղարկում են մէկ պատգամաւոր։

Կռուի վայրերում գտնուող ընկերները ամէն մի շրջանից ուղարկում են մի մի ներկայացուցիչ անկախ իրենց թուից։ Այդ վայրերն են՝ Այգեստան, Ապառաժ, Սիւնիք, Մրգաստան, Ոսկանապատ։ Ժողովի տեղի եւ ժամանակի մասին կը յայտարարուի առանձին՝ ընտրուած պատգամաւորներին։ Ընտրութիւնները պէտք է սկսուեն անմիջապէս եւ վերջնական Հոկտ. կէսին։ Ընտրուածների անունները հարկաւոր է անմիջապէս յայտնել Բիւրոյին։

Ժողովը, գումարուելուց յետոյ, իր կողմից հրաւիրում է խորհրդակցական ձայների իրաւունքով այն ընկերներին, որոնց մասնակցութիւնը անհրաժեշտ է համարւում։

Ամէն մի պատգամաւոր պէտք է բերի իրեն ընտրողների ցանկը եւ նրանց կարծիքներով արձանագրութիւնը։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Փաստ. 1593-41

Բ 2.– ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՏԱՃԿԱՀԱՅ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ.Յ.Դ. Արեւելեան Բիւրոյի հրաւիրած Ռուսիոյ սահմաններում գտնուող տաճկահայ դաշնակցականների պատգամաւորական ժողովների:

I

Արձանագրութիւն
Նախապատրաստական ժողովների

Ա. Նիստ

Արձանագրութիւն 1906 թիւ Հոկտ. 27-ի երեկոյեան կայացած ժողովների, ա.- Նախապատրաստական ժողովի, նախագահութեամբ Հ.Յ.Դ. Ա[ռեւելեան] Բիւրոյի ներկայացուցիչ ընկեր Ս-ի:

Ընկեր նախագահը ժողովը բանալով առաջարկեց ընտրել երկու քարտուղարներ: Բաց քուէարկութեամբ ընտրուեցին — ընկերներ Սարօ եւ Միհր:

Բոլոր այն շրջանները որոնք պիտի մասնակցէին այս ժողովին — քսանեւութն են. ժողովը սկսեց ստուգել թէ, ո՞ր շրջանից ո՞վ է եկել, քանի հոգի պիտի մասնակցէին ընտրութեանը եւ քանիսն են մասնակցել. ընտրութիւնը ինչ ձեւով է եղել եւ ժողովը այդ ընտրութիւնները վաւերակա՞ն է համարում թէ ոչ: Քննութիւնը տուաւ հետեւեալ պատկերը:

I Մեծ Քաղաք[1] *— Ընտրութեանը պիտի մասնակցէին մօտաւորապէս 4000 հ[ոգի]— մասնակցել են մօտ 1100 հ. ընտրելով երեք պատգամաւոր հետեւեալ ձեւով — մի խմբակցութիւն կազմուած 760 հ[ոգի] ընտրել է պատգամաւոր Պանդուխտին եւ Բլէջանին: Իսկ 350 հոգի էլ առանձին ընտրել է Ծծմակին — ընտրութիւն վաւերական է:*

II Արաքս[2] *— Ընտրութ. մասնակցելու իրաւունք ունեն 800 հ. ընտ. մասնակցել են 400 հ., ընտրել են պատգամաւոր Հանդարդին — համար[ուեց] վաւերական:*

III Քար[3] *— Շրջ. ընտ. իրաւունք ունեցողների թիւը 1200. մասնակցել են 300 հ. տալով երկու պատգ. — Կոօ եւ Խորէն — համար[ուեց] վաւեր:*

IV Կլորիկի[4] *— Շրջ. ընտ. 400 — մասնակցեցան բոլորը — ընտ. պատգ. Սարոյին — համար[ուեց] վաւ[եր]:*

V Ապաստան[5] *— Ընդ. հաշւում են 700 հ.— ընտ. մասնակցել են 350 հ[ոգի] — ընտ. պատգամաւոր Ղարիբին — համար[ուեց] վաւեր:*

VI Կայծ[6] *— Շրջ. 500 — մասնակցել են բոլորը — ընտ. պատգ. Վահանին — համար[ուեց] վաւեր:*

VII Անապատ[7] *— Շրջ. ընտր. 400 — մասնակցել բոլորը — ընտ. պատգ. Թօփալ Քրիստոս — վաւեր:*

VIII Քասախ[8] *— Շրջ. ընտր. 300 — մասնակցել են 50 հ. ընտրելով երկու պատգ. Միհր եւ Սողոմոն: Ժողովը ընտրողների թիւը քիչ գտնելով — համաձայն Թռուցիկի*[8a] *հրահանգի — այդ պատ[գամաւորներից] մէկին ձայնի իրաւունքից զրկեցին — երկու պատգ. իրար մէջ համաձայնելով՝ Սողոմոնը զրկուեց ձայնից. մնաց իբրեւ խորհրդակցական:*

IX Շարայի շրջ.[9] *— Ա- մասն. ընդ. 600 — մասնակցեցան բոլորը — ընտր. Վրէժխնդիր. վաւեր.*

X Ոսկանապատ[10] *— ընտ. 1000 — բոլորն էլ մասնակցել են — ընտրել են երկու պատգ. Սորմագէշ եւ Համօ — վաւեր.:*

XI Հանքի շրջ.[11] *— ընտ. 500 — բոլորը մասնակցել — ընտրել են Փայլակին — վաւերացուեց:*

XII Ջրաբերդ[12]*. Թախտ.*[13]

ա.մաս- ընտ. 500 — բոլորը մասնակցել — ընտրել- պատգ. Ջայրմայր. վաւեր.:

բ. մաս- ընտ. 800 — մասնակցել են բոլորը — ընտ. պատգ. Բժշկին — վաւերական:

գ. մաս — ընտ. 500 — մասնակցել բոլորը — ընտ. պատգ. Ս-ին վաւերական:

XIII Ջրաբերդ[12] *— հաշւում է 1500 — մասնակցել 800 — ընտ. պատգ. Պլեվէ. վաւերակ:*

XIV — Այգեստան[14] *— Շրջ. ընտ. 32 — իբրեւ կռուի վայր իրաւունք ունեն համաձայն Թռուցիկի տալու մի պատգամաւոր — մասնակցել են 20 հ.— ընտ. պատգ. Սիմոն — վաւերական:*

XV — Պարտիզաւան[15] *— ընտ. 1500, մասնակցել 500. ընտ. պատգ. Խորէն — վաւերական:*

XVI Մրգաստան[16] *— Շրջ. ընտր. 1000 — մասնակցել 500 — ընտ. պատգ. Մ-ին. վաւերական:*

XVII Միւնիք — Շրջ. իբրեւ կռուի վայր — մասն[ակցել են] մի խումբ կռուողներ — ընտ. պատգ. Սուրէն.

Իսկ հետեւեալ տասնեւմէկ շրջաններից ոչ մի պատգ. չի եկել:

I Նաւահանգիստ[17] *եւ Բ. ընտ. 2500 — կարող էր տալ — 5 պատգամաւոր:*

II Գաղթավայր[18] *— ընտ. 1500 — տալ կարող էր 3 պատգ.*

III Եկատ[երինբուրգ] - ընտ. 500 — պատգ. 1

IV Սեւ-Սիմ - ընտ. 500 — պատգ. 1

V Նով-Անապ. - ընտ. 500 — պատգ. 1

VI Մայկօպ — ընտ. 500 — պատգ. 1

VII Սուր[ամ] —ընտ. 1000 — պատգ. 1

VIII Աբրիխ[ամիշ] ընտ. 500 — պատգ. 1

IX Կուզ-Նախ. [Գողթան[?]-[Նախիջեւան][19]*- ընտ 500 — պատգ. 1*

X Թմբուկ[20] *— ընտ. 300 — պատգ. 1*

Տասնեւեօթը մասնակցող շրջաններում հաշւում է 16900 ընտրող — որոնցմէ ընտրութեան մասնակցել են 9800 հ.: Ջմասնակցող 11 շրջաններումն հաշւում է ընտրող — 9800 հ. ուրեմն բոլոր 28 շրջաններում հաշւում է 25700 հ. ընտրող, որոնցից ընտրութեան մասնակցել են 9800 հ. 17 շրջաններից:

Ապա ընկ. նախագահը հարց տուաւ թէ ժողովականները տեսնելով ընտրութիւնների վերոյիշեալ պատկերը պատգամաւորների այս թուով — ժողովը օրինաւոր կը համարեն եւ կը բանան թէ ոչ: Ձայնի իրաւունքով ներկայ գտնուող 21 պատգամաւորները այս խնդրի մասին բաւական թեր եւ դէմ խօսելուց յետոյ — 14 ձայնով ընդդէմ 7 պատգամաւորների, թիւը, ժողովի օրինաւորութեան համար բաւարար համարեցին եւ ժողովը բացուած յայտարարեցին հետեւեալ պատճառաբանութիւններով:

ա- Ի նկատի ունենալով, որ մասնակցող շրջաններից մասնակցել են ընտրողների մեծ մասը (16900-*ից* 9800):

բ- Ի նկատի ունենալով, որ բոլոր մասնակցելու իրաւունք ունեցող շրջանների դարձեալ մեծ մասը մասնակցել է (28-*ից* 17):

գ - Ի նկատի ունենալով քաղաքական բոլոր անհապաստ պայմանները մի այսպիսի հաւաքման համար — եւ տաճկահայերի ցրուած լինելը:

դ- Ի նկատի ունենալով, որ այս ժողովը պիտի խօսի ոչ թէ բոլոր 28 շրջանների — 25700 դաշնակցական տաճկահայերի անունից - այլ միայն 17 շրջանի 9800-ի անունից:

ե - Եւ վերջապէս ի նկատի ունենալով եւ այն, որ ժողովի վճիռը ունի միայն խորհրդակցական նշանակութիւն — ժողովականները հնարաւոր են համարում պատգամաւորների ներկայ թուով — ժողովը օրինաւոր համարել եւ բացուած յայտարարել:

Ապա ընկ. նախագահը առաջարկեց ժողովականներին կանչել խորհրդատու ձայնով այն դաշնակցական ընկերներին որոնց ժողովը յարմար կը համարէ. ժողովը

Ստորեւ ծածկանունով յիշուած տեղանունները կը համապատասխանեն հետեւեալ վայրերուն (փակագծերու մէջ տուած ենք ո՛ր Կ. Կոմիտէութեան պատկանիլը).–

1.- Մեծ քաղաք – Թիֆլիս:
2.- Արաքս – Անունէն կարելի է միայն հետեւցնել, որ գետի ափերուն հաստատուած գաղթավայր է (Զրաբերդ-Կարսի Կ.Կ.):
3.- Քար – Ալեքսանդրապոլ:
4.- Կլորիկ – Թէոդոսիա քաղաքը Խրիմի շրջանին մէջ (Նաւահանգիստ-Պաթումի Կ.Կ.):
5.- Ապաստան – Սոչի-Ամլեր (Նաւահանգիստ-Պաթումի Կ.Կ.):
6.- Կայծ – Օտեսա նաւահանգիստը (Նաւահանգիստ-Պաթումի Կ.Կ.):
7.- Անապատ – Արտահան քաղաքը (Նաւահանգիստ-Պաթումի Կ.Կ.):
8.- Քասախ – Չամըռլու գիւղ էջմիածնի շրջանին մէջ (Մըրգաստան-Երեւանի Կ.Կ.):
8a.- Թռուցիկ Գէորգ (Տէր Աբրահամեան):
9.- Շարայի շրջան – Շորագեալ՝ Կարսի մարզին մէջ (Զրաբերդ-Կարսի Կ.Կ.):
10.- Ոսկանապատ – Պաքու:
11.- Հանքի շրջան – Օլթի (Զրաբերդ-Կարսի Կ.Կ.):
12.- Զրաբերդ – Կարս:
13.- Թախտ – Կարս եւԿաղզուան քաղաքներու միջեւ ինկող շրջան (Զրաբերդ-Կարսի Կ.Կ.):
14.- Այգեստան – Գանձակ:
15.- Պարտիզաւան – Կաղզուան (Զրաբերդ-Կարսի Կ.Կ.):
16.- Մրգաստան – Երեւան:
17.- Նաւահանգիստ – Պաթում:
18.- Գաղթավայր – Սուխումի շրջան (Նաւահանգիստ-Պաթումի Կ.Կ.):
19.- Գողթան – Նախիջեւան (Մրգաստանի Կ.Կ.):
20.- Թմբուկ – Ախալքալաք (Մեծ քաղաք-Թիֆլիսի Կ.Կ.):

ձայների մեծամասնութեամբ որոշեց հրաւիրել հետեւեալ ընկերներին՝ 1.- *Արմէն Գարօ,* 2.- *Դուման,* 3.- *Տուրբախ,* 4.- *Ուսուլ,* 5.- *Ռոստոմ,* 6.- *Կայծակ-Առաքել,* 7.- *Մխիթար,* 8.- *Արամայիս,* 9.- *Բիձա,* 10.- *Կոմս,* 11.- *Իշխան,* 12.- *Շահ,* 13.- *Մանուկ-Թաթ.,* 14.- *Տեղի կոմիտէի անդամներից մէկին,* 15.- *Զինարին,* 16.- *Հայկ-Արմէն*[21]:

Ապա ժողովը ձեռնարկեց չորս հոգու ընտրութեան որոնք պիտի կազմէին մի մասնախումբ եւ ցուցակագրէին պատգամաւորների մանդատների մէջ եղած բոլոր կէտերը եւ ներկայացնէին ժողովին: Ընտրուեցին հետեւեալ ընկերները — Զինար, Հայկ, Արմէն, Խարիբ, Սորմագէջ:

Յաջորդ նիստը նշանակելով հետեւեալ օրը (Հոկտ. 28-ին) առաւօտեանը — ժողովը փակուած համարեց:

Նախագահ՝ ԶԻՆԱՐ
Քարտուղար՝ ՍԱՐՕ

1906 *թիւ Հոկտ. 27, Քար*

II
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ

Նիստ I

Արձանագրութիւն — 1906 թիւ 28 Հոկտ., առաւօտեան կայացած պաշտօնական ժողովին ներկայ էին 21 պատգամաւորներ:

Նախ կարդացուեց նախկին մի նախապատրաստական ժողովի արձանագրութիւնը, որ եւ ընդունուեց մի երկու մոռացուած կէտերի յաւելումից յետոյ:

Բիւրոյի ներկ. ընկ. Ա.[22] *բանալով ժողովը յայտարարեց, որ ինքը նախորդ ժողովը իբրեւ Բիւրոյի ներկայացուցիչ բաց արաւ եւ նախագահեց նախորդ նախապատրաստական ժողովին. իսկ այժմ սկսում են պաշտօնական ժողովները.- ուստի թող ժողովը ընտրէ իրեն համար նախագահ. թեկնածուներ առաջարկուեցին.- Արմէն-Գարոն, Հայկ-Արմէնը, Վահանը, Ուղեւոր եւ Զինար. բացի Զինարից բոլորը հրաժարուեցին, բաց քուէարկութեամբ Զինարը միաձայն նախագահ ընտրուեց: - Հարց տրուեց, թէ Զինարը, որ ներկայ էր ժողովին խորհրդակցական ձայնով միայն, նախագահ դառնալով, քուէ տալու իրաւունք պիտի ունենայ թէ՝ ոչ. ժողովը խորհրդատու ձայնով ներկայ գտնուողներին ձայն տալու սկզբունքը չխախտելու համար, Զինարի ձայն ունենալու իրաւունք տուաւ:*

Ապա ընկ. Վահանը օրակարգի համար հետեւեալ բանաձեւը դրեց — իրաւունք ունի արդեօ՞ք Ա[ղեւելեան] Բիւրոն — զուտ կովկասաբնակ տաճկահայերից մի այսպիսի խնդրի համար ժողով հրաւիրել — եւ եթէ իրաւունք ունի, այդ իրաւունքը Դաշնակցութեան ո՛ր օրէնքի վրայ է հիմնուած:

Նախ խօսեց Հայկ-Արմէնը, նա ասաց, որ նախ մեր կազմակերպութեան ունեցած ժողովներին ո՛չ մէկին չի համապատասխանում այս ժողովը, եւ երկրորդ՝ այսպիսի խնդիրների քննութիւնը կը պատկանի համայն Դաշնակցութեան եւ ո՛չ թէ այս կամ այն մասին. երրորդ՝ սրանով աւելի է առիթ տրւում բաժանման մասին խօսելու եւ բաժանում առաջ բերելու. չորրորդ՝ կարող են շատ մարդիկ Բիւրոյին այսպիսի պահանջներ դնել, Բիւրոն մի՞թէ պիտի թոյլ տայ. յետոյ, այսպիսի բողոքները նոր չէին Դաշն. մէջ, այդ նոյն բանը կար եւ արտասահմանում աւելի վաղ. ինչո՞ւ են հրաւիրած մեզ այստեղ Նախագիծ քննելու, մեր գործը չէ. Միհրանի՞ դէմ բողոքելու, թող պարզ ասեն. թէ՝ մեր համաձայնութիւնը տալու Նախագծին:

Ապա խօսեց ընկ. Ուղեւորը, որ այս ժողովը հրաւիրելը ապօրինի բան է, քանի որ կը բողոքեն ոչ միայն տաճկահայերը, այլեւ, ռուսահայերը. ապացոյց Ալեքսանդրապոլի խմբերի քայքայումը, Բաբկէնն եւս նոյնն էր ասում (ապացոյց): Բողոքը խառն է, այս հրաւէրով զարկ կը տրուի բաժանման:

Խօսեց Մրգաստանի պատգ. Մ., որ բողոքը ընդհանուր է, միհրանականներին ձեռք են տալիս ռուսահայերը: Բիւրոն իրաւունք չունէր այսպիսի ժողովք հրաւիրելու: Սա միջոց էր Միհրանի դէմ:

Ընկ. Ղարիբ - Ապաստ[ան], որ խլրտումը ծագեց այն պատճառաւ, որ իրար յետեւից գալիս են շրջիկներ, որոնք մի անգամից ուզում էին քանդել խմբերի հին կազմակերպութեան ձեւը եւ ղեկավարւում էին միայն Նախագծով. ահա թէ ի՞նչ է պատճառը խլրտումների:

Արմէն-Գարոն ծանրանալով յատկապէս Դաշնակցութեան վերջի երկու տարուայ գործունէութեան վերայ, այն ժամանակուայ երբ ամէնքը թէ՛ բուրժուան թէ՛ ինտելիգենտը եւ թէ մասսան, ալ մի պարսաւանք չեն ուղղում Դաշն. հասցէին: Այժմ ռէակցիա է, յեղափոխութիւնը դառնալով ծածուկ, ըստ երեւոյթին մեռած է: Տեղատուութեան ժամանակ դուրս մնացին յեղափոխութեան մէջ մտած բախտախնդիրները եւ տականքները, որոնք միանալով բուրժուա ինտելիգենտների եւ հակառակ բանակների հետ, խօսում են յանուն մի դատի որի համար ստեղծուած է եղել եւ որով ապրել է Դաշնակցութիւնը. նոցա միտքը այս կուսակցութեան խորտակումն է, որովհետեւ այս կուսակցութիւնը կամաց-կամաց աշխատաւոր մասսայից հեռացնում է այդ պարոնների հովանաւորութիւնը: Գալով այս ժողովին, իրան համար էլ մի այսպիսի ժողով արտասովոր եւ անցանկալի է - անկախ շարժառիթներից. բայց ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Բիւրոն նախատեսնելով եղբայրասպան կռիւ, որով [ցանկացել է] կռուի շարժառիթ թիւրիմացութիւնները պարզաբանուէին: Բիւրոն չէ խլել ոչ մէկի իրաւունքը եւ ոչ մէկի վճռական ձայնը. սա մի խորհրդակցական ժողով է, իսկ Բիւրոն կարող է ում որ ուզի հրաւիրել խորհրդակցելու:

Խօսեցին՝ Պանդուխտեանը, Ծծմակը եւ Թօփալ Քրիստոսը, որոնք նոյնպէս ցանկալի են գտնում այս ժողովը, բայց իրանք դիմել են եւ մի այսպիսի պահանջ դրել, որովհետեւ իրանց դիմաց կանգնած էր եղբայրասպան կռիւը, որից նոքա դուրս գալու ուրիշ ելք չունէին:

Պանդուխտը շեշտեց, ովքեր որ բողոքում էին թող իրանց տեղերից ուղարկէին բողոքները, եւ ոչ թէ գային այստեղ եւ ասէին չենք ընդունիր.- թէեւ ապօրինի է — բայց քանի որ եկել ենք, մի բանով զբաղուենք. ապօրինի է, լաւ, պէտք է ցրուել: Նա շեշտում էր թէ սկսուել է անարխիա, իսկ ամբոխը անարխիայից գրաւուած է, անգիտակից մնալով իր քայլին. սա մի միջոց է ամբոխին կանգնեցնելու անարխիայի գիրկն ընկնելուց, եթէ ամէն մէկս Դաշնակցութիւնը մեր սրտին մօտ ենք համարում, այո՞. իրան ընկերներն եւս հակառակ են եղել, բայց եղբայրասպան կռուից խուսափելն է, որ ստիպել է ընդունել:

Ընկեր Ծծմակ— մե՛նք ոչ թէ պիտի քննենք Նախագիծը, այլ պիտի խօսենք նրա չուրջն ծագած վէճերի մասին եւ նայենք նրա վերայ տաճկահայ դատի տեսակէտից որ այս դատը Նախագծից կ'օգտուի թէ կը վնասուի, եւ չի հակասում արդեօք Դաշնակցութեան ծրագրին:

Ընկ. Ս - Բիւրոյի ներկ. մինչեւ այժմ մենք չենք լսել տաճ[կա]հայ-կով[կա]սահայ. մինչեւ վերջի տարիները մեր բոլոր գործունէութիւնը եղել է միայն եւ միայն մեր փայփայած դատը, որով ապրել ենք, ապրում ենք եւ պիտի ապրենք, բայց բացուեց գործունէութեան մի ուրիշ վայր, գործի կպանք եւ այնտեղ ոչ ոք սուր կերպով չէր բողոքում: Անցան յեղափոխութեան օրերը — տիրեց եւ ռէակցիան: Յեղափոխութիւնը կրկին ծածկուեց եւ տեղատուութեան ժամանակ դուրս մնացին տիղմը, տականքը եւ բախտախնդիրները: Այդ տարրերը միացած հակառակ բանակների հետ մեզ մեղադրում էին այն դատի համար, որով ապրել էինք, տալով մեր ամենածաղիկ ոյժերը: Մենք եղել ենք դաշնակցական եւ ենք — իսկական դաշնակցական չի կարող լինել առանց տաճ[կա]հայ դատի: Խօսում էին ձեր անունից եւ դուք կարծես թէ համաձայն էիք նրանց հետն որովհետեւ չբողոքեցիք եւ ոչ մէկդ: Այժմ անցնենք Նախագծի խընդրին... այս խնդրի մասին եղել է երկու կարծիքները: ա- Համարում է Նախագիծը անհրաժեշտ եւ տեղական պահանջ, որը չի խանգարում նախկին մեր գործունէութիւնը: Ասւում է, որ դա մոռացնել է տալիս Դաշնակցութեան բուն նպատակը: — Պարոնայք մեղադրում էք այն մարդկանց որոնք այս քայլը արել են միայն նրա համար, որ կազմակերպութիւնը փրկեն բաժանումից: Ապա ջլատման նախատեսութիւնն էր այս ժողովի շարժառիթը — եւ մենք գոհ ենք այս մեր ձեռնարկից: Իրաւասութեան խնդիր չկայ, սա մի գործ է, որ այսպիսի մի րոպէում շատ տեղին է: Ո՞ւմ իրաւունքն է ոտնահարւում. ում ձայն է շահագործւում: Այստեղ խնդիրները պարզաբանւում են խորհրդակցական ձայնով. այս արդէն բաւական է որ իրաւունքի խնդիր չկայ մէջտեղը: Այս քայլը մեզ մեր նպատակից չի շեղել, չի շեղում եւ մենք չենք շեղուելու: Ընկ. Ս-ի խօսելուց յետոյ, ժողովը փակուեց: Հետեւեալ ժողովը նշանակուեց նոյն օրը երեկոյեան:

Նիստ II

1906, 28 *Հոկտ., երեկ[ոյեան]*

Ներկայ էին 21 պատգամաւոր. բացակայ էր Ոսկանապատի մի ներկայացուցիչը Համօ. նոր էր եկել Գաղթավայրի մի պատգ. Ժիրայրը:

Ընկ. նախագահ ժողովը բանալով առաջարկեց լսել Գաղթավայրի նորեկ պատգ. Ժիրայրի բացատրութիւնը իւր ընտրութեան մասին: Շրջանում կայ 1500-*ը մասն[ակցել են] 500, բերել է 31ի մանդատը — ընկ. համարուեց վաւերական — ընկ. նախագահ առաջարկեց ժողովին թէ ժողովը ընկ. Բիւրոյի բացատրութիւններից յետոյ հարկ համարո՞ւմ է կրկին [խօսել] ժողովի իրաւասութեան մասին: Ընդունեցին կրկին խօսել:*

Ընկ. Ա. Բիւրոյի ներկ. կրկնեց նախկին ժողովին իւր ասածները իրաւասութեան խնդրի մասին — ընկ. Գարոն չեշտեց, որ միայն ձեւական տեսակէտից չպէտք է նայել խնդրին այլ եւ անհրաժեշտութեան տեսակէտից: Ապա ընկ. Վահանը հարց տուաւ ընկ. Ա-ին Բիւրոյի ներկ. եթէ կովկասահայերը եւս պահանջեն այսպիսի մի ժողով պիտի թոյլատրէ՞ք: Ընկ. Ա. եթէ անհրաժեշտութիւն լինի, ինչու չէ: Ապա Քարի ներկայացուցիչներից մէկը ասաց, որ բողոքում էին նաեւ տեղացիները — ընկ. Ա. պատասխանեց, որ տեղացիների բողոքը մեր հին գործին վտանգ չէր սպառնում, վտանգը միայն տաճ-

21.- Յաջորդ օրուընէ սկսեալ հրաւիրեալներէն նիստերու ներկայ են Արմէն Գարոն, Զինարը եւ Հայկ-Արմէն, ըստ երեւոյթին ժողովատեղի քաղաքին մէջ կամ մօտիկ տեղ գտնուելուն բերումով, իսկ Կոմս (Փափազեան Վահան) եւ Վանայ Իշխան (Պողոսեան-Միքայէլեան Նիկոլ) կը հասնին երկու օր ետք, Հոկտ. 29ի երեկոյեան նիստին: Հայկ Արմէն ծածկանունն էր Թովմաս Ճելալեանի, որ Ամերիկայէն եկած էր իբրեւ պատգամաւոր Չորրորդ Ընդհ. ժողովին, վերջինիս բացումէն ամիսներ առաջ, ապա անցած էր Կովկաս, ուր եւ հրաւիրուեցաւ Ալեքսանդրապոլի այս ժողովին, խորհրդակցական ձայնով:

22.- Ընդհանրապէս Բիւրոյի ներկայացուցիչը յիշուած է «ընկ. Ա.» կամ «ընկ Ս.», մէկ տեղ միայն՝ Աւետիք: Յայտնաբար Սահակեան Աւետիքն է (Հայր Աբրահամ):

[կա]հայոց բողոքիցն էր առաջանում։

Ընկ. Նախագահը առաջարկեց հետեւեալ երկու բանաձեւերը։ ա- Ժողովը լսելով Ա[ռեւելեան] Բ[իւրոյ]ի ներկ. բացատրութիւնները եւ ի նկատի ունենալով, որ սա խորհրդակցական մի ժողով է, ժողովը օրինաւոր համարեց։ բ- (Հայկ-Արմէնից առաջ) Արեւելեան Բիւրոն, հրաւիրելով Կովկաս բնակուող զուտ տաճկահայ դաշնակցականները խորհրդակցելու կովկասեան Նախագծի շուրջը ծագած տարաձայնութիւնների վերայ, թեր ու դէմ երկար վիճաբանութիւնէ եւ լուսաբանութիւնէ վերջ այն եզրակացութեան եկաւ, որ ժողովը իրաւական եւ կանոնական ոչ մի հիմք չունի։

Նախ, որ՝ եթէ անհրաժեշտ էր Նախագծի հարցով զբաղուել, պէտք էր կովկասեան ընդ. դաշնակ. ժողով գումարել եւ այնտեղ լուսաբանել հարցը եւ ոչ թէ Կովկաս բնակուող տաճ[կա]հայերը զբաղեցնել անով։ Յետոյ ի նկատի ունենալով, որ Կովկասեան նախագծի շուրջը ծագած հարցը նոյնքան եւ հրատապ երեւոյթ է դարձել Կովկասի դաշն[ակցականներ]ի մէջ, հետեւապէս այս հանգամանքն եւս ցոյց կու տայ, որ նրանց ներկայութիւնն էլ անհրաժեշտ է այս խնդրի համար, որով մի անգամ եւս կը շեշտուի, որ՝ այս ժողովի կազմութիւնը մի սխալ է, հետեւապէս ժողովը իրան օրինական հանգամանքների մէջ չէ գտնուում։ Բայց միւս կողմից քանի որ պատգամաւորները այսպէս թէ այնպէս հաւաքուել են եւ ցրուելով տխուր տպաւորութիւն պիտի առաջացնէ, ստիպուած օրակարգ մը բանաձեւելով՝ զբաղուեցաւ նորա լուսաբանութեամբ։

Ի-ի բանաձեւն անցաւ 11 ձայնով ընդդէմ 10-ի։ Ապա ժողովը սկսեց ստուգել թէ քանիսի մանդատները յանձնարարել էին ձայն տալ ժողովի ապօրինութեան մասին։

Կայծի եւ Մրգաստանի պատգ.— իրանց շրջանից այդ իրաւունքը տրուած է եղել։ Պարտիզաւանի շրջ. համար այդ խնդիրը անհասկանալի է եղել. պատգ. համար այժմ եւս անհասկանալի է, բայց ապօրինի է համարում ինքը. իսկ մնացած եօթ ձայները ոչ թէ շրջանների յանձնարարութիւնների համաձայն են, այլ իրանց անհատական կարծիքն է։

Ապա ժողովը լսեց բոլոր բերած մանդատների ընթերցումը. ժողովը փակուեց դրանից յետոյ, յաջորդ ժողովը տեղի պիտի ունենայ Հոկ. 29-ի առաւօտեան։

Նիստ III
1906, 29 Հոկտ., առաւօտ

Ներկայ էին 23 պատգ. (Շարայի ա- մասի պատգ. Վրէժխնդիրը որի ընտրութեան մասին զեկուցում տրուած էր ա-Նիստին — բայց ինքը նախորդ բոլոր ժողովներին ներկայ էր, բ-Նիստի պատգ. բացակայ եղած Ոսկանապատի Համօ եւս եկել էր) կարդացուեց արձանագրութիւնը եւ շատ պակասներ գտնելուն համար (պատճառաւ) յանձնարարուեց ամէն մէկը իրա կարծիքը գրաւոր բերել. ապա խօսեց ընկ. Ա. Բ.ի ներկ.— առաջարկում է վերցնել նախ բոլորի մանդատների մէջ եղած ընդհանուր կէտերը եւ այդ քննել նախ, եւ ապա քննել միւս հարցերը։

Ընկ. Վահանը առաջարկում է թէ ինչ է Նախագիծը։ *Ընկ.* Ա. առաջարկում է նախ պատգ. ասեն իրանց ասելիքները այդ խնդիրների մասին, իսկ յետոյ ինքը այդ բաների լուսաբանութիւնը կը տայ։

Օրակարգ. Նախագծի օրինաւորութիւնը — կովկասեան գործունէութեան անհրաժեշտութիւնը եւ սոցա տուած օգուտը կամ վնասը տաճ[կա]հայ դատին։

Մեծ Քաղաք.— Բլէջան։ Նախագիծը ապօրինի ծագում ունի, դրանից առաջ կը գայ մեր եւ կառավարութեան մէջ ընդհարում եւ մեր դատը կը վնասուի. արդէն մի բուռն ենք, մեր ոյժերը չեն ների երկու դատ միաժամանակ տանել. զբաղուել միայն հին գործով. դէմ են պրոֆ[եսիոնալ] միութիւնների եւ բանուորական շարժումների. քննել ենք եւ տեսել, որ տաճ[կա]հայ դատի տեսակէտից օգտակար չէ. կով[կա]սահայի համար եւս վնաս է։

Գաղթավայր.— Ներկ. Ժիրայր — Մեզանում ծրագիրը եւ Նախագիծը բացատրուած է բոլոր թէ խմբական եւ թէ պատուիրակների ժողովներում, որտեղ չգտնելով ոչ մի հակասութիւն ծրագրի եւ Նախագծի մէջ ինչպէս այդ շեշտուած է բոլոր 28 մանդատներում, որ Նախագիծը լինելով կեանքի անհրաժեշտ պահանջ եւ որ Նախագիծը — ոչ թէ Բիւրոյի կողմից է այլ Կովկասեան Ռայոնական ժողովից առաջադրուած եւ Դաշ. Խորհրդի կողմից վաւերացուած. հետեւաբար չի կարող լինել ապօրինի — ուստի որոշեց ընդունել Կովկասեան Նախագիծը եւ, որ եթէ Կովկասեան Նախագիծը չընդունուէր, դա կը լինէր յեղափոխութեան համար մի յետադիմական քայլ եւ, որ անպայման կերպով բաժանում կ'առաջացնէր, որով անպայման կերպով կը տուժէր տաճ[կա]հայ դատը. գտնում է, որ Կովկասում եւս անհրաժեշտ է ունենալ ակտիւ յեղափոխական գործունէութիւն. իսկ 3 մանդատ գտնելով, որ Նախագծի գործունէութիւնը կը վնասէ տաճ[կա]հայ դատին եւ որ Դաշնակցութիւնը ստեղծուած է տաճ[կա]հայ դատի համար, որոշում է, որ մնայ նա մի միայն տաճ[կա]հայ դատի համար եւ չունենայ Կովկասում բացի ինքնապաշտպանութիւնից՝ ոչ մի գործունէութիւն։

Մրգաստան.— Դաշ. շրջիկների թռուցիկներում տաճ[կա]հայ դատը չէր յիշւում. նրանց տեսածը այլ էր — մերը այլ —։ Նոքա տեսել էին յեղափոխութիւն, իսկ մենք տեսել ենք կոտորած աւեր։ Դաշ.ը ակտիւ գործունէութեան հող չունի Երեւանում, Դաշ.ը միայն տաճ[կա]հայ դատի համար է, նրա զբաղմունքը միայն այդ էր. առաջ եկաւ Միհրանը, մենք չէինք կարող միանալ Միհրանին։ Գործադուլ չպիտի լինի, որովհետեւ միայն մենք ենք անում, ուրիշներին չենք կարող ստիպել մասնակցելու — բոլոր հայերի պաշտպան, բայց ակտիւ կռիւ չպիտի մղէ։

Ապաստանի պատգ. Ղարիբ.— Բացատրուել է Նախագիծը. գտնում են, որ լրացում է քաղաքական նպատակին. բայց եթէ Դաշ.ը ձգտի Նախագծի իրագործման, ոյժ չի ունենայ տաճ[կա]հայ դատին համար. պէտք է պաշտպանել բանուորի շահերը, ամէն կերպ կապել երկու տարրը օրինաւոր ճանապարհով, որպէսզի ոչ մի բաժանում առաջ չգայ։

Կայծի պատգ. Վահան.— Նախագծի ծնունդը ապօրինի է, հակառակ է Դաշնակ. քաղաքակ. նպատակին, այստեղ զբաղուելով ոյժերը կը ջլատուեն։

Քար.— Ուղեւոր.— Թռուցիկ կերպով է բացատրուած՝ Նախագիծը։ կախ կը ձգէ տաճ[կա]հայ դատը. ուժը կը ջլատուի. Նախագիծը սկսեց խմբերը լուծել։ Քաղաքական հանգամանքների խիստ եղած ժամանակ, Դաշ.ը կը ստեղծէ կռիւ ցարիզմի դէմ, դրա համար ուժ չունենք. ինքնապաշտպանութիւն ընդհանրապէս թէ՝ կառավարութեան եւ թէ այլ ազգաց [դէմ]։ Տեղի ժողովուրդը չ'ուզեր. առանց Դաշնակցութեան կազմ. թող վարեն իրանց դատը, թէ Դաշ. 15 տարի գործ[ած] էր Տաճկաստան Նախագծից առաջ։ Խաժակը կ'ասէր — Դաշ. ունի միայն քաղաքական նպատակ եւ ծրագիր — տաճ[կա]հայ դատը. յանկարծ դուրս եկաւ Նախագիծը,— տնտեսական կռիւ. — ժողովուրդը հակառակ էր. Նախագծի ծնունդ ապօրինի է։

Թաղթ. II — Բժիշկ.— Նախագիծը չեն իմացել — եւ չեն ուզեր իմանալ — հասկանալ չեն ուզում. բացատրութեան ժամանակ ասացին, որ երկու Ֆրոնթի վրայ չի կարելի կռուել — ինքնապաշտպանութիւն մինակ թուրքերի դէմ. զինաթափ զինուորներից ոմանք (Ախլաթցիք) շանտաժիշտութիւններ են անում։

Ոսկանապատ.— Ցակոբիկ.— Նկատի ունենալով Նախագծի շուրջ տարաձայնութիւններ, խորհրդակցական ժողովներից յետոյ եկան այն եզրակացութեան (իր ընտրողք), թէ կեանքի պայմաններն փոխուել են, եւ մենք չենք կարող դարձնել կեանքի այդ հոսանքը, ուրեմն Նախագիծը ծնունդ է օրուայ պահանջներին, որով չի կարող ապօրինի լինել, նկատի ունենալով այս կամ այն տեղի պայմաններն. վատ պրոպագանդայի յարուցած դժգոհութիւններ չեն կարող դրժել իրականութիւն, քանի որ տակտիկան ենթակայ է փոփոխման. իսկ եթէ Նախագիծը վնասում է տաճ[կա]հայ դատին, թեր ու դէմ կարծիքներից յետոյ ժողովը յենու[եց]աւ ներկայ գործունէութեան վրայ. համոզուեց, որ Դաշ. այս տագնապալի րոպէներում օգտակար է եղել քան անցեալում. ժողովը 15 ձայն ընդդէմ 6-ի որոշեց, որ Դաշ. լինի անբաժան եւ նուիրուած մնայ տաճ[կա]հայ դատին, տանելով նաեւ կովկասեան գործունէութիւնը. իսկ ներկայ 6 ներկայացուցիչներ առաջարկում են, որ Դաշն. մնայ մինակ տաճ[կա]հայ դատին նուիրուած, Կովկասում՝ ինքնապաշտպանութիւն եւ կուլտուրայի գործունէութիւն։

Ոսկանապատ.— Համօ.— որեւէ մի կուսակութիւն երբ առաջ [է] գալիս, այս նշանաբանը ունենալով իրա նպատակ նա պիտի ունենայ որոշ ծրագիր իր ուղղութեան համար — որը բաժանում է երկու մասի, հեռաւոր նպատակ եւ տակտիքի գործունէութիւնը — որը հիմնւում է հասարակութեան որոշ խաւերի վրայ։ Քննելով Դաշն[ակցութեան] հին ծրագիր, այստեղ տեսնում ենք [որ] նրա նպատակը հիմնուած է կեղեքուող ժողովուրդի վրայ (բերում է օրինակներ). հիմնուելով դրա վրայ Նախագիծը ընդունում [է] սկզբունքով։ Նախագիծ ստեղծողը ոչ թէ Դ[աշնակցութիւնն է] այլ գոլիցինեան ռեժիմը — ասացէք, կարո՞ղ էր Դաշն. ձեռնպահ մնալ՝ դպրոցներ գոցող, եկեղեցիներ գրաւող մի ռեժիմի։

Շարայի Ա. — Վրէժխնդիր .— հիմնւում է հայ անւան վրայ. կովկասեան գործունէութիւն կար, երբ դեռ գիրք չէր դարձել[23] — եթէ ընդունենք Նախագիծը մենք պիտի թողնենք տաճ[կա]հայ դատը, իսկ եթէ չընդունենք կը գայ բաժանում. Նախագիծը ապօրինի է որովհետեւ անընդունելի է մի կարգ կէտերի համար։

Հանք.— Փայլակ.— 3 հոգի ընդունել են Նախագիծը. միւս ամբողջը մերժել են. եթէ ընդունենք կ'ընկնենք Գուրիայի օրին[24]. ընդունում ենք ինքնապաշտպանութիւն — Նախագիծը ապօրինի է։

Աբաքս.— Հանդարտ.— Կ'աշխատենք տաճ[կա]հայ դատի համար. առաջ Ռուսաստանը բարեկամ էր — այժմ թշնամի — անենք այն, որը մեզ օգտակար է եւ օգուտ կը բերէ բոլորի համար. մեզի թռուցիկ ուղարկեցին — հաւաքուեցանք բոլորս մի տեղ. չգիտէինք ինչու եկած էր թռուցիկը։ Ինչ անենք մեզ ճնշում են, հող չկայ — տները աւեր — մալի եայլան աւեր — ընտրեցին մի պատգամաւոր եւ ուղարկեցին. մենք չգիտէինք Նախագիծը բայց չեմ ընդուներ իմ կողմից։

Կլոբիկ.— Սարօ.— Ես անձամբ ներկայ չէի ժողովներին — բայց ինչպէս երեւում է նրանց ուղարկած մանդատներից նրանք ընդունում են Նախագիծը — այն է կովկասեան գործունէութիւնը, յարմար գտնելով ժամանակակից պայմաններին. նրանք ասում են ոչ թէ Նախագիծը իրանք են ստեղծել այլ կեանքը — եւ կովկասեան անտանելի ռեժիմը որը ծանրացել էր մեր կովկասահայ եղբայրների վրայ։ Մենք չենք ուզում բաժանում, որը տաճկահայ դատին մահացուցիչ է։ Մեր մէջ արիւն եւ միս է դառել թէ կովկասահայ եւ [թէ] տաճ[կա]հայ դատը։ Մենք պէտք է տապալենք այդ ռեժիմնե-

23.- Յայտնաբար ըսել կ'ուզէ երբ Նախագիծը չէր հրատարակուած տպագրուած ձեւով։

24.- Սկնարկութիւն Վրաստանի Գուրիա շրջանին մէջ ցարական կառավարութեան գործած աւերին։

ը, որի տակը հաւասարապէս տնքում են թէ տաճ[կա]-հայ եւ թէ կով[կա]հայը։

Ջրաբերդ.— Բաբկէն.— Նախագիծը ընդունելիս գուցէ կով[կա]հայերը խրուին այդ գործունէութեան մէջ եւ այն ժամանակ հնարաւորութիւն չունենան մեր մասին մտածելու. իրանց շրջանում տնտեսական ճնշում չեն նկատում, իսկ բանուորներին բաւարարութիւն տուած դէպքում, ապրանքի գին է աւելանում, իսկ Նախագծի նպատակը այդ լինելով ապօրինի է։

Թաղթի. ա- Հակառակ են Նախագծի — ընդունում են ինքնապաշտպանութիւնը։

Շարայի. բ. գ.— Պարոյր.— Նախագիծը չեն ընդունում, ուժերնիս ջլատում է։

Պարտիզաւան.— Խորէն.— Նախագիծ ընդունելը կը վնասէ մեր դատին. Նախագծի իրագործումը տարիների գործ է։

Անապատ.— Թօփալ Քրիստոս.— Դաշնակ[ցութիւնը] եղել է տաճ[կա]հայ դատի համար. այժմ այստեղ էլ գործ կայ. իմ ինչ գործն է, ինձ զէնք տուէք կռուեմ, իսկ այդ բոլորը ինչ որ հարցնում էք, Ընդհանուր Ժողովի գործն է։

Այգեստան.— Սիմոն.— Նախագիծ կեանքն է ստեղծել, Նախագծի գործը լաւ չէ զտուած, անհրաժեշտ է զտել եւ Ընդ. Ժողովը քննէ Նախագիծ. վերջնապահ լինել հնարաւոր եղածին չափ կովկ. գործունէութեան մէջ։

Մեծ Քաղաք.— Ծծմակ.— Զենք ընդունում Նախագիծը, որովհետեւ սոցիալիստական է,Դաշ[նակցութեան] նպատակ եղել է տաճ[կա]հայ դատը. Նախագծի ծագումը ապօրինի է, Ռայոնական ժողովում չէ ծեծուած այդ խնդիրը. Դաշ. ծրագ. մինչեւ իսկ Ընդ. Ժող.ը իրաւունք դունի փոփոխելու, մինչեւ 6 ամիս առաջ ժողովուրդի կարծիքը չառնէ։ Դաշ. Խորհուրդը եւ Ռայոնական ժողովը, իրաւունք չունէր առանց ժողովուրդի ձայնին, միակ վարչական ձայնով Նախագիծը հաստատել։

Մեծ Քաղաք.— Պանդխտեան.— Նախագծի սանկցիան ապօրինի է, Դաշ. ներկայացուցիչները չեն հաւաքել հայ հասարակութեան կարծիքները, այլ իրանց անհատական ձայն եւ կարծիքներն են տուել։ Ռայոնական ժողովում եկող ուսանողներ եւ տիրացուները՝ իրանց արած պրոպագանդայով — մեծ մասսա են հաւաքել Նախագծի շուրջը. բողոքել Նախագծի դէմ կ'առաջանայ բաժանում. չբողոքել կը նշանակէ կռուել կառավ. դէմ, որի ճնշումը եւ պոգրոմ մէջտեղ գալով մոռացութեան կը տրուէ երկրի դատ եւ կը տուժէ կովկասահայ ժողովուրդը։ Արհեստակցական միութիւնների գործունէութեան դէմ բողոքում են նրանով, որ բանուորին բաւարարութիւն տրւում է, իսկ միւս կողմից տուժում է բոլոր հասարակութիւն. օր[ինակ] կապիտալիստը ֆապրիկայից դուրս եկած ապրանքի գինը աւելացնում է. դերձակը կամ կօշկակարը իրանց կարած կտորին 2 անգամ աւել է առնում, եւայլն։ Այս կրկնում եմ, որ մեր համախմբման ընկերները պնդում են թէ Նախագծի ծնունդը ապօրինի է, նրա համար, որ Ռայոնական ժողովի արած քայլերն ապօրինի է եղած, որ կազմակերպութեան վարչական մարմինների ներկայացուցիչները առանց ժողովուրդից ձայն ստանալու են մասնակցել ժողովին եւ տուել իրենց համաձայնութիւնը։ Մեր գիտցածով Դաշ. ապակենտրոնացում է եւ ոչ մի այդպիսի բան վերեւից՝ նշանակովի չպիտի լինի, այլ պահանջը ներքեւից պիտի լինի. ինչպէս Մ. Ֆ.-ի գինուորները, նոյպէս եւ բոլոր շրջանների հայ հասարակութիւնները իրենց կարծիքը չեն տուել այս խնդրի վերաբերմամբ։

Այս ժողովին ուղարկած մանդատում յայտնել են իրենց կարծիքները որ եւ պիտի դնեն մօտակայում գումարուելիք Ընդ. Ժողովի առջեւ, որ նա քննելով Նախագծի օրինաւոր կամ ապօրինի լինելը, մշակէ մի ծրագիր Դաշնակցութեան համար։ Մեր մանդատում չեչտուած է, որ Դաշ. գործունէութիւնը Կովկասում լինի պաշտպանողական եւ վերջապահ տեղը բռնէ, որ գործը զգուշ տանի, նայելով հարեւան ազգերին, որոնց վերաբերմունքը լաւ չէ մեզ հետ. աշխատել այնպէս տանել, որ տեղիս գործունէութիւնից չտուժէ հայ ժողովուրդը։ Մեզ համար ընդ. պատգ. ժողովի որոշումները պարտադիր եւ գործադրելի են։

Քասախ.— Միհր.— Նախագծի օրինաւոր մարմնի կողմից առաջ գալու մասին չեն խօսել։ Ընդունում են, որ Դաշ. Կովկ. գործունէութիւնը կեանքի պահանջ է եւ դա ոչ հակասում է հին ծրագրին եւ ոչ էլ վնասում է մեր դատին. բաժանման դէմ են։ Այս զեկուցումներից յետոյ ժողովը փակուեց, յաջորդ ժողովը նշանակուեց նոյն օրը երեկոյեան։

Նախագահ՝ ՁԻՆԱՐ
Քարտուղար՝ ՍԱՐՕ

1906 թ. 29 Հոկտ., Քար

Նիստ IV

1906, 29 Հոկտ., երեկոյեան

Արձանագրութիւն 1906-ի Հոկտ. 29-ի երեկոյեան կայացած նիստի, ներկայ էին 24 պատգամաւորներ եւ խորհրդատու ձայնով նոր էին եկել ընկերներ Կոմս եւ Իշխան։*

Նախ Թաղթի 3 մասի եւ նորեկ պատգ.-ը յայտնեց, որ իւր շրջանում եւս Նախագիծը չեն ընդունում, որովհետեւ այդ ընդունուած ժամանակ իրենց ուժերը խիստ կը

*) *Մանօթ.- Ժողովի սկզբում Իշխանը մի թեթեւ զեկուցում տուաւ Երկրի ներկայ դրութեան մասին։*

ջլատուին։ Ը. Կոմսը առաջարկեց մի քանի բանաձեւեր, որոնք անցան օրակարգի մէջ։ Ապա սկսեց խօսել Ա. Բ.ի ներկ. Ա.-ը։ Նախորդ ժողովում պատգամաւորների յայտնած կարծիքները Նախագծի վերաբերմամբ բաժանեց երեք խմբի։ — ա) Ոչ գիտեն ինչու են կանչուած եւ ոչ էլ գիտեն թէ ինչ է Նախագիծը։

բ) Նախագիծը օրինաւոր ծագում չունի եւ նրա գործադրութիւնը վնաս է տաճ[կա]հայ դատին։ գ) Կեանքի պահանջ է տեղական գործունէութիւնը եւ Նախագիծը օրինաւոր մարմնից է առաջ եկել։ Հակառակ են աւելի սահմանի մօտի շրջանները. համամիտ են հեռւում եղողները եւ արդիւնաբերական կեդրոններում եղածները։

Հ. Թ. գործունէութիւնը բաժանւում է 2 մեծ շրջանի։ ա) 1890-903 եւ բ) 1903-ից սկսած։ Ա. շրջանում զբաղուած է միայն տաճ[կա]հայ դատով. իսկ Բ. շրջանում սկսեց գործել եւ այստեղ. մինչդեռ հին ծրագրում այդ մասին ոչ մի խօսք չկար. ուրեմն ձեւական տեսակէտից դա սկզբում ապօրինի գործունէութիւն էր։ Գ. Ընդ. Ժողովի առջեւ դրուեց «Ինքնապաշտպանութիւն» (ի հարկէ Կովկասի) կոչուած հարցը։ ա.- անգամ պաշտօնապէս ընդունուեց, որ Հ. Թ. Դաշ.ը ամէն տեղ հայկ. մարդկային եւ ազգային իրաւունքները պիտի աշխատի պահպանել։ Միաժամանակ, այդ ժողովում չեչտուած է, որ միշտ էլ տաճ[կա]հայ դատը Դաշ. գործունէութեան կեդրոն է կազմելու եւ բոլոր տեղերի գործերը պիտի յարմարուին նրան։ Մինչեւ Գ. Ընդհ. Ժողովը ինքնապաշտպանութիւն ասելով հասկանում էին, որ միայն ոտնձգութիւններ շարունակելիս՝ դիմադրել։ Բայց յետոյ հասկացուեց, որ մենք ապահով չենք, որ մեզ հետ ինչպէս ուզեն կը վարուեն, քանի կանգուն կը լինի ռուս կառավ. ներկայ ռեժիմը։ Գ. Ընդհ. Ժողովն հետեւեալն է ասում մօտաւորապէս բանուորների մասին՝ Դաշն. պարտաւոր է եւ աշխատաւոր դասի եւ բանուորի շահերը պաշտպանել. հայ դաշնակցական բանուորները կարող են մասնակցել գործադուլներին։ Քաղաքական ցոյցերը թողնւում են տեղական ինքնապաշտպանութեան կ. կոմիտէներին։ Պէտք է գործող յեղափոխական կուսակցութիւնների հետ համերաշխ գործել։ Աւելի մօտ պիտի լինել Սոցիալ յեղափոխականներին։ Այդ ժողովում հէնց ընդունւում է տեռոր կառավար. մարդկանց եւ զինուած դիմադրութիւն ռուս կառավ[արութեա]ն։ Այսպիսով կովկասեան գործունէութեան սկզբունքները տուաւ Գ. Ընդհ. Ժողովը։ Ռայոնական ժողովը այս սկզբունքներով ղեկավարուելով մշակեց «Նախագիծը», որ եւ ներկայացուցեց Դաշն. Խորհուրդին, որը գտնելով այն համապատասխան Ընդհ. Ժողովի տուած որոշումներին, հրատարակելով յանձնարարեց գործադրել, թողնելով սակայն նրա վերջնական ընդունելութիւնը եւ հաստատումը յետագայ Ընդհ. Ժողովին։

Ինչ այժ ունէր 903-ից առաջ Դաշնակ[ցութիւն]ը Կովկասում — շատ չնչին, իսկ 903-ից յետոյ, երբ Դաշնակ[ցութիւն]ը զբաղուեց եւ տեղական դատով, նա զօրեղացաւ եւ աւելի միջոց ունեցաւ վարել հին գործը։ Եթէ Դաշ.ը արձագանգ չտար ժողովուրդի հասունացած պահանջներին, մենք այժմ առաջ գնացող ժողովուրդի յետեւ մնացած կը լինէինք եւ միանակ։ Ինչ սկզբունքային տարբերութիւն մեր 2 գործունէութեան մէջ,— երկու տեղումն եւս յենուած աշխատաւոր ժողովուրդի վրայ։ Հին գործը աւելի քաղաքական բնոյթ ունի, որովհետեւ գործունէութեան վայրը տնտեսական զարգացման շատ ցած աստիճանի վրայ է։ Իսկ այստեղ տնտեսականն է չեչտւում, որովհետեւ արդիւնաբերութիւնը ահագին քայլեր է արել։ Երկուսի մէջ եւս չեչտուած է համերաշխութիւն, քաղաքական ցոյցեր եւայլն։ Ինչ սկզբունքով են տարբեր իրարից։ Մեզ մեղադրում են տաճ[կա]հայ դատի մոռացման մէջ՝ սխալ է։ Ճիշտ է, տեղական գործունէութիւնը ահագին ուժեր է խլում, բայց Երկրի գործը շարունակւում է անընդհատ. փոխուած է գործելակերպը, պատճառը հանգամանքների (Երկրի) փոփոխուիլն է։ Մենք այժմ պատրաստւում ենք ապագայի համար։ Ինչո՞վ է այստեղի գործունէութիւնը վնասում Երկրին. չէ՞ որ Ռուսաստանի ներկայ կառավարութիւնն է ամենամեծ հակառակորդը մեր դատին. չէ՞ որ հարկաւոր է տապալել այդ կառավարութիւնը. եւ մենք մեր ուժերի չափ մասնակցում ենք եւ պարտաւոր ենք մասնակցել ուրիշների սկսած այդ ձեռնարկին, որպէսզի իրաւունքներ պահանջելիս դէմ դնենք մեր կատարած գործը։ Այստեղ չգործել, կը նշանակէր միանգամայն միանակ մնալ եւ կտրուել տեղական մասսայի բարոյական եւ նիւթական օժանդակութիւնից։

Նոր Ռուսաստանը գոնէ չէզոք կը լինի եւ ոչ թէ հակառակորդ եւ հեռու չէ այն օրը երբ Ռուսաստանում կը հաստատուի քիչ շատ տանելի իրաւական պետութիւն։ Ուրեմն Նախագծի ծնունդը, ծագումը օրինաւոր մարմնից է եւ Դաշնակցութեան կովկ. գործունէութիւնը անհրաժեշտ է։

Ընկ. Ծծմակ.— Դաշնակցութիւնը իր վրայ վերցնելով հողային խնդիրը, կամայ-ակամայ իբրեւ մի չնչին ուժ, պիտի ձուլուի Սոց. յեղափ.-ի հետ, եւ ուժ չունենայ հին գործի համար։ Կը ծագի կռիւ կառավ[արութ]եան դէմ եւ [կը] սահմանափակուի Տաճ[կա]հայաստանի գործը եւ Դաշ.ը այլեւս Երկրին ոչ մի օգնութիւն չի կարող հասցնել։

Ընկ. Ա.-ը.— Մենք չենք միանում, այլ համերաշխ գործում՝ գործի լաւ լուծման եւ հեշտութեան համար։ Տեղական (կովկասեան) գործունէութեան կրիտիկական րոպէներին ի հարկէ երկրի գործը մի քիչ թոյլ կը լինի, ինչպէս էր հայ թուրքական կռիւների բուռն միջոցին։

Ընկ. Հայկ-Արմէնը.— Մինչեւ երբ դիմանայ երկրի ժողովուրդը, այնտեղ բնաջինջ են լինում, այնտեղ սպի-

տակ տեռոր է կատարուում (գործում), այնտեղ խոտ են ուտում հացի տեղ. ինչ հաւատք ապագայի համար. հարկաւոր է անմիջական գործ, քանի այնտեղ հայ կայ: Առանց հայի՞ Հայաստանի համար պիտի գործենք:

Ընկ. Ա-ը.— Պատասխանեց, որ երկրի անտանելի կացութիւնը նորութիւն չէ, այստեղ էլ համեմատական չափով նոյն պատկերն է:

Ընկ. Հայկ-Արմէնը.— Շեշտեց, որ այնտեղ աճեցումը կանգնում է, չի կարելի Կովկասի հետ համեմատել: Բնաջնջումը առաջ է գնում, իսկ մենք պրոֆեսիոնալ միութիւններ ենք կազմում:

Արմէն-Գարոն.— Հակաճառեց Հայկ-Արմէնի ասածներին, առարկելով, որ երկրի գործունէութիւնը չէ ընդհատուած, գալիք Ընդհ. Ժողովը պիտի նոր ուղղութիւն տայ: Այստեղի գործունէութիւնը մեզ հետ կապեց ահագին մասսա, որի նիւթական եւ բարոյական օգնութեանը մենք կարօտ ենք: Առաջարկեցէք միջոց, որով դատը չվնասուի:

Հայկ- Արմէն.— Պէտք է երկրի համար աւելի անել, քան արւում է. տեղս ահագին ոյժ է գործադրւում, մինչ երկրից գանգատներ կը լսուին, որ մոռացուել են:

Ընկ. Իշխան.— Նախ յիշեց Ռուսաստանի դրութեան փոփոխութիւնը յեղափոխութեան շնորհիւ: Իրականութիւնը կարելի չէ հերքել, ժողովուրդին կարելի չէ ստիպել, որ իւր մասին չմտածի, որ կեանքի անհրաժեշտ պահանջներին խուլ մնայ եւ մտածի այնպէս ինչպէս առաջ էր մտածում: Գալիս եմ Երկրից, նոքա ուրախ են որ Դաշնակ[ցութիւն]ը գործում է եւ այստեղ, վշտանում էին, երբ տեղիս յեղափոխութեան մէջ չէին տեսնում եւ Դաշնակ[ցութիւն]ը որ ստիպուած է թաղուել ինքնապաշտպանութեան գործի մէջ: Ո՞վ է մեր դատին դէմ եղել,— Ռուսաստանը: Պէտք է վերջապէս վերջ տալ այդ կառավարութեան: Յեղափոխականը պիտի ամէն տեղ կռուի. սխալ է, որ կովկ. գործունէութիւնը կը մնասէ մեր հին գործին. ոչ կովկասցին տեսնելով յեղափոխութեան տուած օգուտները, աւելի կը կպչի յեղափոխութեան եւ աւելի մեծ չափերով կը նպաստի յեղափոխական ձեռնարկներին:

Ապա խօսեց Սասունից եկած ընկ. Կարոն. ուժ կը սպասենք, ապրուստ չկայ, լուրջ մտածեցէք, չանէք մի քայլ որ մեռցնէ մեր գործը: Մուշի մէջ բանտարկուած են 400 հոգի, Սասունի 5 զօրանոցներում կայ 700 զօրք. ձմեռ կու գայ, առաջ դաշտեցիք լեռնցիներին կ'օգնէին, այժմ իրենք եւս չունեն, որ մեզ տան. ապա պատմում է Շիրվանշէխ գիւղի դէպքը, ճնշում վերկիներով[25] խիստ է, երթեւեկութիւն դադրած է. գործեցէք այնպէս որ ամէն կերպ օգնած լինենք տաճ[կա]հայ դատին:

Նախագահը յաջորդ ժողովը հետեւեալ օրը նշանակելով ժողովը փակեց:

Նախագահ ԶԻՆԱՐ
Քարտուղար՝ ՍԱՐՕ

1906 թիւ, Հոկտ. 29, Քար

V-րդ նիստ

Արձանագրութիւն 1906 թիւ, 30 Հոկտ. կայացած ժողովին:

Ներկայ էին 24 պատգամաւոր: Նախ կարդացուեցին, I, II, III նիստերի արձանագրութիւնները, որ սրբագրուելով ընդունուեցին. ապա կարդացուեց Քասախի խորհրդակցական ձայն ունեցող պատգամաւոր — Ս-ի մի յայտարարութիւնը, որով յայտնեց, որ ոչ ինքը եւ ոչ էլ իրեն ուղարկողներ չեն ընդունում Նախագիծը, թէեւ իւր եւ իւր ընկեր Միհրի բերած մանդատում հակառակ չեն. մենք չենք հասկացել ինչ է Նախագիծը:

Ապա կարդացուեց ընկ. Անդրանիկի[26] գրած մի նամակը, որով յորդորում է զինուորականներին կարգապահ լինել. պահանջները ներկայացնել օրինական ճանապարհով եւ ոչ մի հակակազմակերպական քայլ չանել ու սպասել Ընդհ. Ժողովին, որի որոշումներն բոլորի համար պիտի պարտադիր լինի, զգոյշ լինել գրգռումներից, եւ ընդհարումներից խուսափել:

Նախագահը պատգամաւորներին առաջարկեց, որ ով ուզում է թող իւր անհատական կարծիքը յայտնի Նախագծի մասին, եթէ հակառակ է իւր բերած մանդատին:

Բէյջանը հարց տուաւ Բ-ի ներկայացուցիչին, թէ մի՞թէ կովկասցին իրաւունք ունի Նախագիծը դուրս բերել. ինչ կ'ասէք եթէ ամէն մի տեղացին իւր ուզածն անէ, միթէ այդ կը լինի կազմակերպութիւն:

Սրան դէմ խօսեց Արմէն-Գարոն, ասելով որ ոչ թէ կովկասցին է ստեղծել, այլ սկզբունքները տուեր է Ընդհ. Ժողովը, եւ Դաշ. Խորհուրդը, որ կազմուած է ռուս[ա]հայերից եւ տաճ[կա]հայերից հաստատել է այդ սկզբունքների վրայ հիմնուած Նախագիծը:

Բէյջանը ասում է, որ ինքը անուսում լինելով, իրենից աւելի հասկացողները նրան զոռով կ'աշխատեն համոզել:

Ապա խօսեց Բ-ի ներկ. Ա-ը. ի՞նչ անենք ապա. չունէք վստահութիւնը դէպի՝ ձեզնից աւելի հասկացողները, չէք ընդունում նրանց ասածները եւ թոյլ էք տալիս ձեզ ասել, որ ձեզ կ'աշխատեն համոզել այն բանում, որը գործին վնաս է: Երբ չունէք վստահութիւն՝ եւ համոզելը ճնշում էք համարում, այլեւս խօսելն ու վիճել աւելորդ է: Շատ ցանկալի էր, որ բոլորս էլ կէտ առ կէտ իմանայինք մեր ծրագիրը, կուսակցութեան հաւատամք, բայց քանի որ այդ չկայ, պիտի մի քիչ վստահէք հասկացողներին (կրկնում է նախկին ժողովում ասածները եւ պնդում է, որ Նախագիծը ապօրինի չէ եւ չի կարելի Կովկասում չգործել հէնց տաճ[կա]հայ դատի տեսակէտից): Մենք այստեղ, Կովկասում այնքան էլ մեծ յեղափոխական գործ չենք արել:

Ընկ. Դաբիրը բողոքում է վերջին նախադասութեան դէմ, ասելով, որ մեծ գործեր են 903-904-ի տեռորները, հայ թուրքական սարսափելի ընդհարումների մէջ ցոյց տուած պաշտպանութիւնը, քանի որ այդ ընդհարումները կառավարութեան գործն են եւ սարքուած հայ տարրի դէմ, իբր աւելի առաջադէմ: Գալով տեղիս գործունէութեանը՝ նա ասում է, որ ինքը դէմ չէ, այլ շեշտում է այն հանգամանքը, որ [ե]թէ Դաշնակցութիւնը ձգտի Նախագծի լրիւ իրագործման, ուժ չի մնայ երկրի համար:

Ը[նկեր] Ա-ը շեշտում է, որ այդ բոլորը անմիջական գործ չէ, բայց թէ ինքը չի ասում թէ մենք յեղափոխական գործ չենք արել, այլ խօսքը անմիջական գործի մասին է. ասում է, որ այստեղ եւս չկայ անձի, գոյքի եւ պատուի ապահովութիւն. չկայ խօսքի ազատութիւն: Կոզակի գնդակը ամէն րոպէ կարող է մարդու կեանքին վերջ տալ:

Ընկ. Ծծմակը շեշտում է, որ չնայած ինքներդ ասում էք, որ կոզակի գնդակը ամէն րոպէ սպառնում է, բայց դուք այդպիսի մի ժամանակ գնացել էիք կենտրոնական ժողովը, եւ ինչ որ հողային եւ այլ խնդիրներով էիք զբաղւում եւ չէիք մտածում, որ առիթ տուած կը լինէք կառավ.ը ժողովրդին կոտորելու:

Բ-ի ներկ՝ ընկ. Ա-ը պատասխանեց, ոչինչ, ինչ անենք թող կէսն էլ ջարդուի:

Ընկ. Պանդուխտեանը.— Ընկ. Կոմսը անցեալ ժողովում միջանկեալ ասաց, քանի որ մի խումբ երկրացիներ ուզում են դրամ հաւաքել երկրի ինքնապաշտպանութեան համար, լաւ կը լինի, որ մի մասնախումբ կազմուի, որ եւ զբաղուի այդ գործով, որով թայֆայական համախմբումների առաջն կ'առնուի: Ընկ. Կոմսը կը յիշէ երեւի, որ մի քանի ամիս առաջ այդ միտքը իրեն յայտնեցի՝ Անտառապատում[27], որ եւ ուշադրութեան չառաւ: Մի ամիս վերջ եղայ Մեծ Քաղաքում ուր այդպիսի մի համախմբում կազմելով անարխիայի միջից յաջողեցի դուրս քաշել մօտ 1000 ընկերներ, որոնք մշակելով համախմբման կանոնագիր (որի մէջ երկրորդական տեղ է բռնում եւ երկրացիների միջոցներով զէնք առնելը), որ եւ հաստատուեց Արեւելեան Բիւրոյի կողմից: — Անցնեմ կովկասեան գործունէութեան խնդրին: — Այստեղ յայտնեցինք մեզ ղրկողների կարծիքները կովկ. գործունէութեան մասին, որից պարզ երեւաց, որ մեզ ղրկող մասսան այնքան էլ գիտակից եւ վերահասու չէ ներկային, նոքա վստահանալով մեզ, ամէն ինչ մեզ վրայ են դնում: Թէ ընկեր ներկայացուցիչները եւ թէ ղրկողները խօսք անգամ չեն ուզում լսել բաժանման մասին:— Նոյնիսկ զայրանում են, երբ տեսնում են գումարւում է մի առանձին տաճ[կա]հայ ժողով: Բոլորիս պարզ կը լինի, որ բաժանում հայ երկու դատին էլ անկումն է: Երկիրը յոյսը Կովկասի վրայ է դրել: Բաժանումը երկրի մէջ եղածներին կը լքանի, եւ կը մեռցնի յեղափոխական ոգին: — Իսկ այս բոլորի պատճառը Նախագիծն է, որ կարող է բաժանման պատճառ դառնալ եւ որի շուրջը խմբուած են հազարաւորներ բանուոր մասսայից. նոցա մէջ կան եւ շատ ինտելիգենտներ. եթէ չեմ սխալւում, նոքա մի քանի ժողովներ են ունեցել բաժանման համար, իսկ եթէ նոքա չեն յաջողել, այդ եղել է շնորհիւ Դաշնակցութեան հիմնադիրների ջանքերին: Աշխատենք գործը լաւ տանել, եթէ յանկարծ մեր բանը վատ գնայ, բաժանում լինի, մեր տաճկահայ մասսան մեզ խաչ կը հանի, անուանելով բաժանման պատճառ: Ընկերներ ուշի ուշով շարժուենք, մեր ամէն մի վճիռ կարող է առաջ բերել միացում կամ բաժանում. խելօք լինենք, համերաշխութեամբ այնպիսի քայլ անենք, որ մեզ այստեղ ղրկողների պարսաւանքին չարժանանք: Թոյլ տուէք անհատական կարծիքս յայտնել (արտայայտել) եւ ասել որ Կովկասի գործունէութիւնը անխուսափելի է եւ կովկասահայը չի կարող խուսափել ռուսական յեղափոխութիւնից, որ Նախագծի շուրջը կայ ահագին մասսա. համերաշխ լինենք եւ Նախագծի ինքնութիւնն ու նրա գործադրութեան չափը Ընդհանուր Ժողովին թողնենք եւ պահանջենք, որ Դաշնակցութիւնը ռուսական յեղափոխութեան մէջ վերջնապահ տեղը բռնէ, որպէսզի երկրի դատը չվնասուի, որ Դաշնակցութիւնը հաւատարիմ մնայ տաճկահայ դատին, կովկասեան գործունէութիւնը աւելի սահմանափակ լինի: Իսկ մենք հասկացնենք ու հաւատացնենք եղելութեան ճշմարտութիւնը մեզ ուղարկողներին եւ հեռու պահենք անարխիայից եւ գործել երկրի համար՝ եւ չլսեն պրովակատոր դաւաճաններին, որոնց միակ ցանկութիւնն է Դաշնակցութեան ջլատումը եւ բաժանումը:

Ընկ. Իշխան.— Բիւրոն Նախագծի շուրջը ծագած տարաձայնութիւնների քննութիւնն է դրել մէջտեղը, բայց ինչպէս պարզուեց եւ երեւում է, որ եկողներից շատերը այս խնդիրը երբեք չեն էլ քննել: Ստիպուած եմ կրկնել, որ չի կարելի ժողովուրդի առաջախաղացութիւնը կանգնեցնել. Նախագիծը պատմական մեծ երեւոյթների արդիւնք է: 15 տարի մենք այս ժողովուրդից միայն ստացել ենք, իսկ այժմ երբ սկսել ենք եւ մի բան տալ, նա աւելի է կպչում մեզ եւ աւելի է տալիս: Մենք միայն կարիքներն ենք ասում, չէ որ պիտի ասել եւ այն,

25.- Տուրքերով:
26.- Սասնոյ հայդուկապետն է:

27.- Անտառապատը հին Ղարաքիլիսայի (այժմ Վանաձոր) կուսակցական ծածկանունն էր:

թէ ի՞նչ [պիտի] անենք, ի՞նչ պիտի ստեղծենք։ Հէնց տաճկահայ դատին վնաս է այստեղ չգործելը, կը մնանք միևնակ եւ առիթ կը տանք բաժանման կողմնակիցներին հրապարակ իջնել եւ բաժանուել։

Ընկ. Խաչօ.— Պէտք է այս ժողովը մի բան ասի անպայման այս հրատապ խնդրի մասին, եւ այդ ասելիքը պիտի լինի լուրջ մտածուած. հաւատացած եղէք, որ կով. գործունէութիւնը եւ Նախագիծը մերժելով փորած կը լինի այս ժողովը տաճկահայ դատի գերեզմանը։

Հայկ-Արմէն.— Այստեղ շատերը կարծես կ'ուզեն ստիպելով սպառնալ, որ եթէ այստեղ Նախագիծը մերժուի տաճ[կա]հայ դատը կը մեռնի։ Ինչու կը ստիպենք ընկերներին, այսպիսի մի ծրագրային խնդրի մը մէջ, որից շատ բան չեն հասկանար եւ բերան են միայն նրանց կողմից, որ եկել են։ Այս բոլորի պատճառը Միհրանն է։ Ճիշտ է, անհրաժեշտ է այնքան երկար վիճաբանութիւնից յետոյ, գոնէ համոզումին վրայ հիմնուած մի բանաձեւ իբր եզրակացութիւն դնել արձանագրութեան մէջ։ Պէտք է ծանր խնդիրները թողնել Ընդհ. Ժողովին եւ հպատակուել նրա բոլոր որոշումներին։

Ընկ. Միհր.— Ցաւալի է, երբ մարդիկ խոստովանում են, թէ չեն հասկանում ի՞նչ է Նախագիծը, իսկապէս օգուտ է թէ վնաս, օրինաւոր ծագում ունի թէ ոչ. իրենց յանձնարարուած է այդ մասին խօսիլ թէ ոչ, բայց տալիս են իրենց կարծիքը թեր կամ դէմ։ Զգիտցած դէպքում պիտի անպայման խոստովանուել չգիտցածներն եւ ամէն ինչ թողնել Ընդհ. Ժողովին, որին պիտի լսել անպայման։

Նախագահը.— Նոյնպէս շեշտեց խնդրի լրջութիւնը. ասաց, երբ բոլորս էլ հակառակ ենք բաժանման, հասկանանք մէկ մէկու եւ գանք մի այնպիսի եզրակացութեան, որը բաժանուելու պատրաստ տարրերը անգամ միացնէ։

Վրէժխնդիրը.— Ասաց, որ ինքը նկատում է, որ թէ՛ նախագծականները եւ թէ հակառակները կը խնդրեն հէնց տաճ[կա]հայ դատի օգուտի տեսակէտից։ Ուրեմն պէտք է մէջտեղից թիւրիմացութիւնը վերցնել, եսականութիւն թողնել եւ գալ մի եզրակացութեան, քանի որ բոլորիս նպատակն է անել մի այնպիսի քայլ, որ չլինի թէ մեր դատը վնասուի։

Ընկ. Վահան.— Ասաց, որ թէեւ կովկասեան գործունէութիւնը անխուսափելի է, բայց Դաշ.-ը չպէտք է իւր բոլոր ուժերը նրան պահէ. օրինակ Արեւմտեան Բիւրոն, որ իսկապէս զուտ տաճ[կա]հայ դատով պիտի զբաղուէր, կամաց-կամաց այս մի տարուայ ընթացքում փոխադրուեց այստեղ եւ ինչո՞վ են զբաղուած անդամները — կամ պատգամաւոր կամ հոգաբարձու կամ ուսուցիչ եւայլն։ Այսպիսով կը տեսնենք, որ կամայ ա-կամայ երբ զբաղուենք Կովկասով, երկիրը բոլորովին կը զրկուի։

Ընկ. Աւետիքը.— Ասաց, որ հանգամանքներն են այդպէս արել եւ երկրորդ՝ Արեւմտեան Բիւրոյի մէջ մնացել են դարձեալ ուրիշ ուժեր։

Մեծամասնութիւնը պահանջեց մի բանաձեւ դնել մէջտեղ, որին պատգամաւորները ձայն կարող են տալ անկախ իրենց բերած մանդատներից, եթէ անձնապէս համոզուել են։

Առաջարկուեց հետեւեալ բանաձեւը.—

Բանաձեւ.— Հ. Յ. Դաշ-եան Արեւելեան Բ-ի հրաւիրմամբ գումարուած կովկասաբնակ Դաշ-ան տաճկահայերի համագումարը քննելով «Նախագծի» շուրջը ծագած տարաձայնութիւնները, անկախ շրջաններից բերած մանդատներից, եկաւ այն եզրակացութեան, որ նա համապատասխան է Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհ. Ժողովի տուած սկզբունքներին եւ, որ կովկասեան գործունէութիւնը կեանքի հրամայողական պահանջ է։ Իսկ Նախագծի վերջնական ընդունելութիւնը եւ գործադրութեան չափը թողնում [է] առաջիկայ Ընդհ. Ժողովին։

Այս բանաձեւը անցաւ միաձայն։

Ընկ. Վահանը, առաջարկեց որ ժողովը մի թռուցիկ բաց թողնի այն խմբակի հասցէին, որը խօսում է իբրեւ թէ տաճ[կա]հայ դատի պաշտպանութեան համար եւ մանաւանդ ամբողջ տաճ[կա]հայերի կողմից։ Այս առաջարկը ընդունուեց միաձայն։ Ընկերներից Իշխանին, Թովմասին, Արմէն-Գարոյին եւ Խաչոյին յանձնարարուեց կազմել այդ խնդրի մասին մի ռեզոլիւցիա յաջորդ ժողովին ներկայացնելու համար։

Ժողովը սրանով էլ վերջացաւ։ Յաջորդ ժողովը նշանակուեց ամսոյս 31-ի առաւօտեան։

Մանօթ.— Ժողովը ստացաւ մի խումբ քարեցիներից[28] ստորագրուած բողոք Նախագծի դէմ։

1906, Հոկտ. 30, ի Քար

Նիստ VI-րդ

Արձանագրութիւն 1906 31 Հոկտ. ժողովի.— Ներկայ էին 22 պատգամաւորներ։

Նախ կարդացուեց Դ. եւ Ե.-րդ ժողովների արձանագրութիւնները։ Ապա կարդացին կազմուած թռուցիկը, որ մի երկու փոփոխութիւններից յետոյ ընդունուեց միաձայն (թռուցիկը տպագրուած կարուած է արձանագրութեան տետրի հետ)[29]։

Ապա խօսեցին հետեւեալ խնդիրների մասին։

1) Ինչպէս անել որ երկրի գաղթականութիւնը դադարի, եկածները կամաց-կամաց վերադառնան եւ մնացածները աշխատանք ու հող ունենան։ Երկրի սովի առաջն ինչպէ՞ս առնել։— Այս մասին երկար խօսելուց յետոյ եկան այն եզրակացութեան՝ որ պիտի ամէն ոք ամէն կերպ երկրում մնացողներին հասկացնի, որ այստեղ եւս գործ չկայ, դրութիւնը անտանելի է։— Յետոյ կազմել առանձին ընկերութիւնը, որ բանուոր գաղթականներին գործ գտնէ, ռանչպարներին կապալով հող ձեռք բերէ (պետական, վանքական եւ մասնաւոր կալուածներում), իսկ այն գաղթականների համար, որ արդէն հաստատուելու են, պիտի աշխատել, որ հպատակութիւն ընդունեն եւ հող ձեռք բերելով աշխատեն զարգացնել տեղին յարմար արդիւնաբերութիւնը։— Ստիպել Կովկասում գտնուող գաղթականներին, որ ամէն մէկը անպայման օգնի իւր ընտանիքին եւ ապա իրեն։ Միջոցներից մի մասն էլ զոհեն օգուտ անտէր սովեալների։ — Իսկ ինչ վերաբերում է այն վայրերին, որոնք մնասուել են կազմակերպութեան այնտեղ ունեցած այս կամ այն գործունէութիւնից — նոցա հոգսը կազմակերպութիւնը պիտի հոգայ (եւ հոգում է) իւր հնարաւոր միջոցներով։

2) Մեր կողմից պատգամաւոր ունենալ Ընդհ. Ժողովում, որ ներկայացնէ մեր ցանկութիւնները։

Վճռուեց յանձնարարել արդէն ներկայ գտնուելու իրաւունք ունեցող ընկերներին՝ Զինարին եւ Հայկ-Արմէնին, որ լինին մեր ցանկութիւնների եւ մանդատների ժողովի ուշադրութեան յանձնողներ եւ ժողովի վճռով պարտաւորացնեն շրջանների պատգամաւորներին, որ վերադարձին գումարեն շրջանային ժողովը եւ յայտնեն Ընդհանուր Ժողովի որոշումները։

3) Դաշնակցութեան շարքերը գտել.— Վճռուեց, որ բախտախնդիրներին հեռացնելիս պիտի դիմել մարմիններին, եւ մարմինները իրենց վճիռ այդ խնդրի մասին բոլորին յայտարարեն, որ ժողովուրդը չտուժէ։

Սրանից յետոյ ժողովը իւր պարապմունքները վերջացած համարեց եւ վճռեց հետեւեալ օրը լսել բոլոր արձանագրութիւնների ընթերցումը եւ վաւերացնել ուցրուել։

Նախագահ՝ ԶԻՆԱՐ
Քարտուղար՝ ՍԱՐՕ

1906 թիւ, 31 Հոկտ., Քար

Արեւելեան Բիւրոյի հրաւիրմամբ Քարում գումարուած կովկասաբնակ դաշնակցական տաճկահայերի 25 պատգամաւորների ստորագրութիւն։

Վաւերացնում ենք

Նախագահ՝ ԶԻՆԱՐ
Քարտուղարներ՝ ՄԻՀՐ
ՍԱՐՕ

1906 թիւ, Նոյեմբեր 1-ն
Քար

ԴԻՄՈՒՄ

Կովկասաբնակ տաճկահայ դաշնակցական ներկայացուցչական Համագումարը, որ հաւաքուած էր «Կովկասեան նախագծի» շուրջը տարածուած խնդիրներն քննելու –, ի միջի այլոց, քննութեան առնելով վերջին 4-5 ամսուայ ընթացքում մամուլի մէջ եւ զանազան խաւերում՝ յանուն տաճկահայ դատի մղուած պայքարը, որով իբր թէ պաշտպան են հանդիսանում մեր դատին, յայտարարում է.

1) Որ դա հակայեղափոխական մութ տարրերի ագիտացիա է – զանազան մութ, ստոր, եսական նպատակների համար։

2) Որ այդպիսի մի ընթացք լոկ դաւաճանական դիրք է տաճկահայ դատի հանդէպ։

Որ Դաշնակցութիւնը իբր հայ ժողովրդի արդար դատի միակ պաշտպան, այսօր էլ գործելու է նոյն ճանապարհով՝ ինչ 16 տարուց ի վեր։

Համագումարը սրանով կո՛չ է անում ամբողջ հայ հասարակութեան եւ մասնաւորապէս Կովկասի դաշնակցականներին, զգոյշ մնալ այդ հակայեղափոխական տարրերից եւ նրանց պրոպագանդից։

ԿՈՎԿԱՍԱԲՆԱԿ ՏԱՃԿԱՀԱՅ
ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

30 Հոկտ. 1906

28.- Գիւմրեցիներից։

29.- Խնդրոյ առարկայ «թռուցիկը» հրատարակուած է «Դրօշակ»ի մէջ «դիմում» խորագրով. տես յաջորդ էջ, 137։

Բ 3.– ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Փաստ. 1593-1

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մենք ներքոյ ստորագրեալ Հ.Յ.Դ. Գաղթավայր[18] *Նորաշէն «Ֆիտայի» խմբի անդամներս 1906 թ. Սեպտ. 27-ին ժողով գումարելով մանրամասն կերպով քննեցինք Հ.Յ.Դ. Մրագիր եւ Կովկասեան գործունէութեան նախագիծը եւ որոշեցինք ընդունել «Նախագիծը». սակայն Տաճկահայաստան եւս աչքաթող չանել, փոխադրել զէնքեր, ուղարկել ինտելիգենտ ոյժեր պրոպագանդա անելու համար եւ փողի մի որոշ տոկոսը ուղարկել Տաճկաստան, որից յետոյ կայացրինք գաղտնի քուէարկութեամբ մեր խմբի կողմից պատուիրակի ընտրութիւնը. միաձայն ընտրուեց ընկեր Թնդանօթը, որը մեր շրջանի կողմից պիտի մասնակցի Հոկտեմբեր ամսին կայանալիք տաճկահայերի ժողովի համար պատգամաւորներ ընտրելու պատուիրակային ժողովին։ Մեր պատուիրակին պարտաւորեցուցիչ է վերոյիշեալ մանդատը, որի համար կը ստորագրենք։*

[8 *ստորագրութիւններ*]

Վերոյիշեալ հինգ անձանց գիր չգիտնալուն համար ես ստորագրեցի ԹՆԴԱՆՕԹ

Փաստ. 1593-6

ՕՏԵՍԱՅԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ՏԱՃԿԱՀԱՅ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Հոկտեմբեր 1-ի նիստում կայացած

Արեւելեան Բիւրոյի առաջարկով մենք հրաւիրուած լինելով, մեր շրջանի խմբերի կարծիքն արտայայտելու Կովկասեան նախագծի առթիւ, մի շարք ժողովներում եկանք հետեւեալ որոշման.

1. Կովկասեան նախագիծը արժանի է թէ՛ ըստ էութեան եւ թէ ըստ ձեւի եւ կիրառութեան մեր ամէնքի միաձայն բողոքին։

Ի նկատի ունենալով որ նա, այդ Նախագիծը բաց է անում Դաշնակցութեան առաջ գործելու մի նոր ասպարէզ եւ եղանակ, մի բան որ դուրս է Դաշնակցութեան ծրագրից։ Նա չօշափում է Դաշնակցութեան ծրագրի էն կենսական մասը՝ նպատակը, որի փոփոխութեան ենթարկելու ձեռնհաս է, միայն եւ միայն Ընդհանուր Ժողովը։

Ի նկատի ունենալով վերջապէս որ այդ Նախագիծը ամբողջովին յենուած է դասակարգային կռուի վրայ, որ տաճկահայկական դատի տեսակէտից թէ՛ վաղաժամ է եւ թէ վնասակար է մի դատի, որի մօտաւոր նպատակն է քաղաքական ազատութիւնը սուլթանական ռեժիմից, իսկ այդ կռիւը տանող կուսակցութիւնը կարող [է] եւ պէտք է յենուի այդ հարցում ամբողջ ազգի վրայ եւ ոչ միայն նրա մի մասի՝ աշխատաւոր դասի, որ գոյութիւն էլ չունի արդէն Տաճկահայաստանում իբրեւ բանուոր դասակարգ։

Ի նկատի առնելով այդ բոլորը եւ գտնելով այդ նախագիծը ապօրինի ըստ ձեւի եւ վնասակար ըստ էութեան, յայտնում ենք մեր բողոքը նրա գործադրութեան դէմ, որը եւ է միակ պատճառը վերջերս սկսուած բոլոր խառնակութիւնների։

[10 *ստորագրութիւններ*]

Փաստ. 1593-11

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մենք ներքոյ ստորագրեալ Հ.Յ.Դ. Գաղթավայրի Անտառապատ գիւղի «Մասիս» խմբի դաշնակցական անդամներս, այսօր ժողով գումարելով եւ քննելով տաճկահայ եւ ռուսահայ Հ.Յ.Դ. գործունէութիւնը եւ Կովկասեան նախագիծը, միաձայն որոշեցինք.

I Անհրաժեշտ եւ բնական գտանք տաճկահայ դատի նկատմամբ ռուսահայ եղբայրների օգնութիւնը եւ որ գլխաւորն է ոչ մի հակասութիւն չգտնել Հ.Յ.Դ. Կովկասեան նախագծի եւ տաճկահայ դատի մէջ, հետեւաբար եւ նպատակը մէկ լինելով՝ (այսինքն Տաճկաստանում ինչպէս եւ Ռուսաստանում ազատագրական կռիւ մղել եւ փոխել, տապալել նոցա բռնակալ, ճնշող, ամէն բան խեղդող ռեժիմը եւ փոխարինել՝ բոլոր ժողովուրդների համար՝ ինքնավար եւ քառանդամ սիստեմի վրայ հիմնուած, ազատ, ռամկավար մի կառավարութիւն) ոչ մի պառակտում կամ բաժանման կէտ չենք տեսնում եւ չենք ցանկանում, մեր եւ ռուսահայ գիւղացի եւ աշխատաւոր եղբայրների մէջ։

II Մենք գտնում ենք եւ ցանկանում ենք, որ աշխատաւորների դասակարգային կուսակցութիւն Հ. Յ. Դաշնակցութիւնը իր ներքին գործերում (Ռուսաստանում) կատարեալ ազատ եւ ինքնավար լինի՝ չխառնուելով տաճկահայ ներքին գործերի մէջ՝ ինչպէս եւ տաճկահայերը կատարեալ ազատ իրաւունք ունենան միայն իրենք կառավարելու եւ ձայն ունենալու իրենց ներքին գործերում։

Բայց ռուսահայ Հ. Յ. Դաշնակցութիւնը բարոյական պարտաւորութիւն յանձն առնէ իւր հասոյթից մի որոշ տոկոս յատկացնել տաճկահայ Հ. Յ. Դաշնակցութեան (տաճկահայ դատին) եւ այդպիսով մի կապ պահպանել եւ ղեկավարուել Ֆեդերադիւ-դաշնակցական սկզբունքներով։

Արդ, ձեռնարկելով մեր խմբի կողմից պատուիրակի ընտրութեան՝ այս ամսում կայանալիք տաճկահայերի խորհրդակցական ժողովին պատգամաւոր ուղարկելու համար՝ միաձայն ընտրեցինք տասնչորս (14) *ձայնով պատուիրակ՝ ընկեր Իզկէին։*

[14 *ստորագրութիւններ*]

Հոկտ. 8 1906

Փաստ. 1593-21

Հոկտեմբեր 12-ին, 1906

Բաքուաբնակ տաճկահայ ներկայացուցչական ժողովը մանրամասն քննելով Նախագծի շուրջը եղած տարաձայնութիւններու նկատմամբ, եկաւ այն եզրակացութեան, որ դա մի ժամանակակից պահանջն էր որը պէտք է պաշտպան հանդիսանար հայ աշխատաւոր դասակարգի շահերին, այդ պատճառաւ ձայներու մեծամասնութեամբ տասնվեց ձայն ընդդէմ հինգի պահանջեց որ Դաշնակցութիւնը իւր հիմնական ծրագրից՝ այն է տաճկահայ դատի պաշտպանութիւնից չհեռանայ այլ մնայ այնպէս ինչ եղել է մինչեւ այժմս։ Ինչ վերաբերում է կովկասեան բանուորական շարժման, մենք ընդունելով այդ՝ առաջադրում ենք որ Դաշնակցութիւնը Տաճկահայաստանում կանգնի ազգային ինքնապաշտպանութեան հողի վրայ իսկ Կովկասում դասակարգային հողի վրայ։

Իսկ վերոյիշեալ բանաձեւին ձեռնպահ մնացող հինգ ներկայացուցիչները առաջադրում են որ Դաշնակցութիւնը որպէս մի ազգային կուսակցութեան, տաճկահայկական դատի հիմնական ծրագրի համաձայն գործի, իսկ Կովկասում նա մասնակցի միմիայն ինքնապաշտպանութեան եւ հայ ժողովուրդի զարգացման գործին։

Ներկայացուցչական ժողովը առաջադրում է որ երկրի դաշնակցական մարմինները իրենց ներքին եւ արտաքին գործերին լինէին լիազօր, առանց դրսի մարմինների հրամաններին. վարելու են երկրի բոլոր գործերը իրենց պատասխանատուութեամբ, միեւնոյն ժամանակ երկրի ընկերներն ալ իրաւունք չպիտի ունենան դուրս գալ գործելու այն սահմաններից որպիսի սահմանները կ'որոշէ Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը։

Նախագահ ներկայացուցչական ժողովի՝
ՎԱՆԻԿ

Փաստ. 1593-22

Հոկտեմբեր 12-ին, 1906

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ներքոյ ստորագրեալքս, բաքուաբնակ տաճկահայ ներկայացուցիչներս ժողով գումարելով այսօր ամսիս 12-ին ընտրեցինք երկու պատգամաւորներ գաղտնի քուէարկութեամբ. որտեղ ընտրուեցին ձայներու մեծամասնութեամբ Սուքիաս Քրմոյեանց եւ Յակոբ Տէր Արիստակէսեանց, որոնք ճանապարհուելու են դէպի Քար[3] մասնակցելու այնտեղ կայանալիք տաճկահայկական համագումարին, եւ առաջադրելու այն պահանջները որոնք ձեւակերպել է ներկայացուցչական ժողովը։ Ժողովում մասնակցում էին 21 ներկայացուցիչներ, բացակայում էին երեք ներկայացուցիչ, որոնցից իւրաքանչիւրը ընտրուած է քառասուն տաճկահայ ընկերներից։

Ներկայացուցիչներու ստորագրութիւններ։

[19 *ստորագրութիւններ*]

Փաստ. 1593-23

ԿԱՐԾԻՔՆԵՐ Հ.Յ.Դ. ՋՐԱԲԵՐԴԻ ՇՐՋԱՆԻ ՔԱՐԱՁՈՐ, ԱՆԱՊԱՏ, ՉԱԽԱԼԻ ԵՒ ԾԱՌԱՍՏԱՆ ԳԻՒՂԵՐԻ ԹՈՒՐՔԱՀԱՅ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՑ

Ներկայ հանգամանքներում չգիտենք մեր պարոններ ինչ են ուզում իմանալ։ Մեր կարծիքները կ'ուզէք իմանալ, մենք ոչինչ չգիտենք. միայն այսքան կ'ասենք որ մենք գաղթելով մեր հայրենիքից եղանք թափառական, ոչ տուն ունինք, ոչ հող ունինք եւ ոչ սեփականութիւն. չգիտենք մեր ցաւերի վրայ մտածենք թէ կուսակցական կարծիքներ յայտնենք. միմիայն մեր կարճ խելք այսքան կը հանի, որ մենք չենք մոռանայ մեր եղբայրների եւ հայրերի արիւն որ բողոքում են մեզ. թող կեցցեն մեր Հ. Յ. Դաշնակցութեան խելօք ղեկավարներ որ իւրեանց եռանդոտ եւ տոկուն աշխատութեամբ առաջնորդեն մեզ։

Որ եւ ստորագրում ենք։

[7 *ստորագրութիւններ*]

1906 *թ. Հոկտ.* 12
Քարաձոր

Փաստ. 1593-24

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԻ ԿՈՄԻՏԷԻ ՈՒՂՂՈՒԱԾ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Աղճապատ գիւղ «Կայծակ» խմբի կողմից Ձեր (Կոմիտէի) կողմից ուղարկուած պրն. Ժիրայրի ներկայութեամբ խմբիս մի մասը 1906 Հոկտ. 12ին ի մի գումարուելով ըստ Ձեր հրահանգի կամ հարցի նկատմամբ իւր ցանկութիւնը յայտնելու յառաջիկայ Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին, ներկայ անդամները իրենց կարծիքը յայտնած էին մտքերու անպատրաստութեամբ. այժմ՝ բացակայից հետ դարձեալ ժողով գումարուելով եւ փոխադարձ խորհրդակցելով, հետեւեալ որոշման եկանք, այն է, որ մենք ներկայ ստորագրեալներս ցանկանում ենք Հ. Յ. Դաշնակցական ընկերութիւնը իւր նախկին ծրագիրը անփոփոխ պահէ՝ թուրքահայ դատին նուիրուած. սոցիալիստ գաղափարին եւ Նախագծին համաձայն չենք. խնդրում ենք Ձեզ մեր այս կարծիքը եւ ցանկութիւնը ուր որ անկ է յայտնեցէք։

«ԿԱՅԾԱԿ» խմբի անդամներ

1906 *Հոկտեմբեր 14-ին*

[25 *ստորագրութիւններ*]

Փաստ. 1593-25

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԱԽՕՍԱԿԱՆ ԹԵՐԹ

1906 թուի, Հոկտ. 14-ին, մենք Հանքի[11] եւ շրջանում բնակուող Հ.Յ.Դ. կազմակերպութեան պատկանող տաճկահայերս, քննելով Արեւելեան Բիւրոյից առաջարկուած ծրագիրը, միաձայն որոշեցինք ընդունել այն Նախագիծը որ Հ.Յ.Դ. պէտք է Նորից վերադառնայ իր նախկին ծրագրին, ընդունելով տաճկահայոց դատը իբրեւ իրա ամենագլխաւոր, անմիջական եւ բուն նպատակ։ Սրանով ընտրեցինք մեր կողմից պատգամաւոր պ. Փայլակին մեր եղբակացութիւնը ներկայացնելու առաջիկայ Ընդհանուր Ժողովին։

Շրջանի եւ քաղաքի պատգամաւորներ

[72 *ստորագրութիւններ*]

Փաստ. 1593-37

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1906 ամի 22 Հոկտ.ի Քասաղի շրջանի տաճկահայ գաղթականներ (թուով 59) ժողովուելով Սրբավայր[30] եւ քննութեան առնելով Դաշնակցութեան Կովկասեան նախագիծն ու Դաշնակցութեան գործունէութիւնը ընդհանրապէս թէ՛ Տաճկահայաստանում եւ թէ Կովկասում, եկանք հետեւեալ եզրակացութեան.

1.- Առայժմ վնասակար ենք համարում ուղարկել երկիր կռուող ոյժեր։

2.- Աշխատել երկիր մտցնել ինտելիգենտ ոյժեր պրոպագանդայի եւ կազմակերպելու համար. դրան հետ միասին դրամ եւ զէնք տաճկահայերին զինելու եւ պատրաստելու ինքնապաշտպանութեան։

3.- Դաշնակցութեան ներկայ գործունէութեան եւ Կովկասեան նախագիծին հակառակ ենք եւ պահանջում ենք, որ Դաշնակցութիւնը ինչպէս որ մինչեւ այժմ բարձր է պահել իւր վեհ որոշումը, նա այսուհետեւ էլ իրեն կը պահի այդ բարձրութեան վրայ եւ կը շարունակի իւր գործունէութիւնը թէ Կովկասում եւ թէ Տաճկահայաստանում յանուն արդարութեան եւ հաւասարութեան։

4.- Մենք անբաժան ենք մեր Կովկասի հայ եղբայրներից. մէկ է մեր դատն ու պահանջը եւ միասին Կովկասի հայ եղբայրների հետ ձեռք ձեռքի տուած գործենք Դաշնակցութեան դրօշակի տակ, մինչեւ որ հայի դատը (տաճկահայ եւ ռուսահայ) իւր ցանկալի վախճանը ստանայ։

5.- Տաճկահայաստանի յեղափոխական գործունէութիւնը ղեկավարելու համար հիմնել երկրի ներսում մի կենտրոնական մարմին (Բիւրո), երկրի յեղափոխական գործերը կառավարելու։

6.- Ուշադրութիւն դարձնել երկրից գաղթականութեան հոսանքին վերջ տալու, որի պատճառներից ամենագլխաւորն է սովը։

7.- Մեր այս ցանկութիւնները պաշտպանելու համար ուր հարկն է, ընտրում ենք մեր միջից մեր ընկերներ Սողոմոն Փանոսեանին եւ Միհրան Թերլէմէզեանին իբրեւ ներկայացուցիչ։

Նախագահ ժողովի՝ ՋԱՆԻԿ
Քարտուղար՝ ՎԱՀՐԱՄ

30.- Սրբավայրը էջմիածնի կուս. ծածկանունն է։

Փաստ. 1593-38

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Գաղթավայրի ամբողջ շրջանի խմբերի կողմից ընտրուած պատուիրակների պատուիրակային ժողովի, որը կայացաւ Գաղթավայրում այսօր 1906 թ. Հոկտ. 22-ին միաձայն ժողովի նախագահ ընտրուեց ընկեր Բասեղը իսկ քարտուղար ընկեր Ժիրայրը։ Նախ ստուգուեց պատուիրակների վկայագրերը եւ մանդատները, որոնցից 23 մանդատ հետեւեալ բովանդակութիւնը ունէր, «անհրաժեշտ է, որ Դաշնակցութիւնը ընդունէ Կովկասեան գործունէութեան նախագիծը եւ Կովկասում ունենայ յեղափոխական գործունէութիւն, բայց որպէսզի տաճկահայ եւ կովկասահայ դատերը իրար չվնասեն, անհրաժեշտ են գտնում, որ այդ երկու դատերն էլ (որ Դաշնակցութիւնը միաժամանակ պէտք է վարէ), ունենան աւտոնոմ իրաւունքներ եւ կապուած լինեն իրար հետ, ֆեդերատիւ (դաշնակցական) կապերով, պարտաւորեցնելով սակայն կովկասահայ մարմիններին, որ իրանց նիւթական հասոյթի որոշ տոկոսը յատկացնեն տաճկահայ դատին եւ հնարաւոր եղած չափով երկիր մտցնեն զէնք եւ ինտելիգենտ ոյժեր։ Հինգ մանդատ ընդունելով հանդերձ վերոյիշեալը գտնում էր, որ անհրաժեշտ է Արեւելեան Բիւրոյի կից ունենալ առանձին մարմին, տաճկահայ դատը վարելու համար. իսկ երեք մանդատ գտնում էր, որ Դաշնակցութիւնը հիմնուած լինելով միմիայն տաճկահայոց դատի համար, վարէ միայն տաճկահայ դատը։ Ապա ձեռնարկուեց Գաղթավայրի ամբողջ շրջանի կողմից պատգամաւորի ընտրութեան. թեկնածուներ առաջարկուեցին՝ ընկեր Անտոքը եւ ընկեր Ժիրայրը։ Գաղտնի քուէարկութեամբ ընկեր Ժիրայրը ստացաւ (23) քսաներեք ձայն, իսկ ընկեր Անտոքը (10) տասը ձայն, հետեւապէս Գաղթավայրի ամբողջ շրջանի կողմից պատգամաւոր ընտրուեց ընկեր Ժիրայրը։

Պատուիրակային ժողովի նախագահ եւ Գաղթավայրի «Հրայր» խմբի պատուիրակ՝ ՎԱՀԱՆ[?]
Քարտուղար եւ «Եգիպտացի» խմբի պատուիրակ՝ ԺԻՐԱՅՐ

[*Ստորագրութիւններ*]

Փաստ. 1593-40

Մենք ստորագրող Ալեքսանդրապոլի բնակիչք դաշնակցական կազմակերպութեան նախկին մասնակցողներ, վերջի ժամանակներում յայտ եկած Կովկասեան նախագծի պատճառաւ թուլանալով հեռացանք, ի նկատի առնելով որ մեր կազմի միակ նպատակն էր տաճկահայկ[ական] դատը. երբ այդ Կովկասեան նախագիծ անուանեալը մէջտեղից վերանայ, մենք ըստ առաջնոյն կը մնանք կապի մէջ, կը շարունակենք չխնայել մեր բարոյական, նիւթական եւ ֆիզիքական աջակցութիւնը. զայրոսիկ յայտ առնելով պահանջում ենք անյապաղ ոչնչացնել Նախագիծը գալիք փորձանքների առաջն առնելու եւ յանդորրութիւն համայն հայ հասարակութեան չփոթեալ մտաց, որոյ վասն ստորագրելով զայս ներկայացնում ենք տաճկահայ դատի պատգամաւորական ժողովին։

30 *Հոկտեմբեր* 1906,
Ալեքսանդրապոլ

[106 *ստորագրութիւններ*]

Ժամանակը կարճ լինելու պատճառով չկարողացանք ստորագրել շատ մարդկանց։
ԿԱՐՕ

Փաստ. 1593-48

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մենք ներքոյ ստորագրեալ Հ. Յ. Դաշնակցութեան Գաղթավայրի[18] «Մովասար» խմբի 22 անդամներս մանրամասն կերպով քննելով Կովկասեան նախագծի շուրջը ծագած տարաձայնութիւնը՝ գտանք, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը կազմուած լինելով միմիայն տաճկահայկական դատի համար, ուստի Դաշնակցութիւնը պարտաւոր է թողնել Կովկասեան նախագիծը եւ միմիայն տաճկահայկական դատով զբաղուի. նոյնպէս միանում ենք Նաւահանգըստի[17] 45 խմբի բաց թողած պահանջքին։

Սրանից յետոյ ձեռնարկեցինք պատուիրակի ընտրութեան, որը մասնակցելու է շրջանի պատուիրակային ժողովին. միաձայն ընտրուեց Անդոկը։

Հ.Յ.Դ. Գաղթավայրի
«ՄՈՎԱՍԱՐ» խմբի անդամներ

Փաստ. 1593-50

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մենք ներքոյ ստորագրեալ Հ.Յ.Դ. Գաղթավայրի[18] Մաղկապատ գիւղի «Ազգասէր» խմբի ութ անդամներս մանրամասն կերպով քննելով Հ. Յ. Դ. Կովկասեան գործունէութեան նախագիծը միաձայն որոշեցինք, որ Դաշնակցութիւնը ունենայ իր գործունէութիւնը նոյնպէս եւ Ռուսաստանում, համաձայն Կովկասեան գործունէութեան նախագծի. այն է, երկու դատերը լինեն ինքնուրոյն եւ իրար հետ կապուած լինեն ֆեդերատիւ կապերով. այն պայմանով միայն, որ ռուսահայկական բիւջէից մի որոշ տոկոս նպաստ տրուի տաճկահայ դատին։

Ապա ձեռնարկեցինք պատուիրակի ընտրութեան (տաճկահայկական նախապատրաստական ժողովի համար)։ Միաձայն պատուիրակ ընտրուեց Երուանդ Թորոսեանը. մեր պատուիրակի համար պարտաւորեցուցիչ են վերոգրեալները։

Հ.Յ.Դ. Գաղթավայրի «Մաղկապատ» գիւղի
«ԱԶԳԱՍԷՐ» խմբի անդամներ
[8 *ստորագրութիւններ*]

Փաստ. 1593-52

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մենք ներքոյ ստորագրեալ Մաղկապատ գիւղի «Անդրանիկ», «Կայծակ», «Ազգասէր» եւ «Բլուր» խմբերից ընտրուած պատուիրակներս, համաձայն մեր խմբերի տուած մանդատների, որոշեցինք որ Հ. Յ. Դաշնակցութիւնը իւր գործունէութիւնը պիտի ունենայ եւ Ռուսաստանում, համաձայն Կովկասեան գործունէութեան նախագծի, այսինքն Դաշնակցութիւնը կառավարուելով մի ընդհանուր ժողովով, երկու դատերին պիտի տայ ամենայայն ինքնուրոյնութիւններ, որոնք իրար հետ կապուած լինեն ֆեդերատիւ (դաշնակցական) կապերով եւ պարտաւորացնէ Ռուսաստանի բիւջէից որոշ տոկոս յատկացնել տաճկահայկական դատին։ Ապա մենք էլ մեր կողմից ընտրեցինք մի պատուիրակ, համաձայն Գաղթավայրի կոմիտէի, Սուխումում կայանալիք պատուիրակային ժողովին պատգամաւորների ընտրութեան մասնակցելու։ Պատուիրակ ընտրուեց Գեղամը, որի համար պարտաւորեցուցիչ է մեր որոշումը։

Մաղկապատ գիւղի չորս խմբի
խմբական պատուիրակներ։
[3 *ստորագրութիւններ*]

Մանօթութիւն. «Անդրանիկ» խմբի պատուիրակ Յակոբը ընտրութեան ներկայ չէր։

Փաստ. 1593-54

Հ.Յ.Դ. Մ[ԵԾ] Ք[ԱՂԱՔ]Ի[1] ԲԼԷՋԱՆ Ի ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆՅԻ 760 ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ՝ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»

I — *Մեր միութեան ժողովը քննութեան առնելով Նախագիծը եկաւ սոյն եզրակացութեան*

Ազնօթ.- ա.- Որ Դաշնակցութեան սկզբունքն ու նպատակը եղած է մի մինակ տաճկահայ դատ եւ որի ծրագիրը տասնեակ տարուայ գործունէութեամբ սրբամաքրուած է (300000) զոհերի եւ ընկերների թարմ արիւնով։

բ.- Որ ռուս կառավարութեան վատ վերաբերմունքը դէպի հայերը եւ նրա ցանկութիւնն եղած է՝ պոգրոմներով[31] կով[կասի] հայ ժողովուրդին ոչնչացնել։

գ.- Որ թուրք հայկական (Կովկասի) կռիւները՝ եւ լարուած յարաբերութիւնը, հայ ժողովուրդին հասցրել է ծայրայեղ դրութեան։

դ.- Եւ որ Դաշնակցութեան համակրող մասսայի եւ զինուորների մէջ խռովութիւն ծագելով ընկերասպանութեան հասնում է։

ե.- Որ Նախագիծը ստեղծելը Ռայոնական ժողովի իրաւունքներից վեր էր. եւ որ այդ իրաւունքը վերապահուած է մի մինակ Դաշնակցութեան ընդհանուր պատգամաւորական ժողովին, որոյ համար ապօրինի ենք համարում Ռայոնական ժողովի ինքնագլուխ քայլը։

II — *Միւս կողմից՝ նկատի ունենալով, որ Ռուսաստանը մի քանի տարիէ ի վեր մտել է յեղափոխութեան շրջանում։*

Ազնօթ.- ա.- Որ կովկասահայը լինելով Ռուսաստանի ժողովուրդի անբաժան մի մասը՝ նոյնպէս տուժում է ռուսական կառավարութիւնից։

բ.- Որ Դաշնակցութեան ճնշուած եւ բանուոր մասսան յարում է միւս կուսակցութիւններին հեռանալով Դաշնակցութեան շարքերից։

գ.- Որ Կովկասի ճնշուած հայ ժողովուրդի ու բանուոր մասսայի ցանկութիւնն ու հրամայողական պահանջն եղած է Դաշնակցութեան պաշտպանութիւնն ու աջակցութիւն մի որեւէ ակտիւ գործունէութեան միջոցաւ։

դ.- Եւ որ ընդհանուր ռուսական յեղափոխութեան մասնակցելու՝ կովկասահայ ճնշուած մասսային անխուսափելի եւ անհրաժեշտ է։

Ժողովը որոշեց՝ ապօրինի համարել ինքնակամ, Ռայոնական ժողովի ինքնագլուխ քայլը. Դաշնակցութեան պրեստիժը ձգելու եւ դիսցիպլին խախտելու համար. բայց ի նկատի ունենալով եւս ճնշուած բանուոր մասսայի պահանջը եւ ընդհանուր յեղափոխութեանը հայ տարրին մասնակցութեան անխուսափելի դառնալը, որոշու[եց]աւ Կովկասեան նախագիծը դնել մօտակայ Դ-եան պատգամաւորական ընդհանուր ժողովի անաչառ, բազմակողմանի եւ լուրջ քննութեան, քննելով նրա ապօրինի եւ օրինաւոր կողմերը՝ մշակել Դաշնակցութեան ընդհանուր ծրագիր։

III — *Որոշուեց առաջարկել ընդհ. պատգ. ժողովին, որ Կովկասի գործունէութեան համար կազմել առանձին մարմին, Դաշնակցութեան տրամադրութեան եւ անուան տակ, որոշելով նոյնպէս գործադրուելիք գումարների քանակը՝ %%ը Կովկասի եւ երկրին։*

IV — *Ցանկալի է համարւում ունենալ պատասխանատու մարմին (կոնտրոլ), որը հսկէ իրագործելու Ընդհանուր Ժողովի որոշումները %%-ի վերաբերմամբ։*

V — *Որոշուեցաւ առաջարկել պատգամաւորական ժողովին, որ զտման գործը առաջ տանէ եւ հեռացնէ Դաշնակցութեան շարքերից բոլոր բախտախնդիրներին։ Իսկ բաժանման մասին եւ ոչ մի խօսք։ Համոզուած լինելով,*

31.- Զարդերով։

որ բաժանումը կ'ունենայ իւր կորստաբեր հետեւանքները՝ ընդհանուր հայութեան եւ մասնաւորապէս տաճկահայ դատին։

VI — *Ցանկալի է համարւում, որ պատգամաւորական ժողովը կայանայ արտասահմանում եւ ինչքան հնարաւոր է շուտով, եւ թոյլատրուի գիտակից եւ բանիմաց ընկերներին մասնակցելու գոնէ խորհրդակցական ձայնով։*

VII — *Որոշուեցաւ առաջարկել պատգ. ժողովին անաչառ եւ բազմակողմանի լուրջ քննութեան առնել Միհրանի եւ իր ընկերների բռնած ընթացքը եւ գործունէութիւնը եւ մշակել լուրջ եւ խիստ դիսցիպլինի զինուորական ծրագիր (կանոնագիր)։*

VIII - *Արձանագրելով մեր բոլոր առաջարկութիւնները, ժողովը որոշեց պահանջել ընդհանուր պատգամաւորական ժողովից՝ որ կովկասահայ ճնշուած տարրի եւ Դաշնակցութեան գործունէութիւնը — Ռուսական յեղափոխութեան մասնակցելու ասպարէզում — վերջնապահ եղնէ եւ նկատի ունենալով հարեւան ազգերի վերաբերմամբ դէպի հայեր շատ զգուշութեամբ գործը տանէ, որից չտուժէ միանգամից թշուառ հայ ժողովուրդը։*

Պարտադիր ենք համարում ընդհանուր պատգամաւոր ժողովի որոշումները, արձանագրութիւն եւ կարգադրութիւնը — Ստորագրում ենք Մեծ Քաղաքի Բլէջան Ի միութեան Դաշնակցական հարիւրեակների տաճկաստանցի (760) անդամների դիմաց՝ Տասնապետներս։

[72 հոգիի անուններ]

Փաստ. 1593-57

ԱՐՏԱՅԱՅՏՈՒԱԾ ԿԱՐԾԻՔՆԵՐՈՒ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Նախագիծը կը մերժեն 11 շրջաններ.— Նախագիծը կը հակասէ Դաշնակցութեան ծրագրի նպատակին։

Նախագիծը կ'ընդունին 6 շրջաններ.— Էջմիածին, Գանձակ, Բագու (2/3 ով), Կլորիկ, Արաքս եւ Գաղթավայր։

Հարցեր շրջաններէն

1.- Տաճկահայաստան խումբ ղրկելը վնասակար է (առ այժմ)։
2.- Տաճկահայաստան պրոպագանդիստ ղրկել։
3.- Տաճկահայաստան ղրկել դրամ եւ ռազմամթերք։
4.- Բիւրոյին մէկը փոխադրել Տաճկահայաստան։
5.- Մաքրել դաշնակցական շարքերը։
6.- Ընդհ. Ժողովը գումարել Կովկասէն դուրս։
7.- Բիւրոներուն կազմին մէջ մտցնել տաճկահայեր։
8.- Կովկասի Կեդր. Կոմիտէներուն մէջ ընդունել տաճկահայեր։
9.- Դաշնակցութեան ծրագիրը անփոփոխ պահել։
10.- Կազմակերպութեան հասոյթը չծախսել պրոֆեսիոնալ միութիւնների վրայ։
11.- Կովկասեան ինքնապաշտ. գործը ընդունել իբրեւ անհրաժեշտութիւն։
12.- Դաշնակցութիւնը իբրեւ յեղ. գործ ընդունելու է Տաճկահայաստան։
13.- Կազմել զինուորական շտապ։
14.- Անձեռնհաս շրջիկ-փրոփականդիստներ չղրկել շրջանները։
15.- Ջանալ երկրի գաղթը դադրեցնել։
16.- Ուսման հարցը։

Փաստ. 1586-1

Գ.– ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Չորրորդ Ընդհ. Ժողովի փակումէն անմիջապէս ետք, հաւանաբար խանդավառուած կուսակցութեան կողմէ ընկերվար գաղափարախօսութեան պաշտօնականացումէն, Կովկասի մէջ կը գումարուի Ռայոնական այս ժողովը մասնակցութեամբ միայն Կեդր. Կոմիտէներու ներկայացուցիչներուն եւ կարգ մը գործիչ ընկերներու: Անուններ չեն յիշատակուիր: Ակնյայտ է, սակայն, անյապաղ գործնական քայլերու դիմելու փութկոտութիւնը,– անդամական զտումներ կատարելու, արհեստակցական, գիւղացիական, համագործակցական միութիւններ կազմելու –, բան մը որուն արդէն նախաձեռնուած էր «Նախագիծ»ի հրապարակումէն, այսինքն 1905 թուականէն սկսեալ: Յատկապէս «զտում»ի գործողութիւնը,– սոցիալիզմ չդաւանող ընկերները շարքերէն դուրս յայտարարել,– դուռ պիտի բանար դժգոհութեանց:

Ներկայացուած փաստաթուղթը (1856-1), որ կը բովանդակէ Ռայոնական ժողովի որոշումները միայն, կը բաղկանայ ձեռագիր 10 մանրատառ էջերէ: Հրատարակուած է նաեւ տպագիր, փոքրադիր 24 էջ:

1907 թ. Յուլիսի 2-8 կայացաւ Հ.Յ.Դ. Կովկասեան Ռայոնական խորհրդաժողովը՝ մասնակցութեամբ Կովկասեան Կենտրոնական Կոմիտէների ներկայացուցիչների եւ յատուկ հրաւիրուած գործիչ ընկերների:

Խորհրդաժողովը նախ լսեց զեկուցումներ իւրաքանչիւր շրջանի դաշնակցական կազմակերպութիւնների եւ նրանց գործունէութեան մասին եւ ապա կայացրեց հետեւեալ որոշումները:

I – Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ.

«Հ.Յ.Դ. Կովկասեան Ռայոնական խորհրդաժողովը, քննութեան ենթարկելով կուսակցութեան զտման եւ վերակազմութեան խնդիրը, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Ի նկատի ունենալով՝

1. Որ կուսակցութեան մասսաները այն վայրերում, ուր կան կազմակերպութիւններ, զգալապէս զտուած են ոչ աշխատաւորական տարրերից եւ կենտրոնական վայրերում նոյնիսկ բաւական գիտակից են,

2. Որ զտումը մասսաների մէջ ինքնըստինքեան առաջ է գալիս դասակարգային կռուի, մեր լարուած պրոպագանդի եւ յեղափոխական գործունէութեան շնորհիւ, որը պիտի շարունակուի է՛լ աւելի մեծ չափերով,

3. Որ մի քանի տեղերում՝ չնայած մեր պրոպագանդայի եւ գործունէութեան, դեռ մնացել են կուսակցական մարմիններ, միանգամայն անհամապատասխան մեր ներկայ գործունէութեան, թողնում է Բիւրոյի կազմալուծել այդպիսի մարմինները, ընտրելով նոր մարմիններ համապատասխան մեր ծրագրի, որոշեց՝

1. Ցուցակագրել եւ դասաւորել շրջանների պահանջների համեմատ այն բոլոր գործող-ընկերներին, որոնք մինչեւ առաջիկայ Ռայոնական ժողովը դնում են իրենց խորհրդաժողովի տրամադրութեան տակ.

2. Գործող-ընկերները ցրւում են շրջանները եւ աշխատում են վերակազմել քայքայուած մարմինները եւ կազմակերպել նորերը, օգտուելով տեղական գիտակից ոյժերից:

3. Զտման պրոցեսի ընթացքում պատահած բոլոր կոնֆլիկտների մասին անմիջապէս տեղեկացնում են Արեւելեան Բիւրոյին եւ նրա միջոցով աշխատիլ վերջ տալ կոնֆլիկտին:

4. Խորհրդաժողովը անհրաժեշտ է համարում, որ Արեւելեան Բիւրոն օգտուելով տրամադրելի ոյժերից ի կատար ածէ հետեւեալ կէտերը.

ա) Հրատարակել խորհրդաժողովի բոլոր որոշումներն ու հրահանգները

բ) Ստանալ բոլոր տեղեկութիւնները շրջանի ընկերներից եւ հարկ եղած դէպքում ալեկոծ գործին թէ՛ մամուլի միջոցով եւ թէ ձեռնհաս ընկերներ ուղարկելով:

գ) Մշակէ շրջաններից ստացուած ընդարձակ նիւթերը եւ պատրաստելով ապագայ գործունէութեան նախագիծը, առաջարկէ այն Ռայոնական ժողովին:

II – ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

«Ի նկատի ունենալով՝

1. որ աշխատաւոր դասակարգը իր տնտեսական շահերը պաշտպանելու համար պէտք է ունենայ որոշ քաղաքականութիւն եւ դա կարող է լինել միայն սոցիալիստական, որովհետեւ միայն սոցիալիզմն է, որ ընդունակ է վերջ տալու բոլոր տեսակի շահագործումներին, անհաւասարութիւններին,

2. որ այդ իսկ պատճառով աշխատաւորների տնտեսական կազմակերպութիւններն եւս կապուած պէտք է լինին սոցիալիստական կուսակցութեան հետ.

3. որ այդ սկզբունքով կազմակերպուած դաշնակցական արհեստակցական միութիւնների անցեալի փորձը իր դրական հետեւանքներով աւելի եւս շեշտում է վերոյիշեալ իրողութիւնը:

4. որ տարբեր ազգութիւնների աշխատաւորները, ապրելով միեւնոյն իրականութեան մէջ, շրջապատուած լինելով նոյն պայմաններով պէտք է միշտ համերաշխօրէն պաշտպանեն իրենց շահերը.

Հ.Յ.Դ. Կովկասեան Ռայոնական խորհրդաժողովը ընդունում է արհեստակցական միութիւնների կուսակցական լինելու նպատակայարմարութիւնը եւ նրանց զարգացման աւելի զարկ տալու, ինչպէս նաեւ տարբեր ազգութեան աշխատաւորների մերձեցման նպաստելու համար, ցանկալի է համարում՝

1. Կազմակերպել արհեստակցական միութիւնները կուսակցական սկզբունքով եւ կապել Հ. Յ. Դաշնակցութեան հետ,

2. Զգտել այդ միութիւնները կապել միւս միութիւնների հետ ֆեդերատիւ կապերով,

3. Դաշնակցական արհեստակցական միութիւնների մէջ կազմակերպել նաեւ օտարազգի աշխատաւորներին, եթէ նրանք ընդունում են կուսակցութեան ծրագիրն ու գործելակերպը:

4. Միութիւնների մէջ ընդունուած օտարազգի արհեստաւորներից կազմել առանձին խմբակներ ներքին կատարեալ ինքնուրոյնութեամբ եւ ֆեդերատիւ կապերով կապուած նոյն միութեան միւս աշխատաւորների հետ,

5. Ամէն կերպ հովանաւորել միութեան բոլոր անդամների ազգային-կուլտուրական իրաւունքները եւ պահպանել լեզուների իրաւահաւասարութիւն թէ գրաւոր եւ թէ բանաւոր պրոպագանդի մէջ,

6. Զգտել միութիւնների մէջ եղած օտարազգի խմբակները միացնելու նոյն այն սոցիալիստական կուսակցութեան հետ, որը իր աշխարհայեցողութեամբ մօտ է Հ. Յ. Դաշ-թեան, նախօրօք որոշելով այդպիսի սոցիալիստական կուսակցութիւնների յարաբերութիւնները ֆեդերատիւ հիմքերով»:

Որովհետեւ մի քանի ընկերներ յայտնում էին տարբեր կարծիքներ արհեստակցական միութիւնների քաղաքականութեան մասին, խորհրդաժողովը ընդունեց հետեւեալ լրացուցիչ որոշումը.

«Ի նկատի ունենալով այն տարբեր կարծիքները, որ կան ընկերների մէջ արդի արհեստակցական միութիւնների գործունէութեան քաղաքականութեան մասին, առաջարկել բոլոր մարմիններին՝ մինչեւ եկող Ռայոնական ժողովը կազմել ամփոփ զեկուցումներ իրենց գործունէութեան (թէ յաջողութիւնների եւ թէ սխալների) մասին, ինչպէս եւ մշակել այն տաքտիկը, որով ընթանալու են ապագայում: Դրա հետ միասին որոշւում է կուսակցական մամուլի մէջ քննել եւ օրուայ հարց դարձնել արհեստակցական միութիւնների քաղաքականութեան հարցը»:

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

«Խօսելով արհեստակցական միութիւնների յարաբերութիւնների եւ իրաւունքների մասին՝ կուսակցութեան գործերի եւ ընտրութիւնների վերաբերմամբ եւ աչքի առաջ ունենալով ներկայ պայմանները, խորհրդաժողովը գտնում է, որ

1. Կուսակց. մարմինների ընտրութեան՝ միութիւնները մասնակցում են յատուկ այն նպատակով ընտրուած ներկայացուցիչների միջոցով (մանրամասնութիւնները իւրաքանչիւր վայրի վերաբերմամբ որոշւում է տեղական մարմնի եւ Արեւ. Բիւրոյի խորհրդակցութեամբ):

2. Կուսակցական ընթացիկ գործերում միութիւնները մասնակցում են իրենց վարչութիւնների եւ խորհուրդների միջոցով:

Խորհրդաժողովը ցանկալի համարելով, որ կովկասեան բոլոր քաղաքական դաշնակցական միութիւնների ներկայացուցչական համաժողովը լինի առաջիկայ աշնանը, այժմ եւեթ հարկաւոր է համարում շեշտել, որ դաշնակցական միութիւնների վարչական մարմինները պէտք է կազմուած լինին միեւնոյն սկզբունքով եւ միատեսակ անուններով, այսինքն իւրաքանչիւր միութիւն պէտք է ունենայ՝

1. Ռայոնական ներկայացուցիչների ժողով, եթէ միութեան անդամների բազմութեան կամ կոնսպիրացիայի պատճառով[1], անհնարին է միասին ժողով գումարել

2. Վարչութիւն

3. Բոլոր միութիւնների վարչութիւնները կամ նրանց ներկայացուցիչները պարբերական ժողովներով կազմում են միութիւնների խորհուրդ»:

1.- Այսինքն՝ հակակառավարական գաղտնի գործունէութեան պատճառով:

III — ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հ.Յ.Դ. Կովկ. Ռայոնական խորհրդաժողովը, քննելով գիւղացիական միութիւնների հարցը, որոշեց՝ գիւղացիական խաւերում գործելիս առաջնորդուել հետեւեալ սկզբունքներով.

Ա. 1. Մեր գաղափարներն ու սկզբունքները արծարծել գործնական քայլերով, այնպիսի ձեռնարկների միջոցով, որոնք չօշափում են աշխատաւոր գիւղացու տնտեսական եւ քաղաքական շահերը.

2. Առաւելութիւն տալ այնպիսի ձեռնարկների, որոնք շաղկապում են աշխատաւոր գիւղացիների լայն խաւեր եւ որոնց իրականացնելը տեղական գիտակից ու նուիրուած ոյժերի կարողութիւնից վեր չէ.

3. Ձեռնարկներ, որոնք նպաստում են համերաշխութեան մեր հարեւանների հետ եւ ներկայ յեղափոխական շրջանում կապում են դաշն. մասսաները Ռուսաստանի ընդհանուր յեղափ. շարժման հետ:

Բ. Ապագայ գործունէութեան շրջանում այդ տեսակի ձեռնարկների շարքերում համարել հետեւեալները՝ իրենց կարեւորութեան հետեւողականութեամբ.

1. Կռուել խոշոր կալուածատիրութեան եւ աւատական իշխանութեան հետքերի դէմ, վերացնելով կապալառու միջնորդներին եւ կապելով հողագործների համայնքները կալուածատէրերի հետ. քայլ առ քայլ իջեցնել կապալի գինը, նպատակ ունենալով յարմար րոպէին գրաւել ամբողջ հողը: Հողատէրերին թողնել այնքան հող միայն, որը նրանք մշակում են սեփական ընտանիքի ոյժերով: Երբ զանազան գիւղեր շահագրգռուած են միեւնոյն կտոր հողով, առաւելութիւն տալ հողազուրկ եւ սակաւահող համայնքներին, աշխատելով որպէսզի բոլոր գիւղերը անձի հաշուով ունենան հաւասար չափով հող:

2. Բոլոր հնարաւոր միջոցներով լայնացնել գիւղական համայնքների հողերի տարածութիւնը, ի հաշիւ պետական ազատ վարելահողերի, արօտների, անտառների. հողի անհրաժեշտ չափը ընդունել այն տարածութիւնը (անձի վրայ), որը յատկացուած է մօտակայ ռուս գիւղացիներին:

3. Կռուել եւ իջեցնել ներկայումս հողային հարկի՝ ակցիզի[2] եւ այլ հարկերի քանակը: Վերացնել օլամ եւ բեգարը[3] ու փոխարինել նրանց դրամական տուրքով ըստ կարողութեան: Կանոնաւորել ներկայումս գոյութիւն ունեցող գիւղական հարկերի դասաւորումը, մտցնելով հարկային պրոգրեսիւ սիստեմ՝ կամ ըստ կարողութեան, կամ ըստ եկամտի, աշխատելով հարկի ենթարկել կարողութեան խոշոր ճիւղերը (հող, անասուն, կապիտալ եւայլն) միաժամանակ հարկից ազատելով ամենաչքաւոր դասը:

4. Ուժեղացնել եւ կանոնաւորել համայնական հողատիրութեան սկզբունքը: Մասնաւոր անհատներից համայնքներին վերադարձնել այն հողերը, որոնք իւրացուած են ապօրինի միջոցներով: Վարելահողը ենթարկել պարբերական հողաբաժանումների (անձի վրայ), ձգտելով գիւղերի չուրջը ստեղծել պարտէզների, բանջարանոցների մի շրջան, սակաւահողներին հանել բաժին թէ լաւ, թէ վատ հողերից. վարձատրել այն գիւղացիների աշխատանքը, որոնք կատարած կը լինեն հողի լուրջ բարելաւումներ: Այն հողերի նկատմամբ՝ որոնց բաժանումը ներկայացնում է դժուարութիւններ (տան տեղեր, այգիներ, անտառներ, արօտներ, քարահանքեր) համայնական սկզբունքը իրականացնել հողավարձի (ռենտայի) համայնացմամբ, տալով այդ հողերը (արօտները, անտառները) կապալով, կամ ընդունելով որ համայնական այգեստեղիները եւ տանտեղերը տրրուած են վարձով օգտուողներին:

5. Ոյժ տալ այնպիսի ընկերական ու համագործակցական (կոոպերատիւ) սպառողական կամ արդիւնաբերական ձեռնարկների, որոնք տնտեսապէս ձեռնտու են աշխատաւոր ճնշուած դասին եւ նպաստում են նրանց գիտակցութեան ու համերաշխութեան: Խոշոր կենտրոններում նպաստել փոխատու խնայողական բանկերի հաստատման: Համագործակցական ձեռնարկներ կազմակերպելը սկսել այնպիսիներից, որոնք պարզ են իրենց բնոյթով եւ ներկայացնում են յաջողութեան լուրջ գրաւական (դաշտային մասում՝ բամբակի գիներ եւ ալիւրի պահեստներ, լեռնային՝ չտեմարաններ, հողի գործարաններ, անհրաժեշտ պիտոյքների եւ գործիքների պահեստներ եւայլն):

Վերը նշանակուած ձեռնարկների իրականացման դիմել այն ժամանակ, երբ դրանց օգտակարութիւնը մարսուած կը լինի գիւղական եւ շրջանային մարմինների կողմից, որոնք եւ իրականացնելու են այդ ամէնը իրենց սեփական ոյժերով:

Գ. Կազմակերպութիւն

Գիւղացիական մարմիններ կազմակերպելիս՝ սկսել գիտակիցների խմբերից, որոնց միջոցով վերը նշանակուած ձեռնարկների իրականացման, ինչպէս եւ ընդհանուր կազմակերպական նպատակների համար՝ կազմել աշխատաւոր գիւղացիութիւնից գիւղացիական միութիւն իր յատուկ վարչութեամբ: Գիւղացիական միութիւնը հանդիսանում է կազմակերպական առաջին աստիճանը: Միեւնոյն շրջանի գիւղացիական միութիւնների ներկայացուցիչներից կազմւում են պարբերաբար շրջանային խորհուրդներ, որոնց որոշումները կ'իրագործեն գիւղացիական միութիւնների վարչութիւնները: Գիւղացիական վարչութիւնները ընտրում են ներ-

2.- Պետութեան կողմէ դրուած տուրք մեծ սպառում ունեցող ապրանքներու վրայ:

3.- Հողատէրերու կողմէ գիւղացիներու վրայ դրուած պարտադիր եւ անվճար աշխատանքները:

կայացուցչական սիստեմով յեղափոխական շրջանային կոմիտէ, որ եւ կապւում է միութիւնների ռայոնի կենտ. Կոմիտէի հետ:

Գիւղացիական միութեան անդամները վճարում են անդամավճարներ, որոնց կէսը յատկացւում է տեղական միութեան պէտքերին, իսկ միւս կէսը յատկացւում է ընդհանուր կազմակերպական պէտքերի համար»:

IV — ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆՈՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Խորհրդաժողովը քննութեան առնելով այդ հարցը, ընդունեց հետեւեալ առաջարկը.

«Առանձին որոշում չկայացնել գործարանական բանուորական կազմակերպութեան ձեւի մասին, առ այժմ թողնելով տեղական մարմիններին տանելու այդ գործը յարմարագոյն ու իրենց ցանկացած սիստեմով եւ իրաւունք վերապահել նրանց՝ կուսակցական մարմինների ընտրութեան մասնակցելու ներկայացուցչական սիստեմով»:

V — ՔԱՂԱԿԱԿԱՆ ԵՒ ՕԺԱՆԴԱԿ ԽՄԲԵՐԻ ՀԱՐՑԸ

«Խօսելով քաղաքական խմբերի կազմակերպելու մասին, կցելով դրան նաեւ օժանդակ խմբերի հարցը, Խորհրդաժողովը եկաւ այն եզրակացութեան, որ՝

1. Քաղաքական խմբերի մէջ կարող են կազմակերպուել այն յեղափոխական ինտելիգենտները — (ծառայողներ, ուսուցիչներ եւ այլն) — եւ այն աշխատաւորները, ինչպէս նաեւ կանայք, որոնք համապատասխանելով մեր ծրագրի ու կանոնագրութեան պահանջներին, յարմարութիւն չունին առանձին արհեստակցական միութիւն կամ ուրոյն բանուորական խումբ կազմելու.

2. Ինչ վերաբերում է արհեստաւորներին, նրանք կարող են Դաշնակցութեան գործօն անդամ ընդունուել միայն այն դէպքում, երբ իրենց արհեստանոցներում կ'իրականացնեն կոոպերացիայի սկզբունքը եւ դրանով կը հրաժարուեն նոյնիկ փոքր չափով շահագործումից:

3. Իսկ բոլոր միւս անհատները, որոնք, ընդունելով Հ.Յ.Դ. ծրագիրը եւ նիւթական կամ այլ տեսակի օժանդակութիւն հասցնելով նրան, իրենց մասնաւոր կեանքում չեն ղեկավարւում նրա տակտիկով եւ կանոններով, կարող են կազմակերպուել իբրեւ օժանդակող անդամներ՝ առանց ընտրողական իրաւունքի կուսակցութեան մէջ»:

VI — ՄԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ

Քննելով մարտական խմբերի հարցը, Խորհրդաժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը.

«Անհրաժեշտ համարելով ժողովրդական միլիցիայի գաղափարը իրականացնել հէնց մեր շարքերից, Խորհրդաժողովը առաջարկում է շրջանների կուսակցական մարմիններին՝ բոլոր գիւղացիական եւ արհեստակցական, ինչպէս նաեւ քաղաքական խմբերի անդամներից կազմակերպել զինավարժական խմբեր:

Իսկ դրանց միջից ամենագիտակիցներին, անձնազոհներին եւ ընդունակներին ընտրել իբրեւ մարտական խմբեր՝ կուսակցութեան ակտիւ ձեռնարկների համար, համաձայն կանոնագրութեան 147-151 (յօդուածների):

VII — Հ.Յ.Դ. ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԵՒ ԹՈՒՐՔԱՀԱՅ ԱՇԽԱՏԱՒՈՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՏԸ

Խորհրդաժողովը, քննելով այն հարցը, թէ մենք Կովկասում վարած մեր պրոպագանդի եւ առհասարակ գործունէութեան ընթացքում, ինչ կերպ պէտք է մօտենանք թուրքահայ աշխատաւորական դատին, որոշեց.

«Ի նկատի ունենալով, թէ՝ ներկայ քաղաքական մթնոլորտի բացառիկ կարեւորութիւնը Հայաստանում, թէ՝ թուրքահայ աշխատաւոր ժողովրդի ծայրայեղ ճնշուած ու կեղեքուած վիճակը, Խորհրդաժողովը հրահանգում է գործող ընկերներին՝ իրենց առօրեայ գործունէութեան ժամանակ մոռացութեան չտալ երբեք, որ առանց արդի կարգերի տապալման Ռուսաստանում եւ Թուրքիայում — մեր բոլոր գործնական քայլերը չեն կարող յանգել լուրջ, դրական հետեւանքների»:

VIII — Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ «ԱՆՋԱՏՈՒԱԾ» ՆԱԽԿԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

«Հ.Յ.Դ. Կովկասեան Ռայոնական խորհրդաժողովը, քննելով այսպէս կոչուած «երիտասարդ դաշնակցականների» կազմակերպութեան միանալը Ս. Ռ.-ական կուսակցութեան[4] եւ ի նկատի ունենալով դրա բացասական կողմերը հայ աշխատաւոր ժողովրդի կազմակերպուած կռուի տեսակէտից, որոշեց՝

1. Ի նկատի ունենալով այն բարեկամական յարաբերութիւններն ու թէորիական[5] կապը որ ունի սոց. յեղափոխական կուսակցութիւնը Դաշնակցութեան հետ, բանակցութեան մէջ մտնել վերոյիշեալ կուսակցութեան հետ եւ բացատրել, թէ որքան հակասական է եւ վտանգաւոր տաքտիկի տեսակէտից՝ «Երիտասարդ դաշնակցականների» խմբակը ընդունել իբրեւ Ս.Ռ.-ական հայ կազմակերպութիւն.

2. Ի նկատի ունենալով Դաշնակցութեան IV Ընդհանուր Ժողովի որոշումները մի կողմից եւ «երիտասարդ», «անջատական» եւ այլ նոյնանման հոսանքների տարբերութիւնը միւս կողմից, պարզաբանել Դաշնակ-

4.- Ռուս Ընկերվար Յեղափոխական Կուսակցութիւն:

5.- Տեսաբանական:

ցութեան Ծրագիրն ու տակտիկը եւ այդ հոսանքների իսկական պատկերը լայն մասսաների մէջ եւ տանել օբեկտիւ[6] քննադատութիւն դրանց մասին։

3. Ի նկատի ունենալով նախկին «Երիտասարդ դաշնակցականների» թշնամական վերաբերմունքը դէպի Դաշնակցութիւնը, աշխատել չեզոքացնել նրանց մասսաներից, պատռելով նրանց դիմակն ամէն անգամ, երբ նրանք ծրագրային հարցերից կ'անցնեն Դաշնակցութեան վարկաբեկ անելուն։

4. Բոլոր շրջաններում, ռայոնական ժողովներում, պաշտօնապէս բանաւոր յայտարարել, որ դաշնակցականներ չեն բոլոր նրանք, որոնք թէեւ եղել են Դաշնակցութեան մէջ, բայց այժմ հեռացել են կուսակցութիւնից»։

IX — *ՄԱՄՈՒԼ*

«Խօսելով Դաշնակցութեան մամուլի մասին, Խորհրդաժողովն անհրաժեշտ համարում է,

1. որ կուսակցութեան բոլոր գործիչները կանոնաւորապէս տեղեկութիւններ, թղթակցութիւններ ուղարկեն կուսակցութեան օրգաններին.

2. Այժ տալ անլեգալ գրականութեան. իւրաքանչիւր շրջանի դաշնակցական գործունէութեան եւ հարցերի մասին յատուկ թռուցիկներ հրատարակել կարելոյն չափ յաճախօրէն եւ այդ թռուցիկներից մի-մի օրինակ անպատճառ ուղարկել կուսակցական օրգաններին եւ շրջանները.

3. Այժ տալ Ոսկանապատի[7] տեղական կոմիտէի հրատարակութեամբ լոյս տեսնող «Գրոհ» թերթի բարելաւմանը՝ գրական- կուսակցական տեսակէտից, ուղարկելով նրան նիւթեր, որոնք չեն կարող լոյս տեսնել լեգալ օրգաններում»։

X — *ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ*

Հ.Յ.Դ. Կովկասեան Ռայոնական խորհրդաժողովը քննութեան առաւ III Պետական դումայի ընտրութիւններին մասնակցելու կամ չմասնակցելու խնդիրը։ Բաւական երկար թեր եւ դէմ խօսելուց յետոյ, քուէարկութեան դրուեցին երկու բանաձեւեր — մէկը՝ բոյկոտիստական, իսկ միւսը՝ հակաբոյկոտիստական. քուէարկութեան հետեւանքը եղաւ այն, որ երկու բանաձեւերն էլ ստացան հաւասար ձայներ։

Առաջարկուած էին հետեւեալ բանաձեւերը.

I Բոյկոտի կողմնակիցներ

Ի նկատի առնելով այն,

որ կառավարութիւնը Յունիսի 9-ի մանիֆեստով իր կամքը երկրի օրէնք յայտարարեց եւ այդպիսով կատարեց մի բացարձակ coup d'Etat[8]*։*

որ երրորդ Պետ. դումայի համար ստեղծուած ընտրողական սիստեմը դարձնում է վերջինս գերազանցապէս իշխող դասակարգերի ներկայացուցչութիւն,

որ այդպիսի պայմաններում երրորդ Պետ. դուման չի կարող լինել այն յեղափոխական ամբիոնը, որ անհրաժեշտ է եւ նպատակայարմար ռուսական յեղափոխական ոյժերի կազմակերպման տեսակէտից,

միւս կողմից՝ աչքի առաջ ունենալով այն,

որ ինչպէս ցոյց տուեց առաջին եւ երկրորդ դումաների փորձը, Պետական դուման քաղաքական պայքարի ներկայ մոմենտում — թէեւ որոշ չափով նպաստում է ժողովրդի յեղափոխական գիտակցութեան զարգացմանը, սակայն չի կարող շարժել ժողովրդի յեղափոխական կամքը, պահելով նրան սպասողական պասսիւ դրութեան մէջ,

որ երրորդ Պետ. դուման ժողովրդի գիտակցութիւնը զարգացնելու տեսակէտից անգամ՝ ոչինչ չունի անելու, որովհետեւ այդ դերը արդէն կատարուած է առաջին եւ երկրորդ դումայի ընթացքում,

որ մի սոցիալ-յեղափոխական կուսակցութիւն, որպիսին է Դաշնակցութիւնը, ռուսական յեղափոխութեան այս ճգնաժամին, երբ զինուած ոյժն է որոշելու կռուող կողմերի յարաբերութիւնները եւ ռէալ ոյժերի հաւասարակշռութիւն ստեղծելու, Պետ. Դումային մասնակցելով չի կարող օգտուել ազատ կերպով այն բոլոր միջոցներից, որոնք բխում են մեր ծրագրի ու տաքտիկի ոգուց եւ արդի մոմենտի հրամայական պահանջներից, որովհետեւ նա — Դաշնակցութիւնը — չի կարող անտես առնել իր պարլամենտական գրուպպայի[9] ներկայութիւնը դումայում, չի կարող չհամակերպուել իր բոլոր գործողութիւնների մէջ այդ գրուպպայի ընթացքին։

Այս բոլորը ի նկատի առնելով՝

Մենք առաջարկում ենք երրորդ Պետ. դուման բոյկոտի ենթարկել եւ աշխատել գոյութիւնից զրկել այն, պայթեցնելով դրսից յեղափոխական մեծ ձեռնարկներով։

<u>II Բոյկոտի հակառակորդներ</u>

Ի նկատի ունենալով, որ

1. Ներկայ քաղաքական մոմենտը բնորոշւում է նրանով որ, թէեւ յեղափոխական տրամադրութիւնը ընկած է, բայց յեղափոխական իդէան[10] ընդգրկել է աւելի լայն մասսաներ, եւ որ յեղափոխական մասսայական քայլեր առաջ բերելու համար ներկայ պայմաններում՝ անհրաժեշտ է կայացնել ցնցող խմբական յեղափոխական ձեռնարկներ.

2. Այդպիսի պայմաններում 3-րդ կրճատուած Պետ. դուման չէ կարող լինել խոշոր հասարակական գործօն, այլ պիտի համարուի միմիայն իբրեւ մի հասարակ առօրեայ երեւոյթ, որով յեղափոխական կուսակցութիւնները պիտի օգտուեն իբրեւ մի պրոպանգանդի միջոց.

3. Ընտրութիւններին մասնակցելը անհրաժեշտ է այն պատճառով, որ դրանով մենք կապում ենք մեզ հետ աշխատաւորական լայն խաւեր եւ պրոպագանդի միջոցով մղում նրանց դէպի սոցիալիստական յեղափոխական գործունէութիւն, ազատ պահելով նրանց յետադիմական կեղծ ձախակողմեան կուսակցութիւնների վնասակար ազդեցութիւնից։

Այդ բոլոր պատճառները ի նկատի ունենալով է, որ պէտք է մասնակցել Պետ. դումայի ընտրութիւններին որպէսզի ընտրողական պայքարի ընթացքում պարզենք ժողովրդի առաջ այդ այլանդակ հիմնարկութեան իսկական նշանակութիւնը, չեշտենք, որ նրա վրայ ոչ մի յոյս չպէտք է դնել, որ բռնակալական ներկայ պայմաններում միայն յեղափոխական լայն միջոցներով կարելի է ցանկալի ազատութիւններ հաստատել։ Իսկ վերջին շրջանում, երբ աւելի պարզուած կը լինի համառուսական քաղաքական մոմենտը եւ բոլոր ձախակողմեան կուսակցութիւնների գործելակերպը այդ հարցի նկատմամբ, այդ ժամանակ կարելի է իրականացնել իսկական ակտիւ բոյկոտը, վերջին աստիճանում հրաժարուելով ընտրութիւններից երբ դա հարկաւոր համարուեց։

XI — *ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ*

Ի նկատի ունենալով կազմակերպական անհրաժեշտ ծախքերը թէ՛ կազմակերպական գործերի, թէ՛ ընդհանուր կռուի, ինչպէս եւ մարմինների թուլութիւնը անդամավճարներ հանգանակելու գործում, Հ.Յ.Դ. Կովկ. Ռայոնական խորհրդաժողովը առաջարկում է բոլոր մարմիններին

ա) Հետեւել անդամավճարներին եւ անմիջապէս դիմել յետ մնացած անդամավճարների գանձման,

բ) Գիւղացիական նոր կազմակերպուող միութիւններին առաջին տարին թոյլ տալ որոշելու իրենց վճարելիքը իրենց ազատ կամքով։

գ) Սահմանափակել կազմակերպ[ական] ծախսերը ամենաանհրաժեշտով։

6.- Առարկայական
7.- Պաքուի։
8.- Պետական հարուած։
9.- Խմբակի, պլոքի։
10.- Գաղափարը։

Դ.– 1907-8Ի ԿՈՎԿԱՍԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

1907 Թ. Դեկտ. 28էն 8 Յունուար 1908 թուականը երկարող այս Ռայոնականը վստահաբար վերջինն է այն բազմամարդ ժողովներէն, որոնք այնքան կարեւոր տեղ կը գրաւէին Դաշնակցութեան կազմակերպական կեանքին մէջ, որովհետեւ քիչ անց ընդհանուր Ռուսիոյ յեղափոխական շարժումները եւ յատկապէս Դաշնակցութեան դէմ ուղղուած ցարական խստագոյն հալածանքները մեծ չափով պիտի կազմալուծէին կուսակցութիւնը, հարկադրելով զայն անցնելու բոլորովին ընդյատակեայ գործունէութեան:

Ռայոնական այս ժողովը կարեւոր է նախ իր ընդգրկուն օրակարգով, քիչ մը նման ընդհանուր ժողովներու քննարկումներուն նիւթ ծառայող հարցերուն: Կովկասեան իրականութեան վերաբերող խնդիրները անշուշտ կարեւորագոյն տեղը կը գրաւէին անոնց մէջ, կազմակերպականէն սկսեալ մինչեւ քաղաքականը, ընկերային-տնտեսականը, կրթական-մշակութայինը եւայլն, բայց նաեւ հայութիւնը յուզող ընդհանրական հարցեր,– Արեւմտահայաստանի վիճակը, հայեւթուրք գործակցութեան մէջ ուրուագծուող հեռանկարը, Պարսկաստանի սահմանադրական կռիւներուն մեր մասնակցութեան չափը եւայլն: Որակաւոր է ժողովը նոյնպէս իր մասնակիցներով, որոնք յիշատակուած են ընդհանրապէս ծածկանուններով: Անոնց ինքնութիւնը միշտ չէ որ կարելի է աներկբայօրէն ճշդորոշել. բայց հաստատօրէն կրնանք հաւաստել, որ հո՛ն են կուսակցութեան մէջ երկար տարիներու վաստակ ունեցող դէմքեր,– Սիմոն Զաւարեան, Համօ Օհանջանեան, Հայր-Աբրահամ, Աբր. Գիւլխանդանեան, Գարեգին Խաժակ, Արշակ Վռամեան, Նիկոլ Մատինեան, Յար. Շահրիկեան, Սիմոն Վրացեան եւ դեռ շատ մը երիտասարդներ (Ռուբէն Դարբինեան, Վահան Նաւասարդեան (Դժոխք?), որոնք յետագային յայտնի գործիչներ պիտի դառնային):

Ներկայացուած փաստաթուղթը (1587-15), կազմուած 99+4 մանրատառ եւ մեծադիր էջերէ, ատենագրութիւն է՝ ժողովական քննարկումներու մանրամասն արձանագրութեամբ: Կայ նաեւ 22 էջերէ բաղկացած անոր տպագիր գրքոյկը, միայն որոշումներու բաժինով եւ «միայն մարմինների համար» մակագրութեամբ (Տեսնել փաստ. 1587-16). կը կրէ «Հ.Յ.Դ. Արեւելեան Բիւրոյի շրջանի հերթական Ռայոնական ժողովի տուած որոշումների արձանագրութիւնը» խորագիրը: Կրկնութիւններէ խուսափելու համար զանց առած ենք գրքոյկին հրատարակութիւնը, նկատի ունենալով մանաւանդ որ արդէն ընդարձակ ատենագրութեան մէջ կան որոշումի կարգ ընդունած բանաձեւերը եւ անոնք տրուած են (մեր կողմէ) տարբեր տառատեսակով:

ԽՄԲ.

Փաստ. 1587-14

Դ 1.– ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ [1907] ԿԱՅԱՆԱԼԻՔ ԺՈՂՈՎԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԸ

I. ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՒ ԲԻՒՐՈՅԻ
Ծանօթութիւն. Տեղեկագրի մէջ բերել ճիշտ թուեր անդամներու, մարմիններու, ունեցած ինվենտարի եւ գործունէութեան հետեւանքներու վերաբերեալ. օր[ինակ] մեր աշխատաւորական քաղաքականութեան արդիւնքը – դրական թէ բացասական, օրավարձի բարձրանալը, աշխատաւորներու թուի աւելանալը կամ պակասելը, մթերքներու գնի աւելանալը կամ պակասելը, ընդհանուր աշխատաւորութեան կենցաղի բարելաւելը, կուսակցութեան անդամներու թուերի աւելանալը եւ այլն:

II. ՆԵՐԿԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՄԵՆՏԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱԿՏԻԿԱՆ
1) Ընդհանուր ռուսական շարժման մէջ.
2) Համերաշխ գործակցութեան մէջ այլ կուսակցութիւնների հետ.
3) Մեր աշխատաւորական քաղաքականութիւնը արհեստակցական, գիւղացիական եւ կոոպերատիւ միութիւնների միջոցաւ:

III. ԴԱՇՆ. ՏԱԿՏԻԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

VI. ԴԱՇՆ. ՏԱԿՏԻԿԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

V. ԴԱՇՆ. ՏԱԿՏԻԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՒ ԱՅԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

VI. ԴԱՇՆ. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ
1) Դպրոցներ եւ այլն:
2) Կաթողիկոսական ընտրութիւններ.
(ա. չմասնակցել, բ. մասնակցել ոչ պաշտօնապէս, գ. մասնակցել պաշտօնապէս):

VII. ԴԱՇՆ. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ՆԵՐԿԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆԱՐԽԻԱՆ
(գողութիւններ, սպանութիւններ, էքսպրոպրիացիաներ եւ այլն):

VIII. ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
1) Արհեստակցական, գիւղացիական, կոոպերատիւ միութիւններ եւ ազգութիւնների հարցը նրանց մէջ:
2) Քաղաքային խմբերի կազմը.
3) Մարտական խմբեր.
4) Կարմիր խաչը.
5) Ձինավարժութիւն.
6) Կազմակերպութիւն զօրքի մէջ:

IX. ԳՐԱՒՈՐ ԵՒ ԲԱՆԱՒՈՐ ՊՐՈՊԱԳԱՆԴ
1) Հրահանգներ թերթին.
2) Ամսաթերթ.
3) Անլեգալ թերթ.
4) Յառաջի գրադարան
5) Պրոպագանդիստներ պատրաստելու հարցը
6) Բանաւոր պրոպագանդի նիւթը:

X. ԴՐԱՄԱԿԱՆ
1) Կուսակցական տուրքի կանոնաւորումը.
2) Դրամական միջոցներ հայթայթելու հարցը.
3) 1908 թ. բիւդջէն:

XI. ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ
1) 2 անդամ Արեւել. Բիւրոյի մէջ.
2) 2 անդամ Հ.Յ.Դ. հերթական Խորհրդի համար:

XII. ԴԱՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
Համաձայն կանոնագրի 171-րդ յօդ.:

ՅԱՆՕԹ. Շրջանները, եթէ իրանց կողմից հարցեր ունին, պիտի ուղարկեն Արեւելեան Բիւրոյին, ժողովից մի շաբաթ առաջ:

Հ.Յ.Դ. ԴԱՇՆ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Դ 2.– ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

[ՄԱՆԴԱՏՆԵՐ ՔՆՆՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ]

1907 XII-29. *Մանդատներ քննող յանձնաժողովը սկսեց քննութեան առնել շրջաններից եկած պատգամաւորների մանդատները, որից երեւաց.—*

1.- *Քարի*[1] *շրջանից ներկայացրել են հաշիւ. ընտրուած են երկու պատգամաւորները. 1-ը Շրջանային ժողովից, 2[րդ]ը մարմնի կողմից: Հաստատ իսկական եղել է, մնացած 2500 ռուբլի, որից ¼-ը ծախսուած է ըստ Ընդհ. ժողովի բիւջէին:*

*) Քարը չորս օրգանիզմներ ունի.– Կ. Կոմիտէ, 4 շրջ. կոմիտէներ, 50 ենթակոմ[իտէ] կամ գիւղ[ական] վարչութիւններ, 10 պրոֆ[եսիոնալ] միութ. (500-600 հոգինոց), 3 քաղ[աքական] խմբեր (60 հոգի): Դոկումենտալ հաշուետուութիւն ըստ կանոնագրութեան չկայ, որի մասին որոշուեց յայտնել Ռ[այոն]ական ժողովին: Ունին երկու վճռական ձայն:

2.- *Մրգաստանից*[2] *բերուած են ռեզոլիւցիաներ*[3]*, հաշիւների մի մասը բերելու են. տեղեկագիր չկայ. կայացել է շրջանային խորհրդակցական ժողով. եկել է միայն մի պատգամաւոր.— Մրգաստանի Կ. Կոմիտէից. ամառային խորհրդաժողովից յետոյ որոշ գործ կատարուել է: Մարդկանց պակասութեան պատճառով գործը չի կարողանում ուժեղ տեմպով*[4] *առաջ գնալ: Կենտ[րոնական]ի մուտքը մօտ 6000 ռ. (որի մէջ մտնում են ծախսուած իրեր, այլ եկամուտներ եւ այլն): Ամսավճարներից եղել է քիչ եկամուտ: Մուտքի մօտ 80%-ը ծախսուած է ընդհ. գործի համար: Ունի մի ձայն (վճռական):*

*) Բիւրոյի ներկ[այացուցիչ]ը յայտնեց, որ Մրգաստանի հաշիւները քննուած են դոկումենտալ կերպով:

3.- *Ոսկանապատի*[5] *Կ. Կոմիտէ: Ներկայացրել են Շրջանային ժողովի արձանագրութիւնները: Հաշիւներ չկան: Տեղեկագիր չի բերուել: Ժողովը տալով Ոսկանապատի երեք պատգամաւորներին վճռական ձայն, որոշեց նկատողութիւն անել որ ընդհանրապէս հաշուական-տեղեկագրական գործը շատ անփոյթ է տարուել եւ այդպէս էլ ներկայացուել է մանդատների կոմիսիային:*

4.- *Ապառաժի*[6] *Կ. Կոմիտէ: Ներկայացրել է հաշիւներ (զինական եւ ֆինանսական) ոչ շատ կանոնաւոր եւ մանրամասն, որի վրան մասնաժողովը մատնանիշ է անում: Գրաւոր տեղեկագիր կայ, որը շատ էլ մանրամասն չէ: Եղել է մի ներկայացուցիչ — որին ըստ մասնաժողովի կարծիքի — ձայնի իրաւունք պիտի տալ (Նկատողութիւն. 1907-ի գործունէութիւնը չի համապատասխանում Կ. Կոմիտէի գործունէութեան):*

5.- *Այգեստանի*[7] *Կ. Կոմիտէ.— Ներկայացրել է գրաւոր հաշիւ (ամիսների եւ տարուայ) [եւ] տեղեկագիր: Եկել են երկու պատգամաւորներ, մէկը Կ. Կոմիտէի կողմից, միւսը Շրջանային ժողովից: Երկուսն էլ վճռական ձայն պիտի ունենան: (1907-ի գործունէութիւնը չի համապատասխանում Կ. Կոմիտէի ֆինանսական ցենզին): (Ընկերներից երկուսը «ֆինանսական» բառը ջնջուած են ընդունում):*

6.- *Նաւահանգիստ*[8]*.— Եկել են երեք ներկայացուցիչ 1-ը Կենտ.-ից, 2-ը Շրջանային ժողովից: Ցանձնաժողովը գտնում է որ Նաւահանգիստը զինուորական, դրամական, անդամների քանակի եւ մարմինների գոյութեան տեսակէտից կարող է համապասխանել Կենտ[րոնական]ի ցենզին, իսկ ղեկավար-կազմակերպչական ոյժերի տեսակէտից՝ չի համապատասխանում այդ ցենզին: Ներկայացրուել են 1) Շրջանային ժողովի որոշումները 2) գրաւոր տեղեկագիր եւ 3) հաշիւները մինչեւ տարուայ վերջը յանձնաժողովը չի ստացել. մասնաժողովը 3-ին ձայնի իրաւունք տալու խնդրում բաժանուեց երկուսի.— ընկերներից 2-ը կարծում են որ Նաւահանգիստը պիտի ունենայ 3 ձայն. 2-ը՝ 2 վճռական ձայն: Նաւահանգստի ընկերը (Հրանտը) — այդ խնդրի քուէարկութեան ժամանակ ձայն չունէր:*

1.- Ալեքսանդրապոլի:
2.- Երեւանից:
3.- Որոշումներ, բանաձեւեր:
4.- Թափով, եռանդով, արագութեամբ:
5.- Պաքուի:
6.- Դարաբաղի եւ Զանգեզուրի:
7.- Գանձակի:
8.- Պաթումի:

7.- *Նալբանդի*[9] *շրջան.— Ներկայացրել է տեղեկագիր: Հաշիւների միայն վերջին մասը: Մասնաժողովը ի նկատի առնելով, որ վերջին շրջանում Նալբանդի Կենտ. Կոմիտէն կատարել է խոշոր ապօրինի ծախք**, *համաձայն շրջանային ժողովի որոշումների (հակառակ Բիւրոյի պահանջին), որոնց պատճառով Բիւրոյի կողմից պատասխանատուութեան է ենթարկուելու: Մասնաժողովը կարծում է որ եկած երկու պատգամաւորներից միայն Շրջանային ժողովի մի պատգամաւորը ունի վճռական ձայն, իսկ Կ.Կոմիտէի ներկայացուցիչը կ'ունենայ խորհրդակցական ձայն:*

*) Հրատարակուել է թերթ: Այն գումարը (3000 ռ.) որ տրուած է փոխարինաբար թերթին չէր գտնուում Շրջանային ժողովի տրամադրութեան տակ:

8.- *Թմբուկի շրջան*[10]*.— Առանց պատճառաբանութիւնների եկած մի պատգամաւորի տալ վճռական ձայն: Ընդունուեց միաձայն:*

9.- *Մեծ-քաղաք*[11]*.— Շրջանային ժողովի երկու պատգամաւորները առանց պատճառաբանութեան ունին երկու վճռական ձայն. իսկ Կենտ. Կոմիտէի ներկայացուցչի խնդրում մասնաժողովը կարծում է որ Կենտ. մարմնի ձայն-վճռական ձայն. իսկ Կենտ. Կոմիտէի ներկայացուցչի խնդրում մասնաժողովը կարծում է որ Կենտ. մարմնի ձայնը վճռական է մինչեւ այն օրը, երբ նոր Կենտ.ը օրինական է ճանաչուում եւ սկսում է պաշտօնավարել, իսկ ընկերներից երկուսը կարծում են, որ նորընտիր Կենտ.ը կարող է ձայն ունենալ միայն այն ժամանակ երբ նա ստանձնի շրջանի գործերը:*

10.- *Վրէժի*[12] *շրջան.— Եկած մի պատգամաւորը ունի վճռական ձայն, իսկ եթէ Շրջանային ժողովից մի պատգամաւոր եւս գայ նա կ'ունենայ ձայնի իրաւունք: Ներկայացրել են հաշիւներ (վէց տարուայ). տեղեկագիր չկայ: Ցենզը մի Կենտ.ից գերազանցում է:*

11.- *Մոսկուայի ուսանողութեան ներկայացուցիչը.— ունի խորհրդակցական ձայն, ինչպէս այդ ցանկացել են նրա ուղարկողները: Ամբողջ ուսանողութեան ներկայացուցիչը համարուել եւ վճռական ձայն ունենալ նա չի կարող:*

12.- *Ջրաբերդի*[13] *Ներկ.ը ունի խորհրդակցական ձայն:*

Բիւրոյի եւ թերթի ներկայացուցիչները անպայման վճռական ձայն ունին:

Սիւնիքի շրջանի ներկ.ը մանդատներ քննող յանձնաժողովի կարծիքով պիտի ունենայ խորհրդակցական ձայն — պատճառաբանելով որ նա առանձին շրջան է, ունի որոշ գործունէութիւն եւ աշխարհագրական տեղական առանձնայատուկ պայմաններ. Չնայած որ մտնում է Ապառաժի շրջանը եւ առանձին հրաւիրաթուղթ չի ստացել:

Մանդատային յանձնաժողովը քննելով բոլոր մանտադները ընդհանրապէս գտնում է, որ մարմիններից շատ քչերը միայն կարող են «կանոնագրքի» հիման վրայ ձայնի իրաւունք ունենալ, սակայն ի նկատի առնելով ներկայ պայմանները, վերոյիշեալ մարմինների մեծամասնութեանը տուեց ձայնի վճռական իրաւունք:

Այլ եւ իր գործավարութեան ընթացքում նկատեց, որ Ռ[այոն]ական ժողով եկող պատգամաւորները՝ թէ շրջաններից, թէ մարմիններից քիչ են ուշք դարձնում հաշուական-տեղեկագրական գործին, ուստի առաջարկում է Ռ[այոն]ական ժողովի օրակարգի մէջ մտցնել.— «Հաշուական-տեղեկագրական խնդիրը կանոնաւորել — առաջիկայ Ռ[այոն]ական ժողովների համար վճռական հրահանգներ տալով»:

Ներկայ որոշումները Ռ[այոն]ական ժողովին զեկուցանելու գործը թողեց ընկեր Շահէնին[14]*, իսկ Բիւրոյին՝ ընկեր Մհերեանին*[15]*:*

ՄԱՆԴԱՏՆԵՐ ՔՆՆՈՂ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ

ՄՀԵՐԵԱՆ, ՍԻԳ[16]*, ՍԻՐԱՔ*[17]
ՔԱՐՏՈՒՂԱՐ-ԱՆԴԱՄ ՇԱՀԷՆ, ԿՈՉ

9.- Հիւս. Կովկաս, Նոր Նախիջեւան:
10.- Ախալքալաքի:
11.- Թիֆլիս:
12.- Ատրպատական, Թաւրիզ:
13.- Կարսի:
14.- Շահէնը Գանձակի պատգամաւորն է:
15.- Մհերեան կամ Մհեր՝ Համօ Օհանջանեան, Արեւելեան Բիւրոյի ներկայացուցիչ:
16.- Սիմոն Վրացեան, Նոր Նախիջեւանի ներկայացուցիչ:
17.- Երեւանի պատգամաւոր:

Փաստ. 1587-15

Դ 3.– ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՇՐՋԱՆԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ

ՆԻՍՏ I

28-ին Դեկտ. երեկոյ

Ժողովը բացուում է ժամը 5-ին նախագահութեամբ ընկ. Խ.-ի։ Բիւրոյի ներկայացուցիչը առաջարկում է Ռ[այոնական] ժողովի նիստերի համար մշակել ռեկլամենտ[18]*, որը եւ մշակուում է ու հաստատուում իրաւասու Ռ. ժողովից հետեւեալ ձեւով.*

Ռեկլամենտի կէտերից մէկը քննարկելիս յարուցուեց հետեւեալ հարցը՝ ո՛վ ունի իրաւասու ձայն։ Բիւրոյի ներկայացուցիչը արաւ հետեւեալ յայտարարութիւնը։ Որովհետեւ եկած պատգամաւորներից շատերը չեն համապատասխանում կանոնագրութեան մէջ սահմանուած այն կէտերին, որոնք վերաբերուում են պատգամաւորութեան ցենզին, ուստի հաւանական է, որ այս ժողովը Բիւրոյի կողմից չհաստատուի որպէս Ռայոնական, այլ որպէս խորհրդակցական։ Այդ առթիւ տեղի ունեցաւ թեր եւ դէմ տաք վիճաբանութիւն։ Թեր խօսող հռետորները պնդում էին, որ մանդատները քննելիս պէտք է անպայման ղեկավարուել կանոնադրութեամբ եւ ոչ մի շեղում չանել դրանից։ Դէմ խօսողները, որոնց թիւը բացարձակ մեծամասնութիւն էր ներկայացնում, պնդում էին, որ մանդատները քննելիս պէտք է ղեկավարուիլ ոչ միայն կանոնադրութեամբ այլեւ նկատի առնել այն մի շարք պայմանները, որոնք պատճառ են եղել մեր մարմինների քայքայման եւ յեղափոխական գործունէութեան ընդհանուր թուլացման։ Ընկերների մեծամասնութիւնը առաջարկում էր դադարեցնել ժողովի գբաղմունքները եւ առաջարկել Բիւրոյին անմիջապէս գումարել ժողով եւ լսելով այդ խնդիրը, շուտափոյթ մեզ պատասխան տալ — ընդունո՞ւմ է ժողովը որպէս Ռայոնական թէ խորհրդակցական։ Ժողովը ընդունեց ընկ. Լիպ[արիտի] առաջարկած բանաձեւը,— ի նկատի ունենալով Ա[րեւելեան] Բ[իւրոյ]ի ներկայացուցչի յայտարարութիւնը, ժողովին մասնակցիլ կարող են միայն ըստ կանոնագրի իրաւասու ձայները եւ Բիւրոն իբր մի մարմին (կոնտրոլ) եւ պատասխանատու Ընդհանուր Ժողովի առաջ, անկարող է թոյլ տալ ոեւէ շեղում. ժողովը՝ գիտակցելով այդ յայտարարութեան օրինակութիւնը, որը բխում է իրաւական հիմքերից, ինքն իրան իւր պատասխանատուութեան տակ ներկայ կազմով հրատարակում է Ռայ. ժողով եւ առաջարկում է Ա[րեւելեան] Բ[իւրոյին] ստանալու նրա համաձայնութիւնը եւ մինչ այդ դադարեցնում է իր պարապմունքները։

*
* *

Դեկտ. 29-ին առաւօտեան ժամը 10-ին բացուեց ժողովը։ Որովհետեւ Բիւրոյից դեռ պատասխան չէր ստացուած, մի քանի ընկերներ առաջարկեցին գբաղուել Բիւրոյից առաջարկուած օրակարգի քննութեամբ։ Օրակարգի քննութիւնը բաժանուեց երկու մասի. 1) կրճատել օրակարգի աւելորդ կէտերը 2) լրացնել օրակարգը նոր հարցերով։ Առաջին դէպքում վիճաբանութեան առարկայ եղաւ կաթողիկոսական ընտրութեան խնդիրը։ Ընկերներից ոմանք պնդում էին դուրս ձգել օրակարգից այդ կէտը պատճառաբանելով, որ Դաշնակցութիւնը լինելով սոցիալիստական-աշխատաւորական մի կուսակցութիւն, ոչ մի առնչութիւն չունի մի զուտ հոգեւորական-կղերական գործի հետ, որպիսին է կաթողիկոսական ընտրութիւնը։ Օրակարգի մէջ թողնելու կողմնակիցները պատճառաբանում էին հետեւեալ կերպով.— Որովհետեւ Դաշնակցութեան[19] *եւ կղերականութեան փոխադարձ յարաբերութիւնների վերաբերմամբ [կան] նախապաշարմունքներ, որոնք խոչընդոտ են հանդիսանում աշխատաւոր մասսաների դասակարգային գիտակցութեան զարգացման,— հէնց այդ իսկ պատճառով Ռայ. ժողովը պէտք է մի անգամ ընդմիշտ իր հեղինակաւոր որոշմամբ պարզէ մեր վերաբերմունքը ընդհանրապէս դէպի հոգեւորականութիւնը եւ մասնաւորապէս կաթողիկոսական ընտր[ութիւնը] ու այդպիսով ցրէ մասսաների նախապաշարումները. ժողովը առանց բանաձեւ ընդունելու՝ որոշեց կաթող. ընտր. հարցը թողնել օրակարգի մէջ։*

Յետոյ նիստի ընթացքում ընդունուեցին հետեւեալ հարցերը մտցնելու օրակարգի մէջ։

I *Պայքարի միջոցներ՝ բուրժուական մամուլի, հակառակորդ խմբակցութիւնների եւ անհատների դէմ։*

II *Կանոնադրութեան քննադատութիւնը*

III *Խմբապետների շահատակութիւնները եւ դրամի ոչ նպատակայարմար բաշխում*

IV *Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի Բագուի կուլտուրական միութ[իւնը] եւ Թիֆլիսի նպաստամատոյց յանձնաժողովը։*

V *Ուժերի բաշխում, մասնաւորապէս Կարսի շրջան։*

VI *Հաշուական տեղեկագրական խնդիրը կանոնաւորել առաջիկայ ռայ. ժողովների համար տալով վճռական հրահանգներ։*

Բիւրոյի ներկայացուցիչը յայտնում է, որ Բիւրոն խորհրդակցելով մի քանի ընկերների հետ, կարեւոր գտաւ խնդիրը դարձնել աւելի լայն խորհրդակցութեան նիւթ եւ խոստացաւ տալ պատասխան ժողովին երեկոյեան ժամը 8-ին։

Ժողովը որոշեց հետեւեալ նիստը կայացնել Դեկտ. 30ին առ[աւօտեան] ժամը 10ին։

Բիւրոյի ներկայացուցիչը կարդում է Ռայ. ժողովի լինել չլինելու ռեզոլիւցիան։

Դեկտ. 30-ին եւ 31-ի առաւօտեան զեկուցում տուին հետեւեալ պատգամաւորները. Քարի, Նաւահանգստի, Ապառաժի, Այգեստանի, Մրգաստանի, Թմբուկի։

ՆԻՍՏ II

Դեկտ. 31-ի երեկոյեան

Բացուեց Ռայոնական ժողովի պաշտօնական նիստը, նախագահութեամբ ընկ. Աբրոյի[20]։

Քննուեց դրսի պատգամաւորներին վճռական ձայն տալու իրաւունքը եւ որոշուեցաւ հրաւիրել։

1. *Քարի ներկայացուցիչին*
2. *Այգեստանի 2 ներկ.*
3. *Նաւահանգստի*
4. *Նալբանդի Շրջանային ժողովի ներկայացուցչին, իսկ Կ. Կոմիտէի ներկայացուցչին, դատի պատճառով՝ խորհրդակցական։*
5. *Թմբուկի ներկ[այացուցիչը]*

Ի նկատի առնելով նաեւ, որ Բիւրոն չի ճանաչի եւ հաստատի Մեծ-քաղաքի նոր կենտ. կոմիտէութիւնը, որոշեց հին կենտ. կոմիտէից ունենալ մի ներկայացուցիչ իսկ նոր ընտրուած Կ. կոմիտէի ներկայացուցչին խորհրդակցական ձայնով։ Ժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը, ընկ. Վահէնի եւ ընկ. Սիմոնի յաւելուածը։

Աչքի առաջ ունենալով որ կան 5 շրջաններ. Քար, Մրգաստան, Ապառաժ, Այգեստան եւ Թմբուկ [որոնք] թէեւ կազմակերպական տեսակէտից չէին համապատասխանում Կ. Կոմիտէութեան իրաւունքների սահմաններին, բայց դրա հետ միասին ի նկատի ունենալով այդ շրջանների անցեալը, ապագայ հնարաւոր գործունէութիւնը, ինչպէս նաեւ 1907 թ. բացառիկ ծանր պայմանները, թէ ներքին կուսակցական եւ թէ ընդհանուր տեսակէտից, Ռայ. ժողովը մի առ մի քննելով դրանց ներկայ վիճակը եւ մանդատային մասնաժողովի զեկուցումը, ցանկալի համարեց այդ շրջանների ներկ[այացուցիչների] մասնակցութեանը ձայնի իրաւունքով, որպէսզի կարելի լինի օրակարգի հարցերը քննել աւելի բազմակողմանի կերպով եւ բազմաթիւ ընկերների մասնակցութեամբ։

Դրա հետ միասին Ռայ. ժողովը ցանկալի համարեց, որ ձայնի իրաւունք տրուի նաեւ Նաւահանգստի 3րդ ներկայացուցչին. միեւնոյն ժամանակ Ռ. ժողովի ուշադրութիւնն է հրաւիրում հետեւեալ կարեւոր կէտերի վրայ։

Ա) Ապագայում Կ. Կոմիտէական շրջանները համապատասխանելու են իրենց գործունէութեան այն գլխաւոր պահանջներին (կազմակերպական, դրամական, մարտական պատրաստութիւն), որոնք շեշտուած են Կանոնագրի մէջ։

Բ) Ռ. ժողովը հրաւիրելիս Կ. Կոմիտէների կողմից ներկայ են լինելու ամենամեծ կենսունակութիւն ցոյց տուած գաւառական մարմինները։

Այսպէս ուրեմն ժողովի կազմը հետեւեալն է.

1 *Բիւրոյի ներկայացուցիչ*, 1 *խմբագրութեան*, 3 *Մեծ-քաղաքի*, 3 *Ոսկանապատի*, 3 *Նաւահանգստի*, 1 *Նալբանդի*, 1 *Ապառաժ*, 2 *Վրէժ*, 2 *Քար*, 2 *Այգեստան*, 1 *Մրգաստան*, 1 *Թմբուկ* = 21 [21]։

ՆԻՍՏ III

1 Յունուարի

Յունուարի 1-ին առաւօտեան ժամի 11-ից պակաս 15ը, բացուեց Արեւ. Բիւրոյի Ռայոնական ժողովի նիստը. նախագահում էր ընկ. Բաբա[22]*, որը առաջարկեց երէկուայ նիստի նախագահի ընկ. Աբրոյի համառօտ կերպով զեկուցել այդ ժողովի արած որոշումներն ու ռեզոլիւցիաները։*

Զեկուցումից երեւաց, որ Բիւրոյի ներկայացուցիչը հիմնուելով շրջաններից ստացած տեղեկութիւնների վրայ, միմիայն երէկուայ նիստն է համարել Ար. Բիւրոյի Ռայոնական ժողովի առաջին նիստը. Ուրեմն ժողովը, ըստ կանոնագրի օրինաւոր կերպով բացուած է համարուել Երեքշ. Դեկտ. 31-ի երեկոյեան, իսկ նրանից առաջ տեղի ունեցած նիստերը համարւում են Ռայ. խորհրդակցական ժողովի նիստեր։ Այդ խնդրի առթիւ

18.- Ժողովական կանոնագիր։

19.- Բնագրին մէջ դաշնակցական շարուած է։

20.- Աբրo կամ Աբրահամովիչ Աբր. Գիւլխանդանեանն է։

21.- Ռայոնական ժողովի որոշումներու տպագիր արձանագրութիւնը իրաւասու 21 ձայներու վրայ կ'աւելցնէ. «բացի այդ ժողովին մասնակցում էին խորհրդակցական ձայնով 7 անհատ գործիչներ, ժողովատեղի վայրի մարմիններից 3 ընկերներ եւ Բիւրոյի մնացած անդամներ»։

22.- Գարեգին Խաժակ։

եղան թեր եւ դէմ կարծիքներ եւ վիճաբանութիւններ, որից յետոյ քուէարկուեց ընկ. Շահէնի հետեւեալ բանաձեւը.

«Ռայ. ժողովը բացւում է անդամների այն կազմով, որ հրաւիրուած են եղել Բիւրոյից, ստուգուած[23] մանտատների յանձնաժողովի կողմից եւ հաստատուած ժողովից։ Օրակարգի մէջ մտցնել Կենտրոնական Կոմիտէների որոշման հարցը»։

Ժողովի կողմից առաջարկութիւններ եղան նոր պրեզիդիում[24] ընտրել, որովհետեւ Ռայոնական ժողովի երէկուայ նիստին մասնակցողները բոլորովին նոյնը չեն, որոնք որ մասնակցում էին նախկին ժողովներին։ Որպէսզի նորից աւելորդ աշխատանքներ չկատարուին եւ ի զուր տեղ ժամանակի կորուստ չլինի, ընդունուեց քուէարկութեամբ ընկ. Թադէոսի հետեւեալ բանաձեւը.

«Ռայ. ժողովի Բ. նիստը վաւերացնում է Խորհրդակցական ժողովի պրեզիդիումը եւ անցնում է հերթական հարցերին»։

Նախկին ժողովներից մէկում մշակուած ռեգլամենտը մի քանի յաւելումներով նորից հաստատւում է այս ժողովում։ Հետեւեալն է

ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

1) Ռայ. ժողովը ընտրում է մի մշտական դիւան բաղկացած նախագահից իւր երկու ընկերներով եւ երեք քարտուղարներից։

2) Դիւանի պարտականութիւնն է օրուայ հարցերը մշակած ներկայացնել ժողովին. նշանակել ընդհանուր եւ մասնաժողովների նիստերը. նշանակել ժողովների տեղը եւ ժամանակը. հոգալ բանաձեւերը պատրաստելու մասին, նախագահել ժողովներին եւ խմբագրել ժողովների արձանագրութիւնները յաջորդ ժողովին ներկայացնելու համար։

3) Արձանագրութիւնների մէջ մտցնել խօսողների մտքի ամփոփումը. ցանկացողները կարող են իրենց խօսածը գրած տալ արձանագրութեանը կցելու համար։

4) Ռայոնական ժողովը ունենում է օրական երկու նիստ, տեւողութեամբ 4-ական ժամ, առ. 10-2, երեկոյեան 5-9։

5) Ժողովի ուշացողների անունները մտցնել արձանագրութեան մէջ. երեք անգամ առանց յարգելի պատճառի ուշացողին անունը գրել եւ յայտնել իւր մարմնին։

6) Նոյն հարցի մասին միեւնոյն անձը առաջին անգամ կարող է խօսել 20 ր. երկրորդ անգամ 10 րոպէ, երրորդ անգամ 5 րոպէ։ Ժողովը իրաւունք ունի թոյլ տալու մէկին աւելի երկար խօսելու։

7) Նախագահը կարող է առաջարկել ժողովին փակել ցանկը կամ կրճատել նրանց թիւը. առաջին դէպքում վճռւում է բացարձակ մեծամասնութեամբ, իսկ երկրորդ դէպքում ձայների 2/3 ով։ Նոյն իրաւունքը պահւում է ժողովականներից 3-ին։

8) Ըստ կարգի՝ խօսում են 2 հոգի (թեր եւ դէմ) եւ ոչ աւելի երկու րոպէից։

9) Նիստը վաւերական է երբ ժողովատեղին եկածների 2/3 ներկայ են։

10) Կարեւոր նշանակութիւն ունեցող հարցերի որոշումը տրւում է իրաւասու ձայների 2/3ի մեծամասնութեամբ, որը աւելի պիտի լինի ամբողջ Ռայոնի իրաւասու ձայների կէսից։

Կարգապահական հարցերը վճռւում են ներկայ եղողների սոսկ մեծամասնութեամբ։

11) Բանաձեւ պէտք է ներկայացնել գրաւոր։

Ժողովը հաստատելով նախկին ժողովներից մէկում ընտրուած հաշուական եւ զինական [յանձնաժողովների] եւ օրակարգին կցած յաւելացումները, անցաւ օրակարգի V եւ VI կէտերի քննութեանը։

Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի կուլտուրական հիմնարկութիւնները

Ընկ. Անտոնը[25] նկատում է, որ եթէ աշխատաւոր դասակարգը աւելի քիչ է ստանում իւր աշխատանքի արդիւնքը, քան պէտք է, այդ պէտք է վերագրել գլխաւորապէս նրա կուլտուրական յետամնացութեան, եւ եթէ քաղաքակիրթ երկրներում աշխատանքը աւելի քիչ է շահագործւում, քան մեզ մօտ, այդ էլ նոյն տեսակէտից է բացատրւում։

«Անպատճառ պէտք է մասնակցինք կուլտուրական գործերում եւ աշխատինք առաջնակարգ դեր խաղալ»։

Ընկ. Թադէոսը մեծ ուշադրութիւն է դարձնում մեր ժողովրդի հոգեկանի վրայ. առաջարկում է մեծացնել հայոց ծխական դպրոցների թիւը, եւ աշխատիլ պետական դպրոցները հայացնել։ Ընկ. Լեռնեանը[26] բնորոշելով ազգային գաղափարը տեսականօրէն եւ յենուելով մի շարք փաստերի վրայ, եզրափակում է որ անպատճառ պիտի մասնակցինք կուլտուրական գործերում առաջնորդուելով մեր ծրագրային ոգով, չղեկավարուելով սակայն կուսակցական գաղափարականութեամբ։

Ընկ. Վահաբը[27] հիմնուելով իւր Ամերիկայում ունեցած փորձառութեան վրայ, նոյնն է եզրափակում, աւելացնելով սակայն, որ նախ մասնակցելով կուլտուրական գործերով չպիտի կլանուենք այդ գործերով։ Որ մեր լիտերները չպէտք է տեղեր գրաւեն այդ հիմնարկութիւններում։ Մասնաւորելով խօսքը դպրոցի մասին առաջարկում է, որ ամէն կերպ չաշխատել դպրոցների

23.- Բնագրին մէջ՝ «ստիպուած», որ արտագրութեան վրիպակ է անշուշտ։
24.- Նախագահութիւն, դիւան։
25.- Սիմոն Զաւարեան։
26.- Լիպարիտ Նազարեանց։
27.- Արշակ Վռամեան։

ուսուցիչները դաշնակցականներ լինեն այլ առաջնորդներ։

Ընկ. Մհերը[15] պաշտպանելով կուլտուրական գործերում մասնակցելու անհրաժեշտութեան տեսակէտը, աւելացնում է, որ այդ պիտի կատարուի մեր դաշնակցական անհատների միջոցով, աշխատելով դեմոկրատիզացիայի ենթարկել այդ հիմնարկութիւնները։ Երկար վիճաբանութիւնից յետոյ անցաւ ընկ. Դժոխքի (Ոսկանապատից) հետեւեալ բանաձեւը.

«Հ.Յ.Դ.-ը լինելով յեղափոխական աշխատաւորական կուսակցութիւն, միայն հետեւեալ վերաբերմունքը կարող է ունենալ ընդհանրապէս դէպի ընդհանուր հասարակական-ազգային հիմնարկութիւնները. ա) ընդունելով որ ազգն է այն շրջապատը, որտեղ կարող է միեւնոյն ազգի աշխատաւորութիւնը աստիճանաբար զարգանալ եւ կատարելագործուած կերպով երեւան գալ։ բ) Ընդունելով որ աշխատաւորութիւնը շահագործւում է աւելի մեծ չափերով շնորհիւ իր կուլտուրական յետամնացութեան, Ռայ. ժողովը գտնում է, որ դաշնակցականները, որպէս քաղաքացիներ, պաշտպան հանդիսանալով հայ աշխատաւորութեան բովանդակ շահերին, մասնակցելու [են] բոլոր կուլտուրական-կրօնական հիմնարկութիւնների մէջ այն չափով, որ չափով դա դեմոկրատիզացիայի կ'ենթարկէ այդ հիմնարկութիւնները, որչափով դա կարող է ծառայել աշխատաւորութեան դասակարգային գիտակցութեան բարձրացման եւ այն էլ այն պայմանով, եթէ միայն այդ մասնակցութիւնը չի կասեցնում ու չի կարող հակազարկ տալ մեր յեղափոխական գործունէութեան» (17 ձայն)։

Այնուհետեւ քուէարկուեցին ընկ. Անտոնի բանաձեւի կէտերը առանձին-առանձին եւ ունեցան հետեւեալ արդիւնքը։

Դաշնակցութիւնը իր նպատակներից մէկն է դնում հայ աշխատաւոր մասսաների կուլտուրական շահերի պաշտպանութիւնը թէ կրթական գործը լայն ու աշխարհիկ դարձնելու, թէ բոլոր հասարակական հիմնարկութիւնների մէջ ռամկավարական սկզբունքը մտցնելու եւ թէ [քաղաքականապէս] մարզելու հայ աշխատաւոր մասսաները (8 ձայն)։

Մարմինները եւ անհատները նուիրւում են կուլտուրական գործերին, նախապէս եւ ամէնից առաջ սպառելով բուն կազմակերպական պէտքերը (10 ձայն)։

28.- Արդեօ՞ք Դրոն է, Դրաստամատ Կանայեան։

ՆԻՍՏ

Յունուարի 1-ին երեկոյեան 6.30

Նախագահ Բաբա[22]։

Բացակայ են Բիւրոյի, խմբագրութեան, Մեծ-քաղաքի մէկ, Ապառաժի, Քարի մէկ եւ Մրգաստանի ներկայացուցիչները, որոնք յետոյ գալիս են։

Ժողովը բաւական է համարում առաւօտուայ ընդունած բանաձեւը կուլտուրական-կրթական հարցի մասին եւ անցնում հետեւեալ կէտին.

Աբրօ.— Առաջարկում է առանձնապէս չեշտել, որ գաւառներում դպրոցական գործի ղեկավարութիւնը Դ-ները իրանց վրայ վերցնեն, որովհետեւ այդտեղ այդ գործով զբաղուողներ չկան։

Այս առաջարկին միանում են Քարի եւ Թմբուկի ընկերները։ Առաջարկն ընդունւում է։

Դրւում է քննութեան բարեգործական, Բագուի կուլտուրական, նպաստամատոյց եւ այլ նման ընկերութիւններին մասնակցելու հարցը։

Աբրօ.— Կուլտուրական եւ բարեգործական ընկերութիւնները տարբեր բաներ [են]։ Հետաքրքիր է իմանալ տեղեկութիւններ կուլտուրական միութեան գործունէութեան մասին։

Սուրէն[28].— Նկարագրում է կուլտուրական միութեան հասցրած վնասները Սիւնիքում։ Ժողովուրդը սովորում է ծուլութեան եւ անբարոյականութեան։ Կուլտուրական միութեան ագենտները գալիս էին գաւառ կարծես միայն Դ-եան հայհոյելու նպատակով։

Անտոն.— Անցած տարի՝ սովի ժամանակ ես էլ էի հրաւիրուած գաւառ։ Ես աշխատում էի կուլտուրական միութեան ձեռնարկը գործադրել մեր ծրագրի համաձայն։ Նրանք էլ ի հարկէ, աշխատում էին օգտուել մեր ոյժերից։ Շատ տեղերում նրանց գործերը մեր ընկերներն էին վարում։ Վերջերս նկատուեց Նպաստամատոյցի մէջ մի ձգտում, որ նրանք աշխատում էին այնպիսի մարդիկ ուղարկել գաւառը, որոնք մեր վարկն էին զցում եւ առհասարակ աշխատում էին մեզ յետ պահել։ Օր[ինակ] ժողովին էլ նրանք աշխատում էին ընտրել ոչ մեզանից։ Նրանք ձգտում են կազմակերպել եւ պարապում են պոլիտիկանութեամբ։

Աբրաք.— Առհասարակ բարեգործութեան ես բացասական եմ վերաբերւում, որովհետեւ ժողովրդի մէջ մեռցնում է ինքնագործունէութիւնը, յեղափոխական ոգին։ Օրինակ անցած տարուայ Աբարանում բաժանուած 10,000-ը, ոչ թէ օգուտ բերեց այլ փչացրեց ժողովրդին։ Իսկ կուլտուրական միութեան այլ ճիւղերը օգտակար են, բայց դրա համար էլ պիտի ջլատենք մեր ոյժերը։ Առաջարկում եմ հակառակ դիրք բռնել դէպի բարեգործութիւնը։

Լեռնեան.— Ես նայում եմ այդ խնդրի վրայ երկու տեսակէտից.

ա) սկզբունքային եւ բ) գործնական, յատկապէս Բագուի կուլտուրական միութեան եւ Նպաստամատոյցի վրայ։ Բարեգործական ընկերութիւնները, եթէ ուզում կ՚ք անհրաժեշտ են. քանի ներկայ կարգերը չեն փոխուած, դրանց կարիք կը զգացուի միշտ։ Մենք գիտենք, որ կոոպերատիւ հիմնարկութիւնները, օրինակ, աւելի օգտակար են քան բարեգ. ընկ. որոնք սպանում են մարդու մէջ ինքնագործունէութիւնը։ Դրա համար պէտք է աշխատինք զարգացնել մասսաների ինքնագիտակցութիւնը, նպաստենք կոոպերացիաների հաստատման, իսկ բարեգործութիւնը, որ որոշ չափով այժմ օգտակար է, թողնենք ուրիշ տարրերին. յայտարարենք այս վերաբերմունքը եւ պարտաւորեցնենք մեր անդամներին չմասնակցիլ այդ ընկերութիւններին։ Այսպէս եմ բանաձեւում. ոչ մի դաշնակցական իրաւունք չունի մասնակցելու բարեգ. ընկերութիւններին. եթէ մէկը մասնակցի նա դադարում է դաշնակցական լինելուց։ Այդ պէտք է շեշտել. գալով բարեգ.-կուլտուրական եւ նպաստամատոյց ընկերութիւններին, առ առաւել պէտք է բացասաբար վերաբերուել, որովհետեւ նրանք սկսել են պոլիտիկանութեամբ պարապել եւ ղեկավարել որոշ դասակարգային միտումներով, հակա[ռակ] աշխատաւորութեան շահերին։

Հայր-Աբրահամ[29].— *15 տարուայ ընթացքում ես չեմ յիշում մի ընկեր, որ զուտ բարեգործական գործով պարապած լինի։ Ես կը խօսիմ կուլտուրական հիմնարկութիւնների մասին։ Բաւական չէ ասել՝ պէտք է զարգացնել մասսաների ինքնագիտակցութիւնը եւ ինքնագործունէութիւնը, ստեղծել կոոպերատիւ հիմնարկութիւններ։ Այդ մենք քարոզել ենք 15 տարի շարունակ, բայց այդ անելն այնքան էլ հեշտ չէ։ Ի՞նչ ունինք հապա մեր բազան կազմող աշխատաւոր ժողովրդի կարիքների համար։ Հայ ժողովուրդը ռէալիստ է։ Նա ռէալ օգուտներ է պահանջում։ Դաշնակցութիւնը չի կարող թոյլ տալ, որ ժողովուրդը դիմի կառավարութեան եւ բուրժուազիային։ Մեր բարեգործական ընկերութիւնները եւ հիմնարկութիւնները լեգալ են եւ նրանց միջոցով կարող ենք ժողովրդի կարիքներին բաւարարութիւն տալ. ընկ. Անտոնի ասածը, թէ նրանք պոլիտիկանութեամբ են պարապում եւ մեզ հակառակ մարդիկ են ուղարկում գաւառները, ճիշտ է, բայց դրա յանցանքը մերն է, որ հեռու ենք պահում մեզ նոցանից։ Սկզբում նրանց բոլոր գործերը մեր ձեռին էին, իսկ երբ սկսեցինք թոյլ վերաբերուել, ուրիշները մտան որ ի հարկէ պատահական բան է։ Այդ լեգալ ընկերութիւններին մենք իբրեւ անհատ պէտք է աշխատինք մասնակցիլ աշխատ[աւոր] ժողովրդի շահերի համար։ Մենք պէտք է մասնակցենք բարեգ.-կուլտուրական ընկերութ[իւններին], իսկ զուտ բարեգործականին՝ ոչ։*

Ձայների մեծամասնութեամբ հարցը պարզուած է համարւում։ Առաջարկւում են բանաձեւեր։

Բողոքում [են] Անտոն, Վահաբ եւ պահանջում հարցը աւելի պարզաբանել։ Ժողովն ընդունում է։

Անտոն.— *Մեր ընկերները երբեք չեն եղել բարեգործական ընկ.-ութիւնների մէջ. բայց այդ դեռ չի նշանակում, թէ մենք սոցիալիստներս չենք անի բարեգործութիւն։ Մեր ժողովուրդը թէ այստեղ եւ թէ երկրում սոված է։ 100 ծնողին [դիմաց] 200 մեռնում է եւ այդ պայմաններում ասել, թէ բարեգործութիւնը վնասակար է չեմ հասկանում թէ ինչպէս կարելի է։ Ուրիշ տեղեր զինւորներ, մունիցիպալիտետներ*[30] *եւ այլ խոշոր հիմնարկութիւններ կան. մեր մէջ ի՞նչը պիտի փոխարինէ։ Մեր հաստատութիւնների մեծագոյն մասը բարեգործութեամբ են հիմնարկուած, ուրեմն այդ բարեգործականները սրիկանե՞ր են։ Երէկ կարդացի որ Անգլիայում 340 միլիոն է ծախսուել բարեգործութեան համար։ Եթէ այնտեղ կայ, մեզանում ի՞նչ պիտի լինի։ Մենք պէտք է խոյս տանք հապճեպ որոշումներից եւ աւելի լաւ է ձեռնպահ մնանք, քան բացասական, վնասակար որոշումներ առնենք։*

Բաբա.— *բացատրում է, որ Անտոնի ասած 340 միլիոնը պետական հարկ*[31] *է եւ չի կարելի համեմատել մեր բուրժուական ախորժակներով տոգորուած բարեգ. ընկերութիւնների [հետ]։*

Արմէն.— *Նկատւում է թէ մենք սխալ ենք մօտենում հարցին կապելով այն որոշ անձերի հետ։ Բարեգործութիւնն օգտակար օրինակ [է] մեզանում, որ կատարւում է կրթական գործին նպաստող դեր։*

Վահէ.— *Նախորդ Ռայ. ժողովում էլ նոյնանման դժգոհութիւն էր լսւում բարեգործութեան դէմ, բայց նոյն բողոքողները երբ գնացին գաւառ՝ ռմբակոծում էին մեզ նամակներով, խնդրելով նպաստ հասցնել սոված ժողովրդին։ Այժմ երբ կան ասպարէզներ, որտեղ քիչ էլ լինի մենք կարող ենք օգտակար լինել, մեզ ասում են, թէ դա հակասոցիալիստական է։ Բայց ես վախենում եմ, [որ] երբ գնաք գաւառ հէնց ինքներդ այդ բանաձեւը ստորագրելուց յետոյ դիմէք բարեգ. ընկ., որ նպաստ հասցնեն ժողովրդին։ Դրանով չէ, որ աշխ[ատաւոր] ժող[ովրդ]ի աչքը կարող էք բանալ։ Պէտք է նրան ռէալ բան տալ եւ ոչ թէ միայն գաղափարներ, որոնք այնքան էլ դիւրամարս չեն։ Այո՛, մենք պէտք է հեռու մնանք բարեգ. ընկերութիւններից, կրիտիկայի ենթարկենք այն, բայց առանձին որոշում չանցկացնենք. դատողական բանաձեւ չընդունենք։*

Մհեր.— *Նկատում է, որ բարեգործական ընկ[երութեան] չպէտք է մասնակցել եւ աշխատել նրա բացած դպրոցները իր ազդեցութեան տակ առնել։ Սխալ է եւ այն, որ իբր թէ, եթէ գիւղացուն հաց չտանք կ՚ընկնի բուրժուայի գիրկը. խղճուկ է այն ազդեցութիւնը, որ հացով պիտի ձեռք բերենք։*

Վահաբ.— *Մեր ժողովրդի գիտակցութիւնը դեռ շատ ստոր է։ Դրա համար մեր կուսակցութիւնը պէտք է այդ ժողովրդի բոլոր կարիքներին բաւարարութիւն տայ։ Մենք պէտք է խառնուենք օրինակ դպրոցական գործին, իսկ դպրոցները երկրում բարեգործութեան արդիւնք է։ Սովի մասին մենք գաղափար չունենք, որովհետեւ կուշտ ենք, ամէն օր ուտում ենք, իսկ Երկրում մարդիկ 2 օրը մի անգամ են ուտում։ Պէտք է այնպէս անենք, որ ամէն օր ուտենք։ Դա էլ բարեգործութիւն է. իսկ բարեգործութիւն անելու համար հարկաւոր է փողմենք չունենք, ունին բարեգործական ընկերութիւնները։ Ես հակառակ [եմ] բարեգործութեան ներկայ վատ ձեւին. դրա համար մենք պէտք է մտնենք այդ կազմակերպութիւնների մէջ եւ աշխատենք որ չնպաստենք ժողովրդի ծուլութեան, անբարոյականութեան։*

Դժոխք.— *Կարծում եմ, որ բոլոր հակառողներ ընկերները սխալ են մօտենում հարցին։ Ես չեմ ժխտում բարեգործութիւնը, նա արդիւնք է որոշ պայմանների, բարեգործութիւնը կը մնայ, բայց դրանով մենք չպիտի պարապենք։*

Առաջարկւում են բանաձեւեր.

Բաբայի բանաձեւը.

«Ի նկատի ունենալով, որ մեզանում բարեգործութեան անուան տակ հասկացւում է բուրժուական բարեգործութիւն, որը ծառայում է բուրժուա դասակարգի շահերին՝ բարձրացնելով նրա արժէքը աշխատաւորութեան աչքին,– համաճարակների ժամանակ, նպաստներ հաւաքելու գործը, եւ դպրոցներ բաց անելը, գիւղատնտեսական նպաստներ բաշխելը եւ այլ կուլտուրական հիմնարկութիւնների ձեռնարկները, Ռ. ժող. որոշեց. 1) չմասնակցել զուտ բուրժուական բարեգործական ընկ[երութիւններին] ոչ իբրեւ կազմակերպութիւն եւ ոչ էլ իբր անհատ, այլ մերկացնել նրանց թերութիւնները, նրանց յետին մտքերը՝ նպաստելով աշխատաւորութեան գիտակցութեան զարգացմանը. 2) միւս երկու տեսակի նպատակներին ծառայող ընկերութիւններին մասնակցել անհատաբար եւ յամառօրէն ձգտել ծառայեցնելու նրանց աշխատաւոր մասսաների շահերին» (17 ձայն)։

Դժոխքի բանաձեւ.

Բարեգործական-կուլտուրական նպաստամատոյց միութիւնները լինելով ոչ առաջադիմական հիմնարկութիւններ եւ հիմնուած լինելով բուրժուական կեղծ մարդասիրական հիմունքների վրայ, նպաստելով տիրող դասակարգի հայեացքների տարածման ի վնաս աշխատ. մասսաների շահերի՝ մթնցնելով նրա դասակարգային գիտակցութիւնը՝ չեն կարող զէթ ամենափոքրիկ չափով արտայայտել աշխատաւորի շահերն ու ձգտումները, Ռ. ժողովը իր բացասական վերաբերմունքը յայտարարելով դէպի այդ հիմնարկութիւնները, շեշտում է որ թէ Դաշնակցութիւնը պաշտօնապէս եւ թէ դաշն[ակցական] անհատները ոչ մի կերպ այդ հիմնարկութիւններում մասնակցել չեն կարող։ Բայց Դաշն. դէմ լինելով ընդհանրապէս բարեգործութեան՝ չի կարող դէմ լինել մասնաւոր օգնութիւններին կամ որոշ դէպքում զարկ չտալ այդ մասնաւոր օգնութիւններին առաջ գալուն, ընդունելով որ դրա դէմ կռուելը կը լինէր պոլիտիկանութիւն, որովհետեւ դա կը վերանայ, երբ կը վերանան այդ երեւոյթն առաջ բերող պատճառները։

Դրւում է քաղաքային եւ գիւղական ընտրովի պաշտօնեաների ընտրութիւններին մասնակցելու հարցը։

Թադէոս.— *Ամէն տեղ ընկերները ուզում են մասնակցել։ Մեզ համար պէտք է պարզ լինի, որ դրանք ժողովրդական հիմնարկութիւններ չեն եւ այդ պաշտօնեաները ընտրողը անպատճառ փչանում է, անբարոյականում է։ Մենք պէտք է մնանք դուրսը, կրիտիկայի ենթարկենք, պահենք օպոզիցիա, բայց երբեք չընդունենք։*

Յոնան[32] *միանում է Թադէոսի ասածին նկատելով, որ դրանք մեծ դեր են կատարում, որ դրանք ոստիկանական պաշտօնեաներ են։ Դատաւորների ընտրութեան պէտք է մասնակցենք, որովհետեւ դրանք մեծ դեր են կատարում մեր լոյսից զուրկ գիւղերում եւ եթէ լաւ մարդիկ անցկացնենք, կարող են մեծ օգուտ ցոյց տալ աշխատ[աւոր] ժողովրդին։*

Դայի, Կռօ, Լեռնեան բացատրում են թէ ինչ են գիւղերում քալաւա, քէօխուա, սուտբա, եւայլն։

Շահէն.— *Պէտք է ընտրութեանը մասնակցել, որովհետեւ ոչ թէ պաշտօնն է կեղտոտ, այլ մարդիկ։ Դրա համար պէտք է լաւ մարդիկ անցկացնենք, նոյն իսկ մեր ընկերներին։*

Աբրօ.— *Այստեղ կան 4 տեսակի պաշտօններ. քէօխուան, դատաւոր, ջրբաժան եւ մունիցիպալիտէն։ Քէօխուան ոստիկանութեան պաշտօնեայ է եւ ինչքան էլ լաւ մարդ լինի օգուտ չկայ։ Դրա համար այդ պաշտօնը պէտք է ձգել։ Գիւղական դատաւորներն ու ջրբաժանները օգտակար պաշտօններ են եւ եթէ լաւ մարդիկ ընդունենք, մեծ օգուտ կը լինի, իսկ քաղաքային դումայում անպայման պէտք է մասնակցենք եւ աշխատենք այնտեղ դեմոկրատիզացիա մտցնել։ Առաջարկում եմ անպայման բոյկոտի ենթարկել տանուտէրներին եւ մասնակցել միւս պաշտօնների ընտրութեան։*

Մհերեան.— *Աբրոյի ասածի մեծ մասի հետ համա-*

29.- Աւետիք Սահակեան։

30.- Քաղաքապետութիւններ։

31.- Ըստ կ՚ուզէ՝ պետական հարկէ գոյացած գումար է։ Աւելի ճիշդ պիտի ըլլար գործածել վարկ բառը։

32.- Բնագրին մէջ «Յոնան» ձեւով արձանագրուածը չի կրնար Յոնան Դաւթեանը ըլլալ, որովհետեւ այս վերջինը այդ օրերուն Ժընեւ կը գտնուէր։ Հաւանաբար պէտք է ըլլայ Յովնան, Թմբուկ-Սխալքալաքի մատգամաւորը։

ձայն եմ, բայց նրա տրամաբանութեան՝ չէ։ Եթէ միւս ընտրողի պաշտօնեաներին մասնակցում ենք, ինչո՞ւ չմասնակցել եւ տանուտէրի ընտրութեան։ Ուր կայ յարմարութիւն անպայման մասնակցել եւ բարձրացնել այդ պաշտօնը։ Բոյկոտ չանենք, սկզբունքը ընդունենք եւ թողնենք տեղի յարմարութեանը։

Վահէ.— Եթէ ես իմանայի, որ մեր ռեզոլիւցիաներով կը մեռցնենք իրականութիւնը՝ ես կը համաձայնէի չմասնակցել, բայց որովհետեւ չենք կարող, դրա համար ես կողմնակից եմ մասնակցելու։ Ինչու չպէտք է մասնակցենք, քանի որ քէօխուան համայնքի ներկայացուցիչն է եւ ընտրողի պաշտօնեայ։ Չպէտք է վախենալ «քէօխուա» անունից։ Քէօխուան օրէնքով շատ շատ իրաւունքներ ունի։ ուրիշ բան է եթէ մերոնք տգէտ են եւ չեն օգտուում։ Պէտք է գիտակցութիւն զարթեցնել։ Եթէ դուք ծանօթ էք քէօխուայի արածներին, այն բոլոր զարհուրելի բաներին, դուք ինքներդ ձեռքերդ դրած ձեր սոցիալիստական սրտի վրայ կը համաձայնէիք ընտրութեան մասնակցելուն։

Դայլ.— Ընտրութիւնները չէ, որ մեզ համար ղեկավարող սկզբունք պիտի ծառայեն, այլ այն ինստիտուտը, որի համար ընտրւում է ստարշինան[33]*. [նա] չի կարող աշխատ[աւոր] մասսային օգտակար լինել։ Եթէ դուք գաւառները ման գաք, ծանօթանաք ստարշինայի ֆունկցիաներին, դուք եթէ 40 ձեռք ունենայիք կը ստորագրէիք բոյկոտին։ ստարշինան թէ գաղտնի եւ թէ յայտնի ոստիկանութեան ագենտն է։ մենք պիտի կըռւենք դրա դէմ։ Գալով դատաւորներին պէտք է մասնակցենք, որովհետեւ դրանք անկախ մարմիններ են եւ վարում են իրանց գործը սովորոյթի օրէնքի համաձայն, որ պիտի խրախուսենք։*

Անտոն.— Տանուտէրները գիւղերում հանդիսանում են բոլոր ֆունկցիաների ներկայացուցիչը։ Տանուտէրն ամենաազդեցիկ մարդն է գիւղում եւ առանց նրան ոչինչ չի կարելի անել, ոչ հողաբաժանութեան, ոչ էլ հարկերի բաժանման։ Ուստի եւ պէտք է ընտրութեան մասնակցենք, միայն ընտրողը չպէտք է մնայ Դաշնակցութեան գործօն անդամ։ Միւս բոլոր պաշտօնեաների ընտրութեան պէտք է մասնակցել։

Հայր-Աբրահամ.— Ուշադրութեամբ լսեցի ընկերների ճառերը եւ համոզուեցի, որ ընկերները գիւղին ծանօթ չեն։ Տանուտէրը գիւղի պետն է։ Եթէ նա մեր մարդը չլինի, ոչինչ չենք կարողանայ անել եւ միւս պաշտօնեաների միջոցով։ Ճիշտ է տանուտէրերը մեծ մասամբ բացասական անձնաւորութիւններ են եւ դրա պատճառն այն է, որ նրան ռոճիկ չի տրւում։ Պէտք է ռոճիկ նշանակել։ Բացի այդ՝ գիւղացիներին պէտք է խորհուրդ տալ, որ ինտելիգենտ մարդկանց ընտրեն։ Համաձայն եմ, որ տանուտէր ընտրուողը պէտք է տեղական կազմի անդամ չլինի, բայց դաշնակց. անհատ կարող է լինել։ Միւս պաշտօնեաների [ընտրութեան] ի հարկէ անպայման պէտք է մասնակցել։

Կարդացւում են բանաձեւեր.

Հայրումի բանաձեւը.

Դաշնակց[ութիւնը] իբրեւ յեղափոխական եւ սոց. կուսակցութիւն, որ յանուն աշխատաւորի լաւագոյն ապագայի կազմակերպուած շարքերով կռուելու է ընդդէմ բոլոր տեսակի շահագործումների եւ հարստահարութիւնների, գիտակցելով, որ տիրող կարգերի տապալումով միայն հնարաւոր է իրականացած տեսնել մեր ձգտումները եւ որ պալիատիւները[34] չեն, ոչ էլ մասնակցելը այս կամ այն գիւղական-վարչական, քաղաքային եւ այլ բարեգործական հիմնարկութիւններին, առաջարկում ենք բացառել այդ հիմնարկութիւններին մասնակցելը։ 6 *ձայն*։

Աբրոյի բանաձեւը.

Ռայ. ժողովը պահանջում է դաշն. ընկերներին որ ոչ մի մասնակցութիւն չունենան տանուտէրերի ընտրութեան ի նկատի առնելով, որ դրա միմիայն իրագործող են ոստիկանական հրամանների։ Ինչ վերաբերում է գիւղական դատաւորների եւ աչքի առաջ ունենալով, որ եթէ բարեխիղճ մարդիկ ստանձնեն այդ պաշտօնները՝ կարող են օգտակար հանդիսանալ աշխատաւոր գիւղացիներին, մենք պէտք է մասնակցենք այդ ընտրութիւններին։ Նոյն կերպ պէտք է վարուենք եւ ջրաբաժաններին վերաբերմամբ։ Քաղաքային մունիցիպալիտետներում, որ մեծ դեր են խաղում հասարակական բոլոր խնդիրների վերաբերմամբ, Դաշն. պէտք է մասնակցէ այդպիսի ընտրութիւններին։

Մհերեանի բանաձեւը.

Իւրաքանչիւր կուսակցութիւն՝ յեղափ. քաղաքական ձգտումներով ապրում է իրականութեան մէջ եւ անկախ իր նպատակներին ձգտելու համար գործ դրած յեղափոխական գործելակերպից, պարտաւոր է միջամտել բոլոր հասարակական խնդիրներում, ուրիշ կողմնակի ճանապարհներով էլ։

Գիւղական եւ քաղաքական պաշտօնատար այն անձինք, որոնք ընտրւում են ուղղակի քուէարկութեամբ համայնքից կամ քաղաքի ցեղ ունեցող ազգաբնակութիւնից, պիտի շահագրգռուեն եւ հետաքրքրութիւն առաջացնեն աշխատաւոր շահերի պաշտպան կուսակցութեան անդամների մէջ. նրանց ընտրութեանը պիտի ակտիւ կերպով մասնակցութիւն ունենան մեր ընկերները։ Միայն գիւղական տանուտէրերը իրանց պաշտօնավարութեան ընթացքում չեն կարող գտնուել միաժամանակ նաեւ դաշն. որեւէ վարչական մարմնում։ 6 *ձայն*։

33.- Աւագ պաշտօնեայ, տանուտէր։
34.- Կիսամիջոցները, կարկտան միջոցները։

Անցան հետեւեալ բանաձեւերը.

«Մասնակցել գիւղական դատաւորների, միրաբների[35], հողաբաժանների, հարկաբաժանների եւ այլ ընտրովի պաշտօնեաների ընտրութիւններին» 15 ձայն։

«Քաղաքներում մասնակցել քաղաք[ային] ինքնավարութեան ընտրութիւններին»։ 15 ձայն։

«Տանուտէրական ընտրութիւններին չմասնակցել, քանի որ այդ պաշտօնեաները հանդիսանում են ոստիկանութեան հրահանգների կատարողներ։ Եթէ որեւէ դաշն. ընտրուի տանուտէր, նա չի կարող մնալ տեղական դաշնակցական կազմի մէջ» (12 *ձայն ընդդէմ* 7-ի, 1 *ձեռնպահ*)։

Մասնակցելով թէ հասարակական եւ թէ կուլտուրական գործերին դ[աշնակցակա]նները հեռու պիտի մնան նաեւ պոլիտիկանութիւն[ից]։ Դ-ները չպիտի կասկածյարուցանեն որ նիւթապէս օգտւում են կազմակերպութեան յաղթութիւններից։

Նիստը փակուեց ժամի 11-ին։

ՆԻՍՏ

Յունուարի երկուսին,
առ. ժ. 10 *եւ* 35 *ր.*

Նախագահ Բաբա...

Խօսւում [է] կաթողիկոսական ընտրութիւնների մասին։

Ա.— Մենք պէտք է կաթող. ընտրութիւններին մասնակցենք, որովհետեւ Դաշն. 17 *տարուայ ընթացքում միջամտել է այնպիսի հասարակական բնոյթ կրող երեւոյթների, ուր ժողովուրդը իրական օգուտ ունի։ Շատ անգամ ընկերները դիմումներ են անում թէ կուլտուրական գործը մեր ձեռքը պիտի լինի, իսկ այժմ երբ յարմար առիթն է՝ խոյս են տալիս։ Մենք մոռանում ենք, որ պատմականօրէն կալուածական-կուլտուրական, ամուսնական եւ այլ խնդիրները գտնւում են հոգեւորականութեան ձեռքին, որոնք հասարակական բնոյթ կրող ֆունկցիաներ են։ Այսքան ժամանակ փայփայում ենք ազգային ինքնավարութեան գաղափարը եւ յանկարծ յետ ենք մղում եկեղեցական ներքին ինքնավարութիւնը, որ կազմում է սաղմ մեր փայփայած գաղափարի։*

Ամէն անգամ երբ կարիք ենք զգում տանջուած տաճկաստանցիների ամբողջ ողբալի դրութիւնը ներկայացնել եւրոպական մեծ պետութիւններին, որոնք ճիշտ է, իրենց շահը ի նկատի ունենալով աշխատում են միջամտել, կարիք ենք զգում մի պաշտօնական ներկայացուցչի որ կարողանար խօսել հայ անունից — դա կաթողիկոսն էր։ Հարցը նրա մէջն է թէ ինչպէս անենք, որ չուտ ազատուենք կղերականութիւնից եւ տէր դառնանք հասարակական ֆունկցիաներին — դա կը լինի մի միայն այն ժամանակ, երբ մենք կ'աշխատենք մեր հակառակորդների՝ կղերականութեան ոյժը թուլացնել, մեր հմայքը բարձրացնելով, եթէ խօսում ենք աշխարհականացման մասին, մոռանում ենք, որ դրքա անունով են եղել կղերական, իսկ էապէս ժողովրդական։ Մինչեւ հիմա պետութիւնը արհեստական կերպով կանգնեցրել է լուսաւորութիւնը, իսկ մեր դպրոցները, չնորհիւ նրան որ հոգեւորականութեան ձեռին է իբր, մնացել է։ Այժմս վերջին տարիներս դպրոցների թիւը քչացել է, որովհետեւ նախ աշխարհիկ դպրոցական կազմակերպուած վարչութիւն չկայ եւ ժողովրդական հիմունքների վրայ չի դրուած։ Իսկ մեր հոգեւորականութիւնը չէզոքացուած է։

Ստուգուեց անունների ցուցակը։ Բացակայ էին Մեծ-քաղաքից 1 *հոգի եւ Թերթի ներկայացուցիչը։*

Շահէն.— Երբ դրուած է այս հարցը, մենք չպիտի խառնենք ազգ եւ եկեղեցի գաղափարը։ Երբ մօտենում ենք խնդրին, պիտի մի որոշ մասշտաբ ունենանք, աշխատաւոր մասսայի շահը։ Եկեղեցին այն հիմնարկութիւնն է, որ ստեղծել է բուրժուազիան՝ աշխատաւորութեան շահագործելու։ Մնացած դպրոցական եւ կալուածական ֆունկցիաները գտնւում են հոգեւորականութեան ձեռքում եւ դեռ կը մնայ քանի գոյութիւն ունին միապետական կարգերը։

Մենք պիտի աշխատենք վերջինիս դէմ կռուելու։ Անհատապէս չեշտում եմ այն հանգամանքի վրայ, որ լիդերները պիտի հեռու մնան, որովհետեւ հակառակորդներ փոքր առիթ են փնտռում Դաշնակցութեան հայհոյելու։

Աբրաք.— Մենք ընդունել ենք նախորդ ռեզոլիւցիաներում, որ պիտի աշխատենք կուլտուրական գործերը մեր ձեռքը ձգել, ուրեմն հետեւողական լինելու համար պիտի աշխատենք հոգեւորականութեան ձեռքին գտնուած դպրոցներին տիրել։ Հոգեւորականութեան մէջ 2 *հոսանք կայ։* 1-*ը աշխատում է ձեռք ձգել բոլոր դպրոցները, որի համար եւ ունի իր թեկնածուն, որի ընտրուելու ժամանակ ժողովրդի ոչ մի պահանջին բաւարարութիւն չի տրուի։ իսկ* 2-*ը աւելի ազատամիտ, որի յաղթանակը մեզ օգտակար է։ Որպէս յեղափոխական կուսակցութիւն չենք կարող դնել մեր կանդիդատուրան։ Պաշտօնական մասնակցութեան հակառակ է։ Ոչ պաշտօնական մասնակցութիւն, բացատրելով մեր եւ նոցա տարբերութիւնները։ առաջարկում է անցկացնել անկազմակերպ մարդու*[36]*։*

Որոշուեցաւ (13 *ձայն*) *գրուած ձայներով բաւականանալ եւ ռեկլամենտի հիման վրայ իւրաքանչիւր խօսողի տալ* 20 *ր[ոպէ] ժամանակ։*

35.- Հասարակական ոռոգման ջուրերու աւագ կարգադրիչ։
36.- Այսինքն՝ անկուսակցական մարդու։

Վահաք.— Մենք մի կուսակցութիւն ենք, որ իրական պայմանները ի նկատի ենք ունենում։ Այստեղ եկեղեցու եւ պետի մասին խօսք չկայ, այլ մի մարդու, որի ձեռքում որոշ իրաւունքներ կան։ Մեր վիճակին մէջ գտնուող ժողովուրդները (Իրլանդիա) ոչ թէ անտարբեր չեն դէպի վարչական գործերը, այլեւ որոշ նշանակութիւն են տալիս եւ երբ խնդիրը կը գայ իրլանդական ժողովրդի պաշտպանութեան, նոքա դուրս են գալիս եպիսկոպոսի հետ միասին պաշտպանելու այդ դատը։

Մենք պիտի ընդունենք այնպիսի մարդու, որ եթէ մեր ձեռքին խաղալիք չդառնայ, գոնէ մեր գծած ծրագրի սահմաններում, ենթարկուի մեզ։

Բաքա.— Ապուշի մէկին կաթողիկոսական աթոռի վրայ նստեցնելու համար դիմում ենք եզուիտական միջոցների, որ քայքայում առաջ կը բերէ կազմակերպութեան մէջ։ Խրիմեանին մասնակցեցինք, որովհետեւ կարծում էինք թէ նա փող կը հաւաքէ տաճկաստանցիների համար եւ գէնք[ի] կը փոխարինէ։ Իւրաքանչիւր մի քայլ ուղղուած պիտի լինի կուսակցութեան ուժեղացման եւ ոյժերը զուր տեղը չպիտի վատնուեն։ Ռուս կառավարութեան ազդեցութիւնից մենք չենք կարող ազատուիլ ընտրութիւնների ժամանակ։

Ռոտոս.— Ամէն անգամ պրոպագանդայի ժամանակ մենք չեշտում ենք այն հանգամանքը, որ կեղեքող դասերից մէկն էլ ներկայացնում է հոգեւորականութիւնը, որի դէմ պիտի կռուենք։ Եթէ մենք ուժ տանք ընտրուելու մի փալաս[37] կաթողիկոսի, նա ամէնից առաջ ոչ թէ մեր ազդեցութեան պիտի ենթարկուի այլ վանքում գտնուած մի խմբակ հոգեւորականների, որոնք իրենց մտածողութեամբ թշնամի են Դ[աշնակցութեան] ըղձդումներին։

Կալուածական խնդրում մենք պիտի ոչ թէ հակառակորդի դիրքը գրաւենք, հապա մեր իրաւունքները տարածենք, այլ քանդենք այդ դիրքը եւ կաւով խցենք։ մեզ աւելի ցանկալի է մի գիտակ կղերական, քան մի ազատամիտ, որովհետեւ առաջինը ուժեղացնելով կղերականութիւնը .....[38]

Դպրոցական խնդրում կոմպրոմիսներ[39] չենք անելու, այլ կազմակերպուած ժողովրդական-յեղափոխական կռիւ։ Մենք չենք կարող մասնակցել այնպիսի ընտրութեան, որը միշտ աշխատաւոր ժողովրդի անունից մաղթանքներ է անում եւ աղերսագրեր ուղարկում բուրժուական պետութիւններին, որոնց դէմ ենք մեր աշխատաւորական քաղաքականութեամբ։

15 *ձայնով որոշուեցաւ խօսելու ժամանակը սահմանափակել* 10 *րոպէով։*

Վահան Ոսկ[անապատի].— Այդպիսի հարցը յեղափ. կուսակցութիւնը իր օրակարգի մէջ չպիտի դնէր, բայց որովհետեւ մենք հետաքրքրւում ենք հասարակական բոլոր հարցերով, ուրեմն մեր կարծիքը պիտի յայտնենք այդ խնդրի վերաբերմամբ։

Ամուսնական խնդիրները մեր քննութեան առարկայ չպիտի դարձնենք, որովհետեւ դա համապետական բնոյթ է կրում։ Թէեւ հայ տարրը բացասական վերաբերմունք ունի դէպի հոգեւորականութիւնը [այսուհանդերձ] կրօնական զգացմունքը աւելի արմատացած է, որի համար էլ պիտի զգոյշ վարուել եւ տանել առաջ այն գաղափարը, որ հայ հոգեւորականութիւնը ոչ թէ մեր պաշտպանն է, այլ մեր թշնամին, որ իր իւրաքանչիւր մի քայլ գործադրում է յօգուտ իր շահերին։ Մենք պէտք է հասկացնենք, որ վերեւից չէ փրկութիւնը, այլ ներքեւից — ժողովրդից։

Անդրօ.— Իւրաքանչիւր մի տակտիկա պիտի բխէ ծրագրից։ Մենք ոչ մի դէպքում չենք կարող ընդունել ուրիշ ճանապարհ բացի յեղափոխականը։

Եթէ մենք սկզբունքով դէմ ենք հոգեւորականութեան, ապա ինչո՞ւ պիտի մասնակցենք նրա պետի ընտրութեան։ Որքան մի հիմնարկութիւն անհետաքրքիր մնայ այնքան ինքն իրան կը քայքայուի։

Կոչ.— Ով կը հաւատայ, որ մենք մեր ազդեցութեամբ կարող ենք խախուտ հիմքերի հասցնել կղերականութեան։ Այդ բոլորի հետեւանքը պալիատիներ[34] են, իսկ մենք վէրքը արմատապէս պիտի լուծենք։

Որոշուեցաւ Մհերեանին[15] տալ 20 *ր։*

Մհերեան.— Կաթողիկոսական ինստիտուտը ներկայանում է պատմականօրէն առաջացած ոչ թէ միայն կղերականութեան ներկայացուցիչ այլեւ հասարակական, ինքնավարական։

Աշխատաւորի շահերը ոչ միայն տնտեսական են այլեւ կուլտուրական, որը պատմականօրէն գտնուել է հոգեւորականութեան ձեռքում, որի համար եւ պիտի մասնակցենք։

Պատմականօրէն կրօնական եւ այլ ֆունկցիաները անցել են հոգեւորականութեան ձեռքը, իսկ մեր դերը պիտի լինի խլել եւ յանձնել աշխատաւորութեան։ Կռուելու համար մենք ունենք զանազան ճանապարհներ, որը ուրիշ կուսակցութիւնների մօտ մէկն է։

ա) Կազմակերպել աշխատաւորութեան, գիտակցութեան բերել եւ պարզել հակառակորդների ֆիզիոնոմիան։

բ) Հակառակորդ բանակի ուժը թուլացնել եւ եթէ այս դէպքում չմասնակցենք, բուրժուազիայի ջրաղացին ջուր ածած կը լինենք։

Կոմբը եւ Կլեմանսոն[40] լինելով Ֆրանսիայում գլխաւորներ, կարողացան սոց[իալիստ] կուսակցութիւնները զբաղեցնել կղերականութեամբ, որի ընթացքում բազմաթիւ սոցիալիստական խնդիրներ բաց մնացին։

Բուրժուազիան կը ցանկանար, որ սոց. կուսակցութիւնները զբաղուեն այդ խնդրով, իսկ իրենք մէջտեղը կ'օգտուեն։ Ասում են «գիտակցութիւնը կը մթնանար աշխատաւոր մասսայի»։ Այդ ոճը առաջին անգամ 7 տարի առաջ գործ ածեց Պլեխանովը «Ազգային հարց-ի» վերաբերմամբ։ Եթէ պրոպագանդան մի որեւէ հարցի վերաբերմամբ տարուեց սխալ, գիտակցութիւնը այն ժամանակ կը մթնանայ։ «Անտարբեր լինել» դէպի հասարակական որոշ խնդիրներ, վատ երեւոյթ է եւ ցոյց է տալիս մի որեւէ կուսակցութեան սնանկութիւնը։ Դա նշանակում է չցանկանալ մի որեւէ բան անել։

Կարդացուեց շրջաններից ստացած ռեզոլիւցիաները։

Որոշուեցաւ լսել Երկրից[41] եկած ընկերոջ կարծիքը այդ խնդրի մասին։

Դերենիկ[42].— Այդ խնդիրը որոշ կապ ունի տաճկահայերի հետ եւ այնտեղի դրութիւնը լինելով տարբեր այստեղի դրութիւնից, կայ որոշ տրամադրութիւն մասնակցելու։ Կովկասը կարող է չմասնակցել, իսկ տաճկահայերը երեւի կը ցանկանան ընտրել Օրմանեանին, որովհետեւ միշտ նրա անունն են լսել եւ ոչ մի տեղեկութիւն չունեն նրա մասին։ Այդպիսով դուրս կը գար երկու հատուածներ Դաշնակցութեան որոշումների մէջ, հակասութիւն։

Ժողովը անցաւ բանաձեւերին։

Վիրաք.— ա) Դաշն. որպէս մի յեղափոխական կուսակց[ութիւն] չի կարող մասնակցել կաթողիկոսական ընտրութիւններին դրական եւ ակտիւ կերպով։ Դաշնակցութիւնը չի կարող ունենալ իրա թեկնածուն. բայց ի նկատի ունենալով այն բացառիկ պայմանները, որի մէջ ապրում է հայ ժողովուրդը, որի թէ կուլտուրական եւ թէ ազգային իրաւական դրութիւնը ներկայումս կապուած է կաթողիկոսական ինստիտուտի հետ, Դաշնակց. պասսիւ մասնակցութիւն պիտի ունենայ այդ ընտրութիւններին, որպէսզի չդրուի որեւէ ուժեղ անձնաւորութեան թեկնածութիւն, որ կազմակերպէ եւ ուժեղացնէ հոգեւորականութիւնը ի վնաս աշխատաւոր ժողովրդի շահերին (1 *ձայն*)։

Դժոխք.— Դ-թիւնը լինելով միակ տնօրէնը հայկական իրականութեան եւ միակ արտայայտիչը հայ աշխատաւոր մասսայի, որպէս նորա բովանդակ շահերի պաշտպան, հետաքրքրուել [է] եւ պիտի հետաքրքրուի այն բոլոր հարցերով, որոնք այս կամ այն ձեւի տակ կապ ունեն աշխատաւոր մասսայի հետ։

Կաթողիկոսական հարցը լինելով այդպիսի հարցերից մէկը, դրուեց Ռ. ժողովի քննութեան, որն եւ իր բացասական վերաբերմունքը արտայայտելուց յետոյ անցաւ հերթական հարցերին։ 3 *ձայն։*

Ընդունելով որ մեր կուսակցութիւնը հաւատարիմ էուլիւցիայի օրէնքներին, պիտի պաշտպանի եւ զարկ տայ միայն այն սոցիալ քաղաքական հասարակութիւններին (ինստիտուտներին) որոնք մեր պատմափիլիսոփայական ըմբռնումով ճանաչւում են կենսունակ ու զարգացման ընդունակ,

Որ կաթողիկոսական ինստիտուտը հանդիսանալով ամփոփումն կղերային դասային գաղափարի, որը ոչ միայն զարգացման ընդունակ չէ, այլեւ իր ներկայ դրութեամբ իսկ ուղղակի վնասակար է մեր դասակարգային ձգտումների համար,

Որ կաթողիկոսը խաղալիք է այն օրէնքների ձեռքին եւ այն պետական մեխանիզմին, որ թշուառութեան է հասցրել աշխատաւորութիւնը,

Որ ընտրութիւններին մասնակցելը մեր աշխատաւորութեանը կը կապի «հոգեւորականութեան» եւ «եկեղեցու» գաղափարների հետ, որ կաթողիկոսը «հայ ժողովրդի» քաղաքական այդ ներկայացուցիչը դիմումներ է անում բուրժուական պետութիւններին, որոնք ղեկավարւում են ոյժով եւ դրամով եւ որոնք ոչ մի բաւարարութիւն չեն տուել ու չեն տալիս այդ դիմումներին, որոնցից ոչ մի շահ չունի հայ աշխատաւորութիւնը.

Ռայ. ժողովը որոշում է, որ կուսակցութիւնը եւ նրա գործօն անդամները ոչ մի մասնակցութիւն չպիտի ունենան առաջիկայ կաթողիկոսական ընտրութիւններին, պարզելով միաժամանակ ժողովրդին, մամուլի եւ պրոպագանդայի միջոցով, իր այդօրինակ վերաբերմունքի պայմաններն ու իմաստը։ Ինչ վերաբերում է ժողովրդական այն կրթական-կուլտուրական եւ տնտեսական խնդիրներին, որոնք կապուած են կաթողիկոսութեան եւ առհասարակ կղերի հետ, Հ.Յ.Դ. աշխատելու է ոչնչացնել հայ կղերի իրաւասութիւնն այդ խնդիրներում, յանձնելով մեր բոլոր ժողովրդական հաստատութիւններն իրեն՝ ժողովրդին։

13 *ձայն. 2/3 մեծամասնութեամբ անցաւ։*

Վռամեան.— Նկատելով, որ կաթողիկոսը ռուսահայ իրականութեան մէջ կը ներկայացնէ հայ ազգային կուլտուրական հասարակութիւնների իրաւական պետը, իբրեւ գլուխ հայ ժողովրդի ազգային եկեղեցական ինքնավարութեան,

Ուստի Դաշն., որ համաձայն իր ծրագրին կը մաքառի աշխատաւոր դասակարգի բովանդակ շահերուն համար, շահագրգռուած է ինքնին, որ այդ ազգ.-կուլտուրական հաստատութիւնները չգտնուեն կղերական յետամնաց պետի բացարձակ կոնտրոլին տակ, բան մը, որ

37.- Թոյլ, կամազուրկ։

38.- Բնագրին մէջ նախադասութիւնը կիսատ մնացած եւ մէկ տող բաց ձգուած է։

39.- Համաձայնութիւն փոխադարձ զիջումներով։

40.- Էմիլ Կոմբ՝ 1902-1905 Ֆրանսայի վարչապետ. Ժորժ Կլեմանսօ՝ նոյնպէս ֆրանսացի քաղաքական ծանօթ գործիչ։ Երկուքն ալ շեշտուած հակակղերականներ։

41.- Այսինքն՝ բուն Հայաստանէն (Տարօն, Վասպուրական, Կարին)։ Երկիրը՝ թրքական պետութեան տակ գտնուող Արեւմ. Հայաստանն էր։

42.- «Երկրից եկած ընկերը՝ Դերենիկն է,— 1906-7 թուականներուն Տարօն-Սասունի մէջ գործող երիտասարդ գործիչ։

անցեալին մէջ այնքան աղէտաբեր եղաւ խաւարամիտ կաթող[իկոսների] օրով,

Նկատելով որ կաթող. ընտր. մասնակցելու մերժումը պիտի ստիպէ ժողով[րդային] զանգուածները նետելու կղերական ազատական կուսակցութիւնների գիրկը, որովհետեւ մեր բոյկոտը անկարող պիտի ըլլայ արգիլելու մեր զանգուածները այդ ընտրութիւններուն մասնակցելէ,

Իսկ ազատական խմբակը բլոկ անելով այդ ընտրութիւնները, պիտի նպաստէ այդ զանգուածներուն, հակադրել տալով ազգային շահերը ու Դաշնակցութիւնը, եւ ազգն ու եկեղեցին չփոթելու հետ[43],

Նկատելով, որ կաթ. ընտ[րութեան] կատարուելը մեր բոյկոտի հակառակ պիտի նպաստէ կղերական դասակ[արգի] կազմակերպումին նոր եւ ուժեղ ազդակ աւելցնելով ռուսահայ իրականութեան մէջ, մինչդեռ արդի քաղաքական ռեժիմին տակ պետութիւնը եկեղեցիին զօրավիգն ըլլալուն՝ երբեք ձեռնտու չէ յեղափոխական կազմակերպութեան համար նոր թշնամի մը ստեղծել իրեն, իր քովը, հայ ժողովրդի ծոցի մէջ,

Նկատելով, որ մտաւորական արդի վիճակին մէջ չմասնակցելու որոշումը շատ շուտով պիտի յանգի կղերի եւ ապա եկեղեցիի դէմ պայքարին, ինչպէս կը տեսնուի կարգ մը շրջաններու տրամադրութենէն եւ այդ պայքարը շատ շուտով հակակրօնական արշաւանքի մը պիտի վերածուի,

Իսկ կրօնական-կղերական պայքարները ամէնէն աղէտալի հետեւանքներն են ունեցած ոչ միայն ուրիշ երկրներու այլեւ մեր նորագոյն պատմութեան մէջ՝ կասեցնելով մեր ժողովրդի կուլտուրական զարգացումը եւ ատելութեան ամուլ սերմեր ցանելով մեր աշխատաւոր զանգուածներու մէջ.

Հետեւաբար հայ ժողովուրդի արդի քաղաքական-տնտեսական տագնապին մէջ, այդօրինակ պայքար մը ստեղծելով, ոչ միայն պատճառ պիտի ըլլանք խանգարելու հայ ժողովրդի բնական զարգացման ընթացքը, այլեւ պիտի մթագնենք անոր գիտակցութիւնը դասակարգային կռուի մէջ, զբաղեցնելով զայն կրօնական ջլատիչ [եւ] անբարոյացնող պայքարով:

Նկատելով, որ կաթ. գահը համազգային նշանակութիւն ունի Թուրքիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Բոլգարիոյ, Ամերիկայի եւ Եգիպտոսի հայութեան [իբրեւ] աշխատաւոր դասերու քաղաքական-ազգային ներկայացուցիչը արտաքին աշխարհի առջեւ,

եւ մեր հասարակութեան արդի քաղաքականապէս անկազմակերպ կացութեան մէջ՝ մերժել օգտուիլ քաղաքական-ազգային կարեւորութիւն ունեցող ազդակ մը ինչպիսին է կաթողիկոսութիւնը, որ խելատիպ պետերու ձեռքով կրնայ օրհասական վայրկեաններու մէջ անգնահատելի [ծառայութիւններ] մատուցանել հայ աշխատաւոր դասակարգի քաղաքական-ազգային շահերուն,— քաղաքական իմաստութեան հակառակ արարք մը միայն կրնայ ըլլալ,

Ռայ. ժողովը լսելէ ետք թեր ու դէմ կարծիքները ժողովին ներկայ եղող պատգամաւորներուն, կը գտնէ որ կաթ. ընտրութիւններուն մասնակցելու խնդիրը գերազանցօրէն համաղաչնակցական եւ գործնական բնոյթ մը ունենալով, անհրաժեշտ է ծայրագոյն փափկութեամբ մօտենալ այդ խնդրին:

Ռայ. ժողովը հարկ կը տեսնէ անդրագոյն քննութեան ենթարկել այդ խնդիրը Դաշ[նակցութեան] Խորհրդին մէջ, որ միմիայն ձեռնհասութիւնը եւ հեղինակութիւնն ունի, ի բացակայութեան Ընդհ. Ժողովին, վերջնապէս լուծելու այդ խնդիրը, իբրեւ շահագրգռող բոլոր երկրներու հայ աշխատաւոր զանգուածները:

Անտոն.— Գիտակցելով այն արմատական հակասութիւնը, որ կայ կղերականութեան եւ աշխատաւոր մասսաների շահերի մէջ, ինչպէս եւ այն առանձնայատուկ պայմանները, որի մէջ պատմականօրէն դրուած է հայ իրականութիւնը,

Ի նկատի ունենալով նաեւ պատմական մոմենտի պահանջները, որ կայանում է ընդդիմադիր ոյժերի համագործակցութեան մէջ, բիւրոկրատական ռեժիմի տապալման, ազգային հասարակութեան նուաճման եւ հողային-հարկային արդի սիստեմի արմատական փոփոխութեան համար,

Ռայ. ժողովը որոշում է.—

4.- Կազմակերպութիւնը ինչպէս այդպիսին բռնում է չեզոք դիրք դէպի եկեղեցին, կաթողիկոսութիւնը եւ նպատակն է ոչ նրա դէմ կռիւ մղելը, ոչ էլ պաշտպանութիւնը:

5.- Մասնաւորապէս դէպի կաթ. ընտրութիւնները բռնելիք դիրքը թողնել Դ[աշնակցութեան] Խորհրդին, քանի որ կաթողիկոսը ընտրւում է բոլոր հայկական շրջանների կողմից:

6.- Համոզուած լինելով, որ կղեր դասի ուժեղանալը կը ստեղծէ ապագայում այնպիսի պայմաններ, երբ ժողովրդական աշխատաւոր մասսաները ստիպուած պիտի լինեն զբաղուել գերազանցօրէն բուրժուական կռուով կղերականութեան դէմ:

ՆԻՍ

Յունուարի 2-ին երեկոյեան, սովորականից կէս ժամով ուշ, 6.30-ին. բացակայ են Արեւելեան Բիւրոյի, Խմբագրութեան, Մեծ-քաղաքի եւ Ապառաժի ներկայացուցիչները, որ ժողովի[բացումից] յետոյ գալիս են եւ ենթարկւում Նախագահի նկատողութեան:

Նախագահում է Աբրոն[20]*: Քննւում է «Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի հասարակական անարխան»:*

Թադէոս.— Նկարագրում է մեր շուրջը տիրող համատարած անարխիան, գողութիւններն եւ աւազակութիւնները: Շանտաժը բաժանում է երկու մասի — ա. սովորական գողութիւններ, որոնք ամէն տեղ էլ կան եւ որոնց դէմ առնելը դժուար է եւ բ. արհաւիրքի բնաւորութիւն կրող ոճիրներ, որոնց դէմ մաքառել մենք կարող ենք եւ պարտաւոր ենք: Դա մոմենտի հարց է եւ դրանց դէմ կռուելը յեղափոխական գործ է, որ կը բարձրացնէ մեր վարկը ժողովրդի աչքում:

Ճեմիլ.— Ցոյց է տալիս, որ հասարակական ներկայ անարխիան արդիւնք է տիրող քաղաքական-տնտեսական պայմանների. մի կողմից դրան նպաստում է ռէակցիայի ուժեղանալն, իսկ միւս կողմից գործազուրկների շատանալը: Այդ չարիքն ամէնից առաջ կ'անդրադառնայ բազա կազմող աշխատաւոր ժողովրդի վրայ եւ ապա մեր կուսակցութեան՝ սպառելով մեր նիւթականը եւ այլասերելով մեր մասսան: Ուստի եւ այդ չարիքին անտարբեր չենք կարող վերաբերուել: Ես կարծում եմ, այդ գործը պէտք է թողնել իրանց քաղաքիններին, կազմակերպելով ինքնապաշտպանութիւն:

Ռոտոս.— Շանտաժի մէջ պէտք է տարբերել երկու բան. կայ շանտաժ, որ առաջ է գալիս սովածութիւնից, բայց եւ կան տեղեր, երբ աշխատող քիչ շատ ապահով բանուորն է զբաղւում դրանով եւ, յաճախ, իւր ընկերոջն է կողոպտում: Սովածութիւնից առաջացող շանտաժի դէմ մենք հնար չունենք կռուելու: Միւս տեսակի շանտաժիստները, յաճախ, այս կամ այն կուսակցութեան անունով են վարագուրւում. մեր անդամների դէմ մենք ունենք կանոնագիրք, միւս կուսակցութեան անդամների դէմ, հնար չկայ կռուելու: Այդ նպատակով ստեղծուած խմբերը բացասական հետեւանք են ունենում եւ փորձը ցոյց է տալիս, որ նոյն այդ խմբերն էլ են սկսում պարապել շանտաժով, ինչպէս օրինակ «Զեյտունայա սոտնյան»ն[44] *է: Ամենախելացի միջոցն է ստեղծել ժողովրդական ինքնապաշտպանութիւն, եւ ամէն դաշնակցական, իբրեւ քաղաքացի, պարտաւոր է մասնակցել: Այլեւ անհրաժեշտ է, որ մեր ընկերներն այդ գործում համերաշխ լինէին միւս կուսակցութեան անդամների հետ:*

Շահէն.— Ցայտնում է, որ իրանց մօտ շանտաժը երկու անգամ է խիստ ուժեղացել, Մայիսին եւ Նոյեմբերս: Ոստիկանութիւնը նրանց դէմ ուզեց խիստ միջոցներ առնել եւ փոխանակ շանտաժիստների, սկսեց յեղափոխութեան դէմ կռուելու: Այգեստանու[7] *ընկերները որոշել են ձեռնպահ մնալ, մինչեւ [այն ատեն որ]շանտաժը չի վնասում մեր գործին, հակառակ դէպքում ամենախիստ միջոցների դիմել:*

Բաբա[22]*.— Գողութիւնը հասարակութեան մէջ եղել է, կայ եւ կը լինի: Գողութեան դէմ Դաշնակցութիւնը չի կարող եւ չպիտի կռուի, որովհետեւ նա ոստիկանութիւն չէ: Ներկայ շանտաժները հետեւանք չեն միայն գործազրկութեան, սովի, այլ գլխաւորապէս վիժած յեղափոխութեան: Եւ կառավարութիւնը խրախուսում է շանտաժիստներին՝ դիտմամբ անուանելով նոցա յեղափոխական, ձգտելով վարկաբեկել ազատագրական շարժումը: Եթէ յեղափոխական կուսակցութիւնն ըմբռնում է վայրկեանի կարեւորութիւնը՝ իւր պրեստիժը բարձրացնելու համար նա զէնքը ձեռին պէտք է մասնակցի հակաշանտաժիստական կռուին: Կեանքը իւր բոլոր երեւոյթներով ցոյց է տալիս, որ եթէ գօրեղ դիմադրող ձեռք չլինի, դրանք էլ աւելի կ'աճեն եւ վարկաբեկ կ'անեն յեղափոխութիւնը: Նրանք չեն վախենում կառավարութիւնից, գոնէ թող մեզնից վախենան:*

Nomo.— *Դաշնակցութիւնն, իբրեւ քաղաքական կուսակցութիւն, պէտք է բնորոշէ իւր վերաբերմունքը դէպի բոլոր հասարակական երեւոյթները: Դրա համար պէտք է մի չափ ունենալ: Ո՞րն է այդ չափն այստեղ: Ես կարծում եմ, որ Դաշնակցութիւնը չի կարող կռուել շանտաժի բոլոր տեսակների դէմ, որովհետեւ դրանք ունեն շատ պատճառներ եւ կը վերանան միայն քաղաքական կարգերի փոփոխմամբ եւ մեր միջամտութիւնը կը լինի պալիատիւ*[34]*: Բայց նա պարտաւոր է կռուել, դիմադրել, երբ վնասուողները մեր կազմակերպուած ընկերներն են: Այդ կռիւը պէտք է լինի գլխաւորապէս թռուցիկներով, պրոպագանդով եւ տեղական այլ հնարաւոր միջոցներով:*

Սուրէն.— Վերջին ժամանակներս գիւղում բոլոր գողութիւնները համարեա կազմակերպուած բաներ են եւ ուղղուած են բացառապէս աղքատների դէմ:

Գիւղացիների գանգատներին կառավարութիւնը, որին ձեռնտու են այդ գողութիւնները, ուշք չի դարձնում: Գիւղացին մնացել է շուարած. դիմում է մեզ, մենք էլ չգիտենք ինչ անել: Իմ համոզմունքով անպայման պէտք է միջոցներ ձեռք առնել, ստեղծելով դրա համար գիւղական միլիցիա:

Ցոնան[31]*.— Ես կը լրացնեմ Բաբայի ասածը: Երբ շանտաժիստները դիմում են հարստին, նա փախչում է արտասահման: Ի՞նչ անէ խեղճ գիւղացին: Մեր Թմբուկում, օրինակ, անցած տարի 20000 ռ[ուբլի] է գողացուել: Քանի՞ կոպէկ արժէ մեր պրոպագանդը այդ գիւղերում, երբ ամենասոսկալի չարիքին չենք ուզում դիմադրել: Պէտք է կազմակերպուած ուժով դուրս գալ շանտաժի դէմ:*

Միրաք.— Գիւղերում շատ տեղեր շանտաժիստները

43.- Ընդհանրապէս Վռամեանի այս ելոյթը լաւ խմբագրուած չէ:

44.- Զեռագրին մէջ ռուսատառ «Կանաչ հարիւրեակ»:

գործում են կուսակցութիւնների անունով, օրինակ, հնչակեանների, որոնք բացարձակ կերպով միացել են գիւղի կուլակների[45] հետ։ Ի՞նչ դիրք պիտի բռնենք դէպի այդպիսիները։

Հայր-Աբրահամ.— Աւազակութեան ընդհանուր պատճառները բաւական պարզուած են։ Կ'ուզենայի ծանրանալ մի ուրիշ պատճառի վրայ, որ մեզանից է կախուած։ Մեր կուսակցութիւնը ժողովրդի ամէն ծանրոպէին օգնութեան է հասել։ Դաշնակցութիւնը չի կարող միայն դատարկ ռեզոլիւցիաներով դուրս գալ ժողովրդի առաջ, որին 15 տարի շարունակ պաշտպանել է։ Եթէ մեր գործը գիւղերում կաղում է, դրա պատճառը այն է, որ նրա ձայնը չի լսւում գիւղում։ Եթէ վերցնենք ստատիստիկական տեղեկութիւններ, կը տեսնենք, որ ոչ մի տեղ այնքան քիչ աւազակութիւն, սպանութիւն կայ, ինչքան մեր մէջ։ Մեր մեղքն այն է, որ մենք չկազմակերպեցինք ժողովուրդը թէ ընդհանուր յեղափոխական նպատակների համար եւ թէ ինքնապաշտպանութեան։ Վերջին երկու դժբախտ տարիներին միայն սկսեցինք գործել այդ ուղղութեամբ։ Բայց դա էլ հապճեպ բնաւորութիւն ունէր եւ անհնար եղաւ իսկական ժողովրդական կազմակերպութիւն առաջ բերել, եղածն էլ արուեց դրսի ուժերով։ Եւ դրանից է, որ առաջ է գալիս շանտաժը։ Գլխաւոր պատճառն է, ուրեմն, որ մեր կազմակերպութիւնը գաւառը անտէր է թողել ինքնապաշտպանութիւնից յետոյ։ Բայց ժողովրդական կազմակերպութիւնը հարկաւոր է ոչ միայն շանտաժի դէմ կռուելու համար, այլ եւ ապագայում յեղափոխական ակտեր կատարելու համար։ Այնտեղ, որտեղ չկայ մեր կազմակերպութիւնը, ուժեղացել է շանտաժը։ Թուրքերի մէջ, օրինակ, այսօր աւազակութիւն չկայ, որովհետեւ նրանք կազմակերպուած են։ Նոցա մէջ ամէն գիւղացի գիտէ, թէ ով է աւազակը, բայց ոչ մէկը մեզ չի համարձակուի երբեք ասել մի ուրիշի, որովհետեւ իսկոյն աւազակները կ'իմանան եւ կը պատժեն։ Բայց նրանք ունեն որոշ նշանակուած տեղ եւ գողի անունն իմացողը այդտեղ անոնիմ նամակ է ձգում եւ կազմակերպուած մարմինը առնում է եւ իւր անունով դատի կանչում գողին։ Մենք էլ պէտք է կազմակերպենք ժողովրդին եւ ստեղծենք ինքնապաշտպանութեան զօրեղ խմբեր։ Ուժին ուժով կարելի է միայն դիմադրել։ Իսկ քաղաքներում փորձ է եղել միջկուսակցական մարմին ստեղծել, բայց չի՛ յաջողուել։ Կարծում եմ, այստեղ էլ մենք ինքներս մեր ուժերով կարող կը լինենք կռուել կազմակերպելով ինքնապաշտպանութիւնը։ Գողը յեղափոխական չէ եւ գողին պէտք է ամենախիստ կերպով պատժել։

Մհերեան.— Մի բան պարզ է բոլորի համար, այդ այն է, որ անարխիան վնասակար է յեղափոխութեանը։ Ուրեմն, ամէն յեղափոխական կուսակցութեան պարտականութիւնն է մտածել անարխիայի դէմ կռուելու միջոցների մասին։ Եւ ես կարծում եմ, որ շատ դժուար է անվտանգ միջոցներ գտնելը։ Ոմանք առաջարկում են կուսակցութեան միջոցով այդ անել։ Ղարսի շրջանը մեզ խրատ. անարխիայի դէմ կռուելու համար այնտեղ ուղարկուած էր մի կազմակերպուած խումբ, որ կուսակցութեան վրայ նստեց 7,000 ռ. եւ ոչ մի դրական հետեւանքի չհասաւ։ Շատ դժուար է նոյնպէս այդ նպատակով ժողովրդին կազմակերպելու հարցը։

Այն շարքերը, որ մենք կը կազմակերպենք անարխիայի դէմ, վերջը իրանք կը զբաղուեն շանտաժով։ Դրա համար հարկաւոր են ուժեղ կազմակերպական մարմիններ, որ ինչպէս տեսանք զեկուցումներից, մենք չունենք։ Ինձ թւում է, թէ միակ միջոցն է ինքնապաշտպանութիւն կազմակերպելը, որ նոյնպէս չափազանց դժուար եւ վտանգաւոր բան է, որ յետոյ կարող է մեր հակառակորդ զանազան մարդկանց միջոցով մեր դէմ ուղղուել։

Զգիտեմ, ինչ հնար կարելի է ցոյց տալ. ես ուղղակի միջոց չեմ գտնում։

Նաւահանգստի ներկայացուցիչ Մէ նոյնպէս կողմնակից է ինքնապաշտպանութեան, որ հնարաւորութիւն կը տայ ժողովրդին՝ իրան՝ մաքառելու։

Շանտաժի դէմ առանձին մարմին ստեղծելը շատ վտանգաւոր բան է։ Պէտք է կռիւը ընդհանուր, մասսայական դարձնել։

Ջաւախեան.— Ըստ երեւոյթին, մեծամասնութեան տրամադրութիւնն այն է, որ անարխիայի դէմ ինքը հասարակութիւնը պէտք է կռուի՝ կազմակերպելով ինքնապաշտպանութիւն։ Բայց որովհետեւ ժողովուրդը անկարող է այդ անել, Դաշնակցութիւնը ինքը պիտի ինիցիատոր[46] հանդիսանայ։ Բայց ես հէնց այդ միջոցի դէմ պիտի խօսեմ։ Այդ միջոցը շատ լաւ է, իբրեւ մի թէորետիկական միջոց, իսկ երբ անցնենք իրականութեան, կը տեսնենք, որ դա շատ դժուար է։ Ես սկսում եմ երեւակայել, թէ ինչպէս պիտի իրագործենք Ռայ. ժողովի վճիռը, տեսնում եմ, որ դա իսկապէս դաշնակցական-կուսակցական մի գործ կը լինի։ Գուցէ հասարակութիւնից խրախուսանք, նոյնիսկ դրամական աջակցութիւն ստանանք, բայց ձեռնարկը կը դառնայ կուսակցական։ Եւ դա կը լինի այնպիսի մի դրութիւն, որպիսին մենք ունէինք մի քանի տարի առաջ։ Եթէ մենք այդպիսի մի վճիռ անենք, այն ժամանակ մեր զինուորական ոյժը կը վերստեղծուի, թէեւ ուրիշ անուան տակ. մանաւանդ որ մեր զինուորական ոյժերի մէջ նախկին հմայքը վերականգնելու տրամադրութիւն կայ։ Իսկ թէ ինչ հետեւանքներ կը ստացուեն դրանից — պարզ է, մենք ուզենանք-չուզենանք պէտք է հանդիսանանք մի կողմից ոստիկանութեան ագենտը, միւս կողմից բուրժուազիայի։ Յիշեցէք ինչ տպաւորութիւն արաւ Բագւում «Զեյտոնայա սոտնյան»[44], որի մէջ եղել են եւ դաշնակցականներ եւ որ, թէկուզ հակառակ մեր կամքին, մեզ էր վերագրւում։ Բացի այդ՝ եթէ մենք այդպիսի որոշում անենք, մեր ամենագործօն ոյժերը կը կլանուեն դրանով եւ ամենալաւ դէպքում կը դառնանք շանտաժի դէմ կռուող մի կուսակցութիւն եւ ամենավատ դէպքում՝ ոստիկանութեան խոնարհ ծառայ։ Միւս կողմից էլ այդ կռիւը հէնց իրանց կռուողներին առիթ կը տայ շանտաժիստ դառնալու։

Ի նկատի ունենալով այս բոլորը, ես կը ցանկանայի, որ Ռայ. ժողովը մի կտրական վճիռ դուրս բերէր, թէ շանտաժի դէմ կռուելը իւր կուսակցական գործունէութեան սահմանից դուրս է, ի բաց առեալ այն դէպքերը, երբ այդ շանտաժները վնասում են կազմակերպութեան, երբ շանտաժը կատարւում է Դաշնակցութեան անունից, դաշնակցականի մասնակցութեամբ եւ կամ դաշնակցականի դէմ, իբրեւ այդպիսին։

Վահաք[27].— Խօսում է Քարում եւ Ջրաբերդում տեղի ունեցած շանտաժների մասին եւ յայտնում, որ այնտեղի անարխիան նպաստում է հայ-թուրքական յարաբերութիւնների լարուելուն, որովհետեւ հայ շանտաժիստները ընդհանրապէս յարձակւում են թուրք գիւղերի վրայ, որ համեմատաբար աւելի հեշտ է։ Ջրաբերդի սահմաններում մօտ 17000 տաճկահայ կայ, որոնց են վերագրւում աւազակութիւնները եւ դրանով նպաստում են գաղթականների վարկաբեկման։ Եթէ այդ աւազակութիւնների դէմը չառնուի, կարող է շատ վատ հետեւանքներ ունենալ եւ նոյնիսկ կազմակերպութեան դէմ ուղղուիլ։ Այդտեղ մենք պէտք է կազմակերպուենք աւազակութեան դէմ. ժողովրդին թողնել չի կարելի։ Դրա համար իւրաքանչիւր շրջանում պէտք է ունենալ փորձուած, ազնիւ զինուորական ոյժ եւ ինտելիգենտ պրոպագանդիստ, որոնք եւ կը ղեկավարեն այդ գործը։ Այդ բոլորի վրայ պէտք է լինի կենտրոնական կոնտրոլ։ Բացի այդ մարմինները պէտք է շուտ-շուտ փոխել, որ չփչանան։

Արտեմ.— Ցայտնում է, որ շանտաժներ առաջ բերող պատճառներից մէկն էլ անկանոն առաջ տարուող գործադուլներն են։ Այդ ասպարէզում շատ է վնասում կովկասեան Ս. Դ.-իան իւր տնտեսական տեռորներով։ Գտնում է, որ միջկուսակցական բիւրոները անզօր են շանտաժի դէմ կռուելու եւ միանում է ընկ. Ջաւախեանի յայտնած մտքերին։

Դժոխք.— Կողմնակից է անարխիայի դէմ կռուելու եւ առաջարկում է ստեղծել մի մարմին ակտիւ գործունէութեան ընդունակ յեղափոխական կուսակցութիւններից, որը կը մշակէ կռուելու միջոցները։ Իսկ այդ մարմնի անիրականացման դէպքում պէտք է վարուել ընկ. Ջաւախեանի առաջարկած միջոցով։

Անտոն[25].— Մի շարք վիճակագրական տեղեկութիւններով նկարագրում է անցած 2-3 ամսում տեղի ունեցած շանտաժները։ Եթէ Դ.-թիւնը պաշտպանում է ժողովրդի բոլոր շահերը, նա պիտի կռուէ եւ շանտաժի դէմ։ Զպէտք է մեր ունեցած ազդեցութիւնը թողնել ուրիշներին։ Մեր իբր թէ սոցիալիստական ինտելեկենցիան իր մաքուր յեղափոխական վահանը չարատաւորելու համար չի ուզում այդ գործը յանձն առնել (հեգնանքով)։

Եթէ այդպէս է, այն ժամանակ ես կ'առաջարկեմ հետեւեալ ֆորմուլան.— որովհետեւ անարխիան, ինչպէս եւ ամէն հասարակական բացասական երեւոյթ, հետեւանք է ներկայ կարգերի եւ կը վերանար միայն սոցիալիստական կարգերում, պէտք է գիւղացիներին առաջարկել իրականացնել սոցիալիզմը (ծիծաղ, աղմուկ)։

Հայր-Աբ[րահամ].— Ներկայ անարխիան անկասկած արդիւնք է տիրող ներկայ կարգերի։ Բայց այդ անարխիայի դէմ կռուելը թողնել բուրժուական տարրերին, վտանգաւոր է։ Գիւղը չի կարելի համեմատել քաղաքների հետ։ Գիւղում գերիշխում է Դաշնակցութիւնը, որ իւր գիւղացիական միութիւններով, պէտք է կռուէ շանտաժի դէմ։ Կռուի ամենաուժեղ զէնքն է բոյկոտը գողերի դէմ, որ շատ է ազդում։ Սխալ է այն կարծիքը, որ թուրքերը կազմակերպուած են. նոցա կազմակերպութիւնները պաշտօնապէս արդէն լուծուած են։ Ես առաջարկում եմ՝ քաղաքներում եւ գիւղերի մէջ շանտաժի դէմ կռուել բանուորական եւ գիւղացիական միութիւններով եւ այն էլ այն չափով, ինչքան դա վտանգաւոր է աշխատաւորութեան։ Եւ կռիւը պէտք է առաջ տանել կրթիչ միջոցներով։

Կարդացւում է բանաձեւեր՝

1) Հասարակական ներկայ անարխիան արդիւնք է տիրող տնտեսական եւ քաղաքական պայմանների եւ կը վերացուի վերջնականապէս միմիայն այդ պայմանների բարեփոխմամբ 2) անարխիան նիւթապէս վտանգում է մեր աշխատաւոր մասսան 3) այլասերում է աշխատաւոր բանակը եւ ուժ է տալիս ռեակցիային 4) անհատ դաշնակցականները կամ անհատներ Դ[աշնակցութեան] անունից մասնակցելով շանտաժին, դեմորալիզացիա են առաջ բերում կուսակցական շարքերում եւ վարկաբեկ են անում մեր կուսակցութիւնը 5) շանտաժը ուղղուած լինելով դ[աշնակցակա]ն անհատի դէմ իբրեւ կուսակցական անդամի վտանգում է կուսակցութեան կանոնաւոր զարգացումը։

Այդ բոլորը աչքի առաջ ունենալով Ռ. Ժ.ը որոշեց Դ-ը ակտիւ կռիւ է մղում անարխիայի դէմ 1) գիւղերում-գիւղացիական միութիւնների միջոցով ամբողջ աշխատաւոր գիւղացիութիւնը պաշտպանելու համար։ 2) իսկ քաղաքներում կռւում է ա) երբ վտանգի է ենթարկւում մեր կազմակերպուած մասսան իբրեւ ամբողջութիւն բ) երբ շանտաժը կատարւում է Դաշ.-եան անունից կամ դաշ[նակ]ցական ան-

45.- Հարուստ, շահագործող գիւղացիների։
46.- Նախաձեռնող։

հատների ձեռքով գ) երբ շանտաժը ուղղուած է դաշ[նակ]-ցական անհատի դէմ իբրեւ կուսակցութեան անդամի»:

Անտոն (Ս. Ջաւ.).— Տալիս է զեկուցում Բիւրոյի կողմից:

Պէտք է յիշեցնել, որ Բիւրոն իբր այդպիսին, շատ քիչ ֆունկցիաներ ունի, դրա համար նրա գործունէութիւնը մեծ չէ եւ կազմում է ամփոփումը ընդհանուր գործի:

Մեր առաջ դրած ամենամեծ գործն էր պատուով դուրս գալ կուսակցութեան կրիզիսներից, աջից եւ ձախից սպառնացող վտանգից: Եւ պէտք է ասել, որ այդ յաջողուեց շնորհիւ երկու կողմից արուած զիջումների:

Ի պատիւ մեր ընկերների պէտք է ասել, որ մենք կարողացանք աւելի հեշտութեամբ լուծել այդ հարցը քան միւս կուսակցութիւնները: Եւ դա մեր ամենամեծ յաջողութիւններից մէկն է: Ծանր խնդիր էր եւ անցեալ ինքնապաշտպանութիւնից առաջ եկած անարխիայի դէմ կռուելը: Ամէն երկիր, երբ ընկնում է զինուորական դրութեան մէջ, կամայ-ակամայ ընկնում է ռէակցիայի մէջ: Մեզ դա կը սպառնայ շնորհիւ միհրանականութեան եւ հին զինուորներից ոմանց գործի: Բայց մեզ յաջողուեց մասամբ պրոպագանդի, մասամբ էլ դժբախտաբար ոյժի միջոցով առաջն առնել: Նոյնը պէտք է ասել եւ անջատական հոսանքի մասին, որ մասամբ գաղափարական տարբերութեան, մասամբ էլ անձնական բան էր[48]:

Մեզ թւում է, որ մեր տարած այս յաղթութիւնները մեզ չեն կարող հանգստացնել, որովհետեւ չի կարելի ապահով լինել, թէ անցած հոսանքները չեն կարող չվերանորոգուել: Մենք պէտք է անցեալն ի նկատի առնենք եւ աշխատենք գալիք անախորժութիւնների առաջն առնել:

Բիւրոյին էր վերապահուած հրատարակութիւնների պատասխանատուութիւնը, որի մասին, գուցէ, առանձին զեկուցում լինի: Լոյս է տեսել մօտ 50 հրատարակութիւն, որոնք որքան էլ թերի լինեն, կարող կը լինեն խոշոր պլիւս աւելացնել գիտակցութեան աճելու համար:

Մի խոշոր հարց էլ համերաշխութեան հարցն էր: Մենք միշտ էլ ձգտել ենք դրան, բայց չէր յաջողւում. շնորհիւ մեր բռնած տակտիկայի եւ, ի հարկէ, նրա, որ մենք աւելի սկսեցինք շեշտել այն ընդհանուր կէտերի վրայ, որ միացնում է բոլոր աշխատաւորներին,— մեր հարեւաններն արդէն եկան գիտակցութեան: Սրան մեծապէս նպաստում էր եւ ռուսաց յեղափոխութիւնը եւ այն, որ մենք ոյժ ցոյց տուինք ինքնապաշտպանութեան ժամանակ: Այժմ ապահովաբար կարող ենք ասել, որ այդ վտանգները գոնէ մօտիկ ապագայում վերացած են: Մեր ընկերները կազմակերպում են նրանց, համերաշխ գործում, նրանք մեր ընկերներին կանչում են պրոպագանդայի: Ղափանի գործադուլը, օրինակ, միասին տարին: Այդ սերմերն անպայման կը տան առատ պտուղ եթէ այդ ուղղութեամբ շարունակենք: Անջատողականների առթիւ Ս. Ռ.-ների հետ առաջ եկած կոնֆլիկտից յետոյ մենք սկսեցինք մեր ուղղութեամբ կազմակերպութիւններ առաջ բերել եւ տեղ-տեղ մեր շարքերը մտցրինք ե՛ռուսեր ե՛ վրացիներ:

Մի երկու խօսք էլ Կովկասից դուրս եղած գործունէութեան մասին: Արեւելեան Բիւրոյի միջոցով կատարւում է եւ Երկրի փոխադրութեան գործը: Այդ կողմից էլ կազմակերպութիւնը բաւական բաւական է այս տարի. զէնքերը շատ քիչ են բռնուել — մի անգամ միայն: Ընկերները թուով շատացել են, գլխաւորապէս Վասպուրականի շրջանում եւ Տարօնում: Հիմք է դրուում եւ Կարինի կողմերում: Առանձին ջանք թափուեց այս տարի Երկրում ազգային համերաշխութեան գաղափարը շեշտելու համար: Հասարակական մթնոլորտն էլ այս կողմից շատ նպաստաւոր է: Ռուս եւ պարսկական շարժումների ազդեցութեան տակ մեր ընկերներին յաջողուեց թուրք յեղափ[ոխականների] կորիզը դնել Երկրում, եւ նրանց կազմած ծրագրի ¾ մասը վերցրած է մեր ծրագրից եւ մեր ընկերների ցուցմամբ: Այդտեղ մի բան միայն լաւ չի շեշտուած. ապակենտրոնական սկզբունքը եւ ֆեդերատիւ կազմը: Այդ էլ արուած է տակտիկական նկատումներով: Արդէն կազմուած են թուրքերի յեղափոխական խմբակներ, որոնք մօտ ապագայում կը դիմեն ակտիւ քայլի:

Չպէտք է ծածկել, որ Պարսկաստանում մեր ընկերների գործունէութիւնը գոնէ փոքր չափով ղեկավարհանդիսացաւ այնտեղի շարժման: Պարսիկ յեղափոխականները միշտ դիմումներ էին անում մեր ընկերների խորհրդին: Եւ մեր ընկերների շնորհիւ է անշուշտ, որ հողային շարժումը Պարսկաստանում իւր ներկայ ձեւն է ստանում: Մեր ընկերներից մէկը յատուկ այդ նպատակով գնացել է Պարսկաստան[48ա]: Եթէ խոշոր բան էլ չլինի, մեր դիրքով կ'ամրապնդենք Դաշնակցութեան եւ պարսիկ յեղափոխական-յառաջադէմ տարրերի մէջ համերաշխութիւնը:

Վերջապէս մի բան եւս: Ընդհանուր Ժողովը պարտականութիւն էր դրել Բիւրոյի վրայ հսկել հաշիւների վրայ: Այդ ուղղութեամբ արուած են որոշ քայլեր, ինչպէս Քարում, եւ հաշուապահի միջոցով կանոնաւորել հաշիւները:

Եթէ յիշեցնեմ ընկերներին Լահէյ գնալը, որ կազմակերպուել էր գլխաւորապէս այստեղ, վերջացրած կը լինեմ խօսքս: Ճիշտ է, մի քիչ առաջ ընդունած բանաձեւը ժխտում է դիպլոմատիական դիմումները, բայց եւ այնպէս, որովհետեւ Ընդհ. Ժողովը որոշել էր, որ կարեւոր մոմենտներին կարելի է դիմել, եւ այդ ունի իր օգուտը՝ ծառայելով իբրեւ յիշեցուցիչ պարագայ եւրոպական պետութիւնների համար, մենք դիմում արինք, թէեւ երբեք այն համոզումը չենք ունեցել, թէ դա դրական օգուտներ կարող է ունենալ:

Բ. Դումայի մասին տեղեկութիւն ունէք թերթից. իսկ ա՛յս դումայի ընտրութեան մասնակցելու մասին հաստատ որոշում չկայացնել. խորհրդաժողովում, ձայներն այդ առթիւ հաւասար կերպով բաժանուեցին. բանուորական շրջանները դէմ էին մասնակցելուն, գաւառները կողմնակից են մասնակցելու. Բիւրոյին մնում էր որոշել եւ մեզ թւում է, որ այդ ամենախելացի միջոցն էր եւ մեր ընկերոջ ներկայութիւնը Դումայում մի պլիւս է:

Զեկուցումից յետոյ լինում են մի շարք հարցեր:

Ապա կարդում է ընկ. Մ. հերը Բիւրոյի հաշիւը, որից երեւում է, որ կենտրոնական կոմիտէներից մեծ մասը չի ուղարկել Բիւրոյին փող եւ կանոնաւոր հաշիւներ: Այլեւ պարզւում է, որ Բիւրոյին դրամական գործը շատ վատ է: Կասսայում մնում է 3000 ռ.

Ընդհանրապէս հաշիւների գործը շատ անմխիթար դրութեան մէջ է:

Նախագահ
Քարտուղար՝ ՍԻԳ

ՆԻՍ

Յունուար 3-ին

Ժողովը բացւում է ժ. 11-ին: Նախագահում է Բաբան:

Օրակարգ.—

Անտոն.—Ընդհ. Ժողովը Արեւելեան Ռայոնի համար նախագծել է 80,000 ռ. մուտք, որից 40,000ը պիտի ծախսուէր ընդ. կազմակերպչական գործերի վրայ: Մինչդեռ, եթէ հաշուական կոմիսսիան իր զեկուցումը տար, դուք կը տեսնէիք որ այս տարի մենք ընդամէնը ստացել ենք 15,000 ռ.: Մեր մուտքի եւ ելքի մէջ չի եղել ներդաշնակութիւն. չպիտի անուեն այնպիսի ծախսեր, որոնք եկամտից մեծ են: Եթէ քննենք բոլոր ծախսերը, կը նկատենք, որ նրանցից մեծ մասը անհրաժեշտ չէին: Մեծ է եղել պրոպագանդայի վրայ արուած ծախսերը. շրջաններ եղել են, որ ունեցել են 5 կամ աւելի ազատ ընկերներ[49] եւ ապրել են կազմակերպութեան ծախսերով, մինչդեռ նոյն այդ շրջանը իր եկամուտները ի նկատի ունենալով մի ազատ ընկեր անգամ հազիւ կարող է պահել: 10 տարի առաջ ամբողջ Կովկասում Դ-ը մի ազատ ընկեր չի ունեցել, չնայելով ի հարկէ գործը այնքան մեծ չէր, բայց եւ յաջողութեամբ էր տանում գործը, որովհետեւ այն ժամանակ ամէն բան անուում էր մտածուած եւ ներդաշնակ, կանոնաւոր կերպով կազմակերպում էինք երեկոյթներ, հաւաքւում էին անդամավճարներ եւ շատ աւելի նորմալ կերպով էր ընթանում կազմակերպչական գործը: Այժմ ընդհանրական մենք տեսնում [ենք] ահագին ծախսեր, առանց մուտք ունենալու: Ուրեմն պէտք է մտցնենք թէ դրամական եւ թէ զինուորական հաշիւների մէջ ներդաշնակութիւն: Պէտք է խմբերը կանոնաւորենք, որոնք միայն անունով են մտել կազմակերպութեան մէջ, որովհետեւ այն խմբերը, որոնք չեն հասկանում ընդհ. Դ-եան պահանջները, պարզ է, որ անունով միայն դաշնակցական են: Նոյնպէս պէտք է ուշադրութիւն դարձնենք քաղաքական խմբերի վրայ, այլապէս մենք չենք կարող կազմակերպութիւնը ապահովել եւ 10 կ. կ.ի տեղ, կ'ունենանք 3 կ. կ.: Կողմնակի, արտակարգ միջոցների չպէտք է դիմենք, որովհետեւ դրանք փչացնում են մեզ, մանաւանդ որ Ընդհ. Ժողովը կտրական կերպով մերժել է այդ. մտածենք ուրեմն նորմալ միջոցների մասին, որոնք են անդամավճարներ, կամաւոր հանգանակութիւններ եւ քաղաքական խմբերից ստացած հասոյթները:

Անելեան.— Արտակարգ միջոցներով փող ձեռք բերելը մեր խաւերի մէջ մտցրել են վատ վերաբերմունք դէպի այն ամէնը, ինչ որ կազմակերպական է. այդ պիսիները աշխատում են, որքան կարելի է, կազմակերպութիւնից պոկեն: Օր. մեր գործիչներից շատերը, որոնք ապահոված են, ճանապարհածախսի, զուարճութիւնների փողը կազմակերպութիւնից են վերցնում, չնայելով կարող էին իրենց միջոցներից վճարել: Անում են շատ շռայլ ծախսեր: II կլասով են ճանապարհւում փոխանակ III կլասի, կան եւ այնպիսիները, որոնք ճանապարհորդում են I կլասով: Այս բոլորի վրայ աւելացրէք եւ այն որ հաշիւները շատ անկանոն են պահւում:

Աբրամովիչ[20].— Մեր մօտ հաշիւները կանոնաւոր են, բայց ուշացնում ենք որովհետեւ շրջաններից ուշ են ներկայացնում: Մեր խմբերից ոչ մի եկամուտ չունենք: Օր[ինակ] մենք կազմակերպել ենք մօտ 10,000 բանուորներ, որոնք միշտ մեզ հետ են, բայց դրամ չեն տալիս մեզ:

Մեր կուսակցական ներքին կեանքում շատ դէպքեր են պատահել, որոնք կարող էին ջլատել մեր ուժերը, օր[ինակ] մեր անջատական շարժումը, բայց այդ բանաւորութիւնը միշտ մեզ հետ է եղել: Կողմնակի եկամուտներից ունեցել ենք 60,000 ռ. մուտք (երեկոյթ, կողմնակի մարդկանցից եւ այլն):

Բ[իւրօ].— Այդ 60,000 ռ., որի մասին յիշեց ընկ. Աբրամովիչը, նորմալ հասոյթ չէ. այն հանգանակութիւն-

48.- Կ'ակնարկէ «Կովկասեան Նախագծի» որդեգրման առթիւ Դաշնակցութենէն բաժնուած միհրանականներու եւ ձախակողմեան անջատականներու, որոնց զգալի մասը հետզհետէ վերադարձաւ կուսակցութեան շարքերը:

48ա.- Ակնարկութիւն նոյն այդ օրերուն Ռոստոմի առաքելութեան դէպի Թեհրան:

49.- «Ազատ ընկեր» անունը կը տրուէր գործիչ ընկերներուն:

ները, որ անում էինք մինչեւ հիմա, այժմ չպիտի անենք, որովհետեւ նրանք խանգարում են մեր գործին։ Բացւում իսկապէս մենք չունենք կազմակերպութիւն, այլ դաշնակցական ամբոխ։ Այդ ամբոխը չէ զգում որոշ պարտականութիւններ, այլ միմիայն իրաւունքներ։ ոչ մի զոհաբերութիւն չէ անում կազմակերպութեան համար։ Շատերը մտել են կազմակերպութեան մէջ պաշտօններ, տեղեր գրաւելու համար։ այս երեւոյթը տեղի ունի գրեթէ ամէն տեղ։ եթէ մեր դաշնակցական ամբոխը օպերացիայի ենթարկենք, եթէ նրանց կանոնաւոր կերպով կազմակերպենք, 10 անգամ աւելի պակաս կը լինի մեր դաշն։ խմբերի թիւը։ Եւ պէտք է անպատճառ այդպէս անել եթէ ուզում ենք ունենալ կուսակցական անհատներ, որոնք կանոնաւոր կերպով վճարեն իրենց տուրքը։

Մեր ընդհ. մուտքի եւ ելքի մասին գաղտփար կազմելու եւ կուսակցութեան նիւթական դրութիւնը բարւոքելու համար, նախագահը առաջարկեց պատգամաւորները կարդան շրջանների մուտքի եւ ելքի հաշուեկշիռը ընդհ. թուերով։

Աբրամովիչ.— Շեշտում է, որ մենք չափազանց անբարեխիղճ ենք վերաբերւում դէպի կազմակերպութեան փողերը։ պէտք է այստեղ եւեթ որոշել, որ գործիչները անպատճառ ճանապարհորդեն III կլասով։ Ինչպէս տեսանք ընդամէնը մուտք ենք ունեցել այս տարի 17,000 ռ. դա այնպիսի մի գումար է, որ նոյնիսկ ծիծաղելի է։ Պիտի մտածենք բարելաւել մեր եկամուտների խնդիրը։ ուշադրութիւն պիտի դարձնենք։ կոոպերացիաները պիտի լինեն կուսակցական։ նոյնպէս ոյժ պիտի տանք երեկոյթներին, ներկայացումներին։ մի կողմ պիտի թողնենք բուրժուաներին, որոնցից ոչինչ չի կարելի ստանալ եւ այս բոլորից յետոյ պիտի աշխատենք ծախսերը սահմանափակել։

Ձեմիլ.— Շեշտում է, որ հաշուետուութիւնը բոլորովին բացակայում է մեզ մօտ։ որպէս աղբիւր եկամտի առաջարկում է նաեւ՝ կազմակերպել քաղաքական խմբեր մանր վաճառականներից եւ արհեստաւորներից եւ II դիմել արտակարգ ակտերի։

Կռոն[50].*— Շեշտում է այն ցաւալի իրողութիւնը, որ մենք ինտելիգենտներս ոչինչ չենք ձգում կուսակցութեան կասսան, մինչդեռ մենք պարտաւոր ենք այդ անել օրինակ տալով միւսներին։*

Մհերեան.— Առաջարկում է անդամակցական վճարների վերաբերմամբ լինել խստապահանջ եւ բծախնդիր։ չնայելով, որ որոշուած է որ պէտք է ծախսել եկամտների 50%-ը, բայց այդպէս չէ իրօք։ Միեւնոյն շրջանի Դ-եան խումբը, ենթակոմիտէն, կոմիտէն եւայլն ծախսում են առանձին առանձին իրենց 50%-ը, որը իսկապէս ամբողջ շրջանի եկամտի ոչ թէ 50%-ը է այլ 80%։ Ուշադրութիւն պիտի դարձնենք նաեւ հանգանակութեան վրայ։ Կոոպերացիաները լաւ են անշուշտ եկամտի տեսակէտից, բայց յոյս դնել դրանց վրայ չենք կարող։

Բաբան առաջարկում է ամենամեծ ուշադրութիւնը դարձնել կազմակերպութեան շարքերի վրայ։ խմբեր կազմելիս չպիտի շեղուենք մեր ծրագրից, պէտք է նկատի ունենանք միմիայն մեր բազան կազմող աշխատաւորութեան տարրը։ որպէսզի նախկին հասոյթը ունենանք չպիտի խտացնենք մեր շարքերը։ Բոլորս նկատում ենք թէ ինչպէս ինտելիգենցիայի թիւը պակասել է մեզ մօտ։ այս հանգամանքը պէտք է մեր հոգացողութեան առարկան դառնայ։

Նախագահը առաջարկում է կազմել մի կոմիսիա, որը ռեզոլիւցիա պիտի մշակէ մեր նիւթական դրութեան բարւոքման եւ ներկայացնի ժողովին։ Ընտրուեցին Աբրամովիչ, Մհերեան, Բաբա եւ Համլէթ։

Անտոն.— Մեր կազմակերպութեան թուլութիւնը առաջ է եկել ոչ թէ նրանից, որ մենք չենք [յարգում] սկզբունքը, այլ մեր տակտիկայի թուլութիւնից։ մի տակտիկա, որը չէ համապատասխանում երկրի դրութեան։ Զկայ մի կուսակցութիւն, որը հիմնուած լինի բացառապէս բանուորներից։ քաղաքական խմբերը կազմուած են ինտելիգենտներից եւ միւս բոլոր խաւերից։ Այդպէս է Եւրոպայում, ուր ի նկատի է առնւում ոչ թէ այն, որ այսինչը կօշկակար է, վաճառական է, արհեստաւոր՝ այլ այն թէ ընդունում է կուսակցութեան ծրագիրը թէ չէ։ Մենք մեր ուշադրութիւնը պիտի կենտրոնացնենք այն տեսակի խնդիրների վրայ, որոնք հասունացած են եւ կարող են մօտիկ ապագայում գործադրուել։ մի կողմ թողնենք սկզբունքները, որովհետեւ շատ-շատերը չեն հասկանում։ պիտի ի նկատի ունենանք մեր կուսակցութեան պլատֆորման, որը թելադրում է մեզ կռիւ մղել սահմանադրական կարգերի համար։

Այնուհետեւ շեշտում է, որ մեր քաղաքական խմբերը պիտի կազմենք անխտիր բոլոր խաւերից, առանց ի նկատի ունենալու թէ մէկը կապիտալիստ է, վաճառական է թէ արհեստաւոր, որովհետեւ ներկայ քաղաքական կարգերում, բոլորն էլ շահագործւում են։

Մհերեան.— Մենք տարբերւում ենք Ս. Դ. եւ Ս. Ռ.-ներից նրանով, որ մենք կազմակերպում ենք աշխատաւորներին թէ տնտես[ական] եւ թէ քաղաքական հողի վրայ։ մինչդեռ առաջինները կազմակերպում են նախ տնտեսական հողի վրայ եւ ապա [քաղաքական] կամ նրանցից գիտակիցներին։ Մենք մեր գործելակերպով նմանում ենք բելգիական սոցիալիստներին, որոնք նոյնպէս կազմակերպում են աշխատաւորներին թէ տնտես. եւ թէ քաղաքական հողի վրայ։ Ցենուելով աշխատաւորութեան՝ չպիտի ժխտենք սակայն այն տարրերին, որոնք իրենց համոզմունքով սոցիալիստ են, բայց իրենց տնտեսական դրութեամբ՝ ոչ սոցիալիստ։ Քաղաք. խմբերը չեն կարող ունենալ ուրոյն տնտեսական շահեր, նրանց տնտեսական շահերը պիտի լինեն Դաշնակցութեան կասսայի մէջ։

Կոչ.— Խմբերը, որ մենք կազմում ենք, սկզբում չեն կարող կոչուել կուսակցական մինչեւ այն ժամանակ, երբ նրանք կը հասկանան մեր կուսակցութեան ծրագիրն, կ'ընդունին աշխարհահայեացքը եւ կը գործեն գիտակցօրէն։

Նիստը փակուեց 9-ին։

ՆԻՍՏ

Յունուարի 3-ին։

բացւում է երեկ. ժամը 6.30-ին։

Նախագահ Բաբա։

Ուշանում են Բիւրոյի, խմբագրութեան, Ոսկանապատի 3, Ապառաժի ներկ[այացուցիչները]։

Սիգը[16] *կարդաց III նիստի արձանագրութիւնը, ժողովը հաստատեց այն։ Կոմիսիայի կողմից, որը ընտրուած էր Արեւելեան ռայոնների շրջանների հաշիւների քննութեան առթիւ մի ռեզոլիւցիա մշակելու, ընկեր Յովնանը կարդաց հետեւեալը։*

«Ռայ. ժողովը քննութեան առնելով շրջանների ներկայացուցած հաշիւները եւ գտնելով խոշոր անկանոնութիւն ու թերութիւններ հաշուետուութեան եղանակի, տուրքի գանձման եւ շռայլութիւն դրամների գործադրութեան մէջ, որոշեց՝

1) Որպէս հիմք դաշնակցական հասոյթների, ընդունել անդամակցական տուրքը ոչ պակաս քան տարեկան եկամտի 2% եւ պարտաւորական համարել անխտիր բոլոր դաշնակցականների համար, լինեն նրանք մարմինների մէջ, կամ մարմիններից դուրս (14 *ձայն*)։

2) Բացի անդամակցական տուրքը՝ որոշուեց դ[աշնակցականների] ջանքերով կազմակերպել երեկոյթներ, վիճակախաղեր, ներկայացումներ եւ այլն եւ նրանցից գոյացած արդիւնքը յատկացնել կազմակերպութեանը։

3) Ստեղծել աշխատաւորական ձեռնարկներ կոոպերատիւ հիմունքներով եւ արդիւնքի որոշ մասը յատկացնել կազմակերպութեանը (15 *ձայն*)։

Գալով դրամների գործադրութեանը, Ռայ. ժողովը որոշեց.

ա) Մարմինները պարտական են 6 ամիսը մի անգամ փոստային հաշիւները ուղարկել Բիւրոյին առ 1-ն Դեկտ. եւ 1-ն Յունուարի (13 *ձայն*)։

բ) Իւրաքանչիւր Կ. Կոմիտէութեան շրջան եւ (անկախ կոմիտէութիւն) կարող է յատկացնել իւր տեղական կարիքներին ամբողջ շրջանի հասոյթների առաւելն 50%-ը (գրել միայն %) (15 *ձայն*)։

գ) Բոլոր մարմինները պարտական են minimum-ի հասցընել իրանց ծախսերը։ Ռ. ժողովը մասնաւորապէս հրահանգում է իր բոլոր ընկերներին լինել սակաւապէտ եւ դէպի կազմակերպութեան դրամները վերաբերուել ժլատօրէն (15 *ձայն*)։

դ) Մարմինները պարտաւոր են կազմակերպութեան հասանելիք 50%[51] կանոնաւոր կերպով տարեկան 2 անգամ հասցնել Բիւրոյին (14 *ձայն*)։

ե) Բիւրոն պարտական է տարեկան 2 անգամ կոնտրոլի ենթարկել բոլոր մարմինների հաշիւները եւ հաշուական գործը դնել սիստեմի տակ (14 *ձայն*)։

Այն մարմինները, որոնք ճշտութեամբ չեն կատարել վերոյիշեալ որոշումները, կը զրկուեն ձայնի իրաւունքից Ռ. ժողովում (13 *ձայն*)։

Ընկ. Անտոնի բանաձեւը։

«Ռ. ժողովը հիմնուելով այն սկզբունքի վրայ, որ յեղափոխական գործը գերազանցօրէն հիմնուած է զոհաբերութեան վրայ, որոշում է որ կազմակերպութեան միջոցներով բոլոր ապրողները առանց բացառութեան, բացի վտանգի ենթարկուելուց պէտք է զոհաբերութիւն անեն եւ իրենց առօրեայ կեանքում։ նիւթական ապահովութեան տեսակէտից կազմակերպութիւնից ստացած օժանդակութիւնը լինելու է անպայման պակաս գործիչի մասնաւոր կեանքում ունեցած եկամտից։ Պակասի (նիւթական զոհողութեան) չափը պիտի պրոկրեսիւ կերպով բարձրանայ ըստ ամէն մէկի նիւթական դիրքի (13 *ձայնով*)։

«2% տուրքի վերաբերմամբ Ռայոնական ժողովը գտնելով։

1. որ մինչեւ որոշ քանակութեան եկամուտ ստացողները դժուարանում են առհասարակ տուրք վճարել եւ գանձումն այդպիսով տուժում է։

2. որ անարդարացի է բոլորից միեւնոյն քանակութեամբ տուրք գանձելը, որոշուեց առաջարկել առաջիկայ Ընդհ. Ժողովին փոխել տուրքը հետեւեալ կերպով։ ա) սահմանել եկամտի minimum, որից առհասարակ տուրք չի առնւում։ բ) այդ minimum-ից բարձր եկամուտ ստացողների համար սահմանւում է 1% տուրք, որը պրոկրեսիւ բարձրանում է ըստ եկամուտի չափի» (12 *ձայն*)։

Ընկ. Բաբայի խնդրանօք ընկ. Աբրոն շարունակում է նախագահել։

Ընկ. Բաբա առաջարկեց հետեւեալ յաւելումը։

«Ռայ. ժողովը գտնում է, որ կուսակցական եկամուտների յաւելումը ամենաէական աղբիւրն է։ [Նոյնպէս] կուսակցութեան պրոպագանդայի զօրացումը, անդամների մէջ գիտակցութիւն զօրեղացնելը եւ անդամների թիւը բազմակատկելը» (13 *ձայն*) *որը մեծամասնութեամբ ընդունուեց։*

50.- Կռo (Տէր Յակոբեան)։

51.- Ձեռագրին մէջ 5%, որ ակներեւ սխալ է։

Օրակարգի միւս կէտն է քաղաքական խմբեր։

Ընկ. Բաբան չի ընդունում քաղաքական խմբեր այն դասակարգից, որոնք իրանց տնտեսական շահերով հեռու են իր բազան կազմելուց. նա ընդունում է, ինչպէս իւրաքանչիւր կուսակցութեան մէջ, նոյնպէս եւ Դ-եան մէջ քաղաքային խմբերի գոյութիւնը. սակայն նրանք անպայման բաղկացած պիտի լինեն ոչ թէ մանր առեւտրականներից եւ ինչ որ արհեստաւորներից, այլ աշխատաւոր դասակարգին շահակից, սակայն ոչ բոլորովին նոյն շահերի պաշտպան տարրերից, օր. մանր արհեստաւորներից եւայլն։ Այնպէս պէտք է անել, որ մեր բազան մեր ձեռքից չգնայ եւ վերջը մենք չդառնանք արհեստաւորների եւ առեւտրականների մի կուսակցութիւն։

Նոյն միտքն են պաշտպանում գրեթէ Վազրիկը, Nomo-*ն, Անդրօ եւ ուրիշները։* Nomo-*ն պնդում է, որ աշխատաւորներից դուրս այն անհատները, որոնք կը թողնեն իրանց դասակարգային տեսակէտը եւ կ'անցնեն աշխատաւորական տեսակէտի վրայ, նրանք անպայման, ըստ մեր ծրագրին, կարող կը լինեն մտնել մեր քաղաքական խմբերի մէջ։ Ընկ. Թադ[էոս] արտայայտում է այն միտքը, որ 90ական թուականներից մենք անմիջապէս գործ ենք ունեցել մանր առեւտրականների եւ արհեստաւորների հետ եւ եթէ երկրորդ պետական դումայի ընտրութիւնների ժամանակ մենք այնքան յաջողութիւններ ունեցանք, այդ էլ չնորհիւ այդ տարրերին է։*

Ձեմիլ.— Առարկում է, որ չնայելով Քարում 300-400 *բանուորներ ունենք, բոլոր նրանցից ոչինչ չի կարելի ստանալ... կազմել մանր արհեստ[աւորներից] քաղաք. խմբեր։ Ոմանք պնդում են որ պիտի աշխատել քաղաք. խմբերի անդամների թիւը չգերազանցեն աշխատաւորների թուից, որպէսզի մեր կուսակց[ութեան] զէնքը չառնեն իրանց ձեռքը եւ մեզ վտանգաւոր դրութեան չդնենք։*

Ընկ. Անտոնը պնդում է, որ կապիտալիստական կարգերը կը վերանան այն ժամանակ երբ ամբողջ աշխարհում կը վերանան այդ կարգերը եւ որքան բարդանում են յարաբերութիւնները, այնքան շատանում է միջին դասակարգը՝ առեւտրականներն ու արհեստաւորները. եւ եթէ այստեղ Ռուսաստանում մենք հեռացնենք մեզանից օր. 5%, *Եւրոպայում սոց. կուսակցութիւնները պիտի հեռացնեն իրենցից* 20%։ *Նկատուած է, որ հայերիս մօտ միջին դասակարգը շատ մեծ տոկոս է կազմում. յենուել միայն աշխատաւոր դասակարգի, մանաւանդ քաղաքային բանուորութեան վրայ, չէ կարելի երբ ի նկատի ունենանք, որ քաղաքային բանուորութիւնը իւր գործողներով շահագործում է գիւղացիութեանը։ Եզրափակում է, որ անպայման պիտի ընդունել առեւտրականներին եւ արհեստաւորներին մեր քաղաքական խմբերի մէջ։*

Թեր եւ դէմ վիճաբանութիւններից յետոյ, 18 *ձայնով ընդդէմ մէկի ընդունուեց ընկ. Մհերեանի հետեւեալ բանաձեւը՝*

«1.- Դ. քաղաք. խմբերի մէջ մտնում են ազատ պրոֆեսիաների պատկանող այն բոլոր անհատները, որոնք չեն պատկանում իրենց տնտեսական դրութեամբ աշխատաւորական կատեգորիաներին, բայց եւ այնպէս թողնում են իրենց հայեցակէտը եւ ընդունում են աշխատ[աւոր] դասակարգի թէ քաղաք. թէ տնտեսական տեսակէտը. ուրեմն իբրեւ այդպիսիներ քաղաք. խմբերը չպիտի ունենան իրենց ուրոյն քաղաքականութիւնը, այլ իրենց ամբողջ գործունեութեամբ պիտի նպաստեն աշխատաւոր դասակարգի, թէ տնտեսական եւ թէ քաղաք. նպատակներին հասնելուն։

2.- Քաղաք. խմբերի ամբողջ եկամուտները յատկացւում են կուսակցութեան սնտուկին

3.- Քաղաք. խմբերի անդամները վայելում են դ[աշնակցական] գործօն անդամի բոլոր իրաւունքները»։

Մարտական խմբեր

Ընկ. Մհերեանը զեկուցում է, որ մարտական խմբի անդամները պէտք է պատկանին դ-ական շարքերին եւ կազմելիս պէտք է ընտրութիւն կայացնել, որպէսզի այդ խմբերի մէջ մտնեն գիտակից տարրերը, որոնք նուիրել են կազմակերպութեանը իրենց կեանքը։ Նրանք կաստա[52] *չպէտք է կազմեն եւ ենթարկւում են տեղական մարմիններին։ Ընկ.ը կարդում է կանոնագրի մարտական խմբերին վերաբերեալ կէտերը եւ շեշտում է, որ աշխատենք տառացի կերպով գործադրել այդ բոլորը։*

Միւս ընկերների կողմից առաջարկւում է, որ մարտական խմբի անդամները տարածուած լինեն զանազան խմբերի մէջ, որպէսզի նրանք հնարաւորութիւն չունենան ի մի խմբուել եւ ստեղծել առանձին զինուորական կենտրոնական ոյժ։

Եղան թեր եւ դէմ կարծիքներ եւ առաջարկութիւններ։ Ձայների մեծամասնութեամբ անցաւ ընկ. Շահէնի հետեւեալ բանաձեւը (14 *ձայն*)։

Բ2.- «Ռ. ժողովը գտնելով, որ մարտական խմբերի կազմակերպելու կարիքը աւելի քան կարեւոր է, մանաւանդ յառաջիկայ քաղաքական յանկարծակիների*[53] *առաջը առնելու եւ մեր յեղափ. ակտերի իրագործման համար, առանձնապէս շեշտում է մարտական խմբերի կարեւորութիւնը չշեղուելով կանոնագրի (յօդուածներ՝* 147, 8, 9, 150 151 *եւ ծանօթ յօդուածներից)։

Անցնելով զինավարժութեան խնդրին ընկ. Մհերեանը շեշտում է, որ զինավարժութիւնը նոյնչափ կարեւոր է, որքան պրոպագանդան. մեր ամբողջ մասսան պիտի

52.- Առանձնաշնորհեալ փակ դասակարգ։
53.- Ըսել կ'ուզէ՝ անակնկալների։

ենթարկուի զինավարժական պրոպագանդայի։ Կարծիքների փոխանակութիւնից յետոյ ընդունուեց հետեւեալ բանաձեւը։

Բ3.- Ի նկատի ունենալով, որ ամէն մի յեղափ. կուսակց. մէջ գիտակցութիւն տարածելու հետ միասին անհրաժեշտ է նաեւ զինավարժութիւնը ամէն տեսակ յեղ. ձեռնարկների համար, Ռ. ժողովը որոշում է զինավարժութիւնը բաժանել՝ տեսականի եւ գործնականի։ Տեսականը պիտի անցնել անխտիր բոլոր դաշ.ների հետ, ունենալով յատուկ ինստրուկտորներ, իսկ գործնականը անցնել այն վայրերում որ այդ հնար է իրագործել։

Ընկ. Անտոնը նկատում է, որ մեր կանոնագրի մէջ քաղաքական խմբերի կազմակերպութեան մասին ոչ մի կէտ չկայ. առաջարկում է մեր որոշումը ներկայացնել Դաշն. խորհրդին ի հաստատութիւն։ Ընդունւում է միաձայն։

Ժողովը փակուեց ժ. 11-*ին։*

ՆԻՍ

Յունուարի 4-*ին առաւօտեան*

Պրոպագանդ զօրքի մէջ

Զեկուցանում է, որ պէտք է մտնել զօրքի մէջ եւ պրոպագանդա անել. որպէս միջոց առաջարկում է նախ գրաւել պաշտօնեաներին եւ ապա աստիճանաբար գործ ունենալ զինուորների հետ. զօրքի հետ անմիջապէս յարաբերութիւն ունենալ եւ պրոպագանդա անել ցարի դէմ, չէ կարելի, որովհետեւ դա անյաջող կը լինի։ Նախ պէտք է սկսել զինուորների, որպէս գիւղացիների տնտեսական շահերից, օր. հողի գրաւումը կառավարութեան կողմից եւայլն. աստիճանաբար բացատրել թէ ինչ հակասութիւն կայ իրենց եւ բարձր պաշտօնեաների մէջ. ցոյց տալ միլիտարիզմի կործա[նա]բար ազդեցութիւնը եւն...։ Պէտք է նրանց կազմակերպել եւ բացի բանաւոր պրոպագանդից անհրաժեշտ է նաեւ գրաւորը հրատարակութիւնների եւ թռուցիկների միջոցով։

Ընկ. Ջաւախ.— հակառակ է այն կարծիքին, որ իբր զինուոր չի կարելի հակացարական պրոպագանդա մղել, առարկելով որ զինուորի ներքինի եւ ցարի մասին ունեցած հասկացողութեան մէջ ահագին անտագոնիզմ[54] *կար։*

Ընկ. Վազրիկը.— առարկում է, որ զինուորները չեն հետաքրքրւում հողային հարցով, ինչպէս պնդում է ընկ. Ռոտոսը. այդ ուղղութեամբ գործելով Ապառաժում կազմակերպել են 3 *զինուորական խմբեր։ Ընկ. Սմբատը*[55] *ասում է, որ ռուս զինուորները հայ տարրի վրայ խորթ աչքով են նայում. այդ տեսակէտից անհրաժեշտ է գտնում ռուս յեղափոխականների գործակցութեանը դիմել. ընկ. Շահէնը առաջարկում է մեծ ուշադրութիւն դարձնել զինուորակոչի ժամանակ նորընտիր զինուորների վրայ։ Ընկ. Դժոխքը (Ոսկանապատ) առաջարկում է մտնել զինուորների մէջ եւ պրոպագանդա մղել սկզբում Ս. Ռ. անուամբ եւ ապա յայտնել դ[աշնակցական] լինելը։ Ընկ. Մհերեանը պարզում է, որ չափազանց զգոյշ պէտք է մօտենալ պրոպագանդային. սկզբում գիտակից զինուորներից կազմել մի խմբակ եւ ապա նրանց միջոցով մեծացնել թիւը։ Զինուորների մէջ առանձին զինուորական դաշնակց. կազմակերպութիւն չպիտի ունենալ. այլ պիտի միանալ. նրանց մէջ գոյութիւն ունեցող «Վոյեննի սոյուզին»-ի*[56] *որը անկուսակցական է եւ «սոյուզ»ում*[57] *կ'ունենանք մեր ներկայացուցիչները։ Ընկ. Հայր-Աբրահամը ասում է որ իննսական թուականների եւ այժմեան զինուորների հասկացողութիւնների մէջ մեծ տարբերութիւն կայ. չպէտք է նախապաշարուած մօտենալ զինուորներին, մտածելով որ նրանք հայ տարրի վրայ խորթ աչքով են նայում. պէտք է երեւան գալ, որպէս դ[աշնակցական]ներ, մշակել նոր գրականութիւն եւ տարածել նրանց մէջ։*

Առաջարկուեցին մի շարք բանաձեւեր, վերջը ընդունուեց ընկ. Մհերեանի հետեւեալ բանաձեւը.

«Ներկայ քաղաքական մոմենտի պահանջի համաձայն Ռ. ժողովը վերին աստիճանի կարեւոր է համարում դ-ական գործունէութիւնը զօրքի մէջ, աջակցելով գոյութիւն ունեցող *«Վոյեննի սոյուզին»*-ին*[57], որի տեղական *սովետ*ների*[58] մէջ, դ-ական տեղական մարմինը պիտի ունենայ իրա ներկայացուցիչը։ Սկզբնական գործունէութիւնը պէտք է անել զգուշութեան տեսակէտից, շատ վստահելի անհատների (զինուորների) միջոցով. պրոպագանդա բանաւոր եւ գրաւոր. պէտք է ոյժ տալ մանաւանդ զինուորականութեան շրջանում (18 *ձայնով*)։

Դաշնակցութեան տակտիկան Թուրքիայում

Զեկուցանում է ընկ. Վահաբը[27] *Դ-եան ընդ. գործավարութեան մասին ընդ[հանուր] առմամբ, եւ մասնաւորապէս ազգերի համերաշխութեան վերաբերմամբ արուած քայլերի մասին, իսկ յետոյ նորագոյն տեղեկութիւններ տուին Երկրից եկած ընկերներից Ահարոնը՝ Վասպուրականի աշխատաւորութեան շարժման եւ այլ*

54.- Հակամարտութիւն, հակադրութիւն։
55.- Սմբատ՝ Սիմոն Զաւարեանի համար ուրիշ ծածկանունն է։
56.- Չեռագրին մէջ ռուսատառ՝ «Զինուորական միութեան»։
57.- Չեռագրին մէջ ռուսատառ՝ «միութեան»։
58.- Ռուսատառ։

հարցերի մասին, Փիլոսը՝ Բարձրաւանդակի մասին, իսկ Դերենիկը՝ Դուրանի եւ Լեռնավայրի մասին[59]:

Վահաք.— Ընդ. ժողովից այս կողմ Դ-եան գործունէութիւնը ուրիշ գոյն ունեցաւ, շնորհիւ համերաշխ գործունէութեան ուրիշ տարրերի հետ: Եթէ այնչափ էլ չյաջողուեց շնորհիւ այն հանգամանքի, որ դժուար է թուրքերի մէջ պրոպագանդ մղել, աւելի դժուար քան այստեղ ռուսների մէջ. նոր է կազմակերպուած այնտեղ, 906 թ. առաջի անգամ: Մեծ դիրք մենք ստեղծեցինք մեր կռուով, յարգանքներ վայելեցինք թուրքերի առաջ մեր կռուով. մեր հրացանն է, որ մեզ յարգելի դարձրեց. զոհերի շնորհիւ է որ մենք կարողացանք թուրք ժողովրդի յարգանքը վայելել: 907-ի Ընդհ. ժողովը հարուածեց այն նախապաշարումը, որ մենք իբր թէ ուզում էինք անկախ Հայաստան ստեղծել: Այդ է պատճառը:

Կարնոյ շրջանում, մենք խորհրդով, բարոյական ազդեցութեամբ մեծ [չափով] օգտաւէտ ենք եղել: Կարնում տուած ենք գումարներ, գրականութեան, նոյնիսկ ծրագրի նախաբանը եւ այլն. Կարնում թուրքերը շարժուեցին. հայերը եղան նրանց խորհրդատուները. եթէ շարժումը անյաջող եղաւ շնորհիւ այն հանգամանքի, որ գործիչներ չկային:

Վանում աւելի յաջող էր, որովհետեւ գործիչներ ունէինք Վանում, որովհետեւ հայերը շատ էին, այդ պատճառով աւելի յաջող էր: Եթէ որպէս ..... ընդունենք Վանը ..... պրոպագանդ, ուժեր ուղարկել ուրիշ տեղեր, Կարին, Բաղէշ, Տիգրանակերտ:

Տնտեսական հողի վրայ եղան մի շարք ..... որից մեծ փափաք կայ օգտուելու: Վանի ընկերները գործել են քիւրտերի մէջ, օր. Շատախում ինչպէս Կոմսը՝ քիւրտերի մէջ, լաւ կազմակերպել է. դէպքեր են պատահել, որ մեր ընկերները քիւրտ ժողովրդին օգնել են. քիւրտերը կամաց-կամաց կը ներկայանան ոչ թէ որպէս աւազակներ, այլ որպէս ժողովուրդը ապահովող: Ի հարկէ սրանք փոքրիկ դէպքեր են:

Դ-ը ..... բաւական ..... է, կազմակերպելու գործը այնքան էլ յաջող չէ, որովհետեւ ժող[ովուրդը] ճնշուած է. դժուար է յեղափոխութիւնը վառ պահել: Օսման[եան] կառավ[արութիւնը] նոյն չափով չէ ճնշում բոլոր նահանգները.....

.....

Այնտեղ հայերը քիւրտերի հետ լաւ յարաբերութեան մէջ են:

Փոքր Հայքի կամ Կիլիկիոյ մասին այնչափ էլ տեղեկութիւն չունենք. վերջին տարիները Դ-ը աշխատած է այդ նահանգների համար. վերջերս աւելի բան է եղել Դ-եան գործունէութիւնը քան ուրիշ տարիներ. Հիմնական տեսակէտից Դ-ը իր գործը կատարել է չափից աւելի: Եթէ պատերազմ ծագի Ռ[ուսաստան]ի եւ Թ[ուրքիա]ի մէջ, մեր ընկերների վրայ մեծ պարտականութիւն է ընկնում:

Տակտիկը,— բարեկամութիւն թուրք տարրի հետ, խոյս [տալ] ընդհարումներից (որի համար մեր ընկերները շատ աշխատած են), զինել ժողովրդին: Ցեղափոխականները մտնում են եւ հայերի կուլտուրական գործերի մէջ: Մեր մեծ պարտականութիւնն է նաեւ սովից ազատելու համար օգնել, կը հրաւիրեմ ժողովի ուշադրութիւնը. այն է, որ երկրի մէջ գործունէութիւնը սկսել է կենդանանալ, պրոպագանդը աւելի յարմար է տանել հիմա թուրքերի եւ ժողովրդի հետ համերաշխ լինելու համար, բայց վատը այն է որ սով կայ այնտեղ. եթէ Կովկասը ունի մեծ..... եւ կամ ունի երկրի մէջ կատարելու, այն է որ մարդիկ պիտի տայ այնտեղի համար. մարդիկ ոչ միայն հայերի համար, այլեւ թուրքի եւ քրտի համար. պիտի ուժեր տանք նրանց, որ կարողանան աւելի լաւ կազմակերպել: Եթէ ունենայինք 2-3 յեղափ. ինտելիգենտ ուժեր, մեծ բաներ կարող էինք անել: Գուցէ Խորհուրդը կոչ ուղղէ Կովկասի ընկերներին, որ այնտեղ ընկերների մեծ կարիք կայ: Մանաւանդ, որ մեծ յարմարութիւն չկայ: Վերջերս մի տեղ դէպք եղաւ. մեզ հետ միացաւ Մուշեղ-Երկաթը[59a], *անցաւ երկրում պրոպագանդ մղելու բայց սպաննուեցաւ:*

Ժողովը իր յարգանքը մատուցեց ընկերոջ, յոտնկայս:

Վռամեան.— Կը խօսիմ թէ Դ-նը ինչ բազա ունի Վանում. 3 ամսից այնտեղ չփուել այդպիսիների հետ [sic]. *ժողովներ են եղել, կարող եմ ասել, որ այնտեղ աւելի աշխատաւորներ են քան այստեղ. պատճառներ կան: Դ-ը մտել է Վան այն ժամանակ երբ գոյութիւն ունէր հնչակ. եւ արմենակ[ան]ներ. հնչակեաններ գրաւել են բուրժուա տարրը: Իսկ արմենակ[անները] մանր բուրժուազիան: Դ-թիւնը իր մէջ ընդունեց աշխատաւոր դասին:* [18]98-*ից վերակազմութիւնը սկսուեց. նոյն տարրեր մտան Դ-թեան մէջ. բարձր տարրերը հեռու են Դ-ից: Դերձակների արհեստ. միութիւնը* 140 *հոգուց էին. կօշկակարները, նոյնպէս ատաղձագործները. բոլորը դ-ներ են: Դաշ-ը միայն Վանում չէ գործում, նոյնպէս եւ գիւղերում. գիւղերը կազմակերպուած են.*

59.- Արձանագրութեան մէջ յայտնապէս սխալ կայ: Բարձրաւանդակի փոխարէն պէտք է ըլլայ Բարձրաբերդ, որ Կարնոյ շրջանի ծածկանունն է, իսկ Լեռնավայրը (Կիլիկիա) պէտք է ըլլայ Բարձրաւանդակ: Արդարեւ Դերենիկի զեկուցումը կը վերաբերի Դուրան-Բարձրաւանդակին, այսինքն Տարօն-Սասունի եւ ոչ մէկ կապ ունի Կիլիկիոյ հետ:

Նշենք այս առթիւ, որ Երկրէն եկած պատգամաւորներու զեկուցման արձանագրութիւնը շատ խառն է, իբր հետեւանք, հաւանաբար, զեկուցողներու արեւմտահայ բարբառով խօսելուն եւ քարտուղարներու (արեւելահայ) թիւր ըմբռնողութեան: Այդ պատճառաւ ալ բնօրինակին մէջ կը հանդիպինք տեղ-տեղ անհասկնալի, անկապ նախադասութիւններու, բաց ձգուած բառերու, մինչեւ իսկ ամբողջ տողերու (տրուած կիտաւոր): Յամենայն դէպս կու տանք ամբողջութիւնը հարազատօրէն այնպէս ինչպէս կայ:

59a.- Արշաւիր Կամսարական, նախկին հնչակեան:

դ[աշնակցական] գիւղերը համայնապէս կազմակերպուած են: Բոլորը մտնում են կազմակերպութեան մէջ. առաջ անհրաժեշտ էին. ստիպուած էինք. վերջերս զգացինք դրա անյարմարութիւնը եւ շերտաւորում մտցրինք աշխատաւոր դասի եւ կեղեքողի մէջ. վերջիններս արտաքսուած են. կազմակերպուած են խմբեր առաջիններից: Վասպուրականի գիւղերի մէջ պատանիների թիւը աւելի մեծ է քան քաղաքների. այնպէս չէ, ինչպէս այստեղ. գիւղը ունի մօտ 40-50 *տուն, որից* 10*ի է մօտ կեղեքող. մնացեալները աշխատաւորական:*

Կազմեցինք պրոֆես[իոնալ] միութիւն, կեանքը մեզ ստիպեց որ մենք կազմենք նրանց. առաջ մենք ստիպուած ենք եղել արձագանգ տալ նրանց միութիւններին եւ կազմակերպեցինք: Մենք արհեստականապէս չենք ստեղծուել, այլ կեանքը ինքն է ստեղծել: Կազմել ենք եւ կուսակցական պրոֆ. միութիւն, ատաղձագործների միութ. (35 *աշակ.*), *դերձակների* (140), *կօշկակար* 82 *հոգի:*

Կազմակերպուել են անմիջապէս գործադուլ. ամենամեծ պատճառը ի հարկէ սա չէ. անյաջողութեան պատճառը, մէկ էլ բոլորը միանգամից էին անում գործադուլ փոխանակ զատ-զատի. երրորդ՝ լաւ կազմակերպուած չեն: Նրանք աւելի գիտակից են քան Կովկասում. Վանի ամբողջ ազգաբնակ[չութեան] 10%*-ը հաշիւ անգրագէտ լինի՝ շնորհիւ բազմաթիւ դպրոցների: Գրագիտութիւնը նոյնն է գաւառում, աւելի քիչ աստիճանով: Վասպուրականի գիւղացիները գաղթել են Կ. Պոլիս, այստեղ են որոշ չափով գրագէտ դառել եւ որոշ հասկացողութիւն ձեռք բերելով վերադարձել են Վասպուրական: Գործադուլը այստեղ տեւում է մօտ մի ամիս, բայց Վանում* 3 *ամիս. դրա պատճառը այն է, որ շուկան Վանում այնչափ էլ պահանջող չէ: Իսկ այստեղ աւելի պահանջող է, սուր է:*

Պրոֆ. մ[իութիւններ] իրաւունք ունէ՞ինք կազմելու թէ ոչ:

Միջին արհեստաւորը ունի 1000 *ռ. ստորինը ունի* 200 *ռ.:* 40 *լիրա ունեցողը ունի* 5 *աշակ[երտ]. կ'աշխատի* 40 *ոսկի (ուզել գրաւոր կերպով): Գործադուլը արդեօ՞ք վնասում է միւս պրոֆ[եսիաների]. չի վնասում, որովհետեւ արհեստաւորը չի ստանում այն ապրանքը, որը արտադրում է ինքը. եթէ պէտք է գները մեծացնէ, աշխատաւորին վնաս չէ. որովհետեւ չէ սպառւում: Առաջ գիւղերի մէջ ընդհանուր էր կազմակերպութիւնը, յետոյ կեղեքողները դուրս արուեցին: Անհրաժեշտ էր, որ[ովհետեւ] արմենականները մտնելով գիւղերը թայֆայական խնդիրներ եւ մատնութիւններ առաջ կը բերէին միւս տարրերի մէջ: Միայն թէ երկար կանգ առանք այդ շրջանի վրայ: Գիւղացիութիւնը ինքը զգաց դրա անյարմարութիւնը եւ դիմեց շերտաւորման: Հողատնտեսութիւնը Վասպուրականում քրոնիկական է, քանի գնում շատանում է. շատ գիւղերում հողը աւելի սուղ է, քան Վանում:*

Վարդան.— Վասպուրականում տնտեսական կռիւ չկայ այլ քաղաքական կռիւ. պրոֆ. միութ. արդիւնք են այստեղից գնացած երկու պրոպագանդիստների միջոցով. վարպետը այնտեղ աւելի վատ է քան երբեմն նոյնիսկ աշկերտը: Նրանց դրութիւնը շատ վատ է: Ուրեմն կռիւը տնտեսական չէ: Աշկ[երտ] եւ վարպետ միասին են կազմակերպուած Դ-ութեան մէջ: Հողատիրութիւնը այնտեղ .....

.....

որ իրանք գիւղացիները ստիպուած թողնում է իր հողը, որովհետեւ անապահով է եւ գնում է մի ուրիշ տեղ ապրելու: Նոյն կազմակերպութիւնը եւ գիւղում. միասին են կազմակերպուած:

Շաւարշ.— Տաճկաստանում բոլորը գրել կարդալ գիտեն՝ շնորհիւ ընկերների եւ ընկերութիւնների. այսօր մենք հող ունենք, եթէ պրոպագանդիստ ուղարկեցինք եւ սովորեցրինք: Աշխատինք պատրաստուած մարդիկ ուղարկել, որ մերը լինի մասսան, որովհետեւ մասսան պատրաստ է:

Ահարոն.— Դ-եանը մեղադրում են, որ ուշ են ընդունել ժամանակի պահանջը, թէ ուշ է հասկացել համերաշխ գործել. չէր կարելի շուտ ստեղծել, որովհետեւ թուրքերը ուշ գիտակցեցին, որ պէտք է համերաշխ գործել: Շեշտում է որ ահրաժեշտ է մաքուր, ազնիւ եւ մանաւանդ պատրաստուած մարդիկ: Կարող է պատահել, որ Տաճկաստանի հարցը աւելի շուտ վճռուի քան Ռուսաստանինը:

Քիլոս.— Մինչեւ հիմիկուայ շարժումները ոչ թէ կազմակերպուած, այլ ..... այդ է պատճառը, որ նրանց աւելի քաջալերել է. յամենայն դէպս նա մի խմբումն է յեղափոխութեան: Նոր հարկերը որ ծանրանում է բոլորի վրայ անխտիր, որի պատճառաւ կազմակերպուեց անցեալ տարուայ ցոյցը. այդ ցոյցը պարզեց թուրքի գիտակցութեանը, թէ Սուլթանը ինչ վերաբերմունք ունի դէպի թէկուզ թուրք ժողովուրդը. ցոյցը ապացուցեց, որ միացած կռիւը շատ բաներ արժէ: Բայց կազմակերպուած էլ չէր, միակ դժբախտութիւնը նրանում է: Ցոյցի ժամանակ թուրք կուսակ[ցութիւնը] միշտ աշխատել է հայ յեղափ[ոխական]ի մօտը գտնուել:

Գործը պէտք է գաղտնի լինի Տաճկաստանում, այլապէս յաջողութիւն չի ունենայ: Թուրք ժողովուրդը գտնւում է ներկայումս յուզման տրամադրութեան մէջ. կառավարութիւնը մտածում է նորից հարկեր հաւաքելու, ժողովուրդը յուզուած է, տրամադիր է: Բայց նա որքան յեղափ. լինի բայց նախաձեռնողի [դերը] պատկանում է Դ-եան, եթէ անէ մի բան դարձեալ Դ[աշնակցութ]իւնն է:

Զօրքը մանաւանդ տեղականը, ժողովրդի կողմն է եւ պատրաստ:

(5 *րոպէ դադար*)

Ռ. ժողովը բացուեց Դ[աշնակցութ]եան Մարսէյլէզով։

Դերենիկ.— Կառավարութիւնը ունի այն քաղաքականութիւնը, որ Սասունը ցրիւ անելու ամէն ջանք է գործ դնում։ Միջոցներից մէկն է, որ քիւրտ բէկերի միջոցով հայ գիւղերը քարուքանդ է անում. II միջոցը սեփական զօրքերն են, որ ունի գիւղերում, որ հայերին անբարոյականացնի։ Կառավարութիւնը նորից հաւաքում է հին հարկերը, ժողով[ուրդը] դիմում է .....-ին փող խնդրում տոկոսով. երբ պահանջում է, գիւղացին չի կարող վճարել. ստիպուած գաղթում է։ III Գիւղացիական բանկ, որը գրեթէ նոյն չարիքն է ժողովրդի համար, որից դարձեալ սկսում է գաղթել։ Առաջ որ 100 զուտ հայաբնակ գիւղեր կային Կարին, Մշոյ Դաշտում, այժմ 10-12 զուտ հայաբն[ակ] գիւղ. դրա փոխարէն 30-40 քիւրտ գիւղեր։ IV Ջօռով հայ գիւղացին քոչել է տալիս պատճառաբանելով թէ հայ ֆետայիները այստեղ անցնում եւ ապրում են։ Ներկայումս քրդերը իջել են լեռներից դէպի դաշտը կառավ[արական] միջոցներով եւ պարապում են երկրագործութեամբ։

Բացի դրանից ուրիշ տեղերից էլ գաղթում են լեզգիներ եւ գազաներ եւ բնակւում հայ գիւղերին կից։ Կառավ[արութիւնը] ազգամիջեան կռիւներ է սարքում։ Ժողովուրդը անկիրթ է բառին բուն նշանակութեամբ թէ Սասունում եւ թէ Դաշտում։ Գաղթը ամէն տարի կայ թէ Սասունից եւ թէ Դաշտից. կառավարութիւնը գաղթեցնում է, բայց է, բայց չեն մ Ռուսաստան գնալ. գաղթեցնում է քիւրդերի, գազաների մէջ։ Գաղթի առաջը առնելու համար նպաստ ենք տուել, բայց 1) նա ժողովրդին փչացրեց, 2) մտան մեծ մասամբ պաշտօնեաների գրպանները։ Որոշել ենք ոչ թէ նպաստ տալ գիւղացուն, այլ փողով առնենք սերմ եւ գարնանը բաժանենք գիւղացուն։ Նախկին գործիչները միայն զինել են ժողովրդին այն էլ ..... կազմակերպել են ժողովրդին եւ հայ հարուստներից հեռացել են. դրա հետեւանքը այն է եղել, որ հայերը հեռացել են, նրա տեղը բռնել է քիւրդը կամ ուրիշը։ Մենք հիմա ընդունել ենք նրանց մեր կազմակերպութեան մէջ։

Խումբը ամբողջապէս կազմակերպուած է գիւղացիներից. շրջանային ժողովը Կ. Կ-ի շեշտում է ինտելիգենտ ուժերի պակասութիւնը։ Քիւրդերը մեզ մօտեցել են իրենց շահերի տեսակէտից, չնայելով կան այնպիսիները, որոնք հաշտ են մեզ հետ։ Կան ռայա քրդեր, որոնք դիմեցին մեզ եւ խնդրում են կազմակերպել իրանց։

ՆԻՍՍ

Յունուարի 4-ին երեկոյեան։

Նախագահում է Բաբա։

Նիստը բացւում է նշանակուած ժամանակից 40 ր. անց, պատգամաւորների ուշանալու պատճառով։ Բացակայ են Արսէն, Բագուի Վահան, Վազրիկ, Մեծ-քաղաքի ներկայացուցիչները, Արմէն, որոնք նիստի կէսին գալիս են։

Շարունակւում է վէճերը Թուրքահայերի տաքտիկի մասին։

Որոշուեց խօսել նաեւ ռուս-տաճկական բարդութիւնների առթիւ ծագելիք դէպքերի մասին։

Անտոն.— Ես կ'ուզենայի մի շարք տեղեկութիւններ տալ Թուրքիայի մասին։ Դաշնակ. միութեան դէմ բերած ամենամեծ արգումենտն այն է, որ այդ երկրի մէջ տնտեսական պայմանները տարբեր են։

Այլ եւ այլ երկրների տնտեսական զարգացումը չափւում է մի քանի խոշոր ֆակտորներով. ազգաբնակութեան խտութիւնը եւ քաղաքների մեծութիւնը, հաղորդակցութեան միջոցների եւ առեւտրի զարգացումը եւ այլ մի քանի օբյեկտիւ պայմաններ։ Ամէն շրջան միւսից տարբերող մասնակի պայմաններն արժէք չունեն, արժէքաւորներ են ընդհանուրները (երկար եւ մանրամասն վիճակագրական եւ այլ համեմատութիւններ է անում զանազան երկրների մէջ)։ Վիճակագրութեան ներկայացրած բոլոր թուերը ցոյց են տալիս, որ Ռուսաստանի եւ Թուրքիայի տնտեսական վիճակի մէջ տարբերութիւն չկայ։ Թուրքիայի հայերն երկրի ամենակուլտուրական տարրն են. նրանք են հանդիսանում արդիւնաբերութեան ղեկավարներ։ Ուստի եւ Ռուսաստանում մենք գնալու ենք բոլոր յեղափ[ոխութիւնների] պոչից, իսկ Թուրքիայում, որպէս առաջնորդ։

Իւր խօսքերն ընկ. Անտոնն վերջացնում է շեշտելով որ չի կարելի Թուրքահայ եւ ռուսահայ դատերը բաժանել։ Առաջարկւում են բանաձեւեր։

Անտոնի բանաձեւը.

Լսելով մանրամասն տեղեկութիւններ Թուրքահայաստանի վիճակի եւ կազմակերպութեան գործունէութեան մասին Ռ. ժ.ը գտնում է որ թուրքահայ աշխատաւոր ժողովուրդը բազմապիսի միջոցներով կեղեքուած եւ ճնշուած է մինչեւ ծայրայեղ աստիճան, որ հայաբնակ որոշ վայրերում սպառնում է հայ ժողովրդի գոյութեան անգամ։

Յիշեցնելով դա դ-ական բոլոր մարմիններին Ռ. ժ.ը որոշում է որ Ռուսիայի դ-ականները, ինչպէս անցեալում, ապագայում եւս կ'օժանդակեն թուրքահայկական դատի յաջողութեան բոլոր իրենց ունեցած միջոցներով։ Դրա հետ միասին ողջունելով Թուրքահայաստանում գործող ընկերների դրական եւ յաջող քայլերը, համամիտ է բոլորովին

նրանց հետ, որ Թուրքիայում ներկայ շրջանում մեր ունեցած տակտիկը բացի ինքնապաշտպանութիւնից դրուած պիտի լինի այնպիսի պահանջների վրայ, որոնք կարող են հակակառավարչական շարժումը ընդհանրանցնել, խորացնել եւ մտցնել նրա մէջ դեմոկրատիկ ոգի (*ստացաւ մի քանի ձայն պակաս*)։

*
* *

Հայր-Աբրահամը զեկուցում է տալիս Պարսկաստանի մասին։

Պարսկաստանի տակտիկի եւ Թուրք-պարսկական կոնֆլիկտի հարցն է դրուած օրակարգի մէջ։ Մենք կանգնած ենք մեծ բարդութիւնների առաջ եւ կարող են տեղի ունենալ մեծ դէպքեր, որ մեզ դժուար կացութեան մէջ կը դնեն։ Մենք այժմ չունենք առաջուայ դրամական մեծ ոյժը եւ չգիտենք ինչպէս դուրս կը գանք այդ գործից։ Տաճիկ-պարսկական կոնֆլիկտը շարունակութիւն է հին վէճին, որ առաջ է եկել սահմանի մի գաւառի համար, որը տաճիկները իրանցն են համարում։ Դէպքերը սակայն ցոյց են տալիս, որ Տաճկաստանի նպատակն այդ չէ, այլ նա ունի յետին մտքեր. նա արդէն մօտեցել է Սալմաստին, որտեղ մի քանի գիւղերի վրայ հարկ է դրել եւ ցոյց է տալիս, որ ուզում է Սալմաստը գրաւել։ Այդ վարմունքի պատճառն այն մեծ խլրտումներն են, որ վերջերս Տաճկաստանում առաջ են եկել ռուսական եւ պարսկական շարժումների ազդեցութեան տակ. կառավարութիւնը վախենում էր որ ժողովուրդը կը պահանջէ սահմանադրութիւն եւ դրա համար ուզում է ժողովրդի ուշադրութիւնը գրաւել արտաքին բաներով։ Միւս կողմից կառավարութեան շատ լաւ յայտնի է, թէ Պարսկաստանը ինչ մեծ դեր է խաղում հայկական շարժման մէջ։ Նա եղել է մեր յեղափ[ոխութեան] նախադուռը. այնտեղից մենք մտնում ենք Երկիր, մթերք տեղափոխում եւ այլն։ Եւ Տաճկաստանը մտածում է, որ գրաւելով այդ երկիրը մեծ զարկ[60] տուած կը լինի հայ յեղափոխութեան։ Բացի դրանից Տաճկ[աստանը] տեսնում է, որ Ռուսաստանը թուլացել է եւ չի կարող իրան արգելք լինել։ Տաճկաստանը նաեւ չի կարող մարսել իւր հարեւան երկրի մէջ յեղափոխութեան գոյութիւնը, որ միշտ կարող է խառնել իւր երկրի ժողովրդի միտքը։ Այդ են պատճառները, որ դրդել են Տաճկաստանին այս պատմական մոմենտում առաջ խաղալ եւ բոլոր քայլերից երեւում է, որ նա պատրաստ է պատերազմ յայտարարել։ Նրա քայլն ուղղուած է Ռուսաստանի դէմ եւ պատճառն այն է, որ անցած տարի Ռուսաստանը Անգլիայի հետ դաշնագիր կապեց, որով Սալմաստն ընկնում է ռուսական [հովանու] տակ։

Բոլոր փաստերը ցոյց են տալիս, որ Տաճկաստանը եւ Ռուսաստանը պատրաստւում են կռուելու։

Ինչ դիրք պիտի բռնի Դ[աշնակցութիւն]ը այդ բարդութիւնների մէջ։ Ես չեմ կարող ձեզ պարզապէս յայտնել, որ բացի զուտ յեղափոխական շրջաններից, կողմնակի կերպով Դաշնակցութեան եղել են դիմումներ եւ որովհետեւ այդ կոնսպիրացիա[61] է դրա մասին չեմ խօսում եւ դիմումին հետեւանքը դեռ յայտնի չէ։

Մենք ունեցանք մի շարք ժողովներ եւ քանի որ ոչ Բիւրոն ոչ էլ տեղական մարմինները այդ կոմպետենցիան[62] չունէին,որ իրանք վճռեն այդ խնդիրը, արինք մի շարք նախապատրաստական քայլեր։ Մի բան պարզ էր, որ մեր ժողովուրդն անտէր, անգէն, անպաշտպան չենք կարող թողնել։ Եւ հայերը իբրեւ պարսկաքաղաքացիներ պիտի կանգնին պարսիկների շարքերը, եթէ այդ պահանջում է հայրենիքի շահը եւ Բիւրոն ուղարկի մի քանի փորձուած ինստրուկտորներ ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու համար։ Բայց այդ դեռ քիչ էր, մենք պէտք է այդ խնդիրը մանրամասն ուսումնասիրենք, որովհետեւ չունենք լիակատար տեղեկութիւններ։ Ճիշտ է այնտեղ յեղափոխական շարժումը սկսուել էր, բայց մէկ բան պարզ չէր։ ինչ ոյժ կար եւ որքան հաւանական էր պատերազմը եւ որովհետեւ շուտով լինելու է Ռ[այոն]ական ժողովը մենք ուղարկում ենք մի ընկեր, որ տեղն ու տեղը ուսումնասիրի. դժբախտաբար այդ ընկերը դեռ չի եկել եւ գործը կը մնայ Խորհրդին։ Այսպէս է այդ խնդիրը, եւ որովհետեւ վերջնական տեղեկութիւն չունենք, ես կարծում եմ որ Ռ. ժողովը կարող է որոշել իր վերաբերմունքը վերջին խօսքը թողնելով Խորհրդին։

Արմենակ.— Դժուար է ասել թէ որքան հաւանական է թուրք-պարսկական կոնֆլիկտը. կարող է պատահել, որ այս խաղերը փոխուեն ռուս-պարսկական կոնֆլիկտի, շատերի կարծիքով սա մի դաւադրութիւն է Շահի եւ Սուլթանի մէջ. Շահն ժողովրդի շարժման առաջն առնելու համար համաձայնում է իր մի երկու գաւառից զրկուել եւ վարկաբեկ անել ժողովրդապետութիւնը։ Ռուս-պարսկական կոնֆլիկտի նախանշան կարելի է համարել եւ վերջերս տեղի ունեցած իբր թէ դաւադրութիւնը ռուսաց կոնսուլի դէմ...

Գալով ժողովրդական շարժման, Պարսկաստանում ներկայումս նա երկու կուսակցութեան է բաժանուած — խաների, կղերի եւ բուրժուաների մի կողմից եւ միւս կողմից մանր բուրժուաների, որ իրեն սոց. դեմ[ոկրատ]իա է կոչում եւ իսկական ժողովրդապետութեան կողմնակից է։ Այդ երկու կուսակցութիւնների մէջ յա-

60.- Էջի աջ լուսանցքին կը գտնուի Միքայէլ Վարանդեանի ձեռագրով հետեւեալ լուսաբանութիւնը «զարկ» տալուն մասին. «Կ'ուզէ ըսել՝ հարուած. Մ. Վ.»։

61.- Գաղտնի, դաւադրական գործունէութիւն։

62.- Ձեռնհասութիւն, լիազօրութիւն, իրազեկութիւն։

բաբերութիւնները խիստ լարուած են եւ յաճախ հասնում են արիւնահեղութեան։ Ցառաջադիմական կուսակցութիւնը, որ ամենազօրեղն է, յաճախ դիմում է մեզ խորհրդների համար եւ մենք տալիս ենք։ Բայց իրանք էլ պնդում են, որ հայերը ակտիւ մասնակցութիւն չունենան յեղափոխութեան մէջ։

Վահան (*Վրէժից*)[63].— *Թուրք-պարսկական կոնֆլիկտի պատճառները պարզ են — կը լինի պատերազմ թէ չէ, սահմանակից հայկական գաւառները անպայման վտանգի մէջ են. եթէ կռիւ լինի՝ թուրքերից, իսկ եթէ չէ՝ քրդերը կ'աւերեն հայերին եւ պարսից կառավարութիւնը անզօր կը լինի դիմադրելու. մեր պարտքն է ուշք դարձնել այդ գաւառների վրայ, մանաւանդ որ պարսից կառավարութիւնը մատերի արանքով է նայում մեր գործին։*

Պարսկաստանի շարժումները սկսուեցին տարերային կերպով եւ մասնակցում էին բոլոր դասակարգերը բացի հողատէրերից։ Հոգեւորականութիւնը սկզբում ղեկավար էր պահանջելով Շարիատի վերականգնումը եւ վերջը միայն սկսուեց շերտաւորումը, յեղափոխական զտումը։ Հոգեւորականութիւնը անցաւ ռէակցիայի կողմը։ Ցեղափոխութեան համար առատ հող է ներկայացնում գիւղացիութիւնը։ Այժմ արդէն կուսակց[ութիւն]ներ են ստեղծուել՝ մի կողմ է կանգնած վաճառականութիւնը միւս կողմը հոգեւորականութիւնը եւ հողատէրերը։

Ցեղափոխականների կողմից դիմումներ եղան եւ մեզ. եւ մեր եւ նոցա մէջ սկսուեցին բանակցութիւններ։ Նոցա ներկայացրած ծրագիրը իսկապէս մի կոնգլոմերատ[64] *էր, որի մէջ կային թէ ծայրայեղ յեղափոխական պահանջներ, թէ յետադիմական քայլեր։ Մենք ցոյց տուինք նոցա ծրագրի սխալները եւ առաջարկեցինք նորը տալ։ Նոքա համաձայնուեցին եւ որովհետեւ ժամանակը խառն էր նոքա խնդրում էին մեզնից խորհուրդներ։ Այդ նպատակով կազմուեց միջկուսակցական Բիւրո, որի հետեւանքն այն եղաւ որ մենք թարգմանեցինք մեր կանոնագիրքը եւ նրանք սկսեցին կազմակերպուել դրանով։ Մօտերս յարաբերութիւններ են սկսուել եւ Թեհրանում*[65]*, որ մեր ընկերները մեծ ուշք են դարձնում գլխաւոր պրոպագանդի վրայ։*

Ջաւախեան.— Թէ ինչ տակտիկա պիտի ունենան Պարսկաստանում, չեմ խօսի եւ կը թողնեմ մեր աւելի ձեռնհաս ընկերներին։ Կը խօսեմ մի մասնաւոր հարցի մասին — թուրք-պարսկական կոնֆլիկտի եւ Դ-եան վերաբերմունքի։ Ես տրամադրուած էի հակառակը պիտի խօսեմ Հայր-Աբրահամին եւ Բիւրոյին։ Ինձ թւում է որ այս հարցում նրանք թողել են շատ սխալներ եւ վտանգաւոր ուղի [բռնել] եւ լաւն այն է, որ նրանք դեռ գործի չեն անցել եւ ուրեմն սխալը դեռ կարելի է ուղղել։ Իմ կարծիքով թուրք-պարսկական կոնֆլիկտի մէջ Դ-ինը պիտի պահի խիստ չէզոք դիրք. այս կարծիքը ես հիմնում եմ մի կողմից տեսական եւ միւս կողմից գործնականի վրայ։ Ի՞նչ է կատարւում։ Մի բռնակալ պետութիւն յայտարարում է միւսին պատերազմ։ Ի՞նչ գործ ունի այդտեղ Դ-նը։ Այստեղ ասում են թէ բռնակալ պետութիւնը ուզում է դրանով խեղդել նոր ծագած մի յեղափոխութիւն։ Գուցէ այդ այդպէս է գուցէ եւ ոչ։ Աւելի հաւանական է այն գռեհիկ բացատրութիւնը թէ Տաճկաստանը օգտուելով Ռուսաստ[անի] եւ Պարսկաստ[անի] թուլութիւնից ուզում է լայնացնել իր սահմանները։ Եւ եթէ նայենք սահմանագծի վրայ, կը տեսնէք, որ այդ շատ բնական է։ Տաճիկներն իրանց դաշտային սահմանագիծը անց են կացրել լեռնոտ մասը, որը պարսիկների ձեռքն էր, եւ այդպիսի մի քայլ խրախուսւում էր եւրոպական պետութիւններից, որովհետեւ դա իսկապէս Ռուսաստանի դէմ էր ուղղուած։ Եթէ սա այսպէս է եւ պատճառ էլ չկար այսպէս չլինելու, ոչ մի հիմք չկայ մի յեղափոխական սոցիալիստական կուսակցութեան այդ գործին մասնակցել։ Բայց եթէ այդ ուղղուած է պարսիկ ապստամբական շարժման դէմ, մենք պէտք է յայտնենք մեր համակրանքը պարսկ. յեղափոխութեան եւ ուրիշ ոչինչ։

Մի ուրիշ վերաբերմունք կարող է լինել. սահմանագծի վրայ ապրում են հայեր, որոնց պատերազմից յետոյ տաճկահպատակ դառնալը վնասակար է։ Բայց եթէ 30-40000 հայերի վնասուելը մի վնաս է, բայց մի մոռանաք, որ ընդհանուր ազգային շահերի տեսակէտից դա մի պլիւս է, որովհետեւ Հայաստան աւելացրած կը տեսնենք 30-40000 հայերով։

Պէտք է հարց տալ, թէ այդ կռուին մասնակցելով մենք ինչ շահ ունենք եւ ինչ վնաս։ Ենթադրենք մի րոպէ, որ այդ զուտ թուրք-պարսկական գործ է եւ երկու պետութիւնների բախտին է թողնուած։ Այս դէպքում եթէ Դ-եան ոյժն էլ աւելանայ պարսկական ուժի վրայ, շատ թոյլ կը լինի թուրքերի առաջ եւ նրանք էլի կը յաղթեն, իսկ եթէ ի նկատի ունենանք, որ այս միջազգային հարց է, որի դիմաց կանգնած են եւրոպական պետութիւնները, շատ հաւանական է մեզ ի սպառ կ'ոչնչացնեն։ Իսկ պէտք է գիտենանք ինչ վտանգի ենք ենթարկում մեզ այդ աւանտիւրայով եւ պէտք է ոչնչացնենք մեր նոր սկսած գործը, երբ նոր ենք սկսել համերաշխութիւն քարոզել երկրում, եւ մեր միջամտութեամբ ընդդէմ Թուրքիայի, կը խորտակենք այն բոլոր յոյսերը, որ մենք դրել ենք համերաշխութեան գործի վրայ։

63.- Նիկոլ Մատինեանի ծածկանունը։

64.- Խառնակոյտ։

65.- Ակնարկութիւն նոյն օրերուն Ռոստոմի Թեհրան կատարած առաքելութեան՝ պարսիկ սահմանադրական իշխանութեանց հետ գործակցութեան համաձայնագիր կնքելու համար։

Մեր միջամտութիւնից Պարսկաստանը ոչինչ չի շահի, բայց միջամտելու դէպքում մենք կորած ենք եւ կը վտանգենք մեր գործը թէ Տաճկաստանում եւ թէ տաճկահայ ժողովրդին։

Լեռնեան[26].— *Ես միանում եմ ընկ. Ջաւախեանին, այդ մի աւանտիւրա է, որ մենք հաշուի չենք առնում։ Դրա հետեւանքը կարող է լինել այլեւ, որ մեր կուսակցութիւնը բոլորովին կը տրորուի, կ'ոչնչանայ։ 30-40000 հայի համար մենք չպիտի վտանգենք մեր կուսակցութիւնը, որ ընդհանուր հայ աշխատաւորութեան կուսակցութիւն է։*

Նայինք խնդրին աւելի խորը։ Ցանուն ինչի պէտք է միջամտենք. եթէ յանուն պարսից յեղափ[ոխութեան] փրկութեան, այն ժամանակ մենք ոչինչ ենք եւ մենք կը վնասուենք։ Այստեղ կար մի ուրիշ ֆակտոր՝ միջազգայինը. հարցը կը լուծուի կամ խաղաղ կերպով եւ կը դրուի միջազգային տրիբունալի[66] *առաջ եւ կամ զէնքով՝ միջազգային ոյժով։ Երկու դէպքում էլ մեր ուժը անզօր է եւ վերջին դէպքում, մենք չարաչար կը տուժենք առանց մի շահ բերելու ոչ Պարսկաստանին եւ ոչ էլ հայ ժողովրդին։ Մեր անելիքը այն կը լինի, որ մենք կը մնանք ինքնապաշտպանութեան հողի վրայ։*

Մհերեան.— Բիւրոյի զեկուցանող ընկերոջ ասածներից չէր երեւում այն, ինչ եզրակացրին խօսող ընկերները, որոնց արածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Լոմատսյա Վօտկրիտսյա դպերի[67]*։ Բիւրոյի մէջ խօսք է եղել, որ պարսթուրքական կռիւը կարող է վնասել պարսկական յեղափ. շարժման եւ այդ տեսակէտից, իբրեւ մի կուսակցութիւն, որ դաւանում է ազգերի հաւասարութիւն եւ ֆեդերատիւ կազմ, չի կարող անտարբեր մնալ. եւ դ-ական մարմինները Պարսկաստանում պէտք է անտարբեր չլինեն դէպի իրանց հայրենիքի վտանգը։ Հարց է գալիս, թէ Դ-թիւնը իր ընթացքով կը վնասի ազգային համերաշխութեան պրոպագանդին Տաճկաստանում։ Դրան դէմ կ'ասեմ, որ նախ Դ-թիւնը այդ դէպքում դուրս չի գալիս իբրեւ մի միջազգային երրորդ մարմին, եւ երկրորդ՝ որ այդտեղ թուրք ժողովրդի կռիւը պարսից յեղափոխութեան դէմ չէ, այլ մի բռնապետական կառավարութեան։ Դրութիւնը բոլորովին նոյնն է, ինչ որ ռուս քաղ[աքացիական] պատերազմի ժամանակ յեղափոխական կուսակցութիւնների բռնած դիրքը։*

Բաքա.— Ես բոլորովին այլ տեսակէտից եմ մօտենում հարցին։ Ես պնդում եմ որ բարդութիւնների առաջ գալու դէպքում անպայման պէտք է մասնակցել, ինչքան էլ փոքր ուժ հանենք, այնուամենայնիւ նա ոտի տակ չի գնայ եւ օգուտ կը բերի։ Պատերազմի դէպքում ժողովրդին պաշտպանելու համար պէտք է գինել ընկերներին եւ ագրեսիւ կերպով մտնել երկիր եւ կռիւ մղել տաճիկ զօրքերի դէմ։ Հակառակ դէպքում ժողովուրդը կորած է։ Նոյնը պիտի անենք եւ թուրք-ռուսական պատերազմի ժամանակ։

Հայր-Աբրահամը բացատրութիւններ է տալիս եւ նկատում, որ իրեն լաւ չեն հասկացել եւ նորից կրկնում իրա ասածները։

Վահաք.— Ես կ'ուզենայի ընկեր Ջաւախեանի այն կէտի վրայ կանգ առնել թէ 30-40000 ժողովուրդ պաշտպանելու հարկ չկայ այստեղ եւ, ուրեմն, չկայ գեղեցիկ այն հեռանկարը, որ նկատեց ընկեր Ջաւախեանը ապագայ Հայաստանի համար։ Եթէ նայինք քարտէսի վրայ, կը տեսնենք, որ ոչ միայն Դ-թեան պատմական դերի խնդիր կայ, այլ եւ հայ ժողովրդի, որովհետեւ դուք երբեք չէք կարող ապահովել այդ տեղի հայերի գոյութիւնը եւ կը նպաստէք որ մուսուլման տարրը սեպաձեւ մտնի հայ տարրի մէջ։ Սալմաստի հայերի գոյութիւնը ապահովութեան մի ազդակ է Վասպուրականի համար։ Դրա համար Դ-թիւնը չպիտի թողնի իր ձեռքից այդ բազան։ Բացի այդ այնտեղ մենք ունենք մեծ հմայք մուսուլման տարրի աչքում եւ եթէ կռուի ժամանակ չէզոք մնանք, այն ժամանակ ցոյց կը տանք թէ մեր հմայքը սապոնի մի պղպջակ է, որ կ'այրի եւ կը գցէ մեր վարկը քրդերի առաջ եւ Վասպուրականում։

Այս ամբողջը մեզ կը ստիպէ որ մենք անտարբեր չմնանք, եւ այդ մեզ ոչ թէ վարկաբեկ կ'անէ մուսուլմանների առաջ, խանգարելով համերաշխութիւնը, այլ ընդհակառակը կը նպաստէ ամրապնդման, որովհետեւ թուրքերը կը տեսնեն, որ Դ-թիւնը կուում է անարդարութեան դէմ։ Բացի այդ մենք պէտք է միջազգային դեր խաղանք, կազմակերպելով բոլոր քրիստոնեաների մէջ — հայ, ասորի եւ այլն, ինքնապաշտպանութիւնը։ Ոչ ոք չպէտք է վախենայ, որ Դ-թիւնը պատերազմ է յայտարարում. լաւագոյն դէպքում մենք տանելի ինքնապաշտպանութիւն պէտք է ունենանք։

Կոչ.— Այս բոլոր խօսակցութիւններից ես ոչ ոքից չլսեցի, թէ Դ-թիւնը դասակարգային սոցիալիստական մի կուսակցութիւն է։ Նոյնիսկ ասողներ եղան թէ Դաշթիւնը մի դիպլոմացիա է — ազգային մի մարմին։ Ես զարմանում եւ վրդովում եմ։ Ոչ թէ պէտք է կռուին մասնակցենք այլ հակապատերազմական պրոպագանդա մղենք մուսուլման տարրի մէջ։ Իսկ ինքնապաշտպանութիւնը ժողովուրդն ինքն կը կազմակերպի։

Կարդացւում են բանաձեւեր.

Անցաւ ձայների մեծամասնութեամբ Արմենակի բանաձեւը։

66.- Ատեանի։

67.- Չեռագրին մէջ ռուսատառ՝ բաց դրան բախում։

Ի նկատի ունենալով 1) *որ ներկայ պարսկակ. շարժումները դեմոկրատիկ տարրերի, կռիւների*[68]:

Դժոխք.— Առաջարկում է կոնֆլիկտի դէպքում մնալ ձեռնպահ՝ թողնելով տեղացի ընկերների հայեցողութեան. ստացաւ 3 *ձայն*:

Վրէժի Շրջանային ժողովի բանաձեւը.

Շնորհիւ տաճկական անակնկալ յարձակման, այս ամրան պարսկական բանակի վրայ Ուրմիի շրջանում, պարսկա-թուրքական յարաբերութիւնը, վերջերս մանաւանդ, սաստիկ լարուած է մի ամիս խաղաղութիւնից յետոյ եւ որովհետեւ շնորհիւ տաճկական օրէցօր առաջ խաղացութեանը պարսկական տերիտորիայում, սահմանագծային այդ կոնֆլիկտը հետզհետէ սրւում եւ դիպլոմատիկական ճանապարհով լուծուելու ամէն յոյս կորցընում, ներկայումս մանաւանդ Ռ. Ժ. նկատելով՝

1) *որ գործը պատերազմի հասնելիս ինքն իրանից պետական անուժութիւն ներկայացնող Պարսկաստանը միայնակ ոչինչ անել չի կարող, չնայած պարսիկ ժողովրդի տրամադրութեանը զինուած դուրս քշելու օտարին իրանց սեփական տերիտորիայից*:

2) *որ անոյժ Պարսկաստանը դաշնակիցներ փնտռելու յետեւից լինելով ի նկատի ունէր եւ Տաճկաստանի ռեժիմին թշնամի հայ ազգը եւ նրա յեղափոխական կազմակերպութիւնը, որի աջակցութեանը դիմել է նա ոչ պաշտօնապէս առայժմ գոնէ*:

3) *որ մեր կազմակերպութեան աջակցութիւնը կարող է ոգեւորել պարսիկ կառավարութեան պատերազմ սկսել Տաճկաստանի դէմ, մի պատերազմ, որի հետեւանքը կարող է ցնցել մահմետական մասսան Տաճկաստանում հայ եւ թուրք յեղ. դաշնակցութեան ղեկավարութեամբ [ինչ որ] կարող է արագացնել սուլթանական ռեժիմի անկումը եւ դեմոկրատիկ կարգերի հաստատումը Տաճկաստանում յօգուտ աշխատաւոր դասակարգի քաղաքական եւ տնտեսական շահերի, որ մեր քաղաքական նպատակներից մէկն է*:

4) *Որ այդ ձեռնարկի յաջողութեանը նպաստում է մանաւանդ ներկայումս քաղաքական թէ՛ ներքին եւ թէ արտաքին յարմար մոմենտը, Ռ. ժողովը յարմար համարեց [որ] մեր կազմակերպութեան մասնակցութիւնը դրուելու է կախման մէջ պարսիկ կառավարութեան ձեռնարկների հետ, թէ [նա] ունենալու է բոլորովին անկախ, ինքնուրոյն գործունէութիւն, կամ այդ մասնակցութիւնը լինելու է յանուն Հ.Յ.Դ.-ի թէ յանձին պարսկահայ ժողովրդի՝ նրա ինքնապաշտպանութեան անունով թուրք պարսկական պատերազմի աւերմունքներից, այլ եւ այդ մասնակցութեան չափը, եղանակը եւ այլն, թողնում է Դ[աշնակցու]թեան Խորհրդին, որոշելու համար*:

Լեռնեանի բանաձեւը.

Ի նկատի առնելով, որ ներկայ պարսկական յեղափոխութիւնը տուժում է անսխտեմ եւ անկազմակերպ դրութիւնից, Հ.Յ.Դաշն.ը, հաւատարիմ իր ռամկավարպատականի եւ Վասպուրականի Դաշն[ակցութեան] զինուած միջամտութեան իրողութիւնը, որոշ չափով կարող է վանել քրտական շահատակութիւնները եւ կոտորածները, որոնք անխուսափելի են հայկական նահանգներու սահմաններու վրայ.

Ռ. ժողովը Խորհրդի լուրջ ուշադրութեանը կը յանձնարարէ, որ միջոցներ ձեռք առնէ Վասպ. եւ շրջակայքին օգնութիւնը կազմակերպելու համար թէ ռազմամթերքով եւ թէ կռուող ուժերով:

ՆԻՍ

Յունուարի 5-*ին առաւօտեան*

Նախագահը ժողովը բաց անելով յայտնեց որ նախկին «Աշակերտական միութիւնը» սկսում է վերակազմուել, որի մասին լսելով ժողովը իւր ուրախութիւնը յայտնեց:

Ապա ընկ. Վահէ զեկուցում կարդաց արհեստակցական, գիւղացիական եւ կոոպերատիւ միութիւնների մասին, չեշտելով որ աշխատաւորական շարժումը սկսուել է դեռ 2 *տարի առաջ կենսական պահանջների դրդմամբ, թէպէտ նախօրօք չի ստացած եղել Ընդհ. Ժողովի սանկցիան. Աշխատաւորական միութիւններ (արհեստ. գիւղաց.) կազմելու համար մարմինները ղեկավարուել են Դ-թեան աշխատաւորական սկզբունքներով, հակառակ սոց. դեմոկրատների պրոլետարական տեսակէտին. Մեր աշխատաւորական միութիւնները ունէին իրանց պակասաւոր կողմերը, որի գլխաւոր ազդակներից մէկը պէտք է համարել Ռուսաստանի յեղ. շարժման տարերային բնոյթը. Ժամանակի պահանջը խիստ շատ էր, իսկ ոյժերը՝ քիչ. Աշխ. միութ. հնարաւորութիւն չեն ունեցել օրգանական աշխատանքով պարապելու. Միութ. ընդհանրապէս կազմուած են եղել հապճեպ եւ առանց լուրջ ընտրութեան. Յաճախ աշխատաւորները ինքնագլուխ գործադուլ յայտարարելուց յետոյ, դիմել են մարմիններին իրանց կազմակերպելու. Կասսա, այդ ամենակարեւոր պայմանը, ինքնուրոյն եւ մտածուած գործունէութեան միանգամայն գոյութիւն չեն ունեցել միութեան մէջ. Յաճախ միութիւնները գործադուլ յայտարարելով առաջադրել են միանգամայն անիրականալի եւ անտեղի պահանջներ, որոնք նոյնիսկ բարձր են եղել «յաւելեալ արժէքից». Հետեւանքը այն էր լինում, որ գործադուլները անյաջողութիւն էին ունենում, կամ եթէ յաջողում էին, միայն երկիւղի ազդեցութեան տակ. Պէտք է շրջապատի պայմանները ի նկատի ունենալով՝ պահանջներ դնել. անհրաժեշտ է լաւ հասկացնել աշխատաւորութեանը յաւելեալ արժէքի էութիւնը. Իւրաքանչիւր միութիւն պէտք է նախօրօք համաձայնութեան գայ միւս միութիւնների հետ եւ ապա միացած ոյժերով յայտարարէ գործադուլ, որպէսզի տարաձայնութիւններ չառաջանան եւ գործը օգտակար հետեւանք ունենայ. Անհրաժեշտ է որ իւրաքանչիւր շրջանի «աշխ. միութիւնները» ունենան մի «խորհուրդ», որը պիտի ղեկավարէ այդ շրջանի աշխատաւոր միութ[եան] բոլոր ընդհ. գործերը (օր. գործադուլ եւայլն). Ռայոնի պաշտ[օնական] օրգանը եւ Արեւելեւայլն). Բիւրոն հնարաւորութիւն չեն ունենալ ղեկավարելու ամբողջ կովկասի աշխատ. միութիւնների շարժումները, անհրաժեշտ է շրջանային խորհուրդների կողմից ընտրուած կովկասեան արհեստակ. միութիւնների խորհուրդ, որը պիտի տեղեկութիւններ տայ Շրջ. խորհուրդներին աշխատ. շարժման մասին եւ պիտի ղեկավարէ ընդհանուր համակովկասեան բնոյթ ունեցող շարժումները. Ան կապուած պիտի լինի, «Համառուսական արհեստ. միութ.» հետ, որի միջոցով էլ «միջազգային արհեստ. միութեան կենտ. բիւրոյի» հետ. Մեր աշխ. միութիւնները եղել են կուսակցական, որի պատճառով զուրկ լինելով հանդերձ լեգալիզացիայից՝ տուել են չոչափելի արդիւնքներ. Փաստերը ցոյց են տուել, որ սոց. դեմոկրատների լեգալ անկուսակցական արհեստ. միութիւնները մատնուել են պառակտումի եւ քայքայման. Գալով արհեստ. միութիւնների մէջ ազգութիւնների հարցին, նկատում է, որ անկուսակցութիւնը լուծում չի կարող տալ. Աւստրիայի արհեստ. շարժման 4 տարուայ պատմութիւնը անհերքելի ապացոյց է դրան. Մենք կը կազմակերպենք օտարազգի աշխատաւորներին իբրեւ դաշնակցականներ եւ երբ առաջ կը գան համապատասխան կուսակցութիւններ կը յանձնենք նրանց. Մենք նոյնիսկ պիտի ձգտենք այդ կուսակցութիւնների երեւան գալուն զարկ տալու. Մեր կազմակերպած բանուորների մէջ պրոպագանդա պիտի առաջ տանել իրանց մայրենի լեզուով*:

Սմբ[ատ[55].— *Ինչպէս վարուել նոյն արհեստանոցում կամ գործարանում գտնուող ուրիշ կուսակցութեան պատկանող բանուորների հետ եւ ինչ կապերով նրանց պէտք է կապել մեր բանուորների հետ*:

Աբրահամովիչ[20].— *Գտնում է անհնարին, «Համակովկ. արհեստ. միութ. բիւրոյի» գոյութիւնը ի նկատի ունենալով մեր երկրի շրջանների տնտեսական պայմանների մեծ տարբերութիւնը. Առաջարկում է գումարել «արհեստակցական միութիւնների կոնֆերանս». Մեր արհեստ. միութիւնների շարժումը պիտի ղեկավարէ Արեւելեան Բիւրոն*:

Անտոն[25].— *Շեշտում է անցեալին կատարուած սխալների վրայ. տարաբախտաբար մենք այն ժամանակ չէինք հասկանում. Երբեք մենք նպատակ չպիտի ունենանք քայքայել արդիւնագործութիւնը (ինդուստրիա). Ներկայ սոցիալ-տնտեսական պայմաններում* 8 *ժամից բանուորական օրի պահանջը նոյնիսկ անիրագործելի պէտք է համարել. Մենք չկռուենք միայն յաւելեալ արժէքի դէմ. Ամէն կերպ պէտք է աշխատիլ որ*

68.- Էջին մնացեալ մասը բաց է. թեեւ վիճաբանութիւնները կը շարունակուին եւ առաջարկներ ալ կան, բայց ընդունուած վերջնական բանաձեւը չէ արձանագրուած։ Տպագիր «Որոշումներուն» մէջ թուրք-պարսկական կոնֆլիկտի վերաբերմամբ Դաշնակցութեան դիրքի մասին պարզապէս արձանագրուած է. *«Ռ. Ժ.ը յայտնելով այդ խնդրի վերաբերմամբ մի քանի կարծիքներ թողեց նրա վերջնական լուծումը առաջիկայ Դ.Յ.Դ. Խորհրդին»*։

աշխատաւորական արիստոկրատիան (ուսուցիչ, բժիշկ եւայլն) չշահագործէ աշխատաւորական դեմոկրատիային։ Քննադատում է դասակարգի աւելորդ պահանջները, որոնք պիտի ծանրանան աշխատաւոր ժողովրդի վրայ՝ զանազան դպրոցական տուրքերի, թոշակների եւ այլ ձեւով։ Այդպէս 5 անգամ աւելի վարձագին ստացող անգլիացի բանուորը շահագործում է հնդկաստանցի բանուորին։ Պէտք է գնահատել արհեստագիտական հմտութիւնը՝ չթոյլ տալով աշխատավարձի հաւասարացում հմուտների եւ անհմուտների մէջ։ Բանուորութեանը մեր շարքերում ընդունելիս չպէտք է խստապահանջ լինել նրա կատարելապէս սոց. դաշնակցական լինելու մէջ։ Գտնում է աւելորդ խորհուրդների գոյութիւնը, դրանց ֆունկցիաները թողնելով տեղական կ. կոմիտէներին։

Վահէ.— Խորհուրդի գոյութիւնը կուսակցութեան մէջ դուալիզմ[69] չէ մտցնում, որովհետեւ մեր միութիւնները կուսակցական են։ Խորհուրդների գոյութիւնը սպառնում է աշխատաւորութեան ինքնագործունէութեան եւ կատարում է անհրաժեշտ աշխատանքի բաժանում։ Խորհուրդները կը հսկեն, որ իւրաքանչիւր միութիւն ունենայ իր կասսան, պրոպագանդան եւ շարժումները տարուեն միակերպ եւ համերաշխ։ «Բիւրոն» հնարաւորութիւն չի ունենալ այն կապը պահպանել միութիւնների մէջ, ինչ կենտ. կով. խորհուրդը։

Լեռնեան.— Գտնելով անկախ խորհուրդների գոյութեան սիստեմը հնացած՝ առաջարկում է խորհուրդների եւ կենտր. խորհուրդների ֆունկցիաները տալ կ. կոմիտէներին եւ Բիւրոյին՝ թողնելով, որ նրանք իրանց մէջ կազմեն սեկցիաներ։

Աբր. — Ներկայ տնտեսական կրիզիսի պատճառը ոչ թէ միայն պէտք է փնտռել մեր սխալ քայլերի մէջ, այլ գլխաւորապէս Ռուսաստանի ներքին տնտեսական-քաղաքական պայմանների մէջ։ Պնդում է, որ մեր minimal պահանջների մէջ, ոչ մի զիջում չպէտք է անել։ Տնտեսական պահանջների հետ մենք պիտի անհրաժեշտօրէն առաջադրենք նաեւ քաղաքական պահանջներ, որով մենք տարբերւում ենք բուրժուական կուսակցութիւններից։ Խօսելով անցեալի սխալների մասին չեշտում է, որ պէտք է զգուշանալ այսուհետեւ եւ շարժումները տանիլ պլանաւորուած։ Խորհուրդների գոյութիւնը գտնում է միանգամայն անհրաժեշտ։ Առաջարկում է ունենալ զուտ աշխատաւորական օրգան։

Մհերեան.— Խորհրդի գոյութիւնը հակառակ է միութիւնների կուսակ[ցական]ութեանը։ Շեշտում է, որ անհրաժեշտ է մարմինների մէջ կատարել աշխատանքի բաժանում։ Հէնց այդ նկատումով «Բիւրո՛ն» կազմուած է 9 հոգուց, որից 1-2ը կը կազմեն մի սեկցիա։ Աշխատաւորական շարժման եւ միակերպութեան եւ համերաշխութեան համար անհրաժեշտ է կոնֆերանս հրաւիրել։

Բաբա.— Խորհրդի գոյութիւնը չի կարող ոչ անջատում եւ ոչ անջրպետ առաջացնել կուսակցութեան [եւ] աշխատ. միութիւնների մէջ։ Բիւրոն անկարող է ծանրաբեռնել այդքան գործերով։ Խորհուրդները կ'ենթարկուեն համապատասխան մարմինների բարոյական ազդեցութեան։ Վարչութիւնների, խորհուրդների յարմար կանոնադրութիւն մշակելու գործը պէտք է յանձնել կոնֆերանսին։

Վահէ.— Շեշտում է, որ գործի օգտակարութեան տեսակէտից անհրաժեշտ է ընդունիլ խորհուրդների անկախ գոյութիւնը — մի սիստեմ, որ գոյութիւն ունի Աւստրիայում, Բելգիայում եւ այլ երկրներում։ Բաժանման երկիւղը գտնում է միանգամայն անհիմն։ Միութիւնների քաղաքական գործերը պիտի ղեկավարեն մարմինները (կոմիտէ, կ. կոմիտէ եւայլն)։ կոնսպիրացիայի[60] տեսակէտից անյարմար է գտնում, որ Բիւրոն լինելով մի անլեգալ կուսակցութիւն բանակցութեան մէջ մտնի համառուսական աշխ. կոնֆերանսի հետ, որին մասնակցում են եւ կուսակցական եւ անկուսակցական միութիւններ։

Թադէոս.— Որովհետեւ այստեղ խօսւում է մի մարմնի մասին, որը չի նախատեսնուած մեր կանոնագրի մէջ, ուստի առանձին լրջութեամբ եւ զգուշութեամբ մօտենալ խնդրին։

Մհերեան.— Որովհետեւ տնտեսական կռիւն էլ կուսակցութեան վարելիք կռիւներից մէկն է, հետեւաբար պէտք է դա վարեն կուսակցական մարմինները։

Լեռնեան.— Բանուորները դեռ քաղաքականապէս հասունացած չեն, նրանք «երեխաներ» են։ Ինչպէս կարելի է նրանց ձեռքը տալ կռուի զենք։ Մենք ուրիշ կերպ պիտի աշխատենք նրանց մէջ ինիցիատիւ[70] եւ ինքնագործառնութիւն զարգացնել։

Աբրահամովիչ[20].— Առաջարկում է ընտրել մասնախումբ, որ մշակէ միութիւնների ներքին կանոնագիրը։

Թադէոս.— Նկատում է, որ արդէն մի խուլ պայքար գոյութիւն ունի արհեստակցական միութիւնների եւ մարմինների մէջ։ եթէ խորհուրդների անկախ գոյութիւնը ընդունենք մենք դրանով անջրպետը ընդարձակած պիտի լինենք եւ մի նոր տեսակի անջատման առիթ տուած։ Հարկ եղած դէպքում մարմինները իրաւունք ունեն վետո դնելու։

Սիրաք.— Շեշտում է, որ բանուորներին չի կարելի ինքնագլուխ թողնել։ համաձայն է վետոյին։

Գրիչ.— Գտնում է, որ այժմ բանուորները այնքան գիտակից են, որ կարելի է նրանց ինքնուրոյնութիւն տալ։ խորհուրդների անկախութիւնը անհրաժեշտ է համարում։

Ջաւախեան.— Եթէ բանուորները արժան չեն այդ իրաւունքները ստանալուն, ապա մարմիններն էլ արժան չեն, որոնք երբեք իրանց կոչման բարձրութեան

69.- Երկուութիւն։
70.- Նախաձեռնութիւն։

վրայ կանգնած չեն։ Առաջարկում է խորհուրդի փոխարէն մի կոլեկտիւ, որի մէջ կը լինեն բանւ. տեղ. կ.-ի եւ կ. կ.-ի ներկայացուցիչները մի մի ձայնով։

Դժոխք.— Բանուորը «երեխայ» չէ. այդ կարգի խնդիրներում պրոպագանդիստները նրան են լսում։ Հակառակ է վետոյին, որովհետեւ դրանով ընդհ. գործադուլի ժամանակ կարող են առաջանալ տարաձայնութիւններ եւ հակասութիւններ։

Հայր-Աբրահամ.— Չի կարելի ինքնավարութեան սկզբունքը խախտել. ոչ թէ թղթերն են զարգացնում մարդկանց այլ կեանքը։ Մենք այդպէս դատելով չպիտի մեղադրենք կառավարութեանը, որը սահմանադրութիւն չտալով՝ արդարանում էր թէ ժողովուրդը տգէտ է, հասունացած չէ։

Լեռնեան.— Գտնում է, որ Հ.-Ա.-ի անալոգիան սխալ է։

Անտոն.— Աշխատաւորութիւնը պաշտպանում է միայն փեշակարական[71] շահերը. ընդհ. կուսակցական շահերը պաշտպանելու մէջ նա վստահելի չէ։ Մարմինների ձայնը նրանք անպայման պիտի լսեն։

Շահէն.— Գտնում է որ ոչ կարելի է լիակատար իրաւունք տալ եւ ոչ էլ վետո դնել։ Խորհուրդներն պէտք է աշխատեն իրենց հեղինակութեամբ եւ բարոյական ազդեցութեամբ ուղղութիւն տալ։

Մհերեան.— Համաձայնելով Շահէնի ասածներին աւելացնում է, որ ծայրայեղ դէպքում անհրաժեշտ է վետո դնել։

Բաբա.— Դէմ է ամէն կարգի խորհրդակցութեան. կամ վետո կամ լիակատար իրաւունք։ Կոլլեկտիւի մէջ վճռական ձայն կ'ունենան միայն բանուորութեան ներկայացուցիչները։

Վահէ.— Անպատրաստ եւ թոյլ են նաեւ մեր մարմինները. հակադաշնակցական հոսանքների ժամանակ այդ միութիւններն են, որ իբրեւ պարիսպ պահել են կուսակցութիւնը։ Ինտելիգենցիան չպէտք է ունենայ արտօնութիւններ։ Վետոները կարող են յաճախ անկատար մնալ եւ գործ փչացնել։ Այստեղ է, որ մենք մեր ապակենտրոնացման սիստեմը [պէտք է] կիրառենք։

Նիթբա.— Տնտեսական կռիւն մեր կռիւներից մէկն էր, ուրեմն պիտի վարեն մարմինները. առաջարկում է երկու ձեւի սեկցիաներ մտցնել մարմինների մէջ,— տնտեսական կռուի եւ քաղաքական։

Կոչ.— Եթէ կան հասուն մարմիններ՝ կը լինեն եւ հասուն բանուորներ. փաստեր է բերում, որ բանուորները խելացի գործադուլներ են արել։

Աբրահամովիչ.— Ընդհ. քաղաքական բնոյթ ունեցող գործադուլների ժամանակ մարմիններին անհրաժեշտ է տալ վետոյի իրաւունք։

Ընկ. Վահէ.— Կարդում է միութիւնների կանոնագրութեան սխեման իբրեւ բանաձեւ։ Ապա ընկերներ Լ. եւ Վ. կարդում են իրանց բանաձեւերը։ 18 ձայնով անցնում է ընկ. Թ-ի բանաձեւի 8 կէտերը, որը հետեւեալն է.

Արհեստակցական միութիւններ

Արհեստակցական միութիւնները նպատակ ունենալով կազմակերպել աշխատաւորութիւնը ընդդէմ շահագործող դասակարգի պէտք է ղեկավարուեն հետեւեալ սկզբունքներով.

I Միութիւնը լինելով կռուի համար ստեղծուած մի կազմակերպութիւն անպայման պէտք է ունենայ իր սեփական զէնքը – կասսան առանց որի անզօր է միութիւնը.

II Պայքարելով հարստահարիչ ու արտօնեալ դասակարգի, ինչպէս նաեւ տիրող անարդար ու բռնակալ կարգերի դէմ, նա հանդիսանում է իբրեւ մի յեղափոխական մարմին եւ իբրեւ այդպիսին պիտի զբաղուի քաղաքականութեամբ, մանաւանդ որ ներկայ պայմաններում տնտեսական պահանջները անմիջապէս առաջ են բերում քաղաքական հարցեր։ Այդ քաղաքականութիւնը պիտի լինի սոցիալիստական, որովհետեւ միայն սոցիալիստական ուղին է, որ տանում է աշխատաւորութեանը դէպի յաղթանակ եւ դէպի ազատ կարգեր։ Հետեւելով սոցիալիստական քաղաքականութեան միութիւնը պէտք է լինի կուսակցական, այսինքն պէտք է կազմի սոց. կուսակցութեան մի մասը։ Ռ. Ժ. ուրախութեամբ շեշտում է, որ երկու տարուայ փորձը այդ ուղղութեամբ պսակուել է օգտակար հետեւանքներով։

III. Տնտեսական ներքին հարցերում միութիւնները ունենալու են ինքնուրոյնութիւն, սակայն ամէն կերպ պէտք է աշխատել, որպէսզի նրանք էկոնոմիզմով[72] չտարուեն։ Պրոպագանդայի միջոցով պէտք է աշխատել բարձրացնել աշխատաւորութեան դասակարգային գիտակցութիւնը, շեշտելով որ արհեստակցական միութիւնների տնտեսական նպատակը պիտի լինի կռիւ յաւելեալ արժէքի եւ ոչ արդիւնաբերութեան գոյութեան դէմ. վերջինիս քայքայումը մանաւանդ մեր երկրի տնտեսական յետամնաց շրջանում, կ'ունենայ ամենակորստաբեր ազդեցութիւնը թէ ամբողջ երկրի յառաջադիմութեան եւ թէ աշխատաւոր դասի շահերի վրայ։ Ուստի պահանջներ եւ գործադուլներ յայտարարելիս անպայման ուշադրութեան են առնուելու միջավայրի սոց.-տնտեսական վիճակը եւ յաւելեալ արժէքի սահմանները։

IV. Իւրաքանչիւր վայրում կազմակերպած աշխատաւորութեան մէջ համերաշխ յարաբերութիւն եւ միանման գործելակերպ հաստատելու համար միութիւնները պիտի ունենան մշտական «խորհուրդ» որ գումարւում է պարբերաբար միութիւնների վարչութիւնների եւ տեղական մարմնի ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Աշխատաւորութեան

71.- Արհեստակցական։
72.- Սոցիալ դեմոկրատներու կողմէ ջատագովուած հոսանք, որուն համաձայն բանուոր դասակարգը պէտք է պայքարի բացառապէս իր տնտեսական դրութիւնը բարելաւելու նպատակի համար եւ չզբաղի քաղաքական հարցերով, ինչպէս էր, օրինակ, բռնատիրական կարգերու տապալումը։

այն գործադուլներն ու պահանջներն, որոնք շօշափում են ընդհանուրի շահերը աւել կամ պակաս չափով, պիտի քննուեն ու հաստատուեն այդ խորհրդի կողմից:

Պրոպագանդի ժամանակ յատուկ ուշադրութիւն պիտի դարձնել քաղաքական հարցերի եւ կուսակցական պարտաճանաչութեան ու անձնազոհութեան վրայ:

Խօսելով խորհուրդների փոխադարձ յարաբերութեան եւ նրանց ներքին կանոնագրութեան մասին ժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը:

Յանձնարարել Արեւել. Բիւրոյին մօտ ապագայում հրաւիրել դ[աշնակցական] արհեստ. միութ. խորհրդաժողով: Այդ խորհրդաժողովը կ'ընտրէ մի մասնախումբ, որը կը մշակէ խորհուրդների փոխադարձ յարաբերութեան կանոնագրութիւնը եւ կը յանձնէ Դաշ. Խորհրդին ի հաստատութիւն:

Առանձին միութիւնները կնիք չպիտի ունենան. կնիք կարող են ունենալ միայն շրջանային մարմինները: Բոլոր քաղաքներում, նաեւ Բագւում, արհեստակցական բիւրոները պիտի կոչուեն խորհուրդ: Թողնել Արեւել. Բ.ին պատրաստել կնիքներ եւ հարկ եղած դէպքում միայն յանձնել համապատասխան մարմին:

ՆԻՍ

Յունուարի 5-ին,
երեկոյեան ժամը 5-ին

Մեր աշխատաւոր միութիւնների եւ ազգութիւնների հարցը

Աբրօ[20].— *Խնդիրը պէտք է դնել ընդհանրապէս. օտարազգիները պիտի մասնակցե՞ն բոլոր դաշ[նակց]ական խմբերում: Ոչ մի բարոյական իրաւունք չունենք օտարազգի ընկերներին չընդունել մեր խմբերի մէջ, եթէ սրանք ընդունում են մեր ծրագիրը ու տակտիկան: Անհատներ ընդունում ենք մեր խմբերի մէջ, եւ երբ դրանց թիւը շատանում է, առաջ ենք բերում իրենց ազգային դաշնակցական կազմակերպութիւնները:*

Սուրէն.— *Գաւառներում գիւղական խաւերի մէջ, հայ եւ թուրք աշխատաւորութեան շահերը իրար հետ սերտ կերպով կապուած են: Մի գեղում ապրելով, հայ եւ թուրք տարբեր միասին աշխատում են եւ դրանց շահերը ոչնչով չեն տարբերւում իրարից: Նա բողոքում է առանձին կազմակերպելու դէմ: Մի քանի թեր եւ դէմ խօսողներից ընկ. Վահէն առաջարկում է բանաձեւ.*

Դժոխք.— *Միանալով ընկ. Վահէի բանաձեւին աւելացնում է հետեւեալը.— օտարազգի բանուորներ ձայն չեն ունենում այն խնդիրներին, որոնք վերաբերում են զուտ հայկական-կուլտուրական կեանքին:*

Լեռնեան.— *Վահէի բանաձեւի մէջ պակասում է հոգեբանական բնական մոմենտը. հարկաւոր է լրացնել: Եթէ լրացուի նա կը միանայ այդ բանաձեւին: Դ-թեան մէջ բոլոր օտարազգի աշխատաւորները պիտի լինին դ[աշնակց]ական:*

Կոչ.— 5-10 *կամ* 20 *օտարազգի աշխատաւորներ կազմակերպելը գտնում է աննպատակայարմար. աւելի օգտակար եւ նպատակայարմար գտնում է այն, որ մենք պէտք է աշխատենք դրանց մէջ ինքնուրոյն կազմակերպութիւններ առաջ բերել, մանաւանդ թուրքերի մէջ:*

Մհերեան.— *Այնպիսի ազգեր, որոնք նոր են արթնանում, գիտակցութեան գալիս, ունենում են առաւելապէս չովինիստ[ական] ինտելիգենցիա, ուստի առաջարկում է աշխատել աւելի շատ աշխատաւոր մասսաներին վրայ:*

Վահէ.— *Պաշտպանում է իր բանաձեւը. բանաձեւը դրւում է քուէարկութեան եւ անցնում է.—*

Ազգութիւնների հարցը
արհեստակցական միութիւնների մէջ.

Աչքի առաջ ունենալով, որ սոցիալական հակադրութիւնների զարգացման հետ միասին զարգանում է նաեւ տարբեր ազգութիւնների բուրժուազիայի մրցումը, դրանով զարկ տալով առանձին ազգային քաղաքականութեան իւրաքանչիւր ազգի բուրժուազիայի կողմից, աշխատաւորութիւնը ձգտելու է մի հակադիր ոյժ ստեղծել դրա դէմ ունենալով իր դասակարգային քաղաքականութեան հետ դրանից բխող նաեւ ազգային քաղաքականութիւն, որի հոգատարութիւնը լինելու է անգօր դարձնել բուրժուական բոլոր ոտնձգութիւնները եւ դասակարգային համերաշխութեամբ շաղկապել տարբեր ազգութիւնների աշխատաւորութիւնը. այդ տեսակէտից քննելով ազգութիւնների հարցը արհեստակց. եւ գիւղացիակ. միութիւնների մէջ, Ռայ. Ժողովը յանձնարարում է կովկ. բոլոր դաշնակ. մարմիններին եւ ընկերներին:

1) Շարունակել կազմակերպել հայ աշխատաւորութեան կուսակցական – դաշն. միութիւնների միջոցով, դրա հետ միասին համերաշխութեան կապ հաստատելով նոյն արհեստի այլ միութեան հետ եթէ այդպիսին գոյութիւն ունի:

2) Պրոպագանդ մղել ոչ միայն հայ աշխատաւորութեան մէջ, նրա դասակարգային գիտակցութիւնը զարգացնելու համար, այլ հնարաւոր դէպքերում դաշնակցական միութեան կից կազմակերպել նաեւ օտարազգի բանուորներին առանձին խմբակով եւ իբրեւ այդպիսին միացնել դաշնակց. միութեան հետ:

3) Օտարազգի աշխատաւորութեան լեզուի եւ ազգային իրաւահաւասարութեան զարգացմանը նպաստելու համար յատուկ պրոպագանդ մղել նրանց մայրենի լեզուով, հրատարակել թռուցիկներ եւ գրքոյկներ նոյն լեզուով, որովհետեւ դասակարգային գիտակցութիւնը զարթեցնելու տեսակէտից դա է պրոպագանդի ամենանպատակայարմար ձեւը:

4) Այդ կերպ կազմակերպելով օտարազգի աշխատաւորներին, Հ.Յ.Դ. պէտք է ղեկավարէ եւ պաշտպանէ նրանց դասակարգային շահերը, միեւնոյն ժամանակ աշխատելով առաջ բերել Դաշնակցութեան նման ուրիշ ազգային սոցիալիստական կուսակցութիւններ, որոնցից իւրաքանչիւրը ղեկավար կը դառնայ իւր ազգի աշխատաւորութեան, միեւնոյն ժամանակ ֆեդերատիւ կապերով կապուելով միւս սոց. կուսակցութիւնների հետ եւ այդպիսով դառնալով անդամ սոցիալիստական մեծ ֆեդերացիայի:

5) Դաշն. աշխատաւորական միութիւնների օտարազգի անդամները մտնելով միութեան մէջ դրանով իսկ ստանձնում են կատարել դաշնակցականի բոլոր պարտականութիւնները եւ վայելել բոլոր իրաւունքները առանց բացառութեան:

* *Կարդացւում է ընկ. Ճապոնացու ուղարկած զեկուցումը կոոպերատիւ շարժման մասին. խօսւում է կոոպերացիայի կուսակցական լինելու մասին: Վահէն դժուարանում է նախորոշել կոոպերացիայի բնաւորութիւնը, որովհետեւ դեռ փորձ չունենք. դրա համար այժմ չպէտք է որոշենք այդ հարցը: Լեռնեանը կողմնակից է կուսակցականին: Բաբա Նոյնպէս կողմնակից է կուսակցականութեան եւ գտնում է, որ ներկայ քաղաքական պայմաններն արգելք չեն կարող լինել: Մհերեան չեշտում է, որ ամէնից աւելի կարեւոր են արդիւնաբերող կոոպերացիաները, իսկ դրանց կուսակցական անելը դժուար չէ: Բացի այդ կոոպերացիաներից ստացուող օգուտը պէտք է անպայման մտնի կուսակցութեան կասսան:*

Անտոն.— *Գտնում է, որ ներկայ պայմաններում ժողովրդին չպէտք է զբաղեցնել փեչակարութեամբ*[71], *այլ կանգնեցնել նրան խոշոր յեղափոխական գործերի վրայ:*

Հայր-Աբրահամ.— *Առաջարկում է ժողովրդի մէջ յօգուտ կոոպերացիայի եղած տրամադրութիւնը ծառայեցնել յեղափոխութեան օգտին: Գործին, քանի որ նա նոր է, պէտք է զգուշութեամբ մօտենալ լաւ ուսումնասիրելուց յետոյ. կողմնակից կուսակց. կոոպերացիային:*

Աբրօ.— *Համակարծիք ընկ. Անտոնին, որ ներկայ պայմաններում կոոպերացիան շատ բան չի անի, բայց քանի որ տրամադրութիւն կայ պէտք է դրանով զբաղուենք: Արդիւնաբերական կոոպերացիաները անպայման պէտք է կուսակցական լինին, իսկ սպառողականներն անկուսակցական, միայն մեր ընկերների ազդեցութեան տակ.*

1) *Պայը*[73] *պէտք է էժան լինի*

2) *Պայի* % [*տոկոսը*] *հասցնել նուազագոյնին:*

Սպառողական խանութի նպատակը պիտի [*լինի*] *լաւ ապրանք* [*հայթայթել*], *եւ ապա օգուտը:*

3) *Օգտի մի մասը յատկացնել անգործ կամ հիւանդ ընկերներին:*

4) *Կենսաթոշակի դրամարկղ հիմնել ծերացումների համար:*

5) *Դիւիդենդից*[74] *մաս հանել սպառողներին, որ պէտք է տրուի միայն մարկաներով*[75]:

6) *Ապրանքը ծախել միայն կանխիկ փողով:*

7) *Այդտեղ աշխատաւորը պիտի ստանայ աւելի վարձ քան ուրիշ նոյնանման խանութներում:*

8) *Գործը սկսելուց յետոյ անդամ գրուիլ ուզողները մտցնում են* 50 *կ. կամ* 1 *ռ. կանխավճար, մնացած գումարը լրացւում է գնած ապրանքի օգտից:*

9) *Տարուայ կէսին հեռացող անդամը ստանում է միայն իւր մտցրած կանխավճարը:*

Վահէ.— *Կոոպերացիան կեանքի պահանջն է եւ մենք ընդ առաջ պէտք է գնանք. կոոպերացիաների նպատակն է համայնական հասկացողութիւնը տարածել եւ աշխատել ժողովրդին կանխաւ պատրաստել յաւագոյն կարգերի համար (չեշտում է դարձեալ անկուսակցականութեան վրայ):*

Բանաձեւը

Վահէ.— *Ռ. ժողովը չեշտելով կոոպերացիաների կարեւոր նշանակութիւնը համայնական գործակցութիւնը զարգացնելու եւ աշխատաւոր դասակարգին այդ ոգով դաստիարակելու տեսակէտից, յանձնարարում է կովկ. Դաշնակցութեան մարմիններին եւ ընկերներին.*

1) *թէ գիւղերում եւ թէ քաղաքներում նպաստել կոոպերատիւ ընկերութիւններ առաջ գալուն յատուկ պրոպագանդայի միջոցով, բացատրելով նշանակութիւնը* [*եւ*] *կազմակերպելու ձեւերը*

2) *պրոպագանդի գործը դիւրացնելու նպատակով հրատարակել մատչելի ձեռնարկներ եւ գրուածքներ թէ պարբերական եւ թէ առանձին գրքոյկներով կոոպերացիաների մասին* (19 *ձայնով*):

Գիւղացիական արդիւնաբերական կոոպերացիաները չլինեն կուսակցական (14 *ձայն*):

Քաղաքի արդիւնաբերական կոոպերացիաները պէտք է լինեն կուսակցական (13 *ձայն*):

Քաղաքի սպառողական կոոպերացիաները պէտք է լինեն կուսակցական +9 *եւ* -9 *ձայն*:

Արեւելեան Բիւրոյի վրայ դրուել է պարտականութիւն հրատարակել կոոպերացիայի վերաբերեալ համառօտ հրահանգ, որ եւ ուղեցոյց պէտք է լինի դաշնակցական ընկերների եւ մարմինների համար:

73.- Վարձակալման գինը:
74.- Շահաբաժինն:
75.- Դրոշմանիշ, նամականիշ:

ՆԻՍՏ

Ցունուարի 6-ին առաւօտեան

Պրոֆեսիոնալ միութիւնների կնիքի մասին

Աբբօ.— Կնիք կարող են ունենալ միայն արհեստակ-[ցա]կան միութիւնների բիւրոն կամ խորհուրդը։ Կնիքը պիտի լինի ձուաձեւ կապոյտ թանաքով։ Չպէտք է իւրաքանչիւր միութեան ձեռքը տալ կնիք, որից կարող են չարիքներ առաջ գալ։

Ռ. ժողովը ընդունում է հետեւեալ առաջարկը։

Առանձին միութիւնները կնիք չպիտի ունենան. կնիք կարող է ունենալ միայն շրջանային մարմինը։ Կնիքը պիտի լինի ձուաձեւ եւ կապոյտ թանաքով. բոլոր քաղաքներում նաեւ Բագու, արհեստական բիւրոները պէտք է կազմեն խորհուրդ։

Թողնել Արեւելեան Բիւրոյին պատրաստել կնիքներ եւ հարկ եղած դէպքում միայն յանձնել համապատասխան մարմինին։

Ընկ. Վահէն առաջարկում է

Բոլոր բանուորական միութիւնները կոչել արհեստակցական միութիւններ։ Առաջարկում է նաեւ հրաւիրել արհեստակցական միութիւնների կոնֆերանս։

Ժողովը ընդունում է այդ առաջարկները։

Կոնֆերանսը պիտի գումարուի անշուշտ մինչեւ Բարեկենդան։

Տեղի ունեցան ընտրութիւններ. երկու լրացուցիչ անդամներ Արեւելեան Բիւրոյին համար.—

Ընտրուեցին ընկերներ Բաբա եւ Լեռնեան 19ական ձայնով եւ երկու անդամ Դաշնակցական Խորհրդի համար — ընկերներ Ռոստոմ 20 ձայնով եւ Սիերեան 19 ձայնով։

Գիւղացիական միութիւններ

Զեկուցում է կարդում ընկ. Վահէն. պահանջել նրանից այդ զեկուցումի համառօտ տեսութիւնը։

Սիրաք.— Մի պիտի լինի գիւղացիական միութիւնների անդամ։ Իւրաքանչիւր գիւղացի կարող է միութեան մէջ մտնել ի բացառեալ այն գիւղացիները, որոնք հանդիսանում են վաշխառուներ, կեղեքիչներ եւ հարըստահարողներ։

Ջաւախեան.— Առաջարկում է ընդունել ամբողջովին ընկ. Վահէի կազմած նախագիծը, որպէս ձեռնարկ մի տարուայ համար։

Մհերեան.— Խօսում է գիւղացիական միութիւնների կազմի մասին։ Նրա կարծիքով կարող են մտնել դրանց մէջ միայն հողազուրկ, սակաւահող եւ ժամանակաւոր ծառայ ունեցող գիւղացիներ։ Խանութ ունեցողները չպէտք է ընդունուեն միութիւնների մէջ։ Զգուշացնում է ընկերներին՝ թոյլ չտալ էկոնո[մի]զմի[72] գարգացման։ Գիւղերում չպէտք է կազմել քաղաքական խմբեր։

Ընկ. Անտոն.— Դաշնակցութեան կենսունակութիւնը գտնւում է գիւղաց[իական] միութիւնների մէջ։ Ամենագլխաւոր պակասութիւնը Վահէի նախագծի մէջ քաղաքական-յեղափոխական մոմենտի բացակայութիւնն է։ Պէտք է նախ եւ առաջ չեշտել մեր քաղաքական պահանջները։ Բացի քաղաքական պահանջներից Վահէի նախագիծը ունի եւ այն պակասութիւնը, որ տնտեսական ձեռնարկութիւնների թիւը չափազանց շատ է եւ մասամբ անիրագործելի. պէտք է կենտրոնանալ այնպիսի ձեռնարկութիւնների վրայ, որոնք 1) աւելի կարեւոր են եւ 2) աւելի պարզ իրանց բնոյթով։

Մի քանի ընկերներ առաջարկում են գիւղաց. կոնֆերանս՝ գիւղացիական միութիւնների մասին խորհրդակցելու։

Ընկ. Վահէ.— Ընդունում է ընկերների առաջարկը՝ հրաւիրել գիւղաց. միութիւնների կոնֆերանս. իր կանոնագրի մէջ քաղաքական կողմը եթէ չեշտուած չէ — դա բացատրւում է նրանով, որ գիւղացիական միութիւնների անդամները, ընդունելով Դաշնակցութեան ծրագիրը ու տակտիկը, բաւականաչափ կարող են համակուել քաղաքական-յեղափոխական բարձր տրամադրութեամբ։ Առաջարկում է ժողովին ընդունել իր մշակած կանոնագրի նախագիծը։

Ռ. ժողովը ընդունում է հետեւեալ բանաձեւը.

Լսելով ընկ. Վահէի զեկուցումը գիւղացիական միութիւնների մասին, կարծիքների փոխանակութիւնից յետոյ Ռ. ժողովը որոշեց յանձնարարել Արեւ. Բիւրոյին ուշադրութեան առնելով անցեալ Ռ. խորհրդաժողովի եւ ընկ.Վահէի կազմած «գիւղաց. միութիւնների կանոնագրութեան նախագիծը», մշակել մի վերջնական կանոնագիր գիւղացիական միութիւնների համար, որը եւ նախապէս քննութեան ենթարկուելով գիւղաց. միութիւնների յատուկ կոնֆերանսի մէջ, ներկայացուէր հետեւեալ Ռայոնական ժողովի ի հաստատութիւն։

Նիստի շարունակութիւնը արձանագրել է Սիմ.ը, Վրէժի[12] մասին։

Ի նկատի ունենալով Վրէժի շրջանի առանձնայատուկ պայմանները Ռայոնական ժողովը որոշեց այդ շրջանի տնտեսական կազմակերպութիւնների առաջ բերելու գործը (արհեստակցական, գիւղացիական եւայլն) թողնել տեղական մարմիններին, որոնք կը մշակեն յարմար կանոնագիր եւ համաձայնելով Արեւելեան Բիւրոյի հետ կը մտցնեն նրան ի գործադրութիւն։

ՆԻՍՏ

Ցուն. 6-ի երեկոյեան

Ժողովը բացուեց ժամի 7-ին, նախագահութեամբ Բաբայի. քարտուղար՝ Ռոստոս։ Լիազօրութիւն տուեց պրեզիդիումն ամփոփելու բոլոր արձանագրութիւնները։

Խօսւում է բանաւոր եւ գրաւոր պրոպագանդայի մասին։

Զեկուցանում է ընկեր Բաբա։

Բաբա.— Դաշնակցութեան մէջ պրոպագանդը ամէնից քիչ է ուշադրութեան առնուել։ Գրաւորը 16 տարուայ ընթացքում եղել է 50 N. [թիւ] Դրօշակ եւ մի քանի հատ էլ հրատարակութիւններ։ Վերջին մի տարուայ ընթացքում նա գովելի եռանդով հրատարակեց 58 հատ գիրք, որոնք որոշ չկոլայի էին պատկանում եւ որոշ միտք էին արտայայտում։

Բանաւոր պրոպագանդայի վրայ քիչ ուշք է դարձրուել, որովհետեւ ամբողջ մտածողութիւնը կուսակցութեան՝ կենտրոնացած է եղել զինուորական ոյժեր արտայայտելու մէջ։

Մենք միշտ մասսաներ աւելի շատ ենք ունեցել, քան պրոպագանդիստներ. մի երեւոյթ, որ ուրիշ կուսակցութիւնների մէջ տրամագծօրէն հակառակն է կատարւում։

Վերջերս պատրաստել ենք մի խումբ ինտելիգենտ պրոպագանդիստներ, որոնք զանազան հովերով տարուելով չծառայեցին բուն նպատակին։

Պատճառների մասին լռում եմ, որովհետեւ մեզ հեռու կը տանի։ Պէտք է մտածել մնացածների մասին։

Մինչեւ այժմ եղած պրոպագանդան տաճկահայ ժողովրդի դատն է եղել, որ բխում էր գլխաւորապէս զգացմունքից, իսկ այժմ այդ մտել է թէորիտիկական խնդիրների շրջանը։ Այժմ մեզ անհրաժեշտ է բնորոշել մեր բազայի դրութիւնը, որի վրայ մենք կը հիմնենք մեր իդիոլոգիան, որ իր հերթին պարզ կը լինի, օգտաւէտ ու նպատակայարմար։

Առաջ քարոզում էին թէորիան, իսկ գործնականի մէջ բոլորովին հակառակ գործողութիւններ էինք կատարում. այժմ այդ երկուսի մէջ պիտի աշխատել որոշ հարմոնիա պահպանել։

Մեզ անհրաժեշտ է ունենալ պրոպագան[դիստական] շկոլա, որը բնորոշել շատ դժուար է։

Դա կարող է լինել մի թէորետիկի պարապմունքները սիստեմայով մի խումբ երիտասարդների հետ, որոնք ծանօթանալով թէ մեր եւ թէ հակառակորդ կուսակցութիւնների ծրագրային-սկզբունքային կէտերը, որոնցով պիտի զբաղեցնել մեր պրոպագանդիստների ուղեղները [sic]։

Անհրաժեշտ է պատրաստել այնպիսի միջակ ոյժեր, որոնք ապրում են ժողովրդի հետ եւ նորա ցաւերով տարւում։ Բանաւոր պրոպագ-ի նիւթը պիտի լինին այն բոլոր հարցերը որոնք մեր ծրագրում որոշուած են եւ այլն. որոնք այս ժողովներում լայն բացատրութիւններ ենթարկուեցան։ Հիմա պիտի ցոյց տանք այն դասակարգերի տնտես. եւ քաղաքական դրութիւնը, որոնց վրայ յենւում ենք եւ այլ այդպիսի հարցեր։

Այս բոլորն ի նկատի առնելով առաջարկում եմ.

1. *Պրոպագանդիստական շկոլա*
2. *Ուժ տալ գրաւոր պրոպագանդային*
3. *Պահել անլեգալ թերթ*
4. *Թռուցիկների գրականութիւնը կանոնաւորել*
5. *Ամսագիր, քննութեան ենթարկելու բոլոր գրական հարցերը։*

Զեկուցում թերթի մասին (կուսակցական)

Թերթը ունի նաեւ առաւելութիւններ, որ ապահով է լինում կոնտինգենտի եւ աշխատաւորների տեսակէտից[76]։

Երկրորդ՝ պակասութիւններ, մանաւանդ թերթի խմբագրութիւնը ոչ ոքի առաջ իր յոդուածների համար պատասխանատու չէ, իսկ կուսակցութիւնը՝ իւրաքանչիւր անդամի առաջ։

Մեզ վրայ պարտաւորութիւն կար, իսկ իրաւունք եւ առաւելութիւն պակասում է։ Մեր առաջ դրուած է միշտ փակման խնդիրը՝ դամոկլեան սուրի պէս, որը պատճառում է ֆիզիքական տանջանք եւ նիւթական զրկանք։ Իւրաքանչիւր թերթի փակում նստում է 1000 ռ., մինչեւ այժմ փակուել է 11 անգամ[77]։ *Մենք չունենք ընթերցողներ, որոնց համար [պարտաւորիչ] լինէր կարդալու կուսակցութեան ծրագիրը։*

Մեր մասսաները անգիտակից են, չեն կարդում թերթը, որի համար ստիպուած ենք կոմպրոմիսի[78] *դիմելու. տեղ տալիս [ենք] եւ այնպիսի լուրերի եւ յոդուածների, որոնցով հետաքրքրւում են միւս խաւերը, որպէսզի կարողանանք մրցել միւս թերթերի հետ։ Առաջ թերթի յաջող տարածման պատճառով, մեծ յոյսեր ունէինք թէ թերթի տարածման եւ թէ ընկերների եռանդուն աջակցման վրայ։ Իսկ այժմ երբ մեր ուղղութիւնը պարզուած*

76.- Ըսել կ'ուզէ՝ աշխատակազմով, տնտեսութեամբ եւ անհրաժեշտ սարքաւորումով։

77.- Արդարեւ, Թիֆլիսի մէջ հրատարակուող Կովկասի Հ.Յ.Դ. պաշտօնաթերթ «Յառաջ»ը 1906-1907, երկու տարիներու ընթացքին ցարական գրաքննութեան կողմէ բազմիցս խափանման ենթարկուելով, շարունակեց լոյս տեսնել 11 անգամ անուն («Երկիր», «Ձանգ», «Փայլակ», «Ժայռ», «Խարիսխ», եւայլն), արտօնատէր եւ խմբագիր փոխելով։

78.- Փոխզիջումի։

է, թերթը յաջող չէ տարածուում, իսկ մեր ընկերները սովորել են ամէն մի յօդուած վարձատրութեամբ գրել. հոնորարը[79] *բաւական վնաս է հասցնում թերթին։ Այս բոլորը ի նկատի ունենալով առաջարկուում է — 1. Ուժեղացնել խմբագրական մարմինը, որովհետեւ ներկայում ամբողջ ծանրութիւնը ընկած է 2 ընկերոջ վրայ. 2. խմբագիրները բացի խմբագրական պարտականութիւնից չպիտի ունենան այլ կուսակցական պարտականութիւններ։ 3. Իւրաքանչիւր մի ընկեր, որ տնտեսապէս ապահով է, պարտաւոր է իր ուժերը նուիրել թերթին ձրիապէս։ 4. մարմինները պարտաւոր են հոգալու թերթի տարածման համար։*

Թերթի ծախսեր —

1) Տպարան — ամս[ական] 4-500 ռ.

2) Գրաշարներ — 6-700 ռ.

3) Թուղթ — 900 ռ.

4) Էքսպեդիցիա[80] *— 1-120 ռ.*

5) Փոստի ծախս — 200-300

6) Ռոճիկներ — 650-700

7) Յօդուածավճարներ — 100

8) Աննորմալ դրութ[իւն] եւ թերթի փակ[ում] 1100 ռ.

Թերթի հաշիւը մանրամասն չկար, որ արձանագրութեան մէջ մտցուէր, ինչպէս եւ «Յառաջի» գրադարանի ամբողջ հաշիւը։

Աքրօ.— 1) Առաջարկում է կանտորային[81] *թերութիւնները վերացնել*

2) Ագենտներ՝ զեղծարարութիւններին վերջ տալ

3) Դնել վաճառական հիմունքների վրայ առանց ի նկատի ունենալու նրա կուսակցականութիւնը։

4) Թերթի տարածումը դարձնել կ. կոմիտէութիւնների համար ցենզ, որոնք պարտաւոր են վաճառելու մօտ 800 օրինակ։

5) Դաշն.-թեան միսսիայով պաշտօն որոնողները եւ պաշտօն ունեցող դ-ականները՝ յօդուածների համար փող չպիտի վերցնեն։

6) Գտնելով պայերով ընկերներ, որոնք յանձն առնեն թերթի հրատարակութիւնը։

Գրաւոր պրոպագանդ.

1) Թերթը պիտի գրուած լինի մատչելի լեզուով, առանց օտարազգի բառերի։

2) Յառաջի գրադարանը ժողովրդականացնել, վերցնելով մեր կեանքից նիւթ՝ ինքնուրոյն գրուածներով։

3) Թարգմանական գրականութեան մէջ խոշոր տեղ տալ կապիտալ գրուածներին ։

Բանաւոր պրոպագանդա.

1) Պրոպագանդիստական շկոլան մեզ կը տայ միայն պիտանի մարդիկ։

2) Մեր չէֆերը պէտք է ցրուեն գաւառները եւ աշխատաւորութիւնից պատրաստեն ղեկավար պրոպագանդիստ ուժեր։

Nomo.— *Մեր թերթի չտարածուելու պատճառը՝ լեզուն մատչելի չէ, հետաքրքիր նիւթեր չկան եւ ներկայ ռէակցիան խոչընդոտ է հանդիսանում։ Առաջարկում է փակել թերթը։ Որոշուեցաւ 14 ձայնով լսել իւրաքանչիւր շրջանից մի-մի հոգու կարծիք, իսկ 13 ձայն[ով] որոշուեց տալ իւրաքանչիւր խօսողի 10 ր[ոպէ] ժամանակ։*

Nomo.— *1) Փակել թերթը մանաւանդ որ նա տարեկան 20 հազար դեֆիցիտ*[82] *ունի։*

2) Մեծ դեֆիցիտի պատճառով աւելորդ է ամսաթերթը։

3) Ունենալ մի անլեգալ թերթ։

4) Հրատարակել կոպէկ գին ունեցող գրքեր[83]*։*

Սիմ. Սաք.— 1) Անհրաժեշտ են բանաւոր պրոպագանդիստներ, բայց ներկայումս կարեւոր են եւ ի պաշտօնէ պրոպագան[դիստներ]։

2) «Յառաջ»ի գրադարան — էժան եւ մատչելի լեզուով։

Դայլ.— 1) Ժողովրդական լեզուով գրել։ Վիպական մաս լինի գրքերի մէջ։

2) Եթէ անկարելի է յեղ. յօդուածներ տպել, փակել թերթը եւ զարկ տալ անլեգալ հրատարակութեան։

Շահէն.— 1) Պիտի լեզուն ժողովրդականացնել։

2) Աւտոմատ[84] *պրոպագանդիստներ հարկաւոր չեն. ուրեմն եւ շկոլան անհրաժեշտութիւն չէ։*

3) Նայած ժամանակին եւ տեղին պրոպագանդիստի նիւթերը կը փոխուեն։

4) Հրատարակել մի ամսաթերթ — գիտական եւ ժողովրդական-գիտական բաժիններով։

5) Յենզուրային[85] *պայմանների եւ դեֆիցիտի*[82] *շնորհիւ թերթը դնել մասնաւոր ակցիաների հիման վրայ։*

Թաթ.— 1) Ռուսերէն թերթ պէտք չէ, այլ թուրքերէն։

2) Մեր հրատարակութիւնները, թէեւ շատ հրաշալի, մատչելի չեն «գիւղի» համար։

3) Մեր հերոսների կենսագրութիւնները եւ դոցա հետ պատահած դէպքերը մատչելի եւ պատկերազարդ տպել ու ցրել ժողովրդի մէջ։

Քաք[1]*. Թաթ.— Բացի յեղափ. կեանքը, ունենք նաեւ ազգային-կուլտուրական, որի տուն տուողը լեգալ թերթն է։*

79.- Պատուագին, դրամական վարձատրութիւն։
80.- Առաքում։
81.- Գրասենեկային։
82.- Բաց։
83.- Այսինքն՝ մէկ ռուբլիէն պակաս գին։
84.- Ոչ ինքնուրոյն, մեքենայաբար գործող։
85.- Գրաքննութեան։

Զպէտք է աշխատել ազգային ուժեղ ֆակտորներից մէկը՝ լեզուն գռեհկացնել։

Պիտի աշխատել թերթը մօտեցնել կուսակցական գործերին։

Վաքրիկ.— Գրքեր հրատարակել երբեմն զանազան բարբառներով։ Մեր լիդերներից ոմանք յիշեն գաւառը եւ յաճախեն երբեմն շարժելու գաւառական ճահճացած կեանքը։

Թմբուկ[10]*.— Թերթը վաճառականական հիմքերի վրայ չպէտք է դնել. կուսակցական թղթակցութիւններին առաջնակարգ տեղ տալ։ Պարտաւորութիւն դնել մարմինների վրայ թերթը ցրելու համար։*

«Զեմլյա»ն[86] *վերածել օրաթերթի։*

Պահել պրոպագանդիստական շկոլա։

Վրէժ.— Պարսկական ներկայ շարժումներին պէտք է թերթը ուշադրութիւն դարձնէ։

Լուսաբանել տաճկական ներկայ շարժումը եւ նորա տնտեսական ու քաղաքական դրութիւնը։ Դաշնակցական սկզբունքային խնդիրների վերաբերմամբ՝ գիտական եւ ժողովրդական լեզուներով տալ որոշ սերիաներ։

Մհեր.— Իւրաքանչիւր շրջանում մարմինների անդամների թուի հաշուով՝ իւրաքանչիւր տասը հոգուց մէկին գրել բաժանորդ։

Բանաձեւեր

1) Իւրաքանչիւր շրջանում մարմինները հրաւիրում են համախմբել պրոպագանդայով պարապող ուժերը եւ ըստ այնմ բաշխումը կատարել։

2) Առաջարկել Բիւրոյին ուղարկել աւելի պատրաստուած շրջիկ ոյժեր գաւառները՝ տեղական պրոպագանդիստներին աւելի մանրամասն տեղեկութիւններ հաղորդելու համար կուսակցական հետաքրքիր եւ գլխաւոր հարցերի մասին։

3) Յանձնարարերով այդ, Ռայ. ժողովը յիշեցնում է բոլոր դաշնակցականներին, որ ամէն մի կուսակցական անդամ պիտի հանդիսանայ պրոպագանդիստ իւր շրջանում՝ իր ուժերի եւ պատրաստութեան չափ։

4) Բանաւոր եւ գրաւոր պրոպագանդը պէտք է ապահովել տարուայ նորմալ հասոյթներից ոչ աւել քան կիսով, մնացածը յատկացնելով կուսակցական բուն յեղափոխական կարիքներին՝ թէ Թուրքիայում եւ թէ Կովկասում։

5) ա. Հիմնել այն վայրերում, ուր կարիք կայ պրոպագանդիստների, դպրոցներ, որտեղ նրանց սիստեմատիկ տեղեկութիւններ կը տրուեն կուսակցական հիմնական սկզբունքների մասին։

բ. Շարունակել հրատարակել «Յառաջի Գրադարանը», որի հրատարակութիւնները պիտի լինեն ըստ կարելւոյն ինքնուրոյն եւ մատչելի ժողովրդին, միւս կողմից թարգմանութիւնները պիտի լինեն գիտական եւ աւելի կանոնաւոր։

գ. Բոլոր կուսակցական ընկերների անմիջական պարտականութիւնն է նպաստել ինչպէս կուսակցական գրականութեան եւ մասնաւորապէս թերթի տարածման, այնպէս եւ կազմակերպել թերթի համար կանոնաւոր թղթակցութիւն վարձատրելով այդ մասին ծայրայեղ անհրաժեշտութեան դէպքում։

դ. Հրատարակել հայերէն մի անլեգալ թերթ, օրգան։

ե. Հրատարակել, ըստ կարելւոյն թուրք համապատասխան տարրերի նիւթական եւ բարոյական աջակցութեամբ, մի թուրքերէն պարբերական օրգան եւ առհասարակ լուրջ ուշադրութիւն դարձնել թուրքերէն պրոպագանդի վրայ։ Դաշ[նակցու]թեան ծրագիրը թարգմանել ռուսերէն եւ թուրքերէն։

զ. Հրատարակել հայերէն օրաթերթը, դնելով նրան այնպիսի հիմունքների վրայ, [որ] դեֆիցիտը չանցնի 5 հազարից։

է. Մեր ուշադրութիւնը կենտրոնացնել ուսանող երիտասարդութեան վրայ, թէ Կովկասում եւ թէ համալսարանական քաղաքներում, ծանօթացնելով նրան մանաւանդ մեր երկրի առանձնայատուկ պայմանների հետ։

ը. Պրոպագանդիստը նախքան գործի անցնելը ուսումնասիրելու է թէ թէորապէս եւ թէ գործնականապէս իր գործունէութեան վայրը,— գաւառներում գործողը առնուազն մի քանի գիւղեր, քաղաքում աշխատողը արհեստանոցների եւ գործարանների կազմը, աշխատաւորութեան դրութիւնը, շերտերը եւ այլն։

թ. Պրոպագանդիստը պիտի լինի քարոզիչ, ուղղութիւն եւ լուսաբանութիւն տուող խորհրդատու եւ ոչ թէ պատասխանատու վարչական անձնաւորութիւն։

ժ. Ռ. ժողովը հրաւիրում է ուսանող ընկերներին առաջ բերել պրոպագանդիստների խմբեր իրենց միջից եւ ամառուայ ընթացքում ցրել դրանց շրջանները։

ՆԻՍՏ

Յունուար 7-ին առաւօտեան

Նախագահում է ընկ. Բաբան. քարտուղար՝ Վազրիկ։

Նախագահը նիստը բաց անելով դնում է թերթի խնդիրը։

Յանկութիւն է յայտնուում, որ բոլոր այն գումարներին, որոնք ստացուում են զանազան տեղերից յօգուտ

86.- Բնագրին մէջ ռուսատառ «Հող»ը։

սովեալների կամ Վարագայ ֆոնդի — հաշուետուութիւնից յետոյ դրուէին ետոքները։

.....[87]— *Նկատում է, որ թերթը հրատարակելով Բիւրոն զրեթէ կտրել է չրջանների հետ գրագրութիւն ունենալու կարեւոր կապը։*

Ցանկութիւն է յայտնւում, որ անկախ թերթի տուած լուրերից Բիւրոն շարունակէ տալ չրջաններին յեղափոխական կեանքում կատարուած բոլոր այն տեղեկութիւնները, որոնք թերթում չեն կարող տպուել. դա կարեւոր է գտնում մանաւանդ դաշնակցական ռայոնները իրար հետ կապելու եւ իրարից տեղեկութիւն ունենալու տեսակէտից։

Խօսակցութիւն եղաւ նաեւ թերթում տպուող հոգեհանգիստների մասին եւ տրուեց հետեւեալ բանաձեւը.—

Որքան հնարաւոր է խոյս տալ հոգեհանգիստների նկարագրութիւնները տպագրելուց եւ խոյս տալ առհասարակ, հոգեհանգիստներին փոխարինելով նրանց միտինգ-սգահանդէսներով (18 ձայն)։

Անտ[ոն].— Ցանկալի է համարւում, որ այս կամ այն նպատակի համար (սով, վարակ, ֆոնդ) ստացուող գումարներից փոխարինաբար չվերցուէր, այլ իսկոյն ուղարկուէր նպատակին։

Թերթում տպուող պատկերների մասին ընկ. Անտ[ոն] առաջարկեց հետեւեալ բանաձեւը.—

Յանձնարարել խմբագրութեան, որ նա պատկերների վերաբերմամբ կամ պահպանէ որոշ ուղղութիւն, կամ բոլորովին չտպի (անցաւ 13 ձայնով)։

Ընկ. Անտ.— Ցանկութիւն է յայտնում, որ

Թերթի եւ առհասարակ կազմակերպական գործերի մասին կուսակցութեան մարմինները պարբերաբար յայտնէին իրենց կարծիքը եւ քանի որ թերթը կիսապաշտօնական է, ցանկալի է, որ թղթակիցները ընդունուին տեղական մարմիններից (ընդունուեց միաձայն)։

Վահաբ.— Առաջարկում է

Պարտաւորեցնել Կ. Կ.-ներին, որ իրենց շրջաններից տային թղթակցութիւններ. բացի այդ յանձնարարել խմբագրութեան, որ նա միշտ նամակագրութիւն ունենայ թղթակիցների հետ։ Ընդունուեց միաձայն։

Այդ հարցը փակելով ժողովը անցաւ օրակարգի II կէտին։

Ներկայ քաղաքական մոմենտների պահանջները եւ Դաշ. տակտիկան

Հարցի մասին զեկուցանեց ընկ. Ջաւախեանը (խօսածները տես գրաւոր զեկուցումը)։

Բաբա.— Ես պէտք է նկատեմ, որ մենք չէինք լինի յեղափոխական, եթէ առաջնորդուէինք ընկ. Ջաւախեանի ասածների համաձայն. յեղափ. աւանդարտը պէտք է դնի եւ դուրս գայ իւր իսկական լոզունգով։ Ես կարծում եմ, որ յեղափ. կուսակ[ցութիւն]ները եւ Դաշն[ակցութիւնը] ոչ թէ պէտք է ցածրանան հասնեն մինչեւ սահմանդ-ռամկավարներին եւ հոկտեմբերեաններին, այլ նրանք որպէս աւանդարդ պէտք է այդ կուսակցութիւններին քաշեն իրենց յետեւից։

Կարդացուեցին այդ հարցի մասին չրջաններից բերած բանաձեւերը։

Անտ.— Ընկ. Ջաւախեցու ասածները ինձ թւում է ճշմարտութիւններ, բայց միեւնոյն ժամանակ նա չասաց ամբողջ ճշմարտութիւնները. որ Ռուսաստանի բախտից կախուած է եւ կովկասահայերին բախտը, դրանում կասկած չկայ։ Կասկած չկայ նաեւ, որ Ռուսաստ. քաղաքական բախտից կախուած է եւ ամբողջ Արեւելքի բախտը. Ռուսաստանը միշտ եղել է յետադիմութեան միջնաբերդ եւ եթէ ռուսական յեղափոխութիւնը յաղթանակէ եւ ստեղծէ որոշ իրաւակարգեր, այդ կ'ազդէ նաեւ ամբողջ Արեւելքի վրայ։ Պատմում է կամուրջի խորտակման պատմութիւնը։ Հոկտեմբ. 17-ին ռուսական յեղ. կուսակց[ութիւնները] համերաշխ չգործելով՝ տեմպով չտարան իրենց շարժումը, դա էր սխալը, որ չխորտակեց կամուրջը։ Եթէ այդ օրերում դրած [չլինէր] սահմանադրական կարգերի լոզունգը՝ այդ ուժեղ բռնկումը չէր լինի. այժմ էլ եթէ դրուեն փոքր ազդեցութիւններ՝ չեն բարձրանայ, որովհետեւ դրա կարիքը չեն զգում նրանք, այդ կարգերի կարիքը զգում է միայն ազատամիտ բուրժուազիան եւ ինտելիգենցիան։ Այն էլ պէտք է դրուէր,— ազգութիւնների հաւասարութիւն, հողերի լայնացում, հարկերի արդարացի բաշխում, խնդիրներ՝ որոնց կարիքը զգում են բոլորը. այդ էր մոմենտի պահանջը, որ յեղափոխականները չհակացան։ Այժմ եթէ դրուեն այդ խնդիրները, ես համոզուած եմ, որ բոլոր յեղափոխական բանակը դուրս կը գայ եւ կը խորտակէ կամուրջը։ Առաջարկում է ռուսական շարժման ժամանակ առաջ կամ յետ չընկնել ռուսական յեղ. կուսակցութիւններից, այլ նրանց հետ միասին գնալ դէպի նպատակների իրականացում։ Համերաշխութիւն ստեղծել բոլոր միւս յեղ. կուսակցութիւնների հետ։

Nomo.— *Համեմատելով ռուսական եւ եւրոպական անցեալ յեղափոխութիւնները, գտնում է որ նման չեն իրար. եւրոպական յեղափոխութիւններին՝ միշտ առաջ է գնացել բուրժուազիան, իսկ Ռուսաստանում յեղափոխութեան առաջ է գնում աշխատաւորութիւնը. ռուսական յեղափոխութիւնը ցրում է աշխատաւորութեան բնաւորութեան։*

Ընդդիմախօսում է Սիմ. եւ միանում է Բագուայ բանաձեւին, ցանկութիւն յայտնելով, որ բանաձեւին տակ դրուած «Կորչի ինքնակալութիւնը» փոխարինուէր «Կորչի միապետութիւնը եւ կեցցէ սահմանադիր ժողովը» բառերով։

87.- Անընթեռնելի անձնանուն։

Ջեմիլ.— Քննական հայեացք ձգելով ռուսական յեղափոխութեան շարժման վրայ միանում է Սիմոնի առաջարկին։ Գտնում է որ յեղափ. կուսակցութիւնը մոմենտի պահանջն է, որ նրանք սկսին ակտիւ գործունէութեան։ Հակառակ սոց. դեմոկ. հետ համերաշխ գործունէութեան, որովհետեւ նրանց աշխարհահայեացքից չի բխում ռազմական ոգի, սոց. դեմոկ[րատիայի] վերաբերմամբ լինել զգոյշ։

Շահրիկ[88].— *Առաջարկում է օրակարգի մէջ մտցնել Փարիզում կայացած կոնֆերանսի խնդիրը, որպէսզի Ռայ. ժողովը յայտնէ իր վերաբերմունքը։ Ընդունւում է եւ հարցը մտցւում օրակարգի մէջ։*

Լիպ[արիտ[28]*].— Գտնում է որ ռուսակ. յեղափ. զուտ քաղաքական է եւ ապա միանում է Սմբատի բանաձեւին։*

Աբ[րամովիչ].— Անհրաժեշտ է գտնում ընդհ. զինուած ապստամբութիւնը. առաջարկում է ծայրագաւառների կուսակցութիւններից հրաւիրել մի միջկուսակցական բիւրո, ուր կարելի կը լինի որոշ վերաբերմունք մշակել դէպի ազգերի հաւասարեցման հարցը։

Մհեր[15].— *Գտնում է, որ մոմենտի պահանջն է կազմակերպուել, որովհետեւ ժողովուրդը լքուած է. առաջարկում է կատարել մի խմբական յեղափոխական ձեռնարկ մասսայի մէջ ոգեւորութիւն առաջ բերելու։*

Վազգեն.— Գտնում է, որ ռուսական յեղ.ը զուտ քաղաքական չէ, այլեւ տնտեսական, այդ տեսակէտից էլ դէմ է կատեղների եւ այլ այդպիսի կուսակցութիւնների բուրժուական համերաշխ գործունէութեան։ Մոմենտի պահանջն է կազմակերպուել, ռուսական շարժման մէջ գնալ միւս կուսակցութիւնների հետ միասին, որպէս ամենակենսունակ մասը։

Կոչ.— Դաշնակց[ութիւնը] Կովկասում անխուսափելիօրէն պիտի խաղայ առաջնակարգ դեր կատարելով խոշոր տեռորիստական ակտեր։ Նա ուզի չուզի պէտք է Կովկասում աւանդարդ լինի։

Շահրիկ.— Առաջարկում է աշխատել, որքան կարելի է շուտ հրաւիրել միջկուսակցական կոնֆերանսը. ոչ ուշ քան մինչեւ եկող Ռայ. ժողովը։ Նոյնպէս գտնում է, որ Կովկասում Դաշնակցութիւնը պէտք է լինի աւանդարդ, իսկ Ռուսաստանում գործակիցը միւս յեղ. կուսակցութիւնների։

Անտոն.— Սկզբունքային տեսակէտից լուսաբանելով ռուս. յեղափ[ոխութիւնը] նորից շեշտում է միջկուսակցական կոնֆերանսի եւ Բիւրոյի կարեւորութիւնը։

Հայրում.— Շեշտում է կազմակերպուելու վրայ եւ բացի դրանից ոչինչ չի ընդունում մոմենտի պահանջի տեսակէտից։

Անդրանիկ[89].— *Առաջարկում է վերջ տալ վիճաբանութիւններին շեշտելով միջկուսակցական բիւրոյի կարեւորութեան վրայ։ Նպատակայարմար է գտնում, որ ժողովը այդ բիւրոյին դիրեկտիւներ տայ։*

Այս հարցի մասին դրուեցին հետեւեալ բանաձեւերը՝ Մհերի բանաձեւ.

Ընդունելով, որ մեր լոզունգները պէտք է բխին մեր ծրագրից եւ թողնելով այդ մի կողմ ոչ իբրեւ մոմենտի պահանջ եւ ի նկատի ունենալով, որ ռուսական յեղափոխութեան անյաջողութիւնը պէտք է վերագրել գլխաւորապէս յեղափոխական կուսակցութիւնների ոյժերի պակասութեան եւ անկազմակերպ լինելուն,

Ռ. Ժ.-ը գտնում է, որ յեղ. կուսակց-ների, դրանց թւում եւ Դ[աշնակցութ]եան անմիջական գործունէութիւնը պէտք է կայանայ շարքերը ստուարացնելու եւ կազմակերպելու մէջ (անցաւ միաձայն)։

Բ. մաս.— Միեւնոյն ժամանակ ի նկատի ունենալով, որ յեղափոխութեան անյաջողութիւնները լքումն են առաջացրել ժողովրդի մէջ, յեղափոխական տրամադրութիւն եւ ոգեւորութիւն առաջացնելու համար կատարել մի խմբական խոշոր յեղափոխական ակտ, միւս գործօն յեղ. կուսակցութիւնների հետ, եթէ հնարաւոր է (ստացաւ 11 ձայն)։

Գ. մաս.— Հ. Յ. Դաշ. այն չափով միայն յարաբերութեան մէջ կը մտնի միւս կուսակցութիւնների հետ, որ չափով այդ վերջինները կ'ընդունեն Ռ. Ժ.ի այս տեսակէտները (ստ. 11 ձայն)։

Անցաւ եւ Բագուայ բանաձեւի ա. մասը։

Դաշնակցութիւնը ունենալով իր ուրոյն գործելակերպը եւ մասնաւոր գործունէութիւնը, պիտի աշխատէ այնպիսի հարցերում, որոնք համապատասխան բնաւորութիւն են կրում եւ համաժողովրդական բողոք եւ գործունէութիւն առաջ բերում. անպայման համերաշխութեան գալ միւս յեղ. կուսակց.ների հետ։

Մասնակցելով ընդհանուր գործին իր ոյժերի չափ, ճանապարհը հարթելու համար թէ յանուն ապագայի ընդհանուր գործունէութեան եւ թէ աշխատաւորութեան անտանելի դրութեան գէթ աննշան բարւոքման թէ Դաշնակցութիւնը եւ թէ Ռուսաստանի միւս յեղափոխական կուսակցութիւնները պիտի աշխատեն շաղկապել իրենց ոյժերը, պիտի պատրաստուեն մի ընդհանուր գրոհի մի ընդհանուր պահանջով, չկաշկանդելով մի առժամանակ իրենց անկախութիւնը եւ ուրոյնութիւնը յետագայ յեղ. գործունէութեան մէջ, իրենց նշանաբան ընդունելով. «իրաւակարգի եւ դաշնակց[ային] ժողովրդապետութիւն, ազգերի հաւասարութիւն, հող գիւղացուն եւ աշխատանք աշխատաւորին»։ Դաշնակց. պէտք է աշխատէ կազմել մի խորհրդաժողով բաղկացած ծայրա-

88.- Յարութիւն Շահրիկեան, որ ծանօթ էր նաեւ Նիթրա ծածկանունով։

89.- Վստահաբար հայդուկապետը չէ. Անդրանիկ այդ օրերուն կը գտնուէր Եւրոպա։

գաւառների ակտիւ գործունէութեան ընդունակ բոլոր յեղ. սոցիալիստական կուսակցութիւններից եւ ապա դիմէ ռուսական երկու սոցիալ. կուսակցութիւններին՝ Ս. Յեղ[ափոխականներ]ին եւ Ս. Դեմ[ոկրատներ]ին եւ մշակէ համերաշխ յարաբերութիւն եւ գործակցութիւն բոլորի մէջ, վերը յիշուած պահանջների իրականացման համար (*անցաւ 13 ձայնով*)։

Բ. մաս.— Խորհրդաժողովը կայանալու դէպքում պէտք է ձգտել առաջ բերել միաժ[ամանակ] ամբողջ Ռուսաստանում ապստամբական դրութ[իւն] (քաղաքական մեծ գործադուլներ, ագրարային շարժումներ, խլրտումներ զօրքի մէջ, պետական էքսպրոպրիացիա, զինուած ընդհարումներ, տեռոր բարձրաստիճան անձերի վրայ եւ ապստամբութիւն։ Մեր մօտաւոր լոզունգը՝ «Կորչի միապետութիւնը, կեցցէ ֆեդերատիւ Ռուսաստանը» (ստացաւ 12 ձ.)։

Անտոնի բանաձեւը.

Մշակել համերաշխ յարաբերութիւն եւ գործակցութիւն բոլորի մէջ հետեւեալ պահանջները իրականացնելու համար. իրաւակարգ ու դաշնակցական[90] ժողովրդապետութիւն, ազգերի հաւասարութիւն, հողը գիւղացուն եւ աշխատանքը աշխատաւորին (անցաւ 16 ձայն)։

Ռուսական շարժման մէջ Դաշնակց. կատարելիք դերի մասին տրուեց 2 բանաձեւ.

ա. Հայրումի բանաձեւը.

Դաշնակց. Ռուսական յեղափոխ[ութեան] պիտի մասնակցէ իւր ոյժերի ներածին չափ (անցաւ 15 ձայնով)։

բ. բանաձեւ. Ռուսական շարժման մէջ Դաշնակց. պէտք է լինի գործակից միւս յեղ. կուսակց. իսկ Կովկասում աւանգարտ (ստացաւ 6 ձայն)։

ՆԻՍ

Յունուարի 7-ին երեկոյեան

Զեկուցում է հաշուական կոմիսիան։

Հաշուական կոմիսիայի կողմից Վահանը զեկուցեց կոմիսիայի արած աշխատանքների մասին, որից երեւաց, որ գրեթէ բոլոր հաշիւները պահուած են եւ տարուած վերին աստիճանի անկանոն կերպով. երեւաց, որ հաշիւները շրջանային ժողովների կողմից ստորագրած եւ հաստատուած չեն եւ ոչ էլ կնքուած, մի հանգամանք, որը ոչ թէ կասկածի առիթ է տալիս, այլ գալիս է չեշտելու, որ մեր շրջանները վերին աստիճանի անփոյթ են վերաբերւում առհասարակ դէպի կազմակերպութեան դրամների հաշիւները։ Կոմիսիան առաջարկում է կազմել մի քննիչ յանձնաժողով, որի միսսիան պիտի լինի փաստացի կերպով քննել բոլոր շրջանների հաշիւները եւ պարզել թիւրիմացութիւնները։

Մի շարք թեր եւ դէմ խօսողներից յետոյ ժողովը այդ հարցի առթիւ ընդունում է հետեւեալ բանաձեւը.

Ռ. ժողովը քննելով շրջանների ներկայացրած հաշիւները եւ գտնելով ինչ որ անկանոնութիւններ եւ թերութիւններ հաշուետուութեան եղանակի եւ տուրքի գանձման ու շռայլութիւնի՝ դրամների գործադրութեան մէջ, որոշեց՝ այդ իսկ պատճառով չեն կարող վաւերացուել Ռ. ժողովի ֆինանսական յանձնաժողովից։ Ռ. ժողովը ընտրում է մի յանձնաժողով երեք հոգուց բաղկացած, որը պէտք է վերստուգման ենթարկէ ներկայացրած հաշիւները, պահանջելով մարմիններից եւ շրջաններից արդարացուցիչ դոկումենտներ։ Հարկ եղած բացառիկ դէպքերում յանձնաժողովի այս կամ այն անդամը կարող է գնալ համապատասխան շրջան եւ տեղն ու տեղը քննել հաշիւները։ Վերստուգման հետեւանքները յանձնաժողովը պէտք է հաղորդէ բոլոր Կ. Կոմիտէներին առանձին շրջաբերականներով։ Կոմիսիայի մէջ ընտրուեցին հետեւեալ երեք ընկ. Սան., Քար եւ Դայի։

Ուժերի բաշխման մասին

Բոլոր ընկերները գանգատւում են ուժերի պակասութեան մասին։

Աբրօ.— Առաջարկում է հետեւեալ միջոցը ուժերի բաշխման մասին. Մեծ-քաղաքի[11] բոլոր ղեկավարող ուժերը բաժանել Բագուի, Թիֆլիսի եւ Բաթումի մէջ, որոնք գնալով այնտեղ, չզբաղուեն վարչական գործերով, այլ զուտ պրոպագանդիստներ պատրաստելով. իսկ այդ քաղաքների երկրորդական ուժերը ցրել գաւառները։

Մհեր.— Առաջարկում է առանձին ուշադրութիւն դարձնել աշակերտութեան վրայ.

Անտոն.— Պէտք է տարբերել որն է կարեւոր մեր գործունէութեան մէջ. նախ եւ առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել ուսանողների, աշակերտների վրայ, պէտք է դրանք մեզ հետ կապուած լինեն. երկրորդ՝ քաղաքական խմբերի վրայ դարձնել ուշադրութիւն, որտեղից կարող են պրոպագանդիստներ դուրս գալ։ Պրոպագանդիստը չպիտի վարչական գործերի խառնուէ, նա միայն պէտք է պրոպագանդայի հետ գործ ունենայ։

90.- Իմա՝ դաշնակցային։

Ռ. ժ. ընդունում է հետեւեալ բանաձեւերը.

1.- Մեր ուշադրութիւնը կենտրոնացնել ուսանողութեան եւ երիտասարդութեան վրայ թէ Կովկասում եւ թէ համալսարանական քաղաքներում ծանօթացնելով նրան մանաւանդ մեր երկրի առանձնայատուկ պայմանների հետ։

2.- Նախ քան գործի անցնելը, պրոպագանդիստը ուսումնասիրելու է թէ թէորապէս եւ թէ գործնականօրէն իր գործունէութեան վայրը. գաւառներում գործողը առնուազը մի քանի գիւղեր, քաղաքում աշխատողը՝ արհեստաւորների եւ գործարանների զարգացման, աշխատաւորութեան դրութեանը եւ այլն։

3.- Պրոպագանդիստը պիտի լինի քարոզիչ, ուղղութիւն եւ լուսաբանութիւն տուող խորհրդատու եւ ոչ պատասխանատու վարչական անձնաւորութիւն։

4.- Ռ. Ժ. հրաւիրում է ուսանող-ընկերներին առաջ բերել պրոպագանդիստների խմբեր իրենց միջից եւ ամառուայ ընթացքում ցրել դրանց մեր շրջանները։

5.- Չունենալով առձեռն ուժեր, ուժերի բաշխման հարցը թողնել առկախ. Նիստի վերջը ընտրուեց մի դատակ. կոմիսիա 3 հոգուց բաղկացած Շահէն, Վահան, Nomo, որը պիտի լինի Ոսկանապատ Կ. Կոմիտէի [մօտ] եւ ուրիշ [տեղեր], դատական գործեր ներկայացնէ Ռ. ժողովին ի հաստատութիւն»։

ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏ

Յունուարի 8-ին

Զեկուցում զինական յանձնաժողովի։

Զեկուցում է ընկ. Թադէոս, որից երեւում է, որ հաշիւները շատ անկանոն են, շատ տեղերից նոյնիսկ հաշիւներ չեն ներկայացրել։

Աբրօ.— Առաջարկում է ընտրել մի մարմին, որը պէտք է կանոնաւորէ հաշիւները, աւելորդ զէնքերը այս կամ այն կերպ սպառէ, հաշիւների մէջ մի որոշ սիստեմ մտցնէ։

Ժողովից ընդունւում է այդ առաջարկը այսպէս. յանձնաժողովը պիտի կարգի բերէ զէնքերը եւ ճշգրիտ ինվենտար[91] կազմէ։

Նախընթաց նիստում ընտրուած հաշուական կոմիսիան պիտի զբաղուի նաեւ զինական հաշիւներով։ Ընտրւում է Զինական մարմին, որը պէտք է ստուգէ բոլոր հաշիւները։ Ընտրուել են Թորոս եւ Ցակով։

Ընկերները հարց են տալիս, ինչպէս վարուել այն զէնքերի հետ, որոնք անպէտք են. արդեօք այս կամ այն մարմինը իրաւունք ունի զէնքերը ծախել եւ ստացած գումարները ծախսել իրենց առօրեայ պէտքերի համար։

Ընկ. Մհեր.— Առաջարկում է զէնքերը բաժանել երկու կատեգորիայի ա) կազմակերպութեան զէնքեր բ) տեղական մարմինների տրամադրութեան տակ գտնուող զէնքեր (զէնքեր, որոնք ձեռք են բերուել ինքնապաշտպանութեան համար գումարուած փողերով)։

Աբրօ.— Առաջարկում է ոչ մի բաժանում առաջ չբերել. դա կարող է չփոթութեան տեղիք տալ — բոլոր զէնքերը պիտի ընդունել, որպէս Դաշն. սեփականութիւն։

Ժողովը քննելով զէնքերի պահպանման խնդիրը, ընդունեց հետեւեալ բանաձեւը։

«Ոչ մի դէպքում զէնքը չպիտի փոխարինել դրամով — դա պիտի լինի մեր հիմնական սկզբունքը զէնքերի վերաբերմամբ. եթէ կարիքը ստիպում է ծախել պէտք է ստացուած գումարով նորից զէնք գնել. իսկ այն վայրերում, որտեղ մարտական խմբերը կամենում են զէնք ձեռք բերել սեփական հաշուով, կենտրոնական մարմինը վաճառում է իր զէնքերից եւ դրանց տեղ գնում նորերը»։

Դատական

Նախընթաց նիստում ընտրուած դատական յանձնաժողովը քննելով ընկ. Շ.ի ամբաստանութիւնը Ոսկ[անապատի] Կ. Կոմիտէի եւ ընկ. Նիթրայի[88] դէմ նոյնպէս եւ Բագում Վահանի կողմից ընկ. Նիթրայի դէմ եղած ամբաստանութեան առիթով այստեղ կազմուած յանձնաժողովի քննութիւններն ու եզրակացութիւնները, համաձայնում է վերջիններիս հետ հապէս եւ ներկայացնում է Ռ. ժողովին ի հաստատութիւն։ Ժողովը ընդունեց հետեւեալ (բանաձեւերը) որոշումները։

«Ռ. ժողովը, լսելով իր ընտրած քննիչ յանձնաժողովի որոշումը ընկ. Նիթրայի գործի վերաբերմամբ, ընդունեց այն եւ ցաւակցութիւն յայտնեց ընկ. Նիթրային նրա կրած անարդար վերաբերմունքների համար։

Ցայտնել ժողովի այդ որոշման մասին բոլոր դաշնակցական մարմիններին»։

Զաքէոսի գործը

«Լսելով քննիչ յանձնաժողովի որոշումը Զաքէոսի արտաքսման մասին դաշնակց. շարքերից, Ռ. ժողովը հաստատեց այն եւ յանձնարարեց Նաւահանգստի Կ. Կոմիտէին իսկոյն յայտարարել դրա մասին եւ հրաւիրել հասարակութեան ու դաշնակց. ընկերներին խզել նրա հետ իրենց յարաբերութիւնները»։

91.- Գոյքացուցակ, կահագիր։

Հաջիի գործը

Լսելով Նաւահանգստի շրջանային ժողովի բողոքը Հաջիի դէմ եւ Բիւրոյի ներկայացուցչի տուած բացատրութիւնները այդ գործի մասին, Ռ. ժողովը եկաւ այն եզրակացման, որ Բիւրոն տակտիկի վերաբերմամբ վարուել է նրա վերաբերմամբ նպատակայարմար եւ յանձնարարում է Նաւահանգստի, Նալբանդի ու Մրգաստանի Կ. Կոմիտէներին կատարել քննութիւն նրա գործերի մասին եւ իրենց եզրակացութիւնները անմիջապէս հաղորդել Արեւել. Բիւրոյին։

«Ռ. ժողովը, լսելով Ոսկանապատի պատգամաւորի յայտարարութիւնը իր շրջանին մի քանի դատական գործերի մասին, որոշեց յանձնարարել Արեւել. Բիւրոյին՝ Ընդհանուր Ժողովի դատական մարմնի եզրակացութիւնները ներկայացնէ Դաշնակց. Խորհրդին վճիռ գոյացնելու համար»։

«Ռ. ժողովը որոշեց արտաքսել Դաշնակցութեան շարքերից ընկ. Սմբատի սպանութեան երկու մեղսակիցներին»։

«Ռ. ժողովը միաձայն հաստատեց Քարի դատական յանձնաժողովի որոշումը՝ Խաչատուր Եղիազարեանի Դաշնակցութեան շարքերից հեռացնելու մասին»։

«Ռ. ժողովը միաձայն որոշեց հաստատել Քարի դատական յանձնաժողովի վճիռը Վահան Ջալլադեանի արտաքսման մասին»։

«Ռ. ժողովը տեղեկանալով որ Մրգաստանի Կ. Կոմիտէի նախկին անդամ Պետերբուրգի ուսանողը իբր թէ մասնակցել է չանտաժի մէջ, առաջարկում է Մրգաստանի Կ. Կոմիտէին շուտափոյթ կերպով վերջացնել քննութիւնը եւ ամենախիստ պատասխանատուութեան ենթարկել յանցաւորին Հ.Յ.Դ. կանոնագրութեան համաձայն»։

Ռ. ժողովը յանձնարարում է բոլոր դաշն. մարմիններին մի ամսուայ ընթացքում ներկայացնել Խորհրդին լրացուցիչ տեղեկութիւններ իրենց գործունէութեան, հաշիւների եւ գալիք տարուայ բիւջէի մասին, որոնք հիմք պիտի ծառայեն Դաշն. Խորհրդին որոշելու կուսակցութեան Կ. Կոմիտէների թիւն ու տեղը»։

Մանօթանալով Ոսկանապատի Կենտ. Կոմիտ[էի] եւ մասնաւորապէս ընկ. Նիթրայի դէմ յարուցուած մեղադրանքների հետ, ընկ. Արտուրի եւ Դժոխքի կողմից եւ լսելով ընկ. Նիթրայի, Կ. Կոմիտէի եւ ամառուայ 1907 թուի Խորհրդաժողովի կողմից ընտրուած քննիչ յանձնաժողովի բացատրութիւնները, որոշուեց՝

ա. Յայտարարել բոլոր մարմիններին, որ Ոսկանապատի Կ. Կոմ. 1904-06 թ. հակածրագրային եւ հակականոնադրութեան գործ չէ կատարել, պրոլետարիայի ներկայացուցիչ է եղել այն չափով, ինչ չափով թոյլատրել է ժամանակի ոգին, տեղական պայմանները եւ կուսակցութեան մէջ տիրող ընդհանուր հայեցակէտը։

բ. Տեղեկացնել ընկ. Արտուրին դատի հետեւանքը եւ յայտնել ցաւ, որ նա խոր հաւատ ընծայելով հակադաշնակցական անհատներին՝ ընդունել է նրանց ասածները իբրեւ ճշմարտութիւն եւ այդ տեղեկութիւնների հիման վրայ մեղադրել է Ոսկանապատի Կ. Կոմիտէին եւ ընկ. Նիթրային առանց վերստուգելու այդ տեղեկութիւնները։

Ճանաչել ընկ. Նիթրային անպայման արդար իր դէմ եղած ամբաստանութիւնների մէջ եւ յայտնել նրան Ռ. Ժ.-ի ցաւակցութիւնը։

Յայտնել ընկ. Դժոխքին, որ նրա մեղադրական կէտերը ամբողջովին խեղաթիւրուած եւ աղաւաղուած են։

Ե.– Հ.Յ.Դ. ԿՈՎԿԱՍԵԱՆ ՌԱՅՈՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎ

(1909 թ. Ապրիլի 1-5)

1909 թ. Ապրիլ 1–5ին Պաքուի մէջ գումարուած «Հ.Յ.Դ. Կովկասեան ռայոնի մարմինների արտակարգ ժողով»էն մնացած է ամփոփ արձանագրութիւն մը, ձեռագիր եւ մանրատառ 18 էջերէ բաղկացած։ Ժողովին կազմը եւս սեղմ է,– միայն կեդր. կոմիտէութիւններու ներկայացուցիչներ եւ խորհրդակցական ձայնով հրաւիրուած գործիչներ։ Բացայայտ է որ ներկայացուցչական բազմամարդ ռայոնական ժողով գումարելու (ինչպէս սովորութիւն էր Կովկասի մէջ) հնարաւորութիւն չկար, նկատի ունենալով ցարական իշխանութիւններու խստագոյն հալածանքները Դաշնակցութեան դէմ եւ կուսակցական շատ մը շրջաններու քայքայուած վիճակը։ Արեւելեան Բիւրոն ի՛նք եւս կազմալոյծ էր, անդամներուն մեծ մասին բանտարկուած կամ փախստական ըլլալու հետեւանքով։ Այնպէս որ, մինչեւ քանի մը ամիս ետք գումարուելիք Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդհ. Ժողով՝ գործերը վարելու եւ հնարաւորութեան սահմաններուն մէջ կազմակերպութիւնը ոտքի պահելու նպատակով, հարկ կը տեսնուի ժամանակաւոր բիւրո մը ընտրել, մեծ մասամբ Ոսկանապատ-Պաքուի ընկերներէն,– ապացոյց որ Մեծ քաղաք-Թիֆլիսը կը գտնուէր տագնապալի վիճակի մէջ։

Յայտնենք որ ներկայացուած փաստաթուղթին մէջ տարբեր գիրով տուած ենք այն բոլոր կարեւոր բանաձեւերը, որոնք մեծամասնութեան քուէն ստացած ըլլալով՝ որոշումի կարգ անցած են։

ԽՄԲ.

Փաստ. 1588-1

Ե 1.– ԺՈՂՈՎԻ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ՆԻՒԹԸ

1. Մարմինների զեկուցումներ
2. Ռուս կառավարութեան հալածանքը Դ-եան դէմ եւ սրանից բխող մեր տակտիկը Անդրկովկասում:
3. Պարսկական հարց՝
   ա) վերաքննութիւն մեր սկզբունքային վերաբերմունքի Ընդհ. Ժ.-ին ներկայացնելու եւ
   բ) անկախ վերաքննութեան արդիւնքից՝ մեր աջակցութեան ձեւը եւ չափը
   ներկայումս պարսկական ազատագրական շարժման:
4. Մարմինների վերակազմութիւն
5. Դրամական միջոցներ (տուրք)
6. Կարմիր խաչ (բանտարկեալների լայն օգնութիւն)
7. Այժերի բաշխում
8. Ընդհանուր Ժողով
9. Բիւրոյին փոխարինող մարմնի ընտրութիւն
10. Թերթի խնդիր
11. Նոր անունների մասին

[ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄ]

1. Նիստերը բացւում են ճիշտ նշանակուած ժամերին՝ 4.30: Նիստերի բացումը յետաձգւում է միայն այն դէպքում, երբ նշանակուած ժամին ներկայ չեն վճռական ձայն ունեցող եւ քաղաքում գտնուող ընկերների 2/3ը: Այդ մինիմումը լրանալուն պէս, ժողովի կազմը համարւում է օրինաւոր եւ նիստը անմիջապէս բացւում: Կատարուած վիճաբանութիւնները ուշացած ընկերների համար չեն վերսկսւում: Նիստը շարունակւում է մինչեւ այդ օրուայ օրակարգը սպառելը: Բացառիկ դէպքերում նիստը, ժողովի յատուկ որոշումով, կարող է փակուել առանց օրակարգը սպառելու:

2. Նիստերի օրակարգը մշակում է նախագահութիւնը եւ կանխապէս յայտնում ժողովին ի գիտութիւն. օրակարգի քննադատութիւնը, լրացումը կամ կրճատումը չի կարող ժողովի զբաղմունքի առարկայ դառնալ:

3. Նիստը բաց է անում եւ նախագահում է ժողովի կողմից ընտրուած երեք նախագահներից մէկը, նախագահութեան որոշումով:

4. Ամէն մի նիստ սկսւում է նախընթաց նիստի արձանագրութեան ընթերցումով եւ վաւերացումով: Արձանագրութիւնները վաւերացւում են հերթապահ նախագահի եւ հերթապահ քարտուղարի ստորագրութիւններով: Արձանագրութիւնները պէտք է կազմուած լինեն շատ կարճ եւ սեղմ. նրանք պէտք է պարունակեն իրանց մէջ միայն ա) նիստի օրաթիւը եւ կազմը բ) քննութեան առնուած հարցերը գ) առաջադրուած բանաձեւերը եւ դ) քուէարկութեան արդիւնքը:

5. Օրակարգի հարցերը առնւում են քննադատութեան՝ նրանց մասին յատուկ զեկուցում լսելուց յետոյ: Զեկուցումը կարող է բերանացի լինել, բայց նրան եզրակացնող պատճառաբանուած բանաձեւը պէտք է ներկայացուի անպատճառ գրաւոր կերպով: Զեկուցանող ընկերներին տրւում է՝ կենտրոնական հարցերի համար 30, իսկ մնացած հարցերի համար 15 րոպէ ժամանակ: Ձայն ուզող ընկերների տրւում է՝ կենտրոնական հարցերի վերաբերմամբ 10, մնացած հարցերի — 5 րոպէ ժամանակ,— ոչ աւել քան մի-մի անգամ ամէն մի ընկերոջը օրակարգի ամէն մի հարցի վերաբերմամբ: Զեկուցանող ընկերոջը, իւր խօսքը եզրափակելու համար տրւում է, հռետորների ցուցակը փակելուց յետոյ, 15-10 ր. ժամանակ:

6. Զեկուցանող ընկերոջ վերջի խօսքից յետոյ, հարցը դրւում է քուէարկութեան: Քուէարկւում են բոլոր առաջադրուած բանաձեւերը: Բանաձեւերը պէտք է լինեն պատճառաբանուած եւ անպատճառ գրաւոր. նրանք պէտք է խմբագրուեն մեծ խնամքով, կարճ, պարզ եւ որոշ արտայայտուած: Բանաձեւերը խմբագրելու համար նախագահողը, ըստ իւր հայեցողութեան, կարող է 5-10 րոպէով ընդմիջում յայտարարել:

7. Բանաձեւերը քուէարկւում են մի առ մի, այն խմբագրութեամբ, ինչ խմբագրութեամբ ներկայացուած են նախագահողին: Քուէարկութեան ժամանակ ոչ մի լրացումներ, բացատրութիւններ եւ պատճառաբանութիւններ բանաձեւերի վերաբերմամբ չպիտի ընդունուի: Ընդունուած է համարւում այն բանաձեւը, որը ամէնից շատ քուէ է ստացել, եթէ միայն քուէների թիւը քուէարկութեան մասնակցող ձայների կէսից աւել է: Բանաձեւը ընդունելուց յետոյ հարցը համարւում է սպառուած ու փակուած. այլեւս ոչ վիճաբանութիւններ եւ ոչ նոր բանաձեւեր չեն թոյլ տրուելու:

8. Եթէ քուէարկութեան ժամանակ ոչ մի բանաձեւ չի ստանում ձայների բացարձակ մեծամասնութիւն, այն ժամանակ — առանց վիճաբանութիւնները վերսկսելու — կազմւում են նոր բանաձեւեր եւ քուէարկւում:

9. Քուէարկութիւնները կատարւում են առհասարակ բաց. բայց եթէ ընկերներից նոյնիսկ մէկը միայն պահանջէ, այս կամ այն հարցի վերաբերմամբ, գաղտնի քուէարկութիւն, այդ պահանջը պիտի կատարուի:

10. Նախագահողը ամենախիստ կերպով պէտք է հետեւի վիճաբանութիւնների կանոնաւորման եւ ներկայ ռեգլամենտի[1] իրագործման: Հռետորները պէտք է խօսեն միմիայն իրանց հերթին եւ նախագահի յատուկ հրաւէրով: Նախագահը ընդհատում է հռետորին, եթէ նա անցնում է իրան սահմանուած ժամանակից: Նախագահը կտրում է հռետորի խօսքը, եթէ նա չեղւում է հարցից կամ կրկնում է արդէն ասուածները: Առանց թոյլտուութեան խօսողներին, հռետորի խօսքը ընդհատողներին, մասնաւոր խօսակցութիւնների բռնուողներին եւ առհասարակ կարգապահութիւնը խանգարողներին՝ նախագահը հրաւիրում է ի կարգ: Նախագահի պահանջները կատարւում են անմիջապէս եւ առանց հակաճառութիւնների: Կարգը խանգարող ընկերներին, նախագահը՝ երկու անգամ նախազգուշացնելուց յետոյ, իրաւունք ունի զրկելու ձայնի իրաւունքից՝ այդ նիստի ընթացքին: Եթէ նախագահի պահանջները չկատարուեն անմիջապէս եւ խանգարուած կարգը չվերականգնի, նախագահը իրաւունք ունի փակել ժողովը. այդ դէպքում ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է խանգարող ընկերների վրայ:

Փաստ. 1588-2

Ե 2.– ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԻՍՏ Ա.

1909 թ. Ապրիլ 1-ին բացուեց նախապատրաստական նիստը հրաւիրող յանձնաժողովի կողմից:

Ժողովը բաց անող ընկերը յայտնեց, որ հրաւէրներ ուղարկուած են հետեւեալ վայրերը. Մեծ-քաղաք, որտեղից ներկայ պիտի լինեն երկու ներկայացուցիչ, մէկը Բիւրոյի, իսկ միւսը Կենտրոնական[2] կողմից, Նաւահանգիստ՝ մի ներկայացուցիչ, Վրէժ՝ մի ներկ., Քար՝ 1 ներկ., Այգեստան՝ 1 ներկ., Մրգաստան 1 ներկ., Ապառաժ 1 ներկ., Զրաբերդ 1 ներկ., Հիւսիսակերտ 1 ներկ. եւ Ոսկանապատ 2 ներկ., ընդամէնը 12 ներկայացուցիչ. ներկայ էին նիստին 8 ներկայացուցիչ, բացակայում էին Վրէժի, Հիւսիսակերտի, Մրգաստանի եւ Մեծ-քաղաքի մի-մի ներկայացուցիչները:

Ժողովը կառավարելու համար նախագահ ընտրուեց ընկ. Ռուբէն[3] իսկ քարտուղար՝ ընկ. Սէ.-:

Կարդացուեց կազմակերպիչ յանձնաժողովի կողմից այդ օրուայ նիստի համար մշակուած օրակարգը.

Հարց ա.— Այս ժողովը կարելի՞ է համարել Արեւելեան Ռայոնական ժողով, թէ ոչ: Այս մասին եղան թեր եւ դէմ վիճաբանութիւններ. վերջը ժողովը միաձայն ընդունեց հետեւեալ բանաձեւը՝

«Ի նկատի ունենալով, որ ներկայ պայմաններում անհնար էր հրաւիրել կանոնաւոր ռայոնական ժողով, բայց եւ աչքի առաջ ունենալով մի կողմից մի քանի կարեւոր հարցերի յետաձգելու անկարելիութիւնը, միւս կողմից ընդհանուր քաղաքական պայմանները եւ երրորդ կողմից էլ մեր մարմիններից շատերի անկազմակերպ եւ քայքայուած լինելը, ներկայ եղող ընկերները որոշեցին անուանել այս ժողովը Կովկասի ռայոնի մարմինների արտակարգ ժողով[4], որի որոշումները պարտադիր են նոյն ռայոնի բոլոր մարմինների համար մինչեւ առաջիկայ ռայոնական ժողովը:

2. Կարդացուեց կազմակերպիչ յանձնաժողովի կողմից մարմինների արտակարգ ժ.-ի համար մշակուած օրակարգը եւ հաստատուեց:

3. Հաստատուեց նոյնպէս նոյն յանձնաժողովի կողմից մշակուած ռեգլամենտը մի քանի յաւելումներով եւ յապաւումներով:

4. Կազմակերպիչ յանձնաժողովը առաջարկում է հրաւիրել նիստերին քաղաքումս գտնուող մի քանի ընկերների, որոնց ներկայութիւնը մանաւանդ որոշ հարցե-

---

1.- Կանոնադրութիւն, ժողովական կանոններու ամբողջութիւն:
2.- Այսինքն Մեծ-քաղաք–Թիֆլիսի Կ. Կոմիտէի կողմէ: Միւսները յաջորդաբար՝ Նաւահանգիստ (Պաթում), Վրէժ (Պարսկաստան), Քար (Ալեքսանդրապոլ), Այգեստան (Գանձակ), Մրգաստան (Երեւան), Ապառաժ (Ղարաբաղ-Սիւնիք), Զրաբերդ (Կարս), Հիւսիսակերտ (Պետերբուրգ) եւ Ոսկանապատ (Պաքու):
3.- Հաւանաբար Աբր. Գիւլխանդանեան, որուն ծածկանուններէն մէկն էր Ռուբէն:
4.- Այսուհետեւ բնագրին մէջ ժողովը պիտի նշուի Կ.Ռ.Մ.Ժ. տառերով:

րում անպայման օգտակար է. ժողովը այդ խնդրում լիազօրութիւն տուեց նախագահութեանը. հրաւիրուած ընկերները ձայնի իրաւունք չունեն, բացի նախագահողից:

5. Այնուհետեւ ժ.-ը անցաւ նախագահութեան ընտրութեան. միաձայն ընտրուեցին ընկերներ՝ Ջաւախեան, Ռուբէն եւ Պետրէ. իսկ քարտուղարները՝ ընկերներ Ռոտոս եւ Հայ-Մուսան:

6. Որոշուեց վաղուայ ժ.-ի տեղը եւ ժամը:

Օրակարգի հարցերը սպառած համարելով նիստը փակուեց ժ.-ի 11-ին:

Արձանագրութիւնը հաստատուեց ժողովի կողմից նախագահող՝ Ջաւախեանից:

ՆԻՍՏ Բ.

Ապրիլի 2-ին, երեկոյեան ժամի 5-ին:

Ներկայ էին 16 հոգի, որոնցից 8-ը պատգամաւորներ, մնացածը նախագահութեան կողմից հրաւիրուածներ են: Նախագահում էր ընկեր Ջաւախեան:

Նախ կարդացուեց նախապատրաստական նիստի արձանագրութիւնը, որը եւ ընդունուեց:

Օրակարգի հերթական հարցերն էին՝

ա) Մարմինների զեկուցումներ

բ) Ռուս կառավարութեան հալածանքները Դ.եան դէմ եւ սրանից բխող մեր տակտիկը:

գ) Մարմինների վերակազմութիւն:

Բոլոր պատգամաւորներն էլ տուին համառօտ եւ ամփոփ զեկուցում իրենց մարմինների գործունէութեան եւ ներկայ դրութեան մասին:

Տեղեկութիւններ տուին իրենց մարմինների կազմակերպական, դրամական, զինական-մարտական դրութեան, պահեստների եւ արխիւների, տպագրական գործի, պրոպագանդայի, ժողովրդի դէպի կուսակցութիւնն ունեցած վերաբերմունքի, յեղափոխական կուսակցութիւնների հետ ունեցած յարաբերութեան, ահաբեկութեան դէպքերի եւ այլն խնդիրների մասին: Զեկուցումները լսելուց յետոյ ժողովն անցաւ օրակարգի երկրորդ հարցի քննութեան:

Ընկեր Պետրէն այս հարցի առթիւ տուեց մի փոքրիկ զեկուցում:

Նա նախ ընդհանուր կերպով որոշեց Ռուսաստ. ներքին քաղաքական դրութիւնը, կառավարութեան դէպի յեղափոխականներն ունեցած տակտիկան մասնաւորապէս, յետոյ անցաւ մեր կուսակցութեան դէմ սկսած հալածանքներին եւ առանձնապէս կանգ առաւ մեր բռնելիք դիրքի եւ տակտիկայի վրայ դէպի այդ հալածանքները: Զեկուցման վերջում առաջարկեց հետեւեալ բանաձեւը[5].—

ա) Աչքի առաջ ունենալով այն, որ Ռուսաստանի հասարակական-քաղաքական ներկայ ճգնաժամը պահանջում է յեղափոխական ուժերի ընդհանուր կոորտինացիա, կովկասեան ռայոնի մարմինների արտակարգ ժողովը առաջարկում է առաջիկայ V-րդ Ընդհանուր ժողովին ձեռնարկել եւ գումարել Ռուսաստ. յեղափոխական կուսակցութիւններից մի կոնգրէ, նման Պարիզեան կոնգրէին (1905 թ.) երկրի ընդհանուր դրութիւնը եւ նրանից բխող յեղափոխական տակտիկան մշակելու նպատակով:

բ) Կ. Ռ. Մ. Ա. ժողովը մօտենալով օրակարգի II-րդ կէտին՝ գլխաւորապէս կուսակցութեան ներքին շահերի տեսակէտից եւ որոշելով զբաղուել առ այժմ շինարար աշխատանքով նոր եւ ընդհանուր բռնկման պատրաստականութեամբ, գտնում է, որ ներկայումս մեր տակտիկան չպիտի կրէ զուտ յարմարողական բնաւորութիւն: Ահաբեկման պիտի ենթարկել կովկասեան ադմինիստրացիայի կենտրոնական անձնաւորութիւնները այն վայրերում, ուր այդ հնարաւոր է եւ այն չափով, ինչ չափով այդ պահանջում են կուսակցութեան անմիջական շահերը:

Ինչ վերաբերւում է տեղին, օբյեկտին եւ ժամանակին, այդ թողնում է համապատասխան մարմնի իրաւասութեան (ժամանակաւոր Բիւրոյին):

գ) Բացի այդ՝ կուսակցութիւնը ներքին քայքայումից ազատելու համար ժողովը հրահանգում է շրջաններին վերակազմել բոլոր մարմինները (մանրամասնութիւնները տես առանձին բանաձեւով հարցացուցակի IV-րդ կէտը):

դ) Կազմակերպել եւ առանձին ուշադրութեան առնել բանուորական եւ գիւղական մեր շարքերը, առաջնակարգ տեղ տալով յեղափոխ-քաղաքական պրոպագանդային:

ե) Ուժեղացնել իլլեգալ գրականութիւնը եւ գլխաւոր ուշադրութիւնը դարձնել հասարակական-քաղաքական ներկայ կրիզիսի վրայ:

զ) Կուսակցութեան շարքերը կարգաւորելու եւ յեղ. գիտակցութիւնը բարձրացնելու նպատակով որոշւում է հրատարակել Կովկասում մի իլլեգալ թերթ, որի խմբագրութիւնը ընտրւում է սոյն ժողովում:

Քննութեան դրուած այս խնդիրը երկար վիճաբանութիւնների տեղիք տուաւ: Վիճաբանութիւնները մեծ մասամբ պտտւում էին կուսակցութեան համար ստեղծուած ներկայ դրութեան եւ դրա դէմ առնելիք միջոցների շուրջը:

Այս առթիւ առաջարկուեցան հետեւեալ մի շարք բանաձեւերը (բացի վերոյիշեալը):

1. *ա) Վերաստեղծել յեղափոխական ծայրայեղ կոնսպիրատիւ գործունէութիւն[6], ի նկատի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներս չնորհիւ ազգային եւ տեղային առանձնայատուկ պայմանների կուսակցութիւնն անկարող էր կոնսպիրատիւ գործունէութիւն ունենալ:*

բ) Կազմակերպել եւ առանձին ուշադրութեան առնել քաղաքային եւ գիւղական (զաւառական) խմբակները, առաջնակարգ տեղ տալով քաղաքական պրոպագանդային:

գ) Ունենալ կովկասում մի անլեգալ թերթ, որի խմբագրութիւնն ընտրւում է ռայոնական այս ժողովում:

դ) Կ. Ռ. Մ. Ա. ժողովը առաջարկում է կենտրոնական մարմիններին ուշադրութիւն դարձնել իլլեգալ գրականութեան վրայ, որի նպատակը պիտի լինի ներկայ հասարակական-քաղաքական դրութեան պարզաբանումը:

ե) Կ. Ռ. Մ. Ա. ժողովը առաջարկում է Ընդհանուր ժողովին աշխատել կազմակերպել Փարիզի կոնգրէի պէս մի միջկուսակցական խորհրդակցութիւն (հրաւիրուած Ռուսաստանի ընդդիմադիր տարրերից) Ռուսաստանի դրութիւնը եւ նրանից բխող ընդհանուր տակտիկան որոշելու:

2-բանաձեւ

ա) Մեր կուսակցութեան գործունէութիւնը ներկայումս պիտի կայանայ կազմակերպչական ուժերի հաւաքման եւ զուտ կոնսպիրատիւ ներքին գործունէութեան մէջ:

բ) Ահաբեկումն իբրեւ գործունէութեան սիստեմ մօտիկ ապագայում մերժւում է:

գ) Առանձին-առանձին ահաբեկումների որոշումը եւ իրագործումը պիտի թողնուի Կ. Կոմիտէներին, ինչպէս մինչեւ օրս եղել է:

դ) Կայացնել կոնգրէ Ռուսաստանում գոյութիւն ունեցող բոլոր յեղափոխական կուսակցութիւններից:

3-րդ բանաձեւ

ա) Նկատի ունենալով Դաշն. դէմ եղած հալածանքներն ու կազմակերպութեան ներկայ դրութիւնը, մենք պէտք է մեր ամենագլխաւոր ուշադրութիւնը դարձնենք կազմակերպչական ներքին կոնսպիրատիւ գործունէութեան վրայ, աշխատելով առաջ բերել այնպիսի կարող եւ պատրաստուած անհատներ, որոնք հնարաւորութիւն ունենան կազմակերպութեան գաղափարական գործունէութիւնը շարունակելու:

բ) Կառավարութեան սանձարձակ հալածանքները սանձահարելու համար առաջարկում ենք Ռ. ժողովին վճռել եւ որոշում կայացնել՝ ահաբեկել կառավարութեան կենտրոնական անձնաւորութիւններին, այնպիսի վայրերում, որտեղ դա հնարաւոր կը լինի. այդ վերջինի համար ընտրել մի մարմին որոշումներն իրագործելու:

Քուէարկութեան դրուեցան այս բանաձեւերի կէտերն առանձին-առանձին:

1. *Միջկուսակցական կոնգրէ գումարելու համար անցան երկրորդ բանաձեւի դ. կէտը (7 ձայնով ընդդէմ 1-ի):*

2. *Կուսակցական տակտիկան որոշելու համար անցան զեկուցանող ընկերոջ բանաձեւի բ. գ. դ. եւ ե. կէտերը (միաձայն):*

Ժամանակ չունենալու պատճառով օրակարգի երրորդ խնդրի քննութեան ժողովը չանցաւ: Նախագահը յայտնեց յաջորդ նիստի օրակարգը եւ ժողովը փակեց ժամը 12-ին:

Նախագահ ժողովի՝ ՋԱՒԱԽԵԱՆ
Քարտուղար՝ ՌՈՏՈՍ

ՆԻՍՏ Գ.

Ապրիլի 3-ին ժամը 4.30ին:

Ժողովին ներկայ էին 9 վճռական ձայն ունեցողներ եւ 4 խորհրդակցական:

Ռուսաստանի ուսանողութեան կողմից՝ նամակով՝ ձայնի իրաւունք տրուած է ընկեր Պետրէին:

Կարդացուեց եւ հաստատուեց Բ. նիստի արձանագրութիւնը:

Հերթական հարցը՝ օրակարգի համաձայն՝ Պարսկաստանի հարցն է:

Հարցը դրւում է հետեւեալ ծաւալով.

ա) Վերաքննութիւն մեր սկզբունքային վերաբերմունքի՝ Ընդհանուր Ժողովին ներկայացնելու.

բ) Անկախ վերաքննութեան արդիւնքից՝ մեր աջակցութեան ձեւը եւ չափը ներկայումս՝ պարսկական ազատագրական շարժման:

Լսուեց ընկ. Ջ.եւի[7] տեղեկութիւնները — թէ ինչպէս են վերաբերուել Լիսի ընկերները, երբ Արեւելեան Բիւրոյի կողմից առաջարկ է եղել տասն հազար ռուբլի կրեդիտ բաց թողնել՝ յիշեալ խնդրի համար:

Եղան զեկուցումներ Նաւահանգստի եւ Ջրաբերդի ներկայացուցիչների կողմից[2]:

Կարծիքներ իրար բախուելուց երկու խոշոր եւ հակադիր հոսանք առաջացաւ:

Վիճաբանութիւններից յետոյ առաջարկուեցան մի շարք բանաձեւեր, որոնք քուէարկութեան դրուելով՝ մեծամասնութիւն չստացան համաձայն ռեգլամենտի 7-րդ կէտի, որ բանաձեւերը պիտի ստանան կէսից աւելին:

Բիւրոյի ներկայացուցչի առաջարկութեամբ բանաձեւերը բաժանուեցին կէտերի, որ եւ անցան հետեւեալները.

Ա. կէտ.— Պարսկաստանի շարժումը արժանի է մեր աջակցութեան, որը եւ պիտի կատարուի մեր ուժերի սահմաններում: Համաձայն 7, չեզոք 3:

5.- Յաջորդ նիստերու ընթացքին որոշումի կարգ ստացած բանաձեւերը կու տանք տարբեր գիրով:

6.- Գաղտնի, դաւադրական գործունէութիւն:

7.- Հաւանաբար՝ բժ. Յ. Ջաւրիեւ: Լիսը՝ Պոլսոյ ծածկանունն է:

Բ. կէտ.– Յիշեալ աջակցութիւնը պիտի լինի բարոյական, նիւթական եւ ռազմական, որի չափը կ'որոշէ Արեւելեան Բիւրոն, ի նկատի ունենալով մեր ներկայ պայմանները եւ ռազմական-դրամական միջոցների տնտեսութեան անհրաժեշտութիւնը: Համաձայն 8, չէզոք 2:

Հակառակ բանաձեւ. Պարսկաստանին արդէն տրուած նիւթական եւ ռազմական ուժերը համարել մեր հնարաւորի մաքսիմում: Համաձայն 1, *հակառակ* 7, *չէզոք* 2:

Գ. կէտ.– Աշխատանքին դրական եւ ծրագրուած բնաւորութիւն տալու նպատակով՝ Պարսկաստանին աջակցելու ամբողջ գործը կենտրոնացուում է ժամանակաւոր Բիւրոյի ձեռքը. միայն այդ մարմինն իրաւունք ունի կապ պահպանել Պարսկաստանի շարժումը ղեկավարողների եւ մեր ընկերների հետ: Միաձայն:

Դ. կէտ.– Ներկայացուցիչների արտակարգ ժողովը առաջարկում է առաջիկայում գումարելիք V-րդ Ընդհանուր ժողովին մանրամասն քննութեան ենթարկել Դաշն. ընդհանուր տակտիկան պարսկական շարժման մէջ: Միաձայն:

Ե. կէտ.– Ռայոնի արտակարգ ժողովը առաջարկում է գումարուելիք Ընդհանուր ժողովին, որ նա հարցապնդումով դիմէ Արեւելեան Բիւրոյին – թէ ո՞րքան իրաւական էր նորա բռնած դիրքը պարսկական շարժման մէջ: *Միաձայն*:

Հարցն համարուեց սպառուած:

Եղան առաջարկներ, որ ժողովը շարունակէ օրակարգի միւս հարցերի քննութեանը, որ վաղուայ նիստը համարուի վերջին:

Մի քանի ընկերների պնդելով, որ անհնար է թմրած ուղեղներով շարունակել ո՛չ պակաս կարեւոր հարցերի քննութիւնը, առաջարկւում է փակել նիստը:

Անցաւ վերջին բանաձեւը 6 *ձայնով ընդդէմ* 4-*ի*:

Ժողովը փակուեց ժամի 11 *եւ կէսին*:

Նախագահ ժողովի *Քարտուղար՝ ՌՈՏՈՍ*

8.- Սիմոն Վրացեան: Նալբանդը Հիւս. Կովկասն է, Ռոստով-Նոր Նախիջեւան կեդրոնով:

ՆԻՍՏ Դ.

Ապրիլի 4-*ին*:

Ներկայ էին 6 *պատգամաւորներ եւ* 4 *խորհրդակցական*:

Ժողովը բացուեց ժամը 4 *եւ կէսին: Կարդացուեց եւ հաստատուեց նախկին ժողովի արձանագրութիւնը*:

Հերթական հարցը «Մարմինների վերակազմութիւնն» էր, որ դրուած էր – թէ ներկայ վտանգուած եւ քայքայուած դրութիւնից ինչպէ՞ս պիտի վերակազմենք – ծաւալով:

Ժամի 7 *եւ կէսին տրուեցաւ կէս ժամ ընդմիջում՝ բանաձեւեր կազմելու: Եկան երկու նոր ընկեր.– Միգ՝ ուսանողներից*[8], *Հրանտ՝ Նալբանդի շրջանից, որոնք ժողովին պիտի մասնակցին խորհրդակցական ձայնով, որովհետեւ ընտրուած չեն համապատասխան մարմնից*:

Բանաձեւ Ա.– Կ. Ռ. Մ. Ա. ժողովը քննութեան առնելով մարմինների վերակազմութեան խնդիրը եւ ի նկատի առնելով, որ ներկայումս՝ շնորհիւ տիրող պայմանների կազմալուծւում են չա՛տ մարմիններ, որի վերակազմութիւնը՝ համաձայն գոյութիւն ունեցող կանոնադրութեան՝ անհնար է ներկայ պայմաններում, ժողովը որոշեց կենտրոնական մարմինների վերակազմութիւնը սկսել վերեւից՝ Արեւելեան Բիւրոյի ընտրութեամբ, տեղում գտնուած վստահելի եւ ձեռնմաս անձնաւորութիւններից, որոնց յանձնարարել անմիջապէս ձեռնարկել կազմակերպչական գործը՝ խիստ ընտրութեամբ կազմելով խմբեր, ենթակոմիտէ եւայլն, որից յետոյ միայն կազմել կենտրոնական մարմինները՝ համաձայն կանոնադրութեան: Ստացաւ 1 *ձայն ընդդէմ* 7-*ի*:

Բանաձեւ Բ.– Ի նկատի ունենալով Ռուսիայի ներկայ քաղաքական դժնդակ պայմանները՝ ժողովս՝ հրահանգուելով Թուրքիոյ համար կանոնագրի սահմանած բացառիկ կարգով, անխուսափելի է գտնում թոյլատրելու, որ այն վայրերում, ուր անհնարին է եւ վտանգաւոր ընտրական եղանակի կիրառումը՝ մարմինները նշանակմամբ կամ վաւերացմամբ կարգուեն՝ պահպանելով կանոնագրով սահմանած սիստեմը:

Այս նորակազմ մարմիններին յանձնարարւում է անմիջապէս ձեռնարկել խմբերի զտման եւ վերակազմման, ուշադրութիւն դարձնելով կազմակերպութեան անդամակցող անհատների կուսակցական հարազատութեան եւ անպայման վստահելիութեան վրայ:

Խմբերի եւայլն մարմինների կանոնաւոր եւ զտուած վերակազմումից յետոյ աւելի բարձր մարմինները ձեռնարկում են կանոնադրութեան սահմանների մէջ վերընտրուել կամ նոր ընտրութիւն կայացնել: *Ստացաւ համաձայն* 7 *ընդդէմ* 1 *ձայնի*:

Օրակարգի երկրորդ հարցն է.– դրամական միջոցներ (տուրք):

Առաջարկ եղաւ «էքսպեր»-ի հարցը[9] *միացնել «Դրամական միջոցներ» հարցին*:

Հակառակ առաջարկն եղաւ չդնել քննութեան, որովհետեւ ո՛չ մի յեղափոխական ակտի առաջ չենք կանգնած:

Հարցը քուէարկութեան դրուելով 5 *ձայնով ընդդէմ* 3-*ի անցաւ «էքսպեր»-ի մասին խօսելու պահանջը*:

Ա. բանաձեւ.– Դրամական միջոցների ներկայ ճգնաժամից դուրս գալու նկատմամբ՝ ժողովը համոզուած է, որ մարմինների վերակազմամբ եւ կուսակցական ամբողջ կազմի զտմամբ՝ կարգաւորուելու[?], բարւոքուելու է եւ այդ գործը,– յանձնարարւում է մարմիններին, խստիւ հրահանգուելով կանոնադրութեան սահմանած հաշուետուութեան ցուցումներով, դիմել նոյն կանոնագրով գանձումների բոլոր նախատեսուած միջոցներին (թէ սովորական, թէ արտակարգ) հոգալու կուսակցութեան ընթացիկ գործունէութեանը եւ յատուկ գործառնութիւնների պահանջած ծախսերը.

Հաշուետուութեան եւ դրամական գործերը վարելու համար յանձնարարւում է յատուկ մարմինների կազմակերպութեան՝ կուսակցական կազմերի համապատասխան: *Անցաւ միաձայն*:

Ծան[օթ].– Արտակարգ միջոցների վերաբերեալ 5 *ձայնով ընդդէմ* 3-*ի անցաւ հետեւեալ դետալիզացիոն*[10] *կէտը – ի նկատի ունենալով մեր նախկին որոշումները՝ յեղափոխական ակտեր կատարելու, յանձնարարում ենք ժամանակաւոր Բիւրոյին կազմակերպել «էքսպեր», որը եւ պիտի գործադրուի այն նպատակների իրագործման, որի համար կայացուել է այդ*:

Բ. Բանաձեւ – Բանուորական կասսաները կազմւում են այն գումարների կիսից, որ տալիս են բանուորները՝ որպէս կուսակցական տուրք. նաեւ բանուորական կողմնակի եկամուտների կիսից, որոնք եւ գործադրւում են միութիւնների վարչութեան միջոցով եւ տեղական մարմինների գիտութեամբ՝ իրենց կարիքների համար: *Անցաւ միաձայն*.

Օրակարգի 3-*րդ կէտն էր – Բիւրոյի տեղի, անդամների, նոցա քանակի խնդիրը: Լսուեց Բիւրոյի ներկայացուցչի զեկուցումը*:

Ժամանակաւոր Բիւրոյի իրաւասութեան կրճատման վերաբերեալ անցաւ հետեւեալ բանաձեւը միաձայն:

«Ի նկատի ունենալով, որ նոր Բիւրոն անկարող է լինելու ձեռնհասօրէն վարել այդ հաստատութեան նախկին բոլոր գործերը, Կ. Ռ. Մ. Արտ. ժողովը անհրաժեշտ է համարում կրճատել նորա գործունէութեան շրջանը, Երկրի[11] գործերը թողնելով այդտեղի մարմիններին: Այդ մասին անմիջապէս յայտնել Լիսի եւ Շամի ընկերներին»:

5 *ձայնով ընդդէմ* 3-*ի որոշուեցաւ Բիւրոյի ընտրութիւնը յետաձգել վաղուայ հերթական նիստին*:

Նախագահ ժողովի՝ ՌՈՒԲԷՆ
Քարտուղար՝ ՌՈՏՈՍ

ՆԻՍՏ Ե.

Ապրիլի 5-*ին, ժամը* 10 *եւ կէս առաւ[օտեան]*:

Ներկայ էին 8 *պատգամաւորներ եւ* 5 *խորհրդակցական ձայնով*:

Բիւրոյի ընտրութեան հարցը յետաձգուեց մինչեւ երկու կարեւոր ընկերոջ ներկայանալը:

Հերթական հարց է դրուած «Կարմիր խաչ եւ նրա կազմակերպութիւնը»:

Բանաձեւ 1-*ին*.– *Ամէն մի դաշնակցական մարմին ձեռնհաս անհատների ձեռքով կամ յատուկ խմբակցութիւնների միջոցով հաւաքում է դրամներ յանուն «Կարմիր-խաչի» եւ այդ դրամները գործադրում է բանտարկեալների կարիքներին՝ Կ. Կոմիտէի միջոցով: Ստացաւ համաձայն* 3 *ձայն, հակառակ* 5:

Բանաձեւ 2*րդ*.– *Կուսակցութիւնը անկարող է իր միջոցներից գումարներ ծախսել բանտարկեալ ընկերների համար: Այս նպատակով անհրաժեշտ է կազմակերպել Դաշնակց. «Կարմիր-խաչ»: Այդ կազմակերպութիւնները առաջ են բերում տեղական մարմինները կամ կենտր. Կոմիտէները դաշնակցական կամ համակիր անձնաւորութիւններից: Այդ անձնաւորութիւնները դիմում են յատկապէս այդ նպատակի համար դրամներ հաւաքելու բոլոր ներելի միջոցներով: Հաշիւները առանձին տպւում են եւ ցրւում: Ստացաւ համաձայն* 1 *ձայն, հակառակ* 7:

Բանաձեւ 3*րդ*.– Կարմիր խաչի գործը կազմակերպելու եւ կանոնաւորելու նպատակով Կ. Ռ. Մ. Արտ. ժողովը յանձնարարում է Կ. Կոմիտէներին՝ կազմակերպել կոմիտէներին եւ Կ. Կոմիտէներին կից 3-ական հոգուց բաղկացած Կ. խաչի մարմիններ, որոնց լիազօր իրաւունքներ են տրւում Դաշն. Կարմիր խաչի համար ձեռնարկել այն բոլոր ներելի միջոցները (օժանդակող խմբեր կազմել, հանգանակութիւն)

9.- Մեզի անծանօթ կը մնայ «էքսպեր»ի իմաստը: Այնպէս կը թուի, որ գործածուած է «Փոթորիկ»ի (բռնի հանգանակութիւն) իմաստով:

10.- Մանրամասնումի:

11.- Այսինքն բուն Հայաստանի (Արեւմտեան): Լիսը՝ Պոլիսն է, իսկ Շամը՝ Վասպուրականը:

թիւն, երեկոյթներ եւլն. կազմակերպելով), որոնք նպատակայարմար կը նկատուեն։

Կոմիտէներին կից մարմինները ընտրուում են միմիայն Դաշնակց. ընկերներից։

Նպաստները կենտրոնանում են Կ. Կոմիտէների Կարմիր խաչի մարմինների դրամարկղում։ Գումարները գործադրուում են միմիայն Կ. Կոմիտէների կամ Բիւրոների որոշմամբ։

Հաշիւները մանրամասն տպագրւում են եւ ցրւում շրջաններում։

Ստացաւ համաձայն 5 *ձայն, հակառակ* 3։

Բանաձեւ 4-րդ.— Ի նկատի ունենալով Կարմիր խաչի լայն օժանդակող գործունէութեան կարեւորութիւնը ներկայ հանգամանքներում, ժողովը յանձնարարում է դաշնակց. մարմիններին հոգատարութեամբ նուիրուելու այդ գործի հանգանակութիւնների եւ հաշուետուութեան անյապաղ կազմակերպմանը, որի եղանակները, միջոցները եւ ձեւերը մշակելու են այդ մարմինները, խորհրդակցելով Ժամանակաւոր Բիւրոյի հետ, ղեկավարուելով անցեալի փորձերով եւ զանազան վայրերի ուրոյն տեղական պայմաններով։ Գումարները կենտրոնանալու են՝ Կ. Կոմիտէների մօտ եւ ծախսուելու են միայն Կ. Կոմիտէների եւ Բիւրոյի փոխադարձ համաձայնութեամբ եւ կարգադրութեամբ։

Կ. Խաչի գործի կազմակերպումը կարող է թէ՛ կուսակցական եւ թէ չէզոք ձեւի լինել, բայց հանգանակուած նիւթական միջոցները գործադրուելու են միմիայն կուսակցութեան համապատասխան պէտքերի համար։

Կուսակցական պատշաճ մարմինների տնօրինութեամբ՝ նուիրաբերողները եւ հանգանակող մարմինները լիակատար տեղեկութիւն են ստանում պարբերաբար՝ բայց միջոցների գործադրմանը մասնակցելու իրաւունք չունեն։ Ստացաւ համաձայն 4 *ձայն, հակառակ* 4։

Եկաւ ընկեր Դուման, որի ներկայութիւնը կարեւոր էր Բիւրոյի ընտրութեան ժամանակ։

Հերթական հարցն էր Բիւրոյի ընտրութիւնը։ Ամէնից առաջ դրուեցաւ թէ Բիւրոն ո՞ր քաղաքում պիտի լինի — Ոսկանապատո՞ւմ թէ Մեծ-քաղաքում։ Այդ խնդրի առթիւ եղան հետեւեալ առաջարկները.—

ա) Ի նկատի առնելով, որ անկարելի է ներկայ մոմենտում ընտրել Մեծ-քաղաքում կամ Ոսկանապատում[2] *մի ժամանակաւոր մարմին, ժողովը որոշեց ընտրել երկու քաղաքներում՝ ծանրութեան կենտրոնը թողնելով Մ.-քաղաքում, միւս մասը՝ որ Ոսկանապատում կը լինի, միայն կարող է մասնակցել կարեւոր մոմենտներում։ Ստացաւ* 2 *ձայն, ընդդէմ* 6-*ի։*

բ) Ի նկատի առնելով, որ Մեծ-քաղաքում քաղաքական անելանելի դրութիւն է տիրում, ուր բոլոր ընկերները համարեա վտանգուած են, առաջարկւում է ընտրել ժամ. Բիւրոն Ոսկանապատում որտեղ կենտրոնացած լինի ամբողջ գործի ծանրութիւնը, իսկ Մեծ-քաղաքում մեր հին ընկերներից մի քանիսին, որոնք կարեւոր խնդիրներում խորհրդակցելու կը գան եւ աշխատանքի որոշ մասը կը կատարեն։ Ստացաւ 6 *ձայն ընդդէմ* 2-*ի։*

Անցան Բիւրոյի անդամների ընտրութեան։ Դրուած էին թեկնածումներ Ոսկանապատ.— Զոփուռեան, Ռուբէն, Սենարի, Մաշտոցեան, Դուման, Ջաւախեան եւ Քաջիկ։

Մեծ-քաղաքի.— Տիւն, Հայր-Աբրահամ, Պետրէ, Սիգ։

Ոսկանապատի թեկնածուները հրաժարուեցին՝ իրենց պատճառաբանութիւնները տալով։

Կ. Ռ. Մ. Արտակարգ ժողովն ի նկատի ունենալով այդ հրաժարականը, առաջարկեց հետեւեալ բանաձեւը — ի նկատի ունենալով, որ անկարող ենք ընտրել պատասխանատու ժամանակաւոր Բիւրո, ի նկատի առնելով որ բոլոր դրուած թեկնածուները հրաժարւում են, առաջարկում ենք դրուած վեց թեկնածուներն էլ համարել ընտրուած, որոնք եւ պիտի վարեն բիւրոյական գործերը, իսկ Մեծ-քաղաքից համարել պաշտօնական կանտիդատներ — Հայր-Աբ., Տիւն, Պետրէ եւ Սիգ, որոնց հետ՝ կարեւոր խնդիրներում յիշեալ 6 *ընտրուածները պիտի խորհրդակցեն։ Բանաձեւն ստացաւ* 6 *ձայն ընդդէմ* 2-*ի։*

Ընկեր Ա-ի բանաձեւը.— Ի նկատի ունենալով որ հարցը բաւական դժուարին է եւ շատերը հոգեկան հանգըստութեան մէջ չեն գտնւում, առաջարկում եմ տալ 15 *րոպէ ժամանակ եւս պատրաստի եւ վերջնական բանաձեւեր առաջարկելու։ Անցաւ միաձայն։ Ցայտարարուեց ընդմիջում։*

Ժողովը վերսկսուելուց յետոյ առաջարկուեց հետեւեալ խորհրդակցուած եւ համաձայնութեան եկած բանաձեւը.—

Կ. Ռ. Մ. Արտակարգ ժողովը ընտրում է Ոսկան[ապատի] ընկերներ՝ Զոփուռեան, Ռուբէն, Սենարի եւ Մաշտոցեան[12], համարելով դոցա in corpore (խմբովին) պատասխանատու մի մարմին, ազատելով դրանց տեղական բոլոր գործերից։ Այդ մարմինը ժամանակաւորապէս՝ մինչեւ V-րդ Ընդհանուր Ժողովը պիտի վարէ Արեւելեան Բիւրոյին յատուկ բոլոր գործերը (այս ժողովի կրճատումներով), օգտուելով ըստ կարիքի եւ պահանջի ընկերներ Դուման, Ջաւախեան եւ Քաջիկից։

12.- Մաշտոցեանը Աղաջանեան Գրիգորն է, որ այդ անունով կը յիշուի Ոսկանապատ-Պաքուի Կ. Կոմիտէի կազմիս մէջ։ Զոփուռեանը՝ Թադէոսեան Լեւոնն է. Ռուբէնը՝ Գիւլխանդանեան Աբրահամը. Սենարի ինքնութիւնը անծանօթ կը մնայ մեզի։

Մեծ-քաղաքի պաշտօնական կանդիդատներ ընտրուում են Հայր-Աբրահամ, Տիւն եւ Պետրէ։ Ստացաւ 6 ձայն, ընդդէմ 2-ի, որոնք նախկին բանաձեւի կողմնակիցները մնացին։

Ուժերի բաշխում.— Միաձայն անցաւ հետեւեալ բանաձեւը.— Արտակարգ ժողովը որոշեց յանձնարարել բոլոր մարմիններին մինչեւ Ապրիլի վերջը ուղարկել ժամանակաւոր Բիւրոյին, բոլոր այն ընկերների ցուցակը՝ իրենց բնութագծերի նկարագրութեամբ, որոնք կը դնեն իրենց Բիւրոյի տրամադրութեան տակ։

Ընդհանուր ժողով.— Ընդհանուր ժողովին մասնակցելու խնդիրը կատարւում է կանոնագրութեան սահմանների մէջ, միայն Կ. Ռ. Մ. Արտակարգ ժողովը ցանկութիւն է յայտնում որքան կարելի է շուտափոյթ դարձնել այդ գումարումը ի նկատի առնելով մեր ներկայ դրութիւնը։ Անցաւ միաձայն։ Լսուեց ընկեր Մշոյի[?][13] զեկուցումը Ռայոնական ժողովի կոնպետենցիայի[14] մասին եւ ի նկատի ունենալով, որ մեր ժողովը հնարաւորութիւն չունի քննելու այդ (ժամանակի սուղ լինելու պատճառով), առաջարկում է ընկերոջ այդ հարցը գրաւոր ներկայացնել Ժամա. Բիւրոյին, որը, եթէ կարեւոր գտնէ, Բիւրոյի անունից կը դնեն Ընդանուր ժողովի առաջ, եթէ ոչ, ընկեր Մշոյի [?] կողմից կ'առաջադրուի։ *Անցաւ միաձայն։*

Իլլեգալ թերթ.— Որոշուեցաւ հետեւեալը.— իլլեգալ թերթի անհրաժեշտութիւնը զգացւում է բոլոր շրջաններում, որի համար էլ ժողովը որոշում է հնարաւոր եղած դէպքում հրատարակելու թերթը, թողնելով վերջինիս իրագործման, խմբագրական, տպագրական եւ այլ տեխնիկական հարցերի լուծման խնդիրը ժամ. Բիւրոյին։ Միեւնոյն ժամանակ յանձնարարւում է Բիւրոյին ի նկատի ունենալ բոլոր Կ. Կոմիտէութիւնների մուտք եւ ելքը եւ թերթի թուագին[?] (որ կը որոշէ Բիւրոն) եւ ամսեկան տուրք նշանակել Կ. Կոմիտէների վրայ, որի մասին յայտնում է ժամանակին Կ. Կոմիտէներին — *Միաձայն։*

Պարտադիր կանոններ ա) մարմինները միշտ վստահելի մարդիկ են ուղարկում միւս մարմինների մօտ. բ) դրանց տրւում են վկայագրեր, որոնք լինում են [լիազորագրի] թ[ղթ]ի վրայ. գ) կնիքները միշտ խփւում են նամակի գրած մասին վրայ եւ ոչ բաց. դ) գործադրել յարաբերութեան համար կոտորակները եւ ամսաթուային սիստեման՝ երեսների (գրքի վերաբերմամբ), որի մանրամասները Բիւրոն ուղարկում է շրջաններին եւ ե) այն մարմինները, որոնք գաղտնապահութիւնը կը խախտեն, կ'ենթարկուեն կուսակցական խստիւ պատասխանատուութեան։

Անուններ[15].—

1) *Ոսկանապատ — Պոնտոս*
2) *Այգեստան — Պանդուխտ*
3) *Քար — Ալիք*
4) *Նաւահանգիստ — Վարդ*
5) *Ապառաժ — Մենակ*
6) *Ջրաբերդ — Շիրին*

Արտակարգ ժողովը վերջացաւ Ապրիլի 5-*ին։*

Նախագահ ժողովի՝ ՌՈՒԲԷՆ
Քարտուղար՝ ՌՈՏՈՍ

13.- Արդեօ՞ք Մաշտոցեան անուան կրճատումն է։

14.- Ձեռնհասութիւն, իրաւասութեան սահման։

15.- Նկատի ունենալով ցարական իշխանութեանց խիստ հալածանքները Դաշնակցութեան դէմ, Ռայոնական ժողովը հարկ տեսած է կուսակցական մարմիններու նախկին ծածկանունները փոփոխութեան ենթարկել։ Գաղտնիացման նոյն մտահոգութիւնը մեկնելով, կուսակցական մարմիններուն յղուած շրջաբերականով մը եւս (փաստ. 1588-3) կ'ազդարարուի. *«նամակագրութիւնը պէտք է կատարել գաղտնի թանաքով, ծածկագրերով։ Գաղտնապահութեան դէմ մեղանչած մարմինները կ'ենթարկուին խիստ պատասխանատուութեան»։*

ԳԼՈՒԽ IV

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻՆ

Մինչեւ 1907 թուականը պաշտօնապէս անդամակցած չըլլալով հանդերձ Ընկերվար Միջազգայնականին՝ Դաշնակցութիւնը սերտ յարաբերութիւն կը պահէր անոր հետ մեկնելով նախ՝ գաղափարական համախոհութենէ,– տրուած ըլլալով որ ընկերվարութեան հիմնական սկզբունքները արդէն մաս կը կազմէին իր առաջին Ծրագրին–, ապա՝ միջազգային յառաջադէմ այս կազմակերպութիւնը լայն ու ազդու բեմ էր եւրոպական միջավայրի մէջ հայ ժողովուրդին ձայնը հասցնելու յեղափոխական այս շարժումին միլիոնաւոր հետեւորդներուն: Դաշնակցութեան արխիւներուն մէջ պահպանուած փաստաթուղթերը պերճախօս կերպով կը վկայեն «Դրօշակ»ի խմբագրութեան (իմա՛ Արեւմտեան Բիւրոյի) ունեցած կանուխէն եւ տեւականօրէն, կապի ու գործակցութեան մասին թէ՛ Միջազգայնականի կեդրոնին եւ թէ Եւրոպայի միւս ընկերվարական կուսակցութիւններուն հետ (փոխանակում բազմաթիւ տեղեկագրերու, նամակներու, մամլոյ հաղորդագրութիւններու): Դեռ 1896ին Դաշնակցութեան պատգամաւորը հրաւիրուած ու մասնակցած էր Լոնտոնի Սոցիալիստական Միջազգային կոնգրէսին, ներկայացնելով միաժամանակ կուսակցութեան գործունէութեան մէկ տեղեկագիրը:

Ուղղակի անդամակցութեան հարցը պիտի գար աւելի ուշ: Պատճառը վստահաբար չգոյութիւնն էր զուտ ընկերային գետնի վրայ շարժում առաջացնելու կարելիութեան, այլ խօսքով՝ անհրաժեշտ ենթահողի բացակայութիւնը Արեւմտահայաստանի մէջ, ուր հայ ժողովուրդին համար գերխնդիրը ֆիզիքական գոյութեան պահպանումն էր, հոն տիրող համատարած ջարդի, սովի, թշուառութեան եւ ընդհանուր անապահովութեան պայմաններուն մէջ: Անդամակցութեան գործընթացը փաստօրէն սկիզբ կ'առնէ 1905 թ. Մայիսին, երբ Միջազգայնականի Պրիւսէլի կեդրոնական գրասենեակը, յայտնաբար հետաքրքրուած Դաշնակցութեան Խորհուրդին որդեգրած *Կովկասեան նախագծով*, կը դիմէ «Դրօշակ»ի խմբագրութեան իմանալու համար թէ արդեօ՞ք ճիշդ է որ կուսակցութիւնը յարած է Միջազգային կոնգրէսներու որոշումին: Խմբագրութեան պատասխանը անմիջական է եւ դրական (տեսնել Ա. բաժնի թիւ 1 եւ 2ը): Բայց հարցին վերջնական լուծումը, այսինքն անդամակցութեան դիմումը պիտի ուշանար երկու տարի եւս, մինչեւ Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. Ժողով, որ հետեւեալ ձեւով բանաձեւեց Դաշնակցութեան յարումը Միջազգայնականին՝

> *«Ընդհանուր Ժողովը լսելով Բրիւքսէլի Միջազգային Սոցիալիստական Բիւրոյի կողմից եղած առաջարկը (տես «Դրօշակ» 1905 № 6) եւ հիմնուելով մեր Ծրագրի հիմնական կէտերի վրայ, որոշեց՝ յանձնարարել Արեւմտեան Բիւրոյին բանակցութեան մէջ մտնել յիշեալ Բիւրոյի հետ, յայտնել նրան Դաշնակցութեան յարումը Միջազգային Սոցիալիստական Կոնգրէսների որոշումներին եւ միջոցներ չեռք առնել կարգաւորելու Դաշնակցութեան մասնակցութիւնը Միջազգային Սոցիալիստական Բիւրոյին եւ կոնգրէսներին (տես «ՆԻՒԹԵՐ» Գ. հատոր, էջ 309):*

Պաշտօնական դիմումը եղաւ նոյն տարին, 1907 թ. Յուլիս 23ին եւ Դաշնակցութիւնը մասնակցեցաւ Ընկերվար Միջազգայնականի 1907 թ. Շտուտգարդի Կոնգրէսին Միք. Վարանդեանի կողմէ գլխաւորուած պատուիրակութեամբ: Պրիւսէլի Բիւրոն ընդունած էր արդէն եւ Համա-

գումարը վաւերացուց Դաշնակցութեան անդամակցութիւնը, որ մաս պիտի կազմէր ռուս Սոցիալ-Յեղափոխականներու մէկ ենթաբաժանմունքին: Ասիկա կը նշանակէր, թէ հաշուի կ'առնուէր կուսակցութեան միայն կովկասեան թեւը կամ անոր գործունէութիւնը, մինչդեռ Դաշնակցութեան պահանջն էր ստեղծել նոր հատուած մը Թուրքիոյ համար, զոր ներկայացնողը ի՛նք պիտի ըլլար, նկատի ունենալով որ Օսմանեան կայսրութեան, յատկապէս ասիական բաժնին մէջ իրմէ զատ ընկերվարական կազմակերպութիւն չկար գրեթէ: Վերջին այս հարցին վճռումը կանխահաս նկատելով՝ Ընկերվարական Բիւրոն յետաձգեց: Ի վերջոյ սակայն Դաշնակցութիւնը այդ իրաւունքն ալ ձեռք բերելով (Դեկտ. 1908), զոյգ պատուիրակութիւններով (Միք. Վարանդեան, Մարտիրոս Յարութիւնեան, Արմենակ Բարսեղեան եւ Նիկոլ Դուման) մասնակցեցաւ ու իր գործունէութեան ընդարձակ տեղեկագիրը ներկայացուց Տանցմարքայի մայրաքաղաք Քոփենհակէնի մէջ կայացած 8րդ համագումարին (1910 թ. Օգոստոս-Սեպտ.): Ի դէպ, ժողովականներուն վրայ մեծ տպաւորութիւն գործեց հայդուկապետ Ն. Դումանի զեկուցումը Դաշնակցութեան մղած զինեալ պայքարին մասին՝ միաժամանակ Թուրքիոյ, Ռուսիոյ եւ Պարսկաստանի ճակատներուն վրայ: Իսկ համագումարէն անոր ստացած տպաւորութեան մասին Վարանդեան, իր մէկ նամակին մէջ (փաստ. 1678-10) պիտի գրէր. *«Նիկոլը սաստիկ ոգեւորուած է. 100.000ի թափորը եւ միտինգները գրանդիոզ էին»:*

* * *

Ընկերվար Միջազգայնականին՝ Հ. Յ. Դաշնակցութեան անդամակցութեան իրերայաջորդ փուլերը կը ներկայացուին հետեւեալ բաժանմունքներով (ֆրանսերէն բնագիրներու կողքին տուած ենք անոնց թարգմանութիւնը. նշենք որ ձեռագիրները ընդհանրապէս կը պատկանին Միք. Վարանդեանի եւ Միջազգայնականի Պրիւսէլի Կեդր. Բիւրոյի քարտուղար Քամիյ Հիւսմանի):

Ա. բաժին – Միջազգայնականի Բիւրոյի գրութիւնը եւ «Դրօշակ»ի խմբագրութեան պատասխանը (առնուած «Դրօշակ»ի 1905 թ. Մայիսի համարէն, № 6):

Բ. բաժին – Դաշնակցութեան պաշտօնական դիմումը Ընկերվար Միջազգայնականի Պրիւսէլի Բիւրոյին (23 Յուլիս 1907) եւ վերջինիս ընդհ. քարտուղար Ք. Հիւսմանի պատասխան-նամակները, ապա՝ Շտուտգարտի 1907 թ. Միջազգային Կոնգրէսին առթիւ Հ.Յ.Դ. Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներու միջեւ փոխանակուած գրութիւններ, ինչպէս նաեւ «Քաղուածքներ Դաշնակցութեան գործունէութենէն»:

Գ. բաժին – 1908 թուականին «Դրօշակ»ի խմբագրութեան եւ Միջազգայնականի միջեւ փոխանակուած նամակներ:

Դ. բաժին – Նոյնին շարունակութիւնը 1909 թուականին:

Ե. բաժին – Քոփենհակէնի Ընկերվար Միջազգայնականի 1910 թ. համագումարին ներկայացուած Հ.Յ.Դ. գործունէութեան Տեղեկագիրը, որուն ֆրանսերէնը տպուած է առանձին գրքոյկով, Ժընեւ 1910ին: Ձեռքի տակ չունենալով այս վերջինին հայերէն հրատարակութիւնը, կողքին կը կցենք մեր թարգմանութիւնը: Հարկ է նշել որ, ինչպէս ֆրանսերէնով կատարուած նախորդ թղթակցութեան, նոյնպէս այս տեղեկագրին հեղինակը Միք. Վարանդեանն է, որ երկար տարիներու ընթացքին Դաշնակցութիւնը ներկայացուց Միջազգային Ընկերվար կազմակերպութեան մօտ:

ԽՄԲ.

Ա.– ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ

Մենք ստացանք Սոցիալիստական Միջազգային Բիւրոյից հետեւեալ նամակը, գրուած Բրիւսէլից, Մայիս 12ին:
(«Դրօշակ», 1905 թ. N՝ 6)

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
«Դրօշակ»ի խմբագրութեան

Սիրելի ընկերներ,

Ներկայ տարուայ Մայիս 10-*ի «Տրիպուն Ռուս»-ի մէջ կարդացի, որ ձեր կազմակերպութիւնը յարել է Սոցիալիստական Միջազգային Կոնգրէսների մշակած որոշումներին:*

Ես ձեզ երաշտապարտ կը լինեմ, եթէ բարեհաճիք այդ հարցի վերաբերմամբ մի պաշտօնական ծանուցում ուղղել Սոցիալիստական Միջազգային Կոմիտէին, ուղարկելով միաժամանակ ձեր կանոնագրքի մէկ օրինակը:

Ընդունեցէք, սիրելի ընկերներ, մեր եղբայրական ողջոյնները:

Քարտուղար (ստորագրութիւն)

Ա. 2.– <u>ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ</u>

Սոցիալիստական Միջազգային Բիւրոյին

Սիրելի քաղաքացիներ,

Ի պատասխան Մայիս 12 *թուակիր Ձեր նամակին, պատիւ ունենք տեղեկացնել Ձեզ, որ, արդարեւ, մենք յարած ենք Միջազգային սոցիալիզմի սկզբունքներին, որոնք արծարծուել են* 15 *տարուց ի վեր մեր հրատարակութիւնների մէջ, մասնաւորապէս մեր կուսակցութեան օրգան «Դրօշակ»ի էջերում:*

Սակայն այդ կողմնակցութիւնը եւ այդ պրոպագանդը մինչեւ օրս զուտ թէորիական բնոյթ ունէին, քանի որ մեր գործունէութիւնը կենտրոնացած էր Թուրքաց Հայաստանում, ուր բնաւ հող չկայ՝ սոցիալիստական գործօն պրոպագանդի համար:

Բայց ահա երկու տարի է, ինչ Հ. Յ. Դաշնակցութիւնը սկսել է իր կռիւը նաեւ ռուսական Հայաստանում, եւ քանի որ մեր երկրի այդ հատուածի մէջ պայմանները աւելի նպաստաւոր են՝ սոցիալիստական շարժում կազմակերպելու համար,— ուստի մեր կուսակցութեան Խորհուրդը, վերջին Մարտ ամսի իր ժողովում, հարկ սեպեց մշակել սոցիալիստական ծրագրի մի նախագիծ, Կովկասի համար, որի մէջ նա ընդունում է միջազգային սոցիալիստական կոնգրէսների հիմնական որոշումները:

Այդ որոշումների հիման վրայ մենք վերջերս համաձայնութեան եկանք ռուսական կայսրութեան յեղափոխական-սոցիալիստական կուսակցութիւնների հետ՝ կազմակերպելու համար միահամուռ գործակցութիւն՝ ցարիզմի եւ կապիտալիզմի դէմ:

Վերոյիշեալ նախագիծը պաշտօնապէս կը հաղորդուի Ձեզ՝ Կուսակցութեան առաջիկայ Ընդհանուր Ժողովի կողմից վաւերացուելից յետոյ:

Ընդունեցէք, սիրելի քաղաքացիներ, մեր եղբայրական ողջոյնները:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

17 *Մայիս*, 1905[1]
Ժընեւ

1.- «Դրօշակ»ի մէջ տարեթիւը 1904 է, ինչ որ ակներեւ վրիպակ է:

Բ.– Հ. Յ. Դ.Ի ԴԻՄՈՒՄԸ ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻՆ ԵՒ ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Փաստ. 1675-2

Բ 1.– ՔԱՄԻՅ ՀԻՒՍՍԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՈՒՂՂՈՒԱԾ Հ.Յ.Դ.ԻՆ

Bruxelles, le 17 juin 1907

A la direction Droschak,

Chers citoyens,

Je n'ai pu donner communication de votre télégramme au Bureau parce qu'il nous est parvenu le 10 alors que le Bureau siégeait le 9. Je me vois donc obligé de renvoyer votre demande à la section nationale de Russie – délégués Plechanoff et Roubanovitch – si votre activité se concentre surtout en Russie. S'il s'agit de créer une Section nationale nouvelle, la décision appartient au Bureau qui ne se réunit qu'à la veille du Congrès le 16 Août. Quoiqu'il en soit, veuillez nous envoyer une demande officielle, un exemplaire de vos statuts nouveaux, un rapport sur votre activité (en langue française si possible).

Salutations fraternelles,
Le secrétaire
CAMILLE HUYSMANS

Պրիւսէլ, 17 *Յունիս* 1907

Դրօշակի խմբագրութեան

Սիրելի քաղաքացիներ,

Ձեր հեռագիրը չկրցայ հաղորդել Բիւրոյին, որովհետեւ ան մեզի հասաւ ամսու 10-*ին, մինչ Բիւրոյի նիստը* 9-*ին էր: Ուրեմն ստիպուած եմ ձեր պահանջը յղել Ռուսիոյ ազգային հատուածին (պատուիրակներ՝ Պլեխանով եւ Ռուպանովիչ), եթէ ձեր գործունէութիւնը կը կեդրոնանայ յատկապէս Ռուսիոյ մէջ: Եթէ հարցը կը վերաբերի ազգային նոր բաժանմունք մը ստեղծելուն, որոշումը կը պատկանի Բիւրոյին, որ կը գումարուի Կոնգրէի նախօրեակին, Օգոստոս* 16-*ին:*

Ամէն պարագայի, հաճեցէք մեզի ներկայացնել՝ պաշտօնական հայց մը, օրինակ մը ձեր նոր Ծրագրէն եւ ձեր գործունէութեան տեղեկագիրը (Ֆրանսերէն եթէ կարելի է):

Եղբայրական ողջոյններով՝
Քարտուղար՝
ՔԱՄԻՅ ՀԻՒՍՍԱՆ

Փաստ. 50-87

Բ 2.– Հ.Յ.Դ.Ի ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ

1907, 23 juillet, Genève

Au bureau Socialiste International à Bruxelles

Chers citoyens,

Nous avons bien reçu votre lettre du 17 juin.

La question de notre participation au Bureau socialiste International ainsi qu'aux congrès internationaux a été décidé au congrès général de notre parti, tenu à Vienne au mois de mai.

D'après cette décision, la direction du Droschak organe officiel du parti, a été chargée de faire à ce sujet des démarches auprès de vous, ce que nous avons fait par notre dépêche du 10 juin.

Les renseignements que nous avons reçus des représentants du Parti socialiste Révolutionaire russe, nous apprenant que notre organisation – La Fédération Révolutionnaire arménienne – est classée parmi les groupements socialistes révolutionnaires russes et doit être représentée au Congrès de Stuttgart. Le même renseignement fut communiqué par le journal "l'Humanité"; nous attendons de votre part la confirmation de cette décision.

Ce qui est essentiel pour nous c'est que nous voudrions prendre part au Congrès non seulement comme une organisation qui travaille au Caucase (dans ce cas nous le ferons avec les groupements russes), mais comme une organisation qui travaille depuis 17 ans en Turquie. Par conséquent la création d'une section nouvelle d'Arménie-turque se présente comme indispensable. D'autant plus que la Turquie n'a jamais été représentée aux congrès socialistes internationaux, et que la participation des éléments révolutionnaires et socialistes de ce pays peut fournir au parti socialiste international une base dans l'Asie Mineure.

Nous vous prions de bien vouloir soumettre cette question au Bureau socialiste et au Bureau du Congrès de Stuttgart.

Nous vous envoyons par ce même courrier un exemplaire de notre statut et une brochure contenant les "Décisions" de notre parti.

Conformément à votre demande nous vous enverrons bientôt

1.- Un rapport sur l'activité de la Fédération Révolutionnaire arménienne (en langue arménienne – Daschnakzoutioun).

2.- Notre programme–minimum en français.

Veuillez nous répondre, cher citoyen, le plus tôt possible.

Salutations fraternelles
REDACTION dU "DROSCHAK"
organe de "Daschnakzoutioun"

1907, 23 Յուլիս, Ժընեւ

Ընկերվար Միջազգայնականի Բիւրոյին, Պրիւսէլ

Սիրելի քաղաքացիներ,

Ստացանք Յունիս 17-ի ձեր նամակը:

Ընկերվար Միջազգայինի բիւրոյին, ինչպէս եւ միջազգային համագումարներուն մեր մասնակցութիւնը որոշուեցաւ Մայիսին, Վիեննայի Ընդհ. Ժողովին: Ըստ այդ որոշման, կուսակցութեան պաշտօնաթերթ «Դրօշակ»ին վստահուեցաւ հարկ եղած դիմումը կատարել ձեզի, ինչ որ ըրինք 10 Յունիսի մեր հեռագրով:

Ռուսական Ընկերվար-յեղափոխական կուսակցութեան ներկայացուցիչներէն քաղած մեր տեղեկութիւններէն կ'իմանանք որ մեր կազմակերպութիւնը – Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը – դասուած է ռուս ընկերվար յեղափոխական խմբաւորումներու շարքին եւ պէտք է [իր] ներկայացուցիչները ուղարկէ Շտուտգարտի համագումարին: Միեւնոյն տեղեկութիւնը հաղորդուեցաւ «Իւմանիթէ» օրաթերթին կողմէ. կը սպասենք այդ որոշման հաստատումին ձեր կողմէ:

Մեզի համար էականը այն է, որ պիտի ուզէինք համագումարին մասնակցիլ ոչ միայն իբրեւ կազմակերպութիւն մը, որ կը գործէ Կովկասի մէջ (այս պարագային պիտի մասնակցինք ռուսական խմբաւորումներուն հետ), բայց նաեւ որպէս կազմակերպութիւն մը որ 17 տարիներէ ի վեր կը գործէ Թուրքիոյ մէջ: Հետեւաբար անհրաժեշտութիւն կը դառնայ Թրքահայաստանի նոր հատուածի մը ստեղծումը: Մանաւանդ որ Թուրքիան բնաւ չէ ներկայացուած ընկերվար միջազգայնականի համագումարներուն եւ որ այս երկրի յեղափոխական եւ ընկերվար տարրերու մասնակցութիւնը միջազգային ընկերվար կուսակցութեան համար կրնայ նոր խարիսխ մը դառնալ Փոքր Ասիոյ մէջ:

Կը խնդրենք որ այս հարցը ներկայացնէք Ընկերվար Բիւրոյին եւ Շտուտգարտի համագումարին:

Միեւնոյն այս թղթատարով կ'ուղարկենք ձեզի մեր ծրագրէն օրինակ մը եւ մեր կուսակցութեան «Որոշումները» պարունակող բրոշիւր մը:

Ձեր պահանջին համեմատ, շուտով պիտի ուղարկենք

1.- Տեղեկագիր մը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործունէութեան մասին:

2.- Մեր նուազագոյն պահանջները (Ֆրանսերէն):

Հաճեցէք, սիրելի քաղաքացի, պատասխանել կարելի փութով:

Եղբայրական ողջոյններով
«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Պաշտօնաթերթ Դաշնակցութեան

Բ 3.– ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵՆԷՆ (ՄԻ ՔԱՆԻ ՓԱՍՏԵՐ)

«Դրօշակ», իր 1907 տարուան թիւ 9 համարին մէջ, ներկայացուցած է Ընկերվար Միջազգային Բիւրոյին յղուած տեղեկագրէն որոշ քաղուածքներ, հետեւեալ ծանօթագրութեամբ. «*Առաջ կը բերենք քանի մը համառօտ քաղուածներ այն ֆրանսերէն Տեղեկագրէն, որ «Դրօշակի» խմբագրութիւնը ներկայացուց Շտուտգարտի կոնգրէին Բրիւսելի Սոցիալիստական Միջազգային Բիւրոյի միջոցով*»:

Հ. Յ. Դաշնակցութիւնը կ'ընդգրկէ պատմական Հայաստանի երկու մեծ մասերը, Տաճկահայաստան եւ Ռուսահայաստան: Դաշնակցութիւնը ճիւղաւորումներ ունի Պարսկաստանի, ինչպէս նաեւ Ամերիկայի, Եւրոպայի, Պուլկարիոյ, Ռումանիոյ եւ Եգիպտոսի հայ գաղութների մէջ: Կուսակցութիւնը հիմնուած է 1890ին, Տաճկահայաստանի մէջ հայ ժողովրդի ազատագրութեան համար, որը դրամատիրական մեծ պետութիւնները մատնեցին ամենավայրագ բռնութիւններու, հակառակ այն խոստումին որ յանձն առին դէպի հայ ժողովուրդը Բերլինի Դաշնագրի 61-րդ յօդուածով:

Հայաստանի էն ստրկացած եւ էն դժբախտ մասին մէջ էր, որ հայ յեղափոխութեան առաջին կազմակերպութիւնները ծագում առին:

ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆ.– *(Բերուած է վիճակի ընդհանուր նկարագիրը):*

Դաշնակցութիւնը կազմակերպուած 1890ին, իբր անխուսափելի հետեւանք խորին եւ ընդհանուր դժգոհութեան, 1892-ի Ընդհանուր ժողովին մէջ իր քաղաքահասարակական դաւանանքը բանաձեւեց: Այս յայտագրին քաղաքական մասը կը պահանջէ հայկական վեց վիլայէթներու մէջ քաղաքական ազատութիւն, առանց ցեղի եւ կրօնի խտրութեան:

Սակայն Դաշնակցութիւնը իբր ներկայացուցիչ աշխատաւոր մեծ մասսաներու շահերուն, չէր բաւականանար քաղաքական պահանջումներով: Գիտակցութիւնը ունենալով իրականութեան, գիտնալով նաեւ որ երկիրը դեռ մեծ մասով գոյութեան միջնադարեան պայմաններու մէջ կը գտնուէր, որով պատրաստ չէր բուն սոցիալիստ գործողութեան, հայ յեղափոխականները հէնց 1892էն իրենց յայտագրին մէջ ընդունեցին միջազգային սոցիալիզմի մեծ սկզբունքները:

Ահա թէ ինչ կ'ըսէ 1892-ի մեր «Ծրագիրը»:

Ինքնավարութիւն եւ քաղաքական իրաւունքներ ձեռք բերելը մեր աշխատանքի մէկ մասն է միայն: Այս իրաւունքները բաւական պիտի չըլլան երաշխաւորել աշխատաւորին իր աշխատութեան լիուլի վայելումը – Մենք պիտի ջանանք հաւաքական սեփականութեան եւ աշխատանքի սկզբունքը տարածել՝ պատրաստելու հասարակական կազմակերպութեան համար, որ պիտի հաստատուի, ուշ կանուխ, առաջադէմ երկիրներու մէջ, պրոլետարիայի յեղափոխութիւնով:

Դաշնակցութեան ծրագրին մէջ սոցիալիզմը Տաճկաստանի համար առաջնորդող սկզբունք մըն է: Դասակարգային բաժանումները գրեթէ կ'անհետանային փոխանակ չեչտուելու, ապերասան ռեժիմի մը բռնակալութեան տակ՝ որ կը ճզմէր հարուստ եւ աղքատ, կը խեղդէր ամէն անհատական նախաձեռնութիւն, կ'ոչընչացնէր ազգային հարստութեան բոլոր աղբիւրները, ազատ ասպարէզ տալով պաշտօնեաներու կամայականութեան, կազմակերպուած աւազակութեան: Չկայ ապահովութիւն վաճառականներու եւ ճարտարագործներու համար, չկան հաղորդակցութեան ուղիներ, ոչ ալ դրամատիրութիւն, չկայ պրոլետարիա եւրոպական մտքով: Մեզի կը մնար ուրեմն սոցիալիստական սկզբունքները տարածել երկրի մտաւորականներուն մէջ (ուսանողներ, ուսուցիչներ եւայլն) եւ մենք այդ ըրինք մեր փրոփականդիստներու եւ մեր հրատարակութիւններու միջոցով:

Վերջի 17 տարիներու ընթացքին մէջ հայ յեղափոխականներու համար, հրամայական եւ անողոք անհրաժեշտութիւն էր կռիւ՝ բռնապետութեան աւատական մնացորդներու դէմ, անդադար եւ արիւնահեղ կռիւ:

Աւելորդ է մանրամասն պատմել այդ ողբերգական կռիւներու անցուդարձը, որ Դաշնակցութիւնը մղեց երկար տարիներ անխիղճ բռնակալութեան մը դէմ եւ այնպիսի սարսափելի միջավայրի մը մէջ ուր մոլեռանդ ամբոխներու վայրենի բնազդները սանձարձակ կը գործեն:

Հայ ազատագրութեան գործը կանգ չառաւ նոյնիսկ ահաւոր աղէտներէն յետոյ, երբ հակազդեցութիւն մը սկսած էր մեր ժողովրդին մէջ: Ոչ մէկ ելք չկար: «Յեղափոխութիւնը մեռած է», կ'ըսէին, սակայն մեր կուսակցութիւնը այս վտանգաւոր հոսանքին տեղի չտուաւ: Ան սեղմեց իր շարքերը եւ քարոզեց դիմադրել: Յենած գիտակից տարրերուն վրայ՝ իրեն կողմը ունենալով տառապող եւ բազմաչարչար ամբոխին համակրութիւնը, Դաշնակցութիւնը կռիւը շարունակեց յուսահատութեան կորովով մը: Ստիպուեցաւ կռուիլ բուն թշնամիին եւ իր հայրենակիցներու յուսաթափութեան դէմ: (Բերուած են փաստեր):

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ.— Յեղափոխական կռուին մէջ լուսաւորուած ռամկավար եւ սոցիալիստ սկզբունքներով, Դաշնակցութիւնը կը ջանար ընդլայնել, կարելի չափով, իր գործունէութեան շրջանը։ Արդէն հէնց իր գոյութեան սկիզբէն ան կը քարոզէր Օսմանեան կայսրութեան ժողովուրդներու մէջ համերաշխութիւն։ Կը հրաւիրէր, մշտակի կոչերով, համաձայնութեան գալ ընդհանուր թշնամիին, սուլթանի բացարձակապետութեան դէմ։ Կը ջանար կապեր հաստատել զանազան ազգութիւններու յեղափոխական կամ բարենորոգչական կուսակցութիւնների հետ։ Յարձակողական դաշնակցութիւն կնքեց Մակեդոնիոյ յեղափոխութեան կուսակցութեան դէմ, եւրոպական Թուրքիոյ մէջ միասին գործակցութեան համար։— Դաշնակցութիւն մը, որ ի միջի այլոց, նուիրագործուեցաւ, 1900-ին կռուի դաշտին վրայ, Էդիրնէի մօտ եւ կախաղաններուն վրայ որ Թուրք կառավարութիւնը բարձրացուց միեւնոյն քաղաքին մէջ, պատժելու համար հայ-մակեդոնական դաւադրութեան կենդանի հեղինակները։

1894-էն ասդին Երիտ. Թուրքերու հետ մերձեցումի փորձեր ըրինք։ Վերջին ժամանակներս Թուրքերու եւ քիւրդերու մէջ էն առաջադէմները եւ անկեղծները սկսած են հասկնալ մեր ծրագիրը եւ ձգտումները, մեզի կը մօտենան եւ կը հետեւին զուտ յեղափոխական ճանապարհով։ Անտարակոյս վերջի երկու տարուայ մէջ մահմեդական ժողովուրդներու ներկայ զարթնումը, որ յայտնի եղաւ արիւնահեղ ցոյցերով Օսմանեան պաշտօնակալութեան դէմ՝ Էրզրում, Պիթլիս, Քասթէմունի, մասամբ պարտական է մեր 16 տարուայ յեղափոխական գործունէութեան, ինչ որ Թուրք շարժման պարագլուխները իրենք եւս կը խոստովանին։

Այսպէս հայ-միւսիւլմանական գործակցութիւնը՝ մեր երբեմնի երազը, իրագործուելու վրայ է։ Արդէն Խանասորի եւ Սասունի անցեալի կռիւներուն մէջ մենք մեր շարքերուն մէջ ունեցած ենք Թուրքեր եւ քիւրդեր, իբր կռուող եւ գաղտնի գործիչներ։ Բայց ասոնք առանձին անհատներ են մահմեդական մասսայի մէջ որ խորապէս պահպանողական եւ յետադիմական էր դեռ։

Այսօր նոր դարաշրջան մը կը սկսի Օսմանեան կայսրութեան բոլոր անբախտ ժողովուրդներուն համար։ Յեղափոխական շարժումը մեծ անդունդ մը բացած է ժողովուրդի եւ պաշտօնակալութեան միջեւ, գիտակցութիւնները կը լուսաւորուին, կ'ըմբոստանան աննախընթաց բարբարոս ռեժիմին դէմ. անշուշտ հեռու չէ այն օրը ուր սուլթանի բռնակալութիւնը տեղի պիտի տայ զարթնած ժողովուրդներու միացած գրոհին։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ.— 13 տարի շարունակ, 1890-էն 1903, Դաշնակցութեան գործունէութիւնը գլխաւորապէս Թրքահայաստանի մէջ կեդրոնացած էր։ Կովկասեան կոմիտէները, ինչպէս նաեւ Պարսկաստանի եւ գաղութներունը, օժանդակ կազմակերպութիւններ էին, որոնք կը հայթայթէին դրամ, մարդ, զէնք Թրքահայերու ազատագրութեան շարժումին։

... Սակայն մեր կուսակցութիւնը անտարբեր չէր կրնար մնալ Ռուսաստանի մէջ բռնի ռուսացումի քաղաքականութեան հանդէպ, ուրկէ կը տառապէին յաճախ աշխատաւոր մեծ մասսաները։ Կուսակցութեան կովկասեան հատուածները որոշեցին հակազդել բացառիկ օրէնքներու դէմ եւ դիմեցին ամէն կարելի միջոցի, նոյնիսկ ստորերկրեայ գործունէութեան։ — Դպրոցներու եւ ուրիշ կրթական հաստատութիւններու փակումէն յետոյ, Դաշնակցութիւնը իր ձեռքը առաւ ժողովրդական դաստիարակութեան գործը։ Հիմնեց քաղաքներու եւ գաւառներու մէջ գաղտնի դպրոցներ, ուր ուսուցիչներ մայրենի լեզուն կ'աւանդէին ժողովրդին։ Շատ տեղեր պարտաւորիչ եւ ձրի կրթութիւն հաստատեց, որուն ծախքը՝ համայնքը կը հոգար։ Կը հիմնէր նաեւ գաղտնի գրադարաններ, կը տարածէր ժողովրդին եւ մտաւորականներուն մէջ յեղափոխական գաղափարներ, գրականութիւն, իր կեդրոնական օրգանին եւ արտասահման հրատարակուած գրքոյկներու միջոցով։

Դաշնակցութեան գործունէութիւնը հոդ կանգ չառաւ։ 1902-էն սկսած ան բացէբաց եւ զուտ յեղափոխական դարձաւ։ Կարգ մը գաւառներու մէջ մենք ձեռք ձգեցինք կառավարական գործունէութեան մէկ մասը — արդարադատութիւնը՝ վճռական հարուած մըն էր իր հեղինակութեան։ Կուսակցութիւնը դատարաններ հաստատեց եւ տարիներով գերագոյն իրաւարարի պաշտօնը կատարեց, գիւղացիներուն մէջ ծագած ամէն տեսակ վէճեր ինք կը դատէր եւ կը վճռէր, դատաւորները յաճախ ընտրուած էին համայնքներէն, կուսակցութեան հսկողութեան տակ կը գործէին։ Յաճախ մեր մահմեդական դրացիները իսկ — Թուրք, քիւրդ կամ Թաթար գիւղացիներ — կը դիմէին կուսակցութեան դատարաններուն, վիճելի հարցերուն վերջ տալու համար. այսպէս մենք շատ մը մահմեդական համակրողներ ունեցանք, որոնք յեղափոխական դատարանի սնտուկին իրենց դրամավճարները կ'ընէին։

Հասան աւելի մռայլ օրերը։ 1903 Յուլիսին ցարը ուկազով մը հրամայեց գրաւել հայ եկեղեցական կալուածները։ Այս անարդար եւ ըմբոստացնող միջոցը չափը անցուց։

Դաշնակցութիւնը բողոքի շարժման մը նախաձեռնութիւնը եւ ուղղութիւնը ձեռք առաւ, եւ Ռուսահայաստանը շուտով արիւնահեղ կռուի եւ վրիժառութեան թատրը դարձաւ։ (Բերուում են մանրամասնութիւններ)։

Հայ ժողովրդի ընդհանուր ոտիկանգնումը ապարդիւն չանցաւ։ Պետերբուրգի պալատականներուն մտածել տուաւ եւ քիչ յետոյ, 1905-ի ամրան, ցարը, ուրիշ ուկազով մը, հայ ժողովրդին վերադարձուց իր ազգային կալուածները եւ միաժամանակ բանալ տուաւ հայ դրպրոցները։

Վրայ հասաւ ռուսական մեծ յեղափոխութիւնը, որ անսահման կայսրութիւնը դողդեց։ «Դաշնակցութիւնը» մասնաւոր ծրագրի մը պէտք զգաց, Կովկասի միւս յեղափոխական եւ սոցիալիստ կուսակցութիւններուն հետ գործակցութեան համար։ Կուսակցութեան խորհուրդը 1905 Մայիսին, այս նպատակով «Նախագիծ» մը խմբագրեց որ Կովկասի մէջ մեր գործունէութեան խարիսխը եղաւ։

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄ.— Մանրամասն նկարագրելով ամբողջ եղելութիւնը, տեղեկագիրը անցնում է երկու ժողովուրդներին հաշտութեան *խնդրին։ Խորին ցաւագացումով մըն է որ Դաշնակցութիւնը ամբողջ տարիէն աւելի մղեց այդ աղէտալի կռիւը. երկու ցեղերը [որոնք] թէեւ տարբեր մշակութիւնով եւ ազգակցութիւնով, շարունակ երկար տարիներ կատարելապէս համերաշխ ապրած էին։ Մեր կացութեան եղերականութիւնը աւելի կը շեշտուէր յարաճուն աւերակներու տեսարաններով, երկուստեք թափուած արեան ալիքներով, հայ եւ թաթար հազարաւոր գնդակներով, երկրին մէջ տնտեսական բոլոր կեանքի դադարումով, թշուառութիւնով, սովով եւ համաճարակներով։*

Մեր կուսակցութիւնը պատասխանելով հանդերձ յարձակումներուն, չէր դադրեր հաշտութիւն եւ խաղաղութիւն քարոզելէ։ Վերջ ի վերջոյ մեր կոչերը լսուեցան։ Թաթար մասսաները եւ իրենց ղեկավարները իրենք վերջապէս զգացին, Դաշնակցութեան ուժգին գրոհին առջեւ, իրենց արշաւանքներուն անօգուտութիւնը. հասկացան միաժամանակ այն ամօթը, որ հլու գործիքը եղած էին գարշելի բռնակալութեան մը ձեռքերուն մէջ։

Այսօր գոհ ենք յայտնելու որ ոչ միայն երկու դրացի ցեղերու յարաբերութիւններուն մէջ անդորրութիւնը վերահաստատուած է, այլ նաեւ գործակցութիւն մը իրականալու վրայ է, գոնէ տնտեսական հողին վրայ։ Մեր պրոպականդիստները վերջերս մեծ յաջողութիւն ունեցան միւսիւլման աշխատաւորներու մէջ. շնորհիւ անոնց ջանքերուն, հայեր եւ թաթարներ այսօր միասին են, մէկտեղ գործադուլներ կ'ընեն դրամատէրերու դէմ, նոյնիսկ այն գաւառներուն մէջ որ քիչ առաջ, եղբայրասպան ընդհարումներու թատր էր, ինչ որ մեր ապագայ յաջողութեան համար թանկագին գրաւական մըն է։

Հայ-Թրքական խաղաղութենէն յետոյ, կուսակցութիւնը վերստին ուշադրութիւնը դարձուց բուն էական գործին — այն է ժողովրդի կազմակերպութեանը, ինքնակալութեան եւ դրամատիրութեան կրկին ռեժիմին դէմ...

Անցնելով տեռորական գործունէութեան, տեղեկագիրը կ'աւելացնէ թէ, կուսակցութիւնը պատուհասեց շարք մը «բարձր անձնաւորութիւններ», իբր կոտորածներու կազմակերպիչներ։ Այսպէս, սպաննուեցան զօրավար Անդրիեւ՝ Գանձակի կառավարիչը 1904-ին. իշխան Նակաշիձէ՝ Բագուի տիրահռչակ հերոսը 1905-ին. հրամանատար Բոգուսլաւսկի՝ Իկտիրի մէջ 1904-ին. հրամանատար Բրկով, Օլթիի մէջ 1904-ին. ոստիկանապետ Սախարով, շատ մը փոքրիկ պաշտօնակալներ — ոստիկաններ, ոստիկանութեան կոմիսէրներ, խառնակիչներ եւայլն։ Նորերս մեր ահաբեկիչներու հարուածներուն տակ ինկան հռչակաւոր Լոլաձէ, Գանձակի մէջ եւ զօրավար Ալիխանով, Թաթար կոտորիչներու պաշտպանը եւ Վրաստանի մեծ դահիճը։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ.— Դասակարգային բաժանումները հետզհետէ կը շեշտուին Կովկասի մէջ, իբր արդիւնք տնտեսական բնաջրջումին։ Մեքենաների կիրառումը, ինչպէս ամէն տեղ, նոյնպէս մեր մօտ իր անխուսափելի հետեւանքները ունեցաւ՝ այն է արհեստներու մասնակի անհետացումը եւ գիւղերու մեծամբոխ գաղթումը դէպի քաղաքները։ Այս գաղթումը ամէն օր կ'աճի, գիւղացիներու հողերու պակասութեան պատճառով։ Արքունական ընդարձակ հողեր երկար ժամանակէ անմշակ կը մնան. կառավարութիւնը՝ ռուսացումի նպատակով, հողերը տեղացիներուն չի տար եւ հայ աշխատաւոր մասսաները իրենց հողերու քիչութեան պատճառով, դատապարտուած են կեանքի թշուառութեան։

ԳԻՒՂԱՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ.— Զրկուած հողէ եւ մշակութեան նորագոյն միջոցներէ, ստիպուած վճարել ծանրածանր հարկեր եւ միեւնոյն ժամանակ մատնուած աղաներու եւ վաշխառուներու անսահման շահագործումին, հայ գիւղացին այժմս կը գտնուի ամենախեղճ դրութեան մէջ։ Այս պայմաններու մէջ, իրօք պատրաստուած է սոցիալիստական գաղափարներու պրոպականդին եւ գլխաւորաբար հողի համայնացումին։ Այս նշանաբանով է որ մեր կուսակցութիւնը կը մօտենայ գիւղացիներուն։ Այս վերջի երեք տարիներուն մէջ մեծ յաջողութիւն ունեցաւ. իր բոլոր հեղինակութիւնով ծանրացաւ գիւղական մակաբոյծ տարրերու վրայ եւ գիւղացիական կեանքին մէջ կարեւոր փոփոխութիւններ առաջ բերաւ։ Շատ մը գաւառներու, մանաւանդ Գանձակի եւ Երեւանի նահանգներուն մէջ, բաշխել տուաւ համայնական հողերը յօգուտ հարստահարուած փոքր հողագործներու մեծ մասին։ Այս հողաբաժանումը քսան տարիէ ի վեր չէր կատարուեր հարուստ եւ ազդեցիկ գիւղացիներու դիմադրութեան շնորհիւ։ Մեր գաւառական կազմակերպութիւնները կանոնաւոր, երբեմն բուռն, կռիւ մղեցին սեփականատէրերու դէմ եւ

չատ մը գաւառներու մէջ գիւղացիները տասանորդ չվճարեցին։

ԲԱՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՄԷՋ.— Արդիւնագործական աշխարհի մէջ Դաշնակցութիւնը կը կազմակերպէ հայ բանուորութիւնը՝ դասակարգային կռուի համար։ 1900-էն արդէն կազմակերպեց գործադուլներ, որոնք, քիչ բացառութիւնով, յաջողութեամբ պսակուեցան։

Մեր կազմակերպուած գործաւորներու թիւն է 23,300։

ՍԻՆՏԻԿԱԾԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.— Մեր տընտեսական գործունէութեան ամբողջացուցիչ մասն է։ Քիչ ժամանակի մէջ, այն օրէն ի վեր որ Կովկասի մէջ մասնակի ազատութիւններ կը վայելենք, մենք կազմակերպեցինք չատ մը զանազան արհեստակցական միութիւններ Թիֆլիս, Բագու, Բաթում, Գանձակ, Երեւան, Ալեքսանդրապոլ եւ Շուշի։

Միութիւններու թիւն է՝ այդ քաղաքներու մէջ — 110. անդամների թիւը 10,990։ Բացի այս՝ մենք ունինք գիւղերու մէջ բազմաթիւ գիւղացիական միութիւններ։

Այս միութիւններուն մէջ կազմակերպուած փոքրիկ հողագործների թիւը 67,000 է։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ.— Մենք ունինք չորս խմբակցութիւններ. քաղաքական, արհեստակցական, հողագործական եւ մարտական։

Տաճկահայաստանի, Կովկասի, Պարսկաստանի, Բալքանեան երկրներու եւ Ամերիկայի մէջ ունինք 3093 խումբ. 165,000 անդամով։

Կուսակցութիւնը ունի 21 կեդրոնական կոմիտէ, մեծ թուով Թուրքիոյ եւ Կովկասի մէջ. երկու Բիւրօ, Արեւելեան եւ Արեւմտեան, մէկը Երկրին մէջ, միւսը Եւրոպայի։ Այս վերջինը, ի միջի այլոց, կը հրատարակէ կուսակցութեան կեդրոնական օրգանը՝ «Դրօշակը»։

ԲԻՒՋԷ.— Կուսակցութեան աստիճանական ծաւալումով իր եկամուտներն ալ աճեցան։

1890-ին, կուսակցութեան հիմնարկութեան տարին, իր հասոյթը մօտ 130,000 ֆրանք էր։

1895 — 98 այդ թիւը կէս միլիոնի կը բարձրանար։

1904-ի Երրորդ Ընդհանուր Ժողովը որոշեց 800,000 ֆրանքի բիւրեղէ։

1907-ի, վերջի Ընդհանուր Ժողովը, որոշեց բիւրեղէն մէկ միլիոն ֆրանք։

Այս տարուայ հասոյթները հետեւեալ կերպով բաժնուած են.

1) Յեղափոխական եւ քաղաքական գործունէութիւն՝ 30%

2) Ժողովրդի զինման համար 35%

3) Պրոպականդ եւ գրականութիւն 20%

4) Կազմակերպական ծախսեր 20%

5) Պատահական ծախսեր 5%

ՄԱՄՈՒԼ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— 1) Կուսակցութեան կեդրոնական օրգանն է «Դրօշակ», հիմնուած 1890-ին, որ կը հրատարակուի Ժընեւ։ Հակառակ երկու երկիրներու խիստ գրաքննութեան, գաղտնի ճամբով կը մտնէ Թուրքիա եւ Կովկաս. լոյս կը տեսնէ մօտ 14 հազար օրինակ։

2) Մէկ օրաթերթ Կովկաս.— 7000 օրինակ։

3) Մի շաբաթաթերթ Ամերիկա, այնտեղի մեր կոմիտէներուն եւ հայ գաղութին համար։

4) Պարբերաթերթ մը Բալքանեան թերակղզիին մեր գաղութին համար։

5) Շաբաթաթերթ մը հարաւային Ռուսաստանի մէջ։

6) Ֆրանսերէն օրգան մը Եւրոպայի մէջ, ուր լայն պրոպագանդ կ'ընայ հայկական դատը պաշտպանելու համար Եւրոպայի հանրային կարծիքին առջեւ։

Կուսակցութեան հրատարակութիւնը բաւական հարուստ է յեղափոխական եւ սոցիալիստական հրատարակութիւններով, որոնցմէ կան թարգմանութիւններ միջազգային սոցիալիստական գրականութենէն։

Մենք հրատարակած ենք նաեւ շարք մը գրքեր եւ գրքոյկներ ռուսերէն, թուրքերէն եւ թաթարերէն լեզուներով՝ երկրի համար, եւ ֆրանսերէն ու գերմաներէն լեզուներով, Եւրոպայի համար։

Կուսակցութիւնը ունի գաղտնի տպարաններ եւ կը հրատարակէ շատ մը թռուցիկ թերթեր եւ կոչեր, որ կապ ունին առօրեայ գործունէութեան եւ ընթացիկ դէպքերու համար*։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՈՆԳՐԷՆ.— Որ գումարուեցաւ այս տարի, Վիեննա, կարգ մը կարեւոր որոշումներ կայացուց մեր կռուի եւ ապագայ գործողութեանց համար։ Ի միջի այլոց որոշեց շարունակել երկու երկիրներու գործունէութիւնը Դաշնակցութեան դրօշակին տակ եւ ամէն ազդու միջոցներ ձեռք առնել սոցիալիստ եւ յեղափոխական միւս տարրերուն հետ համագործակցութիւն մը առաջ բերելու համար։

Միջազգային սոցիալիստական կոնգրէսին մասնակցելու առաջարկը ընդունուեց միաձայն։

«ԴՐՕՇԱԿ»

Կուսակցութեան կենդրոնական օրգան

Ժընեւ

1907, Օգոստոս

---

* Հասկնալի պատճառներով՝ մենք ստիպուած ենք լռութեամբ անցնիլ Դաշնակցութեան գործունէութեան այն մասերը, որոնք գաղտնի բնաւորութիւն ունին։

Փաստ. 1675-3

Բ 4.– ՔԱՄԻՅ ՀԻՒՍՍԱՆԻ ՆԱՄԱԿԸ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Bruxelles, le 1-8-1907

A la direction du Droschak

Chers citoyens,

A la dernière séance du Bureau, le cit[oyen] Roubanovitch a donné lecture, au nom de toute la section russe, d'une résolution des deux sous-sections. Votre parti, comme vous le verrez par la coupure ci-jointe, figure parmi les parties contractantes. La question me paraît donc liquidée, au point de vue de la Russie.

Autre chose est votre demande relative à la création d'une nouvelle section arménienne en Turquie. Pour trancher cette question, le Bureau seul est compétent, et comme il se réunit le 16 août à 3 h. à Stuttgart, à la Liederhalle, c'est à cette réunion que vous devez faire valoir vos arguments.

Excusez-moi de ne vous avoir répondu plus tôt.

Nous sommes débordés. Nous avons plus de 1500 pages à l'impression.

Vôtre
CAMILLE HUYSMANS

Պրիւսէլ, 1 Օգոստոս 1907

Դրօշակի խմբագրութեան

Սիրելի քաղաքացիներ,

Բիւրոյի վերջին նիստին, քաղաքացի Ռուբանովիչ, յանուն ռուսական ամբողջ հատուածին, ընթերցեց երկու ենթաբաժանմունքներու որոշումը։ Ձեր կուսակցութիւնը, ինչպէս պիտի տեսնէք ներփակ կտրօնէն, ներկայացուած է պայմանադիր կողմերու շարքին։ Ինծի կը թուի, ուրեմն հարցը լուծուած Ռուսիոյ տեսակէտէն։

Այլ խնդիր է ձեր պահանջը Թուրքիոյ մէջ հայկական նոր բաժանմունք մը ստեղծելու վերաբերեալ։ Այս հարցի լուծման մէջ միայն Բիւրոն իրաւասու է, եւ որովհետեւ ան նիստ պիտի ունենայ Շտուտգարտի մէջ 16 Օգոստոս ժամը երեքին, այդ ժողովին է որ պէտք է արժեցնէք ձեր նկատողութիւնները։

Ներողամիտ եղէք որ աւելի շուտ չպատասխանեցի ձեզի։

Ծանրաբեռնուած ենք։ 1500 էջ ունինք տպագրութեան համար։

Ձերդ
ՔԱՄԻՅ ՀԻՒՍՍԱՆ

Փաստ. 1675-1

Բ 5.– ՔԱՄԻՅ ՀԻՒՍՍԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Bruxelles, le 17 août 1907

Au comité directeur de la Fédération
Révolutionnaire Arménienne

Chers citoyens

Le Bureau dans sa séance du 16-8-07, a décidé en réponse à votre lettre

a) Que votre parti, ayant été admis par la section russe, comme il résulte de la convention intervenue le 9 juin 1907 et publiée dans le volume de propositions et résolutions (congrès de Stuttgart) p. XXIX, le Bureau n'avait pas à tenir compte de la protestation déposée par un autre groupement.

b) Que votre demande, tendante à créer une section turco-arménienne ne pourrait être prise en considération que si cette section englobait toutes les nationalités de Turquie.

c) Qu'il procéderait à une enquête sur le point de savoir, si dans l'empire de Turquie, il existe des organisations socialistes capables de constituer une section affiliée et qu'il attendrait de vous des documents y relatifs.

Salutations fraternelles
Le Secrétaire CAMILLE HUYSMANS

Պրիւսէլ, 17 Օգոստ. 1907

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
Վարիչ մարմնին,

Սիրելի քաղաքացիներ,

Ձեր նամակին ի պատասխան, Բիւրոն, 16 Օգոստ. 1907-ի իր նիստին որոշեց

ա.- Որ ձեր կուսակցութիւնը ընդունուած ըլլալով ռուսական բաժանմունքին կողմէ, ինչպէս կը հետեւի 1907, Յունիս 9-ին կնքուած պայմանադրութենէն հրատարակուած Առաջարկներու եւ Որոշումներու հատորին մէջ, էջ 29 (Շտուտգարդի համագումարին բաշխուած),– Բիւրոն ստիպուած չէր հաշուի առնելու ուրիշ խմբակցութեան մը կողմէ ներկայացուած բողոքը։

բ.- Որ թրքահայ բաժանմունք մը ստեղծելու ձեր պահանջը կրնար նկատի առնուիլ միայն այն պարագային երբ այդ բաժանմունքը ընդգրկէր Թուրքիոյ բոլոր ազգութիւնները։

գ.- Որ [Բիւրոն] ձեռնամուխ պիտի ըլլար քննութեան մը՝ իմանալու համար թէ Թուրքիոյ կայսրութեան մէջ գոյութիւն ունի՞ն արդեօք ընկերվար կազմակերպութիւններ, որոնք ի վիճակի ըլլան օժանդակող բաժանմունք մը կազմելու, եւ պիտի ակնկալէր ձեզմէ [հայթայթել խնդրին] վերաբերող փաստաթուղթեր։

Եղբայրական ողջոյններով
Քարտուղարը ՔԱՄԻՅ ՀԻՒՍՍԱՆ

Փաստ. 1675-5

Բ 6.– ՔԱՄԻՅ ՀԻՒՍՍԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Bruxelles, le 20-11-1907

Chers citoyens du comité
de la Fédération Révolutionnaire Arménienne
à Genève,

Je vous communique ci-joint le texte de la résolution que vous m'avez demandé par votre lettre.

Ma réponse se fait un peu tardivement; mais la raison en est que j'ai dû m'occuper d'autres questions.

Il est inutile d'envoyer un camarade à Bruxelles, la solution de cette affaire n'étant pas d'une urgence extrême.

Veillez en tout cas à ce que le dossier soit le plus complet possible.

Votre très dévoué
CAMILLE HUYSMANS

Պրիւսէլ, 20 Նոյ. 1907

Սիրելի քաղաքացիներ
Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն Կոմիտէին,
Ժընեւ,

Ներփակ կը փոխանցեմ որոշումին պատճէնը, զոր ինձմէ ուզած էիք ձեր նամակով[2]:

Պատասխանս քիչ մը կը յապաղի. բայց պատճառը այն է որ ստիպուեցայ ուրիշ հարցերով զբաղիլ:

Անօգուտ է ընկեր մը ղրկել Պրիւսէլ, այդ հարցին լուծումը ծայրայեղ ստիպողականութիւն չունենալուն համար:

Ամէն պարագայի տակ ուշադիր եղէք որ թղթածրարը կարելի եղածին չափ ամբողջական ըլլայ:

Անձնուիրաբար
ՔԱՄԻՅ ՀԻՒՍՍԱՆ

Փաստ. 50-73

Բ 7.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՐԵՒԵԼԵԱՆԻՆ

22 Յուլիս [1907]

Սիրելի Արտաւազդ,

Անկարող եմ հասկանալ, թէ ինչո՞ւ ուշացրիք «մանկավարժական ծրագրի»[3] պատասխանը: Բոլոր դպրոցները անդադար շտապեցնում են: Խնդրեր էի քեզ՝ հեռագրով պատասխանել. միթէ չես ստացել Վարդգէսի անունով ուղարկած մանրամասն նամակս այդ մասին: Ստիպուած եղանք այսօր այդ առիթով մի հեռագիր տալ Եղիշէի[4] հաստիքով:

Ստիպուած կը լինենք գուցէ մանկավարժական ծրագրի ընդհ[անուր] մասը եւ պահանջները տպագրել, թողնելով միւս մասը քիչ յետոյ, որովհետեւ այդ անհրաժեշտ է առաջիկայ միջ[ազգային] կոնգրէսի առիթով: Դուք եթէ անյարմար չէք գտնում նոյնպէս:

Մհերեանի ապսպրանքը՝ Ռուբինայի[5] միջոցով ստացայ. հարկաւ ամէն ջանք ի գործ կը դնենք, մանաւանդ որ խնամիների[6] վարմունքը դառնում է յիրաւի անտանելի: Բրիւսէլից գրել են, որ մեր հեռագիրը քիչ ուշ ստացան, երբ արդէն Բիւրոյի ժողովը փակուած էր[7], ապա թէ ոչ Papa-ն[8] կը ներկայանար անկախ եւ առանձին: Բայց եւ այնպէս այս մասին նոր դիմումն պիտի անենք կոնգրէսի դիւանին: Ցոյս ունենք աջողուենք:

Բրիւսէլից խնդրել են շտապեցնել մեր մանկավարժական ծրագիրը, դպրոցի «կանոնագիրը»[9] եւ մի «տեղեկագիր»: Ի հարկէ չենք ուշացնի:

Օր. Լահէի մօտ պիտի գնան [Անատոլ] Ֆրանս, Պրեսանսէ, Բերար, Քիյար[10]:

Բարեւներ՝ ԽԱՉԱՏՈՒՐ

2.- Յիշուած պատճէնը ամբողջութեամբ քաղուածք մըն է Ընկերվար Միջազգայինի բիւրոյի 1907 թ. Օգոստոս 17ի որոշումներէն. փաստօրէն կրկնութիւնը փաստ. թիւ 1675-1ի:

3.- «Մանկավարժական ծրագիր», «դպրոց» եւայլն գաղտնագրութիւն են: Առաջինը Վիեննայի Չորրորդ Ընդհ. ժողովին մշակուած Դաշնակցութեան նոր Ծրագրին կը վերաբերի. երկրորդը՝ (դպրոցներ) կուսակցական մարմիններն են:

4.- Եղիշէ Թոփչեան, անդամ Արեւելեան Բիւրոյի (Արտաւազդ):

5.- Մհերեանը անշուշտ Արեւելեան Բիւրոն է, Ռուբինան՝ Արէշեան, որ ծանօթ է իբրեւ մասնակից Ապտիլ Համիտի մահափորձին, Թիֆլիսէն եկած էր Ժընեւ:

6.- Հաւանաբար՝ ռուս սոցիալ-ռեւոլուցիոնէրները:

7.- Բրիւսէլը այստեղ կեդրոնն է Ընկերվար Միջազգայինի բիւրոյին:

8.- Papa-ն՝ Դաշնակցութիւնն է:

9.- Դպրոցական «կանոնագիրը» գործածուած է տակտիկ, մարտավարական իմաստով:

10.- «Օր[իորդ] Լահէ»ն 1907 թ. Օգոստոսին գումարուելիք Լահէյի Խաղաղութեան Երկրորդ կոնգրէն է. յիշատակուած անձնաւորութիւնները Ֆրանսացի քաղաքական եւ հասարակական դէմքեր են, չորսն ալ անդամ Pro Armenia-ի խմբագրական կազմին:

Փաստ. 17-8

Բ 8.– ԱՐԵՒԵԼԵԱՆԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Սիրելիք,

Շտուտգարտի համագումարի մասին արդէն ձեզ գրել ենք: Լիպարիտը[11] այսօր մեկնում է, բայց խայտառակութիւնը այն է որ մեր մարմինները մինչեւ հիմա մանդատները չեն ուղարկել. ստիպուած ենք յետոյ ուղարկել Շտուտգարտ:

Բացի նրանից 3 հոգի էլ ձեր կողմերից պիտի ընտրէք, որոնցից մէկը կը լինի իրաւական ձայնով, մնացածները խորհրդակցական: Բոլոր ընկերների կարծիքն է որ Միքայէլը[12] լինի իրաւական ներկայացուցիչ. եթէ Ռոստոմը կարողանար գալ եւ այնտեղ, լաւ կը լինէր:

Մ[ոցիալ] Ռ[եւոլուցիոներ]ները ընդունել են մեր անջատականներին իբրեւ առանձին հայկական ֆրակցիա: Այդպիսի բանից յետոյ պարզ է որ մեր յարաբերութիւնները կը խզուեն: Հարկաւոր է որ դուք բոլոր ճիգերդ թափէք որպէսզի մենք ներկայանանք անկախ նրանցից Միջ[ազգայնին] սոցիալ[իստական] համագումարներին:

Երեւի Ցակոբը ձեզ գրած կը լինի Լեւոն Աթաբէկեանի մասին, որը ստերով հաւատացրել [է] նրանց, որ Դ[աշնակցութիւնը] քայքայուել է իսկ իրանք բարգաւաճում են եւ մեր բոլոր ինտելիգենտ ուժերը գրաւել են եւայլն:

Ցոյս ունենք որ դուք այդտեղ ձեր ունեցած մանդատները գոնէ իրա ժամանակին հասցրած կը լինէք:

Առ այժմ այսքան:

Համբոյրներով՝
ՄՀԵՐԵԱՆ

P.S.- *Ռոստոմը ինչքան շուտ գայ, այնքան լաւ, որովհետեւ մի շարք խոշոր բաներ սպասում են նրա գալուստին, իսկ մանր մունր բաների, թիւ չկայ: Շատերին Բուլղարիայից ուղարկել է այստեղ, ասելով՝ ես կը գամ կը խօսեմ: Ոչ ինքը կայ, ոչ էլ գրել է թէ ինչ անենք:*

ՆՈՑՆ

Փաստ. 17-9

Բ 9.– ԱՐԵՒԵԼԵԱՆԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Սիրելիք

Անցեալ անգամ գրել էի Միջազգային սոցիալիստական համագումարի մասին անձնական կարծիքս: Հիմա կը գրեմ ընկերներինը նոյնպէս: Վճռողական ձայնը, որը մէկ պիտի լինի, ընկերները թողնում են ձեզ — ում տալ կը ցանկանաք ձեզնից մէկին — տուէք. բացի դրանից խորհրդակցական մենք մտադիր ենք ունենալ 3-4 ձայն, որոնցից մէկը կը լինի Խաչատուրը[13], երբ վճռողականը չդնէք նրան. մէկին կ'ընտրի Թիֆլիսի բանուորութիւնը — երեւի Լիպարիտին. մէկին՝ Բագուի բանուորութիւնը — երեւի Մարտ. Ցարութիւնեանին, որից եւ Պարսկաստանից կ'առաջարկենք ընտրել. մէկին էլ կարելի է ընտրել. մէկն էլ կարելի է մի ուրիշը լինէ: Մեզ հարկաւոր է շատ ուժեղ լինել այնտեղ, որովհետեւ անշուշտ ս[ոցիալ] դ[եմոկրատ]ները կը գործեն խոշոր յարձակումներ մեր դէմ. հարկաւոր է անպայման այս գրոհին դիմանալ եւ յաղթական դուրս գալ: Սա կ'ունենայ վճռողական նշանակութիւն մեզ համար ապագայում: Ընկերները կարծում են որ անհրաժեշտ է աշխատել որ մենք անպատճառ ներկայացուած լինենք անկախ Ս.Ռ.-ներից իբրեւ համայն հայ աշխատաւորութեան ներկայացուցիչ Ռուսաստանում, Տաճկաստանում, Պարսկաստանում (Բուլղարիայի եւ Ամերիկայի հարցը թողնել առ այժմ որ չընդհարուենք նրանց սոցիալիստների հետ եւս): Այստեղ Ռուսաստանում մենք կարող ենք ընդհարուել Ս.Ռ.-ների հետ չնորհիւ մեր անջատականների, որոնց նրանք ուզում են ընդունել իրանց մէջ իբրեւ աւտոնոմ հայկական կազմակերպութիւն: Դրանով նրանք կ'արտայայտեն նշանակում է այն, որ նրանք վստահ չեն որ մենք բաւարար կերպով կարող ենք անել Ս.Ռ.-ական գործ հայ աշխատաւորութեան մէջ: Այդ դէպքում մենք ստիպուած կը լինենք ընդհատել մեր բարեկամական յարաբերութիւնները: Այդ բոլորը աչքի առաջ ունենալով անպայման անհրաժեշտ ենք համարում որ ձեզանից մէկը չրջի նախօրօք եւ տեղ որ մենք անպատճառ ներկայացուած լինենք անկախ Ս.Ռ.-ներից իբրեւ համայն հայ աշխատաւորութեան ներկայացուցիչ Ռուսաստանում, Տաճկաստանում, Պարսկաստանում (Բուլղարիայի եւ Ամերիկայի հարցը թողնել առ այժմ որ չընդհարուենք նրանց սոցիալիստների հետ եւս): Այստեղ Ռուսաստանում մենք կարող ենք ընդհարուել Ս.Ռ.-ների հետ չնորհիւ մեր անջատականների, որոնց նրանք ուզում են ընդունել իրանց մէջ իբրեւ աւտոնոմ հայկական կազմակերպութիւն: Դրանով նրանք կ'արտայայտեն նշանակում է այն, որ նրանք վստահ չեն որ մենք բաւարար կերպով կարող ենք անել Ս.Ռ.-ական գործ հայ աշխատաւորութեան մէջ: Այդ դէպքում մենք ստիպուած կը լինենք ընդհատել մեր բարեկամական յարաբերութիւնները: Այդ բոլորը աչքի առաջ ունենալով անպայման անհրաժեշտ ենք համարում որ ձեզանից մէկը չրջի նախօրօք եւ

11.- Լիպարիտ Նազարեանց, ծանօթ Ռ. Լեռնեան ծածկանունով:

12.- Միք. Վարանդեանը:

13.- Խաչատուր Մալումեանը, այսինքն՝ է. Ակնունին:

նախապատրաստի բոլոր ազդեցիկ լիդերների կարծիքը ի նպաստ մեզ։ Խնդրում ենք անպատճառ դա անել եւ չյետաձգել դրան ժողովի ժամանակ անելուն։

Տեղեկագիրը դուք փորձեցէք պատրաստել այդտեղ եղած Ընդհ. Ժողովի նիւթերից, իսկ մենք էլ կը լրացնենք նոր թուերով։ Ընդհանուր մասը դուք գրեցէք եւ պատրաստեցէք, իսկ փաստացի մասը մենք կ'անենք այստեղից։ Մանդատները մենք կը պատրաստենք եւ կ'ուղարկենք ձեզ։ Ցանկալի է որ Տաճկաստանից էլ լինէին մանդատներ։ Կը գրենք Շամ, բայց չգիտենք կը հասնի թէ չէ։ Արդէն Ռեչ-ի[14] մէջ գրուած է որ ս[ոցիալ] դ[եմոկրատների] կենտրոնական կոմիտէն[14] որոշել է բողոքել որ Դ[աշնակցութիւնը] ընդունած են միջազգային Congrès*-ին։*

Մի նոր հարց եւս։ Երկար խօսելուց յետոյ — Տաճկաստանի արդի դրութեան մասին եւ մեր անելիքների — ի միջի այլոց [?] ընկերները եկան այն եզրակացութեան որ հարկաւոր է անհրաժեշտ միջոցներից մէկը համարել եւ Օրմանեան պատրիարքի պատճառաբանուած հրաժարականը։ Քանի դա ձեր շրջանումն է[15], խնդրում ենք միջոցներ ձեռք առնէք խնդիրը սեղանի վրայ դնելու, ձեր մէջ քննութեան առնելու եւ դրական դէպքում՝ գտնէք մի ընկեր որ կարողանայ ստանձնել այդ միսսիան։ Երկարօրէն չեմ ուզում գրել դրա մասին։

Ծրագրի մէջ շատ փոփոխութիւններ էք մտցրել, մանաւանդ հողային խնդրում, որ ընկերները շատ տարակուսանքի մէջ է դրել։ Օրինակ, հողը կենտրոնանում է, բայց նուազ չափերով, իսկ մենք բոլորովին հակառակն ենք կարծում. հողի էւոլիւցիան չի տանում բոլորովին դէպի կենտրոնացում։ Չգիտենք ինչպէս անենք. մինչ նամակս ստանալը, երեւի հեռագիր կը ստանաք։

Ձերմ բարեւներով՝
ՄՀԵՐԵԱՆ[16]

Փաստ. 50-75

Բ 10.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՐԵՒԵԼԵԱՆԻՆ

5 *Օգոստոս* 1907

Սիրելի Արտաւազդ[16]*,*

Ներփակ կը գտնէք Բրիւսէլի Բիւրոյի պատասխան-նամակի պատճէնը։ Մեր մասնակցութիւնը՝ Կովկասի կողմից, ապահոված պէտք է համարել. ինչ վերաբերում է Թուրքիային, այդ խնդիրը, ինչպէս էլի մի անգամ գրել եմ, պիտի քննուի Ստուտգարտ, 16-ին, եւ յոյս ունենք, որ նոյնպէս կ'աջողուի, նոյնիսկ այս կոնգրէին համար։

Երրորդ շաբաթն է, ինչ խոստացել ենք [Միջազգային ընկերվար] բիւրոյին՝ մեր ծրագիրը ուղարկել (ընդհանուր մասը)։ Եւ մինչեւ այսօր էլ մեր խոստումը չկատարեցինք։ Այսպէս վարուել թերեւս կարելի է Թիֆլիսից — Երեւան, բայց ոչ Ժընեւից— Բրիւսէլ։ Ձեր անհոգութիւնը — աւելին չեմ ասում — անբացատրելի է։ Նոյնիսկ հեռագրէք «envoyons»[17] *եւ այդ հեռագիրն անգամ մնում է առանց կատարման։ Մեր վերջին հեռագրից յետոյ, որ ուղարկեցինք երեք օր առաջ, այլեւս անկարելի է աւելին սպասել. եթէ մինչեւ երեկոյ ոչինչ չստացանք ձեզանից, ստիպուած պիտի լինենք տպագրել։ Անկարելի է գնալ կոնգրէի, առանց ծրագիր տուած լինելու։*

Վիճակը մի քիչ մեղմացնելու համար երկու օր առաջ ուղարկեցինք Բրիւսէլ մեր «Պահանջները» — նոյնը եւ ձեզ ուղարկուեց։

Այժմ պատրաստում ենք «rapport»*-ը։ Արդեօք ձեր խոստացած նիւթերը փոստին էք յանձնել, թէ դա էլ մնաց... Բոլոր ընկերները վշտացած են ձեր այսքա՜ն քիչ գրելուց։*

Բարեւներ՝
ՍՈՒՐԷՆ[18]

14.- Չեռագրին մէջ ռուսատառ։
15.- Այսինքն՝ քանի պատրիարքարանը եւ Պոլիսը կը գտնուին Արեւմտեան Բիւրոյի իրաւասութեան գօտիին մէջ։
16.- Միեր կամ Միերեան (ինչպէս նաեւ Արտաւազդ) Արեւելեան Բիւրոն է։
17.- Ֆրանսերէն՝ կը դրկենք։
18.- Արեւմտեան Բիւրոյի ծածկանունը։ Արտաւազդ եւ Սուրէն ծածկանունները գործածական էին երկու Բիւրոներու միջեւ փոխանակուած գրութիւններուն մէջ միայն։

Փաստ. 1375-58

Բ 11.– Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Շտուտգարտ, 16 *Օգոստ*. 1907

Սիրելիք,

Այսօր կայացաւ սոց[իալիստական] Bureau*-ի նիստը. Դաշնակցութիւնը, չնայած ռուս եւ հայ սոց. դեմոկրատների բողոքին, ընդունուեց վերջնականապէս համաշխարհային սոց. կուսակցութիւնների շարքը։*

Թուրքաց Հայաստանի առանձին ներկայացուցչութեան հարցը առ այժմ յետաձգուեց, որպէսզի ծանօթանան հարցի հետ։

Շատ խնդրում եմ անմիջապէս ղրկէք մի 2 օրինակ մեր ծրագրից — նոր կազմուած, ապա եւ իմ աշխատութիւնները՝ «Դաշնակցութիւնը եւ նրա հակառակորդները» եւ «Գորդեան հանգոյցը», որ կը գտնէք Մարիամի մօտ։

Այստեղ սոց. դեմ[ոկրատ]ները խնդրեցին մեզնից այդ հրատարակութիւն[ներ]ը։

Ռոստոմը գուցէ դեռ այդտեղ լինի, Ցոնանն էլ գուցէ եկած։ Իմ հարցի մասին կ'ուզէք խօսեցէք։

Ես Ռոստոմին հաղորդել եմ արդէն։ Ես անկարող եմ — առողջութեանս պատճառով — կապել ինձ Ժընեւի եւ Բիւրոյի հետ։ Եթէ ձմեռը մնամ, պիտի մնամ ոչ Ժընեւում, ուր կլիման ինձ քայքայում է։

Դրսից (*հաւանօրէն* Montreux*-ից*) *կ'աշխատակցիմ Դրօշակին։ Եւ կը մշակեմ ընդարձակօրէն մեր ծրագիրը։* 10 *օրը մի անգամ էլ ժողովի կը գամ։*

Այսպէս Ռոստոմի հետ համաձայնութեան եկանք. խօսեցէք բոլորդ միասին, որպէսզի յետոյ թիւրիմացութիւններ չծագին։

Ընկերական բարեւներով՝
ՄԻՔ[ԱՅԷԼ]

Հասցէս՝ M. Joannissian, Hotel Victoria

Հրատարակութիւնները չմոռանաք. Ռուբինա Ա[րէ]չեանը իսկոյն կը գտնէ բոլորը եւ կը կապէ ու կը ղրկէ։

Փաստ. 50-76

Բ 12.– ԱԿՆՈՒՆԻԷՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

1907, 22 *Օգոստոս, Ստուտգարտ*

Սիրելի Արտաւազդ,

Ներիր, որ մանրամասն չեմ գրել եւ չեմ գրում։ Տղերքը կը գան եւ կը հաղորդեն բոլորը։

Գլխաւորը՝ քեզ հեռագրեցինք։ Papa*-ն*[8] *ընդունուած է, ձայնով։ Հակառակ մեր սովորական թշնամիների փորձերին,* Bureau*-ն համարեա միաձայն՝ վճռուած է համարում* Papa*-ի մասնակցութիւնը։*

Մեր միւս խնդիրքը, որ Երկիրը ներկայանայ անկախ, իբրեւ յատուկ սեկսիոն, յետաձգուած է կարճ ժամանակով, առանց մերժելու։ Պայմանը հետեւեալն է.— վեց ամսից յետոյ պէտք է Bureau*-ին ներկայացնենք մանրամասն զեկուցումն Երկրի գործունէութեան, մեր ծրագրի, տակտիկի մասին, որը եւ հիմք պիտի ծառայի՝ վճռելու այդ խնդիրը եւ ընդունելու իբրեւ անկախ սեկսիոն։ Մեր բարեկամ Ժօրէս*[19] *պնդում է այն առաջարկի վրայ ասելով, որ ցանկալի է Թուրքիայի մտցնելը Միջ[ազգայնականի] Բիւրոյի մէջ, տալով այդ ներկայացուցչութիւնը հայերին։—*

Այս կէտի մանրամասները՝ բերանացի։

Տեսնուեցի մի քանի ազդեցիկների հետ, որոնցից մէկը՝ Վանդերվելդ[20]*՝ մեզ շատ համակրող, յայտնեց որ այդ խնդիրը կը վճռուի հէնց որ ժամանակին Բիւրոյին կը տրուի այդ առաջարկը եւ զեկուցումը։ Ուրեմն պիտի սպասել վեց ամիս, Բիւրոյի առաջիկայ գումարումին, այդ խնդիրը լուծելու համար։*

Մեր Rapport*-ը չմտաւ* Bureau*-ի ժողովածուին մէջ, ուշանալու պատճառով։ Նրա գիտութեամբ եւ համաձայնութեամբ՝ տպագրեցինք այստեղ։ Այսօր պիտի բաժանուի բոլորին։ Կարճ է. առաջիկան կը լինի մանրամասն եւ մշակուած։*

Մեր խնամիները[6] *այստեղ քիչ են եւ եկողներն էլ «մեծամեծներից» չեն, բացի* 3-4 *հոգուց, եւ այդ պատճառով նրանց հետ շատ բան խօսել չենք կարող։ Այսօր նրանց հետ մի փոքրիկ խորհրդակցութիւն պիտի ունենանք՝ մեր «բարեկամական» յարաբերութիւնների մասին։*

Փակումը տեղի կ'ունենայ երկու օրից։

Երէկ եկաւ Քոթոթը[21] *եւ այսօր գիշերը կը մեկնի դէպի ձեզ։*

Բացի մեր երեքից՝ այստեղ է եւ Արարատսկին[22]*։ Մեր խնամիները նրան ձայն տուեցին։ Երկու օր է որ այստեղ է եւ Նատիան։*

Ժընեւից գրում են, որ Ցոնանը[23] *եկաւ։ Ուրեմն այժմ, վերադառնալով այնտեղ, կարող կը լինենք հաւաքուել եւ գործերը բաժանել ու կարգադրել, որից յետոյ՝ ես կը մեկնիմ իմ գործով։*

Նամակ գրեցէք։

Ձեր՝ ԽԱՉԱՏՈՒՐ

19.- Ժան Ժորէս՝ ֆրանսացի ընկերվարական հանրածանօթ ղեկավար անձնաւորութիւն։
20.- Պելճիքացի ընկերվարական ղեկավար դէմքերէն։
21.- Քոթոթը՝ Ռոստոմի (Ստեփան Զօրեան) ծածկանուններէն մէկն էր։
22.- Սարգիս Արարատեան։
23.- Յոնան Դաւթեան, անդամ Արեւմտեան Բիւրոյի։

Փաստ. 50-83

Բ 13.– ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ՀԱՄՕ ՕՀԱՆՋԱՆԵԱՆԻՆ

Շտուտգարտ 29 Օգ. 1907

Սիրելի Համօ,

Աշխատանքները շուտով (մի 2 օրից) կը վերջանան եւ մենք կը վերադառնանք Ժընեւ։ Ուրախ եմ շատ, որ մեզ ընդունեցին, հակառակ դէպքում խիստ անախորժ հետեւանքների պիտի յանգէինք։ Ս[ոցիալ] Ռ[եւոլուցիոնէր]ները եւ մասնաւորապէս Ռուբանովիչը բաւական սիրալիր են. վերջինը տաք կերպով պաշտպանեց մեզ, երբ Ս[ոցիալ] Դ[եմոկրատ]ները հարց դրին մեզ արտաքսելու։ Կուրիոզի[24] *համար, յիշեմ, Ռ.Ս.ի ներկայացուցիչը պաշտպանում էր Ս.Դ.ների առաջարկը, մեր դէմ ուղղուած։*

Տաճկահայաստանի առանձին ներկայացուցչութեան խնդիրը յետաձգուեց. ամէն կողմից հաւատացրին, որ Bureau-*ն ուրիշ կերպ չէր կարող վարուել, որ նոր սեկցիա (հայկական) ստեղծելու համար պէտք է որ* Bureau*ն մանրամասն ծանօթանայ իրերի դրութեան հետ եւայլն։ Եթէ մի* 2-3 *ամիս առաջ դոկումենտներով,* rapport-*ով եւայլն գնայինք* Bruxelles, *հաւանական է, որ յաջողցնէինք։*

Ցամենայն դէպս, կասկած չկայ, որ առաջիկայ կոնգ[րէ]ին (3 *տարուց յետոյ*) *կ'ունենանք ջոկ հայկ. սեկցիա — թերեւս Անդրկովկաս եւ Թուրքահայաստան՝ միացած։*

Նամակդ չէքով (100) *ստացայ շնորհակալութեամբ։ Պատշաճից աւելի մի՛ ղրկիր ինձ, սիրելիս։ Եթէ յիշում ես, ես քեզ առաջարկել էի, որ գրքերիցս եկած զուտ արդիւնքի* ½*-ը եւս առնեմ (բացի առաջին գրքից) եւ դու կարծեմ համակերպուեցիր, ի նկատի ունենալով իմ փողի խիստ կարիքը։ Ես նոյնը կ'ուզէի կրկնել այժմ։ Թող հաշուեն, գուցէ աւելի եմ ստանում, գուցէ պակաս։ Եթէ հնար լինէր, ուրախութեամբ կը գոհանայի* 25 *ռուբլի միայն առնելով իւրաք[անչիւր] տպագ[րական] թերթի համար։*

2 *ամիս է, ինչ սկսել եմ* 150-*ական ֆր. ստանալ Ժընեւի խմբ[ագրութիւն]ից։ Եւ այստեղից էլ աշխատակցութեանս համար ստիպուած կը լինեմ վերցնել ամիսը մի* 30 *աւելի...*

Ջերմ բարեւներ բոլոր տղայոց
Ձեր ՄԻՔԱՅԷԼ

Ցակոբը դեռ 3 *ամիս սրանից առաջ գրել էր, թէ իմ միւս գրքոյկը եւս յանձնուած է արդէն մամուլին, բայց մինչեւ օրս չկայ։ Երրորդ ձեռագիրն էլ կայ։ Երրորդ ձեռագիրս էլ պինդ պահեցէք, խնդրում եմ. նրա վրայ ես բաւական տնքացել եմ (Կրօնի գաղափարը եւ նրա էւոլիւցիան)։ Թող նորակազմ մարմինը կարդայ, եւ չեմ կասկածում, որ արժանի կը գտնեն տպագրութեան։ Ուրիշ երկրներում սոց. կուս[ակցութիւն]ները այնքան բրոշիւրներ են տալիս այդ տեսակ հարցերի մասին։ Մենք միայն մէկը կը տանք եւ անպայման օգտակար կը լինի։*

Ի դէպ, ուզում եմ 20-30 *լաւ բրոշիւրներ ընտրել Պարիզ գերմ[անական] սոց[իալիստական] գրականութիւնից եւ յանձնել մեր մի* 2 *ձեռնհաս տղայոց որ թարգմանեն «Ցառաջի» համար. կարծեմ վատ չեմ մտածել։*

Այսօր լոյս ընծայեցինք այստեղ մեր մանրամասն Rapport-*ը ֆրանս. լեզուով։*

24.- Ծիծաղելի, զուարճալի բան։

Գ.– 1908 ԹՈՒԱԿԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ 1.– ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Փաստ. 1676-1

Bruxelles, le 24 mars 1908

A la Rédaction du "Droschak"
Genève

Chers citoyens,

Pendant les derniers mois de l'année 1907, nous avons été obligé de faire le compte-rendu du Congrès de Stuttgart, travail qui nous a absorbé complètement avec la besogne courante.

D'autre part, nous avons préparé un rapport sur notre correspondance depuis ce congrès jusque fin mars, document qui paraîtra en trois langues à bref délai.

Nous avons eu, en outre, à nous occuper de la publication du 3e volume des *Rapports Nationaux*.

C'est là la cause de notre silence prolongé. Lorsque tout ce travail sera achevé, nous rentrerons dans une période normale.

Bien à vous, fraternellement,
CAMILLE HUYSMANS

Պրիւսէլ, 24 Մարտ 1908

«Դրօշակի» խմբագրութեան,
Ժընեւ

Սիրելի քաղաքացիներ,

1907 տարուան վերջին ամիսներուն ստիպուեցանք Շտուտգարտի համագումարին համարատուութիւնը կատարելու, աշխատանք մը որ՝ ընթացիկ զբաղումներուն հետ՝ մեզ ամբողջովին կլանեց։

Միւս կողմէ, պատրաստեցինք՝ Համագումարէն մինչեւ Մարտ ամսուան մեր թղթակցութեանց մասին տեղեկագիր մը,— փաստաթուղթ՝ որ քիչ ատենէն լոյս պիտի տեսնէ երեք լեզուներով։

Բացի ատկէ, զբաղեցանք Ազգային Տեղեկագիրներու Երրորդ հատորի հրատարակութեամբ։

Ա՛յդ է պատճառը մեր երկարատեւ լռութեան։ Երբ այս ամբողջ աշխատանքը աւարտի, բնականոն ընթացքի մէջ պիտի մտնենք։

Ձերդ եղբայրաբար՝
ՔԱՄԻՑ ՀԻՒՍՄԱՆ

Մատեան թիւ 91, էջ 224-227

Գ 2.– «ԴՐՕՇԱԿ»ԷՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ԲԻՒՐՈՅԻՆ

1908, le 14 septembre

Au Bureau Socialiste International
Messieurs et chers citoyens,

Nous vous serions reconnaissant de nous informer
1) Quand se réunira le Bureau et quelles sont les questions à l'ordre du jour?
2) Est-il possible de proposer la révision de la résolution prise par le Bureau, dans sa séance du 16 Août 1907, à Stuttgart au sujet d'une représentation de l'Arménie turque?

Cette résolution dit:

"La demande tendante à créer une section Turco-Arménienne ne peut être prise en considération que si cette section englobe toutes les nationalités de Turquie".

Or, connaissant bien les relations entre les différentes nationalités de l'Empire Ottoman et de leur culture, nous estimons que pour créer une délégation mixte englobant toutes les nationalités, il faudra attendre bien des années. Nous comprenons naturellement votre propagande de solidarité parmi ces populations hétérogènes, mais nous n'entrevoyons pour le moment aucune possibilité d'englober dans une même section, turcs, arméniens, kurdes, arabes, et d'autres éléments qu'un antagonisme séculaire a divisé profondément. Le kurde ne sait même pas lire.

Il n'y a aujourd'hui malheureusement qu'un seul élément dans l'Anatolie et dans presque tout l'empire ottoman qui entretient une organisation socialiste. C'est la population arménienne; cette organisation c'est le même parti "Daschnakzoutioun" ou la Fédération Révol[utionnaire] Arménienne dont la section de l'Arménie russe est représentée dans l'International, dans la sous-section russe des socialistes révolutionnaires.

La dite résolution a été prise, comme vous vous rappelez, sans prendre connaissance des faits, sans entendre les raisons de nos délégués à Stuttgart.

Nous posons donc la question de révision et nous vous prions respectueusement de nous répondre au plus tôt. Nous désirerions que le Bureau acceptât une représentation de l'Arménie turque composée d'arméniens, étant donné que comme nous l'avons dit, une représentation collective est et sera pendant longtemps chose impossible.

Si le Bureau voulait bien agréer notre demande et acceptait le principe d'une section arménienne, ce serait une précieuse encouragement pour notre peuple de l'Arménie turque en voie maintenant de la régénération.

Recevez chers citoyens nos fraternelles salutations.

LA RÉDACTION DU "DROSCHAK"
Organe de "Daschnakzoutioun"

Ընկերվար Միջազգայինի Բիւրոյին
Պարոններ եւ սիրելի քաղաքացիներ,

Շատ շնորհապարտ պիտի ըլլայինք եթէ տեղեկացնէիք մեզի՝
1- Ե՞րբ տեղի պիտի ունենայ Բիւրոյին ժողովը եւ ի՞նչ է օրակարգը:
2- Կարելի՞ է առաջարկել որ վերատեսութեան ենթարկուի Օգոստոս 17-ին Շտուտգարտի մէջ Բիւրոյին կողմէ տրուած որոշումը Թրքահայաստանի ներկայացուցչութեան մասին:

Այդ որոշումը կ'ըսէ.

«Կարելի չէ նկատի առնել Թրքահայաստանի բաժանմունք մը ստեղծելու ուղղութեամբ եղած պահանջը, բացի այն պարագայէն երբ այդ բաժանմունքը ընդգրկէ Թուրքիոյ բոլոր ազգութիւնները»:

Արդ, լաւապէս ծանօթ ըլլալով Օսմանեան կայսրութեան ազգութիւններուն եւ անոնց մշակոյթներուն միջեւ եղած տարբերութեանց, կը գտնենք որ դեռ տարիներ պէտք է սպասել կազմելու համար բոլոր ազգութիւնները ընդգրկող պատուիրակութիւն մը: Բնականաբար մենք կ'ընդունենք ձեր [միտքը] այս այլատարր բնակչութեանց մէջ համերաշխութիւն առաջացնելու ուղղութեամբ, բայց ներկայիս ո՛չ մէկ կարելիութիւն կը նշմարենք միեւնոյն բաժանմունքին մէջ ընդգրկելու թուրք, հայ, արաբ եւ ուրիշ տարրեր, զորս դարաւոր հակամարտութիւն մը բաժնած է խորապէս: Քիւրտը մինչեւ իսկ կարդալ չի գիտեր:

Այսօր, Անատոլիոյ եւ գրեթէ օսմանեան կայսրութեան ամբողջ տարածքին միայն մէկ տարր կայ, որ ընկերվար կազմակերպութիւն կը պահէ. այդ կազմակերպութիւնը «Դաշնակցութիւն» կուսակցութիւնն է, կամ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որուն Ռուսահայաստանի հատուածը ներկայացուած է [Ընկերվար] Միջազգայինի մէջ, իբրեւ ենթաբաժանմունք ռուս սոցիալ յեղափոխականներու:

Ինչպէս կը յիշէք, վերոյիշեալ որոշումը տրուած է առանց իրազեկ ըլլալու իրողութեանց, առանց լսելու Շտուտկարտի մեր պատուիրակներուն պատճառաբանութիւնները:

Հետեւաբար, վերատեսութեան առաջարկ կը դնենք, եւ յարգանօք կը խնդրենք որ շուտով պատասխանէք մեզի: Պիտի փափաքէինք, որ Բիւրոն ընդունէր Թրքահայաստանի [առանձին] ներկայացուցչութիւնը, տրուած ըլլալով որ, ինչպէս ըսինք, հաւաքական ներկայացուցչութիւն մը է եւ երկար ժամանակի համար պիտի մնայ անկարելի բան մը:

Եթէ Բիւրոն ուզէր ընդունիլ մեր պահանջը եւ հաւանէր հայկական բաժանմունքի մը սկզբունքին, ատիկա անգնահատելի քաջալերանք մը պիտի ըլլար ներկայիս վերածննդեան ճամբան բռնած Թրքահայաստանի մեր ժողովուրդին համար:

Ընդունեցէք, սիրելի քաղաքացիներ, մեր եղբայրական ողջոյնները:

Դաշնակցութեան պաշտօնաթերթ
«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Փաստ. 1676-5

Գ 3.– ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Bruxelles, 1-10-1908

Bureau Socialiste International

Aux citoyens rédacteurs de Droschak à Genève
Chers citoyens,

Ci-joint le programme détaillé des réunions internationales des 10, 11 et 12 octobre. Vous avez sans doute la circulaire du 7 septembre. Vous remarquerez que l'ordre du jour de la Commission Interparlementaire a été quelque peu renforcé.

En réponse à votre lettre du 14 septembre, je me permets de dire que le Bureau ne modifiera pas la résolution de Stuttgart. En effet, l'objection que vous faites – la composition très bigarrée de l'état de Turquie– pourrait être soulevée également par nos camarades de Russie. Mais je me hâte d'ajouter que rien ne nous empêcherait de demander la création d'une sous-section arménienne à l'exemple de ce qui a été fait pour la Russie. Sans me porter garant de la décision éventuelle que prendra le Bureau, je vous conseille de négocier en ce sujet [?]. Si vous venez à Bruxelles, vous pourriez soulever la question à la fin de la séance et m'envoyer une lettre à lire ou à résumer au commencement de la séance.

Je me permets également de vous rappeler – comme je l'ai fait à un de vos amis à Nüremberg – lors du congrès social-démocrate allemand – que la documentation promise sur la conjoncture turco-arménienne ne m'a pas encore été transmise. Nous ne pouvons aller sur place pour faire une enquête. Il importe donc que les interessés veuillent bien documenter le Bureau.

Fraternellement vôtre
CAMILLE HUYSMANS

Պրիւսէլ, 1-10-1908

Ընկերվար Միջազգային Բիւրո

«Դրօշակ»ի քաղաքացի խմբագիրներուն, Ժընեւ
Սիրելի քաղաքացիներ:

Ներփակ [կը գտնէք] 10, 11 եւ 12 Հոկտեմբերի Միջազգայինի նիստերուն մանրամասն յայտագիրը: Անկասկած ունիք [արդէն] Սեպտեմբեր 7-ի շրջաբերականը: Պիտի նշմարէք որ Միջ-խորհրդարանական Յանձնախումբին օրակարգը ծանրաբեռնուած է քիչ մը:

14 Սեպտեմբերի ձեր նամակին ի պատասխան, կը համարձակիմ ըսելու, որ Բիւրոն փոփոխութեան պիտի չենթարկէ Շտուտկարտի որոշումը: Արդարեւ, ձեր առարկութիւնը Թուրքիոյ շատ խայտաբղէտ վիճակին մասին, կրնայ յարուցուիլ Ռուսիոյ մեր ընկերներուն կողմէ եւս: Բայց կը փութամ աւելցնելու, որ ո՛չ մէկ բան արգելք պիտի ըլլար մեզի՝ Ռուսիոյ համար եղածին օրինակով՝ հայկական ենթաբաժանմունք մը ստեղծելու: Առանց անձնապէս երաշխաւորելու Բիւրոյին առնելիք հաւանական որոշումը, խորհուրդ կու տամ որ մտածէք այդ մասին:

Եթէ Պրիւսէլ ժամանէք, նիստի վերջերուն կրնաք արծարծել հարցը եւ նամակ մը ուղարկել ինծի նիստի սկզբնաւորութեան կարդալու կամ ամփոփ կերպով զեկուցելու համար:

Կը յիշեցնեմ նոյնպէս,– ինչպէս գերմանական սոցիալ-դեմոկրատներու կոնգրէի ընթացքին յիշեցուցի Նիւրեմբերգի մէջ ձեր բարեկամներէն մէկուն–, որ հայ-թրքական յարաբերութիւններու մասին խոստացուած թղթածրարը տակաւին ինծի չէ փոխանցուած: Մենք չենք կրնար երթալ տեղւոյն վրայ քննութիւն կատարելու: Կարեւոր է որ շահագրգռուողները իրե՛նք հաճին Բիւրոյին հայթայթել [պէտք եղած] վաւերագրերը:

Եղբայրաբար Ձեր
ՔԱՄԻՅ ՀԻՒՍՄԱՆ

Փաստ. 1676-9

Գ 4.– ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԷՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Ընկերվար Միջազգայինի Գործադիր մարմնի նամակը, որմով Հ. Յ. Դաշնակցութիւնը կը ճանչցուի իբրեւ ներկայացուցիչ Թրքահայաստանի ենթաբաժանմունքին:

SECRÉTARIAT
À LA MAISON DU PEUPLE
RUE JOSEPH STEVENS, 17
BRUXELLES

BUREAU SOCIALISTE INTERNATIONAL

Bruxelles, le 22. 12. 1908.

1676-9

ADRESSER LES ENVOIS RECOMMANDÉS AU NOM DU SECRÉTAIRE
CAMILLE HUYSMANS

Chers citoyens,

J'ai bien reçu votre mandat de deux cents francs, cotisation pour 1909. Régulièrement, cette cotisation aurait dû servir pour l'année 1908, mais nous comprenons fort bien les difficultés de votre situation. Le protocole paraîtra ainsi que vous l'avez demandé et comme il a été décidé, que votre parti (Fédération) représente la sous section de l'Arménie turque.

Salutations fraternelles

Pour le Comité exécutif
Camille Huysmans
Secrétaire

Au Comité central de la Fédération révolutionnaire arménienne
Même

Bruxelles,
le 22 -12- 1908

Chers citoyens,

J'ai bien reçu votre mandat de deux cents francs, cotisation pour 1909. Régulièrement, cette cotisation aurait dû servir pour l'année 1908, mais nous comprenons fort bien les difficultés de votre situation. Le protocole paraîtra ainsi que vous l'avez demandé et comme il a été décidé, que votre parti (Fédération) représente la sous-section de l'Arménie turque.

Salutations fraternelles

Pour le comité exécutif
CAMILLE HUYSMANS,
Secrétaire

Au comité central de la Fédération révolutionnaire arménienne.

Même

Պրիւսէլ, 22 Դեկտ. 1908

Սիրելի քաղաքացիներ,

Ստացանք 200 ֆրանքի ձեր հրամանագիրը, 1909 թ. ցենզի բաժինը: Առ հասարակ այս ցենզը պէտք է ծառայէր 1908 տարուան համար, բայց շատ լաւ կ'ըմբռնենք ձեր կացութեան դժուարութիւնները: Ատենագրութիւնը լոյս պիտի տեսնէ այնպէս որ դուք պահանջեցիք եւ ինչպէս որ որոշուեցաւ [թէ] ձեր կուսակցութիւնը (Դաշնակցութիւն) կը ներկայացնէ Թրքահայաստանի ենթաբաժանմունքը:

Եղբայրական ողջոյններ
Գործադիր կոմիտէի կողմէ
ՔԱՄԻՅ ՀԻՒՍՄԱՆ, քարտուղար

Հ. Յ. Դաշնակցութեան Կեդրոնական մարմնին:
ՆՈՅՆ

Դ.– 1909 ԹՈՒԱԿԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դ. 1

Փաստ. 1677-7

Bruxelles, le 2 mai 1909

Citoyen Varantian, Genève

Cher Citoyen,

Je vous prie de vouloir bien me faire parvenir la liste des députés socialistes de Turquie.

Merci d'avance et bien à vous

CAMIILE HUYSMANS

Պրիւսէլ, 2 Մայիս 1909

Քաղաքացի Վարանդեան, Ժընեւ

Սիրելի քաղաքացի,

Կը խնդրեմ որ հաճիք հասցնել ինծի Թուրքիոյ ընկերվարական երեսփոխաններու ցանկը:

Կանխայայտ շնորհակալութեամբ,
Ձերդ
ՔԱՄԻՑ ՀԻՒՍՄԱՆ

Դ. 2

Փաստ. 1677-8

Bruxelles, le 3 mai 1909

M. Varandian
Droschak, Genève

Cher Citoyen,

Le citoyen J. Karski, du parti social démocrate de Pologne et Lithuanie, qui a l'intention d'entreprendre un voyage en Asie Mineure demande une lettre de recommandation pour les Jeunes Turcs et pour vos organisations en Arménie.

Je vous serais très obligé de lui envoyer ce document, sous enveloppe sans firme à l'adresse suivante:

Dr. J. Marchlewski, Steglik b/Berlin, Forst str. 11

Salutations fraternelles
CAMILLE HUYSMANS

Պրիւսէլ, 3 Մայիս 1909

Մ. Վարանդեան
Դրօշակ, Ժընեւ

Սիրելի քաղաքացի,

Լեհաստանի եւ Լիթուանիոյ սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան [անդամ] Ժ. Կարսկի, որ նպատակ ունի դէպի Փոքր Ասիա ճամբորդութեան մը ձեռնարկել, յանձնարարագիր մը կը խնդրէ Երիտասարդ Թուրքերու եւ Հայաստանի ձեր կազմակերպութիւններուն համար:

Շատ շնորհակալ պիտի ըլլայի եթէ այդ վաւերաթուղթը ղրկէիք հետեւեալ հացէին՝ առանց [տպուած] դրոշմի պահարանով մը.—

Dr. J. Marchlewski, Steglik b/Berlin, Forst str. 11

Եղբայրական ողջոյններով՝
ՔԱՄԻՑ ՀԻՒՍՄԱՆ

Դ. 3

Փաստ. 1676-4

Rapport du secrétariat
(juillet, août et septembre 1909, page 5)

La Fédération Révolutionnaire Arménienne nous informe qu'elle désire voir revenir le Bureau sur la décision qu'il a prise à Stuttgart. Il avait été résolu de constituer, après enquête, une section turco-arménienne comprenant toutes les nationalités de Turquie. La Fédération nous prie d'accepter au sein du Bureau une section purement arménienne.

Le secrétaire a répondu qu'il ne croit pas que le Bureau soit disposé à modifier son attitude, mais pour éviter toute difficulté, l'on accepterait peut-être une proposition tendante à constituer deux sous-sections, don't l'une comprendrait les organisations arméniennes. Il a enfin émis le regret que le Bureau n'ait pas été documenté comme il avait été convenu.

Ընկերվար Միջազգայնականի Տեղեկագրէն
(Ցուլիս, Օգոստոս եւ Սեպտեմբեր 1909 *էջ* 5)

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կը տեղեկացնէ մեզ իր փափաքը, որ [Միջազգային] Բիւրոն փոփոխութեան ենթարկէ Շտուտգարտի մէջ առած իր որոշումը։ Յետ քննութեան վճռուած էր ստեղծել թուրք-հայկական մասնաճիւղ մը, որ պիտի պարփակէր Թուրքիոյ բոլոր ազգութիւնները։ Դաշնակցութիւնը մեզմէ կը խնդրէ, որ Բիւրոյէն ներս ընդունինք զուտ հայկական մասնաճիւղ մը։

Քարտուղարը պատասխանեց, որ չի կարծեր թէ Բիւրոն տրամադիր ըլլայ իր կեցուածքը փոփոխութեան ենթարկել, սակայն, խուսափելու համար որեւէ դժուարութենէ, կարելի ըլլար թերեւս ընդունիլ երկու ենթամասնաճիւղեր կազմուելու առաջարկութիւն մը, որոնցմէ մէկը պարփակէր հայկական կազմակերպութիւնները։ Վերջապէս յայտնուեցաւ որ խոստացուած փաստաթուղթերը չէին հասցուած Բիւրոյին։

Դ. 4

Մատեան թիւ 91, էջ 149ա

1909, le 27 juillet, Genève

Chers Camarades,

Nous avons bien reçu votre lettre du 24 courant, dont les derniers passages nous a causés un peu de surprise, qui nous reste inexplicable. Nous serions bien contents d'avoir une explication à ce sujet de votre part.

Nos camarades vous verront prochainement pour vous entretenir en même temps à ce sujet.

Salutations cordiales
RÉDACTION DU DROSCHAK

Ժընեւ, 27 *Ցուլիս* 1909

Սիրելի ընկերներ,

Ստացանք ամսոյս 24-ի ձեր նամակը, որուն վերջին բաժինները քիչ մը անակնկալ էին մեզի համար, բան մը որ կը մնայ անբացատրելի։ Գոհ պիտի ըլլայինք այդ մասին ձեր կողմէ տրուելիք բացատրութենէն։

Մեր ընկերները ձեզ պիտի տեսնեն մօտերս, նաեւ այդ հարցով զբաղելու համար ձեզի հետ։

Եղբայրական ողջոյններով՝
«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե.– ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ներկայացուած

ԿՈՊԵՆՀԱԿՆԻ ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆԻ ԿՈՆԳՐԷՍԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ «ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

ԹՈՒՐՔԻԱ – ԿՈՎԿԱՍ – ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(ԺԸՆԵՒ 1910)

RAPPORT

présenté au

CONGRÈS SOCIALISTE INTERNATIONAL

DE COPENHAGUE

par le Parti Arménien

"DASCHNAKTZOUTIOUN"

TURQUIE — CAUCASE — PERSE

GENÈVE 1910

RAPPORT DU "DASCHNAKZOUTIOUN"

APERÇU GÉNÉRAL

Une section de l'*Internationale* s'est créée dans la Turquie d'Asie, en *Arménie*.

Elle est représentée par le même parti arménien qui est connu sous le nom « Daschnaktzoutioun»* (Fédération) et dont la portion transcaucasienne était déjà représentée au Congrès de Stuttgart, dans la sous-section S[ocialiste] R[évolutionnaire] Russe.

Un rapport sommaire, présenté au Congrès de Stuttgart, indiquait les principes de cette organisation qui date de 20 ans et dont les comités couvrent actuellement d'un vaste réseau toutes les trois parties notre

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

[Ընկերվար] Միջազգայինի *բաժանմունք մը ստեղծուեցաւ ասիական Թուրքիա՝ Հայաստանի մէջ։*

Ան ներկայացուած է հայկական նոյն կուսակցութեան կողմէ, որ ծանօթ է «Դաշնակցութիւն» անունով եւ որուն անդրկովկասեան հատուածը ներկայացուած էր արդէն Շտուտկարտի Կոնգրէսին, ռուսական Ս[ոցիալ]-Ց[եղափոխական] [կուսակցութեան] ենթաբաժանմունքին մէջ։

Շտուտկարտի կոնգրէսին ներկայացուած ամփոփ տեղեկագիր մը կը նշէր սկզբունքները այս կազմակերպութեան, որ 20 տարուան անցեալ ունի եւ որուն կոմի-

* *On l'appelle aussi parti «droschakiste», du nom de son organe central, le* Droschak, *publié depuis dix-huit ans à Genève.*

* *Ժընեւի մէջ* 18 *տարիէ ի վեր հրատարակուող կեդրոնական պաշտօնաթերթ* Դրօշակի *անունով՝ անոր կը տրուի նաեւ «Դրօշակեան» կոչումը։*

pays: l'Arménie turque, l'Arménie russe et l'Arménie persane.

Nous avons à retracer maintenant l'activité du parti depuis 1907, en nous arrêtant particulièrement sur la situation et sur notre œuvre en Turquie.

EN PERSE ET AU CAUCASE

Durant les trois dernières années, le parti a vécu et grandi dans l'atmosphère orageuse des combats révolutionnaires.

En Turquie, il a soutenu les efforts du parti Jeune Turc, contre l'absolutisme *hamidien* qu'il avait combattu depuis 20 ans, seul, avec les révolutionnaires macédoniens.

En Perse, il a été à l'avant-garde du mouvement constitutionnel; dans la province d'Aderbeidjan (Tebriz), pendant longtemps seul centre et foyer des luttes révolutionnaires, notre parti a même eu, dans une large mesure, la direction du mouvement; il a combattu avec le fameux chef Sattarkhan qu'il a assisté dès le début par ses conseils, par son aide matériel et par ses dévoués militants.

En ce moment même, et depuis plusieurs mois, c'est notre camarade Efrem qui, à la tête de l'armée révolutionnaire, parcourt les provinces lointaines et réprime avec un courage qui fait l'admiration du pays, *la Vendée persane*: les tribus réactionnaires, en révolte contre le nouveau régime.

Un grand nombre de nos camarades «fidaïs» sont restés sur les champs de bataille, en Perse; et ce fut la consécration de la solidarité des deux peuples, de l'entente révolutionnaire de deux éléments, jusque là isolés, même antagonistes: des Persans musulmans et des Arméniens chrétiens.

Un succès éclatant couronna cette entente des deux principaux éléments de la Perse contemporaine; le sinistre despote à poigne, le Shah Mehmed Ali, vaincu, détrôné, abandonna ses pouvoirs et se réfugia en Russie. La révolution triompha après de longues et tragiques péripéties, en dépit des intrigues et de la résistance acharnée du gouvernement du tsar qui, foulant au pied son pacte avec l'Angleterre, cherchait, par tous les moyens, à étrangler le jeune mouvement constitutionnel. Ces intrigues continuent encore aujourd'hui.

Notre parti fut visé tout particulièrement par le gouvernement cosaque: toute la bande réactionnaire de Téhéran à Tiflis et à Pétersbourg, depuis le fameux Lia-

տէները այժմ ընդարձակ ցանցով մը տարածուած են մեր երկրի երեք մասերուն վրայ.— Թրքա-Հայաստան, Ռուսա-Հայաստան եւ Պարսկա-Հայաստան։

Պիտի տանք հիմա կուսակցութեան գործունէութիւնը, 1907 թուականէն այս կողմ, ծանրանալով յատկապէս Թուրքիոյ մէջ [տիրող] կացութեան եւ մեր գործունէութեան վրայ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Վերջին երեք տարիներու ընթացքին, կուսակցութիւնը ապրեցաւ եւ ուռճացաւ յեղափոխական կռիւներու փոթորկոտ մթնոլորտին մէջ։

Թուրքիոյ մէջ ան թիկունք կանգնեցաւ Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան ջանքերուն ընդդէմ համիտեան բացարձակատիրութեան, որուն դէմ, մակեդոնացի յեղափոխականներուն հետ, առանձինն կը պայքարէր 20 տարիներու ընթացքին։

Պարսկաստանի մէջ ան յառաջապահ հանդիսացաւ սահմանադրական շարժումին. Ատրպատական նահանգին մէջ (Թաւրիզ),— երկար ատեն միակ հնոցը յեղափոխական շարժումներուն, մեր կուսակցութիւնը լայն չափով մը ղեկավար հանդիսացաւ շարժումին. պայքարեցաւ հռչակաւոր պետին՝ Սատտար խանի կողքին առաջին օրէն սատար կանգնելով անոր՝ խորհուրդներով, նիւթական օգնութեամբ եւ անձնազոհ մարտիկներով։

Այժմ իսկ, եւ շատ մը ամիսներէ ի վեր, մեր ընկերը՝ Եփրեմն է որ, յեղափոխական բանակին գլուխն անցած, կը սուրայ հեռաւոր նահանգներ եւ, ամբողջ երկրին հիացում պատճառող քաջութեամբ մը, կը սանձէ պարսկական այս Վանդէան[1],— յետադիմական ցեղախումբեր՝ ըմբոստացած նոր վարչակարգին դէմ։

Պարսկաստանի մէջ մեծ թիւ մը «Ֆեստայի» մեր ընկերներէն մնացին ռազմի դաշտին վրայ. ասիկա եղաւ նուիրագործումը երկու ժողովուրդներու զօրակցութեան, յեղափոխական համերաշխութիւնը՝ մինչ այդ մեկուսի ապրող, մինչեւ իսկ հակամարտ երկու տարրերու,— մահմետական պարսիկներու եւ քրիստոնեայ հայերու։

Ժամանակակից Պարսկաստանի գլխաւոր այս երկու տարրերուն համերաշխութիւնը պսակուեցաւ շռնդալից յաջողութեամբ մը. չարաշուք բռնակալը, Մեհմէտ Ալի Շահը՝ պարտուած եւ գահընկէց, լքեց իր իշխանութիւնը եւ Ռուսիա ապաստանեցաւ։ Երկարատեւ եւ ողբերգական իրադարձութիւններէ ետք, յեղափոխութիւնը յաղթանակեց, հակառակ մեքենայութիւններուն

1.- Վանդէա – Ֆրանսայի մէջ նահանգ, ուր 1793-96 թուականներուն կեդրոնացած էին հակայեղափոխական տարրերը։ Տարիներ շարունակ յամառ պայքար մղող յետադիմական ուժերը ի վերջոյ սակայն պարտութիւն պիտի կրէին Ֆրանսայի յեղափոխական իշխանութիւններէն (Խմբ.)։

khoff jusqu'à la camarilla de Péterhof, dénonçait le «Daschnaktzoutioun» comme le *spiritus rectorum* de toutes les luttes constitutionnelles, engagées en Orient, en Perse, en Turquie, au Caucase même... et lors de l'historique interpellation à la *Douma de l'Empire*, sur les affaires du Caucase, où notre parti était au centre de l'attention, le porte-parole du gouvernement caucasien, baron Nolde, déclara ouvertement, aux frénétiques applaudissements de la droite réactionnaire, qu'il faut de toute nécessité anéantir «la redoutable association internationale, Daschnaktzoutioun»....

Il est curieux de constater que peu avant la révolution persane, où musulmans et Arméniens, unis dans une touchante solidarité autour de l'évangile de la liberté, faisaient cause commune contre l'absolutisme, de l'autre côté de la frontière, dans l'empire du tsar, les mêmes éléments ethniques s'entredéchiraient dans une lutte effroyable et fratricide, des centaines de cadavres jonchaient les rues de Bakou, de Schouscha, de Nakhidjevan, d'Erivan et des provinces, et les lueurs de grandioses incendies de villes entières faisaient frémir d'horreur toute la Russie pensante.

Si les deux adversaires – Arméniens et Musulmans (Tartares) – s'étaient solidarisés, comme en Perse, les événements de la période révolutionnaire auraient pris sans aucun doute, une gravité exceptionnelle dans un pays (Caucase) qui est déjà considéré, non sans raison, dans les milieux gouvernementaux, comme le plus dangereux foyer de la révolution russe.

Malheureusement pour nous et pour toutes les populations du Caucase, les masses tartares, guidées par des «idéologues» imprudents et égarés, furent vite acquises à la cause de la contre-révolution*, en dépit de tous nos efforts et grâce aux machinations d'un despotisme sans scrupule qui sut, avec un rare et néfaste génie, créer cette sorte de «diversion», organiser ces monstrueuses boucheries, contemplant lui-même l'horrible spectacle en *tertium gaudens*.

Après 18 mois de luttes sanglantes, la Vendée tartare fut repoussée par les efforts surhumains du «Daschnaktzoutioun» qui dut combattre en même temps deux puissants adversaires: la population tartare et le gouvernement contre-révolutionnaire.

Aujourd'hui, ce sinistre cauchemar est en train de disparaître; les passions se calment et les deux peuples reprennent leurs anciennes relations de bon voisinage.

* *Il s'agit des célèbres « pogroms » tartares, savamment organisés par la bureaucratie russe contre les populations arméniennes, taxées de «dangereuses», et qui durèrent, avec de courtes intervalles, dix-huit mois (1905-1906), laissant des milliers de victimes et une immense ruine.*

եւ կատաղի ընդդիմութեանը ցարական կառավարութեան որ, Անգլիոյ հետ կնքած ուխտը ոտնահարելով, բոլոր միջոցներով կը ջանար խեղդել սահմանադրական նոր շարժումը։ Այդ մեքենայութիւնները այսօր ալ կը շարունակուին։

Կոզակներու կառավարութեան թիրախը մասնաւոր կերպով մե՛ր կուսակցութիւնն էր. Փեթերսպուրկի, Թիֆլիսի եւ Թեհրանի ամբողջ յետադիմական վոհմակը Լիախովէն[2] սկսեալ մինչեւ Փեթերհոֆ իբր յանցաւոր կը մատնանշէր «Դաշնակցութիւնը» որպէս մղիչ շունչը[3] Արեւելքի մէջ մղուած սահմանադրական բոլոր պայքարներուն՝ Պարսկաստանի, Թուրքիոյ եւ Կովկասի մէջ... Եւ կայսրութեան Դումային մէջ տեղի ունեցած պատմական հարցապնդումներուն ընթացքին ի մասին կովկասեան խնդիրներուն, ուր մեր կուսակցութիւնն էր ուշադրութեան կեդրոն, կովկասեան կառավարութեան բանբերը, պարոն Նոլդէ, յետադիմական աջակողմեաններու մոլեգին ծափերուն տակ, յայտարարեց որ պէտք է անպայմանօրէն ոչնչացնել «միջազգային ահաւոր ընկերակցութիւնը՝ Դաշնակցութիւնը»...

Հետաքրքրական է հաստատել, որ պարսկական յեղափոխութենէն քիչ առաջ, երբ մահմետականներ եւ հայեր, յուզիչ զօրակցութեամբ մի միացած ազատութեան աւետարանին շուրջ, բացարձակապետութեան դէմ կը միաբանէին, սահմանին միւս կողմը, ցարի կայսրութեան մէջ ցեղային միւնոյն տարրերը եղբայրասպան ահռելի պայքարով մը զիրար կը յօշոտէին. հարիւրաւոր դիակներ կը կուտակուէին Պաքուի, Շուշիի, Նախիջեւանի, Երեւանի եւ գաւառներուն մէջ եւ հսկայական հրդեհներու բոցերը, լման քաղաքներու տարածքին՝ ահ ու սարսափով կը համակէին ազատախոհ Ռուսիան։

Եթէ երկու հակառակորդները — հայեր եւ մահմետականներ (թաթարներ) — իրարու զօրակից ըլլային՝ ինչպէս [եղած էին]Պարսկաստանի մէջ, յեղափոխական շրջանի դէպքերը անկասկած բացառիկ լրջութիւն պիտի ստանային Երկրի մը մէջ (Կովկաս), որ արդէն կառավարական շրջանակներու մէջ իրաւամբ նկատուած է ռուսական յեղափոխութեան ամէնէն վտանգաւոր օճախը։

Դժբախտաբար, մեզի եւ Կովկասի բոլոր ազգաբնակչութեանց համար, անխոհեմ եւ մոլորած «գաղափարախօսներու» կողմէ ղեկավարուած թաթար զանգուածները, հակառակ մեր ջանքերուն, կողմորոշուեցան ի նպաստ հակայեղափոխութեան, շնորհիւ անխղճամիտ բռնակալութեան մը, որ հագուագիւտ եւ չարաղէտ հնարամտութեամբ մը՝ գիտցաւ ստեղծել այսպիսի ապակողմնորոշում, կազմակերպել այս հրէշային սպանդները, զմայլած դիտելով, ինք, ահռելի տեսարա-

2.- Թեհրան տեղակայուած ռուսական զօրքի հրամանատար (Խմբ.)։

3.- Բնագրին մէջ լատիներէն (Խմբ.)։

Mais la *réaction* est déjà là, victorieuse et insolente! Elle prend sa revanche au Caucase comme en Finlande, en Pologne comme partout. Les Forces de la Révolution sont décimées, la littérature socialiste et révolutionnaire totalement supprimée; tout est rentré à nouveau dans les sphères clandestines.

La réaction caucasienne sévit avec une violence particulière «contre la redoutable Association internationale», «Daschnaktzoutioun». On a jeté dans les prisons des centaines d'intellectuels-écrivains, instituteurs, médecins, toute la fleur de notre société soupçonnés d'appartenir à notre organisation. Depuis bientôt deux ans, ils sont torturés par le fameux *Lyjine*, créature d'ancien régime, décidé à les perdre coûte que coûte.

Un grand procès se prépare à Novotcherkassk.

Les partis socialistes et toute la démocratie caucasienne traversent actuellement une grande et douloureuse crise. Il appartient aux socialistes – russes, arméniens, géorgiens – de combattre par les forces solidaires, non seulement la réaction gouvernementale, mais encore une autre plus périlleuse – La réaction qui s'est emparée de larges couches de la société même.

L'action coordonnée des partis socialistes est aujourd'hui de la plus haute nécessité. Le manque de cohésion et les luttes intestines, déterminées bien souvent par les déplorables discussions sur les articles de dogme, ont fait un tort immense à la cause de la Révolution en Russie.

Aussi, le parti «Daschnaktzoutioun» a-t-il pris dans son dernier congrès à Varna*, en 1909, une résolution invitant les organisations socialistes et révolutionnaires à une entente. Des appels dans ce sens sont heureusement lancés en même temps par nos camarades socialistes de l'Europe, et il faut espérer que les partis en question, après s'être combattus pendant longtemps, finiront par combiner leurs forces contre le redoutable ennemi commun: *le tsarisme*.

Qu'il nous soit permis de mentionner ici les quelques idées émises par notre dernière assemblée générale à propos de la tactique à suivre en Russie. Dans de longs débats, nos camarades ont relevé quelques faits qui, entre beaucoup d'autres, ont pu influencer défavorablement la marche des événements.

C'est d'abord le profond antagonisme des partis socialistes militants.

** Au Congrès de Varna assistaient les délégués du Caucase, de la Turquie, de la Perse et de nos colonies d'Amérique et d'Europe.*

նը իբրեւ զուարճացող երրորդ* *կողմ*։

18 *ամիսներու արիւնոտ պայքարներէն ետք, թաթարական Վանդէան ետ մղուեցաւ գերմարդկային ճիգերովը Դաշնակցութեան, որ ստիպուեցաւ կռուիլ միաժամանակ երկու հզօր թշնամիներու դէմ.— թաթարներուն եւ հակա-յեղափոխական Ռուսիոյ*։

Այսօր այս աղէտալի մղձաւանջը անհետանալու վրայ է. կիրքերը կը հանդարտին եւ երկու ժողովուրդները կը վերադառնան բարի դրացնութեան իրենց անցեալի յարաբերութիւններուն։

Բայց ռեակցիան *արդէն հոն է, յաղթական եւ լիրբ... Վրէժ կը լուծէ Կովկասի մէջ, ինչպէս Ֆինլանտայի, Լեհաստանի, ինչպէս ամէն տեղ։ Յեղափոխութեան ուժերը կոտորուած են, ընկերվարական եւ յեղափոխական գրականութիւնը՝ ամբողջովին ջնջուած, ամէն ինչ անցած է դարձեալ ընդյատակ*։

Կովկասեան ռէակցիան մասնաւոր ուժգնութեամբ կը հարուածէ միջազգային ահաւոր Ընկերակցութիւնը,— Դաշնակցութիւնը։ Մեր կազմակերպութեան պատկանելու կասկածանքով՝ բանտ նետեցին հարիւրաւոր մտաւորականներ, գրողներ, ուսուցիչներ, բժիշկներ,— ամբողջ ծաղիկը մեր ընկերութեան։ Շուրջ երկու տարիէ ի վեր չարչարանքի տակ են համբաւաւոր Լիժինի *կողմէ,— հին վարչակարգի արարած մը՝* [որ] *որոշած է ամէն գնով կորստեան մատնել զանոնք*։

Նովոչերկասկի մէջ մեծ դատավարութիւն մը կը պատրաստուի։

Ներկայիս ընկերվար կուսակցութիւնները եւ կովկասեան ամբողջ ժողովրդավարութիւնը մեծ եւ ցաւալի տագնապ մը կ'անցընեն։ Ռուս, հայ, վրացի ընկերվարականներուն կը մնայ միացեալ ուժերով կռուիլ կառավարական ռէակցիային դէմ, ու նաեւ աւելի վտանգաւորին՝ այն ռէակցիային, որ տիրացած է մինչեւ իսկ ընկերութեան լայն խաւերուն։

Ընկերվար կուսակցութիւններու համակարգուած գործը այսօր գլխաւորագոյն անհրաժեշտութիւնն է։ Միաւորման պակասը եւ ներքին պայքարները, յատկանշուած յաճախ վարդապետական խնդիրներով, ահագին վնաս պատճառեցին Ռուսիոյ մէջ Յեղափոխական դատին։

Այնպէս որ, 1909 *թ. Վառնայի Ընդհ. Ժողովին*** *Դաշնակցութիւն կուսակցութիւնը որոշեց համաձայնութիւն գոյացնել ընկերվար եւ յեղափոխական կազ-*

** Հարցը կը վերաբերի թաթարական նշանաւոր ջարդերուն, համտրէն կազմակերպուած ռուսական դիւանակալութեան կողմէ իբրեւ «վտանգաւոր» ամբաստանուած հայ ազգաբնակչութեանց դէմ, եւ որոնք, կարճատեւ դադարներով տեւեցին տասնեւութ ամիսներ* (1905-1906), *հազարաւոր զոհեր եւ ահագին քանդում պատճառելով*։

*** Վառնայի Ընդհ. Ժողովին կը մասնակցէին Կովկասի, Թուրքիոյ, Պարսկաստանի, ինչպէս նաեւ Ամերիկայի ու Եւրոպայի մեր գաղութներուն պատգամաւորները*։

C'est ensuite la prédominance dans leur tactique des *préoccupations socialistes* ou économiques sur celles de *la révolution politique* (fait, déterminé *en partie* par la structure économique spéciale du pays).

L'assemblée plénière du «Daschnaktzoutioun» constate: 1° que *la conscience socialiste* des grandes masses prolétariennes et paysannes, tout en étant une force merveilleuse et redoutable, ne suffit cependant pas pour détruire la puissante machine du despotisme; 2° que cette conscience doit avoir pour corollaire la *préparation révolutionnaire* ou militaire, afin de pouvoir résister aux baïonnettes,

Les masses doivent être armées – du moins en partie elles doivent être préparées, éduquées militairement pour l'offensive comme pour la défensive.

C'est la grande leçon de la Révolution russe*. C'est là une préoccupation essentielle, qui dès le début du mouvement a malheureusement fait défaut dans les programmes de nos partis frères en Russie. La tactique de la résistance passive (grèves partielles ou générales), préconisée par la grande majorité des socialistes russes (social-démocrates), tout en donnant des résultats appréciables au point de vue de l'organisation et de la discipline, dans un pays comme la Russie, ne peut amener qu'à des victoires de courte durée.

Cette impuissance de la «méthode économique» s'est manifestée avec un éclat particulier dans une partie du Caucase, le foyer de la révolution, tant connu pourtant par son esprit belliqueux et ses mœurs guerrières. L'armée révolutionnaire du prolétariat et des paysans (Gourie), travaillée depuis des années par les militants de la Social-démocratie, ne put et ne pouvait opposer aucune résistance aux assauts de la réaction, et se livra sans armes aux bandes du général *Alikhanoff***, qui traversa ces belles régions de la Géorgie, en semant d'un bout à l'autre la mort et la ruine.

Telles sont les idées et les conclusions de notre dernier Congrès, éclairé par l'expérience de longues années de lutte, sur les trois champs de l'activité du parti: en Turquie, en Transcaucasie et en Perse.

C'est la résistance armée de «Daschnaktzoutioun» et de toute notre population valide qui a repoussé et abattu en Transcaucasie la formidable contre-révolution de 1905-1907, déchaînée par le tsarisme. C'est la

** Certes, il y a eu aussi des combats armés entre les révolutionnaires et les troupes gouvernementales, mais trop éphémères et sporadiques, loin de revêtir un caractère de masse.*

*** Le Mouraview de la Géorgie, exécuté en 1907, par les terroristes du «Daschnaktzoutioun».*

մակերպութիւններու միջեւ։ Բարեբախտաբար միաժամանակ, այս իմաստով կոչեր ուղղուած են Եւրոպայի մեր ընկերվար ընկերներուն կողմէ, եւ պէտք է յուսալ որ խնդրոյ առարկայ կուսակցութիւնները, երկարատեն իրար դէմ պայքարելէ ետք, պիտի միաւորեն վերջապէս իրենց ուժերը հասարակաց ահեղ թշնամիին՝ Ցարիզմի *դէմ*։

Թող թոյլ տրուի մեզի յիշատակել այստեղ մեր ընդհանուր ժողովին մէջ արտայայտուած մէկ քանի մտքեր՝ Ռուսիոյ մէջ հետեւելիք մարտավարութեան մասին։ Շարք մը վիճաբանութիւններէ ետք, մեր ընկերները նշեցին կարգ մը իրողութիւններ, որոնք, շատ մը ուրիշներու կարգին, բացասական ազդեցութիւն ունեցած են դէպքերու ընթացքին վրայ։

Նախ՝ պայքարի մէջ գտնուող ընկերվար կուսակցութիւններու խոր հակամարտութիւնը։

Ապա՝ մարտավարութեան մէջ՝ սոցիալիստական *կամ տնտեսական* մտահոգութիւններուն (*ունեցած*) *գերակայութիւնը* քաղաքական յեղափոխութեան վրայ (*իրողութիւն մը՝ մասամբ բնորոշ Երկրի տնտեսական յատուկ կառուցուածքին*)։

Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը կը հաստատէ։

1) *Բանուոր եւ գիւղացի մեծ զանգուածներու ընկերվարական գիտակցութիւնը, սքանչելի եւ ահաւոր ոյժ մը ըլլալով մէկտեղ, չի բաւեր այսուհանդերձ քանդելու բռնակալութեան հզօր մեքենան*. 2) *որ այս գիտակցութիւնը իբրեւ հետեւութիւն պէտք է ունենայ* յեղափոխական *կամ զինուորական պատրաստութիւն, որպէսզի կարենայ դիմադրել սուիններուն*։

Զանգուածները գէթ մասամբ պէտք է զինուած ըլլան. անոնք պէտք է պատրաստուին, զինուորական կրթութիւն ստանան, թէ՛ յարձակողական եւ թէ պաշտպանողական։

Ասիկա Ռուսական յեղափոխութենէն [*քաղելիք*] *մեծ դասն է*։ Հիմնական մտահոգութիւն մըն է այս՝ որ շարժման սկիզբէն բացակայեցաւ Ռուսիոյ մէջ մեր եղբայր կուսակցութիւններու ծրագիրներուն մէջ։ Կրաւորական դիմադրութեան (մասնակի կամ ընդհանուր գործադուլներ) մարտավարութիւնը, ռուս ընկերվարականներու (սոցիալ-դեմոկրատ) մեծամասնութեան կողմէ գովաբանուած, գնահատելի արդիւնքներ տալով հանդերձ՝ կազմակերպական եւ կարգապահական տեսակէտով, միայն կարճատեւ յաղթանակներ կը բերէ Ռուսիոյ նման երկրի մը մէջ։*

«Տնտեսական մեթոտի» այս անզօրութիւնը ցայտուն կերպով յայտնուեցաւ յեղափոխութեան հնոց Կովկասի մէկ մասին մէջ, որ հռչակաւոր է իր ռազմաշունչ ոգիով եւ մարտական բարքերով։ Բանուորներու եւ գիւղացիներու յեղափոխական բանակը (Գուրիոյ

** Անշուշտ որ տեղի ունեցան զինեալ բախումներ յեղափոխականներու եւ կառավարական գունդերու միջեւ, սակայն՝ միօրեայ տեւողութեամբ կամ ցաք ու ցրիւ, զանգուածային նկարագիր ունենալէ շատ հեռու։*

lutte armée qui a délivré la Perse et la Turquie du joug des tyrannies asiatiques.

Est-il besoin de dire que dans une lutte analogue en Russie contre le sauvage et puissant despotisme, aucun élément oppositionnel ne doit être négligé. C'est l'union des forces les plus variées, les plus hétérogènes, qui a préparé et accompli les révolutions turques et persanes. Le «Daschnaktzoutioun», parti socialiste, a tendu la main aux organisations jeune-turque et jeune-persane, toutes les deux farouches adversaires des idées de l'Internationale. *Les socialistes slaves* de Macédoine ont collaboré également avec la Jeune-Turquie. Des *socialistes géorgiens*, arrivés en Perse, de Tiflis et de Bakou, ont contribué à la victoire du Sattar Khan contre la Shah Mehmed Ali.

A défaut d'un parti démocrate-révolutionnaire en Russie, les organisations socialistes devraient se charger d'une partie de sa besogne. Nous ne devons pas – en vue de sauvegarder la pureté de notre doctrine socialiste – renoncer à la propagande dans les milieux généralement réfractaires aux idées du socialisme, mais dont dépendent dans une large mesure les destinées de la révolution politique: *parmi les officiers* par exemple. Sous ce rapport encore, la leçon de la révolution ottomane est très instructive et édifiante.

Tout en propageant l'idéal socialiste, tout en organisant les masses travailleuses pour leurs luttes de classes contre le capital et l'exploitation économique, les divers partis socialistes de Russie devraient, avant tout, concentrer leurs efforts sur la lutte politique, sur la conquête des libertés élémentaires, et – tout en maintenant chacun ses conceptions théoriques – coordonner leurs forces pour la commune bataille.

C'est, d'ailleurs, la décision du Congrès d'Amsterdam.

մէջ), տարիներէ ի վեր պատրաստուած սոցիալ-դեմոկրատներու կողմէ, չկրցաւ եւ չէր կրնար որեւէ դիմադրութիւն ցոյց տալ ռէակցիայի գրոհներուն, եւ անձնատուր եղաւ զօրավար Ալիխանովի վոհմակներուն, որոնք ճեղքեցին անցան Վրաստանի այս գեղեցիկ շրջանները մէկ ծայրէն միւսը մահ եւ աւեր սփռելով։*

Այսպիսին են մեր վերջին Ընդհանուր Ժողովին մտածումն ու եզրակացութիւնները,— Թուրքիոյ, Անդրկովկասի եւ Պարսկաստանի ճակատներուն վրայ երկար տարիներու պայքարին ու գործունէութեան փորձառութեամբ ձեռք բերուած։

Դաշնակցութեան եւ մեր ամբողջ ժողովուրդի գործօն տարրի զինեալ դիմադրութիւնն է, որ Անդրկովկասի մէջ ետ մղեց եւ պարտութեան մատնեց ցարիզմի կողմէ շղթայազերծուած 1905-1907 թուականներու սոսկալի հակա-յեղափոխութիւնը։ Զինեալ պայքարն է, որ Պարսկաստանն ու Թուրքիան ազատագրեց ասիական բռնատիրութիւններէն։

Հարկ կա՞յ ըսելու, որ նմանօրինակ պայքարի մը պարագային ռուսական վայրագ եւ հզօր բռնակալութեան դէմ, պէտք չէ անտեսել ընդդիմադիր որեւէ տարր։ Ամէնէն բազմազան, ամէնէն այլատարր ուժերու միութիւնն էր, որ պատրաստեց եւ իրագործեց թրքական եւ պարսկական յեղափոխութիւնները։ Դաշնակցութիւնը,— ընկերվար կուսակցութիւն—, ձեռք մեկնեց երիտասարդ թրքական եւ պարսկական կազմակերպութիւններուն, երկուքն ալ կատաղի հակառակորդներ Միջազգայինի։ Մակեդոնիոյ սլաւ ընկերվարականները նոյնպէս գործակցեցան Երիտասարդ-Թուրքերուն։ Վրացի ընկերվարականներ՝ Պարսկաստան եկած Թիֆլիսէն կամ Պաքուէն, իրենց նպաստը բերին Շահ Մեհմէտ Ալիի դէմ Սաթթար քանի [տարած] յաղթանակին։

Ռուսիոյ մէջ առ ի չգոյէ դեմոկրատ-յեղափոխական կուսակցութեան մը, ընկերվար կուսակցութիւնները պէտք է ստանձնէին անոր աշխատանքին մէկ մասը։ Մեր ընկերվարական վարդապետութեան մաքրութիւնը պահպանելու նպատակով՝ պէտք չէ հրաժարինք քարոզչութիւն կատարելէ՝ ընկերվարական գաղափարներու նկատմամբ ընդհանրապէս մերժողական կեցուածք ունեցող այնպիսի շրջանակներու մէջ, որոնցմէ կախեալ է մեծ չափով մը քաղաքական յեղափոխութեան ճակատագիրը։ Օրինակի համար՝ սպաներու մէջ։ Այս տեսակէտով եւս օսմանեան յեղափոխութեան օրինակը շատ ուսանելի է եւ չինիչ։

Ընկերվարական իտէալը տարածելով, դրամագլուխի եւ տնտեսական շահագործման դէմ աշխատաւոր զանգուածները կազմակերպելով հանդերձ, Ռուսիոյ այլեւայլ ընկերվարական կուսակցութիւնները, ամէնէն առաջ, պէտք է կեդրոնացնէին իրենց ճիգերը քաղաքական պայքարի վրայ, նախնական ազատութիւններու նուաճման վրայ եւ, պահպանելով հանդերձ իւրաքանչիւրը իր տեսական հայեացքները, պէտք է իրենց ուժերը համակարգէին վասն հասարակաց պայքարին։

Այդպիսին է արդէն Ամսթերտամի կոնգրէսին որոշումը։

* *Վրաստանի Մուրաւիեւը, դաշնակցական ահաբեկիչներուն կողմէ սպաննուած 1907ին։*

EN TURQUIE

Les origines de la Révolution de Juillet 1908.

Notre parti a développé une action féconde dans ce pays en voie de régénération. Vingt années de nos luttes pour la liberté sur le plateau de l'Arménie turque et au pied même d'Ildiz-Kiosque, dans la capitale ottomane, n'ont pas été pour rien dans le réveil de la Jeune-Turquie. Ce fait fut proclamé hautement par les voix musulmanes les plus autorisées sur les places publiques à Constantinople, à Srnyrne et dans d'autres villes, aux jours inoubliables, où, après la promulgation de la Constitution, tous les peuples, chrétiens et musulmans, fraternisaient aux accents de la marche guerrière.

Depuis 1895, nous avons cherché à ramener les Jeunes-Turcs, voués au fétichisme de «l'évolution légalitaire», à la foi révolutionnaire et subversive. Des pourparlers se sont engagés chaque année avec les militants isolés et avec les groupes jeunes-turcs mais sans aucun résultat.

Un congrès des partis d'opposition (musulmans et chrétiens) se réunit à Paris, en 1902, avec la participation des trois groupes dominants: le groupe «Union et Progrès» (ou groupe de Mechveret), le groupe du prince Sebaheddine et le «Daschnaktzoutioun».

Après une conférence de plusieurs journées, les délégués se quittèrent, sans avoir abouti à un résultat pratique. Une profonde dissension de principe divisait les participants. Tandis que les deux derniers groupes se déclaraient partisans de la révolution violente, le premier, sous la conduite de M. Ahmed Riza, président actuel du parlement ottoman, demeura, en «évolutionniste convaincu», adversaire des moyens subversifs. Il continua à faire appel à l'opinion européenne, en vue de rétablir la Constitution ottomane de 1876.

Après cette première grande tentative de concentration des forces oppositionnelles, des événements considérables eurent lieu dans l'Empire turc. Des changements se produisirent dans la mentalité des grandes masses mahométanes des provinces intérieures. Le régime atroce d'Abdul Hamid, la politique fiscale, les impôts écrasants, l'arbitraire effréné de la bureaucratie, tout cela finit par exaspérer la population musulmane même.

Et l'on put voir, en 1906, des convulsions de cette masse inerte, abrutie par le despotisme et par un clergé sauvagement fanatique, allié de par la loi théocratique du «Chériat» à l'absolutisme du Khalif.

Des cris de révolte se firent entendre de ci, de là.

ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

Մեր կուսակցութիւնը բեղմնաւոր աշխատանք ծաւալեց վերածնդեան մէջ գտնուող այս երկրին մէջ։ Թրքական Հայաստանի բարձրաւանդակին վրայ եւ թրքական մայրաքաղաքին մէջ,— Եըլտըզ-Քիօշկի ոտքերուն իսկ,— քսան տարիներու մեր պայքարները ի զուր չեղան Երիտասարդ-Թուրքիոյ գարթնումին մէջ։ Այս իրողութիւնը բարձրաձայն յայտարարուեցաւ մահմետական ամէնէն հեղինակաւոր անձնաւորութիւններու կողմէ Կոստանդնուպոլսոյ, Զմիւռնիոյ եւ ուրիշ քաղաքներու հրապարակներուն վրայ՝ անմոռանալի այն օրերուն երբ, Սահմանադրութեան հռչակումէն ետք, բոլոր ժողովուրդները, քրիստոնեայ եւ մահմետական, կ'եղբայրանային [կարծես] ռազմական քայլերգի մը կշռոյթներուն տակ։

1895էն այս կողմ, մենք փորձեցինք «օրինական շրջափոխութեան» հաւատք ընծայող Երիտասարդ-Թուրքերը բերել յեղափոխական եւ յեղափոխիչ հաւատքին։ Ամէն տարի բանակցութիւններ վարուեցան, մեկուսացած շարքայիններու եւ երիտասարդ-Թուրքերու խմբակներու հետ, բայց ի զուր։

Տեղի ունեցաւ 1902ին, ընդդիմադիր կուսակցութիւններու (մահմետական եւ քրիստոնեայ) կոնգրէս մը, [հետեւեալ] գլխաւոր երեք խմբակցութիւններու մասնակցութեամբ.— «Միութիւն եւ Ցառաջդիմութիւն» (կամ «Մեշվերէթ»ի խումբ), իշխան Սապահետտինի խումբ եւ Դաշնակցութիւնը։

Բազմաթիւ օրեր տեւող ժողովէ մը ետք, պատուիրակները իրարմէ բաժնուեցան առանց որ գործնական արդիւնքի մը հասած ըլլան։ Սկզբունքային խոր տարակարծութիւն մը կը բաժնէր մասնակիցները։ Մինչ վերջին երկու մասնակիցները [Սապահետտին եւ Դաշնակցութիւն] կողմնակից էին բռնի յեղափոխութեան, առաջինը՝ Մ. Ահմէտ Ռիզայի առաջնորդութեամբ,— այժմու նախագահը Օսմանեան խորհրդարանին—, իբրեւ համոզուած բարեշրջական, հակառակեցաւ յեղաշրջիչ միջոցներու գործածութեան։ Ան շարունակեց կոչ ուղղել եւրոպական հանրային կարծիքին 1876ի օսմանեան սահմանադրութիւնը վերահաստատելու առաջադրանքով։

Ընդդիմադիր ուժերու կեդրոնացման այս առաջին փորձէն ետք, նշանակալի իրադարձութիւններ տեղի ունեցան Թուրքիոյ մէջ։ Առաջ եկան փոփոխութիւն-

Erzeroum parla le premier. Une émeute éclata parmi la population turque. La foule envahit les places publiques, protestant contre les nouveaux impôts; il prit d'assaut la demeure du Vali (gouverneur général), le tua, ainsi que plusieurs autres fonctionnaires. A l'origine de ce drame singulier, nos camarades d'Erzeroum, en relations constantes avec les meneurs musulmans, étaient prêts à les rejoindre, mais ceux-ci, afin de ne pas donner au despote d'Ildiz-Kiosque le prétexte d'une «intrigue arménienne» pour créer une «diversion», décidèrent à agir seuls.

D'autres émeutes eurent lieu dans les lointaines régions de l'empire. Le peuple se révolta à Bitlis, à Diarbékir, à Kastémouni. Ces soulèvements partiels furent étouffés, les meneurs emprisonnés ou exilés.

Ce furent les premiers gestes de l'esclave séculaire. Ce fut en même temps une sorte de signal d'alarme pour les «idéologues». Les chefs des partis musulmans en furent profondément impressionnés. Les plus farouches évolutionnistes eux-mêmes changèrent d'attitude. Et une nouvelle phase dans le mouvement commença. La révolution violente devint le mot d'ordre.

Le parti «Daschnaktzoutioun » profita de ce réveil partiel des masses musulmanes pour pousser la jeunesse turque à l'organisation. Nos camarades nouèrent des relations étroites avec les éléments conscients de cette jeunesse. A *Van* et dans la province, par nos efforts, un comité turc fut créé en 1906. Il adopta un programme d'action politique et économique. Il se réclama des idées socialistes-révolutionnaires. Les Jeunes-Turcs de Van publièrent leur organe hebdomadaire «Sabah ul Kaïr», qui développait les principes élémentaires du socialisme. En ce qui concerne l'organisation future de l'Empire, ils adoptèrent d'un commun accord avec nos camarades, le principe de *décentralisation* et l'autonomie des nationalités.

Les deux organisations – arménienne et turque – développèrent une activité riche et variée. Par des articles et des feuilles volantes, elles invitaient les Turcs, les Kurdes et les Arméniens à la concorde, à une action commune contre le despotisme. Elles propageaient la littérature clandestine, reçue de l'étranger, en langues turque, arménienne, arabe et kurde. Imprégnées des idées du socialisme international, elles défendaient solidairement, par leur parole et par leurs actes, les intérêts du peuple travailleur contre les parasites de la société: usuriers, grands propriétaires, beys et aghas kurdes et turcs, qui, en vrais féodaux moyenâgeux, tiennent leurs sujets paysans dans un servage et une

** Les dévoués qui ont fait d'avance le sacrifice de leur vie.*

ներ՝ ներքին գաւառներու մահմետական մեծ զանգւածներու մտայնութեան մէջ։ Ապտիլ Համիտի սոսկալի վարչակարգը, ելեւմտական քաղաքականութիւնը, ճնշող տուրքերը, վարչամեքենային սանձարձակ կամայականութիւնները,– այս բոլորը ի վերջոյ գայրոյթ պատճառեցին նոյնիսկ մահմետական բնակչութեան։

Եւ այսպէս, 1906ին արդէն, ցնցումներ նշմարուեցան այն թուլամորթ զանգուածին մօտ, որ ապուշ էր կտրած բռնակալութեան տակ, ու կատաղօրէն մոլեռանդ կրօնաւորներու կողմէ, որոնք «չերիաթ»ի Ղուրանի օրէնքով դաշնակցած էին Խալիֆի բացարձակապետութեան հետ։

Հոս-հոն լսուեցան ըմբոստացումի կանչերը։ Առաջին շարժողը Էրզրումը եղաւ։ Ըմբոստութիւն ծագեցաւ թուրք բնակչութեան մէջ։ Ամբոխը խուժեց հրապարակները բողոքելու համար նոր տուրքերուն դէմ. յարձակումով գրաւեց Վալիին (ընդհանուր կառավարիչ) բնակատեղին, սպաննեց զայն, ինչպէս նաեւ բազմաթիւ ուրիշ պաշտօնեաներ։ Այս եզակի տրամին սկիզբը, Էրզրումի մեր ընկերները, որ մնայուն կապի մէջ էին [շարժումին] մահմետական առաջնորդներուն հետ, պատրաստ էին իրենց միանալու, սակայն այս վերջինները, որպէսզի առիթ չտան Եըլտըզ-Քիօշկի բռնակալին՝ «հայկական դաւադրութեան» պատրուակով շարժումը «չեղեցնելու» իր նպատակէն,– որոշեցին առանձինն գործել։

Ուրիշ ըմբոստացումներ տեղի ունեցան կայսրութեան հեռաւոր շրջաններուն մէջ։ Ժողովուրդը ըմբոստացաւ Պիթլիսի, Տիարպէքիրի, Քաստեմունիի մէջ։ Մասնակի այս ըմբոստութիւնները խեղդուեցան, առաջնորդողները՝ բանտարկուեցան կամ աքսորուեցան։

Ասոնք առաջին շարժումներն էին դարաւոր ստրուկին։ Ասիկա միաժամանակ տեսակ մը ահազանգ էր «գաղափարապաշտներուն» համար։ Մահմետական կուսակցութիւններու ղեկավարները մեծապէս տպաւորուեցան։ Ամէնէն կատաղի եղափոխականներն իսկ փոխեցին իրենց կեցուածքը։ Եւ շարժումը մտաւ նոր փուլի մը մէջ։ Բռնի [միջոցներով] յեղափոխութիւնը դարձաւ նշանաբան։

Դաշնակցութիւն կուսակցութիւնը օգտուեցաւ մահմետական զանգուածներու այս մասնակի զարթնումէն՝ թուրք երիտասարդութիւնը մղելու համար որ կազմակերպուի։ Մեր ընկերները սերտ կապեր հաստատեցին այս երիտասարդութեան գիտակից տարրերուն հետ։ Վանի եւ գաւառներուն մէջ մեր ջանքերով 1906ին թրքական կոմիտէ մը ստեղծուեցաւ։ Քաղաքական եւ տնտեսական քաղաքականութեան ծրագիր մը որդեգրեց ան։ Հռչակեց ընկերվարական-յեղափոխական գաղափարներ։ Վանի երիտասարդ-թուրքերը հրատարակեցին իրենց պաշտօնաթերթ՝ «Սապահ-իւլ-Խայր» շաբաթաթերթը, որ ընկերվարութեան տարրական սկզբունքները կը պարզէր։ Ինչ կը վերաբերի [թուրք] կայսրութեան ապագայ կազմակերպութեան, մեր ընկերներուն հետ համախորհուրդ, անոնք որդեգրեցին ապակեդրոնացման եւ ազգութիւններու ինքնավարութեան սկզբունքը։ Հայ եւ թուրք զոյգ կազմակերպութիւնները ունեցան հարուստ եւ այլազան գործունէութիւն։ Ծօդուածներով եւ թռուցիկներով, թուրքերը, քիւրտերը եւ հայերը կը հրաւիրէին բռնատիրութեան դէմ համերաշխութեամբ պայքարելու։ Կը տարածէին արտասահմանէն ստացուած գաղտնի գրականութիւն, թրքերէն, հայերէն, արաբերէն, քրտերէն լեզուներով։ Միջազգային ընկերվարութեան գաղափարներով տոգորուած, բանիւ եւ գործով անոնք միասնաբար կը պաշտպանէին աշխատաւոր ժողովուրդին շահերը՝ [մարդկային] ընկերութեան մակաբոյծներուն դէմ,– վաշխառուներ, մեծ հողատէրեր, թուրք եւ քիւրտ աղաներ, որոնք որպէս միջնադարեան աւատատէրեր՝ իրենց ենթակայ գիւղացիները կը պահեն ստրկութեան եւ անթոյլատրելի թշուառութեան մէջ։ Ֆետայական շրջուն խումբերու միջոցով անոնք կը հետապնդէին այս շրջաններուն համար պատուհաս դարձած քիւրտ աւազակները, գողցուած անասունները կը վերադարձընէին իրենց տէրերուն։ Համարձակ ու յանդուգն իրենց ընթացքով, երկու կոմիտէները շուտով վաստկեցան բնակչութեան վստահութիւնն ու համակրանքը։

Գրեթէ մէ՛կ կազմակերպութիւն էր, միայն խօսքով չէ որ վարչակարգին դէմ քարոզչութիւն կը կատարէր, այլեւ կը վճռէր քաղաքական խնդիրներ։ Ան մահուան վճիռ գործադրեց բազմաթիւ լրտեսներու եւ կառավարական հարստահարիչներու նկատմամբ։ Շատերու կարգին, մահուան դատապարտեց Վանի ընդհանուր կառավարիչ արիւնարբու Վալի՝ Ալի պէյը, եւ երբ այս վերջինը, փախուստ տալով Ֆետայիներու ցասումէն, Կովկաս փախաւ, մեր ահաբեկիչները Վանի կոմիտէին վճիռը գործադրեցին, եւ արիւնարբու Ալի պէյը 1907ին գնդակահար եղաւ Պաթումի մէջ։*

Հայ-թրքական միասնական գործունէութիւնը կը կազմակերպուէր (նաեւ) Անատոլուի այլ կեդրոններու մէջ։ Ուր որ գործելու միջոցներ գոյութիւն ունէին, մեր ընկերները մահմետական միջավայրերու մէջ կ'անդամագրէին համակիրներ, ամէն տեղ սերմեր կը ցանէին ու միաժամանակ կը պատրաստուէին գալիք կռիւներուն, զէնք ամբարելով եւ երիտասարդութիւնը զինելով։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ

Գաղափարներու այս հզօր ալեկոծումը Անատոլուի մէջ՝ մտածել տուաւ արտասահման հաստատուած օս-

** Իրենց կեանքը կանխաւ զոհաբերելու յանձնառու մարտիկներ։*

misère intolérables. Par des bandes volantes de fidaïs, elles poursuivaient les brigands kurdes – fléau de ces malheureuses régions – restituaient souvent le bétail enlevé aux propriétaires. Par leur attitude franche et hardie, les deux comités gagnèrent vite la confiance et les sympathies des populations.

C'était presque une seule organisation; elle ne faisait pas uniquement de la propagande verbale contre le régime, elle décrétait aussi des actes politiques. Elle fit exécuter nombre d'espions et d'oppresseurs gouvernementaux. Elle condamna à mort, entre autres, le sanguinaire Vali Ali bey, gouverneur général de Van; et lorsque celui-ci, fuyant les colères des fidaïs*, se sauva au Caucase, nos terroristes exécutèrent la sentence du comité de Van, et le féroce Ali bey tomba sous les balles à Batoum (en 1907).

L'action solidaire arméno-turque s'organisait dans d'autres centres de l'Anatolie. Partout où il y avait quelques moyens d'agir, nos camarades recrutaient des affiliés dans les milieux musulmans, partout ils jetaient le germe de la fermentation et se préparaient en même temps pour les combats futurs, en emmagasinant des armes et en armant la jeunesse.

A L'ETRANGER

Cette puissante fermentation des esprits en Anatolie fit réfléchir les comités ottomans établis à l'étranger. Le groupe «Union et Progrès» lui-même se rendit compte que le salut était dans une action concertée de tous les éléments révolutionnaires de l'Empire. Le chef intellectuel de ce groupement décida d'oublier les vieux dissentiments et vint engager en personne des pourparlers avec le «Daschnaktzoutioun» à Genève. C'était le signal précurseur de l'entente définitive. Le rapprochement entre Turcs et Arméniens se fit rapidement et spontanément,– sous la pression même des événements «du dedans».

Les Turcs, nous demandaient de les initier à la méthode d'action révolutionnaire, la seule efficace, que nous avions appliquée nous-mêmes depuis 18 ans, sans, hélas! aboutir... car nous avions contre nous la machine formidable du despotisme hamidien, le fanatisme agressif des populaces musulmanes et la cynique complicité de l'Europe officielle.

En Janvier 1908* se réunit à Paris, sur l'initiative de

** Rectification: Décembre 1907.*

notre parti, le second Congrès des factions révolutionnaires de l'Empire Ottoman. Le temps et les événements avaient fait leur œuvre. Le principe de la révolution violente, ainsi que la déposition du sultan Abdul Hamid furent proclamés à l'unanimité. L'effet de cette entente fut grand. L'action commune devait s'organiser dorénavant sur des bases plus larges et plus solides. Nous devions, à un moment donné, mobiliser nos forces en Anatolie, et les Turcs les leurs dans la Turquie d'Europe (en Macédoine). Cette vaste conspiration n'a pu être exécutée entièrement. Dans les deux grands centres de notre action, à Van et à Smyrne, nos projets se heurtèrent à des obstacles insurmontables. A Van, la veille même de la révolution de juillet, en mai 1908, à la suite d'une trahison, le gouvernement saisit plus d'un millier de nos fusils, un million de cartouches et une quantité considérable de matières explosibles. Bien avant ce désastre, nous avions subi des pertes irréparables à Smyrne. A la suite de l'attentat que nous avions organisé à Constantinople contre la vie du sultan* et du grand procès, intenté contre le «Daschnaktzoutioun», des papiers furent saisis, contenant des indications sur notre complot de Smyrne. Là encore, le gouvernement hamidien finit par découvrir nos dépôts de dynamite, destinés à faire sauter les édifices gouvernementaux.

Les événements se précipitèrent depuis le Congrès révolutionnaire de Paris. «L'homme malade» devint subitement l'objet d'une véritable chasse de la part des grandes puissances capitalistes. La question de Macédoine prit une tournure grave après l'entrevue des empereurs à Revel. La vieille maxime de Gortchakoff, «autonomie ou anatomie», retentit de nouveau, et la Jeune-Turquie consciente en fut ébranlée. L'armée macédonienne, travaillée par la révolution, décida de «marcher» et envoya son ultimatum à Ildiz. On connaît la suite.

** La machine infernale du «Daschnaktzoutioun», portée par une voiture à Ildiz, le jour du Selamlik (8 juin 1905), fit explosion en tuant une quarantaine de personnes (policiers, fonctionnaires, etc.), sans atteindre son vrai but.*

մանեան կոմիտէներուն։ «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» խմբաւորումը, ինքը, անդրադարձաւ, որ փրկութիւնը կը գտնուէր՝ Կայսրութեան բոլոր յեղափոխական տարրերու համերաշխ գործակցութեան մէջ միայն։ Այս խմբաւորման մտաւորական առաջնորդը որոշեց մոռնալ հին տարակարծութիւնները եւ անձամբ Ժընեւ եկաւ Դաշնակցութեան հետ բանակցելու համար[4]։ Ասիկա նախանշանն էր վերջնական համաձայնութեան մը։

Թուրքեւհայ մերձեցումը եղաւ անմիջական եւ ինքնաբուխ, «ներսի» դէպքերուն իսկ ճնշումին տակ։

Թուրքերը մեզմէ կը խնդրէին, որ զիրենք վարժեցնենք յեղափոխական գործի մեթոտին, միակ ազդուն, զոր գործադրած էինք մենք 18 տարիներու ընթացքին, աւա՜ղ, առանց [նպատակին] հասցնելու... որովհետեւ մեր դիմաց ունէինք՝ համիտեան բռնապետութեան ահեղ մեքենան, մահմետական խուժանին գրգռիչ մոլեռանդութիւնը եւ պաշտօնական Եւրոպայի չնական մեղսակցութիւնը։

1907ի Դեկտեմբերին[5], մեր կուսակցութեան նախաձեռնութեամբ Փարիզի մէջ կայացաւ Օսմանեան կայսրութեան յեղափոխական կուսակցութիւններու երկրորդ կոնգրէսն։ Ժամանակն ու դէպքերը կատարած էին իրենց գործը։ Բռնի յեղափոխութեան սկզբունքը, ինչպէս նաեւ Ապտիւլ Համիտի գահընկէցութիւնը միաձայնութեամբ որոշուեցաւ։ Մեծ եղաւ այս համաձայնութեան [ձգած] տպաւորութիւնը։ Միասնական գործունէութիւնը այնուհետեւ պէտք է կազմակերպուէր աւելի ընդարձակ եւ ամուր հիմերու վրայ։ Տուեալ պահու մը, մենք Անատոլուի մէջ մեր ուժերը, իսկ Թուրքերը եւրոպական Թուրքիոյ (Մակեդոնիա) մէջ իրենցը՝ պէտք է դնէինք շարժման մէջ։ [Հակապետական] այս մեծ դաւակցութիւնը չգործադրուեցաւ ամբողջութեամբ։ Մեր գործունէութեան երկու մեծ կեդրոններուն մէջ՝ Վան եւ Զմիւռնիա, մեր ծրագիրները բախեցան անյաղթահարելի խոչընդոտներու։ Վանի մէջ, Յուլիսի յեղափոխութեան նախօրեակին իսկ, 1908 Մայիսին, դաւաճանութեան մը հետեւանքով, կառավարութիւնը գրաւեց մեր հրացաններէն աւելի քան հազարը, մէկ միլիոն փամփուշտ եւ նկատառելի քանակ մը պայթուցիկ նիւթերու։ Այս աղէտէն շատ առաջ անդարմանելի կորուստներու ենթարկուած էինք Զմիւռնիոյ մէջ։ Կոստանդնուպոլսոյ մէջ սուլթանին կեանքին դէմ մեր կազմակերպած մահափորձին եւ Դաշնակցութեան դէմ*

** Դաշնակցութեան դժոխային մեքենան Եըլտրզ տարուած կառքով մը, Սելամլիքի օրը (8 Յունիս 1905) պայթեցաւ սպաննելով շուրջ 40 անձեր (ոստիկան, պաշտօնեայ եւայլն, առանց որ իր նպատակին հասնի։*

4.- Ակնարկութիւն Ահմէտ Ռիզայի (Խմբ.)։

5.- Ֆրանսերէն գրքոյկին մէջ սխալմամբ տպուած է «Յունուար 1908 թ.»։ Փարիզի կոնգրէն կայացած էր արդարեւ 1907 թ. Դեկտ. 27-29ին (Խմբ.)։

LA TURQUIE NOUVELLE

Abdul Hamid fut détrôné et un parlementarisme à l'occidentale s'établit en Turquie. Inutile de le dire, ce parlementarisme ottoman laisse beaucoup à désirer. C'est la prédominance de l'élément turc, c'est presque la dictature d'un Comité. Certes, le régime actuel est toujours une délivrance, après l'enfer hamidien; un grand souffle de liberté passe sur ces régions ténébreuses, où naguère le sang coulait à flots. Mais au point de vue de la réforme fondamentale, l'œuvre de ce nouveau régime est pour l'instant insignifiante. Les nationalités non turques ne sont reconnues par la loi que comme des «communautés religieuses».

Avec l'étroite conception d'un nationalisme agressif, qui est en train de créer dans l'Empire Ottoman une seconde Autriche, le nouveau régime fait preuve de la plus arrogante intransigeance dans les questions d'ordre social et économique. Le parlement, issu d'un système électoral vicieux, est composé dans sa grande majorité de hobereaux et de hodjas (riches cléricaux), qui communiquent à toutes les décisions de l'Assemblée leur cachet de classe. Le Comité dirigeant lui-même («Union et Progrès») n'a qu'un médiocre intérêt pour les revendications sociales, celles-ci manquent totalement dans son programme.

Cette intransigeance d'un régime semi-féodal, semi-capitaliste, se manifesta déjà lors de la fameuse discussion à la Chambre, sur la liberté d'association. Nos camarades d'Europe n'ont certes pas oublié, comme la question sociale devint la grande actualité, immédiatement après la promulgation de la Constitution. Les antagonistes des classes, étouffés sous l'ancien régime, se réveillèrent soudainement, et dès que le mot magique de «liberté» retentit dans les régions industrielles de la Turquie d'Europe, les grèves éclatèrent de toutes parts comme un déchaînement d'ouragan; les masses travailleuses, chrétiennes et musulmanes, ouvriers d'usines et de fabriques de tabac, de papier, prolétaires de mines, employés de chemins de fer, de tramways, de ports, d'imprimeries, la plupart inorganisés, abandonnèrent le travail, demandant l'amélioration de leur sort, causant une douloureuse surprise aux dirigeants de la Jeune-Turquie qui, pendant les vingt années de leurs pérégrinations occidentales, n'ont malheureusement rien appris de l'expérience des peuples avancés et ont toujours ignoré et fui les mou-

** Notre parti a son représentant aussi dans le* Medjlis *persan.*

բացուած մեծ դատին հետեւանքով, գրաւուեցան փաստաթուղթեր, որոնք կը պարունակէին ցուցմունքներ Զմիւռնիոյ մէջ մեր [ծրագրած] դաւին մասին։ Հոն եւս Համիտի կառավարութիւնը գտաւ պետական հաստատութիւններ պայթեցնելու սահմանուած մեր ուժանակներու պահեստանոցները։

Փարիզի յեղափոխական կոնգրէէն ետք դէպքերը գահավէժ ընթացք մը ստացան։ Յանկարծ «հիւանդ մարդը» դրամատիրական մեծ տէրութիւններու կողմէ առարկայ դարձաւ իսկական հալածանքի մը։ Ռեւելի մէջ կայսրերու տեսակցութենէն ետք[6] մակեդոնական հարցը լուրջ կերպարանք ստացաւ։ Կրկին հնչեց Կորչաքովի[7] հին առածը,— «ինքնավարութիւն կամ անդամահատութիւն» եւ Երիտասարդ Թուրքիան գիտակցելով ատոր՝ շարժեցաւ։ Մակեդոնական [Թուրք] բանակը, յեղափոխութեան դրդումով, որոշեց շարժիլ եւ վերջնագիր ուղղեց Եըլտրզին։ Հետեւանքը ծանօթ է։

ՆՈՐ ԹՈՒՐՔԻԱՆ

Ապտիւլ Համիտ գահընկէց եղաւ եւ Թուրքիոյ մէջ հաստատուեցաւ արեւմտեան ձեւի խորհրդարանական վարչաձեւ մը։ Աւելորդ է ըսել որ օսմանեան այս խորհրդարանական վարչաձեւը շատ թերի է։ Թուրք տարրին գերակայութիւնն է, գրեթէ բռնատիրութիւնը Կոմիտէի մը։ Անշուշտ, ներկայ վարչակարգը, համիտեան դժոխքէն ետք, ազատագրում մըն է. ազատութեան մեծ շունչ մը կը փչէ խաւարային այս շրջաններուն վրայ, ուր արիւնը նախապէս կը հոսէր յորդառատ։ Բայց հիմնական բարեփոխումներու տեսակէտէն, ներկայ վարչակարգին գործը ջնջին է։ Ոչ-Թուրք ազգութիւնները, օրէնքով, կը ճանչցուին իբրեւ «կրօնական փոքրամասնութիւններ» միայն։

Ազգութեան նեղ ու գրգռիչ այս իմացումով, որ Օսմանեան կայսրութեան մէջ Երկրորդ Աւստրիա մը ստեղծելու վրայ է, նոր վարչակարգը ցոյց կու տայ ամէնէն ժպիրհ անհանդուրժողականութիւնը՝ ընկերային եւ տնտեսական հարցերուն մէջ։ Ընտրական յոռի սիստեմի մը ծնունդ՝ խորհրդարանը լայն մեծամասնութեամբ բաղկացած է աւատատէրերէ եւ հոճաներէ (հարուստ կրօնաւորներ), որոնց դրոշմը կայ Ազգ. ժողովի բոլոր որոշումներուն վրայ։ Ղեկավար Կոմիտէն,

6.- Ռեւելը նախկին անունն է էսթոնիոյ մայրաքաղաք Թալլինի։ «Կայսրերը» Մեծն Բրիտանիոյ Եդուարդ Է. թագաւորը եւ Ռուսիոյ Նիկոլայ ցարն են, որոնք 1908 թ. Յունիսին այդ քաղաքին մէջ հանդիպում ունեցան Մակեդոնիոյ բարենորոգումներու հարցը քննութեան ենթարկելու համար (Խմբ.)։

7.- Ալեքսանդր Կորչաքով՝ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարն էր 1856-1882 (ապա վարչապետ), որ ֆրանսերէն բառախաղ ընելով (anatomie ou autonomie) կը սպառնար որ եթէ Օսմանեան կայսրութիւնը բարեկարգումները չգործադրէ, անդամահատութեան պիտի ենթարկուի (Խմբ.)։

vements de la nouvelle Internationale.

Comme suite de cette soudaine éruption des forces prolétariennes, des syndicats professionnels furent créés dans plusieurs centres, notamment à Salonique, berceau glorieux de la Révolution ottomane, où nos camarades slaves avaient semé depuis quelques années l'idée du socialisme et de la solidarité internationale.

Le gouvernement constitutionnel ne tarda pas à préciser son attitude vis-à-vis du «nouveau courant». La question des associations fut portée à la tribune de la Chambre, et le ministre Férid pacha, appuyé sur une majorité docile et peu éclairée sur ce genre de problèmes, frappa d'interdiction les syndicats et toute autre organisation économique. La liberté des grèves fut également entravée.

Nos trois camarades furent, malheureusement, seuls à stigmatiser devant le Parlement ces mesures draconiennes. (Il y a à la Chambre Ottomane 6 députés socialistes, tous des non-musulmans; 1 bulgare et 5 arméniens. De ces derniers, 4 appartiennent à notre organisation, 1 au parti «hentchakiste»)*.

Dans l'énorme majorité des députés musulmans il n'y a pour l'instant qu'une très faible différenciation de partis. Et ce qui est déconcertant, c'est l'absence presque totale de la bourgeoisie. A plus forte raison, il ne peut y être question d'une *démocratie bourgeoise*.

Il y eut, au début de la Constitution, un *parti libéral*, dit *ahrarien*, composé des représentants de diverses nationalités, avec un programme plus sympathique. Il voulait rallier autour de son drapeau tous ceux qui trouvent le salut de la Turquie dans une organisation décentralisée, où les nationalités tant différentes par leurs mœurs, leurs langues, leurs histoires et leur degré de culture, jouissent d'une autonomie plus ou moins large, d'un certain *self-government*.

Malheureusement, ce parti s'est vite éclipsé, compromis par quelques membres indignes qui avaient des attaches avec le bourreau d'Ildiz-Kiosque et dont la complicité dans le coup d'Etat d'avril 1909 fut dévoilée.

(«*Միութիւն եւ Յառաջդիմութիւն*») *ինք եւս, հազիւ դոյզն շահագրգռութիւն ցոյց կու տայ ընկերային պահանջներու նկատմամբ. այս վերջինները բոլորովին բացակայ են իր ծրագրէն։*

Կէս-աւատատիրական, կէս-դրամատիրական վարչակարգի մը անհանդուրժողութիւնը երեւան եկաւ ընկերակցութիւններու ազատութեան մասին Խորհրդարանին մէջ եղած վիճաբանութիւններուն ընթացքին։ Եւրոպայի մեր ընկերները չեն մոռցած անշուշտ թէ ընկերային հարցը ինչպիսի այժմէականութիւն ստացաւ Սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս ետք։ Դասակարգերու [գոյութեան] հակառակորդները, որոնց [ձայնը] խեղդուած էր հին վարչակարգի օրերուն, արթնցան յանկարծ, եւ հազիւ մոգական «ազատութիւն» բառը հնչեց եւրոպական Թուրքիոյ ճարտարարուեստական շրջաններուն մէջ, ամէն կողմ գործադուլներ պայթեցան, ինչպէս ուրական մը կը շղթայազերծուի. աշխատաւոր զանգուածները, քրիստոնեայ եւ մահմետական,— ծխախոտի, թուղթի, հանքերու գործաւորներ, երկաթուղիի, հանրակառքի, նաւահանգիստներու, տպարաններու պաշտօնեաներ—, մեծ մասամբ կազմակերպուած, լքեցին աշխատանքը, պահանջելով իրենց կացութեան բարելաւումը, անակնկալի բերելով ցաւագնօրէն՝ Երիտասարդ-Թուրքիոյ ըքիոյ ղեկա որոնք՝ արեւմտեան [Եւրոպայի] մէջ իրենց քսան տարիներու կեցութեան տեւողութեան, դժբախտաբար ոչ մէկ դաս քաղեցին յառաջդէմ ժողովուրդներու փորձառութենէն եւ միշտ անգիտացան ու խոյս տուին նոր Միջազգայնականի շարժումներէն։

Իբրեւ հետեւանք աշխատաւորական ուժերու այս յանկարծական պոռթկումին, արհեստավարժ սենտիքաներ ստեղծուեցան բազմաթիւ կեդրոններու մէջ, յատկապէս Սելանիկի,— փառաւոր օրրանը օսմանեան Յեղափոխութեան, ուր մեր սլաւ ընկերները քանի մը տարիէ ի վեր սերմանած էին ընկերվարութեան եւ միջազգային զօրակցութեան գաղափարը։

Սահմանադրական կառավարութիւնը չուշացաւ իր դիրքը ճշդելու «նոր հոսանք»ին նկատմամբ։ Ընկերակցութիւններու հարցը արծարծուեցաւ Խորհրդարանի բեմէն, եւ նախարարը՝ Ֆերիտ փաշա կոթնած՝ նման խնդիրներու քիչ ծանօթ եւ հլու-հնազանդ մեծամասնութեան մը, արգիլեց սենտիքաները եւ տնտեսական ամէն կարգի կազմակերպութիւն։ Խափանուեցաւ նոյնպէս գործադուլներու ազատութիւնը։

Տրակոնեան այս միջոցառումները խարանող մեր երեք ընկերները միայնակ մնացին։ (Օսմանեան խորհրդարանին մէջ ընկերվարական 6 երեսփոխան կայ, բոլորը ոչ-մահմետական. 1 պուլկար եւ 5 հայ։ Այս վերջիններէն 4ը կը պատկանին մեր կազմակերպութեան)։

---

* *Մեր կուսակցութիւնը պարսկական Մեջլիսին մէջ եւս ունի իր ներկայացուցիչը։*

LA QUESTION AGRAIRE

Même attitude conservatrice à l'égard de ce grave et brûlant problème agraire qui domine la situation et la dominera pendant longtemps, la Turquie étant un pays essentiellement agricole. L'industrie moderne s'est plus ou moins développée dans la partie européenne de l'empire, alors que l'Anatolie est le pays de l'agriculture par excellence. La vie économique y est peu développée, les moyens modernes de communication manquent encore, les instruments de travail sont à l'état primitif, et même dans plusieurs endroits on est en pleine économie naturelle (Natural-wirtschaft). L'aspect général du pays est désolant; le régime hamidien, loin de contribuer à l'épanouissement des forces productives, les a, au contraire, desséchées, paralysées par une brutale politique de pillage, de spoliation, de massacre, de famine artificielle, d'émigration forcée. Le peuple arménien qui, dans son énorme majorité (95%), était voué depuis des siècles à l'agriculture et qui était un facteur puissant de la vie économique dans ces lointaines régions, ce peuple a été, comme on le sait, dépouillé, mutilé et paralysé économiquement, et c'est un immense préjudice pour la prospérité de l'Anatolie...

La question agraire se complique de *questions nationales*. Après les Vêpres de 1895-96, des centaines de mille de nos co-nationaux ayant émigré à l'étranger (principalement en Transcaucasie et en Amérique), les féodaux kurdes ont, avec l'approbation du gouvernement hamidien, saisi les terres des émigrés. Aujourd'hui, dans la libre Turquie, les expropriateurs ne veulent plus restituer ces terres à leurs anciens propriétaires; et les masses de paysans arméniens, rentrés dans leurs foyers, continuent de vivre dans la plus noire misère; pour le moment toutes nos protestations auprès du gouvernement constitutionnel demeurent sans résultat. La Jeune-Turquie, pour «libérale» et «égalitaire» qu'elle soit, ne veut cependant pas contrarier les velléités de la classe des hobereaux kurdes, très puissante encore, et qui est considérée dans les milieux des politiciens turcs comme le meilleur tampon contre la «poussée de l'arménisme». Malgré nos déclarations nettes et précises de vingt années, par lesquelles nous répudions catégoriquement toute idée de séparatisme, comme un non-sens politique, les dirigeants de la Turquie actuelle ne veulent pas abandonner complètement et franchement l'ancienne politique hamidienne à l'égard des Arméniens. Nous espérons cependant que la logique des choses et nos efforts finiront par vaincre toutes les difficultés qui se

Մահմետական երեսփոխաններու հսկայ մեծամասնութեան մէջ, ներկայիս, կուսակցութիւններու շատ տկար տարբերում մը կայ։ Եւ ինչ որ անհանգստացուցիչ է, գրեթէ ամբողջական բացակայութիւնն է քաղքենի դասակարգին (պուրժուազիա)։ Առաւել եւս, խօսք չի կրնար ըլլալ դեմոկրատ քաղքենիութեան մասին։

Սահմանադրութեան սկիզբը կար ազատական կուսակցութիւն մը, Ահրար անունով, տարբեր ազգութեանց ներկայացուցիչներէն կազմուած, աւելի համակրելի ծրագրով մը։ Իր դրօշին տակ կ'ուզէր համախմբել բոլոր անոնք, որոնք Թուրքիոյ փրկութիւնը կը տեսնէին ապակեդրոնացեալ կազմակերպութեան մը մէջ, ուր ազգութիւնները,— այնքան տարբեր իրենց բարքերով, լեզուներով, պատմութեամբ եւ զարգացման աստիճանով—, վայելեն առաւել կամ նուազ չափի ինքնավարութիւն մը, տեսակ մը՝ ինքնակառավարում։

Դժբախտաբար շուտ մարեցաւ այս կուսակցութիւնը՝ անուանարկուած անարժան անդամներու կողմէ, որոնք կապեր ունէին Եըլտըզի-Քիօշկի դահիճին հետ, եւ որոնց մեղսակցութիւնը՝ 1909 Ապրիլի պետական հարուածին մէջ՝ քողազերծուեցաւ։

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Միւնոյն պահպանողական կեցուածքը հողային ծանր ու հրատապ հարցին նկատմամբ, որ կացութեան վրայ կը տիրէ ու տիրական պիտի մնայ երկար ատեն, Թուրքիան ըլլալով էապէս երկրագործական երկիր մը։ Արդի ճարտարարուեստը առաւել կամ նուազ չափով զարգացած է կայսրութեան եւրոպական բաժնին մէջ, մինչդեռ Անատոլուն գերազանցապէս երկրագործական է։ Տնտեսական կեանքը քիչ զարգացած է հոն, հաղորդակցութեան արդիական միջոցներ դեռ չկան, աշխատանքային գործիքները նախնական են եւ բազմաթիւ վայրեր նախնադարեան-բնական տնտեսութեան վիճակի մէջ են. դժնդակ է ընդհանուր երեւոյթը երկրին. համիտեան վարչակարգը փոխանակ նպաստելու արտադրող ուժերու ծաղկումին, ընդհակառակն, զանոնք ցամքեցուցած, անդամալուծած է՝ թալանի, յափշտակութեան, ջարդի, արուեստական սովի, բռնագաղթի վայրագ քաղաքականութեամբ մը։ Հայ ժողովուրդը՝ որ իր հսկայական մեծամասնութեամբ (95%) դարերէ ի վեր երկրագործութեան նուիրուած էր եւ որ այս հեռաւոր շրջաններուն մէջ հզօր ազդակ էր տնտեսական կեանքին, այս ժողովուրդը, ինչպէս գիտէք, աւարի ենթարկուեցաւ, կոտորակուեցաւ եւ տնտեսապէս անդամալուծուեցաւ, եւ ասիկա մեծ կորուստ է Անատոլուի համար...

Հողային հարցը կը կնճռոտի ազգային հարցերով։ *1895-96ի կոտորածներէն ետք, մեր հայրենակիցներէն*

dressent devant la solution de la question agraire. Déjà, un mouvement se dessine aujourd'hui contre la «noblesse» kurde au sein même de la population musulmane. Suivant nos dernières informations, reçues de Van et de Mousch, un vif mécontentement et une fermentation se produit dans la masse paysanne kurde, des deux provinces, contre leurs patrons séculaires. Traitée jusqu'ici de vrai bétail humain, cette masse inerte de serfs moyenâgeux commence à protester et arrivera sûrement à faire valoir ses revendications... Une action solidaire des paysans kurdes, turcs et arméniens, exploités et opprimés par la même minorité féodale et parasite, n'est point chose impossible. Elle est déjà engagée dans la province d'Erzéroum...

LA PROPAGANDE SOCIALISTE

Pendant longtemps les questions nationales domineront la politique intérieure de la Turquie. Et ce fait rendra la propagande de l'internationalisme fort difficile. L'état arriéré du pays au point de vue économique et culturel est déjà un grand obstacle. Certes, d'ici une dizaine d'années, l'aspect du pays changera considérablement par suite de la création de chemins de fer et d'autres moyens de communications et de transports. Mais pour l'instant, l'état de la culture générale est misérable. Il faut aussi tenir compte des haines séculaires, des antagonismes de races et de religions.

Et néanmoins, nous sommes une légion aujourd'hui qui portons dans cet immense désert le drapeau du travail et du socialisme universel, le soutenant de notre parole vivante et de nos actes. Dans l'Anatolie même, l'idée socialiste, la propagande de notre programme maximum et minimum sort à l'heure qu'il est des milieux purement intellectuels pour faire son chemin dans les masses. Le grand combat pour la cause des déshérités a toujours sa puissante raison d'être, même dans un pays sans culture, sans économie, mais où les classes parasites – hobereaux, clergé, bureaucrates, usuriers, etc. – se distinguent par leurs appétits insatiables d'exploiteurs et d'oppresseurs.

En particulier, la propagande de l'idée de la *socialisation des terres*, la pierre angulaire de notre programme minimum, trouve un terrain relativement favorable dans ces régions (dans l'Arménie turque), où sont encore vivants les vestiges du communisme primitif.

Nombreuses sont les brochures que nous avons publiées durant les trois dernières années sur la théorie

հարիւր հազարներ արտասահման գաղթած ըլլալով (գլխաւորաբար Անդրկովկաս եւ Ամերիկա), քիւրտ աւատատէրերը, համիտեան կառավարութեան հաւանութեամբ, բռնագրաւեցին գաղթողներու հողերը։ Այսօր, ազատ Թուրքիոյ մէջ, յափշտակիչները չեն ուզեր իրենց հին տէրերուն վերադարձնել այդ հողերը։ եւ իրենց օճախները վերադարձած հայ շինական զանգւածները կը շարունակեն ապրիլ ամէնէն մռայլ թշուառութեան մէջ։ առ այժմ սահմանադրական կառավարութեան [կատարած] մեր բողոքները կը մնան ապարդիւն։ Երիտասարդ Թուրքիան, որքան ալ «ազատական» եւ «հաւասարական» ըլլալ, այսուհանդերձ չ'ուզեր գրգռել քիւրտ աւատատէր դասը՝ տակաւին շատ ուժեղ եւ որ թուրք քաղաքագէտներու շրջանակին մէջ կը նկատուի որպէս լաւագոյն պատուար «արմենիզմի շարժումին» դէմ։ Հակառակ քսան տարուան մեր յստակ եւ որոշ յայտարարութիւններուն, որոնցմով մենք կտրականապէս կը մերժէինք, իբր քաղաքականապէս անիմաստ՝ անջատողական ամէն գաղափար,— Թուրքիոյ այժմու ղեկավարները չեն ուզեր լքել ամբողջովին ու անկեղծօրէն, համիտեան նախկին քաղաքականութիւնը հայոց նկատմամբ։ Կը յուսանք, այսուհանդերձ, որ իրերու տրամաբանութեամբ եւ մեր ճիգերով պիտի յաղթահարուին ի վերջոյ հողային հարցի լուծման դէմ ցցուող դժուարութիւնները։ Արդէն, մահմետական ժողովուրդի ծոցին մէջ իսկ շարժում մը կը նշմարուի քիւրտ «ազնուականութեան» դէմ։ Վանէն եւ Մուշէն ստացած մեր վերջին տեղեկութեանց համաձայն, զօրաւոր դժգոհութիւն եւ խմորում մը առաջ կու գայ երկու նահանգներու քիւրտ գիւղացիութեան զանգուածին մէջ ընդդէմ բազմադարեան իրենց տէրերուն։ Ցարդ որպէս մարդկային անասուն գործածւած՝ միջնադարեան ճորտերու այս թուլակամ զանգւածը կը սկսի բողոքել եւ վստահօրէն պիտի յաջողի արժեցնել իր պահանջները...

Աւատատէր եւ մակաբոյծ միեւնոյն փոքրամասնութեան կողմէ շահագործուած եւ ճնշուած՝ քիւրտ, թուրք եւ հայ գիւղացիներու միասնական շարժում մը՝ անկարելի բան չէ բնաւ։ Սկսած է արդէն Էրզրումի նահանգին մէջ։

ԸՆԿԵՐՎԱՐ ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆԸ

Երկար ատեն ազգային հարցերը տիրական պիտի մնան Թուրքիոյ ներքին քաղաքականութեան մէջ։ Եւ այս իրողութիւնը շատ պիտի դժուարացնէ ընկերվար քարոզչութիւնը։ Տնտեսական եւ մշակութային տեսակէտէ երկրին յետամնացութիւնը արդէն մեծ խոչընդոտ մըն է։ Անշուշտ, մինչեւ տասը տարի, երկրին կացութիւնը նշանակալի կերպով պիտի փոխուի՝ երկաթուղիներու եւ հաղորդակցութեան ու փոխադրութեան միջոցներու ստեղծման հետեւանքով։ Ներկայիս

et la pratique socialistes, ainsi que sur les problèmes de l'organisation démocratique. Nous jouissons en Turquie, comme en Perse, d'une liberté assez large de la parole et de la presse, et ce fait facilite grandement la propagande.

A la Chambre même, durant la discussion sur les syndicats, nos camarades, voulant élargir et approfondir les débats, ont prononcé des discours où pour la première fois ils ont abordé la question des rapports entre le *Capital* et le *Travail*, soutenant éloquemment la cause du dernier. Ils firent l'éloge du prolétariat et des syndicats devant une assemblée ahurie et un gouvernement «misonéiste» qui par la bouche du ministre Férid pacha déclarait: «Notre pays n'a pas besoin de ces choses-là...».

Le pays ne suivra pas les préceptes du ministre turc; les grandioses meetings ouvriers de Salonique, protestant contre la campagne anti-syndicaliste, en étaient une preuve. Les syndicats et d'autres organisations ouvrières continueront à vivre et à grandir à l'ombre.

Tout récemment un journal socialiste turc *Ischtirak*, «Solidarité» a été fondé à Constantinople...

Le mouvement *travailliste* se concentre pour le moment dans la Turquie d'Europe, mais bientôt, avec la marche de l'évolution économique, il se répandra dans tout l'Empire, et nous saurons nous autres socialistes arméniens, turcs et slaves, organiser tôt ou tard notre petite *Internationale ottomane*, à la manière de nos camarades socialistes autrichiens.

** Un nouveau retour offensif de la contre-révolution n'est point considéré comme impossible dans l'empire des sultans... Malheureusement, il y a encore le cauchemar d'une guerre désastreuse, nourri, entretenu par les intrigues des puissances capitalistes.*

սակայն, ընդհանուր զարգացման վիճակը խղճալի է։ Պէտք է հաշուի առնել նաեւ բազմադարեան ատելութիւնները, ցեղերու եւ կրոններու հակամարտութիւնները։

Սակայն եւ այնպէս, այս անհուն անապատին մէջ, այսօր լեգէոն մըն ենք մենք, որ կը բարձրացնենք աշխատանքի եւ համաշխարհային ընկերվարութեան դրօշը, թիկունք կանգնելով անոր մեր կենդանի խօսքով եւ գործով։ Անատոլուի մէջ իսկ, ընկերվարութեան գաղափարը, մեր ծրագրի առաւելագոյն եւ նուազագոյն [մասերու] քարոզչութիւնը դուրս կու գայ այսօր սոսկ մտաւորականներու շրջանակներէն, մուտք գործելու համար զանգուածներէն ներս։ Ջրկեալներու դատին ի նպաստ մեծ պայքարը իր հզօր գոյութեան իմաստը ունի միշտ, նոյնիսկ առանց մշակոյթի, առանց տնտեսութեան երկրի մը մէջ, բայց ուր մակաբոյծ դասակարգերը,— աւատատէրեր, կղերականներ, դիւանակալներ, վաշխառուներ եւայլն—, կը փայլին շահագործողի եւ ճնշողի իրենց անյագուրդ ախորժակով։

Մասնաւոր կերպով, հողերու համայնացման գաղափարի քարոզչութիւնը,— մեր նուազագոյն ծրագրի անկիւնաքարը — համեմատաբար նպաստաւոր հող կը գտնէ (Թրքական Հայաստանի մէջ), ուր դեռ կենդանի են նախնական համայնավարութեան մնացորդները։

Վերջին երեք տարիներու ընթացքին բազմաթիւ են մեր հրատարակած գրքոյկները տեսական եւ գործնական ընկերվարութեան, ինչպէս նաեւ ժողովրդավարական կազմակերպութեան խնդիրներուն մասին։ Թուրքիոյ, ինչպէս եւ Պարսկաստանի մէջ խօսքի եւ մամուլի բաւական լայն ազատութիւն կը վայելենք, եւ այս իրողութիւնը մեծապէս կը դիւրացնէ քարոզչութիւնը։

Խորհրդարանին մէջ իսկ, սենտիքաներու մասին [եղած] վիճաբանութիւններու ընթացքին, մեր ընկերները՝ բանավէճերը ընդլայնելու եւ խորացնելու նպատակաւ, արտասանեցին ճառեր, ուր առաջին անգամ ըլլալով անոնք շօշափեցին Դրամագլուխի եւ Աշխատանքի միջեւ [գոյութիւն ունեցող] կապակցութեանց հարցը, պերճախօսութեամբ պաշտպանելով այս վերջինը։ Անոնք գովքը հիւսեցին աշխատաւորութեան եւ սենտիքաներուն՝ ապշահար ատեանի մը եւ որեւէ նորութիւն մերժող կառավարութեան մը առջեւ, որ նախարար Ֆերիտ փաշայի բերնով կը յայտարարէր. «Մեր երկիրը պէտք չունի այս բաներուն...»։

Երկիրը պիտի չհետեւի նախարարին պատուիրաններուն։ Սելանիկի բանուորներուն հսկայական գործաւորական միթինկները՝ բողոքելու համար կառավարութեան հակասենտիքայական արշաւին, ապացոյց էին ատոր։ Սենտիքաները եւ բանուորական ուրիշ կազմակերպութիւններ պիտի շարունակեն ապրիլ ու մեծնալ գաղտնաբար։

Բոլորովին վերջերս, Կոստանդնուպոլսոյ մէջ հիմնուեցաւ Թուրք ընկերվարական թերթ մը, Իշթիրաք (Համերաշխութիւն)...

ORGANISATION ET ACTION

Le parti «Daschnaktzoutioun» donne ainsi le spectacle d'une grande force, solidaire et vigilante, en action perpétuelle dans les trois Etats limitrophes, en Turquie, en Perse et en Russie; une force avec laquelle les gouvernements respectifs sont obligés de compter.

En Turquie, une sorte d'alliance défensive fut contractée l'an dernier entre le Comité ottoman «l'Union et Progrès» et notre organisation, en vue d'assurer le maintien du régime constitutionnel et le progrès normal du pays, contre les menaces de la vieille Turquie absolutiste*.

Dans l'*Arménie russe*, peu avant l'assaut de la réaction stolypinienne l'énorme majorité de notre peuple travailleur était dans les cadres du «Dachnaktzoutioun». Le parti présidait en quelque sorte aux destinées de la nation, en proie à toutes les forces ténébreuses et meurtrières.

Cette domination sur les masses, sans précédent dans notre histoire, nous permit, dans les années terribles de 1903-1907, de mener victorieusement nos luttes contre de puissants ennemis et de faire restituer à la nation ses institutions culturelles – les écoles, les biens de l'église entretenant ces écoles, la société pour la publication des livres, les sociétés de bienfaisance – qui étaient supprimés sous le régime plévéïen.

Dans l'*Arménie turque*, même caractère populaire d'organisation. Dans les provinces de Bitlis et de Van, les deux grands vilayets arméniens, nous avions jusqu'en 1908 sous notre drapeau, toute la population paysanne et valide, organisée en *groupes politiques*. (Les groupes politiques subsistent encore de nos jours, mais leur nombre est réduit).

Ces groupes étaient exercés pour la défensive et pour l'offensive. Dans chaque village, le parti choisissait 5-8 personnes de confiance, les plus expérimentées et les plus courageuses –souvent dans l'âge de 45 à 50 ans – et les chargeait de la haute surveillance. C'était la *bande mobile* ou *volante* qui avait pour tâche de subvenir aux multiples besoins des fidaïs, les transporter de lieu en lieu, assurer leur évasion en cas de poursuite et courir à l'aide des villages voisins particulièrement menacés par les hordes kurdes.

Il y avait à côté de cette bande mobile, d'autres groupes dans chaque village:

1. *Groupe militant*, au nombre de 30 à 50 hommes, chargé de rester toujours dans l'intérieur du village, pour le défendre en cas d'attaque.

2. *Groupe auxiliaire* ou «financier», chargé de trouver les ressources matérielles.

Աշխատաւորական *շարժումը առ այժմ կը կեդրոնանայ եւրոպական Թուրքիոյ մէջ, բայց շուտով, տնտեսական զարգացման ընթացքին հետ, պիտի տարածուի ամբողջ կայսրութեան մէջ, եւ մենք՝ հայ, թուրք եւ սլաւ ընկերվարականներս պիտի կարողանանք, ուշ կամ կանուխ, կազմակերպել մեր* օսմանեան Միջազգայնականը, *նման աւստրիացի մեր ընկերվարական ընկերներուն։*

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Դաշնակցութիւն կուսակցութիւնը կը յայտնուի ուրեմն մեծ ուժով, միասնական եւ աչալուրջ, մշտական գործի վրայ սահմանակից երեք պետութիւններու՝ Թուրքիոյ, Պարսկաստանի եւ Ռուսիոյ մէջ. այժ մը՝ զոր հաշուի առնելու ստիպուած են համապատասխան կառավարութիւնները։

Թուրքիոյ մէջ, անցեալ տարի տեսակ մը պաշտպանողական ուխտ կնքուեցաւ օսմանեան *Կոմիտէի եւ մեր կազմակերպութեան միջեւ՝ սահմանադրական վարչաձեւը եւ երկրի բնական զարգացումը պաշտպանելու համար ընդդէմ բացարձակապաշտ հին Թուրքիոյ սպառնալիքներուն*։

Ռուսական Հայաստանի *մէջ, ստոլիպեան վերջին գրոհէն քիչ առաջ, մեր աշխատաւոր ժողովուրդին մեծամասնութիւնը Դաշնակցութեան շարքերուն մաս կը կազմէր։ Կուսակցութիւնը ձեւով մը կ'առաջնորդէր ճակատագիրը ազգի մը, որ զոհն էր մթին եւ արիւնարբու բոլոր ուժերուն։*

Մեր պատմութեան մէջ աննախընթաց՝ զանգուածներու այս տիրապետումը, հնարաւորութիւն տուաւ մեզի 1903-1907 *սարսափելի տարիներուն յաղթականօրէն առաջ մղելու մեր պայքարը ընդդէմ հզօր թշնամիներու, եւ ազգին վերադարձնելու իր մշակութային հիմնարկութիւնները,— դպրոցները, դպրոցները մատակարարող եկեղեցական ինչքերը, հրատարակչական ընկերութիւնը —, որոնք բոլորը ջնջուած էին պլեւէական վարչակարգի օրով։*

Թրքական Հայաստանի *մէջ՝ ժողովրդական կազմակերպութեան միեւնոյն ձեւը։ Հայկական երկու մեծ վիլայէթներուն՝ Պիթլիսի եւ Վանի մէջ, մինչեւ* 1908 *թ. մեր դրօշին տակ ունէինք՝* քաղաքական խումբերու *ձեւին տակ կազմակերպուած՝ ամբողջ գործօն գիւղացիութիւնը (քաղաքական խումբերը կը մնան մինչեւ այսօր, բայց նուազ թիւով)։*

Այս խումբերը մարզուած էին պաշտպանողական եւ յարձակողական (նպատակներով)։ Իւրաքանչիւր գիւղի մէջ կուսակցութիւնը կ'ընտրէր վստահելի 5-8 *հոգի, ամէնէն փորձառուները եւ ամէնէն քաջերը, եւ անոնց կը վստահէր վերին հսկողութիւնը։ Ասիկա,* շարժուն կամ շրջուն *խումբն էր, որուն պարտականութիւնն էր հոգալ ֆետայիներու բազմապիսի կարիքները, փոխադրել զանոնք տեղէ տեղ, հետապնդումի պարագային՝ ապահովել անոնց փախուստը, եւ օգնութեան հասնիլ քիւրտ հրոսակներու կողմէ վտանգուած հարեւան գիւղերուն։*

Շարժուն այս խումբին կողքին կային ուրիշներ իւրաքանչիւր գիւղի մէջ։

1) Զինեալ խումբ, 30-50 *հոգիէ բաղկացեալ, միշտ գիւղին մէջ մնալու եւ վտանգի պարագային զայն պաշտպանելու համար։*

2) Օժանդակ *կամ «տնտեսական» խումբ, նիւթական միջոցներ [հասոյթ] ճարելու համար։*

3) Զինուորական խումբ, *զէնք հայթայթելու համար։*

4) Կանանց խումբ, *յատկապէս նամակներու փոխադրութիւնը, տարբեր բնակավայրերու միջեւ հաղորդակցութիւնը ապահովելու համար։*

Այս ձեւով էր կազմակերպուած շուրջ 100 *գիւղերէ բաղկացած Մշոյ ընդարձակ դաշտին հայ բնակչութիւնը. նոյնպէս՝ Սասունի, Վասպուրականի մէջ եւ այլուր։*

Մինչեւ 1908 *թ., Թուրքիոյ մէջ մեր կուսակցութեան գործունէութիւնը տեղի կ'ունենար գաղտագողի եւ գիշերները, [որովհետեւ] ընկերները չէին համարձակեր ցերեկը դուրս գալ։ Զէնքերու փոխադրութիւնը, քարոզչութիւնը (պրոպականդ), ժողովուրդին զինումը, զինավարժութիւնները, ամէն ինչ կը կատարուէր գիշերները։*

Այս գործունէութիւնը ուրեմն էապէս քաղաքական էր եւ յեղափոխական։

Ան կը շարունակուի այսօր, սակայն, բացայայտօրէն։ Թրքական Հայաստանի բոլոր կեդրոններուն, ինչպէս նաեւ կայսրութեան՝ հայերէ բնակուած բոլոր վայրերուն մէջ, մեր կուսակցութիւնը ունի «ֆետայական» խումբեր, որոնց միակ նպատակն է՝ արթուն հսկել որպէսզի յետադիմութիւնը գլուխ չբարձրացնէ։ Այդ դժուարին [բայց] անհրաժեշտ գործին մէջ, ամէն տեղ, իբրեւ գործակից ունի «Իթթիհատ»ի (Միութիւն եւ Յառաջդիմութիւն) Կոմիտէները։

Հակայեղափոխութեան տխուր օրերուն, Էրզրումի, Մշոյ, Պիթլիսի եւ Վանի մեր կոմիտէները մեծապէս նպաստեցին խաղաղութեան [պահպանման] գործին,— այնքան ուժգին խռովուած Կոստանդնուպոլսոյ անկարգապահ զօրքերուն կողմէ, [որոնք] դրդուած ու ղեկավարուած էին Եըլտըզ-Քէօշկէն։ Մեր ընկերը՝ Թոփչեան, վերջերս սպաննուած Էրզրումի մօտերը, ողբերգական այդ օրերուն, հանդիսացած էր նոյն քաղաքին մէջ Սահմանադրութեան ու հայութիւրք եղբայրակցութեան գաղափարին պերճախօս տարածիչը։

* *Սուլթաններու կայսրութեան մէջ հակայեղափոխական [վարչաձեւի] նոր վերադարձ մը, անհաւանական չէ բնաւ։ Դժբախտաբար, տակաւին գոյութիւն ունի աւերիչ պատերազմի մը մղձաւանջը՝ դրամատիրական մեծ տէրութեանց կողմէ մնուցուած եւ յարդարուած։*

3. *Groupe militaire*, pour procurer des armes.

4. *Groupe de femmes*, chargé spécialement d'assurer le transport des lettres, la correspondance entre les différentes localités.

De cette façon était organisée toute la population arménienne sur la vaste plaine de Mousch, environ 100 villages, de même à Sassoun, à Vaspourakan et ailleurs.

Jusqu'en 1908, l'activité de notre parti, en Turquie, s'exerçait clandestinement et nuitamment, les camarades n'osant pas sortir dans la journée. Le transport d'armes, la propagande, l'armement de la population, les exercices de tir, tout se passait à la faveur de la nuit.

Cette activité était donc essentiellement politique et révolutionnaire.

Elle continue aujourd'hui, mais ouvertement. Dans tous les centres de l'Arménie turque, ainsi que dans d'autres localités de l'empire, habitées par les Arméniens, notre parti a ses bandes de «fidaïs», dont le but unique est de veiller à ce que la réaction ne relève pas la tête. Dans cette tâche pénible et nécessaire, il a partout pour alliés les Comités d' «Ittihat» (Union et Progrès).

Pendant les tristes journées de la contre-révolution, nos comités à Erzeroum, à Mousch, à Bitlis et à Van ont grandement contribué à l'œuvre de la paix, troublée si violemment par la soldatesque de Constantinople, excitée et dirigée d'Ildiz-Kiosque. Notre camarade *Toptchian,* assassiné récemment près d'Erzeroum, fut dans cette ville, durant ces tragiques journées, l'éloquent propagateur de l'idée constitutionnelle et de la fraternité arméno-musulmane.

A Adana même, où le fanatisme sanguinaire de la population, une fois encore, fut déchaîné contre nous par les excitations du régime en agonie, nos camarades organisèrent l'œuvre de défense contre la plèbe, armée et soutenue par la réaction. Durant les premiers jours, ils réussirent à repousser l'assaut de la populace, et le drame se serait borné à peu de chose relativement (500 Arméniens tués et autant de Musulmans), si les troupes envoyées par le gouvernement central n'avaient pas trahi leur mission pacificatrice et ne s'étaient pas ruées sur la population arménienne, déjà désarmée par des promesses machiavéliques.

Notre organisation dans les différentes villes et provinces en Turquie se divise actuellement en:

1. Groupes politiques ou militants;
2. Unions de paysans;
3. Syndicats professionnels;
4. Unions coopératives (Coop. de consommation);
5. Unions d'intellectuels.

Ces derniers sont chargés de la propagande orale et écrite. Ils publient des journaux, créent des salles de lecture et des bibliothèques, organisent des meetings, souvent avec la participation des démocrates jeunes-turcs. A l'ordre du jour de ces nombreuses réunions figure presque toujours l'épineuse *question de races*. Sans cesse, les camarades prêchent la solidarité des peuples et l'entente de tous les sincères constitutionnalistes, en face du danger permanent de la contre-révolution.

Mais les questions sociales ne sont point négligées. Les «daschnaktzakans» sont convaincus que les réformes sociales et agraires, l'amélioration du sort des grandes masses musulmanes sont le moyen le plus efficace pour gagner ces masses ignorantes à la cause de la constitution et pour neutraliser une fois pour toutes les intrigues réactionnaires. Et nous développons sans cesse cette thèse fondamentale dans nos publications et dans nos meetings.

Dans les unions paysannes, comme dans les coopératives et les syndicats, nos propagandistes cherchent à éveiller la conscience de classe parmi les travailleurs et à les préparer pour les luttes futures. Ils leur apprennent à entrevoir et à comprendre, au-dessus des intérêts immédiats et en dehors de la satisfaction des besoins quotidiens, l'idéal final des luttes émancipatrices: le *socialisme*.

Lors des premières élections législatives, en 1908, dans la plateforme électorale du «Daschnakzoutioun» figuraient, entre autres, les revendications économiques suivantes:

1. Socialisation (communisation) de toutes les terres appartenant à la Couronne;
2. Remaniement radical du système fiscal, l'institution de l'impôt progressif sur les revenus et les successions;
3. Assurance par l'Etat contre les fléaux naturels;
4. *Réglementation du travail.*

Fixation de la durée du travail pour les ouvriers des usines et des fabriques; abolition du travail nocturne pour les femmes et les enfants; interdiction du travail aux enfants au-dessous de 15 ans; de 15 à 18 ans, limitation de la durée du travail à six jours; assurance des ouvriers, aux frais de l'Etat et des patrons, contre les accidents, la maladie, la vieillesse et le chômage forcé.

Ce n'est peut-être pas un programme à l'européenne, un vaste projet de réformes sociales; mais ce sont les premiers tâtonnements de la démocratie et du socialisme dans le sombre labyrinthe de l'Empire ottoman.

Ատանայի մէջ իսկ, ուր [Թուրք] ժողովուրդի արիւնռուչտ մոլեռանդութիւնը, հոգեվարքի մէջ գտնուող վարչակարգին գրգռութիւններով, անգամ մը եւս շըղթայազերծուեցաւ մեզի դէմ, մեր ընկերները կազմակերպեցին [ինքնա]պաշտպանութեան գործը՝ յետադիմութեան օգնութեամբ զինուած խուժանին դէմ։ Առաջին օրերուն, անոնք յաջողեցան ետ մղել ամբոխին գրոհը, եւ տրամը յարաբերաբար քիչ բանով պիտի փակուէր (500 հայ եւ նոյնքան մահմետական սպաննուած), եթէ կեդրոնական կառավարութեան ղրկած զօրքերը դաւաճանած չըլլային իրենց խաղաղարարի առաքելութեան եւ գրոհած չըլլային՝ արդէն մաքիաւելական խոստումներով զինաթափ եղած հայ ազգաբնակչութեան վրայ։

Ներկայիս, Թուրքիոյ տարբեր քաղաքներուն եւ նահանգներուն մէջ մեր կազմակերպութիւնը կը բաղկանայ.—

1) Քաղաքական եւ շարքային ընկերներու խումբերէն.

2) Գիւղացիական խումբերէ.

3) Արհեստակցական սենտիքաներէ.

4) Համագործակցական (սպառողական) միութիւններէ.

5) Մտաւորականներու միութիւններէ։

Վերջիններուն պարտականութիւնն է՝ բանաւոր եւ գրաւոր քարոզչութիւնը։ Կը հրատարակեն թերթեր, կը հիմնեն լսարաններ եւ գրադարաններ, կը կազմակերպեն, յաճախ երիտասարդ-Թուրք դեմոկրատներու հետ միասին, միթինկներ։ Բազմաթիւ հանդիպումներու օրակարգին վրայ գրեթէ միշտ կը գտնուի փչոտ «ցեղային հարցը»։ [Մեր] ընկերները անդադար կը ջատագովէին ժողովուրդներու զօրակցութիւնը եւ բոլոր անկեղծ սահմանադրականներու համերաշխութիւնը՝ հակայեղափոխութեան մնայուն վտանգին դէմ։

Ընկերային հարցերը, սակայն, մոռցուած չեն բնաւ։ Դաշնակցականները համոզուած են որ ընկերային եւ հողային բարեկարգումները, մահմետական մեծ զանգուածներու վիճակին բարելաւումը՝ ամէնէն ազդու միջոցներն են այս տգէտ զանգուածները սահմանադրական դատին սիրաշահելու եւ յետադիմական սադրանքները միանգամընդմիշտ չէզոքացնելու համար։ Եւ անդադար, մեր հրատարակութիւններուն մէջ եւ միթինկներու ընթացքին, կը զարգացնենք այս հիմնական խընդիրը։

Գիւղացիական միութիւններու, ինչպէս եւ համագործակցականներու եւ սենտիքաներու մէջ, մեր քարոզիչները կը ջանան աշխատաւորներու մօտ արթնցնել դասակարգային գիտակցութիւն եւ պատրաստել զանոնք գալիք պայքարներուն։ Անոնց կը սորվեցնեն տեսնել ու հասկնալ, անմիջական շահերէն վեր եւ առօրեայ կարիքներու գոհացումէն դուրս, ազատագրական պայքարներու վախճանական իտէալը,— ընկերվարութիւնը։

PRESSE ET LITTÉRATURE

La presse de «Daschnaktzoutioun» se compose des publications suivantes :

1. *Droschak* (le Drapeau), mensuel, organe central et théorique du parti, publié à Genève;
2. *Azatamart* (Lutte pour l'émancipation), grand journal quotidien, paraissant à Constantinople;
3. *Harradj* (En Avant!), paraissant deux fois par semaine à Erzéroum (Turquie);
4. *Aravot* (Le Matin), paraissant deux fois par semaine à Tebriz (Perse);
5. *Hayrenik* (Patrie), hebdomadaire, paraissant à Boston (Amérique du Nord).

Un grand nombre de livres et de brochures sont sorties de nos imprimeries durant les trois dernières années. En voici quelques-uns :

1. ARARATSKY, V.– Les partis politiques en Russie.
2. — Lettre de socialiste,
3. ABEGH.– Système électoral démocratique.
4. AKNOUNI.– Vers la lutte.
5. ANDRANIK. — Instructions militaires.
6. CHICHKO, L.– Le programme agraire et le socialisme scientifique. (Trad. du russe.)
7. — Programme minimum.
8. DOUMAN.– Organisation de la Défense.
9. JAURÈS, J.– La propriété bourgeoise et son expropriatiion future. (Extrait d'un discours.)
10. KAJAK. – La Fédération.
11. KAUTSKY, K.– La question nationale en Russie.
12. LASSALLE, F.– L'essence de la Constitution.
13. NICOLAIEFF.– Coopération.
14. SCHAHATUN.– Fédéralisme et principes démocratiques.
15. TADEVOS.– La grande Révolution.
16. TCHERNOFF, V.– A propos de la théorie de la lutte de classes. (Trad. du russe)
17. — Prolétariat et paysans.
18. TOPTCHIAN.– Syndicats professionnels.
19. VANDERVELDE, Emile.– La situation de la classe ouvrière en Belgique.
20. WARANDIAN. — La Regénération du peuple, notre rôle et nos devoirs.
21. Organisation de la Défense.
22. — Le parti «Daschnaktzoutioun» (Programme et tactique.)
23. — Le Spencérianisme devant la conception du monde moderne.
24. — La Vendée Tartare.
25. — Milices populaires.
26. ZAC.– La terre et le capitalisme. (Trad. du russe.)
27. ZAVARIAN. – Décentralisation.

Toutes ces publications traitent des questions de programme et de tactique.

De nouveaux livres et brochures sont en voie de publication à Constantinople et à Genève.

M. WARANDIAN

1908ի երեսփոխանական առաջին ընտրութիւններու ատեն, Դաշնակցութեան ընտրական յայտագրին մէջ, ի միջի այլոց, կը գտնուէին հետեւեալ պահանջները.

1- Ընկերայնացում (համայնացում) Գահին [թագաւորութեան եւ պետութեան] պատկանող բոլոր հողերուն։

2- Արմատական փոփոխութիւն հարկային սիստեմի, եկամուտներուն եւ ժառանգութեանց վրայ առաջադրական տուրքի հաստատում։

3- Պետական ապահովագրութիւն բնական աղէտներու դէմ։

4- Աշխատանքի կանոնակարգում։

Գործարաններու եւ գործատեղիներու բանուորներու աշխատանքի ժամերու ճշդում. կիներու եւ անչափահասներու գիշերային աշխատանքի ջնջում. արգելք մինչեւ 15 տարեկան հասակը տղաք աշխատցնելու։ 15-18 տարեկաններուն՝ աշխատանքի ժամանակի սահմանափակում։

Պետութեան եւ գործատէրերու ծախսով՝ բանուորներու ապահովագրում՝ արկածներու, հիւանդութեան, ծերութեան եւ գործազրկութեան դէմ։

Ասիկա թերեւս եւրոպական ձեւի յայտագիր մը չէ,— ընկերային բարեկարգումներու ընդարձակ ծրագիր մը, բայց ասոնք ժողովրդավարութեան եւ ընկերվարութեան առաջին խարխափումներն են՝ Օսմանեան կայսրութեան մթին լաբիւրինթոսին մէջ։

ՄԱՍՈՒԼ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Տեսնել կողքի սիւնակ, ֆրանսերէն բնագիրը։

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԳԼՈՒԽ V

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

1908 թ. Օսմանեան Սահմանադրութեան թեւակոխած առաջին մէկ տարուան, ինչպէս եւ Ատանայի կոտորածներուն մասին՝ «ՆԻՒԹԵՐ»ու Զ. հատորով լոյս ընծայած ենք արդէն մեծ թիւով վաւերագրեր (էջ 213-292): Հետագայ էջերով կը ներկայացուին շարք մը նորայայտ փաստաթուղթեր, որոնք յաւելեալ լոյս կը սփռեն Դաշնակցութեան եւ Իթթիհատի փոխ-յարաբերութիւններուն վրայ: Այս վերջինները, սկզբնապէս թէեւ հաշտ եւ որոշ չափով գործակցական, շատ չանցած սակայն լարուած բնաւորութեամբ պիտի յատկանշուէին, յատկապէս Ատանայի սարսափազդու կոտորածներուն առիթով երբ՝ Ապտիւլ Համիտի յետադիմական պետական հարուածին ձախողութենէն ետք, իշխանութեան գլուխ վերադարձած Իթթիհատը, պետական պաշտօնական խողովակներու օգտագործումով եւ այլ գաղտնածածուկ միջոցներով, շարունակեց համիտեան վարչակարգի վարքագիծը, ջանալով միջազգային հանրային կարծիքին մէջ տարածել այն միտքը, որ գործուած ահաւոր աղէտին մէջ թուրքերու հետ հաւասար, եթէ ոչ աւելի, ծանր պատասխանատուութիւն ունէին հայերը՝ իրենց գրգռիչ ընթացքով: Թուրք իշխանութեանց այս երկդիմի, յաճախ նաեւ հակահայ տեղեկատուութիւնը կ'ապակողմնորոշէր անշուշտ միջազգային հանրութիւնը, որուն հետեւանքով ալ ժամանակի եւրոպական եւ թուրք մամուլի էջերը՝ Կիլիկեան կոտորածներուն մասին, կը վխտան հակասական լրատուութեամբ եւ կասկածելի մեկնաբանութիւններով:

Այս իրողութեան դիմաց, Եւրոպայի մէջ «Դրօշակ»ի խմբագրութիւնը կը լծուի տենդոտ աշխատանքի, նպատակ ունենալով մէկ կողմէ՝ բացայայտել «սահմանադրական» կոչեցեալ թրքական իշխանութեանց դատապարտելի ընթացքը, միւս կողմէ՝ սրբագրել եւ ուղղել եւրոպական մամուլին թոյլ տուած խեղաթիւրումները:

Վերոյիշեալ հարցերուն վերաբերող փաստաթուղթերը կը պատկանին 1908-1909 տարիներուն. անոնց մեծագոյն մասը կը շօշափէ Ատանայի կոտորածներուն կապուած խնդիրներ: Առաջին բաժնին մէջ տրուած են 1908 թ., սահմանադրական շարժման առաջին օրերուն, «Դրօշակ»ի խմբագրութեան երեք նամակները յղուած երիտասարդ թուրքերու զոյգ հատուածներուն,– «Թերաքքը»ի եւ «Մեշվերէթ»ի: Երկրորդ բաժնի առաջին երկուքը (57-125 եւ 27-127) Արեւելեան Բիւրոյի կողմէ Ժընեւէն ուղարկուած գրութիւններ են Պոլսոյ Պատասխանատու մարմնին. ասոնք կը պատկանին Միք. Վարանդեանի գրչին. երրորդը՝ Փրօ-Արմենիայի ծանօթ խմբագրապետ Փիեռ Քիյառին ուղղուած նամակ է (1908 թ. Նոյեմբերին դադրեցուած էր թերթին հրատարակութիւնը): Ապա, երկրորդ եւ երրորդ բաժիններուն մէջ կը հետեւին շարք մը հեռագիրներ Պոլսոյ եւ Ժընեւի միջեւ փոխանակուած, ինչպէս նաեւ Արեւմ. Բիւրո-«Դրօշակ»ի հաղորդագրութիւնները եւրոպական մամուլին, քաղաքական պետական անձնաւորութեանց եւ թրքական իշխանութեանց:

Ֆրանսերէն բնագիրներուն հետ տրուած են հայերէն թարգմանութիւնները:

ԽՄԲ.

Ա.– ԵՐԵՔ ՆԱՄԱԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ

Մատեան թիւ 91, էջ 135

Ա 1.– ԹԵՐԱՔՔԸԻՆ

1908, le 21 juillet

[Terakki]
Chers camarades,

Nous avons reçu votre télégramme, auquel nous avons répondu immédiatement par une dépêche. Aujourd'hui nous avons reçu votre lettre.

Nous venons de recevoir en même temps une lettre de Paris par laquelle les camarades de Mechveret renoncent à aller à Vienne pour des motifs qui les retiennent à Paris. Nous avons télégraphié et écrit à notre camarade à Vienne pour l'avertir. Nous attendons la réponse.

N'est-il pas mieux de voir les camarades de Mechveret et de prendre une décision ensemble, afin que la réunion ne traîne plus en longueur?

Donc il faut attendre jusqu'à ce que une entente eut lieu sur le lieu de [la] réunion.

Salutations cordiales
RÉDACTION DU DROSCHAK

1908, 21 *Յուլիս*

Թերաքքիին[1]

Ստացանք ձեր հեռագիրը, որուն անմիջապէս պատասխանեցինք հեռագրալուրով մը: Այսօր ստացանք ձեր նամակը:

Միեւնոյն ժամանակ Փարիզէն ստացանք նամակ մը, որով Մեշվերէթի[2] *ընկերները, Փարիզ մնալու հարկադրանքին տակ, կը հրաժարին Վիեննա երթալէ: Հեռագրեցինք եւ գրեցինք Վիեննայի մեր ընկերոջ՝ զինք տեղեակ պահելու համար: Պատասխանի կը սպասենք:*

Աւելի լաւ չէ՞ տեսնուիլ Մեշվերէթի ընկերներուն հետ եւ միասնաբար որոշել, որպէսզի ժողովը չձգձգուի:

Ուրեմն պէտք է սպասել մինչեւ որ համաձայնութիւն մը գոյանայ ժողովատեղիին մասին:

Սիրալիր բարեւներով
«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

1.- Փարիզի մէջ իշխան Սապահեդտինի գլխաւորած երիտասարդ թուրքերու կազմակերպութիւն:
2.- Սիմէտ Ռիզայի խմբագրութեամբ Փարիզ հրատարակուող թերթ, երիտասարդ թուրքերու Իթթիհատ (Միութիւն) հատուածին պատկանող:

Մատեան թիւ 91, էջ 136

Ա 2.– ՄԵՇՎԵՐԷԹԻՆ

Այս գրութիւնը պատասխան-նամակ է Ահմէտ Ռիզայի 1908 թ. 17 Յուլիս թուակիր նամակին, որմով շնորհակալութիւն յայտնելով հանդերձ «Դրօշակ»ի խմբագրութեան շնորհաւորութիւններուն, հարց կու տար թէ ինչո՞ւ Դաշնակցութիւնը իր ուժերը շարժման մէջ չէր դներ, իբրեւ արձագանգ մակեդոնական զօրքի ապստամբութեան (տես «ՆԻՒԹԵՐ» Զ. հատոր, էջ 243)։ Կը հետեւի (Ա. 3) խմբագրութեան պատասխանը։

1908, le 21 juillet

[Mechveret]

Chers camarades,

Nous avons bien reçu votre lettre et nous répondons à vos propositions que nous considérons aussi importantes comme vous. Mais nous avons le regret à vous dire que nous ne pourrons pas les réaliser aussi vite que vous les désirez pour des raisons suivantes.

Vous savez bien les événements de Van et leur conséquence. A l'heure actuelle nos camarades sont aux prises avec les forces du gouvernement dans la montagne du sud de Van, et tout le vilayet est dessus-dessous. Comme vous voyez nos forces sont engagées dans une lutte, de sorte que les troupes ne peuvent quitter les vilayets d'Arménie.

Quant aux villes importantes que vous avez en vue pour y faire un coup faisant écho au mouvement révolutionnaire en Macédoine, nous avons la hâte de vous dire qu'à Constantinople ainsi qu'à Smyrne nos forces sont limitées par suite des arrestations malheureuses; nous sommes en état de préparation de l'organisation.

Nous ferons tout notre possible pour être prêt à une action à une éventualité quelconque. Nous avons écrit déjà à nos camarades qui sont chargés de cette tâche.

Si vous nous aviez prévenu à temps, avant que la révolution eut éclaté, nous ferions le nécessaire pour parer à cette éventualité qui nous a surpris.

Il faut, au point de vue pratique, mettre en accord les forces en action pour ne pas être surpris par les événements.

Profitant du mouvement révolutionnaire, il faut lancer une proclamation énergique et il faut la répandre, sans plus de retard, dans les populations de la Turquie avant que le gouvernement ait pris des mesures pour étouffer le mouvement qui a si admirablement commencé. Vous pouvez nous en envoyer en nombre pour répandre.

Nous avons l'espoir qu'avec persévérance et une bonne méthode de propagande active, le mouvement aura un écho retentissant et entraînera avec lui tous les éléments qui sont courbés sous le même joug d'une tyrannie détestable.

Cordiales salutations
RÉDACTION DU DROSCHAK

1908, 21 *Յուլիս*

[*Մեշվերէթին*]

Սիրելի ընկերներ,

Ստացած ենք ձեր նամակը եւ կը պատասխանենք ձեր առաջարկութեանց, զորս ձեզի պէս մենք եւս կարեւոր կը համարենք։

Քաջածանօթ էք Վանի դէպքերուն եւ անոնց հետեւանքին։ Ներկայիս մեր ընկերները ընդհարման մէջ են կառավարութեան ուժերուն հետ՝ Վանի հարաւի լեռներուն մէջ, եւ ամբողջ նահանգը տակնուվրայ է։ Ինչպէս կը տեսնէք, մեր ուժերը պայքարի մէջ են եւ գունդերը չեն կրնար լքել Հայաստանի նահանգները։

Գալով կարեւոր այն քաղաքներուն, զորս դուք նկատի ունիք՝ Մակեդոնիոյ յեղափոխական շարժման արձագանգելու նպատակով՝ այդ տեղերը եւս հարուած հասցնելու համար, կը փութանք ըսելու ձեզի, թէ Կոստանդնուպոլսոյ ինչպէս եւ Զմիւռնիոյ մէջ, ցաւալի ձերբակալութեանց հետեւանքով, մեր ուժերը սահմանափակ են. [այդ տեղերը] պատրաստուելու եւ կազմակերպուելու վրայ ենք։

Մեր կարելին պիտի ընենք՝ որեւէ պատահականութեան դիմաց՝ գործելու պատրաստ վիճակի մէջ գտնուելու համար։ Գրած ենք արդէն այդ գործին պատասխանատու մեր ընկերներուն։

Եթէ ատենին՝ նախ քան յեղափոխութեան պայթիլը, իմացուցած ըլլայիք մեզի, անհրաժեշտը ըրած պիտի ըլլայինք առաջքն առնելու համար այդ հաւանականութեան, որ մեզ անակնկալի բերաւ։

Գործնական գետնի վրայ, շարժման մէջ գտնուող ուժերը պէտք է միացնել, անակնկալի չգալու համար։

Յեղափոխական շարժումէն օգտուելով, պէտք է զօրեղ կոչ ուղղել եւ անյապաղ զայն տարածել Թուրքիոյ ազգաբնակչութիւններուն մէջ, նախքան որ կառավարութիւնը միջոցներ ձեռք առնէ խեղդելու շարժումը, որ սքանչելիօրէն սկսած է։ Տարածելու համար կրնաք մեծ թիւով ղրկել մեզի։

Կը յուսանք որ, յարատեւութեամբ եւ քարոզչական ազդու մեթոտով մը, շարժումը շառաչուն արձագանգ պիտի գտնէ եւ իր ետեւէն քաշէ՝ ատելի բռնատիրութեան մը տակ կքած բոլոր տարրերը։

Սիրալիր բարեւներով՝
«ԴՐՕՇԱԿ»ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Մատեան թիւ 91, էջ 147-147ա

Ա 3.– ՄԵՇՎԵՐԷԹԻՆ

1908, le 25 juillet

[Mechveret]
Chers camarades,

En répondant à votre appel en faveur des vaillants révolutionnaires qui mènent, en ce moment, la noble lutte de la justice et de la liberté en Macédoine, nous vous envoyons un petit don de 500 francs à cette fin. Nous espérons que votre appel patriotique sera accueilli par tout le monde qui tient à cœur le bien-être et l'amélioration du sort de la Turquie.

Les derniers dépêches nous informent que le sultan, forcé sans doute par les événements, a ordonné de convoquer la Chambre. Cette nouvelle est de nature à surprendre les gens qui sont sceptiques à l'égard de la bonne foi d'Abdul Hamid.

Il faut se garder d'être dupe et se faire illusion sur la promesse d'un souverain qui est connu pour ses mensonges et sa mauvaise foi. Il peut tirer parti des événements qui se passent en Russie et en Perse pour donner à un moment choisi, un coup à la Constitution qu'il vient d'accorder à contre-cœur, au pays. Il peut faire la même chose que firent les deux autocrates voisins, surtout lui qui a supprimé la première Constitution.

Donc, il faut être très clairvoyant pour mener à bonne fin le mouvement commencé. Il ne faut pas mettre bas les armes tant que le tyran n'a pas complètement désarmé pour être dangereux, autant que l'atmosphère n'est pas pacifiée et la foi rassurée.

Un compromis hâtif et quelque hésitation peut compromettre le beau geste et avoir une conséquence grave pour le but poursuivi.

Nous croyons fermement que les personnes qui ont la responsabilité de mener le mouvement – qui va admirablement d'ailleurs – aient assez de conscience pour couper les ailes à un élan magnifique en comptant sur les paroles d'Abdul Hamid.

C'est l'inauguration de l'histoire contemporaine de la Turquie; il faut mettre en bon champ.

N'est-il pas temps que le parti résolue et met catégoriquement ses revendications, en demandant en premier lieu, l'évacuation immédiates des prisons par la jeunesse condamnée pour le délit politique?

Vu l'expérience du passé et des événements récents qui se passent dans les autres pays, nous avons cru utile à vous faire part, en bon camarades, notre pensée et notre inquiétude.

Salutations cordiales,
RÉDACTION DU DROSCHAK

1908, 25 *Յուլիս*

[*Մեշվերէթին*]
Սիրելի ընկերներ,

Ի պատասխան ձեր կոչին [եւ] ի նպաստ յեղափոխական մարտիկներուն, որոնք յանուն արդարութեան եւ ազատութեան, Մակեդոնիոյ մէջ ներկայիս ազնիւ պայքար կը մղեն, այդ նպատակին 500 ֆրանքի փոքրիկ նուէր մը կը ղրկենք։ Կը յուսանք որ ձեր հայրենասիրական կոչը պիտի ընդունուի բոլոր անոնցմէ որ Թուրքիոյ վիճակին բարելաւումը կը բաղձան։

Վերջին հեռագրալուրերը կ'իմացնեն, որ Սուլթանը — անկասկած դէպքերու հարկադրանքին տակ — հրահանգած է խորհրդարանը ժողովի հրաւիրել։ Այս լուրը անակնկալ մըն է մարդոց համար՝ որոնք սկեպտիկ են Ապտիւլ Համիտի անկեղծութեան նկատմամբ։

Պէտք է զգուշանալ խաղի գալէ եւ խաբուելէ խոստումէն այնպիսի վեհապետի մը, որ յայտնի է իր սուտերով եւ խաբէութեամբ։ Ան կրնայ օգուտ քաղել Ռուսիոյ եւ Պարսկաստանի մէջ տեղի ունեցող դէպքերէն՝ պատեհ առիթով հարուածելու համար Սահմանադրութիւնը, զոր ակամայից շնորհեց երկրին։ Կրնայ ընել նոյնը, ինչ ըրին դրացի երկու ինքնակալները, մանաւանդ ի՛նք՝ որ խափանեց առաջին Սահմանադրութիւնը[3]*։*

Ուրեմն, պէտք է շատ յստակատես ըլլալ՝ յաջողութեամբ գլուխ հանելու համար սկսած շարժումը։ Պէտք չէ զինաթափ ըլլալ այնքան ատեն որ բռնակալը զէնքերը ամբողջովին վար չէ դրած, մանաւանդ որ մթնոլորտը մաքուր եւ ապահով չէ։

Վաղահաս զիջում մը եւ որեւէ վարանում կրնայ վտանգի ենթարկել այդ ազնիւ արարքը եւ ծանր հետեւանքներ ունենալ հետապնդուած նպատակին համար։

Մենք հաստատ կերպով կը հաւատանք, որ շարժումը — որ այլապէս սքանչելիօրէն առաջ կ'ընթանայ — առաջնորդելու պատասխանատուութիւնը ունեցող մարդիկ բաւարար չափով գիտակից կ'ըլլան՝ չկտրելու համար թեւերը՝ թափ առած սքանչելի շարժումի մը, [պարզապէս] հաւատք ընծայելով Ապտիւլ Համիտի խօսքերուն։

Թուրքիոյ ժամանակակից պատմութեան արշալոյսն է. հարկ է լաւ ճամբու վրայ դնել զայն։

Ատենը չէ՞ եկած, որ կուսակցութիւնը վճռէ եւ բացարձակ կերպով դնէ իր պահանջները, առաջին առթիւ՝ ազատ արձակումը երիտասարդութեան, բանտարկուած քաղաքական յանցանքի համար։

Նկատի ունենալով անցեալի փորձառութիւնը եւ ուրիշ երկիրներու մէջ տեղի ունեցող դէպքերը, իբրեւ լաւ ընկերներ, օգտակար համարեցինք տեղեկացնելու ձեզի մեր մտածումն ու մտահոգութիւնը։

Սիրալիր բարեւներով՝
«ԴՐՕՇԱԿ»ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

3.- Ակնարկութիւն՝ «միտհաթեան» անունով ծանօթ սահմանադրութեան, զոր Սայտիւլ Համիտ Բ. 1876 թ. իր գահ բարձրանալուն առիթով հռչակեց եւ որ երկու տարի չանցած պատերազմի պատրուակին տակ՝ ջնջուեցաւ։ Միեւնոյն այս Սահմանադրութիւնն է, որ 30 տարի ետք, այս անգամ գահէն ընդմիշտ զրկուելու վախին տակ, Համիտ վերստին լոյս աշխարհ կը բերէր։

Փաստ. 74-84

Ա 4.– ԹԵՐԱՔՔԸԻ ՊԱՏԱՍԽԱՆ-ՀԵՌԱԳԻՐԸ

27-7-1908

Droschak, Genève

Remerciements – Félicitations réciproques.

TERAKKI

Դրօշակին, Ժընեւ

Շնորհակալութիւն — Փոխադարձ շնորհաւորանքներ։

ԹԵՐԱՔՔԻ

Փաստ. 74-96

Ա 5.– ԵՐԻՏԱՍԱՐԴ ՕՍՄԱՆՑԻԷՆ ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

3 *Օգոստոս* 1908

Comité Fédération Arménienne, Genève

Des milliers manifestants de Constantza acclament et félicitent de toute leurs cœurs la grandeur et le succès de votre zèle qui a si dignement contribué au prix de tant sacrifice pour la réalisation de cette liberté désirée.

JEUNE OTTOMAN

Հ. Յ. Դաշնակցութեան, Ժընեւ

Հազարաւոր ցուցարարներ Կոստանցայէն սրտագին կ'ողջունեն վսեմութիւնը ձեր եռանդին, որ այնքան վեհօրէն եւ ի գին այնքա՛ն զոհողութեան՝ նպաստեց այս ցանկալի ազատութեան իրագործումին։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՕԹԹՈՄԱՆ

Բ.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԺԸՆԵՒԷՆ

Փաստ. 57-125

Բ 1.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻՆ

Ժընեւ, 4 Յունիս 1909

Սիրելիք,

Չնայած Հիլմի փաշայի[1] *հանդիսաւոր յայտարարութեան (ջարդի նախապատրաստութեան ու նրա իսկական հեղինակների մասին), չնայած եւ Ֆերիտ փաշայի*[2] *կողմից մեզ ուղղուած հաւաստիացումներին — թուրք կառավարութեանը, այնուամենայնիւ, հաճելի եղաւ թուրք ու այլ չարագործների հետ կախաղան հանել գրեթէ նոյն թուով հայերի... Մի անգամ եւս յուսախաբ եղանք, հաւատալով միամտաբար Ֆերիտի ու այլոց ծանուցումներին։ Խաչատուրը*[3] *վերջին նամակով հաղորդում է, որ* enquête-*ի*[4] *յանձնաժողովը անկախ չէ, թէ նա, ուրեմն, գործում է ներշնչումների տակ... Ո՞ւմ արդեօք։ Չէ՞ք կարծում, որ սարսափելի ոճիրները հայ ժողովրդի դէմ գործւում են նոյն մարդկանց հաւանութեամբ, որոնց հանդէպ դուք մեզ պատուիրում էք այնքան ծայրայեղ զգուշութիւն, պատուիրում էք չքննադատել, չյարձակուել։ Եւ գտնւում են նոյնիսկ ընկերներ, որոնք հակառակ են Եւրոպային ու դիւանագիտութեանը մեր արած ու անելիք դիմումներին։ Ինչպէ՞ս ելնել այս դժոխային վիճակից։ Թւում է, յամենայն դէպս, որ եթէ Իթթիհատական կուսակցութիւնը* անկեղծօրէն *կամենայ, չի թոյլ տայ եւ կ'արգիլէ հակահայկական այդպիսի ոճիրներ։*

Ուզեցինք մի նոր դիմումն անել հասարակական կարծիքին Ադանայի կախաղանների առթիւ, բայց ձեր veto-*ն կաշկանդում է մեզ։ Հակառակ էք եւ «Դրօշակում» զետեղուած յօդուածներին.— թէեւ ամենակատաղի մեղադրականը Իթթիհատի քաղաքականութեան դէմ հէնց դուք էիք ղրկել, կարծեօք Ռուբէնի*[5] *գրած,— որ տպուեցաւ «Դրօշակ»ի նախավերջին համարում։ Մեր գրածը նրանից ուժեղ չէ եւ երբ մենք գրում էինք մեր մեղադրականը, չգիտէինք, տարաբախտաբար, թէ ի՞նչ է անցնում ձեր եւ Իթթիհատի միջեւ. դուք չէիք հաղորդում, չնայած որ Միքայէլը*[6] *եւ միւս ընկերները շաբաթական յորդորում, խնդրում էինք ձեզ՝* au courant[7] *պահել մեզ ձեր բանակցութիւնների վերաբերմամբ, որպէսզի իրարու հակառակ քայլեր չանենք։ Այսօր էք միայն գրում, թէ Իթթիհատին մի գրգռէք։*

Կը խնդրէինք աւելի որոշ գրել մեզ ձեր կարծիքը մեր բռնելիք դիրքի մասին (Երիտ. Թուրքիոյ վերաբերմամբ)։ Կարծո՞ւմ էք լիրաւի, թէ պէտք է ի սպառ ձեռնպահ մնանք ամէն տեսակ դիմումներից ու քննադատութիւններից...

* * *

Մեր ղրկած 20 *հատորը*[8], *որ հեռագրով* urgent[9] *պահանջեցիք, ըստ երեւոյթին, դեռ մնում է ձեզ մօտ գրեթէ ամբողջապէս։ Խնդրում ենք* 5000-*ը առանց ուշացնելու ղրկել Սեբաստիայի ընկերներին, որոնցից ստիպողական նամակ ստացանք։ Մնացածը պէտք է նոյնպէս յանձնել Զիֆոնին*[10]։ *Նորից թախանձանօք խնդրում ենք՝ կազմակերպութեան սուղ միջոցները գործադրել վայրկեանի ամենածանր պահանջի՝ ինքնապաշտպանութեան վրայ։ Թերթը*[11] *այժմ հրատարակելու դէմ (երբ Ը[նդհանուր] Ժ[ողով]ը, գուցէ եւ Խորհուրդը, այնքան մօտ է) բողոքել ենք — ինչպէս երեւում է ապարդիւն — այժմ էլ շարունակում ենք բողոքել։ Դա կը լինի ոչ թէ ընկերովին եւ միաբանօրէն գործ տեսնելու ապացոյց, այլ մի պարզ ու անըմբռնելի կամակորութիւն։*

* * *

Պետերբուրգից ու Թիֆլիսից ստացած նամակներից երեւում է, որ ռուս կառավարութիւնը ուզում է ծանր կերպարանք տալ մերոնց գործին։ Բաւական է յիշել, որ Աւետիքին[12], *օրինակ, սպառնում է* 4-8 *տարի տաժանակիր աշխատանք. այդպէս է նա մեզ հաղորդում ուրիշների միջոցով։ Ցանցանքը...* La Haye-*ի խորհրդաժողովին ներկայանալն է... Գրեցինք, խնդրեցինք մեր բարեկամներին Պարիզ. գուցէ կարողանան Նելիտովի*[13] *միջոցով ազդել ուր հարկն է...*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՕ

Բրիւսէլի Միջազգայնական Սոց[իալիստական] Բիւրոյից խնդրում են մեզ՝ հաղորդել իրանց օմ. պարլամենդի սոցիալիստ անդամների թիւն ու անունները։ Խնդրում ենք անմիջապէս գրել մեզ այդ մասին. արդէն խոստացանք Բրիւսէլի սոցիալիստներին։ Նման դիմում եղել է մեզ՝ անգլիացի սոցիալիստների կողմից։

1.- Հիւսէին Հիլմի փաշա, մեծ վեզիր։
2.- Թուրքիոյ ներքին գործոց նախարար։
3.- Է. Ակնունին։
4.- Ֆրանսերէն՝ քննիչ։
5.- Հաւանաբար Ռուբէն Զարդարեանի։
6.- Վարանդեան։
7.- Ֆրանսերէն՝ իրազեկ, տեղեակ։
8.- 20 հազարը (ֆրանք)։
9.- Ֆրանսերէն՝ անյապաղ, կարեւոր։
10.- Զիֆուորական ֆոնտ, զէնք հայթայթող մարմին։
11.- Խօսքը կը վերաբերի Պոլսոյ մէջ «Ազատամարտ» օրաթերթի հիմնադրութեան ծրագին։
12.- Ա. Սհարոնեան։
13.- Ռուսիոյ դեսպանը Ֆրանսայի մօտ։

Փաստ. 57-127

Բ 2.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻՆ

Ժընեւ 6 Յունիս [1909]

Պատ[ասխանատու] մարմնին

Սիրելիք,

Անցեալ օրը ղրկուած է ձեզ դոկումենտի հարազատ պատճէնը։ Ժընեւի հիւպատոսը, Հայտար Բէյ, ինչպէս գրած էինք ձեզ, անձամբ եկած էր մեր խմբագրատուն — Ռիֆաթ փաշայի[14] *յանձնարարութեամբ։ Նա ինքը չեշտեց այդ եւ ցոյց տուեց մի գրութիւն արտաքին գործ. նախարարի՝ որ վերջինս թելադրում է հիւպատոսին՝ յանձնել մեզ Ֆերիտի*[2] *թեզքերէն։*

Այդ բոլորից յետոյ մեզ զարմացնում է մինիստրի կատեգորիկ հերքումը (տպուած հայ թերթերում)։ Դուք, ի հարկէ լաւ չէիք արել, որ չուտընդփոյթ մամուլին էիք յանձնել մեր երկտողը, իմանալով հանդերձ, որ այդ երկտողը բառացի արտագրութիւն չէր դոկումենտից եւ հետեւապէս անզգուշութիւն էր՝ այն ձեւով մամուլին յանձնելը։

Եւ հայ թերթերի, մանաւանդ «Մանզումէի» հրատարակածը իրաւ որ նման էլ չէր մեր ձեզ գրածին։ Մանզումէն մինչեւ իսկ չակերտներում էր դրել։

Մինիստրը, ինչպէս կը տեսնէք դոկումենտից, գրում է equivoque-*ով*[15]*։ Նա մի կողմից յայտարարում է, բացարձակապէս անհիմն* (absolument dénué de fondament) *այն լուրերը, որոնք պնդում են, իբր թէ թուրք կառավարութիւնը* rejette la faute sur les arméniens[16]*։ Միւս կողմից ծանուցում է մեզ, թէ յանցաւորները պիտի պատժուին* "sans distinction de race ni religion"*.— Այդ վերջին ֆրազով արդէն հասկացնելով, որ հայերը եւս կարող են ունենալ մեղքի բաժին։*

Ակամա՞յ, թէ դիտաւորեալ հակասութիւն — չգիտենք։

Պարիզի դեսպանը աւելի franc[17] *— անկեղծ էր,* Temps-*ին հաղորդած իր* note-*ի մէջ։*

Ադանայում 6 հայերի դէմ ուղղուած մահավճիռների առթիւ (դեռ բարեբախտաբար ի կատար ածուած չեն) աւելորդ չհամարեցինք հեռագրել Շեւքէթ փաշային[18]*, Ֆերիտին*[2]*, մեծ վեզիրին եւ* Chambre[19]*, նախագահութեան մի անգամ եւս կոչ անելով նրանց անաչառութեան ու արդարութեան զգացումներին։ Շեւքէթին առաջին անգամ ենք հեռագրում։*

Մամուլը սկսում է ընդարձակ նկարագրութիւններ տալ աղէտի մասին։ Matin-*ում լոյս տեսաւ Ադանայի յատուկ թղթակցի* (Scarfoglio) *մի մեծ ու յուզիչ թղթակցութիւն, որ արտասուքով ենք կարդում։ Դա մի աւելի բան է, եթէ անգամ միայն* 1/10-*ը ճիշտ լինի... Դանտէի Դժոխքը, անցեալ մեր բոլոր աղէտները խաւարում են դրա առջեւ։*

Սրտատրոփ սպասում ենք Սիմոնի[20] *գրութիւններին։ Մեր կողմից գոնէ չնուազեցնենք այդ հրէշաւոր կատաստրոֆի ծաւալը. դա իսկի* raisonnable[21] *բան չէ։* Berliner Tagablatte-*ը իր նշանաւոր* Wygind-*ի թղթակցութիւններով շարունակում է ցեխ թափել հայերի գլխին։ Այդ պարոնին հարկ էր մի լաւ խրատել։*

Ֆրանսերէն rapport-*ները կոտորածի մասին, որ դուք ղրկում էք, բովանդակալի եւ արժէքաւոր բաներ չեն։*

Բարեւներով՝
ԱՐԵՒՄ[ՏԵԱՆ] Բ[ԻՒՐՕ]

(Լուսանցքներու վրայ)

- Թէ բժ. Քեշիշեանի, թէ Կիլիկեանի, թէ Գալֆայի[22] *նամակները պնդում են միաբան, որ Կիլիկիայում Իթթիհատականները դահիճների դեր են խաղացել հայերի վերաբերմամբ... Ո՞ր օրուայ բարեկամներ են այդ պարոնները... Գալֆան Եգիպտոս է։ Իր ասելով՝ հետեւում են իրան։*

- Ինչ որ մութ դաւեր են նկատւում Չոք Մարգուանի, Զէյթունի շուրջը։ Աղաղակեցէք եւ թոյլ մի տաք, որ զինաթափ անեն։

- Ի դէպ «Արեւելքը» շատ անպիտան ձեւով է հրատարակում մեր հեռագիրները (մամուլին տրուած). չի էլ յայտնում, որ Temps-ից է թարգմանում, այլ հասկացնել է տալիս թէ մենք ենք իրան ուղարկում։ Եւ, վերջապէս, դա ի՞նչ դաշնակցական կուսակցութեան կենտրոն է... Միթէ չէք կարող բան հասկացնել դրանց։

Մատեան թիւ 91, էջ 462-463

Բ 3.– ՆԱՄԱԿ PRO-ARMENIA-Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ՊԻԵՌ ՔԻՅԱՌԻՆ

1909, le 27 avril

Cher Camarade

Les informations précises nous manquent malheureusement à cause de distance. Suivant une brève lettre de nos camarades de Mersine, il y a eu bataille acharnée à Adana et les pertes seraient également grandes des deux côtés. Cette lettre est écrite au commencement de la tragédie.

Le journal "Arevelk" affirme que les victimes sont environ 1000 dont un quart mahométans.

C'est dans le Vilayet que nos pertes paraissent énormes, à cause du nombre insignifiant des arméniens. Hadjine est à son tour assiégée. Nous espérons qu'elle résistera.

La détresse est grande. Le patriarcat a lancé un appel. On organisera peut être des secours aussi en Europe; en Suisse des démarches seront faites auprès comités arménophiles.

Voulez-vous nous informer, cher camarade, si l'ancien comité franco-arménien existe encore et peut-on s'adresser à lui? Naturellement ce n'est pas Droschak qui ferait cette démarche.

Si vous jugez utile à ce que nous nous adressions à cet effet à Bérard ayez la bonté de nous le dire.

Il y a une autre question non moins important. C'est l'éventualité de l'extension du massacre dans la Grande Arménie.

Il faudrait pour le prévenir, demander les gouvernements à être plus vigilants.

Nous avons télégraphié, il y a une dizaine de jours aux ministres des aff. étr. des puissances ainsi qu'à Mr. Lynch à Londres.

Un télégraphe a été envoyé aussi à [?]. Peut-être voudriez-vous nous mettre en communication avec ce dernier.

Nous vous prions, cher camarade, de faire le nécessaire dans ce moment critique et nous donner des conseils.

Les camarades de Constantinople sont sains et saufs.

Salutations fraternelles
REDACTION DU DROSCHAK

1909, *Ապրիլ* 27

Սիրելի ընկեր,

Դժբախտաբար, հեռաւորութեան պատճառով, ճշգրիտ տեղեկութիւններ չունինք։ Ըստ մեր ընկերներէն [ստացուած] կարճ նամակի մը, բուռն ճակատամարտ մը տեղի ունեցած է Ատանայի մէջ, եւ կորուստները հաւասար կերպով մեծ եղած են երկուստեք։ Այս նամակը գրուած է ողբերգութեան սկիզբը։

«Արեւելք» օրաթերթը կը հաստատէ որ զոհերը չուրջ 1000 *են, որոնց մէկ քառորդը՝ մահմետականներ։*

Մեր կորուստները կը թուի թէ Վիլայէթի [շրջաններուն] մէջ հսկայական են՝ հայերու աննշան թուի պատճառով։ Հաճընը, իր կարգին, պաշարուած է։ Կը յուսանք որ պիտի դիմադրէ։

Տագնապը մեծ է։ Պատրիարքարանը կոչ մը ուղղած է։ Թերեւս Եւրոպայի մէջ ալ պիտի կազմակերպուի օգնութեան [գործը]։ Զուիցերիոյ մէջ դիմումներ պիտի ըլլան հայասէր կոմիտէներուն։

Կ՚ուզէ՞ք մեզ տեղեկացնել, սիրելի ընկեր, թէ Ֆրանս-հայկական նախկին կոմիտէն գոյութիւն ունի տակաւին, եւ կրնա՞նք դիմել իրեն։ Բնականաբար «Դրօշակ»ը չէ որ պիտի ընէր այդ դիմումը։

Եթէ օգտակար կը դատէք, որ այդ նպատակով դիմենք Պեռարին[23]*, բարի եղէք մեզի յայտնելու։*

Ուրիշ հարց մը կայ, ոչ նուազ կարեւոր, այն է՝ ջարդին Մեծ Հայքի մէջ տարածուելու հաւանականութիւնը։

Կանխաւ անոր առաջքն առնելու համար, [եւրոպական] կառավարութիւններէն պահանջելու է աւելի արթուն ուշադրութիւն ցոյց տալ։

Տասը օր առաջ հեռագրեցինք պետութիւններու արտաքին գործոց նախարարներուն, ինչպէս նաեւ Լոնտոն՝ պարոն Լինչին[24]*։*

Հեռագիր մը ղրկուեցաւ նաեւ [անունը անընթեռնելի]։ Թերեւս այս վերջինին հետ պիտի ուզէիք հաղորդակցութեան մէջ մտնել։

Կը խնդրենք ձեզմէ, սիրելի ընկեր, անհրաժեշտը ընել այս տագնապալի պահուն, եւ մեզի խորհուրդներ տալ։

Կոստանդնուպոլսոյ ընկերները ողջ եւ ապահով են։

Եղբայրական ողջոյններով՝
«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

14.- Թուրքիոյ արտաքին գործոց նախարար։
15.- Ֆրանսերէն՝ երկդիմի, երկիմաստ։
16.- Ֆրանսերէն՝ «յանցանքը կը նետէ հայերուն վրայ»։
17.- Ֆրանսերէն՝ անկեղծ, շիտակ։
18.- Թուրք ազատարար բանակի հրամանատար։
19.- Ֆրանսերէն՝ Ազգ. ժողով, խորհրդարան։
20.- Սիմոն Զաւարեանի, որ այդ օրերուն քննական շրջապտոյտի ելած էր դէպի Կիլիկիա։
21.- Ֆրանսերէն՝ տրամաբանական։
22.- Կիլիկիոյ դաշնակցական գործիչներ։

23.- Ֆրանսացի քաղաքական ազդեցիկ գործիչ, Ծերակոյտի անդամ, Դաշնակցութեան բարեկամ եւ գործակից։
24.- Հենրի Լինչ՝ Մեծն Բրիտանիոյ համայնքներու պալատի անդամ։

Գ.– ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԵՒ ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ. 1

Դրոշակի խմբագրութեան, Ժընեւ

Փաստ. 74-182

18 *Ապրիլ* 1909

Ville tranquille – Avons réuni tous partis ottomans pour défendre Constitution – Déclaration publiée hier – bonne santé.

BEMEN

Պալատը [սուլթանին] հանդարտ – հաւաքեցինք [ժողովի] օսմանեան բոլոր կուսակցութիւնները Սահմանադրութիւնը պաշտպանելու համար – Յայտարարութիւնը հրատարակուեցաւ երէկ – Առողջութիւն։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Գ. 2

Այս հեռագիրը տրուեց Անգլիոյ, Ֆրանսիայի ու Իտալիայի Արտ. գործերի մինիստրներին Ադանայի եւ շրջակայքի հայկական ջարդերի տպաւորութեան տակ։ Սրանց պատճէնները՝ Կլեմանսոյին եւ Լինչին։

Մատեան թիւ 55

19 *Ապրիլ* 1909

D'après nos renseignements particuliers massacres d'arméniens du Vilayet Adana menacent s'étendre à autres régions d'Arménie. Nous attirons attention de votre Excellence sur ces graves événements et prions votre gouvernement intervenir pour éviter plus grands malheurs.

RÉDACTION DROSCHAK
ORGANE DU PARTI FÉDÉRATION ARMÉNIENNE

Մեզի [հասած] մասնաւոր տեղեկութեանց համաձայն, Ատանա վիլայէթի հայերու ջարդը կը սպառնայ տարածուիլ Հայաստանի այլ շրջաններուն վրայ։ Ձերդ վսեմութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք այս դէպքերուն վրայ եւ կը խնդրենք ձեր կառավարութեան միջամտութիւնը առաջքը առնելու համար աւելի մեծ դժբախտութիւններու։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի
Պաշտօնաթերթ Հ. Յ. Դաշնակցութեան

Գ. 3

Դրոշակի խմբագրութեան, Ժընեւ

Փաստ. 74-185

27 *Ապրիլ* 1909

Abdication déclarée – Argent, lettres reçus – Rassurez-vous – Félicitations.

BEMEN

[Սուլթանին] հրաժարականը յայտարարուած – դրամ, նամակ ստացուած – Ապահով եղէք – Շնորհաւորութիւններ։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Գ. 4

Հեռագիր Սուլթան Համիտի գահավիժման առթիւ Օսմանեան Խորհրդարանին

Մատեան թիւ 55

1909, *Ապրիլ* 28

Assemblée Nationale Ottomane,

Félicitons sincèrement triomphe de liberté sur despotisme sanguinaire – Turquie renaissante a effacé par geste noble et fier tout un règne de honte et de crime – Daschnakzoutioun qui a combattu longues années régime tyrannique respecte souvenir des braves qui ont forgé les pages lumineuses de notre pays et sont ensevelis de gloire sous les plis du drapeau de liberté.

REDACTION DROSCHAK

Օսմանեան Ազգային Խորհրդարանին,

Անկեղծօրէն կը շնորհաւորենք ազատութեան յաղթանակը արիւնարբու բռնակալութեան դէմ – վերածընող Թուրքիան, ազնիւ եւ հպարտ արարքով մը, մաքրեց ամօթալի եւ ոճրագործ իշխանութիւն մը – Դաշնակցութիւնը, որ երկար տարիներ պայքարեցաւ բռնակալ վարչակարգին դէմ, կը յարգէ յիշատակը այն քաջերուն, որոնք արձանագրեցին մեր երկրի լուսաւոր էջերը եւ [որոնք] փառքով պատանքուած են ազատութեան դրօշի ծալքերուն մէջ։

«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. 5

Հեռագիր Պատասխանատու [Մարմնին]

Մատեան թիւ 55

1909 *Ապրիլ* 28

Félicitons avec joie tous camarades pour triomphe de liberté. Prions en faire part camarades turcs – Avons félicité Assemblée Nationale.

Ուրախութեամբ կը շնորհաւորենք բոլոր ընկերները ազատութեան յաղթանակին համար – կը խնդրենք այդ առթիւ իմացնել թուրք ընկերներուն – Շնորհաւորեցինք [արդէն] Ազգային Խորհրդարանը։

Գ. 6

Հեռագիր Սարգիս Մինասեանին[25], Ժընեւ

Փաստ. 74-188

30 *Ապրիլ* 1909

Adressez Centrale Croix Rouge recommander Section Constantinople pour organisation et envoie corps sœurs, médecins etc. Adana – faites nous savoir résultat et adresse section Constantinople.

PEMAINE

Դիմեցէք Կարմիր խաչի կեդրոնին [որպէսզի] Կոստանդնուպոլսոյ մասնաճիւղին յանձնարարէ կազմակերպելու եւ Ատանա ուղարկելու բոյժքոյրերը, բժիշկներ եւայլն։ Իմացուցէք մեզի արդիւնքը եւ Կոստանդնուպոլսոյ մասնաճիւղին հասցէն։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Գ. 7

Հեռագիր Արեւմտեան Բիւրոյին

Փաստ. 74-189

1 *Մայիս* 1909

Formation bientôt nouveau cabinet – Réorganisation administrative provinces – question principale nouvelles troubles Adana –démarches aujourd'hui parlement, cabinet, généralissime – intention expédier cour martiale Adana pour Cilicie – actuellement pas besoin.

BEMEN

Ի մօտոյ նոր կառավարութեան կազմութիւն – վարչական վերակազմակերպում նահանգներու – գլխաւոր հարցը՝ Ատանայի նոր խռովութիւնները – Այսօր դիմումներ Խորհրդարանին, կառավարութեան, սպարապետին – Կիլիկիոյ [աղէտին] համար Ատանա զինուորական ատեան ուղարկել պէտք չկայ [պէտք չի տեսնուիր] ներկայիս։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

25.- Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյի անդամ, ծանօթ Արամ-Աշոտ ծածկանունով։

ԺԸՆԵՒ ՍՏԱՑՈՒԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Գ. 8

Փաստ. 74-192

5 *Մայիս* 1909

«Դրօշակ»ի խմբագրութեան,

Nouvelles Cilicie mauvaises – gouvernement accepte envoyer cour martiale, force militaire, argent – malheureusement armée locale est désorganisée – situation troublée dans quelques villes Anatolie – Attirez attention nos amis Paris.

PEMAINE

Կիլիկիոյ լուրերը գէշ են։ Կառավարութիւնը կ'ընդունի ուղարկել զինուորական ատեան, զինեալ ուժեր, դրամ – դժբախտաբար տեղական զօրքը կազմալոյծ է – կացութիւնը խառնակ է Անատոլիոյ կարգ մը քաղաքներուն մէջ – հրաւիրեցէք Փարիզի մեր բարեկամներուն ուշադրութիւնը։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Գ. 9

Փաստ. 74-198

5 *Մայիս* 1909

Nombre victimes Adana pas plus quatre mille – nombre malades, affamés, blessés quinze mille – nous avons posé question indemnité – parlement décida envoyer commission mixte deux turcs deux arméniens – Autorité Adana veut rejeter responsabilité sur fédaïs imaginaires – dépêches reçues de Mousch, Erzéroum sont inquiétantes – chefs kurdes Mousch se déclarent pour ancien régime – aujourd'hui députation arménienne se présentera au sultan pour demander céation milice arménienne, Etat siège continue [?] – confiance générale faible.

MAINE

Ատանայի զոհերուն թիւը չորս հազարէն աւելի չէ – հիւանդներու, սովեալներու, վիրաւորներու թիւը՝ 15 հազար – հատուցման հարց դրինք – Խորհրդարանը որոշեց խառն յանձնաժողով ուղարկել, երկու թուրք երկու հայ – Ատանայի իշխանութիւնը կ'ուզէ պատասխանատուութիւնը նետել երեւակայական ֆետայիներու վրայ – Մուշէն, Էրզրումէն ստացուած հեռագիրները մտահոգիչ են – Մշոյ քիւրտ [ցեղա]պետները հին վարչակարգի կողմնակից կը յայտնուին – Այսօր հայ երեսփոխանները պիտի ներկայանան Սուլթանին պահանջելու համար՝ հայկական քաղաքազօրի ստեղծում, կրակմարի դրութեան շարունակութիւն [?] – ընդհանուր վստահութիւնը տկար է։

[ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ] ՄԱՐՄԻՆ

Գ. 10

Հեռագիրներ Ֆրանսիայի, Անգլիայի եւ Իտալիայի արտ. գործ. մինիստրներին եւ député-ներին [երեսփոխաններին],– Ժորէս, Ռուանճ, Սեմբա, Կոշէն, Բեռար, Լինչ, Տրէվէյլան, Օգրեվի, Քիսօլարի, Քրատիլայի եւայլն։

Մատեան թիւ 55

1909, *Մայիս* 6

Recevons aujour'hui télégramme alarmante situation Arménie. Massacre étend autres districts. Autorités locales complices. Troupes désorganisées. Au nom humanité veuillez arrêter par énergique intervention ces horribles boucheries.

FEDERATION ARMENIENNE

Այսօր կը ստանանք ահազանգիչ հեռագիր Հայաստանի կացութեան [մասին]։ Ջարդը կը տարածուի ուրիշ գաւառներու վրայ։ Տեղական իշխանութիւնները մեղսակից։ Զօրքերը կազմալոյծ։ Ցանուն մարդկութեան ջանացէք զօրեղ միջամտութեամբ կասեցնել այս ահռելի սպանդները։

ՀԱՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գ. 11

Հեռագիր քաղաքական դէմքերու

Մատեան թիւ 55

1909, *Մայիս* 15

Հեռագիր՝

Stephens Pichon, ministre, Clémenceau, député Denis Cochin, Pressensé, Sembat, Pelletan, Président Chambre Brisson, Sénateur Bérard.

Nos informations d'accord avec celles presse européenne constatant complicité gouvernement, troupes dans effroyables boucheries Adana province. Second massacre 25 Avril fut opéré par troupes mêmes envoyées de Dédéagatch pour réprimer désordres. Scènes atrocités inénarrables. Toute Cilicie ruinée, famine, misère tragique. Présence navires européennes pas empêché tueries. Vigilence Europe indispensable pour châtier auteurs massacre. Partout, Erzéroum, Van, Mousch autorités, troupes sont arménophobes hamidiennes. Dans ces conditions un avertissement énérgique seul devant Chambres pourrait conjurer immenses hécatombes. Nous vous adjurons au nom humanité faire nécessaire dans ce moment tragique. Moyen plus efficace serait engager responsabilité personnelle gouverneurs, chefs militaires provinces arméniennes.

FEDERATION ARMENIENNE

1909 *Մայիս* 15

Նախարար Ստեֆան Փիշոն, Քլեմանսօ, երեսփոխաններ՝ Տընի Քոշէն, Փրեսանսէ, Սեմպա, Փելլըթան, Ազգ. ժողովի նախագահ Պրիսոն, ծերակուտական Պեռար։

Մեր տեղեկութիւնները կը միաբանին եւրոպական մամուլին եւ կը հաստատեն կառավարութեան եւ զօրքին մեղսակցութիւնը Ատանայի նահանգին սարսափելի ջարդերուն մէջ։ 25 Ապրիլի երկրորդ ջարդը գործուած է այն է զօրքերուն իսկ կողմէ, որոնք ուղարկուած էին Տէտէաղաճէն անկարգութիւնները զսպելու համար։ Խժդժութեանց տեսարանները աննկարագրելի են։ Ամբողջ Կիլիկիան աւերակ, սովն ու թշուառութիւնը՝ ողբերգական։ Եւրոպական նաւերու ներկայութիւնը արգիլած չէ ջարդերը։ Եւրոպայի գործօն հսկողութիւնը անհրաժեշտ է պատժելու համար ջարդին հեղինակները։ Ամէն տեղ, Էրզրում, Վան, Մուշ իշխանութիւնները եւ զօրքերը [բաղկացած են] համիտեան հայատեաց մարդոցմէ։ Այս պայմաններուն տակ Խորհրդարաններուն մէջ զօրեղ ազդարարութիւն մը միայն պիտի կարենար հեռացնել հսկայ արիւնահեղութիւնը։ Ցանուն մարդկութեան ողբերգական այս պահուն կը թախանձենք որ ընէք անհրաժեշտը։ Ամէնէն ազդու միջոցը պիտի ըլլար՝ անձնական պատասխանատուութեան ենթարկել հայկական նահանգներու կառավարիչներն ու զինուորական պետերը։

ՀԱՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գ. 12

Հեռագիր Դրօշակի խմբագրութեան

Փաստ. 74-200

18 *Մայիս* 1909

Actuellement pas graves événements provinces – Vali Adana veut rejeter responsabilités sur arméniens, procédés ancien régime répétent – Faut prévenir Pierre et ses amis.

MAINE

Ներկայիս ծանր դէպքեր [չկան] գաւառներուն մէջ – Ատանայի վալին պատասխանատուութիւնները կը նետէ հայերուն վրայ,– կը կրկնեն հին վարչակարգի հնարքները – Պէտք է կանխազգուշացնել Փիեռը [Փիյառ] եւ իր բարեկամները։

[ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ] ՄԱՐՄԻՆ

Գ. 13

Հեռագիր եւրոպական մամուլին

Մատեան թիւ 55

1909 *Մայիս* 24

Հետեւեալ հեռագիրը տրուեց Պարիզի թերթերին իբր պատասխան օսմանեան դեսպանի յայտարարութեան, թէ Եւրոպայի հայ կոմիտէները զրպարտում են սահմանադրական կառավարութեան՝ նրան մեղադրելով հեղինակ Ադանայի ջարդերի։

Հեռագիր Պարիզի բոլոր թերթերին

Regrettons devoir protester contre la note de l'Ambassade Ottomane Paris, communiquée journal Temps, faisant écho aux rumeurs répandues primitivement par les organisateurs même des tueries arméniennes, l'Ambassade déclare que les responsabilités massacres Adana sont partagées entre musulmans et arméniens et cherche faire croire que notre Comité voulait discréditer le gouvernement constitutionnel Ottoman, en protestant en face Europe contre une pareille énormité. Il est vraiment prodigieux qu'après tant de témoignages de la part des représentants du nouveau régime, constatant unanimement que les massacres Adana furent préparés, organisés par réaction hamidienne avant coup 13 avril, le gouvernement actuel veuille partager les responsabilités et cherche les arméniens parmi les instigateurs de ces horribles boucheries.

On sévit contre les arméniens qui se sont défendus; on les identifie sûrement avec malfaiteurs professionnels. Une centaine d'arméniens emprisonnés. On cherche désarmer la population arménienne à Dortyol et partout où elle est en état de se défendre.

Ces faits provoquent douloureuse surprise, stupéfaction dans les milieux arméniens. Nous ne pouvons rester indifférents, lorsque après atrocités inénarrables, commises par populace soldatesque, commandées par fonctionnaires abrutis, on tient incriminer, sévir contre les victimes.

Notre propre responsabilité nous oblige de dénoncer ces faits à l'opinion européenne. Seule la répression juste et impartiale peut calmer, réconforter le pays et prévenir les récidives.

DROSCHAK
Organe du Comté Arménien

Թարգմանութիւնը բաղուած «Դրօշակ»ի 1909 թ. թիւ 5էն, էջ 58։

Կը ցաւինք որ հարկադրուած ենք բողոքել Պարիզի օսմ. դեսպանատան կողմէ Մայիս 24-ին, Temps*-ին հաղորդուած ծանուցագրին դէմ։ Արձագանգ տալով հայկական ջարդերու կազմակերպողներու նախապէս տարածած լուրերուն՝ դեսպանը կը յայտարարէ որ Ատանայի ջարդերուն պատասխանատուութիւնը կը բաժնուի միւսիւլմաններուն ու հայերուն միջեւ եւ կ'ուզէ հաւատացնել որ իբր մեր կոմիտէն կը ջանայ վարկաբեկել օսմանեան սահմանադրական կառավարութիւնը։*

Խիստ չլսուած բան է, որ այնքան վկայութիւններէ յետոյ, նոյնիսկ նոր ռեժիմի ներկայացուցիչներու կողմէ, որ միաբերան կը հաստատեն թէ կոտորածները Ապրիլ 13-ի պետական հարուածէն առաջ սարքուած էին Համիդի պաշտօնեաներէն, արդի կառավարութիւնը տակաւին կը ջանայ պատասխանատուութիւնները կիսել եւ հայեր տեսնել սոյն ահռելի կոտորածներու թելադրիչներուն մէջ։ Խիստ միջոցներ ձեռք կ'առնեն հայերուն դէմ եւ կ'ուզեն անպատճառ զանոնք արհեստով չարագործներուն նոյնացնել։ կ'աշխատին զինաթափ ընել հայ ժողովուրդը Ջօք-Մարզուանի մէջ եւ ամէն տեղ, ուր որ ինքնապաշտպանուելու վիճակի մէջ է։

Այս իրողութիւնները հայ շրջանակներու մէջ ցաւալիօրէն զարմանք եւ ապշութիւն կը պատճառեն։ Մենք չենք կրնար անտարբեր մնալ, երբ կը տեսնենք, որ այնքան սարսափելի նախճիրներէ, ամբողջ նահանգներ աւերաւերակ ընելէ եւ խուժանին ու անբան պաշտօնեաներու հրամանին տակ եղող զինուորներու կողմէն անպատմելի խժդժութիւններէ յետոյ դարձեալ զոհերն են որ յանցաւոր կը դատուին եւ խստութեան կ'ենթարկուին։ Մեր ուրոյն պատասխանատուութիւնը պարտք կը դնէ մեր վրայ որ այս իրողութիւնը մատնանշենք Եւրոպայի հանրային կարծիքին։ Արդարադատ ու անաչառ օրինազսպումն է որ պիտի կրնայ խաղաղացնել երկիրը, ուժ տալ անոր եւ արգիլել նորանոր եղեռնագործութիւնները։

«ԴՐՕՇԱԿ»
Պաշտօնաթերթ Հայ Կոմիտէի

Գ. 14

Հեռագիր թուրք իշխանութեանց

Մատեան թիւ 55

Յունիս 5, 1909

Constantinople

Président Chambre, Grand Vézir, Généralissime Mahmoud Chevket pacha, Férid pacha, Ministre Intérieur.

Stupéfait par nouvelle de condamnation mort six arméniens Adana, prétendus instigateurs massacres. Faisons appel vos sentiments justice empêcher exécutions, épargner nouvelles tortures population arménienne. Des arméniens peuvent être accusés pour défendre leurs personnes, familles, mais jamais instigateurs origines. Vous avez déjà dénoncé à monde civilisé. Voulons toujours avoir confiance votre impartialité punir vrais instigateurs, reconstruire ruines, réconforter populationm consolider liens fraternels nationalités.

DROSCHAK

Կոստանդնուպոլիս

Խորհրդարանի նախագահին, Մեծ Վեզիրին, սպարապետ Շեւքէթ փաշային, ներքին գործոց նախարար Ֆերիտ փաշային:

Ապշած ենք իմանալով մահուան դատապարտութիւնը Ատանայի վեց հայերուն, կարծեցեալ սադրիչներ ջարդերուն: Կոչ կ'ուղղենք ձեր արդարամտութեան՝ արգիլելու անոնց գործադրութիւնը, խնայելու նոր չարչարանքներ հայ ազգաբնակութեան: Հայերը կրնան ամբաստանուիլ իրենց անձերն ու ընտանիքները պաշտպանելուն մէջ, բայց երբեք՝ իբր պատճառ սադրանքներուն: Դուք արդէն յայտարարած էք [ատիկա] քաղաքակիրթ մարդկութեան առջեւ: Կ'ուզենք միշտ պահել մեր վստահութիւնը ձեր արդարամտութեան վրայ, որ կը պատժէք իսկական սադրիչներ, կը վերաշինէք աւերուածները, կը կազդուրէք ժողովուրդը, կ'ամրացնէք եղբայրական կապերը ազգութիւններու միջեւ:

«ԴՐՕՇԱԿ»

Գ. 15

Ընկերվար Միջազգայնականին

Մատեան թիւ 92, էջ 91

1909 13 juillet

A Monsieur le secrétaire du Bureau
Socialiste International à Bruxelles

Cher citoyen,

En réponse à votre lettre du 7 juillet nous vous informons que dans la Déclaration des Jeunes turcs publiée avant la triomphe de la Révolution, in n'y a eu rien sur la liberté d'association. Ajoutons qu'Ahmed Riza en particulier n'a jamais eu, malheureusement, de sympathie pour les libertés constitutionnelles plus ou moins larges, et étonnement les questions d'ordre social et économiques n'ont jamais figurées dans les revendications du groupe de "Meschveret" (Union et Progrès).

Salutations fraternelles
RED[ACTION] DU DROSCHAK

Ընկերվար Միջազգայնականի Բիւրոյի
Պարոն քարտուղարին, Պրիւսէլ

Սիրելի քաղաքացի,

Ի պատասխան ձեր 7 Յուլիսի նամակին, կը տեղեկացնենք որ յեղափոխութեան յաղթանակէն առաջ Երիտասարդ Թուրքերու հրատարակած Յայտարարութեան մէջ, ոչինչ կայ է ընկերակցութեանց ազատութեան մասին: Աւելցնենք որ մասնաւորապէս Ահմէտ Ռիզա, դժբախտաբար, բնաւ համակրանք ունեցած չէ առաւել կամ նուազ [չափի] սահմանադրական ազատութիւններու նկատմամբ, եւ զարմանալիօրէն ընկերային եւ տնտեսական կարգի հարցերը երբեք չեն երեւցած «Մեշվերէթ»ի խմբակին (Միութիւն եւ Յառաջդիմութիւն) պահանջներուն մէջ:

Եղբայրական ողջոյններով՝
«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Մատեան 92, էջ 147-153

Գ 16.– ՆԱՄԱԿ "LE TEMPS" ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱՊԵՏԻՆ

1909 octobre 2

A monsieur le Rédacteur en chef
du journal "Le Temps" Paris

Monsieur le Rédacteur en chef

Nous vous serions très obligés de publier la rectification suivante.

Dans votre article du 30 septembre sur la question arménienne vous avez bien voulu enregistrer l'entente conclue entre le "Comité ottoman" Union et Progrès et notre Comité "Daschnakzoutioun", comme un événement qui est de nature à faciliter les rapports turco-arméniens. Vous avez tenu en même temps à relever l'intransigeance de notre patriarche démissionnaire, qui, au nom de la nation réclame un jugement sérieux pour les provocateurs et les organisateurs de la terrible catastrophe d'Adana.

Parlant des responsabilités des massacres vous dites textuellement:

"Les enquêtes les plus minutieuses n'ont pu fournir des preuves de la culpabilité d'Abdul Hamid, ni des fonctionnaires de l'ancien régime. Les massacres n'ont pas eu lieu par ordre. Ils s'expliquent par l'opposition de l'état d'esprit des arméniens et des musulmans de la région. Les premiers avaient accueilli avec enthousiasme l'ère de la liberté. Ils achetèrent des armes, voulurent épouser les filles des mahométans, firent jouer à Mersine une pièce, où l'on glorifiait le royaume d'Arménie. Les musulmans virent dans tous ces actes des provocations".

Or, voici ce que dit la déclaration officielle, après l'enquête du gouvernement ottoman, au sujet des évènements, d'Adana. Déclaration, qui sous forme d'une circulaire a été récemment adressée aux autorités provinciales.

Après avoir relevé les services rendus à la cause de l'émancipation de Turquie par les Partis révolutionnaires arméniens, après avoir déclaré comme étant "sans fondement les soupçons et les hypothèses des gens mal informés, suivant lesquels le peuple arménien nourissait des projets politiques nuisibles, après avoir enfin, accentué la méfiance réciproque et les malentendus des deux races, le circulaire aborde la question des responsabilités et dit textuellement:

"Il était du devoir fondamental des autorités locales de révéler immédiatement la source de ces malentendus, de rapprocher les deux éléments, de supprimer les méfiances réciproques et d'établir la concorde et la fraternité des races.

"Mais, tout au contraire, les plus grands fonctionnaires de l'Etat par une inertie et impuissance regretables, gar-

1909 Հոկտեմբեր 2

"Le Temps" օրաթերթի խմբագրապետին,
Փարիզ

Պարոն խմբագրապետ,

Շատ շնորհակալ պիտի ըլլանք եթէ հրատարակէք հետեւեալ ճշդումը:

Հայկական Հարցին նուիրուած ձեր 30 Սեպտեմբերի յօդուածին մէջ, հաճած էիք արձանագրելու Միութիւն եւ Յառաջդիմութիւն «Օսմանեան կոմիտէի» եւ մեր Դաշնակցութիւն կոմիտէի միջեւ կնքուած համաձայնութիւնը, իբրեւ այնպիսի եղելութիւն մը, որ հայ-թրքական յարաբերութիւնները դիւրացնելու բնոյթն ունի: Յատկապէս նշած էք միաժամանակ անգիջող կեցուածքը մեր հրաժարեալ պատրիարքին, որ յանուն ազգին կը պահանջէ լուրջ դատավարութիւն մը Ատանայի սարսափելի աղէտին սադրիչներուն եւ կազմակերպիչներուն նկատմամբ:

Ջարդերու պատասխանատուութեանց մասին խօսելով տառացիօրէն կ'ըսէք.

«Ամէնէն մանրակրկիտ քննութիւնները չկրցան փաստեր հայթայթել ո՛չ Ապտիլ Համիտի եւ ոչ ալ հին վարչակարգի յանցաւորութեան մասին: Ջարդերը տեղի ունեցած չեն հրահանգով:

Անոնք կը բացատրուին շրջանի հայերու եւ մահմետականներու ունեցած մտայնութեանց հակադրութեամբ: Առաջինները խանդավառութեամբ դիմաւորած էին ազատութեան դարաշրջանը: Անոնք զէնքեր գնեցին, ուզեցին ամուսնանալ մահմետական աղջիկներու հետ, Մերսինի մէջ ներկայացուցին թատերախաղ մը, ուր կը փառաբանուէր Հայաստանի թագաւորութիւնը: Մահմետականները գրգռութիւն նկատեցին այս բոլոր արարքները»:

Արդ, Ատանայի դէպքերու մասին օսմանեան կառավարութեան քննութիւններէն ետք, ահա թէ ի՛նչ կ'ըսէ պաշտօնական յայտարարութիւնը: Յայտարարութիւն որ շրջաբերականի ձեւին տակ վերջերս ուղղուեցաւ նահանգային իշխանութիւններուն:

Նշելէ ետք հայ յեղափոխական կուսակցութիւններու մատուցած ծառայութիւնները Թուրքիոյ ազատագրութեան դատին, յայտարարելէ ետք թէ անհիմն են կասկածներն ու վարկածները ոչ իրազեկ մարդոց ըստ որոնց հայ ժողովուրդը քաղաքական վնասակար ծրագիրներ կ'որոճար, շեշտելէ ետք, վերջապէս, երկու ցեղերու միջեւ փոխադարձ կասկածներն ու թիւրիմացութիւնները, շրջաբերականը կը շօշափէ պատասխանատուութեանց հարցը եւ տառացիօրէն կ'ըսէ.

«Տեղական իշխանութիւններու հիմնական պարտականութեան մաս կը կազմէ՝ անմիջապէս յայտնաբերել այս թիւրիմացութիւններուն աղբիւրը, իրար մօտեցնել երկու տարրերը, փարատել փոխադարձ կասկածները եւ հաստատել միաբանութիւնն ու եղբայրութիւնը ցեղերուն:

«Սակայն, բոլորովին ընդհակառակն, պետութեան ամենաբարձր պաշտօնեաները, ցաւալի ծուլութեամբ եւ անկարողութեամբ, լռութիւն պահեցին, եւ ասիկա՝ մէկ կողմէն զօ-

dèrent silence; et ceci d'un côté renforça la méfiance et les malentendus; de l'autre, augmenta l'insolence de la populace. La catastrophe se produisit par un manquement aux devoirs patriotiques, et par le fait que les fonctionnaires ne remplirent pas dûment leurs fonctions".

Vous voyez bien Monsieur le Rédacteur, que ce document officiel affirme déjà la grave responsabilité des "plus grands fonctionnaires de l'Etat", tout en affirmant la plaine loyauté des Partis et du peuple arménien vis-à-vis de l'Etat ottoman.

Inutile de mentionner que cette déclaration, formulée dans l'influence des colères et des menaces des massacreurs, n'est qu'un pâle résumé des agissements des principaux responsables de cette immense tragédie. Nous ne parlons pas non plus du rôle joué avant et pendant les événements par des personnalités influentes comme Hassan Fikri, le rédacteur du journal "Ittidal". Nous n'insistons pas non plus sur le rôle de l'ancien vali si justement stigmatisé par tous les témoins et observateurs impartieux.

Certes, il y a eu antagonisme, méfiance entre les deux races. Mais est-il besoin de rappeler que ce ne sont pas les arméniens qui ont nourri des projets de massacres et d'extermination de leurs voisins? Est-il étonnant qu'en présence du formidable assaut des masses musulmanes, ils se soient décidés à riposter et que pendant la contre-attaque, ils avaient commis, eux aussi, par esprit de vengeance, quelques cruautés, dont vous parlez dans votre article, Monsieur le Rédacteur?

Enfin tous ces faits,– antagonisme de races, actes de vengeance de quelques arméniens, représentation des pièces évoquant les souvenirs de l'ancien royaume d'Arménie etc.– ces faits sont-ils de nature à annuler ou même atténuer la terrible responsabilité des autorités d'Adana et de tous les vrais provocateurs?

En ce qui concerne le récent accord entre le Comité "Union et Progrès" et notre organisation il n'est certainement pas conclu aux prix de sacrifice des intérêts vitaux du peuple arménien; tout en visant au maintien de l'intégrité de l'Empire Ottoman et à l'affermissement des libertés constitutionnelles, cet accord a pour but de faciliter les bons rapports arméno-musulmans et de garantir la sécurité et le libre progrès de l'élément arménien.

Or, l'établissement de ces bons rapports ne sera jamais possible si l'on oublie les responsabilités du drame d'Adana. Le gouvernement ottoman, au nom de la santé du nouveau régime et pour être fidèle à l'esprit même de sa déclaration, doit garantir l'application de la justice élémentaire.

Nous faisons appel, Monsieur le Rédacteur, à Votre impartialité pour publier la présente explication.

REDACTION DU DROSCHAK
Organe central du parti Daschnakzoutioun

ռացուց կասկածներն ու թիւրիմացութիւնները, միւս կողմէ՝ սաստկացուց խուժանին յանդգնութիւնը: Աղէտը առաջացաւ հայրենասիրական պարտականութեանց նկատմամբ զանցումի հետեւանքով, եւ այն իրողութեամբ որ պաշտօնեաները իրենց գործը պատշաճ կերպով չկատարեցին»:

Կը տեսնէք, պարոն Խմբագիր, որ պաշտօնական այս փաստաթուղթը կը հաստատէ արդէն «Պետութեան ամենաբարձր պաշտօնեաներու» ծանր պատասխանատուութիւնը, հաստատելով միեւնոյն ժամանակ Կուսակցութեանց եւ հայ ժողովուրդի ամբողջական ուղղամտութիւնը Պետութեան նկատմամբ:

Աւելորդ է նշել որ այս յայտարարութիւնը, ջարդարարներու զայրոյթին եւ սպառնալիքներուն տակ բանաձեւուած, տժգոյն համառօտութիւն մըն է միայն՝ այս ահաւոր ողբերգութեան գլխաւոր պատասխանատուներու վարմունքին: Չենք խօսիր նոյնպէս, դէպքերէն առաջ եւ անոնց ընթացքին, ազդեցիկ անձնաւորութեանց խաղացած դերին մասին, ինչպիսին է Հասան Ֆիքրի, «Իթթիհատ» լրագրի խմբագիրը: Չենք պնդեր նաեւ [խաղացած] դերին վրայ նախկին վալիին, այնքան արդարօրէն խարանուած բոլոր վկաներու եւ անկողմնակալ ականատեսներու կողմէ:

Անշուշտ, կայ հակամարտութիւն, անվստահութիւն երկու ցեղերուն միջեւ: Սակայն, պէտք կա՞յ յիշեցնելու թէ հայերը չեն, որ իրենց դրացիներուն նկատմամբ ջարդերու եւ բնաջնջումի ծրագիրներ սնուցանած են: Զարմանալի՞ է որ, մահմետական զանգուածներու ահաւոր յարձակումներուն դիմաց, որոշած ըլլան [հայերը] հակադարձելու եւ որ հակայարձակման ընթացքին անոնք եւս, վրէժխնդրութեան զգացումէ մղուած, գործած ըլլան կարգ մը դաժանութիւններ, որոնց մասին կը խօսիք, պարոն Խմբագիր, ձեր յօդուածին մէջ:

Վերջապէս, բոլոր այս իրողութիւնները,– ցեղերու հակամարտութիւն, քանի մը հայերու վրէժխնդրական արարքներ, հայկական հին թագաւորութեան յիշատակները արթնցնող թատերախաղերու ներկայացում եւայլն – այս իրողութիւնները այնպիսի՞ն են, որ ջնջեն կամ նոյնիսկ մեղմացնեն Ատանայի իշխանութեանց եւ բոլոր իսկական սադրիչներուն պատասխանատուութիւնը:

Ինչ կը վերաբերի «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» Կոմիտէի եւ մեր կազմակերպութեան վերջին համաձայնագրին[26], վստահօրէն ան կնքուած չէ ի գին հայ ժողովուրդի կենսական շահերու զոհաբերումին. ան կը ձգտի Օսմանեան կայսրութեան ամբողջականութեան պահպանման եւ սահմանադրական ազատութիւններու ամրագրումին: Այս համաձայնագրին նպատակն է դիւրացնել հայ-մահմետական բարի յարաբերութիւնները եւ երաշխաւորել հայ տարրի ապահովութիւնն ու ազատ յառաջդիմութիւնը:

Արդ, այս լաւ յարաբերութիւններու հաստատումը կարելի պիտի չըլլայ բնաւ, եթէ մոռացութեան տրուին պատասխանատուութիւնները Ատանայի ողբերգութեան մէջ: Օսմանեան կառավարութիւնը, վասն նոր վարչակարգի առողջութեան եւ հաւատարիմ ըլլալու համար իր յայտարարութեան ոգիին իսկ, պէտք է երաշխաւորէ տարրական արդարութեան գործադրութիւնը:

Պարոն խմբագիր, ներկայ բացատրութիւնը հրատարակելու համար կը դիմենք Ձեր անկողմնակալութեան:

«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Պաշտօնաթերթ Դաշնակցութիւն կուսակցութեան

26.- Խնդրոյ առարկայ համաձայնագրի հայերէն եւ օսմաներէն բնագիրները տեսնել «ՆԻՒԹԵՐ»ու Զ. հատոր, էջ 266-7:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ VI

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒՆ (1908 – 1909)

Հ. Յ. Դաշնակցութեան արխիւները առատ նիւթ կը հայթայթեն Պարսկաստանի սահմանադրական շարժումներուն եւ անոնց մէջ Դաշնակցութեան խաղացած վճռական դերակատարութեան մասին: «ՆԻՒԹԵՐ»ու Զ. հատորին մէջ (էջ 427-453) հրատարակած ենք արդէն անոնց կարեւոր մէկ մասը. տուած ենք նոյնպէս որոշ բացատրութիւններ, որոնց վերստին անդրադառնալու հարկ չենք տեսներ, բացի թերեւս որոշակի այն կէտէն, որ կը վերաբերի պարսիկ սահմանադրականներու կողքին կռուելու մեկնող դաշնակցական մարտական ուժերը գլխաւորողի անձին ճշդումին: Արդարեւ, Արեւելեան Բիւրոն սկզբնապէս դիմած էր Նիկոլ Դումանին եւ Խանասորի Վարդանին, որոնց մերժումէն ետք, այդ առաքելութիւնը վստահուած էր Սեւքարեցի Սաքոյին: Այս վերջինը՝ պատրաստութիւնները տեսած եւ մարտական խումբը կազմած՝ երբ պիտի անցնէր Արաքսի պարսկական ափը, ժընեւ հասաւ Արեւելեան Բիւրոյի Թիֆլիսէն ուղարկած լակոնական այս հեռագիրը (1908 թ. Նոյ. 26), որ կը գուժէր վաստակաւոր հերոսին անակնկալ մահը.–

***«Սեւքարեցի Սաքոն մեռաւ քոյերայէ»* (Փաստ. 74-162):**

Այնուհետեւ արշաւախումբի ղեկավարութիւնը ստանձնեց Քեռին (Արշակ Գաւաֆեան), որ իր փոքրաթիւ խումբով եւ տեղւոյն մարտական ընկերներով Ատրպատականի մէջ բոլորին հիացմունքին արժանացող սխրանքներ պիտի գործէր:

*
* *

Ստորեւ կը տրուին Պարսկաստանի յեղափոխութեան ինչպէս եւ Դաշնակցութեան կուսակցական միաւորներու գործունէութեան վերաբերող լրացուցիչ փաստաթուղթերը, հետեւեալ Դ բաժանմունքներով.–

Ա. բաժանմունք –

1) «Համաձայնագիր Հ. Յ. Դաշնակցութեան եւ պարսիկ սահմանադրականներու միջեւ»:

Ֆրանսերէն է, գրի առնուած է Ռոստոմի կողքին բանակցութեանց մասնակից Յովսէփ Միրզայեանի կողմէ. անստորագիր է եւ անթուական, բայց յայտնաբար գրուած է ժողովներու աւարտին՝ 1908 թ. Յունուար 4էն անմիջապէս ետք: Յայտնենք այս առթիւ որ այս համաձայնութեան մասին Ռոստոմ ընդարձակ զեկուցագիր մը յղած էր Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներուն (տես «ՆԻՒԹԵՐ» Զ. հատոր, էջ 444-447):

2) Երկուստեք փոխանակուած գրութիւններ խառն նիստերու արձանագրութիւններուն վաւերացման համար (վերոնշեալ բոլոր փաստաթուղթերը ֆրանսերէն են. կողքին տուած ենք թարգմանութիւնը):

3) Յ. Միրզայեանի բացատրութիւն-մեկնաբանութիւնը գոյացած համաձայնութեան մասին, սահմանուած Վրէժ-Ատրպատականի Կ. Կոմիտէին:

Բ. բաժանմունք – Յատկացուած է Ատրպատականի պարսիկ սահմանադրականներուն հետ Թաւրիզի մէջ գոյացած համաձայնութեան.–

1) «Նիստ ԽԴ.» խորագրով Վրէժ-Ատրպատականի Կ. Կոմիտէին որոշումը՝ պարսկական յեղափոխական շարժումներուն գործօն մասնակցութիւն բերելու մասին:

2) Պարսիկ յեղափոխականներու եւ Ատրպատականի Կ. Կոմիտէին համաձայնագիրը՝ «Արձանագրութիւն» խորագրով:

3) Նոյնին պարսկերէն բնագիրը՝ հայերէն թարգմանութեան հետ միասին:

Գ. բաժանմունք – Սահմանադրական ուժերու կողմէ Թեհրանի գրաւման եւ Մաջլիսի բացման առիթով փոխանակուած հեռագիրներ եւ այլ գրութիւններ Ռոստոմէն եւ Սամսոն Թադէոսեանէն:

Դ. բաժանմունք, ինչպէս եւ Ե.ն ու Զ.ն, ամբողջութեամբ յատկացուած են Ատրպատականի մէջ 1909 թուականին գումարուած կուսակցական շրջանային եւ տեղական ժողովներուն.–

Դ.1 եւ Դ.2ը կը վերաբերին Վրէժի IV Պատգամաւորական ժողովին, որ գումարուած է Սալմաստի (Մինարէթ) մէջ: Դ.3ը միեւնոյն Պատգամաւորական ժողովին սահմանուած ամփոփ տեղեկագիրն է՝ Սահմանադրական շարժումներու ընթացքին Կովկասէն Պարսկաստան փոխադրուած զինամթերքի եւ ազատամարտիկներու խումբերու մասին: Տեղեկաբերն է վաստակաւոր յեղափոխական Գալուստ Ալոյեան (Դարվիշ), որ ամփոփ գծերով կը թուէ նաեւ ճանապարհին՝ միապետական ուժերու հետ տեղի ունեցած բախումները:

Ե. եւ Զ. բաժանմունքները յատկացուած են Թաւրիզ քաղաքէն ետք, Ատրպատականի գլխաւոր միւս երկու շրջաններուն՝ Խոյի (Աւարայր) եւ Սալմաստի (Մինարէթ) տեղեկագիրներուն, որոնք յիշեալ վայրերու կազմակերպական վիճակին մէկ ամփոփ պատկերը տալէ ետք՝ մասնաւորաբար կը ծանրանան սահմանադրական եւ միապետական ուժերու միջեւ 1909 թ. առաջին կիսուն տեղի ունեցած զինական բախումներուն եւ դաշնակցական մարտական խումբերու մասնակցութեան վրայ:

Վերջին՝ Է. բաժանմունքին մէջ տրուած են Գիլանի (Էնզելի) դաշնակցական կազմակերպութեան կողմէ «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղուած շարք մը գրութիւններ, որոնցմով կը տեղեկագրուի Պարսկաստանի հիւսիս-արեւելեան այս շրջանի անցուդարձերուն մասին: Յայտնենք որ տարիներէ ի վեր հոս էր հաստատուած պարսկական յեղափոխութեան գլխաւոր դէմքերէն Եփրեմ խան (Դաւթեան), որուն յաղթական երթը եւս դէպի Թեհրան սկիզբ առած էր Ատրպատականի Կ. Կոմիտէութեան ա՛յս շրջանէն: Գիլանի կազմակերպութիւնը կ՚ընդգրկէր կասպիական ծովափի Ռաշտ, Էնզելի (Պորտ Արտուր), Ղազուին, Արտաբիլ քաղաքները, ուրկէ եւ յեղափոխական շարժումներու ընթացքին, կը կատարուէր ռուսական զօրքերու ներխուժումը:

ԽՄԲ.

Փաստ. 583-41

Ա 1.– ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՐՍԻԿ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Vu la violation de la frontière persane par le gouvernement du Sultan, et la gravité exceptionnelle des conséquences qui peuvent en résulter, Vosough-ed-Dowleh (vice-président du majlice) Mostéchar-ed-Dawleh, Hadji Amin-oz-Zarb, Hadji Mouin-ot-Todjar, Taghi-Zadé, et Hadji Mi[r]za Ibrahim Agha (députés de la Chambre persane) réunis dans une conférence avec le représentant du Bureau d'Orient de la F. R. Arménienne, après de longues délibérations dans leurs séances de 30 déc. 31 déc. 1907, 2 janvier, 3 janvier et 4 janvier 1908, sont arrivés à l'accord suivant.

Considérant que les populations de la Perse et de la Turquie sont également interressées en ce que dans les deux pays soit établi et maintenu réciproquement le régime constitutionnel, l'étape indispensable pour rétablir les principes de la solidarité des nations, et pour sauvegarder les intérêts des classes travailleuses.

Considérant que le gouvernement du Sultan a pour but, en créant par ses actes aggréssifs des difficultés internationales, de détourner l'énergie populaire de la lutte intérieure, et d'enrayer de cette manière le mouvement révolutionnaire gagnant du terrain de jour en jour.

Considérant que le fonctionnement normal de la constitution dans un pays voisin et dans un peuple correligionnaire contribuerait puissamment à l'extension du mouvement révolutionnaire en Turquie, et pour cette raison la monarchie ottomane se voit dans la nécessité de discréditeur et même renverser le régime constitutionnel en Perse.

Considérant par conséquent que les partis avancés des deux pays ont un devoir impératif de combattre la politique du gouvernement du Sultan dans toutes ses manifestations.

Il a été convenu

LA FÉDÉRATION RÉV. ARMÉNIENNE S'ENGAGE

1.- Mener en Europe la propagande dans les intérêts du régime constitutionnel établi en Perse.

2.- S'informer des vues du gouvernement Français sur la question Persane et communiquer au Majlisse les ren-

Նկատի ունենալով Սուլթանի կառավարութեան կողմէ պարսկական սահմանի բռնաբարումը[1], եւ բացառիկ ծանրակշռութիւնը այն հետեւանքներուն, որ կրնան առաջ գալ այդ պատճառաւ, Վոսուղ-էդ-Դովլէն (Մաջլիսի փոխ նախագահ), Մոստեշար-էդ-Դովլէ, Հաջի Ամին-օլ-Զարբ, Հաջի Մուին-օլ-Թոջար, Թաղի-Զադէ եւ Հաջի Միրզա Իբրահիմ Աղա (պարսկական խորհրդարանի պատգամաւորներ), ժողով գումարելով հայ Յ. Դ.-եան Արեւելեան Բիւրոյի ներկայացուցչին հետ, երկար խորհրդակցութիւններէ ետք, 30 Դեկտ. եւ 31 Դեկտ. 1907 թ., 2, 3 եւ 4 Յունուար 1908 թ., յանգեցան հետեւեալ համաձայնութեան.–

Նկատի ունենալով որ՝ Պարսկաստանի եւ Թուրքիոյ ազգաբնակչութիւնները հաւասարապէս շահագրգռուած են որ երկու երկիրներուն մէջ հաստատուի եւ փոխադարձաբար պահպանուի սահմանադրական վարչակարգը,– անհրաժեշտ հանգրուան ազգերու համերաշխութեան սկզբունքներու իրագործման – եւ պաշտպանելու համար աշխատաւոր դասակարգերու շահերը,

Նկատի ունենալով՝ որ Սուլթանին կառավարութեան նպատակն է գրգռիչ քայլերով միջազգային դժուարութիւններ ստեղծել, ժողովրդական ներուժը շեղել ներքին պայքարէն, եւ այդ ձեւով խոչընդոտել օրէ օր հող շահող յեղափոխական շարժումը,

Նկատի ունենալով՝ որ դրացի երկրի մը եւ կրօնակից ժողովուրդի մը մէջ բնականոն կերպով գործող սահմանադրութիւնը, մեծապէս պիտի նպաստէր յեղափոխական շարժման տարածումին Թուրքիոյ մէջ, եւ այս պատճառաւ օսմանեան միապետութիւնը հարկադրուած կը զգայ վարկաբեկել եւ մինչեւ իսկ տապալել Պարսկաստանի մէջ սահմանադրական վարչակարգը,

Նկատի ունենալով, հետեւաբար, որ երկու երկիրներու յառաջադէմ կուսակցութիւնները հրամայական պարտականութիւն մը ունին պայքարելու Սուլթանի կառավարութեան եւ անոր քաղաքականութեան բոլոր արտայայտութիւններուն դէմ,

Համաձայնութիւն գոյացաւ՝

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՅԱՆՁՆ Կ'ԱՌՆԷ

1.- Եւրոպայի մէջ քարոզչութիւն կատարել ի նպաստ Պարսկաստանի մէջ հաստատուած սահմանադրական վարչակարգին:

2.- Պարսկական հարցին մասին տեղեկանալ Ֆրանսական կառավարութեան տեսակէտներուն եւ Մաջլիսին հաղորդել ձեռք բերուած տեղեկութիւնները: Ֆրանսական Խորհրդարանի ազդեցիկ անդամներու հետ մեր ունեցած

1.- Օգտուելով Պարսկաստանի ներքին կռիւներէն թրքական զօրքերը 1907 թ. Յուլիսէն արդէն ներխուժած էին Ուրմիոյ շրջանը եւ հոն հաստատուած:

seignements acquis. Profitant de nos relations avec les membres influents de la Chambre française faire tout notre possible pour provoquer l'intervention de la France en faveur de l'intégrité et de l'indépendance de la Perse constitutionnelle.

3.- Concourir à l'établissement des relations amicales entre la Perse et la Bulgarie dans le but de co-ordonner la politique de ces deux pays envers le gouvernement du Sultan.

4.- Réunir dans une organisation de résistance active tous les éléments hostiles au régime actuel de la Turquie et accélérer la révolution générale.

5.- Rendre en Turquie, la guerre Turco-Persane impopulaire par la propagande et par les démonstrations.

6.- Neutraliser toutes les tribus Kurdes qui sont en rapports amicaux avec Daschnakzoutioun.

7.- Favoriser l'attachement des éléments et des organisations musulmans de Caucase à la cause de la Perse.

8.- Assister le Majlisse dans son projet d'engager des officiers parmi les musulmans de Caucase pour l'armée persane.

9.- Etablir le télégraphe sans fil dans les régions des opérations de guerre.

10.- Procurer des héliographes et les spécialistes pour le maniement des mêmes.

11.- Assister à l'organisation du service médical-sanitaire de l'armée persane.

Pendant la guerre

1.- Fournir un ou deux officiers compétants à l'état major général de l'armée Persane.

2.- Mettre à la disposition de l'armée persane quelques spécialistes pour le maniement des engins à matières explosives.

3.- Outre les actes révolutionnaires de la Fédération Arménienne – Daschnakzoutioun en général, le comité central d'Azerbaidjan de la dite Fédération s'engage à organiser des détachements de volontaires et de co-opérer avec l'armée Persane par la guerilla.

LES AMIS PERSANS S'ENGAGENT DE LEUR PART

1.- Procurer à Daschnakzoutioun les facilités en Perse et en particulier à Azerbaidjan pour le libre transport des hommes, des armes et des nutritions.

2.- Faire venir de l'étranger aux frais de Daschnakzoutioun les armes et les munitions de cette organisation et les livrer à Azerbaidjan aux personnes désignées.

կապերէն օգտուելով՝ գործադրել մեր ամէն կարելին առաջացնելու համար Ֆրանսայի միջամտութիւնը ի նպաստ սահմանադրական Պարսկաստանի ամբողջականութեան եւ անկախութեան:

3.- Հետամուտ ըլլալ Պարսկաստանի եւ Պուլկարիոյ միջեւ բարեկամական յարաբերութիւններու հաստատման, Սուլթանի կառավարութեան դէմ երկու երկիրներու քաղաքականութիւնը համակարգելու նպատակով:

4.- Միացնել՝ գործօն դիմադրութեան մը կազմակերպութեան մէջ՝ Թուրքիոյ ներկայ վարչակարգին ընդդիմադիր բոլոր տարրերը, եւ արագացնել ընդհանուր յեղափոխութիւնը:

5.- Թուրքիոյ մէջ, քարոզչութեամբ եւ ցոյցերով անժողովրդական դարձնել թուրք-պարսկական պատերազմը:

6.- Ապահովել չեզոքութիւնը այն բոլոր քրտական ցեղախումբերուն, որոնք բարեկամական յարաբերութիւններ ունին Դաշնակցութեան հետ:

7.- Նպաստել՝ Կովկասի մահմետական տարրերու եւ կազմակերպութեանց յարումին դէպի Պարսկաստանի դատը:

8.- Օգնել Մաջլիսին՝ Պարսկաստանի բանակին մէջ Կովկասի մահմետականներու շարքերէն սպաներ զինուորագրելու ծրագրին մէջ:

9.- Անթել հեռագիր հաստատել պատերազմական գործողութիւններու վայրերուն մէջ:

10.- Հայթայթել հելիոգրաֆներ[2] եւ անոնց գործածութեան համար մասնագէտներ:

11.- Օգնել պարսկական բանակի բժշկա-առողջապահական ծառայութեանց կազմակերպման:

Պատերազմի ընթացքին

1.- Հայթայթել՝ պարսկական բանակի ընդհանուր սպայակոյտին մէկ կամ երկու ձեռնհաս սպաներ:

2.- Պարսկական բանակին տրամադրութեան տակ դնել մէկ քանի մասնագէտներ պայթուցիկ նիւթերով գործող մեքենաներու համար:

3.- Բացի ընդհանրապէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան յեղափոխական արարքներէն, յիշեալ Դաշնակցութեան Ատրպատականի Կեդրոնական Կոմիտէն յանձն կ'առնէ կազմակերպել կամաւորներու ջոկատներ եւ հայդուկային կռիւներով համագործակցիլ պարսկական բանակին հետ:

ՊԱՐՍԻԿ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ, ԻՐԵՆՑ ԿԱՐԳԻՆ, ՅԱՆՁՆ Կ'ԱՌՆԵՆ

1.- Դաշնակցութեան հայթայթել դիւրութիւններ Պարսկաստանի եւ մասնաւորապէս Ատրպատականի մէջ մարդիկ, զէնքեր եւ զինամթերք փոխադրելու համար:

2.- Դաշնակցութեան ծախսերով՝ արտասահմանէն բերել տալ այս կազմակերպութեան զէնքերն ու զինամթերքը եւ զանոնք յանձնել Ատրպատականի մէջ մատնանշուած անձերուն:

2.- Աւելի գործածական է հելիոստատը, որ արեգակնային ճառագայթները հայելիներու միջոցաւ արտացոլացնող սարք է:

3.- Faire fonder à Azerbaidjan une fabrique de cartouche. Faire vendre à Daschnakzoutioun des arsenaux du gouvernement armes, cartouches, poudre à canon etc., au prix coutant.

4.- Associer, dans les limites de possibilité à l'œuvre de la révolution générale, les persans habitants la Turquie.

5.- Tout en respectant les droits nationaux dont jouissent les arméniens en Perse sous le régime monarchique, les élargir à l'avenir et légaliser toutes les institutions démocratiques basées sur les dits droits.

6.- Réserver aux réfugiés arméniens, les terres labourables dites de "khalesseh" à Salmast ou dans les régions environnantes.

7.- Susciter dans toutes les circonstances opportunes, notamment dans les conférences internationales sur la nécessité de l'établissement du régime constitutionnel en Turquie en général et la réalisation de l'autonomie dans les provinces arméniennes en particulier.

Pendant la guerre

Outre les actions générales, fournir durant la guerre, aux détachements arméniens opérant en Azerbaidjan armes, munitions, chevaux et moyens d'existence.

Note.- Les articles concernant la déclaration de la guerre seront obligatoires après une réunion ultérieure.

3.- Ատրպատականի մէջ հիմնել փամփուշտներու գործարան մը: Կառավարութեան զինարաններէն Դաշնակցութեան ծախել տալ զէնքեր, փամփուշտներ, թնդանօթի վառօդ եւայլն, իրենց օրուան արժողութեամբ:

4.- Հնարաւորին չափ, ընդհանուր յեղափոխական գործին մասնակից դարձնել Թուրքիոյ մէջ ապրող պարսիկները:

5.- Յարգելով հանդերձ Պարսկաստանի հայերուն միապետական կարգերու տակ վայելած ազգային իրաւունքները, ընդլայնել զանոնք ապագային եւ օրինականացնել՝ վերոյիշեալ իրաւունքներու վրայ հիմնուած ժողովրդավարական բոլոր հաստատութիւնները:

6.- Հայ գաղթականներուն յատկացնել Սալմաստի կամ շրջակայքի մէջ «խալիսէի» կոչուող մշակելի հողերը[3]:

7.- Բոլոր յարմար առիթերով, յատկապէս միջազգային համագումարներու մէջ, պնդել կարեւորութեան վրայ ընդհանրապէս Թուրքիոյ մէջ սահմանադրական վարչակարգի հաստատման, եւ յատկապէս հայկական նահանգներու մէջ՝ ինքնավարութեան իրագործման [կարեւորութեան] վրայ:

Պատերազմի ընթացքին

Բացի ընդհանուր գործունէութիւններէն, պատերազմի ընթացքին Ատրպատականի մէջ գործող հայկական ջոկատներուն հայթայթել՝ զէնք, զինամթերք, ձիեր եւ ապրուստի միջոցներ:

Ծանօթ.- Պատերազմի յայտարարութեան վերաբերող յօդուածները պարտաւորիչ պիտի ըլլան յետագայ նիստի մը ետք:

3.- Դաշնակցութեան կողմէ հետապնդուած ծրագիր էր. կը մտածուէր Սեւ ծովու շրջանի արեւմտահայ գաղթականութիւնը փոխադրել Ատրպատականի հայաշատ շրջանը եւ այդ նպատակով մշակելի հողեր ապահովել անոնց:

Փաստ. 582բ-1

Ա 2.– ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Copie)

Ce samedi (*Ստացուած 5 Յունուար* 1908, *Յ. Մ.*)

Monsieur

N'ayant pas pu parler avec nos camarades pour pouvoir préparer la rédaction du procès verbal en question, et d'autre part invités par messieurs les ministres des Finances et des affaires Extérieures à nous rendre aux commissions spéciales, qui rempliront probablement toute la journée, nous avons très grand regret de vous écrire qu'il nous est impossible de nous occuper aujourd'hui de cette affaire.

Comme Monsieur Rostome veut absolument partir aujourd'hui nous nous voyons forcés de revenir à la proposition d'hier:

Monsieur Rostome ferait mieux de désigner quelqu'un, ici, qui se mettrait en communication avec nous et qui entér[in]rait aux arrangements possibles selon les exigences des circonstances et la tournure que prendront les affaires concernant cette question.

Par conséquent, nous vous prions Monsieur, de présenter tous nos regrets à Monsieur Rostome, de lui souhaiter bon voyage et d'être l'interprète de nos sentiments amicaux et sincèrement affectueux.

Espérons que l'honorable cause commune qui nous unit affermiront de jour en jour nos liens d'amitié.

Veuillez recevoir, Monsieur, l'assurance de nos sentiments affectueux.

(Signé) SADIK, HASAN

(Պատճէն)

Շաբաթ, 5 Յունուար 1908, Յ. Մ.

Պարոն,

Խնդրոյ առարկայ ատենագրութեան խմբագրութիւնը պատրաստելու համար,- մեր ընկերներուն հետ խօսած չըլլալով [այդ մասին] եւ, միւս կողմէ, ֆինանսներու եւ արտաքին գործոց պարոն նախարարներէն հրաւիրուած ըլլալով մասնակցելու յատուկ յանձնաժողովներու [նիստին], որոնք հաւանաբար պիտի գրաւեն [մեր] ամբողջ օրը,- մեծապէս կը ցաւինք գրելու, որ մեզի համար անկարելի է այսօր զբաղիլ այդ խնդրով:

Քանի պարոն Ռոստոմ կ'ուզէ անպատճառ այսօր մեկնիլ, ստիպուած ենք վերադառնալու մեր երէկուան առաջարկին.– լաւագոյնը պիտի ըլլար, որ պարոն Ռոստոմ նշանակէր հոս մէկը, որ հաղորդակցէր մեզի հետ եւ վաւերացում տար հաւանական [այն բոլոր] կարգադրութիւններուն, որոնք, այս խնդրին վերաբերեալ, ըստ պարագաներու պահանջներուն, կրնան փոփոխութիւններ կրել:

Հետեւաբար պարոն, կը խնդրենք որ պարոն Ռոստոմին փոխանցէք մեր խոր ցաւը, բարի երթ մաղթէք իրեն եւ թարգման հանդիսանաք մեր բարեկամական եւ սիրալիր զգացումներուն:

Յուսանք որ մեզ միացնող հասարակաց պատուաբեր դատը օրէ օր աւելի եւս պիտի ամրապնդէ մեր բարեկամական կապերը:

Հաճեցէք ընդունիլ, պարոն, մեր սիրալիր զգացումներուն հաւաստիքը:

(Ստորագրուած) ՍԱԴԻՔ, ՀԱՍԱՆ

Փաստ. 583-1ա

Ա 3.– ՅՈՎՍԷՓ ՄԻՐԶԱՅԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ce samedi (*Գրուած 5 Յունուար* 1908, *Յ. Մ.*)

Messieurs

Je viens de recevoir votre très aimable lettre qui a été également lue par Monsieur Rostom.

Il vous remercie infiniment pour vos bons souhaits de voyage, et regrette beaucoup de ne pas pouvoir désigner quelqu'un à sa place faute d'autorisation préalable.

Il partira donc de Téhéran considérant les délibérations qui ont eu lieu entre vous et lui comme échange des vues en général indispensable d'ailleurs pour les négociations ultérieures.

Il vous remercie sincèrement pour toute l'amabilité que vous avez témoignée envers lui pendant son court séjour à Téhéran et il espère de tout son cœur que les liens qui nous unissent moralement serviront à l'émancipation politique, sociale et économique de nos peuples.

Avec les meilleurs souhaits pour l'avenir de la Perse rajeunie de la part de Mr. Rostom aussi bien que de la mienne, je vous prie, messieurs, de vouloir bien agréer nos considérations les plus distinguées et l'expression de nos sentiments le plus affectueux.

(Signé) H. M.

Շաբաթ, 5 Յունուար 1908

Պարոններ,

Նոր ստացայ ձեր հաճելի նամակը, որ նոյնպէս ընթերցուեցաւ պարոն Ռոստոմի կողմէ:

Անհուն շնորհակալութիւն կը յայտնէ ան ձեր ողջերթի բարեմաղթութիւններուն առթիւ, եւ շատ կը ցաւի, նախօրօք լիազօրուած չըլլալով, զինք փոխարինող մը նշանակել չկարենալուն համար:

Թեհրանէն պիտի մեկնի ուրեմն, նկատի ունենալով ձեր եւ իր միջեւ տեղի ունեցած խորհրդակցութիւնները ընդհանրապէս իբրեւ տեսակէտներու փոխանակում, այլապէս անհրաժեշտ յետագայ բանակցութիւններու համար:

Անկեղծօրէն շնորհակալ է ան այն ամէն ազնուութեան համար, զոր ցոյց տուիք իր Թեհրան կեցութեան կարճատեւ օրերուն, եւ ամբողջ սրտով կը յուսայ, որ մեզ բարոյապէս միացնող կապերը պիտի ծառայեն մեր ժողովուրդներու քաղաքական, ընկերային եւ տնտեսական ազատագրումին:

Պարոն Ռոստոմի, ինչպէս եւ իմ կողմէ, վերանորոգ Պարսկաստանի ապագային համար լաւագոյն մաղթանքներով, կը խնդրեմ պարոններ, որ ընդունիք մեր խորին յարգանքներուն եւ սիրալիր զգացումներուն հաւաստիքը:

Յ. Մ.

[ՅՈՎՍԷՓ ՄԻՐԶԱՅԵԱՆ]

Փաստ. 583-2

Ա 4.– Յ. ՄԻՐԶԱՅԵԱՆԷՆ ՎՐԷԺԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

Թեհրան, 11 *Յունուար* 1908

Սիրելի ընկերներ,

Ռոստոմը հասաւ այստեղ, ինչպէս գիտէք արդէն, Դեկտ. 23-ին եւ մեկնեց դէպի Թիֆլիս այսօր առաւօտ:

Բանակցութիւնների հետեւանքը ներփակեալ ուղարկում եմ ձեզ. այդ մասին հարկ չկայ գրել, բայց պիտի տեղեկացնեմ ձեզ բանակցութիւնների մի քանի մանրամասնութիւնների եւ գոցման մասին, որոնք թողնում են իրանց ազդեցութիւնը ամէն մի կողմի յանձն առած պարտականութիւնների վրայ:

Պարսիկների կողմից մեզ հետ բանակցում էին վեց հոգի, Մաջլիսի ամենազդեցիկ անդամներից. դրանց անունները են հետեւեալները - Վոսուղ էդ Դովլէն (փոխ. նախագահ), Մոսթաշար Դովլէն, Թաղի-Զադէն եւ Հաջի Միրզա Իբրահիմ աղա (երեքն էլ Ատրպատականի ներկայացուցիչներ եւ շատ ազդեցիկ ձեր շրջանում), Հաճի Ամին Զարբը եւ Մոյին Թոջարը (Թեհրանի վաճառականների ներկայացուցիչներ եւ նկատուած որպէս Մաջլիսի ֆինանսական ոյժը):

Սրանց հետ Ռ[ոստոմ] եւ ես հինգ համագումարում ունեցանք եւ արաճանագրութեան մէջ յիշուած կէտերի վրայ կատարեալ համաձայնութիւն ունեցանք, իսկ երբ հարցը եկաւ փոխադարձաբար մի պայմանագիր ստորագրելուն, նրանք քաշուեցան առարկելով որ իրանք ոչ մի պաշտօնական մարմին չեն ներկայացնում որ կարողանան այդպիսի մի ստորագրութիւն տալ: Չորրորդ նիստում նրանք մինչեւ անգամ առաջարկեցին որ նոյն օրը Մաջլիսում իրանք ընտրել կը տան որպէս սահմանագլխի համար մի commission *եւ որպէս այդ* commission*-ի անդամներ կը ստորագրեն: Բայց* commission *թէ- եւ ընտրուեց, այնուամենայնիւ դրա մէջ մտան երեք հոգի այնպիսի մարդիկ, որոնց մասին մեր բարեկամները հետեւեալ նիստում մեզ յայտնեցին թէ անվստահելի են, եւ հետեւաբար այդ խնդիրը ջուրն ընկաւ: Մենք նրանց առաջարկեցինք որ փոխարէն պայմանագիր ստորագրելու, լաւ է մի պարզ* procès-verbal *կազմենք եւ այդ* procès-verbal*-ը երկու կողմից էլ ստորագրուի բայց առանց պարտադիր լինելու որեւէ կողմի համար. նրանք ընդունեցին այդ բանը, բայց հետեւեալ օրը փոխարէն ներկայանալու* procès-verbal*-ի ստորագրութեամբ, մեզ գրեցին մի նամակ, որին մենք անմիջապէս պատասխանեցինք: Նրանց եւ մեր նամակների պատճէնները նոյնպէս ուղարկում եմ ձեզ: Այդ պատճէններից կը տեսնէք որ բոլոր պայմանների մէջ այլեւս պարտադիր ոչինչ ոչ մի կողմի համար չի մնում: Այնուամենայնիւ բերանացի կերպով պայմանագրի բոլոր յօդուածներն եւս ընդունուած են երկու կողմից էլ:*

Զմոռանամ ասել որ նոյնիսկ բերանացի խոստումների մէջ այնպէս է խօսուած որ պարտադիր եւ անմիջապէս գործադրելի լինին բոլոր այն պայմանները որ սկզբում են գրուած, իսկ այն պայմանները որոնց համար նշանակուած է «Pendant la guerre», դրանք պարտադիր կը լինին մի յետագայ բանակցութիւնից յետոյ:

Չնկատելով որեւէ պայման պարտադիր՝ այնուամենայնիւ Ռոստոմի հետ միասին մենք եկանք այն եզրակացութեան, որ կարող էինք անմիջապէս ձեռնարկել 1, 2 եւ 3 յօդուածների գործադրութեան: Ինչ վերաբերում են 4, 5 եւ 6-երորդ յօդուածներին, դրանք բաներ են որ շատ կամ քիչ չափով կազմակերպութիւնը վճռել է անել, լինէր այս -պայմանագիրը կամ ոչ: 7-երորդ եւ 8-երորդ յօդուածների գործադրութիւնը մեր կողմից, Ռոստոմի գաղափարով, աւելի եւս կ'ամրապնդէ կազմակերպութեան եւ Կովկասի մուսուլմանների յարաբերութիւնը, եւ նրանց գործադրութիւնը միայն օգուտ կարող է բերել մեզ, եւ ոչ մի վնաս կամ զոհողութիւն: 9, 10 եւ 11-երորդ յօդուածները մեծ նշանակութիւն չունին եւ կազմակերպութիւնը կարող է անել երբ որ պարսիկների կողմից հրաւէր լինի մեզ այդ մասին:

Ինչ վերաբերում է մնացեալ պայմաններին, դրանք միայն կարող են գործադրելի համարուիլ պատերազմի դէպքում, եւ եթէ պայմանագիր էլ ստորագրուէր, ինչպէս վերն ասացի, նորից նրանք անմիջապէս պարտադիր չէին համարուի եւ կարօտ կը մնային մի նոր բանակցութեան:

Պարսիկների յանձնառութեան մէջ մեզ համար ամէնից նշանաւոր կէտը 2-րդն է: - Եթէ կարողանանք ի փոխարէն մեր արածների, նրանց անել տալ այդ կէտը, արդէն պիտի մենք մեզ բաւարարուած համարենք: Առաջին կէտը մի բան է որ փոքր կամ շատ չափով մենք միշտ ունեցել ենք եւ յետայսու աւելի եւս կ'ունենանք: 6-երորդի մասին մի բան ասել չեմ կարող առ այժմ: Չորրորդն էլ կարողանանք որոշ չափով յաջողցնել լաւ է ի հարկէ, բայց դա պիտի տեսնել դեռ:

Մնացորդ կէտերի համար էլ կարող եմ ասել այն միայն ինչ ասացի նախորդի համար:

Այս իմաստով նամակ գրուած է Ժընեւ, եւ Արեւելեան Բիւրոյին էլ կը զեկուցագրէ Ռոստոմը անձամբ:

Մեզ հետ բանակցողների անունները, որպէս նաեւ բանակցութեան բովանդակութիւնը եւ մանրամասնու-

թիւնները կը մնան կատարելապէս գաղտնի. հետեւաբար այդ մասին ոչ մի խօսք կարիք չկայ ասել ձեր այդ-տեղի պարսիկ բարեկամներին։

Ես այստեղ կը շարունակեմ յարաբերութիւնները առանց ստանձնելու որեւէ պատասխանատուութիւն կամ խոստման որեւէ կատարում առանց նախապէս իմաց տալու Ա[րեւելեան] Բիւրոյին։ Ամէն մի ժողովից յետոյ Ռ[ոստոմ] եւ ես խորհրդակցում էինք երեք ուրիշ ընկերների հետ որոնք կատարելապէս ծանօթ են բոլոր հարցերի հետ։ Այդ ընկերներն են՝ բժիշկ Ստեփան Ստեփանեան, Ա. Ջալալեանց եւ Ռ. Թունեանց։ Տեղական մարմինը ոչ մի տեղեկութիւն չունի այս բոլորից, հետեւաբար այդ խնդիրների առթիւ պիտի նամակներն ուղղել բժիշկին, որին շատ լաւ ճանաչում էք։ Տեղական մարմնին վերաբերող հարցերը պիտի գրուին զատ նամակներում։

Այս մասին սրանից աւելի առ այժմ հարկ չկայ ասել։ Եթէ նոր խնդիրներ ծագին այս բանակցութիւնների շուրջը, այդ մասին իմաց կը տամ ձեզ։

ԱՐԲԱԿ[4]

4.- Արբակ կամ Արբակ Ոշտունի՝ ծածկանունն է Նոյնինքն Յովսէփ Միրզայեանի։

Բ.– ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ ԵՒ ՊԱՐՍԻԿ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐՈՒ

Թեհրանի մէջ պարսիկ սահմանադրականներու հետ համաձայնութիւն գոյանալէ ամիսներ ետք, 1908 թ. Օգոստոսին, յեղափոխական երկու կողմերու միջեւ գործակցութեան համաձայնագիր կնքուեցաւ նաեւ երկրին հիւսիսը՝ Ատրպատականի մէջ, որ այդ օրերուն կը նկատուէր հայութեան եւ միաժամանակ Պարսկաստանի դաշնակցական կազմակերպութեան կեդրոնը։ Առաջին փաստաթուղթը որոշապէս արձանագրութիւնն է Կեդր. Կոմիտէի նիստերէն մէկուն (44րդ), ուր ի ներկայութեան Արեւելեան Բիւրոյի առաքած պատգամաւոր Արտաշէս Մելքոնեանի (Բրինդար), կը վճռուի Դաշնակցութեան գործօն մասնակցութիւնը Իրանի յեղափոխական շարժումներուն (թեր ու դէմ կարծիքներու արձանագրութեամբ)։ Երկրորդը բուն համաձայնագիրն է՝ ստորագրուած դաշնակցական մասնակիցներու կողմէ։ Երրորդը՝ նոյնին պարսկերէն պատճէնն է՝ ստորագրուած պարսիկ յեղափոխականներուն կողմէ։ Այս վերջինին, ինչպէս նաեւ Գ. բաժանմունքի թիւ 528բ-17 փաստաթուղթին պարսկերէն բնագիրները թարգմանած են՝ ընկերներ Արա Պուլուզեան (այժմ Ստեփանակերտ հաստատուած) եւ Գրիգոր Ղազարեան՝ Թեհրանէն։

Փաստ. 475-10

Բ 1.– ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Նիստ ԽԴ.

19 Օգոստոս [1908]

Ժողովը զբաղուեց ներկայ շարժման մեր ակտիւ մասնակցութեան խնդրով։ Նիստին ներկայ էր Ա[րեւելեան] Բ[իւրոյ]ից ընկեր Բրինդար։ Ընկերոջ զեկուցումից երեւաց, որ Ա. Բ.ն համաձայն է, որ մենք ակտիւ մասնակցութիւն ցոյց տանք ներկայ շարժման։ Այս առթիւ եղած վիճաբանութիւնը հետեւեալ բանաձեւերին յանգաւ, որոնցից առաջինը ձայների մեծամասնութեամբ ընդունուեց։

Ա. [ՄԵԾԱՄԱՄՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՁԵՒ]

Ի նկատի ունենալով՝

ա) Որ այս ազատագրական շարժմանը մենք որպէս յեղափոխականներ, պարտաւոր ենք մասնակցիլ, որովհետեւ մասնաւորապէս արեւելքի քաղաքական կացութեան վրայ կարող է ազդել ներկայ շարժման այս կամ այն կերպի վախճանը։

բ) Որ մեր մասնակցութիւնը շարժմանը կը տայ ցանկալի ուղղութիւն եւ տեւողութիւն։

գ) Որ ներկայ յուսահատական դրութեան մէջ մեր մասնակցութիւնը կարելի է համարել ե՛ւ այժմէական ե՛ւ նպատակայարմար, որով ցանկալի ոգեւորութիւն կարելի կը լինի ներշնչել լքուած, յուսահատ ժողովրդի մէջ։

Բ. [ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՁԵՒ]

1) Պարսկական շարժումները տարերային են. Թաւրիզի յաջողութիւնները պատահական բնոյթ ունին (Արքի, արսենալի[5] *եւայլն յեղ[ափոխական]ների ձեռք անցնելը)։ Չկան ոգեկան հիմքեր շարժումը առաջ տանելու, ապացոյց, որ Ատրպատականի ոչ մի անկիւնը արձագանգ չտուեց։*

2) Եթէ վաղը յեղափոխականները (պարսիկ) ընկճուեն, Դաշնակց. պիտի մնայ միակ եւ հայ ժողովուրդը ամբողջովին պիտի ենթարկուի Թուրք[6] *ֆանատիկ ամբոխի (հէնց այսօրուայ յեղափոխականների) սրածութեան ու թալանին։ Բնաջնջումի գնով ձեռք բերել ի՛նչ որ անորոշ իրաւունքներ՝ (չմոռանալով, որ պարսկա-*

5.- Արքը՝ Թաւրիզի միջնաբերդն է, արսենալ՝ զինապահեստ, զինամթերք։

6.- Խօսքը կը վերաբերի Ատրպատականի բնակչութեան մեծամասնութիւնը կազմող Պարսկաստանի թուրքերուն։ Բուն թուրքերուն կը տրուի տաճիկ անունը, իսկ Թուրքիոյ համար՝ Տաճկաստան։

դ) Որ նախկին նկատումները (պրովոկացիա հայ տարրի դէմ։ Օտար պետութիւնների ոչ ցանկալի միջամտութիւն, որը տգէտ մասսան մեր մասնակցութեան վերագրեց։ Որ իբր թէ շարժումը անյուսալի է, իսկ ժողովուրդը անպատրաստ եւ վերջապէս, որ մենք մեր մասնակցութեամբ կը վնասենք տաճկահայ գործին՝ վտանգի ենթարկելով մեր կարեւոր կայանները եւայլն եւայլն) իրենց նշանակութիւնը կորցրել են ներկայումս[7]։

ե) Որ ներկայ շարժման պարտութիւնը կարող է մահացու լինել սահմանադրական կարգերի համար։

զ) Որ անհրաժեշտ է հէնց այժմ կոտրել միապետական ուժը, որովհետեւ հակառակ դէպքում, ուժեղանալով միապետութիւնը՝ դժուարին կը դառնայ ապագայ շարժումը յաջողութեամբ վերականգնել։

է) Որ սերտ յարաբերութեան մէջ մտնելով պարսիկ ազգաբնակութեան հետ, հնարաւորութիւն կ'ունենանք բացատրել նրանց շարժման էութիւնը, իրենց պահանջները, «Կ. Է.»-ի պակասութիւններն ու առաւելութիւնները։

ը) Որ սա միջոց կը լինի պարսկահայերի համար իրաւահաւասարութիւն պահանջել, որպէս միեւնոյն հայրենիքի հարազատ զաւակներ եւայլն եւայլն։

Ուստի՝ ժողովը վճռում է (5 հոգի ընդդէմ 2-ի) ակտիւ մասնակցութիւն ցոյց տալ ներկայ շարժմանը։

Հայերի դրութիւնը շատ է տարբերւում ռ[ուսա]հայի եւ տաճկահայի դրութիւնից։ Նա Պարսկաստանում նոյն իսկ մասամբ արտօնեալ վիճակ ունի՝ ունենալով ազգ. կուլտուրական գործերի ազատութիւն, տուրքից ազատ լինել եւայլն եւայլն) դա մի անտակտ քայլագողութիւն է։

3) Դեռեւս տաճկ. սահմանադրութիւն յայտարարուելով, չպէտք է ինքնամոռացութեան մէջ ընկնել եւ Տաճկաստանում յեղափ. ապստամբ. գործը վերջացած համարել։ 3 Ֆրոնտի վրայ կռուելը մեզ կը տանի դէպի ուժերի ցրւատում։

4) Ակտիւ մասնակցութեան համար պէտք է ունենալ Ընդհ. ժող. հաստատութիւնը։ «Աջակցութիւն» անուան տակ այսօր որեւէ ոյժով երեւան գալը, իսկ վաղը յանկարծ հակառակ որոշումով «աջակցելը» աւելորդ, կամ անկարելի համարելը՝ կը տանէ մեզ դէպի նոյն կործանարար հետեւանքները։

5) Անհրաժեշտ էր ունենալ այդ մասին մեր շրջանների մարմինների (կոմիտէների) կարծիքը։

6) Հակայեղափոխական բանակը կը յայտարարէ «քաֆիրների» կռիւը իսլամի դէմ, ինչպէս այսօր յորջորւում է «Բարի»ների կռիւ. դա կը վնասէ ընդհ. յեղափ. գործին, ինչպէս խոստովանել են մեր բարեկամները։

7) Մի կարգ այլ նկատումներ։

8) Ուրախ պիտի լինիմ, անկեղծօրէն, եթէ ապագան ցոյց տայ, որ սխալուած եմ իմ նկատումների մէջ։

ՎԱՀԱՆ, ՋՈԿ, ԲԱԶՈՒԿ, ԱՐՄԷՆ, ՀԱՑՐԻԿ, ԲՐԻՆԴԱՐ, ՍՏԵՓ, Քարտ.՝ ՇԷՆ

7.- Նկատի ունի Թուրքիոյ կացութեան փոփոխութիւնը՝ Օսմանեան սահմանադրութեան հռչակումով։

Փաստ. 475-11

Բ 2.– ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

(Պարսիկ յեղափոխականներու եւ Ատրպատականի Կ. Կոմիտէի)

Թաւրիզ, 22-VIII- 908

Ներկայութեամբ Հ.Յ.Դ. Արեւելեան Բիւրոյի կողմից Բրինդարի, Ատրպատականի Կ. Կոմիտէի կողմից Մ[տեփան] Ստեփանեանի եւ Վ[ահան] Զաքարեանի, պարսիկ յեղափոխականների կողմից, Հաջի Ալու, Աղա Միրզա Սէյիդ Հիւսէյն Խանի, Միրզա Ալաքբարի, Սաթթար խանի[8] եւ Միրզա Մահմադ Բաղու ժողով տեղի ունեցաւ՝ խորհելու եւ համաձայնութեան գալու Պարսկաստանում ընդհանրապէս, Ատրպատականում մասնաւորապէս, յեղափոխական ուժգին գործունէութիւն սկսելու եւ շարժումները նպատակայարմար ձեւով տանելու ու ցանկալի ուղիի վրայ դնելու։

Այդ ուղղութեամբ երկար խօսակցութիւններից եւ մտքերի փոխանակութիւններից յետ, ժողովը եկաւ որոշ եզրակացութեան ու հետեւեալ կէտերի վրայ համաձայնութիւն կայացրեց, որոնք պարտաւորական են երկու կողմերի համար.

I – Հ. Յ. Դ. իբր կուսակցութիւն մտնում է ակտիւ գործունէութեան մէջ, աջակցելու շարժմանը։

II – Թաւրիզում կազմւում է խառը կոմիտէ 7 հոգուց բաղկացած, որի մէջ Դ[աշնակցութ]իւնը ունենում է 2-3 ձայն իր ներկայացուցիչների միջոցով։

III – Այդ կոմիտէն է կարգադրողը բոլոր ընթացիկ գործերի եւ միակ վճիռներ արձակողը բոլոր ձեռնարկների։

IV – Կազմւում է մի զինուորական շտաբ 3 հոգուց բաղկացած, վարելու զուտ զինուորական գործերը, կռուի ծրագրեր չինելու եւայլն։ Դ-իւնը ունենում է այդ մարմնի մէջ իր ներկայացուցիչը ձայնի իրաւունքով։

V – Սաթթար խանին է վերապահւում ընդհանուր հրամանատարի անունը. զինուորական որոշումները մարմնի վճռով կատարւում է Սաթթար խանի անունով։

VI – Խառը կոմիտէն եւ շտաբը փոխադարձաբար ունենում են միմեանց մէջ մի-մի ներկայացուցիչ։

VII – Աշխատիլ շարժումները ծաւալել ամբողջ Պարսկաստանում, Սահմանադրութիւնը հիմնաւորելու եւ իրաւակարգը վերահաստատելու համար։

VIII – Դաշնակցութիւնը բերում է իր օգնութիւնները հնարաւոր չափով եւ պայմաններում։

IX – Դ-եան զինուորները ապրում են նոյն պայմանների մէջ ինչ որ պարսիկ ֆետայիները։

X – Թաւրիզում, Դ-եան զինուորների ծախսերը լինելու են ընդհանուր միջոցներով, ընդհանուր կասսայից։

XI – Դրամական հարցերը կարգադրում է խառը կոմիտէն։

XII – Դ-իւնը առ այժմ տալիս է 30 զինուոր իրենց հրացաններով եւ այնքան փամփուշտներով՝ որքան որ կարող են վերցնել, եւ նրանց մինչեւ Թաւրիզ հասցնելու ծախսը վերցնում է իրեն վրայ։ Դրանից յետոյ հսկում է խառը կոմիտէն։ Այդ թուի մէջ հաշւում է եւ թնդաձիգները եւ ռմբաձիգները։

XIII – Դաշնակցութիւնը վարում է ուժեղ պրոպագանդա իր օրգաններում, դրսի մամուլում եւ ուրիշ հնարաւոր միջոցներով։

XIV – Խառը կոմիտէն պարտաւորւում է շարունակաբար յարաբերութեան մէջ լինել Արեւելեան Բիւրոյի հետ եւ նրան տեղեակ պահել գործերի ընթացքի հետ։

Սոյն արձանագրութիւնը գրուեց երկու օրինակ եւ փոխանակուեց։

Արեւելեան Բիւրոյի կողմից՝ ԲՐԻՆԴԱՐ
Հ.Յ.Դ. Ատրպատականի Կ. Կոմիտէի կողմից՝ ՍՏԵՓ, ՎԱՀԱՆ

8.- Սաթթար խան՝ գլխաւոր առաջնորդը պարսկական սահմանադրական-յեղափոխական շարժման։

Բ 3.– ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՊԱՐՍԿԵՐԷՆ ՕՐԻՆԱԿԸ



ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

1326 թ.ի Շաբան ամսի 7ին (լուսնային օրացոյց) համապատասխան՝ 1908 թուականի Օգոստ. 22ին, գրուեց այս պայմանագիրը՝ յանուն Սահմանադրութեան սրբազան նպատակների առաջատարման, ներքոյիշեալ երեք կենտրոնների ներկայացուցիչների ներկայութեամբ՝ Թաւրիզի եւ Ատրպատականի հաւաքականի (էջթմաիյուն) կողմից պարոնայք Աղա Միրզա Մոհամմադ Թաղի խան եւ Սէյէդ Հոսէյն Իսան, Ատրպատականի հայկական խմբի կողմից՝ Վահան եւ Ստեփան եւ Թիֆլիսի ընդհ. կենտրոնի կողմից՝ մուսիու Բրենդեր:

Առաջին – Դաշնակցութիւնը համագործակցելու է եւ քայլեր է վերցնելու Սահմանադրութեան յառաջադիմութեան համար:

Երկրորդ – Որոշուեց կողմերից կեանքի կոչել մի յանձնախումբ, որի թիւը առայժմ վերոյիշեալ եօթ հոգին են լինելու:

Երրորդ – Յեղափոխականներին վերաբերող աշխատանքներում, այս եօթ հոգին լրիւ իրաւասութիւն եւ լիազօրութիւն են ունենալու՝ հարկ եղած եւ պատշաճ տնօրինումները կատարելու համար, Դաշնակցութեան *(բնագրի մէջ գրուած է խմբակցութեան, բայց ակնարկը Դաշնակցութեան մասին է – Ա. Պ.)* բոլոր ֆիդայիները ենթարկուելու են մէկ հոգու եւ մէկ հոգուց են հրահանգ ստանալու:

Չորրորդ – Կեանքի է կոչուելու զինուորական մի յանձնախումբ եւ զինուորական բոլոր հարցերը լինելու են այս յանձնախմբի իրաւասութեան ներքոյ. զինուորական յանձնախմբից մէկ հոգի մասնակցելու է այս միացեալ յանձնախմբին. զինուորական յանձնախումբը ենթարկուելու է առաջին կոմիտէին:

Հինգերորդ – Սաթքար խանը լինելու է առաջին հրամանատար եւ Բաղեր խանը երկրորդ հրամանատար:

Վեցերորդ – Այս միասնական յանձնախմբի ժողովներին ու զրոյցներին ներկայ է լինելու զինուորական յանձնախմբի ներկայացուցիչը եւ փոխադարձաբար զինուորական յանձնախմբի ժողովներին եւս ներկայ պիտի լինի մէկ հոգի այս միասնական յանձնախմբից, որպէսզի այս երկու յանձնախմբերը իրար հետ կապ ունենան:

Եօթներորդ – Դաշնակցութեան կոմիտէն յանձն է առնում որ հնարաւորին չափ ինչքան որ կարելի է իր բոլոր ուժերով օժանդակութիւն ցուցաբերի Իրանի սահմանադրութեան նպատակների իրագործման համար:

Ութերորդ – Դաշնակցութեան ֆիդայիները հէնց այնպէս են վարուելու եւ կեցուածք ցուցաբերելու ինչ որ Իրանի ֆիդայիները:

Իններորդ – Յանձնախմբի ծախսերը, կատարուելու են կողմերի համաձայնութեամբ եւ հայեցողութեամբ:

Տասներորդ – Դաշնակցութեան ֆիդայիների ծախսերը գոյացուելու են հէնց նոյն դրամական սնտուկից:

Տասնմէկերորդ – Այս յեղափոխութեան եւ շարժումի ալիքները պիտի սփռել Իրանի ամբողջ կէտերում, որպէսզի բոլորը համահաւասար իրաւունք ունենան իրենց պահանջատիրութեան մէջ:

Տասներկուերորդ – Առայժմ, Դաշնակցութեան յանձնախումբը երեսուն հոգի զինեալ, փամփուշտներով ու հրացանով, տրամադրելու է Իրանի մուջահեդներին:

Տասներեքերորդ – Դաշնակցութիւնը յանձն է առնում, որ իր մամուլի ընտանիքի միջոցով, հրապարակի եւ քարոզի Իրանի ժողովրդի իրաւացիութիւնն ու իրաւունքի պահանջատիրութիւնը աշխարհի ժողովուրդների մօտ:

Տասնչորսերորդ – Եօթ հոգուց բաղկացած այս յանձնախումբը, աշխատանքներից եւ իրադարձութիւններից իրազեկ է պահելու Թիֆլիսի կենտրոնին:

Սոյն պայմանագիրը ստորագրել եւ պատրաստուել է երկու օրինակով, մէկ օրինակը յանձնուել է Դաշնակցութեան կենտրոնին եւ միւս օրինակը պահուել է միասնական այս յանձնախմբի մօտ:

[Հինգ ստորագրութիւններ, որոնցմէ երեքը՝ անընթեռնելի]
ՍԷՅԷԴ ՀՈՍԷՅՆ ԽԱՆ
ՍԷՅԷԴ ՄՈՀԱՄՄԱԴ ԹԱՂԻ

Գ.– ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԹԵՀՐԱՆԻ ԳՐԱՒՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՒ ԱՅԼ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Փաստ. 476-22

Գ 1.– ՌՈՍՏՈՄԷՆ ՆԱՄԱԿ ԺԸՆԵԻ[9]

Սիրելիք,

Ստացուեց Ցոնանի[10] *վերջին երկու նամակները, ինչպէս նաեւ Պոլսոյ ընկերների եւ գաւառների դրութեան վերաբերեալ հեռագիրը։ Մեր նամակները գուցէ եւ ձեր նամակներից մի քանիսը երեւի ընկել են Ղայիմ խանի ձեռքը։ չի ստացուել Փարիզից ուղարկուած քոլիները* (colis)*։ Թող դիմեն փոստատանը եւ յետ պահանջեն արժէքը կամ քոլիները։*

Թեհրանից ստացուել է հեռագիր, որով յայտնում են որ Սահմանադրութիւնը հռչակուել է եւ 2 ամսից յետոյ պիտի բացուի պարլամենտը, չուտով կ'ուղարկուի ընտրութեանց կանոնները։ Մեր մասնաւոր հեռագրի համաձայն հայերը եւս ներկայացուցիչներ կ'ունենան։ Եթէ հարկ լինի, Ցոնանը կը համաձայնի՞ արդեօք քուէարկել[12]*։*

Քաղաքի դրութիւնը լաւ է։ ճանապարհները բացուելու պատճառով սովը վերացուել է։ այժմ էլ տօնում են Սահմանադրութեան հրատարակութիւնը թէեւ ոչ սպասուած եռանդով։ Դրա պատճառը թերահաւատութիւնն է դէպի Շահի յայտարարութիւնը։— Որովհետեւ դեռեւս յայտնի չէ թէ ինչ ձեւի է լինելու Սահմանադրութիւնը եւ ռուսաց զօրքի ներկայութիւնը։ Մանրամասն տեղեկութիւններ հետեւեալ փոստով։ Դուք էլ շուտ գրեցէք։

ՌՈՍՏՈՄ

25-IV-909
Վրէժ

Մատեան թիւ 55

Գ. 2

Հեռագրալուր հաղորդած Journal de Genève-ին եւ Gazette de Lausanne-ին։

1909, *Մայիս* 7

Թեպրիզէն հեռագիր՝ որ կը հաղորդէր թէ Եփրեմը 80 հոգով գրաւեր է Ղազուինը եւ գերի բռներ կառավարիչը, զօրքերը եւ թնդանօթները (4 *հատ*)։

9.- Թէեւ Ռոստոմ այդ օրերուն Թաւրիզ կը գտնուէր, բայց իր ձեռագիրը չէ. հաւանաբար նամակին մէկ պատճէնն է։
10.- Յոնան Դաւթեան, անդամ Արեւմտեան Բիւրոյի։
11.- Այսինքն ընտրուիլ։

Փաստ. 74-215

Գ 3.– ՀԵՌԱԳԻՐ

(Լատինատառ հայերէն)

Թեհրան 13-7-09

Թեհրանէն Ժընեւ, Դրօշակի խմբագրութեան

Լուսաբացին Թեհրանը վերցուեց Սուպահտարի, Եփրեմի, Սարդար Ասադի խմբերով — բրիգադային զօրանոցը պաշարուած — Եփրեմի խումբը գրաւեց մեջլիսը — Շահը մնաց քաղաքից դուրս ամարանոցում։

ՀԱՅԿՈՒՆԻ

Գ 4.– ՀԵՌԱԳԻՐ

(Լատինատառ հայերէն)

Ժընեւ, Դրօշակի խմբագրութեան

Ռաշտի յեղափոխականները միացած բախտիարցիների յարձակուեցին Սալտանաբադի եւ Թեհրանի վրայ — Շահը փախել է ռուսական միսսիան — Սալտանաբադը գրաւուած է — Թեհրանում շարունակւում է ռուսական ապարանքի դէմ բոյկոտը յայտարարուած։

ՆԵՐՍԷՍ

Փաստ. 528բ-15

Գ 5.– ՎՐԷԺԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ՀԵՌԱԳԻՐ

Téhéran
Entremise Yeprème
Parlement, Dare Chouraye Milli

A l'occasion de la brillante victoire d'une lutte intrépide, persévérente et glorieuse de tous les peuples de la grande Iran pour leurs droits imprescriptibles, nous vous envoyons nos saluts fraternels et félicitons vivement la complète victoire de la cause du peuple.

Aimons espérer que la nouvelle Iran régénérée sortant glorieuse d'une lutte intrépide et sanglante commencera une nouvelle ère pour tous les travailleurs, accomplira la complète égalité des nations, fondera toutes les libertés et sera le vrai interprète des vœux et des besoins des populations de l'Iran, martyrisées pendant des dizaines de siècles.

COMITÉ CENTRAL DE LA PERSE DE LA FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE DASCHNAKZOUTIOUN

19-VII-909, Tavris

Ազգ. Խորհրդարանին, Տարը Շուրայի Միլլի,
Թեհրան
Եփրեմի միջոցաւ

Վասն իրենց անկորնչելի իրաւունքներու [ձեռքբերումին] Մեծն Իրանի բոլոր ժողովուրդներուն [մղած] անվեհեր, յարատեւ եւ փառաւոր պայքարի փայլուն յաղթանակին առիթով, կը յղենք մեր եղբայրական ողջոյնները եւ ջերմօրէն կը շնորհաւորենք ձեզ՝ ժողովուրդի դատին համար [տարուած] ամբողջական յաղթանակին համար։

Կը յուսանք, որ անվհատ ու արիւնոտ պայքարէն յաղթական դուրս եկած վերածնող նոր Իրանը՝ նոր դարաշրջան մը պիտի բանայ բոլոր աշխատաւորներուն համար, պիտի իրագործէ ազգերու ամբողջական հաւասարութիւնը, հիմքը պիտի դնէ բոլոր ազատութիւններուն եւ պիտի հանդիսանայ իսկական թարգմանը՝ Իրանի տասնեակ դարերէ ի վեր տառապող բոլոր ժողովուրդներու բաղձանքներուն եւ կարիքներուն։

ՀԱՅ ԵԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

19-VII-909, *Թաւրիզ*

Մատեան թիւ 55

Գ 6.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԺԸՆԵՒԷՆ

17 *Նոյ.* 1909

Président Medjliss, Téhéran,

Félicitations ouverture Medjliss – Espérons Perse constitutionnelle saura défendre avec honneur liberté pays, égalité citoyens sans distinction nationalité.

DASCHNAKZOUTIOUN

Մեջլիսի նախագահին, Թեհրան,

Շնորհաւորութիւններ Մեջլիսի բացման առիթով – կը յուսանք որ սահմանադրական Պարսկաստանը պիտի գիտնայ պատուով պաշտպանել երկրին ազատութիւնը, քաղաքացիներու հաւասարութիւնը, առանց ազգային խտրութեան:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Փաստ. 74-238

Գ 7.– ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

22 *Նոյ.* 1909

Dachnaczoutioun Genève

Vivement touché votre aimable félicitation prie agréer remerciements –

Président madjlisse
MOSTACHAR-ED-DOVLET

Դաշնակցութեան Ժընեւ

Խորապէս զգացուած ենք ձեր սիրալիր շնորհաւորութեան համար – կը խնդրեմ ընդունիք շնորհակալութիւններս –

Մաջլիսի նախագահ՝
ՄՈՍՏԱՇԱՐ-ԷԴ-ԴՈՎԼԷՏ

Փաստ. 528բ-17

Գ. 8

Գրութեան հեղինակը՝ Ատրպատականի մէջ Հ.Յ.Դ.ի ներկայացուցիչ Թադէոսեան Սամսոնն է, ծանօթ Գարեգին ծածկանունով:



Շաբան 21, 1327 թ., [1909 Օգոստոս]
Սալմաստ

Մեծարգոյ եւ յարգարժան պրն. Սաթթար խան,
գերապատիւ ազգային զօրապետ հրամանատար,

Քանի ժամանակ առաջ, մի գրութիւն ուղարկեցի Ձեզ, բայց դեռ պատասխան չեմ ստացել, ուստի երկրորդ անգամուայ համար եմ գրում այս երկտողը Ձեզ համար:

Հեշմաթոլ Վոզարան, որ Սալմաստի կառավարիչն է եւ բռնատէրներից է, ու քանի տարի է, որ Սալմաստում եւ այլուր բռնատիրական արարքներով է զբաղուած, հիմա էլ՝ Սահմանադրութեան այս օրերին, ժողովրդի հետ արդար վարուելու փոխարէն, անում է հակառակը եւ իր բոլոր ջանքերը ի գործ է դնում հայրենիքի եղբայրների մէջ խլրտում եւ պառակտում ստեղծելու եւ նրանց հարուածելու:

Մի քանի օր առաջ, երկու ֆիդայիների որոնք առաջին օրուանից, հայրենիքի սահմանադրութեան համար, պայքարել են համահաւասար իսլամ եղբայրների կողքին, դրանցից մէկին Ախթախանէ (?) գիւղում եւ միւսին էլ Օլա գիւղում ծեծի են ենթարկել եւ վիրաւորել են. նրանց անգամներ ասուել է կառավարութեանը եւ արդարութիւն է պահանջուել, բայց պրն. Հեշմաթը հարցերին վերահասութիւն տալու փոխարէն, իր բոլոր ջանքերը ի գործ է դնում երկու եղբայր համայնքների մէջ խլրտում եւ թշնամութիւն սերմանելու:

Յայտնում եմ, որ եթէ այս պառակտիչ քաղաքականութիւնը չկասեցուի, վախենամ որ պրն. Հեշմաթը վերջապէս հասնի իր նպատակին:

Իսկ պրն. Ֆարամարզ խանի վերաբերեալ իմ անցեալ նամակի մէջ մանրամասն բացատրել էի իր դրութեան մասին. իր բոլոր ունեցուածքը ձեռքից տուել է եւ ամբողջովին անտուն ու թշուառ վիճակում է. խնդրում եմ իր ունեցուածքի եւ ապրուստի մասին այնպէս տնօրինէք որ պատշաճ է եւ նա հանգիստ ապրի. նա իրեն նուիրել է հայրենիքին, ինչո՞ւ պիտի այս դրութեանը մատնուի. ցանկալի է, որ պատշաճ տնօրինում կատարէք:

Թաւրիզի ժողովրդական Սրբազան Միութիւնը խիստ արգիլել է, որ յետ այսու խանեւարի* հաւաքուի սակայն պրն. Հեշմաթը հակառակ Թաւրիզի Ժողովրդական Սրբազան Միութեան որոշման, դեռ շարունակում է հաւաքել խանեւարի:

---

* *Պարսկերէն՝ ընտանեկան հանգանակութիւն:*

Փաստ. 475-9

Դ 1.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ
Հ.Յ.Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՆՏՐ. ԿՈՄ.Ի ՇՐՋԱՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

Ընկերնե՛ր,

Շրջանիս IV*րդ պատգամաւորական ժողովը նշանակուած է այս տարուայ Նոյեմբեր* 1-*ին՝* X *քաղաքում*[12]:

Ուղարկելով ձեզ այդ ժողովի օրակարգի ցուցակը, խնդրում ենք կազմել ձեր շրջանում ըստ կարելոյն լայն խորհրդակցութիւններ, հնարաւորութիւն տալով ամէն մի դաշնակցական խմբին՝ լիովին արտայայտելու իր կարծիքները այն բոլոր խնդիրների վերաբերմամբ, որ նա իր ձեռնհասութեան սահմանի մէջ է համարում: Այնպէս որ ժողովին ներկայացող պատգամաւորը պիտի բերէ իւր հետ ոչ միայն իր շրջանի մեծամասնութեան, այլեւ փոքրամասնութեան կարծիքները:

Որովհետեւ շրջանային յառաջիկայ ժողովը տեւելու է շատ կարճ, ժամանակի սղութեան պատճառաւ, ուստի խնդրում ենք առաջարկուած հարցերի վերաբերմամբ բերել նախօրօք պատրաստուած զեկուցումներ եւ մշակուած եւ պատճառաբանուած բանաձեւեր, որպէսզի ժողովը ժամանակ չկորցնէ այդպիսի բանաձեւեր մշակելու համար: Զեկուցումներն ու բանաձեւերը լինելու են գրաւոր:

Բացի մեր այս օրակարգի հարցերից, շրջանները կարող են դնել եւ սեփական հարցեր եւ առաջարկներ:

Խնդրում ենք ուղարկել ձեր տեղեկագիրները, հաշուեկշիռը եւայլն ժողովի գումարումից գոնէ մի շաբաթ առաջ, որպէսզի Կ. Կոմիտէս հնարաւորութիւն ունենայ իր տեղեկագիրը եւ հաշուեկշիռը պատրաստելու:

Ուղարկել նոյնպէս այն զինացոյց տախտակը, որ մենք ուղարկել ենք ձեզ սրանից մի քանի ամիս առաջ, համապատասխան սիւնակները լցնելով:

Այն մարմիններն ու շրջանները, որոնք 1908 *տարուայ ընթացքում գոնէ Ա. կիսամեայ հաշիւը չեն ուղարկել Կ. Կոմիտէին՝ զրկւում են վճռական ձայնի իրաւունքից:*

Ժողովի տեղի մասին կը հաղորդուի ձեզ ժամանակին:

ՕՐԱԿԱՐԳ

I — *Տեղեկագիր եւ հաշուետուութիւն շրջանների եւ Կենտրոնակ[ան] Կոմիտէի:*

Ծանօթ.— Տեղեկագրի մէջ բերել ճիշտ թուեր անդամների, մարմինների, ունեցած զինամթերքի եւ ամբողջ ինվենտարի վերաբերեալ: Ժողովրդի տնտեսական կացութիւնը եւ անդրադարձումը յեղ. շարժումների վրայ, նրա տրամադրութիւնը եւ վերաբերմունքը դէպի մեր մարմինները: Տեղական մարմինների կազմը եւ նրանց ծաւալը զանազան խաւերում: Մեր աշխատաւորակ[ան] քաղաքականութեան հետեւանքները: Աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանութեան համար առաջ եկած մարմինները, նրանց ծաւալը եւ գործունէութեան արդիւնքը, Հ.Յ.Դ. կանանց Կարմիր Խաչը: Կուսակցութեանս անդամների եւ համակրողների թուի ելեւէջները: Կազմակերպութիւնից դուրս գտնուող խաւերի պահանջները դէպի կազմակերպութիւնը եւ նրանց ստանձնած պարտականութիւնները: Շրջանիդ 1909 *թուի հաւանական բիւդճէն, ինքնապ[աշտպանութեան] գործի վիճակը:*

II — *Ներկայ քաղաքական մոմենտի պահանջները Պարսկաստանում եւ Դաշն. գործունէութիւնն ու տակտիկան մեր շրջանում (պարսկ. սահմանադրակ. ազատագր. շարժումը եւ մեր դիրքը: Մեր ժողովրդի ընդհանրապէս եւ ընկերների մասնաւորապէս տրամադրութիւնն ու վերաբերմունքը այդ շարժմանը հանդէպ):*

III — *Տաճկական սահմանադրութիւնը եւ մեր դիրքը տաճկահայ եւ կովկասահայ խնդիրների վերաբերմամբ:*

IV — *Մեր տակտիկան ընդհանուր հասարակական հարցերում՝ քաղաքական, կուլտուրական եւն. եւն.:*

V — *Մեր վերաբերմունքը դէպի ազգային հիմնարկութիւններն ու հաստատութիւնները — ազգային թեմակ[ան] պատգամ. ժողովը, թեմական գործակալակ[ան] խորհուրդները, բարեգործական, կրթական եւն ընկերութիւնները, հոգաբարձութիւնք, դպրոցներ, գրադարաններ, թատրոնական գործ, եւն.:*

VI — *Ինքնապաշտպանութեան գործը մեր շրջանում:*

VII — *Ներքին կանոնագրութեան վերաքննութիւնը ու վերահաստատումը եւ ներքին կազմակերպական հարցերու մեր աշխատաւորակ[ան] միութիւնները եւ ազգութեան հարցը այդ խնդրում, քաղաքական խմբերի կազմը, Կարմիր Խաչ, մարտակ[ան] խմբեր, զին. վարժութիւն եւ ժողովրդակ[ան] զինումն, եւն.:*

VIII — *Գրաւոր եւ բանաւոր պրոպականդ.— Կ. Կոմիտէիս օրգանի հրատարակութեան հարցը, դաշնակցական մամուլի եւ այլ հրատարակութիւններ տարածումն, պրոպականդիստներ պատրաստելու կամ ունենալու հարցը, բանաւոր պրոպականդի նիւթը, եւն.:*

IX — *Համերաշխութիւն եւ համագործակցութիւն ազգային եւ օտար կուսակցութիւնների հետ:*

X — *Խարիսխ արհեստանոցը*[13]:

XI — *Այլ առաջարկներ մարմինների եւ անհատ ընկերների կողմից:*

XII — *Դատական.— Դրամական եւ կարգապահական զեղծումների քննութիւնը եւ որոշումներ (տես եւ կազմ. կանոններ յօդ.* 171):

XIII — *Դրամական.— Կուսակցութեան տուրքի կանոնաւորումը, դրամական միջոցներ հայթայթելու հարցը, դրամակ[ան]—հաշուական սիստեմի վերաքննութիւնը եւ կանոնաւորումն,* 1909 *թուի ընդհ. բիւտճէն:*

XIV — *Ընտրութիւններ — Ատրպ. Կ. Կոմիտէի ընտրութիւն, Հ.Յ.Դ.* V*-րդ Ընդհ. Ժողովի համար մեր շրջանի պատգամաւորի ընտրութ. եւ Ար[եւելեան] Բիւրոյի Ռայոնակ. ժողովի համար մեր շրջանի պատգամաւորի ընտրութիւն:*

Ընկ. բարեւներով՝
Հ.Յ.Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ

17 *Օգոստ.* 1908
Վրէժ[14]

12.- 1908 թ. Նոյ. 1ին նախատեսուած Պատգ. ժողովը իրողապէս պիտի գումարուէր յաջորդ տարի՝ Յունիս 12ին Սալմաստի մէջ (նկատի առնուած օրերուն շրջանը թատերաբեմ հանդիսացած էր բուռն կռիւներու):

13.- Խարիսխ արհեստանոցը Դաշնակցութեան զինագործարանն է Թաւրիզի մէջ:
14.- Վրէժը Թաւրիզ քաղաքի կուս. ծածկանունն է. լայն առումով ան կը նշանակէր նաեւ Ատրպատականի Կ. Կոմիտէութիւն:

Փաստ. 476-66

Դ 2.– ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. IV ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՄԻՆԱՐԷԹՈՒՄ[15] 1909 Թ. 12 ՅՈՒՆԻՍ

Նիստ I

1909 *թիւ Ցունիս* 12-*ից սկսւում է Մինարէթում Հ. Յ. Դաշնակցութեան Վրէժոտանի* IV *Շրջանային ժողովը, որին մասնակցում են ցենզի իրաւունքով Վրէժի Կ. Կոմիտէի ներկայացուցիչ Շէն, Վրէժի կոմիտէից Բօշտակ, Մինարէթի կոմիտէից՝ Ցոլակ, Գետ-Ափից*[16]*՝ գործիչ ընկեր Դարվիշ*[18]*, Մինարէթից՝ գործիչ ընկեր Սամսոն*[17]*, Արտազ-Աղպրաշէնից՝ գործիչ ընկեր Մաշտոց, զինուորական խմբապետ՝ Քեռի*[19]*։*

Շրջանի պատգամաւորներից բացակայում են Շահ, Գիլան եւ Փարոս[20] *կոմիտէների ներկայացուցիչները։*

Ժողովականները ընտրում են ժամանակաւոր նախագահ ընկեր Դարվիշին եւ ժամ. քարտուղար ընկեր Ոսկանին։ Ապա որոշւում է գործին օգտակար լինելու համար խորհրդակցական ձայնով հրաւիրել Մինարէթի կոմիտէի ամբողջ կազմին, նոյն տեղի գործիչ ընկերներից Տեղացուն եւ Սողոմոնին եւ Ոսկանապատի[21] *ընկերներից Ոսկանին՝ օգտուելով նրա ներկայութիւնից։*

Ժողովականները նկատի ունենալով, որ Վրէժի Կ.Կ.-ի անդամ ընկեր Վահանը[22] *լայն չափով մասնակցութիւն է ունեցել բոլոր գործերին եւ անցեալ տարի շրջել է Գիլան եւ ծանօթ է այնտեղի կացութեան, որոշեց ձայնի իրաւունքով հրաւիրել եւ նրան։*

Ձայնի իրաւունքով մասնակցում են ութ հոգի, խորհրդակցական ձայնով՝ վեց հոգի։

Նկատի ունենալով ժամանակի սղութիւնը եւ քաղաքական ոչ բարեյաջող հանգամանքները, որոշուեց ժողովներ գումարել օրեկան երկու անգամ, որպէսզի հընարաւոր եղածին չափ շուտ վերջացնէ նրանց։ Նիստերի ժամերը որոշուեցին առաւօտեան 9-1ը եւ երեկոյեան 4-7ը։ Կիրակի օրերը նիստը պարտադիր չէ. այդ թողնըւում է որոշել Շաբաթ օրերին։

Ընկերները նկատի ունենալով ընկեր Սամսոնի տեղի հեռաւորութիւնը եւ նրա զբաղմունքները, համաձայնեցին թոյլատրել նրան ժամանակից կէս ժամով ուշանալը։

Որոշուեց վաղուանից սկսել կանոնաւոր ժողովները, կարդալով նախ պատրաստած տեղեկագիրը։

Ժամանակաւոր նախագահ՝ ԴԱՐՎԻՇ
Ժամանակաւոր քարտուղար՝ ՈՍԿԱՆ Ս.

Նիստ II, 13/VI

Այսօր ժողովը սկսուեց ոչ նշանակուած ժամանակին, որովհետեւ ընկերներ Սամսոն, Տեղացի, Սողոմոն, Անդրէաս ուշանում են մէկուկէս ժամով։ Ժողովը բացւում է 10½*-ին։ Բաց քուէարկութեամբ ընտրւում է ժողովներին մշտական նախագահ՝ ընկեր Դարվիշ եւ քարտուղարներ՝ Ոսկան ու Բօշտակ. նախագահի օգնական՝ Վահան։*

Ժամը 11*-ին գալիս է ընկեր Կոստին*[23]*, իսկ* 11½*-ին ընկեր Եղիշ։ Այս ոչ ներելի ուշանալուն ժողովականները վերաբերում են ներողամտութեամբ, միայն ընկերների ուշադրութիւնը հրաւիրելով, որ ուրիշ անգամ չկրկնուի նման դէպքեր։*

Հիւանդութեան պատճառով բացակայում է այս անգամ ընկ. Քեռին։

Ժողովականները անցնում են տեղեկագրի ընթերցման. կարդացւում է Վրէժի կոմիտէի տեղեկագիրը, որը ամբողջապէս կցւում է արձանագրութեան տետրակում (տես թերթ N 1)*։ Հաշուեցուցակից երեւում է, որ* 17 *ամսուայ ընթացքում կոմիտէն ունեցել է մուտք* 3872 *ղռ.[ան]* 5 *կ., որից տեղական ծախսեր են եղել* 687 *ղռ.* 50*. յանձնուել է Կ. Կ.-ին* 2398 *ղռ.* 75*. մնում է կոմիտէի կասայում* 785 *ղռ.* 80*։ Ժողովականները նկատեցին, որ կոմիտէի մուտքը համեմատած նախորդ տարիների եղել է շատ քիչ, որին կոմիտէի ներկայացուցիչը տուեց հետեւեալ բացատրութիւնը.—*

ա) Կարմիր խաչի եկամուտները ծախսուել է ինքնուրոյն եւ չէ մտել կոմիտէի կասայի մէջ, որի գումարն է 1908 *թուից մինչեւ* 1909 *թիւը* 941,35 *կ. եւ այդքան էլ ծախսուել է, իսկ* 1909 *թիւ Ցունուարից մինչեւ Ցունիս* 1*-ը ունեցել են մուտք* 551,80 *կ. եւ այդքանն էլ ծախսուել է։ Կարմիր խաչի ծախսերը եղել են հիւանդանոցի վրայ, որը պահուել է սեփական հաշուով պարսկական շարժումների ժամանակ։ Կարմիր խաչի հաշիւը, ինչպէս եւ Վրէժի կոմիտէի հաշիւն ու տեղեկագիրը կցւում է սոյն արձանագրութեան հետ։*

բ) Վահան խումբը, որ պարտական է անդամավճար մօտ 800 *ղռ., մնում է ապառիկ։*

գ) Դերձակների, կօշկակարների եւ հիւսների արհեստակցական միութիւններից որեւէ կոպէկ չէ ստացուել։

դ) Առհասարակ խմբերից կանոնաւոր չեն ստացուել անդամավճարները։

ե) Սաբզահանի[24] *շրջանից ոչինչ չի ստացուել եւ*

զ) Շահսուանի[25] *տասն ամսուայ հաշիւը մնում է։*

Այս բոլորը պատճառաբանւում է վերջին դէպքերի եւ առաջացած տնտեսական կրիզիսով։

Տեղեկագրից պարզուեց, որ Կարմիր խաչը հակառակ Պարսկաստանի հարեւանական կեանքի ցոյց է տուել արտաքոյ կարգի եռանդ եւ կանգնած է եղել իր կոչման բարձրութեան վրայ, որի համար ժողովական ընկերները խնդրեցին ընկեր ներկայացուցչին շնորհակալութիւն յայտնել ընկեր անդամուհիներին։

Պարզուեց, որ կազմակերպական տեսակէտից շատ անմխիթար վիճակի մէջ է Ածխահանքը[26]*։*

Ընկեր Սամսոն առաջարկեց նկատի ունենալ հայ ազգաբնակչութեան սպառնացող այն վտանգը, որ հեռու ընկած մի վայրում հնարաւորութիւն չունին կուլտարապէս առաջադիմելու եւ հետզհետէ պիտի կուլ գնան եւ լուծուին օտարազգի տիրող ազգի մէջ եւ որ նրանք ենթակայ են տիրողների բռնութիւններին, զոհ՝ նրանց քմահաճոյքներին եւ որ նրանց մէջ անկարելիութեան չափ դժուար է յեղափոխական պրոպագանդա մղել, որովհետեւ շնորհիւ իրենց ծայրայեղ տգիտութեան, նրանք յետ են մղում իրենց մէջ մտնող ինտելիգենտին կամ անուղղակի խաների ու բէգերի ձեռքը մատնում։ Այդ բոլորը նկատի ունենալով, ընկեր Սամսոնը առաջարկում է աշխատել հայ տարրին գաղթեցնել Ածխահանքից եւ բնակեցնել նրանց հայութեան աւելի մօտիկ միջավայրերից մէկում. օր[ինակ] Սալմաստի գաւառում կամ Խոյի շրջանում ու այդպիսով աշխատել կեդրոնացնել հայ տարրին, նամանաւանդ որ այդ անհրաժեշտ է ապագայ ֆեդերացիայի գործադրման համար։

Ընկեր Սամսոնի առաջարկին համաձայն է ընկեր Տեղացին։

Այդ առթիւ տեղի է ունենում երկար թեր ու դէմ վիճաբանութիւններ. ընկեր Շէն, որ կոմիտէի յանձնարարութեամբ եղել էր կարճ ժամանակով Ածխահանքի շրջանում, գտնում է որ հնարաւոր է կարգին ու կարող մարդիկ ուղարկել այդ շրջանում թէ՛ պրոպագանդայի եւ թէ կուլտուրական գործը առաջ տանելու համար։ Որ Ածխահանքի գիւղացիութիւնը տգէտ է, ընդունում է ընկեր Շէնը, բայց աւելի այդ շրջանը գնացող ընկեր գործիչներն են եղել մեղաւոր որ տեղ չեն ունեցել գիւղացիութեան մէջ. ընկեր Շէն տուեց մի քանի փաստեր այդ շրջանը մնացած ընկերների իրենց միսսիա[ում] ունեցած տհասութեան եւ անպատրաստականութեան համար։ Ընկեր Շէնի կարծիքով լաւ կը լինի ոչ թէ Ածխահանքը գաղթեցնել, այլ նոյն տեղում ազգաբնակութեան խտացնել. օր[ինակ] փոքրիկ գիւղերը ինչպիսիք են Աղաջան, Իւրգիւտ, Ղշլաղ, Սարշու[?] *գիւղերը, որոնք բոլորովին անջատուած են, պէտք է աշխատիլ դրանց գաղթեցնել աւելի հայաբնակ մեծ գիւղերում։*

Ընկեր Դարվիշ, որ անցեալում եղել է այդ շրջանը եւ բաւական մօտիկ ծանօթութիւն ունի, բաւական մանրամասնօրէն նկարագրում է Ածխահանքի ազգաբնակչութեան կենցաղը, մասնաւորապէս հայ տարրի վիճակը, նրանց դրութիւնը, բնաւորութիւնը, քանակը, բնակավայրերի դիրքը, եւ գտնում է որ երեք գաւառակում ընկած 28 *հայ գիւղերը ամենայարմարաւոր դիրքերն են ապագայ յեղափոխութեան համար, որ այդ ժողովուրդը իրենց քաջութեամբ եղել են միշտ յայտնի եւ բացատրեց, որ ժողովականներից մի քանիսի կարծածի չափ նրանք ճնշուած չեն, որ նրանք իրենց ունեցած յարմարաւոր դիրքերի շնորհիւ միշտ վրէժխնդիր են լինում իրենց վնասողներին եւ այդպիսով ապրում են բաւականաչափ ապահով. ընկ. Դարվիշ առաջարկում է պարտականութիւն դնել Կ. Կոմիտէի վրայ, որ նա մարդիկ ուղարկէ այդ շրջանում նրանց կուլտուրապէս առաջ քաշելու եւ յեղափոխական ճանապարհի վրայ դնելու համար։*

Ձայների մեծամասնութեամբ ընդունւում է վերջին առաջարկը եւ պարտականութիւն է դրւում ապագայ Կ. Կոմիտէի վրայ առանձին ուշադրութիւն դարձնել Ածխահանքի շրջանի վրայ եւ աշխատել կարող ընկերներ ուղարկել այդ շրջանում կուլտուրական եւ յեղափոխական գործը առաջ տանելու համար։

Նախագահ՝ ԴԱՐՎԻՇ
Քարտուղար՝ ՈՍԿԱՆ Ս.
Քարտուղար՝ ԲՕՇՏԱԿ

Նիստ III, 13/VI

Երեկոյեան ժամը 4½*-ին սկսուեց երրորդ նիստը. ներկայ էին բոլոր առաւօտեան եղողները։ Արտազի տեղեկագիրը բանաւոր տուեց ընկեր Մաշտոց, որի վրայ ժողովը պարտականութիւն դրեց գրաւոր յանձնել քարտուղարին, որը պէտք է կցի արձանագրութեան տետրակին։*

Գետ-Ափի տեղեկագիրը կարդաց ընկեր Դարվիշը, որը բաւական մանրամասն նկարագրել է կատարուած կռիւները, փոխադրութիւնները։ Այդ տեղեկագիրը, որը ուրիշների պէս կցւում է արձանագրութեան տետրակին, ընդունուեց բուռն ծափահարութեամբ։

Նախագահ՝ ԴԱՐՎԻՇ
Քարտուղար՝ ՈՍԿԱՆ Ս.
Քարտուղար՝ ԲՕՇՏԱԿ

15.- Մինարէթը կուս. ծածկանունն է Սալմաստի, ուր կը գումարուէր Ատրպատականի Կ. Կոմիտէութեան Պատգ. չորրորդ ժողովը։

16.- Գետ-Ափը կուս. ծածկանունն է Արաքս գետի պարսկական ափին գտնուող Ս. Ստեփանոս վանքին եւ վանքապատկան Դարաջամբ գիւղի շրջանն էր, կարեւոր կայաններէն մէկը գետին վրայով զէնք-զինամթերքի փոխադրութեան։ Պէտք չէ շփոթել Գետափին հետ, որ Նոր Ջուղայի կուս. ծածկանունն էր։ Այս արձանագրութեան մէջ եւս այդ շփոթը կը ստեղծուի. այդ պատճառով ստիպուեցանք յաճախ սրբագրել։

18.- Դարվիշը Գալուստ Ալոյեանն է։

19.- Քեռին յայտնի հայդուկապետն է (Արշակ Գաւաֆեան) ղեկավարը պարսկական սահմանադրական շարժման մասնակցող դաշնակցական ուժերուն. աւելի ուշ՝ կամաւորական «Չորրորդ գնդի հրամանատար»ը։

20.- Շահը կամ Շահստան Թեհրանն է, Գիլանը՝ Կասպից ծովու հարաւ արեւմտեան շրջանը (Պորտ Արթիր – Էնզելի), Փարոսը՝ Ուրմիա։

21.- Ոսկանապատը Պաքուի Կեդր. Կոմիտէութիւնն է։

22.- Մատինեան Նիկոլ։

23.- Կոստի Յամբարձումեան։

24.- Սաբզահան՝ Մարաղայի շրջանի կուս. ծածկանունը։

25.- Շահսուան, Շահսվան, կուս. ծածկանուն Արտաբիլի։

26.- Ածխահանք՝ կուս. ծածկանուն Ղարադաղի շրջանի։

Նիստ IV, 15/VI

Ժողովը բացւում է առաւօտեան ժամը 10*ին։ Ներկայ են Դարվիշ, Բօշտակ, Վահան, Սամսոն, Քեռի, Անդրէաս, Եղիշ, Մաշտոց, Կոստի, Սողոմոն, Տեղացի, Շէն եւ Ոսկան։ Ժամը* 11*-ին գալիս է ընկեր Ցոլակ։ Կարդացւում է նախորդ արձանագրութիւնները եւ մի քանի լրացումներից յետոյ վաւերացւում է։*

Ժողովականներից մէկը ժողովականների ուշադրութիւնն է հրաւիրում նախկին արձանագրութեան այն կէտի վրայ, որ Ածխահանքը յանձնւում է Կ. Կ.-ի ուշադրութեան, մինչդեռ III *Շրջանային ժողովը Ածխահանքը, Սաբզահանը եւ Շահսովանը կապել էր Կ[ոմիտէ]ի հետ։ Ժողովականները յարմար գտան կոմիտէին թողնել միայն քաղաքը, իսկ շրջանը ամբողջապէս Կ. Կ.-ին։*

Կարմիր խաչի մի նամակով իմացուեց, որ նա իր ձայնը տալիս է իբրեւ ներկայացուցչի՝ Բօշտակին։

Ապա անցնում են տեղեկագրի ընթերցման. կարդացւում է Մինարէթի տեղեկագիրը. ժողովականները ուշադրութիւն են դարձնում կազմուած արհեստակցական միութիւնների վրայ եւ պարզւում է, որ դրանք աւելի շատ եղել են համքարների միութիւն քան թէ արհեստակցական։

Ուշադրութեան է արժանանում այն իրողութիւնը, որ Խոսրովա ասորաբնակ գիւղում կազմուած է եղել մի քանի խմբեր ասորիներից, բայց այսօր իր գոյութիւնը պահպանում է այդ խմբերից մէկը, որը կանոնաւորապէս վճարում է իր տուրքը։

Մինարէթի տեղեկագիրը բանաւոր չարունակում է գործիչ ընկեր Սամսոնը։ Ժամանակի ուշ լինելու պատճառով ժամը 2*-ին փակւում է ժողովը, չարունակութիւնը թողնելով երեկոյեան նիստին։*

Նախագահ՝ ԴԱՐՎԻՇ
Քարտուղար՝ ՈՍԿԱՆ Ս.
Քարտուղար՝ ԲՕՇՏԱԿ

Նիստ V, 15/VI

Նիստը սկսւում է 4½*-ին։ Ներկայ են բոլորը։ Շարունակւում է բանաւոր Մինարէթի տեղեկագիրը։ Ընկեր Սամսոնը շատ հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս կատարուած կռիւներից, պարսիկ ընկերների հետ ունեցած յարաբերութիւնների մասին, ինչպէս եւ երիտասարդ թուրքերի ու նրանց հետ ունեցած յարաբերութիւնների մասին։ Տեղեկագիրը չափազանց հետաքրքիր լինելու պատճառով չարունակւում է մինչեւ երեկոյեան ժամը* 7*-ին, որից յետոյ ժողովը փակւում է, պարտականութիւն դնելով ընկեր Սամսոնի վրայ, որ այդ բոլորը գրի անցնի եւ դրուի արձանագրութեան կցելու համար։*

Նախագահ՝ ԴԱՐՎԻՇ
Քարտուղարներ՝ ՈՍԿԱՆ Ս., ԲՕՇՏԱԿ

Նիստ VI, 16/VI

Առաւօտեան ժամը 10*-ին սկսւում է* VI *նիստը։ Ներկայ էին Սամսոն, Քեռի, Մաշտոց, Կոստի, Վահան, Սողոմոն, Ցոլակ, Տեղացի, Բօշտակ, Դարվիշ, Անդրէաս, Ոսկան։*

Կ. Կ.-ի ներկայացուցիչ Շէն կարդում է Վրէժի Կ. Կ.-ի տեղեկագիրը, որի մէջ ի միջի այլոց պարզւում է այն հանգամանքը, որ Կ. Կոմիտէն ակտիւ մասնակցութիւն է ցոյց տուել Պարսկաստանի շարժումներին Կ. Կ.-ի որոշմամբ՝ 5 *ձայնով ընդդէմ* 2*-ի եւ առանց շրջանների համաձայնութիւնը ստանալու։ Այդպէս է կատարուել, որովհետեւ Արեւելեան Բիւրոյից եկած ներկայացուցիչ Բրինդարը հարցը դրել է կտրուկ եւ պահանջել անմիջապէս պատասխան, ասելով որ թէ՛ Բիւրոն եւ թէ Կովկասի բոլոր մարմինները, բացի Ոսկանապատից, համաձայն են շարժումներին ակտիւ մասնակցութիւն ցոյց տալուն, միայն սպասում են Վրէժստանի Կ. Կ.-ի համաձայնութեան։ Կ. Կ.-ի երկուստեք բաժանուող կարծիքների պատճառաբանութիւնները դրուած է տեղեկագրին մէջ, որը կցւում է արձանագրութեան*[27]*։*

Տեղեկագրից պարզւում է եւ այն, որ Կ. Կոմիտէն համոզուած է եղել, որ իր շրջանի բոլոր մարմինները կողմնակից կը լինին այդ շարժման մասնակցելուն եւ նա ասում է, որ իրենք սխալուած չեն եղել. միայն Շահի կոմիտէն է եղել, որ դէմ է եղել այդ մասնակցութեան եւ ինչպէս նաեւ բանաւոր զեկուցեց ընկեր Շէն։ Նրանք իրենց նամակների մէջ գործ են ածել այնպիսի լեզու, որը ոչ միայն վիրաւորական է Կ. Կ.-ին, այլեւ կրում է ռէակցիոն բնաւորութիւն եւ բովանդակութիւն՝ ոչ վայել մի յեղափոխական մարմնի։

Շրջանային ժողովը պարտականութիւն դրեց Կ. Կ.-ի ներկայացուցչի վրայ, որ առաջիկայ փոստով Վրէժից բերել տայ այդ նամակները, որին Շրջանային ժողովը ծանօթանալուց յետոյ, եթէ կը գտնէ նկարագրածին չափ աններելի այդ նամակները մի մարմնի, նա կը պատասխանի ըստ արժանոյն։

Շրջանային ժողովը գտաւ, որ տեղեկագիրը թերի է կռիւների նկարագրութիւնից եւ, ժամանակ չլինելու պատճառով, պարտականութիւն դրուեց ընկեր Վահանի վրայ, այս վերջինս, Քեռու եւ Տեղացու աջակցութեամբ, այդ բացը լրացնի։

Տեղեկագրի լրացուցիչ մասը բանաւոր նկարագրեց ընկեր Վահան, որը մի ժամից աւելի տեւող ճառի մէջ շեշտեց նաեւ այն, թէ ինչպէ՛ս մեր ընկերներից Քոթոթը[28] *չնորհիւ իր խելացի տաքտիկայի, ինչպէս կարողանում է կարճ ժամանակուայ ընթացքում, ոչ միայն զգալիօրէն օգտակար լինել պարսկական շարժումներին, այլեւ հակառակ մեր հակառակորդ կուսակցութիւնների սարքած պրովակացիաներին, նրանց ինտրիկներին, Քոթոթը իր մաքուր վերաբերմունքով այնչափ հաւատ է ներշնչում շրջապատող թուրք ընկերների մէջ, որ բացարձակ վստահութիւն է վայելում եւ այդպիսով, ի ցաւ հակառակորդներին, բարձրացնում Դաշնակցութեան դիրքն ու հմայքը։*

Ժամը երկուսին նախագահ ընկերը յայտարարում է ընդմիջում։

Նիստ VII

Երեկոյեան նիստը բացւում է ժամը 4½*-ին։ Ներկայ են բոլորը։ Շարունակւում է հարցեր եւ վիճաբանութիւններ տեղեկագրի շուրջը։*

Ընկեր նախագահը մի ճառով բացատրում է մեր մասնակցութեան ազդեցութիւնը ու նշանակութիւնը թէ թուրք հարեւանների եւ թէ մեզ նացիոնալիստ որակող հակառակորդների առաջ. ապա առաջարկում է ոտքի կանգնած յարգել այդ կռիւներում մեր զոհաբերուած ընկերների յիշատակը՝ ծափահարութիւնով, եւ պատուել Կ. Կ.-ին՝ այդ կատարուած պարտականութեանը գիտակ որոշման համար, պատուել մարտիկ ընկերներին, որոնք իրենց ակտիւ մասնակցութեամբ կարողացել են օգտակար լինել այդ որոշման։

Ժողովական ընկերները ոտքի ելնելով կարճատեւ ծափահարութիւնով յարգում են ընկեր նախագահի առաջարկը։

Յետոյ խօսք է լինում հարեւան ազգութիւնների եւ մասնաւորապէս ասորիների մասին։ Ընկեր Սամսոնը, յենուելով իր տարիների փորձառութեան, գտնում է որ ասորիների մէջ ոչինչ չի կարելի անել, որ նրանք փչացած արբեցողներ են, պատրաստ մատնութիւնների, ստոր արարքների եւ որ նրանց մէջ ոչ ոքի չէ կարելի վստահել։ Ընկեր Սամսոնի կարծիքով ասորիներից որեւէ բան կազմակերպելու յոյսը պէտք է կտրել, այլ երբ կարեւոր է՝ գործ ունենալ մի քանի անհատների հետ եւ նրանց հետ բարեկամական կապեր պահպանել։

Տեղական մարմնի անդամներից ընկեր Ցոլակը գտնում է հակառակը. նրա կարծիքով պէտք է աշխատել նրանց մէջ. նախկին սիստեմը, որ կազմակերպել են անխտիր բոլոր պատահողներին, պէտք է թողնել եւ զբաղուած կազմակերպութիւն սկսել ասորիների մէջ։

Տեղական մարմնի մի ուրիշ ընկեր՝ Գարեգինը համաձայն է ընկեր Սամսոնի հետ եւ սա աւելի վատ գոյներով է նկարագրում ասորիներին։

Ժողովական ընկերներից մէկը նկատում է հակասութիւն Մինարէթի մարմնի տուած տեղեկագրի եւ այսօրուայ պատճառաբանութիւնների մէջ։ Նրանց տեղեկագրից երեւում է, որ ասորիների մէջ ունեցել են կազմակերպութիւն, որը գտելուց յետոյ այսօր պահւում է մի կանոնաւոր խումբ 20 *հոգուց։ Եթէ այդ ճիշտ է, եթէ մարմնի անդամները տալիս են այդպիսի տեղեկագիր եւ նրանցից ոչ ոք չի բողոքում դրա դէմ, ուրեմն եւ սխալ է այսօրուայ այս պատճառաբանութիւնը, որ ասորիների մէջ չկայ մաքուր մարդ եւ ուրեմն անկարելի է նրանց հետ գործ կատարել. եւ առաջարկում է աւելի խելացի եւ մեր ծրագրին համապատասխանող տակտիքով սկսել նրանց մէջ գործունէութիւն ու հետզհետէ ստեղծել նրանց մէջ Դաշնակցութեան ասորիների ֆրակցիա։*

Ընկեր Դարվիշը ասորիներու մէջ սկսած գործունէութեան անյաջող վերջաւորութիւնը գտնում է սխալ տակտիքայի մէջ եւ առաջարկում է գործել աւելի խելացի տակտիքայով։

Ժողովականների ցանկութեամբ կանչւում է ընկեր Արփիարը, որ ենթակոմիտէի անդամներից է եւ գործունէութիւն է ունեցել ասորիների մէջ։ Հարցւում է նրա կարծիքը, որը նորից գտնում է հնարաւոր ասորիների մէջ գործունէութիւն կատարելու։

Ընկերներից մի քանիսը հնարաւոր են գտնում ասորիների մէջ գործել եւ օգտակար, եթէ նրանց մէջ թէկուզ 5-10 *հոգիի հետ էլ մենք կարողանանք գործ ունենալ։*

Ապա ժողովը ընդունում է հետեւեալ բանաձեւը,

1) *Որ դաշնակցականներս Դաշնակցութեան գաղափարը պատրաստ ենք հնարաւոր չափով տարածել հայ շրջանից դուրս նաեւ հարեւան ազգութիւնների մէջ։*

2) *Որ մենք համանման տնտեսական եւ քաղաքական շահերով կապուած ենք ասորիների հետ եւ*

3) *Որ մեր հարեւան ազգութիւնների յետամնացութիւնը, ինչպէս եւ առաջադիմութիւնը իր զգալի ազդեցութիւնը պիտի ունենայ մեր վրայ, ուստի որոշեց՝*

Աւելի խելացի տակտիքով գործունէութիւն սկսել ասորիների մէջ, գարկ տալով նրանց կուլտուրական եւ քաղաքական առաջադիմութեան, միաժամանակ աշխատելով ստեղծել նրանց մէջ յեղափոխական կազմակերպութիւն Հ. Ց. Դաշնակցութեան ասորիների ֆրակցիա անունով, որը պէտք է ֆեդերատիւ կապեր ունենայ Դաշնակցութեան կազմակերպութեան հետ։

Վերոյիշեալ բանաձեւը նկատի ունենալով պարտականութիւն է դրւում Մինարէթի մարմնի վրայ, որ վերջինս նկատի ունենալով անցեալ սխալ տակտիքան, իր նոր գործունէութեան գարկ տայ աւելի պարզ բացատրելով մեր սկզբունքները եւ ուշադրութիւն դարձնի աւելի որակի եւ ոչ քանակի վրայ։

Երեկոյեան ժամը 7*-ին փակւում է նիստը։*
Նախագահ՝ ԴԱՐՎԻՇ
Քարտուղարներ՝ ՈՍԿԱՆ Ս., ԲՕՇՏԱԿ

27.- Տեսնել Բ.1 բաժինը, փաստ. 475-10։
28.- Քոթոթը՝ Ռոստոմի մէկ այլ ծածկանունն է։

Նիստ VIII, 17/VI

Ներկայ էին Նիստին ընկերներ Դարվիշ, Բօշտակ, Սամսոն, Մաշտոց, Ցոլակ, Գարեգին, Քրիստ, Տեղացի, Քեռի, Սողոմոն, Շէն, Վահան եւ Ոսկան։ Կարդացւում է անցեալ նիստի ատենագրութիւնը։ Ընտրւում են հաշուական յանձնախմբի անդամներ ընկերներ՝ Ոսկանը, Դարվիշն ու Քրիստը։ Մշակւում է հետեւեալ նիստերի օրակարգը։

Ժողովի քննութեան է դրւում օրակարգի առաջին կէտը՝ պարսկ. շարժումները եւ մեր բռնելիք դիրքը ապագայում։

Խօսք առնելով ընկեր Ցոլակը եւ պատճառաբանելով, որ թուրքերի մէջ կազմակերպուած կուսակցութիւններ գոյութիւն չունին, որ մեծ դժուարութիւնների հետ է կապուած այդպիսի պայմաններում ակտիւ մասնակցողի դերում լինելը, առաջարկում է թողնել ակտիւ մասնակցութիւնը եւ աջակցել որքան հնարաւոր է, միայն պասսիւի սահմաններում։

Ընկեր Սամսոնը պնդում է, որ մեր պայմաններում պասսիւ մասնակցութիւնը միեւնոյն է, ինչ որ ակտիւը, որ չենք կարող միշտ պասսիւի դերում լինել միայն, որ անհրաժեշտ է շարունակել սկսած գործը նոյն եռանդով. միայն համաձայնում է այն մտքի հետ, որ անհրաժեշտ է կուսակցութիւններ առաջ բերել պարսիկների մէջ եւ նրանց հետ գործ ունենալ։ Առաջարկում է քննութեան առնել այն հարցը, [թէ] ի՞նչ ձեւով պէտք է մասնակցել։ Դաշնակց[ութիւնը] իր սեփական գործը կը համարէ՞ պարսկ. շարժումները թէ չէ։

Ընկեր Քրիստը ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դաշնակց[ութեան] փոքր ի շատէ համապատասխանող յեղափոխական կազմակերպութիւններ գոյութիւն չունին թուրքերի մէջ, որ պարսկ. ամբողջ շարժումների ընթացքում չենք գտել այն, ինչ որ սպասում էինք, այն է՝ յեղափոխական արիութիւն, հմուտ տակտիքա եւ յեղափոխականին յատուկ անձնուիրութիւն եւ գաղափարականութիւն, Դաշնակց[ութիւնը] չի կարող եւ չպէտք է իր սեփական գործը համարել պարսկ. շարժումները եւ միայն իր ուսերի վրայ տանիլ գործը. առաջարկում է ոչ մի պայմանով ակտիւ մասնակցութիւն չունենալ, այլ մնալ շատ-շատ աջակցողի դերում (պասսիւ)։

Ընկեր Բօշտակը թուելով այն դէպքերն ու փաստերը, որոնք ապացոյց են Դաշնակց. բռնած դիրքի դրական հետեւանքներին, որ Դաշնակցութեան մասնակցութիւնը մեծ բլիւս է եղած պարսկ. շարժումների վրայ, կարծում է, որ Դաշնակց. մասնակցած չլինէր մեծ պատասխանատուութիւն կ'ընկնէր նրա վրայ իբր սոց. յեղ. մի կուսակցութիւն։ Իսկ թողնել սկսած գործը այն նկատումներով, որ կառավարութիւնը իր հալածանքները կը դարձնէ միայն հայ ազգաբնակութեան դէմ, այդ միեւնոյն [է], որ ներումն հայցել պարսկ. բռնակալութիւնից։ Այն կարծիքը յայտնելով, որ Ռուսաստանի, Տաճկաստանի եւ Պարսկ[աստանի] սահմանադրական կարգերը սերտ կապ ունին իրար հետ եւ որ այդ երկրներից մէկն ու մէկի սահմանադրութեան իրականանալը կ'անդրադառնայ նաեւ միւս երկրների վրայ հէնց Տաճկաստանի կամ Ռուսաստանի սահմանադրութեան շահերի տեսակէտից պէտք է որ Դաշնակցութիւնը կազմակերպական սեփական գործ համարէ պարսկ. յեղափոխութիւնը եւ առաջ տանէ սկսած գործը, եթէ նոյնիսկ այդ կապուած լինի մեծ զոհողութիւնների հետ։

Քեռին առաջարկում է շարունակել սկսած գործը եւ գործը հիմնաւոր դարձնելու համար առաջարկել Ընդհ. Ժողովին պէտք եղած օժանդակութիւնը, անհրաժեշտ դրամն ու ռազմամթերքը տրամադրելի դարձնել գործի գլուխ անցած մարմիններին։

Ընկեր Սամսոնը խօսք առնելով պնդում է, որ ակտիւ մասնակցութիւնը չի կայանում միայն մարտական կռիւների մէջ, որ նրանց մէջ կազմակերպութիւն յառաջ բերելու աշխատանքներն էլ ակտիւ մասնակցութեան շրջանակի մէջ են գտնւում, որ մեր մասնակցութիւնը ունեցել է նաեւ իր մեծ բարոյական նշանակութիւնը թուրքերի յեղափոխ. դաստիարակութեան վրայ։ Դէպքեր է մատնանշում, որոնք ապացուցում են, որ բարեխնամ համարուած պարսիկ կառավարութիւնը շրջաններում եւ գիւղերում հէնց առաջ էլ այնքան բարեացակամ վերաբերմունք չի ունեցել դէպի հայ ժողովուրդը, ինչպէս կարծում են շատերը եւ որ հայ գիւղացիութիւնն էլ իր կարգին միշտ ենթակայ է եղել բռնակալական ռեժիմի ճնշումներին ու հալածանքներին, որ մեր մասնակցութիւնը պարսկ. շարժումներին բովանդակել է իր մէջ նաեւ հայ ժողովուրդի, մասնաւորապէս հայ գիւղացիութեան շահերը, անկախ ընդհ. հայրենիքի (Պարսկաստան) շահերից։ Առաջարկում է շարունակել սկսած գործը, այդ բոլորը ի նկատի ունենալով հանդերձ նաեւ եթէ չենք ուզում վաստակել թուրք յեղափ. տարրերի հակակրութիւնն ու հիասթափութեան արդիւնքները։

Ընկեր Մաշտոցն էլ հակազդելու համար նրանց, որոնք կարծում են, որ շարժման մասնակցութիւնը չարիք կը դառնայ հայ ազգաբնակչութիւններին, ապացուցում է, որ եթէ չէզոք մնայինք, հայերի դրութիւնը էլ աւելի վտանգաւոր կը դառնար նոյնիսկ յեղափ. թուրք տարրի որոշ մասի կողմից։ Առաջարկում շարունակել ակտիւ մասնակցութիւնը մեր ոյժերը ներածին չափ։

Տեղացին ձայն է տալիս ակտիւ մասնակցութեան նոյնիսկ այն դէպքում, եթէ դրսի մարմինները օգնութեան չհասնեն եւ գործի ծանրութիւնը մնայ միայն տեղական մարմինների վրայ։ Ժողովական ընկերների ուշադրութիւնը հրաւիրելով այն հանգամանքի վրայ, որ Դաշնակցութեան մասնակցութիւնը պարսկ. շարժումներին լինել չլինելու հարց է Պարսկաստանում, եզրափակում է այսպէս։ «Շարունակել սկսած գործը կը նշանակէ Դաշնակցութեան եւ հայ ժողովուրդի գոյութիւնը ապահովել Պարսկաստանում, հակառակ դէպքում կը նշանակէ ինքնիրեն մահուան դատապարտել»։

Ընկեր Ցոլակը իր պատճառաբանութիւնների վրայ աւելացնում է հետեւեալները, որ պարսկ. շարժումները կազմակերպուած յեղափոխութեան արդիւնք չեն եղել, որ նրանք տարերային շարժման բնոյթ են կրել եւ յեղափ. պարագլուխներն ու առաջնորդները գիտակից, գաղափարական դէմքեր չեն եղել մեծ մասամբ։

Ընկեր Քրիստը պատճառաբանելով որ մենք յուսախաբուած են թուրք յեղափոխականների նկատմամբ, որ նրանց մէջ կազմակերպուած կուսակցութիւններ չկան, որոնց հետ մենք կարողանանք ձեռք-ձեռքի տուած գործել, որ կուսակցութիւններ յառաջ բերելու հարցը կապուած է մեծ դժուարութիւնների հետ, որ Պարսկ. կուլտուրապէս մի այնպիսի յետադէմ երկիր [է], ուր գրականութիւն անգամ չկայ, որի միջոցով կարելի լինէր պրոպագանդ մղել, նորից պնդում է իր առաջարկի վրայ, այն է սահմանափակ պասսիւ մասնակցութիւն ունենալ միայն։ Առաջարկում է լուրջ ուշադրութիւն դարձնել Կովկասի թուրքերի պրոպագանդի վրայ եւ նրանց միջոցով ազդել Ատրպատականի թուրքերի վրայ։

Ընկեր Գարեգինը մեր մասնակցութիւնը պարսկ. շարժումներին բխեցնում է Դաշնակց. ծրագրից եւ ընդունելով հանդերձ մեր հարեւանների յետամնացութիւնը՝ մասնաւորապէս Դաշնակց. իսկ ընդհանրապէս հայ ժողովրդի (Պարսկ. գտնուող) պարտականութիւնն է համարում ամբողջ ոյժով ասպարէզ նետուել կատարելու բնականօրէն իր վրայ դրուած պարտականութիւնը, իբր երկրի ամենայառաջադէմ տարր եւ զարկ տալ հարեւան ժողովուրդների յառաջդիմութեան։ Զայն է տալիս ակտիւ մասնակցութեան ամէն միջոցներով։

Ընկեր Վահանը ի պատասխան ընկեր Ցոլակին ապացուցում է, որ պարսկ. շարժումները յեղափոխական բնոյթ են կրում եւ ապա ձայն է տալիս ակտիւ մասնակցութեան հետեւեալ պատճառաբանութիւններով, որ պարսկ. քաղաքական եւ տնտեսական ճնշումները անդրադառնում են նաեւ հայ գիւղացիութեան վրայ, որ մենք ի նկատի ունենալով նաեւ հայայն Պարսկ. եւ նրա բնակիչների շահերը իրականացնում ենք մասամբ ազգերի համերաշխութիւնը, համաձայնում է ընկեր Բօշտակի հետ, որ երեք հարեւան պետութիւնների ազատագրական շարժումները սերտ կապ ունեն իրար հետ։

Ընկերներ Մաշտոցն ու Տեղացին համոզուած լինելով, որ թուրք ժողովրդի մէջ հող են գտել արդէն յեղափոխական կայծերը, ի նկատի ունենալով ընդհանուր հայրենիքի շահերը իրենց պարտականութիւն են համարում վառել յեղափոխական կրակը եւ դէպի հայրենիք ունեցած իրենց պարտքը կատարել։

Ընկեր Դարվիշը այն միտքն է յայտնում, որ պարսիկ ժողովրդի մէջ կան յեղափոխական էլեմենտներ, պէտք է կապել նրանց իրար հետ եւ գիտակցութիւն ներշնչելով նրանց՝ յեղափոխութիւնը իր իսկական ճանապարհի վրայ դնել։ Համոզուած լինելով Դաշնակց. մասնակցութեանը , փառաւոր կերպով հերքեց այն թիւր հասկացողութիւնը, որ իբր թէ Դաշնակց. սեպարիստական ձգտումներ ունի. հաւատում է, որ համերաշխ գործունէութեամբ ձեռք կը բերուի թուրք մոլեռանդ ամբոխի գոնէ կէսի համակրութիւնը։ Ակտիւ մասնակցութիւնը պարսկ. շարժումներին համարում եմ անհրաժեշտութիւն եւ պարտականութիւն թէ քաղաքացիական եւ թէ յեղափոխական կոչման։ Հակառակ առաջարկութիւններ հակասական է գտնում Դաշնակցութեան ծրագրին ու գործելակերպին։

Ընկեր Շէնն հիմք ունենալով այն պարզ ճշմարտութիւնը, որ մի երկրում տեղի ունեցող յեղափոխութիւնը այդ հին կարգերի յեղաշրջման մի երեւոյթ է, ինչքան էլ անկազմակերպ վիճակի մէջ լինի այն, որ պարսկ. շարժումները անպայման յառաջդիմական են համեմատելով երկրի պահանջների եւ տնտեսական, քաղաքական պայմանների հետ, որ հայ ազգաբնակչութիւնը ընդհանրապէս, աշխատաւորութիւնը մասնաւորապէս տնտեսական անխզելի կապերով կապուած է հարեւան ժողովրդների տնտեսական, քաղաքական շահերի հետ՝ գտնում է որ Դաշնակց. իբր յեղափոխական կուսակցութիւն չէր կարող ձեռքերը ծալած մնալ, նա պարտաւոր էր մասնակցել եւ պէ՞տք է մասնակցէ։ Օրինակ բերելով Ֆրանսիայի մեծ յեղափոխութիւնը, ցոյց է տալիս որ ոչ մի երկրում յեղափոխութեան սկզբնական շրջաններում կազմակերպուած կուսակցութիւնները չեն եղել, որ ղեկավարել են շարժումները, այլ նոյն մասսան է եղել, որ նոյն մասսայական շարժումներ են եղել նաեւ արեւմտեան երկրներում. ճիշտ է նրանք ունեցել են ղեկավարող մեծ դէմքեր, բայց միեւնոյն ժամանակ այդ մեծ դէմքերը համաշխարհային նշանակութիւն են ստացել. այնպէս որ նրանք կարող են լինել թուրք ժողովրդի անուղղակի առաջնորդները, ինտելիկենցիայի եւ յեղափ. առաջնորդների միջոցով։ Ընկեր Շէնը չեշտում է, որ եթէ հող չլինէր յեղափ. չէր բռնկուի. որ յեղաշրջումը տեղի կ'ունենայ, իրաւակարգ կը հաստատուի որոշ ջանքով եւ կուսակցութիւնները յառաջ կը գան անխուսափելիօրէն։

Ընկեր Ոսկանը ասում է հետեւեալը։

Զափազանց ծանր համարելով դրուած հարցին դրական կամ բացասական պատասխանելը, որովհետեւ գտնում եմ այն կարծուածից աւելի լուրջ. ես սպասում

էի մինչեւ վերջին խօսողը, որպէսզի գուցէ լսեմ եւ ես էլ համոզուեմ խնդրին, այնպէս հասկանալ, ինչպէս մօտենում են տեղական ընկերները, որոնք աւելի մօտիկ կապուած են եղել գործի հետ։ Ես մեծ ուշադրութեամբ լսեցի ամէնքին, սակայն չկարողացայ համոզուել, որ մենք Պարսկաստանի այս շարժումներին պարտաւոր ենք մասնակցել մեր ամբողջ թափով, համարել այն մեր սեփական գործը այն չափով, ինչպիսին մենք համարում ենք Տաճկաստանի եւ Ռուսաստանի յեղափոխական շարժումները։ Չկարողացայ դրանում համոզուել, որովհետեւ ոչ ոք չտուեց այդ ուղղութեամբ պատճառաբանուած բացատրութիւն։

Ընկեր Շէնի այն օրինակը, Ֆրանսական յեղափոխութիւնը, որ նա առաջ է բերում, ես գտնում եմ ոչ տեղին եւ ահա թէ ինչո՛ւ։ Ճիշտ է, որ Ֆրանսական յեղափոխութիւնը ժողովրդի ծնունդ էր, այդպէս էլ պիտի լինի իւրաքանչիւր յեղափոխական շարժում, ոչ ոք դրան դէմ չէ բայց ընկերը ինքն խոստովանում է, որ Ֆրանսական յեղափոխութեան սկզբներին հէնց կային ղեկավար խոշոր դէմքեր, որոնք գործի ծանրութիւնը իրենց ուսերին էին առել։ ես աւելին կ'ասեմ, երբ այդ ժամանակ Ֆրանսիայում յեղափոխական կուսակցութիւններ չկային, սակայն այդ խոշոր դէմքերը ունէին իրենց հետեւորդները, որոնք գիտակցում էին գաղափարի վսեմութիւնը եւ ղեկավարում էին մասսային։ Պարսկաստանում չկան այդպիսի դէմքեր։ Համաձայն եմ, որ Ռուսն եւ ուրիշները համաշխարհային ուսուցիչներ են եւ կարող են ուսուցիչներ լինել նաեւ պարսիկ ինտելիգենցիայի համար, սակայն այդ կը լինի ապագայում։ ցաւը նրանումն է, որ այսօր Պարսկաստանը չունէ ոչ ինտելիգենցիա եւ ոչ էլ յեղափոխական գրականութիւն, առանց որին սկսած շարժումները ես համարձակութեամբ համարում եմ տարերային։

Սաթթար խաներին եւ Բաղր խաներին ես չեմ համարում խոշոր դէմքեր, չեմ հաւատում, որ նրանք գործի գլուխ են անցել գիտակցելով ազատագրական շարժման մեծութիւնը։ ո՛չ, նրանք մէջ են ընկել պատահաբար եւ յետոյ թասիբի խնդիր է դարձել նրանց համար։ միթէ՞ ասածներիս ապացոյց չէ կարող լինել այն իրողութիւնը, որ այդ «յեղափոխական» ղեկավարները տասնեակ հազարներ օգտուելով ժողովրդի կարիքներից չզոհաբերեցին այդ փողերից ժողովրդի կոպէկների համար եւ համաձայնեցին յանուն այդ կարիքների թոյլ տալ օտար պետութիւնների միջամտութեան եւ այսօր նոյն այդ մարդիկ միայն իրենց կեանքը փրկելու համար մտել են տաճկաց հիւպատոսարան։

Ասում են որ Պարսկաստանում կայ ինտելիկենցիա եւ կայ յեղափոխական գրականութիւն, ես էլ պատկանում եմ այն անգիտակների շարքին, որ չեն ճանաչում այդպիսիների գոյութիւնը։ տուեցէք մեզ փաստեր։ որտե՞ղ է այդ գրականութիւնը։ Պարիզի դպրոցի՞ց է դուրս եկել այդ ինտելիկենցիան եւ Պարիզ է թաքնուել նա՝ հայրենիքի այս ծանր ճգնաժամին։ Մի կողմից Պարսկաստանում չգտնելով այնպիսի շարժում, որտեղ Դաշնակցութիւնը հնարաւորութիւն ունենար եւ պարտաւոր համարէր իրեն ամբողջ ոյժով մէջ նետուելու եւ միւս կողմից գտնելով, որ Տաճկաստանում եւ Ռուսաստանում մենք ոյժերի մեծ կարիք ունինք, ես կարծում եմ, որ այստեղ մենք չպիտի առաջապահը լինենք, այլ ամենաշատը յետնորդները։ Այս կարճատեւ մասնակցութիւնը մեզ ցոյց է տալիս, ոչ այն պատկերը, որ պարսիկ յեղափոխականների գործին մենք մասնակցել ենք, այլ ընդհակառակը, որ մեր ղեկավարած գործին մասնակցել են պարսիկները։ Այդպէս լինել չի կարելի նամանաւանդ նկատի ունենալով այն հանգամանքը որ մենք Պարսկաստանում յեղափոխական գործը վարելու մէջ այնչափ ազատ չենք, ինչպէս միւս Ֆրոնտներում։ Այստեղ մեր իւրաքանչիւր քայլը չափած ու ձեւած լինելուց զատ պիտի ենթարկենք մեզնից շատ աւելի տհաս թուրք անհատ ընկերների ցենզորին, որպէսզի «հայրենիքի դաւաճաններ» չկոչուինք։ Այսպիսի պայմաններում գործի գլուխ անցնել ես համարում եմ անիմաստ։ Բացի այդ նկատի պիտի ունենալ եւ այն հանգամանքը, որ քանի Ռուսաստանը գտնում է այժմեան պայմաններում, Պարսկաստանը չի կարող Սահմանադրական երկիր լինել մեր հասկացողութեամբ։ «սահմանադրական» Ռուսաստանը դեռ իր թաթը կը դնի այդ ցանկութիւնը խեղդելու համար։ Դրա խոշոր ապացոյցը արդէն այսօր մեր աչքի առաջն է։ դուք տեսնում էք այն։ Ես յանցանք եմ համարում Ռուսաստանի եւ Տաճկաստանի ոյժերից այստեղ քշելը։ Տաճկաստանը մեր կարծածին չափ ապահով չէ։ Ատանայի կոտորածները, որ մի քանի օրուան ընթացքում տուեց աւելին քան բռնակալութեան օրերին ամիսների ընթացքում, մեր աչքի առաջն են։ գտնում եմ անհրաժեշտ Տաճկաստանում ինքնապաշտպանութեան լուրջ պատրաստութիւն եւ մեր լաւագոյն ոյժերի այնտեղ կենտրոնացման։ միւս կողմից միխթարական վիճակի մէջ չէ Ռուսաստանը։ պրովակացիան միշտ իր ոյժի մէջ է եւ, եթէ չվախենանք թուրք-հայկական մի նոր ընդհարումից, պիտի սպասենք նման դէպքեր, եթէ ոչ վրացիներից, գոնէ խուլիգանական հոսանքներից։

Այս բոլորը նկատի ունենալով, կրկնում եմ, որ ես յանցանք եմ համարուում ոյժեր խլել այդ տանջանքի երկրներից եւ այն զոհաբերել մի վայրում, որտեղ դեռ շատ երկար տարիներ են պէտք մեզ հասկանալու, որտեղ հայերի այնպիսի խոշոր բնակչութիւն չկայ, որտեղ յեղափոխական կուսակցութիւն թշնամու գնդակից մեռնողը ջուր է խնդրում իր թուրք «ընկերից», պատասխանում են «ձեռդ բաց ջուր լցնեմ», որովհետեւ հայը մունտառ է, ամանը չեն տալիս նրան եւ որտեղ յեղափոխական շարժման ղեկավարներից մէկը մեր ընկերոջ վերաբերմամբ թոյլ է տուել մի կեղտոտութիւն, որը, եթէ ցանկանում է թող Կ. Կ.ի ներկայացուցիչը պատմի։

Այս բոլորից յետոյ բնականաբար ես կ'ասէի որ մեր մասնակցութիւնը չպիտի անցնի յեղափոխական պրոպականդայից, կազմակերպելուց այն կողմը, որ մենք աջակցողներ պիտի լինինք նրանց եւ բարոյական աջակցութիւնից դուրս ուրիշ բան չպիտի անենք։ բայց ընդունելով եւ այն, որ ապրելով Պարսկաստանում կռիւների ժամանակ ձեռնպահ չենք կարող մնալ, որովհետեւ երկու սրերի մէջ ենք մենք, ստիպուած ասում եմ, որովհետեւ դա այնպիսի հիւանդութիւն է, որից խուսափել չենք կարող, թող ուրեմն մասնակցենք դրան մեր տեղական ոյժերով։ Չհամարելով այն Ընդհանուր ժողովից հաստատուած մի ընդհանուր գործ Վրէժստանի, Կ. Կ.ը իր վերմակի չափով անի ինչ կարող է անել, առանց դրսից ոյժեր խլելու։

Միաձայն անցաւ հետեւեալ բանաձեւը։

Վրէժստանի Շրջանային IV ժողովը սանկցիա տալով Ատրպատականի Կեդրոնական Կ.ի 1908 թուի Օգոստոս 19-ի նիստի որոշմանը՝ պարսկական շարժմանը մէջ ակտիւ մասնակցութիւն ցոյց տալու համար, լսելով մանրամասնօրէն բոլոր կատարուած փաստերը երկար թեր եւ դէմ վիճաբանութիւններից յետոյ, ի նկատի առնելով,

1) Որ Պարսկաստանում իրերի բնական դասաւորութեամբ կատարւում է տնտեսական մեծ յեղաշրջում.— կռիւ ֆէոդալականութեան դէմ։

2) Որ քաղաքական կազմը, Պարսկաստանում կատարեալ անընդունակ է բաւարարութիւն տալու ազգաբնակութեան պահանջներին, իր կատարեալ փտած եւ անպէտք լինելու պատճառով,

3) Որ քաղաքական ճնշումը եւ կամայականութիւնները իրենց կատարելիութեան են հասցրած,

4) Որ իրաւակարգը կատարելապէս բացակայում է, քմահաճոյքներին թողնելով ամէն ինչը կատարելու,

5) Որ գիւղացին բազմազան հարկերը լրացնելու անկարող վիճակի մէջ է,

6) Որ պարսկական վերջին շարժումները ծնունդ առան իրական կեանքից բխող պայմաններում եւ անպայման առաջադիմական եւ յեղափոխական բնոյթ ունին եւ գլխաւորապէս ուղղուած են երկրի մէջ իրաւակարգ հաստատելու։

7) Որ չմասնակցելով՝ պարսկահայերի յառաջադիմութեան եւ բարօրութեան վնասած կը լինենք եւ կը կորցնենք մեր գոյութեան հիմքը պարսկահայ աշխատաւորութեան մէջ եւ բացի այդ կը կորցնենք կուսակցութեան հմայքը շրջապատի մէջ։

8) Որ մեր մասնակցութիւնը կը նպաստէ շատ լայն չափերով ազգերի համերաշխութեան։

9) Որ մի քանի ամսուան մեր մասնակցութիւնը շատ նշանակալից էր,

10) Որ տաճկահայ խնդիրը ոյժերի նախկին լարումն չէ պահանջում այնտեղ կատարուած յեղաշրջման պատճառով։

Ի նկատի առնելով եւ այն,

1) Որ ազգերի համերաշխութիւնը կատարելապէս բացակայում է,

2) Որ հայ ազգաբնակչութիւնն էլ կազմելով երկրի բնակչութեան մի մասը ապրում է նոյն պայմանների մէջ ու նոյն քաղաքական եւ տնտեսական ճնշումներին ենթակայ։

3) Որ հայ ազգաբնակութիւնն գիւղում աւելի ճնշուած եւ հալածուած է իբրեւ քրիստոնեայ ժողովուրդ,

4) Որ հայ բնակչութիւնն էլ իբրեւ երկրի հարազատ զաւակ կապուած է երկրի հետ պատմականօրէն, ուրեմն եւ պարտականութիւններ ունի դէպի ընդհանուր հայրենիքը,

5) Որ Հ.Յ.Դ. իբրեւ մի քաղաքական յեղ. կուսակցութիւն անտարբեր մնալ չէ կարող մի ժողովրդի ազատագրական շարժումների հանդէպ մի երկրում ուր երկար տարիներ ունեցել է իր գործունէութիւնը, որոշուեց՝

Սրանից յետոյ էլ իբր քաղաքական յեղափոխական կուսակցութիւն, ակտիւ մասնակցութիւն ունենալ Պարսկաստանի ժողովուրդների ազատագրական շարժմանց մէջ, դնելով իր քաղաքական եւ տնտեսական ուրոյն նուազագոյն պահանջները համաձայն մեր սոցիալիստական սկզբունքների եւ երկրի իրական ու հասունացած պայմանների։

Ժողովը ի նկատի առաւ եւ այն՝

ա) Որ պարսիկ ժողովուրդը կուլտուրապէս շատ յետ է մնացել,

բ) Որ նա ընդունակ է զոհ դառնալու պրովակացիաների շնորհիւ կրօնական իր նեղ մտածելակերպի,

գ) Որ լաւ հիմքերի վրայ դրուած կազմակերպութիւններ չկան եւ եղածներն էլ կազմալուծուած վիճակի մէջ են, ուստի ապագայ Կենտ. Կոմ.ի ուշադրութիւնն է հրաւիրում այդ հանգամանքի վրայ, եւ առաջարկում

1) Որ լուրջ ուշադրութիւն դարձնէ նրանց մտաւոր զարգացման եւ քաղաքական կուսակցութիւնների հիմնաւորման։ 2) Աչալուրջ հետեւել հայ ժողովուրդի զինման՝ ինքնապաշտպանական գործը աւելի ուժեղ թափով առաջ տանելու։

Դնելով հանդերձ մեր սկզբունքներից բխած միտումի պահանջները, եւ յարմարեցնելով նրանք մեր իրականութեան հետ, ժողովը աւելորդ չի համարում շեշտել, որ ապագայ գործունէութեան ընթացքում չտարուել դոկմատիզմով, լինել գործնական եւ զարկ տալ աւելի այժմէական խնդիրների լուծման։ Աշխատել ա) Ամուր հիմքերի վրայ դնել ձեռք բերած սահմանադրութիւնը, բ) կանոնաւորել կազմած եւ կազմուելիք վար-

չական մարմինները գ) Իրաւակարգի հաստատման նպաստել, դ) կուլտուրական ձեռնարկներին շատ մեծ զարկ տալ. մասնաւորապէս ուշք դարձնել ընդհանուր պարտադիր եւ ձրի ուսման իրականացման ե) Հարկերի մէջ միօրինականութիւն մտցնել, եւն եւն։

Ժողովը աչքի առաջ ունենալով, որ բացւում է սրանով Իրանում գործունէութեան մի նոր եւ լայն ասպարէզ, որը պահանջում է ոյժեր եւ որը Պարսկաստանի մարմինները չեն կարող լրացնել իրենց միջոցներով եւ տանել մինակ առանց դրսի օգնութեան, որոշում է դիմել V Ընդհանուր Ժողովին՝ յատկացնել այդ գործի համար համապատասխան օժանդակութիւն։ Այս բանաձեւը անցաւ միաձայն եւ դրան միացան խորհրդակցական ձայնով հրաւիրուած մնացած ընկերները բացի ընկերներ Քրիստից եւ Ոսկանից։

Ընկեր Ոսկանը կարդաց Վրէժի Կ. Կ.ի ընկերներից Հայրիկի[29] մի բանաձեւը որը խնդրել էր կարդալ Շրջանային ժողովին։ Ի նկատի ունենալով, որ ներկայումս դրութիւնը Տաճկաստանում եւ Կովկասում դառնում է աւելի եւ աւելի լուրջ ու տագնապալի, պահանջելով կազմակերպական ոյժերի կենտրոնացումն այդ վայրերում, գլխաւորապէս Տաճկաստանում, հայ ազգաբնակութեան ինքնապաշտպանութեան կենսական գործի եւ Տաճկաստանի սահմանադրութեան ամուր պաշտպանութեան համար, որ ամէն րոպէ վտանգի ենթակայ է։ Որ Դաշնակցութեան բարոյական, նիւթական եւ ռազմական ոյժերը առայժմ գոնէ անբաւարար են կրուի մի երրորդ ֆրոնտ ստեղծելու Պարսկաստանում։ Որ Պարսկաստանը համեմատութեամբ Կովկասի եւ երկրի չի ներկայացնում ազգաբնակութեան մի այնպիսի զանգուած (որ նա համարում է մի գաղթավայր, ինչպիսին շատ տեղեր ունինք), որ կարեւոր հիմք ծառայէր պահանջել Դաշնակցութիւնից ոյժերի կարեւոր տոկոսների զոհաբերութիւնը։

Որ դաշնակցական մասսաները եւ ինտելիգենցիայի բոլոր խոշոր մեծամասնութիւնը կարող է ներկայումս իրաւամբ այնքան չհետաքրքրուել Պարսկաստանի ազատագրական կռուով եւ չոգեւորուել նրանով։ Որ ազատագրական ներկայ շարժումները իրենց տարերային բնոյթը չեն կորցրել տակաւին եւ որ այդ շարժումները կապուած են դեռ այս ու այն պատահական անձնաւորութիւնների հետ,— այնպէս որ Դաշնակցութիւնը Պարսկաստանում չգտնելով կազմակերպուած յեղափոխական մի կուսակցութիւն եւ յեղափոխականօրէն պատրաստուած մասսա, կարող է մի օր ստիպուած լինել տանել այդ կռուի ամբողջ ծանրութիւնը մէն-մենակ իր ուսերի վրայ, ինչ որ կարող է աննպատակայարմար, եթէ չասենք ի հարկէ՝ կազմկերպութեան այդ ձեռնարկին յատկացնելիք ոյժերից միանգամայն վեր գործ լինելը։

Որ արտաքին միջամտութիւնը եւ օտարների ներկայութիւնը Պարսկաստանում ամէն քայլափոխին կարող է անդամալուծել եւ չէզոքացնել գործունէութիւնը մի յեղ. կազմակերպութեան, եթէ ի հարկէ նա չուզենայ խոյս տալ ինքնակոչ օտարների հետ ընդհարուելուց (բացի այն դէպքում ի հարկէ եթէ դա կազմակերպական ընդհանուր, խոշոր ձեռնարկների համար զանազան նկատումներով նպատակայարմար դատուի)։

Մենք առաջարկում ենք պարսկական ազատագրական շարժմանը (որ անպայման առաջադիմական է եւ իր ընթացքում հետզհետէ դեմոկրատական) մինչեւ այժմ մեր մասնակցութիւնը համարել մի մասնաւոր ձեռնարկ, որ արել է տեղական մարմինը Բիւրոյի խորհրդակցութեամբ եւ սրանից յետոյ էլ մասնակցելու կամ աջակցելու գործը համարել, առայժմ գոնէ, տեղական գործ (ոչ ընդհանուր կազմակերպական ձեռնարկ եւ ոչ գլխաւոր նպատակներից մէկը), որը ղեկավարելու է Դաշնակցութեան Պարսկաստանի մարմինը իր ունեցած միջոցներով մնալով առ այժմ յետին շարքերում գլխաւորապէս ինքնապաշտպանական հողի վրայ։ IV *Ընդհ. Ժողովի Պարսկաստանի վերաբերմամբ կայացրած որոշման սահմաններում աշխատել զարկ տալ այդ շարժմանը, առաջ բերել Պարսկաստանում համապատասխան սոց. յեղ. կազմակերպութիւն, ջանալ հանել կռիւը իր տարերային վիճակից, տալով նրան կազմակերպուած եւ գիտակցական կռուի կերպարանք իր որոշ լոզունգներով (աշխատաւորակ.), դնելով ընդհ. պահանջների հետ եւ միաժամանակ ուրոյն ազգային պահանջներ։ Այս ձեռնարկի համար յատկացնել Վրէժստանի ամբողջ մուտքը փոխանակ նախկին 50%-ի։*

Վերոյիշեալ բանաձեւին միանում եւ ստորագրում են ընկերներ Քրիստ եւ Ոսկան Ս.։

Նիստը փակւում է երեկոյեան ժամը 7-ին։

Նախագահ՝ ԴԱՐՎԻՇ
Քարտուղարներ՝ ՈՍԿԱՆ Ս., ՐՕՇՏԱԿ

Նիստ IX 18/6

Ժողովը սկսւում է առաւօտեան ժամը 10-ին, ներկայ էին բոլորը։ Ժողովը զբաղուեց գործունէութեան ձեւի մշակմամբ (թուրքերի մէջ)։ Ժողովը երկար զբաղուելով յեղափոխական պրոպականդ մղելու հարցով որոշեց Թաւրիզում հրատարակել մի պարսկերէն թերթ, որի համար անցաւ հետեւեալ բանաձեւը.

«Ժողովը գիտակցելով, որ պրոպականդան, գրաւոր եւ բանաւոր, այն մեծ ազդակներից մէկն է, որը ծառայում է յեղ. մասսաների լայն գիտակցութեան, որոշեց

1.Պարսիկ ընկերների հետ խորհրդակցելով եւ համաձայնութեան գալով, փոխադարձ աջակցութեամբ եւ նպաստներով հիմնել մի թերթ.

2. Աշխատել նոյն հիմունքներով կազմել Ցառաջի գրադարանի պէս մի հրատարակչական գործ՝ թարգմանական եւ ինքնուրոյն գրքերով.

3. Զարկ տալ նրանց մէջ յեղափ. կուսակցութիւններ յառաջ գալուն.

4. Պարտականութիւն դնել Կովկասի ընկերների վրայ, որ նրանք էլ իրենց կողմից աջակցեն թուրք յեղ. կուսակց[ութիւնների] ընդլայնելու եւ տարածելու իրենց կազմակերպական գործունէութիւնը նաեւ Կովկասում։

Առաջարկուեց նաեւ մտածել, թէ ինչ դիրք պէտք է բռնել Պարսկաստանում գործող (եթէ այդպիսիները կը լինեն) երիտասարդ թուրքերի հանդէպ։ Թեր ու դէմ վիճաբանութիւններից եւ վերջին դէպքերին մասնակցող երիտ. թուրքերի մասին տրուած զեկուցումներից յետոյ ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ եթէ նրանք ասպարէզ կ'իջնեն իբր մաքուր յեղափոխականներ եւ իբր այդպիսիները հաւատարիմ կը մնան իրենց կոչման, մենք նրանց հետ կ'ունենանք մօտիկ ու բարեկամական յարաբերութիւն եւ համարաչխ գործունէութիւն, իսկ եթէ նրանք գործի մէջ կը մտնեն իբր տաճիկ կառավարութեան ներկայացուցիչներ, այն դէպքում մեր վերաբերմունքը դէպի նրանք կը ստանայ ուրիշ բնոյթ ըստ պայմանների եւ հանգամանքների։ Այդ խորհրդակցութեան առիթ եղաւ ընկերների տուած զեկուցումը նրանց գործունէութեան մասին, որից երեւաց, որ նրանք (ժէօն թուրքերը) առիթներ են տուել կարծելու, որ Պարսկաստան են անցած եղել ինչ ինչ նկատումներով դիպլոմատիկական-քաղաքական այդ բանում համոզուած են եղել նրանց հետ գործող պարսիկ յեղափոխականները։

Ժողովը քննութեան է առնում նաեւ Դաշնակց. կուլտուրական գործունէութեան հարցը։

Թեր ու դէմ վիճաբանութիւններից յետոյ ժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը.

Ընդունելով,

Որ յեղափ. գործի յաջողութեան համար կուլտուրապէս բարձր ժողովուրդ ունենալը անհրաժեշտ է, մանաւանդ, որ դրա անհրաժեշտութիւնը աւելի ցայտուն կերպով արտայայտւում է Պարսկաստանում, որի իրականութեան մէջ այդ ուղղութեամբ գործող մարմիններ գոյութիւն չունին. միեւնոյն ժամանակ ի նկատի ունենալով մեր մարմինների կուլտուրական գործունէութեան բարեյաջող հետեւանքները, ժողովը կարեւոր է համարում շարունակել կուլտուրական գործունէութիւնը նոյն ուղղութեամբ։ Ժողովը միեւնոյն ժամանակ տեղեկացնում է մարմիններին եւ գործիչ ընկերներին չտարուել գլխովին այդ գործունէութեամբ, մասնաւորապէս չծանրաբեռնել անհատ ընկերներին, որով կը տուժէ յեղափ. գործը։ Ժողովը վերջացաւ ժամը 12-ին։

Նիստ X 18/6

Ժողովը սկսուեց երեկ. ժամը 4½. ներկայ էին բոլորը։ Քննութեան էր դրուած «տնտեսական գործունէութիւնը մեր շրջաններում եւ նրա սահմանների որոշումը»։

Տեղեկագրերից եւ զեկուցումներից երեւաց, որ մեր շրջաններում գործնական շատ քիչ բան է արուած այդ հողի վրայ, որ տնտեսական գործունէութիւնը աւելի շուտ դաստիարակչական բնոյթ է կրել, այն է պրոպականդ է մղուել բանուորական եւ գիւղացիական շրջաններում պատրաստելու եւ գիտակից դարձնելու նրանց ապագայի գործունէութեան։ Նկատուեց նաեւ, որ այնքան էլ տաքտով չի տարուել պրոպականտայի գործը, այն է պէտք եղածից աւելի շատ են ոգեւորել բանուորներին եւ գիւղացիներին ապագայի գեղեցիկ իլիւզիաներով՝ առանց մի որեւէ չօշափելի բան տալու նրանց եւ որ գլխաւորն է մեր մասսաները շատ են տարուել գաւառ էկոնոմիզմով եւ շատ քիչ բան է մնացել նրանց մէջ յեղափոխական մասսային անհրաժեշտ իդէալականութիւնից։ Զանազան կողմերից մօտենալով դրուած հարցին առաջարկութիւններ եղան գիւղացիական շտեմարանների, բանկերի եւ այդ կարգի համայնական հաստատութիւններ հիմնելուն զարկ տալով աշխատիլ, հնարաւորութեան եւ տեղական պայմանների սահմաններում տնտեսական կռիւը աւելի չօշափելի դարձնել, այն է այդ միջոցներով չէզոքացնել վաշխառուների, գեղական տզրուկների, կապալառուների եւ մասամբ էլ գիւղատէրերի ոտնձգութիւնները։ Երկար վիճաբանութիւններից յետոյ ընդունուեց հետեւեալ բանաձեւը։

Ժողովը գիտակցելով, որ տնտեսական կռիւը մի երկրում զարգանում եւ յառաջդիմում է, երբ կայ ներքին զարգացած կապիտալ, իսկ ներքին կապիտալը զարգանում է քաղաքական քիչ ու շատ տանելի պայմաններում, մի հանգամանք, որ բացակայում է Պարսկաստանի իրականութեան մէջ, ժողովը որոշում է առայժմ ամբողջ թափով ընկնել քաղաքական կռուի ասպարէզ, միեւնոյն ժամանակ յանձնարարում է մարմիններին եւ ընկեր գործիչներին հնարաւոր չափերով օգտուելով ամէն մի յարմար առիթից աշխատաւոր ազգաբնակութեան, գլխաւորապէս գիւղացիութեան տնտեսական դրութեան բարելաւման ձգտել՝ կռուելով վաշխառուների, աղաների հարստահարութիւնների եւ կապալառուների դէմ եւայլն։

Շեշտւում է նաեւ գործի յաջողութեան տեսակէտից թուրք հարեւան գիւղացիութեան համագործակցութեան վրայ։ Ցանձնարարւում է մարմիններին եւ ընկերներին յարմար առիթներ բաց չթողնել ձեռքից թէ անձնական օրինակով եւ թէ խօսքի պրոպականդով այդ օրինակ մտքեր ու սկզբունքներ մատչելի դարձնելու թուրք գիւղացիութեան համար։ Ժողովը վերջացաւ եր. ժամը 7-ին։

29.- Հայրապետ Պանիրեան, ուսուցիչ, տնօրէն Թաւրիզի մէջ։

XI Նիստ 19/6

Ժողովը սկսուեց առ. ժամը 10-ին։ *Ներկայ էին բոլորը։ Ժողովը քննութեան առաւ գիւղացիական եւ արհեստակցական միութիւնների խնդիրը։ Ընկերները կանգ առան այն խնդրի վրայ, թէ ինչպէս պէտք է կազմել միութիւնները եւ ինչպիսի տարրեր ընդունել նրանց մէջ։ Առաջարկութիւններ եղան, ընդլայնել քաղաքական խմբերի շրջանակը, ընդունելով նրանց մէջ նաեւ մանր առեւտրականներին։ Մինարէթի ընկերները չեշտեցին, որ գիւղացիների մեծամասնութիւնը (իրենց շրջանում) կապուած չեն հողի հետ, մեծ մասը պանդխտութեան է դիմում, իսկ վերադառնալուց յետոյ չի կապւում հողի հետ. այդպիսիներին նրանք քաղաքական խմբերի մէջ են ընդունել։ Մինարէթի ընկերներից Քրիստը առաջարկում էր յանուն քաղաքական կռուի եւ նրա յաջողութեան շարքերի մէջ մտցնել նոյնիսկ մեծ առեւտրականներին, որոնք գործում են գիւղական շրջաններում եւ յեղափ. տարը են ներկայացնում։ Միւսները գլխաւորապէս պնդում էին, որ անհրաժեշտ է գործել* III *Շրջ. ժողովում գծուած կանոնադրութեան սահմաններում. միայն քաղաքական խմբերում ընդունել մանր առեւտրականներին եւ գիւղական արհեստանոցատէրերին, որոնք իրենց ձեռքի տակ քարկահներ չեն աշխատեցնում։ Վերջինիս դէմ առարկուեց այն փաստով, որ նրանք միեւնոյն ժամանակ գիւղացիներ են եւ կապուած են հողի հետ։ Կարծիքների փոխանակութիւնից յետոյ ժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը.*

Ժողովը զբաղուելով միութիւնների եւ քաղաքական խմբերի հարցով, լսելով մի տարուայ գործունէութեան զեկուցումները, ի նկատի առնելով՝

1. *Որ մեր իրականութեան մէջ տնտեսական կռիւը (մանաւանդ մեր՝ հայկական նեղ շրջանում) շատ թոյլ է*

2. *Որ մենք ազգւում ենք Կովկասի կեանքից, հետեւաբար անցեալում շատ ոգեւորուած Կովկասի տնտեսական կռուով տարուեցինք եւ հակառակ մեր իրականութեան թէ՛ գործնականով եւ թէ պրոպականդայով զարգացրինք մեր մասսաների մէջ էկոնոմիզմի նեղ հակացողութիւնը ի վնաս քաղաքականի.*

3. *Որ քաղաքական խմբերի մասին ունեցած մեր թիւր հակացողութիւնը շատ թուլացրեց մեր կազմակերպութիւնը՝ որոշեց.*

1. *Մնալով Վրէժստ.* III *Շրջ. ժողովի մշակած կանոնադրութեան շրջաններում, հաւասարակշռութիւնը պահելու համար զարկ տալ քաղաքական խմբերին.*

Ծն.- Որովհետեւ քաղաք. խմբերում կարող են սպրդել կազմակերպութեան համար ոչ ցանկալի տարրեր եւս, որոնք առիթներից օգտուելով իրենց ձեռքը գցելով կուսակցութեան ղեկը կը շեղեն նրան աշխատաւորական քաղաքականութիւնից, ընկերների եւ մարմինների ուշադրութեան ենք հրաւիրում դրանց առաջն առնել։

2. *Միութիւնները կազմակերպել աւելի լայն հիմքերի վրայ (չդնելով նրանց թիւրիմացութեամբ համքարական ձեւի տակ, ինչպէս նկատուեց մի շրջանի նկատմամբ), գլխաւորաբար զբաղուել դրանց հետ դասակարգային դաստիարակութեամբ եւ հնարաւոր պարագաներում (առանց տարուելու՝ տնտեսական կռիւ մղած լինելու հիւանդութեամբ) համագործակցական ընկերութիւններով բարձրացնել տնտեսութիւնները, կռուել վաշխառութեան եւ նման ձեւերի ճնշումների դէմ, իսկ քաղաքներում՝ բանուորների համեմատական բարելաւման ձգտել։*

Ժողովը վերջացաւ ժամը 2-ին։

Նիստ XII 19/6

Ժողովը սկսուեց ժ. 4½-ին. *Ներկայ էին բոլորը։ Ժողովի օրակարգին էր*

1. *Դրամական միջոցների կանոնաւորումը*
2. *Պրոպականդի գործը*
3. *Կարմիր Խաչ*
4. *Դատավարական գործը*
5. *Շրջանի թերթի հարցը։*

1.- *Դրամական միջոցների մասին տուած զեկուցումներից երեւաց, որ զգալի կերպով թուլացել է դրամական գործը։ Պատճառներ եղել են մասամբ նախկին խմբերի ձեւափոխութիւնը, վերջին քաղաքական դէպքերը եւ մասամբ էլ մարմինների եւ ընկերների անտարբերութիւնը։ Ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ դրամականը կանոնաւորելու համար մարմինները պարտաւոր են խստութեամբ իրագործել ներքին կանոնադրութեան* 19-*րդ կէտը, այն է մարմինների թուլութիւնը շահագործող անբարեխիղճ անդամներին, որոնք առանց արդարացի պատճառների չեն վճարում կազմակերպական տուրքերը, հեռացած համարել խմբերից եւ միութիւններից։*

Պրոպականդայի գործը աւելի լաւ հիմունքների վրայ դնելու համար պարտականութիւն է դրւում Կ. Կոմիտէի վրայ ձեռնհաս պատրաստուած պրոպականդիստ ազատ ընկեր ունենալ (ինչքան թոյլ կը տան դրամական միջոցները) շրջանի ընկերներին եւ մարմիններին ուղղութիւն տալու համար. Կ. Կոմիտէի անդամները պարտաւորւում են հերթով տարին առնուազն երկու անգամ պտտել շրջանները քննելու եւ ուղղութիւն տալու նրանց գործունէութեան ու տակտիկային։

Շրջանի թերթի հարցը առայժմ վաղաժամ է համարւում, ի նկատի ունենալով կարող ոյժերի եւ ընկերների բացակայութիւնը։ Կ. Կոմիտէի վրայ պարտականութիւն է դրւում թերթի կարիքը մասամբ լրացնելու համար յաճախակի թռուցիկներով եւ շրջաբերականներով

իրազեկ պահել մարմիններին ու շրջանի ընկերներին կազմակերպական որոշ սկզբունքային խնդիրներում եւ հաղորդել նրանց գիտական յեղափոխական աշխարհից անհրաժեշտ նորութիւններ։

Կարմիր Խաչի մասին ընդունուեց հետեւեալ բանաձեւը.

Ժողովը լսելով Վրէժի Կարմիր Խաչի գործունէութեան զեկուցումը, գտաւ շատ օգտակար եւ դեռեւս անհրաժեշտ նրա գոյութիւնը ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ դեռեւս պարզուած չէ մեր քաղաքական հորիզոնը, IV *Շրջ. ժող. որոշում է թողնել Կ. Խ. շարունակել իր գոյութիւնը ներքին կանոնադրութեան հիմունքներով։*

Մրրիկ խմբի խմբապետ Քեռին ի միջի այլոց իր շնորհակալութիւնը յայտնեց Կ. Խաչին իր խմբին նրանց կողմից արուած խնամատարութեան համար։

Դատավարական գործի մասին եղած զեկուցումներից երեւաց, որ մարմինները իրագործել են III *Շրջ. ժողովի վճիռը, այն է չմասնակցել դատավարական գործերին, բայց Մինարէթում ընկերները ստիպուած են եղել միջնորդ դատարանները հետզհետէ ժողովրդի աչքում բարձրացնելով հանդերձ երբեմն, անուղղակի կերպով մասնակցել դատական խնդիրներին։ Թեր ու դէմ կարծիքներ լսելուց յետոյ ժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը.*

Ի նկատի առնելով, որ Մինարէթի շրջանում միջնորդ դատարանները անհրաժեշտ են սարփարաստների եւ դատաւորների հարստահարութիւնների եւ կաշառակերութեան առաջն առնելու համար, յանձնարարւում է այն վայրերի շրջանի մարմնին եւ ընկերներին, որոնք ենթակայ են հարստահարութիւնների, քանի որ դեռեւս ժողովուրդի աչքում այն նշանակութիւնը չեն ստացել, ինչ որ անհրաժեշտ է,— աշխատել այդ դատարանի վճիռները իրագործելուն նպաստել եւ միեւնոյն ժամանակ բարձրացնել նրանց նշանակութիւնը ժողովուրդի աչքում։ Ժողովը վերջանում է եր. ժամը 7-ին։ *Միւս արձանագրութիւնները ստորագրուած են համարւում։*

Նախագահ՝ ***ԴԱՐՎԻՇ***
Քարտուղարներ՝ ***ՐՕՇՏԱԿ, ՈՍԿԱՆ Ս.***

Նիստ XIII 22/6

Ժողովը բացւում է ժամը 9½-ին։ *Կարդացւում է անցեալ ժողովների արձանագրութիւնը։ Ներկայ էին բոլորը, բացի ընկեր Մաշտոցից, որը ժամանակաւորապէս հեռացել է տեղիցս ժողովի թոյլտուութեամբ։ Ներկայացաւ Շրջ. ժողովին Փարոսի*[20] *ներկայացուցիչ ընկեր Սամսոն։*

Օրակարգն էր Դատական։

Քննութեան է դրւում Բագրատ վրդ.ի խնդիրը եւ նրա Վրէժստ. Դաշնակց[ութեան] շրջանից հեռացնելու առթիւ Կ. Կոմիտէի թողած թռուցիկի (1908, *Հոկտ.* 15) *վաւերացումը։ Երկար վիճաբանութիւնների առիթ է տալիս թռուցիկի հարցը։ Ընկերներից մի քանիսը, որ գտնում էին, որ Բագրատ վրդ.ի բացակայութիւնը եւ ուժեղ փաստերի չգոյութիւնը արգելք են հանդիսանում գործի մանրամասն եւ անաչառ քննութեան, ուստի հրաժարւում են վերոյիշեալին ազդի մէջ յիշուած բոլոր կէտերում մեղադրել. նրանք մեղաւոր են ճանաչում նրան միայն նրա համար, որ նա փախուստ է տուել ընկերական դատից։ Առաջարկներ եղան նաեւ դատի քննութիւնը եւ ակտիւ սանկցիա տալը թողնել Ռայոնական ժողովին։*

Ազդը եւ մեղադրական կէտերի պատճառաբանութիւնները բաւարար գտան ձայնի իրաւունքով ընկերներ՝ Սամսոն, Սամօ, Վահան, Շէն. խորհրդակցական ձայնով ընկերներ՝ Գարեգին, Վահրիճ, Քրիստ։

Բագրատ վրդ. մեղաւոր գտան դատի չգալու համար միայն մնացած ընկերները, որոնք առաջարկում էին տեղում մանրամասն քննութիւն կատարել եւ ըստ այնմ դատելու համար ընտրել յանձնախումբ, յանձնելով նրան լիազօրութիւն Շրջ. ժողովի կողմից քննելու գործը եւ իր ներկայացուցչի միջոցով ներկայացնելու քննութեան հետեւանքը Ռայոնական ժողովին. այս առաջարկին ձայն տուին ձայնի իրաւունքով ընկերներ Դարվիշ, Ռօշտակ — 2 ձայնով։ Քեռի, Ցոլակ, խորհրդակցական ձայնով ընկերներ Ոսկանն ու Տեղացին։

Բացակ. խորհրդակցական ձայնով հրաւիրուած ընկերներ Սողոմոնն ու Զաւուշը։

Սեղանի վրայ դրուեց նաեւ Շահսուվանի ընկերներից Պօղոս Սահակեանին եւ Մնացական Եգանեանին հեռացնելու հարցը, որոնց տեղի ընկերները հեռացնելով իրենց շարքերից գործի քննութիւնն ու վերջնական դատը թողել էին Վրէժի կոմիտէին։ Նրանք մեղադրուել էին մի շանտաժի մէջ։ Գործի մանրամասն քննութիւնը ձեռքի տակ չունենալով որոշում չկայացուեց, յանձնարարուեց Վրէժի կոմիտէին եւ Կ. Կոմիտէին քննութիւնը կատարելուց յետոյ Շրջ. ժողովի կողմից վճիռը կայացնել եւ յայտարարել ի գիտութիւն ընկերների։

Ժողովը վերջացաւ ժամը 1½-ին։

Նախագահ՝ ***ԴԱՐՎԻՇ***
Քարտուղարներ՝ ***ՐՕՇՏԱԿ, ՈՍԿԱՆ Ս.***

Նիստ XIV 22/6

Ժողովը բացուեց եր. ժամը 4-ին։ *Ներկայ էին բոլորը։ Օրակարգն էր՝*

1) *Մեր դիրքը դէպի միւս կուսակցութիւնները*
2) *Առաջարկներ*

3) Կ. Կոմիտէի ընտրութիւն

4) V Ընդհ. Ժողովի Վրէժստանի պատգամաւորի ընտրութիւն։

Օրակարգի առաջին կէտի մասին ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ մեր մարմիններն ու ընկերները համերաշխ գործունէութիւն պիտի ունենան իրենց վայրերում գոյութիւն ունեցող եւ այժմ ներկայացնող միւս յեղ. կուսակցութիւնների հետ. առանձնապէս թուրք. յեղ. կուսակցութիւնների հետ պէտք է միշտ մօտիկ եւ բարեկամական կապեր ունենան։

2.- Միաձայն ընդունուեց ընկեր Սամսոնի առաջարկը, այն է, ընդհանրապէս բոլոր մարմինները, մասնաւորապէս Մինարէթում, մարմինները եւ նրանց անդամները գաղտնի պիտի մնան. վերացւում է ներկայացուցչութիւնները այն վայրերում, ուր կան կոմիտէները։ Ներկայացուցիչների դերն ու պաշտօնը յանձնւում է կոմիտէներին։

Յանձնարարւում է կոմիտէներին իրենց կից ստեղծել զինական սեկցիաներ եւ նրանց յանձնել ամբողջովին զինական գործը իրենց (կոմիտէների) պատասխանատուութեամբ։

Կ. Կոմիտէի առաջ սեկցիաների համար պատասխանատու կը լինին կոմիտէները եւ առհասարակ ցանկալի համարուեց սեկցիաներ ստեղծել նաեւ միւս գործերի համար։

Փարոսի ներկայացուցիչը շեշտելով Փարոսի յեղափոխական գործի անմխիթար վիճակի վրայ, անհրաժեշտ է գտնում այնտեղի համար մի ներկայացուցիչի ներկայութիւնը կանոնաւորելու կազմակերպական գործերը։ Ներկայացուցիչը պէտք է մնայ առնուազը 4 ամիս, մի հետեւանքի հասնելու համար, իսկ եթէ հնարաւոր է էլ աւելի երկար ժամանակով։

3.- Կ. Կոմիտէի ընտրութիւնը տեղի ունեցաւ փակ քուէարկութեամբ։

Ընտրուեցին ընկերներ՝

1) Աշոտ 9 ձայնով

2) Պիոն 9 ձայնով

3) Ռշտունի 9 ձայնով

4) Շէն 8 »

5) Շահէն 9 »

6) Հայրիկ 9 »

7) Վահան 8 »

Ընտրութեան մասնակցում էին ութ հոգի 9 ձայնով։

4.- Ընդհ. Ժողովի համար բաց քուէարկութեամբ [պատգամաւոր] ընտրուեց ընկեր Վահան[22]։

Ժողովը վերջացաւ ժամը 6½-ին։

Նախագահ՝ ԴԱՐՎԻՇ
Քարտուղարներ՝ ՐՕՇՏԱԿ, ՈՍԿԱՆ Ս.

Նիստ XV 23/6

Ժողովը բացւում է ժամը 10-ին։ Բացակայում է ընկեր Սամսոնն եւ խորհրդ. ձայնով ընկ. Քրիստ։

Քննութեան է դրւում ներքին կանոնադրութիւնը, որի մի քանի կէտերը փոփոխութեան են ենթարկւում եւ մի քանի յաւելումներից յետոյ հաստատւում է։

Գիւղացիական միութիւնների մէջ շեշտուած առեւտրականները (որոնք իրենց խանութը դնում են կոոպերատիւ հիմունքների վրայ) եւ մանր առեւտրականները, ինչպէս եւ այն հողատէրերը, որոնց հողը իրենց հագիւ է բաւականացնում եւ այդ մշակում են հէնց իրենք, այդպիսիները մտնում են մեր քաղաքական խմբերի մէջ։

Առհասարակ այդպիսիների խմբերի մէջ ընդունելութիւնը թողնւում է ընկերներին, որ ուշադիր լինեն այդ անունների տակ թագնուած շահագործողներից։

Երկար վիճաբանութեան նիւթ դարձան «մարտական խմբեր» վերնագրի տակ եղած կանոնները։

Ընկերների մեծամասնութիւնը այն կարծիքի է, որ պէտք է վերջ տալ զինուորական առանձին խմբերի, այլ իւրաքանչիւր դաշնակցական իրեն եւ մարտիկ պիտի համարի։ Նրանք պիտի բոլորն էլ պաշտպանուեն, իսկ ակտիւ գործի ժամանակ կռուելու եւ գործ կատարելու կարողները դուրս կը գան եւ որոնք այդ ժամանակ էլ կ'ունենան իրենց խմբապետը։ Ժողովականները համամիտ լինելով այդ առաջարկին, որ արուեց ընկեր Րօշտակի կողմից, այդ ուղղութեամբ էլ մշակեց «մարտական խմբեր» կանոնները շեշտելով, որ բոլոր մարտիկները մնում են միաժամանակ իրենց խմբերի կամ միութիւնների անդամներ։

Ընկեր Սամսոնը եւ Քրիստ գալիս են ժամը 12-ին։

Աննշան փոփոխութիւններով ընդունւում է Կարմիր Խաչի վերտառութեամբ գրուած կանոնները, շեշտելով սակայն, որ Կարմիր Խաչը է միեւնոյն ժամանակ որպէս Հ.Յ.Դ. մի կազմակերպական խումբ։

Արհեստակցական միութիւնների մասին խօսելիս, ընկեր Ոսկանը նկատում է, որ գործադուլային ֆոնդին յատկացրած եկամուտի 10%-ը շատ չնչին է, այդ տոկոսով նրանք երբեք չեն կարող պատրաստուել, նիւթական ապահովութիւն ունենալ կարեւոր դէպքում կրուելու համար եւ որ ուրիշ տեղեր այդ նպատակին յատկացրուած է եկամուտի 50%-ը. ուստի պէտք է նոյնը եւ այստեղ անել. արհեստակցական միութեան անդամները գիտակցելով իրենց շահերի պաշտպանուելը աւելի սերտ կապուին միութեան։ Այդ առաջարկին միանում է Կ.-ի ներկայացուցիչ Րօշտակ, ասելով, որ նոյն ցանկութիւնը յայտնուած է եւ միութիւնների կողմից, որին կողմնակից է եւ տեղական կոմիտէն։

Ընկեր Սամսոն գտնում է 10%-ը բաւարար, եւ համաձայն չէ 50%-ի բարձրացնելուն, նկատի ունենալով

կազմակերպական եկամուտների պակասումը։ Ընկեր Սամսոնը առաջարկում է գիւղացիական միութիւններին եւ արհեստակցական միութիւններին միասին յատկացնել 60%-ը եւ ոչ աւելին։

Երկար եւ թեր ու դէմ կարծիքներից յետոյ անցնում է 7 ձայնով ընդդէմ 2-ի գործադուլային ֆոնդին յատկացնել 25%։

Գիւղացիական միութիւնների մասին խօսելիս ընկեր Սամսոնը պնդում է իր առաջարկը չեշտելով որ փոխանակ 50%-ի այդ միութեան նշանակուի 35%, բայց այդ առաջարկը ոչ մի կողմնակից չի գտնում։

Ժողովը փակւում է ժամը 2-ին։

Նախագահ՝ ԴԱՐՎԻՇ
Քարտուղարներ՝ ՐՕՇՏԱԿ, ՈՍԿԱՆ Ս.

Նիստ XVI 23/VI

Ժողովրդական ինքնապաշտպանութեան մասին տեղի է ունենում կարծիքների փոխանակութիւն. մեծ մասամբ ընդունւում են եւ ցանկալի համար[ում] ինքնապաշտպանութեան գործը թողնել ժողովրդի ձեռքը եւ ազատ թողնել մի յեղափոխական կուսակցութեան իր միսսիան կատարելու։ Բայց առայժմ այդ գտնում են անկարելի նկատի ունենալով նոյնիսկ Կովկասը, որտեղ ժողովուրդը հակառակ իր պահանջին, երբ յանձնուեց իրեն նա անկարող եղաւ գլուխ տանել իր վրայ առած գործը եւ այսօր մենք տեսնում ենք նրան քայքայուած դրութեան մէջ։

Ութը ձայնով ընդդէմ մէկի անցնում է հետեւեալ բանաձեւը, որին միանում են 4 խորհրդակցականները.

Ինքնապաշտպանութեան գործը, ինչպէս ամէն տեղ եւ մասնաւորապէս Պարսկաստանում գտնելով անհրաժեշտ, որոշում ենք այն պահել միշտ կազմակերպուած դրութեան մէջ եւ որքան էլ ցանկալի ենք համարում այդ գործը յանձնել ժողովրդին, բայց նկատի ունենալով, որ պարսկահայը դեռ չէ հասել այն գիտակցութեան, որ զգալով ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը՝ լինի միաժամանակ եւ նրա ղեկավարը,

Որ նա տակաւին անձեռնհաս է կազմակերպելու եւ կանոնաւոր հիմքերի վրայ պահելու այդպիսի մի կարեւոր գործ,

Որ կովկասահայը մինչեւ իսկ, որ աւելի առաջադէմ է եւ պատրաստուած քան պարսկահայը, ցոյց տուեց կատարեալ իր անկարողութիւնը ինքնապաշտպանութեան գործում եւ շատ վայրերում չկարողացաւ պահել մինչեւ իսկ երեն յանձնած զէնքերը եւ

Որ պարսկահայ տղամարդկանց հագին չափով պանդուխտներ կան դրսում,

Ժողովը այդ նկատումներով եւ հակառակ իր բուռն ցանկութեան որոշում է առայժմ ժողովրդական ինքնապաշտպանութեան գործի ղեկավարութիւնը թողնել կազմակերպութեան մարմինների պատասխանատուութեանը։ Յետոյ կարդացուեց այդ վերնագրի տակ եղած կանոնները, որը հաստատուեց, սակայն ժողովը չեշտեց, որ ժողովրդին պէտք է գիտակ պահել ինքնապաշտպանութեան գործին, նրան պատրաստել ապագայում այդ գործը ղեկավարելուն եւ գիտակից անել բոլոր դրամական հաշիւներին։

Ներքին կանոնադրութեան քննութեան եւ հաստատութիւնից յետոյ անցնում են Ընդհանուր Ժողովի օրակարգին։

Ցանկալի է համարւում բարեկամական յարաբերութիւն պահպանել հարեւան ազգութիւնների եւ յեղ. կուսակցութիւնների հետ։ (Պատ[ասխան] մեր դիրքը հարեւան ազգ[երի] եւ կուսակց. հետ)։

(Մեր պատգամ[աւորները] պարլամենտում հարցին պատասխ.). Դաշնակց. պատգամաւորը պիտի լինի արտայայտիչը Հ.Յ.Դ. մտածողութեան եւ լուրջ խնդիրներում նա պիտի խորհրդակցի դրսի մեր ընկերների հետ։ Ձախակողմեանների հետ միշտ կարող է պլոկ կազմել ի հարկէ հաւատարիմ մնալով Դաշնակց. սկզբունքին (կուլտուրական գործ, լրագիր, գիրք, դպրոց եւայլն. կաթողիկ. եւ պատրիարք. ընտ)։ Վեց ձայնով ընդդէմ 3-ի անցնում է հետեւեալ բանաձեւը.

Կուլտուրական եւ հրատարակչական գործերին ցանկալի է համարում մասնակցելը, իսկ կաթողիկոսական եւ պատրիարքական ընտրութիւններին եւ ոչ մի դէպքում չպիտի մասնակցել իբրեւ կուսակցութիւն։

Փոքրամասնութիւն կազմող 3-ի կարծիքն հետեւեալն է.

Մենք իբրեւ յեղափոխական կուսակցութիւն եւ ոչ մի դէպքում իբրեւ այդպիսին չենք մասնակցում ոչ մի հոգեւորական ընտրութիւնների, ինչպէս եւ կուլտուրական զանազան գործերում։

(Ինքնապաշտպանութեան մասին). Ժողովը գալիս է այն եզրակացութեան, որը Տաճկաստանում եւ Պարսկաստանում պիտի ղեկավարէ կազմակերպութիւնը, իսկ Կովկասում թողնել ժողովրդին։ Մի հոգի միայն գտնում է, որ բոլոր վայրերում պիտի թողնել ժողովրդի վրայ։

Կազմակերպական կանոնների վերաքննութիւնը ժամանակի սղութեան պատճառով թողնւում է։

Ժողովը փակւում է ժամը 6-ին։

Նախագահ՝ ԴԱՐՎԻՇ
Քարտուղարներ՝ ՐՕՇՏԱԿ, ՈՍԿԱՆ Ս.

Նիստ XVII 24/6

Ժողովը սկսում է առ. ժամը 10-ին: Բացակայում էր ընկեր Սամսոն: Ընկեր Սամսօ կարդում է Փարոսի[20] *տեղեկագիրը: Թէ՛ տեղեկագրից եւ թէ բանաւոր բացատրութիւններից երեւաց, որ կազմակերպական գործը շատ անմխիթար դրութեան մէջ է եղել վերջին տարւայ ընթացքում: Թէ՛ գիւղերի եւ թէ քաղաքի խմբերը կազմալուծուած են եղել գրեթէ, անդամավճար չեն վճարել. յեղափ. շարժման գիւղացիներ աչքի ընկնող օժանդակութիւն ցոյց չեն տուել: Այդպիսի վիճակի պատճառներից գլխաւորը ժողովրդի տգիտութիւնն ու ընկերների բացակայութիւն է: Ընկերները որոշ չափով նպաստել են կուլտուրական գործին: Տեղական մարմնի ջանքերով թուրքերի մէջ ստեղծուել էր գաղտնի կոմիտէ, որը մեր մարմնի 2 անդամների հետ միասին աշխատել է թռուցիկներով եւ կոչերով, բորբոքել եւ վառ պահել ժողովրդի մէջ յեղափ. կրակը:*

Ինքնապաշտ. գործը վարել է տեղացիներից ընտրուած յանձնախումբը, որ հոգացել է Սմբատի[30] *խմբի ծախսերը:*

Ժողովը գալիս է այն եզրակացութեան, որ մեր այստեղի ընկերները պէտք է մեծ չափով նպաստեն կուլտուրական գործին, գիւղերում տեղաւորեն գիտակից եւ միեւնոյն ժամանակ դպրոցական գործին փոքրիշատէ հմուտ ընկեր-ուսուցիչներ, որոնք մի ներկայացուցչի առաջնորդութեամբ կարող կը լինեն կազմակերպական գործը հետզհետէ աւելի լաւ հիմքերի վրայ դնել:

Ընկեր Վահանը — անկախ կազմակերպելու գործից անհրաժեշտ է գտնում ընկեր ուղարկել հաշիւներ եւ զինական գործի մնացած ապառիկներն ու հաշիւները քննելու եւ հաւաքելու. առաջարկում է դրա համար ընկեր Ոսկանին:

Ընդհ. Ժողովի օրակարգի քննութեան շարունակութիւնը.— Խորհրդի իրաւասութիւնը.

Խորհուրդը համարւում է կարեւոր կանոնադրութեան ընդգծած սահմաններում: Ընկեր Ոսկանը առաջարկում է կարեւոր համարել Խորհուրդը, միայն իրաւունք չտալով նրան դուրս գալ կանոնադրութեան ընդգծած սահմաններից ինչպէս օր. Ռայոնական ժողովի որոշման բեկանումը, օր. կաթ. ընտրութեան առթիւ եղած թռուցիկը եւայլն:

Անհատ ընկերների դերը կուսակցութեան մէջ:

Երկար թեր ու դէմ վիճաբանութիւններից յետոյ առաջարկուեց երկու բանաձեւ. ա.- ցանկալի է, որ անհատ ընկերները այն խնդիրներում, որտեղ կուսակց. չի մասնակցում պաշտօնապէս, իրենք էլ անհատական համոզմունքներով չառաջնորդուին. ձայն են տալիս 4 հոգի:

բ.- Վերջ տալ այնպիսի որոշումներին, որտեղ սկզբունքային խնդիրներում, որպէս կազմակերպութիւն ուրիշ կերպ պէտք է վարուել, իսկ որպէս անհատ բոլորովին հակառակը: Ձայն են տալիս այդ բանաձեւին բոլորը:

Դրամական-հաշուական սիստեմի վերաքննութիւն եւ վերանորոգում

Բարձր մարմինները խիստ կերպով պարտաւոր են գործադրել կանոնադր[ութեան] այն կէտը, ուր շեշտուում է, որ պարտաւոր են յաճախ ռեւիզիայի ենթարկել մարմիններն ու շրջանները:

Մարմիններ աչալրջութեամբ պէտք է հետեւին անդամավճարները ժամանակին գանձուելուն:

Միւս կէտերի մասին կարիք չհամարուեց խօսել ի նկատի ունենալով, որ նախկին ժողովներում մասամբ խօսուել է:

Առաջարկներ

Առաջարկուեց կուսակց. պրեստիժը աւելի բարձրացնելու համար տարին մի անգամ վաւերացուած Ընդհ. Ժողովից մանրամասն ընդհանուր հաշուետուութիւն տրուի:

Դրօշակի տեղափոխութեան հարցը

Դրօշակը թողնել Ժընեւում:

Pro Armenia-*ի հրատարակութիւնը աւելորդ է սեպւում:*

Կուսակցական եւ կիսապաշտօնական թերթեր.

Ընդունուեց հետեւեալ բանաձեւը.

Կիսապաշտօնական թերթ հրատարակել այնտեղ ուր անհրաժեշտ է եւ հնարաւոր. միայն այդ թերթերը չպէտք է հակասեն Դաշնակց. գաղափարներին եւ սկզբունքներին կամ չզբաղուեն այնպիսի հարցերով եւ խնդիրներով, որոնք կարող են տեղ գտնել աջակողմեան թերթերում:

Պոլսում պաշտօնական օրգանի հրատարակութիւնը անհրաժեշտ է համարւում:

Գրքերի եւ բրոշիւրների հրատարակչական գործը ընդլայնել որքան հնարաւոր է:

61-*րդ յօդուածի հարցը*

5 *ձայնով ընդդէմ 2-ի որոշւում է թողնել իր ոյժի մէջ* 61-*րդ յօդուածը: 1-ը ձեռնպահ մնաց:*

Սիստեմատիկ դասընթացքներ եւ ուղեցոյց

Ձեռնարկներ պրոպականդիստների համար շատ կարեւոր եւ անհրաժեշտ նկատուեց շրջանների եւ մասսաների գիտակցութիւնը բարձրացնելու համար. հրատարակել նաեւ ծրագրեր զանազան կուսակցութիւնների, լայն տեղեկութիւններով նրանց աշխարհայեացքի եւ սկզբունքների մասին:

Խօսուեց Բագրատ վրդ. գործի համար ընտրելու յանձնախմբի մասին:

Ցանձնարարւում է նախագահին Շրջանային ժողովի կողմից դիմել Բագրատ վարդապետին, իսկ ընկեր Ոսկանին յանձնարարւում է իր տեղում գտնուած մարմնի կամ ընկերների աջակցութեամբ ու խորհրդակցութեամբ կազմել դատական մարմին ընթացք տալու գործին, որի քննութիւնից յետոյ հետեւանքի մասին զեկուցել Ռայոնական ժողովին:

Նախագահ՝ ***ԴԱՐՎԻՇ***

Քարտուղարներ՝ ***ՐՕՇՏԱԿ, ՈՍԿԱՆ Ս.***

30.- Սմբատ Բորոյեան, ապագայ զօրավար:

1) Արզումանեանի գործակատարին ուղղուած է հետեւեալ նամակը, Շրջանային ժողովի կողմից.

«... Որ ինքն[ապաշտպանութեան] օրերին նոյն վարչութեան կամ մարմնի կողմից կատարուածների համար մենք որեւէ պատասխանատուութիւն չունինք, նա եղել է մի անկախ մարմին, ուստի եւ անկարող ենք ձեզ բաւարարել, որի համար խորհուրդ ենք տալիս այդ առթիւ դիմել «Պարսկ. ինքն. մարմին, որից կը ստանաք ձեր հարցի պատասխանը»:

Փոխ նախագահ՝ ***ՎԱՀԱՆ***

Քարտուղարներ՝ ***ՈՍԿԱՆ Ս., ՐՕՇՏԱԿ***

Փարոսի ընկերներին ուղարկուած է հետեւեալ նամակը.

Ընկերներ!

Վրէժստ. IV Շրջ. ժողովի կողմից յանձնարարւում է ընկեր Սամոյին՝ վերադառնալով Փարոս ընկերների աջակցութեամբ կազմել նոր եւ կանոնաւոր հաշիւ թէ՛ դրամական, թէ՛ զինական: Այդ երկու հաշիւները պէտք է լինին իրարից զատ փաստաթղթերով:

Խիստ կարեւոր է եւ շատ աւելի շուտ մեզ հասցնել այդ շրջանում ինքնապ. յանձնախմբի գործունէութեան հաշիւը դրամական եւ ռազմական:

Շրջ. ժողովից ընտրուած քննիչ յանձնաժողովը սպասում է ձեր հաշիւներին ընդհ. հաշիւները կարգի բերելու համար:

Խնդրում ենք աջակցել ընկեր Սամոյին մեր յանձնարարութիւնը կատարել շտապ եւ կանոնաւոր:

Ի դէպ, որովհետեւ հաշիւներից երեւաց այն, որ ձեր ելքը եղել է աւելի շատ, քան ձեր եկամուտը եւ այդ բացը դուք ծածկել էք ծախուած զէնքերի արժէքից, սրացը դուք ծածկել էք ծախուած զէնքերի արժէքից, սրանով յանձնարարւում է այլեւս չծախսել եւ ոչ մի կոպէկ մինչեւ կանոնաւոր հաշուետուութիւն եւ թիւրիմացութիւնների պարզաբանում:

Բոլոր զէնքերի համար պէտք է տրուեն կանոնաւոր ստացագրեր նշանակուած համարներով եւ պահողները պատասխանատու պիտի լինին վերցրած զէնքի համար, թէ՛ զէնքով եւ թէ դրամով:

Ստորագրութիւն նախագահի եւ քարտուղարների

Նախագահ՝ ***ՎԱՀԱՆ***

Քարտուղարներ՝ ***ՈՍԿԱՆ Ս., ՐՕՇՏԱԿ***

Նախագահ՝ ***ՎԱՀԱՆ*** 09, 28/VI

Քարտուղարներ՝ ***ՈՍԿԱՆ Ս., ՐՕՇՏԱԿ*** *Մինարէթ*

Փաստ. 476-61

Դ 3.– ԳԵՏ-ԱՓԻ[16] ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՅՈՒՄ ՎՐԷԺԻ ՇՐՋ. ԺՈՂՈՎԻՆ

908 թուի աշնանը Արեւ[ելեան] Բիւրոն դրականապէս վճռելով մասնակցիլ Պարսկաստանի ազատագ[րական] շարժումներին, յանձնարարեց Մրգ[աստանի][31] կ. կ[ոմիտէի] անդամ (միեւնոյն ժամանակ Արեւ.Բ. զինական սեկց[իայի] անդամ) Դարվիշին[18] կազմակերպել Գետ-Ափի փոխադրական եւ վարչական գործերը իր պատասխանատուութեամբ։ (Մեծ Քաղաքից[32] յատուկ յանձնարարութեամբ ընկ. Ուսկոկի միջոցաւ)։ Դարվիշը հրաւիրելով վարչական կազմի մէջ ընկ. Փայլակին եւ Մարկոսին (վերջինիս 15/I-ից Ցունիս, աջակից ունենալով նաեւ «Հին քաղաք» գիւղի տեղական մարմնի անդամ ընկ. Սամուէլին), միացած ուժերով կատարել են Գետ-Ափի մարմնին վերաբերեալ բոլոր գործերը սկսած Հոկ. 908-ից մինչեւ Ցունիս 909 թիւ։

Գործերը՝ (Հոկտ. 908-20-VI- 909)։

1) 17-X-908 — Փոխադրել է ռ[ազմա]մթերքներ (Հ.Ց.Դ.) Ապառաժի, Սիւնիքի (ընկեր Սուրէնի աջակցութեամբ), Մրգաստանի պահեստներից ապահով քանակութեամբ Գետ-Ափ։

2) Զինել փոխադրել է դէպ Վրէժ[14] («Մրրիկ») Քեռի-Ֆարհադի[34] խումբը 29 հոգուց բաղկացած։

3) 1-I-909 — Զինել փոխադրել է դէպ Աւարայր[35] Նարիմանցի Մկրտչի խումբը («Ռազմիկ») 19 հոգուց բաղկացած։

4) Զինել փոխադրել է Վրէժի վրայով Սարամերիկցիների խումբը դէպ Մինարէթ[15], 17 հոգուց բաղկացած։ Խմբի զէնքերը զինակ. սեկցիան վաճառել է գնացող մարտիկներին մատչելի գներով (N 1 կոթը 200 ծայրերով[36], ծայրամաններով — 100 ր. վճարով)։

5) 1-I-909 — Փոխադրել է ընկ. Սուրէնի միջոցաւ Վրէժ (N 1 եւ N 2) ծայրեր մօտ 20.000 հատ)։

6) 7-II-909 —Զինել փոխադրել է Վրէժի օգնութեան համար դէպ Սոֆիան քարեցի Տիգրանի[37] խումբը 15 հոգուց բաղկացած. խումբը, որը շնորհիւ Սոֆիանի մուջահիդների անտակտ գործունէութեան, յանկարծակիի գալով Ռահիմ խանի զօրամասից (10- 2-ի երեկոյեան, 909 թ.), զոհ է տալիս 10 մարտիկների, 10 կոթ[38], 4 հատ 10-նոց՝ 3000ի չափ ծայրերով։ Զոհուած մարտիկներն են 1.- խմբ[ապետ] Տիգրան (Ստեփանեան, Քարեցի), 2.- Ցարութիւն Կարինցի, վերաբնակուած Քարում. 3.- Դաւիթ Մշեցի, 4.-Նուրօ, վանեցի, 5.- Սեւակ, տաճկաստանցի (?), 6.- Պստիկ Ցովհաննէս, Սարամերիկցի, 7.- Գէորգ, Հաւթվանցի, 8.- Ցովսէփ, Սէյդավարցի, 9.- Ստեփան Ազնաւուրին, արդուինցի (Ժընեւի ուսանող եւ պրոպագանդիստ, 10.- Բաղլի, ղարաբաղցի։

Քաջարի կռուել են Տիգրանը երեք ընկերներով զուստավի չինութեան մօտ 15-ական փամփուշտներով, որտեղ եւ զոհւում են։ Իսկ հերոսաբար կռուել է (ինչպէս պատմում են ականատես պարսիկները) Բաղլին. սպանել է մօտ 24 հոգու թշնամիներից եւ վերջը շնորհիւ իր ընկեր Համբարձումի Գրիգորեանի դաւադրութեան, ընկնում է թշնամու գնդակից։ Խումբի մարտիկներից կենդանի վերադառնում են Գետ-Ափ 4 հոգի, որոնց զէնքերը Մարանդում եւ Էյրանդիբի գիւղում խլում են միապետականները։ Իսկ 5-երորդը — Մշեցի Պողոսը — կռուից խոյս տալով գաղտնի անցնում է Մինարէթ կազմ[ակերպութեան] 10-նոց ատրճանակով ու մասնակցում տե[ղական] մարտական կռիւներին։

7) 2-IV-ին փոխադրել է, վտանգուած ճանապարհով, մարտիկ կարինցի Արշակի խմբակով Աւարայրի օգնութեանը N°a 1000 հատ։

8) 13-IV-ի երեկոյեան, զինել փոխադրել է Մարանդի վրայ Սահրատի «Լիւտէր» խումբը բաղկացած 33-35 մարտիկներից (20 հեծեալ, 13 հետեւակ). խումբը շարժուել ու գործել է մուջահիդների, վրացի էսդեկների [սոցիալ-դեմոկրատների], եւ մի քանի էսսերների [սոցիալ ռեւոլուցիոնէր] միացած զօրամասի հետ, Իրանի «Մաշրութայի» կարմիր դրօշի տակ։ Զունուզում մնալով մինչեւ Մայիսի 1-ը, երկու ուժեղ կռիւներ է ունեցել Ռահիմ խանի որդու Սուլա Հեչամի որդու, մի քանի 100 զինուորների հետ Զունուզի շրջակայքում։ Խմբից զոհւած է ռմբաձիգ Զարեհ Ճարակեանը, ախալցխացի, կորուստ տալով թշնամուն նաեւ իր ձեռքի 10-նոց ատրճանակը, 300 ծայրերով։ Վիրաւորուած են 1.- ղարաբաղցի Ղազարը -ամորձիքներից, ազդրից, 2.- Դրօշակակիր Անղալուրը (Արտաշէսը), այտից։ Սպանւում են խմբի ձիաներից 2-ը։ Թշնամու կողմից սպանուած է մօտ 60 հոգի։ Աւար բերուած է ձիաներ 10 հատ (Լիւտերը մեկնեց 13-IV. վերադարձ[աւ] Գետ-Ափ երեկոյեան։

31.- Մրգաստան՝ Երեւանի Կ. Կոմիտէութեան ծածկանունը։
32.- Մեծ քաղաքը Թիֆլիսի Կ. Կոմիտէութեան ծածկանունն է. աւելի յաճախ կը գործածուի Արեւելեան Բիւրոյին համար, որուն կեդրոնը Թիֆլիսն էր։
33.- Ապառաժը՝ Ղարաբաղն է։
34.- Ֆարհադ՝ Սարգիս Օհանջանեան։
35.- Աւարայրը՝ Խոյ քաղաքի կուս. ծածկանունն է։
36.- Ծայրը՝ փամփուշտն է։
37.- Քարը՝ Ալեքսանդրապոլի ծածկանունն է. քարեցի Տիգրան, ուրեմն Գիւմրեցի Տիգրան։
38.- Կոթը՝ հրացանն է։

9) Զունուզի խմբին — 24-IV-ին օգնութեան ուղարկել է 2 մարտիկի 2000 ծայրով, 2 կոթերով։

10) 3-V-ի գիշերը — «Լիւտէր» խմբին — 26 հոգուց բաղկացած- բոլորը հեծեալ — ճամբել է դէպ Աւարայր[35] թէ՛ վտանգուած ճամբան բացելու եւ թէ Աւարայրի քրդական յարձակումներին դիմադրելու՝ համաձայն Վրէժից Ռոստոմի հրահանգների։

11) Գետ-Ափի մարմինը, աջակցութեան նպատակով, ծախել է պարսիկ սահ[մանադրական]ներին եւ տեղական անջումանին[39] բաւականաչափ ռ[ազմա]մթերք (կոթ, ծայր, խմոր, աւազ եւայլն) մատչելի գներով, համաձայն Արեւել. Բիւրոյի հրահանգի։

12) Գ.-Ափի մարմինը սկզբից եւեթ ակտիւ մասնակցութեամբ տեղական անջումանի հետ, ապահովացրել է ռազմակ. ուժերով եւ ձեռքից չէ թողել մինչեւ վերջը Ատրպատականի յեղ[ափոխութ]եան միակ բանալի կէտը՝ պարսկ. Զուլֆան։ Կառուցել է արուեստական ամրոցներ, դիրքեր, եւ խիստ զինուորակ. կարգապահութեամբ, չնայելով տեղական աննպաստ պայմաններին, պաշտպանուել է շրջապատող ահագին թիւ միապետական ուժերից առաջնորդութեամբ ղարադաղցի Ղահրաման խանի, Ալակբար խանի, Սուլա Նիզամի որդու, Ռահիմ խանի որդու եւ Սուլեցի որդու եւ սուլեցի Քողբ. Հիւսէյնի.— նմանապէս Իզօ խանի զօրականներից։

13) Կազմակերպելով անձնուէր նաւաստիներից Դաշնակց[ութեան] փոխադրակ[ան] «Աներեւոյթ» նաւատորմիղը, «Հին քաղաք»ի եւ Դարաշամի գիւղացիների անվեհեր աջակցութեամբ փոխադրել է Մայր Արաքսի հիւրասէր ջրերով բոլոր ապրանքները, մարտիկները, ձիաները՝ անվտանգ եւ աննկատելի։ Ի դէպս, ուշադրութեան արժանի է անզուգական նաւաստի ընկեր Դարաշամցի Սարգիսը, որը ոգին է կազմել ամբողջ փոխադրութեան։

14) Բացի Գետ-Ափից, մարմինը յատուկ մարտական խմբով հինգ հոգուց բաղկացած, գործի սկզբից մինչեւ այսօր, ապահովել է «Վարդանանքի» դիրքը, եւ գիւղացիներին պաշտանել յարձակումներից, զինելով նոցա եւ մատչելի գներով ռ[ազ]մամթերք մատակարարելով. (ի դէպս, մեծ յարգանքի եւ ուշադրութեան արժանի է «Վարդանանքի» պոպոզաւորը[40], որը ոչ մի ջանք եւ օգնութիւն չէ խնայել, թէ փոխադրական եւ թէ մթերքի պահպանութեան գործին. իր տունը ամբողջովին դերուած է եղել յեղ[ափոխականների] տրամադրութեան տակ։

15) Գ[ետ-Ափ]ի մարմինը ծրագրելով բնաջինջ անել Սուլեցի Քողբ. Հիւսէյնին իր խմբակով, Տոտայի գիւղում ուղարկում է 15-IV-ին 10 հոգուց բաղկացած մի խումբ, որը շնորհիւ թուրք վալադների[41] լրտեսութեան ձեռնարկը վիժում է եւ չէ գործադրւում։ Վալադներին (2) հատուցում է տրւում-մաքրացումով «ad patres mortuos»[42]։

16) Գետ-Ափի մարմինը չի կարողանում ժամանակին պատկառելի ոյժով Զուլֆա — Մարանդի գիծը բացել ու պաշարուած Վրէժին օգնութեան հասնել — իրենից անկախ պատճառներով։ Դորան խանգարել է «Բօրեազի»[43] ձեռք առած բացառիկ միջոցները փոխադրական գործի դէմ մինչեւ Գետ-Ափ, Սարուստանում եւ մասամբ էլ շնորհիւ Գետ-Ափի պարսիկ գործիչ ընկերների դանդաղ գործունէութեան։

Ապրիլի 1-ի գիշերը միաժամանակ իրացուել է Հին Քաղաքում ռ[ազմա]մթերքը — թէ Ապառաժի եւ թէ Մրգաստանի պահեստներից։ Մինչեւ 7-IV-ին փոխադրուել է Գետ-Ափ ռ.մթերքը եւ 10 հատ ձիաներ, եւ հազիւ 12-IV-ին «Լիւտէր» խումբը կազմ է եղել գործելու։

17) Սահմ[անադրութեան] վերահաստատումից յետոյ Գետ-Ափի աւելորդ մարտիկներին, թուով 14 հոգի, վերադարձրել է Կովկաս, իսկ 5 հոգի պահել է Վարդանանքի ապահովութեան համար։

18) Երկու վիրաւոր մարտիկներին փոխադրել է Մրգաստան[31], քաղաք[այ]ին հիւանդանոցը դրմանելու։

19) Գետ-Ափի եղած ռ.մթերքի մի մասը ապահովելով «Վարդանանքում», միւսը ապահով փոխադրել է Մինարէթ, երկրի հայ ժողովրդին մատչելի գներով վաճառելու նպատակով։

20) Ամսէ ամիս, կանոնաւոր կերպով կազմուած է Գետ-Ափի մտից եւ ելից հաշիւները, սակայն անակնկալ հալածանքների շնորհիւ Բօրեազի կողմից, հաշիւները չամբողջացրած թաքցրած պահուած են։

21) 15-V — Բօրեազի պահանջմամբ իջեցրուած է Գետ-Ափի անջումանի տանից Դրօշակ ձերբակալուած[44] եւ Մ[եծ] Քաղաք են տարուած 16-V-ին - Անջումանի անդամներ ընկ. Փայլակը եւ Ժ[էօ]ն թուրք Ջամալ էֆէնդին պոլսեցի — իսկ Դարվիշը կծիկը դրած հոս անձամբ զեկու[ցու]մ է Շրջ. ժողովին։

ԴԱՐՎԻՇ[18]

12-VI-909
Մինարէթ

39.- Անջուման՝ պարսիկ սահմանադրական յեղափոխականներու (մոջահիդ) կոմիտէ։
40.- Վարչապետը։
41.- Սուրիանդակների։
42.- Լատիներէն. «մաքրացում»ը՝ սպանութիւն իմաստով է։
43.- «Բօրեազ» անունով ծանօթ էր Երեւանի շրջանին մէջ գործող դաշնակցական մարտիկներու շրջուն խումբը, որուն մաս կազմած էր ատենօք նաեւ Դրոն։
44.- Խօսքը կը վերաբերի «Դրօշակ» պաշտօնաթերթի գրաւուած թիւերուն։

Փաստ. 476-67

Ե.– ԽՈՅ (1906-1909)
ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՒԱՐԱՅՐԻ

Խոյի սահմանները կազմում են արեւելքից Մարանդը· արեւմուտքից Կոտուրի եւ Սօհմանանդի[?] *գաւառները· հիւսիսից Մակուայ խանութիւնը եւ հարաւից՝ Սալմաստը· Ամբողջ գաւառի դիրքը ցածր է եւ տափարակ, որի արեւմտեան լեռներից սկիզբ է առնում Կոտուրի գետը, ու դաշտի արեւելա-հիւսիսային մասով անցնելով, թափւում է Արաքսը· Խոյի շրջակայ լեռները չորս կողմից իշխում են գաւառին եւ արգիլում են քամիների հոսանքը· այդ իսկ պատճառով ամառը սաստիկ տօթեր են առաջանում այստեղ։*

Խոյի շրջակայքում գտնւում է պատմական Աւարայր դաշտը, որի հետ կապուած են Վարդանանց պատերազմի պատմութիւնները· Կոտուրի գետի աջ ափին մի լերան գագաթին կառուցուած է Վարդանի մատուռը, որը ուխտատեղի է համարւում տեղացի հայերի համար։

Գաւառի կենտրոնում մի խորը տափարակի վրայ զետեղուած է համանուն քաղաքը — պատմական Հերը — որը ամուր կաւէ պարիսպներ ունի եւ շրջապատուած է խրամատներով։ Այդ պատնէշները զանազան ժամանակներում լաւ ծառայութիւն են մատուցել բնակիչների ինքնապաշտպանութեան գործին· քաղաքի վերջին նորոգութիւնը ու պարիսպների կառուցումը XV դարի գործ է համարւում։

Ամբողջ գաւառի բնակչութեան թիւը 40 հազարից աւելի է, որոնց 20 հազարը զետեղուած են քաղաքում եւ նրա շուրջը եղող արուարձաններում· իսկ մնացածը, սփռուած 100ի չափ գիւղերում։ Բնակիչներից 1200ը հայեր են, որոնց մի մասը ապրում է քաղաքին կից երեք արուարձաններում, իսկ մնացածը Սէրդաւար Շօրաւ, Դիզա եւ Մահլազան գիւղերում· դոքա ½-2 ժամ իրարուց հեռու են գտնւում։

Քաղաքի բնակիչների պարապմունքն է կազմում վաճառականութիւն եւ արհեստներ, վերջինները դեռ եւս նախնական ողորմելի վիճակի մէջ են գտնւում։

Կրթական գործը շնորհիւ կղերականների յարուցած արգելքների շատ յետ է։ Թէեւ կան բազմաթիւ մետրեսէներ զետեղուած զանազան մզկիթներում եւ պանդոկներում, բայց բոլորովին զուրկ օգտակար գիտելիքներից· մոլլաները ուսուցչական պաշտօն են վարում եւ չոր ու ցամաք կերպով աւանդում են միայն Ղուրանը, այն էլ անհասկանալի արաբերէն լեզուով· գիտութիւնները, ըստ նոցա հասկացողութեան հակասում են իսլամական օրէնքին եւ դրանց հետեւողը հերետիկոս է։ Վերջին ժամանակներում տեղական բելեդիայի[45] *ջանքերով մի նոր գիշերօթիկ դպրոցի հիմնադրութիւն է եղել, ուր ընդունւելու են 30 որբ մանուկներ· այդ դրպրոցը, ինչպէս խոստանում են դրա վարիչները, պիտի առաջ տարուի բաւական ընդարձակ ծրագրով, կղերի ազդեցութիւնից անկախ։*

Գիւղացի բնակչութիւնը ընդհանրապէս պարապում է երկրագործութեամբ եւ անասնապահութեամբ· նրա ամբողջ հոգսը ընտանիքի համար ապրուստ ձեռք բերելն է, եւ այդ այնքան դժուարութեամբ է կատարւում, որ այլեւս միջոց չի ունենում դեռ իւր զաւակների կրթութեան մասին մտածել, որով բոլորովին զուրկ է մնում մի կարգ առաջադիմական պայմաններից· ոչ մի գիւղում չկայ նոյնիսկ ամենատարրական դպրոց։ Հայերի մէջ եւս կրթական գործը շատ յետ է մնում, չնորհիւ իրենց անտարբերութեան։

Հողը ամբողջապէս գիւղատիրոջ սեփականութիւնն է համարւում· գիւղացին աշխատում է միմիայն աղայի ամբարները լցնելու։ Հացահատիկի եւ միւս արմտիքների 1/3-1/2ը աղային են պատկանում։ Օլամի եւ Բէգեառի[46] *քանակութիւնը անորոշ է, դա կախուած է գիւղատիրոջ կամքից· ռայան պարտաւոր է հնազանդել նրա որոշումին։*

Խաների կողմից գիւղերում նշանակւում են 1-2 մուբաշիրներ, որոնք թէ գիւղատիրոջ տուրքերն ու տասանորդներն են գանձում եւ թէ իրենց կողմից հազար ու մի միջոցներով գիւղացուն շահագործում։ Քաղաքի բընակիչները որոշ արտօնութիւններ վայելում են։

Գիւղացիներին կեղեքելու գործում մեծ դեր են խաղում նաեւ կառավարչական զանազան կարգի պատկանող պաշտօնեաները ու կղերականները։ Տասնեակ տարիներից ի վեր այդ է ներկայացնում ժողովրդական կեանքը։

Երբ առաջին անգամ 1908 թուականին Իրանի Շահերի մայրաքաղաքում առաջին անգամ սահմանադրութեան խօսքն է հնչում եւ երբ դրա արձագանգները հասնում են Թաւրիզ եւ Իրանի այլ եւ այլ քաղաքները, այդ ձայները բարերար ազդեցութիւն են ունենում եւ Խոյի ազգաբնակութեան վրայ· աղայական բռնութիւնների տակ երկար ժամանակ տանջուած ռայան սկսում է ուրախանալ· նա թէեւ չի ըմբռնում սահմանադրութեան նշանակութիւնը եւ նրան ձեռք բերելու համար գործադրուելիք հազար ու մի զոհողութիւնները, սակայն համոզւում է, որ սահմ. խոշոր փոփոխութիւններ պիտի առաջացնի իր տնտեսական կեանքում եւ պիտի բարգաւաճի նրան, այդ իսկ պատճառով սրտով յարում է սահմանադրականներին։

1907 թուին երբ արդէն Մուզաֆէրէդդին Շահի հրամանով Պարսկաստանը սահմ. երկիր է յայտարարւում եւ երկիրը կառավարելու համար ամէն մի քաղաքում պետական պաշտօնատներից բոլորովին առանձին անջումանական[39] մարմիններ են նշանակւում, Թաւրիզից ստացած հրահանգների հիման վրայ Խոյի վաճառականների շրջաններում եւս արծարծւում է անջուման ընտրելու հարցը եւ տեղական դատաւորը, որպէս Թաւրիզի նահանգապետի հրամանակատար անջումանի մի կազմ է նշանակում եւ Խոյում, որի վճիռների գործադրելու պարտականութիւնը ինքն է ստանձնում։ Անջումանը թէեւ որպէս մի արդարադատ ժողով, խոստանում է ժողովրդի գործերը աւելի բարեխղճօրէն առաջ տանել, սակայն դատաւորի ազդեցութեան ներքոյ հնարաւորութիւն չի գտնում վարուել այնպէս, ինչպէս տրամադրում է խղճի օրէնքը։

Այդ ժամանակներում (907 Յուլիս) Խոյում յայտնւում են երեք անծանօթ Կովկասցի թուրք երիտասարդներ, որոնցից մէկը, գիմնազիոնի կրթութիւն ստացած, մտնելով ժողովրդական խաւերը, ուժեղ պրոպագանդ է մղում կառավարական պաշտօնեաների, կղերականների եւ գիւղատէր խաների դէմ եւ կարճ ժամանակում մեծ յեղափոխութիւն է առաջ բերում գաւառում։ Տեղական միապետական խաները եւս ակամայից մասնակցում են ազատագր· շարժումներին, երբ արդէն մի քանի տեռորներ կատարուել էին գործին խոչընդոտ լինողների դէմ։

Մակուի Սէրդար-Մուրթուզա Կուլի խանը, որպէս սահմանադրութեան երդուեալ թշնամի, բնականաբար չէր կարող բարեացակամութեամբ նայել դէպի Խոյի ազատագր· շարժումները, նկատելով որ մի օր այդ կայծը իր խանութեան մէջ եւս պիտի բռնկի, ուստի ամէն ջանք գործ է դնում, հէնց բնում խեղդելու Միրզաջաֆարի (այսպէս էր պրոպագանդիստի անունը) ազատասիրական ձգտումները· այդ իսկ պատճառով, կողմնակի սպառնում է խոյեցոց, Միրզաջաֆարին, որպէս վընասակար մէկին, հեռացնել։ Այդ սպառնալիքը ոչ միայն որոշ նշանակութիւն չի ունենում ժողովրդի համար, այլեւ շարժում է վերջինիս ատելութիւնը դէպի Սէրդարը եւ այդ ատելութիւնը սաստկանում է այն ժամանակ, երբ Սէրդարը Մակուում 907 Մայիսին ծագած ազատագր· շարժումները ճնշելուց յետոյ բնակիչների ինչքը եւս աւազակ քրդերին է յանձնում։

Յեղափ. պրոպագանդը Միրզա-Ջաֆարի ջանքերով հետզհետէ առաջ է տարւում եւ մեծ ոգեւորութիւն է պատճառում թէ քաղաքի եւ թէ գիւղացի բնակչութեանը· հակառակորդ կղերականներն ու խաները սաստիկ զայրանում են այդ բանի դէմ, բայց ի զուր։ Նոցանից մի քանիսը, որ գործին խոչընդոտ էին հանդիսանում, մահուան պատժի են ենթարկւում եւ այդպիսով յեղափ· ասպարէզը մաքրւում է։

Մակուի Սէրդարը անտարբեր մնալ չէր կարող, նա թէեւ տակաւին Խոյը գրաւելու ցանկութիւն չունէր· սակայն՝ զգում էր որ Մակուն որպէս Խոյի սահմանակից, չէր կարող դրանից սահմ[անադրական] ախտով չվարակուիլ· ինչպէս ցոյց տուեց փորձը մի քանի ամիս առաջ Մակուում ծագած ապստամբութեան միջոցին։ Մակուն դրսի յեղափ· ազդեցութիւնից ազատ պահելու համար Սէրդարը իր զինուորներից եւ քրդական աշիրէթներից երկու բանակներ է ուղարկում, մէկը Խոյի արեւմտեան իսկ միւսը հիւսիսային սահմանի վրայ եւ հրահանգում է դոցա, ասպատակել Խոյի շրջակայ գիւղերը։ Անտարբեր չի մնում եւ Խոյը ու Միրզա-Ջաֆարի ջանքերով երկու բանակներ կազմուելով ուղարկւում են Կարագեաղին եւ Զէյվա, Սէրդարի աշիրէթների առաջխաղացութիւնն արգիլելու։ Սահմ. բանակին մասնակցում էին մի քանի միապետական խաներ եւս, որոնց թւում եւ Հաճի Ամիր Թումանը, իր որդիներով, ի հարկէ ակամայ։

Պարսկ. զինուորական շարքերին ծանօթ եղողը անշուշտ կարող է երեւակայել թէ ինչ անկազմակերպ դրութեան կարող էին լինել Մակուի սահմանների վրայ նշանակուած սահմ. բանակները· նրանցից 2 ֆօուջը (1600) բաղկացած էին հին, ծեր ու թուլակազմ զինուորներից, իսկ միւս մասը գիւղական անկազմակերպ զինուորական կանոններից անտեղեակ երիտասարդներից, որոնք փախուստ էին տալիս նոյնիսկ ամենափոքր վընտանգի ժամանակ։

Զօրքի շարժմանը աւելի զարկ տալու համար Միրզա-Ջաֆարը վճռում է ինքը անձամբ մասնակցել բանակի գործողութիւններին — չնայած որ ինքը եւս թէեւ ոգեւորուած, բայց ռազմագէտ անձնաւորութիւն չէր, եւ հակառակ ժողովրդի կողմից իրեն արուած բազմաթիւ թախանձանքներին — մնալ քաղաքում եւ շարունակել կազմ· գործը, նա դարձեալ թողնում է քաղաքը եւ անցնում Զէյվայի բանակը, որի դիմաց կանգնել էր Նամօ-խանը 8 հարիւր քիւրդ աշիրէթով։

Սահմանադրականների եւ մակուցոց բանակները մի ամսի չափ մնում են իրար դիմաց, որի միջոցին ունենում են մի քանի մանր կռիւներ։

907 Սեպ· 15-ին Աւդոյիների ցեղապետ քիւրդ Սմկոն իր մարդկանցով օգնութեան է հասնում Մլանցի աշիրէթին եւ չորս կողմից յարձակում գործում Զէյվայի բանակի վրայ։ Կռուի տաք ժամանակին, երբ բանակի հրամանատարներից մէկը, Հէյդար խանի որդին դաւաճանութեամբ Նամօ խանի բանակն է անցնում, առաջուց իր զինուորներին անձնատուր յայտարարելով, այդ ժամանակ սահմանադրականները պարտւում են եւ ցիր ու ցան լինում· դոցա մի մասը կոտորւում է, իսկ միւս մասը գերուելով՝ Մակու տարւում։ Միրզա Ջաֆարը եւս,

45.- Քաղաքապետարանի։

46.- Օլամը՝ անվճար եւ պարտադիր աշխատանքն է, զոր գիւղացին կը կատարէր հողատիրոջ կամ ցեղապետին համար։ Բեկարը՝ անասուններու քանակին եւ հողին բերքին վրայ նոյն կալուածատիրոջ կամ ցեղապետին առած հարկը (բնատուրք)։

որ այդ կռուի չունչ ու հոգին էր, իր մի ընկերոջ հետ ձերբակալւում է եւ խանի հրամանով սպանւում։

Այնուհետեւ մի շարք հալածանքներ են սկսւում Մակուի կողմից խոյեցոց դէմ եւ սահմ. գործը բաւականաչափ թուլանում է, մինչեւ որ Հոկտեմբերին Թաւրիզից ուղարկուած յատուկ պատգամաւորութեան միջոցով վերջ է տրւում Սէրդարի վնասակար գործողութիւններին։ Բայց եւ այնպէս սահմ. գործը օրէցօր սկըսում է թուլանալ, որից յետոյ գալիս է 908 Ցունիսի ռէակցիան։

1908 թիւ Ցունիսին երբ Թեհրանի մէջլիսը ռմբակոծուելուց յետոյ Շահի հրամանով Մակուի Սէրդարը լիազօրութիւն է ստանում Խոյը եւ Սալմաստը եւս Մակուի հետ միացնելով կառավարել, այդ ժամանակ նա բանակցութիւններ է սկսում Խոյի միապետականների, մասնաւորապէս Հէյդար խանի հետ, միջոցներ ձեռք առնելու Խոյի անջումանը չէզոքացնելու եւ մուջահիդներին ձերբակալելու։

Հէյդար խանը, որ մի քանի անգամ մզկիթում բազմութեան ներկայութեամբ երդուել էր չգործել ի վնաս սահմանադրութեան, անմիջապէս մոռանալով իւր երդումը, ակտիւ կերպով սկսում է մասնակցել մուջահիդների դէմ մղուած կռիւներին։ Նա Թէմուր Սուլթանի հետ միացած ձերբակալում է ձեռք ընկած մուջահիդներին։ Քիչ ժամանակից յետոյ Մակուից դատաւորի պաշտօնով գալիս է Իզզ խանը, որը ուժեղ հալածանք է սկսում բոլոր սահմանադրական համարուողների դէմ։ Ձերբակալւում են բոլոր աչքի ընկնող մարդիկը եւ բանտարկւում. իւր 70 ձիաւորներով Մակու է փախչում Սէրդարին ապաւինում Միր Ասադուլլահը։ Բռնւում է յեղափ. գաղտնի կոմիտէն իր արխիւով եւ նրա անդամները թնդանօթի բերան են դրւում ու թունաւորւում են. ապա մի շարք յայտնի մարդկանցից առնւում են խոշոր տուգանքներ եւ թալանւում են տները. ամէն մարդ ահ ու սարսափով է անցկացնում օրերը։

Հալածանքի փոքր ինչ մեղմանալուց եւ միապետական կարգերի հաստատելուց յետոյ, Իզզ խանը Սէրդարի հրամանով Մակուից, Խոյից եւ Սալմաստից մի բանակ կազմելով անցնում է դէպի Թաւրիզ, Սաթթար խանի ապստամբութիւնը ճնշելու, որտեղ նա մի քանի անգամ խայտառակ կերպով պարտուելուց յետոյ, վերադառնում է Մակու։

Իզզ խանի բացակայութիւնից յետոյ Թեհրանից դատաւորի պաշտօնով Խոյ է գալիս մակուցի Նասրալլահ խանը, որը իր պաշտօնը ստանձնելուն պէս, տեղական յայտնի մուլլաներից, սէիդներից եւ մի կարգ հակայեղափոխական մարդկանցից մի շրջան է ստեղծում, որոնց միջոցով մեռցնել է ուզում ժողովրդի ազատասիրական զգացմունքները։

Սաթթար խանի մղած հերոսական կռիւները արդէն մեծ ոգեւորութիւն էին առաջ բերել, ինչպէս շրջակայ գաւառներում, նոյնպէս եւ Խոյում եւ չնայած տիրող խստութիւններին, մի կարգ մարդիկ Հ. Ց. Դ.-եան տեղական մարմնի նախաձեռնութեամբ գաղտնի ժողովներ էին գումարում եւ ծրագիրներ էին մշակում գալիք ապստամբութեան համար։

Այդ ժամանակներին էր (Նոյեմբեր 908) ահա մինը միւսի յետեւից սահմ. դրօշակներ են պարզում Սալմաստն ու Մարանդը եւ այնտեղ եղող միապ. պաշտօնեաները փախչում են Խոյ. սարսափում է դատաւորը եւ անմիջապէս սուրհանդակներ հանում դէպի Մակու Սէրդարին հաղորդելու իրերի դրութիւնը. միեւնոյն ժամանակ շատ զգոյշ միջոցներ ձեռք առնում գոնէ Խոյը ձեռքից չհանելու։ Նա հրամայում է թնդանօթներ բարձրացնել քաղաքի պարիսպների վրայ եւ ուժեղացնել դռների պահակը։

Սալմաստի՝ հայ յեղափոխականների եւ Հաջի-Փիչնամաղի ձեռքով գրաւուելը մեծ զայրոյթ է առաջացնում եւ Սէրդարի մէջ, նա չկանգնելով ոչ մի զոհողութեան եւ ծախքերի առաջ անմիջապէս Իզզ եւ Նամօ խաներին, Աւաջուղի Միրփէնջին մօտ 2500 քիւրդ-թուրք աշիրէթներով ուղարկում է Սալմաստ — հրամայելով խստիւ պատժել այնտեղի յեղափոխականներին։

Նամօ եւ Իզզ խաները Խոյում իրանց բանակները կարգաւորելով անցնում են Սալմաստ, որտեղ միանում է նոցա Սմկոն 2-3 հարիւր քրդերով։

Մինչդեռ մակուցոց բանակը Սալմաստում անյաջող կռիւներ էր մղում սահմանադրականների դէմ, այդ ժամանակները Մարանդի կողմերից մի խումբ մուջահիդներ, անցնելով Ալամդարի եւ Գեարգեարի կողմերը, ու այնտեղ խմբեր կազմակերպելով, անցնում են Եէքեան, այդտեղ խումբը հետզհետէ ստուարանում է եւ Կօչալի սուլթանի, Միրզա-Նուրալլայի եւ Հաջի-Ջաֆարի առաջնորդութեամբ բանակ է դրւում Էլօղլիում — որը հեռու է Խոյից 28 վերստ։

Ալամդարի դատաւոր Թէմուր սուլթանը սարսափահար Խոյ փախչելով հաղորդում է դատաւորին այդ շարժման մասին. վերջինս հազիւ հարիւր ձիաւորի չափ կարողանում է Ազիզ խանի առաջնորդութեամբ Բիլաւոր գիւղն ուղարկել, սահմանադրականների առաջխաղացութիւնն արգիլելու։

Նուրալլա խանը վտանգի մեծութիւնը նկատելով, Սէրդարից պահանջում է շուտափոյթ ջէլալցի քրդերին ուղարկել Էլօղլի գիւղի վրայ. նա Սալմաստից յետ է կանչում եւ Նամօ խանի բանակը, որ դրա հետ միացած ամրացնի Խոյը։ Զայփարայից եւ Բաթաջուկից եկած հրացանակիրները հսկողութեան են ենթարկում թաղերը, որ դրսից ոեւէ անծանօթ ներս մտնել չկարողանայ. խիստ հսկողութեան է ենթարկւում մասնաւորապէս հայկական թաղը, այնտեղ ֆիտայիներ չգալու համար։

Տեղակ. Հ. Ց. Դ.-եան մարմինը իր լիակատար դերի մէջ է գտնւում, յարաբերութիւն պահպանելով Էլօղլու եւ քաղաքի սահմանադրականների հետ եւ չնայած որ իր զինուորական ուժը միայն մի քանի ընկերներից էր

բաղկանում, սակայն վճռում է ակտիւ մասնակցել շարժումներին եւ գալիք խառնակութիւններին պաշտպանել Խոյի հայ ժողովուրդը։ Այդ առթիւ նա զէնք եւ փամփուշտ է մատակարարում տեղական կամաւորներին ու նոցանից խմբեր պատրաստում, ինքնապաշտպանութեան համար։

Մակուի բանակը Սալմաստում անյաջողութիւնների հանդիպելով, յուսահատական դրութեան մէջ էր գտնւում, եւ որպէսզի նա ստիպուած չլինէր խայտառակ կերպով յետ դառնալու, Խոյի դատաւորը կանչելով մի կարգ միապետական կղերականների, դոցանից մի պատգամաւորութիւն է կազմում եւ սահմանադրական անուան տակ ուղարկում է Սալմաստ, որպէսզի Հաջի-Փիչնամաղին համոզէին հաշտուել մակուցոց հետ։

Հասնում է ժամը եւ Նոյեմբ. 25ի գիշերը ժամը 1-ից սկսած քաղաքում ուժեղ հրաձանաձգութիւն է տեղի ունենում եւ տեւում է մինչեւ լուսանալը։ Առաւօտեան աւետաբերը հաղորդում է քաղաքի սահմանադրականների ձեռքով գրաւուելը։ Կոչալի սուլթանը, Միրզա Նուրալլան եւ Հաջի-Ջաբարը Էլօղլիում պատրաստած բանակով կատարել էին այդ խոշոր ակտը, առանց ներսի դիմադրութեան։ Գիշերային մթութեան ժամանակ յարձակման են ենթարկւում մի քանի ռայոնի միապետականների տներ, որոնցից ոմանք սպանւում են, իսկ ոմանք թաքնուելով ազատւում. դատաւորը իր ծառաների հետ պարիսպների տակում եղող մի գաղտնի անցքից հազիւ փախչելով ազատւում է, ճիշտ այն ժամանակ երբ սահմանադրականները ռմբակոծում էին Արքը[47]. իրարանցման միջոցին Հաջի-Հէյդար խանը եւս իւր երկու մեծ տղաների հետ փախուստի է դիմում եւ չորս ամսի չափ քաղաքում գաղտնի պահուելուց յետոյ, անցնում է Նամօ խանի մօտ. սրա երկու փոքր որդիները (12-14 տարեկան) ապաստանում են Դաշնակցութեանը, որը թուրք յեղափոխութեան հետ նախապէս խորհրդակցելուց յետոյ արժան է համարում անվնաս պահել նրանց չորս ամսի չափ, Խոյի գերմ. որբանոցում, մինչեւ որ Սահմ. հրատարակուելուց յետոյ ուղարկում է իրենց հօր, Հաջի-Սէրդար խանի մօտ։

Քաղաքը գրաւելուց յետոյ թուրքիոյ զինուորական խորհուրդը անմիջապէս միջոցներ է ձեռք առնում քաղաքի գրաւումը ապահովելու։ Եէքեանցիները, որոնցից էր գլխաւորապէս բաղկացած բանակը, բաւական անկարգութեամբ են վերաբերւում դէպի գիւղական ժողովուրդը եւ հակասահմանադրական դիրք բռնած, կողոպտում են քաղաքից եւ գիւղերից մեծ քանակութեամբ տնային իրեր եւ անասուններ. դորա առաջն ի հարկէ չուտով առնւում է։ Ազիզ խանը, որ Բիլաւայում նստած այդ բանակի առաջը պիտի առնէր, տեսնելով իր խաբուիլը — իր մարդկանցով հեռանում է Կարազիադին, Նասուլլա խանի մօտ։

Մինչդեռ սահմանադրականները քաղաքը գրաւելուց յետոյ, զբաղուած էին մի կարգ ներքին կարգադրութեամբ, յանկարծ Իզզ եւ Նամօ խաների բանակներն Սալմաստից վերադառնալով մօտենում են եւ բանից անտեղեակ ուզում են քաղաք մտնել. ներսից անմիջապէս փակում են քաղաքի դռները եւ դիմադրութիւն սկսում եւ թշնամին ճանապարհը չեղելով բարձրանում է հայկական թաղից կէս ժամ հեռու եղող Կուլլաբի լեռը եւ այնտեղից սկսում է առաջ խաղալ դէպի արուարձանները։ Դրութիւնը բաւական ծանր էր, այդ ուժեղ բանակին դիմադրութիւն էր հարկաւոր։

Հ. Ց. Դ.-եան զինուորական մարմինը ժողովրդի եւ մասնաւորապէս հայերի համար սպասուելիք մեծ վտանգը աչքի առաջ ունենալով, անմիջապէս ինքնապաշտպանութեան միջոցներ է ձեռք առնում եւ չնայած իր փոքրաթիւ ուժերին, վճռում է դիմադրել թշնամուն։

Կռուի վայրն են շտապում Արամը, մակուցի Գրիգորը եւ Հրանդը, որոնց օգնութեան են գնում Ցակոբը եւ Արշակը տեղական կամաւորներով. թշնամին մի քանի անգամ ուժեղ գրոհ է տալիս հայդուկների վրայ, սակայն միշտ յետ է մղւում ծանր վիրաւորներով եւ չի յաջողում նոյնիսկ լեռնից ցած իջնել։

Քրդերի մի յիսնեակ խիաւանի ճանապարհով դէպի քաղաք է գնում եւ ամրանում է քաղաքից հինգ րոպէ հեռու եղող մի քարւանսարայում, որտեղից պատահաբար անցնում էր Գէորգը երկու մուջահիդների հետ։ Հայդուկը առանց ժամանակ կորցնելու, սկսում է կրակ բաց անել թշնամու վրայ եւ կռիւը սկսում է տաքանալ. մուջահիդներից մէկը շուտով վիրաւորւում է, իսկ միւսը քրդերի ուժի առաջ սարսափելով՝ փախուստի է դիմում, իսկ Գէորգը յանդգնաբար շարունակում է կռուիլ քրդերի դէմ եւ յաջողում է նրանց դուրս փախցընել. այդ միջոցին պայթում է իր ձեռքի հրացանը։

Կռիւը տեւում է 8 ժամ եւ 2500 հոգուց բաղկացած այդ բանակը խորտակուելով փոքրաթիւ հայդուկների ուժի առաջ ցիր ու ցան է լինում տալով բաւական թանկ զոհեր. հայդուկներից ընկնում է Հրանդը եւ սպանւում են 3 ձիեր։ Փախչող բանակը անցնում է Փեռայի կողմը, իր ճանապարհը շարունակելու։ Այնտեղ էլ հանդիպում է փեռացոց դիմադրութեանը եւ բաւականաչափ աւար թափելով այնտեղ, անցնում է դէպի Զայփարա։

Կռուի յաջորդ օրը սահմ. ներկայացուցիչները այցելում են հայդուկներին եւ երկուստեք համերաշխութեան խօսքեր են փոխանակւում։

Խոյը սահմ. քաղաք յայտարարուելուց յետոյ, Մարանդից եւ Եէքեանից զինուած մարդիկ են գալիս եւ միանում մուջահիդների գործողութիւններին։ Սաթթար խանի կարգադրութեամբ գալիս է նաեւ Ամղլին, որը վարում է թուրք յեղափ. ներկայացուցչութեան պաշտօնը։

Դեկտեմբեր. Խոյ է գալիս 17 հոգուց բաղկացած հայ-

47.- Միջնաբերդը։

դուկային մի խումբ, Մուկուչի ղեկավարութեան տակ, որից 10 հոգին նշանակւում են Սէյդավարի շրջանի գիւղերը պաշտպանելու, իսկ միւսները մնում են հայ թաղերում։

Կուլլաբիի կռուից յետոյ կազմւում է հայ-թուրք մի գաղտնի կոմիտէ, վարելու քաղաքի բոլոր գործերը։ կոմիտէի անդամներից երեքը դաշնակցականներ էին, իսկ չորսը թուրքեր։

Մակուցոց բանակը պարտութիւնից յետոյ անցնում է Կարազեդին, որտեղից Իզօ խանը գնում է Մակու, իսկ Նամօ խանը իր փոքրաթիւ մարդկանցով այնտեղ մնալով, սպասում է հրահանգների։ Այստեղ էլ Սէրդարը անտարբեր չի մնում։ Նա գոնէ Մակուի սահմանները յեղափոխականներից ազատ պահելու համար բընութեամբ Նամօ խանի մօտ է ուղարկում փախած զինուորներին եւ մլանցի քրդերին եւ նոցա զանազան խոստումներով համոզում է շարունակել ասպատակել Խոյի գիւղերը։

Զինուորական խորհուրդը իր ապագայ գործունէութիւնը որոշելու համար ժողովներ է գումարում, ուր արծարծւում է դէպի Մակու շարժուելու հարցը։ անդամներից դաշնակցականները եւ մի քանի պարսիկներ առաջխաղացութեան համակարծիք չեն լինում, ի նկատի ունենալով նիւթականի եւ ռազմականի անբաւարարութիւնը։ երկար խնդիրը ծեծուելուց յետոյ, ժողովը մեծամասնութեամբ վճռում է առաջ խաղալ, որով անմիջապէս խմբեր են ուղարկւում շրջակայքը։

Սահմանադրականների գլխաւոր բանակների մի մասը անցնում է Զօրաւայի սահմանները եւ բանակ դնում Կուրտիկ գիւղում, իսկ միւս մասը, Էւօղլուի շրջանում։ երկու բանակներն էլ պիտի կամաց-կամաց գիւղերը գրաւելով անցնէին Մակուի սահմաններից ներս։

Այդ ժամանակ (Դեկտ. 10) Նամօ խանը Կարազեդինում ցիրուցան եղած զօրքը հաւաքելով եւ Կարգի դնելով առաջ է խաղում դէպի Էւօղլի եւ արշաւելով Սիաբազ գիւղի վրայ, հալածում է այստեղ գտնուող փոքրաթիւ մուջահիդներին, ու գիւղը կողոպտում, ապա առաջ է անցնում դէպի Փիրքեանդի գիւղը եւ կռիւ մղում այնտեղի 200 մուջահիդների դէմ։ Երկու կողմից էլ բաւական զոհեր են լինում։ Մուջահիդները դիմադրել չկարողանալով, յաղթւում են։ Այդտեղ ձերբակալւում են նոցանից 40-ը եւ տարւում Մակու։

Փիրքեանդիի կոտորածից յետոյ, այդ կողմերի սահմանադրականները բաւական թուլանում են եւ միշտ տեղի տալիս թշնամուն։ վերջինս աւելի քաջալերուած անարգել առաջ է խաղում եւ արշաւում Էւօղլուի վրայ, գիւղի դիրքերում գտնուող եէքեանցի մուջահիդները շուտով փախուստի են դիմում եւ թշնամուն թողնում գիւղը գրաւելու։ Մակուցիք Էւօղլիի մէջ սպանում են 30-ի չափ մարդիկ եւ մի քանի կանայք ու կողոպտում գիւղը։ փոխարէն այն բանի, որ Էւօղլուցիք առաջին անգամ մուջահիդներին իրենց գիւղում տեղ տալով՝ Խոյի գրաւելու պատճառը դարձան։ Էւօղլու պարտութեան գլխաւոր պատճառներից մէկն էր Հադի խանի դաւաճանութիւնը, որը գաղտնի յարաբերութիւն պաշտպանելով Նամօ խանի հետ եւ իրեն համար Խոյի դատաւորութեան պաշտօնի խօսք առնելով նրանից, դաւաճանում է յեղափ. գործին, միջոցներ ձեռք առնելով Խոյը մակուցոց ձեռքը մատնել։ Հադի խանի այդ ստոր դաւը երեւան է գալիս եւ որը քաղաք կանչուելով յեղափոխականների ձեռքով տեռորի է ենթարկւում։

Այդ ժամանակներում մակուցոց բանակի մի մասը կենտրոնացել էր Զօրաւայում։ սա Փիրքեանդու եւ Էւօղլու յաղթութիւններով ոգեւորուած, առաջ է շարժւում եւ (Դեկտ. 20) յարձակւում է Կուրտիկներ գիւղի վրայ, ուր գտնւում էր սահմանադրականների մի բանակ։ սկսւում է արիւնահեղ կռիւ եւ թշնամուն յաջողում է մտնել գիւղ եւ դուրս հանել այնտեղից մուջահիդներին։ Երկու կողմից էլ սպանուածներ լինում են, բայց սահմանադրականներից աւելի շատ։ Այնուհետեւ մուջահիդները յետ են նահանջում եւ ամրանում Փեռա գիւղում (Խոյից 2 ժամ հեռու)։

Այնուհետեւ սահմանադրականների գործունէութեան շրջանը սկսում է նեղանալ եւ Մակուի բանակները սկսում են կամաց-կամաց մտնել Խոյի սահմանները եւ ամրանալ Այրի-բուլաղ, Կըզկալա, Փարչի եւ ուրիշ մի քանի գիւղերում։ այդտեղերից նոքա իրանց ազդեցութիւնը տարածում են շրջակայքի վրայ։

Թշնամու սանձարձակութեան առաջն առնելու նըպատակով, Զինուորական շտաբը վճռում է մի արշաւանք գործել Փարչի գիւղում եղող մակուցոց վրայ, ուր ապրում էր Շէքիր փաշան։ Արշաւանքը շատ յաջող ելք է ունենում եւ թշնամին 25 զոհ տալով, դուրս է փախչում գիւղից։ Այդ օրը թերեւս կռիւը աւելի բարդանար, երբ Այրի-բուլաղի բանակն էլ արդէն վրայ էր հասել, եթէ սահմանադրականները յետ չնահանջէին։ Այդ կռուից յետոյ մակուցոց բանակի գլխաւոր կայանը լինում է Այրի-բուլաղը եւ Կըզկալան։ Սահմանադրականները իրանց ուժերը տեղաւորում են հինգ կէտերի վրայ — Փեռայում, Բէդդավարում, Թաղերում, Քաղաքում եւ Սէյդավարում։

Թաղերի եւ Սէյդավարի շրջակայքի գիւղերի պաշտպանութեան գործը վարում էր Հ.Յ.Դ.եան 25-30 հոգուց բաղկացած հայդուկային խումբը։

Փարչիի պարտութեան վրէժը լուծելու համար (909 Յունս. 3) Նամօ խանը ամբողջ բանակով յարձակւում է Փեռա գիւղի վրայ եւ չարաչար պարտուելով՝ յետ է դառնում, բաւականաչափ զոհեր տալով, որոնց թւում եւ իր եղբօրը — Ռահմաթուլլա խանին։ Այդ օր հայդուկները գնում են փեռացոց օգնութեան։ Այդ կռուից երկու օր առաջ Ռահմաթուլլա խանը մի նամակով առաջարկել էր սէյդավարցոց ձեռնպահ մնալ պարսիկներին օգնելուց եւ իրենց ճանապարհ տալ առաջ շարժուելու։

Ռահմաթուլլա խանի մահից յետոյ թշնամութիւնը շատ սուր կերպարանք է ստանում եւ Նամօ խանը իր քրդերին հրամայում է անխնայ աւերել եւ թալանել ամէն մի գիւղ, լինի նա սահմանադրական թէ միապետական, որով սկսւում են քրդական բարբարոսութիւնները։

Մակուցոց բանակները այդ ժամանակ բաղկանում էին 2500 թուրքերից եւ 350-400 քրդերից, իսկ սահմանադրականները 1000-ի չափ մուջահիդներից եւ նոյնքան տեղացի կամաւորներից։ վերջինները ամէն մի կռուի ժամանակ թուլամորթներին յատուկ վախկոտութեամբ փախուստի էին դիմում։

Սահմանադրականները նկատելով որ օրէցօր Նամօ խանի բանակը առաջ է գալիս քաղաքին մօտիկ եւ անարգել կողոպտում է շրջակայ գիւղերը, զինուորական ժողով գումարելով, ծրագրում են մի արշաւանք գործել Այրի-բուլաղ գիւղի վրայ եւ դուրս քշել այստեղից թշնամուն։ Սահմանադրականների համար որպէս կայան որոշւում է Սարաւ գիւղը, որը Այրի-բուլաղից կէս ժամուայ ճանապարհ հեռու է։ Արշաւախումբը բաղկանում էր 350 ձիաւորներից, դոցա 25-ը հայդուկներ էին։

Սարաւում երեք օր մնալուց եւ գիւղի բոլոր դիրքերը ամրապնդելուց յետոյ, ծրագրւում է արշաւանքը։ Այրի-բուլաղի արեւելեան եւ արեւմտեան լեռներում նշանակւում են 160-ի չափ գինէյցի եւ Շահսովան ձիաւորներ։ Իսկ հայդուկները 20-30 մուջահիդների հետ վերցնում են կռուի ամենագլխաւոր տեղը — կենտրոնը եւ մոսինի համազարկեր տալով՝ խիզախաբար առաջ են արշաւում։ Լեռներում նշանակուածները միայն իրանց դիրքերը պիտի պաշտպանէին, որպէսզի Դիզայում, Այրի-բուլաղում եւ Փարչում գտնուող քրդերը հնարաւորութիւն չգտնէին այդ լեռները գրաւել։ Հայդուկները բաց դաշտի վրայ են գտնւում, թնդանօթի կողքին՝ եւ ուժեղ կռիւ մղելով, հետզհետէ առաջ շարժւում դէպի Այրի-բուլաղ գիւղը գրաւելու այդ վտանգաւոր դերը հայդուկները իրանց վրայ էին առել։ Կռուի ամենատաք ժամանակին Զուլումաթը[48] ուրթը հայդուկներով հասնում է գիւղին շատ մօտիկ եւ այրում է խոտի դէզերը, որի ժամանակ թշնամին շարք-շարք փախչում էին գիւղի վերեւի լեռները։

Մինչդեռ հայդուկների խումբը գտնուելով կռուի ամենավտանգաւոր տեղում, յաջողում է թշնամուն դուրս քշել գիւղից եւ Նամօ խանը պատրաստւում է ձի նստել, դուրս փախչելու։ այդ միջոցին արշաւանքի արեւմտեան թեւը պաշտպանող գինէյցի մուջահիդները Դիզայից եւ Փարչից դուրս փախչող քրդերի առաջ չդիմանալով, դիրքերը թշնամուն տալով սկսում են փախչել։ այդ օրինակին հետեւում են եւ մուջահիդներից շատերը, որով թշնամին կարեւոր դիրքեր գրաւելով սկսում է բռնել արշաւախմբի ձախ թեւը, որից ստիպւած Զուլումաթը խոհեմութիւն է համարում յետ նահանջել։ նահանջում է եւ միւս խումբը եւ թշնամին նորից վերադառնում է Այրի-բուլաղ։

Կռուի միջոցին քրդական մի խումբ փախուստի ժամանակ Բէդդավարի լեռներից յափշտակւում է 40-ի չափ ոչխարներ։ Նամօ խանը նկատելով որ հայդուկներ եւս մասնակցում են իր հետ ունեցած կռիւներին, սկըսում է իր ասպատակութիւնները սահմանափակել, մանաւանդ որ միանգամայն խոյս է տալիս հայկական վայրերի վրայ արշաւելուց։ Այդ կռւում մակուցոց բանակից սպանւում են 13-ի չափ, իսկ սահմանադրականներից 5 գինէյցիներ։

Յունուար 31-ին Մակուի ամբողջ բանակը գիշերով կարեւոր դիրքերը գրաւելուց յետոյ, լուսաբացին արշաւանք է գործում Բէդդավար գիւղի վրայ (½ ժամ հեռու) ուր ամրացել էին սահմանադրականներից 3 հարիւրի չափ։ Կռիւն սկսելուն պէս արուարձաններում եղող 20-ի չափ հայդուկները ճապարում են կռուի վայրը, ուր սկսում է ահեղ ճակատամարտ։ Բէդդավարի լեռն են գնում նաեւ 200-ի չափ թաղեցի եւ բէդդավարցի թուրք կամաւորներ եւս, նոյնպէս եւ տեղական հայ կամաւորներից 12-ը։ թուրք կամաւորներից մեծ մասը անզէն էին, իսկ մի մասը զինուած էր չախմախլի ու մարհէլ հրացաններով։ Թշնամին, որ նախ քան կռուի սկսելը, արդէն իր ձեռքն է առել Բէդդավարին իշխող շրջակայ բլուրներն ու լեռները, հայդուկների գնդակների տարափին չդիմանալով, յետ է փախչում սարսափահար։ Հայդուկները հալածելով թշնամուն, յետ են մղում նրան երեք ժամուայ ճանապարհ, մինչեւ Ասկէրաբադ գիւղի մօտ։ մուջահիդների շատ փոքրամաս թիւ պաշտպանում էր հայդուկների կռնակը։ Այստեղ թշնամին մէյտաններից 300 քիւրդ զինուորներ եւս օգնութիւն ստանալով, ուժեղացնում է իր դիմադրութիւնը եւ միեւնոյն ժամանակ աշխատում է շրջապատել հայդուկներին։ Վերջինները միայնակ էին կռւում այդ դիրքերում, որովհետեւ հետեւող մուջահիդները հիւանդութեան պատճառով յետ էին դարձել։

Կռիւը հետզհետէ բարդանում է։ սահմանադրականների բոլոր գլխաւոր ուժերը սկսում են կռուի դաշտից յետ դառնալ եւ թշնամին այդ բանից քաջալերուած սկըսում է շրջապատել նոցա եւ յաջողում է մէջտեղից կտրել, երկու մասի բաժանել մուջահիդներին։ Հայդուկների դրութիւնը գնալով կրիտիկական է դառնում։ նոցա փամփուշտները մօտ էին սպառուելուն։ իրանցից մէկին ուղարկում են Թաղերը փամփուշտ բերելու, բայց արդէն ուշ էր եւ թշնամին հետզհետէ գրաւելով կարեւոր դիրքերը ամբողջ ուշադրութիւնը դարձնում է միմիայն հայդուկների վրայ։ 7 ժամ անընդհատ մինչեւ վերջին փամփուշտ հերոսական կռիւ մղելուց յետոյ ընկնում են քաջաբար դարկըցի Զուլու-

48.- Զուլումաթ — Պասեցի Յովհաննէս, դաշնակցական վաստակաւոր ֆետայի։

մաթը (Օհաննէս)[49], Դարալագեազցի Բաղջոյլին (Խէշօ), Աղեքսանդրապոլցի Մամիկոնը, Ղարաբաղցի Ցարուութիւնը, Ղազախեցի Տիգրանը ու Դիլիջանցի Պետրովիչը (Բագրատ). ընկնում են նոյնպէս տեղացի հայ կամաւորներից Աբրոն, Փանոսը, Արսէնը, Բաբան ու Զօհրաբը եւ 100-ի չափ թուրք մուջահիդներ ու կամաւորներ, որոնց մեծ մասը անզէն են եղել։ Թշնամու բանակից սպանւում են մօտ 25-ը, որոնցից չորսը քրդական նշանաւոր տոհմապետներ են եղել։ Կռուին մասնակցող միապետականների պատմելով, այդ չորս քրդերին մի սեւ մազերով հայդուկ է խփել (Ցարուութիւնը ?) այն էլ վիրաւորուած ժամանակին։ Զինակից ընկերները երկու օր յետոյ հաւաքում են պատերազմի դաշտից հերոսների մարմինները եւ հողին են յանձնում Խոյի գերեզմանադաշտում (Աւարայր) եւ արտասուալից աչքերով բաժանւում նոցա դամբարաններից։ Կռուից յետոյ Թշնամին մտնում է Բէդդավար գիւղը, կողոպտում է եւ բնակիչներին ցիր ու ցան անում։

Բէդդավարի պարտութիւնից յետոյ, սահմանադրականները ամրանում են Փեռայում եւ գլխաւորապէս քաղաքում։ Քաղաքից դուրս գտնուող Շիւանա, Ղազիթաղ, Ռաբաթ եւ Թատա-քեարփի թուրք արուարձանների բնակիչները թուով 12 հազար, սարսափահար իրանց ինչքերով քաղաք են ապաստանում։ Իրանց տեղերում են մնում հայերը միայն (100 տուն) որոնք ապրում էին 5ական րոպէ իրարից հեռու եղող երեք արուարձանների մէջ։ Երեք օրուայ ընթացքում այնպէս են դատարկւում թուրք թաղերը որ Թշնամին երբ էլ ուզենար, կարող էր գրաւել նոցա եւ այդպէս էլ լինում է։

Փետր. 5-ի առաւօտեան երբ արդէն թուրքական թաղերի դատարկուելուց յետոյ փոքրաթիւ հայդուկները (14) ամրացել էին Էյվաչի կոչուած թաղամասում, մակուցոց ամբողջ բանակը, Նամօ, Իզօ եւ մի քանի ուրիշ խաների առաջնորդութեամբ ներս է խուժում Ռաբաթ թաղը (900 տուն) եւ այդտեղից առաջ շարժւում դէպի հայկական մասը։ Հայդուկները առանց րոպէ կորցնելու կարեւոր դիրքեր գրաւելով, ուժեղ կրակ են բացանում նոցա վրայ, միեւնոյն ժամանակ փոքրիկ թուրցիկ խմբեր են նշանակում փողոցների ծայրերին եւ Թշնամու առաջխաղացութիւնը արգելում. խառնիճաղանճ բանակը իսկոյն ոտքը դուրս է դնում հայկական մասից եւ ամրանում Ռաբաթում. քրդերը հայհոյում են Նամօ խանին, որ իրենց բերել էր Ֆիդայիների հետ կռուեցնելու։ Այդ կարճ կռուի միջոցին Թշնամին թողնում է 3 ձի եւ 3 զոհ։

Հ. Ց. Դ.-եան զինուորական խորհուրդը նկատելով որ վտանգը շատ մեծ է եւ ինքը իր փոքրաթիւ զինուորներով հնարաւորութիւն չի ունենալու հայերին երեք թաղերի մէջ պաշտպանել, որոնց մէջի դատարկ տեղերը Թշնամին բռնելով կարող էր կտրել իրարուց յարաբերութիւնը, անմիջապէս կարգադրում է հայ ժողովուրդը մի թաղի մէջ հաւաքել, որը աւելի ռազմական յարմարութիւն ունէր. կանայք եւ երեխաները ապաստանում են գերմ.-հայկական որբանոցը եւ սիրալիր ընդունելութիւն գտնում տնօրինուհի օր. Ա. Նառնաքից։ Հայերի մի մասն էլ մնում են Փոս թաղի դպրոցում եւ եկեղեցում, որտեղ կային եւ մի քանի տաճկահպատակ ընտանիքներ. այդտեղ օսմանեան հիւպատոսը տաճկական դրօշակ էր պարզել եւ նշանակել էր տաճիկ զօրքեր պահպանութեան համար։

Մակուցոց բանակը 13 օր մնում է Ռաբաթում. նա ամէն գիշեր զինուած յարձակումներ է անում քաղաքի վրայ, նրան սարսափեցնելու եւ անձնատուր դարձնելու համար, բայց չի յաջողում այդ, որովհետեւ քաղաքի դռները ներսից ամրացուած էին եւ պարիսպների վրայ էլ հսկում էին բազմաթիւ պահապաններ։ Թշնամին փորձում է գրաւել եւ Շիւանայ թաղամասը, որը քաղաքին շատ մօտիկ է, այդ տեղից քաղաքը պաշարման ենթարկելու, սակայն այդ էլ չի յաջողւում նրան, քանի որ Շիւանան գրաւելու համար նախ հայկական թաղը պիտի գրաւէր Շիւանայի ճանապարհի վրայ գտնուած լինելու պատճառով։ Դաշնակցութեան զինուորական խորհուրդը վճռում է ինչ գնով էլ լինի քրդերի եւ զօրքի առաջխաղացութիւնը արգիլել, նկատելով որ քաղաքի պահպանութիւնը միմիայն դրանով էր ապահովւում. այդ իսկ պատճառով զէնքի տակ է առնում եւ բոլոր տեղացի հայ ընդունակ երիտասարդներին ու նոցանից առանձին պահակ է նշանակում կարեւոր դիրքերում։ Զինուորական կազմի մէջ օրինակելի ռազմական կարգապահութիւն էր տիրում։

Թշնամին զայրանալով հայդուկների վրայ, իրենց դէմ յարուցած արգելքների վրայ, խումբ-խումբ քրդեր դէմ յարուցած արգելքների վրայ, խումբ-խումբ քրդեր ոլորակում հայկական թաղի զանազան կողմերից եւ ներս խուժելու ուժեղ փորձեր է անում։ Փողոցներից գլուխ հանողը, իսկոյն զոհ է գնում մոսինի անշեղ գընդակին եւ Թշնամին ոչ միայն չի յանդգնում հայոց թաղին մօտենալ, այլեւ մի քանի փողոց էլ դրանից հեռու է պահուրտում։

Այդ օրերում քաղաքում ապրող յայտնի միապետական սէիդները գաղտնի յարաբերութիւն սկսելով Նամօ խանի հետ, քաղաքում ներքին ապստամբութիւն են պատրաստում մուջահիդների դէմ, բայց վերջինների աչալրջութեան շնորհիւ տեղն ու տեղը խեղդւում է այդ դաւը. սէիդներից երեքը սպանւում են, միւսները ձերբակալւում, իսկ մի քանիները ապաստանում տաճկ. դեսպանատուն։

Նամօ եւ Իզօ խաները տեսնելով որ հայդուկները արգելք են լինում իրենց ծրագրերին եւ որոնց հետ կռուով գործ առաջ տանելն էլ անկարելի էր, պարսկական կեղծ քաղաքականութիւն են սկսում գործածել եւ երկու անգամ նամակով առաջարկում են հայդուկներին չմասնակցել պարսկական շարժումներին, աւելացնելով որ իրենք միշտ բարեկամ են եղել հայերի հետ եւ այդ բարեկամութիւնը կը շարունակեն այուհետ էլ եւայլն։ Դաշն. զինուորական մարմինը պատասխանում է նամակներին մօտաւորապէս այս բովանդակութեամբ.— որ ինքը, որպէս մի յեղափ. կուսակցութիւն, պարտք է համարում իրեն, ամէն տեղ էլ բռնութեան դէմ կռիւ մղել եւ առանց ազգի եւ կրօնի խտրութեան պիտի պաշտպանի բոլոր ճնշուածների իրաւունքները։

Հայդուկները 13 օր գիշեր ու ցերեկ անընդհատ դիրքերումն են լինում են չնայած տիրող ցրտին, անցկացնում են բոլորովին բացօթեայ տեղերում։ Այդ ժամանակամիջոցում վարում են բազմաթիւ մանր-մունր կռիւներ, խլում են քրդերից դատարկ տներից կողոպտուած շատ աւար ու տէրերին յանձնում։

Մակուցոց Ռաբաթը գրաւելու 8-րդ օրը, արդէն Ազիզ խանը սահմանադրականներին տուած հաւատարմութեան խոստումները մոռանալով իր ծառաների հետ Նամօ խանի մօտ էր անցել եւ իւր տունը ապահով պահելու համար փորձում էր քրդական պահակ նշանակել այնտեղ, որը եթէ յաջողուէր, կարող էր հայդուկների յարաբերութիւնը որոշ չափով կտրել քաղաքի հետ։ Հայդուկների մի թուցիկ խումբ 2 մուջահիդներով յանկարծ Ս. Սարգիս եկեղեցու Արեւելեան կողքից յարձակւում է քրդերի վրայ եւ կէս ժամ կռիւ մղելուց յետոյ, յետ է ցրւում նոցա. այդ կռուում սպանւում են չորս քրդեր, որոնցից մէկի զէնքը մնում է կռուի տեղում։ Կռուի տաք ժամանակին ընկնում է հերոսաբար եւ Ղարաբաղցի Շամիրը։ Այդ կռուից յետոյ Թշնամին բոլորովին յետ է քաշում իր պահապանները եւ փակւում մի միմիայն Ռաբաթի կենտրոնական մասում։ Թշնամու բոլոր զոհերի թիւը Ռաբաթում 30-ի է հասնում։

Մակուցիք նկատելով որ հայդուկների սարսափը օրըստօրէ սաստկանում է իրենց զօրքի վրայ, միեւնոյն ժամանակ Սալմաստից եկած նոր-նոր սահմանադրականներով ուժեղանում է քաղաքը, Ռաբաթում աւելի երկար մնալը անխոհեմութիւն համարելով, Փետր. 17-ին դուրս են գալիս եւ արշաւում են Փեռա գիւղի վրայ, ուր 7-8 ժամ կռիւ մղելուց յետոյ յուսահատուած նորից վերադառնում են Այրի-բուջաղ։ Փեռայի կռուի ժամանակ հայդուկները հնարաւորութիւն չեն գտնում այդ կողմերը օգնութիւն ուղարկելու որովհետեւ հայկական թաղը դատարկ թողնելը շատ վնասակար հետեւանքներ կարող էր ունենալ, թէ՛ քաղաքի եւ թէ թաղերի համար երբ Թշնամին հնարաւորութիւն կը գտնէր Ռաբաթից այնտեղ խուժելու։

Ռաբաթի 13 օրուայ կռուի ընթացքում քաղաքի չորս դռները շարունակ փակուած էին. երթեւեկութիւնը կատարւում էր միայն հարաւային, Սալմաստի կողմի դռնից, այդ էլ շնորհիւ այն բանի, որ հայ թաղը ամուր դիրք հանդիսանալով վերջապէս կտրել էր Թշնամու առաջխաղացութիւնը։

Քաղաքի եւ Փեռայի վրայ գործուած անյաջող արշաւանքներից յետոյ, քաղաքը ուժով տիրելու փորձերից յուսահատուած, այս անգամ մակուցիք սկսում են շրջակայ գիւղերը կողոպտել ու աւերել, որոնց թւում եւ այն գիւղերը, որոնք ապրելու տեղ էին տուել եւ իրենց — մակուցիներին։ Բոլոր գիւղերի բնակիչները այդ ամառուայ ցրտերին դէս դէն ցիր ու ցան եղած ողորմելի վիճակի մէջ էին գտնւում։ Նրանցից շատ քիչերին էր յաջողուել կողոպտուելուց ազատ պահել 1-2 անասուններ եւ մի քանի տնային ցնցոտիներ միայն։ Ընտանի անասուններից շատերը աւարառութեան միջոցին երկար ժամանակ լեռներում ցրտի տակ ապրելով սատկել էին։

Փետր. 18-ին երբ եէքեանցիք դաւաճանելով սահմանադրական գործին, անցնում են Սուջայի Նիզամի որդու կողմը եւ Մարանդը նորից միապետական յայտարարում, այդ միջոցին Այրի-բուջաղի բանակի մի մասը Շէքիր փաշայի առաջնորդութեամբ անցնում է Խոյի արեւմտեան սահմանները եւ բանակ դնում Հաշարութ գիւղում, որպէսզի այստեղից յարաբերութիւն պահպանի Սուջայի Նիզամի որդու եւ Սոֆիանից դէպի Գիւնէյ շարժուող Ռահիմ խանի որդու հետ ու միեւնոյն ժամանակ կտրի Խոյի եւ Սալմաստի յարաբերութիւնը։

Այդ օրերում Սելանիկի թուրք յեղափ. կոմիտէի որոշմամբ, Սալմաստի վրայով Խոյ է հասնում ժէօնթուրքերի 24 հոգուց բաղկացած զինուորական մի խումբ Խալիլ-բէյի ղեկավարութեամբ եւ սահմանադրականների գործողութիւններին ակտիւ մասնակցելու պատրաստակամութիւն է ցոյց տալիս։ Խումբը տեսակցութիւն է ունենում եւ Խոյի օսմ. հիւպատոսի հետ, որը քաղաքի ամբողջ ժողովուրդի կողմից մի ազնիւ սահմանադրականի համբաւ էր վայելում, առանց ոեւէ դիպլոմատական նկատումների։

Ժէօն-թուրքերի Խոյ մտնելուց մի քանի օր յետոյ Սարայի եւ Կոտուրի վրայով գալիս է եւ Ջեւտէթ բէյը — Թայիր-փաշայի որդին — եւ տեսակցութիւն ունենում տաճկ. հիւպատոսի եւ ժէօն-թուրքերի հետ. այդ տեսակցութիւնների արդիւնքը մնում է գաղտնի։

Հաշարութում եղող մակուցոց առաջխաղացութիւնը արգիլելու եւ նոցա վրայ մի արշաւանք գործելու համար հայ-թուրք զինուորական խորհուրդը ժէօն-թուրքերի ներկայացուցիչների հետ ժողով է գումարում մի ծրագիր մշակելու. ձայների մեծամասնութեամբ որոշւում է արշաւանք գործել այդտեղի բանակի վրայ. դաշնակցական անդամները իրենց ռազմամբարքի սաստիկ քչութեան պատճառով վաղաժամ էին համարում այդ արշաւանքը, մանաւանդ որ այդ գիւղը ձեռքում պահելու համար սահմանադրականները կարեւոր ուժը չունէին։

Փետր. 20-ին սկսւում է Հաշարութի արշաւանքը. արշաւախմբին մասնակցում են նաեւ ժէօն թուրքերը եւ Իբրահիմ բէկը 300 ձիաւորներով։ Խումբը գիշերը

49.- Այս մէկը տարբեր է նախորդէն, Պասեցի Յովհաննէսէն, որ բաղէշցի էր եւ նահատակուեցաւ նոյնպէս Պարսկաստանի մէջ 1911 թ. Փետրուարին։

նախապէս պաշարելով գիւղը եւ բռնելով դրա դիմացի լեռը, լուսաբացին սկսում է հրացանաձգութիւն։ Սէյդավարում եղող հայդուկները (7 հոգի) գրաւում են Նաւայի գիւղի դիրքերը, որտեղից թշնամին կարող էր արշաւախմբի գործողութիւնները արգիլել եւ փակում են քրդերի առաջ փախուստի ճանապարհի գլխաւոր գիծերը, որով յաղթութիւնը սահմանադրականների համար առաջուց ապահովւում է։ Թշնամին մոսինների համազարկերից յանկարծակիի գալով փախուստի միջոցներ է փնտռում շատը առանց ձիու։ կռիւը հետզհետէ սկսում է տաքանալ, որովհետեւ Վէչլա գիւղից 300 ձիաւորներ եւս օգնութեան են գալիս թշնամուն ճիշտ այն ժամանակ երբ արդէն սահմանադրականները գիւղ մտնելու վրայ էին։ Քիւրդ ձիաւորներին յաջողւում է լերան վրայ նշանակուած շահսվանցի պահապաններին նեղել եւ փախցնել, որից յետոյ սահմանադրականները թողնում են գիւղը եւ յետ են նահանջում։ թշնամու զոհերը 35-40-ի է հասնում, իսկ սահմանադրականներին 7, որոնցից մէկը յայտնի պրոպականդիստ Միրզա Սայիդն էր։ վիրաւորւում են նաեւ ժէօն-թուրքերից երեքը։ Թշնամին այլեւս Հաշարութում մնալու հնարաւորութիւն չունենալով կողոպտում է գիւղը եւ հեռանում։ սահմանադրականների ձեռքով իր ծառայի հետ գերի է բռնւում Սէրդարի նշանաւոր ծառաներից մէկը — Քալբ-Իսկանդար խանը։ խլւում են նոցանից նաեւ մի քանի ձիեր եւ հրացաններ։ Տաճկաց դեսպանը անմիջապէս բժիշկ է հրաւիրում վիրաւոր ժէօն-թուրքերին դարմանելու։ Հաշարութ, կռուի վայրն են Թաղի հայդուկներից եւս մի տասնեակ։ Հաշարութի կռուից յետոյ շրջակայ 6 գիւղերը ապաւինում են Սէյդավար, հայդուկների պաշտպանութեանը։

Այդ արշաւանքի վրէժը լուծելով՝ մակուցիք փորձում են Սէյդավարի վրայ յարձակուել եւ դրա համար էլ գրաւում են Գեօհրեւանի շրջակայ բլուրները սակայն ապարդիւն, որովհետեւ հայդուկների ուժեղ դիմադրութիւնը շատ հեռու է փախցնում նրանց։

Փետր. 23-ին Ճարայից Իսմայիլ աղայի առաջնորդութեամբ 300-ի չափ քիւրդ ձիաւորներ եւս գալիս են Խոյ. նոքա թէեւ պատրաստւում էին Եէքքեանի կողմերն անցնել պատժելու այնտեղի մուստաբիդներին, սակայն յարմար է տեսնում Գիւնէյ գնալ եւ միանալ Հաջի-Փիշնամաղի բանակին, որը աշխատում էր բանալ Թաւրիզի ճանապարհը։

Փետր. 25-ին մակուցիք դարձեալ փորձեր են անում մօտենալ Սէյդավարին։ Գիւղում եղող հայդուկների տասնեակը անմիջապէս գրաւելով դիրքերը, երկու ժամ կռիւ է մղում եւ յաջողում է թշնամուն յետ մղել խլելով 5-6 զոհեր։ Այդ կռիւը թշնամու վրայ սաստիկ ազդում է եւ նա այլեւս չի համարձակւում Սէյդավարի շրջանին մօտենալ։ Շէքիր փաշան կատաղած զանազան սպառնական խօսքեր է ուղղում սէյդավարցոց. նա սպառնում է գիւղը աւերել եւ բնակիչներին կոտորել։

Խոյի օսմանեան հիւպատոսը, որ մինեւ այդ ժամանակները շատ բարեացակամութեամբ էր վերաբերւում դէպի պարսկ. յեղափոխական գործը եւ ամէն կերպ աշխատում էր իւր կողմից եւս նպաստել դրան, Մարտի սկզբներից իւր քաղաքականութիւնը փոխում է եւ ժէօն-թուրքերի պարսկ. յեղափոխութիւնից ձեռնթափ լինելուց եւ հեռանալուց յետոյ, ինքը եւս որոշ սառնութիւն է ունենում Ամօղլու հետ, որը հետզհետէ թշնամական կերպարանք է ստանում։ Դաշն. տեղական ընկերները թէեւ հաշտարար դերի մէջ են մտնում այդ երկուսի յարաբերութիւնն ուղղելու, որից տուժում էր սահմանադրական գործը, բայց ի զուր։

Մարտի 20-ին Կոտուրի սահմաններից լուր է հասնում, որ Սմկոն մեծ պատրաստութեան մէջ է մի մեծ արշաւանք գործելու։ Խոյի արեւմտահարաւային գաւառամասի բնակիչները, որ մինչեւ այդ ժամանակ տակաւին ազատ էին մնացել կողոպտուելուց սարսափահար ցիր ու ցան են լինում։ Ժողովրդի մէջ շշուկներ են լսւում թէ օսմանեան հիւպատոսի թելադրութեամբ են գործւում այդ ամէնքը Ամօղլուց վրէժ լուծելու համար, որով մի տեսակ հակակրանք են տածում դէպի հիւպատոսը։

Մարտ 30-ին 3-4 հարիւր ձիաւոր քրդերից բաղկացած Սմկոյի արշաւախումբը. Ռահալի գծով արշաւում է Խոյի արեւմտեան մասի գիւղերի վրայ եւ այդ օրը կողոպտում է 10 գիւղեր։ Աւազակների մի թեւը Կուլլաբի լեռը հասնելով, փորձում է մտնել Ղազի թաղը, բայց հայդուկները առաջ են գնում եւ թշնամուն կոր ի գլուխ յետ դարձնում։ Փախչող քրդերին հետեւում են երեք հայդուկներ եւ մի քանի մուջահիդներ ու Ամիր բէգի դաշտերում 1½ ժամ կռիւ մղելով, հեռացնում են թշնամուն։

Սմկոն գլխաւոր ուժերով Ռահալի վրայ է յարձակւում ուր ամրացել էին բացի Բօյուք խանից եւ 30 ուրմեցի մուջահիդներ։ Ներսիինները մի բարձր բուրջի մէջ ամրանալով, սկսում են ուժեղ դիմադրութիւն ցոյց տալ։ Կռուի տաք ժամանակին դէպքի վայրն է հասնում Խոյի օսմ. հիւպատոսը եւ անմիջապէս երկու կողմից էլ կռիւը դադարեցնելով մուջահիդներին Սալմաստ է տանում։ Սմկոն գրաւում է մուջահիդների բոլոր զէնքերը։ Այդ կռւում քրդերից սպանւում են 6-ը, իսկ մուջահիդներից 1-ը։ Այդ օրը թաղերում եղող հայդուկները անցնում են Ղորուղի կողմերը, ուր սպասում էին հանդիպելու Սմկոյի քրդերին, սակայն վերջիններս արդէն Շաբանլին թալանելուց յետոյ յետ էին քաշուել։

Միեւնոյն օրը մակուցի Միրզա Մամադ Ալի խանը Մակուի բանակից բաժանուելով, կողոպտում է Կարաշաբանը եւ ուրիշ երկու գիւղեր, որոնք Սէյդավարի շրջանումն էին։

Այդտեղի հայդուկները անմիջապէս դուրս են գալիս թշնամու դէմ. նոցա ցիր ու ցան անելով յաջողում են տաւարը յետ խլել, յետ են խլում նաեւ Գեօհրովանից յափշտակուած տաւարը։ Թշնամուց այդ կռիւներում սպանւում են 13-ը, իսկ հայդուկներից միայն մի ձի։ Միրզա Մամադ Ալի խանը այդ օրը մտադիր է եղել առաջ խաղալով Սմկոյի հետ միանալով, պաշարել քաղաքի հարաւային մասը։ Սէյդավարի այդ կռիւներին քաղաքից ոչ մի օգնութիւն չի հասնում։

Ռահալն ու իր շրջակայ գիւղերը ասպատակելուց յետոյ, Մարտ 31-ին Սմկոն գրաւում է Խոյից 2 ժամ դէպի հարաւ գտնուող Ղորուղ գիւղը, որի բնակիչները գիշերանց դատարկել էին գիւղը եւ փախել քաղաք։ Այս անգամ քաղաքը բոլորովին շրջապատւում է, որովհետեւ կտրւում է եւ Սալմաստի հետ ունեցած հաղորդակցութիւնը։ Կտրատւում են հեռագրաթելերը։

Ղորուղում եղած միջոցին Սմկոն շարունակ սպառնում է Խոյի բնակիչներին եւ պահանջում է Ամօղլուն դուրս հանելու քաղաքից։ Օսմանեան հիւպատոսի կողմից այցելութիւններ են լինում թէ՛ Սմկոյին եւ թէ՛ Նամօ խանին։

Ապրիլ 5-ին Սմկոն սկսում է մօտենալ քաղաքին, եւ գրաւում է Տղմուտ գետի ափին լերան վրայ եղող Վարդանանց մատուռը։ Մուջահիդները շտապում են այդ կողմերը եւ սկսում են կռուել։ Թշնամին աւելի առաջ գալով խլում է մի քանի կարեւոր դիրքեր։

Շուտով կռուի դաշտն են արշաւում նախ երեք հայդուկներ, ապա մնացած տասնեակը եւ երկու տեղի վրայ բաժանուելով սկսում են մոսինի համազարկեր տալ։ հայդուկներից երեքը անցնելով Դիզայի (քաղաքից ¾ ժամ հեռու) ջրաղացի կողմերը կառավարում են այդ կողմերում կռուող մուջահիդներին, իսկ միւսները բռնում են Ղուլլաբի լերան հարաւային ծայրը եւ այնտեղից կրակ բացում։ Թշնամին մի քանի գլխաւոր կէտերից բացուող մոսինի անշեղ գնդակների տարափին չդիմանալով, լերան միւս երեսն է քաշւում եւ մուջահիդները հնարաւորութիւն են գտնում նորից դիրքերը բարձրանալու։ Թշնամին 3 ժամ կռուելուց յետոյ փախչում է, առանց աւարի եւ իր հետ Ղորուղ է տանում հինգ դիակներ։ Այդ կռւում սպանւում է մի ֆանայեցի կամաւոր եւ երկու ձի։ Պարտուած թշնամու աջ թեւը, որ մակուցիներից էր բաղկացած, անցնում է Շերինքեանդ եւ Ֆանայի գիւղերի կողմը, սակայն, այստեղ էլ հանդիպում է Սէյդավարի հայդուկների դիմադրութեանը եւ երեք ժամ կռիւ մղելուց ու 13 զոհեր տալուց յետոյ փախչում է Այրի-բուլաղ։

Ապրիլ 6-ի գիշերը Այրի-բուլաղի բանակը նորից փորձ է անում քաղաքը գրաւելու. գիշերային մթութեան մէջ քաղաքը երկու կողմից պաշարելով ժամը երկուսից սկսում է գնդակահարել քաղաքը. բոլոր արւարձանները յանկարծակիի գալով ահ ու սարսափի մէջ են ընկնում. քաղաքից պատասխանում են թշնամուն հրացաններով ու թնդանօթներով։ Հայդուկները առաջուց իրենց կարեւոր դիրքերում կազմ ու պատրաստ սպասում են թշնամուն։ Կռիւը շարունակւում է մինչեւ ժամ 5-ը եւ թշնամին առանց յաջողութիւն գտնելու դեռ լոյսը չբացուած թողնում-փախչում է, պարիսպների տակ թողնելով 10ական արշին երկարութեամբ երկու փայտէ սանդուխտներ, որոնցով պիտի բարձրանար քաղաքի պարիսպների վրայ։ Քաղաքացիք պատմում են որ այդ կռուից հազիւ կէս ժամ առաջ տաճկաց հիւպատոսը Նամօ խանի մօտից էր վերադարձել։

Ապր. 14-ին Սմկոյի բանակը Խոյում 20-ից աւելի գիւղեր կողոպտելուց յետոյ, Նամօ խանից ստացած օգնական ձիաւորներով միասին անցնում է Գիւնէյի կողմը, դէպի Հաջի-Փիշնամազի սահմ. բանակը եւ կողոպտում է Գիւնէյի մի քանի գիւղերը եւ այստեղից վերադառնալով՝ անցնում է Կոտուր, հարուստ աւարով։

Ապր. 18-ին մակուցոց բանակը, որոնց թւում եւ Հէյդար խանը իր ծառաներով, ցերեկուայ ժամ 12-ին նորից մտնում է Ռաբաթ թաղը եւ վճռում է այդտեղ կենտրոնանալով, նորից շարունակել քաղաքի հետ ունեցած կռիւը. նա իր հետ բերել էր ապրուստի պատրաստութիւն, որպէսզի աւելի երկար մնայ. մակուցոց հաշուով Սմկոն էլ հարաւային կողմից Շիւանա թաղը պիտի գրաւէր եւ հայկական թաղը պիտի մնար կենտրոնում կղզիացած։ Ռաբաթի ամբողջ թուրք բնակչութիւնը սարսափած փախչում է հայոց թաղը եւ ապաւինում հայդուկներին։ Կռիւն սկսելուն պէս քաղաքի կողմից օգնութիւն է գալիս։ Թշնամին աշխատում է փողոցներով առաջ խաղալ եւ բռնել կարեւոր ամրութիւնները, սակայն այդ չի յաջողւում նրան, որովհետեւ ռաբաթցիք անցեալի դառն փորձից խրատուած, մի քանի գլխաւոր փողոցների ծայրերը պատնէշներով ճանապարհները փակել էին։

Ներսի դիմադրութիւնը շատ խիստ էր եւ վճռական. հայդուկները շուտով գրաւում են կարեւոր անցքերը եւ ուղղութիւն տալիս կռուին։ Քաղաքի պարիսպներից թնդանօթներ են արձակւում դէպի թշնամին. վերջինս 3 ժամ յուսահատական ճիգ թափելուց յետոյ Ռաբաթում տեղ գրաւել չկարողանալով, դուրս է գալիս խայտառակ կերպով եւ փախչում։ Նամօ խանի հեշտաեռն ու գորգերը մնում են մի տան մէջ, ուր իջեւանել էր նա։ Թշնամուց սպանւում ու վիրաւորւում են 24-ը իսկ մուջահիդներից 1-ը։

Թշնամին Ապրիլի վերջերին մի փորձ եւս անում է քաղաքի վրայ. այդ նպատակով նախ փախցնում է քաղաքից 10 րոպէ հեռւում արածող նախիրը։ Հայդուկները ուշ են իմանում այդ եւ նրանից երեքը շտապում են թշնամու յետեւից. մէկ ժամ կռիւ մղելով, յետ են դարձնում տաւարի մի մասը։

Մայիսի սկզբներին եւս մի փորձ անւում է էլի քաղաքի կողմը, բայց այս անգամ մի տասնեակ հայդուկներ Թաղերի ճանապարհով շուտով վրայ են հասնում եւ թշնամուն հալածում միժամուայ ճանապարհ, մինչեւ Կարակօշունի լեռները։ Թշնամին տալիս է մէկ զոհ եւ չի կարողանում տանել ոչ մի տաւար։

Դրանից յետոյ պարսկ. Սահմանադրութեան ցանկալի հեռագիրն է հաղորդւում եւ մակուցոց բանակը, այդ 5 ամսից ի վեր Խոյի կրծքին նստող ծանր կոշմարը ցիրուցան լինելով, հեռանում է եւ Մակուի խաները հեռանում են իրանց քարեայ գազանային որջերը։

Այնուհետեւ դադարում են ասպատակութիւնները եւ աստանդական կեանքին ենթարկուող գիւղացիութիւնը, ջարդուած ոսկորներով, իր կիսամերկ երեխաների ձեռքից բռնած գնում է իր կիսաւեր խրճիթը գտնելու եւ նրա քայքայուած պատերը կարկատելու։

Այդ վեցամսեայ անընդհատ կռիւների միջոցին դաշնակց. հայդուկները յաճախ մասնակցել են սահմանադրականների մղած կռիւներին, երբեմն առանձին, երբեմն նոցա հետ միացած։ Հայդուկների թիւը հայ արւարձաններում եւ Սէյդավարում եղել է 10-30. նոքա ամբողջ կռիւների ընթացքում ոչ միայն կարողացել են պաշտպանել ամբողջ գաւառի հայ ազգաբնակութիւնը կողոպտուելուց եւ ուրիշ պատահարներից, այլեւ Սէյդավարի շրջանում գտնուող վեց թուրքական գիւղեր եւ հայ արուարձանների շուրջը եղող թաղերի մօտ 15000 թուրք ժողովուրդը։

Քրդական ամենաուժեղ գրոհների ժամանակ քաղաքի շրջակայ կարեւոր ամրութիւնները գրաւելով, թշնամու դէպի քաղաքն ունեցած առաջխաղացութեանը արգելք հանդիսանալով՝ ապահովեցրել են վերջինիս։

Հայդուկների ազդեցութիւնը շատ մեծ է եղել տեղակ. պարսիկ խաների շրջանում. նոցանից ոմանք դիմել են հայդուկների պաշտպանութեանը, երբ արդէն փարատած են եղել իրենց վրայից միստաբիտի ստոր անունը։ Հայդուկները շատ վեհանձնութեամբ են վերաբերուել իրենց ապաւինողների հետ։ Առհասարակ հայ ու թուրք ժողովուրդը շատ յարգանքով է վերաբերուել դէպի հայդուկները, ինչպէս այդ ցոյց տուեց նոցա մի գրաւոր շնորհակալութիւնը Գարեգնին[17] ուղղած — Դաշնակցութիւնից ստացած պաշտպանութեան առթիւ։

Թուրք յեղափոխականների հետ թէ՛ դաշն. զինուորական մարմինը եւ թէ առանձնապէս հայդուկները եղել են շատ համերաշխ եւ բարեկամ եւ պէտք եղած դէպքում միշտ ուղղութիւն տուել նոցա ռեւ ձեռնարկներին. գործել են վերջինների հետ համերաշխօրէն։ Ժէօն թուրքերի հետ թէեւ կարճ ժամանակ սակայն համերաշխ գործելու համաձայնութեան եկել է տեղակ. դաշն. մարմինը եւ այդ համերաշխ գործունէութիւնը թերեւս աւելի հիմնաւոր կը լինէր եւ արդիւնաւոր, եթէ ժէօն թուրքերը շուտով չհեռանային պարսկ. յեղափ. ասպարէզից։ Նոցա խոստումները միմիայն խոստում մնացին։ Խոյի օսմ. հիւպատոսը թէեւ Դաշն[ակցութեան] հետ առանձին բարեկամական քաղաքականութիւն պահպանել է, բայց դրա մէջ թաքնուել է ինչ որ քաղաքական միտումներ. նա թուրք յեղափոխականների հետ վերջերս եղել է սառն, մասնաւորապէս Ամօղլու հետ։

Խոյում մղուած սահմանադրական կռիւներին Դաշնակցութիւնը ուժեղ մասնակցութիւն ցոյց է տուել հետեւեալ պատճառներով.

ա) Տեղական հայ-թուրք ժողովրդի պաշտպանութեան համար։

բ) Մակուցոց դէպի Սալմաստ ունեցած առաջխաղացութիւնը արգելելու համար — որից մեծ հարուած էր սպասւում ամբողջ Ատրպ[ատականի] սահմ. գործին։

գ) Մակուցոց ամբողջ ուժերը Խոյի սահմաններում պահելու որպէսզի առաջ չանցնէին դէպի Թաւրիզի կողմերը։

դ) Սահմանադրական կարգերի որոշելու միջոցին, տեղական հայերից մասնակցել տալու այդօրինակ ընտրութիւններին եւ այլն։

Ինքնապաշտպանութեան կռիւներին տեղական տարրերից եւս մասնակցել են՝ հայդուկների ղեկավարութեան տակ. նոքա պահպանել են հայդուկների հետ միասին իրենց բնակավայրի մօտիկ դիրքերը։

Նախ քան կռիւները դաշն. տեղական ընկերները զբաղուած են եղել տեղական ժողովրդի կուլտուրական ձեռնարկներով — դպրոց, գրադարան, թատրոն, եւայլն — դոցա ջանքերով բացուել եւ յարատեւել են Սէյդավարի եւ քաղաքի հայոց դպրոցները — հայթայթուել է դպրոցների բիւդջէն։

Մասնաւորապէս ուշադրութիւն է դարձուած մարտական խմբերի կազմութեան համար, տեղական հայ կամաւորներից։ Առաջ է տարուել նաեւ տեղական ոյժերի զինման կարեւոր գործը։ Ժողովրդի սեփական փամփուշտաւոր զէնքերի թիւը հասնում է 106-ի, 5000 փամփուշտով։ Վերջին կռիւների ընթացքում Դաշնակցութիւնը եւս նոցա զէնք եւ փամփուշտ է մատակարարել։

Կռիւների ընթացքում զոհուել են եօթ հայդուկներ եւ հինգ տեղացի կամաւորներ։

Հայդուկների համար Ամօղլուց ստացուել է 6 ձի. դրամական նպաստ ստացուել է 740 ղրան եւ միամսըւայ ծախք էլ ստացուել է նոցանից խմբապետ Մուկուջի ձեռքով։

Ցորեն՝ 8 բեռ, գարի՝ 20 բեռ։ Մասնաւոր անհատներից որպէս նուէր ստացուել է 9 ձի, մեծ քանակութեամբ դարման, 12 բաթման բրինձ։ Սէյդավարի ամբարից ստացուել է 40 բեռ ցորեն։ Կռիւների ընթացքում թշնամուց խլուած են 6 ձիեր, 10 եզներ, 4 ոչխար, 1 գոմէշ, եւ զանազան մանր-մունր իրեր. գրաւուել են թշնամուց նաեւ 5 փամփուշտաւոր հրացաններ։

Կորուստ եղել է 11 ձիեր, 15 հրացաններ եւ 3 տասնոցներ։ Ընդհանուր ելեւմտական հաշիւները ամփոփուած են առանձին հաշուեկշիռների մէջ (հրացաններից 9-ը մոսին)։

ԱՐԱՄ

1909 Յունիս 30
Աւարայր

1908 ԴԵԿՏԵՄԲԵՐ 20ԻՑ ՄԻՆՉԵՒ 909 ԱՊՐԻԼ 10 ՆԱՄՕ ԽԱՆԻ ԵՒ ՔԻՒՐԴ ԱՒԱՋԱԿԱՊԵՏ ՍՄԿՈՅԻ ԽԱՌՆԻՃԱՂԱՆՃ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՁԵՌՔՈՎ ԱՒԵՐՈՒԱԾ ԳԻՒՂԵՐԸ

Աւերուած գիւղերը	Քանի տուն	Սպաննուած մարդ	Սպաննուած կին	Գումար	Ամբողջապէս այրուած	Մասամբ այրուած	Կողոպտ.	Ծանօթութիւն
1.- Մահլազան գիւղ[1]	50	–	–	–	–	այրուած	կողոպտ.	1) Այդ գիւղում 20 տունը հայեր են
2.- Վերին Վէշլա	40	1	–	1	–	այրուած	կողոպտ.	
3.- Ներքին Վէշլա	40	1	–	–	–	–	»	
4.-Բէդդավար	300	2.5	5	30	այրուած	–	»	
5.- Հաշարութ[2]	65	4	–	4	–	այրուած	»	2) Մակուցոց երբեմնի բանակատեղին
6.- Նաւայի	45	2	–	2	այրուած	–	»	
7.- Կարաշաբան	50	–	–	–	–	այրուած	»	
8.- Բայրամ Քենդ	30	–	–	–	–	»	»	
9.- Էրսի	40	1	–	1	»	»	»	
10.- Բաղդարա	100	–	–	–	–	–	»	
11.- Դիզա	40	–	–	–	–	–	»	3) Թշնամու բանակատեղին
12.- Փարչի[3]	100	–	–	–	–	–	»	
13.- Փուրմասի	100	–	–	–	–	–	»	
14.- Զէյվա	30	–	–	–	–	–	»	
15.- Սարաւ	60	–	–	–	–	–	»	
16.- Բուրդէշին	60	–	–	–	–	–	»	
17.- Էւօղլի	100	15	4	19	–	–	»	
18.- Փիրքեանդի	100	30	–	30	այրուած	–	»	
19.- Էարմկայիա	30	–	–	–	–	–	»	
20.- Սիաբազ	30	4	–	4	այրուած	–	»	
21.- Մէյդաններ	40	–	–	–	–	–	»	
22.- Խանայի	50	–	–	–	–	–	»	
23.- Դիզա	10	–	–	–	–	այրուած	»	
24.- Կուրդիք վերին[4]	100	8	–	8	այրուած	–	»	4) Քրդերի բանակատեղին
25.- Կուրդիք ներքին	60	4	–	4	»	–	»	
26.- Բալաւանուս	100	3	–	3	»	–	»	
27.- Կըրխ պաղ[5]	20	–	–	–	»	–	»	5) Այդ գիւղերից մի քանիսում եղել են բռնաբարութիւններ թշնամու ձեռքով
28.- Խոյի Ռաբաթ թաղ	900	28	–	28	–	–	»	
29.- Ռահալ	100	3	–	3	–	այրուած	»	
30.- Խոյամա	40	–	–	–	–	–	»	
31.- Ամիր բէգ	50	–	–	–	–	–	»	
32.- Բուրքէյ	20	–	–	–	–	–	»	
33.- Սալքեաթի	100	–	–	–	–	–	»	
34.- Շաբանլու	25	–	–	–	–	–	»	
35.- Իմամքեանդ	30	–	–	–	–	–	»	Բացի յիշեալ գիւղերը կողոպտուած են նաեւ ուրիշ 20ի չափ գիւղեր եւս, որոնց անունները այստեղ չի հասել։
36.- Կօրուղ	100	–	–	–	–	–	»	
37.- Դիզադիզ	200	–	–	–	–	–	»	
38.- Կըշլաղ	30	–	–	–	–	այրուած	»	
39.- Մոլլաջուլուք	60	–	–	–	–	այրուած	»	
40.- Բուլամաջ	30	–	–	–	–	–	»	
41.- Կարաթէփէ	30	–	–	–	–	–	»	
42.- Սէյվան	50	3	–	3	–	այրուած	»	Սմկոն, բացի Խոյի շրջանից, աւերել է եւ գիւղէյ գաւառում 9 նշանաւոր գիւղեր։
43.- Փառակ	100	–	–	–	–	–	»	
44.- Խանդիզա	150	–	–	–	–	–	»	
45.- Ղազի եւ Շիւանա	1000	17	–	17	–	–	»	

ՄԱԿՈՒԻ ԵՒ ԽՈՅԻ ՇՐՋԱՆԻ ՄԵԾ ՈՒ ՓՈՔՐ

Կռուի վայրը	Շրջանում եղած կռիւն		Մենք մասնակցեցինք քանի հոգով		Կռուողների ընդհանուր թիւը	Կորուստ մեծ կռիւների			
						Ընկերներ		Չենք	
	Մեծ	Փոքր	Դրսեցի	Տեղացի		Դրսից	Ներսից	Ռազմամ.	Չիներ
1.- Կուլաբիլիս	մեծ	–	4	15	19	1	–	1 մոսին, 200 ծայր	3
2.- Հաշարութ	–	փոքր	10	4	14	–	–	–	–
3.- Սարաւ	մեծ	–	25	10	435	–	–	–	–
4.- Բէդդավար	մեծ	–	22	12	534	6	5	8 մոսին, 4 տասնոց 5 բերդան	7
5.- Ռաբաթ	մեծ	–	20	–	20	–	–	–	–
6.- Ռաբաթ	4 մեծ	18 փոքր	30	20	50	1	–	–	
7.- Հաշարութ	մեծ	–	16	–	240	–	–	–	–
8.- Գեօհրեւան	–	փոքր	10	–	10	–	–	–	–
9.- Փիրվալի	մեծ	–	10	–	10	–	–	–	1
10.- Գեօհրեւան	մեծ	–	18	–	218	–	–	–	–
11.- Կարաշաբան	մեծ	–	9	–	9	–	–	–	–
12.- Գեօհրեւան	մեծ	–	9	–	9	–	–	–	–
13.- Ամիր բէգ	–	փոքր	4	–	54	–	–	–	–
14.- Մոլլաջունութ	–	փոքր	10	–	300	–	–	–	–
15.- Ֆանայի	մեծ	–	10	–	10	–	–	–	–
16.- Մատուռ	մեծ	–	12	–	220	–	–	–	–
17.- Բայրամքեանդ	մեծ	–	10	–	10	–	–	–	–
18.- Չիմանբաղ	մեծ	–	12	–	72	–	–	–	–
19.- Չիմանբաղ	մեծ	փոքր	12	–	12	–	–	–	–
20.- Ռաբաթ	մեծ	–	13	–	75	–	–	–	–
	19	23	–	–	–	8	5	18 հրացան	11

Բացի այդ կռիւները, մղուել են նաեւ մի շարք մանր-մունր կռիւներ, որոնք եղել են առանց զոհերի – երկու կողմից էլ:

ԿՌԻՒՆԵՐԸ ԵՒ ԹՇՆԱՄԻԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Կորուստ փոքր կռիւների				Թշնամու թիւը				Թշնամու կորուստ			Կռուի տեւողութիւն	Ծանօթութիւն
Ընկերներ		Չենք						Գրաւել ենք				
Դրսից	Ներսից	Ռազմամթ.	Չիներ	Թուրք	Քիւրդ	Մակուցի	Գումար	Մարդ	Ռազմամթ.	Չիներ		
–	–	–	–	1500	300	200	2300	18	1 վէրէնդիլ 1 բերդան	2 ձի, 5 եզ 1 գոմէշ, 4 ոչխ.	8 ժամ	Տեղացի կամաւորները պաշտպանել են հայդուկների թիկունքը: Մուջահիդներ չեն մասնակցել:
–	–	–	–	400	100	150	650	2	–	–	4 ժամ	
–	–	–	–	2000	400	500	2900	25	–	–	9 ժամ	
–	–	–	–	2500	500	400	3400	70	–	2 ձի	10 ժամ	Թշնամուց սպանուել են չորս նշանաւոր քիւրդ ցեղապետներ եւ Թէմուր խանի եղբայրը:
–	–	–	–	2500	500	400	3400	6	1 բերդան	2 ձի	5 ժամ	
–	–	–	–	»	»	»	»	30	2 վէրէնդիլ	–	13 օր	Գիշերները եւ կռիւներ են տեղի ունեցել:
–	–	–	–	200	150	200	550	40	–	–	5 ժամ	
–	–	–	–	200	100	30	330	6	–	–	4 ժամ	
–	–	–	–	400	200	100	700	10	–	–	5 ժամ	Չին սպանուել է:
–	–	–	–	500	300	100	900	8	–	–	6 ժամ	
–	–	–	–	300	100	50	450	13	–	–	5 ժամ	
–	–	–	–	100	50	50	200	5	–	–	3 ժամ	
–	–	–	–	–	500	–	500	3	–	–	2 ժամ	Այդ կռուողները Սմկոյի քրդերն էին:
–	–	–	–	–	500	–	500	–	–	–	1 ժամ	
–	–	–	–	–	500	–	500	5	–	–	3 ժամ	
–	–	–	–	–	400	–	400	5	–	–	5 ժամ	
–	–	–	–	–	500	–	500	4	–	–	4 ժամ	
–	–	–	–	–	500	–	500	3	–	–	4 ժամ	
–	–	–	–	–	500	–	500	–	–	–	1 ժամ	
–	–	–	–	1000	400	500	1900	24	–	–	5 ժամ	
–	–	–	–	–	–	–	–	277	5 հրացան	16 անասուն	–	

Եղել են եւ մի քանի մեծ կռիւներ, որոնք ունեցել են յաջող յաղթութիւններ, որոնց մենք չենք մասնակցել մարդու եւ ռազմամթերքի պակասութեան պատճառով:

ԿՌՈՒԻ ՎԱՅՐ ԵՂՈՂ ԳԻՒՂԵՐԸ ԵՒ ՆՈՅՆ ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԽՈՅԻՑ	
1.- Ռաբաթ (արուարձան)	Խոյից հեռուէ 1 վերստ
2.- Բէդդավար գիւղ	» » 2 »
3.- Փեռա գիւղ	» » 8 »
4.- Սարաւ »	» » 4 »
5.- Այրի-բուջաղ	» » 7 »
6.- Կուրդիկ »	» » 28 »
7.- Փիրքեանդի	» » 30 »
8.- Հաշարութ գիւղ	» » 6 »
9.- Սէյդավար »	» » 4 »
10.- Կօրուղ »	» » 14 »
11.- Ռահալ »	» » 14 »
12.- Փարչի »	» » 5 »
13.- Էւօղլի »	» » 28 »
14.- Սիաբաղ »	» » 20 »
15.- Կըզ-կալա »	» » 8 »
16.- Գեօհրէվան	» » 4 »
17.- Վէշլա	» » 6 »
18.- Դիզա	» » 5 »

Փաստ. 476-68

Զ.– ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ՄԻՆԱՐԷԹԻ [ՍԱԼՄԱՍՏ] ՇՐՋԱՆԻ

1908 Թ. ՅՈՒՆՈՒԱՐԻՑ 1909 Թ. ՅՈՒՆԻՍ

I ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

1907 Թ.ի վերջին ամիսներից սկսած ձեռնարկուեցին Մինարէթում փորձեր շրջանը կազմակերպելու համաձայն Հ.Յ.Դ. IV Ընդհ. Ժողովի մշակած կանոնագրին. նոյն գործունէութիւնը շարունակուեց եւ 1908 Թ.ի ընթացքում։ Նախկին խմբերը լուծուած համարուեցան եւ համաձայն Վրէժստանի III Ընդհ. Ժողովին կազմուեցան միութիւններ եւ քաղաքական խմբեր, պահուեցան նախկին ենթակոմիտէական շրջանների բաժանումները. միայն իւրաքանչիւր ենթակոմիտէն ունէր հետեւեալ խմբակցութիւններ.

Մառաստանի ենթ[ա]կ[ոմիտէն] ունէր	3 գիւղաց[իական] միութիւն 109 անդամով
» » »	1 արհեստ[ակցական] միութիւն 11 անդամով
» » »	1 քաղաք[ական] խումբ 7 անդամով
Զոլա ենթ[ա]կ[ոմիտէն] ունէր	1 գիւղաց[իական] միութիւն 71 անդամով
Քար ենթ[ա]կ[ոմիտէն] ունէր	3 գիւղաց[իական] միութիւն 79 անդամով
Քար ենթ[ա]կ[ոմիտէն] ունէր	1 քաղաքական խումբ 5 անդամով
Ճառագայթ ենթ[ա]կ[ոմիտէն] ունէր	3 գիւղաց[իական] միութիւն 29 անդամով
» ենթ[ա]կ[ոմիտէն] ունէր	2 արհեստ[ակցական] միութիւն 11 »
» ենթ[ա]կ[ոմիտէն] ունէր	1 քաղաք[ական] խումբ 12 անդամով
Ժայռ ենթ[ա]կ[ոմիտէն] ունէր	2 գիւղաց[իական] միութիւն 51 անդամով
Սիբիր ենթ[ա]կ[ոմիտէն] ունէր	1 գիւղաց[իական] միութիւն 46 անդամով
Մինարէ ենթ[ա]կ[ոմիտէն] ունէր	1 գիւղաց[իական] միութիւն 34 անդամով
Մինարէ ենթ[ա]կ[ոմիտէն] ունէր	2 արհեստ[ակցական] միութիւն 16 »

Անցեալ թուականի Դեկտեմբերին կազմուեցաւ եւ 8րդ ենթ[ա]կ[ոմիտէն] «Արշալոյս» անունով։ Այս վերջինիս շրջանում կազմակերպուողներու ընդհանուր ցանկութեամբ փոխանակ միութիւնների կազմուեցան քաղաքական խմբեր համաձայն նախկին ներքին կանոնաւորութեան. կազմուեցին 6 խմբեր 44 անդամով։ Որով Մինարէթում ընդամէնը կազմակերպուած անհատների թիւը հասաւ 520-ի, որոնցից մօտ 80 հոգի ասորիներ էին կազմակերպուած 2 գիւղացիական միութիւնների մէջ մէկը Փաթում միւսը Խոտում[?]։ Բացի այս կազմակերպուեցան նաեւ Գետաշէն գիւղում թուրքերը մօտ 70 հոգի երկու խմբերի մէջ, որոնցից միայն մի խումբը վճարել է անդամավճարները։ Բայց թէ թուրքերի եւ թէ ասորիների խումբերը 4-5 ամիս հազիւ գոյութիւն ունեցան. առաջինները կազմակերպուեցան այն ժամանակ միայն երբ քրդական ասպատակութիւնները եւ կողոպուտները ընդհանուր աղէտ էին դարձել մասնաւորապէս թուրք գիւղերի համար, որոնք բոլորովին անպաշտպան, թալանուելով իրանց ստացուածքը ու անձերը հայոց գիւղերում էին ապահովացնում, որովհետեւ մեր կազմակերպութեան տարիների գործունէութիւնը այս շրջանում եւ մեր մարտիկների մղած մի կարգ ինքնապաշտպանական հերոսական կռիւները Դաշնակցութեան ազդեցութիւնը շատ բարձրացրեր էին, այնպէս որ թուրքեր եւ ասորիներ եւս մօտենում էին մեզ եւ մտնում մեր շարքերում. երբ քրդական վրտանգը մեղմացաւ սորանք եւս դժբախտաբար սկսեցին հեռանալ եւ կազմալուծուել։ Վերջերը ասորական խմբերի մէջ երեւան եկան անձնաւորութիւններ, որոնք արտայայտեցին յետին մտքով կազմակերպուած լինելը, որ կազմակերպուելով իրանց համար դիրք ստեղծելու եւ թայֆայական հաշիւներ լուծելու միտքն են ունեցած եղել. այդ անձնաւորութիւններ պատճառ եղան եւ խմբերի մէջ եղած կապի թուլանալուն։

Այդ պատճառով եւ այդ խմբերը յայտարարուեցան կազմալուծուած ու դրանց փոխարէն միայն համեմատաբար գիտակից ասորիներից կազմուեց մի խումբ «Լուսնեակ» անունով բաղկացած մօտ 15 անդամներից։

Կազմակերպելու եւ պրոպագանդի համար կոմիտէն իբրեւ շրջիկ պահում էր ընկեր Վարդանին, որ լաւ պատրաստուած չլինելով չկարողացաւ օգտակար լինել եւ 7 ամսից վերջ հեռացաւ շրջանից։

Միութիւնների եւ խմբերի հետ պարապւում է դասախօսութիւններով, որքան կարելի է գործը գիտակցական հողի վրայ դնելու համար։ Արհեստակցական միութիւնների մէջ եղել են հիւսներ, բրուտներ, դարբիններ, քարտաշներ, ըստ պարապմունքի կազմակերպուած։ Գիւղացիական միութիւնների մէջ եղել են հողատէր եւ հողազուրկ գիւղացիներ։ Առհասարակ բոլոր առեւտրականները վտարուած են եղել շարքերից

համաձայն ներքին կանոնադրութեան։ Փորձեր ցոյց տուին սակայն որ ներկայ պայմաններում փոքր առեւտրականներին եւս կարելի է մտցնել շարքերում։

Միութիւնների եւ խմբերի անդամավճարները լրիւ հաւաքուած են միայն 1908 թ. առաջին վեցամսեակինը. իսկ երկրորդ վեցամսեակինը ստացուած է միայն Ճառագայթից, Մինարէից եւ ասորական խմբերից. մնացած անդամավճարները ցարդ լրիւ հաւաքուած չլինելու պատճառներն են եղած 1) ինքնապաշտպանական պատրաստութիւնները, որով շրջանները ինքնապաշտպանութեան համար արդէն որոշ ծախք դնելու պարտաւորուած լինելով դժուարացան ժամանակին վճարել եւ անդամավճարները. 2) սկսուած յեղափոխական շարժումները որոնց ժամանակ կարելի չեղաւ պարապել խմբերի հետ, որոնք եւս հետզհետէ թուլացան եւ բացի այդ շարժումների ժամանակ ստեղծուած տնտեսական կրիզիսը. 3) այն որ հակառակ եղած ջանքերի միութիւնների մէջ ստեղծուած չլինելով հաստատուն բարոյական կապ տրամադիր էին նորանք թուլանալու եւ քայքայուելու։

Բացի զուտ կազմակերպական գործունէութիւնից ուշադրութիւն է դարձուած եւ կուլտուրական գործերի վրայ։ 1907 թ.ին ձեռնարկուած գիւղական շտեմարանները պահուած եւ յարատեւած են Քարում, Ճառագայթում եւ Մինարէում. այս ձեռնարկութեան մասին որոշ չափով հող է պատրաստուած եւ միւս շրջաններում։ Դպրոցների բացման եւ շարունակութեան համար նոյնպէս եղած են որոշ ջանքեր։

Դատական խնդիրների մէջ որ առաջներ մեծ ժամանակ էին խլում մեր մարմիններից, մեր ընկերները առհասարակ ձեռնպահութիւն են ցոյց տուել։ Այդպիսի խնդիրները թողնուած են միջնորդ դատարաններին եւ հոգաբարձութիւնների կարգադրութեան։ Ընկերների միջոցով կարգադրուած են ընկերների հետ կապ ունեցող խնդիրները։ Ընկերները ժողովրդական դատերի խառնուած են միայն ասորական շրջաններում, այդ գլխաւորապէս այն պատճառով որպէսզի ասորիներ վարժուէին իրանց միջի շատ խնդիրները իրանց մէջ կարգադրելու եւ ոչ թէ ամէն մի խնդրի համար սարփատարին դիմել եւ նորա ու իր ծառաների համար կաշառքի, կողոպուտի եւ այլ անպատեհութիւնների առիթ տալ։ Այս պատճառով նոյն իսկ մի քանի անգամ մեր ընկերները սարփատարի ծառաներին ետ դարձրին գիւղից։ Պատահել է օրինակ այսպիսի դէպք, որ մի ասորի մի վաշխառուի պարտած է եղել 100 թուման փող եւ թէեւ ասորին մաս մաս վճարել է ամբողջ գումարը բայց վաշխառուն նորա պարտքի մուրհակը դարձեալ իր մօտ պահած է լինում. գիւղացին տկար կողմը լինելով եթէ սարփատարին դիմելու լինէր դարձեալ մի քանի թումաններ պէտք է դուրս գային իրանից, կասկածելի լինելով հանդերձ որ սարփատարը չպիտի կաշառուէր վաշխառուից եւ գիւղացու դիմումը թողնէր անհետեւանք. իսկ մեր ընկերները ուղղակի վերցնում են մուրհակը վաշխառուից եւ պատռում են, որով գիւղացին ազատւում է։ Պատահել է եւ այսպիսի դէպք, որ երբ Սմկոյի ձիաւոր քրդեր Ճարայի վրայ ունեցած կռուից վերջ յաղթուած վերադառնում են, մի մասը գալիս են Փաթաւիւր եւ ահագին նեղութիւններ պէտք է տային գիւղացիներին ինչպէս որ եղել էր ուրիշ անգամներ, բայց մեր ընկերները որոնք գործով այդ գիւղն էին գընացել, կանչում են քրդերի մեծաւորին եւ պահանջում են հեռանալ գիւղից. նա առարկում է որ վիրաւոր ունին հետերնին, որին պէտք է առողջացնեն յետոյ գնան, բայց մերոնք պնդում են որ իրանք հեռանան իսկ վիրաւորը թողնեն մինչեւ առողջանալը, դորա վրայ քրդերը վիրաւորին եւս չեն ուզում թողնել գիւղում եւ բոլոր միասին հեռանում են։ Այս դէպքի վրայ էր որ գիւղացիները ուրախացան չիմանալով ինչ ձեւով արտայայտելու իրանց շնորհակալութիւնը, պատարագ են անում եւ մաղթանք կարդում Դաշնակցութեան համար։

Ասորիները Մինարէթի շրջանում բացի սարփատարից եղել են եւ մեծ չափով կաթոլիկ միս[իո]նարների բարոյական եւ նիւթական հարստահարութեան ենթակայ. վերջիններս նոյնպէս ետ չեն մնացել զանազան ինտրիգների միջոցով ազդեցութիւն գործ դնելուց եւ գիւղացիներին ստրկացնելուց, այլասերելուց. մեր ընկերների գործունէութիւնը նպատակ ունեցել է գիւղացի ասորիներին եւս դորանց ազդեցութիւնից ազատելու եւ ինքնուրոյնաբար գործել տալու իրանց ներքին հասարակական խնդիրներում (դպրոցի եւայլն)։

II ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՑԵՂԱՔՈՒ[ԱԿԱՆ] ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Տարիների ընթացքում Մինարէթը այնպիսի պայմանների մէջ է գտնուել որ զինուելու եւ ինքնապաշտպանութեան կարիքը միշտ չեշտուած է եղել այստեղ։ Քրդական վտանգը շարունակ գոյութիւն է ունեցել որի դէմ եւ անհրաժեշտ է եղել պաշտպանուել. իսկ պարսկական-տաճկական սահմանագլխի հարցը ծնուելուց յետոյ քրդերը աւելի քաջալերուեցան իրանց ասպատակութիւնների մէջ, այնպէս որ այնուհետեւ գիշերով էր եղել թէ ցերեկով մշտական յարձակումների եւ կողոպուտների ենթակայ դարձան թէ գիւղերը եւ թէ ճանապարհները, թէեւ այդ յարձակումները ուղղուած էին գլխաւորապէս պարսիկ ազգաբնակութեան հանդէպ. այնուհանդերձ ասպատակախմբերը առիթ չէին կորցնում ճանապարհներին հայերի ապրանքներն եւս թալանելու, երբեմն եւ հայ գիւղերին մօտենալու։ Քրդերը (օր. Սոմայի աղաները) իրանց ասպատակութիւնների ժամանակ ուղղակի եւ անուղղակի կերպով յայտնում էին մեզ, թէ հայ ազգաբնակութեան հետ ոչ մի գործ չեն ունենալու եւ թէ վերջինս թող զէնք չվերցնի իրանց դէմ, բայց կազմակերպութեան բռնած դիրքն այս է եղել, որ առանց մտիկ տալու քրդերի հաւաստիացումներին, վտանգուած թուրք գիւղերին շարունակ օգնութեան հասել է, ինչպէս եւ ճանապարհներից անվտանգ անցնելու համար մեր մարտիկները ուղեկցել են շատ անգամ թէ ճամբորդներին եւ թէ ապրանքներին, առանց խտրութիւն դնելու թէ ինչ ազգութեան պատկանելիս են եղել դրանք։

Քրդական վտանգի դիմացը առնելու համար մեր շրջանում ունեցել ենք բացի ոչ տեղացի զինուորներից եւ խմբապետներից նաեւ տեղական զինուորներ եւ մարտական խմբեր։ 1908 թ. ընթացքում կազմակերպուել են 13 մարտական խմբեր 212 անդամներով, որոնցից թուրքական խմբի համար տրամադրելի են եղել 30 հոգի։ Միջոցներ ձեռք առնուեցան շրջանի զէնք ու ռազմամթերքի քանակը աւելացնելու, ժողովրդին աւելի լաւ զինելու։ Տեղական մեր Զիֆոնը[50] յատուկ ընկեր ուղարկեց Կովկաս այնտեղից մասնաւորապէս նոր սիստեմի զէնքեր հայթայթելու համար, բայց այդ միջոցը արդիւնք չունեցաւ եւ ուղարկուած ընկերը միայն կարողացաւ Մ. Ֆ.ում[32], մինարէթցիների շրջանում Մինարէթի ինքնապաշտպանութեան համար հաւաքուած մօտ 480 ռուբլու գումարով չորս զէնք գնելու եւ ուղարկել այստեղ (որոնցից մէկը ծախուեց ժողովրդին, այդ զէնքերը գնելու եւ փոխադրելու հետ կապուած ծախքերը ծածկելու համար)։ Զիֆոնը միջոցներ ձեռք առաւ եւ Վանից բերել տուեց դարձեալ ժողովրդին ծախելու համար նաեւ 2300ի չափ նոր ծայրեր[36]։

Զիֆոնին աջակցելու եկան ընկերներ Տեղացին եւ Սողոմոն, որոնք 60 մոսին եւ 15000 ծայր մտցրին Մինարէթ իրանց սեփական միջոցներով իբրեւ ծախու ապրանք, որոնք ժողովրդի մէջ տարածելու համար հարկաւոր ջանքերը գործ դրին Զիֆոնը եւ մեր ընկերները։ Այսպիսի ժողովրդի մօտ եղած զէնքերի թիւը հասաւ 350ի. 85ը նոր եւ մնացածը հին ձեւի։ Բացի այդ պահւում էին եւ համայնական միջոցներով ձեռք բերուած ռազմամթերքները որոնց վրայ աւելացուեցան եւ 12-ի չափ նոր զէնքեր եւ համապատասխան ռազմամթերք։

Տեղական զինուորների համար նշանակուեցան զինավարժութեան պարապմունքներ. տարբեր շրջաններում մարտական խմբերի հետ զինավարժութեամբ էին պարապում ընկերներ Բուլանըխցի Խաչոն, Սվազցի Գէորգն ու Մշեցի Հասրաթ, Ոսկան, Վահան եւ Աբոն։ 1908 թ. Ցունիսէն ոչ-տեղացի մեր զինուոր ընկերներից կազմուեց մի թուրքիկ խումբ բաղկացած 15 հոգուց — ընկեր Մուրատի ղեկավարութեան տակ։

Անցեալ թուականի Ցունիսին, Սեպտեմբերին եւ ներկայիս Ցունուարին մեր ընկերների նախաձեռնութեամբ գումարուած են ընդհանուր Մինարէթի հոգաբարձութիւնների ժողովներ, ուր արծարծուած են եղել ինքնապաշտպանութիւնը աւելի լաւ կազմակերպելու խնդիրները։ Շրջանը իր վրայ վերցրած լինելով ինքնապաշտպանութեան ծախքերին գոհացում տալը, թուրքիկ խմբի համար մասնաւորապէս նշանակեց ամսական 1700 ղուռնի գումար մը։

Այստեղ տալիս ենք ցուցակը այն ինքնապաշտպանական կռիւների որ մերոնք փոքրիկ ուժերով մղեցին քիւրդ ասպատակների դէմ, զանազան կէտերի վրայ, նախ սկսած 1908 թ.ի Մարտից մինչեւ Մայիսի վերջը, եւ որոնց մասին ժամանակին հրատարակուած է Վտակ[51] թերթի համարներում։

1.- Սարամէրիկ գիւղի մօտերք քրդեր յարձակւում են Վարդանի տաւարի վրայ. Աւետիս երեք ընկերներով, նորանց դիմացն է իջնում. կռուից յետոյ քրդերը պարտաւորւում են թողնել ամբողջ կողոպուտը. մերոնց ձեռքն է անցնում նաեւ քրդերի սեփական մի ձին։ Հետեւեալ օր քրդեր մարդ ուղարկեցին մեզ մօտ խնդրելով իրանց ձին՝ փոխարէն խոստանալով վերադարձնել այդ դէպքից մի շաբաթ առաջ, մի սարամէրիկցի հնչակեանից խլած հրացանը. մենք համաձայնեցանք եւ հրացանը առնելուց յետոյ վերադարձրինք հնչակեաններին։ Քիւրդերը խոստացան (մահմատցի էին կոչւում սրանք) այլ եւս երբեք հայերին չմօտենալ թալանի մտքով, բայց միանգամայն շատ խնդրեցին որ մենք եւս անտարբեր մնանք, երբ նորանք թուրք գիւղերի վրայ յարձակուելիս լինեն։ Մեր պատասխանը ի հարկէ պարզ էր։

2.- Խանթախտ գիւղի մօտ Սոմայի քրդերը յարձակուեցան երկու անգամ թէ՝ գիւղի տաւար տանելու եւ թէ կարաւանը կողոպտելու. առաջին յարձակման, մերոնք չկարողացան ժամանակին հասնել, բայց երկրորդին յաջողութեամբ ետ մղեցին քրդերին եւ կողոպուտը թափել տուին։ Քրդեր ունեցան մի քանի վիրաւոր։

3.- Թամար եւ Մինաս գիւղերի վրայ եղած յարձակումների ժամանակ մերոնք նոյնպէս օգնութեան գնացին՝ Աւետիս, Խաչոն, Տեղացին եւայլն — առաջինի կողոպուտը տանում են, մերոնց ուշ հասնելու պատճառով, բայց երկրորդի կողոպուտը վերադարձւում է կռուով. քրդերին յաջողւում է տանել փոքր մասը։

4.- Ախեանի եւ Կաբախ-Թէփէի վրայ եղած յարձակումների ժամանակ Ժայռի եւ Քարի մարտական խմբերից օգնութեան են հասնում մերոնք, յաջողում են կողոպուտ՝ տաւարի կէսը վերադարձնել։

5.- Գիւլիզան գիւղի վրայ յարձակւում են մի խումբ քրդեր եւ գիւղի մօտ արածող ամբողջ տաւարը մօտ 150 գլուխ յափշտակում են. այդ ժամանակ Քարի եւ Մա-

50.- Զինական ֆոնդ. մարմին, որուն պարտականութիւնն էր զէնքեր ապահովել թէ՛ մարտիկներուն եւ թէ ժողովուրդին։

51.- Թիֆլիսի մէջ Դաշնակցութեան պաշտօնաթերթ «Յառաջ»ի փակումէն ետք, տարբեր անուններով լոյս տեսած թերթերէն մէկն էր «Վտակ»ը։

ռաստանի մարտական խմբերի մի քանի ընկերներ՝ մօտ 8 հոգի, որոնք գտնուում էին գործով Ալիվաջ գիւղում, դուրս են գալիս գիւղից եւ քրդերի ճանապարհի մօտ (դէպի Սոմայի տանող ճամբան) դիրք են բռնում, ձայն են տալիս աւարի հետ մօտեցող քրդերին թողնել կողոպուտը, այդ ժամանակ քրդերի մեծաւորը հրացանը ցած բռնած մօտենում է մերոնց մէկ դիրքին եւ առաջարկում է ճամբայ տալ իրանց խոստանալով թալանի մի մասը մերոնց տալ. մերոնք ի հարկէ մերժում են, քիւրդը հրամայում է ընկերներին թողնել կողոպուտը, որոնք եւ հնազանդւում են, բայց մի քանի րոպէ վերջ կրկին փորձ են անում տաւարը քշելու. այդ ժամանակ մերոնք խոստմնադրուժներին տալիս են գնդակի առաջ, որոնք փախչում են, իրանց գլուխն ազատում, առանց մի հատիկ կողոպուտ տանելու. տաւարը ամբողջապէս վերադարձւում է գիւլիզանցիներին։

6.- Այսն գիւղի մօտ մազրիկցի քրդեր յարձակւում են ճամբորդ թուրքերի վրայ եւ նորանց ապրանքն ու տաւարները կողոպտում. Աւետիս երեք ընկերներով դարձեալ օգնութեան է հասնում է Սաւրայից եւ ճամբորդների թէ՛ ապրանքը եւ թէ անասունները ազատում. քրդերը այդ օր ունենում են մի վիրաւոր։

7.- Զեւաջուկի տաւարի վրայ քրդեր երեք անգամ յարձակւում են. ամէն անգամին էլ մօտիկ գիւղերից մարտական խմբերի ընկերները օգնութեան են հասնում, միայն մի անգամին քրդերին յաջողւում է տաւարի մի մասը տանել։

8.- Սոմայի քրդերից մօտ 100 հոգի մի օր առաւօտ կանուխ յարձակւում են Սուլթան-Ահմատ գիւղի նախիրի վրայ եւ քշում են մօտ 500 գլուխ տաւար. գիւղացիներ թէեւ դիմադրում են քրդերին, բայց չեն կարողանում տաւարը ազատել, ուստի Ղալասար[52] մարդ ուղարկեցին եւ դէպքի մասին իմաց տուին. այդ ատեն Աւետիս վերցնելով իր հետ մի քանի զինուորներ՝ Խաչոն, Տեղացին, Քէչիշօղլին, Սողոմոն եւ մարտական խմբից երեք հոգի օգնութեան է վազում։ Քրդերը տաւարը արդէն բաւական տեղ քշել էին եւ լեռներին մօտեցրել. մերոնք Մինասի մօտ դիրքեր են բռնում եւ սկսում կռուել քրդերի հետ, քրդերից մի մասը, որոնք ետեւ մնալով դիրքեր էին բռնել եւ կռւում էին, նախիրը քշողներին ժամանակ տալու համար, քիչ քիչ պարտաւորւում են թողնել իրանց դիրքերը մերոնց չեչտակի հարուածների տակ. մերոնք աւելի են առաջանում, կռիւը փոխադրւում է Խանթախտի մօտերք, ուր բաւական տեւում է. քրդերը պարտաւորւում են թողնել թալանի մի մասը, բայց կէսի չափ տանում են հետերնին. այս կռուի մէջ վերջիններս ունենում են չորս սպանուած եւ երեք վիրաւոր։

9.- Մայիսի վերջերը մազրիկցի քրդեր յարձակւում են Սարայի նախիրի վրայ եւ խլում են տաւարը. նախրորդը մի աղբակեցի հայ իր ցուլով կտրում է նախիրի առաջը եւ չի թողնում քրդերին տանել եւ ժամանակ է տալիս մինչեւ որ գիւղի մարտական խումբը գիւղացիների հետ օգնութեան են հասնում. այդ ժամանակ է որ քրդերը գնդակահար են անում նախրորդին, որ իրանց արգիլեց եւ դիրքեր բռնելով սկսում են կռիւը. մերոնք եւ գիւղացիներ մօտ 2 ժամ կռիւ տալուց յետոյ ազատում են տաւարի ամենամեծ մասը. քրդերին յաջողւում է տանել մօտ 40 գլուխ. քրդերը ունենում են երկու վիրաւոր եւ մերոնց ձեռք են թողնում մի ձի։

10.- Մայիսի 28-ին մազրիկցի մի ուրիշ խումբ քրդեր ընկերակցած Խանիկի (տաճկաց սահմանագլուխ) մի քանի ծպտուած զապթիէների հետ յարձակւում են Սարամէրիկի նախրին վրայ միանգամայն դաշտում. աշխատող լծկանները արձակում եւ առջեւնին տալով քշում են. երբ հաւ՛ր բերում են գիւղը, Ոսկան իր ձին նստում եւ առանց ընկերներին սպասելու քշում է ասպատակողների վրայ, Ոսկանի յարձակումը այնքան համարձակ է լինում, որ քրդերը նորա գնդակներից չփոթուած աւարի մեծ մասը թողնում են դաշտի մէջ եւ քաշւում են դէպի լեռը. բայց Ոսկան դարձեալ արշաւում է եւ գնդակներ թափում նրանց վրայ. իր թափի մէջ այնքան է մօտենում նորանց, որ իր ձին սպանւում է իսկ ինքն ոտքից վիրաւոր ընկնում. թշնամիները ուզում են յարձակւել Ոսկանի զէնքերը կողոպտելու համար, բայց սա տասկրականոցով է պաշտպանւում այս անգամ եւ ետ մղում նորանց մինչեւ որ կռուի վերջին վայրը հասնում են — որ արդէն շատ հեռու ընկած էր գիւղից — եւ ընկերներ ու գիւղացիներ, որից վերջ քրդերը աւելի են բարձրանում ու հեռանում տանելով միայն 24 տաւար։ Այսօր քրդերն եւս ունենում են երկու վիրաւորներ։

Բացի այս յարձակումները, որոնց բոլորի ժամանակ մերոնք պաշտպանողականի դերում են եղել, տեղի են ունեցել նոյնքան եւ ուրիշ յարձակումներ, որոնց ժամանակ մերոնք չեն կարողացել օգնութեան հասնել տեղերի հեռաւորութեան կամ յանկարծակի լինելու պատճառով։ Բայց մերոնք գրեթէ շարունակ, ինչպէս ասացինք ճամբորդների եւ կարաւանների հետ ուղեկցել են, թէ՛ դէպի Թաւրիզի, թէ՛ Ուրմիի եւ թէ Խոյի ճանապարհները, եւ այդ երեք ուղղութեամբ եւս անվտանգ անցկացրել են ճամբորդներին ու ապրանքներին, քրդերի հետ ունենալով շատ անգամ մեծ կամ փոքր կռիւներ։

Անցեալ թուականի Մայիսից յետոյ երբ Թռուցիկ խումբն եւս սկսեց շրջան անել եւ ստեղծուեցաւ քաղաքական նոր հանգամանքներ (Թուրքիոյ սահմանադրութիւն) քրդերի յարձակումները սկսան երբեմնակի լինել։ Մերոնք ի հարկէ դարձեալ ետ չմնացին իրանց դիրքից. մանաւանդ նախկին յարձակումներից եւ կռիւներից յետոյ թուրքերը այն համոզումն էին կայացրել, որ առանց մեր զինուորների պաշտպանութեան անկարելի [է] նորանց համար ապրել, մասնաւորապէս քրդերի սահմաններին մօտ եղող թուրքաբնակ գիւղեր, ինչպէս Կաբախ-թէփէն եւ Զեւաջուկ, մեզանից իրանց գիւղերի համար պահապաններ խնդրեցին ու ստացան. մեր առաջարկութեան թէ դուք պարտաւոր էք կառավարութիւնից ուժ պահանջել ու պաշտպանուել, նրանք պատասխանում էին կատարելապէս անվստահութիւն ցոյց տալով կառավարութեան ձիաւորներին եւ անվերջ թախանձելով — թէ՝ ախր մենք դրացիներ ենք, մեր միակ յոյսը դուք էք, մենք ձեր հովանու տակ է որ գլուխ ենք պահում եւայլն —, պատահեց դէպք որ Կաբախ-թէփէում կառավարութիւն ուզեց պահապանութեան համար ձիաւորներ տալ, բայց գիւղացիները մերժելով մերժեցին նորանց եւ մեր ցոյց տուած հայ զինուորներին տարան։ Կաբախ-թափան, որ ինչպէս ասացինք մօտ էր քրդերի սահմանին, մեր պահապաններ դնելուց յետոյ թէեւ դարձեալ 2-3 անգամ յարձակման ենթարկուեցաւ բայց ոչ մի կորուստ չտուեց։

11.- Օգոստոսի մէջ յարձակման ենթարկուեց Քալաշան գիւղի նախիրը. երբ որ հաւաբ բերին մեզ, այս անգամ յարձակման վայրը գնացին Մուրատ, Մարտիրոս, Սեպուհ, Աւետիս, Առաքել եւ ընկերները, չնայած, որ մերոնք այս անգամ էլ ուշացան մինչեւ տեղ հասնիլը եւ քրդերը աւարը արդէն քշել էին դէպի լեռ ու մի մասը դիրքեր պահելով, միւս մասը տաւարը դէպի իրանց սահմանը քշում, այսուհանդերձ մերոնք 10 հոգով այնպիսի գրոհ տուին դէպի լեռը եւ դէպի քրդերի դիրքերը — ուր վերջիններս արդէն ապահով էին համարում իրանց — որ քրդերը չփոթուած միայն իրանց գլուխ ազատելու համար են մտածում ու փախչում մերոնց ձեռք թողնելով թալանը ամբողջապէս՝ մօտ 100 տաւար։ Մերոնց այս կռիւը շշմեցնող տպաւորութիւն թողեց քիւրդերի վրայ, որոնք այդ օր ունեցել էին եւ մի քանի վիրաւորներ։ Աննկարագրելի է քալաշանցիների ուրախութիւնը երբ տեսնում են իրանց ամբողջ տաւարը վերադարձուած. թուրքերը կին-տղամարդ իրանց զգացումներ արտայայտելու համար մերոնց ձիերի ոտքի առջեւն էին գցում իրանց, կամ հրացանները համբուրում։

12.- Այնուհետեւ մերոնք երկու կարեւոր կռիւներ եւս ունեցան քրդերի հետ Ուրմիի ճանապարհին, մէկ Քեարդաշում, ուր Սամսոն ընկերների հետ ճամբորդած ժամանակ յաջող կռիւ տալով ազատուեց քրդերի ճանկից եւ մօտ 500 ուղտի բեռ վաճառականական ապրանք, եւ միւսը Կըզ-կալա-Բուռռունում ուր մշեցի Սըմբատ[30] իր ընկերներով մի փառաւոր դաս տուեց քրդերին, ազատելով նորանց ձեռք ընկած ճամբորդներին եւ ապրանքները. այս կռուում քրդեր ունեցել են 15 սպանուած եւ վիրաւորներ։ Այս կռուի մասին գրուեց եւ անգլիական թերթերում։

Այսպէս 1908 թուականի սկիզբներից սկսած (որովհետեւ նոյն իսկ ձիւնին ու ցուրտերին քիւրդերը սկսել էին շարժուել) մինչեւ Հոկտեմբեր ամիս քիւրդ ասպատակախմբերը պատերազմական դրութեան մէջ էին դրել Սալմաստը եւ նորա հաղորդակցութեան ճամբաները՝ թէեւ վերջերումս որոշ չափով մեղմացած, բայց դորա փոխարէն ժողովրդի սարսափը աւելանում էր մի այլ կողմից՝ ներսից, որի մասին պիտի ասենք անմիջապէս։

Ցարձակումների ժամանակ եղան որոշ գիւղեր որոնք փոքր ի շատէ դիմադրութիւն ցոյց տուին քրդերին, թէեւ ոչ այնքան յաջող, իսկ ընդհանրապէս դիմադրութեան ոչ մի լուրջ փորձ. քիւրդի երեւնալուն պէս կամ անմիջապէս պէտք է վազէին Ղալասար ու մեզ մօտ օգնութիւն խնդրելու, կամ առանց ծպտուելի քրդերի տրամադրութեան թողնէին իրանց ունեցածները։ Մեր մղած կռիւները եղած են բոլորովին մեր միջոցներից. միայն Կաբաս-թէփէ եւ Քալաշան գիւղեր, մօտ 90 թումանի գումար մը վճարած են իբրեւ մեր կրակուած փամփուշտների փոխ։

* * *

1908 թ.ի գարնան Մակուի Սարդար (Իգբալի-Սուլթանէն), բարձրից կարգադրութիւն ստացած լինելով Խոյ եւ Սալմաստ գաւառներն եւս իր հսկողութեան տակ առնելու եւ կառավարելու, այստեղ ուղարկեց Աւտոկների ցեղապետ Սմկոյին (Իսմայիլ աղա), որ մինչեւ այդ գտնուում էր Կոթուրում, նրան տուաւ միանգամայն մակուցի ձիաւորներ, որոնց օգնութեամբ Սմկոն փորձեր արեց ավտոկների նախկին բնակավայր Ճարան ձեռք բերելու բայց ի զուր, մինչեւ որ սահմանագլխի այդ վայրն եւս անցաւ օսմանցիների ձեռք, եւ Սմկոն պարտաւորուեցաւ հրաժարիլ իր մտադրութիւնից։

Սարդարը Սմկոյի հետ Սալմաստ ուղարկեց իբրեւ կառավարիչ Մակուի խաներից Սամի - Դիւանին (Մէհմէտ-Ալի-խան), որ հաստատուելով Դիլիմանում (Սալմաստի կեդրոնական քաղաքը) հետամուտ եղաւ Անջուման անդամների եւ առհասարակ սահմանադրականների գործողութիւններին։ Հասկնալի էր որ չուտով երկրի դրութիւնը պէտք է փոխուէր Սալմաստում. այդ պատճառով սահմանադրականները հաւաքում էին իրանց, ասպարէզ թողնելով մակուցիներին։ Անջիւմանը կազմալուծուեց։

Սմկոյի գործողութիւնների ժամանակ, որոնք տեւեցին մօտ մի ամիս (Ապրիլ), ամիսների ընթացքում շրջակայ քրդերի ասպատակութիւններին ենթարկուած ազգաբնակութիւնը, արդէն վերջին ծայր քայքայուեց տնտեսապէս եւ ահագին զրկանքների ենթարկուեց՝ խոտ ուտելու աստիճանին (ցորենը սովորականից 2-3 անգամ թանգ լինելով. ազգաբնակութիւնից չունեւոր-

53.- Ղալասար՝ Սալմաստի մօտ հայաբնակ գիւղ։

ները գլխաւորապէս ապրում էին դաշտային բանջարներով!)։ Սարա, Ուլա, Փաթաւիւր, Գիւլիզան գիւղերը պատրաստուած էին շաբաթներով պահել քիւրդ ձիաւորներին, որոնք գիւղ մտնելուց յետոյ, սովոր չեն ալ մի չափ սահման պահելու եւ միակ հաճոյք ունին սպառելու, փչացնելու եւ բարոյապէս ու նիւթապէս մեռցնելու բնակչութիւնը։ Դորանց սարսափից, ժողովուրդը պարտաւորուած էր թողնել տուն տեղ ու փախչել ուլայիներ ապաստանած էին Հաֆթվան, փաթաւիւրցիների ու գիւլիզանցիներ՝ Խոսրովա։ Սարայում քիւրդ ձիաւորներ թուրք գիւղացիների դռներն էին ծեծում եւ առանձին հաճոյքով հարցնում — սան անջիւման սրն եա շահ — ուզենալով ասել թէ սահմանադրակա՞ն էք թէ միապետական, եւ ապա մտնում տներ ու վարւում քէֆ ուզածնուն պէս։ դորանք եւս պարզ արտայայտում էին որ իրանց եւ մոսկուացիների միսսիան է լինելու սահմանադրականներին ծայր աստիճան ճնշել եւ այնպիսի պայմանների մէջ դնել որ նորանք ի սպառ մոռանան իրանց ձգտումները։

Երբ Թեհրանում տեղի ունեցան Ցունիսեան պետական հարուած եւ սկսուեցին Թաւրիզի ազատագրական կռիւները, այստեղ սկսուեցին արդէն ձերբակալութիւնները։ Ձերբակալուեցան եւ Խոյի բանտ ուղարկուեցան Անջիւմանի անդամներից մի քանիսը, ինչպէս եւ մի կարգ սահմանադրական դիլիմա ան դիլիմանցիներ։ Էֆէնտին բանտում կաթուածահար եղաւ, իսկ միւսները ծանր տուգանքներ տալով միայն ազատուեցան, յետոյ ուրիշ շատեր պարտաւորուեցան Ուրմի փախչիլ, որոնց մէջ նաեւ Անջիւմանի նախագահ՝ Փիլնամազ։ Կասկածների տակ ընկաւ նաեւ Իթթիհատ վէ Թէրաքքը-ի ներկայացուցիչ Նաջիբ բէյ, որ մինչեւ այդ իբրեւ ուսուցիչ մնում էր Դիլիմանում։

Նաջիբ բէյի, Միրզա Սէյիդի եւ Մէջիդ Իսմայիլի հետ խորհրդակցեցանք որ Խոյ անցնեն եւ այնտեղ շարժումներ սկսեն նախ, որովհետեւ այնտեղ ռէակցիան օրէ օր աւելի ուժեղանում էր. այդպիսով թէ՛ մակուցիների առաջ առնուած կը լինէր որոնք նոր ուժերով գալիս հաստատւում էին այնտեղ եւ թէ Թաւրիզի շարժ[ման] արձագանգած։

Ուստի սա մի ժամանակ եկաւ մեզ մօտ իր հետքը կորցնելու համար, երբ մի քիչ ապահով զգաց իրան, նորից Դիլիման գնաց։ Բայց այս անգամ մակուցիք առանց ժամանակ տալու ձերբակալեցին ու դարձեալ Խոյ ուղարկեցին։ Միեւնոյն ժամանակ մեզ մօտ ապաստանեց եւ պարսիկ յեղափոխական Միրզա Սայիդ դիլիմանցին մի ընկերոջ հետ եւ մօտ երկու ամիս մնաց մեզ մօտ. մակուցիներ թէեւ սորան էլ շատ հետապնդեցին, բայց չկարողացան ձեռք բերել ուստի բաւականացան Դիլիմանում նորա տունը թալանելով։

Իզո Խանը նկատումներ ունէր. նաեւ Մակուի սարդարը. նա նոյնպէս մի նամակով դիմեց ընկեր Սամսոնին[17] (այստեղ շարժումներ սկսելու ժամանակները) յայտնելով տարիների ընթացքում իր բարեկամութիւնը? հայոց վերաբերմամբ. հաւաստիացնում էր որ իր կողմից միջոցներ էին ձեռք առնուած որպէսզի ոչ ոք — սարփարաստ եւայլն — ոչ մի նեղութիւն չտան հայերին։ Պահանջում էր ուստի հայերի կողմից հաւատարմութիւն, հակառակ դէպքում, նամակում դրած էր մի քանի սպառնական շեշտեր։

Իզո խան (Մակուի Սալար) որ եկել էր այստեղ չէլիկչիներ (զինուորներ) հաւաքելու, Թաւրիզի վրայ գնալու համար (Աջիի պարտութեան վրէժը լուծելու համար թերեւս), եւ որ իր բաժինն ունեցաւ սահմանադրականներին ճնշելու գործում, նկատել էր որ մեր համակրութիւնը սահմանադրականների կողմն է, ուստի աշխատում էր որքան կարելի է մեզ չեզոքացնել։ Մի օր իր մօտ տեսակցութեան հրաւիրելով ընկեր Սամսոնին, ի միջի այլոց ասել էր, որ հանգամանքները ինչպէս էլ դասաւորուեն հայերի համար ոչ մի նեղութիւն կամ վնաս չի լինելու, որովհետեւ իրանց (իր եւ Սարդարի) ցանկութիւնն է տեսնել հայերին բոլորովին հանգիստ եւ ապահով!!։ Աւելի վստահութիւն ներշնչելու համար իր ցասածների մասին, նոյն իսկ առաջարկում է ընկեր Սամսոնին ստանձնել Սալմաստի սարփարաստութեան պաշտօնը. վերջինս մերժում է ի հարկէ, այդ ատեն առաջարկում է — ուրեմն դուք ում որ ցանկանաք նորան կը նշանակեմ սարփարաստ — եւ մի ընկերոջ ցուցմունքի համաձայն, այդ պաշտօնին համար որոշուած է Ջեւաջուկի աղան՝ Ահմէտ-Ալի-խան (տեղացի), որ համեմատաբար անվնաս անձնաւորութիւն էր ճանաչուած եւ գտնուում էր մեր ազդեցութեան տակ։ Նոյն տակտիկով շարժւում էին եւ Սմկոն եւ Սամի-Դիւանն մեր վերաբերմամբ։

Նրանք խնդրեցին տեսակցութիւն ունենալ մեզ հետ Սարայում, յետոյ Սամի-Դիւան յատկապէս այցելութեան եկաւ Սամսոնին։

Սմկոն ակնկալութիւն ունէր նոյնիսկ մեզ սիրաշահելով մեզանից օգնութիւն ստանալ, մասնաւորապէս ռազմամթերք ճարայի վրայ գնալու համար։

Իսկ Սամի-Դիւանի նպատակն էր այդպիսով ամրապնդուիլ Սալմաստի դատաւորութեան պաշտօնում։ Դա սկզբում եկաւ Սմկոյին աջակցողի անունով, յետոյ շրջանին ծանօթանալուց եւ հող պատրաստելուց վերջ, Սարդարի կողմից իրան դատաւոր յայտարարեց։

Ինչպէս ասացինք Իզո խանի այսպիսի քաղաքականութեան նպատակն էր միայն մեզ սիրաշահել եւ չեզոքացնել. իր այս դիտաւորութիւնը նա ուղղակի արտայայտել էր եւ Սալմաստ գալուց առաջ Մենաւորում[53] ընկեր Արտոյտի մօտ, ասելով վերջինիս որ — թէեւ մենք (ինք ու Սարդար) իմանում ենք որ Թաւրիզում հայեր ուղղակի մասնակցութիւն ունին շարժումներին բայց մենք կարող ենք մոռանալ այդ, միայն դու (Արտոյտ) գրիր Խոյ եւ Սալմաստ որ այստեղ եւս հայեր՝ ձեր ընկերներ, այդպիսի մտադրութիւն չունենան։ Մասնաւորապէս Սալմաստի վերաբերմամբ Իզո-խան եւ նմաններ Սալմաստի վերաբերմամբ մի քիչ զգոյշ էին պահում մակուցիները թէեւ սկզբում մի քիչ զգոյշ էին պահում իրանց հայերի վերաբերմամբ, բայց յետոյ երկար չկարողացան պահել իրանց. օր[ինակ],

Մի օր Փայաջուկից Դիլիման ճանապարհին սպանում է մի փայաջուկցի հայ գինեպան, որ ոչ մի լաւ անցեալ չէր ունեցել. այդ առիթով Սամի-Դիւան ձիաւորներ է ուղարկում Փայաջուկ, ըստ սովորութեան գիւղի աղսակալները[55] Դիլիման տանելու եւ պէտք եղածին պէս տուգանք առնելու ու բաց թողնելու համար առարկելով, որ Փայաջուկից կը լինեն սպանութիւն գործողները։ Մակուցի ձիաւորները գալիս են, բայց առանց առիթ փախցնելու պատահած հայի տուն մտնում ու նեղութիւններ տալիս. մի տան մէջ կողոպտում են նաեւ կանանց վրայի զարդարանքները. դորա վրայ է որ գիւղի երիտասարդները գրգռուելով յարձակւում են ձիաւորների վրայ, մի քանիսին ծեծում են, միւսների ետեւից գնդակ արձակելով փախցնում են։ Դատաւորը այս եղելութեան առթիւ ոչ մի խիստ միջոցի չկարողացաւ դիմել, ի հարկէ կասկածելով հայերին իր դէմ աւելի լարելուց։

Այդ ժամանակներ ստացուեց նաեւ Արեւելեան Բիւրոյի հաւանութիւնը մասնակցելու համար շարժումներին։

Սեպտեմբերի սկիզբն ընկեր Սամսոն ընկերներ Վահաբի եւ Շահէնի հետ անցան Փարոս[56], ուր տեսակցեցան մի կարգ սահմա[նադրական] թուրքերի հետ եւ մասնաւորապէս ընկեր Վահաբ տրամադրեց նորանց կազմակերպուելու ու արձագանգ տալու Թաւրիզի շարժումներին։

Փարոսի ինքնապաշտպանութեան գործն եւս կանոնաւորելուց յետոյ երբ ընկերներ Մինարէթ վերադառնալու են լինում, Փիշնամազ յատկապէս այնտեղ գալիս է ընկեր Սամսոնի մօտ եւ խնդրում նորան Սալմաստից տեղեկութիւններ գրել իրեն դրութեան մասին, որպէսզի ինքն եւս անցնի Սալմաստ շարժումներ սկսելու։

Ընկեր Վահաբի մեր շրջանից հեռանալուց յետոյ նորա հետ պայմանաւորուածի համաձայն, մենք բաւական ժամանակ սպասեցինք կովկասից կռուող ուժեր եւ ռազմամթերք ստանալու, բայց ապարդիւն. այդ ուժերը չափից աւելի ուշացան։

Հոկտեմբերի երկրորդ կիսուն ընկեր Սամսոնի Փիշնամազին գրած մի նամակի հիման վրայ վերջինս գալիս է Ղարաբաղ (Ուրմիոյ լճի եզերք) եւ այնտեղից հրաւիրում է մեզ Աղգիարաթ գիւղ տեսակցութեան (Հոկտ. 24)։ Այնտեղ գնում է ընկեր Սամսոն, բայց տեսակցութեան ժամանակ պարզւում է որ Փիշնամազ ոչ մի լուրջ պատրաստութիւն չունէր, նոյնիսկ մեզանից խնդրելիս է լինում մի քանի տուփ վառօդ որպէսզի գիլզիներ[57] լեցնել տայ եւ մարդկանց զինի, կարծելով որ մի երկու գնդակ արձակելով կարելի կը լինէր մակուցիներին փախցնել եւ Սալմաստը ապահովել նրանցից։ Մեր ընկերը խորհուրդ է տալիս թեթեւ կերպով չվերաբերուել գործին եւ լուրջ պատրաստութիւն տեսնել, մարդիկ ուղարկել թէ՛ Դիլիմանում եւ թէ գիւղերում ուժեր պատրաստելու։

Աղգիարաթի տեսակցութիւնից վերջ լուր հասաւ որ Թաւրիզից սահմանադրական ուժեր են եկել Գիւնէյ, այնտեղ պատժել են մի քանի միապետականների եւ շուտով անցնելու են Սալմաստ եւ որ կազմուած են աւելի քան 1000 հոգուց, Իմամ-Ալի սուլթանի եւ Ալ-Հիւսէյնի ղեկավարութեան տակ։ Այս վերջիններից եւ Փիշնամազից մի նոր հրաւէր ստացանք տեսակցութիւն ունենալու Եավշանլի գիւղում (Հոկտ. 31-ին)։ Տեսակցութեան գնաց դարձեալ ընկեր Սամսոն, ուր ներկայ էր նաեւ Փիշնամազի եղբայր Սադր-Իսլամ։ Այնտեղ պարզւում է որ Թաւրիզից եկող ուժեր եղել են միայն մօտ 15 հոգի, որոնք միացնում են իրանց Գիւնէյում բաւական թուով կամաւորներ։ Ալ-Հիւսէյն եւ Իմամ-Ալի սուլթան վստահեցնում են մեր ընկերոջ, որ իրանց հետ ունին նաեւ 4 թնդանօթներ, բայց յետոյ պարզուեց որ դա ոչ մի ճշտութիւն չէր. այդտեղ նոյնպէս նկատելի եղաւ որ եկող-

53.- Մենաւորը կուս. ծածկանունն էր Ս. Թադէի վանքին Մակուի շրջանին մէջ։

54.- Վահաբ՝ ծածկանունը Արշակ Վռամեանի, անդամ Արեւելեան Բիւրոյի։

55.- Աւագներ, ծերունիներ։

56.- Փարոս՝ Կուս. ծածկանունն էր Ուրմիա քաղաքին։

57.- Պարկուշ, դատարկ փամփուշտի պատեան։

ները բաւականաչափ ռազմամթերք չունէին հետերնին, ուստի նոյն գիշեր բանակցութեան վայրից սուրհանդակ հանուեց դէպի Թաւրիզ ռազմամթերք պահանջելու։ Բանակցութեան արդիւնքը եղաւ այս, որ հետեւեալ օր միացած ուժով պէտք է գրաւէինք Դիլիման։ Փիշնամազը գիշերանց երկու հոգով պէտք է գաղտնի մտնէր Դիլիման, ներսի ուժերը միացնելու ու ներսից էլ սկսելու կռիւը (նախորդ օր Փիշնամազ քաղաք էր ուղարկել զինուած դարաբաղցիներին, որոնք խաղող ծախելու պատրուակի տակ պիտի մնային քաղաքում եւ միանային Փիշնամազին (այդ եղանակին ամէն տարի դարաբաղցիներ մեծ քանակութեամբ խաղող են բերում Դիլիման եւ Սալմաստի գիւղեր)։ Իսկ առաւօտեան արշալոյսին քաղաքի վրայ պէտք է յարձակէին Հաֆիվանի դռնից ընկեր Սամսոն մեր ուժերով, եւ Ալ-Հիւսէյն ու Իմամ-Ալի սուլթան Սուդաղեանի դռնից իրանց ուժերով։ Միջոցներ ձեռք առնուեցան նաեւ որ քաղաքի բանալիները մերոնց տրամադրութեան տակ լինեն եւ քաղաքի դռները ժամանակին բացուեն։

Բանակցութեան գնալուն եւ վերադարձին, ճանապարհի գիւղերում ժողովրդի (թուրք) Սամսոնի եւ իր խմբերի հանդէպ արտայայտած ցոյցերը, խանդավառութիւնը չափազանց էին, բնակչութիւնը տհոլ-զուռնայով էր դիմաւորում եւ ի՛նչ ուրախ արտայայտութեամբ։ գիւղացիները մեծ ու փոքր, կին ու տղամարդ բոլորը շրջապատում էին մեր խումբը, կեցցէներով եւ հազար ու մի մաղթանքներով ուղեկցում նրան, փոքրերը ինչպէս մի տօնական օրում վազվռտում եւ իրանց ուրախութեան ճիչերով օդ լեցնում, մեծերը «Նազրաթ-Աբբաս սիզէ քէօմէկ օլսուն», «Ալլահ սիզի բիզըմիւչուն չոխ կէօրմէսուն» եւ այլ մաղթանքներ կրկնում ժպտադէմ։ կանայք կուրծքերը բացած, ձիերի առջեւն էին գցում իրանց, «զոհւում» էին, եւ շատերը ուրախութիւնից լաց լինում։ Ի՞նչ էր ուզում ասել այդ ժողովուրդը իր այդ ցոյցերով ու արցունքներով կամ ի՛նչ հասկացնել։ զգո՞ւմ էր նա որ շուտով կարեւոր անցքեր են տեղի ունենալու, որ յանուն իր ազատագրութեան գերագոյն զոհողութիւնների առաջ կանգնած էին հայ ֆեդայիները։ այո՛ զգում էր, նա փորձառութեամբ տեսած էր, որ հայ ֆեդայիների խումբը երբ կուռ զինուած մի վայրից շարժւում էր, ուրեմն նա գնում էր ստրուկ եւ տանջուած ժողովրդից խլուած իրաւունքները վերադարձնելու, թէկուզ իր կեանքի գնով, ուստի եւ անհուն երախտագիտութեան զգացումները այդպիսով էր ուզում արտայայտել ցուցացար գիւղացիութիւնը։

Ամբողջ շրջանում ժամ առ ժամ սպասւում էր որ շուտով կը պայթի կռիւը սահմանադրականների եւ միապետականների միջեւ։ Վերջիններից մի քանիսը, համոզուած սահմանադրականների վերջնական յաղթանակին, շտապեցին յարաբերութեան մէջ մտնել մեզ հետ եւ մեր կողմն անցնել (Հոկտ. 31-ին) ինչպէս, թնդանօթաձիգների հրամանատար Սատղ-Խան-Սարթիբ, Սատաղեանի, Սարհանգ, Սայիդ-Ղալկեար՝ Մէհմէտ-Ալի-Խան. բայց արդէն ուշ եւ դորանցով զբաղուելու ժամանակ չլինելով, սկզբում անուշադիր թողինք դորանց դիմումը։

Նոյեմբեր 1-ը վճռական օր էր մեզ համար. կամ այն է մակուցիները, որոնք քրդերի հետ միասին մօտ 200 հոգի կը լինէին, կը պաշտպանէին քաղաքը եւ չէին թոյլ տալ մեզ ներս մտնելու ու այնուհետեւ աւելի անողոք կը դառնային, կամ այն է յաջողութիւնը մեր կողմ կը լինէր եւ գաւառն եւս իր բաժին պարտքը ազատագրութեան գործում կատարած կը լինէր։

Առաւօտեան ժամը 5-ին Սամսոն 14 ընկերներով մօտեցաւ Դիլիմանին երբ հատ հատ հրացանձգութիւնը սկըսուած էր արդէն, մերոնք շտապում են ուղղակի դէպի ներս Սատաղեանի դռնով, որ բաց էր արդէն. բազարի մօտ մի քարվանսարայից զինուած դուրս գալու պատրաստութեան մէջ են լինում մակուցիներ եւ քրդերը, բայց մերոնց համազարկների տակ մի քանիսը սպանւում եւ վիրաւորւում են, մի մասը դուրս փախչում իսկ մնացածները դարձեալ Քարվանսարայում են ապաստանում։ Մեր խումբը դրօշակը պարզած առաջանում է բազարի միջով դէպի Փիշնամազի դուռը. հրացանների ձայնից քաղաքի ժողովուրդը արդէն փողոցներն են լեցւում, դարձեալ խանդավառութիւն, դարձեալ ցոյցեր. մերոնք անցնում են երգելով եւ հասնում որոշեալ տեղը. կտուրներում դիրքեր բռնելով սկսում են գնդակներ տեղացնել Սամի-Դիւանի բնակարանի վրայ, որտեղից նոյնպէս սկսում են գնդակով պատասխանել. այդ ժամանակ մի տասնեակ մերոնցից առաջ է անցնում եւ գրաւում դատաւորի տուն, ծառայողները յուսահատ դիմադրութիւն են ցոյց տալիս. մի քանիսը վիրաւորւում են, մնացածները փախչում. բաւական երկար տեւող կռիւը ժամանակ է տալիս Սամի-դիւանին Ամիր-Թումանի եւ մի քանի ծառայողների հետ փախչելու եւ քաղաքից դուրս գալու։ Քիչ յետոյ ամբոխը որ վրէժխնդրութեան թոյնով լեցուած էր, ամբողջապէս թալանում է դատաւորի գոյքը։ Կռուի ժամանակ քաղաք է հասնում նաեւ Ծառաստանի մարտական խումբը ընկերներ Ցոլակի եւ Գարեգնի ղեկավարութեան տակ. աւելի ուշ երբ քաղաքի գրաւումը վերջացած էր հասնում են եւ Ալ-Հիւսէյնի ու Իմամ-Ալի սուլթանի ուժերը։ Մակուցիները եւ քրդերը մաս մաս նոյնպէս խոյս են տալիս քաղաքից. քարվանսարաներում մնում են մի քանի քրդեր, որոնք եւս զոհ են լինում ժողովրդի վրէժխնդրութեան։ Այդ օր թշնամիներից սպանւում եւ վիրաւորւում են 12 հոգի։

Դիլիմանը գրաւելուց յետոյ միջոցներ ձեռք առնուեցան նորա պաշտպանութեան համար, նշանակուեցան որոշ դիրքեր, որոնց վրայ հսկում էին պահապան խմբեր. մի տասնեակ եւս մերոնցից թողինք մասնակցելու քաղաքի պահպանութեան։

Հին քաղաքը (Սալմաստի երկրորդ քաղաքը) որ ապաստան տուեց Սամի-Դիւանին եւ որ ինչպէս նախկին շարժումների ժամանակին նոյնպէս եւ ներկայումս Սալմաստի Վանդէան պէտք է լինէր. մի րոպէ մեր յաջողութիւնների ազդեցութիւնից ընկճուած, իւր ներկայացուցիչների միջոցով դիմում արեց մեզ, ասելով թէ — «մենք (Հին-Քաղաքացիներ) դիլիմանցիների հետ թէեւ չենք կարող հաշտուել եւ նորանց հետ գործ ունենալ (Հին-քաղաք եւ Դիլիման անձնական թշնամութիւն ունին միմեանց հետ տարի ու կէսէ ի վեր) բայց դուք ինչպէս կարգադրէք պատրաստ ենք ձեզ լսելու. ծովն էլ տանելու լեցնելու լինէք մենք կը հնազանդուենք» —։ Ներկայացուցիչները միանգամայն յայտնում են մեզ թէ իրանք պահանջ են դրել Սամի-Դիւանին որ անմիջապէս հեռանայ Հին-Քաղաքից։ Մենք նկատի ունենալով որ եթէ Հին-Քաղաքը անջատուած մնայ կարող է դժուարութիւններ ստեղծել մեզ համար, նրա ներկայացուցիչներին հրաւիրեցինք Դիլիման եւ հաշտեցրինք դիլիմանցիների՝ մասնաւորապէս Փիշնամազի եւ Սատր-իսլամի հետ։ Բայց հին-քաղաքացիներ իրանց խոստումը չպահեցին եւ շատ չանցած դարձեալ մակուցիների կողմ անցան։

Ինքնապաշտպանութեան ինչպէս եւ վարչական գործերը առաջ տանելու համար Դիլիմանում ընտրուեցան մարմիններ. 1) Խառն կոմիտէ, որին մասնակցում էին մեր ընկերներից երկու հոգի. 2) Անջիման՝ որի համար դարձեալ ընտրեցինք երկու հայ ներկայացուցիչներ. 3) Մէջլիսի ջէնք (զինուորական խորհուրդ), դատական, ոստիկանական եւ այլ մարմիններ։ Մասնաւորապէս առաջին երեք մարմինների նիստերին գրեթէ շարունակ մասնակցում էր ընկեր Սամսոն։ Այդ մարմինները մինչեւ կովկասցի թուրք գործիչների գալը եւ նոյնիսկ այնուհետեւ ոչ մի գործ չէին անում առանց մեր ընկերոջ խորհուրդին. նորանք բացարձակ կերպով ասում էին շատ անգամ թէ — «մենք ոչինչ չգիտենք եւ չենք կարող անել առանց ձեզ, դուք մեր ուսուցիչներն էք եւ այբուբենից սկսած պէտք է սովորացնէք մեզ գործ տանելը»։

Հին-Քաղաքից եւս Սամի-Դիւան քաշուելուց յետոյ գնաց քէօրէսինցիների շրջան (Սալմաստի հարաւ արեւմտեան կողմ) եւ մնաց Օրբանում։ Նկատի ունենալով որ Սամի-Դիւան կարող էր մակուցիներից նոր ուժ ստանալ եւ վերադառնալ դարձեալ դէպի Սալմաստի գիւղերը, մտածեցինք ամրացնել Սարամէրիկի գիծը որ գտնւում է Խոյի ու Սալմաստի սահմանին մօտ. այդտեղ ուղարկեցինք Քէչիշ-օղլին մեր մի քանի ընկերներով. որոշ չափով եւս միւջահիդներ ուղարկուեցան Սուլաւում հսկելու համար, բայց վերջիններս երկար չեն մնում այնտեղ, լուր են առնում թէ Սամի-Դիւան Օրբանից ուզում է գալ դէպի Սուլաւ, եւ այդ բաւական է լինում որ նորանք թողնեն գիւղը ու գան Ռկավա։ Այնուհետեւ Սարամէրիկ գնաց ընկեր Սամսոն թուրքիկ խմբով, բաղկացած մօտ 30 հոգուց. այնտեղ գալիս են նաեւ Փիշնամազ եւ Ալ-Հիւսէյն ու Իմամ-Ալի սուլթան իրանց խմբերով։ Սամսոն առաջարկում է ուժերը բաժանել չորս կէտի վրայ. մի գծի վրայ գտնւում են Վարդան, Սարամէրիկ, Ռկավա եւ Զիչակ գիւղերը. այդտեղեր ամրացնելուց յետոյ թշնամին այլեւս ոչ մի հնարաւորութիւն չէր ունենայ Սալմաստ մտնելու։ Սամսոն մեր ուժերով պէտք է մնար Սարամէրիկ, Փիշնամազ՝ Ռկավայում, իսկ Ալ-Հիւսէյն եւ Իմամ-Ալի սուլթան պէտք է մնային մէկը Վարդանում եւ միւսը՝ Զիչակում, բայց Փիշնամազը չընդունեց այս առաջարկը։ Սա պնդում էր յարձակուել եւ Օրբանի վրայ եւ այնտեղից էլ քշել մակուցիներին։

Նոյեմբ. 8-ին Սարամէրիկ ուղարկեցինք նաեւ մեր մարտական խմբերից մօտ 70 հոգի, ընկերներ Ցոլակի, Գարեգնի եւ Վահրիճի ղեկավարութեան տակ։ Հետեւեալ օր տեղի պիտի ունենար յարձակում մակուցիների վրայ։ Միւջահիդների ուժը հասնում էր 4-500 հոգու։ Նոյեմբեր 9-ին տեղի ունեցաւ յարձակումը եւ Օրբանի կռիւը։

Նախ գիշերանց ըստ որոշման ընկեր Սամսոն մօտ 20 ձիաւորով գնում է Սուլաւ գիւղ, նախ այդտեղ գրաւելու համար. եթէ մակուցիներ լինէին այնտեղ կռիւ պիտի սկսէին մերոնք մինչեւ բանակի հասնիլը, բայց երբ մերոնք հասնում են Սուլաւ տեսնում են որ Սամի-Դիւան, որ այդտեղ էր եղել նախորդ օր իր բոլոր զինուորներով հեռացել էր այնտեղից դէպի Օրբան։ Սուլաւում են անցկանում մերոնք գիշերը. առաւօտ Սարամէրիկից նորանց են գնում միանալու մեր մնացած ուժերը եւ միւջահիդները։ Նոյն գիշերն էր որ Սուլաւում մերոնք բռնում [են] Իզօ-Խանի մի նամակը, որ գրած էր Եզտիքանից ուղղուած Սամի-Դիւանին այս բովանդակութեամբ թէ — «մի քանի օր էլ դիմացէք մեզ օգնութեան է հասնելու Խոյից Նամօ-խան իր մլանցի քիւրդ ձիաւորներով»— նամակում քաջալերում էր միանգամայն Սուլաւի խալիֆան Բահադին էֆենտիին։ Սուլաւից դուրս գալով մերոնք ուժերը բաժանում են եւ միւջահիդների հետ Օրբանի շրջակայ լեռները բռնելով պաշարում են Օրբանը. սկսւում է կռիւը որ տեւում է մինչեւ իրիկուան կողմ. Սամի-Դիւան անկարող այլեւս դիմադրելու հաւաքում է իր ուժերը եւ մի կողմով դուրս է գալիս գիւղից. մերոնք նետւում են կռիւ տալով, Սամի-Դիւան փախչում է Եզտիքան, մեր ընկերների մի մասը առաջանում են մինչեւ Քէօփրիլան գիւղի վերեւի բլուր եւ կրակի տակ առնում գիւղը. այնտեղ գտնուող միապետական ուժերը նոյնպէս թողնում են գիւղը եւ քաշւում դէպի Եզտիքան տալով մի քանի զոհեր սպանուած եւ վիրաւոր, իսկ մեր ընկերներից Կարոն, Վարդան, Զիբոն կըռւում են մի ձորի մէջ Սամի-Դիւանի ուժերից մի ուրիշ մասի հետ, որոնք նոյնպէս յաղթուած ցրւում են թողնելով իրանցից 30 սպանուածներ, բացի վիրաւորուածներից. մերոնք այդտեղ գերի բռնում են 3 հոգու եւ գրաւում են 2 հրացան։

երբ այսպէս մերոնք կռուով զբաղուած են լինում, միւսահիդները մտնում են Օրբան, ամբողջապէս թալանում եւ գիւղը հրդեհում. այս բանը տեղի է ունենում հակառակ մերոնց կամքին, այնպէս որ մերոնք առաջարկում են Փիշնամազին եւ Ալ-Հիւսէյնին ու Իմամ-Ալի սուլթանին, որ եթէ այսպիսի դէպքեր կրկնուելու լինեն իրանք այլեւս չեն մասնակցելու կռիւներին: Կռուի վայրում առաջարկւում է աւելի առաջ գնալ եւ յարձակուել նաեւ Եզտիքանի վրայ, բայց մերոնք արդէն բաւական յոգնած լինելով եւ առաւօտեանից ի վեր ոչինչ կերած չլինելով, այդ առաջարկութիւն չի անցնում. բանակը վերադառնում է դարձեալ Սուլաւ, Սարամէրիկ եւ Ոկավա: Սարամէրիկից մեր ոտաւորների մեծ մասը վերադարձրինք իրանց տեղեր եւ մենք մնացինք մօտ 30 ձիաւոր եւ 20 ոտաւոր ուժերով: Իմամ-Ալի սուլթան եւ Ալ-Հիւսէյն եւս յայտնեցին որ իրանք գնալու են Շաքարեազ գիւղ, մեր բռնած վայրից դէպի արեւելք՝ դարձեալ Խոյի սահմանին մօտ:

Օրբանի կռուից յետոյ հետեւեալ առաւօտ Իզօ-խան մեզ մօտ ուղարկեց Եզտիքանից երկու պատգամաւորներ (վանքեցի հայեր, որոնք մեր ընկերներն էին եղել, բայց Իզօ-խան վերցրել իր բանակի հետ էր բերել իբրեւ զինուորներ), որպէսզի մեզ մի կերպ չէզոքացնի. հարցընում էր միանգամայն, թէ մենք ինչից դրդուած ենք մասնակցում եւ արդեօք կազմակերպութեան կարգադրութեա՞մբ է այդ: Մենք պատասխանեցինք, որ Դաշնակցութեան որոշումն է այդ եւ ոչ մի պարագայում չենք կարող ձեռնպահ մնալ կռիւներից: Պատգամաւորները որոնք ի հարկէ լաւ էին հասկանում մեզ, խոստացան մեզ որ իրանք եւս իրանց կողմից տրամադրեն Իզօ-խանին ետ դառնալու:

Նոյեմբ. 10-ին երեկոյեան կողմ Փիշնամազ եկաւ մեզ մօտ եւ առաջարկեց առանց ժամանակ կորսնցնելու, դարձեալ սկսել յարձակումը եւ ուղղակի Եզտիքան գնալուց ու գրաւելուց վերջ առաջանալ դէպի Խոյ, նախորդ օրուայ յաջողութիւնից տրամադրուած: Մեր ընկերներից մասնաւորապէս Սամսոն պնդեց, որ յարձակում գործելը ձեռնտու չէ. դէպի Խոյ առաջանալով մենք Սալմաստն ենք թողնում անպաշտպան. մենք վրստահ էինք որ եթէ Եզտիքանը գրաւելու լինենք, չպիտի կարողանայինք այնտեղ ամրացնել, որովհետեւ միւսահիդները պէտք է պահպանէին այնտեղ, որոնք մեր՝ հայերիս դէպի Սարամէրիկ կամ ներս վերադարձին երբեք չպիտի կարողանային պաշտպանել, ու մեր ետեւից նորանք էլ վերադառնային, ինչպէս նախորդ դէպքերում փաստով տեսնուած էր: Փիշնամազ նորից ու նորից պնդեց իր առաջարկի վրայ, վերջապէս մենք էլ պարտաւորուեցանք համաձայնել առայժմ մինչեւ Եզտիքան առաջանալը: Գրեցինք Շաքարեազ Իմամ-Ալի սուլթանին եւ Ալ-Հիւսէյնին որ առաւօտեան նորանք էլ իրանց ուժերով առաջանան Կարաթէփէի կողմից դէպի Եզտիքան, միւս կողմից էլ մենք գնալով. թշնամուն մէջտեղ կ'առնէինք: Նոյեմբ. 11-ին սկսուեց յարձակումը:

Առաւօտ կանուխ առաջ է շարժւում սահմանադրական բանակը. մերոնք նախ բռնում են Օրբանի ուղղութեամբ եղող լեռների վրայ մի քանի դիրքեր, որպէսզի եթէ Օրբանում դարձեալ միապետական ուժեր հաստատուած լինեն, այդտեղից արգիլեն նորանց գործողութիւնները. մեր ոտաւորները որ ինչպէս ասինք, պակսեցրել էինք, մնացին Սուլաւի բլուրների վրայ դիրքեր բռնած մերոնց ետեւը պաշտպանելու համար: Իսկ բանակը առաջ անցնելով բռնեց Եզտիքանի դիմաց գտնուող բլուրները. միւսահիդները բռնեցին Զէյվա գիւղի ուղղութեամբ եղած բլուրները, իսկ մերոնք երեք-երեք բաժանուած վերստերով միմեանցից հեռու բռնեցին Քէսփրիլանի ուղղութեամբ եղած բլուրները, Փիշնամազը որ պէտք է լինէր միւսահիդների հետ եւ նրանց ղեկավարէր այդտեղ պնդում է, որ Սամսոն անպատճառ մեր գինուորներից 2-3ին իրան ընկերացնի, առարկելով թէ առանց նորանց մի քայլ առաջ չի դնելու. իր պահանջին բաւականութիւն տրւում է: Իզօ-խան սահմանադրական բանակի մօտենալը տեսնելով դուրս եկաւ Եզտիքանից. այդ ատեն արդէն սահմանադրականների դիրքերից սկսեց հրացանաձգութիւնը, բայց Իզօ-խան փոխանակ դիմադրութիւն ցոյց տալու ետ էր դառնում դէպի Խոյ. չհասկացուեց թէ ինչ նպատակով գործեց նա այդ շարժումը, միայն շատ չանցած, նկատւում է որ Եզտիքանի կողմից վերադառնում է միապետականների բանակը եւ այս անգամ աւելի ստուարացած. նոյն րոպէին Նամօ Խան հասած է լինում Խոյից հետը բերելով մօտ 700 մլանցի քրդերը (ձիաւոր): Կռիւը վերսկսւում է եւ այս անգամ շատ բուռն կերպով. մակուցիներ եւ քրդերը յարձակւում են նախ միւսահիդների կողմ եղած դիրքերի վրայ, որոնք շատ չի անցնիլ սկսւում են պարպըւել. այդ դիրքերի մօտ եղող մեր ընկերները կռւում են հերոսաբար. դրանց օգնութեան է գալիս Սամսոն երեք ընկերներով. երեք անգամ քրդերի յարձակումը ետ են մղում մերոնք. յարձակողները դժուարանալով մերոնց կողմից առաջ գալ, եւ նկատելով որ միւսահիդների կողմը թուլանում է եւ դիրքերը պարպւում են (միւսահիդները արդէն դասալիք են լինում եւ սկսւում են ետ քաշուել) այն կողմից են ուղղում իրանց յարձակումը եւ փորձում մերոնց շրջապատել: Նոյն ժամանակ կռիւը սկսւում է եւ Օրբանի կողմ. ինչպէս որ ենթադրւում էր, ճշտւում է. Օրբանից դուրս են գալիս մի խումբ միապետականներ եւ աշխատում ետեւի կողմից մերոնց շրջապատել, բայց նախամտածուած դիրքերից կտրում են նորանց առաջխաղացութիւնը. քիւրդերը քաջալերուած միւսահիդների փախուստից եւ տեսնելով մեր ուժերի քչութիւնը, այս անգամ յարձակում են աւելի մեծ ուժերով, ուղղակի գրոհ տալիս. մերոնք չէին կարող ուղղակի ետ քաշուել, որովհետեւ թուրք կամաւորները որոնք չէին կարողացած շատ առաջ գնալ, ամբողջապէս քրդերին զոհ

պիտի լինէին. սկսւում է կրիտիքական րոպէն. մերոնք առանց արիութիւն կորսնցնելու քաջաբար կռուելով սկսում են միանգամայն նահանջել, ժամանակ տալով ոտաւորներին ճամբայ առնելու. կռիւ ու նահանջը տեւում է 6 ժամ. նահանջի ժամանակ թուրք միւսահիդներից եւ կամաւորներից զոհւում են մօտ 40 հոգի, իսկ մեր ոտաւորներից երկու հոգի սարամէրիկցիներ, որոնցից մէկն էր մեր ընկեր Դադաշ: Առաւօտ մերոնց Սարամէրիկից դուրս գալու ժամանակ Դադաշ մի քանի ընկերներով մնացել էր գիւղում գիւղի պահապանութեան համար. բայց շատ չանցած, եբր կռիւ սկսւում է Եզտիքանի մօտ, դա չի կարողանում համբերել, եւ հակառակ իր հասակին (50-55 տարեկան) վերցնում է հրացանը եւ ոտքով մի ընկերոջ հետ կռուի վայրն է շտապում ուր եւ նահատակւում է: Դադաշի ամբողջ կեանքը մի յեղափոխական պատմութիւն էր եղել եւ նորա անձնուէր ու համեստ գործունեութիւնը, իբրեւ գիւղացի՝ հայ ֆետայիներին համար տածած իր գուրգուրանքն ու նորանց ընծեռած աջակցութիւնը, Սալմաստի յեղափոխական պատմութեան ամենագեղեցիկ դրուագն են կազմած եղել, աւելի քան քսան տարիներէ ի վեր: Եւ միայն հայ ֆետայու համար բաբախող նորա սիրտը զոհուեց նորա գծած ուղիի վրայ, ուր կեանքերն են անմահանում, ուր մարդիկն են աստուածանում: Մեր խումբը կանգ առաւ Սարամէրիկում. այդ ժամանակ սահմանադրական ուժերը ամբողջապէս արդէն շտապել էին դէպի ներսի գիւղեր, մերոնք մնացել էին միայնակ 17 ընկերներով. մակուցիներ եւ քրդեր, ուզում են աւելի առաջանալ եւ մտնում են Չիչակ, իսկ մի մասը առաջ անցնում, նոյն ժամանակ Շաքարեազի կողմից իր խմբով գալիս է Իմամ-Ալի սուլթան, որ հակառակ կարգադրուածի Շաքարեազից, ոչ մի շարժում չէր արել. քրդերը կտրում են նորա առջեւ եւ մի փոքր կռուից վերջ նորան էլ քշում: Մեր ընկերներ Ոկավայի մօտերքից կրակ են բացում քրդերի վրայ եւ յաջողում են, ոչ միայն քրդերին Չիչակից հանել այլ եւ աւելի առաջ անցողներին ետ դարձնել: Արդէն երեկոյ լինելու վրայ էր, ընկերները նկատի ունենալով, որ շրջակայ գիւղերի բնակչութիւնը վարդանցիներ, սուլաւցիներ, ռկաւցիներ, չիչակցիներ, այդ օրուայ անյաջողութեան տպաւորութեան տակ մատաղ էին տարել Իզօ Խանին եւ հպատակութիւն յայտնել, որ միւսահիդները եւ նոյնիսկ Փիշնամազ արդէն վերադարձել էին եւ որ ներսի գիւղերը այժմ հարկաւոր էր աւելի ամրացնել, նաեւ այն որ այդ օրուայ կռւում հետերնին ունեցած փամփուշտները մեծ մասամբ սպառուել էին, որոշում են սարամէրիկցիներին փոխադրել դէպի ներսի գիւղեր Հաֆթվան, Փայաջուկ, Ղալասար եւ պարպել գիւղը. այդպէս էլ անում են, ուստի գիւղումն են մնում մինչեւ գիւղացիների փոխադրուելը. ուշ գիշեր վերադարձան եւ իրանք: Կարելի չեղաւ փոխադրել միայն գիւղացիների ցորենները, երկրագործական գործիքներ եւ առհասարակ ուտելիքի պաշարը: Այսպիսով կանխատեսնուած է լինում եւ այն վտանգը, որի առաջ պիտի կանգնած լինէինք ամենայն հաւանականութեամբ, երբ մակուցիներ եւ քրդեր կ'արշաւէին դէպի Դիլիման ու ներսի գիւղերը եւ Սարամէրիկի յարաբերութիւնը բոլորովին կը կտրէին:

Նոյեմբ. 11-ի անյաջողութիւնը լքում առաջացրեց եւ առհասարակ Սալմաստի ամբողջ գիւղերում ու Դիլիմանում: Մուանջուղն եւս հպատակութիւն յայտնեց Իզօ եւ Նամօ խաներին, յուսալով որ այդպիսով կ'ազատուէր զոհերից եւ թալանումներից. բաւական եղաւ որ մլանցիներ մտան գիւղ, այլեւս ոչ մի բռնութիւն չեղաւ որ գործ չդրին գիւղացիների վրայ. ամբողջ գիւղը թալանեցին եւ շատերին սպանեցին ու վիրաւորեցին. այդ տեսնելով միւս գիւղեր որոնք տրամադրութիւն ունէին նոյնպէս հնազանդութիւն յայտնելու, ետ կեցան իրանց մտադրութիւնից, կամ իրանց վայրերը ամրացրին եւ կամ բնակչութիւնը փոխադրուեց հայոց գիւղերը ու Դիլիման: Հին-Քաղաքը որի սահմանադրական լինելը արդէն կասկածելի էր, նոյնպէս դիմեց Իզօ-խանին ու հնազանդութիւն յայտնեց:

Դիլիմանցիները յոյս չունենալով իրանց ուժերի վրայ դիմեցին Ճարայի օսմ. գայմագամին եւ նորանից պաշտպանութիւն ու հովանաւորութիւն խնդրեցին, դորա արդիւնքը այն եղաւ որ Սոմայի քրդերից ուղարկուեցան Դիլիմանի պաշտպանութեան համար. նմանօրինակ միտք ծագեց եւ հայ գիւղերում բայց մենք արգիլեցինք այդ ուղղութեամբ գործնական քայլեր անել:

Իզօ եւ Նամօ խաներին եկաւ միացաւ նաեւ Սմկոն իր ձիաւորներով, որով միապետականների ուժը հասնում էր 3-4000-ի: Սմկոն եւ Նամօ խան գրաւեցին Ահրեւան գիւղը, այնտեղ հաստատուեցան եւ գիւղը մինչեւ վերջին ստացուածը թալանել տալուց յետոյ հրդեհեցին: Իսկ Իզօ-խան հաստատուեց Հին-Քաղաքում:

Նոյեմբ. 14-ին Սաւրայում մեր ընկերները կտրում են Ահրեւանից թալան բերող քրդերի ճանապարհը, որոնցից 3-ին սպանում եւ 5-ին վիրաւորում են, ետ խլելով թալանի մեծ մասը: Մինչեւ այս ժամանակ, պէտք է ասել, որ մեր յարձակողական եւ ինքնապաշտպանական գործողութիւնները տանում էինք մեր տեղացի ուժերով, որոնց թւում կային միայն 4 ոչ-տեղացի ընկերներ, Վասպուրականից եկած եւ այստեղ մնացած: 15-ին Փարոսից[56] հասաւ Սմբատի[30] խումբը, որին ուղարկեցին Սաւրա՝ իբրեւ աւելի վտանգի ենթակայ վայր, աւելի ամրացնելու: Այնտեղից ընկերները երեք անգամ ընդհարում ունեցան Իզօ-խանի մարդկանց, հին-քաղաքացիների եւ քրդերի հետ, առաջիններից խլեցին 13 ուղտեր, 4-ը պաշարով բարձուած, ուղարկուած Սարդարի կողմից: Սաւրա՝ ընկած Հին-Քաղաքի եւ Ահրեւանի միջեւ, մի տեսակ արգելք էր Իզօ-խանի եւ Նամօ-խանի հեշտ ու կանոնաւոր յարաբերութեան եւ դորանք շատ կը ցանկանային անշուշտ այդ կէտը ձեռք բերել, բայց չհամարձակուեցան: Սմկոն մտադրութիւն ունեցաւ նոյնիսկ գնալ եւ Խոսրովա նստիլ, որպէսզի երեք կողմից պաշարած լինեն Սաւրա, բայց դարձեալ անյաջող:

Մակուցիներ եւ քրդեր Բարքշլու եւ Սատաղեան գիւղերին եւս մօտեցան տաւար եւ այլն թալանելու, բայց մերոնք եւ Մահմետ-Ասկարով դրանց առաջին փորձերին դիմադրելով, նորանք այդ ուղղութեամբ չառաջացան այլ եւս։

Նոյեմբ. 21-ին մակուցիները կազմում են վերջին եւ վճռական յարձակումը Դիլիմանի վրայ, որի պաշտպանութեան մասնակցեցան եւ մերոնք. մակուցիների փորձ ի զուր անցաւ։

Սրանից առաջ արդէն մակուցիներ 2 անգամ փորձ արել էին Դիլիման մտնելու, բայց անյաջող։ Յիշեալ օր ընկեր Սամսոն 7 ընկերներով Դիլիմանում էր գտնուում գործով։ Կէսօրից 2 ժամ անցած սկսւում է յարձակումը՝ Սմկոն իր ձիաւորներով մի կողմից, իսկ Նամօ-Խան եւ Իզօ-Խան իրանց ուժերով միւս կողմից. դորանք գալիս էին այդ օր արդէն Դիլիման մտնելու հաստատ մտադրութեամբ, բերելով հետերնին նաեւ սանդուխներ՝ 15 հատ՝ պարիսպներ բարձրանալու համար։ Սամսոն ընկերներով բարձրանում է պարիսպների վրայ՝ այն կողմից, որտեղից գալիս էր թշնամու գլխաւոր ուժը, Իզօ-Խանի թնդանօթների պաշտպանութեան տակ. մերոնց գնդակների հարուածների տակ թշնամին սկսում է կասիլ իր թափի մէջ, մի մասը մտնում է պարիսպների դիմաց գտնուող մի այգու մէջ եւ նորա պատերի տակ պաշտպանուելով կռիւը շարունակել[ու], բայց այնտեղ եւս նորանք ապահով չեն կարողանում լինել մերոնց շեշտակի տեղացող գնդակների տակ եւ պարտաւորւում են թողնել իրանց դիրքերը։ Պարիպների մի ուրիշ կէտում կռւում էր Մ. Սակարով իր կովկասցի միւջահիդներով, իսկ տեղացիները ընդհանրապէս եւ սոմայեցի քրդեր (վերջիններս Թամուրտ-Ջանգօ եւ Իսմայիլ-Աղա ցեղապետների հրաւիրանօք եկել էին Դիլիմանի պաշտպանութեան համար) մինչեւ վերջ հանդիսատեսի դերում մնացին։ Կռիւը տեւեց 3 ժամ, միւջահիդներից սպանուեց միայն 1-ը, իսկ մակուցիները պարիսպների առջեւ թողին 15-20 զոհ. արեւմուտի ժամանակ մակուցիները յոյս կտրած քաղաք մտնելուց, հաւաքեցին իրանց զոհերը եւ խուճապով ետ ընկրկեցան. նորանցից մի մասը նոյն երեկոյ ուղղակի ցիր ու ցան՝ մինչեւ Խոյի սահմաններն անցան։ Մեր ընկերները մտադրութիւն են ունենում դրանց փախուստի ժամանակ, դուրս գալ նոյնիսկ քաղաքից եւ յարձակում գործել, բայց կասկածում են քաղաքում գտնուող քրդերից, որոնց հետ թշնամական յարաբերութեան մէջ էինք եղել ամբողջ ինքնապաշտպանական կռիւների ընթացքում։ Այնուհետեւ Սմկոն եւ մակուցիները թողնում են Սալմաստը, առաջինը քաշւում է Սուլաւ եւ յետոյ դարձեալ Կոթուր, իսկ վերջինները իրանց ուժերը ամփոփելով կեդրոնանում են Շաքարեազ գիւղում, որտեղից եւ վերադառնում են Խոյ (Նոյեմբ. 24-ին)։

Այնուհետեւ կռիւները փոխադրուեցան Խոյի շրջան. ուստի նկատի ունենալով որ այնտեղ մեր ուժերը անբաւական են, Սմկոյին իր խմբով ուղարկեցինք այնտեղ, մինչեւ որ Գ-Ափից[16] Խոյ հասան մեր սպասած ուժերի մի մասը, եւ Սմբատ վերադարձաւ դարձեալ Փարոս։

Դեկտեմբերի սկիզբները Վրէժից[14] այստեղ հասաւ Քեռու[19] խումբը բաղկացած 24 հոգուց, բայց այդ խումբը երկար չմնաց այստեղ. 6 հոգի ուղարկուեցան Աւարայր[35]. 6 հոգի մնացին այստեղ, իսկ մնացածները Դեկտ. 29-ին Քեռու հետ վերադարձան Թաւրիզ։

Խոյի կռիւների ժամանակ բոլոր հնարաւոր միջոցներով աշխատեցանք օգնել ընկերներին. այնտեղ ուղարկեցինք նախ Գուրգէնի խումբը կազմուած 10 ձիաւոր ընկերներից, յետոյ մի երկրորդ խումբ՝ ոտաւոր կազմուած 12 հոգուց. ուղարկել ենք ըստ կարելոյն ռազմամթերք եւ դրամ. մի հսկողութեան տակ կազմել ենք տուել մէջլիսի ջէնքին այստեղի միւջահիդներից խմբեր, զինելով նրանց Սաթթար-Խանից ստացուած 12000 ծայրերով[36] որ նոյնպէս ղրկեցինք։ Քեռու խմբի հետ Սաթթար-Խան մեզ ուղարկեց 12000 վարանդելի ծայր եւ ասել էր թէ միայն մեզ է վստահանում այդ ապրանք եւ որ մեր հսկողութեան տակ պէտք է գործածուի։

Խոյ ուղարկուեցան նաեւ Ուրմիից եկած կամաւորների խմբեր ու սոմայեցի քրդեր։ Թէլէֆոնով հաղորդակցութեան մէջ լինելով Խոյի հետ, ընկեր Սամսոնի միջոցով շարունակ յարաբերութեան մէջ էինք, որի միջոցով եւ ուղարկւում էին պէտք եղած խորհուրդներ։ Մրագրուեց Արտազի Բորենու տեռորը, որի համար յանձնարարեցինք ընկեր Մաշտոցին եւ դորա համար էլ ուղարկեցինք նորան որոշ գումար մը. դժբախտաբար կարելի չեղաւ յաջողցնել այդ ձեռնարկը։ Երբ Խոյ էին եկել Նարիմանցին, Մտոն, եւայլն, ընկերների մէջ սկըսւել էին մի կարգ անհամաձայնութիւններ, որի համար եւ ստեղծուած էր անկերպարան դրութիւն. ընկեր Սամսոն գնաց այնտեղ Քեռու հետ, վերջ տուին այդ բոլորին, ընկերներից կազմեցին մի մարմին որ պիտի ղեկավարէր գործը խորհրդակցութեամբ եւ որ իր ներկայացուցչի միջոցով կապ պիտի պահպանէր տեղւոյն պարսիկ գործիչների, մէջլիսի ջէնքիկում, Անջումանի հետ։ Կարգադրեցին որ Անջիմանը հոգայ եւ մեր ընկերների ծախքը եւայլն։ Աւելի վերջ երբ Ամօղլիի հետ անհամաձայնութիւն էին ունեցել մեր ընկերները ու ամբողջ խմբով վեր կացան եկան այստեղ, Մոկացի Գրիգորի խմբապետութեամբ, դարձեալ ետ ուղարկեցինք նորանց. այս առթիւ էր որ ընկեր Սամսոն, երբ թէլէֆոնով խօսեց Ամօղլու հետ, վերջինը պարտաւորուեցաւ մի քանի անգամ ներողութիւն խնդրել։

Ներկայիս Ցունուարի վերջին կէսից սկսուած Սալմաստից Թաւրիզ եւ Ջուլֆա հաղորդակցութեան ճամբաները արդէն բոլորովին կտրուած էին, միապետականների Սոֆիան եւ ապա Մարանդ գրաւելով ու Թաւրիզը պաշարման վիճակի մէջ դնելով։

Մարտի սկիզբները մենք եւ Սայիտ-Մէմալիք (Ասկարովից վերջ սա էր ստանձնել գործերի ղեկավարութիւնը այստեղ) տեղեկութիւններ էինք ստանում Թաւրիզից որ պաշարումը օրէ օր սաստկանում է, եւ անհրաժեշտութիւն էր զգացւում, որ այստեղից եւս ուժեր շարժուեն, նախ Գիւնէյ ճանապարհը բացելու, ապա միացած Թաւրիզի ուժերի հետ բանալու նաեւ Ջուլֆայի գիծը։ Մեր ունեցած ուժերից կազմեցինք մի խումբ եւս 15 հոգուց բաղկացած եւ Վահանի առաջնորդութեամբ ուղարկեցինք Գիւնէյ. այնտեղ գնացին նաեւ Փիշնամազ իր ուժերով, Սոմայից կանչուած ցեղապետներ Ամատ աղան, Թամուրէ-Ջանգոն եւ Իսմայիլ-Աղան. Խոյի կողմից եկան վերոյիշեալներին միանալու եւ Իբրահիմ-Բէգ ու Ղոչալի-Սուլթան։ Այս ուժերը կեդրոնանում են նախ Թասու գիւղում. միապետականները ծանօթ չլինելով սահմանադրականների ուժին, Մարտ 13-ին մի յարձակում են գործում Թասուի վրայ բայց յաղթւում են եւ մի քանի զոհեր տալով, ետ են քաշւում։ Այնուհետեւ բանակը բաժանւում է երկու մասի. առաջինը Իբրահիմ-Բէգի, Ղոչալի-Սուլթանի, Թամուրէ-Ջանգոյի եւ Իսմայիլ աղայի առաջնորդութեամբ գնում է Դիզէ գիւղի վրայ, իսկ երկրորդ մասը Վահանի, Փիշնամազի եւ Ամարի ղեկավարութեամբ աւելի առաջ է անցնում Թիլ գիւղի վրայ. Մարտի 15-ին երկու գիւղերն եւս գրաւում են։

Թիլի գրաւումը տեղի է ունենում հետեւեալ պայմանների մէջ. կարգադրւում է, որ Ամար աղան գիւղից շուրջ դիրքեր բռնէ, իսկ Վահան ու Փիշնամազը յարձակում գործեն գիւղի վրայ. առաջին յարձակման գիւղում ամրացած դարադաղցի կռուողներ ուժեղ դիմադրութիւն են ցոյց տալիս պատնէշներից եւ դիրքերից, որով մերոնք յարձակումը կրկնում են գիւղի մի ուրիշ կէտից. այս ժամանակ Փիշնամազի մարդիկ ետ են քաշւում ու չեն մասնակցում յարձակման, առարկելով թէ իրանք դիրք կը բռնեն գիւղի մօտ, մերոնց ետեւը պաշտպանելու համար. մերոնց միանում են միայն Ամարի մի քանի ոտաւոր կռուողները։ Չնայած թշնամու գնդակներին մերոնք գրաւում են նախ մի այգի, ապա թշնամու դէմ մի յարմար դիրք բռնելով ընկերներից մի քանիսը առաջ են անցնում ու համազարկների տակ գրաւում են թշնամու առաջին դիրք. այսպէս կռիւ շարունակելով քիչ յետոյ յաջողում են գրաւել եւ միւս դիրքեր. դարադաղցիներին դուրս են քշում գիւղից խլելով նորանցից մի քանի զոհեր. տեղացիներից մի մասը որ նոյնպէս զէնք էր վերցրել մերոնց դէմ նոյնպէս բաւական կռուից յետոյ ընկճւում են։ Գիւղից դուրս եկող դարադաղցիների առաջ կտրում է Ամար աղան եւ այնտեղ նոյնպէս սկսւում է կռիւ. այդ ժամանակ մի ուրիշ կողմից միապետականներին օգնութեան են գալիս մի խումբ դարադաղցիները, կռիւը աւելի է մեծանում. մերոնք դուրս են գալիս գիւղից եւ ուղղակի արշաւում եկողների կողմ. այդ յանդուգն փորձից դարադաղցիները ամբողջապէս նահանջում են եւ քաշւում են կռուի վայրից։ Մերոնք նորից վերադառնում են գիւղը, ուր դարձեալ մասնաւոր կէտերից նկատում են դիմադրութեան փորձեր.

կռիւը վերսկսելով վերջանում է մերոնց կատարեալ յաղթութեամբ։ Մերոնց դրսում զբաղուած ժամանակ Ամարի քրդերից մի քանիսի շրջապատում են գիւղացիները, 3-ին սպանում են, իսկ միւսներին շատ նեղ դրութեան մէջ դնում. մերոնք վերադառնալով ազատում են եւ նորանց։ Այդ օր թշնամիները կորցրին մօտ 50 հոգի, իսկ Ամարի եւ Փիշնամազի մարդկանցից 5 հոգի միայն. մերոնք բոլորովին անվնաս մնացին։ Թուրքեր ինչպէս եւ քիւրդեր այդ երկու գիւղերից վերցնում են հսկայական թալան. բոլոր քրդեր այնուհետեւ առանց սպասելու, թողնում են կռուի վայրերը եւ աւելի քան 3-4000 ոչխար-տաւարով ու զանազան ապրանքներով վերադառնում են Սոմայի։

Մարտի 17-ին Սմբատ ընկերների հետ վերադառնում է Վանից (ուր գնացել էր Մուշ անցնելու համար) բերելով իր հետ 30 զէնք ու մօտ 12000 փամփուշտ, ինչպէս եւ մի քանի կամաւորներ։ Նա խորհուրդ է տալիս՝ Վահանն Գիւնէյից ետ կանչել խմբով եւ կազմել ու ղրկել մի աւելի մեծ խումբ։ Վահանին կանչեցինք, կազմեցինք մի մարմին, որ պէտք եղած պատրաստութիւն տեսնի աւելի մեծ խումբ մը կազմելու համար։ Մենք այս կարգադրութեամբ էինք զբաղուած, երբ լուր ստացուեց, որ միապետականները նորից գրաւել են Թիզէ ու Թիլ եւ առաջացել են մինչեւ Թասու։ Փիշնամազ Թասուից լուր ուղարկեց մեզ, որ «եթէ ձեր խումբը չվերադառնայ, մենք եւս կը հեռանանք Թասուից»։ Իսկ Փիշնամազի Սալմաստ վերադառնալը, միեւնոյն էր թէ միապետականներին իր ետեւից հրաւիրել ներս։ Ուստի կազմեցինք մի նոր խումբ դարձեալ 15 հոգուց բաղկացած եւ այս անգամ Գուրգէնի ղեկավարութեամբ ուղարկեցինք Գիւնէյ։ Մինչ այդ միապետականներ մտնում են նաեւ Թասու, իսկ սահմ[անադրական]ներ աւելի ետ քաշւում։

Այնուհետեւ այնտեղ կեդրոնացան նաեւ Իբրահիմ-Բէգ 100 հոգով, Ուրմիի կամաւորները՝ 6-700 հոգի Մէշէտի-Բաղրի ղեկավարութեամբ, Իմամ-Ալի սուլթան եւ Ալ-Հիւսէյն մօտ 200 հոգով. անպէս որ Գիւնէյի սահմանադրական բանակը հասաւ աւելի քան 1200 հոգու։

Այդ ժամանակ տաճկաց հիւպատոսն եւս զբաղուած էր իր էնտրիգներով, սահմանադրականներին նեղի ձրգելու համար (պատճառների մասին յետոյ)։ Սմկոյին՝ որ Սալմաստից հեռանալուց յետոյ չէզոքացած մնում էր կոթուրում, քաջալերեց ցած իջնելու եւ Խոյի գիւղերը թալանելու, հրդեհելու եւ ապա գնալու Գիւնէյի սահմանադրական բանակի ետեւը կտրելու։ Նախքան Սմկոյի բանակին մօտենալը, միապետականները երկու անգամ յարձակում են փորձում սահմանադրականների վրայ, բայց անյաջող, որով պարտաւորուեցան մի քիչ էլ սպասել մինչեւ որ դարձեալ ուժ կը ստանային եւ Սմկոն Խոյի շրջանում իր գայլի որսորդութիւնը կը վերջացնէր։ Ստուգուած է, որ Սմկոն եւ միապետականները պայմանաւորուած էին միմեանց հետ։

Ընկեր Սամսոնի միջոցով բանակցութիւն սկսեցինք տաճկաց հիւպատոսի հետ, որ Սմկոյին ետ դարձնել տայ, բայց նա ցոյց էր տալիս թէ չէր կարող ազդել Սըմկոյի վրայ, եւ որ շարունակելու է իր առաջխաղացութիւնը. ուստի Գուրգէնի խումբը ետ կանչեցինք, միանգամայն յայտնեցինք բանակին, որ երկու թշնամիների մէջ չմնալու համար անհրաժեշտ է, որ նա եւս ետ քաշուի, ու հաստատուի առայժմ Սալմաստի սահմանի վրայ, Եալկուզ-աղաչի մօտերք. այդպիսի առաջարկի գործադրութիւնը այն առաւելութիւն կ'ունենար, որ գոնէ Սալմաստի սահմանը կ'ապահովուէր քրդերից ու միապետականները ու մենք կարիքի դէպքում կարող կը լինենք շարունակաբար պէտք եղած օգնութիւնը ուղարկել, տեղի մօտաւորութեան պատճառով։ Մէջլիսի ջնջ համաձայն էր այս առաջարկին, բայց նոր դատաւորը՝ Ֆարս-Իլ-Միւլք, եւ իր եղբայր Սայիդ-Մէմէլիք, որ այդ ժամանակ գտնւում էր Ուրմիում համաձայն չէին եւ պնդում էին որ բանակը իր տեղում մնայ. վերջինս նոյնիսկ խոստացաւ Ուրմիից նոր ուժով գալ եւ բանակի գլուխ անցնիլ, բայց խաբեց, լաւագոյն համարելով այպիսի կրիտիքական րոպէում, տուգանքներ առնելով զբաղուել ի հարկէ ի հաշիւ իր գրպանի։

Մեր խումբը ետ կանչելուց վերջ, Իբրահիմ-բէգ եւ Փիշնամազը անձամբ եկան եւ խնդրեցին որ խումբը անպատճառ նորից ուղարկենք. ընկեր Սամսոն նորից տեսնուեցաւ կոնսուլի հետ, որպէսզի սա մի կերպ չէզոքացնէր Սմկոյին, յայտնեց որ մենք խումբը նորից ուղարկելու ենք բանակը եւ նա համաձայնութիւն տուեց, մինչդեռ յետոյ պարզուեց, որ նա ոչ մի քայլ չարեց Սըմկոյին զսպելու։

Ապրիլի 14-ին սկսուեց կռիւը միապետականների եւ սահմանադրականների միջեւ, որ չնորհիւ էնտրիգների անյաջողութեամբ վերջացաւ սահմանադրականների համար։

Սահմանադրականները բաժանուած էին երեք կէտի վրայ. Փիշնամազը գտնուում էր Չամչաքելանում. Մաշատիբաղր Նամազդավանում, իսկ մեր խումբը Իբրահիմ-Բէգի հետ Չէիրէվանում։ Առաւօտեան կանուխ յարձակումը սկըսւում է միապետականների կողմից, երեք կէտի վրայ միանգամայն. բանակի մի մասը Սմկոյի երկիւղից անմիջապէս ետ է քաշւում, որպէսզի սա ետեւը չպաշարէր. այդ ետ քաշուելը առաջ է բերում ընդհանուր խառնաշփոթութիւն սահմանադրականների մէջ, որոնց մեծ մասը խուճապի մէջ է ընկնում. լաւ են կռւում միայն ուրմեցի ոտաւոր կամաւորները եւ հետզհետէ նահանջում. իսկ մերոնք Չէիրէվանում մի քիչ դիմադրելուց վերջ, երբ տեսնում են բանակի ցրուելը, թուրք կամաւորների մի մասին հաւաքելով կռուելով քաշւում են դէպի լեռ. միապետականները թեւ ուզում են նորանց առաջը կտրել, բայց ի զուր. այդպէս կռիւ տալով առաջանում են դէպի Խոյի կողմ։ Իսկ Սմկոն Կանլիդարայի մօտերք կտրելով բանակի միւս մասի առջեւ նորանցից խլում է շատ զոհեր. ռազմամթերքի ամբողջ պաշարը անցնում է թշնամիների ձեռքն. սահմանադրականները այդ օր կորցնում են մօտ 70 հոգի, մերոնք տալիս են մի զոհ եւ ճանապարհ դարձնելով դէպի Խոյ, այնտեղից էլ վերադառնում են Սալմաստ։ Բանակի պարտութիւնը դարձեալ առաջացրեց ընդհանուր լքում. գիւղերի բնակչութիւնը դարձեալ կենտրոնացաւ մի քանի կէտում Դիլիման, Ղալասար, Փայջուկ գլխաւորապէս։ Որոշուեցաւ դարձեալ ինքնապաշտպանողական դիրք բռնել։*

Մի քանի օր վերջ ստացուեց ռուս զօրքի Թաւրիզ մտնելու [լուրը], որով կռիւները վերջացան։

Այժմ մի քանի խօսք ասենք ժէօն-թուրքերի, տաճկաց հիւպատոսի եւ առհասարակ սահմանագլխի տաճիկ պաշտօնեաների վերաբերմամբ, նորանց բռնած դիրքի մասին ներկայ շարժումների ընթացքում։

Ներկայիս Փետրուարի առաջին կիսուն մեր շրջան եկան Նաջիբ-բէյ, Միրզա-Սայիդ (դիլիմանցի) մի խումբ ժէօն-թուրքերով։ Կարնոյ ընկերներից բերած յանձնարարականը եւ Նաջիբ-Բէյի ու Միրզա-Սայիդի մեզ նախածանօթ ու երբեմն շատ մօտիկ լինելը, արդէն բաւական էին, որ մենք նրանց ընդունէինք շատ լաւ կերպով։ (Սորանք հետերնին Վասպուրականից բերին 50 նոր հրացան 30.000 փամփուշտով, որից միայն 1500 հատ մեզ բաժին հանուեց)։ Բայց սկզբից նորանք մի սառն վերաբերմունք ցոյց տուին դէպի մեզ, չնայած որ մեր կողմից Նաջիբ-բէյ եւ ընկերներից մի քանիսը հրաւիրեցան մեզ մօտ խորհրդակցութեան, բայց նորանք չեկան. մի կերպ ուզում էին մեզանից հեռու լինել եւ գործել բոլորովին ինքնուրոյն կերպով։ Այդպիսի վերաբերմունք ապացուցեց ընկեր Վահաբի[54] մեզ գրածը, թէ — «դորանց դիտաւորութիւնն է Դաշնակցութիւնը չէզոքացնել Պարսկաստանի շարժումների մէջ։ Սկզբում նորանք լաւ էին տրամադրուած, բայց Հաշարութի կրուից յետոյ, ուր ունեցան մի զոհ եւ մի քանի վիրաւորուածներ եւ վայելեցին միւսահիդների կռուի ժամանակ դասալիք լինելու պտուղը, հիասթափուեցին ու ընկան կոնսուլի ազդեցութեան տակ։

Հիւպատոսը որ պաշտօնի մէջ հաստատուելուց յետոյ տարուած էր նեղ դիպլոմատիական հաշիւներով, որովհետեւ ինքն ինչ ինչ պատճառներով գժտուած էր Խոյի յեղ. պարագլուխ Ամօղլու հետ, աշխատեց որքան կարելի է երիտասարդ թուքերին եւս լարել նորա դէմ։ Կար մի ուրիշ հանգամանք, այս ժամանակներ օսմ. զօրքը մի քանի կէտերից բաւական առաջ եկաւ եւ իր հաստատուած վայրերը ընդունեց, իբր օսմ. հող, որ քէօրէսենցիներ որ մինչեւ այդ իրանց համարում էին պարսկահպատակ, այնուհետեւ ոչ տուրք էին տալիս եւ ոչ կամաւորներ։ Հակառակ Նաջիբ-բէյի հաւաստիացումներին, թէ կը գնար եւ կը կարգադրէր. օր[ինակ] քէօրէսենցիներ սովորական տուրքը տային ինչպէս եւ կամաւորներ ուղարկէին իբրեւ իրանցիներ, ոչ մի քայլ չեղաւ այդ ուղղութեամբ, մինչդեռ փոխանակ այդպիսի երեւոյթներ ստեղծելու թէ Նաջիբ-բէյ եւ թէ օսմ. պաշտօնեաներ շարունակ պնդում էին որ օսմ. զօրքի յառաջխաղացումը նպատակ ունի միայն հովանաւորելու պարսկական շարժումները, նրանց ուժ տալու։ Այսպիսի հանգամանքներից Սաիտ-Մէմալիք եւ Ամօղլին եզրակացրին, որ ինչպէս հիւպատոս, նոյնպէս եւ ժէօն-թուրքերը առաջնորդւում են յետին մտքերով։ Հիւպատոսը Խոյում բացի միապետական մի քանի աղաների հովանաւորութիւն ցոյց տալուց, կասկածուեց նոյնիսկ մակուցիների հետ յարաբերութիւն ունենալու մէջ, ի վնաս յեղափոխականների։ Այսպէս յարաբերութիւնները երկու կողմի միջեւ օրէ օր ոչ-բարեկամական, սուր կերպարանք էին ստանում։ Այդ ժամանակները ամենակրիտիքական րոպէներ լինելով մեզ համար, մենք, ընկեր Սամսոնի միջոցով աշխատեցանք, որքան կարելի է համոզել Սայիդ-Մէմալիքին, որ գժտութիւնների առիթ չտայ, որպէսզի կարողանայինք օգտուել ժէօն-թուրքերի ուժից ու սկսած գործը ապահովել, մանաւանդ որ դորանց գալով բաւական ուժ մտցուեց մեր շրջանը։ Բայց Սայիդ-Մէմալիք չլսեց մեզ եւ մի քանի անգամ այնպէս կոպտաբար արտայայտուեց, որ ժէօն-թուրքերը Մարտի վերջերը թողին հեռացան։ Սխալը ի հարկէ երկու կողմից էր, նախ Սայիդ-Մէմալիքի եւ Ամօղլու, որ արհամարհեցին ժէօն-թուրքերի ուժը ու զոհողութիւնները եւ յետոյ ժէօն-թուրքերի կողմից, որ հիւպատոսի ազդեցութեան տակ ընկան եւ այնպէս շուտով յուսահատուեցան ու իրանց միսսիան կիսատ թողնելով հեռացան, առանց նկատի ունենալու, որ ժողովուրդը երբեք չէր ուզում նորանց հեռանալը։

Այնուհետեւ հիւպատոսը եւ սահմանագլխի զինուորականները յայտնի կերպով սկսեցին էնտրիգներ լարել սահմանադրականների հանդէպ. Սմկոյին ցած բերին Խոյի գիւղերը աւերելու եւ Գիւնէյի բանակի գործողութիւնները արգիլելու համար։ Երբեմն պահանջում էին ժողովրդից Սայիդ-Մէմալիքն ու Ամօղլուն հեռացնել, երբեմն պահանջում էին Մէօհթաջամ-Սալթանէին իրանց յանձնել եւ այլն կապրիզներ[58] *(Մէօհթաջամ սահմանագլխային խնդրի առթիւ կազմուած պարսկական յանձնախմբի նախագահն էր, որ շարժումների ժամանակ իբրեւ միապետական անձ, ձերբակալուեց Ուրմիում եւ Սալմաստ բերուելով պահւում էր հսկողութեան տակ), սպառնալով հակառակ դէպքում ոչ միայն հովանաւորութիւն ցոյց չտալ, այլեւս քրդերի վտանգն էին դնում աչքի առաջ։ Ռահալի դէպքը արդէն ամբողջապէս պատռեց հիւպատոսի դիմակը։*

Սմկոյի քրդերը յարձակւում են Խոյի շրջանում Ռահալ գիւղի վրայ, ուր սկսւում է կռիւ նորանց եւ գիւղում եղող միւջահիդների միջեւ։ Նոյն ժամանակ այդտեղ է գալիս հիւպատոսը զինուորների հետ, իր ասելով կռիւը դադարեցնելու համար, բայց միւջահիդներից զէնքեր առնելով քրդերին է տալիս եւ նորանց անզէն իր հետ Սալմաստ բերելով, ցոյց է տալիս, իբր թէ քրդերի ձեռքիցն է ազատել, ապա թէ ոչ բոլորն էլ պիտի կոտորուէին, մինչդեռ ստուգուեց որ միւջահիդներ լաւ դիրքեր էին ունեցել եւ լաւ կռուել էին ու կարող էին դիմանալ։

Այս կոնսուլի (Համի-Բէյ) ներկայութիւնը այս շարժումների ժամանակ, մեր շրջաններում, մի ցաւալի զուգադիպութիւն եղաւ։

Ինչպիսի արժանաւորութիւններ ցոյց տուին պարսիկ գործիչներ եւ ժողովուրդը։

Փիշնամազը, որ ոչ մի յեղափոխական գիտակցութիւն չունէր, գործի ղեկավարների շարք անցաւ, որովհետեւ մակուցիներից հալածուեց ու քիչ շատ ժողովրդականութիւն էր վայելում իբրեւ հոգեւորական եւ իբրեւ համեմատաբար անշահախնդիր հոգեւորական։

Ոչ-տեղացի ուժերը համեմատաբար աւելի բարձր էին իբրեւ յեղափոխական, քան տեղացիները, բայց դորանք եւս կարեւոր սխալների մէջ ընկան ի վնաս գործին։ Մ. Ասկարով եւ Մէչէտի-Ռահիմ շուտով տարուեցան անձնական հաշիւներով եւ իրանց վարկաբեկեցին. կոմիտէ կամ անջիւման ճանաչել, խորհրդակցել չկարային շատ բան կարգադրում էին, ինչպէս իրանք ցանկանում էին, չէին ուզում վերջապէս կոնտրոլի տակ լինել։ Իմամ-Ալի սուլթան այնքան առաջ գնաց, որ հրացանի բերնով սկսաւ խօսել խառն կոմիտէի հետ։ Սայիդ-Մէմալիք, իր գործունէութեամբ ու յեղ. դեմպերամենտով աւելի բարձր էր նախորդներից. վարչական կանոնաւոր մարմիններ ստեղծեց, ինք մասնակցում էր նորանց նիստերին եւ խորհրդակցելով էր գործում. աչքի էր ընկնում իր պարզ ու անկեղծ վարմունքով։ Բայց երկար չանցաւ նա եւս փայլեց իր բացասական կողմերով, հետզհետէ բոլոր գործեր իր ձեռք կեդրոնացրեց, եւ խորհրդակցողի դերից, անցաւ հրամայողական, դիկտատորական ուղղութեան, սկսեց դիրքի համար մտածել քան գործի եւ որ գլխաւորն էր ոչ մի տակտիկա չունէր. մինչդեռ այստեղ այնքան կրքով ու բանականութեամբ վարուեց ժէօն-թուրքերի եւ առհասարակ օսմանցիների հետ, Ուրմիում շատ մտերիմ յարաբերութիւն ստեղծեց օսմ. թաղիրբաշու հետ, որին եւ 1500 թուման կաշառք տուեց, որպէսզի նա, որոշ անհատների հովանաւորութիւն ցոյց չտար ու արգելք չհանդիսանար իր դրամաշորթութեան։ Այդ պատճառներով եւս շուտով ժողովուրդի մօտ հաւատք կորցրեց եւ հալածուեց նորանից։ Միայն Ամօղլին էր, որ ունէր եւ որոշ կրթութիւն կարողացաւ մինչեւ վերջ իրան պահել եւ յեղափոխականի վայել գործունէութիւն ու տոկունութիւն ունենալ։

Վերջապէս ընդհանուր կերպով չէր կարելի նկատել մի գաղափարական հիմնաւոր կապ, միայն «Մէշրութէ» բառն էր, որ պտտում էր բոլորի բերանում, բայց

58.- Քմահաճոյքներ։

որի գիտակցութիւնը պակասում էր. այդ դարձուածքը մի տեսակ եկամուտի աղբիւր էր դարձել բոլորի համար։ Գրպանի շահը աւելի բարձր էր դասւում քան գործը ընդհանրապէս. միապետական համարուած անձնաւորութիւններին հսկողութեան տակ էին առնւում, ոչ այնքան նորանց չէզոքացնելու, որքան նորանցից օգտուելու համար ի հաշիւ սեփական գրպանի։

Քանի անգամ այդ պարագլուխներից մի քանիսը փորձեր արին, որ Նոյեմբերից ի վեր մեր մօտ ապաստանած Սատղ-Խան-Սարթիբին (թնդանօթաձիգների հրամանատար) իրանց մօտ գալ տան եւ նորանից եւս օգտուեն բայց չյաջողեցան։ Դա թէեւ մի ժամանակ գտնուել էր Իզօ-Խանի բանակում (Աջիի կռւում), բայց Սալմաստ վերադառնալով հեռացաւ միանգամայն միապետականներից եւ մեզ մօտ գալով մինչեւ վերջ էլ մնաց, առանց ոեւէ վնաս կրելու, այնպէս որ շատերը՝ թէ՛ սահմանադրականներից եւ թէ միապետականներից շատ խելօք էին գտնում Սարթիբի քայլը՝ մեզ մօտ ապաստանելուն համար։

Ղեկավարների մասին քիչ մը գաղափար կազմելուց յետոյ, կարելի է գուշակել, թէ ինչ կը լինէր ժողովուրդը. նա եւս զուրկ լինելով բոպէի գիտակցութիւնից տարերային մղումներով էր շարժւում. կամքով կռուի գնալը նորա համար նշանակում էր թալանի գնալ. այդ էր պատճառը, որ շատ անգամ առանց գնդակ արձակելու կռնակ էր դարձնում ու կռուի դաշտից խոյս տալիս. բոպէի տրամադրութեան տակ գիտէ ոգեւորուել, բոպէական տրամադրութեամբ եւ յուսահատուել ու բոլորովին դասալիք լինել։ Ոչ մի հասարակային համոզմունք գոյութիւն չունի նորա համար, որովհետեւ այդ ուղղութեամբ ոչ մի պրոպագանդ չի տեսել։

Այս շարժումների ժամանակ մենք գործը տարել ենք բոլորովին մեր միջոցներով, ոչ մի օգնութիւն չենք ստացել Անջիւմանից կամ Մէջլիսի-ջէնգից, բացի 1500 նոր ծայրերից։ Կռուել ենք մեր զէնքերով ու ռազմամբերքով եւ ապրել դարձեալ մեր միջոցներով։ Վեցամսաբայ ընթացքում 50-80 ձիաւոր եւ ոտաւոր թռուցիկ զինուորներ ապրել են մեր կամ ժողովրդի միջոցներից, բաժանուած մի քանի կէտերի վրայ, որտեղից կռուի ժամանակ գործում էին երբեմն առանձին երբեմն միացած թուրքերին։ Այն ասորի զինուորներ, որոնք թռուցիկ խմբի մէջ էին մտել, նոյնպէս ապրում էին մեր շարքերում։

Շարժումների ժամանակ ամենաշատ վնասող հայ գիւղն եղաւ Սարամէրիկ, որ կորցրեց իր ամբողջ ցորենը, տաւարի ուտեստը, երկրագործական գործիքները եւ իրերի այն փոքր մասը որ փոխադրել էր Մուանչուղ։ Միւս հայ գիւղերը թէեւ ազատ մնացին թալանումներից, բայց շարժումների հետ կապուած ծախքերը հոգալով, եւ մանաւանդ, գործերի ու երթեւեկութեան կանգ առնելովը տնտեսապէս շատ քայքայուեց[ին], այնպէս որ, ճանապարհներ բացուելուց յետոյ, շատերը գաղթականութեան միջոցին են դիմում։

Սահմանադրութիւն յայտարարուելուց յետոյ այստեղ եկան Վրէժի[14], Աւարայրի[35] եւ Գետ-Ափի[16] բոլոր ընկերները, որոնց՝ ընկեր Ռոստոմի հետ խորհրդակցելով մաս մաս ուղարկուեցան իրանց տեղերը։

Սահմանադրութիւն թէեւ յայտարարուեց, բայց ռուսական բանակի ներկայութիւնը ճնշիչ տպաւորութիւն էր թողնում սահմանադրական տարրերի վրայ, իսկ միապետականներ պահ մը կարծես սկսում էին սիրտ առնել, մինչեւ որ Սեպտեմբերի եւ Եփրեմի քայլերը եկան նորանց վերջին յոյսը խլելու։

Հ.Յ.Դ. Մինարէթի կոմիտէ
ՅՈԼԱԿ, ՔՐԻՍՏ
ԳԱՐԵԳԻՆ, ՍԱՄՍՈՆ

30 *Յունիս* 1909 *թ.*
Մինարէթ

Է.– ԳԻԼԱՆ-ԷՆԶԵԼԻ ՇՐՋԱՆԸ ՊԱՐՍԿ. ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՕՐԵՐՈՒՆ

Է 1. – Է 5.– ԳԻԼԱՆԻ ԿՈՄԻՏԷԷՆ ՆԱՄԱԿՆԵՐ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Փաստ. 584-4

Է. 1

ԳԻԼԱՆ ԿՈՄԻՏԷ

1909 *Փետրուար 7-ին*

«Դրօշակ»ի խմբագրութեան, Ժընեւ

Ընկերներ!

Գիլան կոմիտէս նախ յայտնում է Ձեզ որ Դրօշակի համարները կանոնաւոր չի ստացւում. աշխատեցէք շարունակաբար ուղարկել որպէսզի բաժանորդներին բաւարարութիւն տրուի։ Դրօշակները ուղարկէք հետեւեալ նոր հասցէով՝ Ստեփան Առաքելեանց, Ռաշտ։

Արդէն Ձեզ յայտնի է պարսկական յեղափոխութեան մասին, որ քանի գնալով աւելի լայն ծաւալ է ստանում. Ատրպատականի կռիւների արձագանգը տարածւում է եւ Պարսկաստանի ամբողջ գաւառները։ Այստեղ եւս մեր ընկերների ջանքերով կազմակերպւում էր պարսկական յեղափոխութիւնը որը Յունուար 26-ին զինուած ապստամբութեան միջոցով տարաւ իւր փառաւոր յաղթութիւնը։ Դաշնակցութիւնը եւ դուրսից եկած վրացի եւ թուրք յեղափոխականները Յունուար 26-ին ցերեկուայ ժամը 3-ին յարձակում գործեցին Դարխանի վրայ, կրակ տուեցին Դարխան, սպանեցին նահանգապետին եւ 50-ի չափ միապետականների եւ երկու ժամ տեւող կռուով գրաւեցին. Դարխան ու քաղաքը ամբողջապէս ընկաւ յեղափոխականների ձեռքը, որոնք այժմ կառավարում են անջիւմաններով[39]։ *Բայց չնորհիւ վրացիների անտակտ գործունէութեան ազատուեցին շատ միապետականներ եւ Քառգառիի բորենին Ամիրը Սալթանէն, որոնք փախան ռուսաց հիւպատոսարան եւ ազատուեցին։ Կռիւն ղեկավարում էր ընկեր Թափառականը*[59] *որը եւ այժմ գնացել է Թեհրանի գծի վրայ դիրքերը պատրաստելու [եւ] Թեհրանից եկող զօրքին դիմադրելու։ Հետաքրքիր էր տեսնել պարսից սարբազների խայտառակ փախուստը կռուի ժամանակ։ Կռուի ժամանակ յեղափոխականներից ընկան երկու հոգի, մի վրացի եւ մի թուրք։*

Ընկերական բարեւներով, ի դիմաց «Գիլան» կոմիտէի։
ՎՐԶԻՆ

59.- Թափառական՝ ծածկանուններն մէկն է պարսիկ սահմանադրական շարժման գլխաւոր հերոսներն Եփրեմ խանի (Դաւթեան)։

Փաստ. 584-9

Է. 2

ԳԻԼԱՆ ԿՈՄԻՏԷ

1909 թ. Մարտի 16-ին

«Դրօշակ»ի խմբագրութեան

Ընկերներ!

Ստացուեց Ձեր գրած 4/III նամակը. գրում էք, որ կ'ուղարկուի Դրօշակի համարները կանոնաւոր։ Բայց մինչեւ այժմ մենք չենք ստացել Նոյեմբեր, Դեկտեմբեր, Յունուար, Փետրուար ամիսների համարները եւ հէնց այդ պատճառով չենք կարողանում նոր բաժանորդներ հաւաքել. խնդրում ենք այդ մասին հոգ տանէք։

Գիլանի դէպքերի մասին սկզբից ձեզ տեղեկութիւններ տուել ենք եւ Թափառականը ընկեր Եփրեմն է։ Ընկեր Թափառականը եւ մի շարք ընկերներ պարսիկ յեղափոխականների հետ գտնւում են դիրքերում. կառավարութեան զօրքը մինչեւ այժմ դեռ Ղազուինից չի շարժուել դէպի Գիլան. տեղեկութիւններից երեւում է որ կառավարութիւնը առ այժմ զօրքը կենտրոնացնում է Ղազուինում. առ այժմ հաւաքած ունի մօտ 1500 հոգի եւ բաւականաչափ ռազմամթերք. նրանք վախենում են առաջ գալ, որովհետեւ Գիլանի դիրքերը շատ անառիկ են։ Թեհրանի մասին էլիք հարցրել, պէտք է ասած, որ Թեհրանում վախենում են շարժուել, որովհետեւ կառավարութիւնը մեծ ոյժ է կազմում իսկ մեր ընկերները Թեհրանի, պարսկական շարժումների համար չէզոք դիրք են բռնել, ոչ մի կերպ չեն աշխատում աջակցել, չնայած մեր անչափ դրդումներին բայց չեն համոզւում, եւ նոյնիսկ մեզ տեղեկութիւններ չեն տալիս քաղաքի դրութեան մասին։ Իսկ Վրէժից[14] վաղուց է որ նամակ չունինք շնորհիւ Ջուլֆայի գծի փակման։ Մասնաւոր տեղեկութիւններից իմանում ենք, որ յեղափոխականները մեծ յաղթութիւններ են տարել եւ կառավարութեան զօրքերին ջարդել են։

Մեր քաղաքը շատ հանգիստ է եւ գործերը ղեկավարում են անջումաններով։ Հաւանական է շուտով Ղազուինում ապստամբութիւն առաջանայ, որովհետեւ Գիլանից յեղափոխականներ են մտել Ղազուինում, որ ներսից սկսեն եւ դրսից մեր ընկերներ յարձակուեն։ Մեր ընկերների վերջին դիրքը շատ մօտ է Ղազուինին։

Աշխատում ենք նաեւ մարդիկ ուղարկել Թեհրան, որ այնտեղ եւս սկսեն։ Թեհրանում չուկան մի ամսից աւելի է որ փակ է։ Ռուսաց կոնսուլատը իրեն պաշտպանութեան համար բերել է տուել 50 կոզակ եւ 2 պուլիմեոտներ[60]։ Այդ բանը վատ տպաւորութիւն է թողնում ժողովրդի վրայ։ Այդ մասին Մէջլիսը բողոքել է եւրոպական պարլամենտներին, բայց ոչ մի պատասխան չի ստացում։ Պարսից կազմակերպութեան նիւթական միջոցներով գրել ենք, որ Կովկասից մեր ընկերներից ուղարկեն 50 հոգի։

Եթէ հնարաւոր է խնդրում ենք ուղարկէք մեզ համար նամակներ գրելու բլանկաւոր թղթեր, այդ մասին գրել ենք Վրէժին, բայց մինչեւ օրս լուր չկայ։

Պարսից Սաթթար կոմիտէին յայտնեցինք, որ Դրօշակի խմբագրութիւնը իւր ուրախութիւնը յայտնում է Գիլանի յեղափոխականների տարած յաղթութեան համար։ Այդ առթիւ նրանք Ձեզ փոխադարձ շնորհակալութիւն են յայտնել հեռագրով։

Ընկերական բարեւներով
Ի դիմաց «Գիլան» կոմիտէի՝
ՎՐԶԻՆ

60.- Գնդացիրներ։

Փաստ. 584-14

Է. 3

Հ.Բ.Դ. ՊՈՐՏ ԱՐԹՈՒՐ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ

25 Ապրիլ 1909

Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ!

Հաստատում ենք ամսոյս 11/24 գրած մեր N 56 նամակը — նոր լուր՝ Ղազուինու առնումն է. ամսոյն 21ին յեղափոխականները ղեկավարութեամբ ընկեր Թափառականին[59] յարձակւում են Ղազուինու վրայ. այդտեղ եղած զօրքն մօտ 1000 հոգի ոմանք քիչ դիմադրելուց յետ փախչում են, ոմանք մի քարվանսարում իրենց 200 զէնքով յանձնւում են, մնացորդ Դարխանում դատաւորի եւ Ղիաս Նեզամ (զօրքի հրամանատար) մօտ պահւում. դատաւորը յայտարարում է մինչ 5000 հոգի մարդ չկոտորուի ես չեմ յանձնուիլ, բայց յեղափոխականների ուժեղ գրոհին չդիմանալով երկրորդ օրը յանձնւում է ինքը եւ Ղիաս Նեզամը գերի մնալով յեղափոխականների ձեռքը եւ ամբողջ արսենալը[6] նրան յանձնելով. տեղեկութիւնները թռուցիկ լսածներ են, մանրամասնութիւնը ձեզ կը յայտնենք առաջիկայ փոչտով։

Այստեղ սկզբից մինչ օրս մօտ 80 ռուս Ղազուին են մտել, գտնւում են Ռաշտում եւ ռուսաց երկու պատեր[ազմական] նաւ այստեղ մինը ներսը միւսը դրսում ծովը կանգնած է, վերջինս խուզարկում է եկող գնացող նաւերին։

Ստացել ենք N 2-3 Դրօշակները։

Ընկերական բարեւներով
Ի դիմաց Պորտ Արտուր ենթակոմիտէի
ՂԱՐԻԲ

Փաստ. 584-20

Է. 4

Հ.Յ.Դ. ԳԻԼԱՆ ԿՈՄԻՏԷ

29-ին Յունիսի 1909 թիւ

Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ!

Ժամանակին ստացել ենք Ձեր ուղարկած 50 *կտոր բլանկները։ Դրօշակի համարները նմանապէս ստացւում է բայց Դրօշակը քիչ է եւ չի բաւականացնում, աշխատեցէք մի* 10 *օրինակ աւել ուղարկել։ Ղազուինի համար էլ ուղարկեցէք* 10 *օրինակ հետեւեալ հասցէով.* Kazvin Aristakes Abeliantz.

Տեղւոյս դրութիւնը նոյնն է. ամսոյս 20*-ին յեղափոխականները յարձակւում են Քերեջի վրայ, որտեղ կառավարութեան զօրքերը դիրքեր էին պատրաստել Թեհրանը պաշտպանելու համար։ Երկար կռուից յետոյ կոզակները փախչում են եւ մտնում են Շահաբադ քարվանսարան, որտեղից թնդանօթներով կրակ են բացում յեղափոխականների վրայ. պարսիկ կամաւորները սկսում են փախուստ տալ. փախչողներից մի քանիսին Սփեղարը գնդակահարում է։ Թափառականի*[59] *խումբը նկատելով վտանգը կռուելով ետ են նահանջում, որտեղ սպանւում է մեր ընկերներից Մադաթը եւ վիրաւորւում է Արամը։ Հետեւեալ օրը մերոնք կառավարութեան կոզակները փախցնում են, որոնք թողնում են մեծ քանակութեամբ սպանուածներ եւ վիրաւորներ։ Յեղափոխականները այժմ կռւում են Թեհրանի պարիսպների մօտ. բաղտիարցիք միացել են մերոնց։ Կռիւը Թեհրանի վրայ սկսուել է. երէկ լուր ստացւեց, որ գրաւել են Նոր քաղաքը, որը Թեհրանի մի թաղամասն է։ Ներքին ապստամբութիւնը նմանապէս սկսուել է։ Ժողովրդի ոգեւորութիւնը բարձրացել է, բայց մի ուրիշ դէպք խանգարեց այդ ոգեւորութիւնը. ամսոյս* 23*-ին Էնզէլի ափ իջան* 600 *ռուսաց կոզակներ եւ նրա յաջորդ օրը մօտ* 800 *հետեւակ զինուորներ։ Ժողովուրդը շուկան փակեց եւ միտինգ կազմակերպեց. բողոքում էր ռուսաց կառավարութեան անարդարութեան դէմ. Էնզէլում կանայք, երեխաներ հաւաքուած են եղել ծովափը եւ թոյլ չեն տուել որ զօրքը դուրս գայ ասելով, եթէ ուզում էք մեր երկիրը մտնել մեր դիակների վրայով պիտի անցնէք. շուկան երեք օր փակ մնաց. ռուսաց հիւպատոսը տեսնելով անզէն կանայք եւ երեխաներ մնում է անելանելի դրութեան մէջ. խայտառակութիւն էր այդպիսի դիմադրութիւնը։ Հիւպատոսը երկար բանակցելուց յետոյ Էնզէլու եւ Ռաշտի անջնման հետ յայտնում է որ այս զօրքը եկել է եւ գնում է դեսպանատները եւ ռուսաց ճանապարհը պաշտպանելու համար եւ ստորագրութիւն է տալիս, որ սրանից աւել չի գալու եւ ռուսաց զօրքը չի միջամտելու Պարսկաստանի ներքին գործերին։*

Խեղճ պարսիկ ժողովուրդը չգիտէ ինչպէս դուրս գայ այդ դրութիւնից. մի կողմից ուրախանում է իր տարած յաղթութիւններով, միւս կողմից մի ուրիշը գալիս է նրա ուրախութիւնը եւ հանգիստը խանգարում։ Չնայած հիւպատոսի բոլոր խոստումները սուտ են, բայց ինչ արած ժողովուրդը ուզենայ չուզենայ պէտք է հաւատայ եւ ընդունի։ Գիլանում յայտարարել են բոյկոտ ռուսական բոլոր ապրանքների դէմ, թէյատները փակել են եւ շատ տեղեր նաւթ չեն վառում. հաւանական է բոյկոտը ուժեղանայ։ Ռուսական զօրքի գալով ժողովրդի վրայ կարծես սառը ջուր ածեցին։

Կոզակները անցեալ օրը Էնզէլուց եկան Ռաշտ եւ հետեւեալ օրը առաւօտեան ճանապարհուեցին դէպի Ղազուին։ Հաստատ լուր կայ, որ նրանք մնալու են Ղազուին։ Թեհրան կը գնան այն դէպքում երբոր դեսպանատնից պահանջելու լինեն. հետեւակները դեռ չեն հասել այստեղ. հաւանական է այսօր կամ վաղը կը հասնեն։

Եթէ յեղափոխականները կարողանան շուտ գրաւել մայրաքաղաքը, այն դէպքում ռուսաց կառավարութեան միջամտութիւնը կարծում ենք իւր նշանակութիւնից կ'ընկնի։ Ժողովուրդը անհամբեր սպասում է Թեհրանը գրաւեն։ Հետեւանքի մասին միւս անգամ կը գրենք։

Ընկերական բարեւներով
Ի դիմաց «Գիլան» կոմիտէի
ՎՐԶԻՆ

Փաստ. 584-21

Է. 5

Հ.Յ.Դ. ՊՈՐՏ ԱՐԹՈՒՐ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ

Պորտ-Արտուր, 4/17 *Յուլիս* 1909

Հ.Յ.Դ. Օրգան «Դրօշակի» յարգելի խմբագրութիւն, Ժընեւ

Ընկերներ!

Շտապում ենք հաղորդելու մի քանի նորութիւններ մեր շրջանում անցնող դարձող յեղափոխական շարժումներից։ — Ղազուինի գրաւումից անմիջապէս յետոյ յեղափոխական կռուող բանակը առաջ շարժուեց դէպի Թեհրան, մինչ այդ առաջին ընդհարումը ունեցել են, «Վէրէյամ», որտեղ կառավարական հեծելազօրքը բանակ էր դրած նոյն վայրում գտնուած լերան լանջին։ Յարձակումը եղել է մարտիկ բանակի կողմից եւ ամբողջ 4 *ժամ տաք կռուից յետոյ, կառավարական զօրքը յաղթուած՝ թողնելով կռուի վայրում մի թնդանօթ, մեծ քանակութեամբ զէնք, տասնեակ զոհեր ու եռապատիկ վիրաւոր յետ է նահանջում։ Սահմանադրականների կորուստը այդ ընդհարման ժամանակ եղել է* 2 *վիրաւոր ուրիշ ոչինչ։*

Երկրորդ ընդհարումը եղել է Շահ-Աբադ կոչուած վայրում, որտեղ Թեհրան հասնելու վերջին կայանն է (station)։

Այդ ընդհարում եղել է յեղափոխական բանակի առաջապահ 40 *հոգուց բաղկացած թուրքիկ խմբի հետ, որը գնացել էր թշնամու բանակը խուզարկելու եւ նորից նկատուելով ընդհարուել եւ* 2 *կորուստ ու* 2 *վիրաւոր տալով* 2 *ժամ կռուելուց յետոյ յետ է նահանջել, որից անմիջապէս յետոյ մարտական բանակը վրայ հասնելով յարձակուել ու ամենայն հեշտութեամբ վերցրել է բոլոր դիրքերը առանց որեւէ կորստի ու առանց կանգ առնելու արշաւել դէպի Թեհրան. Նախքան Թեհրան մտնելը Յունիսի* 28*-ին մեծ ընդհարում եղել է Թեհրանի արուարձանում Շահր-Նօ կոչուած վայրում եւ Բաղը-Շահ (վերջինս Շահի այգին որտեղ Մէջլիսի ռմբակոծելուց յետոյ մնում էր ինքը եւ որտեղից* 1½ *ամսով առաջ մեկնեց եւ ամրացաւ Սալթանաթաբադ կոչուած ապարանքում որը գտնւում է Թեհրանի հիւսիսային մասում* 30-35 *վերստ հեռաւորութեան վրայ) ուրտեղերում ամրացուած էր կառավարական զօրքը իր ամուր դիրքերում.— այդ ընդհարման ժամանակ Գիլանի կռուող բանակին միացել է բախտիարցի ձիաւորներից մօտ* 200 *հոգին (Բախտիարի ձիաւորները Իսպահանից Թեհրան արշաւող* 2000*անոց բանակն է, որին կարգադրուած էր հարաւային կողմից միեւնոյն ժամանակ յարձակում գործել Թեհրանի վրայ երբ Գիլանի բանակը յարձակում գործէր). Ճակատամարտը եղել է շատ խիստ եւ այս անգամ էլ ինչպէս միշտ յաղթութիւնը մերոնցն է եղել, գրաւել են բոլոր դիրքերը անխտիր, վերցրել մեծ քանակութեամբ զէնք ու ռազմամթերք եւ շրջապատել «բախտիարի» ձիաւորների հետ միասին Թեհրանը։*

Մինչդեռ յեղափոխական մարտիկներ ապագայի վառ յոյսերով, Ղազուինը վերցնելուց յետոյ արշաւում էին խիզախօրէն դէպի Թեհրան, նոյն օրերին ամսիս 27*-ին յանկարծ տեղս հասան ռուսաց մի զրահաւոր եւ* 3 *ուրիշ ապրանքատար նաւեր լեցուն ռուսական կազակներով եւ արդիլերիայով*[61]*։ Հեծելազօրքի ճիշտ թիւը* 625 *— իրենց հետ մեծ թնդանօթներ՝ իրենց ամբողջ մթերքով ու պիտոյքներով, որոնք մի օր սպասելուց՝ երկրորդ օրը ճանապարհուեցին Ռաշտ. տեղիս ժողովուրդը բողոքի ո՛չ մի արտայայտութիւն նրանց գալստեան առթիւ։ Անցաւ* 2 *օր եւ ահա կրկին մի քանի նաւեր լեցուն, հետեւակ զօրքով հասան տեղս. այս անգամ պարսիկ ամբոխը չզսպեց իւր բողոքը եւ լեցուելով ռուսաց հիւպատոսի տանը պահանջեց նրանց գալու պատճառը — միեւնոյն ժամանակ անզէն ամբոխի մի մասը շրջապատելով զօրքին դիմադրեց նրանց շարժուելուն։ Ամբոխին հիւպատոսը հանգստացրեց ասելով ընդամէնը (հետեւակ եւ ձիաւոր)* 1000 *զինուոր պիտի գայ. դրանց նպատակն է գնալ մինչեւ Ղազուին ու ապա եթէ կարիք կը զգացուի մինչեւ Թեհրան ապահովելու օտարահպատակների շահերը եւ ո՛չ մի դէպքում չպիտի միջամտեն քաղաքական ներքին գործերին. նոյնիսկ չվարանեց այդ յայտագիրը գրաւոր յանձնելու ամբոխին որը առաջնորդուած էր իրենց մեծ կրօնապետով. իսկ ամբոխի այն մասը, որ շրջապատել էր զինուորներին, իւր բողոքի ու դիմադրութեան պատասխանը մտրակով ստացաւ, հիւպատոսի տուած գրաւոր ծանուցումը հինգե-*

61.- Հրետանիով։

րորդ օրը ջրուեց որովհետեւ բացի եկած անցած 625 զինուորներից 1100 էլ հետեւակ եկաւ եւ նոյնպէս 3 օրուայ ընթացքում մեկնեց Ռաշտ ու ապա Ղազուին. մի խօսքով ռուսաց զօրքը առաջ էր շարժւում դէպի Ղազուին. միեւնոյն ժամանակ յեղափոխական բանակը՝ յաղթանակներով դէպի Թեհրան։ Ռուսաց հեծելազօրը հազիւ Ղազուին հասած ամսիս 12ին երկու կողմերի մարտական բանակները միաժամանակ յարձակում են գործում Թեհրանի վրայ եւ ամբողջ 2 օր օրհասական կռուից յետոյ քաղաքը ամբողջապէս անցնում է յեղափոխականների ձեռք, բացառութեամբ պարսիկ կազակների բրիգադան. կէս օր հանգիստից յետոյ կրկին ահեղ յարձակում է լինում յեղափոխականների կողմից բրիգադայի եւ Սալթանաբադի վրայ ուրտեղ ահռելի դիրքերով շրջապատուած պալատում ապրում էր յաժամ միապետը։ Յարձակումը լինում է Եփրեմի եւ պարսիկ Ալի խանի ղեկավարութեամբ եւ յաջողւում է մերոնց՝ ամբողջ դիրքերն ու պալատը գրաւել. բայց ինչպիսի հիասթափութիւն, երբ յայտնւում է Լամառ սակայն վախկոտ ու թուլամորթ միապետը իւր կաշին փրկելու համար օր առաջ իւր շրջապատողներով ապաստանած է եղել Ռուսաց դեսպանատանը։ Քաղաքը 3 օր յեղափոխականների ձեռքը մնալով շատ ու քիչ կարգի տակ է դրւում եւ երէկ, ամսիս 16-ին, Մոհամէդ-Ալի-Շահի երկրորդ որդին, օրինաւոր ժառանգ թագաւորազն «Ահմեդ Միրզան» (8 տարեկան), յայտարարւում է ամբողջ Պարսկաստանին թագաւոր։ Սփահդարը որը հանդիսանում էր Գիլանի յեղափոխական բանակի պարագլուխ, նշանակուած է պատերազմական մինիստր։ Սարդարը-Ասադը որ համարւում էր «բախդիարցիների» բանակի պարագլուխ, ներքին գործոց նախարար, իսկ Ազիդը-Մուլքը մանուկ թագաւորի խրնամակալ, որին տալիս են Նայբը-Սալթանէ տիտղոսը. միւս մինիստրների նշանակումը լինելու է այսօր։ Թեհրանի դէպքերի մանրամասնութիւնը դժբախտաբար այսօր չպիտի կարողանանք տալ — քանի որ մենք էլ դեռ չենք ստացել։ Գրածները պաշտօնական հեռագրական լուրեր են ստացուած Թեհրանից, որոնց մէջ չէ յայտնուած ոչ տարած յաղթանակի մանրամասնութիւնը եւ ոչ էլ տրուած կորուստները։

Ընկերական բարեւներով
ՇԱՆԹ

Յ. Գ.- Ստացուել է N 4 Դրօշակները։

ԳԼՈՒԽ VII

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Այս գլուխը յատկացուած է կազմակերպական կարգ մը շրջաններու այն նիւթերուն, որոնք օրին մեր տրամադրութեան տակ չգտնուելու բերումով, եւ կամ բոլորովին նորայայտ փաստաթուղթեր ըլլալու հանգամանքով՝ տեղ չէին գտած այդ շարքի Զ. հատորի համապատասխան բաժիններուն մէջ։

Յաջորդաբար հետեւեալներն են անոնք.–

Ա 1.– «Տեղեկագիր Վան-Վասպուրականի».– Խիստ շահեկան տեղեկութիւններ 1906-1908 տարիներուն հայկական յեղափոխութեան այս կարեւորագոյն շրջանի՝ ներքին կուսակցական-ժողովրդական կազմակերպութեան եւ մարտական գործունէութեան, արհեստակցական ու գիւղացիական միութիւններու առաջացման, այլեւ հայ-թուրք-քիւրտ ժողովուրդներու միջեւ համիտեան բռնատիրութեան դէմ համագործակցութիւն ստեղծելու փորձերուն մասին։

(Մեր տպաւորութեամբ, այլ աղբիւրներու կարգին, Վասպուրականի այս տեղեկագրի հայթայթած նիւթերու օգտագործումով Միք. Վարանդեան կազմած է 1910 թ. Քոփենհակնի սոցիալիստական կոնգրէին ներկայացուած Հ. Յ. Դաշնակցութեան զեկուցագիրը (տեսնել էջ 227-245)։ Հաւանաբար միեւնոյն նպատակով ալ կատարուած են, Տեղեկագրի բնագրին վրայ եւ վերջաւորութեան, Ռոստոմի գրչով եղած յաւելումներ)։

Ա 2.– Վասպուրականի Կեդր. Կոմիտէի մէկ շրջաբերականը, որմով օգնութիւն կը խնդրուի սահմանադրական կռիւներու մէջ գտնուող Ատրպատականի հայութեան։

Բ 1.– «Հ.Յ.Դ. Բարձրաւանդակի Կ. Կոմիտէի 1909 թ. Մայիս 27ին Շրջ. ժողովի որոշումները», որ սահմանուած էր յղուելու Հինգերորդ Ընդհ. Ժողովին։

Բ 2 եւ 3.– «Տարօնը» եւ «Տեղեկագիր Սասնոյ». բնութագրութիւն յիշուած շրջաններու հայ ազգաբնակչութեան կենցաղին, բարքերուն ու սովորութիւններուն, հետաքրքրական մանաւանդ ազգագրական-ժողովրդագրական տեսակէտէ։

Գ.– «Տեղեկագիր Քղի գաւառին, Օսմ. երեսփոխանական ժողովին տրուած». նկարագրութիւն գաւառի յետամնացութեան, ժողովուրդի ընկերա-տնտեսական կեանքի անձուկ վիճակին, այլեւ ի մասին՝ թրքական իշխանութեանց ու պաշտօնէութեան ապիկարութեան՝ հայ եւ քիւրտ խառն բնակչութիւն ունեցող այս գաւառի բարեկարգման ուղղութեամբ։

ԽՄԲ.

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Փաստ. 669-114

Ա 1.– ՏԵՂԵԿԱԳԻՐ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Շահեկան փաստաթուղթ է ստորեւ ներկայացող գրութիւնը, որ հետաքրքրական տեղեկութիւններ կը փոխանցէ Վասպուրականի շրջանին Դաշնակցութեան ներքին կազմակերպութեան եւ գործունէութեան մասին: Որեւէ ձեւով թրքական գաղտնի սպասարկութեանց ձեռքը չիյնալու համար, կողմնակի ճամբաներով տեղեկագիրը հասցուած է Վառնա՝ Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդհ. Ժողովին: Ձեռագրին վրայ տեղ-տեղ Ռուստոմի գրչով կատարուած են մասնակի յաւելումներ, զորս նշած ենք ծանօթագրութեամբ (թիւ 5): Աւելի ընդարձակ է, դարձեալ Ռուստոմի ձեռագրով, տեղեկագրի վերջաւորութեան դրուած յաւելուածը, որուն արտագրութիւնը կը տրուի իր տեղին: Կը հետեւի Վասպուրականի Կեդր. Կոմիտէի մէկ շրջաբերականը պարսկահայերուն օգնելու մասին:

1906-908 թուականները Վասպուրականի կազմակերպական գործունէութեան ամենածաւալուած եւ հասուն շրջանն էր:

Այդ թուականներէն Վասպ. մարմինը իր շարքերը բաւականաչափ մաքրել էր անհարազատ տարրերից: Կազմակերպութեան մասսան գլխաւորապէս կազմում էին գիւղացիութիւնը, արհեստաւորները, մանր առեւտրականները եւ ազատ արհեստի մարդիկ:

Կազմակերպութեան քաղաքական մարմինները քաղաքին մէջ՝ հետեւեալներն էին՝ խումբ, ենթակոմիտէ, կոմիտէ եւ կենտ. կոմիտէ. ընդհ[անուր] շրջանին մէջ՝ բացի այդ մարմիններից կար եւ գործ[ադիր] մարմին իւրաքանչիւր գիւղում իբրեւ առանձնացած վայրերի վարչութիւն:

Աշխատանքի բաժանման սկզբունքը եղել է մեր գործունէութեան մէջ վարչական, օրինակ՝ քաղաքական խմբերից կազմուել են միեւնոյն ժամանակ մարտական-ինքնապաշտպանողական, արհեստակցական եւ պրոպագանդիստների խմբեր՝ ըստ ընդունակութեան, հակումների եւ պրոֆեսիոնալ դիրքի:

Քաղաքական կազմակերպութեան ձեւը գիւղերում համայնական էր. դուրս էին մնում միայն ծերերը ընդհանրապէս եւ յայտնի կալուածատէրերը: Խմբերը կազմուում էին միատեսակ տարրերից (հասակի, կրթութեան եւ պրոֆես[իոնալ] դիրքի): Բացի այդ ֆունկցիաներից, կազմակերպութիւնը ունէր եւ հաւաքական մարմիններ՝ ա) խմբապետական ժողովներ, որ ունէր խորհրդակցական բնոյթ՝ խմբական զեկուցումների, ընդհ. հարցերի եւ նրանց վարչային եւ պրոպագանդային պատրաստութեան համար, բ) շրջանային ժողովներ՝ շրջանի ընդհ. հարցերի մասին որոշումներ տալու եւ ընտրութիւններ կատարելու եւ գ) ռայոնական ժողովներ, որ ներկայանում է իբր կենտ. կոմիտէի ռայոնի բարձրագոյն ինստանցիան: Ենթակոմիտէները եւ կոմիտէները ընտրւում էին շրջանային ժողովներից, իսկ կենտ. կոմիտէն՝ ռայոնական ժողովից. վերջինին մէջ Արեւել. Բիւրոն ունեցել է իր ներկայացուցիչները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Խմբերի զբաղմունքը եւ պարտականութիւնները — արհեստակցական եւ մարտական նպատակներից զատ — էր՝ յեղափ. գիտակցութիւն ձեռք բերել, կազմակերպութիւնը ծաւալել, դրամական միջոցներ հայթայթել:

Կուսակցութիւնը սկզբնական տարիներում կամաւոր տուրքի ձեւով անդամավճարներ կը գանձէր, ապա յառաջատուական (պրոգրեսիւ) տուրքը ընդունուեց: Գիւղերում անդամավճարների 2/3-ը յատկացուած էր գիւղացիների սպառազինման, իսկ քաղաքում 1/3-ը: Մնացածը կը մտնէր կուսակց. գանձարան գործածուելու ընդհանուր պէտքերին: Բացի անդամավճարներից, յարմար ժամանակամիջոցներին, ընդհ. հանգանակութեան կը ձեռնարկուէր: Ժողովուրդի ծայրայեղ քայքայման պատճառով Կովկասից ստացուած դրամի միայն 1/10-ը հազիւ կը լրացնէր Վասպուրականը (Վասպ.ը ձեռնարկային վայր ճանաչուած լինելու պատճառով, կուսակցութեան ընդհ. բիւդջէից իր մասը ունէր):

Յեղափ[ոխական]-մարտական խմբերը երկու տեսակ էին — կուսակցական եւ ժողովրդային: Առաջինները կազմուած էին փախստական անհատներից (907-908 թուերին խմբերի կէսը գրեթէ տեղացի փախստականներից էր կազմուած) ընդամէնը 6 խումբ՝ 7-15 հայդուկներից բաղկացած, որոնք կը պահպանուէին կազմակերպական միջոցներով. թէեւ երբեմն ըստ կարիքի, այդ խմբերից նոր փոքր խմբակներ էին կազմուում: Ժողովրդային մարտական խմբերը կազմուում էին փորձառու կամ յանդուգն եւ ըստ կարելոյն ընտանեկան կապերից ազատ երիտասարդներից, որոնք միշտ կը վարժեցուէին թէեւ, բայց ազատ էին եւ պարապում էին իրենց անհատական գործով. պէտք եղած ժամանակ միայն կը ժողովուէին:

Կուսակցական մարտական խումբերը՝ ինտելիգենտզինուորական յեղ. հրամանատարութեան տակ, միշտ կը շրջէին դաշտ[ային] եւ լեռնային գաւառներում կազմակերպելու ժողովուրդը, զէնք փոխադրելու, զինավարժուելու, զէնք մատակարարելու եւ պաշտպանելու աւազակային յարձակումներից: Նոքա ձմեռը գիւղերում եւ քաղաքում, իսկ գարուն-աշուն՝ լեռներում կ'անցնէին:

Ժողովրդային մարտական խմբերը երբեմն մոբիլիզացիայի ենթարկւում էին մանեօվրների եւ վարժութիւնների համար մօտակայ լեռներում ռազմիկ-մասնագէտների ղեկավարութեան տակ (Վասպ[ուրականի] շրջանը 10-12 հոգի ունէր):

Բացի այդ երկու տեսակ մարտական ոյժերից, կազմակերպուած մասսայի գլխաւոր մասը կազմում էր ինքնապաշտպանութեան բանակը, որոնց նոյնպէս կըրթութիւն կը տրուէր երբեմն եւ զինուելու դիւրութիւններ:

Ժողովրդական զինումը 903-ից է սկսւում կանոնաւորաբար մինչեւ 905. բայց այս թուականին կազմւում է զէնք մատակարարող մի յանձնաժողով, որ կապ հաստատելով գլխաւորապէս քիւրդ եւ թուրք մաքսանենգների եւ զինուորականների հետ, զէնքի ներքին մեծ շուկայ ստեղծեց, թէեւ որակով միջակ զէնքերի: 905-907 երկու տարուան մէջ մօտ 2000 զէնք է գնել:

Ժողովուրդը՝ զինուելու պրոպագանդայի եւ հանգանակութեան ձեռնարկութեան շնորհիւ, կարճ ժամանակի մէջ մեծ գումարներ տրամադրելի արաւ, ծախելով շատ անգամ իրենց անհրաժեշտ երկրագործ. գործիքներից:

Իսկ կուսակցութիւնը, իր յեղափոխական ձեռնարկների համար, իր զէնքերը ստանում էր Կովկասից: Այդ նպատակին համար յատկացուած էին Ռուսաստանում, Կովկասում, ռուս-թուրք եւ ռուս-պարսիկ սահմանագլուխների եւ երկրի զանազան պունկտերի վրայ առանձին գործակալութիւններ եւ ընկերներ, որոնք միմեանց փոխանցելով՝ կենտրոնացնում էին Վասպուրականում եւ Մասունում: 906-908 թուերին այդ փոխադրութեան մեծագոյն մասը (դրամական վարձատրութեամբ) կատարւում էր քիւրդ մի քանի բէյերի հովանաւորութեան տակ, քիւրդ ձիաւոր եւ հետեւակ խմբերի ձեռքով: Փոխադրող քիւրդերը քիչ անգամ են խարդախել կամ սեփականացրել զէնքերը:

Զէնք եւ ռազմամթերքը ստացւում էր քաղաք մասառ մաս, ապա հիմնուած գաղտնի գործարաններում մասերը լրացւում էին, ամբողջացւում եւ պահւում էին քաղաքի եւ գաւառի պահեստներում (գետնի տակ, արտերի եւ այլ տեղերում շինուած գաղտնարաններում):

1.- Տասանորդական տուրքը գանձող կապալառուները:

ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ.— Մինչեւ 904 թիւը քիւրդ աւազակախմբեր եւ մանաւանդ քիւրդ բէյերը բացարձակ տէրն էին դրութեան. անարգել կողոպտում, սպանում եւ բռնաբարում էին: Իւրաքանչիւր բէյ կամ աղա իր «հովանաւորութեան» տակ էր առել հայի 5-50 գիւղ եւ դարձրել ստրուկ: Նոքա իրենց ծառաներից նշանակում էին գիւղական պահապաններ, որոնց ի փոխարէն նրանք ստանում էին տուրք (ցորեն, իւղ, պանիր, դրամ): Գիւղացու ամբողջ սեփականութիւնը եւ շատ տեղերում ընտանիքը նրանց կամայականութեան էին ենթարկուած: Ճանապարհները անապահով էին դարձել: Միւս կողմից կառավարութեան միլիթէզիմները[1] եւ հարկահաւանները սանձարձակ բռնակալութեամբ կը կեղեքէին ժողովուրդը: Ահա այդ էր վիճակը Վասպուրականի, երբ 904-ին Դաշնակցութիւնը սկսեց ծաւալել Վասպուրականում. յեղ[ափոխական] խմբերը երեւացին գիւղերում եւ լեռներում... եւ մի տարուայ մէջ բէյերի սանձարձակութեան վերջ դրուեց եւ հետեւեալ տարիներում վերացուեց նրանց հովանաւորութիւնը շատ տեղերում. աւազակութիւնները դադարեցին եւ կառավարական պաշտօնեաները սկսեցին համեմատաբար օրինական սահմաններում գործել: Մանաւանդ լեռնային գաւառներում կազմուեցին թռուցիկ մարտական խումբեր տեղական երիտասարդութիւնից՝ յեղ. մարտիկների ղեկավարութեան տակ, որոնք կը շրջէին գաւառը եւ սարսափ կը տարածէին քիւրդ բէյերի եւ աւազակախմբերի վրայ: Դրանք այնքան համակրանք եւ ժողովրդականութիւն ստեղծեցին, որ քիւրդ աշխատաւոր գիւղացին էլ պաշտպանելու համար դիմում էր այդ խմբերին:

907-908 թուականը յեղ. այդ ոյժը հասաւ իր փառաւոր կէտին. աւազակութիւնները սահմանափակուեցին, անհատական սպանութիւնները դադարեցին, բէյերի կամայականութիւնները վերջ գտան: Սարսափը տարածուել էր բոլոր քրդական կեղեքող շրջաններում: 907-908 թուականին մարտական խմբեր երեք խոշոր ընդհարումներ ունեցան քրդական աւազակային աշիրէթների հետ (Կաճէտ, Միծանց եւ Շատախի կամուրջի վրայ), որոնք քիւրդ եւ հայ գիւղացիների ոչխարները տարել էին եւ յարձակուել գիւղերի վրայ: Ոչխարները յետ խլուեցին եւ գիւղերը փրկուեցին: 908 թուի վերջին, աշիրէթներ քաջալերուելով կառավարութեան հալածանքից, փորձեցին յարձակումներ կազմակերպել հայ ժողովրդի վրայ: Տեղական ինքնապաշտպանողական եւ թռուցիկ մարտական խմբերի շնորհիւ տեղ-տեղ յարձակումները յետ մղուեցին. շատ տեղերում զգուշացան յարձակումներից:

ԱՋԳԱՑԻՆ ՀԱՍԱՐԱԿ[ԱԿԱՆ]-ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ.— Վերջին տարիներս կազմակերպութիւնը պարտաւորուած եղաւ իր հսկողութիւնը տարածել ազգային-

հասարակական հիմնարկութիւնների վրայ եւս։ Իսկ կրթական գործը, համարելով գիտակցութեան տարածման եւ սերունդը յեղափոխականօրէն դաստիարակելու ֆակտորներից[2] գլխաւորը, կուսակցութիւնը 905-ից մեծ թափով ձեռնարկեց դրան։ Համայնական ժողովներ կազմել տալով, վանական եւ հայ-ժողովրդային այլ եկամուտների աղբիւրների վրայ իր կոնտրոլը հաստատելով, կուսակցութեան յաջողուեց աւելի քան 40 գիւղական երկսեռ (խառն) դպրոցներ բանալ գաւառներում, ուսումը պարտադիր անել եւ երկու միջնակարգ դպրոցներ [հիմնել] Աղթամարում եւ Թիմարում (վերջինս փակուեց 905-ին եւ մինչեւ 908 տուել էր աւելի քան 20 գաւառական ուսուցիչներ։

Կուսակցութիւնը ակտիւ դեր էր ստանձնել եւ Ազգ. վարչութիւնների մէջ, որովհետեւ վերջիններս, մանաւանդ հին ռեժիմին, ազգ. ներքին խնդիրներում, կատարում էին եւ հայ ժողովրդական, քաղաքական իրաւունքների պաշտպանութեան դերը։ Շնորհիւ կուսակցութեան օժանդակութեան, Ազգ. վարչութիւնը մեծ հեղինակութիւն էր ձեռք բերել իր ձեռներէցութեամբ եւ յանդուգն բողոքներով։

ԴԱՏԱՐԱՆՆԵՐ։— Հին ռեժիմի դատարանական ծայրայեղ ապօրինութիւնները, ուժեղների պաշտպանութեան սկզբունքը եւ կաշառակերութիւնը ժողովուրդը անբարոյականացրել էին բոլորովին. կուսակցութիւնը ձեռք առաւ եւ այդ գործը։ Նա բոլոր շրջաններում կազմակերպեց միջնորդ դատարաններ քաղաքացիական թեթեւ դատերի համար, իսկ քրէական եւ այլ ծանր դատերը կը լուծուէին կուսակց. մարմինների առանձին սեկցիաներում։ Կարճ միջոցում այդ դատարանները այնքան ժողովրդականութիւն ձեռք բերին, որ թուրք եւ քիւրդ աշխատաւոր ժողովուրդն եւս իր ներքին դատերի համար կուսակցութեան դատարաններին էր դիմում։ Համայնքի դատարանները կուում էին եւ հարբեցութեան եւ անբարոյականութեան դէմ։ Մի գաւառ (Թիմար) միայն մի տարուայ մէջ 220 ոսկի խնայողութիւն ունեցաւ ոգելից ըմպելիներից։ Վերացուեցին գիւղական գինետուններ եւայլն։ Սակայն կուսակցութեան դատարանները հետզհետէ, շնորհիւ ծաւալին եւ ժողովրդականութեան ծանրաբեռնուելով, ծանրաբեռնեցին յեղ. ընկերներին՝ շեղելով իսկական նպատակէն. այդ պատճառով 908-ի Ռայոնական ժողովը որոշեց այլեւս պաշտօնապէս չմիջամտել դատերին, թողնելով համայնքին եւ միջնորդ դատարաններին։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ։— Երկրի տնտեսական քայքայման հետ ծայրայեղութեան հասաւ եւ կեղեքումը, մանաւանդ արհեստների մէջ, հանդէպ բանուորների։ Այդ պատճառով բանուորները, նախ անկազմակերպ, սկսեցին մասնակի գործադուլներ։ Կուսակցութիւնը այս պարագային նը-պատակայարմար համարեց իսկոյն համախմբել նոցա եւ կազմակերպուած պայքարի պատրաստել ի նկատի ունենալով եւ՛ երկրի քաղաքական եւ տնտեսական պայմանները։ 907-ին կարճ միջոցում կազմակերպուեցին ատաղձագործ, ոսկերիչ, դերձակ, հացագործ եւ նաւավարների արհեստակցական միութիւնները, որոնց մի քանիսի պահանջներին (ռոճիկի յաւելումը, ժամերի խնդիրը, արտաքսելու կամ մարդիկ ընդունելու պայմանները եւայլն) բաւարարութիւն տրուեց, սակայն շուտով վարպետներն եւս կազմակերպուեցին։ Այնուհետեւ մի քանի գործադուլներ յաջողութիւն չգտան, որից յետոյ կազմակերպութեան խորհրդով, խառն [մարմիններ] հիմնեցին եւ միութիւնները ամրապնդելու աշխա[տեց]ին մինչեւ 1908, երբ Սահմանադրութիւնից յետոյ աւելի պիտի դիւրանար իրենց դատի պաշտպանութիւնը։

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ։— Հին ռեժիմի պայմաններում անհնար էր կազմել թէեւ, բայց այդ միութիւնների կազմութիւնը ապագայում դիւրացնելու համար գիւղացիներին համայնական ձեռնարկներին վարժեցնելու փորձեր կատարուեցին։ Այսպէս, գիւղական ուսուցիչների նախաձեռնութեամբ (օգտուելով համայնական նահապետական գաղափարէ) ձեռնարկուեց տեղ-տեղ աղբիւրներ բանալու, առուներ փորելու, ճանապարհները հարթելու, գիւղի չքաւորի արտը քաղելու եւ կալսելու, նրա տունը շինելու, դպրոցը համայնական աշխատանքով կառուցելու եւայլն։ Բացի դրանից, կուսակցութիւնը եւ Ազգ. վարչութիւնը (առաջնորդարան) արտասահմանից ստացած նպաստների շատ չնչին մասը միայն առօրեայ ապրուստի յատկացնելով, նրա ամենախոշոր մասը յատկացուում էր գիւղացոց տնտեսութիւնը բարւոքելու։ Օրինակ, դրամի մեծ մասով սերմացու գնուեց եւ մեծ մասը տրուեց համանքին այն պայմանով, որ սերմը ցանուի գիւղի համայնքին (կամ եկեղեցական վանքին եւայլն) պատկանող հողի վրայ։ Համայնքը կը ցանէր, հերթով կը քաղէր, կը կալսէր եւ բերքը կը յատկացուէր հասարակական պէտքերին — դպրոցի, զէնքի եւայլն։ Գիւղերի աշարներն[3] եւս փորձուեց գիւղացիներին առնել տալ զուտ եկամուտով համայնական շտեմարաններ կառուցանելու համար, բայց յաջողութիւն չգտաւ։

ՊԱՁՔԱՐ ՀԱՐՍՏԱՀԱՐԻՁՆԵՐԻ ԴԷՄ։— Կուսակց[ութիւնը] գիւղացիներին կը դաստիարակէր իր իրաւունքները միացած կռուով պաշտպանելու ոգով։ Ընդհանրապէս նահանգում եւ մասնաւորապէս լեռնային

2.- Ներգործող ուժ, ազդակ։
3.- Բերքի տասանորդ տուրքերը։

գաւառներում, քիւրդ թափառաշրջիկ եւ աւազակաբարոյ ցեղապետները կամայական հարկեր էին դրել գիւղացոց վրայ. օրինակ կապալա անունով տուրք. իւրաքանչիւր գիւղ պարտաւոր էր աշնան տալ բէյին 8-10 քիլէ ցորեն, իւղ, պանիր, բուրդ, գուլպայ, կանեփ եւայլն։ Կուսակցութիւնը որոշեց վերացնել նոցա գերիշխանութիւնը եւ հարկատուութիւնը։ Կուսակցութեան հետ, լեռներում գումարուած գիւղերի յայտնի մարդոց մի ժողով, որոշեց այլեւս չվճարել այդ տուրքերը, ի հարկին դիմադրելով։ Այդպէս էլ եղաւ։ Աւազակները այդ առթիւ բաւական վնասներ պատճառեցին, բայց ի վերջոյ ընկճուեցին մի քանի կռիւներում եւ դադարեցրին պահանջել։ Այդպիսով վերջացաւ նուաստացուցիչ այդ տուրքը, ինչպէս նաեւ տարապարհակ բոլոր աշխատութիւնները։

Կուսակցական խմբերը հարկադրուած էին կռուել եւ սոսկալի կերպով ժողովրդին կեղեքող վաշխառուների դէմ, որոնք մի քանի տասնեակ դահեկանի փոխարէն տարիների ընթացքում մի քանի 1000-ների հասցրած վաշխեր կը պահանջէին։ Վաշխառուների ձեռքից խլուեցին բոլոր մուրհակները եւ քննուելուց վերջ այրուեցին ծայրայեղ անարդարութիւններ պարունակող մուրհակները (աւելի քան 200 հատ)։ Այսքանը միայն կարելի էր անել մինչեւ սահմանադրութիւնը։

ՊՐՈՊԱԳԱՆԴ։—

1.- Գրաւոր

906-ի վերջերից արտասահմանից ահագին գրականութիւն ներմուծուեց (քաղաքական-յեղափոխական)։ Այդ գրքերով կազմուեցին գաղտնի գրադարաններ քաղաքում եւ գաւառներում (իւրաքանչիւրում մէկ գրադարան)։ Ստացուում էին եւ մեծ քանակութեամբ կուսակց. օրգանը ինչպէս նաեւ կովկասեան կիսապաշտ[օնական] օրգաններ, որոնք կանոնաւորապէս ուղարկում էին գաւառները։ Կուսակցութիւնը իր կողմից 907-908 թ. պարբերաբար թողել է աւելի քան 10.000 օրինակ թռուցիկներ հայերէն, թուրքերէն եւ քիւրդերէն լեզուներով։ Հիմնուեցին նաեւ հայերէն «Երկունք» շաբաթաթերթը եւ թուրքերէն «Սապահ-իլլ-խայր» շաբաթաթերթը, որը առաջին սոց[իալ]-յեղ[ափոխական] թերթն էր ամբողջ երկրում։ Կային նաեւ դաշնակց[ական] անհատների կողմից հրատարակուող 2-3 խմորատիպ թերթեր։ Երկուքն էլ խմորատիպ էին։ Առաջինը լոյս տեսաւ միայն երկու համար եւ դադարեց վերջին խուզարկութիւններին, իսկ թուրքերէնը շարունակուեց մինչեւ 18 համար։ Վերջինները մանաւանդ տպւում էին մեծ քանակութեամբ, տարածւում ամբողջ Անատոլիայում գրեթէ. կարճ միջոցում մեծ ժողովրդականութիւն ունեցաւ։

2.- Բանաւոր։—

Բանաւոր պրոպագանդին սկսուեց պրոպագանդիստների մի խմբակ կազմելով, որոնք պիտի պատրաստուէին ցրուել գաւառները։ Քաղաքում պարբերական գաղտնի դասախօսութիւններ եւ վիճաբանական երեկոյթներ էր հաստատուած, որին մասնակցում էին միջնակարգ դպրոցների բարձրագոյն դասարանների աշակերտները եւ աշխատաւոր պատանիներ։ Կարճ միջոցում աւելի քան 20 պրոպագանդիստներ տարածուեցին գաւառներում՝ գրքերի, թերթերի եւ թռուցիկների բեռներով։ Մշակուեց պրոպագանդայի սիստեմատիկ կոնսպեկտներ[4]. տրուեց ցուցակներ, վիճակագրութիւններ՝ ուսումնասիրութիւններ կատարելու համար միեւնոյն ժամանակ։ Նոյնպիսի կազմակերպութիւններ կային եւ կանանց մէջ (5 խումբ) քաղաքում եւ մի քանի տեղ գաւառներում։

3.- Պրոպագանդ հարեւան ազգերի մէջ։—

Կուսակցական խմբերը 907-ից սկսած ազատ մուտք ունէին քիւրդ եւ թուրք աշխատաւորութեան շատ գիւղեր. նրանք գրկաբաց ընդունում, ունկնդրում եւ սկըսում էին կազմակերպուել։ Այդ նպատակի համար հրատարակուեց եւ «Սապահ-իլլ-խայր»ը։ Բերել տրուեց թուրք յեղ. բրոշիւրներ եւ յեղ. թուրք թերթեր։ Ժողովուրդը ագահութեամբ կլանում էր։ Այնուհետեւ նա շատ աւելի անկեղծ մօտեցաւ մեզ գանգատներով դէպի բէյեր Ֆեւ աղաներ։ *Սկզբում գաղտնի կերպով, գիշերներն էին դիմում, յետոյ համարձակութիւն ստացած եւ օր ցերեկով սկսեցին գալ գնալ*[5]։

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ՀԱՐԵՒԱՆ ԱԶԳԵՐԻ ՄԷՋ։— 1907-ի սկզբում գրաւեցինք տեղացի թուրքերից մի քանի քաղաքացիների եւ սպաների։ Կազմուեց մի մարմին, որ պիտի հրատարակէր «Սապահ-իլլ խայր»ը, ղեկավարէր պրոպագանդը քաղաքի եւ գաւառի մահմետական ազգաբնակչութեան մէջ։ «Օսմ. դաշնակց. կուսակց.» անուան տակ, այդ մարմինը բաց թողեց մի քանի թռուցիկներ, որ շատ լաւ ազդեց մահմետական ժողովրդի վրայ։ Ժողովուրդը սթափուեց եւ իր շահերը կապեց հայ ժողովրդի շահերի հետ։ Այդ գիտակցութեան հետեւանքն էր յետագայ մեծ ակտը։— դա բարբարոս կուսակալ Ալի բէյի տեռորի ակտն էր, որ ստորագրեց Դաշնակցութեան եւ Օսմ. յեղ. կուսակցութեան մարմինը եւ ղրկեց Կովկաս ի գործադրութիւն, որ եւ յաջողութեամբ գործադրուեց Բաթումում *Դաշն[ակցութեան] Կ. Կոմիտէի ձեռքով*։ Այդ յաջողութիւնը աւելի ոգեւորեց երկուստեք. քիւրդ եւ թուրք գիւղեր հեղեղւում են

4.- Զեկուցումներ, դասախօսութիւններ։
5.- Հոս եւ այսուհետեւ աստղանիշերու մէջ առնուած են Ռոստոմի ձեռագրով կատարուած յաւելումները։

*թուրքիկներ, գրքեր եւ պրոպագանդիստներ։ Դժբախտաբար թուրք պրոպագանդիստներ պակասում էին։ Նոքա դեռ այդ յանդուգն գործունէութեան համար հասունացած չէին (ազատ էին ապրում նոքա)։ Մահմետական ժողովրդի վրայ շատ լաւ էր ազդում եւ մեր խմբերի մէջ գտնուող թուրք 3-4 զինուորներ, որոնք մօտենում եւ պրոպագանդ էին անում։ *Մեր պրոպագանդիստները եւ թերթերը մտնում էին եւ զօրքի մէջ*։ Բացի այդ բոլորից կուսակցութիւնը, հիմնուելով Ընդհ. Ժողովի որոշման վրայ, բանակցութիւններ էր կատարում ասորիների, եզիդիների հետ եւս պատրաստուելու, միմեանց աջակցելու եւ միասին ոտքի կանգնելու համար։ Մեր նախկին տաքտիկը, այն է՝ քիւրդ աղաների միջոցով *անցնել քիւրդ ժողովրդին յաջողեցրինք*։ Մենք մօտենում էինք հասարակ ժողովրդին եւ նրան էինք աշխատում կազմակերպել։ Հիմքերը շատ հաստատուն էին եւ ապագան խիստ փայլուն, եթէ չհասնէր 908-ի մատնութեան սոսկալի հարուածը։*

ՏԱԿՏԻԿ. *— Նախ քան 906 զէնքի փոխադրութիւնը եւ պայքարը ընդունուած էր կատարել զինուած խմբերով։ Բայց այդ թուականից յետոյ, ընդհ. ձեռնարկների տեսակէտից վնասակար նկատելով այդ տակտիկը, փոխուեց։ Զէնքերի փոխադրութեան ձեւը փոխուեց եւ զինուած խմբերը կազմւում եւ գործում էին միայն աւազակային խմբերի եւ կեղեքիչների դէմ։ Այդ խմբերը հնարաւորութեան սահմաններում խոյս էին տալիս կառավարութեան զօրքերի [հետ] ընդհարումներ ունենալուց։ Մեր նպատակն է եղած ստեղծել պատկառելի պատերազմական ոյժ, ունենալ մեզ հետ նոյն լծից ճնշուող ժողովուրդների մեր մասերը եւ ապստամբել։ Այդ նպատակին ձգտել ենք մինչեւ վերջ։*

1907-908 թուականներին կազմակերպութիւնը ստիպուած է եղել կատարելու բազմաթիւ յայտնի եւ գաղտնի տեռորներ (մօտ 10-12) գլխաւորապէս հայ դաւաճանների եւ պետական պաշտօնեաների։ Տեռորի են ենթարկուած եւ քիւրդ 2 կեղեքիչներ. այդ ակտը մեծ գոհունակութեամբ է ընդունուել քիւրդ ժողովրդի կողմից։

ԿՈՒՍԱԿՑ. ԹՈՒԱԿԱՆ ԿԱՁՄԸ.—

---6

ԺՈՂՈՎՆԵՐ. *— Կազմակերպութիւնը ունի 1) Խմբապետների ժողով (15 օրը [մի] անգամ), խորհրդակցական բնոյթի կրող, որ եւ իրաւունք ունէր հարցապնդելու կենտր. մարմնին. 2) Պրոպագանդիստների ժողով՝ խորհրդակցական կուսակց. կազմակերպ. խնդիրներում, բայց վճռական՝ պրոպագանդային խնդիրներում. 3) Շրջանային, 4) Ռայոնական ժողովներ, որոնք ներկայանում են [որպէս] կոմիտէի շրջանի եւ կենտ. կոմիտէի բարձրագոյն մարմինները եւ 5) Արեւել. Թուրքիոյ կենտ. մարմինների համաժողովը, որ կայացաւ 908-ին, Էրզրում։ Նրա որոշումները[7] պարտաւորեցուցիչ էին Արեւել. Թուրքիոյ մարմինների համար։ Արեւել. Բիւրոն այնտեղ իր ներկայացուցիչը ունէր։*

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կուսակցութիւնը բովանդակ այդ գործունէութիւնը կատարել է խիստ հալածական, ծայրայեղ զգոյշ եւ գաղտնարաններում ծածկուած ցերեկը, միայն գիշերը գործելով։ Մարմինը իր անդամների մէջ բաժանել է ամբողջ աշխատանքը սեկցիաների ձեւով — 1) Կազմակերպութիւն, 2) Պրոպագանդ, 3) Թղթակցութիւններ ներքին եւ արտաքին, 4) Գործավար, 5) Հաշուապահ, 6) Պահեստների վերահսկիչ։ Իւրաքանչիւր գործիչ ապրում էր 3-5 զինուած ընկերներով ամէն օր տեղը փոխելով։

Մինչեւ կուսակալ Ալի բէյի գալը (1907) կուսակցութիւնը ծաւալել էր ամբողջ նահանգում հայ եւ հարեւան ցեղերի մէջ։ Համերաշխ գործակցութիւնը սկսուել էր հայ եւ միւս տարրերի մէջ։ Ալի բէյը եկաւ առանձին լիազօրութիւններով ճնշելու Վասպ[ուրականի] հռչակած յեղափոխութիւնը։ Նա նախ դժոխային անգթութեամբ սկսեց 20-22 տարիների տուրքեր գանձել ժողովրդից, ապա զինուած գաղտնի ոստիկանութիւն հիմնեց գաւառում եւ քաղաքում։ Պատերազմական դրութիւն յայտարարեց. շրջուն պահակներ կազմեց, որոնք մինչեւ լոյս թափառում էին փողոցներում եւ այգիներում։ Սակայն որքան հալածանքը զօրեղանում, այնքան ուժեղանում եւ ծաւալում էր կազմակերպութիւնը։ Կուսակցութիւնը ունէր զինական եւ ռումբերի ձուլարան եւ գաղտնի գործարաններ (առաջինը գոյութիւն ունէր 904-ից)։ Այդ ժամանակ դիպուածով գործարանում պայթեց մի ռումբ, որի ուր լինելը սակայն կառավարութիւնը իմացաւ միայն 3րդ օրը, երբ արդէն գրեթէ դատարկուած էր գործարանը։ Ռմբային գործարանի երեւան գալը ահագին սարսափ տարածեց կառավարութեան վրայ. հետապնդումը աւելի սաստկացաւ. մատնութիւնները ծայր տալ սկսեցին. դրան իբր պատասխան, կուսակցութիւնը տեռորի ենթարկեց գործարանը մատնող հայ մի պաշտօնեայ, ապա նրանից յետոյ մի քանի մատնիչներ զարնուեցին քաղաքում եւ գաւառի զանազան ծայրերում միաժամանակ։ Կառավարութիւնը չփոթուեց եւ չկարողացաւ ոչ մէկ ահաբեկիչ ձերբակալել։ Ալի բէյի ճախողութիւնը իր գագաթնակէտին հասաւ, երբ Աղթամար կղզում ապաստանած 8 յեղ[ափոխական] ընկերների դէմ 400 զօրք եւ 3 թնդանօթ ղրկելուց յետոյ, յեղ. ընկերները կղզին մօտեցող զինուորներին որոնց գերի բռնելու հնարաւորութեան մէջ էին, յանդիմանեցին եւ յետ դարձրին, իսկ իրենք գիշերով անհետացան։ Կղզին ռմբակոծուեց եւ մասամբ թալանուեց։ Ալի բէյը այնուհետեւ յուսահատուած ժողովրդի անէծքի հետ հեռացաւ Վանէն եւ Թուրք-Հայ Մարմնի վճռով տեռորի ենթարկուեց Բաթումում։ Այդ ժամանակամիջոցը ոսկեդարն էր Վասպուրականի համար։ Բոլոր ցեղերի աշխատաւոր տարրերը մօտեցել էին իրար եւ դաշնակցել էին։ Բայց այդ ժամանակն էր, որ յեղ. շարքերից վիժուած Դաւիթ անունով մէկը, անհատական պատճառներից դրդուած, մատնեց կազմակերպութեան պահեստները, առաջին անգամ համեմատաբար փոքր քանակութեամբ, ապա երեք ամսից յետոյ, երբ 12.000 զօրք կենտրոնացած էր, մեծ քանակութեամբ (600 կազմակերպ[ական], 1000-ից աւել ժողովրդ[ական] եւ մօտ ½ միլիոն փամփուշտ)։

Կազմակերպութիւնը որոշեց ազատել միայն մթերքը, չկռուել, որովհետեւ գտնում էր, որ կառավարութեան այդ ոյժի եւ բարբարոս քուրդ ցեղերի աւելի քան 20.000 խուժանի առաջ չպիտի կարողանայ միայնակ դիմանալ եւ ժողովուրդը պարտուելուց յետոյ զէնքերի [հետ] միասին պիտի ոչնչանայ։ Մթերքին եւս չյաջողուեց ազատել, շնորհիւ դաւաճանին, որ մատնել էր աւելի քան 300 կազմակերպական անդամներ, որոնց կը ձերբակալէին մասսայօրէն եւ զարհուրելի տանջանքների տակ գաղտնիքներ կ'որսային։

908 թուականը սոսկալի թուականը եղաւ Վասպուրականի համար։

Կազմակերպութեան ընկերներ 4-5 խմբերով գաւառ ելան քաղաքի զօրքի հետ մի ընդհարումից յետոյ, գոնէ գաւառի զէնքերը փրկելու. նրանց յաջողուեց փրկել միայն 5-6 գաւառի զէնքերը։ Գաւառներում խմբերը 5-6 կռիւներ ունեցան զօրքի եւ աւազակային խմբերի հետ։

Վերջապէս կազմակերպութեան յաջողուեց տաճկական կենտրոն եղող թաղերում իսկ (որովհետեւ դաւաճանը խիստ հսկողութեան տակ էր) տեռորի ենթարկել դաւաճանը։

Կազմակերպութիւնը 907-908-ին ունեցել է 7 կռիւներ զօրքի եւ քիւրդ աւազակային ցեղերի հետ։

Սահմանադրութեան առաջին օրերին մեր ընկերները իջան լեռներից եւ մտան ազատ գործունէութեան մէջ։ Ժողովուրդը խանդավառուած ընդունեց նրանց։ Կուսակցութիւնը սկսեց իր կազմակերպութիւնները նոր հողի վրայ։

Ազգ[ային] կուլտուրական խնդիրների մէջ ակտիւ դեր ստանձնելով, միեւնոյն ժամանակ ձեռնարկեց գիւղ[աց]կական միութիւնների, որ ներկայումս Վասպ. շրջանում հասնում է .....[6] խմբերի։ Քաղաքում կազմուեցին արհեստակցական խմբեր։ Պահպանուեց նաեւ ինքնապաշտպ[անութեան]-մարտական խմբեր ռէակցիոներ ական շարժումների եւ աւազակախմբերի դէմ։

Սահմանադրութեան առաջին իսկ օրերին կազմակերպութիւնը ինքն իրեն գտաւ երկիր վերադարձող հայ գաղթականների հողային հարցի դէմ-յանդիման։ Կազմակերպութիւնը Պոլսի Մարմնի, տեղական Ազգ. վարչութիւնների եւ իր պարլամենտական ներկայացուցիչների միջոցաւ հետապնդեց հարցը, Վասպ[ուրականի] մէջ եղած հողերի մեծ մասը վերադարձնել տալով եկողներին (մի տարուայ մէջ 40.000 հոգի են մտել Թուրքիա)։

Կազմակերպութիւնը այժմ համերաշխ է եւ երիտասարդ թուրք կուսակցութեան հետ, որի գործակցութեամբ զսպւում են տեղական ռէակսիոն տարրերը, բաւականութիւն է տրւում երկուստեք վէճերին եւ պաշտպանւում է աշխատաւոր տարրի քաղաքական եւ տնտեսական շահերը[8]։

6.- Բաց է ձգուած, հաւանաբար բերանացի զեկուցուելու համար։

7.- Բնագրին մէջ սխալմամբ գրուած է «Ժողովներ, ուղղեցինք՝ «Որոշումներ». կ'ակնարկուի 1905 թ. Յոկտեմբերին գումարուած ժողովին։ Տեսնել «ՆԻՒԹԵՐ»ու Զ. հատոր, էջ 336-343։

8.- *Ինչպէս նշուեցաւ, ահա եւ Ռոստոմի յաւելումը տեղեկագրի վերջին էջին վրայ։*

«Մշոյ մասին – Ռուբէնից *[Տէր Մինասեան]*։

Էրզրումի Կ. Կոմիտէի գործունէութիւնը մինչեւ սահմանադրութիւնը եղել է լոկ քաղաքական։ Հաստատուած էր սերտ կապ տեղական թուրք յեղափոխական տարրերի հետ. դա աւելի ամրապնդուեց Թօսունն պէյի գնալով։ Թօսունն պէյը ուղարկուած էր *Դ[աշնակցութեան]* կողմից Էրզրում յատկապէս թուրքերի մէջ գործելու նպատակով։ Փոխադարձ համաձայնութեամբ որոշուած էր, որ հայերը աչքի չընկնին, ցոյցերին չմասնակցին, որպէս-*[զի]* կառավ*[արութիւնը]* չօգտուի այդ հանգամանքից – յեղափոխ*[ական]* շարժման ազգային կռուի կերպարանք տայ։ Էրզրումի ցոյցերը ահագին ցնցում առաջ բերին ամբողջ Թուրքիայում։

Սահմանադրութիւնից յետոյ սկսուեց լեգալ գործունէութիւնը։ Կազմուած են արհեստակցական եւ գիւղացիական միութիւնները. կազմ[ակերպութիւնը] զբաղւում է նաեւ ընդհանուր կուլտուրական-դպրոցական գործերով։

Դ[աշնակցութեան] դերը Մարտ 31ի ժամանակ *[խօսքը կը վերաբերի Ապտիլ Համիտի յետադիմական պետական հարուածի փորձին – ԽՄԲ.]* աչքի ընկաւ մանաւանդ Էրզրումում, ուր Թոփչեանի պաղարիւնութեան եւ հմուտ ղեկավարութեան շնորհիւ խորտակուեց նահանգապետի նենգ ծրագիրը՝ համախմբել երիտասարդ յեղափոխական ուժերը՝ զէնք տալու պատրուակով, ջարդել նրանց եւ ապա սկսել մեծ կոտորածը։

Վանում եւս կարգը պահպանուեց մեծ մասամբ *Դ[աշնակցութեան]* Կ. Կոմիտէի ձեռք առած միջոցների շնորհիւ»։

Փաստ. 669-28

Ա 2.– ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ–ԿՈՉԸ ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐՈՒՆ ՕԳՆԵԼՈՒ

Կովկասի կողքին, Վասպուրականի դաշնակցական կազմակերպութիւնն էր, որ սահմանակցութեան եւ երկար տարիներու սերտ գործակցութեան բերումով, ամէնէն շօշափելի օժանդակութիւնը կը բերէր Պարսկաստանի մէջ սահմանադրական կարգերու ամրապնդման ի խնդիր մատնանշող հայ ուժերուն: Ներկայ շրջաբերականը, որմէ օրինակներ ղրկուած էին շատ մը շրջաններ, մէկ օրինակն է Տարօն ուղարկուածին, որմով կը խնդրուի իրենց շրջանին մէջ եւս ընթացք տալ օժանդակութեան գործին:

Հ.Յ.Դ. Դուրան-Բարձրաւանդակի
Կ. Կոմիտէին

Ընկերներ!

Պարսիկ ժողովրդի ազատագրական անվկանդ շարժումները, որոնք յաջողեցան վերջապէս քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը գրաւել, չէին կրնար չարժանանալ Դաշնակցութեան սրտագին եւ գործօն համակրութեան:

Պարսիկ ժողովրդին հետ տարիներով ապրող, անոր խորունկ ցաւերուն եւ վիշտերուն մասնակից հայը, որքան ալ սակաւ իր թուով, հրամայական պարտականութիւն մը ունէր զոհողութեան իր բաժինը բերելու ընդհանուր հայրենիքի փրկութեան դատին: Եւ Դաշնակցութիւնը, որ հաւատարիմ իր ընկերվար-յեղափոխական ծրագրին՝ արձագանգ տուած է միշտ ամէն առաջդիմական երեւոյթի կամ շարժումի որ կը նպաստէ իր հետապնդած իտէալներու իրագործումին՝ չէր կրնար ձեռքերը ծալած սպասել, ի տես պարսիկ ժողովրդի հերոսական ճիգերուն՝ Շահերու ատելի լուծը խորտակելու:

Պարսիկ ժողովուրդի մէջ ծայր տալ սկսած ռամկավար ձգտումներուն աջակցելու յորդորը արդէն իսկ տրուած էր Չորրորդ Ընդհ. Ժողովին: Պարագաները փոխուած էին անկէ ետք. դէպքերը գահավէժ կը յաջորդէին իրար, եւ ապա Թաւրիզի ապստամբական պոռթկումին վաղորդայնին, Ատրպատականի Կենտր. Կոմիտէն կ՝որոշէր ամէն տրամադրելի միջոցներով գործակցիլ պարսիկ սահմանադրական շարժումի յաղթանակին: Հ. Յ. Դաշն. Խորհուրդը որ քիչ ետք կը գումարուէր՝ վաւերացուց Ատրպ[ատականի] Կ. Կոմիտէի որոշումը եւ արտօնեց Արեւելեան Բիւրոն հնարաւոր աջակցութիւնը փութացնելու:

Այդ օրէն ի վեր, հակառակ Կովկասի ռուս իշխանութիւններու բոլոր խստութիւններուն՝ Դաշնակցութիւնը ի վիճակի եղաւ ղեկավար ու կռուող ընկերներ, զէնք ու պայթուցիկ հայթայթելու պարսիկ սահմանադրականներուն: Թողնելով մէկդի զէնքի եւ ռազմամթերքի մեծաքանակ առաքումը – որու մէկ մասը բռնուեցաւ ռուս եւ պարսիկ իշխանութիւններու կողմէ – շատ աւելի թանկագին նուէր մը տուինք մենք – 18-է աւելի ընկերներ... ընտիր ընկերներ նահատակուեցան յանուն պարսիկ ժողովրդի դատին, իրենց աճիւնը յաւիտենական վկայ թողնելով Դաշնակցութեան կենդանի եւ անձնուէր գործունէութեանը՝ Պարսկաստանի վերածնունդեան գործին:

Քաղաքական պարագաները չէին ներեր, բնականաբար, մեր մասնակցութիւնը ի լուր աշխարհի հրատարակելու. մերինները կռուեցան պարսիկ սահմանադրական դրօշի ներքեւ, պահպանելով հանդերձ իրենց ռազմական ինքնուրոյնութիւնը: Առանց սակայն պարծենալու կարելի է պնդել թէ մեր ընկերները վճռական դեր մը ունեցան եւ ունին այսօր Թաւրիզի վերջին ամիսներուն հերոսական ընդդիմադրութեան ու մասնաւորապէս Խոյ-Սալմաստ-Ուրմի շրջանի ռազմական գործողութիւններու մէջ:

Այս երկարատեւ պայքարը չէր կրնար չանդրադառնալ բնակչութեան տնտեսականին վրայ. Ատրպատականի առեւտուրը շատոնց դադրած է. պարսկահայը չի կրնար առաջուան պէս պանդխտութեան դիմել ապրուստ ճարելու, մինչդեռ պատերազմական գործողութիւնները ծանր զոհողութիւններ կը պահանջեն, որոնք գրեթէ բացառապէս ինկած են պարսկահայ աշխատաւոր դասակարգին վրայ: Եւ ահա ժամանակէ մի ի վեր օգնութեան կոչեր է որ կը ստանանք մենք սահմանէն անդին կռուող մեր ընկերներէն:

Իբրեւ սահմանագլխի Կ. Կոմիտէ՝ հնարաւորը ըրինք, անոնց օգնութեան փութալու ինչով որ կրնայինք: Մինչեւ հիմա ղրկուած է հոն մօտ 80 հրացան եւ 40.000 փամփուշտ: Կռուող ընկերներ ալ ճամբեցինք հոն – շա՛տ աւելին կրնայինք ընել, եթէ անհրաժեշտ ծախքերու համար տրամադրելի գումարներ ունենայինք:

Պարսկահայը տարիներ շարունակ անհուն զոհողութիւններ յանձն առած է տաճկահայ դատին համար, պատըսպարելով մեր խումբերը: Եւ այսօր երբ ինքն է որ եղբայրական օգնութեան կը կարօտի, երբ դերերը փոխուած են սահմանին երկու կողմը – մեր տաճկահայ դաշնակցականներուս վրայ կը ծանրանայ նուիրական պարտականութիւն մը՝ օգնութեան ձեռք կարկառել անոնց:

Վասպ[ուրական]ի Կենտր. Կոմիտէն, իր աշխարհագրական դիրքին բերումով ստանձնած ըլլալով օգնութեան գործին ղեկավարումը՝ ներկայիս կոչ կ՝ընէ Դաշնակց. բոլոր մարմիններուն հանգանակութեամբ կամ այլ միջոցներով, դրամական նպաստ փութացնելու Պարսկաստանի մէջ մեր կռուող խումբերուն:

Ստացուած գումարներու մանրամասն հաշիւը իր ժամանակին կը ներկայացուի թէ՛ նուիրատու եւ թէ բարձրագոյն ձեռնհաս մարմիններուն:

Կեդրոնական միւս կոմիտէներէն կը խնդրուի լայն շրջաբերութիւն տալ սոյն շրջաբերականին, առանց անխորհրդապահ յայտնութիւններու տեղի տալու:

Ընկերական ջերմ բարեւներով
Վասպ.ի Կենտր. Կոմիտէ

Վան, Մարտ 28, 1909

Յ.Գ.- Ղրկուելիք գումարները վճարելի ընել տալ Վանի մէջ գործող դաշնակցական ընկերներէն Արամին, Իշխանին կամ Վռամեանին[9] եւ կամ անոնց հրամանին:

Միրելիք

Այս շրջաբերականից ղրկած ենք ամէն տեղ: Մինարէթի[10] ընկերներին կ՝աշխատենք ռազմական օգնութիւն հասցրնել հնարաւոր չափով, իսկ դրամականի եւ ո՛չ մի միջոց չունենք: Արէք ինչ որ կարող էք. Հաջին[11] լաւ գիտէ այնտեղի վիճակը: Մինարէթի յաղթանակը Թաւրիզի յաղթանակն է, իսկ պարտութիւնն՝ ընդհակառակն: Ամենաչնչին օժանդակութիւնը մեծ դեր կրնայ խաղալ: Շրջաբերականից զաղտնապահական կէտերը հանելով տարածեցէք:

Բարեւներով՝ Ի դիմաց Վասպ.ի Կ. Կոմիտէի
ԿԱՐԼՈՍ

909, III-30
Վան

9.- Յաջորդաբար՝ Արամ Մանուկեանին, Վանայ Իշխանին (Նիկոլ Միքայէլեան) եւ Արշակ Վռամեանին:
10.- Սալմաստի:
11.- Ամենայն հաւանականութեամբ Կոտոյի Հաջիին (Յակոբ Կոտոյեան):

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Փաստ. 701-66

Բ 1.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ Կ. ԿՈՄԻՏԷԻ 1909 Թ. ՄԱՅԻՍ 27Ի ՇՐՋ. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ժողովին մասնակցող կոմիտէական շրջանի պատգամաւորները.

Դուրան	1. Ովասիսի[1] շրջանէն	3 հոգի
	2. Կռուածաղկի[2] շրջանէն	3 հոգի
	3. Սոխակեան[3] »	3 »
	4. Սահակեան[4] »	3 »
	5. Վահագնեան[5] »	3 »
Սալն[ոյ]-Ջոր[6] եւ շրջանակները		4 հոգի
Արշարունիք		3 հոգի
Պուլանըգ-Մանազկերտ (Հայք-Ապահունիք)		3 հոգի
Խոյթ-Բռնաշէն		2 հոգի
Կինճ-Ճապաղջուր		1 հոգի
Կեղր. Կոմիտէից (Դ.-Բ.)		2 հոգի
Ձայնի իրաւունքով հրաւիրուած էին կազմակերպիչ եւ շրջիկ ընկերներէն		7 հոգի
Խորհրդակցական ձայնով		2 հոգի
[Ընդհ.]		39 [հոգի]

Զեկուցումներ

Շրջանների պատգամաւորները գրաւոր եւ բերանացի զեկուցումներ տուին իրենց շրջանների մասին. իսկ ընկեր Գարմէնը[7] ընդհ. Կ.Կ.ի կազմակերպական գործունէութեան մասին.—

Ընդհ. եզրակացութիւն.— Որ ժողովին ներկայ եղող կոմիտէական շրջաններում կազմակերպութիւնը բաւարար վիճակի մէջ էր, այսինքն Սահմանադրութենէն յետոյ, համաձայն մայր կանոնագրի, վերակազմուած են նախկին գիւղական քաղաքական խմբերը եւ կազմակերպուած են նոր շրջաններ։ Կոմիտէական իւրաքանչիւր շրջանը ունեցել է իւր կազմակերպիչ-պրոպագանդիստները. սակայն նկատի ունենալով ժողովրդի տընտեսական, մտաւորական եւ բարոյական քայքայուած եւ ընկած դրութիւնը եւ սահմանադրական իրաւակարգի առաջադրած նոր եւ բարդ խնդիրները, տիրող կարգերի, պայմանների, գաղափարների, աշխարհահայեացքների մէջ առաջադրած փոփոխութիւնները, գործունէութեան նորանոր ասպարէզները, ինչպէս եւ շրջանի գործիչ ընկերների յոգնած եւ նոր իրաւակարգին եւ նոր պահանջներին անպատրաստ լինելը, միաձայն որոշեց հրաւիրել նոր եւ կարող պրոպագանդիստ եւ կազմակերպիչ ոյժեր մարմինները զօրեղացնելու եւ կազմակերպական գործը նոր թափով եւ նոր ուղղութեամբ առաջ տանելու համար։

Այս նկատումների վրայ աւելացնելով եւ այն, որ մինչեւ օրս մեր շրջանը մասնաւորապէս հնարաւորութիւն չէ ունեցել լայն շրջ. ժողովներ եւ ընկ. խորհրդակցական ժողովներ հրաւիրել եւ ժողովրդի կուլտուրապէս յետամնաց դրութեան պատճառով Դաշնակցութեան ծրագ[րային] սկզբունքները, աշխարհահայեացքը, կազմակերպական գործունէութեան տաքտիկը, կազմակերպչական ձեւերը, շատ սակաւ բացառութեամբ, անծանօթ, անհասկանալի է մնացել մեր կազմակերպուած համայնքին, որ մինչեւ այժմս կռուել է թէեւ տիրող ռեժիմի դէմ, բայց զուրկ գիտակ եւ պարզորոշ գաղափարից, զուրկ իրենց ուրոյն սեփական քաղաքականութիւնից։ Ուստի այս բոլոր նկատումների հիման վրայ, որոշուեցաւ շրջանային ժողովին աւելի լայն ծաւալ տալ եւ իւրաքանչիւր շրջանէն հրաւիրել որոշ թուով գիտակ եւ մարտական ոյժեր եւ զբաղումները բաժանել երկու մասի.

ա) Բուն կազմակերպական ներքին խնդիրներ, որոնց որոշումները տրուելու է իրաւասու *ձայների 2/3-ի մեծամասնութեամբ, որը աւելի պիտի լինի ամբողջ շրջանի հրաւիրուած իրաւասու ձայների կէսից։*

բ) Ընդհանուր կազմակերպական եւ կարգապահական հարցեր, որոնք կը վճռուին ներկայ եղող ձայների մեծամասնութեամբ։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԱՑՐ ԴԻՒԱՆԻՆ

Շրջանի Ռայոնական ժողովը ընտրեց մայր դիւանը բաղկացած երկու նախագահից եւ երկու քարտուղարներից։

Ժողովը գործնական միջոցաւ միաձայն ընտրեց ընկերներ Գարմէն եւ Մարգպետ[8] (նախագահ). իսկ Ցարութիւն եւ Արտաշէս (քարտուղար)։

Նախագահ Գարմէն.— Նիստ բաց արաւ, առաջարկելով բոլոր ժողովականներին որ յոտնկայս յարգեն նահատակ ընկերների յիշատակը. խրախուսեց հետեւիլ զոհուող ընկերների բարի օրինակին. մոռանալ մասնաւոր անձնական բնոյթ կրող խնդիրները. սիրտ սրտի, ձեռք ձեռքի տուած միախոհ ու միահամուռ սկսել համայնքին օգուտ ընծայող զբաղումներուն (ծափեր)։ Ընկեր նախագահը մանրամասնութեամբ պերճաբանօրէն վեր բերեց դիւանի պարտականութիւնները ընդ որս եւ Շրջանային ժողովի ներքին կանոնագիրը (Ա[ռեւելեան] Բիւրոյի շրջանի Ռայոն. ժողովի որոշումներից)։

1.- Շրջանային ժողովը ընտրում է մի մշտական դիւան բաղկացած երկու նախագահից եւ երկու քարտուղարներից։

2.- Դիւանի պարտականութիւնն է օրուայ հարցերը մշակուած ներկայացնել ժողովին, նշանակել ընդհանուր եւ մասնաժողովների նիստերը, ժողովների տեղն ու ժամանակը, հոգալ բանաձեւերի պատրաստելու մասին, նախագահել ժողովներին եւ խմբագրել ժողովների արձանագրութիւնները յաջորդ ժողովին ներկայացնելու համար։

3.- Արձանագրութեան մէջ մտցնել խօսողների մտքի ամփոփումը. ցանկացողները կարող են իրանց խօսածը գրաւոր տալ արձանագրութեան կցելու համար։

4.- Շրջանային ժողովը ունենում է օրական 2 նիստ 5ական ժամ տեւողութեամբ. առաւօտեան ժամ 2-7, երեկոյեան ժամ 11-4։

5.- Ժողովին ուշացողների անունները մտցնել արձանագրութեան մէջ. երեք անգամ առանց յարգելի պատճառի ուշացողի անունը գրել եւ յայտնել իր մարմնին։

6.- Նոր հարցի մասին միեւնոյն անձը առաջին անգամ կարող է խօսել 20 րոպէ, երկրորդ անգամ՝ 10 րոպէ, իսկ երրորդ անգամ՝ 5 րոպէ. ժողովը իրաւունք ունի թոյլ տալու մէկին աւելի երկար խօսելու։

7.- Նախագահը կարող է առաջարկել ժողովին փակել ցանկը կամ կրճատել նրա թիւը. առաջին դէպքում վճռւում է բացարձակ մեծամասնութեամբ իսկ երկրորդ դէպքում՝ ձայների 2/3-ով։ Նոյն իրաւունքը պահւում է ժողովականներից 3-ին։

8.- Ըստ կարգի խօսում են 2 հոգի (թեր եւ դէմ) եւ ոչ աւելի 2 րոպէից։

9.- Նիստը վաւերական է երբ ժողովատեղի եկածների 2/3-ը ներկայ են։

10.- Կարեւոր նշանակութիւն ունեցող հարցերի որոշումը տրւում է իրաւասու ձայների 2/3-ի մեծամասնութեամբ, որը աւելի պիտի լինի ամբողջ շրջանի իրաւասու ձայների կէսից։ Կարգապահական հարցերը վճռւում են ներկայ եղող ձայների սոսկ մեծամասնութեամբ։

11.- Բանաձեւերը պէտք է ներկայացնել գրաւոր։

բ.- Շրջանային ժողովը անհրաժեշտ է համարում չեշտել հետեւեալ կարեւոր կէտերը։

1.- Ապագայում Կենտր. Կոմիտէները համապատասխանելու են իրանց գործունէութեամբ այն գլխաւոր պահանջներին (կազմակերպութիւն, դրամ, մարտական պատրաստութիւն), որոնք չեշտուած են կանոնագրի մէջ։ Շրջանային ժողովներին հրաւիրուելիս շրջանային ժողովները ուղարկելու են իբրեւ շրջանի ներկայացուցիչ իրանց շրջանի այն վայրերից որ ցոյց են տուել ամենամեծ կենսունակութիւն ու գործունէութիւն։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿ.— Շրջանային ժողովը ամբողջ երկու նիստ նուիրելով այդ հարցերին, լսելով ընկերների կողմից պատրաստուած գրաւոր թէ բերանացի զեկուցումները, որոշեց միաձայն։— Շրջանային ժողովը ուշի ուշով լսելով Հ. Ց. Դաշնակցութեան Նպատակի՝ աշխատաւոր դասակարգի քաղաքական-մարդկային, տնտեսական-դասակարգային եւ ազգային-կուլտուրական իրաւունքների ազատագրութեան դատի մասին, իր բուռն համակրանքն ու համաձայնութիւնը յայտնելով որոշեց. ա) Ծրագրային սկզբունքների համաձայն առաջ տանել յեղ. կազմակերպութիւնը գործօն շրջաններուն եւ միեւնոյն նկատումով ընդլայնել շրջանները։ բ) Շրջանային ժողովը ցանկութիւն է յայտնում որ կազմակերպական բարձր մարմինները դիւրամատչելի լեզուով պատրաստուած գրականութեամբ նպաստեն Դաշնակցութեան Նպատակի եւ սկզբունքների ժողովրդականացման։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ ՆԵՐԿԱՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՄԷՋ.— Շրջանային ժողովը օրակարգին վրայ երկար վիճաբանութիւն կատարեց, թեր ու դէմ կարծիքներ յայտնուեցան, որոնց ամփոփումն է հետեւեալը։ Նկատելով որ մեր ժողովուրդը սկզբէն ի վեր խաղաղ ցոյցերով չարունակ դիմումներ

1.- Ովասիս – Տարօնի կոմիտէութիւններէն. կը տարածուէր Մեղրագետի հիւսիսային շրջանին վրայ։
2.- Կռուածաղիկ – Տարօնի կոմիտէութիւններէն. կը տարածուէր Մեղրագետի հարաւային մասին վրայ։ Նշենք որ Ծաղիկ կամ Կռուածաղիկ ծածկանունը կը գործածուէր նաեւ Կ. Պոլսոյ համար։
3.- Սոխակեան – Տարօնի կոմիտէութիւններէն. կը տարածուէր Մեղրագետի հիւսիէն մինչեւ Արածանիի ակունքները։
4.- Սահակեան – Տարօնի կոմիտէութիւններէն, պատմական Աշտիշատի շրջանը։
5.- Վահագնեան – Տարօնի կոմիտէութիւններէն, Արածանիի ձախ ափին՝ Ս. Յովհաննու վանքի շրջանը։
6.- Սալնոյ ձոր – Պիթլիս-Բաղէշի եւ Ախլաթի շրջանները։
7.- Գարմէն – կուս. ներկայացուցիչ Տարօն-Սասունի մէջ, նախապէս՝ Տաճատ վարդապետ Մելքոնեան։

8.- Մարգպետ – իսկական անունը՝ Ղազարոս Ղազարոսեան, Բաղէշի գործիչներէն։

ըրաւ եւ սակայն ո՛չ մի արդիւնք չկարողացաւ ձեռք բերել. շարունակական ճնշումների, սոսկալի անգթութիւնների ազդեցութեան ներքեւ զէնքի ուժի դիմեց իր ձայնը լսելի ընել տալու համար եւ ահա ատկէ յառաջ եկաւ յեղափոխութիւն։ Դաշնակցութիւն նպատակ ընտրեց այնուհետեւ զէնքի ուժով քաղաքական ազդեցութիւն ձեռք բերել եւ այս նպատակի համար ամէն զոհողութիւն յանձն առաւ, մինչեւ որ Սուլթանը պարտաւորուեցաւ սահմանադրութիւն տալ։ Ասկէ վերջ մենք պէտք է ջանանք կրթութեան ուժ տալ, որպէսզի ապագային գիտակից տարրեր ունենանք սահմանադրական կարգերի պահպանումն ապահովելու համար. պէտք է ուրեմն խաղաղ աշխատութեամբ ջանանք մեր քայքայուած տնտեսականը վերականգնել։ Արհեստակցական եւ գիւղացիական միութիւններ կազմենք. միաժամանակ մեր դրացի ազգաց հետ համերաշխութիւն պահենք եւ միւս կողմից ինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք բերենք ամենագաղտնի ռեժիմի տակ. մաքուր եւ անկեղծ ընկերների հետ ձեռք ձեռքի տուած ի հարկին գործադուլներ սարքենք, տեռորներ գործադրենք երբ մեր խաղաղ ջանքերն խոչընդոտներու հանդիպին։ Եւ այս նպատակին հասնելու համար առաջուան պէս կազմակերպութիւնները լաւ հիմերու վրայ դնելու է ժողովրդի մէջ, շրջիկներ եւ պրոպագանդիստներ հանելով եւ մըտքերը վառ պահելով դէպի Հ. Ց. Դաշնակցութիւնը եւ անոր տաքտիկը։

Ժողովը վերջապէս եզրակացութեան յանգեցաւ եւ Գարմէն-Մարզպետի հետեւեալ բանաձեւը ընդունուեցաւ միաձայնութեամբ։

Բանաձեւ

«Ցայտարարուած սահմանադրութիւնով, որը թէեւ մեր պահանջների լիակատար գոհացում տալէ չա՛տ հեռի է, փոխուած է Թուրքիոյ քաղաքական ձեւը, ուրեմն անհրաժեշտ է փոխել մեր գործելակերպը.

ա.- Ուժեղ թափով առաջ մղել մեր նպատակները օսմ. երեսփ. ժողովի մէջ, կազմելով ժողովի ձախակողմեան տարրերի հետ պլոկներ, կազմակերպելով ժողովուրդը ընտրութիւններին գիտակցաբար վերաբերուելու համար։

բ.- Խաղաղ ցոյցերով եւ գործադուլներու միջոցաւ յառաջ մղել մեր պահանջները քաղաքական եւ տնտեսական հողի վրայ։

գ.- Առանձին ուշադրութիւն դարձնել ժողովրդի մտաւոր եւ տնտեսական մակարդակի բարձրացման, հնարաւորութիւն տալով ժողովրդին գիտակցելու յեղափոխական-քաղաքական դաւանանքները, որով ժողովուրդը ինքնիրեն կ՚ազատի բազում ճնշումներէ, բռնութիւններէ եւ ընդդիմադիր ոյժ կը ներկայացնէ։

դ.- Կազմակերպել լուրջ ինքնապաշտպանութիւն կազմական եւ ժողովրդական միջոցներով։

ե.- Ընդունել դաւադրական ..... գործունէութիւն։

զ.- Համերաշխութեան հողին վրայ միացնել երկրի ընդդիմադիր տարրերը (փոքրիկ ազգերը, ընդդիմադիր կուսակցութիւններ) ապակեդրոնացման վրայ եւ լայն ազատութիւններու խնդիրներին օրէնքի ոյժ տալու համար։

է.- Հակասահմանադրական յետադէմ ուժերու դէմ կռուել բոլոր միջոցներով, միաբանելով սահմանադրական տարրերի հետ։

ը.- Օրինական ճանապարհով (պրոպագանդի միջոցով) կռուել հակաշխատաւորական եւ հակադաշնակցական, յետադիմական եւ պահպանողական կուսակցութեանց դէմ։

թ.- Պրոպագանդա։

ժ.- Գիւղացիական, արհեստակցական, բանուորական միութիւններ, քաղաքական եւ մարտական խմբեր»։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԶԵՒ.— Շրջանային ժողովն անցաւ օրակարգի այս հարցին, եւ վիճաբանութիւնք ուրեր ու դէմ կարծիքներ փոխականակուեցան, որոնց ամփոփումն է,- ժողովուրդը կազմակերպելու համար հարկաւոր է ուշադրութիւն դարձնել հետեւեալ կէտերուն. Ա.- Ոչինչ չունեցող, Բ.- Հող չունեցող, Գ.- Քիչ հող ունեցող, Դ.- Միջակ հողատէր։ Հողատէրերին այնչափ հող տալ, որքան կը ներէ իրենց աշխատութիւնը եւ որչափ ընտանիք ունին. չունեցողներն ալ փոխադարձ շահակցութեան եւ օգնութեան օրէնքով միանան եւ աշխատին. եւ այս կէտերն աւելի ընդլայնելով պարզեցին իրենց կարծիքներն եւ վերջապէս համաձայնութիւն գոյացաւ հետեւեալ բանաձեւին վրայ զոր ներկայացրեց Գարմէն։

Բանաձեւ

Գիւղացիական միութիւնների մէջ մտնում են առանց ուրիշի աշխատանքը շահագործելու իրենց սեփական աշխատանքով ապրող ընչազուրկ, անհող եւ սակաւահող գիւղացիները, ինչպէս եւ այն բոլոր միջակ ու խոշոր հողատէրերը, որոնք թողնելով իրենց դասակարգային տնտեսական քաղաքականութիւնը, իրենց գործունէութեամբ պիտի նպաստեն կարօտ իրենց դասակարգերի թէ՛ տնտեսական, թէ՛ քաղաքական նպատակների իրականացման։ Գիւղացիական միութեան մասնակցող բոլոր գիւղացիները ընդունելու են Դաշնակցութեան ծրագիրը իր ամբողջութեամբ, միութիւնները կուսակցական եւ ազգային լինելու են միացած դաշնակցական ծրագրին։

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԷՏՔ Է ԼԻՆԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱ՞Ն ԹԷ ՈՉ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ.— Ժողովը օրակարգին անցնելէ առաջ, կարդացուեցաւ ժողովականներէն ոմանց մի գրութիւնը, որով կը պահանջէին հողային հարցին անդրադառնալ։ Այս առթիւ երկար վիճաբանութիւններէ վերջ լուսաբանուեցաւ խնդիրն այսպէս. այն է թէ, հողային համայնացման հարցը որչափ որ Դաշնակցութիւնը ընդունած է իր ծրագրին մէջ, սակայն հեռաւոր ապագայի համար երբ արդէն կառավարութեան ձեւը կը փոխուի եւ ժողովուրդը զարգացած՝ կու գայ այն եզրակացութեան թէ ինքն է այլեւս իր տէրը եւ ազատ հաւասարութեան սկզբունքով։ Ապա ժողովն անցաւ օրակարգի հարցին։ Երկար վիճաբանութիւններ եղան այս մասին, որոնց համառօտութիւնն է թէ՝ միութիւնները պէտք է լինին կուսակցական եւ ենթարկուած Դաշնակցութեան ծրագրին եւ թէ անոնք որ տխուր անցեալ ունին, չպէտք է ընդունուին այդ միութեանց մէջ, թէ միութիւնք ազգայնական ըլլան եւ ո՛չ միջազգային, այսինքն երբ գիւղ մը խառն ազգաբնակութիւններ գտնուին, օրինակ, հայ, քիւրտ եւն, պէտք է առանձին առանձին միութիւններ կազմեն դաշնակցական ծրագրի ուղղութեամբ, եւ ջանալու է որ այդ տակտիկով օտարացեղ տարրերն էլ կազմակերպուին ու զուգընթացաբար յառաջ երթան։ Սոյն որոշումն էլ միաձայնութեամբ ընդունուեցաւ։

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԵՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ.— Այս հարցերի լուսաբանութեան համար կարդացուեցան կանոնագրէն անոնց վերաբերեալ յօդուածները, ա՛յն է թէ քաղ. խմբեր կազմակերպութեան ապրանք[9] են եւ իրենց վաստակը անոր կը պատկանի եւն։ Ոմանք դիտել տուին թէ քաղ. խմբերը մարտական ենք ճանաչում, որովհետեւ փորձով տեսնուած է որ քաղ. խմբեր տեղ-տեղ ամսավճար չտալով կը մեկնին եւ մենք բան մը չենք կրնար ընել անոնց եւ ուրիշներն էլ կը հետեւին անոնց. ատոր համար կ՚ուզենք որ քաղ. խմբերը մարտական ճանչցուին. ոմանք ալ պնդեցին թէ քաղաքի մը մէջ մարտական խմբեր մաքուր անհատներէ կազմելէ յետոյ, դուրս մնացած արհեստաւորներէն գեղեցիկ համբաւ ունեցողներէն արհեստակցական միութիւններ կազմելու է. բանուորներէն՝ բանուորական միութիւններ. վաճառականներն ալ ընտրութեամբ կրնան օժանդակներ ըլլալ անոնց։ Ժողովը յետ խորհրդակցութեան ընդունեց քաղաքական խմբերու միութիւնը համաձայն կանոնագրի, քաղաքական մարտ մղել կարենալու համար։

Գալով մարտական խումբերու կազմութեան հարցին, ոմանք յայտնեցին թէ մարտական խումբերու զէնքը պէտք է կազմակերպութիւնը հայթայթէ, ոմանք ընդդիմաբանելով առարկեցին թէ իւրաքանչիւր զինուոր իւր հաշուով պէտք է զինուի, կամ տեղական միջոցներով, ոմանք թէ՝ երկիրը քանդուած, ժողովուրդը տնտեսապէս փճացած է, եթէ իր վրայ ձգուի զէնքի հայթայթումը, գուցէ հաւանի, բայց անկարող ըլլալուն՝ կը յետաձգէ. պէտք է ուրեմն որ տեղացիք հաւաքաբար հոգան եւ յանձնեն զինուորին եւ այդ հաւաքաբար առնըւած զէնքը պէտք է պատկանի գիւղին։ Ոմանք էլ կանոնագրի տրամադրութեան վրայ յենելով բացայայտեցին թէ՝ ամէն մարտական խումբ առանձին զէնք պէտք է ունենայ. որն որ ի վիճակի է եւ զէնք չ՚առներ, կը նշանակէ թէ յեղափոխական զգացում չունի. իսկ այն որ իսկապէս աղքատ է եւ արժանի է, Դաշնակցութեան պարտքն է զինել զայն՝ որ պատրաստ է իր կեանքը տալ։ Մէկ խօսքով իւրաքանչիւր մարտական խումբ կամ մարմին միաժամանակ պիտի ունենայ իր սեփական աշխատութիւնը եւ առանձին զէնքը. հակառակ պարագային եթէ աղքատ է, կազմկերպական եւ կամ ժողովրդական զէնքեր կը տրուին. ընդհանուր գործի ատեն կազմակերպական, իսկ մասնաւոր պարագաներում ժողովրդական, այդպէս էլ ծախքերը կը հոգացուին ընդհանուր պարագաներում։ Սկզբունքով ընդունուեցաւ մարտական խմբերի կազմակերպութեան համար կանոնագրի տրամադրութիւնը։

Ա. Քաղաքական խմբեր.— 1. Դաշնակցութեան քաղաք. խմբերի մէջ մտնում են ազատ պրոֆեսիաների պատկանողները, ինչպէս եւ այն բոլոր անհատները, որոնք թէեւ չեն պատկանում իրենց տնտեսական դրութեամբ աշխատաւորական բանակին, բայց եւ այնպէս թողնում են իրենց դասակ[արգային] հայեցակէտը եւ ընդունում աշխատ[աւորական] դասակարգի թէ քաղ. եւ թէ տնտեսական տեսակէտը, ուրեմն իբրեւ այդպիսիներ քաղաքական խմբերը չպիտի ունենան իրենց ուրոյն տնտեսական քաղաքականութիւնը, այլ իրենց ամբողջ գործունէութեամբ պիտի նպաստեն աշխատաւոր դասակարգի թէ տնտեսական եւ թէ քաղաքական նպատակներին հասնելուն։

2. Քաղաքական խմբերի ամբողջ եկամուտները յատկացւում են կուսակցութեան սնտուկին։

3. Քաղաքական խմբերի անդամները վայելում են Դաշնակցութեան գործօն անդամի բոլոր իրաւունքները։

Բ. Մարտական խմբեր.— Շրջ. ժողովը գտնելով, որ մարտական խմբերի կազմակերպելու կարիքը աւելի քան կարեւոր է, մանաւանդ յառաջիկայ քաղաքակ. յանկարծակիների առաջն առնելու եւ մեր յեղափ. ակտերի իրագործման համար, առանձնապէս շեշտում է մարտական խմբերի կազմելու անհրաժեշտութիւնը, չչեղուելով սակայն կանոնագրի 147-151 [*յօդուածներից*] *եւ ծանօթ*[*ագրութիւններից*]։

9.- Ակնարկութիւնը կը վերաբերի զէնքերու եւ կուսակցապատկան այլ գոյքերու։

Գ. Զինավարժութիւն.— Ի նկատի ունենալով, որ ամէն մի յեղափ. կուսակց. մէջ գիտակցութիւն տարածելու հետ միասին անհրաժեշտ է նաեւ զինավարժութիւն ամէն տեսակ յեղափ. ձեռնարկների համար, շրջանային ժողովը որոշում է զինավարժութիւնը բաժանել երկու մասի՝ տեսական եւ գործնական. տեսականը պիտի անցնել անխտիր բոլոր դ[աշնակցականներ]ի հետ, ունենալով յատուկ ինստրուկտորներ, իսկ գործնականը անցնել այն վայրերում որտեղ այդ հնար է իրագործել։

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ.— Շրջանային ժողովն այս հարցի շուրջն էլ երկար վիճաբանութիւններ կատարեց, որոնց ամփոփումն է.- Նկատելով որ ներկայ հանգամանքներին մէջ իսկ ժողովուրդը պէտք ունի ինքնապաշտպանութեան, ամէն պատահականութեանց եւ անակնկալների առջեւ պատրաստ ըլլալու համար, անակնկալներ՝ որոնք պատահեցան Կովկաս վերջին ընդհարումների ժամանակ եւ վերջերս էլ կիլիկեան սահմաններում, ուստի հարկաւոր է ինքնապաշտպանութեան լուրջ հարցին հանդէպ ամէն զոհողութիւններ յանձն առնել։ Երբ տեսնում ենք որ ինքնապաշտպանութեան բնազդը նոյնիսկ կենդանեաց մէջ որոշ ի յայտ կուգայ, պէտք չէ որ մարդ էակը անտարբեր գտնուի այդ երեւոյթների հանդէպ, միայն թէ ժողովո՞ւրդը պէտք է ստանձնէ այս բեռը, թէ ոչ Դաշնակցութեան վրայ պիտի ծանրանայ, հոս է խնդիրը։ Ոմանք դիտել տուին թէ՝ եթէ ժողովրդին վրայ թողուի, գուցէ չահագործեն զանոնք եւ կեղծ զէնքեր տան, ինչպէս եղաւ երբեմն Կովկասի մէջ, իսկ ոմանք էլ առարկեցին թէ հարկաւոր է որ կազմակերպութիւնը ստանձնէ խիստ գաղտնի միջոցներով եւ արժան գնով ժողովրդի հաշուին զէնքեր հայթայթել եւ տալ ժողովրդին եւ ցուցակագրել որ չկորսուին։

Այս առթիւ ժողովը սոյն եզրակացութեան յանգեցաւ եւ ընդունեց հետեւեալ բանաձեւը.

«Ըստ առաջարկութեան Շրջանային ժողովի կազմակերպութիւնը կը ստանձնէ ժողովրդեան ինքնապաշտպանութիւնը կազմական եւ ժողովրդական միջոցներով յառաջ տանիլ»։

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ.— Շրջանային ժողովս ի նկատի ունենալով որ ամէն պարագայում հարկաւոր է դրացի ցեղերի հետ համերաշխութիւն պահել, կապուած լինելով միմեանց հետ միեւնոյն հայրենիքի քաղաքական թէ տնտեսական շահերով եւ թէ կուլտուրական շարժումով եւ ազատագրման կռուի պայքարով։ Նկատելով որ Դաշնակցութիւնն էլ մերժում է անջատումի գաղափարը եւ պարտադրում լաւ յարաբերութիւններ մշակել դրացի մասսաների հետ հնարաւորութեան սահմանում, ուստի եզրակացութեան յանգելով սոյն բանաձեւը ընդունեց։

ա.- Սերտ համերաշխութիւն հարեւան ժողովրդի ազատական տարրերի հետ։

բ.- Աշխատաւոր եւ հարստահարուած մասսաների հետ։

գ.- Ազատական կուսակցութիւնների հետ եռանդուն պրոպագանդայի միջոցաւ։

ՊՐՈՊԱԳԱՆԴԱ.— Շրջանային ժողովը այս հարցին վրայ վիճաբանութիւն կատարելով հետեւեալ եզրակացութեան եկաւ եւ ընդունեց սոյն բանաձեւը։

«Ժողովրդի մէջ պրոպագանդան օգտակար դարձընելու համար մեզ հարկաւոր են միօրինակ ուղղութեամբ պատրաստուած պրոպագանդիստ եւ կեդրոններում հիմնելով պրոպագանդի դպրոցներ եւ կազմակերպիչ ուժեր, որոնք պէտք է կազմակերպութիւնը ղրկէ մեզ, ի հարկէ մեր հաշուով. պահանջ դնել որ կազմակերպութիւնը ունենայ իրա մասնաւոր թերթեր Պոլսում եւ գլխաւոր շրջաններում շաբաթաթերթ կամ օրաթերթ, որպէսզի մեր ծրագրային սկզբունքներն եւ թէ պահանջները տեղական բարբառով եւ լեզուներով տարածուին ժողովրդեան մէջ. ընդունելով այն հանգամանքը որ կազմակերպութեան ընդլայնման ամենաուժեղ միջոցներից մէկը պրոպագանդան է, պէտք է առաջարկել կազմակերպութեան որ պրոպագանդի համար որոշ պիւտճէ յատկացուի։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ.— Շրջանային ժողովս երկար վիճաբանութիւններէ եւ թեր ու դէմ կարծիքներ փոխանակելէ յետոյ, հետեւեալ բանաձեւ ընդունեց միաձայնութեամբ։

«Ազգային կուլտուրական բոլոր գործերի տէր եւ տնօրէն ճանաչելով ազգի աշխատաւոր դասակարգը, Դաշնակցութիւնը իբրեւ աշխատաւոր դասակարգի ազգային կուլտուրական շահերի պաշտպան կուսակցութիւն՝ ամենաուժեղ պրոպագանդա պէտք է մղէ։ Այդ հաստատութիւնների օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնը ազգային եւ պետական սահմանադրութեամբ յանձնել ռամկավարական ուղղութեամբ ընտրուած ժողովրդական ներկայացուցչութեան ձեռքը, իսկ մինչ այդ, գործնական կեանքում ուժեղ նախաձեռնութիւն ցոյց տանք համապատասխան ձեռնարկներու մէջ, իսկ մասնաւորապէս ի նկատի ունենալով Տարօնի տնտեսական եւ կրթական աննպաստ պայմանները, իր պատասխանատուութեան տակ վերցնել կրթական գործը եւ եկող ուսումնական տարուանից մեր շրջանում բաց անել տալ մի շարք տարրական, երկրորդական եւ միջնակարգ դպրոցներ, ինչպէս եւ որբանոցներ, գրադարան-ընթերցատուներ, միաժամանակ աշխատել մեծ թուով հասուն եւ կարող կրթական ուժեր իբր տեսուչ, վարժապետ տեղաւորել մեր շրջանը, իսկ օտար միսիոնարութեանց դպրոցների եւ որբանոցների հետ անպայման գալ որոշ եզրակացութեան, ի նկատի ունենալով հայ աշխատաւոր ժողովրդի ազգային եւ հայրենասիրական մտաւոր յառաջդիմութիւնը, իտէալ ունենալով ապագայում անհատի ազատ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացումը հասարակութեան մէջ»։

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ.— Շրջանային ժողովը այս հարցը վիճաբանութեան դնելով հետեւեալ կարծիքները փոխանակեց։ Ոմանք պնդեցին թէ քանի որ գիւղերում կառավարութեան կողմից մէկ-ական կայ հաստատուած, դատական հարցերը նրանք թող վերցընեն, որպէսզի կառավարութիւնը սխալ գաղափար չկազմի կազմակերպութեան վրայ. ոմանք պնդեցին թէ ռէս-մէճլիս զուտ կառավարական տիպեր են եւ արդարութեամբ չեն վճռեր դատերը, ուստի հարկաւոր է որ տեղական խումբերը վերահսկեն անոնց. ոմանք էլ ծանրացան այս կէտի վրայ թէ աւելի օգտակար է որ առհասարակ տեղական խումբերից առնուին ռէս-մէճլիսներ։ Ժողովը այս մասին եզրակացութեան յանգելով հետեւեալ բանաձեւը ընդունեց։

«Նկատելով որ կազմակերպութեան մասնակցութիւնը դատաստանական խնդիրների մէջ անցեալում մի արդիւնք չտալով հանդերձ, ընդհակառակը խոչոր չափով վնասել է կազմակերպական գործին. միայն թէ նկատելով մասնաւորապէս մեր շրջանի կառավարական դատական բաժնի տգէտ, ապօրինի, զեղծարար եւ յատկապէս հայատեաց ընթացքը եւ հարստահարուած գիւղացի ժողովրդեան տնտեսական եւ բարոյական անկումը, որոշեց գիւղերում ռէս-մէճլիսները ընտրել մաքուր եւ վստահելի տարրերից, առաջնորդող սկզբունք տալով նոցա «միջնորդ դատարանի» սիստեմը նոցա յանձնել դատական գործերը, որոնց վճիռները օրինական են ճանաչւում եւ կառավարութեան առաջ»։

Հ. ՅԵՂ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ, ՊԱՐՍԿԱՀԱՅՔԻ.— Շրջանային ժողովը ծանօթանալով Դաշնակցութեան Կովկասում եւ Պարսկահայք կատարած գործունէութեան եւ նոցա արդի կացութեան, որոշեց նախ իր շնորհակալութիւնը արձանագրել հայ կազմակերպուած աշխատաւորներին իրենց 18ամեայ ցոյց տուած անձնուէր գործունէութեանը նուիրուած տաճկահայ ազատագրութեան, եւ ապա ողջունելով նոցա «ազատամարտի» մղած կռիւներն ու կատարած աշխատանքները, իւր բարոյական պատրաստակամութիւնն է յայտնում ի պահանջել հարկին կատարել իր պարտականութիւնը չխնայելով իր բարոյական ամէն կարգի աջակցութիւնները։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԴԷՊԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ.— Շրջանային ժողովը յետ խորհրդակցութեան ընդունեց միաձայնութեամբ հետեւեալ բանաձեւը։

«Նկատի ունենալով խնդրի լրջութիւնը եւ ժողովի այդ մասին ունեցած անձեռնհասութիւնը, որոշում է թողնել V Ընդհ. Ժողովին միայն առանձնապէս մատնանշել հայ ժողովրդին շրջապատող այն բացառիկ հանգամանքները, որոնք պատճառ են դառել մինչեւ այժմս էլ բոլորովին չկտրուել եւրոպական միջամտութիւնից»։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ.— Շրջանային ժողովը միաձայնութեամբ ընդունեց երկրի I Ռայոնական ժողովի այդ մասին եղած բանաձեւը։

«Ի նկատի ունենալով դաշնակցական մարմինների քաղաքական պատճառներով թուլացած դրութիւնը, Ռայոնական ժողովն որոշեց դիմել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներին չտապեցնելու համար Դաշնակցութեան Խորհուրդի գումարումը Լիսում[10] եւ նրանից անմիջապէս յետոյ Ընդհանուր Ժողովը նոյն տեղում։ Ընդհանուր Ժողովի կազմի հարցում չզբաղուել ցենզով, այլ որչափ կարելի է շատ թուով հրաւիրել թէ՛ գործիչ ընկերներ եւ թէ այնպիսի մարմինների ներկայացուցիչներ, որտեղ անցեալում եղել է յեղափոխական ակտիւ գործունէութիւն, եւ նմանապէս նրանց, որոնք մօտ ապագայում պիտի համապատասխանեն դրամական եւ կազմակերպական ցենզին։

ՇՐՋԱՆԱՑԻՆ ԵՒ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ.— Շրջանային ժողովը ի նկատի ունենալով երկրի պայմանները, միաձայնութեամբ ընդունեց Սեպտեմբերը՝ Շրջանային եւ Հոկտեմբերը՝ Ռայոնական ժողովի ամիս ընել։ (Օրակարգի հարցերը նախօրօք կը մշակէ Կ. Կ.-ն եւ կը ղրկէ կոմիտէներին եւ ենթակոմիտէներին)։

ԵՐԿՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ.— Միաձայնութեամբ ընդունուեց Երկրի I Ռայ. ժողովի յօդ. 17 բանաձեւը։

ա) Ի նկատի առնելով, որ երկրի լուրջ եւ բազմակողմանի ուսումնասիրութիւնը չափազանց կարեւոր է եւ կարօտ մասնագէտ ուժերի գործակցութեանը, Ռայոնական ժողովը Բիւրոների լուրջ ուշադրութիւնն է հրաւիրում այս հարցի վրայ եւ առաջարկում է օր առաջ ձեռնարկել այս գործին, որոշ գումար յատկացնելով այդ նպատակի համար, կազմակերպական ընդհանուր միջոցներից։

բ) Ի նկատի առնելով որ հայ ազգաբնակութեան թուի մասին ոչ մի որոշ ու ճշգրիտ տեղեկութիւն չունինք ներկայումս, մինչդեռ այդ չափազանց դժուարացնում է մեր ինքնաճանաչութիւնը, Ռայոնական ժողովն

10.- Կ. Պոլսում։

որոշեց յանձնարարել Դուրան-Բարձրաւանդակի մարմիններին, անմիջապէս ձեռնարկել իրենց ձեռքի տակ գտնուած միջոցներով. 1) Հայ ազգաբնակութեան մարդահամարը. 2) Մանրամասն տեղեկութիւններ հայերից բռնի կերպով գրաւուած հողերի քանակի մասին 1894 թուից սկսած, լինի այն քրդերի գրաւած, թէ մուհաճիրների համար կառավարութեան կողմից խլուած եւ 3) Բացի հայ ազգաբնակութեան թուից, հաւաքել նաեւ դրացի միւս ազգութիւններու մասին տեղեկութիւններ, օգտուելով կառավարութեան դոկիւմենտներից։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԼԱՏՖՈՐՄԸ.— Ընդհանուր կէտերից առաջին յօդուածի մասին երկար թեր ու դէմ վիճաբանութիւնից յետոյ հարց ծագեցաւ թէ այդ կէտը ծրագրայի՞ն է թէ ոչ. երկու հոգի գտան ոչ ծրագրային, 2 հոգի չէզոք, իսկ երեք ընկեր գտան բոլորովին ծրագրային եւ որոշուեց որ մնայ։

Երկրորդ յօդուածն ենթարկուեց մի փոքր փոփոխութեան. Թուրքաց Հայաստանը կը կազմէ կայսրութեան անբաժան մասը եւ հիմնուած վիլայէթական ապակեդրոնացման սիստեմի վրայ, կը վարէ իր տեղական գործերը, ինչպէս Տաճկաստանի միւս բոլոր վիլայէթները։

11րդ յօդուածի 5րդ կէտը՝ երրորդ տարուանէ, իսկ վերջին կէտին վրայ աւելացնել ..... իսկ պետական դպրոցները յաճախող ոչ թուրք տարրերի լեզուների դասախօսութիւնը՝ առաջին տարուանէ։

20րդ յօդուածի ծանօթութեան բ. մասի վրայ աւելացնել ..... չպիտի գանձուին գիւղացի, աշխատաւոր, արհեստաւոր դասակարգից. այլ պիտի գանձուի միայն բէգերից, գիւղատէրերից, կալուածատէրերից եւ աղաներից։

Քննել մինչեւ այժմս հաւաքուած հարկերը եւ ապա գանձել յետամնաց տուրքերը, ներելով աշխատաւոր դասերի մնացորդները եւ գանձելով աղա-բէգերի արտօնեալ դասերի յետամնաց տուրքերը։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ.— Շրջանային ժողովը որոշեց մարմնին յանձնել ներքին կանոնագրերի կազմութեան համար դիմել Արեւելեան Բիւրոյին, որպէսզի Երկրի IIրդ Ռայոնական ժողովին ներկայացնեն ներքին կանոնագրերի նախագծերը, ի լրացումն, ի հաստատութիւն եւ ապա ի գործադրութիւն, իսկ մինչ այդ ղեկավարուել Կովկասի Շրջ. Ժ-ի մշակած ներքին կանոնագրով եւ մայր կանոնագրով։

ԲԻՒՐԱԿՆԻ ՀԱՐՑԸ.— Շրջանային ժողովը որոշեց գրաւոր հարցում ընել Բիւրակնի[11] մարմնին թէ ի՞նչ պատճառներու տակ բաժնուեցան եւ հիմա ինչո՞ւ համար վերստին կ'ուզեն միանալ Դուրան-Բարձրաւանդակին եւ յայտնել Բարձրաբերդի[12] կ. կ.ին այդ մասին։

ՊԻՏՃԷ.— Շրջանային ժողովը այս հարցին շուրջը երկար վիճաբանութիւններ կատարեց եւ պահ մը բուն հարցէն շեղուելով դիտողութիւններ եղան թէ Տարօն-Սասուն ամէնէն աւելի վնասուած, քանդուած է յեղափոխական տեսակէտից գործունէութիւն ցոյց տուած երկիրն է. սակայն նկատելով որ մինչեւ այժմս Դուրան-Բարձրաւանդակի կազմակերպ. պիւտճէն մեծամասամբ կազմուում էր Ա[ռեւելեան] Բ-ից եկած դրամական օգնութեամբ, իսկ այժմս՝ նախ որ Կովկասի, Պարսկահայքի եւ Եւրոպահայքի[13] բոլոր մարմինները ի վիճակի չեն նախկին նիւթական օգնութիւնը անելու եւ Բ.րդ՝ որ ներկայ համեմատական ազատ պայմաններում մեր շրջանը որքան էլ տնտեսապէս քայքայուած լինի պիտի կարողանայ իր դրամական ցենզը լրացնել եւ կազմել իր պիւտճէն, իսկ Բիւրոն այժերի համար իր հաշուոյն հրաւիրել ամէն մէկ կոմիտէական շրջանի համար մէկ կազմակերպիչ եւ ամբողջ Դուրանի համար երեք պրոպագանդիստ։

Սալնոյ ձորի համար երկու գործիչ, երկու պրոպագանդիստ եւ երկու շրջիկ։ Ապահունեաց համար (Պուլանըգ, Մանազկերտ, Այնթապ[14]) 1 կազմակերպական գործիչ, 3 պրոպագանդիստ, 3 շրջիկ։ Վարդոյի համար 1 կազմակերպիչ, իսկ պրոպագանդիստ Դուրանի վրայ։

Գալով պիւտճէին, 40 տոկոս ինքնապաշտպանութեան, 20 տեղական ծախք, 20 Կեդր. Կոմիտէի սնտուկին, 20 կազմակերպական սնտուկին. պիւտճէի հարցը այսպէս փակուեցաւ։

Ժողովը օրակարգին անցնելէ առաջ, իբրեւ միջանկեալ խնդիր ընդունեց կարդալ Վարդան վրդ.ի, Գարմէնի, Մարզպետի, Սեպուհի եւ Կորիւնի հրաժարական գրերն Կեդր. Կոմիտէի անդամակցութենէն եւ որոշուեցաւ որ գործերն տարբեր եղանակով... յառաջ գնան, մինչեւ որ Ընդհ. Ժողովն այս մասին նոր կարգադրութիւններ անի, հետեւաբար հրաժարուողներն այլեւս ազատ են կազմից... այլ սոսկ իբր դաշնակցական անհատ կը ճանչցուին։

ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՐՑ.— Նկատողութեան առնուեցաւ շրջաններից հասած խնդիրները, որով ոմանք իրենց անհատական զէնքերը կը պահանջէին։ Այս առթիւ դիտել տրուեցաւ թէ՝ այն անհատական զէնքերը որոնք ընդհանուր գործերում նպատակին ծառայած եւ կորսուած են, անհնար է ետ տալ փոխարինութեամբ, որովհետեւ զէնք ու զինուորը միասին զոհաբերուած են, իսկ անոնք որ տակաւին կը մնան, իրենց տէրերուն դարձուին յետ քննութեան։ Ժողովը այդ առթիւ թեր ու դէմ կարծիքներէ յետոյ որոշեց որ հնար եղածին չափ անհատական-

11.- Բիւրակն – Խնուսի կուս. ծածկանունն է։
12.- Բարձրաբերդ – Կարին-Էրզրումի շրջանն է։
13.- Նկատի ունի գլխաւորաբար Պալքանները։
14.- Այս Այնթապը աւան է Պայազիտի շրջանին մէջ։

ներուն բաւարարութիւն տրուի օր առաջ։

բ.- Խմբական զէնքերու մասին եւս կարծիքներու փոխանակութիւններ ունեցաւ. ոմանք պատճառաբանեցին թէ քանի որ կազմակերպութեան անունով ձեռք բերուած են խմբական զէնքեր, նորից կազմակերպութեան կը պատկանին եւ սա իր յարմար դատած տեղերը կրնայ փոխադրել. ոմանք էլ առարկեցին որ անոնք իրենց պատկանած միջավայրին մէջ գործածուին միայն։ Եզրակացութեան գալով՝ որոշուեցաւ խմբական զէնքերի դասաւորութիւնը թողնել կազմակերպութեան։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԶԻՆԱԿԱՆ ԵՒ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՌԿԱԽ ՀԱՇԻՒՆԵՐԸ.— Շրջանային ժողովը այս առթիւ վիճաբանելէ յետոյ՝ այն եզրակացութեան եկաւ, որ կազմակերպութեան կողմից քնինչ մարմին մը որոշուի եւ ինվենտար մը պատրաստուի, որին մէջ արձանագրուին ամէն գոյքեր, որոնք կազմակերպութեան կը պատկանին, սկսած ասեղից մինչեւ ամենամեծ առարկան։ Նոյնպէս նրա մէջ որոշակի գրուին գոյքի տեսակը, որակը ու կարեւոր հանգամանքները եւ թէ անոնք ո՞ւր կը գտնուին եւ որո՞ւ քով, եւ անոնցմէ ստացականներ առնուին։ Շրջանային մարմիններն ուրեմն պարտականութիւն կը վերցնեն կազմ. բոլոր գոյից մանրամասն ցուցակները ղրկել կեդրոնին։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՖՈՆՏ.— Ժողովը յետ խորհրդակցութեան կ'որոշէ Դուրան-Բարձրաւանդակի կոմիտէութեան համար երկու առանձին ֆոնտեր կազմել։

Ա.- Մի ֆոնտ մասնաւոր սնտուկի մէջ պահել եւ մի միայն յեղափոխական ձեռնարկի համար գործածել։

Բ.- Մի ուրիշ ֆոնտ էլ նահատակ ընկերների ընտանեաց համար։

Յեղափոխական ֆոնտը պէտք է կազմուի մայր գումարից % 5 առնելով եւ անոր յատկացնելով, իսկ երկրորդ ֆոնտը՝ այլեւայլ նպաստներով։ Միաձայնութեամբ ընդունուեցաւ սոյն բանաձեւը։

ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ.— Ժողովը ի նկատի առնելով որ տեղ-տեղ հակառակ սահմանադրութեան զինուորական տուրքեր կը գանձուին եւ խնդիրը սկսած է թուլանալ, որոշեց որ այս առթիւ վերստին դիմումներ լինին բարլամենթին եւն եւ լուրջ միջոցներ ձեռք առնել ժողովրդին իր որոշման վրայ հաստատ պահելու. միաձայնութեամբ ընդունուեցաւ սոյն բանաձեւը։

15.- Աշարը բերքի տասանորդ տուրքն է. միւլթեզիմը՝ տասանորդ տուրքը գանձող կապալառուն։
16.- Այլ խօսքով՝ քոչուորներու, իրենց անասուններով լեռ բարձրացող (քիւրտեր)։

ԱՇԱՐԻ[15] ՀԱՐՑԸ.— Շրջանային ժողովը այս հարցի վրայ իր կարծիքներն յայտնեց այսպէս,- ոմանք կ'առաջարկեն որ ամէն զոհողութիւն յանձն առնուի, որպէսզի աշարը աճուրդի չդրուի, այլ գիւղին յանձնուի. ոմանք պնդեցին թէ՝ քանի որ գիւղացին տնտեսապէս փճացած է եւ միջոցներ չունի գիւղի աշարն առնելու, ի հարկէ թուրքը պիտի առնէ. ոմանք էլ ընդդիմաբանեցին թէ՝ եթէ գիւղացիք կազմակերպուած եւ միաբան ըլլան, միւլթէզիմը[15] ոչինչ չի կարող անել. օրէնքի հակառակ եթէ վարուի, միաձայն զօրաւոր դիմումներ անել եւ նախկին ռեժիմի տակ իրենց գործած ապօրինութիւնները չթողուլ որ կրկնեն. այս կերպով անոնք չպիտի յաջողին եւ հետզհետէ պէտք եղած շահը չկրնալով ձեռք բերել, ստիպուած ետ պիտի կենան։

Վերջապէս ժողովը ա՛յն եզրակացութեան եկաւ որ պէտք է դիմել, պահանջել որ գիւղերը միրի ըլլան եւ այս հիման վրայ մէճլիսի մէպուսին եւս պահանջ դնել որ թէ՛ աշար եւ թէ աղնամ 10ին 1 ըլլայ ասկէ վերջ։

ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՐՑ.— Շրջանային ժողովը այս հարցը լուրջ ուշադրութեան առաւ եւ նկատելով որ տեղ տեղ չա՛տ անխղճօրէն կը վարուին ա՛յն կարգ մը ընտանիքների հետ, որոնք երկար տարիներէ ի վեր եկած հաստատուած են գիւղերուն մէջ, ունենալով տուն եւ կալուածներ եւ սակայն գիւղական համայնքը գաղթական աչքով կը նայի անոնց, թոյլ չի տար որ անոնք օգտուին գիւղին արօտավայրէն ու անտառներէն, որոշեց կըտրուկ միջոցների դիմել եւ պահանջել որ անոնք իբրեւ գիւղացի ճանչցուին եւ նոյն իրաւասութիւնները վայելեն ինչ որ միւսները, իսկ անոնք որ մօտ ատեններ իրենց հողերը թողնելով՝ ուրիշ գիւղեր գաղթած են, շրջիկի միջոցաւ քննուին. եթէ հնարաւորութիւն ունին, դարձուին իրենց բնակավայրը. հակառակ պարագային հոն թողուին. այս բանաձեւը միաձայնութեամբ ընդունուեցաւ։

ՄՈՒԹ ՏԵՌՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ.— Ժողովը նկատելով որ այս խնդիրը սերտ կապ ունի կազմակերպութեան ներքին խնդիրների հետ, պէտք է թողուլ կազմակերպութեան. իսկ կողմնակի տեռորներուն՝ կազմակերպութիւն պատասխանատու չէ եւ կրնայ թերթերով յայտարարել։

ՔՈՉԱՐՆԵՐԻ[16] ՀԱՐՑ.— Ժողովս միաձայնութեամբ որոշեց ամէն միջոց ձեռք առնել քոչարների շարժումների սովորութեանց առաջն առնելու համար։

ԲՌՆԻ ԵՒ ԱՊՕՐԷՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳՐԱՒՈՒԱԾ ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՈՑ ԵՒ ՎՆԱՍՈՒՑ ՀԱՐՑ.— Ժողովս կ'որոշէ ամէն միջոց ձեռք առնել եւ հնարաւորութեան սահմանի մէջ ձեռք բերել գաղթական հայոց

բռնի գրաւուած կալուածներն եւ զանոնք գրաւող քիւրդ, թուրք բռնապետներն հայոց գիւղերէն դուրս վտարել։

ԳՈՄՍ ԳԻՒՂԻ 43 ՄԱՐՏԻԿՆԵՐԷ ՇԷՐԻԱԹՈՎ ԱՐԵԱՆ ԳԻՆ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՀԱՐՑ.— Շրջանային ժողովս ի նկատի ունենալով որ Գոմսի մէջ կատարուած սպանութիւնք, որոց փոխարէն արեան գին կը պահանջէ կառավարութիւն, զուտ յեղափոխական գործ են եւ ընդհանուր բնոյթ ունին. նկատելով որ այդպիսի դէպքեր ուրիշ տեղեր ալ պատահած են, ուստի կ'որոշէ թէ՛ կազմակերպական եւ թէ ժողովրդական բուռն միջոցներով ամէն տեղ դիմումներ ընել եւ պաշտպանել այդպիսի յեղափոխական ընդհանուր դատեր։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՏՆԻՋՆԵՐԻ ՀԱՐՑ.— Ժողովս նկատողութեան առնելով այս հարցը եւ ընդունելով թէ դաւադրական գործողութիւնք հարկաւոր են այս երկրում, որոշեց կազմակերպութիւնից բոլորովին անկախ ուրիշ մարմնի յանձնել զայն, թէ՛ մատնիչ, թէ՛ զեղծարար լինին նրանք եւ անոնց թողուլ պատիժների կիրառութիւն։ Սոյն բանաձեւը միաձայնութեամբ ընդունուեցաւ։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՊԱՐՏՔ.— Ժողովս կ'որոշէ որ յանուն կազմակերպութեան՝ գործիչների միջոցաւ առնուած եւ ծախսուած պարտքերն, փաստացի ապացուցուելէ յետոյ, ընդունելի նկատուին, Ընդհ. Ժողովը պիտճէ յատկացնելէ յետոյ, իսկ խմբական եղած ծախսերին կազմակերպութիւն պիտի տայ անդորրագիր։ Սոյն բանաձեւը միաձայնութեամբ ընդունուեցաւ։

ՎԱՐԴՈՑԻ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՆԵՐԻ 15 ՈՍԿԻԻ ՀԱՐՑԸ.— Ժողովս տեղեկանալով որ անցեալ տարուան Շրջանային ժողովին որոշուած էր որ Աստուածատուր էֆ. 10, իսկ Աւետիս էֆ. 5 ոսկի տուգանք պիտի տային. նոյնպէս որոշուած էր որ Աւետիս էֆ. մի հրացան եւ մի ատրճանակ եւս տայ, սակայն ցարդ այդ որոշումը գործադրուած չըլլալով որոշուեցաւ վերստին պահանջել այդ դրամական տուգանքը եւ զինական պահանջները։

Փաստ. 697-167

Յանձնարարութեամբ
պ. Մուրատի[17]

Բ 2.– ՏԱՐՕՆԸ*

Հայ ազգաբնակ գաւառների մէջ էն ցաւատանջ, էն սոսկալի տագնապներ կրողը եղել է Տարօնը. էդ երկրի ցեղական արիւնն ու գործունէութիւնը նկարագրելը շատ անհարկի եմ համարում, քանի որ իմ կարծիքով չկայ մի հայ որը քիչ շատ բան իմացած չլինի դրա բնակչային նկարագրութեան եւ իր ծոցից ծնուած հերոսների պաշտելի գործունէութեան վրայ. դա օրրաներից մին է հայ յեղափոխութեան, բնակավայրն է Մամիկոնեան սերնդին որ հայ պատմութեան ընթացքում, դարերի շարքում երբեք մուր չէ քսել իր ճակատին, որին հաստատում է 80ական թուականներից մինչեւ մեր օրերը անցած անցքերը։ Ճակատագրական դատապարտումով կապուել է եղել պատերազմի, կռիւի հետ, եւ յաղթութեան դափնին չէ ուշացել պսակել նրա սիրելի ճակատը, բայց ինչ արած որ իր հարեւանները նոյնքան բարբարոս են որքան հայ ժողովուրդը ազատ կամքի տէր, ու եթէ էդ էդպէս չլինէր, երկիրը այժմ գտնելու էինք մի բարձր դրութեան մէջ, բարձր իր նիւթականովը, բարձր իր բարոյականովը, բարձր մտաւորականովը, սակայն ներկայիս մէջ դա միակ երկիրն է բոլոր աշխարհումը սովի, յետին աստիճան աղքատութեան ու արեան։

Ժողովուրդը ընդունակ է ամէն կերպ զարգացման, նրա միտքը թէեւ խոպան, բայց ուսանելու շատ հակամէտ, նա ունէ բնատուր ազգային որոշ նկարագիր, որոշ եռանդ ու արիւն, ու դեռ չէ այլասերել, ու եթէ իր հսկայ կարիքներն մի քիչ գոհացում տրուի, նա կը դառնայ մի էնպիսի ժողովուրդ որի տիպը չէ կարելի ճարել շատ տեղերում իսկ։

Մշոյ քաղաքում կայ մօտ 1200 տուն հայ, դրանցից 200 տունը հազիւ էս ձմրան տակիցը դուրս կը գան, մնացեալ ահագին գումարը, դաշտի ժողովուրդն էլ հետը մէկտեղ սովամահ կը լինեն. քաղցածների լեգէոններ արշալոյսից մինչեւ իրիկուն թափառում են մեր ետեւից, ու մենք երբ չենք կարող սրանց կշտացնել, իրանց հետ մենք եւս տանում ենք քաղցը, քանի որ մեր աչքերից արիւն արցունք է դուրս գալիս ու մեր ախորժակը չքաւորութեան էդ հսկայ բուրգի առաջ խցւում է։

Օտար քաղաքներում ճիշդ է որ ունինք հարուստ հայեր, բայց ինչ անենք որ նրանք էլ այնչափ օգնութիւն են տուել որ տեղ չեն գցել մեզ նորից դիմում անելու, ու էդպիսով մենք նայած ժողովուրդի ներկայ դառնութիւնների վրայ, ճիշդն ասած, յուսահատւում ենք, չենք իմանում թէ ո՞ր տեղից եւ ո՞ր միջոցներով կարելի կը լինի մեզ ապրեցնել յուսահատ թշուառներին։ Այնու ամենայնիւ նորից դիմում ենք մեր հարուստներին, ունեւոր դասակարգին. ախր ինչ անենք, թողնե՞նք մի սերունդ, մի ռազմիկ ցեղ որ սովամահ լինի։ Ժողովուրդը իսկապէս մեռնում է մեռնում, ու եթէ սրանք էլ իրանց գթոտ սիրտերն ու առատաւոր ձեռքերը բաց չանեն, այլապէս Տարօնի հայը ոչ մի միջոց ունէ իր կեանքը ապրեցնելու։

* * *

Ասում է ժողովրդական մի առած թէ վարդը իր փուշը ունէ ու միսը իր ոսկորը, հայն էլ իր գէշերը ունէ ու աւելորդ չեմ համարում դրա մի օրինակը գրելու։ Թարգմանչաց վանքի ու որբանոցի վիճակի վրայ մի տեղեկութիւն առնելու համար էդ վանքը գնացի. իսկապէս շատ տխուր է դրութիւնը, ամէն բանումը պակաս, չքաւորութիւնն է փայլում իր տիրապետութեամբ, ու ես սիրտս կոտրած յետ վերադառնալիս հանդիպեցի մի երկու հայ գիւղ, դրանցից Ա··ը գանգատում էր թէ իրանց գիւղը որ բաղկանում է 40-50 տանից, մէկդի գցելով ընդհանուր հարստահարութիւնը, այրուել ու քանդուել է 10-15 տուն ու մարագ եւ մի պօլուկ[18] *զօրք էլ 8 տարի անընդհատ նստել է գիւղը, որի կարիքների մեծ մասը իրենք են հոգացել. երեւակայեցէք մի մարդ որ զրկուած է տնական բոլոր պէտքերից, դատապարտուած է եղել ուրիշի կարիքը հոգալ իր չունեցածովը. էդ տեղը առաջ է գալիս մի հարց. ինչո՞վ. ես հարցին չեմ պատասխանում. գցում եմ համայնքին իրա իմացածի համեմատ մեկնել։ Էտկից անցնում եմ Բերդակ գիւղը, հոդ էլ, այրուել ու քանդուել 25 տուն ու մարագ, բայց դրանցից աւելի ուշադրութիւնս դառնում է մի սեւ, մի սարսափելի տատի. գիւղացիներից շատերը բռնած մի մարդու՝ Գրօ Պօզէեանի ձեռքը բերում են ինձ մօտ. ասում են որ դա ժամանակին երաշխաւոր է եղել Մշոյ վերին թաղեցի Ապօ Մոսոյի մօտ մի մարդու որը նրանից վերցրել է 8 արծաթ փող. Ապօ Մոսոն իրա փողի տեղը դրա մի արտը 13 տարի անընդհատ միայն իր հաշին ցանել քաղելէ զատ առել է 9 ոսկի ու 2 արծաթ եւս, ու դեռ մի ահագին գումար էլ պահանջում է կառավարութիւնից առած մի կտոր իլամով. մազերս տնկւում են գլխիս վերայ. մտածում եմ երկար բարակ, բայց ոչ մի կերպով չեմ կարող վերլուծել էդ Ապօ Մոսօ ասուածի հոգին։ Մխիթարութիւնը միայն էս տեղումն է որ էդ Ապօ Մոսոյի նմանները շատ սակաւ են, հազիւ մի քանի հատ. թէ չէ հին գազան ռեժիմից առաջ դրանք արդէն կը քանդէին իրանցից ստորադասեալների տները։*

17.- Սեբաստացի Մուրատն է։
18.- Գունդ, զօրագունդ։

* *Սասնոյ մասին յաջորդիւ։*

Փաստ. 697-169

Բ 3.– ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍԱՍՆՈՅ

Սասունը Բշէրիկի եւ Մշոյ դաշտերը իրարմէ բաժնող լեռնագաւառ մըն է, որ կը սահմանուի արեւելքէն Խուլթի եւ Մոտկանի լեռնաշղթաներով, արեւմուտքէն[19] *Կէնճի լեռներով, հիւսիսէն Մշոյ եւ հարաւէն Բշէրիկի դաշտերով։*

Տարածութիւնը հիւսիսէն հարաւ 24 ժամ, իսկ արեւելքէն արեւմուտք 30 ժամ է։

Լեռներու եւ լեռնաշղթաներու այս կուտակումից ձորերու մէջ եւ լանջերու վրայ զետեղուած են 67 հայ գիւղեր իրենց ճիւղաւորումներով։

Սասունի մէջ գիւղ ըսելով պէտք է հասկնալ փոքրիկ փոքրիկ գիւղերու մի խմբակ, որոնց իւրաքանչիւրը իր ծագումը առած է մայր գիւղէն, որուն թաղ կը համարուի, թէեւ 1-2 ժամ հեռաւորութեան վրայ չինուած ըլլայ անկէ։ Այս թաղերի մէկն ու մէկը տարիներու ընթացքին մէջ այնքան կը մեծնայ, որ իրմէ ալ բաժանուողներ ու իր շուրջը գիւղախմբումներ կազմողներ կ'ըլլան, կը դառնայ ինքնուրոյն գիւղ։ Այս սկզբունքով կազմուած են Սասնոյ բոլոր գիւղերը եւ նոյն հիմքին վրայ կազմեր են 7 գաւառակներ, այսինքն Ա. Շատախ, Բ. Գաւառ կամ Միջին մաս, Գ. Մովասարի փէշեր, Դ. Տալորիկ, Ե. Բուսանք, Զ. Խիանք, Է. Խուլբ։

Հիւսիսային կողմէն կ'երկարի Կուռդըք կոչուած լեռնաշղթան, որ Մուշ քաղաքը եւ Մշոյ դաշտը կը բաժնէ Սասունէն, եւ որու հարաւային փէշերու վրայ՝ արեւելքէն արեւմուտք երկարող ձորակին մէջ կը պարզըւին Շատախի 10 գիւղերը։ Ասի միակ գաւառակն է, որ փոքրիկ տափարակներ ունի եւ կը համարուի Սասունի գլխաւոր վայրը երկրագործութեան տեսակէտէն։

Այս տափարակներու էն գլխաւորն է Մըրկէ մոզան կոչուած սարահարթը, որ խոտալի մի փոքր դաշտ է։

Շատախի գիւղ[եր]ն են.—

	հայ	քիւրտ
1. Կէրմաւ	30 տուն	
2. Քոփ	45 »	
3. Իրիցանք	10 »	
4. Տափըկ	17 »	9 տուն
5. Գեղաչէն	15 »	
6. Շուշնամերկ	25 »	
7. Սէմալ	65 »	
8. Շէնըգ	55 »	
9. Կէլիէկանըման	15 »	
10. Կէլիէմսուր	20 »	3 տուն
[գումար՝]	297 »	12 տուն

Այս գաւառակը Մուշէն 4-5 ժամ հեռու եւ բաժանող տարածութիւնը, որ Կուռդըք լեռնաշղթայի ելեւէջները կը լեցնեն, անմարդաբնակ է, ի բաց առեալ ամրան եղանակին՝ երբ Տիգրանակերտի դաշտէն քիւրդ աշիրաթներ իրենց խաշինքներով կու գան ու վրաննին կը հաստատեն հոն։

Շատախի արեւմտեան մասէն դէպի հարաւ կ'իյնայ Միջին մասը իր չորս գլխաւոր գիւղերով, որոնք են

	հայ
1. Գալիէկուզան	120 տուն
2. Ալիանք	60 տուն
3. Աղբի	80 »
4. Իշխնձոր	50 »
[գումար՝]	310 »

Գալիէկուզան ունի 18 թաղեր որոնք տարածուած են Անտոք լեռան արեւելքը եւ հիւսիս երկարող հովիտներու մէջ։ Անտոքի հիւսիսը կ'իյնայ Ալիանք որ 8 թաղեր ունի։

Աղբի իր չորս թաղերով կ'իյնայ Անտոքի արեւելքը։

Անտոքէն երկու ժամ հեռու դէպի հարաւ քչիկ մը թեքուած դէպի հարաւ — քչիկ մը թեքուած դէպի արեւելք — կ'իյնայ Կէփին լեռը որու հարաւային ստորոտի վրայ չինուած է Իշխնձոր իր չորս թաղերովը։ Անտոքի եւ Կէփինի արեւելքը, հիւսիսէն հարաւ, կը ձգուի Մովասարի Թանձր շղթան որու թեւերուն վրայ չինուած են հետեւեալ գիւղերը։

	հայ	քիւրդ
1. Հիթէնք	35 տուն	
2. Խոծոծվանք	8 »	10 տուն
3. Արգիկ	10 »	
4. Հարկորք	15 »	8 »
5. Քրդամանք	15 »	
6. Հաւկունք	6 »	
7. Հոսնէր	1 »	
8. Քարավանք	3 »	
9. Խլհովիտ	8 »	
10. Արդխու եւ Քօրախու	12 »	
[գումար՝]	113 տուն	18 տուն

Քրդերու յարձակումները ցրուած են այս գիւղերու բնակչութիւնները, այնպէս որ այժմ անոնցմէ ոմանք հազիւ թէ գիւղ կարելի է անուանել, ինչպէս Հոսնէրը ուր միայն մէկ տուն մնացեր է։

19.- Ձեռագրին մէջ «արեւելքէն», ինչ որ սխալ է։

Խուլբ գաւառակը կ'իյնայ Անտոք եւ Կէփին լեռներու արեւմուտքը եւ ունի 7 հայ գիւղեր, ի բաց առեալ զուտ քրդականները։

	հայ	քիւրդ
1. Գեղերվանք	80 տուն	
2. Ահարոնք	60 »	
3. Շուշէկ	15 »	10 տուն
4. Կասգէ	50 »	50 »
5. Փասուր	40 »	40 »
6. Էհաբ	30 »	
7. Ընձ[ա]քար	80 »	
[գումար՝]	355 տուն	100 տուն

Մօտ հինգ հարիւր երկրագործ քրդեր կը բնակին այդ գաւառակին մէջ, հայ գիւղերէն դէպի արեւմուտք։

Տալորիկի 11 գիւղերը միջին մասի հարաւային կողմը կ'իյնան եւ ամբողջութեամբ գրեթէ կը համարուին Տալորիկի գիւղի թաղերը։ Այս մասը Շատախէն 6-7 ժամ հարաւ է։

Ֆոֆոքար պատմական վայրը կը գտնուի այս մասին մէջ։

Գիւղերն են.—

	հայ
1. Հլողինք	25 տուն
2. Տալորիկ	25 »
3. Հաքմանք	10 »
4. Դվալենք	15 »
5. Արդուինք	15 »
6. Փորխ	15 »
7. Հոսնուտ	4 »
8. Հարթք	10 »
9. Սպաղանք	25 »
10. Զորեր	3 »
11. Եղկարտ	12 »
[գումար՝]	159 տուն

Խիանքը կը տարածուի Տալորիկի ու Խուլբի հարաւը եւ Տալորիկէն կը բաժանուի Սպիտակ սար եւ 20 այլ լեռնաշղթաներով։ Մեծաւ մասամբ բնակուած է խիանցի կոչուած քիւրդ աշիրաթէն, որ մօտ 3000 անձ կը լինի։ Խիանքի մէջ կան հետեւեալ 10 հայ գիւղերը

	հայ	քիւրդ
1. Պերմ	80 տուն	
2. Արխոնդ	20 »	
3. Պահամտա	20 »	15 տուն
4. Արսըք	15 »	10 »
5. Փառկա	40 »	
6. Մաջտուն	30 »	
7. Հեղին	15 »	
8. Արտկոնք	30 »	
9. Ընկուզնակ	40 »	
10. Սէվիթ	30 »	
[գումար՝]	320 տուն	25 տուն

Տալորիկի հարաւային արեւելեան կողմն է Բուսանք իր 16 գիւղերով, որք են.—

	հայ
1. Դաժպէտրիկ	4 տուն
2. Մարսթօ	10 »
3. Մքթէնք	22 »
4. Քաջառինք	15 »
5. Կորընկէս	7 »
6. Բսանք	9 »
7. Թարուկ	14 »
8. Տալհօր	3 »
9. Փշուտ	5 »
10. Մշգեղ	28 »
11. Խնձորիկ	23 »
12. Արթնիք	18 »
13. Պէլօենք	6 »
14. Մղրէ եւ Կրէ ձոր	12 »
15. Գոմք	18 »
16. Թաթանք	6 »
[գումար՝]	200 տուն

Այս գաւառը Տալորիկէն կը բաժնուի Մովասարի շղթայովը։ Մարաթուկ լեռը որ սրբավայր կը համարուի եւ Սասունի ամենաբարձր գագաթն է եւ որուն տեղացիները ջուխտակ գլուխ Մարաթուկ անունը կու տան, Բուսանաց գաւառի արեւելեան կողմը կ'իյնայ։

Մարաթուկի հիւսիսը եւ հիւսիսային արեւելքը կը բնակի յայտնի բալացի քիւրտ աշիրաթը, որ մօտաւորապէս 5000 անձեր ունի իր մէջ։

Վերի ցուցակներու հաշուէն կ'երեւի որ ամբողջ Սասունը ներկայիս ունի 1754 հայ տուն, եւ որովհետեւ սասունցիները կ'ապրին նահապետական կերպով, կարելի է իւրաքանչիւր տուն միջին հաշուով համարել 15 անձ, որով կ'ունենանք ընդամէն 26,310 բնակչութիւն մը։

Այս տեղի ժողովուրդը նահապետական մնացեր է իր լեզուի մէջ ալ որը ճոխ չէ, սակայն պահեր է շատ մը հայերէն հին բառեր եւ երբեմն քրդերէնէ փոխ է առեր։ Բառերու հնչումը խորթ է եւ կը տարբերի նոյն իսկ իր շուրջը գտնուող հայ գաւառներինէն։ Ո հնչումին տեղ ու կը գործածեն։ Օրինակ՝ շոր եւ փոր բառերը շուր եւ փուր կը հնչեն եւ շատ մը բառերու ալ «ե»-ը կը փոխարինեն «ի»-ինչպէս վարդապիտ, խմբապիտ, Պիտրուս, եւն։ Կ. Գ. Ք. գրերու հնչումը մօտ է արարատեան հայոց հնչումին։ Բառերու արտասանութեան մէջ առաջին վանկը կ'երկարեն իսկ վերջինը կը հնչեն կտրուկ որպէս թէ շեշտ մը դրուած լինէր վրան։

ԿՐՕՆ.— Իր ժամն ու պատարագն, սուրբն ու սրբավայրը միշտ ունեցած է սասունցին եւ միամիտ հաւատքով մը կառչած անոր։ Հայաստանեաց եկեղեցւոյ մէն մի ծէսը, մէն մի արարողութիւն՝ սրբութիւն մը եղած է անոր համար։ Կեդրոնական գիւղերու մէջ կան եկեղեցիներ ու քահանաներ։

ԿՐԹԱԿԱՆ.— Որպէս լեռնական,նահապետական ժողովուրդ, սասունցին զուրկ է դաստիարակութենէ։ Դպրոցներու գոյութիւնը շատ մօտ անցեալի մը հազիւ ..... տարուած գործ է։ Հին ժամանակներ սասունցիք երբեմնակի իրենց զաւակներէն ոմանք կը ղրկէին Առաքելոց կամ Յովհաննու վանքերը «տիրացու» դառնալու, որ իբր գիւղին տէրտէրը «վախճանէր», տեղը պարապ չմնար, ժամն ու պատարագը չմոռցուէին։ Այսօր ալ հազիւ 6 նախնական դպրոցներ կը գործեն ամբողջ Սասունի մէջ, ուր սասունցի մանուկը պարզ կարդալ մը կը սորվի։

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Սասունցին, ինչպէս ամէն ինքնուրոյն ժողովուրդ, ունի իր առանձնայատկութիւնները։ Ասոնց մէջ գլխաւոր տեղ կը բռնէ իր ընտանեկան կեանքի ամբասիրութիւնը։ Պարզ է անոնց ինչպէս մի մանուկ, ազատ՝ ինչպէս իր անառիկ լեռները ու մաքուր ինչպէս իր լեռնային օդը։

Հիմնուելով նահապետական սովորութիւններուն, տան տարեցը ընտանիքին պետը կը համարուի, որուն առաջը ամէնքը ազատ ու համարձակ են, բայց հրամաններուն-հնազանդ։ Միեւնոյն յարկին տակ կը բնակին մինչեւ որդոց որդիք, այնպէս որ շատ անգամ ընտանիքին անդամներուն թիւը կը հասնի 30-40։ Քաղցրախօս են իրարու հետ եւ ջինջ սիրով միմեանց կապուած։ Ոչ միայն միեւնոյն յարկին տակ բնակողները, այլ միեւնոյն ցեղէն սերող բոլոր հեռաւոր եւ մօտաւոր ազգականները սերտ կապով կապուած են իրար, մէկը միւսին իրաւունքները պաշտպանող։

Սասունցին շատ բծախնդիր է իր ընտանեկան կեանքի մաքրութեանը, եւ որպէսզի տան կինը էրկայ օճախին շատ սերտ կերպով կապուած ըլլայ, ան դիմեր է ծայրայեղութիւններու, օրինակ աղջիկը դեռ հազիւ 9-10 տարին լրացուցած հարսնութեան կը տանին, որ իր ապագայ տան մէջը մեծնայ, ընտանենայ իր շրջավայրին եւ ընտանիքի կրթութիւնը առնէ, մէկ խօսքով տունեցի ըլլայ եւ ոչ թէ օտար։

Ամուսնական խնդրին մէջ՝ կարեւոր տեղ կը բռնէ առեւանգումը — սիրած աղջկան «փախցնելը» —։ Հոգ չէ թէ աղջկայ համաձայնութիւնը առնուած է թէ ոչ, բաւական է որ տղու կողմէ մարդիկ եւ ինքը փեսացուն կ'ուզեն օրիորդին հարսնացնել։ Փեսացուի բարեկամ «խորդերը» — կտրիճ երիտասարդները — կը հաւաքուին մի գիշեր, դաւադրութեամբ մը դուրս կը բերեն օրիորդին իր հօր տնէն եւ բռնի կը վերցնեն կը տանին։ Փեսացուն եւ առեւանգուած օրիորդը, նոյն գիշերն իսկ, գինուած քանի մը ընկերակիցներով կ'ուղարկեն հեռու մի գիւղ եւ պսակել կու տան։

Կը վերջանայ հարս ու փեսայի հարցը եւ կը սկսի նոր հարց մը — երկու խնամի գերդաստաններու թշնամութեանց խնդիրը —։

Առեւանգելը կտրճութեան նշան է, այդ պատճառաւ առեւանգուողի ազգակիցները անպատուուած կը զգան ինքզինքնին եւ հրացանները վերցրած կը յարձակուին իրենց նոր բարեկամի «դաս»ին (ազգակիցներու) վրայ, ցոյց տալու համար թէ, իրենց քաջութիւնը վար չի մնար դիմացիններէն եւ թէ պատրաստ են իրենց նամուսը պաշտպանել կեանքի գնով։ Երբեմն արիւնահեղ կռիւներ տեղի կ'ունենան, որմէ ետք միջնորդներու միջամըտութեամբ, խնդիրը կը կարգադրեն տուգանք վերցնելով եւ գիւղի հասարակութեանը ճաշկերոյթ տալով։ Երբեմն այս կարգի թշնամութիւններ կը տեւեն տարիներ, երկու կողմէն մարդասպանութիւններ տեղի կ'ունենան եւ ցեղային անհաշտութեան հիմնաքարը կը դրուի։ Այս կարգի դէպքերէն մէկը կը յիշեմ, որը կարգադրելու գործին մասնակցեցայ եւ տեսայ սասունցիի ներքին մարդը, յամառ, բծախնդիր, վարպետ եւ իր գործի հաշիւները գիտցող։ Միամիտ նահապետական սասունցին, երբ խնդիրը իր ներքին գործերուն կու գայ, ճարպիկ քաղաքագէտ է, խորամանկ ու կամակոր։ Շատ զարգացած է իրենց մէջ աշիրաթական ազգապուութիւն։ Իրենց հեռաւոր ազգականին հասցրած մէկ վնասը ընդհանուր ցեղին կը համարեն եւ հաւաքաբար կը պաշտպանեն վնասուողը։ Նոյն սկզբունքով, եթէ համայնքի մը մէկ անդամը ուրիշ համայնքի մը անհատից ոեւէ վնաս հասցուցած է, փոխարէնը կամ վրէժը կը լուծեն անկէ՝ ով առաջին իրենց կը հանդիպի նոյն համայնքէն որուն կը պատկանէր վնասող անհատը — օրինակ 903ի ձմեռ Գալիէկիւզան գիւղը հանդիպեցաւ մի հեղինցի, գիւղացիներէն մէկը բռնեց անոր օձիքէն եւ երեք մէճիտ կը պահանջէր ի հաշիւ մի ուրիշ հեղինցիի որը հինգ տարի առաջ ապրանք գնած էր գալիէկիւզանցիէն։ Հաւաքուեցան գիւղացիները եւ բռնի պիտի առնէին, սակայն միջամտեցինք եւ հեղինցիի խոստումին վրայ թէ, վերադարձին դրամը պիտի գանձէ եւ բերէ, թոյլ տուին որ գնայ։ Հետաքրքրուած այդ միջադէպէն, հարցուփորձ ըրի, իմացայ որ, տիրող օրէնք է ատի։

Սէմալ գիւղի մէջ կռուի մը միջոցին 15 տարեկան մի տղայ քարով կը զարնէ կը կոտրէ մի մարդու ոտք։ մի ամբողջ տարի երկու կողմի մարդիկ ահագին վէճեր եւ կռիւներ ունեցան իրարու հետ, մինչեւ որ միջամտութիւններով խնդիրը կարգադրեցինք։

Այս ցեղապաշտպանական գիտակցութիւնը աւելի բուռն է երբ խնդիրը քրդերու հետ է։ Տարիներ առաջ Շէնոգ գիւղ կ'այցելեն Խարկցի քրդերը, մի տան մէջ կերակուր ուտելէն ետք, դգալ մը վերցրած դուրս կը գնան։ Տան կիները՝ քրդական այդ յափշտակութիւնները կը նկատեն իբրեւ նախատինք մը եւ կը պահանջեն որ դգալը ետ տրուի։ Քրդերը կը մերժեն դգալը վերադարձնել եւ կ'աւելացնեն «եթէ ձեր մարդիկը կտրիճ են, թող գան բռնի առնեն»։ Սասունցի կինը ալ չի կրնար տանիլ այս նախատինքը, հաւարը կը փրցնէ, գիւղը ոտքի կը կանգնի, կին ու մարդ զինուած դուրս կու գան, կռիւը կը սկսի, 4 քիւրդ եւ 2 հայ կը սպաննուին, սակայն սասունցի կինը ետ կը ստանայ իր պոչը կոտրած դգալը։

Սասունցիի տեսակէտէ մարդու մը ամենամեծ արժանիքն է կռուի մէջ յանդուգն ըլլալ։ Այդ պատճառաւ ալ օրիորդները կը գնահատեն այն երիտասարդը, որ կռուի առաջին շարքին մէջ կը վազէ, որ մեռնելէ չի վախնար։

Ոչ մի էրիկմարդ կռուի ժամանակ չի կրնար տուն նստիլ եւ զերծիլ կնիկներու նախատինքներէն։ Կիները այնքան պատերազմասէր են որքան էրիկմարդիկ։ կռուիլ իրաւունքի պաշտպանութեան համար- ընդհանրական օրէնք է, անհրաժեշտ կարիք մը, ու կինը այնքան լաւ գիտէ կռուիլ որքան էրիկմարդը։ Հարիւրաւոր օրինակներ կան ասոր, բայց ես կը յիշատակեմ իբրեւ նմուշ միայն երկուսը։

1894-ի գարնան շէնոգցի ռէս Գրգոյի կինը Շաքէն, մի քանի կանանց հետ, տեղական սովորութեան համաձայն, լեռ կը գնայ շալակով փայտ բերելու։ Մինչ փայտ հաւաքելու գործով զբաղած էին վրայ կու գան մի քանի քրդեր եւ կ'ուզեն խլել շալակելու չուանները։ Սասունցի կինը երբեք սովոր չէ կողոպտուիլ ու աւելի լաւ կը սեպէ մեռնիլ՝ քան լսել իր վրայ հանուած երգը թէ կողոպտուած թալանուած է քոսոտ քրդերէ։*

Մանաւանդ Շաքէն չէր կրնար հանդուրժել, ինքը առիւծ Գրգոյի կինն էր, պարտէր ցոյց տալ թէ իր էրկայ արժանի կողակիցն էր։ կը յարձակուի չուան խլող քրդու վրայ, կը վերցնէ կը դնէ գետին ու ծունկը կը զարնէ քրդու կրծքին։ Ետեւէն երկրորդ քիւրդը թրով մի հարուած կու տայ Շաքէի ազդրին։ Կատղած առիւծուհին կայծակի արագութեամբ ետ կը դառնայ, կը բռնէ քիւրդը, կը պառկեցնէ առաջին քրդու վրայ եւ թուրը ձեռքէն կը խլէ։ Նոյն միջոցին միւս կիներն ալ քարերով կը հալածեն քրդերու ընկերները։

*Վեր կը կենայ Շաքէն, կարեւորութիւն չտալով ազդրի վէրքին, թուրը ձեռքին յաղթական կը դիմէ դէպի Շէնոգ։ Դեռ Շաքէի վէրքը չառողջացած կը սկսի աշնան մեծ կռիւը եւ վիրաւոր Շաքէն Անտոքի գագաթին վրայ կը սպաննուի քիւրդերէ**։*

Երկրորդ օրինակը Ալիանցի Հաւսէն է։ Երբ 94ին շէնոգցիները եւ բաքրանցի քրդերը կռուի բռնուեցան — ու ասի կռիւներուն էն առաջինն էր —, Հաւսէն հրացաններու ձայնը լսելով կը վերցնէ իր երեք որդիքը, Ալիանքէն Շէնոգ կը փութայ օգնութեան։ Շէնոգցիները դիրք բռներ էին բլուրի մը գագաթը եւ բաքրանցիները հանդիպակաց մի ուրիշ բլուրի վրայ էին։

Հաւսէն դեռ բլուրի ստորոտը չհասած կը պոռայ «Կրակիր, կռուիր, ռէս Գրգօ, եկողը Հաւսէն է իր առիւծի կորիւններով»։ Երբ բլուրի գագաթը կը հասնի, քրդերէն լեզուով կ'աղաղակէ։ «Դէ՛ կորիւններս առաջ անցէք, դուք ինծի հետ կռուողներու առաջին շարքերու մէջ պիտի ըլլաք» ու կ'անցնի ամէնէն առաջի դիրքերը։ Յաղթանակ կը տանին այդ օրը, բայց կառավարական դրդումով կռիւը կը շարունակուի, ու մինչեւ վերջ, ամէն կռուի մէջ՝ Հաւսէն, «իր առիւծի կորիւններով» միշտ կռուողներու առաջին շարքերումն էր, մինչեւ որ Անտոքի կռուին ինկաւ թշնամու գնդակով։

---

* *Երբ մէկը թալանուի առանց բուռն դիմադրութեան, որին մէջ վիրաւորուած չըլլայ ծանրապէս, գիւղին բանաստեղծները երգեր կը յօրինեն կծու քննադատող ոճով։*

** *Հոս պարտիմ իբրեւ ծանօթութիւն ըսել թէ, սխալ է լրագիրներու հաղորդած այն լուրը թէ Շաքէն մանուկը կրծքին սեղմած ապառաժային ցցուածքէն վար կը նետէ ինքզինքը դէպի անդունդ։ Ատի ստրուկ ժողովրդին յատուկ է. սասունցի կինը կարող է ամէն բան ըլլալ բայց ոչ ստրուկ։ Շաքէի գերեզմանը կը գտնուի Անտոքի գագաթ, ճիշդ հոն ուր ինքը կը մեռնի։*

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Փաստ. 697-120

Գ.– ՏԵՂԵԿԱԳԻՐ ՔՂԻ ԳԱՒԱՌԻ ՕՍՄ. ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՏՐՈՒԱԾ

(Դեկտ. 18, 1908)

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

Քղի լեռնային երկիր մ'է, իր մշակելի հողերը պիտի բաւէին անոր չուրջ 60.000 բնակիչներու պէտքերուն, եթէ երկրագործական նոր մեթոտներու համաձայն մշակուէին անոնք եւ կարգ մը պէտքերու գոհացում տրուէին, որոնցմէ գլխաւորը կարելի է նկատել ջուրի պակասը. միւս կողմէ հազիւ ժողովուրդին պէտքերուն բաւական հողին մէկ մասը անմշակ կը մնայ հետեւեալ պատճառներով։

1.- Երկրագործական պանքան ծախելու պարտաւորուած հողերէն բաւական մաս մը իր անուան փոխանցած է, որոնք խոպան կը մնան։

2.- Երկրագործական պանքայէն եւ մալիյէ-էն[1] շատ մը հողեր աժան գներով ծախուած եւ մեծաւ մասամբ բռնակալներու ձեռք անցած են, որոնք մարապաներու[2] յանձնուած ըլլալով, բնականօրէն պահանջուած խնամքով չեն մշակուիր։

3.- Ժողովուրդին ամէնէն թարմ եւ ուժեղ տարրը, չուրջ 3000 հոգի, 20/40 տարեկան, պանդխտութեան դիմած է միշտ, որոնք պիտի ըլլային ամէնէն ժիր մշակները։

Մշակուած հողերն ալ սպասուած հասոյթը չեն տար հետեւեալ պատճառներով.

1.- Երկրագործական կենդանիները՝ ոչխար եւ արջառ, էղնաֆ[3] ծանր տուրքին պատճառաւ վատնուելով՝ պայթարներու չգոյութենէն հիւանդութեամբ, պանդխտութեան երեսէն՝ խնամողներու պակասութենէն եւ քիւրտերու աւարառութենէն հետզհետէ կը նուազին, որով եւ կը պակսի պարարտացումի ամէնէն նախնական միջոցը, աղբը, որուն միայն ծանօթ է տգէտ երկրագործը։

2.- Քղիի ձմեռը Նոյեմբեր 1էն Մայիս 1 կը տեւէ իսկ շատ անգամ կը պատահի Նոյեմբերէն առաջ դեռ ձիւնը արտերը չծածկած՝ սաստիկ ցուրտ մը տեղի ունենայ եւ աշնա[նա]ցանը վնասէ։ Մինչեւ որ ձիւները հալին ու երկրագործը գարնանացանը աւարտէ, արդէն անձրեւներու եղանակը անցած կ'ըլլայ, որով Քղի դատապարտուած է յաճախադէպ երաշտութեան, թէեւ անձրեւին պակասը լեցնելու համար, չեն պակսիր աղբիւրներ, առուներ եւ վտակներ, բայց Քղիի մշակելի հողերուն հազիւ 1/10ը կ'ոռոգուի անոնցմէ, 9/10ը անջրդի է. այդ ջուրերէն օգտուելու համար մեծկակ ծախքերու պէտք կան, ինչ որ մէն մի գիւղի ժողովուրդ անջատաբար եւ ինքն իրեն չվիտի կնայ գլուխ հանել։

Քղիի մեծ վէրքը եղած է, ջուրի պակասութեան հետ պանդխտութիւնը, որոյ գլխաւոր պատճառները կ'ենթադրուին։

1.- Տրոց ծանրութիւնը եւ անոնց գանձումին ապօրէն խստութիւնը։

2.- Տրոց փոխարէն շատ մը մշակելի հողեր՝ ընդհանրապէս հայերունը, իրենց մէկ տասներորդ գնովը ծախուիլը, որով շատ մը երկրագործներ ապրելու միջոցէ ի սպառ զրկուելով գաղթել եւ պանդխտելու ստիպուիլը։

3.- Վերը նշանակուած պատճառներով, գրեթէ ոչ մէկ երկրագործի, իր բուն պէտքերուն բաւելու չափ մշակելի հող ու հասոյթ չունենալով՝ միշտ ցորեն գնելու պարտաւորուելը, միւս կողմէ քիչ վերջը ըսուելիք պատճառներով արհեստ ու վաճառականութիւն յետադէմ եւ ընտանիքի մը պէտքը գոհացնելու անբաւական ըլլալով՝ իւրաքանչիւր տունէ մէկ կամ երկու երիտասարդի պանդխտելու հարկը։

4.- Վաշխառուները, որոնք չափազանց տոկոսներէ, շատ մաղ հողեր իւրացուցած են եւ շատ անգամ երկրագործին պարէնը իսկ գրաւած։ Կարգ մը տեղեր տեսնուած է որ խեղճ երկրագործը իր տարուան մը աշխատութենէն յետոյ երբ կալը կը հանէ, ամբողջ հասոյթը վաշխառուներուն տալով, թին ու աւելը չալկած տուն կը դառնայ։

Քղիի արմտիքը չի բաւեր իր ժողովուրդին, եւ պակասը կը լեցուի Բալուէն ու Դերջանէն ներածուած արմտիքով, այդ ալ տարուան մէջ քանի մը ամիս միայն կարելի է, վասնզի ձմեռուան եօթը ամիսներուն մէջ կը դադրի ջորիի եւ իշու երթեւեկութիւնը. ամառուան մէջ ալ, ճամբաները այնչափ անկանոն են ու անապահով, որ փոխադրութեան ահագին ծախքեր կ'ըլլան եւ խեղճ ժողովուրդը ճակատագրականօրէն դատապարտուած է Պոլսոյ [նման] քիլէն 50 ղրշ.ի ուտել. մինչեւ որ երկրագործութիւնը եւ մշակութիւնը յառաջդիմէ ու ժողովուրդը ազատի այս ծայրայեղ սղութենէն, անհրաժեշտ են խճուղիներու շինութիւնը ցորենի փոխադրութեան համար ալ։

Միշտ ցորենի պէտք ունեցող ժողովուրդին համար աղիտալի եղած է էշարի[4] դրութիւնը, եւ ատիկա անտանելի կը դառնայ անոր համար որ ժողովուրդին մէկ մասը մարապա[2] է եւ իր արտերուն հասոյթէն քիչ բան կը տանի տուն, որմէ էշարի ալ բաժին հանելը շատ ծանր է. ասոնց հետ կան նաեւ միւլթէզեմներուն[5] գործած զեղծումները, որոնք խոտի (հուպուպաթ) օրինական 1/8 տասանորդէն չափազանց աւելի կը գանձեն։

Քղիի կլիման թէեւ ձեռնտու է ամէն տեսակ պտուղներ եւ ծառեր արտադրելու, սակայն չէ քաջալերուած եւ բնաւ չունինք պտղատու պարտէզներ, այգիներ եւ թթաստաններ — շերամի համար. ժողովուրդը ինչպէս ըսինք անմիջական պէտքերու առջեւ ստիպուած է պանդխտութեան դիմել եւ անոնցմով չգբաղիլ, կառավարութիւնն ալ բոլորովին անփոյթ եղած է։ Կան հազարաւոր պտղատու վայրի ծառեր, գլխաւորաբար տանձենի եւ խնձորենի, որոնք լոկ պատուաստով մը գեղեցիկ ծառերու կը դառնան. կառավարութեան կողմէ քիչ ծախքով, կարելի է զանոնք մասնագէտներու ձեռքով պատուաստել եւ ասով մասամբ այս պէտքին գոհացում տալ, որով վերջ պիտի դրուի 1500 լիրայի մրգեղէնի ներածութեան, զոր պիտի տեսնէք իր կարգին։

ԿՐԹԱԿԱՆ

Քղիի բնակիչց ցեղերուն մէջ, բաղդատական տեսակէտով ամէնէն գոհացուցիչ վիճակ ունեցողն է հայ տարրը, կեդրոնին մէջ ունեցած իր երկսեռ նախակրթարանով եւ իւրաքանչիւր գիւղի մէջ նախնական վարժարաններովը, որոնք սակայն առ ի չգոյէ հաստատուն եկամուտներու, ամէնքն ալ կը կառավարուին ժողովրդական օժանդակութեան վրայ հիմնուած ենթադրական պիւտճէներով, ինչ որ շատ անգամ չի թոյլատրեր անոնց կանոնաւոր շարունակութիւնը եւ ընդհանուր կերպով միշտ անբաւական է գոհացում տալու հայուն կրթական պէտքին։

Թուրքերը ունին կեդրոնին մէջ մէկ երկրորդական (Ռիւշտիյէ) եւ մէկ նախնական (Իպթիտայիէ) վարժարաններ, իսկ երեք նախնական վարժարաններ նահիյէներու մէջ, որոնց ընդհանուր ծախքը կը մատակարարուի կառավարական սնտուկէն. կեդրոնին Ռիւշտիյէն անուանական եւ ապարդիւն վիճակ մը ունեցած է ցարդ, իսկ նահիյէներունը լոկ կրօնական դասախօսութեամբ քիւրտերը թուրք տարրին հետ ձուլելու նեղ ըմբռնումին ենթակայ՝ ոչ մի օգուտ ընծայելու վիճակին մէջ։

Գալով քիւրտերուն, ոչ մի վարժարան ունենալով հանդերձ, բացարձակ անտարբերութեամբ կը վերաբերուին դէպի կրթական գործը։

Հայոց համար մասամբ դարման կրնայ ըլլալ տնտեսական վիճակին ակնկալուած բարւոքումը եւ մէարիֆի[6] սնտուկէն բաժին մը ստանալու իրաւունքին գործադրութիւնը։

Թրքաց համար հարկաւոր եղածն է, արդէն գտնուածներուն համար, կարող պաշտօնեաներու ընտրութիւնը եւ դասաւանդութեան նոր մեթոտներու եւ լայնախոհ ծրագրի մը ենթարկուելը, լաւ խնամոտ հսկողութեան մը ներքեւ թէ՛ կառավարութեան վճարումները յումպէտս վատնուած եւ թէ թուրք մանկութեան ժամանակը ընդունայն անցուցած չըլլալու համար, իսկ չգտնուած գիւղերու մէջ նոր վարժարաններու բացումը պարտաւորիչ ընել։

Քրտաց համար նոյնպէս պարտաւորիչ ընել վարժարաններու բացումը, հետզհետէ զարգացնելու եւ քաղաքակրթելու համար յետադէմ վիճակը, մասամբ կառավարական օժանդակութեամբ եւ մասամբ ժողովրդական հարկեցուցիչ նպաստով։

Իսկ ընդհանուր զարգացումի իբր ծաւալման միջոց հաստատել ընթերցարան, գրատուն եւ լսարան կառավարական քաջալերութեամբ եւ ժողովրդական համերաշխ ուժերով, ամէնքին դիւրամատչելի պայմաններու ներքեւ։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Պաշտօնէից մեծ մասը իր պարտականութեանց անգիտակ եւ իր պաշտօնը վարելու անկարող ըլլալուն հետ, ընդհանուր դարձած կաշառակերութիւնն ալ միացուցած, զանազան զեղծումներ ի գործ դնելու ոչ խիղճ կ'ընէ եւ ոչ կը զգուշանայ, ինչ որ եթէ մասամբ աստիճանական վերադաս պաշտօնէութեան ցոյց տրուած օրինակին քաջալերիչ թոյլտուութեան հետեւանքն է, մասամբ ալ ստացած ամսականին անբաւականութեան պատճառաւ պարտաւորիչ կը դառնայ այն՝ 150 ղրշ. ամսականով 5-10 անձերէ բաղկացած ընտանիք մը ապրեցնելու համար։ Այս վիճակին ենթակայ պաշտօնեայ մը որ գէթ իր այդ անբաւական ամսականը օրը օրին ստանալու առաւելութիւնն ալ չունի, իր պաշտօնին մէջ գործած զեղծումներէն զատ՝ առեւտրական յարաբերութեանց մէջ վաճառական եւ արհեստաւոր դասակարգին ալ բնական է որ վնասակար պիտի լինի՝

1.- Ելեւմտական նախարարութիւն։
2.- Սեփականազուրկ, անհող մշակներու։
3.- Ոչխարներու վրայ դրուած հարկ։

4.- էշար կամ աշար, բերքի վրայ տասանորդի հարկ։
5.- Տասանորդական տուրք գանձող կապալառուներ։
6.- Կրթական նախարարութիւն կամ տնօրէնութիւն։

միշտ պարտքի տակ մնալով եւ օր մըն ալ յանկարծական պաշտօնանկութեամբ կամ փոփոխութեամբ մը առնել քալելով. միեւնոյն ատեն իրաւունքի եւ դատարանի առջեւ ժողովրդեան ստորադաս դիրքը հանդէպ պաշտօնէութեան առաջնոյն վնաս եւ վերջնոյն դիւրութիւն ընծայող պարագայ մը ըլլալով՝ այդ բոլոր անպատեհութեանց առաջը առնելու համար հարկաւոր է լաւ վճարել, ուղիղ եւ խղճամիտ պաշտօնավարութիւն պահանջել, լաւ հսկել եւ զեղծանողները խստիւ պատժել։

Թափու.— Ինչպէս պաշտօնէական բոլոր շրջանակները, մասնաւորապէս թափուն, նուֆիւսը եւ Ատլիյէն մաքրուելու եւ հիմնական կազմակերպութեան անհրաժեշտ պէտքն ունին. կալուածական վաճառումի մը (ֆերազ), բաժանումի մը (թէֆրիկ) փոխանցումի մը (ինթիգալ) գործողութեան համար ի՞նչ դժուարութեանց չի հանդիպիր ժողովուրդը եւ ի՞նչ զեղծումներ չեն գործուիր թափուին մէջ։

Նուֆիւս.— Զինուորական գործողութեանց մէջ, արձանագրութիւններու անկանոնութեան հետեւանօք որքան պարտաւոր (միւկէլլէֆ) չեղողներ եւ անօգնականներ (մուեսսզին) զօրք կը լինին ի վնաս իրենց ընտանիքին եւ որքաններ հակադարձաբար ազատ կը մնան ի վնաս տէրութեան ծնունդներու եւ մահերու դէպքերու մէջ (վուգուաթ), առաջիններէն որչա՞փ չարձանագրուածներ (մէքթում) եւ վերջիններէն քանինե՛ր որ յետ մահու տուրք կը վճարեն տարիներով, յանիրաւի եւ դեռ ուրիշ շատ մը անկանոնութիւններ որ կը տեսնուին նուֆուսի գործողութեանց մէջ։

Ատլիյէ.— Արդար իրաւունքի բռնաբարում, անմեղներու դատապարտութիւն, անիրաւ բողոքներու պաշտպանութիւն, յայտնի ոճրագործներու անպարտութիւն, յանձնարարութեամբ մը՝ (իլթիմաս) հակառակ վճիռ, զրպարտութեամբ մը՝ ընտանիքի մը թշուառացում, եւ կաշառքի զօրութեամբ՝ կեանքի մը փճացում եւ այլն եւ այլն տեսնուած իրողութիւններ են միշտ դատարանի մէջ։

ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Գոյութիւն չունի ըսուելու չափ անուանական, իւր տարեկան ամբողջ հասոյթը, ուղղակի եւ անուղղակի 3000 ղրշ.էն անդին չ'անցնիր, որուն 7-800 ղրշ.ը գրագրի մը եւ Զաուշի մը կը վճարուի. իսկ մնացեալը կը գործածուի պայրամներու եւ Սուլթանի տարեդարձներու առթիւ պաշտօնական ընդունելութեանց եւ լուսավառութեանց ծախուց։

Փողոցները անմաքուր, առ ի չգոյէ սպանդանոցի՝ արեան ճապաղիք հրապարակի վրայ։ Բժշկի, դայեակի եւ դեղարանի պակասութենէն միշտ բաւական թուով ձրի զոհեր. կամուրջներ՝ շինուելու եւ նորոգուելու կարօտ, կառավարական շէնքը քայքայուած եւ վտանգաւոր։ Բանտը մանաւանդ մարդկային բնակութեան բոլորովին անյարմար եւ առանց թուելու հասարակաց պարտէզ, ընթերցարան եւ ուրիշ զանազան բարեգործութիւններ. արդէն յիշուածները մեծ մասամբ առողջապահական անհրաժեշտ պէտքեր են, որոնց կրնայ գոհացում տրուիլ հասոյթի աղբիւրներ ստեղծելով եւ վճարեալ կարող քաղաքապետներ կարգելով։

Անվճար քաղաքապետ մը եւ իր ժողովականք՝ որոնք նստելու տեղ մը իսկ չունենալով, խանութներու, սրճարաններու կամ պարտէզներու մէջ պիտի խորհրդակցին ի հարկին, դիւրին է երեւակայել թէ ի՞նչ աստիճան վերաբերում կրնան ունենալ հանդէպ իրենց պաշտօնին։

ՏՈՒՐՔ

Քղիի ընդհանուր հասոյթը կը գոյանայ հետեւեալներէ

Տասանորդի տուրք	1396293
Ոչխարի	488498,20
Զինուորական	425374
Հողային եւ կալուածական	262910,20
	2573076

Իսկ ընդհ. ծախքն է

Տախիլիյէ պաշտօնէից ամսականք տարեկան	36000
Ատլիյէի պաշտօնէից ամսականք տարեկան	16920
Շէրիյէի	21756
Փոլիսի	12000
Թափուի	5400
Մալիյէի	73920
Թէգաիտի	14400
Մէարիֆի չորս ամսական (8 ամսականը պանքայէն կը ստանան)	4740
Զանազանք տարեկան	6000
Ռէտիֆ թապուրին ամսական եւ ատիտ	156000
Համիտիյէ Ալային	60000
Ժանտարմային	150000
	557136

Առաւելութիւն հասոյթից	2015940

Որ ամբողջութեամբ կը ղրկուի կառավարութեան։

Այս տուրքերէն միայն տասանորդը արմտիքով կը վճարուի ժողովուրդէն իսկ մնացեալը կանխիկ դրամով։ Ասոնցմէ դուրս ժողովուրդը կը վճարէ նաեւ տարեկան 15—20000 ղրշ. ատլիյէի փուլերու եւ նոյնչափ ալ Հիճազի երկաթուղիին վերաբերեալ զանազան թղթերու։

ԱՇԻՐԷԹ

Քղուայ Աշիրէթները կը բաժնուին հետեւեալ անուններով

Խռամէկցիք, Շատրցիք, Հասանանցիք (Համիտիյէ), Զըմթէկցիք, Խուպաթցիք, Քմցորցիք, Մասրգանցիք, Կռուաձորցիք, Լերթիկցիք, Զարիկցիք, Ճէմպլեկցիք եւ Բոսթրքանցիք, որոնցմէ շրջապատուած է Գաւառը։ Անոնց մեծագործ մասը սակաւաթիւ են եւ կարեւոր նշանակութիւն մը չունին, իսկ ընդհ. կերպով առանց կանոնաւոր կազմակերպութեան. իրենց աղաներու բռնակալութեան գործիքն են միայն եւ կ'աշխատին շատ անգամ անոնց համար եւ կը գողնան ու կը սպանեն անոնց հաշուոյն. գրեթէ ամէնքն ալ ուրոյն վիճակ մը ունին եւ մէկը միւսին հետ ընդհարումներ կ'ունենայ յաճախ։ Այս դրութեան ներքեւ ապրող ցեղ մը բնականաբար զուրկ պիտի մնայ ամէն քաղաքակրթութենէ եւ ցվերջ նոյն վիճակին մէջ պիտի գտնուի, եթէ թօթափել կարելի չըլլայ իրենց վրայ ծանրացած լուծը, որուն ազդեցութիւնը կու գայ կը հասնի շատ անգամ հայերուն։ Հարկ է աւելցնել նաեւ թէ այս ներքին աշիրէթներէն զատ նշանաւոր Տէրսիմն ալ արեւմտեան եւ հիւսիսային կողմերէն սահմանակից է Քղիի։

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Քղիի մէջ վաճառականութիւնը շատ ետ մնացած է. այն որ վաճառական կը նկատուի հոս, պարզ էսնաֆ մը պիտի ըլլար ուրիշ տեղ մը։ Թէեւ քղեցին ցոյց տուած է առեւտուրի ամէն ընդունակութիւն բայց շատ մը պատճառներ չեն թողուցած որ նա զարգացնէ այդ կարեւոր ճիւղը, որոյ գլխաւորները,— անմիջական կարգադրութեան մը կարօտները — կրնան նկատուիլ հետեւեալները.

Ա. Ճամբաները.— *Քղին չէ ունեցած ցարդ ոչ իսկ կանոնաւոր խճուղի մը, թէեւ վերջին տասն տարուան մէջ կարինէն Քղի շինուելիք գծին համար 22000 օսմ. լիրա ծախսուեցաւ. սակայն ձեռք բերուած արդիւնքը ոչինչ է... ժամուան ճամբայ շինուած է, ան ալ բոլորովին անգործածելի. ձմեռն այդ ճանապարհաւ երթեւեկելն անկարելի ըլլալէ զատ ամառն ալ շատ տեղեր ձիերն իսկ շատ դժուարութեամբ կ'անցնին։ Ճամբաներու այս վիճակէն քղեցի վաճառականը երկու տեսակ կը տուժէ։*

1.- *Ապրանաց փոխադրութիւնը ձիով եւ էշերով ըլլալով ահագին ճանապարհածախս ստիպուած է վճարել. կան ապրանքներ որոնց արժէքին չափ ալ վարձք կը վճարուի։*

2.- *Որովհետեւ Նոյ. 1էն մինչ. Մայիս 1 ձիով երթեւեկելն ալ կը դադրի, մէն մի վաճառական ստիպուած է վեց ամսուան ծախելիքները մէկ անգամով գնել, որով նախ չի կրնար ուրիշ հրապարակներու ելեւէջէն օգտուիլ եւ երկրորդ, ստիպուած է միշտ դրամական տագնապի մէջ գտնուիլ եւ տոկոս վճարել։ Կայ նաեւ ճանապարհներու անապահովութեան հարցը, այսինքն գողերէ յափշտակուելու խնդիրը, որոյ երեսէն շատ մը վաճառականներ փճացած են եւ շատեր ամէն տարի կլորիկ գումարներ կու տան անոր։*

Բ. Դրամական միջոցներու պակասութիւն.— *Այսչափ աննպաստ պայմաններու տակ գործող վաճառականներ բնականօրէն միշտ դրամական տագնապի առջեւ պիտի գտնուէին եւ ստիպեալ ծանր տոկոսներ տային։ Առեւտրական պանքայի մը հաստատումը քղեցի վաճառականին համար նախախնամութիւն մը պիտի ըլլայ պարզապէս։*

Գ. Բոստայի անկանոնութիւն.— *Քղիի բոստան մի միայն ոստիկաններով կը փոխադրուի. ասիկա պատճառ եղած է որ բոստայի չանթաները շատ անկանոն կերպով կը փոխադրուին. ձմեռը մանաւանդ Կարինէն տեղս (24 ժամուան ճամբայ) բոստան 15-20 օրէն կը հասնի եւ փոխադարձ։ Բոստայի անկանոնութեան եւ կրիայի ընթացքով պատճառած վնասները պիտի դարմանուէին եթէ հեռագրի սակագինը քիչ մը վտիտ քսակներու մատչելի ըլլար գոնէ։ Բոստայի անկանոնութեանը հետ կայ նաեւ անվստահութիւնը. վերջին չորս տարուան մէջ Ամերիկա պանդխտողներու կողմէ իրենց տուներուն ղրկուած 4000 լիրայի չէկերը Բոստախանէի մէջ կորսուած են եւ հիմակ իսկ կը կորսուին. այս մասին շատ մը դիմումներ ապարդիւն մնացին, եւ գողցուածներէն եւ ոչ մին երեւան ելաւ։*

ԱՐՀԵՍՏՆԵՐ

Քղիի մէջ արհեստն ալ վաճառականութեան պէս ետ մնացած է. իբրեւ արհեստաւոր կան մէկ քանի դերձակ եւ քանի մը կօշկակար, եւ անմիջական պէտքերու համար մէկ քանի նախնական արհեստներ, որպիսիք են, երկաթագործութիւն, ատաղձագործութիւն եւայլն։ Ճամբաներու անկանոնութեան եւ վաճառականութեան այնչափ ետ մնալուն պատճառաւ, բնական էր որ նախնական նիւթերն շատ սուղ ըլլային եւ խեղճ քղեցին չկրնար արհեստով ճարել իր օրուան հացը ու աչքը դարձնէր պանդխտութեան, վերջին տարիներու մասնաւորապէս Ամերիկա, հոն գործարաններու վատառողջ մթնոլորտին մէջ առողջութեանը գնովը ճարելու համար չոր հաց մը։

ՀԱՆՔԱՑԻՆ

Քղիի մէջ կան քանի մը հանքեր.

Երկաթի հանք.— Գասապայի մօտ, որ ասկից շուրջ 100 տարի առաջ, շահագործուած է քիչ մը։

Կաւիճի հանք.— Խորդոյի եւ կազի նահիյէներու մէջ։

Հանքածուխ.— Սագաճոր, Խաչատուր եւ Մուսրում գիւղերուն մօտ։

Աղ.— Սերկեւիլ գիւղի մօտ։

ԱՆՏԱՌԱՑԻՆ

Քղին ունի հարուստ անտառներ, բայց ցարդ բնաւ պահպանութիւն չըլլալուն պատճառաւ, տգէտ ժողովուրդը զանոնք անխնայ կոտորած է։ Մերթ ընդ մերթ կառավարութեան կողմանէ օրման մէմուրիներ որոշուած, բայց անոնք ասուպի պէս անցած են առանց երբեք օգտակար ըլլալու։ Անտառները երթալով կը պակսին եւ վառելանիւթը հետզհետէ զգալի կերպով կը սղէ, եւ եթէ այսպէս ժամանակ մ'ալ շարունակուի վառելափայտը բոլորովին պիտի պակսի։ Քղիի մէջ անտառները վառելափայտի եւ մէկ մ'ալ առ ի պակասութիւն խոտի, ոչխարներու ուտելիքի կը գործածուին։ Տեղ-տեղ ընդարձակ անտառներ ազդեցիկ պէյերու եւ աղաներու սեփականութիւն դարձած են։

ՆԵՐԱՌՈՒԹԻՒՆ

10000 *քիլէ ցորեն*	300000
Թաց եւ չոր պտուղներ	150000
1000 *լիտր գոմէշի կաշի*	100000
Բուրդ եւ բամպակ	20000
Մանիֆատուրայ, տեղական ապրանք, մանուսայ, կարմիր եւ ճերմակ կտաւ, խավլու	800000
Եւրոպական	1000000
Գանթարիյէ	400000
Աղ	500000
Մորթեղէն	50000
Էտարիյէ	100000
գումար	3420000

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ

800 *լիտր շրէզ*	500
2000 *լիտր քիթրէ*	30000
1500 *հատ այծի մորթ*	20000
500 *թուալէթ*	20000
5000 *ոչխար, այծ*	500000
Այս վերջինը քիստերու յատկացուած	
գումար	570500

գումար 3420000 — 570500 = 2849500 *բացը*

Այդ բացին վրայ աւելցնենք նաեւ Վէրկի պէտէլէթ էղնամի եւ այլ (բացի տասանորդէն) տուրքի 1176783 *ղրշ.ի գումարը կ'ունենանք* 4026283 *ղրշ.ի ահագին բաց մը՝ որը միմիայն կը հոգացուի* 3000 *մարդոց ընդմիշտ գրեթէ պանդխտութեամբ շահած ու ղրկած դրամով — այն ալ* 20-40 *տարեկան տարիքով երիտասարդ կեանքեր մատնուած գործաւորական տաժանելի աշխատութիւններու եւ ի՞նչ եւս քանի՞ կեանքեր են, որոնք կը թաղուին օտար հողեր ու քաղաք։ Վերջերս Ամերիկան քանի՞, քանի՞ ծաղիկ երիտասարդներ կլլեց իր ծոցին մէջ։ Այս բոլորի պատճառները ըսուած են ամէնն ալ իրենց կարգին այս տեղեկագրի մէջ։*

Սոյն տեղեկագիրը 15 *էջերէ բաղկացած է.*

Խորաձորի[7] *կոմիտէին կողմէ*

Փ. Ատենադպիր — *Ատենապետ*

Փ. Ց. ԳԱԳԼԻԿԵԱՆ — *ՍԱՐԱՑԵԱՆ*[?]

7.- Խորաձոր՝ Քղիի կոմիտէին ծածկանունը։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբրահամեան Յակոբ (Վարդ) — 53:
Աբրահամեան Սարգիս — 20:
Ազիզ խան — 302, 303, 307:
Աթաբէգեան Լեւոն — 217
Ալեանաք Հ. — 53, 64, 65, 68:
Ալթունեան — 60:
Ալի բէյ — 235, 342:
Ալիխանով — 213, 232:
Ակինեան — 18:
Ակնունի Է. (Մալումեան Խաչատուր) — 6, 25, 29, 31-46, 51, 55, 56, 62, 63, 66, 72, 76, 92-94, 99, 110, 116, 216, 217, 219, 251:
Ահարոն (Վանէս) — 175, 177:
Ահարոնեան Աւետիս (Ղարիբ) — 7, 10, 32, 76, 91, 251:
Աղա Միրզա Սէյիդ Հիւսէյն խան — 273, 375:
Աղաջանեան Գրիգոր (Մաշտոցեան) — 204, 205:
Աղասէր Յակոբ — 97:
Աղասի (Թուրսարգիսեան Կարապետ) — 58:
Աղբալեան Նիկոլ (Հանգոյց) — 33, 36, 38, 44, 46, 48, 50, 54, 58-60, 62, 97:
Աճէմեան — 54:
Ամօղլի — 308, 309, 326, 328, 329:
Անդրանիկ, Օզանեան (Պարոյր) — 20, 27, 29, 33, 38, 44, 55, 56, 75, 87, 89, 92, 134, 193:
Անդրէաս — 282, 284:
Անդրէեւ — 14, 213:
Անդրօ — 164, 174:
Անտոն — Տես Զաւարեան Սիմոն:
Աշոտ — Տես Եղիկեան Կարապետ:
Աշոտ Երկաթ (Լեւոնեան Արմենակ) — 10, 78:
Աչեքկոզեան — 29:
Ապտիւլ Համիտ Բ. — 11, 28, 29, 75, 82, 216, 234, 236, 237, 239, 246, 249, 255,261,343:
Ասկարով — 326, 329:
Արամ (Խոյէն) — 303, 310:
Արամ-Աշոտ — Տես Մինասեան Սարգիս:
Արարատեան Սարգիս (Արարատսկի, Լունկեւիչ) — 35, 45, 93, 94, 219:
Արբակ Ռշտունի — Տես Միրզայեան Յովսէփ:
Արմէն Գարօ (Փաստրմաճեան) — 128, 129, 134, 136:
Արշակ (Գառնիկ) — 64
Արշակ, կարինցի — 298:
Արշաւիր Կամսարական (Մուշեղ-Երկաթ) — 176:
Արտաշէս (գրաշար) — 22:
Արտոյտ — 320, 321:
Աւերեան — 76, 99:

Բաբա — Տես Գարեգին Խաժակ:
Բագրատ վարդապետ — 293, 297:
Բաղլի (ղարաբաղցի) — 298:
Բաղր խան — 275, 288:
Բարսեղեան (ուսանող) — 53:
Բարսեղեան Արմենակ— 207:
Բեբէլ Աւգուստ — 122:
Բեռար Վիկտոր — 35, 37, 56, 59, 61, 63, 64, 93, 216, 253, 257, 258:
Բերդրան Գաբրիէլ — 30:
Բերնշտայն — 122:
Բըգով — 213:
Բիսոլարի — 257:
Բլէյան — 126, 134:
Բոգուլաւսկի — 213:
Բրայս Ջէյմս — 12, 13:
Բրինդար — Տես Մելքոնեան Արտաշէս:

Գաբրիէլեան Ս. — 48, 97:
Գալֆայեան Յարութիւն (Վահրամ, Գալֆա) — 6, 11, 14 29, 33, 38, 45, 46, 49,52, 57, 58, 72, 75, 82, 87, 93, 95, 110, 252:

Գարակէօզեան — 50, 54:
Գարեգին (Սալմաստէն) — 285, 286, 330:
Գարեգին Խաժակ (Բաբա) — 152, 157, 160, 161, 163, 164, 171-174, 178, 181, 184-189, 191, 192:
Գարմէն (Մելքոնեան Տաճատ) — 346, 347, 348, 352:
Գեղամ (Իզմիրի մէջ) — 13, 16:
Գերշունի Գրիգորիյ — 55:
Գէորգ Զաւուշ — 19, 38, 76, 94, 114-117:
Գիսակ (Սերենկիւլեան Յով., Վարդգէս) — 23, 39, 45, 55, 88, 98:
Գիւլխանդանեան Աբրահամ (Աբրօ, Աբրահամովիչ) — 157, 159, 161, 167, 171-173, 184-188, 190, 193-195, 199, 200, 203-205:
Գնունի — 34:
Գույումճեան Միսաք (Առանձար) — 97:
Գուրգէն — 46, 48:
Գուրգէն (Սալմաստի) — 326-328:
Գրիգոր — 43:
Գրիգոր Զօհրապ — 72:

Դադաշ — 325:
Դայի — 161, 162, 190:
Դարբինեան Ռուբէն (Ջիլինկիրեան Արտաշէս) — 152:
Դարվիշ (Ալոյեան Գալուստ) — 264, 282-287, 290, 293-295, 297, 298:
Դաւթեան Յոնան — 6, 18, 19, 26, 29, 32, 36-48, 50-70, 72, 73, 76, 83, 84, 93, 219:
Դաւիթ (դհերցի, դաւաճան) — 56, 108, 343:
Դաւիթ մշեցի — 298:
Դելկասէ — 15, 16, 23:
Դերենիկ — 165, 176, 178:
Դժոխք — Տես Նաւասարդեան Վահան:
Դրօ (Սուրէն, Կանայեան Դրաստամատ) — 40, 43, 159:

Եաղուբեան Տիգրան — 43:
Եանըգեան Սրբուհի — 48:
Եգանեան Մնացական — 293:
Եդուարդ Ե. — 237:
Եղիազարեան Խաչատուր — 196:
Եղիկեան Կարապետ (Աշոտ) — 13, 107:
Եղիշ (Ատրպատականէն) — 282, 284:
Եսայեան — 43, 46:
Երկաթ — Տես Աշոտ Երկաթ:
Եփրեմեան Մկրտիչ (Յոլակ) — 43, 98:
Եփրեմ խան (Դաւթեան) — 264, 276, 277, 330-334, 336:

Զարդարեան Ռուբէն (Ասլան) — 44, 55, 60, 62, 65, 66, 72, 94, 95, 251:
Զարեհ — 40, 43:
Զարուհի (Ժենիա Տէրոյեան) — 32, 39, 46, 64, 68:
Զաւարեան Սիմոն (Անտոն) — 13, 19, 25, 28, 62, 76, 99, 108, 110, 152, 158-160, 162, 166, 169-175, 178, 185, 187, 188, 192-194, 252:
Զաւրիեւ Յ.— 61, 201:
Զաքարեան Վահան — 273, 275:
Զուլումաթ (Պասեցի Յովհաննէս) — 305:
Զուլումաթ Օհաննէս — 306:

Էլէն — Տես Միքայէլեան Քրիստափոր:
դ'Էտուրնէլ — 12:

Թադէոս — 158, 161, 167, 174, 184, 185, 195:
Թադէոսեան Լեւոն (Զոփուռեան) — 204:
Թադէոսեան Սամսոն (Գարեգին) — 84, 264, 279, 282-287, 293, 294, 296, 309, 319-324, 326, 328-330:
Թաղի Զադէ — 265, 269:
Թայինեան — Տես Լորիս-Մելիքեան Յովհաննէս:
Թաշճեան Նշան — 58:
Թափառական — Տես Եփրեմ խան Դաւթեան:
Թերլէմէզեան Միհրան — 141:
Թիրիաքեան Հայկ (Հրաչ) — 39, 53:
Թոխմախեան — 54:
Թումեանց Թուման (Թորգոմ) — 77:
Թունեանց Ռ.— 270:
Թոփչեան Եղիշէ (Երուանդ) — 121, 122, 216, 243, 343:
Թոքաճեան Սեդրակ (Տաճատ) — 65, 66:
Թռուցիկ (Տէր Աբրահամեան Գէորգ) — 126, 127:
Թօփալ Քրիստոս — 126, 129, 132:

Ժամհարեան Մարգար (Մռաւ) — 75, 76, 87:
Ժիրայր — 48:
Ժորիս — 37, 46, 95:
Ժոռէս Ժան — 122, 219, 257:

Իզօ խան — 302, 303, 306, 320, 321, 324-326:
Իշխան (Վանայ Իշխան, Միքայէլեան Նիկոլ) — 37, 84, 128, 132, 134-136, 345:
Իսահակեան Արշակ (Ջամալեան) — 53, 60-66:
Իսահակեան Աւետիք — 72:

Լեոնեան — Տես Նազարեանց Լիպարիտ։
Լեւոնեան Արմենակ — Տես Աշոտ Երկաթ։
Լէօ (Բաբախանեան Առաքել) — 62։
Լինչ Հենրի — 60, 253, 254, 257։
Լոլաձէ — 213։
Լորիս-Մելիքեան Յովհ. — 8, 10, 11, 22, 25, 26, 28, 76։

Խալիլ բէյ — 307։
Խաչատուր (Մալումեան) — Տես Ակնունի։
Խաչիկ (գրաշար) — 27։
Խարախանեան Ներսէս վարդապետ — 39, 46, 64։

Ծամակ — 126, 129, 132, 133, 135։

Կամսարական Արշաւիր — 34, 48։
Կայծակ-Առաքել (Ապաճեան Տիգրան) — 128։
Կայծակ-Վաղարշակ (Պաղտասարեան) — 78։
Կարլոս — 345։
Կիլիկեան բժ. — 252։
Կլեմանսօ Ժորժ — 164, 254, 258։
Կոմբ Էմիլ — 164։
Կոմս (Փափազեան Վահան) — 84, 88, 128, 132, 135, 176։
Կոչէն Տընի — 257, 258։
Կոչ — 164, 173, 181, 185, 186, 193։
Կոստի — Տես Համբարձումեան Կոստի։
Կորիւն — 352։
Կորիւն վարդապետ — 59։
Կորչաքով — 237
Կռօ (Տէր Յակոբեան) — 161, 172։
Կրետէն — 36, 40, 43։

Համբարձումեան Կոստի — 19։282, 284։
Հայկ-Արմէն — Տես Ճելալեան Թովմաս։
Հայ-Մուսա — 200։
Հայտար բէյ — 252։
Հայր-Աւետիք — Տես Սահակեան Աբրահամ։
Հայրիկ — Տես Պանիրեան Հայրապետ։
Հայրում — 162, 193, 194։
Հանգոյց — Տես Աղբալեան Նիկոլ։
Հաջի — 196։
Հաջի Ալի — 273, 275։
Հաջի Ամին-օլ-Զարբ — 265, 269։
Հաջի Կոտօ (Կոտոյեան) — 345։
Հաջի Միրզա Իբրահիմ Աղա — 265, 269։
Հաջի Մուին-օլ-Թոջար — 265, 269։
Հաջի-Ջաֆար — 302։
Հաջի Փիչնամաղ — 302, 308, 309, 320-324, 327-329։
Հասան Ֆիքրի — 262։
Հեչմաթոլ վոզարա — 279։
Հիլմի փաշա — 251։
Հիւսման Քամիլ — 207, 209, 215, 216, 221, 223-225։
Հորդանս — 26։
Հրաչ — Տես Թիրիաքեան Հայկ։
Հրաչեայ-Մարալ (Ղարիպեան Գրիգոր) — 44, 52, 60, 114, 115, 176, 177։

Ղազարեան Գրիգոր — 271։
Ղազարեան Վրթանէս — 52, 57, 65, 67։
Ղահրաման խան — 299։
Ղայիմ խան — 276։
Ղարիբ — Տես Ահարոնեան Աւետիս։
Ղարիբ (Պորտ Արտուր) — 333։
Ղեաս Նեզամ — 333։

Ճանիկեան Արմենակ — 48։
Ճապոնացի (Տէր Յակոբեան Ալ.) — 187։
Ճարակեան Զարեհ — 298։
Ճեմիլ — 167, 172, 174, 193։
Ճելալեան Թովմաս (Հայկ-Արմէն) — 128, 130, 133-137։

Մալխաս (Յովսէփեան Արտաշէս) — 84։
Մալումեան Խաչատուր — Տես Ակնունի Է.։
Մանուկեան Արամ — 3, 61, 76, 112, 114-116, 345։
Մաշտոց — 282-284, 286, 287, 293, 326։
Մաշտոցեան — Տես Աղաջանեան Գրիգոր։
Մատինեան Նիկոլ (Վահան) — 152, 180, 282, 284, 286, 287, 293, 394, 296, 297։
Մար — Տես Տէր Մարտիրոսեան Միքայէլ։
Մարալ — Տես Հրաչեայ Մարալ։
Մարգարեան Մարտիրոս — Տես Սաֆօ։
Մարզպետ (Ղազարոսեան Ղազարոս) — 347, 348, 352։
Մարտիրոս (Զարուխճեան) — Տես Զարուխճեան Մարտիրոս։
Մարտին — Տես Մուրատեան Մարթին։
Մելքոնեան Արտաշէս (Բրինդար) — 271-273, 275։
Մեհրաբեան Սարգիս — Տես Վարդան Խանասորի։
Մերճանեան Գրիգոր — 47։

Միհրան (խմբապետ) — 125, 128, 130, 131։
Մինասեան Սարգիս (Արամ-Աշոտ) — 6, 7, 34, 36, 46, 55, 56, 58-60, 62-67, 76, 85, 93, 110, 256։
Միրզա Ալաքբար — 273, 278, 299։
Միրզա Մահմադ Բազի — 273։
Միրզա-Նուրալլա — 302։
Միրզաջաֆար — 301։
Միրզայեան Յովսէփ (Արբակ Ռշտունի) — 101, 263, 268-270
Միքայէլեան Նիկոլ — Տես Իշխան։
Միքայէլեան Քրիստափոր (Էլլէն) — 6, 10, 13, 24-28, 75, 82, 88, 89։
Մհեր, Մհերեան — Տես Համօ Օհանջանեան։
Մոկացի Գրիգոր — 326։
Մոհամէդ-Ալի Շահ — 228, 232, 336։
Մոստեշար-էդ-Դովլէ — 265, 269։
Մուզաֆերէդդին Շահ — 301։
Մուշեղ-Երկաթ — Տես Արշաւիր Կամսարական։
Մուսայէլեան — 62, 65, 68։
Մուրատեան Մարթին — 28, 43, 48, 51, 52, 60, 97, 98։
Մուրթուզա Կուլի խան — 301։
Մռաւ — Տես Ժամհարեան Մարգար։

Յակոբեան Գ. (գրաշար) — 40։
Յակոբեան Յ. (Սարհատ) — 19, 21, 23, 28, 48, 57, 95, 97։
Յարութիւնեան Մարտիրոս (Ասլան) — 39, 44, 46, 50, 58, 65, 66, 207, 217։
Յովհաննէսեան Մ. — Տես Վարանդեան Միքայէլ։
Յովնան (Ախալքալաքէն) — 161, 173։

Նազարեանց Լիպարիտ (Լեոնեան) — 76, 81, 156, 158, 159, 161, 181, 184-188, 193, 217։
Նազարէթ Զաւուշ — 64։
Նակաշիձէ — 29։
Նամօ խան — 301, 303-306, 309, 325, 326։
Նաֆիր բէյ — 320, 328, 329։
Նարիմանցի Մկրտիչ — 298։
Նաւասարդեան Վահան (Դժոխք) — 152, 159, 161, 165, 169, 175, 185, 186, 196։
Ներսէս (գրաշար) — 23։
Նիթրա — Տես Շահրիկեան Յարութիւն։
Նիկոլ Դուման — 9, 40, 75, 76, 99, 109, 121, 128, 204, 207, 263։
Նուր-Մուհամմէդ — 58։
Nomo — 174, 190, 192, 195։

Շահէն (Գանձակէն) — 155, 158, 161, 163,167, 175, 185, 190, 195։
Շահնազար Յովհաննէս — 32, 33, 43։
Շահրիկեան Յարութիւն (Նիթրա) — 18, 21, 72, 121,122, 152, 185, 193, 195, 196։
Շանթ — 336։
Շեւքէթ փաշա — 260։
Շէքիր փաշա — 304, 308։
Շէն — 272, 282-284, 286-288, 293, 294։

Ոսկան (Պաքուէն) — 282, 284, 286, 287, 290, 293, 294, 296, 297։
Ոսկան Ս. — 282, 283, 285, 290, 293-295, 297, 318։

Զագմագճեան Յարութիւն — 59։
Զարուխճեան Մարտիրոս — 40։
Զերչեան — 37, 96։
Զերքեսով (Հիւսէյն Թօսուն) — 49, 52, 343։
Զթճեան Ս. — 59։
Զիլինգարեան Արտաշէս — Տես Դարբինեան Ռուբէն։
Զինար —128, 132, 134, 137
Զոպանեան Արշակ — 94։
Զոփուռեան — Տես Թադէոսեան Լեւոն։

Պալրգճեան Սեդրակ (Վահրիճ) — 43։
Պանդուխտեան — 126, 129, 132, 135։
Պանիրեան Հայրապետ (Հայրիկ) — 272, 290, 294։
Պարոյր — Տես Անդրանիկ (Օգանեան)։
Պետրէ — 200, 201, 204, 205։
Պետրոս — Տես Տէր Յովհաննիսեան Բագրատ։
Պիրոնեան Կարապետ — 294։
Պլեխանով — 164, 209։
Պոյաճեան Մուրատ — 95։
Պոյաճեան Սիրական — 96։
Պուլուգեան Արա —271։
Պստիկ Յովհաննէս — 298։
Պրեսանսէ Ֆրանսիս — 13, 15, 17, 24, 25, 32, 63, 216, 258։
Պրիսոն — 258։

Ջալալեանց Ա. — 270:
Ջալլաթեան Վահան — 196:
Ջաւախեան — 168, 175, 180, 181, 184, 188, 192, 200, 204:
Ջեւտետ Դր. — 32:
Ջեւտէթ բէյ — 307:

Ռակկա — 14, 15, 16, 19, 23, 32:
Ռահմաթուլլա խան — 304, 305:
Ռահիմ խան — 298:
Ռիզա Ահմէտ — 37, 49, 53, 93, 233, 236, 247, 248, 260:
Ռիֆաթ փաշա — 252:
Ռչտունի — 294:
Ռոստոմ (Ջօրեան Ստեփան) — 7, 9, 19, 20, 34, 35, 72, 75, 76, 82, 87, 89, 99, 101, 109, 116, 120, 121, 128, 170, 180, 188, 217, 219, 263, 264, 268-270, 276, 284, 299, 330, 336-338, 341, 343:
Ռոտոս — 164, 167, 189, 200, 202, 203, 205:
Ռուանի — 257:
Ռուբանովիչ — 55, 209, 220:
Ռուբէն (գրաչար) — 58:
Ռուբինա (Արէշեան) — 30, 216:
Ռուսօ Ժան-Ժաք — 288:

Սաթթար խան — 228, 232, 273, 279, 288, 302, 303, 326:
Սահակեան Աւետիք (Հայր-Աւետիք) — 76, 121, 128, 136, 152, 160, 162, 168, 169, 175, 179-181, 185, 187, 204, 205:
Սահակեան Պօղոս — 293:
Սահառունի — Տես Քաջբերունի-Սահառունի:
Սահրատ — 298:
Սամի-Դիւան — 320-323:
Սամօ-Սամսոն (Ուրմիայէն) — 293, 296, 297:
Սապահետտին — 36, 39, 233, 247:
Սարաֆով Բորիս — 38, 41, 44, 94:
Սարդար Ասադ — 277, 336:
Սարհատ — Տես Յակոբեան Յ.:
Սաֆօ (Մարգարեան Մարտիրոս) — 13, 28, 30, 76, 89:
Սեբաստացի Մուրատ — 76, 99, 110, 114-116, 317, 355:
Սեմբա — 257, 258:
Սենարի — 204:
Սեպուհ (Ներսէսեան Արշակ) — 57, 114, 352:
Սերեմճեան Արտաշէս (Թորգոմ) — 95, 107:
Սերենկիւլեան Յովհ.-Վարդգէս — Տես Գիսակ:
Սեւքարեցի Սաքօ (Մովիանեան) — 263:
Սրվանճեան Արշակ (Վահան) — 43, 51:
Սիգ — Տես Վրացեան Սիմոն:
Սիրաք — 155, 159, 163, 165, 184, 188:
Սմբատ (Բորոյեան) — 296, 325-327:
Սմկօ — 301, 302, 308, 309, 311, 313, 316, 319, 320, 325-329:
Սողոմոն (Սալմաստէն) — 282, 284, 286, 293, 317, 318:
Սուպահտար — 277, 330, 336:
Սուլջեցի Քողբ. Հիւսէյն — 299:
Ստեփանեան Ստեփան — 56, 270, 272, 273, 275:
Ստեփանեան Տիգրան (քարեցի) — 298:
Ստիվենսոն — 12:

Վազրիկ — 175, 178, 191, 193:
Վահաբ — Տես Վռամեան Արշակ:
Վահան — Տես Մատինեան Նիկոլ:
Վահրիճ — Տես Պալլագճեան Սեդրակ:
Վահէ (Պաքուէն) — 160, 162,184-188:
Վանայ Սարգիս (Օտապաշեան Պօղոս) — 76:
Վանտըրվէլտ Էմիլ — 122, 219:
Վարանդեան Միքայէլ — 4, 6, 18, 29, 35, 42, 44, 59, 62, 63, 69, 72, 76, 93, 179, 206, 207, 217, 219, 220, 225, 245, 246, 251, 337:
Վարդ — Տես Աբրահամեան Յակոբ:
Վարդ-Պատրիկեան (Վարդօ) — 29, 30, 33, 37, 48, 91, 95, 96:
Վարդան Խանասորի (Մեհրաբեան Սարգիս) — 18-21, 25, 27-29, 38, 263:
Վարդան վարդապետ — 352:
Վարդօ — Տես Վարդ-Պատրիկեան:
Վոսուղ-էդ-Դովլէ — 265, 269:
Վուարէն — 14, 16:
Վռամեան Արշակ (Վահաբ) — 18, 19, 70, 72, 76, 83, 84, 110, 152, 158, 161, 164-166, 169, 175, 176, 181, 192, 321, 328, 345:
Վրացեան Սիմոն (Սիգ) — 76, 152, 155, 171, 173, 188, 202, 204:
Վրժին — 331, 332, 334:

Տաթեւեան Վահագն — 39, 55, 57, 59, 62, 63, 66, 92:
Տաղաւարեան — 55:
Տամատեան Միհրան — 97:
Տեղացի (Սալմաստէն) — 282-284, 286, 287, 293, 317, 318:
Տէր Արիստակէսեանց Յակոբ — 140:
Տէր Դաւիթեան Յովսէփ — 76, 110:
Տէր Թոխմախեան Մուշեղ — 54:
Տէր Կարապետեան Գեղամ (Տատրակ) — 116:

Տէր Մարտիրոսեան Միքայէլ (Մար) — 29, 34, 38, 45, 46, 51, 52, 66, 71, 72, 76, 92, 95, 99, 100, 110:
Տէր Մինասեան Ռուբէն — 114-117, 343:
Տէր Յովհաննիսեան Բագրատ (Պետրոս) — 43, 52, 64:
Տէր Յովհաննիսեան Նիկոլ — Տես Նիկոլ Դուման:
Տիգրան — 37, 99:
Տիգրիս — 45, 61, 70, 72:
Տիրան (Վասպուրականէն) — 28, 55, 56:
Տուրբախ (Կիրակոսեան Յար.) — 128:
Տուֆակչեւ — 13, 15, 16, 62:
Տրէվէյլան — 257:

Քաջբերունի-Սահառունի — 47, 48, 52, 54:
Քաջիկ — 204:
Քենտիրեան Վռամշապուհ — 75:
Քեշիշեան բժ. — 252:
Քեռի (Գաւաֆեան Արշակ) — 263, 282, 284, 286, 293, 298, 326:
Քէշիշօղլի — 318, 323:
Քիյառ Փիեռ — 11, 15-17, 21-26, 32, 35, 39, 44, 47, 52, 55, 56, 58, 59, 61, 63, 64, 93, 95, 216, 253:
Քրատոլայի — 257:
Քրիստ — 286, 287, 290, 293, 294, 330:
Քրմոյեանց Սուքիաս — 140:

Օշտակ — 282-286, 290, 293-295, 297:

Յոլակ — Տես Եփրեմեան Մկրտիչ:
Յոլակ (Պարսկաստան) — 282, 284-287, 293, 322, 330:

Փանոսեան Հրանտ (Խիզախ) — 53:
Փաշայեան Կարապետ — 17, 41, 44, 48, 55, 64:
Փաստրմաճեան Գարեգին — Տես Արմէն Գարօ:
Փելլրթան — 258:
Փիլիպոսեան Յակոբ (Վարդ) — 41, 48, 66:
Փիլոս — Տես Հրաչեայ Մարալ:
Փիշնամաղ — Տես Հաջի Փիշնամաղ:
Փիշոն — 258:
Փրեսանսէ — Տես Պրեսանսէ Ֆրանսիս:

Օգրեվի — 257:
Օհանջանեան Համօ (Մհեր, Մհերեան) — 27, 75, 76, 82, 87, 89, 90, 99, 108, 110, 111, 152, 155, 159-162, 164, 168, 170, 172, 174, 175, 181, 184-188, 193-195, 216-218, 220:
Օհանջանեան Սարգիս (Ֆարհատ) — 121, 298:
Օրմանեան Մաղաքիա Արք. — 164, 218:

Ֆարհատ — Տես Օհանջանեան Սարգիս:
Ֆեներճեան Քրիս — 95, 107:
Ֆերիտ փաշա — 238, 251, 252, 260:
Ֆրանս Անատոլ — 216:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

*Ա*թէնք — 13, 21, 23, 24, 32, 33, 95։
Ալեքսանդրապոլ (*Քար*) — 4, 15, 102, 111, 119-123, 125, 126, 128, 129, 131, 134, 136, 137, 154, 157, 159, 169, 170, 190, 196, 199, 205, 214։
Ալեքսանդրիա — 17, 41, 47, 48, 53, 54, 57, 60, 63, 68, 94, 97։
Ախալցխա — 120։
Ախալքալաք (*Թմբուկ*) — 127, 131, 155, 157, 159, 191։
Ախլաթ — 80, 346։
Ածխահանք — *Տես Ղարադաղ*։
Աղթամար — 340, 343։
Ամսթերտամ — 233։
Այգեստան — *Տես Գանձակ*։
Այնթապ (*Հողաբլուր, Հովիտ*) — 63, 98։
Այնթապ (*Պայազիտի մօտ*) — 352։
Անտառապատ — *Տես Ղարաքիլիսա-Վանաձոր*։
Անվերս — 95։
Աշտիշատ — 346։
Ապառաժ — *Տես Ղարաբաղ*։
Ապարան — 159։
Աստրախան — 40։
Ատանա (*Խոր Վիրապ*) — 4, 108, 244, 246, 251-254, 256-258, 260, 261, 262, 288։
Ատրպատական — *Տես Վրէժ-Վրէժստան*։
Արածանի — 346։
Արաքս գետ — 263, 299, 300։
Արճէշ — 10։
Արտաբիլ (*Շահսովան*) — 264, 283, 284, 293։
Արտազ — 282, 283, 326։
Արտահան (*Անապատ*) — 126, 132։
Աւարայր — *Տես Խոյ*։
Աքիա — 48։

*Բ*ագու — *Տես Պաքու*։
Բաթում — *Տես Պաթում*։
Բալու — 360։
Բաղէշ-Բիթլիս — *Տես Պիթլիս*։
Բաստ — *Տես Սեբաստիա*։
Բարձրաւանդակ — *Տես Սասուն*։
Բեռն — 116։
Բերլին — *Տես Պերլին*։
Բիթլիս-Պիթլիս-Բաղէշ (*Սալնոյ ձոր*) — 15, 96։
Բուդաբէշտ — 64։
Բոստոն — *Տես Պոսթըն*։
Բրիւսէլ — *Տես Պրիւսէլ*։

*Գ*ահիրէ — 46, 51, 54, 58, 98։
Գանձակ (*Այգեստան*) — 14, 102, 111, 120, 125, 127, 132, 145, 154, 157, 167, 199, 205, 213, 214։
Գետաշէն — 315։
Գետ-Ափ (*Ս. Ստեփանոս վանք*) — 282, 283, 298, 299, 326, 330։
Գետափ (*Նոր Ջուղա*) — 282։
Գիլան (*Էնզելի*) — 5, 264, 282, 331, 332, 334-336։
Գիւնէյ — 308, 321, 327, 329։
Գոմս — 354։

*Դ*աշտ — *Տես Հալէպ*։
Դերջան — 360։
Դիարբեքիր — *Տես Տիարպեքիր*։
Դիլիման — 319-323, 325, 326։
Դուրան — *Տես Տարօն*։

*Ե*զտիքան —324, 325։
Եէքեան — 302, 303, 308։
Եկատերինբուրգ — 127։

Երեւան (Մրգաստան) — 11, 12, 15, 102, 111, 120, 122, 125-128, 130, 154, 157, 159, 196, 199, 213, 214, 229, 298, 299:
Երզնկա — 49:
Երուսաղէմ — 39, 46:

Զէյթուն (Արծուաբերդ) — 58, 252:
Զէյվա — 301, 324:
Զմիւռնիա — Տես *Իզմիր*:
Զունուզ — 298, 299:

Էնգելի — 264, 282, 331, 334:
Էջմիածին — 15, 107, 126, 141, 145:
Էտիրնէ — 212:
Էրզրում-Կարին (Բարձրաբերդ) — 15, 165, 176, 178, 212, 234, 243, 257, 258, 342, 343, 352, 363:

Թամար — 317:
Թաւրիզ (Տես նաեւ Վրէժ) — 3, 5, 86, 264, 271, 273, 275-277, 281, 282, 290, 293, 298-302, 308, 310, 318, 320-322, 326-328, 330, 332, 344, 345:
Թեհրան — 5, 38, 170, 180, 229, 264, 268, 269, 271, 276-278, 282, 302, 320, 331, 332, 334-336:
Թէոդոսիա (Կլորիկ) — 126, 145:
Թիմար — 340:
Թիֆլիս (Մեծ քաղաք) —4, 15, 24, 26, 45, 49, 58, 61, 76, 91, 99, 102, 111, 120, 126, 130, 132, 135, 145, 155-159, 166, 189, 194, 197, 199, 204, 214, 217, 229, 232, 251, 263, 269, 298, 299, 317:
Թմբուկ — Տես *Ախալքալաք-Ախալցխա*:

Ժընեւ — 3, 4, 6, 7, 10, 11, 14, 15, 19, 21, 22, 25-27, 31-33, 38, 44, 58, 64, 71, 77, 79, 88, 92, 93, 102, 208, 210, 214, 218, 219, 221, 225-227, 246, 250-252, 254, 256, 263, 269, 276-278, 296, 331, 334:

Իգտիր — 213:
Իզմիր — Զմիւռնիա (Ոսկեհանք) — 13, 14, 16, 19, 29, 30, 33, 40, 43, 48, 51, 53, 66, 89, 96, 233, 236, 237, 248:

Լահէյ — 33, 35, 93, 216:
Լեռնավայր (Կիլիկիա) — 4, 6, 10, 13, 17, 19, 20, 22-25, 27, 28, 36, 39, 41, 43, 44, 47, 48, 50-52, 54-56, 60-64, 68, 75, 87-89, 94, 97, 98, 176, 252, 256, 257:
Լիս (Պոլիս) — Տես *Վիշապ*:
Լոնտոն — 12, 13, 16, 22, 25, 28, 54, 56, 57, 59, 63, 64, 69, 206, 253:
Լօզան — 37, 40-42:

Խանասոր — 212:
Խարբերդ — 4:
Խնուս (Բիւրակն) — 114, 115, 352:
Խոյ (Աւարայր) — 5, 35, 56, 62, 264, 283, 297-314, 318, 320, 321, 323, 324, 326-330:
Խոսրովա — 284, 320, 325:

Ծիծանց — 339:
Ծոց — Տես *Պէյրութ*:

Կալկաթա — 59:
Կաղզուան (Պարտիզաւան) — 127, 130, 132:
Կաճէտ — 339:
Կարազիաղին — 301, 303:
Կարմիր լեռ (Անտիոք) — 98:
Կարս (Քրաբերդ) — 11, 15,102, 120-123, 126, 127, 131, 140, 155, 157, 168, 169, 199, 201, 205:
Կիրասոն — 4, 89:
Կիւրին (Քարձոր) — 98:
Կլորիկ — Տես *Թէոդոսիա*:
Կոթուր — 300, 307-309, 319, 326, 327:
Կովկաս — 4, 6, 9, 12, 15, 21, 23-26, 30, 37, 43-46, 51, 52, 55, 60, 63-65, 67, 70, 71, 73-76, 78-85, 87, 88, 91, 92, 94, 96, 102, 103, 106, 107, 109, 110, 118, 128-137, 185, 208, 210, 212-214, 218, 220, 227-230, 232, 240, 264, 266, 269, 290, 295, 299, 317, 321, 332, 338, 339, 341, 351, 352:

Հալէպ (Դաշտ) — 60, 62, 66, 68, 97:
Հաճըն — 253:
Հաշարութ — 307, 308, 313, 328:
Հաֆթվան — 320, 322, 325:
Հեր — Տես *Խոյ*:

Հողաբլուր — Տես *Այնթապ*:
Հովիտ — Տես *Այնթապ*:
Հռոմ — 12, 22, 32:

Ղազուին — 264, 276, 332-336:
Ղալասար — 318, 325:
Ղարաբաղ (Ապառաժ) — 102, 111, 120, 125, 154, 155, 157, 159, 166, 173, 199, 205, 298, 299:
Ղարադաղ (Ածխահանք) — 283, 284:
Ղարաքիլիսա-Վանաձոր (Անտառապատ) — 135:
Ղափան — 170:

Ճարա — 316, 319, 320, 325:

Մալաթիա — 96:
Մակու — 300-306, 308, 319, 320:
Մայկօպ — 127:
Մանազկերտ — 352:
Մանչեստր — 14, 33:
Մարանդ — 298, 299, 302, 303, 326:
Մարաշ (Սահմանաբերդ) — 48:
Մարսէյլ — 10, 12, 30, 52, 57, 58, 65, 67:
Մեծ քաղաք — Տես *Թիֆլիս*:
Մեղրագետ — 346:
Մենաւոր (Ս. Թադէ) — 320:
Մերտին — 98:
Մինաս — 317:
Մինարէթ — Տես *Սալմաստ*:
Մրգաստան — Տես *Երեւան*:
Մոնպելիէ — 76, 86:
Մոսկուա (Եկեղեցի) — 103, 120, 121, 155:
Մուշ — 15, 16, 66, 96, 114, 134, 257, 258, 327:
Մուսուլ — 58:

Նալբանդ (Նոր Նախիջեւան) — 102, 111, 120, 155, 157:
Նախիջեւան — 127, 229:
Նաւահանգիստ — Տես *Պաթում*:
Նիւ Եորք — 58, 66, 85:

Շահ, Շահսովան — Տես *Թեհրան*:
Շահստան — Տես *Արտաբիլ*:

Շամ — Տես *Վան-Վասպուրական*:
Շատախ — 176, 339:
Շորագեալ (Շարա) — 126, 130-132:
Շուշի — 76, 214, 229:
Շտուտգարտ — 4, 35, 93, 106, 206, 210, 211, 215, 217-220, 222, 223, 226, 227:

Ոսկանապատ — Տես *Պաքու*:
Ոսկեհանք — Տես *Իզմիր*:
Ուրմիա (Փարոս) — 282, 293, 294, 296, 318, 320, 321, 325-329:

Զոք-Մարզուան — 259:

Պաթում (Նաւահանգիստ) — 15, 52, 94, 102, 120, 126, 127, 154, 157, 194, 199, 201, 205, 214, 235, 343:
Պայազիտ — 352:
Պարիզ — Տես *Փարիզ*:
Պարտիզաւան — Տես *Կաղզուան*:
Պաքու (Ոսկանապատ) — 6, 12, 15, 17, 19, 29, 38, 42, 52, 71, 75, 102, 111, 120-122, 125, 126, 129-131, 145, 150, 152, 156, 157, 159, 160, 173, 175, 192-197, 199, 204, 205, 213, 214, 217, 229, 232, 282, 284:
Պետերբուրգ (Հիւսիսակերտ) — 26, 196, 199, 212, 229, 251:
Պերլին — 22, 44, 53, 76, 80, 81, 95, 122:
Պէյրութ (Ծոց) — 47, 48, 51-53, 55, 57, 59, 60-64, 96-98:
Պիթլիս — 176, 212, 234, 242, 243, 346:
Պոլիս — Տես *Վիշապ*:
Պոսթրն — 4, 6, 63, 65, 66, 84:
Պոտրում — 48:
Պորտ-Արտուր — 264, 282, 333, 334:
Պրիւսէլ — 4, 33, 54, 74, 93, 206-210, 215, 216, 218, 220, 221, 223-225, 251,260:

Քրաբերդ — Տես *Կարս*:
Ջուլֆա — 299, 326, 327:

Ռաշտ — 264, 277, 331, 333-336:
Ռեւել (Թալլին) — 237:
Ռուսճուգ — 96:
Ռկավա — 323, 324:

Սարգահան (Մարաղա) — 283, 284:
Սալմաստ (Մինարէթ) — 5, 10, 15, 17, 20, 86, 179, 181, 264, 279, 280, 282-285, 293, 294, 297, 300, 302, 303, 307, 309, 310, 315-330, 345:
Սալնոյ ձոր — *Տես Պիթլիս*:
Սահմանաբերդ — *Տես Մարաշ*:
Սամսոն (Բանալի) — 46-48, 51, 56, 63, 65, 66, 69, 89, 98:
Սասուն (Բարձրաւանդակ) — 10, 11, 12, 14, 15, 17, 20, 21, 22, 24, 25, 75, 77, 85, 87-89, 117, 134, 176, 178, 212, 243, 337, 339, 344, 346-359:
Սարամէրիկ — 316, 317, 323-325, 330:
Սարայ — 307, 318, 320:
Սարաւ — 305:
Սարըղամիշ — 127:
Սարուստան (Կովկաս, Ռուսիա) — 113, 119, 120, 299:
Սաւրա — 318, 325:
Սեբաստիա (Բաստ- Սեւ բլուր- Սըվազ) — 42, 43, 46, 50, 51, 63, 68, 89, 90, 96-98, 251:
Սելանիկ — 53, 70, 72, 238, 241, 307:
Սէն Լուի — 14, 16:
Սըվազ — *Տես Սեբաստիա*:
Սինոպ — 48:
Սիւնիք — 125, 155, 159, 298:
Սոմա — 316-318:
Սոչի-Ատլեր (Ապաստան) — 126, 128-131:
Սուլուխ — 76, 114:
Սուխում (Գաղթավայր) — 127, 138, 139, 141-143, 145:
Սոֆիա — 10, 11-13, 15, 16, 51, 75, 82:
Սոֆիան — 298, 307, 326:
Սպահան — 335:
Ստեփանակերտ — 271:

Վան-Վասպուրական (Շամ) — 3, 5, 10, 15, 17, 20, 21, 24, 26, 35, 37, 38, 45, 48, 49, 55, 56, 59, 61, 62, 64, 68, 75-77, 80, 82, 84, 87, 89, 92, 96, 99, 100, 107-109, 112, 113, 115, 165, 170, 175-177, 181, 203, 218, 234-236, 242, 243, 248, 258, 317, 325, 328, 337-345:
Վառնա — 6, 13, 20, 23, 33, 52, 73, 76, 95, 96, 230, 338:
Վարդօ — 352, 354:
Վենետիկ — 12:
Վիեննա — 12, 18, 22, 64, 93, 210, 214, 216, 247:
Վիշապ (Պոլիս, Լիս) —11, 13, 15, 20, 24-26, 28-30, 33, 41, 48, 66, 70-75, 87, 89, 92-94, 96, 101, 102, 114, 177, 201, 203, 218, 233, 236, 241, 246, 276, 251:
Վլատիկաւկաս (Ժլատ) — 91, 111:
Վրէժ, Վրէժստան (Ատրպատական) — 5, 11, 12, 17, 20, 26, 49, 86, 118, 155, 157, 188, 191, 199, 228, 263-337, 344, 351, 352:

Տարօն (Դուրան) — 5, 11, 16, 17, 20, 75, 8, 80, 116, 165, 170, 176, 178, 243,337, 344, 346-359:
Տելդա — *Տես Ալեքսանդրիա*:
Տերսիմ — 85, 363:
Տէտէաղաճ — 258:
Տիարպէքիր (Տիգրանակերտ, Սեւ Վիշապ) — 4, 48, 98, 176, 234, 356:
Տիգրանակերտ — *Տես Տիարպէքիր*:
Տիվրիկ — 98:
Տղմուտ — 309:
Տրապիզոն — 15, 51, 62:
Տրիպոլի — 89:
Տրիպոլիս — 48:
Տրիպոլիս (ափրիկեան) — 48, 94:

Փաթաւիւր — 316, 320:
Փայաջուկ — 321, 325:
Փայաս — 48:
Փարիզ — 8, 9, 11, 12, 13, 15, 16, 19-22, 24-26, 32, 37, 38, 43-50, 52, 54, 55, 58, 59, 61-63, 67, 68, 80, 87, 93, 94, 98, 101-103, 110, 201, 220, 236, 237, 247, 257, 259, 261, 276, 288:
Փարոս — *Տես Ուրմիա*:

Քասախ — 126, 132, 134, 141:
Քասթեմունի — 212, 234:
Քար — *Տես Ալեքսանդրապոլ*:
Քղի (Խորձոր) — 5, 337, 360-364:
Քոփենհակն — 4, 207, 227, 337:

Օլթի (Հանք) — 16, 127, 131, 141, 213:
Օտեսա (Կայծ) — 125, 130, 131, 138:
Օրբան — 323, 324:
Օրտու — 89:

Ֆիլիպպէ — 25, 26, 37, 72, 94, 96:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ---------- 3

ԳԼՈՒԽ I.– Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
(էջ 6 – 74)

Ա.– Արձանագրութիւններ Արեւմտեան Բիւրոյի (1904–1905) ---------- 7
Բ.– Որոշումներ (Համառօտ Արձանագրութիւն) (1907–1908) ---------- 31
Գ.– Արձանագրութիւն [Պաքու գումարուած Խառն ժողովի] (1908) ---------- 71
Դ– Արեւմտեան Բիւրոյէն՝ Յոնանին եւ Գալֆային (1908) ---------- 72
Ե.– Ե.րդ Ընդհ. Ժողովին՝ Արեւմտեան Բիւրոյի իրձերից (1909) ---------- 73

ԳԼՈՒԽ II.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
(էջ 75 – 117)

Ա 1.– Հ. Յ. Դաշնակցութեան մարմիններին (Շրջաբերական-նամակ) (1904) ---------- 77
Ա 2.– Շրջաբերական Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Կոմիտէներին (1904) ---------- 78
Ա 3.– Արձանագրութիւն [Բերլինի դաշնակցական ընկերներու] (1905) ---------- 80
Ա 4.– Յաւելում Լիպարիտ Նազարեանցէն ---------- 81
Ա 5.– Նոր հարցադրումներ Խորհուրդէն ---------- 82
Ա 6.– Յոնան Դաւթեանի պատասխանը ---------- 83
Ա 7.– Արշակ Վռամեանի պատասխանը ---------- 84
Ա 8.– Սարգիս Մինասեանի (Արամ-Աշոտ) պատասխանը ---------- 85

Ա 9.– Մոնպելիէի ուսանողներուն պատասխանը ---------- 86
Ա 10.– 1905 թ. Խորհուրդի Օրակարգ ---------- 87
Ա 11.– Հ. Յ. Դաշնակցութեան Խորհուրդի Արձանագրութիւնը (1905 թ.) ---------- 88
Բ 1.– Հարցեր Խորհուրդին (1908) ---------- 92
Բ 2.– Տեղեկագիր Արեւմտեան Բիւրոյին ներկայացուած Հ.Յ.Դ. Խորհուրդին ---------- 93
Բ 3.– Հ. Յ. Դաշնակցութեան Խորհուրդը (1908 թ. նստաշրջան) ---------- 99
Բ 4.– 1908 թուի Խորհրդի որոշումների ամփոփումը ---------- 109
Բ 5.– Շրջաբերական նամակ (6 Յունիս 1908) ---------- 111
Գ 1.– Խորհուրդի Օրակարգի հարցերը (1909) ---------- 112
Գ 2.– Արամ Մանուկեանի գրութիւնը Խորհուրդին ---------- 114
Գ 3.– Մարալի բողոք-նամակը Խորհուրդին ---------- 115
Գ 4.– Ռուբէնի (Տէր Մինասեան) նամակը Ռոստոմին եւ Ակնունիին ---------- 116
Գ 5.– Գէորգ Չաուշի առթիւ (Ռուբէնին, Սասուն) ---------- 117

ԳԼՈՒԽ III.– ԿՈՎԿԱՍԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ
(էջ 118 – 205)

Ա.– Սարուստանի դաշնակցական համագումար-ժողով (1903) ---------- 120
Բ 1.– Ժողովի հրաւէր (1906) ---------- 125
Բ 2.– Ալեքսանդրապոլի տաճկահայ ժողովի արձանագրութիւնը (1906) ---------- 126
Բ 3.– Շրջանային կարծիքներ ---------- 138
Գ.– Հ.Յ.Դ. Կովկասեան Ռայոնական խորհրդաժողովի որոշումները (1907) ---------- 146
Դ 1.– Դեկտեմբեր ամսին կայանալիք ժողովի պարապմունքների Օրակարգը (1907–1908) ---------- 153
Դ 2.– Արձանագրութիւն [Մանդատներ քննող յանձնաժողովի] ---------- 154
Դ 3.– Արձանագրութիւններ Արեւելեան Բիւրոյի շրջանի Ռայոնական ժողովների ---------- 156
Ե.– Հ.Յ.Դ. կովկասեան ռայոնի մարմինների արտակարգ ժողով (1909) ---------- 197
Ե 1.– Ժողովի զբաղմունքների նիւթը ---------- 198
Ե 2.– Նիստերի արձանագրութիւն ---------- 199

ԳԼՈՒԽ IV.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻՆ
(էջ 206 – 245)

Ա1.– Սոցիալիստական Միջազգային բիւրոյի նամակը (1905) ---------- 208
Ա 2.– Մեր պատասխանը ---------- 208
Բ 1.– Քամիյ Հիւսմանի նամակը ուղղուած Հ.Յ.Դ.ին (1908) ---------- 209
Բ 2.– Հ.Յ.Դ.ի պաշտօնական դիմումը ---------- 210
Բ 3.– Դաշնակցութեան գործունէութենէն (մի քանի փաստեր) ---------- 211
Բ 4.– Քամիյ Հիւսմանի նամակը «Դրօշակ»ի խմբագրութեան ---------- 215
Բ 5.– Քամիյ Հիւսմանի նամակը Արեւմտեան Բիւրոյին ---------- 215
Բ 6.– Քամիյ Հիւսմանի նամակը Արեւմտեան Բիւրոյին ---------- 216

Բ 7.– Արեւմտեան Բիւրոյէն Արեւելեանին ---------- 216
Բ 8.– Արեւելեանէն Արեւմտեան Բիւրոյին ---------- 217
Բ 9.– Արեւելեանէն Արեւմտեան Բիւրոյին ---------- 217
Բ 10.– Արեւմտեան Բիւրոյէն Արեւելեանին ---------- 218
Բ 11.– Մ. Վարանդեանէն Արեւմտեան Բիւրոյին ---------- 219
Բ 12.– Ակնունիէն Արեւելեան Բիւրոյին ---------- 219
Բ 13.– Վարանդեանէն Համօ Օհանջանեանին ---------- 220
Գ 1.– Միջազգայնականի բիւրոյէն «Դրօշակ»ի խմբագրութեան (1908) ---------- 221
Գ 2.– «Դրօշակ»էն Միջազգայնականի բիւրոյին ---------- 222
Գ 3.– Միջազգայնականէն «Դրօշակ»ի խմբագրութեան ---------- 223
Գ 4.– Միջազգայնականէն Հ. Յ. Դաշնակցութեան ---------- 224
Դ 1.– Դ 4.– 1909 թուականի գրութիւններ ---------- 225
Ե.– Տեղեկագիր ներկայացուած Կոպենհակէն Ընկերվար Միջ. կոնգրէսին (1910) ---------- 227

ԳԼՈՒԽ V.– ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ
(էջ 246 – 262)

Ա 1.– Թերաքքրին (1908) ---------- 247
Ա 2.– Մեշվերէթին ---------- 248
Ա 3.– Մեշվերէթին ---------- 249
Ա 4.– Թերաքքրի պատասխան-հեռագիրը ---------- 250
Ա 5.– Երիտասարդ Օսմանցիէն շնորհատրանք ---------- 250
Բ 1.– Արեւմտեան Բիւրոյէն Պոլսոյ Պատասխ. մարմնին (1909) ---------- 251
Բ 2.– Արեւմտեան Բիւրոյէն Պոլսոյ Պատասխ. մարմնին ---------- 252
Բ 3.– Նամակ Pro-Armenia-ի խմբագրապետ Պիեռ Քիյառէն ---------- 253
Գ 1.– Գ 15.– Հեռագիրներ եւ մամլոյ հաղորդագրութիւններ (1909) ---------- 254
Գ 16.– Նամակ "Le Temps"օրաթերթի խմբագրապետին (1909) ---------- 261

ԳԼՈՒԽ VI.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒՆ (1908 – 1909)
(էջ 263 – 336)

Ա 1.– Համաձայնագիր Հ. Յ. Դաշնակցութեան եւ պարսիկ սահմանադրականներու միջեւ ---------- 265
Ա 2.– Փոխանակուած գրութիւններ ---------- 268
Ա 3.– Յովսէփ Միրզայեանի պատասխանը ---------- 268
Ա 4.– Յ. Միրզայեանէն Վրէժի (Ատրպատական) Կեդր. Կոմիտէին ---------- 269
Բ 1.– Սահմանադրական շարժման մասնակցելու որոշում ---------- 271
Բ 2.– Արձանագրութիւն (Պարսիկ յեղափոխականներու եւ Ատրպատականի Կ. Կ.ի) (1908) ---------- 273
Բ 3.– Համաձայնագրի պարսկերէն օրինակը ---------- 274
Համաձայնագրի հայերէն թարգմանութիւնը ---------- 275
Գ 1. – Գ 8.– Հեռագիրներ Թեհրանի գրաւման մասին եւ այլ գրութիւններ (1909) ---------- 276

Դ 1.– Շրջաբերական Հ.Յ.Դ. Ատրպատականի Կ.Կ.ի շրջանի մարմիններին (1908) ---------- 280
Դ 2.– Արձանագրութիւն Հ.Յ.Դ. IV Շրջանային ժողովի (1909) ---------- 282
Դ 3.– Գետ-Ափի գործունէութեան զեկուցում Վրէժի Շրջ. ժողովի ---------- 298
Ե.– Խոյ (1906–1909). Տեղեկագիր Աւարայրի ---------- 300
Զ.– Տեղեկագիր Հ.Յ.Դ. Մինարէթի [Սալմաստ] շրջանի (1908–1909) ---------- 315
Է 1.– Է 5.– Գիլանի (Էնզելի) կոմիտէին նամակներ «Դրօշակ»ի խմբագրութեան (1909) ---------- 331

ԳԼՈՒԽ VII.– ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ
(էջ 337 – 364)

Ա 1.– Տեղեկագիր Վան-Վասպուրականի (1906–1909) ---------- 338
Ա 2.– Վասպուրականի Կ. Կ.ի շրջաբերական-կոչը պարսկահայերուն օգնելու (1909) ---------- 344
Բ 1.– Հ.Յ.Դ. Դուրան-Բարձրաւանդակի Կ.Կ.ի Շրջ. ժողովի որոշումները (1909) ---------- 346
Բ 2.– Տարօնը ---------- 355
Բ 3.– Տեղեկագիր Սասնոյ ---------- 356
Գ.– Տեղեկագիր Քղի գաւառի օսմ. երեսփոխանական ժողովին տրուած (Դեկտ. 1908) ---------- 360

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ ---------- 366

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ---------- 373

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ – Է. ՀԱՏՈՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ
ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆԻ:

Համակարգչային շարուածք եւ էջադրում
ԹԱՄԱՐ ՄՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ:

ՑՐՈՒՈՒՄԻ ԿԵԴՐՈՆ

HAMAZKAYIN LIBRARY
P.O.BOX 80-1096
BOURJ HAMMOUD – LEBANON
TEL.: 00961 - 1 - 241263/4
FAX: 00961 - 1 - 260329
E-MAIL: imphamaz@inco.com.lb
www.hamazkayin-bookstore.com

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ